

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ**

Հատոր XI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XI

ԵՐԵՎԱՆ-2020

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411
Հ 247

**Խմբագիր՝
Լիլիթ Թադևոսյան
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի
նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Խմբագրակազմ՝
Էմիլյա Աբրահամյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Ժնյա Ստեփանյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Տաթևիկ Սուջյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Առնոդ Վարդանյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Անի Կիրակոսյան
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի
ՀՀ 2019 թվականի որոշումների ընտրանի (Խմբագրությամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լ.Զ.Թադևոսյանի). – Եր.: Կոմայնուտեր Սերվիս, 2020. Հ. XI. – 1160 էջ:

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 64.411

ISBN 978-9939-1-1205-3

Գիրքը վաճառքի ենթակա չէ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Funded
by the European Union
and the Council of Europe



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2019 թվականի որոշումների ընտրանու տպագրությունն իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և Եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ընտրանու մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2019 թվականի որոշումների ընտրանու հրատարակության ներածություն	7
Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2019 թվականի որոշումների առարկայական դասակարգում ...	14
Աղբյուրների ցանկ թիվ 1.	
ՀՀ Սահմանադրության դրույթներ	30
Աղբյուրների ցանկ թիվ 2.	
Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռներ	32
Աղբյուրների ցանկ թիվ 3.	
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ	37
1. Վ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0017/01/17	38
2. Ս.Ավանեսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0016/01/16	53
3. Ս.Անդրեևայի վերաբերյալ որոշում, ԵԴ/0630/06/18	64
4. Ա.Ալեքսանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0151/01/17	74
5. Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0049/01/17	80
6. Կ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0060/15/17	90
7. Ռ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0044/01/09	97
8. Մ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ1/0032/01/13	106
9. Մ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0013/01/13	113
10. Ն.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0094/01/09, ՏԴ/0022/01/12	127
11. Մ.Մելիքյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0203/01/16	134
12. Լ.Զաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0086/11/17	146
13. Բ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ/0014/06/18	158
14. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0229/01/16	165
15. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0201/01/14	180
16. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0068/06/18	188
17. Վ.Մխիթարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0002/01/18	212
18. Հ.Սրբոյանի վերաբերյալ որոշում, ԳԴ1/0001/11/18	236
19. Գ.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0083/01/17	243
20. Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0020/01/17	252

21. Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0699/06/18	264
22. Հ.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0216/01/17	280
23. Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0201/11/17	300
24. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0005/01/17	314
25. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0078/01/18	329
26. Մ.Սաղաթելյանի վերաբերյալ որոշում, ԵԲԴԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08	340
27. Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0172/11/17	371
28. Վ.Բալայանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0001/01/17	397
29. Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0016/01/14	409
30. Հ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0217/01/16	432
31. Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0426/11/18	448
32. Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0047/01/17	475
33. Ա.Եգանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0034/06/19	487
34. Ռ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0026/01/17	503
35. Է.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0013/01/18	514
36. Է.Ծատիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0308/01/16	527
37. Ս.Աշրաֆյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0017/01/17	543
38. Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ4/0028/01/16	559
39. Գ.Դադայանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0195/01/10	581
40. Արթուր և Արամ Մարտիրոսյանների վերաբերյալ որոշում, ԳԴ4/0015/01/11	593
41. Գ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0157/11/17	605
42. Գ.Զհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08	615
43. Մ.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0010/01/17	635
44. Ռ.Ադանալյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/11/18	647
45. Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0699/06/18	659
46. Կ.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0637/06/18	679

47. Դ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0700/06/18	690
48. Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0024/01/17	705
49. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17	726
50. Ա.Տիգրանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0501/01/18	747
51. Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0078/01/17	768
52. Հ.Գևորգյանի և Հ.Չանախյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0161/01/15	780
53. Ն.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0008/11/18	805
54. Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0160/01/14	814
55. Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0036/01/16	826
56. Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0190/06/08	842
57. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0062/11/12	854
58. Խ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵՔԲԴ/0341/01/18	867
59. Ն.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0069/01/16	877
60. Վ.Ղուկոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ1/0027/01/16	883
61. Ռ.Թումասյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0029/01/17	890
62. Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0013/01/18	897
63. Ս.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0912/06/18	917
64. Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0056/01/17	932
65. Պ.Նազարյանի վերաբերյալ որոշում, ՇԴ3/0056/01/16	945
66. Մ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0051/11/18	957
67. Ռ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0043/01/17	978
68. Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0215/01/18	993
69. Հ.Բարսեղյանի և Ա.Մարջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0259/01/16	1008
70. Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0063/01/17	1028
71. Ք.Դանիելյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0393/11/18	1044
72. Ա.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0039/11/17	1059
73. Ս.Մայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0587/11/18	1074
74. Հ.Թոփյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0028/01/17	1098
75. Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08	1136



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՈՒ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

2005 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանադիրն առաջին անգամ ՀՀ Վճռաբեկ դատարանին բնորոշեց որպես օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող դատական ատյան՝ ազդարարելով դատական նախադեպի ինստիտուտի՝ որպես իրավական մշակույթի նոր դրսևորման սկիզբը, իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ որպես օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնող դատական ատյան:

Մինևույն ժամանակ, 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ սահմանադիրն եռաստիճան դատական համակարգի պայմաններում ընդգծեց, որ՝

ա) դատական ակտերի վերանայման գործառույթը կենտրոնացված է վերաքննիչ դատական ատյանում,

բ) Վճռաբեկ դատարանն իր գործառույթով չի նույնանում Վերաքննիչ դատարանի հետ, այն ունի հատուկ իրավական կարգավիճակ, ապահովում է իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը և վերացնում մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները:

Միասնական իրավակիրառ չափանիշների մշակումն օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սահմանադրորեն ամրագրված սկզբունքի, իրավունքի գերակայության, իրավական որոշակիության հիմնարար արժեքների ապահովման գործուն մեխանիզմ է:

Անվիճելի է, որ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում անգամ, դատական մեկնաբանությունն անհրաժեշտություն է:

Վճռաբեկ դատարանը, կոչված լինելով ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, նախադեպային նշանակություն ունեցող իր դիրքորոշումների, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունների միջոցով, նպաստում է իրավական որոշակիության ու կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը, իսկ որպես արդյունք՝ նաև կանխատեսելի արդարադատության ապահովմանը:

Իրավունքի զարգացման առաքելության իրագործման շրջանակներում, էապես ավելացել են ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացվող նախադեպային նշանակություն ունեցող

որոշումները, որոնք միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Միավորված ազգերի կազմակերպության բանաձևերի և հանձնարարականների հաշվառմամբ՝ նպատակ են հետապնդում միասնական քաղաքականություն ձևավորել դատական պրակտիկայում ծագող խնդրահարույց հարցերով:

Եթե 2017 թվականի ընթացքում ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացվել են թվով 82, իսկ 2018 թվականին՝ 108 որոշումներ, ապա 2019 թվականի ընթացքում դրանց թիվը՝ 2017 թվականի համեմատ կրկնապատկվել է՝ կազմելով 156 որոշում:

Վճռաբեկ դատարանի գործունեության ուղղությունների արդյունավետ կենսագործման գրավականն է այդ որոշումների բովանդակության մասին հանրային իրազեկումն ու դրանց մատչելիության ապահովումը:

Վճռաբեկ դատարանի որոշումների, որպես բարձրագույն դատական ատյանի իրավական ակտերի՝ հասարակության լայն շրջանակի համար հասանելիության ապահովումն առավել քան անհրաժեշտ է: Այն մեծապես նպաստում է հասարակության անդամների կողմից դատական պաշտպանության ու դատարանի մատչելիության իրենց իրավունքն առավել արդյունավետ իրացնելուն, նպաստում է արդարադատության ընկալմամբ հասարակության իրավական դաստիարակությանը, իրավունքի բովանդակության իմացությանը՝ հորիզոններ բացելով իրավագիտակցության աստիճանի առավել բարձրացման համար:

Այդ նպատակին են միտված ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախադեպային որոշումների հրապարակվող ժողովածուները, որոնք արժեքանական կարևոր աղբյուր են՝ բարձրագույն դատական ատյանի գործունեության ընթացքին հետևելու և նախադեպային նշանակություն ունեցող որոշումներին ծանոթանալու համար:

Հրապարակվող ժողովածուները նաև կարևոր ուղենիշ են դատավորների համար, որոնք իրենց առօրյա աշխատանքային գործունեության ընթացքում լուծում են համանման փաստական հանգամանքներ ունեցող գործեր կամ վեճեր:

Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կողմնորոշիչ նշանակություն ունեն նաև իրավաստեղծ գործունեության, գիտական մտքի առաջընթացի նյութական բազայի շտեմարանի համար:

Ներկայացվող ժողովածուն, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումների 11-րդ հատորն է, իրենից ներկայացնում է՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից կայացված որոշումների ընտրանի և ներառում է ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին 2 որոշումներ, ինչպես նաև նախադեպային նշանակություն ունեցող 73 որոշումներ, որոնցում մշակվել են իրավակիրառ պրակտիկայում ծագող հիմնահարցերի լուծման,

նյութական և դատավարական իրավունքի նորմերի մեկնաբանության առանցքային չափորոշիչներ:

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման և մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու սահմանադրական գործառույթների իրացման շրջանակներում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը մի շարք արժեքավոր նախադեպային որոշումներ է կայացրել՝ մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու, գործերի քննության ժամկետների ողջամտության չափանիշների, հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման երաշխիքների, խոշտանգման կամ վատ վերաբերմունքի գործերով արդյունավետ քննության, այդ բնույթի գործերով խափանման միջոցի ընտրության առանձնահատկությունների, «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման, և մի շարք այլ կարևոր իրավական հարցերի առնչությամբ:

Այսպես, մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու իրավաչափության գնահատման չափանիշները Վճռաբեկ դատարանի քրեական պալատը սահմանել է *Վահիկ Միսիթարյանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ՝ հիմքում դնելով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում սահմանված հիմնարար երաշխիքների պաշտպանության անհրաժեշտությունը:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատը նշված որոշմամբ փաստել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչելու և քրեական դատավարությունում օգտագործելու հնարավորությունը գնահատելիս, քրեադատավարական կարգավորումները չպետք է մեկնաբանվեն չափազանց ձևականացված: Հեռախոսային խոսակցության ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարելն ինքնին չպետք է դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ դրա օգտագործումը քրեական դատավարությունում բացառելու համար: Այլ կերպ, ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարած լինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես դատավարական այնպիսի խախտում, որի նկատմամբ կիրառելի կլինեն քրեական հետապնդման մարմիններին վերագրվող պահանջները և որն անվերապահորեն կվկայի այն որպես ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին:

Օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթի և այդ գործունեության ընթացքում իրականացվող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանն առնչվող օրենսդրական նորմերի մեկնաբանմանն ու կիրառմանը Վճռաբեկ դատարանի քրեական պալատն անդրադարձել է *Գոռ Մարգարյանի* գործով 2019 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում

միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին, որի պարագայում իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հարկավոր է հաշվի առնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթից ելնելով, իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման տեսակն ընտրելիս և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ, պետք է ապահովեն նաև արդար դատաքննության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը:

Նշված գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը *Նսարեկ Խաչատրյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ անդրադարձել է նաև կասկածյալի (մեղադրյալի) և օրինական ներկայացուցչի շփումների ժամանակ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու իրավաչափության և դրա արդյունքում ստացված փաստական տվյալները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցին: Միջազգային իրավական չափանիշների կիրառմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտել է, որ պետությունը՝ ի դեմս քրեական հետապնդման մարմինների, պետք է մի կողմից իր ունեցած նեգատիվ պարտավորության շրջանակներում ձեռնպահ մնա այդ շփումներին անհարկի միջամտելուց, մյուս կողմից՝ իր պոզիտիվ պարտավորության շրջանակներում երաշխավորի այդ շփումների պատշաճ կազմակերպումը՝ ապահովելով անձի հիմնարար իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Հակառակ մոտեցման պարագայում, եթե ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող շփումները ենթարկվեն անհարկի միջամտության, դրանց պաշտպանությանն ուղղված քրեադատավարական երաշխիքները կկորցնեն իրենց իմաստը և կդառնան առարկայագուրկ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հիշատակման է արժանի նաև գործի դատական քննության ժամկետի ողջամտությունը որոշելու չափանիշների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը, որտեղ «*ուշացած արդարադատությունը մերժված արդարադատությունն է*» (*“Justice delayed is justice*

denied”) գաղափարի համատեքստում, առանձնացվել է ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրություն պահանջող գործերի շրջանակը:

Հիշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրել է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության սկզբունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այն արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից է և միտված է հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն ու անձի իրավունքների, շահերի առնչությամբ իրավական վեճը հանգուցալուծելուն և վերջնական դատական ակտ կայացնելուն: Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի երաշխավորումն ապահովում է նաև սոցիալական արդարության վերականգնումը, նպաստում հանցագործությունների կանխմանը և խափանմանը, հանցավոր ոտնձգություններին արդյունավետորեն հակազդելու պետության կարողությունների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը, հետևաբար, նախնական քննություն և դատական քննություն իրականացնող իրավասու մարմինները պետք է անհրաժեշտ ջանասիրություն դրսևորեն՝ ողջամիտ ժամկետում անձի դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ:

Խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վարահեղի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ որոշակի այլ հանգամանքների բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում կատարվող քննության արդյունավետության չափանիշի վերաբերյալ ուշադրության է արժանի Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարասպետյանի գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը: Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրել է, որ խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Մասնավորապես, արձանագրվել է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վիճելի բողոքի» կամ «վարահեղի հայտարարության» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում ծագում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ կատարելու քննություն, որի արդյունավետությունն ապահովելու համար այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների: Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդգծել է նաև, որ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է, որ քննությունը պետք է լինի արագ և մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է գործադրեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս

կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա: Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրել է, որ հաշվի առնելով քննության մանրամասն լինելու չափանիշին համապատասխանելու համար անհրաժեշտ դատավարական գործողությունների սպառիչ սահմանման անհնարինությունը, որպես այդպիսի քննության չափանիշներ են հանդիսանում «*լուրջ ջանքեր գործադրելը*» կամ «*բոլոր ողջամիտ քայլերն իրականացնելը*»:

Հաշվի առնելով օրենսդրական կարգավորումներով պայմանավորված՝ դատական պրակտիկայում առավելապես կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և անձի ազատության իրավունքի սահմանափակման այլընտրանքային միջոցների կիրառումն ինքնաբերաբար մերժելու մոտեցման հնարավոր վտանգները, կարևորելով անձի ազատության իրավունքը մեխանիկորեն սահմանափակելու անթույլատրելիությունը, ելնելով անձի ազատության կանխավարկածի սկզբունքի արժեքանական նշանակությունից՝ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված չափանիշների, արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրական կարգավորումների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարեկան գեկույցներում այլընտրանքային միջոցների ցածր կիրառելիության առնչությամբ արտահայտված մտահոգությունների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ *Գոռ Համբարձումյանի* վերաբերյալ գործով դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով այդ պահին գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներով գրավի՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոցի կիրառելիության խնդիրը՝ ընդգծելով, որ այն չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ բավարարել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դիմումը, որի հիման վրա ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 14-ին ընդունված օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ անձի ազատության կանխավարկածի սկզբունքը երաշխավորելով՝ գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց սահմանելու, խափանման միջոցի կիրառման բոլոր հիմքերի դեպքում այն գործուն երաշխիք դիտարկելու համար:

Նշվածից գատ, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, 2019 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ *Հրայր Հովսեփյանի* գործով դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով անձի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների համատեքստում գործն ըստ էության չլուծող դատական

ակտերը բեկանելիս, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, վերջնական որոշում կայացնելու և անձի իրավունքների խախտումները վերացնելու կառուցակարգերի բացակայության խնդիրը: Թեև ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ գործի վարույթը կարճվել է, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, 2020 թվականի մայիսի 25-ի որոշմամբ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթի շրջանակներում, ի թիվս այլնի, սահմանել է, որ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների համատեքստում պետք է երաշխավորված լինի գործը նոր քննության ուղարկելու միջոցով անձի խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունը:

Հարկ է հավելել, որ Հայաստանի Հանրապետության դատական տարբեր ստյանների դատական ակտերի գերակշիռ մասը հիմնավորված է Վճռաբեկ դատարանի նախադեպային բնույթի որոշումներով:

Վճռաբեկ դատարանի որոշումները լայնորեն օգտագործվում են Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվող ինչպես դատավորների, դատախազների, քննիչների վերապատրաստման ու թեկնածուների պատրաստման դասընթացներում, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ դասավանդման գործընթացում և իրավաբան-գիտնականների կողմից իրականացվող գիտական հետազոտություններում:

Նախադեպային նշանակություն ունեցող որոշումների սույն ընտրանին ունի ինչպես գործնական, այնպես էլ տեսական նշանակություն: Այն լավագույն միջոց է իրավական հանրության և հասարակության լայն շրջանակների համար արդյունավետորեն հետևելու Վճռաբեկ դատարանի քրեական պալատի գործունեության ընթացքին, նպաստում է իրավական գիտակցության աստիճանի բարձրացմանը, օրենքի ու արդարադատության հանդեպ հարգանքի ձևավորմանը, հասարակության անդորրի բազմաբովանդակ էության արմատավորմանը, օրենքի պահանջների անվերապահ կատարմանն ու անձանց վարքագծի դրսևորումների իրավաչափության պահպանմանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2019 թվականի որոշումների ընտրանու սույն հատորի հրատարակումը հնարավոր է դարձել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում:

Լ.Զ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվության հիմքը (ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդված)

Ն-I-1 Մ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0013/01/13 (9 ² , նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-1)	113
Ն-I-2 Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի վերաբերյալ որոշում, ՏԴԻ/0078/01/17 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XXV-2)	768

Ն-II Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատժի նպատակները, պատժ նշանակելու ընդհանուր սկզբունքները (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածներ)

Ն-II-1 Վ.Բալայանի վերաբերյալ որոշում, ՍԴԻ/0001/01/17 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1)	397
Ն-II-2 Ա.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0056/01/17 (64)	932
Ն-II-3 Հ.Թոփչյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0028/01/17 (74, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-7)	1098

Ն-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված)

Ն-III-1 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՍԴԴ/0020/01/17 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-3, Ն-VII-1)	252
---	-----

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-IV-1 Ա.Ալեքսանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0151/01/17 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1)	74
Ն-IV-2 Ն.Հովսեփյանի վերաբերյալ որոշում, ՏԴԴ/0094/01/09, ՏԴԴ/0022/01/12 (10)	127
Ն-IV-3 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՍԴԴ/0020/01/17 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-VII-1)	252
Ն-IV-4 Ն.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0069/01/16 (59, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-2)	877

¹ Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Ն» տառով:

² Որոշման հերթական համարը:

Ն-IV-5 Վ.Ղուկոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ1/0027/01/16 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-3)	883
Ն-IV-6 Ռ.Թումասյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0029/01/17 (61, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-4)	890

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության հասկացությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդված)

Ն-V-1 Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0078/01/17 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-XXV-2)	768
---	-----

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության տեսակները (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված)

Ն-VI-1 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0160/01/14 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-3, Դ-X-6)	814
---	-----

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանրային աշխատանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդված)

Ն-VII-1 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0020/01/17 (20, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1, Ն-IV-3)	252
--	-----

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի բռնագրավումը (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդված)

Ն-VIII-1 Ս.Մայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0587/11/18 (73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-2, Դ-XXV-1, Դ-XXVI-1)	1074
---	------

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)

Ն-IX-1 Է.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0013/01/18 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1)	514
---	-----

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդված)

Ն-X-1 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0047/01/17 (32, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-3, Դ-XLI-1)	475
Ն-X-2 Է.Ծատիկյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0308/01/16 (36, նույն որոշումը տե՛ս նաև Դ-X-4, Դ-XXVII-1)	527
Ն-X-3 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0160/01/14 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Դ-X-6)	814

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ բռնագանձումը (ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդված)

Ն-XI-1 Հ.Գևորգյանի և Հ.Չանախչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0161/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1) 780
Ն-XI-2 Ս.Մայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0587/11/18 (73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Դ-XXV-1, Դ-XXVI-1) 1074

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդված)

Ն-XII-1 Հ.Տուրխայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0216/01/17 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-2, Դ-XXXIII-1) 280

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)

Ն-XIII-1 Վ.Հախվերդյանի վերաբերյալ որոշում, ՏԴ1/0017/01/17 (1) 38
Ն-XIII-2 Հ.Տուրխայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0216/01/17 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1, Դ-XXXIII-1) 280

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ կողոպուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդված)

Ն-XIV-1 Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0215/01/18 (68, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-5, Դ-XV-2, Դ-XVI-7, Դ-XVII-7) 993

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված)

Ն-XV-1 Վ.Մխիթարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0002/01/18 (17, նույն որոշումը տե՛ս նաև Դ-III-1) 212

Ն-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)

Ն-XVI-1 Ս.Ավանեսյանի վերաբերյալ որոշում, ՍԴ1/0016/01/16 (2) 53
Ն-XVI-2 Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0036/01/16 (55, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-4, Դ-XV-1, Դ-XVI-6, Դ-XVII-6) 826
Ն-XVI-3 Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0063/01/17 (70) 1028

Ն-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը) (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդված)

Ն-XVII-1 Հ.Գևորգյանի և Հ.Չանախչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0161/01/15 (52, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1) 780

Ն-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)

Ն-XVIII-1 Է.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ1/0013/01/18 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1) 514

Ն-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդված)

Ն-XIX-1 Հ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0217/01/16 (30) 432

Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)

Ն-XX-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17 (49, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-3, Դ-XVI-5, Դ-XVII-5, Դ-XXXIII-3) 726

Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)

Ն-XXI-1 Ա.Ալեքսանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0151/01/17 (4, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1) 74

Ն-XXI-2 Ն.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ2/0069/01/16 (59, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-4) 877

Ն-XXI-3 Վ.Ղուկոյանի վերաբերյալ որոշում, ՇԴ1/0027/01/16 (60, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-5) 883

Ն-XXI-4 Ռ.Թումասյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0029/01/17 (61, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-6) 890

Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված)

Ն-XXII-1 Մ.Ասատրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0013/01/13 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1) 113

Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պաշտոնեական անփութությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդված)

Ն-XXIII-1 Ա.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԿԴ3/0013/01/18 (62) 897

Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետային գինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ գորահավաքներից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)

Ն-XXIV-1 Մ.Մելիքյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0203/01/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVI-1, Դ-XXVII-1) 134

Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդված)

Ն-XXV-1 Վ.Բալայանի վերաբերյալ որոշում, ՍԴԻ/0001/01/17 (28, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1) 397

Ն-XXV-2 Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի վերաբերյալ որոշում, ՏԴԻ/0078/01/17 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-2, Ն-V-1) 768

Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործմասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդված)

Ն-XXVI-1 Ս.Աշրաֆյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0017/01/17 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVII-1, Դ-XX-2) 543

Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դասալքությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդված)

Ն-XXVII-1 Ս.Աշրաֆյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0017/01/17 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Դ-XX-2) 543

Գաղափարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Գ-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական դատավարության օրենսդրության խնդիրները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդված)

Գ-I-1 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0229/01/16 (14, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIV-1) 165

Գ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդված)

Գ-II-1 Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0172/11/17 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ-IV-1) 371

Գ-II-2 Ռ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՄԴ3/0026/01/17 (34, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXII-1) 503

Գ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդված)

Գ-III-1 Վ.Մխիթարյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0002/01/18 (17, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XV-1) 212

Գ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Գ-IV-1 Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0172/11/17 (27, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-1) 371

Գ-IV-2 Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0016/01/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XI-1) 409

Գ-IV-3 Մ.Անտոնյանի վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0010/01/17 (43) 635

Գ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

Գ-V-1 Գ.Զհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-1, Դ-XVI-3, Դ-XVII-3, Դ-XXXV-1) 615

Գ-V-2 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08 (75, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VII-2, Դ-XVI-8, Դ-XVII-8, Դ-XXXV-2) 1136

¹ Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչված են «Դ» տառով:

Դ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված)

Դ-VI-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0201/11/17 (23, նույն որոշումը տևն նաև Դ-XXIII-1) 300

Դ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)

Դ-VII-1 Գ.Ջիանգիլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08 (42, նույն որոշումը տևն նաև Դ-V-1, Դ-XVI-3, Դ-XVII-3, Դ-XXXV-1) 615

Դ-VII-2 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08 (75, նույն որոշումը տևն նաև Դ-V-2, Դ-XVI-8, Դ-XVII-8, Դ-XXXV-2) 1136

Դ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ազատ գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)

Դ-VIII-1 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0005/01/17 (24, նույն որոշումը տևն նաև Դ-XVI-2, Դ-XVII-2, Դ-XXXIII-2) 314

Դ-VIII-2 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԿԴԴ2/0024/01/17 (48, նույն որոշումը տևն նաև Դ-XVI-4, Դ-XVII-4) 705

Դ-VIII-3 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17 (49, նույն որոշումը տևն նաև Ն-XX-1, Դ-XVI-5, Դ-XVII-5, Դ-XXXIII-3) 726

Դ-VIII-4 Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴԴ/0036/01/16 (55, նույն որոշումը տևն նաև Ն-XVI-2, Դ-XV-1, Դ-XVI-6, Դ-XVII-6) 826

Դ-VIII-5 Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴԴ/0215/01/18 (68, նույն որոշումը տևն նաև Ն-XIV-1, Դ-XV-2, Դ-XVI-7, Դ-XVII-7) 993

Դ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործերի միացումը և անջատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված)

Դ-IX-1 Պ.Նազարյանի վերաբերյալ որոշում, ՇԴԴ3/0056/01/16 (65) 945

Դ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)

Դ-X-1 Լ.Ջաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0086/11/17 (12) 146

Դ-X-2 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԴԴ/0078/01/18 (25) 329

Դ-X-3 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0047/01/17 (32, նույն որոշումը տևն նաև Ն-X-1, Դ-XLI-1) 475

Դ-X-4 Է.Ծատինյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0308/01/16 (36, նույն որոշումը տևն նաև Ն-X-2, Դ-XXVII-1) 527

Գ-X-5 Ա.Տիգրանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0501/01/18 (50)	747
Գ-X-6 Կ.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0160/01/14 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-X-3)	814
Գ-X-7 Հ.Թովիցյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0028/01/17 (74, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-3)	1098

Գ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ նախագահողը և նրա լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդված)

Գ-XI-1 Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0016/01/14 (29, նույն որոշումը տե՛ս նաև Գ-IV-2)	409
--	-----

Գ-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված)

Գ-XII-1 Ռ.Ադանալյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/11/18 (44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-2)	647
--	-----

Գ-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածներ)

Գ-XIII-1 Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ4/0028/01/16 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-2)	559
---	-----

Գ-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածներ)

Գ-XIV-1 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0229/01/16 (14, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1)	165
Գ-XIV-2 Ն.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ4/0028/01/16 (38, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIII-1)	559

Գ-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացուցման ենթակա հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածներ)

Գ-XV-1 Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0036/01/16 (55, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-2, Գ-VIII-4, Գ-XVI-6, Գ-XVII-6)	826
Գ-XV-2 Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0215/01/18 (68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Գ-VIII-5, Գ-XVI-7, Գ-XVII-7)	993

**Դ-XVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների ստուգումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդված)**

Դ-XVI-1 Մ.Մելիքյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0203/01/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Դ-XVII-1)	134
Դ-XVI-2 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0005/01/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-1, Դ-XVII-2, Դ-XXXIII-2)	314
Դ-XVI-3 Գ.Զհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-VII-1, Դ-XVII-3, Դ-XXXV-1)	615
Դ-XVI-4 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0024/01/17 (48, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-2, Դ-XVII-4)	705
Դ-XVI-5 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1, Դ-VIII-3, Դ-XVII-5, Դ-XXXIII-3)	726
Դ-XVI-6 Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0036/01/16 (55, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-2, Դ-VIII-4, Դ-XV-1, Դ-XVII-6)	826
Դ-XVI-7 Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0215/01/18 (68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Դ-VIII-5, Դ-XV-2, Դ-XVII-7)	993
Դ-XVI-8 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08 (75, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-VII-2, Դ-XVII-8, Դ-XXXV-2)	1136

**Դ-XVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)**

Դ-XVII-1 Մ.Մելիքյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0203/01/16 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXIV-1, Դ-XVI-1)	134
Դ-XVII-2 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0005/01/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-1, Դ-XVI-2, Դ-XXXIII-2)	314
Դ-XVII-3 Գ.Զհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-VII-1, Դ-XVI-3, Դ-XXXV-1)	615
Դ-XVII-4 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԿԴ2/0024/01/17 (48, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-2, Դ-XVI-4)	705
Դ-XVII-5 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1, Դ-VIII-3, Դ-XVI-5, Դ-XXXIII-3)	726
Դ-XVII-6 Վ.Հայրապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ/0036/01/16 (55, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-2, Դ-VIII-4, Դ-XV-1, Դ-XVI-6)	826
Դ-XVII-7 Ս.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0215/01/18 (68, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Դ-VIII-5, Դ-XV-2, Դ-XVI-7)	993
Դ-XVII-8 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08 (75, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-VII-2, Դ-XVI-8, Դ-XXXV-2)	1136

Դ-XVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)

Դ-XVIII-1 Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0699/06/18 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-1)	264
Դ-XVIII-2 Ա.Եզանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0034/06/19 (33, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-2)	487
Դ-XVIII-3 Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0699/06/18 (45, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-3)	659
Դ-XVIII-4 Կ.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0637/06/18 (46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-4)	679
Դ-XVIII-5 Դ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0700/06/18 (47, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-5)	690
Դ-XVIII-6 Ս.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0912/06/18 (63, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XIX-6)	917

Դ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)

Դ-XIX-1 Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0699/06/18 (21, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-1)	264
Դ-XIX-2 Ա.Եզանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0034/06/19 (33, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-2)	487
Դ-XIX-3 Գ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0699/06/18 (45, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-3)	659
Դ-XIX-4 Կ.Օհանյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0637/06/18 (46, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-4)	679
Դ-XIX-5 Դ.Համբարձումյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0700/06/18 (47, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-5)	690
Դ-XIX-6 Ս.Դավթյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0912/06/18 (63, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XVIII-6)	917

Դ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ծախսերի գանձումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդված)

Դ-XX-1 Գ.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0083/01/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIV-1)	243
Դ-XX-2 Ս.Աշրաֆյանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0017/01/17 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Ն-XXVII-1)	543

Դ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետների հաշվումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված)

Դ-XXI-1 Ա.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ՇԴ2/0049/01/17 (5)	80
---	----

Դ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու առիթները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդված)
Դ-XXII-1 Ա.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0039/11/17 (72, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIV-2) 1059

Դ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդված)
Դ-XXIII-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0201/11/17 (23, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VI-1) 300
Դ-XXIII-2 Գ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0157/11/17 (41, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIV-1) 605

Դ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)
Դ-XXIV-1 Գ.Սաֆարյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0157/11/17 (41, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIII-2) 605
Դ-XXIV-2 Ա.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0039/11/17 (72, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXII-1) 1059

Դ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելու հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդված)
Դ-XXV-1 Ս.Մայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0587/11/18 (73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XI-2, Դ-XXVI-1) 1074

Դ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ գույքի վրա կալանք դնելու որոշման կատարման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդված)
Դ-XXVI-1 Ս.Մայրապետյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0587/11/18 (73, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XI-2, Դ-XXV-1) 1074

Դ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննիչի գործողությունները քրեական գործով վարույթը կասեցնելուց հետո (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդված)
Դ-XXVII-1 Է.Ծատիւնյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0308/01/16 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-2, Դ-X-4) 527
Դ-XXVII-2 Ռ.Ադանայանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0003/11/18 (44, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XII-1) 647

Դ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին

միջնորդությունների քննումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդված)

Դ-XXVIII-1 Ս.Անդրեևայի վերաբերյալ որոշում, ԵԴ/0630/06/18 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIX-1 64
Դ-XXVIII-2 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0068/06/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXIX-1, Դ-XXX-1) 188

Դ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդված)

Դ-XXIX-1 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0068/06/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-2, Դ-XXX-1) 188

Դ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդված)

Դ-XXX-1 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0068/06/18 (16, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-2, Դ-XXIX-1) 188

Դ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Դ-XXX-1 Ս.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0051/11/18 (66) 957
Դ-XXX-2 Բ.Դանիելյանի վերաբերյալ որոշում, ԵԴ/0393/11/18 (71) 1044

Դ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ամբաստանյալի չներկայանալու հետևանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 303-րդ հոդված)

Դ-XXXII-1 Ռ.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՍԴ3/0026/01/17 (34, նույն որոշումը տե՛ս նաև Դ-II-2) 503

Դ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)

Դ-XXXIII-1 Հ.Սուքիասյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0216/01/17 (22, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1, Ն-XIII-2) 280
Դ-XXXIII-2 Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0005/01/17 (24, նույն որոշումը տե՛ս նաև Դ-VIII-1, Դ-XVI-2, Դ-XVII-2) 314

Դ-XXXIII-3 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ2/0032/01/17 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ե-XX-1, Դ-VIII-3, Դ-XVI-5, Դ-XVII-5) 726

Դ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարցերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդված)

Դ-XXXIV-1 Գ.Ծատուրյանի վերաբերյալ որոշում, ՏԴ2/0083/01/17 (19, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XX-1) 243

Դ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական դատավճիռը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդված)

Դ-XXXV-1 Գ.Զհանգիրյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0134/01/08 (42, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-1, Դ-VII-1, Դ-XVI-3, Դ-XVII-3) 615

Դ-XXXV-2 Ս.Այվազյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0115/01/08 (75, նույն որոշումը տե՛ս նաև Դ-V-2, Դ-VII-2, Դ-XVI-8, Դ-XVII-8) 1136

Դ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդված)

Դ-XXXVI-1 Ն.Ղազարյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0008/11/18 (53) 805

Դ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդված)

Դ-XXXVII-1 Ռ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0044/01/09 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIX-2) 97

Դ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի բողոքարկումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդված)

Դ-XXXVIII-1 Մ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԴ1/0032/01/13 (8, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXIX-3) 106

Դ-XXXVIII-2 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԴ/0201/01/14 (15) 180

Դ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)

Դ-XXXIX-1 Ս.Անդրեևայի վերաբերյալ որոշում, ԵԴ/0630/06/18 (3, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXVIII-1) 64

Դ-XXXIX-2 Ռ.Բաղդասարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԴ/0044/01/09 (7, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XXXVII-1) 97

Գ-XXXIX-3 Մ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԴ/0032/01/13
(8, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXVIII-1) 106

Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքը և վարույթը ընդունելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդված)
Գ-XL-1 Հ.Սրբոյանի վերաբերյալ որոշում, ԳԴ/0001/11/18 (18) 236

Գ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդված)
Գ-XLI-1 Գ.Սարգսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0047/01/17 (32, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Դ-X-3) 475
Գ-XLI-2 Հ.Բարսեղյանի և Ա.Մարջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0259/01/16 (69, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLIII-1) 1008

Գ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննության կարգով գործը քննող դատարանի կազմը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդված)
Գ-XLII-1 Կ.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0060/15/17 (6) 90

Գ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդված)
Գ-XLIII-1 Հ.Բարսեղյանի և Ա.Մարջանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0259/01/16 (69, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLI-2) 1008

Գ-XLIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի ու որոշումների վերանայումը վճռաբեկության կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդված)
Գ-XLIV-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0426/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVI-1, Դ-XLVII-1) 448

Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ բողոք բերելու հիքմերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդված)
Գ-XLV-1 Գ.Ոսկերցյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0190/06/08 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-4, Դ-XLIX-4, Դ-L-2) 842
Գ-XLV-2 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0062/11/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-5, Դ-XLIX-5, Դ-L-3) 854

Դ-XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճարելի դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդված)

Դ-XLVI-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0426/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIV-1, Դ-XLVI-1) 448

Դ-XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ Վճարելի դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված)

Դ-XLVII-1 Հ.Հովսեփյանի վերաբերյալ որոշում (գործի վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին), ԵԴ/0426/11/18 (31, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIV-1, Դ-XLVI-1) 448

Դ-XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդված)

Դ-XLVIII-1 Մ.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIX-1, Դ-L-1) 340
Դ-XLVIII-2 Գ.Դադայանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0195/01/10 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIX-2) 581
Դ-XLVIII-3 Արթուր և Արամ Մարտիրոսյանների վերաբերյալ որոշում, ԳԴ4/0015/01/11 (40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIX-3) 593
Դ-XLVIII-4 Գ.Ոսկերյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0190/06/08 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-1, Դ-XLIX-4, Դ-L-2) 842
Դ-XLVIII-5 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0062/11/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-2, Դ-XLIX-5, Դ-L-3) 854
Դ-XLVIII-6 Խ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԴ/0343/01/18 (58, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLIX-6) 867

Դ-XLIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդված)

Դ-XLIX-1 Մ.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԵԶԲԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-1, Դ-L-1) 340
Դ-XLIX-2 Գ.Դադայանի վերաբերյալ որոշում, ՏԴ/0195/01/10 (39, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-2) 581
Դ-XLIX-3 Արթուր և Արամ Մարտիրոսյանների վերաբերյալ որոշում, ԳԴ4/0015/01/11 (40, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-3) 593

Դ-XLIX-4 Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0190/06/08 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-1, Դ-XLVIII-4, Դ-L-2)	842
Դ-XLIX-5 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0062/11/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-2, Դ-XLVIII-5, Դ-L-3)	854
Դ-XLIX-6 Խ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0341/01/18 (58, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-6)	867

**Դ-L Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտի վերանայումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդված)**

Դ-L-1 Մ.Սաղաթեյանի վերաբերյալ որոշում, ԵԲԲԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08 (26, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLVIII-1, Դ-XLIX-1)	340
Դ-L-2 Գ.Ոսկերչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0190/06/08 (56, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-1, Դ-XLVIII-4, Դ-XLIX-4)	842
Դ-L-3 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0062/11/12 (57, նույն որոշումը տե՛ս նաև Դ-XLV-2, Դ-XLVIII-5, Դ-XLIX-5)	854

**Դ-LI Մեկնաբանվող իրավադրույթ՝ Հայաստանի Հանրապետության
տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ժամանա-
կավոր կալանավորման կարգը (ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 478.2-րդ հոդված)**

Դ-LI-1 Բ.Ավագյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԴ/0014/06/18 (13)	158
--	-----

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(17)
ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(73)
ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(11)
ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(27)
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(15), (21), (34), (45)
ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(17)
ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(38)
ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(73)
ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (5), (7), (16), (29), (31), (43), (44)
ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (5), (7), (16), (18), (29), (43), (44), (69)
ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(67)
ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(7), (9)
ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(5)
ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(3), (9), (10), (20), (59), (60), (61)
ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(20)

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(31)
ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(5), (34)
ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(9), (31)
ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(43)
ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդված (2015 թվականի փոփոխություններով)	(31)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Abdoella v. The Netherlands*, 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռ (29)
2. *Adiletta and others v. Italy*, 1991 թվականի փետրվարի 19-ի վճիռ (29)
3. *Aganikyan v. Armenia*, 2018 թվականի ապրիլի 5-ի վճիռ (29)
4. *Aleksandr Makarov v. Russia*, 2009 թվականի
մարտի 14-ի վճիռ (21), (45)
5. *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom*, 2011 թվականի
դեկտեմբերի 15-ի վճիռ (67)
6. *Allan v. The United Kingdom*, 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռ (38)
7. *Amine Guzel v. Turkey*, 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռ (27)
8. *Amirov v. Russia*, 2014 թվականի նոյեմբերի 27-ի վճիռ (47)
9. *Anguelova v. Bulgaria*, 2002 թվականի հունիսի 13-ի վճիռ (44)
10. *Aslakhanova and others v. Russia*, 2012 թվականի
դեկտեմբերի 18-ի վճիռ (44)
11. *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի
հոկտեմբերի 28-ի վճիռ (27)
12. *Avagyan v. Armenia*, 2018 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ (58)
13. *Ayvazyan v. Armenia*, 2017 թվականի հունիսի 1-ի վճիռ (45), (46)
14. *Bati and Others v. Turkey*, 2004 թվականի հունիսի 3-ի վճիռ (27)
15. *Beaumartin v. France*, 1994 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ (29)
16. *Boddaert v. Belgium*, 1992 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռ (29)
17. *Boicenco v. Moldova*, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ (27)
18. *Borzhonov v. Russia*, 2009 թվականի հունվարի 22-ի վճիռ (73)
19. *Bricmont v. Belgium*, 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռ (42), (75)
20. *Brualla Gómez de la Torre v. Spain*, 1997 թվականի
դեկտեմբերի 19-ի վճիռ (31)
21. *Busuioc v. Moldova*, 2004 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռ (31)
22. *Buzadji v. the Republic of Moldova [GC]*, 2016 թվականի
հուլիսի 5-ի վճիռ (47), (63)
23. *Bykov v. Russia*, 2009 թվականի մարտի 10-ի վճիռ (42), (75)
24. *Campbell v. The United Kingdom*, 1992 թվականի
մարտի 25-ի վճիռ (38)

25. *Creanga v. Romania* [ՄԳ], 2012 թվականի
փետրվարի 23-ի վճիռ (47), (63)
26. *Dadayan v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռ (39)
27. *Deweere v. Belgium*, 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռ (41)
28. *Djundiks v. Latvia*, 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռ (21), (45)
29. *Dobbertin v. France*, 1993 թվականի փետրվարի 25-ի վճիռ (29)
30. *Dorokhov v. Russia*, 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռ (42), (75)
31. *Eckle v. Germany*, 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռ (29), (41)
32. *Efstathiou and others v. Greece*, 2006 թվականի
հուլիսի 27-ի վճիռ (5), (18)
33. *Ergi v. Turkey*, 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռ (27)
34. *Frumkin v. Russia*, 2016 թվականի հունվարի 5-ի վճիռ (42), (75)
35. *Frydlander v. France [GC]*, 2000 թվականի հունիսի 27-ի վճիռ (29)
36. *G.K. v. Poland*, 2004 թվականի հունվարի 20-ի վճիռ (41)
37. *Gabor Nagy v. Hungary (No. 2)*, 2017 թվականի
ապրիլի 11-ի վճիռ (47), (63)
38. *Gabrielyan v. Armenia*, 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռ (67)
39. *Gladysheva v. Russia*, 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (14)
40. *Golder v. The United Kingdom*, 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռ (16)
41. *Gul v. Turkey*, 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (27)
42. *H. v. France*, 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռ (29)
43. *Hirschhorn v. Romania*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (18), (43)
44. *Hovhannisyan v. Armenia*, 2018 թվականի հուլիսի 19-ի վճիռ (57)
45. *Hugh Jordan v. the UK*, 2001 թվականի մայիսի 4-ի վճիռ (27)
46. *Huseyn and other v. Azerbaijan*, 2011 թվականի
հուլիսի 26-ի վճիռ (42), (75)
47. *Idalov v. Russia*, 2012 թվականի մայիսի 22-ի վճիռ (21), (45)
48. *Irfan Guzel v. Turkey*, 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռ (14)
49. *Jeronovics v. Latvia*, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ (27)
50. *Kart v. Turkey*, 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռ (29)
51. *Kasparov and Others v. Russia*, 2013 թվականի
հոկտեմբերի 3-ի վճիռ (42), (75)

52. *Khadzhialiyev and Others v. Russia*, 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (27)
53. *Khalifaoui v. France*, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (5), (18)
54. *Khodorkovskiy v. Russia*, 2011 թվականի մայիսի 31-ի վճիռ (47)
55. *Khudoyorov v. Russia*, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ (21), (45)
56. *Konig v. Germany*, 1978 թվականի հունիսի 28-ի վճիռ (29)
57. *Levages Prestations Services v. France*, 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ (31)
58. *Lorenzi, Bernardini and Gritti v. Italy*, 1992 թվականի փետրվարի 27-ի վճիռ (29)
59. *Lučić v. Croatia*, 2014 թվականի փետրվարի 27-ի վճիռ (67)
60. *Luordo v. Italy*, 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (5), (18)
61. *Martirosyan v. Armenia*, 2018 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (40)
62. *Matevosyan v. Armenia*, 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռ (27)
63. *Matheron v. France*, 2005 թվականի մարտի 29-ի վճիռ (38)
64. *Meftah and Others v. France [GC]*, 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռ (31)
65. *Mehmet Emin Yüksel v. Turkey*, 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռ (27)
66. *Michaud v. France*, 2012 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ (38)
67. *Mikheev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ (27)
68. *Muradkhanyan v. Armenia*, 2013 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռ (56)
69. *Mushegh Saghatelyan v. Armenia*, 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռ (26), (27), (42), (75)
70. *Musuc v. Moldova*, 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռ (21), (45)
71. *Nalbandyan v. Armenia* գոծով 2015 թվականի մարտի 31-ի վճիռ (27)
72. *Navalniyy and Yashin v. Russia*, 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (42), (75)
73. *Nechiporuk and Yonkalo v. Ukraine*, 2011 ապրիլի 21-ի վճիռ (17)
74. *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (29), (47), (63)
75. *Ognyanova and Choban v. Bulgaria*, 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռ (27)
76. *Ogur v. Turkey*, 1999 թվականի մայիսի 20-ի վճիռ (27)

77. *P.G. and J.H v. The United Kingdom*, 2001 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռ (38)
78. *Paić v. Croatia*, 2016 թվականի մարտի 29-ի վճիռ (67)
79. *Paul and Audrey Edwards v. The United Kingdom*, 2002 թվականի մարտի 14-ի վճիռ (44)
80. *Pedersen and Baadsgaard v. Denmark*, 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ (29)
81. *Perry v. The United Kingdom*, 2003 թվականի հուլիսի 17-ի վճիռ (38)
82. *Petropavlovskis v. Latvia*, 2015 թվականի հունվարի 13-ի վճիռ (44)
83. *Piruzyan v. Armenia*, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ (21), (45)
84. *Polyakov v. Russia*, 2009 թվականի հունվարի 29-ի վճիռ (42), (75)
85. *Popov v. Russia*, 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռ (42), (75)
86. *Ramsahai and others v. Netherlands*, 2007 թվականի մայիսի 15-ի վճիռ (27)
87. *Ringeisen v. Austria* 1971 թվականի հուլիսի 16-ի վճիռ (29)
88. *Roman Zakharov v. Russia*, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռ (14)
89. *Ruiz-Mateos v. Spain*, 1993 թվականի հունիսի 23-ի վճիռ (29)
90. *S. v. Switzerland*, 1991 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (38)
91. *Sahin Alpay v. Turkey*, 2018 թվականի մարտի 20-ի վճիռ (21), (45)
92. *Schatschaschwili v. Germany*, 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռ (67)
93. *Schenk v. Switzerland*, 1988 թվականի հուլիսի 12-ի վճիռ (17)
94. *Scozzari and Giunta v. Italy*, 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռ (26), (39), (58)
95. *Selcuk and Asker v. Turkey*, 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռ (26), (39)
96. *Seton v. The United Kingdom*, 2016 թվականի մարտի 31-ի վճիռ (67)
97. *Sopin v. Russia*, 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ (47), (63)
98. *Stanev v. Bulgaria*, 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ (5), (18)
99. *Starosciżyk v. Poland*, 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռ (5), (18), (31)
100. *Šubinski v. Slovenia*, 2007 թվականի հունվարի 18-ի վճիռ (41)
101. *Tanrıkulu v. Turkey*, 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռ (27)

102. *Ter-Sargsyan v. Armenia*, 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ (67)
103. *The Sunday Times v. the United Kingdom*, 1979 թվականի
ապրիլի 26-ի վճիռ (31)
104. *Topić v. Croatia*, 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռ (42), (75)
105. *Turquin c. France*, 2002 թվականի հունվարի 24-ի (17)
106. *V. v. The United Kingdom*, 1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռ (29)
107. *Vallée v. France*, 1994 թվականի ապրիլի 26-ի վճիռ (29)
108. *Van Vondel v. The Netherlands*, 2007 թվականի
հոկտեմբերի 25-ի վճիռ (17)
109. *Virabyan v. Armenia*, 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռ (27)
110. *Voskerchyan v. Armenia*, 2018 թվականի
հոկտեմբերի 18-ի վճիռ (45), (46), (56)
111. *Walchli v. France*, 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռ (5), (18)
112. *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27-ի վճիռ (29)
113. *Wisse c. France*, 2005 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռ (38)
114. *Zalyan and others v. Armenia*, 2016 թվականի մարտի 17-ի վճիռ (27)
115. *Zimmermann and Steiner v. Switzerland*, 1983 թվականի
հուլիսի 13-ի վճիռ (29)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՍԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(31)
2. ՍԴՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(7), (31)
3. ՍԴՈ-720, 2007 թվականի դեկտեմբերի 11	(69)
4. ՍԴՈ-765, 2008 թվականի հոկտեմբերի 8	(31)
5. ՍԴՈ-832, 2009 թվականի սեպտեմբերի 22	(69)
6. ՍԴՈ-849, 2009 թվականի դեկտեմբերի 22	(31)
7. ՍԴՈ-852, 2010 թվականի հունվարի 19	(31)
8. ՍԴՈ-926, 2010 թվականի նոյեմբերի 23	(17)
9. ՍԴՈ-936, 2011 թվականի փետրվարի 8	(7), (31), (43), (44)
10. ՍԴՈ-997, 2011 թվականի նոյեմբերի 15	(31)
11. ՍԴՈ-1074, 2013 թվականի փետրվարի 5	(29)
12. ՍԴՈ-1099, 2013 թվականի մայիսի 31	(26), (56)
13. ՍԴՈ-1174, 2014 թվականի նոյեմբերի 4	(62)
14. ՍԴՈ-1190, 2015 թվականի փետրվարի 10	(44)
15. ՍԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(44)
16. ՍԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(43)
17. ՍԴՈ-1270, 2016 թվականի մայիսի 3	(31)
18. ՍԴՈ-1348, 2017 թվականի փետրվարի 14	(10), (59), (60), (61)
19. ՍԴՈ-1373, 2017 թվականի հունիսի 13	(3), (16)
20. ՍԴՈ-1387, 2017 թվականի նոյեմբերի 21	(21)
21. ՍԴՈ-1420, 2018 թվականի հունիսի 19	(5), (18)
22. ՍԴՈ-1431, 2018 թվականի հոկտեմբերի 23	(8), (42), (75)
23. ՍԴՈ-1446, 2019 թվականի փետրվարի 19	(13)
24. ՍԴՈ-1452, 2019 թվականի ապրիլի 2	(31)
25. ՍԴՈ-1459, 2019 թվականի մայիսի 7	(31)
26. ՍԴՈ-1480, 2019 թվականի հոկտեմբերի 15	(45), (46), (47), (63)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴԻ/0017/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վրեժ Ռուդիկի Հախվերդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժանմունքում 2009 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 36103309 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Վրեժ Հախվերդյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ: Նույն օրը որոշում է կայացվել նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Վ.Հախվերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2009 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև մեղադրյալ Վ.Հախվերդյանի հայտնաբերումը:

1.1 Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքի Կենտրոնականի շրջանային դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 31-ի դատավճռով Վ.Հախվերդյանը ՌԴ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածի 5-րդ մաս-228-րդ հոդվածի 1-ին մասով և ՌԴ քրեական օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մաս-228.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հանցագործությունների կատարման համար դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի 8 (ութ) ամիս ժամկետով:

1.2 2017 թվականի հունվարի 12-ին Վ.Հախվերդյանը հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը և նախաքննության մարմնի՝ նույն օրվա որոշմամբ կասեցված գործի վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ Վ.Հախվերդյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա որոշմամբ մեղադրյալ Վ.Հախվերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերահաստատվել է:

2017 թվականի մարտի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճռով Վրեժ Հախվերդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նշանակված պատիժն մասնակիորեն գումարվել է Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքի Կենտրոնականի շրջանային դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 31-ի դատավճռով նշանակված պատիժից 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումը և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով: Նշանակված պատիժն հաշվակցվել է Ռուսաստանի Դաշնությունում կրած պատիժի ժամկետը՝ 3 (երեք) տարի 8 (ութ) ամիսը և թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով՝ պատիժի սկիզբը հաշվելով 2016 թվականի հունվարի 15-ից: Նույն դատավճռով Վ.Հախվերդյանի

նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

3. Տավուշի մարզի դատախազ Վ.Գրիգորյանի և ամբաստանյալ Վ.Հախավերդյանի պաշտպան Վ.Ներկարարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ դատախազի բողոքը մերժել է, պաշտպանի բողոքը բավարարել մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 27-ի դատավճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է՝ Վ.Հախավերդյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքի Կենտրոնականի շրջանային դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 31-ի դատավճռով նշանակված պատժից 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումը և վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցվել է Ռուսաստանի Դաշնությունում կրած պատժի ժամկետը՝ 3 (երեք) տարի 8 (ութ) ամիսը և թողնվել է կրելու ազատազրկում՝ 4 (չորս) տարի 10 (տաս) ամիս ժամկետով: Մնացած մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնվել է անփոփոխ:

4. Վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Վ.Հախավերդյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա*՝ 2009 թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 21-ի սահմաններում, (...) վիճաբանել է (...) Գուրգեն Համլեյրի Մելքոնյանի հետ, որի ընթացքում վերցնելով սեղանին դրված խոհանոցային դանակը սպանելու դիրավորությամբ հարվածել և սպանել է վերջինիս (...)»¹:

5.1 Տուժողի իրավահաջորդ Ն.Ասատրյանը դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրը, երբ ամուսինը՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 253:

Գուրգեն Մելքունյանը վերադարձել է տուն, եղել է ամբողջովին արյունվա, կրծքից բռնած: Ամուսնու կրծքավանդակի ձախ մասում վնասվածք է եղել, որն ուժեղ արնահոսել է: Ինքը փորձել է սավանի օգնությամբ դադարեցնել կամ թուլացնել արյունահոսությունը, միաժամանակ գանգահարել է շտապօգնություն: Այդ ընթացքում ամուսինը հասցրել է իրեն պատմել, որ Վալերենց տանը, դեռ սուրճը չի ամած, այնտեղ է եկել Վրեժը և նրանց հրավիրել մասնակցելու իր ծննդյան օրվա առիթով Դիլիջանի հուշարձանի մոտ գտնվող տաղավարում կազմակերպած խնջույքին: Գուրգենի կողմից մերժում ստանալով Վրեժը հայիոյել է նրան: Ի պատասխան՝ Գուրգենն ասել է, թե ինչու է ուրիշի օջախում հայիոյանք տալիս և հարվածել է նրա քթին: Առաջարկել է դուրս գալ, դրսում հարցերը պարզաբանել: Դուրս գալիս մի պահ հետ է շրջվել և հենց այդ պահին էլ Վրեժը նրա կրծքավանդակին հարվածել է, նույնիսկ չի հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվել: Վրեժն անմիջապես թողել-հեռացել է: Գուրգենն էլ վերքն արնահոսելով մի կերպ հասել է տուն: Դեպքից հետո երբևէ չի հանդիպել Վալերի Անթանեսյանին, քանի որ պարզելու ոչինչ չի ունեցել, ինքը չի կասկածել ամուսնու խոսքերին¹:

5.2 Վկա Վ.Անթանեսյանը նախաքննության ընթացքում ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր տնից բացակայում է խոհանոցային դասակը, որը դրված է եղել խոհանոցի սեղանին: Իր կարծիքով Վրեժն այդ դասակով Գուրգենին հարվածել է իր տան մուտքի դռան մոտ: Նշված դասակը դրված է եղել խոհանոցի սեղանին՝ գդալների հետ: Այն եղել է պետական արտադրության, 10-20-25 սմ չափերի²:

5.3 Դիակի արտաքին գննության՝ 2009 թվականի հոկտեմբերի 25-ի արձանագրության, կից լուսանկարչական հավելվածի համաձայն՝ Գ.Մելքունյանի դիակի կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսային ներքանից 132-134սմ վերև, աջ հարկրծոսկրային գծով 4-5-րդ միջկողային տարածությամբ առկա է 3.3+1.0սմ չափերի, հարթ եզրերով, սուր անկյուններով, կրծքավանդակի խոռոչը թափանցող, քիչ վերից վար, ձախից աջ թեքությամբ վերք: Ձախ սրունքի 2/3-ի առաջաներսային մակերեսին՝ ներքանից 34-38 սմ վերև, առկա են 4.0+0.5սմ չափերի աղեղնաձև քերծվածքներ³:

5.4 Դիակի դատաբժշկական փորձաքննության՝ 2009 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 35-Դ եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասի համաձայն՝ դիակի արտաքին ուսումնասիրությամբ պարզվել է, որ կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսին՝ ներքանից 132-134սմ վեր, աջ հարկրծոսկրային գծով, 4-5-րդ միջկողային տարածությամբ, առկա է 3.3+1.0սմ չափերի, հարթ եզրերով, սուր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 28-30:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 13-14, 39-40:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 25:

անկյուններով, կրծքավանդակի խոռոչը թափանցող, քիչ վերից վար, ձախից-աջ թեքության վերք: Աջ ծնկահողի առաջային մակերեսին՝ ներքանից 50 սմ վեր, առկա է 1.5+0.5 սմ չափերի, օվալաձև քերծվածք: Ձախ սրունքի մ/3-ի առաջաներսային մակերեսին՝ ներքանից 34-38 սմ վեր, առկա է 4.0+0.5 սմ չափերի, աղեղնաձև վերք:

Նույն եզրակացության համաձայն՝ դիակի ներքին ուսումնասիրությամբ պարզվել է, որ աջից 4-5-րդ միջկողային տարածության փափուկ հյուսվածքները, անոթները և առպատային պլերան 3.3+0.5սմ չափերի վնասված է: Սրտապարկը աջից 1.5+0.5սմ չափերի (հարթ եզրերով, սուր անկյուններով) վնասված է: Աջ նախասրտի շրջանում կա 1.5+0.5սմ չափերի, խոռոչը թափանցող վնասվածք: Աջ թոքի վերին բլթի 3-րդ՝ առաջնային սեգմենտի ստորին փեշին կա 1.5+0.5 չափերի, միջանցիկ վնասվածք:

Նույն եզրակացության հետևությունների համաձայն՝ հանգուցյալ Գ.Մելքումյանի մահը վրա է հասել տրավմատիկ և հեմոռագիկ շոկից, որն էլ պայմանավորված է կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած թափանցող վերքի, աջ 4-5-րդ միջկողային տարածության մկանների, անոթների, առպատային պլերայի, աջ թոքի վերին բլթի 3-րդ՝ առաջային սեգմենտի ստորին փեշի միջանցիկ, **սրտապարկի և աջ նախասրտի խոռոչները թափանցող վիրավորումներով**, արտաքին և ներքին արյունահոսությամբ, ներքին օրգանների սակավարյունությամբ, ծնկահողի և սրունքի քերծվածքներով:

Ելնելով վաղ դիակային երևույթների զարգացվածության աստիճանից կարելի է ասել, որ հանգուցյալ Գ.Հ.Մելքումյանի մահը վրա է հասել դիակի դատաբժշկական փորձաքննությունից մոտ 12-16 ժամ առաջ (փորձաքննությունը սկսվել է 2009 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 12:00-13:30):

Գ.Հ. Մելքումյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած թափանցող վերք (վերքային խողովակի ընթացքով), մաշկի և ենթամաշկի, 4-5-րդ միջկողային տարածության մկանների, անոթների, առպատային պլերայի, աջ թոքի վերին բլթի 3-րդ՝ առաջային սեգմենտի ստորին փեշի միջանցիկ, **սրտապարկի և աջ նախասրտի խոռոչները թափանցող վիրավորումներ**, արտաքին և ներքին արյունահոսություն, որոնք հասցվել են կենդանության օրոք, ծակող-կտրող գործիքի (հնարավոր է՝ դանակի) ներգործության հետևանքով, հնարավոր է՝ որոշմամբ նշված ժամանակահատվածում, սովորաբար կենդանի անձանց մոտ ունեն առողջության ծանր վնասի պատճառման հատկանիշներ, մահվան պատճառի հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ և որոնք էլ բերել են մահվան: **Կրծքավանդակի շրջանի վերքային խողովակն ունի աջից ձախ, դրսից ներս ուղղություն:**

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 69-72:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Գալարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված արարքը՝ սպորինարար մեկ ուրիշին դիտարկությանը կյանքից զրկելը, կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտարկությանը, ընդ որում՝ փվյալ դեպքում Վրեժ Ռուդիկի Հախվերդյանի մեղքը դրսևորվել է անուղղակի դիտարկության ձևով, այն է՝ նա գիտակցել է իր արարքի՝ րուժողի կյանքի և առողջության համար վրանգավոր բնույթը, նախատեսել է այդպիսի վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքների վրա հասնելը, բայց գիտակցաբար թույլ է րվել դրանք:

Վերոգրյալ փաստերի հիման վրա դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ամբաստանյալ ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի բնակիչ, 25.10.1981թ. ծնված Վրեժ Ռուդիկի Հախվերդյանը 2009թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 181-րդ շենքի 5-րդ բնակարանում վիճարանել է Դիլիջան քաղաքի բնակիչ Գուրգեն Համելի Մելքումյանի հետ, որի ընթացքում վերցնելով սեղանին դրված խոհանոցային դանակը, սպանելու դիտարկությանը հարվածել է սպանել է վերջինիս: (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը գրնում է, որ միայն մարմնական վնասվածքի րեղակայումը՝ րվյալ դեպքում կրժրավանդակի շրջանում և օգրագործված գործիքը՝ դանակը, դեռևս բավարար չէ հիմնավոր եզրահանգում կատարելու այն մասին, որ դանակով հարվածելու պահին Վ.Հախվերդյանի դիտարկությանն ուղղված է եղել Գ.Մելքումյանին կյանքից զրկելուն: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, Վ.Հախվերդյանը առաջնային հետևանքի՝ Գ.Մելքումյանի առողջությանը ծանր վնաս պարձատելու նկարմամբ դրսևորել է դիտարկություն, իսկ երկրորդական և առավել ծանր հետևանքի՝ նրա մահվան նկարմամբ՝ անզգուշություն: Դրա մասին են վկայում հանցավորի և րուժողի փոխհարաբերությունները դեպքին նախորդող ժամանակահատվածում եղել են հարևաններ, որևէ լարվածություն, որևէ թշնամանք նախկինում չեն ունեցել, հարվածի քանակը՝ մեկ հարված, և այն, որ հանցավորն իր գործողությունները դադարեցրել է կամովին, մեկ անգամ հարվածելուց հետո, ունենալով ռեսպ հնարավորություն, այլևս չի փորձել րուժողին հարվածել, թողել, հեռացել է, ամբաստանյալի հանցավոր գործողությունների դադարեցմանը որևէ մեկը որևէ ձևով չի նպասրել: Այսինքն՝ ամբաստանյալի գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հանցակազմի պարտադիր հարկանիշը՝ սուբյեկտիվ կողմը, այն է՝ րուժողին սպորինարար կյանքից զրկելու դիտարկությունը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 1-7:

Առաջին աստիճանի դատարանում հետազոտված ապացույցները հնարավորություն են տալիս հաստատել համարելու վերը նշված փաստական հանգամանքները և ամբաստանյալ Վրեժ Հախվերդյանին առաջադրված մեղադրանքը վերադրակելու ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հաստատել է համարում, որ 2009թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 181 շենքի 5-րդ բնակարանում Վ.Հախվերդյանը կենցաղային հողի վրա վիճարանել է Դիլիջան քաղաքի բնակիչ Գ.Մելքումյանի հետ, որի ընթացքում վերցնելով սեղանին դրված խոհանոցային դանակը, հարվածել է վերջինիս կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսին, նրա առողջությանը դիտարկությանը պատճառելով ծանր վնաս, որն անզուգույնյալը առաջացրել է Կրծքի Գ.Մելքումյանի մահը: Այսինքն՝ Վրեժ Հախվերդյանը կատարել է հանցավոր արարք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, որի համար պետք է ենթարկվի քրեական պարտախանարության և պարժի: Նման դատական ակտի կայացումը բխում է արդարադատության արդյունավետության շահերից և ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտում չի առաջացնում»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոշարադրյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը օրինական և հիմնավորված չէ, ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանություններով.

9. Մասնավորապես բողոքաբերը նշել է, որ Վ.Հախվերդյանին մեղաազրված և ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով որակված արարքը վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, ստորադաս դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել այնպիսի փաստական հանգամանքներ, ինչպիսիք են, հանցագործության կատարման եղանակը, այն կատարելու համար օգտագործված գործիքը, տուժողի վնասվածքի բնույթն ու տեղակայումը, ամբաստանյալի դրսևորած վարքագիծը և դեպքին նախորդող պահին նրանց միջև եղած լարվածությունը: Արդյունքում, ըստ բողոքաբերի, ստորադաս դատարանը եկել է սխալ եզրահանգման Վ.Հախվերդյանի կողմից կատարված արարքի քրեախրավական որակման վերաբերյալ:

10. Անդրադատնալով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժին՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանների կողմից

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 77-97:

թույլ է տրվել նյութական օրենքի էական խախտում, ինչն ազդել է գործի ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել նրա կատարած հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, վերջինիս նկատմամբ նշանակել են ակնհայտ մեղմ պատիժ՝ չհետևելով պատիժ նշանակելու սկզբունքների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Վ.Հախվերդյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ) նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Սպանությունը՝ սպորինսարար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է՝ (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տուժողի, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վրանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխարհայինության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխարհայինության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

(...)

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

(...)

14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ՝

(...):»:

14. Նախորդ կետում մեջբերված հանցակազմերի առնչությամբ

Վճռաբեկ դատարանը *Գևորգ Թոսունյանի և այլոց գործով* անդրադարձել է հանցավոր ինքնավստահությանը տուժողի մահն առաջացրած ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցակազմն անուղղակի դիտավորությամբ սպանությունից տարանջատելուն, քանի որ երկու դեպքում էլ անձը թեև նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն չի ցանկանում դրանք:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անուղղակի դիտավորությունը հանցավոր ինքնավստահությունից տարբերվում է վտանգավոր հետևանքները նախատեսելու աստիճանով և այդ հետևանքները «չցանկանալու» նկատմամբ դրսևորվող հոգեբանական վերաբերմունքով: Մասնավորապես՝ անուղղակի դիտավորության դեպքում հանցավորը՝

- նախատեսում է հետևանքների առաջացման իրական հնարավորությունը կոնկրետ իրադրության մեջ, գիտակցում է, որ եթե դրանք առաջանան, ապա միանշանակորեն բխելու են իր արարքից (գիտակցական չափանիշ),

- թեպետ չի ցանկանում հետևանքների առաջացումը, սակայն միևնույն ժամանակ դա թույլ չտալու համար չի դիմում ակտիվ գործողությունների: Այլ կերպ՝ հետևանքների առաջացման նկատմամբ դրսևորում է պասիվ հոգեբանական վերաբերմունք (կամային չափանիշ):

Հանցավոր ինքնավստահության դեպքում անձը՝

- նախատեսում է հետևանքների առաջացման ոչ թե իրական, այլ վերացական հնարավորությունը, ընդհանուր գծերով պատկերացնում է, որ այդպիսի արարքներն ընդհանրապես կարող են նման հետևանքներ առաջացնել, սակայն համոզված է, որ ոչ տվյալ դեպքում և տվյալ իրադրության մեջ (գիտակցական չափանիշ),

- ոչ միայն չի ցանկանում վտանգավոր հետևանքների առաջացումը, այլ նաև ակտիվ վարքագիծ է դրսևորում դրանց կանխարգելման ուղղությամբ: Այսպես՝ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը չի բավարարվում պարզապես չցանկանալով, հույսը չի դնում պատահականության վրա, այլ փորձում է իրական (ոեալ) գործողություններ կատարել հանրորեն վտանգավոր հետևանքները կանխելու համար (կամային չափանիշ)¹:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հանցավորի դիտավորության ուղղվածության հարցը և ըստ այդմ՝ արարքի ճիշտ քրեաիրավական որակման հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը,

¹ Տե՛ս Գևորգ Թոսունյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴ/0319/01/10 որոշումը, 18-րդ կետ:

վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), շարժառիթն ու նպատակը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն¹:

Այսպես՝ կոնկրետ իրադրությունում հասցված մարմնական վնասվածքների քանակը, բնույթն ու տեղակայումը, օրինակ, կենսական կարևոր օրգանների շրջանում բազմաթիվ մարմնական վնասվածքների առկայությունը, հարվածների ուժգնությունը և ինտենսիվությունը, համակատարողների առկայությունն ու քանակը, նրանցից յուրաքանչյուրի գործողությունների բնույթը, ինչպես նաև տուժողի մահը կանխելու ուղղությամբ քայլեր չձեռնարկելը, նման հետևանքի առաջացման նկատմամբ անտարբերություն դրսևորելը կարող են վկայել այն մասին, որ հանցավորը տուժողին մահ պատճառելու իրական հնարավորությունն առնվազն նախատեսում է, գիտակցում է, որ եթե մահն առաջանա, ապա բխելու է իր արարքներից, մինչև ժամանակ անտարբերություն է դրսևորում դրա առաջացման նկատմամբ կամ հույսը դնում է գոյություն չունեցող, վերացական հանգամանքների վրա, այսինքն՝ գործում է անուղղակի դիտավորությամբ: Հետևաբար, նման դեպքերում անձի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի համապատասխան մասով՝ որպես սպանություն:

Մինչդեռ այն դեպքերում, երբ մահը վրա է հասնում կենսական ոչ կարևոր կամ թեկուզ կենսականորեն կարևոր օրգաններին, բայց այնպիսի գործիքով կամ եղանակով վնաս հասցնելու արդյունքում, որոնք չեն վկայում մահ պատճառելու իրական հնարավորությունը նախատեսելու մասին, ինչպես նաև եթե համապատասխան արարքը կատարելուց հետո հնարավոր մահը կանխելու նպատակով հանցավորի կողմից ակտիվ գործողություններ են ձեռնարկվում, վկայում են հանցավորի մոտ տուժողին սպանելու դիտավորության բացակայության մասին, հետևաբար արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ որպես առողջությանը դիտավորությամբ ծանր վնասի պատճառում, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ²:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ամբաստանյալ Վ.Հախվերդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ս.Հունիկյանի* գործով 2008 թվականի փետրվարի 29-ին կայացված թիվ ՎԲ-11/08, *Ա.Բաղդասարյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԷԴ/0168/01/10, *Գ.Մանուկյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշումները:

² Տե՛ս Գևորգ Թոսունյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴ/0319/01/10 որոշումը, 19-րդ կետ:

քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա 2009 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ժամը 21-ի սահմաններում, վիճաբանել է Գուրգեն Համլետի Մելքումյանի հետ, որի ընթացքում վերցնելով սեղանին դրված խոհանոցային դանակը սպանելու դիտավորությամբ հարվածել և սպանել է վերջինիս¹,

- ըստ դիակի արտաքին գնության՝ տուժողի կրծքավանդակին առկա է **3.3+1.0սմ** չափերի հարթ եզրերով, սուր անկյուններով վերք²,

- Գուրգեն Մելքումյանի դիակի ներքին ուսումնասիրությամբ պարզվել է, որ աջից 4-5-րդ միջկողային տարածության փափուկ հյուսվածքները, անոթները և առպատային պլևրան վնասված է **3.3+0.5սմ** չափերի, սրտապարկը՝ աջից **1.5+0.5սմ** չափերի (հարթ եզրերով, սուր անկյուններով): Աջ նախասրտի շրջանում առկա է **1.5+0.5սմ** չափերի, խոռոչը թափանցող վնասվածք, իսկ աջ թոքի վերին բլթի 3-րդ՝ առաջային սեգմենտի ստորին փեշին առկա է **1.5+0.5** չափերի, միջանցիք վնասվածք³,

- Գուրգեն Մելքումյանի մահը վրա է հասել տրավմատիկ և հեմոռագիկ շոկից, որն էլ պայմանավորված է կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած թափանցող վերքի, աջ 4-5-րդ միջկողային տարածության մկանների, անոթների, առպատային պլևրայի, աջ թոքի վերին բլթի 3-րդ՝ առաջային սեգմենտի ստորին փեշի միջանցիկ, **սրտապարկի և աջ նախասրտի խոռոչները թափանցող վիրավորումներով**, արտաքին և ներքին արյունահոսությամբ, ներքին օրգանների սակավարյունությամբ: Դրանք կենդանի անձանց մոտ ունեն առողջության ծանր վնասի պատճառման հատկանիշներ, մահվան պատճառի հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ և որոնք էլ բերել են մահվան: **Կրծքավանդակի շրջանի վերքային խողովակն ունի աջից ձախ, դրսից ներս ուղղություն⁴**,

- Առաջին ստյանի դատարանն ամբաստանյալ Վ.Հախվերդյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ հաստատված համարելով ամբաստանյալի կողմից խոհանոցային դանակով տուժողին սպանելու դիտավորությամբ հարվածելու և սպանելու փաստը: Մինևույն ժամանակ դատարանն արձանագրել է, որ *Վրեժ Հախվերդյանի մեղքը դրսևորվել է անուղղակի դիրավորության ձևով՝ նա գիտակցել է իր արարքի՝ տուժողի կյանքի և առողջության համար վրանգավոր բնույթը, նախադեսել է այդպիսի վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքների վրա հասնելը, բայց գիտակցաբար թույլ է տրվել դրանք⁵*,

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.3-րդ, 5.4-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 5.4-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն տեղում:

⁵ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Վ.Հախվերդյանին առաջադրված մեղադրանքը վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ որպես առողջությանը դիտավորությանը ծանր վնասի պատճառում, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, նշել է, որ միայն մարմնական վնասվածքի տեղակայումը՝ տվյալ դեպքում կրծքավանդակի շրջանում և օգտագործված գործիքը՝ դանակը, դեռևս բավարար չեն հիմնավոր եզրահանգում կատարելու այն մասին, որ դանակով հարվածելու պահին Վ.Հախվերդյանի դիտավորությունն ուղղված է եղել Գ.Մելքումյանին կյանքից զրկելուն: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Վ.Հախվերդյանն առաջնային հետևանքի՝ Գ.Մելքումյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու նկատմամբ դրսևորել է դիտավորություն, իսկ երկրորդական և առավել ծանր հետևանքի՝ նրա մահվան նկատմամբ՝ անզգուշություն: Դրա մասին են վկայում հանցավորի և տուժողի փոխհարաբերությունները դեպքին նախորդող ժամանակահատվածում՝ եղել են հարևաններ, որևէ լարվածություն, որևէ թշամանք նախկինում չեն ունեցել, հարվածի քանակը՝ մեկ հարված, և այն, որ հանցավորն իր գործողությունները դադարեցրել է կամովին, մեկ անգամ հարվածելուց հետո, ունենալով ռեալ հնարավորություն, այլևս չի փորձել տուժողին հարվածել, թողել, հեռացել է, ամբաստանյալի հանցավոր գործողությունների դադարեցմանը որևէ մեկը որևէ ձևով չի նպաստել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի համոզմամբ ամբաստանյալի գործողություններում բացակայում է տուժողին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությունը:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Վ.Հախվերդյանի կատարած արարքի քրեաիրավական որակումը որոշելիս պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամբաստանյալ Վ.Հախվերդյանին մեղսագրված արարքի իրավական որակումը որոշելիս անհրաժեշտ էր բացահայտել հանցավորի դիտավորության ուղղվածությունը՝ մանրամասն վերլուծության ենթարկելով գործի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հանցագործության գործիքը, մարմնական վնասվածքի բնույթն ու տեղակայումը, հարվածի ուժգնությունը, հանցավորի դրսևորած վարքագիծը, շարժառիթը:

Այսպես, ամբաստանյալ Վ.Հախվերդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով որակելիս՝ Վերաքննիչ դատարանը չի գնահատել, թե ամբաստանյալ Վ.Հախվերդյանը տուժողին

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

վնաս պատճառելիս կարող էր նախատեսել վտանգավոր հետևանքների առաջացման վերացական հնարավորությունն այն դեպքում, երբ խոհանոցային դանակով դիտավորությամբ հարվածել է տուժողի կրծքավանդակի աջ կեսի առաջային մակերեսին՝ կենսական կարևոր օրգանի՝ սրտի շրջանում, պատճառելով, ի թիվս այլոց, սրտապարկի և աջ նախասրտի խոռոչները թափանցող վիրավորումներ, որոնք անմիջական պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում տուժողի մահվան հետ: Այսինքն՝ նկարագրված գործիքով, ի թիվս այլոց, սրտապարկի և աջ նախասրտի խոռոչները թափանցող վիրավորումներ պատճառելիս արդյո՞ք ամբաստանյալը կարող էր լինել համոզված, որ տվյալ դեպքում և տվյալ իրադրության մեջ տուժողի մահվան ձևով հետևանքներ առաջանալ չեն կարող (գիտակցական չափանիշ): Այդ համատեքստում թեև Վերաքննիչ դատարանը նշել է, որ միայն մարմնական վնասվածքի տեղակայումը և օգտագործված գործիքը բավարար չէ հիմնավոր եզրահանգում կատարելու համար Վ.Հախվերդյանի դիտավորության ուղղվածության մասին, սակայն հաշվի չի առել, որ նշված հանգամանքները պետք է համակողմանի գնահատման ենթարկվեին ներկայացված չափանիշների լույսի ներքո:

Վերոնշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առնվազն համոզիչ չէ Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ Վ.Հախվերդյանը դանակով դիտավորությամբ տուժողին սրտի շրջանում հարվածելով և սիրտը վնասելով, վրա հասած հետևանքի՝ մահվան նկատմամբ դրսևորել է անզգուշություն:

Բացի այդ, ամբաստանյալ Վ.Հախվերդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով որակելիս՝ Վերաքննիչ դատարանը չի գնահատել, թե ամբաստանյալ Վ.Հախվերդյանը չցանկանալով տուժողի մահվան ձևով հետևանքի առաջացումը՝ արդյո՞ք դրսևորել է ակտիվ վարքագիծ՝ դրա կանխարգելման ուղղությամբ, այն է՝ հույսը չդնելով պատահականության վրա՝ փորձել է իրական (ոեալ) գործողություններ կատարել հանրորեն վտանգավոր հետևանքները կանխելու համար (կամային չափանիշ):

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից նշված այն հանգամանքներին, որ հանցավորը և տուժողը դեպքին նախորդող ժամանակահատվածում՝ եղել են հարևաններ, որևէ լարվածություն, որևէ թշնամանք նախկինում չեն ունեցել, ապա պետք է փաստել, որ միայն դրանք, ինքնին, վերը նշված հանգամանքներից կտրված, չեն կարող էական նշանակություն ունենալ հանցավորի դիտավորության ուղղվածությունը և արարքի քրեաիրավական որակումը որոշելիս: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման ենթարկեր հանցավորի և տուժողի վարքագիծը, նրանց փոխհարաբերությունը նաև դեպքին անմիջապես նախորդող և հաջորդող

պահերին: Մասնավորապես, տվյալ պարագայում պետք է հաշվի առնվեր, որ դեպքի պահին հանցավորի և տուժողի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, քաջքշուկ, կողմերը միմյանց հարվածել են, որի ընթացքում հանցավորը խոհանոցային դանակով հարվածել է տուժողին, ապա թողել հեռացել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից նշված այն հանգամանքին, որ հանցավորը մեկ անգամ է հարվածել տուժողին, ապա հարկ է նշել, որ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ այդ հարվածը հասցվել է տուժողի կենսական կարևոր օրգանին՝ սրտին, ինչն էլ դեպքից կարճ ժամանակ անց հանգեցրել է տուժողի մահվան:

Վերոնշյալի պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում՝ ամբաստանյալի կողմից հանցանքը կատարելուց հետո իր գործողությունները կամովին, առանց որևէ միջամտության դադարեցնելու, մեկ անգամից ավել տուժողին չհարվածելու հանգամանքներին Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալի արարքի քրեաիրավական որակման հարցում էական նշանակություն տալը:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Վ.Հախվերդյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դիտավորությամբ առողջությամբ ծանր վնաս պատճառելն, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ) նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

17. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելով և Վ.Հախվերդյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով վերադրակելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է և հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

18. Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշելով, որ ամբաստանյալը տուժողին կյանքից զրկելիս գործել է անուղղակի դիտավորությամբ, հաստատված է համարել ամբաստանյալի կողմից խոհանոցային դանակով տուժողին սպանելու դիտավորությամբ հարվածելու և սպանելու փաստը, ինչը վկայում է հանցավորի կողմից ուղղակի դիտավորությամբ գործելու մասին: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը, հստակ իրավական գնահատականի չի արժանացրել Վ.Հախվերդյանի դիտավորության ուղղվածությունը:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը սույն որոշմամբ արձանագրված չափանիշների լույսի ներքո պետք է վերացնի թույլ տրված խախտումները, հստակ որոշի ամբաստանյալի դիտավորության ուղղվածությունը և նրան մեղսագրված արարքի քրեախրավական որակումը՝ անդրադառնալով նաև բողոքաբերի կողմից բարձրացված՝ ամբաստանյալի նկատմամբ պատժի նշանակման վերաբերյալ սույն որոշման 10-րդ կետում նշված փաստարկներին:

18. Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Վրեժ Ռուդիկի Հախվերդյանի կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վրեժ Ռուդիկի Հախվերդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԳ1/0016/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Վ.ԱՂԱՍՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Սերգեյ Արթուրի Ավանեսյանի պաշտպան Ռ.Ավանեսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայագորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90971015 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունվարի 16-ի որոշմամբ Սերգեյ Արթուրի Ավանեսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի փետրվարի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասու-

թյան առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի դատավճռով ամբաստանյալ Ս.Ավանեսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, ամբաստանյալ Ս.Ավանեսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով և քրեական պատասխանատվությունից ազատել՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու պատճառաբանությամբ:

Վերոհիշյալ դատական ակտի կապակցությամբ հատուկ կարծիք է ներկայացրել դատավոր Ն.Հովակիմյանը՝ նշելով, որ համակարծիք է Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտում արտահայտված այն իրավական դիրքորոշման հետ, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի հափշտակությունը զգալի չափի գողություն չէ և հետևապես քրեորեն պատժելի չէ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Ավանեսյանի պաշտպան Ռ.Ավանեսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Ավանեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ն]ա հանդիսանալով ՊԲ 36534 զորամասի ԱԿՀԿ տեխնիկ-օպերատոր, կոչումով ենթասպա, 2015 թվականի օգոստոսի 17-ին 19:30-ի սահմաններում, ԼՂՀ Մարտունի քաղաքում տեղակայված ԱԶ «Սրեփանյան Հրաչիկ» մթերային խանութում, օգրվելով խանութի գործակալուար Մենորիկ Մերգելի Մարգարյանի սրահից բացակայելու հանգամանքից, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու շարժառիթով, խանութի դրամարկղից գաղտնի հափշտակել է 5000 ՀՀ դրամ կանխիկ գումար և «Դարաբաղ Տեղեկում» ՓԲԸ բաժանորդների բջջային հեռախոսակապի լիցքավորման 5 հարբարի 5000 ՀՀ դրամ արժողությամբ՝ ընդհանուր առմամբ «Սրեփանյան

Հրաչիկ» ԱԶ-ին պարգևատրելով զգալի չափի հասնող՝ 10.000 ՀՀ դրամ նյութական վնաս (...)»¹:

6. Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Ս.Ավանեսյանին արդարացնելով, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Առաջին ատյանի] դատարանը, (...) ապացույցները գնահատելով իրենց վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավաստության փեռանկյունից, գրնում է, որ (...) Սերգեյ Ավանեսյանի կողմից 2015 թվականի օգոստոսի 17-ին՝ 19:30-ի սահմաններում ԱԶ «Սրբեփանյան Հրաչիկ» մթերային խանութից «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ բաժանորդների բջջային հեռախոսակապի լիցքավորման 5 հար քարս՝ 5000 ՀՀ դրամ արժողությամբ, վերցնելու մասով նրան առաջադրված մեղադրանքը հիմնված է ենթադրությունների վրա, չի ապացուցվում թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար համակցությամբ և այդ մասով նրա անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ:

Հասարակված համարելով Սերգեյ Ավանեսյանի/ի կողմից 2015 թվականի օգոստոսի 17-ին՝ 19:30-ի սահմաններում ԱԶ «Սրբեփանյան Հրաչիկ» մթերային խանութից 5000 ՀՀ դրամ կանխիկ գումար վերցնելու հանգամանքը՝ (...) [Առաջին ատյանի] դատարանը հանգում է այն եզրահանգման, որ հինգ հազար ՀՀ դրամը քրեաիրավական առումով զգալի չափ չի հանդիսանում և հինգ հազար ՀՀ դրամի հափշտակությունը չի առաջացնում քրեական պարասխանարվություն: Հինգ հազար ՀՀ դրամի հափշտակությունը իրենից ներկայացնում է մանր չափերի գողություն, կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածով, հանդիսանում է զանցանք և առաջացնում է վարչական պարասխանարվություն:

[Առաջին ատյանի] դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է, ոչ միայն նրանով որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտում է համարվում հինգ հազար ՀՀ դրամը չգերազանցող գումարի գողությունը, այլ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համակարգային վերլուծությամբ (...)»²:

7. Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է, որ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «հնգապարիկից» բառը պետք է մեկնաբանել դրանում օգտագործված «ից» վերջածանցի ուղղակի իմաստը հաշվի առնելով, ինչը կոնկրետ դեպքում նշանակում է ոչ թե հնգապարիկը (5000 ՀՀ դրամը) գերազանցող, այլ հնգապարիկից (5000 ՀՀ դրամից) սկսած գումարը (արժեքը):

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 115-119:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 140-143:

(...)

Վերաքննիչ դալարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «նվազագույն աշխատավարձի հնգապարիկից» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև 5000 ՀՀ դրամի չափով գումարը (արժեքը): Այլ կերպ՝ գողության դեպքում զգալի չափի հաշվարկը սկսվում է 5000 ՀՀ դրամ գումարից (արժեքից):

(...)

Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապարիկը չգերազանցող գումարի չափով ուրիշի գույքի գաղտնի հափշտակության համար վարչական պարասիսանարվություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ տվյալ իրավախախտումը քրեական պարասիսանարվություն չի առաջացնում: Այլ կերպ, եթե կարարված իրավախախտման համար միաժամանակ նասիսարեւված է ն՝ վարչական ն՝ քրեական պարասիսանարվություն, ապա անձն ենթակա է քրեական պարասիսանարվության:

(...) Վերաքննիչ դալարանը հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում ձեռք է բերվել փոխկապակցված հավասարի ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը, հիմք է տալիս ապացուցված համարելու, որ Սերգեյ Ավանեսյանը «Սյրեփանյան Հրաչիկ» ԱԶ մթերային խանութի դրամարկից գաղտնի հափշտակել է 5000 ՀՀ դրամ կանխիկ գումար:

(...)

Դրա հետ մեկտեղ Վերաքննիչ դալարանը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով ապացուցված չի համարում Սերգեյ Ավանեսյանի կողմից «Սյրեփանյան Հրաչիկ» ԱԶ մթերային խանութի դրամարկից 5000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության բջջային հեռասիսակապի լիցքավորման հինգ քարտ վերցնելու հանգամանքը, ուստի արձանագրում է, որ այդ մասով ամբաստանյալ Սերգեյ Ավանեսյանին առաջադրված մեղադրանքով նրա նկատմամբ մեղադրական դարական ակտ կայացնելու որևէ իրավաչափ հիմք չկա: Հերևարար՝ անհիմն են վերաքննիչ բողոքում՝ այդ մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ բերված փաստարկները:

(...)

Վերաքննիչ դալարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Սերգեյ Ավանեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող հանցագործության համար քրեական պարասիսանարվության վաղեմության ժամկետն ավարտվել է 2017 թվականի օգոստոսի 17-ին (...):¹

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 131-139:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և չպատճառաբանված, դատարանի կողմից գործը քննվել ու դատական ակտը կայացվել է քրեական դատավարության սկզբունքների և նորմերի կոպիտ խախտումներով, սխալ են մեկնաբանվել ու կիրառվել նյութական իրավունքի նորմերը, ուստի Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման: Բողոքի հեղինակը, մասնավորապես, նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, քանի որ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմը, որը տվյալ գործով կիրառման ենթակա չէ:

Բողոքաբերը փաստել է, որ հիմնավոր են Առաջին ատյանի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն այն մասին, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի հափշտակությունը զգալի չափի գողություն չէ և հետևապես քրեորեն պատժելի չէ:

Բողոքաբերն իր անհամանաձայնությունն է արտահայտել Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ եթե անձի կողմից կատարած իրավախախտման համար միաժամանակ նախատեսված է թե վարչական և թե քրեական պատասխանատվություն, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված գողության հասարակ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ հափշտակության զգալի չափի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումար հափշտակելու մասով ամբաստանյալ Ս.Ավանեսյանին մեղսագրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսված հանցակազմի առկայության մասին Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ. «Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Սույն գլխում զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխարավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը), իսկ գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխարավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):»:

Սույն գլխում և սույն օրենսգրքի 216-րդ հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխարավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը): (...):»:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (...) իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխարավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը»:

11.1 ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրոյթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գողության եղանակով հափշտակության համար քրեական պատասխանատվություն առաջանում է՝ սկսած զգալի չափից, իսկ գողության համար օրենսդիրը նման չափ է սահմանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկից (հինգ հազար ՀՀ դրամից) հինգհարյուրապատիկը (հինգ հարյուր հազար ՀՀ դրամը) չգերազանցող գումարը (արժեքը)¹:

12. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ «1. Մանր չափերով հափշտակությունը՝ գողության, (...) միջոցով՝ առաջացնում է տուգանքի նշանակում (...):»:

(...)

3. Սույն հոդվածով նախատեսված մանր չափ է համարվում՝

1) գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխարավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) (...):»:

¹ Տե՛ս mutatis mutandis Վճռարեկ դատարանի՝ Շահեն Հովսեփյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԲԱԳ/0025/01/15 որոշումը:

12.1 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոշարադրյալ նորմի վերլուծությունից բխում է, որ վարչական պատասխանատվություն է նախատեսված մանր գողության, այսինքն՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկը (հինգ հազար ՀՀ դրամը) չգերազանցող գումարի (արժեքի) չափով կատարված հափշտակության համար:

13. Գողության եղանակով հափշտակության համար քրեական և վարչական պատասխանատվություն նախատեսող վերը նշված նորմերի և դրանց համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրն առանձնացրել է գողությունը՝ որպես վարչական իրավախախտում և որպես քրեական հանցանք՝ տարանջատման չափանիշ ընդունելով հափշտակության չափը, որը պետք է հաշվի առնվի պատասխանատվության կոնկրետ տեսակն ընտրելիս: Իսկ հափշտակության չափերի օրենսդրական տարբերակումն արտահայտվում է նրանում, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, գողության զանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ նախատեսելով մանր չափը, իբրև այդպիսին սահմանել է գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի **հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**, ինչը ենթադրում է, որ վարչական պատասխանատվություն սահմանված է մինչև 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումարը (արժեքը) ներառյալ կատարված հափշտակության համար: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքն իբրև գողության եղանակով հափշտակության զգալի չափ ամրագրել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի **հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**: Այլ կերպ՝ քրեական պատասխանատվությունը վրա է հասնում 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը գերազանցող գումարի (արժեքի) չափով հափշտակություն կատարելու դեպքում: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գողության հասարակ հանցակազմի համար հափշտակության չափի վերին սահմանը մինչև 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը ներառյալ գումարն է (արժեքը): Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար, անհրաժեշտ է, որպեսզի հափշտակված գումարը (արժեքը) գերազանցի նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, հաստատվում է նաև հափշտակության խոշոր չափի վերաբերյալ օրենսդրական կարգավորմամբ, համաձայն որի՝ նման չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի **հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**: Հաշվի առնելով, որ մինչև 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ

դրամը ներառյալ գումարը (արժեքը) ներառված է հափշտակության զգալի չափի մեջ, հետևաբար օգտագործելով «*հինգհարյուրապարկից*» եզրույթը՝ օրենսդիրն ի նկատի է ունեցել 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող գումարը (արժեքը): Ըստ այդմ, գողության եղանակով հափշտակության զգալի չափի օրենսդրական բնորոշման մեջ օգտագործվող «*հնգապարկից*» եզրույթը պետք է մեկնաբանվի որպես 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը գերազանցող գումար (արժեք):

Ուստի, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը) չի կարող դիտվել որպես գողության զգալի չափ և առաջացնել քրեական պատասխանատվություն:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ նախաքննության մարմինն Ս.Ավանեսյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա «Ստեփանյան Հրաչիկ» ԱԶ մթերային խանութի դրամարկղից գաղտնի հափշտակել է 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ կանխիկ գումար և «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ բաժանորդների բջջային հեռախոսակապի լիցքավորման հինգ քարտ՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ՝ ընդհանուր առմամբ «Ստեփանյան Հրաչիկ» ԱԶ-ին պատճառելով զգալի չափի հասնող՝ 10.000 (տաս հազար) ՀՀ դրամի նյութական վնաս¹:

14.1 Առաջին ատյանի դատարանը, հաստատված չհամարելով Ս.Ավանեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը, արդյունքում նրա նկատմամբ կայացրել է արդարացման դատավճիռ: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ բաժանորդների բջջային հեռախոսակապի լիցքավորման՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ հինգ քարտ հափշտակելու մասով Ս.Ավանեսյանին առաջադրված մեղադրանքը հիմնված է ենթադրությունների վրա, չի ապացուցվում թույլատրելի և վերաբերելի ապացույցների բավարար համակցությամբ և այդ մասով նրա անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ, իսկ հափշտակված 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ կանխիկ գումարը քրեահրավական առումով զգալի չափ չէ և չի առաջացնում քրեական պատասխանատվություն: Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի հափշտակությունն իրենից ներկայացնում է մանր չափերի գողություն, որը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածով²:

14.2 Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի

¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը:

175-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «նվազագույն աշխատավարձի հնգապատիկից» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով գումարը (արժեքը): Վերաքննիչ դատարանը նշել է, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումարի (արժեքի) չափով ուրիշի գույքի գաղտնի հափշտակության դեպքում անձը ենթակա է ոչ թե վարչական, այլ քրեական պատասխանատվության: Վերաքննիչ դատարանն իր այդ դիրքորոշումը հիմնավորել է նաև նրանով, որ եթե կատարված իրավախախտման համար միաժամանակ նախատեսված է նվարչական և քրեական պատասխանատվություն, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Վերաքննիչ դատարանը ևս հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով ապացուցված չի համարել Ս.Ավանեսյանի կողմից 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողության բջջային հեռախոսակապի լիցքավորման հինգ քարտ հափշտակելու հանգամանքը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը Ս.Ավանեսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, սակայն վերջինիս ազատել է քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով¹:

15. Սույն որոշման 14-14.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում ներկայացված իրավակարգավորումների և կատարված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Ավանեսյանի կողմից գողության եղանակով հափշտակված 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ կանխիկ գումարը չի հատում գողության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ զգալի չափի սահմանը, իսկ գողության օբյեկտիվ կողմի բացակայությունը վկայում է Ս.Ավանեսյանին մեղսագրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության մասին: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի այն կարգավորմանը՝ համաձայն որի՝ նույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան, ապա այս նորմը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված գողության մանր չափի վերին շեմը չի նույնանում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված գողության զգալի չափի նվազագույն շեմի հետ:

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումար հափշտակելու մասով ամբաստանյալ Ս.Ավանեսյանին մեղասգրված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության մասին Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը հիմնավոր չէ:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ս.Ավանեսյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասը, որը սույն գործով ենթակա չէր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, եկել է հիմնավոր եզրահանգման ամբաստանյալի անմեղության մասին: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի արդարացման դատավճիռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սերգեյ Արթուրի Ավանեսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մայիսի 17-ի արդարացման դատավճիռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0630/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
ասանակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Լ.ԱՍԼԱՆՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ Սոֆիո Զուրաբի Անդրեանյի պաշտպան Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Հ.Մարտիրոսյանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 50101018 քրեական գործը:

2018 թվականի հունիսի 1-ին Սոֆիո Զուրաբի Անդրեանյան ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 4-ի որոշմամբ Ս.Անդրեանյան ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հունիսի 4-ի որոշմամբ Ս.Անդրեևայի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Ս.Անդրեևային կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը:

4. Պաշտպան Լ.Ասլանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Լ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 17-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Թիվ ԵԴ/0630/06/18 գործով սրացված օրինականությունը և հիմնավորվածությունը հասարարող նյութերից պարզ է դառնում, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հուլիսի 26-ին րեղի ունեցած դատական նիստին մասնակցել են դատավարության բոլոր կողմերը՝ քննիչը, մեղադրյալը և վերջինիս պաշտպանը՝ վերաքննիչ բողոք ներկայացրած անձը:

Բացի այդ, Առաջին ատյանի դատարանի կողմից որոշումը հրապարակելուց հետո դատական ակտը փաստացի փրամադրվել է թե՛ քննիչին և թե՛ մեղադրյալին, իսկ պաշտպան Լուսինե Ասլանյանը որոշման օրինակն Առաջին ատյանի դատարանից առձեռն ստացել է միայն 2018 թվականի օգոստոսի 3-ին, այսինքն՝ որոշման հրապարակումից 8 օր անց:

Վերոգրյալի կապակցությամբ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ բողոքաբերի պարճառարանությունն առ այն, որ որոշումը սրացվել է 2018 թվականի օգոստոսի 3-ին (փաստացի բողոքարկման ժամկետի ավարտվելուց հետո) չի կարող դիրարկվել որպես օբյեկտիվ պարճառարանություն և վկայել բողոքարկման ժամկետի պահպանված լինելու մասին, քանզի դատական ակտի՝ հասանելի դառնալը կապված է եղել պաշտպանի սուբյեկտիվ հայեցողությամբ պայմանավորված ինդրի հետ,

իսկ Առաջին աստիճանի դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նահապետական պարզականությունների հիման վրա որոշումը կայացնելու օրն այն ստորագրությամբ հանձնել է կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին և մեղադրյալին, մինչդեռ պաշտպանի կողմից, ով, ինչպես նշվեց, մասնակցել է միջնորդության քննության վերաբերյալ դատական նիստին, չեն ձեռնարկվել համապատասխան գործողությունները, որոնք կարող էին ավելի վաղ հասանելի դարձնել որոշումը (այդ թվում՝ սեփական պաշտպանյալի միջոցով), որի բացասական հետևանքների կրողը փոխյալ դեպքում հենց ինքը բողոքաբերն է:

Արդյունքում պետք է փաստել, որ պաշտպանի՝ դատական ակտը սրանալու իրավունքն օբյեկտիվորեն պետք է իրացվեր հենց 2018 թվականի հուլիսի 26-ին, հետևաբար՝ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հուլիսի 26-ի դատական ակտի բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել հուլիսի 26-ից 5 օրվա ընթացքում, ուստի սրացվում է, որ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի դատական ակտի բողոքարկման ժամկետը սպառվում է 2018 թվականի հուլիսի 31-ին՝ ժամը 24:00-ին, մինչդեռ բողոքաբերի կողմից վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանին է հանձնվել միայն 2018 թվականի օգոստոսի 7-ին:

(...):

Սույն պարագայում, մեղադրյալ Սոֆիո Զուրարի Անդրեևայի պաշտպան Լուսինե Ասլանյանի վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել նկատի ունենալով, որ առերևույթ (*prima facie*) պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, մինչդեռ վերաքննիչ բողոքի լիարժեք քննության ընթացքում է վեր հանվել վերջինիս՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետը բաց թողած լինելու հանգամանքը, ուստի նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով տրված լիազորություններով, իրավունք ունի կայացնելու միայն վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ որոշում: (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել մեղադրյալի իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, այն է՝ պատշաճ կերպով չի գնահատել բոլոր այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, որոնց պատճառով ինքը բաց է թողել Առաջին աստիճանի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 3-րդ, թերթեր 31-32:

դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշման բողոքարկման ժամկետը: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Առաջին ատյանի դատարանի որոշումն առձեռն ստացել է այն բողոքարկելու համար նախատեսված ժամկետն ավարտվելուց հետո, ինչի պատճառով գրկվել է օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից:

7.1. Բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պաշտպանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը հաշվել է մեղադրյալ Ս.Անդրեևայի կողմից որոշումը ստանալու պահից: Մինչդեռ պաշտպանը համապատասխան դատական ակտն առձեռն ստացել է ավելի ուշ՝ 2018 թվականի օգոստոսի 3-ին, ուստի բողոքաբերի պնդմամբ Առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբն անհրաժեշտ էր հաշվարկել այն պահից, երբ որոշումը փաստացի հասու էր դարձել իրեն:

7.2. Բողոքաբերը նշել է, որ 2018 թվականի հուլիսի 26-ին Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած՝ Ս.Անդրեևայի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկու ամսով երկարացնելու վերաբերյալ նիստին մասնակցել է նաև ինքը, սակայն դատական ակտի հրապարակմանը չի սպասել, քանի որ նույն օրն այլ դատական նիստ է նշանակված եղել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, իսկ Վերաքննիչ դատարանը դատական ակտը հրապարակելու կոնկրետ ժամկետ չի նշել:

Բողոքաբերն իր անհամաձայնությունն է արտահայտել Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ եթե պաշտպանը ներկա է եղել դատական նիստին, սակայն հարգելի պատճառներով հեռացել է և չի սպասել որոշման հրապարակմանը, ապա դատարանը դատական ակտը պատշաճ ձևով վերջինիս ուղարկելու պարտավորություն այլևս չի կրել, ավելին՝ դատական ակտը հասանելի դարձնելու համար պաշտպանն ինքը պետք է միջոցներ ձեռնարկեր: Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանը նույնիսկ չի փորձել պարզել պաշտպանի կողմից դատարանի որոշումը նույն օրն առձեռն չստանալու պատճառները և եկել է եզրահանգման, որ վերջինս չի օգտվել այդ հնարավորությունից սուբյեկտիվ պատճառաբանությամբ, ինչի բացասական հետևանքների կրողը տվյալ դեպքում ինքն է:

8. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ նյութերն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավա-

կան հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պաշտպանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել մեղադրյալի և քննիչի կողմից այդ որոշումն ստանալու պահից:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

11. Մեջբերված սահմանադրական նորմերի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ, ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի անօտարելի իրավունքներից մեկն է և միաժամանակ այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց է ու երաշխիք: Սակայն խնդրո առարկա հիմնարար իրավունքը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի օբյեկտիվ պայմաններով: Մասնավորապես, դատական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու համար օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովելու քրեական դատավարության պատշաճ իրականացումը: Նշված ժամկետները, սակայն, չեն կարող լինել կամայական, դրանք պետք է լինեն ողջամիտ, ինչը ենթադրում է գործի մասնակից բոլոր անձանց շահերի հավասարակշռված հաշվառում, որպեսզի բացառվեն մի կողմից դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու անհիմն ուշացումները, մյուս կողմից՝ այդ ակտի դեմ բողոք բերելու անհամաչափ բարդությունները: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի ողջամտությունն ապահովված կհամարվի նախևառաջ այն դեպքում, եթե շահագրգիռ անձին բավարար ժամանակ տրամադրվի բողոքն օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ նախապատրաստելու և համապատասխան դատարան ներկայացնելու համար: Իրավունքների ենթադրյալ խախտումներից դատարանի առջև իրավական պաշտպանություն

հայցող անձի կողմից հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածի տևողությունը պայմանավորված է նաև այդ ժամկետի հաշվարկման ողջամիտ սկզբի սահմանմամբ¹:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի (...) միջոցով (...):»:

13. Վերոնշյալ իրավադրույթի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալը (կամ կասկածյալը) և պաշտպանը քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտներ են, ովքեր ունեն իրավունքների և պարտականությունների ինքնուրույն շրջանակ: Նրանց գործունեությունն ուղղված է միևնույն՝ պաշտպանության գործառույթի իրականացմանը, որի ուժով էլ նրանք լրացնում են միմյանց: Կասկածյալը կամ մեղադրյալն իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասը չի զիջում պաշտպանին, պաշտպանի իրավունքներն էլ ամացյալ չեն կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքներից: Պաշտպանը քրեական դատավարությանը մասնակցում է մեկ հիմնական նպատակով՝ պաշտպանել կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «(...) Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և փուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պարզաձև ձևով ուղարկում է նրանց (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում են.

(...)

3). «առաջին ասրյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հասարակությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից փաստօրյա ժամկետում. (...):»:

15. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՄԳՈ-1373 որոշման շրջանակներում փաստել է. «(...) բ/ (...) Օրենսգրքի 285-րդ

¹ Տե՛ս, mutatis mutandis, Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12, Մինաս Մկրտչյանի և Միքայել Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԷԴ/0110/01/12, Վահան Թորոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԱԴԲ/0005/15/16, Նավասարդ Ալավերդյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԴԻ/0143/01/14 որոշումները:

հողվածի 5-րդ մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնց հանձնվում կամ ուղարկվում է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը: Դրանք են՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձը, այսինքն՝ դատախազը կամ քննիչը, ինչպես նաև մեղադրյալը, պաշտպանը և փոխորդը»¹:

16. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածով նախատեսված՝ դատավճռի պատճենը ոչ միայն դատապարտվածին կամ արդարացվածին, այլև պաշտպանին հանձնելու համանման օրենսդրական պահանջին՝ Վճռաբեկ դատարանը Ն.Ալավերդյանի գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Դ-ի] առավելապես պայմանավորված է պաշտպանի՝ քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ լինելու հանգամանքով. այն նաև կասկածյալի ու մեղադրյալի պաշտպանության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու երաշխիք է: (...) [Պ]աշտպանի կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբ չի կարող սահմանվել պաշտպանյալի կողմից նաև պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պարձենը դատարանից սրանալու պահը, եթե այն փաստացի ավելի ուշ է հաստի դառնում պաշտպանին: (...) [Չ]բացառելով պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պարձենը պաշտպանյալի կողմից սրանալու հնարավորությունը, միևնույն ժամանակ արձանագրում է, որ նման դեպքում պաշտպանի կողմից դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի ոչ թե պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պարձենը պաշտպանյալի կողմից սրանալու պահից, այլ այն պահից, երբ այդ փաստաթուղթը հաստի է դարձել պաշտպանին: (...) [Դ]ատավճռի պարձենը պաշտպանյալի միջոցով պաշտպանին փոխանցելիս վերջինիս կողմից այն սրանալու պահի առնչությամբ գործնականում հնարավոր ինդիքների առաջացումից և չարաշահումներից խուսափելու համար դատարանը պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պարձենն օրենքով սահմանված կարգով պետք է հանձնի (ուղարկի) վերջինիս նույնիսկ այն դեպքում, երբ պաշտպանյալը դատարանից սրանում է նաև պաշտպանին հանձնման ենթակա համապատասխան փաստաթուղթը: Այլ խոսքով՝ պաշտպանին հանձնման ենթակա դատավճռի պարձենը պաշտպանյալի կողմից դատարանից սրանալը դատարանին չի ազդարում այդ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով պաշտպանին հանձնելու պարտավորությունից»:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշման 6-րդ կետը:

17. Ելնելով վերոնշյալ իրավական նորմերի և ներկայացված իրավական դիրքորոշումների վերլուծությունից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանքի վերաբերյալ դատական ակտն առաջին ատյանի դատարանը պետք է փաստացի հաստի դարձնի միջնորդություն հարուցած անձին, տուժողին, մեղադրյալին, ինչպես նաև *վերջինիս պաշտպանին*¹ դատական ակտը նրանց հանձնելու կամ ուղարկելու եղանակով՝ կախված վերջիններիս՝ դատական նիստին ներկայացած լինելու կամ չլինելու հանգամանքից: Ընդ որում, համապատասխան դատական ակտը մեղադրյալին հանձնած (ուղարկած) լինելու հանգամանքն առաջին ատյանի դատարանին չի ազատում այն նաև պաշտպանին հանձնելու (ուղարկելու) պարտականությունից, ինչը վերջինիս կողմից կալանավորման օրինականության և հիմնավորվածության վիճարկման իրավունքի արդյունավետ իրացման, և ըստ այդմ՝ իր պաշտպանյալի շահերի պաշտպանության երաշխիք է:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի դատական նիստին մասնակցել են քննիչը, մեղադրյալը և վերջինիս պաշտպանը, և որ որոշումը հրապարակելուց հետո դատական ակտը փաստացի տրամադրվել է քննիչին և մեղադրյալին: Վերաքննիչ դատարանը, փաստելով, որ պաշտպան Լ.Ասլանյանը որոշման օրինակն Առաջին ատյանի դատարանից առձեռն ստացել է միայն 2018 թվականի օգոստոսի 3-ին, այսինքն՝ որոշման հրապարակումից 8 օր անց, այդուհանդերձ գտել է, որ դա չի կարող դիտարկվել որպես օբյեկտիվ պատճառաբանություն և վկայել բողոքարկման ժամկետի պահպանված լինելու մասին, քանի որ դատական ակտի հասանելի դառնալը կապված է եղել պաշտպանի սուբյեկտիվ հայեցողությամբ պայմանավորված խնդրի հետ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պարտականությունների հիման վրա, որոշումը կայացնելու օրն այն ստորագրությամբ հանձնել է կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին և մեղադրյալին, մինչդեռ պաշտպանի կողմից, ով մասնակցել է միջնորդության քննության վերաբերյալ դատական նիստին, չեն ձեռնարկվել համապատասխան գործողություններ, որոնք կարող էին ավելի վաղ հասանելի դարձնել որոշումը (այդ թվում՝ պաշտպանյալի միջոցով), որի բացասական հետևանքների կրողը հենց պաշտպանն է: Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ պաշտպանի՝ դատական ակտը ստանալու իրավունքն օբյեկտիվորեն պետք է իրացվեր հենց 2018 թվականի հուլիսի 26-ին, հետևաբար Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվեր հուլիսի 26-ից 5 օրվա ընթացքում¹:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-17-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դրանց վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի փաստարկներն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պաշտպանի կողմից չստանալը նրա սուբյեկտիվ հայեցողության արդյունքն է, և որ վերջինս համապատասխան դատական ակտը ստանալու համար որոշակի գործողություններ կատարելու պարտականություն է ունեցել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն է կրում իր կայացրած դատական ակտը պաշտպանին փաստացի հասու դարձնելու պարտականությունը՝ օրենքով նախատեսված եղանակներից որևէ մեկով՝ հանձնելով կամ ուղարկելով: Ընդ որում, դատական ակտն առձեռն հանձնելու օբյեկտիվ անհնարինության դեպքում Առաջին ատյանի դատարանը շարունակում է կրել այն պաշտպանին ուղարկելու պարտականությունը՝ անկախ մեղադրյալին համապատասխան որոշումը հանձնած (ուղարկած) լինելու կամ չլինելու հանգամանքից:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավոր չեն Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ պաշտպանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշման բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել մեղադրյալի և քննիչի կողմից այդ որոշումը ստանալու պահից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանի կողմից քննարկվող որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ է հաշվել այն պահից, երբ համապատասխան որոշումը փաստացի հասու է դարձել վերջինիս, այսինքն՝ 2018 թվականի օգոստոսի 3-ից:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ և 379-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են ստորադաս դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 26-ի որոշման դեմ պաշտպանի ներկայացրած վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Սոֆիո Զուրարի Անդրեանյի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0151/01/17

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի որոշման դեմ ամբաստանյալ Արմեն Համլետի Ալեքսանյանի պաշտպան Ս.Հարությունյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 58216317 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ Արմեն Ալեքսանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Ալեքսան-

յանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ Ա.Ալեքսանյանի կողմից ապօրինի կերպով զգալի չափերի հասնող թմրամիջոց ձեռք բերելու և պահելու մասով թիվ 58216317 քրեական գործից անջատվել է նոր քրեական գործ, որին շնորհվել է 58219717 համարը:

2017 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի դատավճռով Ա.Ալեքսանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով, նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է Ա.Ալեքսանյանի՝ 2017 թվականի նոյեմբերի 7-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 9-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակելով ազատազրկում՝ 9 (ինը) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Ալեքսանյանի պաշտպան Ս.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունիսի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի դատավճիռը թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Ալեքսանյանի պաշտպան Ս.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Արմեն Ալեքսանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա. «(...) 2017 թվականի հուլիս ամսին, քննությամբ չպարզված օրը, առանց իրացնելու նպատակի, իր օգտագործման համար տնայնագործական եղանակով ապօրինի կերպով պատրասարել է ացերիխցված «սփիռոն» տեսակի թմրամիջոց, որից մի մասը ներարկման եղանակով օգտագործել է, իսկ մնացած՝ զգալի չափերի հասնող 0.095 գրամը հերպազայում օգտագործելու

նպատակով պահել է փան խոհանոցում շերեփի մեջ, որն էլ 2017 թվականի նոյեմբերի 7-ին հայտնաբերվել է նրա փան խուզարկությամբ (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը, փաստարկել է, որ նշված փոփոխություններով վերացվել է ամբաստանյալին վերագրվող արարքի հանցավորությունը, հետևաբար, դրանք ենթակա են կիրառման վերջինիս նկատմամբ:

7. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի որոշումը, Ա.Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործով վարույթը կարճել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. առկա է արդյոք ամբաստանյալ Ա.Ալեքսանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող հանգամանք:

9. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ փարսածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դադարեցնողություն»:

10. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 105:

կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (սպաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմեդ (հոգեներգործուն) նյութեր ասօրինի պատրասարելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը (...):»*

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «ափիոն» տեսակի թմրամիջոցի համար որպես զգալի չափ է սահմանված եղել **0.1 գրամից մինչև 0.5 գրամը ներառյալ**:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «ափիոն» տեսակի թմրամիջոցի համար որպես մանր չափ է սահմանվել **0.1 գրամից մինչև 0.5 գրամը ներառյալ**, որպես զգալի չափ՝ **0.5 գրամից մինչև 2.5 գրամը ներառյալ**:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ալեքսանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել **զգալի չափի՝ 0.095 գրամ** «ափիոն» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի պահելու համար²:

Առաջին ատյանի դատարանն Ա.Ալեքսանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում³:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գասպար Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

Վերաքննիչ դատարանը, մերժելով ամբաստանյալի պաշտպանի վերաքննիչ բողոքը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ¹:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Ա.Ալեքսանյանին մեղսագրված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «ափիոն» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանք վերացնում են **0.095 գրամ** «ափիոն» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի ապօրինի պահելու արարքի հանցավորությունը: Ուստի, այդ փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը կատարված հանցանքի վրա:

14. Այսպիսով, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ 0.095 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի ապօրինի պահելու մեղադրանքով Ա.Ալեքսանյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

15. Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 21-ի որոշումը, ճանաչելու Ա.Ալեքսանյանի անմեղությունն առաջադրված մեղադրանքում, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճելու:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Ա.Ալեքսանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, ենթակա է վերացման:

17. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Համլետի Ալեքսանյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մարտի 21-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի որոշումը բեկանել ու փոփոխել, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Արմեն Համլետի Ալեքսանյանին արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառարանությամբ, և քրեական գործով վարույթը կարճել:

2. Ամբաստանյալ Արմեն Համլետի Ալեքսանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել: Քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված՝ 0.095 գրամ հաստատուն քաշով ացետիլացված «ավիոն» տեսակի թմրամիջոցը ոչնչացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ2/0049/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահագահությունը՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշման դեմ Անդրանիկ Վալոդյայի Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի փետրվարի 22-ի դատավճռով Անդրանիկ Վալոդյայի Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով:

2. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Խաչատրյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանը ստացել է 2018 թվականի փետրվարի 28-ին¹:

5. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն ամբաստանյալ Ա.Խաչատրյանը փոստային առաքման միջոցով 2018 թվականի մարտի 21-ին ուղարկել է Առաջին ատյանի դատարան²:

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն ամբաստանյալ Ա.Խաչատրյանը, փոստային առաքման միջոցով, RR253183779AM բեռնային համարով փոստային ծրարի դիմային երեսին առկա դրոշմի համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 4-ին ուղարկել է Վերաքննիչ դատարան³: Մինևույն ժամանակ, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ նշված բեռնային համարով առաքանին հաճախորդից ընդունվել է 2018 թվականի ապրիլի 3-ին⁴:

7. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ (...) [Ա]ռաջին ատյանի դատարանի (...) դատավճիռը հրապարակվել է 2018թ. փետրվարի 22-ին, որը պաշտպանին տրամադրվել է 2018թ. փետրվարի 28-ին:

2018թ. ապրիլի 7-ին (փոստային ծառայությանն է հանձնվել 2018թ. ապրիլի 4-ին) Վերաքննիչ դատարանում սրացվել է ամբաստանյալ Անդրանիկ Խաչատրյանի պաշտպան Սեդրակ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը՝ Առաջին ատյանի դատարանի 2018թ. փետրվարի 22-ի դատավճիռի դեմ:

Վերը նշված փաստական հանգամանքների պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկել առնվազն դատավճիռը պաշտպանի կողմից

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 60:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 70:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 81:

⁴ Տե՛ս <https://www.haypost.am>

սրանայու պահից մեկամսյա ժամկետում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատավճռի օրինակը պաշտպանին փրամատրվել է 2018թ. փետրվարի 28-ին, սպա (...) [Ա]ռաջին արյանի դատարանի 2018թ. փետրվարի 22-ի դատավճռի բողոքարկման ժամկետն ավարտվում է 2018թ. մարտի 29-ին, ժամը 24.00-ին, մինչդեռ բողոքը փոստային ծառայության է հանձնվել 2018թ. ապրիլի 4-ին:

(...) Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով, որ չ[ի] պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ վերաքննիչ բողոքը ժամկետանց է, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպան Սեդրակ Մկրտչյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության (...):»:

8. Ամբաստանյալ Ա.Խաչատրյանը ներկայացված վճռաբեկ բողոքին կցել է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից տրված RR251522298AM բեռնային համարով անդորրագիրը, որի համաձայն՝ վերջինս փոստային առաքման միջոցով 2018 թվականի մարտի 21-ին վերաքննիչ բողոքն ուղարկել է Վերաքննիչ դատարան²: Մինչույն ժամանակ, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ նշված բեռնային համարով առաքա- նին հասցեատիրոջը հանձնել չի հաջողվել³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 17-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, միայն ձևական պահանջներից ելնելով, բողոքը քննության չի առել:

Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստարկել է, որ իրականում վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի պահպանմամբ, քանի որ վերաքննիչ բողոքն Առաջին աստիճանի դատարան է ներկայացվել փոստային առաքման միջոցով 2018 թվականի մարտի 21-ին: Բողոքաբերը գտել է, որ հիշյալ փաստական հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից ճիշտ չի գնահատվել, որի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը, քանի որ ինքը զրկվել է դատարանի կողմից գործի հրապարակային քննության իրավունքից:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 87-88:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 123:

³ Տե՛ս <https://www.haypost.am>

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշումը՝ կայացնելով նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դաշտային պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական արյանի կողմից վերանայման իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատաքննության իրավունք»:

Կոնվենցիային կից թիվ 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական արյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա

ժամը քսանչորսին: Ժամկետն ամիսներով կամ տարիներով հաշվելիս ժամկետը վերջանում է վերջին ամսվա համապատասխան օրը (...): Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը (...):

4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը ներկայացվում է վերաքննիչ դատարան, իսկ դրա պատճենը՝ դատական ակտ կայացրած դատարան (...):»

13. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը¹,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն²,

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա³,

- դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

ըստ էության քննության առնելու խոչընդոտի⁴:

14. ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՌ-1420 որոշմամբ դատական մատչելիության իրավունքի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի ինպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման¹:

15. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել այն մասին, որ այդ իրավունքն ունի բացառիկ նշանակություն անձի իրավունքների պաշտպանության իրավական համակարգում, այն ենթադրաբար խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման հիմնական նախապայմանն է, որի միջոցով է կենսագործվում դատարան դիմելու (locus standi) և արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անձի իրավունքը:

Ելնելով վերոնշյալ առանձնահատկությունից՝ դատական պաշտպանության իրավունքի իրացմանը ներկայացվող ձևական բնույթի կարգավորումները չպետք է այն աստիճան չափազանցվեն (excessive formalism), որ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու չափանիշների և պահանջների չպահպանման արդյունքում վրա հասնող իրավական հետևանքն անհամաչափորեն սահմանափակի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է հանգեց-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՄԴՌ-1420 որոշման 4.1-րդ կետը:

նեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների էության խախտման՝:

16. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող ձևական բնույթի չափանիշների և պահանջների չպահպանումը չպետք է այնպես մեկնաբանվի, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը ենթարկվի անհամաչափ սահմանափակման՝ հանգեցնելով այդ իրավունքի բուն էության խաթարմանը: Այլ կերպ՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը պետք է հիմնված լինի վերաքննիչ բողոքարկմանը ներկայացվող ձևական բնույթի չափանիշների և պահանջների պահպանված չլինելու մասին փաստերի բովանդակային գնահատման վրա՝ ապահովելու համար բողոքարկման իրավունքի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 22-ի դատավճիռը ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանը ստացել է **2018 թվականի փետրվարի 28-ին**²,

- Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն ամբաստանյալ Ա.Խաչատրյանը, փոստային առաքման միջոցով, **2018 թվականի մարտի 21-ին** ուղարկել է Առաջին ատյանի դատարան³,

- Պաշտպանի վերաքննիչ բողոքն ամբաստանյալ Ա.Խաչատրյանը, փոստային առաքման միջոցով, փոստային ծրարի դիմային երեսին առկա դրոշմի համաձայն՝ **2018 թվականի ապրիլի 4-ին** ուղարկել է Վերաքննիչ դատարան: Մինչույն ժամանակ, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ նշված փոստային առաքանին հաճախորդից ընդունվել է **2018 թվականի ապրիլի 3-ին**⁴,

- Վերաքննիչ դատարանը **2018 թվականի ապրիլի 23-ի** որոշմամբ պաշտպան Ս.Մկրտչյանի բողոքը թողել է առանց քննության՝ նշելով, որ դատավճռի բողոքարկման ժամկետն ավարտվում է **2018 թվականի մարտի 29-ին**՝ ժամը 24:00-ին, մինչդեռ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել **2018 թվականի ապրիլի 4-ին**⁵,

- Ամբաստանյալ Ա.Խաչատրյանը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արթուր Այվազյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ-2/0007/15/12 որոշման 16-րդ կետը, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշման 13-րդ կետը, *Նսաիրի Գևորգյանի* գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴ/0088/01/12 որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս, սույն որոշման 4-րդ կետը:

³ Տե՛ս, սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս, սույն որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս, սույն որոշման 7-րդ կետը:

է փոստային անդորրագիր այն մասին, որ փոստային առաքման միջոցով, **2018 թվականի մարտի 21-ին** վերաքննիչ բողոքն ուղարկվել է Վերաքննիչ դատարան, որը, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն, հասցեատիրոջը հանձնել չի հաջողվել¹:

18. Վերլուծելով վերոշարադրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ պաշտպան Ս.Մկրտչյանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատավճիռը 2018 թվականի փետրվարի 28-ին ստացած լինելու պարագայում Վերաքննիչ դատարանը, բողոքարկման ժամկետի ավարտ համարելով 2018 թվականի մարտի 29-ը, անտեսել է այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը դատավճիռը ստանալուն հաջորդող օրվանից՝ 2018 թվականի մարտի 1-ից հաշվարկելու դեպքում այն վերջանում էր 2018 թվականի ապրիլի 1-ին և նկատի ունենալով, որ ժամկետի լրանալը համընկնում էր ոչ աշխատանքային օրվան, ժամկետի վերջին օրը պետք է հաշվվեր դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ 2018 թվականի ապրիլի 3-ը²: Ու թեև փոստային ծրարի դիմային երեսին առկա դրոշմի համաձայն՝ վերաքննիչ բողոքն ուղարկվել է Վերաքննիչ դատարան **2018 թվականի ապրիլի 4-ին**, «Հայփոստ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջի համաձայն՝ նշված փոստային առաքանին հաճախորդից ընդունվել է (փոստային ծառայությանն է հանձնվել) **2018 թվականի ապրիլի 3-ին**³, հետևաբար սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացնելու ժամկետը պարզելու համար Վերաքննիչ դատարանը չպետք է հիմք ընդուներ միայն փոստային ծրարի դիմային երեսին առկա դրոշմի վրա նշված ժամկետը:

19. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված բողոքը ժամկետանց լինելու հիմքով առանց քննության թողնելիս դատարանները, հնարավոր տեխնիկական վրիպակների պատճառով անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակումներից խուսափելու նպատակով, պետք է բողոքը փոստային ծառայությանը հանձնելու ժամանակը որոշելիս հիմք ընդունեն ոչ միայն փոստային ծրարի դիմային երեսի վրա առկա դրոշմը, այլ նաև միջոցներ ձեռնարկեն այն ստուգելու ուղղությամբ (բողոքը փոստին հանձնելու օրը կարող է պարզվել փոստային անդորրագրի, «Հայփոստ» ՓԲԸ-ի կայքէջի, համապատասխան հարցում կատարելու և այլ միջոցներով)⁴:

20. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ մինչև վերաքննիչ

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 6-ի թիվ 219-Ն որոշման համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 2-ը հանդիսացել է ոչ աշխատանքային օր:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս *mutatis mutandis* Վարչադեպ Գասպարիի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԳ/0067/11/16 որոշումը, 15-րդ կետ:

բողոքարկման ժամկետի ավարտը՝ 2018 թվականի մարտի 21-ին, ամբաստանյալ Ա.Խաչատրյանը պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն ուղարկել է դատական ակտը կայացրած Առաջին ատյանի դատարան, որի պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածով սահմանված՝ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան ներկայացնելու ձևական պահանջը չպահպանելու հիմքով չպետք է պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքը համարվեր ժամկետանց և թողնվեր առանց քննության: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքը դատական ակտը կայացրած դատարան ուղարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ և 383-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, այն է՝ ուղարկված վերաքննիչ բողոքի մասին դատավարության մասնակիցներին ծանուցելու, գործը վերաքննիչ բողոքի և դրա վերաբերյալ ստացված պատասխանների հետ Վերաքննիչ դատարան ուղարկելու համար, որի պայմաններում վերաքննիչ բողոքը հասանելի է դառնում Վերաքննիչ դատարանի համար: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան ներկայացնելու ձևական պահանջը չպահպանելու հիմքով պաշտպանի բողոքն առանց քննության թողնելը *prima facie* անհամաչափորեն սահմանափակել է ամբաստանյալի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

21. Հիմք ընդունելով նաև սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Խաչատրյանը պաշտպանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարան է ուղարկել սահմանված ժամկետում:

22. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Խաչատրյանը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է փոստային անդորրագիր, համաձայն որի՝ փոստային առաքման միջոցով դեռևս **2018 թվականի մարտի 21-ին** վերաքննիչ բողոքն ուղարկել է Վերաքննիչ դատարան¹: Այսինքն՝ ամբաստանյալ Ա.Խաչատրյանը դատական ակտ կայացրած դատարան ուղարկելու հետ մեկտեղ նույն օրը պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն ուղարկել է նաև Վերաքննիչ դատարան:

23. Սույն որոշման 18-22-րդ կետերում կատարված վերլուծությունը գնահատելով սույն որոշման 12-16-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ժամկետանց լինելու պատճառաբանությամբ ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպան Ս.Մկրտչյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելն անհամաչափորեն սահմանափակել է ամբաստանյալի՝ դատարանի մատչելիության իրավունքը, հաշվի առնելով, որ վերաքննիչ

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

բողոքը ներկայացվել է բողոքարկման ժամկետի պահպանմամբ:

Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Ա.Խաչատրյանի պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

25. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Անդրանիկ Վալոդյայի Խաչատրյանի վերաքննյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԴ/0060/15/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Տ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 29-ի որոշման դեմ դատապարտյալ Կարեն Ռուբիկի Խաչատրյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճռով Կարեն Ռուբիկի Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետով, 162-րդ հոդվածի 3-րդ մասով և 162-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքների կատարման համար: ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Կարեն Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի ժամկետով:

2. Կոստրոմա քաղաքի Սվերդլովսկի շրջանային դատարանի՝ 2012 թվականի մարտի 16-ի որոշմամբ Կարեն Խաչատրյանի վերաբերյալ ՌԴ Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը փոփոխվել է և նրա նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի 9 (ինը) ամիս ժամկետով:

3. ՌԴ Ուլյանովսկի մարզի Դիմիտրովգրադի քաղաքային դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման հիման վրա դատապարտյալ Կ.Խաչատրյանը հետագա պատիժը կրելու համար հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

4. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի առաջին տեղակալի՝ 2017 թվականի սեպտեմբերի 11-ի միջնորդության քննության արդյունքում Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, և ՌԴ Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը ճանաչվել և դրանով հաստատված արարքները համապատասխանեցվել են ՀՀ քրեական օրենսգրքին:

5. Դատապարտյալ Կարեն Խաչատրյանի պաշտպաններ Տ.Ղազարյանի և Ա.Թումասյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի մայիսի 29-ի որոշմամբ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Կ.Խաչատրյանի պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի եզրափակիչ մասի համաձայն. «(...) Դատավճռի կատարումը շարունակելու համար դատապարտյալ Կարեն Ռուբիկի Խաչատրյանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի 11.06.2008 թվականին կայացրած դատավճիռը ճանաչել և համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին: (...)

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ Կարեն Ռուբիկի Խաչատրյանի նկատմամբ (...) նշանակված 12 (տասներկու) փարի 9 (ինը) ամիս ժամկետով ազատազրկման ձևով վերջնական պատիժը թողնել անսխալի: (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանը, միանձնյա կարգով քննարկելով պաշտպաններ Տ.Ղազարյանի և Ա.Թումասյանի վերաքննիչ բողոքը, արձանագրել է. «(...) [Առաջին արյանի դատարանի] որոշումը բեկանելու հիմքեր չկան, նկատի ունենալով, որ դատարանը միջնորդությունը քննության առնելիս՝ թույլ չի տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հանգեցնել դատական սխալի: Ուստի բերված վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ դատարանի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 387-րդ հոդվածի խախտումներ, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Բողոքաբերը, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետին, «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածին, «Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածին, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-16/11 և ԵՇԴ/0049/01/12 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, գտել է, որ օտարերկրյա պետության դատավճիռը ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտը ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է, ուստի սույն գործով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից պետք է քննության առնվել կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, մինչդեռ այն քննության է առնվել միանձնյա:

10. Բացի այդ, բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.8-րդ հոդվածի 4-րդ մասը և 499.11-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետու-

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 68-70:

² Տե՛ս նյութեր, թերթեր 125-133:

թյան անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման դրույթները, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը պարտավոր էր դատական ակտի ճանաչման հետ միաժամանակ կիրառել նաև նշված որոշման 8-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը՝ համապատասխանաբար կրճատելով Կ.Խաչատրյանի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և Կ.Խաչատրյանի նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման դրույթները՝ կրճատելով վերջինիս չկրած պատժի տևողությունը կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

11.1 Ի լրումն իր վճռաբեկ բողոքի՝ բողոքաբերը, նշելով, որ ՌԴ քրեական օրենսգրքում 2018 թվականի հունիսի 27-ին կատարվել են փոփոխություններ, և խափանման միջոց ընտրված կալանքի մեկ օրը հավասարվել է ազատագրվման ձևով պատժի երկու օրվան, խնդրել է Կ.Խաչատրյանի կրած նախնական կալանքի 1 (մեկ) օրը հաշվակցել պատժի 2 (երկու) օրվա ժամկետի հետ և նվազեցնել նրա նկատմամբ նշանակված պատժաչափը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատապարտյալ Կ.Խաչատրյանի նկատմամբ կայացված Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը ճանաչելու և դրանով հաստատված արարքները ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու մասին որոշման դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի համաձայն՝ «*[Գ]ործն ըստ էության լուծող դատարանն ակտեր [են] առաջին արյանի դատարանի դատավճիռ[ը], քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում[ը], բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում[ը], ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատարանական ակտեր[ը], ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատարանական ակտերը*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ «*(...) 4. Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող*

դատական ակտերի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանում վերանայվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով (...):»:

13.1 Վերը նշյալ իրավանորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի այն որոշումը, որտեղ քննարկվում և իրենց լուծումն են ստանում դատավճիռի վերաբերող այնպիսի հարցեր, ինչպես օրինակ՝ արարքի քրեախրավական որակումը, պատժատեսակի և պատժաչափի որոշումը, ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է և ենթակա է բողոքարկման այն նույն դատավարական ընթացակարգով, ինչպիսին կիրառվում է դատավճիռները բողոքարկելիս: Այսինքն՝ նման դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս և վերաքննիչ բողոքը քննելիս ենթակա են կիրառման, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված դատավարական պահանջները¹:

14. Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ կայացված օտարերկրյա պետության դատավճիռը ճանաչելու և դրանով հաստատված արարքները ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու հարցի վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը ևս գործն ըստ էության լուծող դատական ակտ է: Նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված որոշմամբ դատարանն անդրադառնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածով նախատեսված այնպիսի իրավական հարցերի (արարքի քրեախրավական որակում, պատժատեսակի և պատժաչափի որոշում), որոնք օրենքի ուժով (ex lege) վերապահված են գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ դատավճիռի լուծմանը: Հետևաբար անձի նկատմամբ կայացված օտարերկրյա պետության դատավճիռը ճանաչելու և դրանով հաստատված արարքները ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու հարցը լուծելիս կայացվող դատական ակտը պետք է բողոքարկվի և բողոքը քննության առնվի այն նույն դատավարական ընթացակարգով, ինչը նախատեսված է գործն ըստ էության լուծող դատական ակտի համար: Այլ կերպ՝ քննարկման առարկա դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս կիրառման են ենթակա, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով, 379-րդ և 387-

¹ Տե՛ս Արսեն Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՎԲ-16/11 որոշման 11-րդ կետը, Գարեգին Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԱՐԱԴ/0017/13/12 որոշման 11.1-րդ կետը, Արթուր Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԳ/0125/13/17 որոշման 13-րդ կետը:

րդ հողվածներով սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկմանը ներկայացվող պահանջները¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ ՌԴ Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը ճանաչել և համապատասխանեցրել է ՀՀ քրեական օրենսգրքին²:

Վերաքննիչ դատարանը վերը նշյալ դատական ակտի դեմ պաշտպանների կողմից ներկայացրած բողոքը միանձնյա կարգով քննության առնելով մերժել է այն³:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լուսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը՝ որպես գործն ըստ էության լուծող, պետք է բողոքարկվեր և քննության առնվեր, ի թիվս այլոց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասով և 387-րդ հոդվածով սահմանված պահանջների պահպանմամբ, այն է՝ վերաքննիչ բողոքը պետք է քննության առնվեր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով՝ այդ կերպ ապահովելով օրինականության սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առկայության պահանջը⁴:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Կ.Խաչատրյանի նկատմամբ կայացված Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի մարզի Օդինցովոյի քաղաքային դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճիռը ճանաչելու և ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա կարգով քննության առնելն իրավաչափ չէ:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 387-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք են:

¹ Տե՛ս mutatis mutandis Էդիկ Ծոնվերանցի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0049/01/12 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁴ Մանրամասն տե՛ս Էդիկ Ծոնվերանցի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵՇԴ/0049/01/12 որոշումը:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է կոլեգիալ կազմով ըստ էության քննության առնի պաշտպանի վերաքննիչ բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Կարեն Ռուբիկի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 29-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0044/01/09

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ս.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճռով Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով, նշանակված պատժի մեջ հաշվակցվել է ձերբակալման մեջ գտնվելու 3 (երեք) օրը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով:

2. Ռ.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2009

թվականի օգոստոսի 12-ի դատավճիռը պատժի մասով բեկանել և փոփոխել է, Ռ.Բաղդասարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և պատիժ է նշանակել տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

3. 2018 թվականի հունվարի 23-ին Ռ.Բաղդասարյանի պաշտպան Տ.Ղազարյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռի դեմ, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռ.Բաղդասարյանի պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող վատերը.

5. Առաջին ատյանի դատարանը, Ռ.Բաղդասարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում մեղավոր ճանաչելով, իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) [Առաջին ատյանի] դատարանն ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանը մշակումն արգելված թմրամիջոց պարասպրեյու հումք հանդիսացող խոշոր չափի՝ 6500 գրամ քաշով կանեփի թփեր է աճեցրել ու մշակել, որպիսի արարքի համար նա պետք է պարասիսանարվության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 273 հոդվածի 1-ին մասով (...)»¹:

6. Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ 2009 թվականի սեպտեմբերի 10-ին բերված վերաքննիչ բողոքով ամբաստանյալ Ռ.Բաղդասարյանը խնդրել է պատժի մասով բեկանել և փոփոխել նշված դատական ակտը²:

7. 2018 թվականի հունվարի 23-ին ներկայացրած վերաքննիչ բողոքում պաշտպան Տ.Ղազարյանը խնդրել է **հիմնարար խախտման հիմքով** բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 86:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 96:

օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչելով և հռչակելով Ռ.Բաղդասարյանի անմեղությունը: Պաշտպանը վերաքննիչ բողոքը, ի թիվս այլնի, հիմնավորել է հետևյալ կերպ. «(...) Մտորադաս դատարանի թույլ տված նյութական իրավունքի հիմնարար խախտումը դրսևորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի սխալ կիրառմամբ, մասնավորապես, Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել այնպիսի արարքի կատարման համար, որը ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով հանցագործություն չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը հանգեցրել է «չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով (...) կանոնի խախտման (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը **թողել է առանց քննության** հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Բ]րեական գործով ըստ մեղադրանքի Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ վերաքննիչ դատարանը արդեն իսկ Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանի վերաբերյալ 2009 թվականի հոկտեմբերի 21-ին կայացրել է դատական ակտ, ինչը բացառում է նույն դատավճռի դեմ կրկին անգամ բերված վերաքննիչ բողոքի ըստ էության քննությունը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, մասնավորապես դատավարական նորմի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, այն է՝ սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածը. վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու փոխարեն կայացրել է այն առանց քննության թողնելու մասին որոշում՝ խախտելով Ռ.Բաղդասարյանի դատական պաշտպանության իրավունքը:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ 2009 թվականին վերաքննիչ բողոքը ներկայացվել է միայն պատժի մասով, իսկ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննության առարկա դարձնելով այն,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 10:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 30:

բավարարել է՝ պատժի մասով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը: 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռը երբևէ չի բողոքարկվել Ռ.Բաղդասարյանին արդարացնելու՝ մասնավորապես այն հիմքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիության կանոնին, և դրանով անձին դատապարտելը հանգեցնում է «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտման՝ խաթարելով արդարադատության բուն էությունը:

Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է նաև, որ դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի համաձայն՝ վերադաս դատական ատյանի լիազորությունները չեն կարող ավելի լայն լինել, քան ստորադաս դատական ատյանինը և, համապատասխանաբար, վերադաս դատական ատյանի քննությանը չի կարող ենթակա լինել այնպիսի հարց, որն առհասարակ քննության առարկա չի դարձվել ստորադաս դատարանի կողմից:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

12. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա արեղծված անկախ ու անսաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

12.1. Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է անձի իրավունքների պաշտպանության միջոցների շարքում

դատական պաշտպանության առանձնահատուկ տեղը: Դատական ակտերի վերանայման և ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է քրեական դատավարության խնդիրներով և դատական սխալների ու անօրինական դատական ակտերի բացառման և կանխման օբյեկտիվ, անընդհատ գոյություն ունեցող պահանջով¹:

12.2. ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է, ի թիվս այլոց, հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որն իրավական պետությունում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ,

- անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս, ինչը ենթադրում է մի դեպքում՝ օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից՝ իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից. նշված պահանջն առաջին հերթին վերաբերում է դատական իշխանությանը, որն օժտված է իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով և անկախ է բոլոր այլ մարմիններից,

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի պահպանման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը²:

13. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից թիվ 7

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշումը:

² Տե՛ս ՎՀ սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՈ-719 և 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՈ-936 որոշումների 6-րդ կետերը:

արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կասկածյալությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը արվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար»:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ (...) Առաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի **հիմնարար խախտումներ**, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում են՝ (...) սույն օրենսգրքի 376՝ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:

13.1. ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի սահմանադրականության առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Արդարադատության բուն էությունը խաթարող և նյութական կամ դատավարական հիմնարար խախտումների արդյունքում անձանց համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող առաջին արյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու հնարավորության սահմանափակումը՝ դրանց ուժի մեջ մտնելու պահից՝ վեցամսյա ժամկետով, համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին, այն է՝ օրինական ուժի մեջ մտնող դատական

ակտի որոշակիության և անփոփոխելիության սկզբունքի ապահովմանը, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվում են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև դատապարտվածի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական արյանի կողմից վերանայման իրավունքը (...)»¹:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Մեջբերված նորմերից բխում է, որ Վճռաբեկ դատարանը հանդես է գալիս որպես Վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայող դատական ատյան, որը ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում իրականացնում է ստորադաս դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգում:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական ակտը վերանայելիս վերադաս դատարանի իրավասության սահմանների հարցին, մշտապես ընդգծել է, որ այն չի կարող ավելի լայն լինել, քան գործը քննած ստորադաս դատարանինը՝ հիմք ընդունելով դատական ակտերի վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը²:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճռով Ռ.Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով³: 2009 թվականի սեպտեմբերի 10-ին Ռ.Բաղդասար-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.2-4.3-րդ կետերը:

² Դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի վերաբերյալ, mutatis mutandis, տե՛ս՝ Ս. Գ. Դուրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ՏԴ/0052/06/14 որոշումը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ոչանս Առաջին աստիճանի դատարանի դատավճիռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով պատժի մասով բեկանել և փոփոխել վերը նշված դատական ակտը¹: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2009 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ Առաջին աստիճանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռը **պատժի մասով** բեկանել և փոփոխել է²: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նշված որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ³: 2018 թվականի հունվարի 23-ին պաշտպանը **հիմնարար խախտման հիմքով** բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան⁴: Վերաքննիչ դատարանը բողոքը **թողել է առանց քննության** այն պատճառաբանությամբ, որ սույն քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արդեն իսկ Ռ.Բաղդասարյանի վերաբերյալ 2009 թվականի հոկտեմբերի 21-ին կայացրել է դատական ակտ, ինչը բացառում է նույն դատավճիռի դեմ կրկին անգամ բերված վերաքննիչ բողոքի ըստ էության քննությունը⁵:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ռ.Բաղդասարյանն Առաջին աստիճանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռի դեմ 2009 թվականի սեպտեմբերի 10-ին ներկայացրած վերաքննիչ բողոքով խնդրել էր պատժի մասով բեկանել և փոփոխել վերը նշված դատական ակտը, մինչդեռ 2018 թվականի հունվարի 23-ին Ռ.Բաղդասարյանի պաշտպանը վերաքննիչ բողոք էր ներկայացրել Առաջին աստիճանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 12-ի դատավճիռի դեմ հիմնարար խախտման հիմքով՝ փաստելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիությանը, և դրանով անձին դատապարտելը հանգեցնում է «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտման: Արդյունքում պաշտպանը խնդրել էր հռչակել Ռ.Բաղդասարյանի անմեղությունը և նրան արդարացնել:

Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանի առջև Ռ.Բաղդասարյանին արդարացնելու հարց նախկինում երբևէ չի բարձրացվել, և Վերաքննիչ դատարանն այդ հարցը քննարկման առարկա չի դարձրել: Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 14-րդ կետում կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ նախկինում կայացված դատական ակտը բացառում է նույն դատավճիռի դեմ կրկին անգամ բերված վերաքննիչ բողոքի ըստ էության քննությունը, հիմնավոր չէ՝ սույն գործով վերաքննիչ բողոքն այլ հիմքով բերված լինելու պատճառաբանությամբ:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

17. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը թողնելով առանց քննության, վտանգել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածի 1-ին մասով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված բողոքաբերի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքները:

Հետևաբար վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

18. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, կայացնելով բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ռուդիկ Ռոբերտի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ-1/0032/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի որոշման դեմ Մելքուշ Գարսևանի Ավագյանի պաշտպան Տ.Ղազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2014 թվականի փետրվարի 3-ի դատավճռով Մելքուշ Գարսևանի Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է տուգանքի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Վերոնշյալ դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016 թվականի սեպտեմբերի 6-ին Մելքուշ Ավագյանը մահացել է, 2018 թվականի փետրվարի 5-ին նրա որդին՝ Վարդան Մելքուշի Ավագյանը, լիազորել է փաստաբան Տ.Ղազարյանին թիվ ԱՐԱԴ-1/0032/01/13 քրեական գործի շրջանակներում ներկայացնելու հոր շահերը:

2. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ 2018 թվականի փետրվարի 7-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) բողոք է ներկայացրել Մ.Ավագյանի պաշտպան Տ.Ղազարյանը: Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի որոշմամբ պաշտպանի բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Ներկայացված վերաքննիչ բողոքում պաշտպան Տ.Ղազարյանը խնդրել է հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 3-ի դատավճիռը և կայացնել արդարացման դատական ակտ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչելով և հռչակելով Մելքուշ Գարսևանի Ավագյանի անմեղությունը:

5. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մարտի 12-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ. «(...)

բողոքաբերի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով նախատեսված վերաքննիչ բողոք բերելու ժամկետը:

(...) Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Մելքուշ Գարսևանի Ավագյանի պաշտպան Տ.Ղազարյանի վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ այն ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը հիմնավորված, պատճառաբանված և օրինական չէ:

Ըստ բողոքի հեղինակի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոք բերելու օրենքով

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 210-211:

սահմանված վեցամսյա ժամկետի՝ նույն հիմքով վճռաբեկ բողոք բերելը որևէ ժամկետով սահմանափակված չէ, եթե դա ուղղված է անձի վիճակի բարելավմանը: Բողոքաբերի կարծիքով նման պայմաններում առաջանում է անհավասար իրավիճակ, քանի որ այն անձինք, ովքեր նախկինում բողոքարկել են իրենց վերաբերյալ կայացված դատական ակտը վերաքննիչ դատարան, կարող են առանց որևէ ժամանակային սահմանափակման բողոքարկել դատական ակտը Վճռաբեկ դատարան, իսկ այն անձինք, ովքեր վերաքննիչ բողոք չեն բերել, իրենց նկատմամբ կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս անց զրկվում են դատական ակտի վերանայման իրավունքից, որն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:

7. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներից բխում է արդյոք Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ պաշտպանի կողմից ներկայացված բողոքը ժամկետանց է, և որ վերջինիս կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետները:

9. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ (...) Առաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում են՝ (...) սույն օրենսգրքի 376՝ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ դատական ակտը՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:

9.1 ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու

վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն այնքանով, որքանով ժամկետային սահմանափակում է նախատեսում անձի իրավական վիճակի բարելավմանն ուղղված առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 69-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր¹:

9.2 Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը խնդրո առարկա դրույթի սահմանադրականության առնչությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնած գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման համար նախատեսված վեցամսյա ժամկետն ընդհանուր առումով ուղղված է դատական ակտերի կայունության, օրինական ուժի մեջ մտնած դատական ակտի որոշակիության և անխախտելիության սկզբունքի ապահովմանը:

Մյուս կողմից՝ «(...) իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Զրեական գործի վարույթը նորոգելու հնարավորությունն ինքնին համարելի է [«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական] [կ]ոնվենցիայի հետք, ներառյալ՝ 6-րդ հոդվածի երաշխիքները: 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գրած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը»:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում վերահասարարել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ էական կամ անհաղթահարելի բնույթի հանգամանքներով պայմանավորված օրինական ուժի մեջ մտնած դատական ակտի վերացման գործընթացը կարող է համապատասխանել իրավական որոշակիության սկզբունքին, երբ դա անհրաժեշտ է դատական սխալը շփոթելու համար (*Pravednaya v. Russia*, 18 նոյեմբերի 2004):

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշումը:

(...)

Նյութական կամ դատավարական հիմնարար խախտման արդյունքում կայացված և արդարադատության բուն էությունը խաթարող արդեն իսկ ուժի մեջ մտնող առաջին արյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման հնարավորությունը վեցամսյա ժամկետով սահմանափակելը դատական պաշտպանության իրավունքը դարձնում է անարդյունավետ՝ միաժամանակ զրկելով անձին արդար դատաքննության իրավունքի իրականացման հնարավորությունից: Անկախ սահմանված ժամկետում համապատասխան դատական ակտը չբողոքարկելու պարճառից՝ իրավական պետությունում չպետք է հանդուրժվի արդարադատության բուն էությունը խաթարող՝ դատապարտյալի հիմնարար իրավունքները խախտող դատական ակտի գոյությունը:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի փարբերակված մոտեցումը, կապված արդեն իսկ ուժի մեջ մտնող դատական ակտերի՝ վերաքննության կամ վճռաբեկության կարգով վերանայման հնարավորության հետ, արդարացված չէ: Այսպես՝ [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի վեցերորդ մասով սահմանված դեպքերում անձի վիճակի բարելավման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, իսկ անձի վիճակի վարթարացման հիմքով՝ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը նույն հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար չի նախատեսել որևէ ժամկետային սահմանափակում, վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վեցամսյա ժամկետի նախատեսումը չի հանդիսանում դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգ:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքի ներկայացման պահանջները կարող են լինել ավելի խիստ, քան ստորադաս դատական արյաններ ներկայացվող դիմումների պահանջները (*Levages Prestations Services v. France*, 23 հոկտեմբերի 1996):

Վճռաբեկ բողոքների թույլատրելիության շեմը չհաղթահարած, սակայն արդարադատության բուն էությունը խաթարելու վերաբերյալ ենթադրյալ փաստեր պարունակող բողոքների համար ժամկետային սահմանափակումներ սահմանելը պարզաճ հնարավորություն չի փայխսս հենց երկրորդ՝ «փաստի արյանում», ինչպիսին է վերաքննիչ դատարանը, վերանայելու առաջին արյանի դատարանի՝ օրինական ուժի

մեջ մտնող գործն ըստ էության լուծող դատական ակտը: Հերևասպես, օրենսդրի կողմից որդեգրված փարբերակումը վերաքննիչ և վճռաբեկ բողոքների միջև դուրս է դատական պաշտպանության արդյունավետ երաշխավորման համակարգային փրամաքանության շրջանակներից և համարժեք չէ դատական ակտերի կայունությունը երաշխավորելու նպատակի հարադրությամբ:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության բուն էությունը խաթարող և նյութական կամ դատավարական հիմնարար խախտումների արդյունքում անձանց համար անբարենպաստ հերևանքներ առաջացնող առաջին արյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը բողոքարկելու հնարավորության սահմանափակումը՝ դրանց ուժի մեջ մտնելու պահից՝ վեցամսյա ժամկետով, համաչափ չէ հերասպնդվող իրավաչափ նպատակին, այն է՝ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի որոշակիության և անփոփոխելիության սկզբունքի ապահովմանը, ինչի արդյունքում անհամաչափորեն սահմանափակվում են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև դատապարտվածի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական արյանի կողմից վերանայման իրավունքը (...):»¹:

10. Սահմանադրական դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն պայմաններում, երբ անձի վիճակի բարելավմանն ուղղված հիմնարար խախտման հիմքով վճռաբեկ բողոք կարող է բերվել առանց ժամկետի սահմանափակման, նույն հիմքով Վերաքննիչ դատարան բողոք բերելու համար վեցամսյա ժամկետի սահմանումը վտանգում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատավճռի բողոքարկման հիմնարար իրավունքները: Դեռ ավելին՝ օրենսդրի կողմից, ի տարբերություն վճռաբեկ բողոքարկման, վերաքննիչ բողոքի ներկայացման ավելի լայն սահմանափակումներ նախատեսելը չի բխում նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի տրամաբանությունից:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Ավագյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 3-ի դատավճիռը Վերաքննիչ դատարան չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ²:

2018 թվականի փետրվարի 7-ին պաշտպան Տ.Ղազարյանը հիմնարար

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՆ-1431 որոշման 4.2-4.3-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

խախտման հիմքով բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան¹: Վերաքննիչ դատարանը բողոքը թողել է առանց քննության՝ բողոքարկման վեցամյա ժամկետը բաց թողած լինելու հիմքով²:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ պաշտպանի կողմից ներկայացված բողոքը ժամկետանց է, և որ վերջինիս կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետները, չի բխում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքներից:

13. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի Մ.Ավագյանի պաշտպան Տ.Ղազարյանի բողոքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մելքուշ Գարսևանի Ավագյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0013/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի փետրվարի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մինաս Հովհաննեսի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի որոշման դեմ Մ.Ասատրյանի պաշտպան Տ.Ղազարյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2014 թվականի հունվարի 17-ի դատավճռով Մինաս Ասատրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կարգով՝ նշանակված պատժին հաշվակցել է Մ.Ասատրյանի կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ 6 (վեց) ամիս 27 (քսանյոթ) օրը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 5 (հինգ) ամիս 3 (երեք) օր ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Մ.Ասատրյանի նկատմամբ նշանակված պատիժը

պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի կիրառմամբ՝ Մ.Ասատրյանն ազատվել է պատժից:

2. Մ.Ասատրյանի պաշտպան Տ.Աբրահամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Մ.Ասատրյանի պաշտպան Տ.Աբրահամյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հունիսի 16-ի որոշմամբ վերադարձվել է:

3. Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի որոշման դեմ հիմնարար խախտման հիմքով բողոք է ներկայացրել Մ.Ասատրյանի պաշտպան Տ.Ղազարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «(...) [«Իրեն պարկանող Երևան քաղաքի Բուդապեշտ փողոցի 73-րդ տան հարակից հողակտրորում ապօրինի աճեցրել է մշակումն արգելված 10.5կգ ընդհանուր քաշով առանձնապես խոշոր չափերի հասնող կանեփի թուփ, որը 10.08.2012թ ոսրիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել և ստգրավել է (...)]»¹:

5. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն, գնահատելով դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները, բազմակողմանի և օբյեկտիվ սրուզված յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փեսանկյունից, ներքին համոզմամբ, ապացուցված համարեց, որ (...) Մինաս Ասատրյանը կատարել է արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 273 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին, և նա

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 74:

պեղք է քրեական պատասխանատվության ենթարկվի վերը նշված հոդվածով (...)»¹:

6. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Մեղադրական դատավճռի հիմքում դրված բոլոր ապացույցները գնահատվել են վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից և մեղադրանքի հիմնավորվածությունը հաստատվել է հետազոտված ապացույցները վերլուծելու և միմյանց համադրելու միջոցով, հետևաբար, օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված համոզմամբ հանգում է հետևության, որ ամբաստանյալը կարարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը: Սահմավորապես, խախտվել են ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 22-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 18-րդ, 273-րդ հոդվածների պահանջները:

Բողոքաբերը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի դիսպոզիցիան, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները, նշել է, որ մի կողմից քրեական պատասխանատվություն է նախատեսված օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված կարգի խախտմամբ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու համար, մյուս կողմից՝ որևէ կարգ նախատեսված չէ: Այսպես՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար՝ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ նշված գործողություններն իրականացնելն իրավաչափորեն դիտարկել է որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության ձև, սակայն, չնախատեսելով համապատասխան կարգ՝ ըստ էության հետևողական չի եղել խնդրի համապարփակ օրենսդրական կարգավորման հարցում:

Նշվածից բողոքաբերը եզրահանգել է, որ չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 65-67:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 99-110:

մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար, սակայն թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված չէ նշված բույսերը ցանելու կամ աճեցնելու որևէ կարգ:

Հետևաբար, ըստ բողոքի հեղինակի, առկա է օրենսդրական բաց այն առումով, որ սահմանված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման կարգը: Իսկ նման պայմաններում, իրավակիրատողը զրկված է համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու դեպքում անձի գործողությունների հակաօրինականությունը գնահատելու, ուստիև, նրա արարքում տվյալ հանցակազմի առկայությունը հաստատելու օբյեկտիվ հնարավորությունից: Արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար, դրա հիման վրա Մ.Ասատրյանին դատապարտելը հանգեցրել է «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտման:

8. Արդյունքում, բողոքաբերը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, հիմնարար խախտման հիմքով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի դատական ակտերը, հռչակել Մ.Ասատրյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում և ճանաչել նրան անպարտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել արդյո՞ք այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը օրենքին համապատասխան, եթե առկա են նոր, կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են

գրել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դարձի կամ քրեական դատավարության կարգով պարծի պյն հանցագործության կասկածից շտանք, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատարարվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կերի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը րվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայր են եկել նոր, կամ նոր բացահայրված փասրեր, կամ նախորդ քննության ժամանակ րեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող կրկին անգամ դարձի նույն արարքի համար:

2. Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մրած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիժ նշանակելու, կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում:

(...)

6. Սույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են րրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախրումներ, որի արդյունքում ընդունված դատական ակրը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախրում է սահմանադրորեն պաշրպանվող շահերի անհրաժեշր հավասարակշռությունը»:

10. Մեջբերված նորմերի առնչությամբ Վճռաբեկ դատարանը Մկրտիչ Մարգարյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «(...) [Բ]րավական որոշակիության (res judicata) և կրկին անգամ դարձի նույն անթույլարելիության (non bis in idem) սկզբունքները մարդու իրավունքները երաշխավորող հիմնարար դրույթներ են: Միևնույն ժամանակ այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայր են եկել նոր, կամ նոր բացահայրված փասրեր, կամ նախորդ քննության ժամանակ րեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, իրավական որոշակիության և կրկին անգամ դարձի նույն անթույլարելիության հիմնարար պահանջներից շեղումը թույլարելի է (Կոն-

վեցհային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետը (...):

(...)
[Բ] փարբերություն օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի **հիմնարար** խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Եման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «**հիմնարար խախտումը**» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին (...):¹:

10.1. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (...):»:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պարասխանարվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հարկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արարքի հանցավորությունը, դրա պարժելիությունը և քրեաիրավական այլ հե-

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԳ/0020/01/14 որոշման 18-19-րդ կետերը:

յրևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

Մեջբերված նորմերի համակարգված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը *Դ.Միմիդյանի* վերաբերյալ որոշմամբ արձանագրել է. «(...) [Մ]իայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախարեսել պատիժը (...): Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախարեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխարեսելիությունը (...): Անձը համապատասխան դրույթի փառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների փլած մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախարեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (...):

(...) օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում սովորաբար օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը փարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հերևաբար, նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է: (...)»¹:

11. Վճռաբեկ դատարանը *Հ. Գրիգորյանի* և *Է.Սարիբեկյանի*, ինչպես նաև *Գ.Սարգսյանի* վերաբերյալ գործերով որոշումներում արձանագրել է. «[Ա]րարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին համապատասխանող «օրենքով» նախարեսելու պահանջն իրավունքի գերակայության առանցքային բաղադրիչներից է, որն ունի հիմնարար նշանակություն՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս օրինականության սկզբունքն ապահովելու համար: Հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ) ամրագրող

¹ Տե՛ս *Դավիթ Միմիդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԵԴ/0122/01/13 որոշման 16-18-րդ կետերը:

այդպիսի օրենքը մի կողմից ապահովում է դրանում ամրագրված պահանջների հասցեագրումը համապարասիան վարքագծի դրսևորման ակնկալիք ունեցող անձանց, մյուս կողմից՝ բացառում է կամայականորեն քրեական հետապնդման ենթարկվելու ցանկացած հնարավորություն՝ երաշխավորելով օրենքի միատեսակ կիրառությունը սահմանված նորմատիվ պահանջներին հակասող վարքագիծ դրսևորող անձի նկատմամբ:

Այսինքն՝ նշված սկզբունքի ներքո իրավական պետության պոզիտիվ պարականությունն է ապահովել որդեգրած քրեական քաղաքականության արտացոլումն այնպիսի «օրենքում», որում նկարագրված կանոնները և դրանց խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքները բովանդակային առումով այնքան որոշակի կլինեն, որ հնարավորություն կրան իրավունքի հիմնական կրողին դրսևորելու սահմանված պահանջներին համապարասիանող վարքագիծ: Վերջինս կարող է ապահովված լինել «իրավական որոշակիության» երկու քաղաղրիչներին, այն է՝ «հասանելիության» և «կանխարեսելիության» չափանիշներին համապարասիանող «օրենքի» առկայության պարագայում (...):

(...)

«Օրենքի» համապարասիանությունը «կանխարեսելիության» չափանիշին պարզելիս անհրաժեշտ է գնահատել, թե այն օրենքը, որով սահմանված պահանջների խախտումը մեղսագրվում է անձին, արդյո՞ք բովանդակային առումով ողջամրորեն ընկալելի է եղել անձանց համար: Այլ կերպ արդյո՞ք քրեական պարասիանարվության ենթարկվող սուբյեկտը, րեղեկանալով «օրենքով» նախարեսված պահանջների մասին, ծանոթանալով դրանց վերաբերյալ նորմատիվ վարքագծի կանոնների բովանդակությանը, դրանց վերաբերյալ րրված դարական մեկնարանություններին և անհրաժեշտության դեպքում սրանալով համապարասիան իրավական խորհրդարվություն, կարող էր կանխարեսել, թե որ գործողության/անգործության դրսևորումը կհանգեցնի քրեական պարասիանարվության և պարժի նշանակմանը: (...):»¹:

12. Նախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ին «Հայասրանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կարարելու մասին» ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը, ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմեար (հոգեներգործուն), խիսար

¹ Տե՛ս Հասմիկ Գրիգորյանի և Էդուարդ Սարիբեկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԾԴ/0131/01/15 որոշման 14-15-րդ կետերը, Գազիկ Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0258/01/16 որոշման 12.1-րդ կետը:

ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով (...):»

2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-241-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմեկ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով (...):»

ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը (սախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ) Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վարդան Ղազարյանի վերաբերյալ որոշման շրջանակներում արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

ա) անձը ցանել կամ աճեցրել է մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմեկ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր խոշոր, կամ առանձնապես խոշոր չափերով,

բ) (ա) կետում նշված չափերով համապատասխան բույսերը անձը ցանել կամ աճեցրել է ապօրինի:

Վերոնշյալ (ա) կետում շարադրված պայմանը կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 5 հավելվածով (այսուհետև՝ նաև՝ Հավելված 5), որը սահմանում է մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմեկ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Ինչ վերաբերում է (բ) կետում նշված պայմանին, այն է՝ համապատասխան բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը, ապա կոնկրետ դեպքում «ապօրինի» եզրույթը ենթադրում է, որ պետք է առկա լինի քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող համապատասխան գործողություններն իրականացնելու (ցանելու կամ աճեցնելու) նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգ, իսկ իրավակիրատողը այդ կարգի հաշվառումն պետք է քննություն իրականացնի և գնահատման ենթարկի այդ բույսերը ցանելու կամ աճեցնելու օրինականությունը (...):»¹:

Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածն ունի բլանկետային բնույթ, և կոնկրետ չափերով համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու ապօրինի լինելը որոշելու համար անհրաժեշտ է դիմել նորմատիվ իրավական այլ ակտի (ակտերի) օգնությանը՝ Վճռաբեկ

¹ Տե՛ս Վարդան Ղազարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշման 13-րդ կետը:

դատարանը, համակարգված վերլուծության ենթարկելով «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության՝ 2010 թվականի մարտի 18-ի՝ «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտների (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, հանգել է այն հետևության, որ «(...) [Մ]ի կողմից նախատեսված է քրեական պարասխանաբարություն օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված կարգի խախտմամբ համապարասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու համար, մյուս կողմից՝ որևէ կարգ նախատեսված չէ: Նախատեսվելով քրեական պարասխանաբարություն թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար՝ օրենսդիրը նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ նշված գործողություններն իրականացնելն իրավաչափորեն դիտարկել է որպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության ձև, սակայն չնախատեսվելով համապարասխան կարգ՝ ըստ էության, հեղուկական չի եղել խնդրի համապարսիակ օրենսդրական կարգավորման հարցում:

(...)

(...) Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ նորմի որոշակի լինելու պահանջը հարույկ նշանակություն ունի քրեական օրենքի համար՝ հաշվի առնելով այն իրավական հեղուկանքների առանձնահատուկ բնույթը, որոնք առաջանում են քրեաիրավական նորմի պահանջների խախտման պարագայում: Այս պահանջի խախտումը արժեզրկում է ոչ միայն օրինականության, այլ նաև քրեական իրավունքի մյուս սկզբունքները: Քրեաիրավական նորմը պետք է պարունակի հստակ կարգադրագրեր (վարքագծի կանոններ), հակառակ պարագայում՝ այդ նորմի հասցեատերը զրկվում է իր վարքագիծը դրա պահանջներին համապարասխանեցնելու և համապարասխան իրավական հեղուկանքները կանխարեւելու հնարավորությունից: Անձին քրեական պարասխանաբարության ենթարկելը նման դեպքում հանգեցնում է նաև օբյեկտիվ մեղսայնացման խախտելով ըստ մեղքի պարասխանաբարության սկզբունքը:

(...) Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի դիսպոզիցիան նկարագրված է բլանկետային դիսպոզիցիայով՝ վերոհիշյալ նորմը պետք է դիտարկել և դրա որոշակիությունը գնահատել համապարասխան ճյուղային օրենսդրության նորմերի հետ ունեցած համակարգային կապերի լույսի ներքո: ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը, պարասխանաբարություն նախատեսվելով թմրանյութեր պարունակող բույսեր ապօրինի, այլ կերպ՝ նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջների խախտմամբ ցանելու կամ աճեցնելու համար, ինքնին համապարասխան գործողությունների իրականացման կարգ չի

սահմանում՝ թողնելով դա այլ իրավական ակտերի կարգավորմանը: Մինչդեռ, թմրանյութերի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն կանոնակարգված չէ համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու կարգը: Այսպիսով, առկա է օրենսդրական բաց այն առումով, որ սահմանված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների իրականացման կարգը: Բսկ նման պայմաններում իրավակիրառողը զրկված է համապատասխան բույսեր ցանելու կամ աճեցնելու դեպքում անձի գործողությունների հակաօրինակականությունը գնահատելու, ուստի, նրա արարքում փոխալ հանցակազմի առկայությունը հաստատելու օբյեկտիվ հնարավորությունից: Արդյունքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար, դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնի խախտման: (...):»¹:

13. Այսպիսով, Վ.Ղազարյանի վերաբերյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը (նախքան 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՕ-241-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ) չէր բավարարում «օրենքի»՝ իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, այն պատասխանատվություն էր սահմանում թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր *սպորինի ցանելու կամ աճեցնելու* համար, մինչդեռ, իրավական որևէ ակտով համապատասխան գործողություններն *իրականացնելու որևէ կարգ* սահմանված չէր: Այլ կերպ՝ առկա էր օրենսդրական բաց, ինչի հետևանքով անհնար էր դառնում գնահատել անձի գործողությունների հակաօրինականությունը և նրան մեղսագրել համապատասխան հոդվածով արգելված արարքի կատարումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ որակական չափանիշին չբավարարող օրենքով անձին պատասխանատվության ենթարկելու պարագայում թույլ կտրվի օրինականության սկզբունքի ու դրա բաղադրատարր հանդիսացող՝ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» կանոնի խախտում: Այդպիսի խախտումն իր բնույթով **հիմնարար** է և ի սկզբանե վկայում է կայացված դատական ակտի անօրինական ու չհիմնավորված լինելու մասին, ուստի, դրա հիման վրա անձին դատապարտելու և նրա նկատմամբ պատիժ նշանակելու արդյունքում՝ կխաթարվի արդարադատության բուն էությունը, և

¹ Տե՛ս Վ.Ղազարյանի Ղազարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշման 13-21-րդ կետերը:

կիսախտվի սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Հարկ է փաստել, որ 2017 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-241-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված 1-ին մասը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, ինչի արդյունքում՝ պատասխանատվություն է նախատեսվել ոչ թե համապատասխան նյութեր պարունակող բույսերն **ապօրինի** ցանելու կամ աճեցնելու համար, այլ **շրջանառությունն արգելված**¹ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերը պարզապես ցանելու կամ աճեցնելու համար՝ խոշոր չափերով²:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր տան հարակից հողակտորում ապօրինի աճեցրել է մշակումն արգելված 10.5կգ ընդհանուր քաշով առանձնապես խոշոր չափերի հասնող կանեփի թուփ²:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Մ.Ասատրյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներին, և նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի վերը նշված հոդվածով³:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Մ.Ասատրյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը հանգել է ճիշտ հետևության, ինչը հիմնավորվել է դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռում շարադրված ապացույցներով⁴:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 9-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղավոր ճանաչելու արդյունքում՝ դատարանների կողմից թույլ է տրվել նյութական իրավունքի նորմերի հիմնարար խախտում, քանի որ վերոնշյալ նորմը չի բավարարել «օրենքի»՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության չափանիշներին: Մասնավորապես, այն պատասխանատվություն էր սահմանում թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր *ապօրինի ցանելու կամ աճեցնելու* համար, մինչդեռ, իրավական որևէ ակտով համապատասխան գործողություններն *իրականացնելու որևէ*

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Կամո Շահինյանի* վերաբերյալ գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԱՐԴ/0056/01/13 որոշումը:

² Տե՛ս՝ սույն որոշման 4-րդ կետը:

³ Տե՛ս՝ սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս՝ սույն որոշման 6-րդ կետը:

կարգ սահմանված չէր, հետևաբար, առկա է եղել օրենսդրական բաց: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել օրինականության սկզբունքի և դրա բաղադրատարր հանդիսացող «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտում:

16. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի կատարման մեջ մեղավոր ճանաչելու արդյունքում թույլ է տրվել այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Այսպիսով, թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 5-րդ և 273-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով հիմնարար են և հիմք են Մ.Ասատրյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 17-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի որոշումը բեկանելու և փոփոխելու՝ Մ.Ասատրյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչելու և հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ նրան արդարացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 412-րդ հոդվածի 2-րդ մասով, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մինաս Հովհաննեսի Ասատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հունիսի 16-ի որոշումը վերանայել:

2. Մինաս Հովհաննեսի Ասատրյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հունվարի 17-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական

դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 18-ի որոշումը բեկանել ու փոփոխել, Մինաս Հովհաննեսի Ասատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, և քրեական գործով վարույթը կարճել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0094/01/09

ՏԴ/0022/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ս.ԱՎԱԳՅԱՆԻ

դոնրաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանի պաշտպան Վ.Մուդյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2009 թվականի օգոստոսի 13-ի դատավճռով (թիվ ՏԴ/0094/01/09 քրեական գործով) Նիկոլայ Հովսեփյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ որպես պատիժ նշանակել կալանք՝ 2 (երկու) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

2. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ բողոքը բավարարել է և Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 13-ի դատավճիռը բեկանել: Ն.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական

օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Վերոնշյալ որոշման դեմ Ն.Հովսեփյանի պաշտպանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2010 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ բողոքը բավարարել է, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հոկտեմբերի 5-ի որոշումը՝ բեկանել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ մեղադրողի բողոքը բավարարվել է, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի օգոստոսի 13-ի դատավճիռը՝ պատժի մասով բեկանվել և փոփոխվել է: Ն.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նկատի ունենալով, որ Ն.Հովսեփյանը 2009 թվականի հոկտեմբերի 5-ից գտնվում է կալանքի տակ, նշանակված պատժին՝ 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկմանը, հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նա անհապաղ ազատ է արձակվել:

5. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճռով (թիվ ՏԴ/0022/01/12 քրեական գործով) Ն.Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կանոնների կիրառմամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված) դատապարտվել ազատազրկման՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2012 թվականի հունվարի 19-ից:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Ն.Հովսեփյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 16-ի որոշմամբ վերաքննիչ վարույթը կարճվել է՝ բողոքը հետ վերցնելու հիմքով:

6. Դատապարտյալ Ն.Հովսեփյանի պաշտպան Վ.Սուրյանը նոր հանգամանքի հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ, և դատապարտյալ Ն.Հովսեփյանի պաշտպան Վ.Սուրյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Նիկոլայ Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-

րդ մասի 3-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [նա] նախկինում երկու անգամ դատապարտված լինելով գողություններ կատարելու համար՝ դատվածությունը չմարված՝ 2008 թվականի ամռանը Դիլիջան քաղաքի «Կոմկոզիտորների տուն» հանգստյան տան հարակից տարածքից ապամոնտրվել և գողացել է «Արարար» հանգստյան տանը պարկանոց 13 մ փրամաչափի 18 մ ընդհանուր երկարությամբ երկաթյա խողովակներ, «Արարար» հանգստյան տանը պարձառել զգալի չափի՝ 27.000 ՀՀ դրամի նյութական վնաս»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը, հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետին, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ հոդվածներն ու ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է դատապարտյալ Ն.Հովսեփյանի վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման նրա նկատմամբ:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է Ն.Հովսեփյանի վերաբերյալ կայացված դատական ակտերով հաստատված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական գործող օրենսգրքին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Հ.Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին առյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճիռը վերանայելու համար:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արարքի պարժեղությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հեղադարձ ուժ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 93-96:

«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ փարսավում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:

12. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullo crimine, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

13. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. «(...) [Ե]լնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պատիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)»²:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գասպար Պողոսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՆ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման 7-րդ կետը:

Արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրահրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պարժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»¹:

14. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

15. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ քրեական օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից գողություն կատարելն օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առանձնացրել էր որպես տվյալ հանցագործության որակյալ տեսակ:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Հովսեփյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով դատապարտվել է այն բանի համար, որ նա, լինելով սեփակա-

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման եզրափակիչ մասը:

նության դեմ ուղղված հանցագործությունների համար նախկինում երկու անգամ դատապարտված և դատվածությունը չմարված, 2008 թվականի ամռանը գաղտնի հափշտակել է ջրատար խողովակներ՝ պատճառելով զգալի չափերի հասնող՝ ընդհանուր 27.000 ՀՀ դրամ գումարի նյութական վնաս¹:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի օրենսդրական փոփոխությունները հիմք են Ն.Հովսեփյանի կողմից կատարված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի իրավական որակման փոփոխության:

Մասնավորապես, օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրությունից երևում է, որ դրանց արդյունքում Ն.Հովսեփյանին մեղսագրված հանցավոր արարքի որակյալ հատկանիշը ճանաչվել է ուժը կորցրած և նրա արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասին: Նման պայմաններում նշված օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Ն.Հովսեփյանի կողմից կատարված հանցանքի վրա, քանի որ դրանք բարելավում են վերջինիս վիճակը:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Ն.Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճիռը վերանայելու համար:

19. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը, Ն.Հովսեփյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով որակված արարքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով: Բացի այդ, Ն.Հովսեփյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքի՝ ռեցիդիվի տեսակի փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է բեկանել ու փոփոխել նաև Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճիռը. Նիկոլայ Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով դատապարտել ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ հաշվի առնելով

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերը:

պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև գործի նյութերում առկա՝ դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքը: Մինևույն ժամանակ, պատժի սկիզբը հաշվելով 2012 թվականի հունվարի 19-ից՝ Ն.Հովսեփյանին պետք է անհապաղ ազատ արձակել սահմանված պատիժը կրած լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և նրա վերաբերյալ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճիռը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դատապարտյալ Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերաորակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 22-ի դատավճիռը բեկանել և փոփոխել: Նիկոլայ Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով դատապարտել ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով:

Պատժի սկիզբը հաշվել 2012 թվականի հունվարի 19-ից, և Նիկոլայ Խանդամիրի Հովսեփյանին անհապաղ ազատ արձակել՝ սահմանված պատիժը կրած լինելու հիմքով:

4. Դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0203/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահապետությունը՝
մասնակցությունը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությունը՝
մասնակցությունը դատախազ՝
ամբաստանյալ՝
պաշտպան՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ս.ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ
Մ.ՄԵԼԻՔՅԱՆԻ
Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայագորային քննչական բաժնում 2015 թվականի փետրվարի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90272015 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ Միքայել Արմենի Մելիքյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մ.Մելիքյանի

նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 22-ի և 2016 թվականի մարտի 18-ի որոշումներով Մ.Մելիքյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի հուլիսի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի դատավճռով Մ.Մելիքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Մ.Մելիքյանի և վերջինիս պաշտպան Վ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի դատավճիռը բեկանել է և ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Մ.Մելիքյանն արդարացվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը՝ կարճվել:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

5. Ամբաստանյալ Մ.Մելիքյանի պաշտպան Վ.Գևորգյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և օրինական ուժի մեջ թողնել վիճարկվող դատական ակտը, քանի որ այն օրինական է և հիմնավորված:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Նախաքննության մարմնի կողմից Մ.Մելիքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ. «(...) նա 2012 թվականի փետրվարի 14-ին կցագրվել է Կենտրոնական զինկոմիսարիատում և ենթակա է եղել զորակոչման 2014 թվականի ձմեռային զորակոչին, սակայն չի ներկայացել զինկոմիսարիատ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում խուսափել է ժամկետային զինվորական ծառայության

հերթական՝ 2014 թվականի ձմեռային և 2015 թվականի ամառային և ձմեռային գորակոչերից»¹:

7. Առաջադրված մեղադրանքում Մ.Մելիքյանն իրեն մեղավոր չի ճանաչել: Նախաքննական և դատաքննական ըստ էության նույնաբովանդակ ցուցմունքներով հայտնել է, որ ինքը չի խուսափել ժամկետային զինվորական ծառայությունից, քանի որ հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի: Նշել է, որ ծնվել ու հիմնականում բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, ունեցել է անչափահասի ՀՀ քաղաքացու անձնագիր, իսկ 16 տարին լրանալիս կցագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության Կենտրոնական զինկոմիսարիատում: Անչափահասի ՀՀ քաղաքացու անձնագիր ստացել է 2009 թվականին, քանի որ անհրաժեշտ է եղել երկրից դուրս գալու համար: Հայտնել է, որ իր կարծիքով չի հանդիսանում ՀՀ զինապարտ, ցանկանում է ծառայել ըստ քաղաքացիության վայրի, ուստի 2016 թվականի հունվարի 26-ին ներկայանալով ՀՀ ՊՆ Կենտրոնական զինկոմիսարիատ՝ հրաժարվել է ստանալ մեկնման ծանուցագիր²:

7.1 Վկա, ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Պարսամ Պետրոսյանն իր նախաքննական ցուցմունքում ըստ էության հայտնել է, որ Մ.Մելիքյանը 2012 թվականի փետրվարի 14-ին կցագրվել է Կենտրոնական զինկոմիսարիատում, անցել է բժշկական հանձնաժողով և ճանաչվել է պիտանի զինծառայության համար: Վերջինս ենթակա է եղել ՀՀ զինված ուժերում գորակոչվելու 2014 թվականի ձմեռային գորակոչին, սակայն կցագրվելուց հետո 2014 թվականի ձմեռային գորակոչին իր հոր ուղեկցությամբ ներկայացել է զինկոմիսարիատ և հայտնել, որ համարվում է ՌԴ քաղաքացի և իրեն չեն կարող գորակոչել բանակ: Իրենց կողմից Մ.Մելիքյանի քաղաքացիության վերաբերյալ հարցում է կատարվել ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն, որին ի պատասխան հայտնել են, որ Մ.Մելիքյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Այդ մասին իրենք տեղեկացրել են վերջինիս և հրավիրել զինկոմիսարիատ գորակոչման հարցը լուծելու նպատակով, սակայն Մ.Մելիքյանը չի ներկայացել: Այնուհետև այցելել են նրանց բնակարան, որտեղ վերջինիս պապը հայտարարել է, որ թողը ՌԴ քաղաքացի է և չպետք է ծառայի ՀՀ զինված ուժերում³:

7.2 Պ.Պետրոսյանն իր դատաքննական ցուցմունքում, ի հավելումն նախաքննական ցուցմունքի, ըստ էության նշել է նաև, որ հեռախոսային զանգերի միջոցով նույնպես միջոցներ է ձեռնարկել Մ.Մելիքյանին 2014 թվականի ձմեռային գորակոչի ծանուցագիրն ստանալու կապակցությամբ զինկոմիսարիատ ներկայանալու պարտականության մասին տեղեկաց-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 173-175:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 92-93, 118, հատոր 2-րդ, թերթեր 37-40:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 42-45:

ներու վերաբերյալ, բացի այդ այցելել է Արամի նրբանցք 5ա հասցե՝ ծանուցագիրը Մ.Մելիքյանին փոխանցելու համար, սակայն վերջինիս պապն ասել է, որ թոռը Մոսկվայում է, որպիսի պայմաններում, այցելության մասին ինքը կազմել է համապատասխան գեկուցագիր¹:

7.3 Որպես այլ փաստաթուղթ ապացույց է ճանաչվել 2016 թվականի հունվարի 26-ի արձանագրությունը, ըստ որի՝ ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիատի գորակոչի բաժանմունքի պետ Ա.Մելյանը 2015 թվականի ձմեռային գորակոչին հրավիրել է գորակոչիկ Մ.Մելիքյանին՝ ՀՀ զինված ուժեր մեկնման ծանուցագիր հանձնելու նպատակով: Վերջինս զինկոմիսարիատ է ներկայացել 2016 թվականի հունվարի 26-ին և հրաժարվել է ստանալ մեկնման ծանուցագիրը, պատճառաբանելով, որ հանդիսանում է ՌԻ քաղաքացի և բացի այդ նշել է, որ իր վերաբերյալ գործ է քննվում և մինչև դատաքննական գործերի ավարտը չի ստանալու ծանուցագիրը, որի համար նաև դիմում է ներկայացրել Կենտրոնական զինվորական կոմիսարիատ: Նշված օրը Մ.Մելիքյանին ներկայացվել է նաև ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պարզաբանումը նրա՝ ՀՀ քաղաքացիության և ՀՀ զինապարտ լինելու վերաբերյալ, որին Մ.Մելիքյանը ծանոթացել է: Բացի այդ, Կենտրոնական զինվորական կոմիսարիատի հանձնաժողովի կողմից Մ.Մելիքյանը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայությանը՝ 2015 թվականի ձմեռային գորակոչի ընթացքում²:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Թ]րեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Միքայել Մելիքյանի նկարմամբ 2015 թվականի փետրվար ամսից ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներով իրականացվել է նախաքննություն, հետևաբար 2015 թվականի ամառային և ձմեռային գորակոչերին Միքայել Մելիքյանը, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ենթակա չի եղել, այսինքն՝ Միքայել Մելիքյանը չի ներկայացել ժամկետային զինվորական ծառայության 2015 թվականի ամառային և ձմեռային գորակոչերին իր նկարմամբ կատարվող նախաքննության պայմաններում, ինչից հետևում է, որ նա ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախաբեկված հանցագործության սուբյեկտ չի հանդիսացել, ինչպես նաև նրա գործողություններում բացակայել է նշված հանցագործության օբյեկտիվ կողմը:

Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Միքայել Մելիքյանի/ն/ (...) առաջադրված մեղադրանքի ծավալից պերք է հանել 2015 թվականի ամառային և ձմեռային գորակոչերից խուսափելը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 93-96, 100-103:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 126:

(...) [Թ]ույլատրելի և արժանահավասար ապացույցների համադրման և գնահատման արդյունքում Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ամբաստանյալ Միքայել Արմենի Մելիքյանը 2012 թվականի փետրվարի 14-ին կցագրվել է Կենտրոնական զինկոմիսարիատում և ենթակա եղել զորակոչման 2014 թվականի ձմեռային զորակոչին, սակայն 2013 թվականի նոյեմբերի 11-ին սրացել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն, որից հետո չի ներկայացել զինկոմիսարիատ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2014 թվականի ձմեռային զորակոչից:

Ապացուցված է Միքայել Արմենի Մելիքյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու մեջ (...)»¹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Ա]մբաստանյալի մեղավորության մասին չփարստված կասկածները մեկնաբանելով՝ նրա օգրին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ձեռք չի բերվել փոփոխակալցված ապացույցների այնպիսի բավարար համակցություն, որը հիմք կդառնար, բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը, անվերապահ հերքություն անելու առ այն, որ ամբաստանյալ Մ.Մելիքյանը դեռևս 2012 թվականի փետրվարի 14-ին սրացած ծանուցագրի հիման վրա 2014 թվականի սեպտեմբերի 5-ին պարտաճանաչ կերպով ներկայանալով ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիատ, դրանից հետո ընդհանրապես ծանուցվել է 2014 թվականի ձմեռային զորակոչին ներկայանալու մասին, կամ որ ամբաստանյալի՝ ՀՀ զինապարտ լինելու հարցի առնչությամբ պարզաբանում արանայուց հետո, զինվորական կոմիսարիատի պարասիանալու պաշտոնապար անձանց կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել նրան՝ 2014 թվականի ձմեռային զորակոչին ներկայանալու մասին ծանուցելու ուղղությամբ, սակայն վերջինս ժամկետային զինվորական ծառայության րվյալ զորակոչից խուսափելու ուղղակի դիմավորությամբ հրաժարվել կամ որևէ կերպ խուսափել է այն սրանալուց: Այլ կերպ՝ գործով ձեռք բերված և պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատարանությամբ հերազուրված վերաբերելի և թույլատրելի ապացույցների բավարար ամբողջությամբ չի հիմնավորվել ամբաստանյալ Մ.Մելիքյանի արարքում ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2014 թվականի ձմեռային զորակոչից խուսափելու հանցակազմի առկայությունը: (...)»²:

10. Մ.Մելիքյանը 2017 թվականի օգոստոսի 1-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ոստիկանության՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 118-127:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 112-133:

խնդրելով ճանաչել հայցվորի և Հայաստանի Հանրապետության միջև պետության և ՀՀ քաղաքացի իրավահարաբերությունների բացակայությունը, և որպես հետևանք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից Մ.Մելիքյանի անունով ՀՀ քաղաքացու անձնագրերի տրամադրումը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից 2014 թվականի հոկտեմբերի 8-ի գրությամբ ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիին Մ.Մելիքյանի՝ ՀՀ քաղաքացի հանդիսանալու մասին թիվ 1 ձևի տեղեկանքի տրամադրումը ճանաչել ոչ իրավաչափ: ՀՀ վարչական դատարանի՝ 2019 թվականի մարտի 14-ի վճռով նշված պահանջները մերժվել են¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը սույն քրեական գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ, այն է՝ ապացույցները գնահատելիս՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը:

12. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից չեն հերքվել այն հանգամանքները, որ Մ.Մելիքյանը կցագրումից հետո, հայտնելով իր բնակության հասցեն, ստանալով ՌԴ քաղաքացու անձնագիր, նախքան գորակոչը փոխելով բնակության վայրն ուղղակի դիտավորությամբ խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2014 թվականի ձմեռային գորակոչից:

Ընդ որում, հանցանքի կատարման պահին գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զինապարտները բնակության վայրի փոփոխության մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել բնակության վայրի զինվորական կոմիսարիատ, ինչը տվյալ դեպքում Մ.Մելիքյանը չի կատարել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ զինվորական կոմիսարիատի պաշտոնատար անձանց կողմից անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել նրան ծանուցելու ուղղությամբ՝ չի բխում քրեական գործով ձեռք բերված և հետազոտված տվյալներից, հաշվի առնելով, որ աշխատակիցների կողմից հստակ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիության և զինապարտ լինելու հարցի վերաբերյալ ստացված պատասխաններն ու ծանուցագիրը գորակոչիկին հանձնելու ուղղությամբ:

¹ Տե՛ս u [www.datalex.am](http://datalex.am) դատական տեղեկատվական համակարգը՝ հետևյալ հղմամբ՝ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809909310

13. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք ամբաստանյալ Մ.Մելիքյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով՝ 46-րդ հոդվածի, 2015 թվականի փոփոխություններով՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի) համաձայն՝ *«Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»:*

Իրավահարաբերության ծագման պահին գործող Զինապարտության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է: (...):»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելը՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ պարժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երեք փարի ժամկետով (...):»:*

Վերոնշյալ հանցակազմը Վճռաբեկ դատարանն իրավական վերլուծության է ենթարկել *Սերգեյ Մխիթարյանի* վերաբերյալ գործով և դիրքորոշում արտահայտել այն մասին, որ քննարկվող հանցակազմը դասվում է կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքին և բնութագրվում որպես հանցավոր արարք, որը ոտնձգում է ՀՀ զինված ուժերի, զինվորական ծառայության շահերի և պետության պաշտպանունակության դեմ: Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու օրյեկտ են հանդիսանում ՀՀ զինված ուժերի համալրման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օրյեկտիվ կողմը դրսևորվում է, ի թիվս այնի, ժամկետային

զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու ձևով՝ այդ ծառայությունից ազատվելու օրենքով սահմանված հիմքերի բացակայության դեպքում: Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կոդը կատարվում է անգործությամբ (ծանրացնող հանգամանքներում հանցանքը կարող է կատարվել նաև ակտիվ գործողություններով): Մասնավորապես ժամկետային զինվորական ծառայության ենթակա անձն այդ ծառայությանը գորակոչվելուց խուսափելու նպատակով, առանց հարգելի պատճառների չի ներկայանում իր հաշվառման (փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Հանցանքն ավարտված է համարվում օրենքով սահմանված կարգով հայտարարված հերթական գորակոչի ժամկետն անցնելու պահին: Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կոդը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով (անգործությամբ) խուսափում է ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից և ցանկանում է դա:

Հանցագործության սուբյեկտ կարող է լինել բացառապես ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ենթակա անձը¹:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

17. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով ընդգծել է, որ ապացույցի արժանահավատությունը վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ

¹ Տե՛ս *Սերգեյ Մխիթարյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0051/01/11 որոշման 14-15-րդ կետերը:

վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա¹:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի մարտի 28-ի դատավճռով Մ.Մելիքյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, այն պատճառաբանությամբ, որ թույլատրելի և արժանահավատ ապացույցների համադրման և գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ ամբաստանյալ Մ.Մելիքյանը 2012 թվականի փետրվարի 14-ին կցագրվել է Կենտրոնական զինկոմիսարիատում և ենթակա է եղել զորակոչման 2014 թվականի ձմեռային զորակոչին, սակայն 2013 թվականի նոյեմբերի 11-ին ստացել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն, որից հետո չի ներկայացել զինկոմիսարիատ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2014 թվականի ձմեռային զորակոչից²:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով Առաջին ատյանի դատարանի հետ, Մ.Մելիքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել՝ գտնելով, որ ձեռք չի բերվել փոխկապակցված ապացույցների բավարար համակցություն, որ Մ.Մելիքյանը դեռևս 2012 թվականի փետրվարի 14-ին ստացած ծանուցագրի հիման վրա 2014 թվականի սեպտեմբերի 5-ին պարտաճանաչ կերպով ներկայանալով ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիատ, դրանից հետո առհասարակ ծանուցվել է 2014 թվականի ձմեռային զորակոչին ներկայանալու մասին, կամ որ ամբաստանյալի՝ ՀՀ զինապարտ լինելու հարցի առնչությամբ պարզաբանում ստանալուց հետո, զինվորական կոմիսարիատի պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել նրան՝ 2014 թվականի ձմեռային զորակոչին ներկայանալու մասին ծանուցելու ուղղությամբ, սակայն վերջինս ժամկետային զինվորա-

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31.3-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կան ծառայության տվյալ գորակոչից խուսափելու ուղղակի դիտավորությանը հրաժարվել կամ որևէ կերպ խուսափել է այն ստանալուց¹:

19. Սույն որոշման նախորդ, ինչպես նաև 6-7.3-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել քրեական գործում առկա ապացույցների համակցությունը՝ ամբաստանյալ Մ.Մելիքյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն ուշադրության չի արժանացրել ինչպես վկա Պ.Պետրոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներն այն մասին, որ միջոցներ են ձեռնարկվել ամբաստանյալ Մ.Մելիքյանին ծանուցագիր հանձնելու, գորակոչին ներկայանալու պարտականության մասին հայտնելու ուղղությամբ, այնպես էլ ամբաստանյալի հետհանցավոր վարքագիծը, մասնավորապես՝ քրեական գործում առկա ամբաստանյալ Մ.Մելիքյանի՝ 2016 թվականի հունվարի 26-ի՝ Կենտրոնական զինվորական կոմիսարիատ ներկայացված դիմումն այն մասին, որ նա հանդիսանում է ՌԴ քաղաքացի և չի ցանկանում ստանալ գորակոչվելու ծանուցագիր²:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ամբաստանյալ Մ.Մելիքյանը դեռևս կցագրման ժամանակ զինկոմիսարիատում որպես իր բնակության հասցե հայտնել է՝ *Երևան քաղաք, Արամի 5ա շենք, 36 բնակարանը*, նշվածը որպես իր բնակության հասցե Մ.Մելիքյանը նշել է նաև նախաքննության ընթացքում՝ որպես մեղադրյալ տված ցուցմունքներով: Բացի այդ, նախաքննության ընթացքում Մ.Մելիքյանին որպես մեղադրյալ ներգրավելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունն ընտրելու մասին որոշումներում նույնպես որպես Մ.Մելիքյանի բնակության հասցե է նշվել *Երևան քաղաք, Արամի 5ա շենք, 36 բնակարանը*³: Ավելին, նախաքննության ընթացքում մեղադրյալ Մ.Մելիքյանը ներկայացրել է իր վերաբերյալ Արամի 5ա շենքի համատիրության լիազորի կողմից կազմված բնութագիրը, որի համաձայն ևս՝ *«Միքայել Արմենի Մելիքյանը, ծնված 1996թ. հոկտեմբերի 8-ին, բնակվում է Երևան քաղաքում, Արամի նրբանցք, 5ա շենք, 36-բնակարանում»*⁴:

Այսպիսով, գործի դատաքննության ընթացքում հետազոտված փաստական տվյալներով հաստատվել է, որ Մ.Մելիքյանը 2012 թվականի փետրվարի 14-ին կցագրվել է ՀՀ ՊՆ Կենտրոնական զինկոմիսարիատ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7.3-րդ կետը:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 54:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 171:

տում, անցել է բժշկական հանձնաժողով և ճանաչվել է պիտանի զինծառայության համար: 2014 թվականի ձմեռային զորակոչին ներկայանալու մասին տեղյակ լինելով, Մ.Մելիքյանը հոր՝ Ա.Մելիքյանի հետ ներկայացել են Կենտրոնական զինվորական կոմիսարիատ, հայտնել Ռ-Քաղաքացիություն ձեռք բերելու և, ըստ իրենց՝ ՀՀ-ում զորակոչի ենթակա չլինելու մասին: Կենտրոնական զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության ու ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության միջոցով Մ.Մելիքյանի՝ ՀՀ քաղաքացի, հետևաբար և ՀՀ-ում զինապարտ լինելը հաստատվելուց հետո, անհրաժեշտ և բավարար միջոցներ են ձեռնարկվել այդ մասին Մ.Մելիքյանին տեղեկացնելու համար: Մասնավորապես, գործում առկա ապացույցներով¹, այդ թվում՝ վկա Պ.Պետրոսյանի ցուցմունքով պարզվել է, որ զինկոմիսարիատի աշխատակիցները զորակոչին ներկայանալու պարտականության մասին փորձել են տեղեկացնել ինչպես հեռախոսազանգերի, այնպես էլ Մ.Մելիքյանի նշած հասցեով՝ ծանուցագիր տանելու միջոցով: Ընդ որում, նշված հասցեից այլ տեղ բնակվելու պարագայում, Մ.Մելիքյանը, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ իր բնակության վայրի փոփոխության մասին պարտավոր էր տեղյակ պահել զինվորական կոմիսարիատ, ինչը չի արել: Այդ հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից համակողմանի գնահատման չեն ենթարկվել և հաշվի չի առնվել, որ նման պայմաններում ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական կոմիսարիատի աշխատակիցների կողմից դրսևորվել է պատշաճ ջանասիրություն՝ զորակոչին ներկայանալու անհրաժեշտության մասին Մ.Մելիքյանին ծանուցելու վերաբերյալ:

Ավելին, Վերաքննիչ դատարանը վերոնշյալ փաստական հանգամանքների համակցության մեջ ուշադրության չի արժանացրել նաև այն հանգամանքը, որ հերթական զորակոչին ներկայանալու անհրաժեշտության մասին տեղեկանալուց հետո ներկայանալով ՀՀ ՊՆ Կենտրոնական զինկոմիսարիատ՝ Մ.Մելիքյանը հրաժարվել է ստանալ ժամկետային զինվորական ծառայության մեկնման ծանուցագիր²:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Մ.Մելիքյանը կցագրումից հետո ուղղակի դիտավորությամբ խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2014 թվականի ձմեռային զորակոչից:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Մ.Մելիքյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի

¹ Տե՛ս սույն որոշման 7-7.3-րդ կետերը:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 116:

բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

20. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 17-ի որոշումը բեկանելու հիմք է:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված դատական ակտն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի դատավճռին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Միքայել Արմենի Մելիքյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 28-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0086/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահապետությունը՝
մասնակցությունը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությունը՝
մասնակցությունը դատահազ՝
դիմողի ներկայացուցիչ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 29-ի որոշման դեմ դիմող Լատուրա Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարագոյոզյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի ապրիլի 14-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Այվազյանը (այսուհետ՝ նաև Քննիչ) որոշում է կայացրել Լատուրա Կարոյի Զաքարյանի դիմումի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

1.1 Վերոհիշյալ որոշման դեմ դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարագոյոզյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին, որը 2017 թվականի մայիսի 3-ի որոշմամբ մերժվել է:

2. 2017 թվականի հունիսի 2-ին դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ

Ա.Ղարազյոզյանը բողոք է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի և բողոքը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի մայիսի 3-ի որոշումները և ճանաչել Լ.Զաքարյանի իրավունքների և ազատությունների խախտման փաստը:

Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ ներկայացված բողոքը բավարարել է և վերացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի՝ 2017 թվականի ապրիլի 4-ի որոշումը:

3. Դատախազ Հ.Թադևոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունվարի 29-ի որոշմամբ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումը՝ մերժելով դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքը:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Լ.Զաքարյանը 2017 թվականի մարտի 21-ին դիմել է «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությանը և հաղորդում ներկայացրել այն մասին, որ 2017 թվականի մարտի 18-ին գտնվել է Երևան քաղաքի Ազատության հրապարակում ու մասնակցել Արթուր Սարգսյանին Երևանի՝ «Եռաբլուր» կոչվող գերեզմանատանը հուղարկավորելու նպատակով անցկացվող հավաքին: Որոշ ժամանակ անց, հավաքված անձանց կողմից կազմակերպվել է երթ դեպի ՀՀ կառավարության շենք: Երթի ընթացքում ոստիկանության ծառայողները, պահանջելով խտանալ դեպի ճանապարհի հոծ գիծ, սկսել են սեղմել ժողովրդին, որի ընթացքում առաջացած հրմշտոցի ժամանակ ինքը վայր է ընկել և ստացել աջ ուսազվի տեղաշարժով կոտրվածք, ինչպես նաև մարմնի տարբեր հատվածներում սալջարդի տեսքով մարմնական վնասվածքներ: Դիմող Լ.Զաքարյանը հաղորդմամբ պահանջել է պատժել նշված օրն այդ տարածքում ծառայություն իրականացնող ոստիկանության

աշխատակիցներին¹:

5.1 Դիմող Լ.Զաքարյանի հանցագործության մասին հաղորդումը «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականի մարտի 21-ին ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն²:

6. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի՝ 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման համաձայն՝ «(...) [Մ]արդկանց մեջ առաջացած իրարանցման հետևանքով Լ.Զաքարյանի վայր ընկնելն ու մարմնական վնասվածքներ ստանալը տեղի է ունեցել ոչ թե ոստիկանության ծառայողների կամ ներկա գտնվող քաղաքացիների մեղավորությամբ կատարված գործողությունների, այլ՝ պատահարի արդյունքում: Ոստիկանության ծառայողները կատարել են իրավաչափ գործողություններ, որոնք միտված են եղել ապահովելու (...) ճանապարհային երթևեկության վերականգմանն ու հասարակական կարգի ապահովմանը, ուստի բացակայում են (...) հանցագործության/ հարկանիշները (...)»³:

7. Առաջին ատյանի դատարանը, բավարարելով Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքը, նշել է. «(...) Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այն է՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով, քրեական պատասխանատվությունը բացառելու դեպքում, յուրաքանչյուր դեպքի առթիվ նախապարտադրվող նյութերով նախ պետք է բացահայտվի ենթադրյալ կոնկրետ հանցավոր արարքը՝ դրա արտաքին դրսևորումը, այն կատարող ենթադրյալ անձը, այդ անձի ներքին, հոգեբանական վերաբերմունքը այդ ենթադրյալ հանցավոր արարքի նկատմամբ, որից հետո միայն քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի բացակայության դեպքում որոշում կայացվի քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Հանցակազմի առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևության հանգելու համար անհրաժեշտ է հաստատել կամ բացառել կոնկրետ արարքի փաստական հարկանիշների և քրեական օրենսգրքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հարկանիշների միջև եղած նույնությունն ու իրավաբանական որակումը: Հակառակ պարագայում, եթե չկա կոնկրետ ենթադրյալ հանցավոր արարք, այն ենթադրաբար կատարած անձ, ապա հետևությունն առ այն, որ արարքում բացակայում է հանցակազմը, իրավաչափ համարվել չի կարող:

Դատարանը փաստում է, որ Լ.Զաքարյանի հաղորդման հիման վրա նախապարտադրված նյութերի հիման վրա Քննիչը, չբացահայտելով ենթադրյալ հանցավոր արարքը, ենթադրաբար այն կատարած անձին,

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 11-13:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 14:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 19:

որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ արարքում հանցակազմի բացակայության պարճառարանությամբ: Այսպիսով, Դատարանը գրնում է, որ նշված որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների խախտմամբ, ուստի դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարագոյանի բողոքը պետք է բավարարել և վերացնել ՀՀ հարուկ քննչական ծառայության ընդհանուր բնույթի հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Ա.Այվազյանի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017 թվականի ապրիլի 14-ի որոշումը:

Ինչ [վերաբերում է] քննարկվող բողոքի հիմքում դրված հիմնավորումներին, ապա Դատարանը գրնում է, որ դրանց հնարավոր կլինի անդրադառնալ սույն որոշմամբ արճանագրված խախտումը վերացնելուց հետո (...)¹:

8. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ասյանի դատարանի որոշումը, արճանագրել է. «(...) Լատուրա Զաքարյանի հաղորդման շուրջ իրականացված նախնական սրուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն ու տեղեկությունները կոնկրետ դեպքում բավարար են հավասարելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը տվյալ դեպքում բացակայում են: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արճանագրում է նաև, որ նշված հաղորդման հիման վրա նախապարտաստրված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս՝ Քննիչի կողմից, թույլ չի տրվել նյութական և դատավարական օրենսդրության պահանջների այնպիսի խախտումներ, որպիսիք կարող էին էական ազդեցություն ունենալ կայացված որոշման օրինականության հարցում և կհանգեցնեին դիմողի իրավունքների ու ազատությունների խախտման կամ անհամաչափ սահմանափակման:

Վերը նշվածից ելնելով, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ասյանի դատարանն իրավասու չէր վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի որոշումն այն դեպքում, երբ գործի նյութերում առկա չեն եղել քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ թեև Առաջին ասյանի դատարանը վերացրել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի որոշումը, այնուամենայնիվ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայության վերաբերյալ հերևության չի հանգել: Նշվածը հիմք է տալիս համաճայնելու նաև վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ վիճարկվող որոշումը որևէ հիմնավորում չի պարունակում առ այն, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման դեմ բերված բողոքի դատական սրուգման արդյունքում պարզվել են քրեական գործ հարուցելու բավարար հիմքերի առկայությունը:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 128-129:

(...)

Անդրադատնալով Առաջին աստիճանի դատարանի այն եզրահանգմանը, որ Քննիչը չբացահայտելով ենթադրյալ հանցավոր արարքը, ենթադրաբար այն կատարած անձին, որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, ապա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին աստիճանի դատարանի այն հետևությունը, որ Քննիչը չի բացահայտել ենթադրյալ հանցավոր արարքը անհիմն է: Քննիչի վիճարկվող որոշումից երևում է, որ դրանում Քննիչը փաստել է Լատուրա Զաքարյանի մարմնական վնասվածք սրանալու դեպքի առկայությունը և հանգամանքները: Իսկ ինչ վերաբերում է ենթադրյալ արարքը կատարած անձի բացահայտված չլինելուն, ապա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ նշվածը կոնկրետ դեպքում արարքում հանցակազմի բացակայությունը փաստելու համար որևէ էական նշանակություն ունենալ չէր կարող (...)¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 6-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-9-րդ, 17-րդ, 290-րդ հոդվածների պահանջները: Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարվել է ոչ պատշաճ և թերի քննություն, չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված միջոցները՝ քրեական գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու համար:

9.1 Բողոքաբերը փաստել է նաև, որ Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ տուժողը բացատրություն է տվել դեղերի և ցավի ազդեցության տակ, իսկ նյութերի նախապատրաստման ընթացքում միայն Լ.Զաքարյանից բացատրություն վերցնելով՝ հնարավոր չէր պարզել առերևույթ հանցանքի առկայությունը կամ բացակայությունը:

9.2 Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն, որ վարույթն իրականացնող մարմինը չի գննել մամուլում հրապարակված տեսանյութը, և գտել է, որ նախնական ստուգման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են գալու այն եզրահանգման, որ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 47-48:

բացակայում են քրեական գործ հարուցելու հիմքերը:

9.3 Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումը որևէ պատճառաբանություն չի պարունակում ինչպես դեպքի օրը ծառայություն իրականացնող ոստիկանների կողմից համաչափ և օրինական գործողություններ կատարելու, այնպես էլ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից «վատ վերաբերմունք»-ի ենթադրյալ փաստարկների վերաբերյալ արդյունավետ քննություն իրականացնելու մասին, ուստի դատարանի այդ հետևությունն առավել քան անորոշ է:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 29-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը և (կամ) քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից հանցագործության դեպքի և արարքում հանցակազմի բացակայության հիմքերի կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն սպասելիքի խնդիր: Ուստի, անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա. (...):»:

13.1 Քրեական գործով վարույթը և (կամ) քրեական հետապնդումը բացառող հանգամանքների առկայությամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է նախկինում իր իսկ կողմից ձևավորված իրավական դիրքորոշումներն այն մասին, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ոեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ

հողվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով,

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով¹:

13.2 Ընդ որում, կախված քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու՝ օրենքով նախատեսված հիմքի բովանդակությունից, շահագրգիռ անձանց համար տարբեր իրավական հետևանքներ են առաջանում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս կամ գործի վարույթը կարճելիս անձը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ, հետևաբար ստանում է նաև անօրինական կամ չհիմնավորված քրեական հետապնդման արդյունքում իր խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման, ինչպես նաև պատճառված վնասի հատուցման իրավունք: Մինչդեռ, քրեադատավարական օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս անձն արդարացվածի կարգավիճակ չի ստանում, հետևաբար չի ստանում նաև դատավարական այդ կարգավիճակից բխող այլ իրավունքներից օգտվելու հնարավորություն:

13.3 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը քրեական դատավարության ցանկացած փուլում անվերապահորեն պետք է հանգեցնի քրեական հետապնդման դադարեցման (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի), այնուամենայնիվ, նշված հիմքերն իրենց բովանդակությամբ և կիրառման իրավական հետևանքներով տարբեր են: Հետևաբար, նշված հիմքերից որևէ մեկի հայտնաբերման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ոչ միայն որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, այլ նաև իր որոշման մեջ հստակ պետք է ամրագրի քրեադատավարական օրենքի այն նորմը, որի հիման վրա կայացվում է այդ որոշումը:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման մեջ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի հստակ ամրագրման պահանջը պարտադիր է ոչ միայն քննարկվող քրեադատավարական ակտի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջն ապահովելու համար, այլ նաև անհրաժեշտ նախապայման է դատական ակտի որոշակիության, արդա-

¹ Տե՛ս *Արմեն Բաղդասարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԳ/0009/11/13 որոշման 15-րդ կետը:

րադատության մատչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին համարժեք՝ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար: Այլ կերպ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և (կամ) քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որևէ հիմքի հստակ ամրագրումը պարտադիր է և ի թիվս այլոց, պայմանավորված է.

ա) անձի իրավական կարգավիճակի հստակեցման, և դրանից ելնելով՝ քրեական հետապնդման հետևանքով խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման, ինչպես նաև պատճառված վնասի հատուցման իրավունք վերապահելու անհրաժեշտությամբ,

բ) քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի, այդ թվում՝ արդարացման հիմքի մասով բողոքարկելու իրավունք վերապահող քրեադատավարական նորմերի գործողության ապահովման անհրաժեշտությամբ¹:

14. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է այդ որոշման մեջ արձանագրի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը: Ընդ որում, պայմանավորված այդ հիմքերի՝ արդարացնող կամ ոչ արդարացնող բնույթով և անգամ արդարացնող հիմքերի տարբեր իրավական նշանակությամբ՝ դրանց սխալ կիրառումը կարող է հանգեցնել անձի համար անբարենպաստ իրավական հետևանքների:

15. Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը, ինչպես նաև վերջիններրի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում²: Քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության բաղկացուցիչ մասն է, հետևաբար, ունի այն նույն ընդհանուր նպատակը և խնդիրները, ինչ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը: Ըստ այդմ, քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է պարզի՝

¹ Տե՛ս *Գևորգ Խնուպյանի և մյուսների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, *Ներսես Միսակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ/0003/11/08 որոշումը:

ա) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելիս պահպանվել են արդյո՞ք քրեադատավարական օրենսդրության պահանջները, եթե ոչ, ապա

բ) դրանց չպահպանման հետևանքով խախտվել են արդյո՞ք անձի իրավունքներն ու ազատությունները¹:

16. Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է, ի թիվս այլոց, քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե արդյո՞ք ճիշտ է կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված այս կամ այն հիմքը և խախտում հայտնաբերելու դեպքում իր որոշմամբ արձանագրի վարույթը բացառող հանգամանքի սխալ կիրառման փաստը՝ հիմքեր ստեղծելով անձի խախտված իրավունքը վերականգնելու համար:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթը և (կամ) քրեական հետապնդումը բացառող հիմքերից՝ հանցագործության դեպքի բացակայությունը և արարքում հանցակազմի բացակայությունը թեև միմյանց հետ սերտորեն փոխկապված են, սակայն քրեադատավարական օրենքով դրանց տրված նշանակությունը և հետևանքները տարբեր են:

Քրեական գործով վարույթը և (կամ) քրեական հետապնդումը բացառող հիմքերից արարքում հանցակազմի բացակայությունը ենթադրում է քննության առարկան կազմող արարքի անհամապատասխանությունը ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված որևէ հանցակազմի օրենսդրական նկարագրությանը:

18. Սույն գործի փաստերից հետևում է, որ Քննչի՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017 թվականի ապրիլի 14-ի որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ ոստիկանության ծառայողները կատարել են իրավաչափ գործողություններ, որոնք միտված են եղել ճանապարհային երթևեկության վերականգմանն ու հասարակական կարգի ապահովմանը, իսկ Լ.Զաքարյանի վայր ընկնելն ու մարմնական վնասվածքներ ստանալը տեղի է ունեցել ոչ թե ոստիկանության ծառայողների կամ ներկա գտնվող քաղաքացիների մեղավորությամբ կատարված գործողությունների, այլ՝ **պատահարի արդյունքում**²:

Դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքի հիման վրա Առաջին ատյանի դատարանը, դատական ստուգման ենթարկելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին վերոնշյալ որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, առանց անդրադառնալու բողոքում բարձրացված փաստարկներին, գտել է, որ վարույթն

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Դավիթ Վարոյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0005/11/14 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

իրականացնող մարմինը, որոշում կայացնելով հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, թույլ է տվել դատավարական նորմերի խախտում, քանի որ արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը փաստելու համար պետք է բացահայտվի ենթադրյալ կոնկրետ արարքը՝ դրա արտաքին դրսևորումը, այն կատարող ենթադրյալ անձը, այդ անձի ներքին, հոգեբանական վերաբերմունքն այդ ենթադրյալ արարքի նկատմամբ, և եթե չկա կոնկրետ ենթադրյալ հանցավոր արարքը, այն ենթադրաբար կատարած անձ, ապա հետևությունն առ այն, որ արարքում բացակայում է հանցակազմը, իրավաչափ համարվել չի կարող¹:

Վերաքննիչ դատարանը բեկանել ու փոփոխել է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ մերժելով դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքը՝ փաստելով, որ Լ.Զաքարյանի հաղորդման շուրջ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն ու տեղեկությունները բավարար են հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը տվյալ դեպքում բացակայում են: Վերաքննիչ դատարանը նաև փաստել է, որ ենթադրյալ արարքը կատարած անձի բացահայտված չլինելը նշված կոնկրետ դեպքում արարքի հանցակազմի բացակայությունը փաստելու համար որևէ էական նշանակություն չէր կարող ունենալ²:

19. Սույն որոշման 13-17-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով նշված փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քննիչը, արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով այն պարագայում, երբ նույն որոշման մեջ փաստել է, որ Լ.Զաքարյանի վայր ընկնելն ու մարմնական վնասվածքներ ստանալը տեղի է ունեցել պատահարի արդյունքում, խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները, քանի որ կիրառել է քրեական գործի վարույթը բացառող՝ իր որոշման պատճառաբանությունից չբխող հիմք:

20. Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումն առ այն, որ առանց փաստելու ենթադրյալ արարքի առկայությունը, Քննիչի կողմից որոշում է կայացվել հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Առաջին ատյանի դատարանը, ըստ էության, իրավաչափորեն արձանագրել է Քննիչի կողմից վարույթը բացառող հանգամանքի սխալ կիրառման փաստը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, հիշյալ փաստն անտեսել է:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

21. Անդրադառնալով Լ.Զաքարյանի հաղորման մեջ նշված հանգամանքների վերաբերյալ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չիրականացնելու վերաբերյալ հարցին, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այն քննարկման առարկա կարող է դարձվել իր որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո¹: Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Լ.Զաքարյանի հաղորդման շուրջ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն ու տեղեկությունները բավարար են հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը տվյալ դեպքում բացակայում են²: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, չանդրադառնալով դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքում բարձրացված հարցերին, անհամաչափորեն սահմանափակել է դիմողի դատական պաշտպանության իրավունքը: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-9.3-րդ կետերում ներկայացված այն փաստարկներին, որ Քննիչի կողմից չի իրականացվել Լ.Զաքարյանի հաղորդման մեջ նշված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

22. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չեն Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և դիմող Լ.Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյոզյանի բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 185-րդ հոդվածներով նախատեսված պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով վարույթը բացառող հանգամանքի սխալ կիրառման փաստը և վերացնելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի՝ 2017 թվականի ապրիլի 4-ին որոշումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Ուստի, անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

23. Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տվյալ դեպքում նախաքննության մարմինը հարուցված քրեական գործով վարույթի շրջանակում պետք է համարժեք անդրադարձ կատարի դիմողի

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

բարձրացրած՝ սույն որոշման 9.1-9.3-րդ կետերում ներկայացված փաստարկներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Լաուրա Զաքարյանի ներկայացուցիչ Ա.Ղարազյուզյանի՝ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունվարի 29-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԴ/0014/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼԲՈՆՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունիսի 19-ին ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնից Արագածոտնի մարզի դատախազություն ստացվել են նյութեր այն մասին, որ 2018 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 20:35-ին, հիշյալ բաժին ինքնակամ ներկայացել է ՌԴ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար հետախուզման մեջ գտնվող Բորիս Արմենի Ավագյանը (Ավակյանը), ով նույն օրը՝ ժամը 21:20-ին, ձերբակալվել է:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից 2018 թվականի հունիսի 19-ին ստացվել է Բ.Ավագյանին կալանավորելու վերաբերյալ Ինտերպոլի հաղորդակցման ուղիներով ստացված միջնորդությունը, ըստ որի՝ Մոսկվա քաղաքի Բասմանի շրջանային դատարանի՝

2017 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ Բ.Ավագյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հունիսի 21-ի որոշմամբ Բ.Ավագյանի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի դատախազության դատախազ Վ.Ղազարյանի միջնորդությունը մերժվել է:

3. Երևան քաղաքի դատախազության դատախազ Վ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 21-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը նկատի ունենալով, որ Բ.Ավագյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, մեղադրվում է միջին ծանրության հանցանք կատարելու համար, գրնում է, որ նրա նկատմամբ չի կարող կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածով նախատեսված կարճաժամկետ կալանավորում՝ այն պարճառաքանությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա՝ քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով»¹:

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ատյանի դատարանում Դատախազի միջնորդության քննության ժամանակ առկա չեն եղել հանձնելու վերաբերյալ միջնորդությունը սրանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով Բորիս Արմենի Ավագյանի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու բոլոր իրավաչափության պայմանները, որպիսի պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն մերժել է Դատախազի միջնորդությունը և Բորիս Արմենի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 82-83:

Ավագյանի նկատմամբ չի կիրառել ժամանակավոր կալանավորում՝ թույլ չտալով դատարանին սխալ, այդ թվում՝ նաև՝ քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ գործի էլքի վրա և գործով կայացրել է ըստ էության ճիշտ լուծող դատարանական ակտ»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի և 478.3-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթների վերաբերյալ արտահայտված իրավական մեկնաբանությունները հակասում են այլ գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում առկա մեկնաբանություններին:

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Բ.Ավագյանին մեղսագրվող ենթադրյալ հանցագործության առնչությամբ անհրաժեշտ է ղեկավարվել ՌԴ քրեական օրենսգրքի իրավակարգավորումներով, այդ թվում՝ նաև՝ հանցագործության ծանրության աստիճանի որոշման վերաբերյալ, անհիմն են:

Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը հիմնվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 488-րդ հոդվածի դրույթների վրա, մինչդեռ այդ հոդվածը ներառված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54.1-րդ՝ «Քրեական գործերով իրավական օգնությունը միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում» գլխում, հետևաբար տվյալ իրավանորմի դրույթները «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի անդամ-պետությունների, տվյալ դեպքում՝ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև իրավահարաբերություններում կիրառելի չեն:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշումը՝ Բ.Ավագյանի նկատմամբ կիրառելով ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու՞ էր արդյոք դատախազը բողոքարկելու ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 25-32:

տարածքում ձերբակալված անձի սկստմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատախազի միջնորդությունը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Միջնորդությունը քննարկելիս դատարանը, լսելով դատախազին, ձերբակալված անձին և նրա պաշտպանին, ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում միջնորդությունը բավարարելու և ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին կամ միջնորդությունը մերժելու մասին: Ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

12. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ և 478.2-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանը 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ ՍԴՌ-1446 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 478.2-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը վերոգրյալ որոշմամբ արձանագրել է, որ «(...) Սահմանադրության 176-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Սույն հոդվածի 2-րդ մասում սպառիչ թվարկված են դատախազության լիազորությունները: Դատախազությունը դրանք կարող է իրականացնել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Սույն գործով քննարկվող հարցն առնչվում է միայն դատարանի որոշումները բողոքարկելու դատախազության լիազորությանը:

Դատախազությունը դատական ակտերը կարող է բողոքարկել միայն օրենքով սահմանված դեպքերում և, եթե օրենքով Կրկնալ որոշման բողոքարկումը նախատեսված չէ, դեռևս չի նշանակում, որ դատախազությունը գրկվում է իր սահմանադրական լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Օրենսգրքի վերաբերելի դրույթների վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության ընթացքում առաջին արյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտերը երկու խմբի են բաժանվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտեր և գործն ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտեր: Եթե վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին խմբի՝ օրինական ուժի մեջ չմտնած, գրեթե բոլոր ակտերը, ապա գործն ըստ էության չլուծող ոչ բոլոր դատական ակտերն են բողոքարկման ենթակա, և ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը

մերժելու մասին առաջին աստիճանի դատարանի որոշումը դասվում է դրանց թվին:

(...)

Դիմողի պնդումն առ այն, որ՝ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն չնախատեսելու պայմաններում «մասնավոր շահը չարդարացված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ՝ այդպիսով խախտելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը», հիմնավորված չէ, քանի որ, նախ՝ այն չի կարող բողոքարկել նաև անձը, որի նկատմամբ հարուցվել է միջնորդությունը, մինչդեռ, հնարավոր է, որ այդ որոշման պատճառաբանական մասը չհամապատասխանի նրա շահերին, և, երկրորդ՝ շահերի հավասարակշռությունն ապահովում է դատարանը, որը, ինչպես ամրագրված է Օրենսգրքի 23-րդ հոդվածում, հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը¹:

13. Վճռաբեկ դատարանի համոզմամբ այն դիրքորոշումը, որ վիճարկվող դատական ակտը չի կարող բողոքարկել նաև անձը, որի նկատմամբ հարուցվել է միջնորդությունը, անգամ այն դեպքում, երբ այդ որոշման պատճառաբանական մասը չհամապատասխանի նրա շահերին, խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից²: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ նույնիսկ դատավարության մասնակից չհանդիսացող անձը, երբ դատական ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց բողոքները³:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 19-ի թիվ ՍԴՌ-1446 որոշման 4.2-4.3-րդ կետերը:

² Տե՛ս *mutatis mutandis* ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 18-ի թիվ ՍԴՌ-1037 որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մարատ և Կարեն Սարգսյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշման 22-23-րդ կետերը, Լևոն և Ռուբիկ Թարվերդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԱՎԴ2/0007/01/12 որոշման 15-րդ կետը:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից սակայն երևում է, որ տվյալ դեպքը վերաբերում է ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու դատախազի իրավունքին: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը մերժել է Բ.Ավագյանի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը¹, իսկ դատախազ Վ.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը²:

14. Սույն որոշման 11-րդ կետում վկայակոչված քրեադատավարական նորմի, ինչպես նաև սույն որոշման 12-րդ կետում մեջբերված ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման լույսի ներքո գնահատելով սույն որոշման 13-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատախազն իրավասու չէ վերաքննության կարգով բողոքարկելու ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին որոշումը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով խնդրո առարկա որոշման բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ:

15. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ դատախազի միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով չի կարող բողոքարկվել դատախազի կողմից՝ Վճռաբեկ դատարանը հնարավորություն չունի անդրադառնալու բողոքաբերի՝ սույն որոշման 7-8-րդ կետերում նշված փաստարկներին և գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Բորիս Արմենի Ավագյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0229/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ փոժողի իրավահաջորդ՝ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Սարգսյանի պաշտպաններ Վ.Էլբակյանի և Կ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի ապրիլի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել է թիվ 13139216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2016 թվականի ապրիլի 9-ին Գոռ Սարգսյանը ձերբակալվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Գ.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ Գ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի սեպտեմբերի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճռով Գ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով:

3. Տուժողի իրավահաջորդ Ա.Աբրահամյանի և Գ.Սարգսյանի պաշտպաններ Վ.Էլքալյանի ու Կ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ պաշտպանների բողոքը մերժել է, տուժողի իրավահաջորդի բողոքը՝ բավարարել, և Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի դատավճիռը պատժի մասով բեկանել է՝ Գ.Սարգսյանին դատապարտելով ազատազրկման՝ 11 (տասնմեկ) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպաններ Վ.Էլքալյանը և Կ.Հովհաննիսյանը բերել են վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի կողմից ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 8-ի թիվ 30/5736 գրության համաձայն՝ «(...) [Թ]իվ 13139216 քրեական գործով անցկացված (...) օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ (...) հանցագործությունը կատարել է Գ.Սարգսյանը (...)»¹:

5.1 ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի գեկուցագրի համաձայն՝ «(...) [Ս]ույն թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:50-ի սահմաններում փարված՝ բացարձակապես աշխատանքների արդյունքում, [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի]

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 67:

ինքնակամ ներկայացել է Գ.Սարգսյանը (...) և հայրնել, որ սույն թվականի ապրիլի 8-ին՝ [Երևանի պետական համալսարանի] հարող տարածքում տեղի ունեցած վիճարանության ընթացքում Ա.Արրահամյանին պարճառված մարմնական վնասվածքը հասցրել է ինքը (...)»¹:

5.2 Ինքնակամ ներկայանալու մասին 2016 թվականի ապրիլի 9-ի արձանագրության համաձայն՝ «(...) [2016 թվականի ապրիլի 9-ին] ժամը 6:50-ի սահմաններում [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին] ինքնակամ ներկայացել է Գ.Սարգսյանը, (...) և հայրարարել, որ [2016 թվականի ապրիլի 8-ին] ժամը 13:30-ի սահմաններում Երևան քաղաքի Չարենցի փողոցում դանակով հարվածել է [Ա.Արրահամյանին] (...)»²:

6. «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշումը գաղտնագերծելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2016 թվականի մայիսի 17-ի որոշման համաձայն՝ «(...) 2016 թվականի ապրիլի 9-ին [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետ] Գ.Ղուկասյանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին (...) դիմելու Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի [Գ.Սարգսյանի] (...) նկատմամբ [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի] պետի օպերատիվ գծով տեղակալի թիվ 402 աշխատասենյակում «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու համար (...)»³:

6.1 2017 թվականի հունիսի 2-ի թիվ ԴԴ17 Ե-28690 գրության համաձայն՝ «(...) Գոռ Սարգսյանի նկատմամբ «Ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն արանալու մասին (...) միջնորդությունը դատարան է ներկայացվել 09.04.2016թ. ժամը 06:30-ի սահմաններում, նշված միջնորդության քննության կապակցությամբ նշանակված դատական նիստը (...) սկսվել է 09.04.2016թ. ժամը 07:00-ին և ավարտվել է 07:10-ին: (...)»⁴:

6.2 Քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» հանձնարարությունը թվագրված չէ: Նշված փաստաթղթում առկա են տեղեկություններ այն մասին, որ. «(...) 09.04.2016թ.-ին՝ ժամը 08:43-ին, Գ.Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 71:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 73:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 165:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 4:

կասկածանքով ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ոստիկանության ԵՔՎ-ի ՁՊՎ: (...)»¹:

7. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին անցկացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներն ամփոփող լազերային սկավառակի գնության մասին արձանագրության համաձայն՝ «(...) Տեսագրության սկզբում տեսախցիկի հանդիպակաց կողմում գտնվող դռնից սենյակ է մտնում (...) [Գ.Սարգսյանը]: Զրույցը վարող տղամարդու և աշխատատեղանի [դիմացի] ձախ կողմում նստած տղամարդու հարցերին ի պատասխան՝ Գ.Սարգսյանը հայտնում է [տեղեկություններ] քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ իր մեղավորության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական հանգամանքների վերաբերյալ (...)»²:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Առաջին ատյանի դատարանը], անդրադառնալով [ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում] 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ամփոփ տեսաձայնագրությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին պաշտպանի եզրահանգմանն ու դրա պարճառարանություններին, գտնում է, որ դրանք անհիմն են, նշված միջոցառումն անցկացվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և քրեադատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան»³:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Անդրադառնալով (...) վերաքննիչ բողոքի փաստարկներին, որով [բողոքարեւները] խնդրել են անթույլատրելի ապացույց ճանաչել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը (...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բերված փաստարկն անհիմն է, նշված ապացույցը ձեռք է բերվել քրեադատավարական օրենքի նորմերի պահպանմամբ, այն անթույլատրելի ճանաչելու հարցին արդեն իսկ անդրադարձել է [Առաջին ատյանի դատարանն] իր դատավճռով հանգելով ճիշտ հետևության (...)»⁴:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 97-99:
² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 167:
³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 52-60:
⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 71-106:

10. Բողոքի հեղինակների կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Բողոքաբերները վկայակոչել են օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող իրավական նորմերը և փաստել, որ անհիմն են «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները՝ որպես թույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները: Բողոքաբերների պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է հիշյալ միջոցառման իրականացման ընթացակարգին և արդյունքների օգտագործմանը ներկայացվող պահանջների խախտումը հիմնավորող փաստական տվյալները:

11. Բողոք բերած անձինք նշել են նաև, որ Գ.Սարգսյանի արարքին տրվել է սխալ քրեաիրավական գնահատական: Մասնավորապես, բողոքի հեղինակները գտել են, որ սույն գործով Գ.Սարգսյանի վարքագծի հետաքննությանը փուլին լիարժեք գնահատական չի տրվել և նրա արարքը ենթակա էր որակման ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով:

12. Անդրադառնալով նշանակված պատժի համաչափությանը՝ բողոք բերած անձինք գտել են, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել ամբաստանյալի պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները՝ անտեսելով Վճռաբեկ դատարանի՝ *Պարույր Բայրամյանի* գործով 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 և *Ալեքսան Սարգսյանի* գործով 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲԴՅ/0109/01/08 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները:

13. Վերոշարադրյալի հիման վրա պաշտպաններ Վ.Էլբակյանը և Կ.Հովհաննիսյանը խնդրել են բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և ամբաստանյալ Գ.Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանն առնչվող օրենսդրական նորմերի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ

դատարանի հետևությունն այն մասին, որ Գ.Սարգսյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական դատավարություն իրականացնող մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իրենց գործունեության արդյունքում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով սահմանված կարգով պարասխանարվության ենթարկվի»:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ուրնագություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է»:

Սույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

1) հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը.

2) հանցագործությունը նախապարաստող, կարարող կամ կատարած անձանց հայտնաբերումը. (...)»:

Սույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հերկելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

2. Սույն օրենքում բնակարան հասկացությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով»:

Սույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(Ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական փոխանցումների մարշելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում) օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ

պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:

17. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որը նպատակ է հետապնդում բացահայտել, կանխել և խափանել հանցագործությունները, ինչպես նաև հայտնաբերել հանցագործությունը նախապատրաստող, կատարող և կատարած անձանց: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակներում ձեռնարկվող միջոցառումներն ընդհանուր առմամբ հետապնդելով հանցագործությունների բացահայտման նպատակ, օժանդակում են քրեական դատավարություն իրականացնող մարմինների առջև դրված խնդիրների լուծմանը և բարձրացնում են քրեական հետապնդման արդյունավետությունը:

17.1 Մինևույն ժամանակ, օպերատիվ-հետախուզական գործունեությունն առանձնանում է իր հետախուզական-որոնողական բնույթով: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական միջոցառումների ձեռնարկումը նպատակաուղղված է ենթադրյալ հանցանքների, դրանք ենթադրաբար նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերմանն ու պարզմանը, այդ կապակցությամբ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրմանը: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրենց հետախուզական-որոնողական բնույթով միտված են նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործության դեպքերի և դրանք կատարող անձանց հնարավորինս արագ բացահայտմանը, որին անմիջապես հաջորդում է ստացված տվյալների ամրագրումը քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործողությունների կատարմամբ: Այսպես, հետաքննության փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ ապահովվում է «տաք հետքերով» հանցագործության քննությունը, իսկ նախաքննության ընթացքում այն նաև օժանդակում է քննիչի դատավարական գործունեությանը, երբ քրեադատավարական գործիքակազմը բավարար չէ քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար, և հանցավորության դեմ պայքարի հանրային շահը պահանջում է նաև գործի համար նշանակություն ունեցող առանձին հանգամանքների բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառում:

17.2 Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում միջամտու-

թյուն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին: Այդ պարագայում, իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հարկավոր է հաշվի առնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) ստանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորապես, օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթից ելնելով՝ իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման տեսակն ընտրելիս և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ պետք է ապահովեն նաև արդար դատաբանության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը:

Այդ համատեքստում, հարկ է վկայակոչել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումներն այն մասին, որ «երբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անվտանգությունը պաշտպանելու պարտախանոց պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք պարշաճ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անվտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար: Այդուհանդերձ, [ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝] պետք է գոյություն ունենան չարաշահումներից զերծ պահող բավարար և արդյունավետ երաշխիքներ: Այսպիսով, դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթը, տարածման տիրույթը և տևողությունը, դրանց կարգադրման համար պահանջվող պարճառները, դրանց թույլատրելու, կատարելու և հսկելու իրավասություն ունեցող մարմինները, ինչպես նաև՝ ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը»¹:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ հետապնդվող նպատակների կատարմանն ուղղված միջոցների ընտրությունը սկզբունքորեն ընկնելով պետության սեփական հայեցո-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Roman Zakharov v. Russia* գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, *Irfan Guzel v. Turkey* գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:

դրության լուսանցքի շրջանակներում՝ ունենում է լայն կամ նեղ դրսևորում՝ ելնելով պաշտպանության ենթակա իրավունքի բնույթից: Օրինակ՝ «հաշվի առնելով անձի ինքնության ինքնորոշման և ֆիզիկական ու բարոյական անձեռնմխելիության համար [Եվրոպական կոնվենցիայի] 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների առանցքային կարևորությունը, պետություններին վերապահված սեփական հայեցողության լուսանցքը բնակարանի հարցերում ավելի նեղ է, եթե խոսքը գնում է միայն [Եվրոպական կոնվենցիայի] թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքների մասին»¹:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված սեփական հայեցողության լուսանցքի տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում: Մասնավորապես, օրենսդիրը որոշ խումբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար նախատեսելով լրացուցիչ չափանիշներ՝ սահմանափակել է դրանք ընտրելու իրավակիրառողի հայեցողության լուսանցքը: Այդպիսի միջոցառումների շարքին է դասվում «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի նպատակն անձին (անձանց) բնակարանում հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը վերահսկելն է, դրա արդյունքներն ամրագրելը՝ առանց այդ դեպքերի և իրադարձությունների ընթացքն ուղղորդելու կամ դրանք նախապես ծրագրելու: Հաշվի առնելով, որ այդ գործողության իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

ա) անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Հարկ է ընդգծել, որ վերջին չափանիշի ամրագրմամբ օրենսդիրն *inter alia* սահմանել է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց (*last resort*), երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային

¹ Տե՛ս *U. Gladysheva v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7097/10, կետ 93:

նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը լինելով իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ՝ ենթակա է իրականացման այդ գործունեության բնույթին, նպատակային նշանակությանը և օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պայմաններին համապատասխան՝ մշտապես երաշխավորելով հանրային շահի և անհատի իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2016 թվականի ապրիլի 8-ին **նախաքննության մարմնի** կողմից հարուցվել է թիվ 13139216 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով¹,

- նույն օրվա թիվ 30/5736 գրության համաձայն՝ անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ հանցագործությունը կատարել է Գ.Սարգսյանը²,

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի զեկուցագրի համաձայն՝ ապրիլի 9-ին, **ժամը 6:50-ի** սահմաններում տարված բացատրական աշխատանքների արդյունքում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին, **նույն ժամին**, ինքնակամ ներկայացել է Գ.Սարգսյանը և հայտնել, որ ապրիլի 8-ին՝ Երևանի պետական համալսարանին հարող տարածքում տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Ա.Աբրահամյանին մարմնական վնասվածքը պատճառել է ինքը³,

- 2016 թվականի ապրիլի 9-ին, **ժամը 06:30-ի սահմաններում հետաքննության մարմինը**՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետը, միջնորդություն է ներկայացրել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին՝ դիմելու Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Գ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5.1-5.2-րդ կետերը:

օպերատիվ գծով տեղակալի **թիվ 402 աշխատասենյակում** «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու համար: Նշված միջնորդության քննության կապակցությամբ՝ նշանակված դատական նիստը սկսվել է նույն օրը **ժամը 07:00-ին** և ավարտվել **ժամը 07:10-ին**¹,

- քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» հանձնարարությունը թվագրված չէ: Նշված փաստաթղթում առկա են տեղեկություններ այն մասին, որ 2016 թվականի ապրիլի 9-ին **ժամը, 08:43-ին** Գ.Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի կասկածանքով ձերբակալվել և տեղափոխվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ²,

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին անցկացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներն ամփոփող լազերային սկավառակի գննության արձանագրության համաձայն՝ «(...) *Տեսագրության սկզբում տեսախցիկի հանդիպակաց կողմում գրնվող դռնից սենյակ է մտնում (...)* [Գ.Սարգսյանը]: *Ջրույցը վարող տղամարդու և աշխատատեղանի (դիմացի) ձախ կողմում նստած տղամարդու հարցերին ի պատասխան՝ Գ.Սարգսյանը հայտնում է [տեղեկություններ՝ քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ իր մեղավորության, ինչպես նաև՝ գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական հանգամանքների վերաբերյալ] (...)*»³,

- Առաջին ատյանի դատարանը Գ.Սարգսյանին մեղավոր է ճանաչել մեղսագրված արարքում, և մեղադրական դատավճի հիմքում, ի թիվս այլ ապացույցների, դրել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները՝ գտնելով, որ նշված միջոցառումն իրականացվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և քրեադատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան⁴,

- Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճիորը՝ միաժամանակ փաստելով, որ «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը ձեռք է բերվել օրենսդրական նորմերի պահպանմամբ⁵:

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով, սույն որոշման 16-17.2-րդ կետերում

¹ Տե՛ս սույն որոշման 6-6.1-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսաձայնագրությունը Գ.Սարգսյանի վերաբերյալ մեղադրական դատավճռի հիմքում դնելիս այն պատշաճ ուսումնասիրության չի ենթարկվել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

- «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է ոչ թե օրենքով սահմանված՝ որոնողական-հետախուզական բնույթին համապատասխան երևույթների և դեպքերի օբյեկտիվ ընթացքը վերահսկելու, այլ, ըստ էության, հարցաքննության եղանակով Գ.Սարգսյանից գործի համար նշանակություն ունեցող տեղեկությունների ստացման գործընթացը գաղտնի տեսաձայնագրելու նպատակով: Այսինքն՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակում փաստացի իրականացվել է քողարկված հարցաքննություն՝ արժանահավատության բարձր աստիճան ունեցող ապացույց ձեռքբերելու նպատակով՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ հարցաքննության դատավարական կարգի այնպիսի առանցքային պահանջներ, ինչպիսիք են՝ հարցաքննվող անձին իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ լռելու, իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար իրավունքները պարզաբանելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների կիրառման մասին տեղեկացնելը՝ անձին իրավունք վերապահելով այդ առնչությամբ ներկայացնելու իր դիտողություններն ու հայտարարությունները,

- քննարկվող միջոցառումն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի աշխատասենյակում, որպիսի պայմաններում Գ.Սարգսյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այսպես, Գ.Սարգսյանը գտնվելով ոստիկանության պաշտոնատար անձի աշխատասենյակում՝ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը,

- «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակի՝ նույն տեղեկությունների ձեռքբերման դատավարական միջոցի ակնհայտ առկայության պարագայում: Մասնավորա-

¹ Տե՛ս mutatis mutandis *Արամայիս Հակոբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշման 16-րդ կետը:

պես, եթե ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված՝ 2016 թվականի ապրիլի 9-ի զեկուցագրի համաձայն՝ նույն օրը ժամը 6:50-ի սահմաններում տարված բացատրական աշխատանքների արդյունքում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին ինքնակամ ներկայացել էր Գ.Սարգսյանը և հայտնել, որ ինքն է Ա.Աբրահամյանին պատճառել մարմնական վնասվածքը¹, ապա գործի համար կարևորություն ներկայացնող տեղեկությունները Գ.Սարգսյանից կարող էին ձեռքբերվել ոչ թե հաջորդիվ նրա նկատմամբ գաղտնիության ռեժիմով «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելով, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգով՝ նրան որպես կասկածյալ հարցաքննելով: Այսինքն՝ տվյալ պարագայում չի պահպանվել նաև համաչափության սկզբունքը,

- նախաքննության փուլում գտնվող քրեական գործով հետաքննության մարմնի կողմից իրականացվել է «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, այնինչ քրեական գործի նյութերում բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ դատախազի ցուցումը կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ մասի 4-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ քննիչի հանձնարարությունը՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու վերաբերյալ: Ինչ վերաբերում է քրեական գործում առկա՝ «Հետաքննության մարմնին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին» վերտառությամբ հանձնարարարությանը, ապա այն թվագրված չէ²: Բացի այդ, այն տեղեկություններ է պարունակում Գ.Սարգսյանին 2016 թվականի ապրիլի 9-ին, ժամը 8:43-ին ձերբակալելու մասին, մինչդեռ 2017 թվականի հունիսի 2-ի՝ թիվ ԴԴ17 Ե-28690 գրության համաձայն՝ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2016 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:30-ի սահմաններում, միջնորդության քննության կապակցությամբ նշանակված դատական նիստը սկսվել է ժամը 07:00-ին և ավարտվել 07:10-ին³: Ակնհայտ է, որ 2016 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 6:30-ի սահմաններում՝ դատարան ներկայացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու միջնորդության հիմքում դրված հանձնարարությունն օրյեկտիվորեն չէր կարող տեղեկություն պարունակել նույն օրը, ժամը 8:43-ին Գ.Սարգսյանին ձերբակալելու մասին, ինչից հետևում է, որ նշված հանձնարարությունը ժամանակագրական առումով ոչ թե նախորդել, այլ

¹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

հաջորդել է քննարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմանը:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ փաստական հանգամանքները պատշաճ ուշադրության չարժանացնելը և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում 2016 թվականի ապրիլի 9-ին իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները Գ.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դնելը հանգեցրել են վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ Գ.Սարգսյանի արդար դատաքննության իրավունքի խախտման: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված ապացույցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով անթույլատրելի է և չէր կարող դրվել մեղսագրվող արարքում Գ.Սարգսյանի մեղավորությունը հիմնավորող ապացույցների գանգվածում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Գ.Սարգսյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան, հիմնավոր չէ:

21. Անփոփոխվ վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 105-րդ և 106-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է գնահատի քրեական գործում առկա այլ ապացույցները և հանգի համապատասխան հետևության՝ անդրադառնալով նաև բողոքարկի կողմից սույն որոշման 11-12-րդ կետերում բարձրացված՝ Գ.Սարգսյանի արարքին տրված քրեաիրավական գնահատականի և վերջինիս նկատմամբ նշանակված պատժի համաչափության վերաբերյալ փաստարկներին:

22. Մինևույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Գոռ Սարգսյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով,

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գոռ Իշխանի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գոռ Իշխանի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0201/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահապահությանը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությանը՝
մասնակցությանը պաշտպան՝
ամբաստանյալ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Լ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ամբաստանյալ Արթուր Արշալույսի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի և 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 14126714 քրեական գործը:

2. 2014 թվականի հուլիսի 31-ին Արթուր Արշալույսի Հարությունյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ Ա.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

3. Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Ա.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 118-րդ հոդվածով:

4. 2014 թվականի դեկտեմբերի 22-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

5. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի պաշտպան Ա.Զուվանովան գործի դատաքննության ժամանակ միջնորդություն է ներկայացրել իր պաշտպանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Ա.Հարությունյանի պաշտպան Ա.Զուվանովայի միջնորդությունը՝ իր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ, մերժվել է:

7. Վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Ա.Զուվանովայի կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ պաշտպանի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը՝ մասնակի բեկանել և փոփոխել է, ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել է թույլատրելի և վերջինիս նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառել գրավը՝ գրավի գումարի չափ սահմանելով 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը¹:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 17-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 32-33:

հանցանքը կատարելու մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Հարությունյանին կալանքի տակ պահելու 4 (չորս) տարի 1 (մեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետը և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 1 (մեկ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: Ա.Հարությունյանի նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառված գրավը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը¹:

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

10. Առաջին ատյանի դատարանը, քրեական գործի դատական քննության ժամանակ քննարկելով ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին պաշտպան Ա.Ջուվանովայի միջնորդությունը, 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ մերժել է այն՝ նշելով, որ. «(...) /Ա/մրասարանյալ Արթուր Հարությունյանի նկատմամբ խափանման միջոցը վերացնելու և այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու նոր հիմքեր չի հայտ չեն եկել, դեռևս առկա է և չի վերացել Ա.Հարությունյանին կալանքի տակ պահելու հիմքերից մեկը, այն է՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելը: (...) /Բ/սկ գրավի երաշխիքով վերջինիս ազատ արձակելն անթույլատրելի է], քանի որ վերը շարադրվածի պայմաններում այն չի գործու չէ երաշխիք հանդիսանալ ամբաստանյալի ոչ իրավաչափ վարքագիծը կանխելու համար, ուստի ամբաստանյալ Արթուր Արշալույսի Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ պաշտպան Ա.Ջուվանովայի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման (...)»²:

11. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է. «(...) /Դ/ստական սկզբ կայացնելիս ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (գրավը մերժելու առնչությամբ բերված) պատճառարանությունները, թեև անհրաժեշտ, սակայն ներկայումս արդեն իսկ բավարար չեն ամբաստանյալ Արթուր Հարությունյանի (կոնկրետ դեպքում, գործի քննության ներկա փուլում) նկատմամբ գրավի կիրառումը անթույլատրելի ճանաչելու համար:

Հարկ է նշել նաև, որ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով,

¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԱԲԴ/0201/01/14 քրեական գործը:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 27-28:

վերաքննիչ դատարանի դիմադրական, արվյալ դեպքում, այլընտրանքային երաշխիքն (սույն գործով 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գրավի չափ սահմանելու պայմաններում) ի գործ է կանխել ամբաստանյալի ոչ իրավաչափ վարքագիծը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանը գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու հարցում հանգել է ոչ ճիշդ եզրակացության, ինչը հանգեցրել է դատավարական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է վիճարկվող դատական ակտը մասնակի՝ այդ մասով (գրավի կիրառումը մերժելու մասով) բեկանելու, փոփոխելու և պաշտպանության կողմի ներկայացված միջնորդությունը գրավի կիրառման առնչությամբ բավարարելու առումով նոր դատական ակտ կայացնելու համար (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր վերանայելու Ա.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը: Բողոքաբերի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանի համապատասխան որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննության է առնվել այն պայմաններում, երբ այն ենթակա չէր քննության:

12.1. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի, 376.1-րդ հոդվածի 4-րդ կետի և 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ինչն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

12.2. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, Ա.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը ճանաչել անթույլատրելի և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց թողնել կալանավորումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու՞ էր արդյոք Վերաքննիչ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 45-47:

դատարանը վերանայելու Ա.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ գործի դատական քննության ընթացքում ներկայացված միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պարճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը սահմանում է. «Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

(...)

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու (...) որոշումները.

(...):»:

Վճռաբեկ դատարանը Լևոն Սողոմոնյանի վերաբերյալ գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են միայն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները: Այլ կերպ՝ քրեադատավարական օրենքը չի նախատեսում ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու (ներառյալ՝ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու) մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապարտասրելու փուլի ավարտից հետո (այլ կերպ՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման կայացումից հետո դատական նիստում դատավարության համապարասիան մասնակիցների մասնակցությամբ քննարկումների արդյունքների հիման վրա) կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն: (...) [Հ]ակառակ մտրեցումը մի կողմից կարող է իր բացասական ազդեցությունը թողնել առաջին ատյանի դատարանում հիմնական քրեական գործի քննության հետագա ընթացքի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով նաև առաջին ատյանի դատարանի ներքին անկախությունը, մյուս կողմից՝ պարունակում է վերադաս դատարանի քննականոն գործունեությունը խաթարելու վրանգ (հաշվի առնելով դատական քննության ընթացքում այդպիսի միջնոր-

դուրսըներ ներկայացնելու քանակի տեսանկյունից որևէ արգելքի բացակայությունը, ուստիև դրանց քննարկման արդյունքում կայացված համապարասիան որոշումների՝ վերադասության կարգով անընդմեջ և անսահմանափակ բողոքարկման հնարավորությունը):

(...) Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետք՝ նաև Եվրոպական դատարան) փաստել է, որ նշյալ նորմը չի պարտավորեցնում պայմանավորվող պետություններին երաշխավորելու երկրորդ արտանի դատարանի կողմից կալանավորման օրինականությունը ստուգելու և անձին ազատ արձակելու միջնորդությունը քննության առնելու ընթացակարգեր: Ըստ Եվրոպական դատարանի՝ վերջինիս խնդիրը չէ պարզել, թե դատական վերանայման ինչպիսի եղանակն է ամենահարմար ձևը: Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ իրավական պաշտպանության գոյություն ունեցող միջոցը պետք է լինի բավարար չափով որոշակի, իսկ կալանքի օրինականությունը պետք է ստուգվի ողջամիտ պարբերականությամբ:

(...)

(...) [Գործը քննող դատարանի կողմից կալանավորման օրինականությունը պարբերաբար ստուգելու, ինչպես նաև քննարկվող որոշման՝ հեղափոխված կարգով բողոքարկման հնարավորության պայմաններում օրենսդիրը չի նախատեսել այդ որոշման՝ վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկելու իրավունք]¹:

15. Սույն գործի փաստերից հետևում է, որ ամբաստանյալ Ա.Հարությունյանի պաշտպան Ա.Ջուվանովան գործի դատական քննության ժամանակ միջնորդություն է ներկայացրել իր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշմամբ մերժվել է²:

15.1 Վերաքննիչ դատարանն իր հերթին, քննության առնելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշման դեմ պաշտպան Ա.Ջուվանովայի կողմից ներկայացված բողոքը, բեկանել է այն, ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել է թույլատրելի և վերջինիս նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառել գրավը՝ գրավի գումարի չափ սահմանելով 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը³:

15.2 Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ

¹ Տե՛ս, Լևոն Սողոմոնյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0279/01/15 որոշման 11-13-րդ կետերը:

² Տե՛ս, սույն որոշման 5-րդ, 6-րդ կետերը:

³ Տե՛ս, սույն որոշման 7-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Հարությունյանին կալանքի տակ պահելու 4 (չորս) տարի 1 (մեկ) ամիս 28 (քսանութ) օր ժամկետը՝ և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 1 (մեկ) ամիս 2 (երկու) օր ժամկետով¹:

16. Այսպիսով, 15-15.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-րդ կետում շարադրված իրավակարգավորումների և ներկայացված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր քննության առնելու Ա.Զուվանովայի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և վերանայելու ամբաստանյալ Ա.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին գործի դատական քննության ընթացքում ներկայացված միջնորդությունը մերժելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 14-ի որոշումը:

17. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես՝ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 376.1-րդ հոդվածի 4-րդ կետի և 381-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է բողոքարկված դատական ակտը բեկանելու համար:

Սակայն հաշվի առնելով, որ Ա.Հարությունյանի նկատմամբ արդեն իսկ 2018 թվականի դեկտեմբերի 3-ին կայացվել է մեղադրական դատավճիռ, որով նշանակված ազատազրկման ձևով պատժի ժամկետին հաշվակցվել է Ա.Հարությունյանին կալանքի տակ պահելու ժամկետը և խափանման միջոցի վերաբերյալ նոր որոշում է կայացվել, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, ամբաստանյալ Ա.Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

¹ Տե՛ս, սույն որոշման 9-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Արթուր Արշալույսի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

ստորագրողներ՝

ստորագրություններ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0068/06/18

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նահապետությունը՝
մասնակցությունը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությունը՝
մասնակցությունը դատախազ՝
պաշտպան՝
տուժողի ներկայացուցիչ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Լ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշման դեմ մեղադրյալ Արտակ Հարությունի Հովհաննիսյանի պաշտպան Հայկ Սարգսյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 55101817 քրեական գործը:

2017 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է

թիվ 69105317 քրեական գործը, որը միացվել է թիվ 55101817 քրեական գործին:

2018 թվականի հունվարի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում՝ թիվ 55101817 քրեական գործի նյութերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որը նույնպես միացվել է թիվ 55101817 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ թիվ 55101817 քրեական գործից անջատվել է մաս, որին շտրիվել է 69100618 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 1-ի որոշմամբ Արտակ Հարությունի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 1-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Պաշտպանի միջնորդությունը՝ Ա.Հովհաննիսյանին կալանքից գրավով ազատելու մասին, մերժվել է:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ բավարարվել է պաշտպան Հ.Սարգսյանի միջնորդությունը, Ա.Հովհաննիսյանին կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի և գրավի գումարի չափ է սահմանվել 1.500.000 ՀՀ դրամը:

5. Տուժող Հ.Քոչինյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումը բեկանել է և գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Հովհաննիսյանի պաշտպան Հ.Սարգսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն

ունեցող փաստական հանգամանքները.

7. Առաջին ստյանի դատարանը 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Մ]եղադրյալի նկատմամբ ընդգրկված խափանման միջոցը՝ կալանավորումը, գրավով փոխարինելու դեպքում չի խախտվի անհատի և հասարակության միջև քրեադատավարական օրենքի կիրառման հավասարակշռությունը և նրա նկատմամբ համապատասխան գրավի չափի՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի, վճարումը այս դեպքում կարող է զսպել մեղադրյալի կողմից թաքնվելու վրանգը և սպառնալի նրա՝ ինչպես նախաքննությանը, այնպես էլ դատաքննությանը (այդպիսին լինելու դեպքում) ներկայանալու երաշխիքները»¹:

8. Վերաքննիչ դատարանը, բավարարելով տուժող Հ.Քոչինյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքը, արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով սույն գործի հանգամանքները, մեղադրյալին վերագրվող արարքների բնույթն ու վրանգավորության աստիճանը, ակնկալվող պարժի խստությունը, այլընտրանքային երաշխիքն ի գործու չէ կանխել նրա ոչ պարզաճ վարքագիծը և ազատության մեջ գրնվելու դեպքում առկա է մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու վրանգը:

[Ա]ռաջին ստյանի դատարանը մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու հարցում հանգել է սխալ եզրակացության՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների խախտումներ, ինչը հիմք է վիճարկվող դատական ակտը մասնակիորեն բեկանելու և սույն գործով մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար»²:

8.1 2018 թվականի սեպտեմբերի 6-ին Ա.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան³ և 2018 թվականի նոյեմբերի 26-ին որոշմամբ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է գրավը՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 51:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 108:

³ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ:

9. Բողոքի հեղինակի կարծիքով, Վերաքննիչ դատարանի դատական ակտով խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված Ա.Հովհաննիսյանի ազատության իրավունքը:

Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանը, տուժողի ներկայացուցիչների բողոքը քննության առնելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ քննության է առել այն անձանց բողոքը, ովքեր մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշումը բողոքարկելու իրավունք չունեին:

9.1 Անդրադառնալով գրավն անթույլատրելի ճանաչելու մասին ստորադաս դատարանի հետևություններին՝ բողոք բերած անձը փաստել է, որ դրանք պատճառաբանված և հիմնավորված չեն, ինչի հետևանքով էլ խախտվել են Ա.Հովհաննիսյանի իրավունքներն ու ազատությունները:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու) մասին դատարանի որոշումը տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի կողմից բողոքարկելու իրավունքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը քննության առնելը:

13. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիայի) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք, (...), ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

14. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է¹, ինչը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել: Ընդ որում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ կիրառված սահմանափակումները դատարանն դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն, որ դրանց արդյունքում խաթարվի այդ իրավունքի բուն էությունը: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սահմանափակումը յուրաքանչյուր դեպքում պետք է հետապնդի օրինական նպատակ և պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի ու հետապնդված նպատակի միջև²:

15. Վճռաբեկ դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը վկայակոչված դիրքորոշումների հաշվառմամբ, իր մի շարք որոշումներում կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարանի մատչելիության իրավունքի ապահովումն արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է³:

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները չպետք է այն աստիճան լինեն, որ գրկեն իրավունքը կրողին այն իր ողջ էությամբ իրացնելու հնարավորությունից:

¹ Տե՛ս *Golder v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 4451/70, կետեր 28, 36:

² Տե՛ս *Hirschhorn v. Romania* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50:

³ Առավել մանրամասն տե՛ս *Լևոն Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման դեպքում քրեադատավարական հակակշռող գործոնների կիրառմամբ պետք է ապահովվի այդ իրավունքի՝ իր նպատակին հասնելուն ուղղված համապատասխան գործիքակազմի առկայությունը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «[Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու] որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և **տուժողին**, իսկ դատական նիստին վերջիններին չներկայանալու դեպքում՝ պարզաճ ձևով ուղարկում է նրանց: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի փակ գրնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները **դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի** կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

(...)

3. Դատական ստուգումը կատարվում է դոնիակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: (...) Դատարանը բացառություններ փալու համար դատական նիստին կարող է կանչել հեղաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին (...):»:

17. ՀՀ սահմանադրական դատարանը, 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԳՌ-1373 որոշմամբ, ի թիվս այլոց, քննարկման առարկա դարձնելով նախնական կալանքի դեմ վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտների հարցը, արձանագրել է. «(...) [ՀՀ քրեական դատավարության] օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են վերաքննիչ բողոք բերել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի փակ գրնվելու

ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ: **Դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը:** Ընդ որում օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընդրելու կամ չընդրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է դռնփակ նիստում՝ **դատախազի և պաշտպանի ներկայությամբ:**

(...)

Վերոշարադրյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ (...)

- օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիրքարկելով նաև քննիչին և փուժողին, միևնույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Օրենսդիրը, ի թիվս մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի, այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք վերապահում է դատախազին: Այսինքն՝ դատախազն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու է մասնակցելու նաև այն դատական նիստին, որում քննության առարկա է քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը: Ավելին՝ իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը կամ այն անձամբ պաշտպանել: Ասվածի համարեքստում, նման օրենսդրական կարգավորման պայմաններում **փուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է,**

- օրենսգրքի 285 և 287-րդ հոդվածները վերաբերում են բացառապես կալանքի հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգմանը և դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի բացառիկ իրավասությանը՝ կալանքը որպես խափանման միջոց ընդրելու կամ չընդրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկման առնչությամբ»¹:

18. Վերը վկայակոչված քրեադատավարական նորմերի և մեջբերված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին) դատարանի որոշումը

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՌ-1373 որոշման 6-րդ կետը:

բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների սպառիչ չարքին է դասում մեղադրանքի կողմից՝ **դատախազին, պաշտպանության կողմից՝ մեղադրյալին, նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին:** Նշվածից բխում է, որ օրենսդիրը մեղադրանքի կողմում հանդես եկող տուժողին (տուժողի իրավահաջորդին) կամ նրա ներկայացուցչին իրավունք չի վերապահում բողոքարկելու մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշումը: Այլ կերպ՝ նախնական կալանքի կամ այն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին դատարանի որոշման դեմ վերադաս դատական ատյան դիմելու մատչելիության իրավունքը տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի համար սահմանափակված է:

18.1 Մույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակմանը հակակշռող քրեադատավարական գործոններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազը, հանդիսանալով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված դատավարական սուբյեկտ, կոչված է երաշխավորելու գործով շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության ապահովումը: Այդ համատեքստում՝ դատախազն ապահովում է մեղադրանքի կողմից հանդես եկող տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև վերջինիս ունեցած դիրքորոշումները՝ վարույթի ընթացքում կատարվող գործողությունների և կայացվող որոշումների վերաբերյալ: Ասվածն ուղղակիորեն հետևում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականից, համաձայն որի՝ վարույթի ընթացքում դատախազը պարտավոր է ներկայացնել և պատշաճ ուշադրության արժանացնել տուժողի տեսակետներն ու մտահոգությունները¹:

Ուստի, մինչդատական վարույթի ընթացքում դատախազը խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելիս նկատի է ունենում նաև տուժողի (տուժողի իրավահաջորդի) դիրքորոշումները (ինչպես օրինակ՝ մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում իր վրա անօրինական ազդեցություն գործադրելու, անվտանգությանը սպառնալու կամ այլ ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու վտանգի վերաբերյալ): Հետևաբար, մինչդատական վարույթի շրջանակներում

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականը, կետ 32:

դատախազի կողմից՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու միջոցով է ներկայացվում տուժողի հնարավոր դատավարական շահը, որպիսի մոտեցումն արձանագրվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից վերը վկայակոչված որոշման շրջանակներում¹:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա խափանման միջոցի վերաբերյալ որոշումը ուղարկվում է տուժողին: Այսինքն՝ օրենսդիրն իմպերատիվ պահանջ է նախատեսել խափանման միջոցի վերաբերյալ որոշման բովանդակության մասին տուժողին տեղեկացնելու և այդ կերպ գործի ընթացքի մասին տուժողի պատշաճ իրազեկումն ապահովելու, ինչը նաև ըստ էության բխում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85)11 և 2006 թվականի հունիսի 14-ին ընդունված «Հանցագործությունից տուժած անձանց օժանդակության վերաբերյալ» թիվ Rec(2006)8 հանձնարականներում ամրագրված դրույթներից: Նշվածի համատեքստում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման շրջանակներում տուժողի հնարավոր դատավարական շահի ներկայացվածությունը կարող է ապահովվել ոչ միայն միջնորդավորված՝ դատախազի միջոցով, այլ կարիքն առաջանալու դեպքում կարող է ներկայացվել նաև անձամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափության դատական ստուգման ընթացքում բացատրություններ տալու համար դատական նիստին կանչվելու միջոցով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, որպես հակակշռող գործոն հարկ է նաև առանձնացնել տուժողի (տուժողի իրավահաջորդի) դիրքորոշումների հաշվառմամբ անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման հնարավորությունը: Մասնավորապես, այն որպես գործուն միջոց, կարող է կիրառվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տուժողի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Վերոնշյալ հակակշռող գործոնների պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու, ինչպես նաև այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին

¹ Տե՛ս սույն որոշման 17-րդ կետը:

դատարանի որոշումը տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից վերադաս դատական ատյան բողոքարկելու մատչելիության իրավունքի սահմանափակումն իրավաչափ է:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալ Ա.Հովհաննիսյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք են բերել տուժողի ներկայացուցիչները,

- Վերաքննիչ դատարանը քննության առնելով տուժողի ներկայացուցիչների բողոքը՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ բավարարել է այն՝ բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումը՝ գրավի կիրառումը ճանաչելով անթույլատրելի՝:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը քննության առնելն իրավաչափ չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում անդրադառնալ բողոքաբերի՝ սույն որոշման 9.1-րդ կետում բարձրացված փաստարկին:

21. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ այդ գործով մինչդատական վարույթն ավարտված է, Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում², ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և ներկայումս կորցրել իր իրավական նշանակությունը:

Միննույն ժամանակ, հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և սույն գործով ճանաչել մեղադրյալ Ա.Հովհաննիսյանի իրավունքի խախտման փաստը:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8.1-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Արտակ Հարությունի Հովհաննիսյանի իրավունքի խախտման փաստը:
3. Արտակ Հարությունի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԴ/0068/06/18

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)՝ 2019 թվականի ապրիլի 11-ի՝ Արտակ Հարությունի Հովհաննիսյանի վերաբերյալ կայացրած դատական ակտի պատճառաբանական առանձին մասերի և եզրափակիչ մասի վերաբերյալ.

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 13-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 55101817 քրեական գործը:

2017 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 69105317 քրեական գործը, որը միացվել է թիվ 55101817 քրեական գործին:

2018 թվականի հունվարի 31-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում՝ թիվ 55101817 քրեական գործի նյութերով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որը նույնպես միացվել է թիվ 55101817 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ թիվ 55101817 քրեական գործից անջատվել է մաս, որին շտրիկվել է 69100618 համարը:

2. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 1-ի որոշմամբ Արտակ Հարությունի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

3. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի փետրվարի 12-ի որոշման համաձայն՝ տուժող Հռիփսիմե Քոչինյանի ամուսնու սպանության գործով քրեական վարույթն իրականացնող մարմինը, ի դեմս՝ ՀԿԳ ավագ քննիչ Ա.Ներսիսյանի և քննչական վարչության պետ Թ.Շուշանյանի գործողությունների խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված՝ գործի արդարացի քննության սկզբունքը՝ չի ձեռնարկել նույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները,

գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, ամբողջությամբ չի բացահայտել հանցագործությունն ու այն կատարած անձին, որով էական վնաս է պատճառվել սպանության դեպքով տուժողի իրավահաջորդ ճանաչված Հռիփսիմե Քոչինյանի իրավունքներին ու օրինական շահերին¹:

4. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 1-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Պաշտպանի միջնորդությունը՝ Ա.Հովհաննիսյանին կալանքից գրավով ազատելու մասին, մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է՝ մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ բավարարվել է պաշտպան Հ.Սարգսյանի միջնորդությունը, Ա.Հովհաննիսյանին կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի:

5. Տուժող Հ.Քոչինյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումը բեկանել է և գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Հովհաննիսյանի պաշտպան Հ.Սարգսյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

7. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման համաձայն՝ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, ճանաչվել է Արտակ Հարությունի Հովհաննիսյանի իրավունքի խախտման փաստը, Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի շահերի պաշտպան Հայկ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 40:

Սարգսյանի միջնորդությունը բավարարվել է, մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի, գրավի չափ սահմանելով՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ¹:

9. Վերաքննիչ դատարանը, բավարարելով տուժող Հ.Քոչինյանի ներկայացուցիչներ Լ.Սահակյանի և Ե.Վարոսյանի վերաքննիչ բողոքը, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումը բեկանել է. մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել է անթույլատրելի²:

10. 2018 թվականի սեպտեմբերի 6-ին Ա.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան³ և 2018 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է գրավը՝ 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

11. Պաշտպան Հ.Սարգսյանի կարծիքով, Վերաքննիչ դատարանի դատական ակտով խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված Ա.Հովհաննիսյանի ազատության իրավունքը:

Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանը, տուժողի ներկայացուցիչների բողոքը քննության առնելով, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ քննության է առել այն անձանց բողոքը, ովքեր մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշումը բողոքարկելու իրավունք չունեին:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումները և եզրահանգումները.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխա-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 51-52:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 108:

³ Տե՛ս www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ:

րինելու) մասին դատարանի որոշումը տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի կողմից բողոքարկելու իրավունքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

12.1. Այդ համատեքստում ստուգելով Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը քննության առնելու իրավաչափության հարցը, Վճռաբեկ դատարանը մեջբերելով քրեադատավարական մի շարք նորմեր և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի ՄԴՈ-1373 որոշումը հանգել է եզրահանգման, որ օրենսդիրը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին) դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների սպառիչ շարքին է դասում մեղադրանքի կողմից՝ **դատախազին**, պաշտպանության կողմից՝ **մեղադրյալին**, **նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին**: Նշվածից բխում է, որ օրենսդիրը մեղադրանքի կողմում հանդես եկող տուժողին (տուժողի իրավահաջորդին) կամ նրա ներկայացուցչին իրավունք չի վերապահում բողոքարկելու մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշումը: Այլ կերպ՝ նախնական կալանքի կամ այն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին դատարանի որոշման դեմ վերադաս դատական ատյան դիմելու մատչելիության իրավունքը տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի համար սահմանափակված է:

12.2. Վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման շրջանակներում տուժողի հնարավոր դատավարական շահի ներկայացվածությունը կարող է ապահովվել ոչ միայն միջնորդավորված՝ դատախազի միջոցով, այլ նաև դատական ստուգման ընթացքում բացատրություններ տալու համար դատական նիստին կանչվելու միջոցով:

12.3. Վերոգրյալի հետ մեկտեղ, որպես հակակշռող գործոն հարկ է նաև առանձնացնել տուժողի (տուժողի իրավահաջորդի) դիրքորոշումների հաշվառմամբ անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման հնարավորությունը: Մասնավորապես, այն որպես գործոն միջոց, կարող է կիրառվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տուժողի անվտանգությունն ապահովելու նպատակով:

12.4. Վերոնշյալ հակակշռող գործոնների պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու, ինչպես նաև այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին դատարանի որոշումը տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից վերադաս դատական ատյան բողոքարկելու մատչելիության իրավունքի սահմանափակումն իրավաչափ է:

12.5. Բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը քննության առնելը իրավաչափ չէ, հետևապես տեղի է ունեցել մեղադրյալի իրավունքի խախտում:

Դատավոր Ս.Ավետիսյանի իրավական դիրքորոշումը և եզրահանգումները.

13. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 9-ի որոշումը, դրա դեմ բերված մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի պաշտպան Հայկ Սարգսյանի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով վարույթում առկա նյութերին և լսելով վճռաբեկ բողոքի վերաբերյալ դատավարության մասնակիցներ՝ դատախազ Հ.Պետրոսյանի և տուժողի ներկայացուցիչ՝ Լ.Սահակյանի պատասխանները, հայտնում եմ Հատուկ կարծիք Վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման պատճառաբանական առանձին մասերի և եզրափակիչ մասի վերաբերյալ, ներքոշարադրյալ պատճառաբանություններով:

13.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «[Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու] որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և **տուժողին**, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները **դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի** կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝

անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատական ստուգումը կատարվում է դոնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: (...) Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին (...):»

13.2. ՀՀ սահմանադրական դատարանը, 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՌ-1373 որոշմամբ, ի թիվս այլոց, քննարկման առարկա դարձնելով նախնական կալանքի դեմ վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտների հարցը, արձանագրել է, որ դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը: ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիտարկելով նաև քննիչին և տուժողին, մինևույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Նման օրենսդրական կարգավորումների պայմաններում՝ տուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է՝:

13.3. Տուժողի կարգավիճակին նվիրված միջազգային փաստաթղթերում մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցների ընտրության վարույթին մասնակցելու վերաբերյալ պահանջ նախատեսված չէ: Մինևույն ժամանակ տարբեր փաստաթղթերում ընդգծվում է դատական և վարչական վարույթների՝ տուժողի կարիքներին հնարավորինս համապատասխանելուն աջակցելու², ինչպես նաև մատչելի ընթացակարգերի միջոցով քրեական դատավարության բոլոր փուլերում տուժողի պահանջները հաշվի առնելու, քրեական արդարադատության նկատմամբ տուժողների վստահությունը բարձրացնելու³ անհրաժեշտությունը:

Մասնավորապես, Կոմիտեի՝ 1985 թվականի հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարա-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՌ-1373 որոշումը:

² Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 29.11.1985թ. թիվ 40/34 բանաձևով ընդունված՝ Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը:

³ Տե՛ս Եվրոպական խորհրդի նախարարների կոմիտեի՝ 28.06.1985թ. «Քրեական իրավունքի և քրեական դատավարության շրջանակներում տուժողի կարգավիճակի մասին» թիվ R (85) 11, 14.06.2006թ. «Հանցագործության գոհերի աջակցության վերաբերյալ» թիվ R(2006) 8 հանձնարարականները:

բերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել տուժողի վստահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Կոմիտեն անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան քրեական արդարադատության համակարգում տուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականի համաձայն՝ վարույթի ընթացքում դատախազը պարտավոր է ներկայացնել և պատշաճ ուշադրության արժանացնել տուժողի տեսակետներն ու մտահոգությունները¹:

Տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրանց ներկայացուցչի դատավարական կարգավիճակին մշտապես անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը, ընդգծելով, որ քրեական դատավարության ընթացքին տուժողի, տուժողի իրավահաջորդի մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահավելու համար, մյուս կողմից՝ նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը²:

13.4. Հիշյալ պահանջների հաշվառմամբ հայրենական գրականությունում քննարկվում է տուժողի կարգավիճակի ամրապնդման և ընդլայնման անհրաժեշտությունը: Մասնավորապես, նշվում է, որ մեղադրյալի նկատմամբ համապատասխան խափանման միջոցի ընտրությունը երաշխավորում է տուժողին անվտանգության որոշակի աստիճան, ուստի տուժողի իրազեկված լինելը, թե խափանման ինչ միջոց է ընտրվել մեղադրյալի հանդեպ, նրան վստահություն է ներշնչում իր անվտանգության հարցում: Իսկ այն դեպքում, եթե տուժողը համարի, որ ընտրված խափանման միջոցը բավարար չէ իր անվտանգությունն ապահովելու համար, նա հնարավորություն ունի ժամանակին միջոցներ ձեռնարկելու համապատասխան խափանման միջոցը փոխելու համար՝

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականը, կետ 32:

² Տե՛ս Ս.Անտոնյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԳ/0077/11/12 որոշման 25-26 կետերը:

համապատասխան միջնորդություն ներկայացնելով¹:

Հատուկ հետազոտություն իրականացրած հեղինակները նշում են, որ խափանման միջոցի վերաբերյալ որոշման բողոքարկման իրավունքով պետք է օգտվի նաև տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը և տուժողի իրավահաջորդը, քանի որ կալանավորումը որպես խափանման միջոց նպատակ է հետապնդում նաև ապահովել քրեական դատավարության խնդիրները, որի կենսագործումն անմիջականորեն կապված է տուժողի շահերի հետ: Կալանքի օրինականության ու հիմնավորվածության ապահովումը չպետք է կապված լինի այն բանից, թե ով է այդ որոշումը բողոքարկում²:

Մի շարք հեղինակներ անդրադառնալով կալանքը՝ որպես խափանման միջոց չկիրառելու վերաբերյալ դատական ակտը բողոքարկելու տուժողի իրավունքի հարցին, նշում են, որ տուժողը կալանքի վերաբերյալ դատարանի այս որոշումը բողոքարկելու իրավունք ունի: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.1-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը համարվում է պաշտպանության միջոց, իսկ 98-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պաշտպանվող անձի դիմումի վերաբերյալ քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել պաշտպանության միջոցներ ձեռնարկելու դիմումը մերժելու մասին, ապա դիմում ներկայացրած անձն իրավունք ունի որոշման պատճենն ստանալուց հետո, հնգօրյա ժամկետում, այն բողոքարկելու օրենսգրքով սահմանված կարգով: Այս նորմերից բխում է, որ եթե մինչդատական վարույթում տուժողը դիմել է քննիչին, որպեսզի վերջինս կալանքը, որպես պաշտպանության միջոց, կիրառելու միջնորդություն ներկայացնի դատարան, սակայն դատարանը մերժում է քննիչի միջնորդությունը, ապա տուժողը պետք է օժտված լինի այդ որոշմանը ծանոթանալու և այն բողոքարկելու իրավունքով³:

¹ Տե՛ս *Ս.Ս. Գիրանդյան*, Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Մենագր. /գիտ. խմբ.՝ Գ.Ս.Ղազիսյան, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 216:

² Տե՛ս *Դ.Զ.Ավերիսյան*, Կալանավորման հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 214:

³ Տե՛ս *Ս.Ս. Ղալբարդյան*, Դատական ակտերի բողոքարկումը ժամանակակից քրեական դատավարությունում /գիտ. խմբ., պրոֆեսոր Ս.Ավետիսյան., Եր.: Լուսաբաց, 2017, էջ 49-50, *Бруснищын Л.*, Право потерпевшего обжаловать избрание меры пресечения // Уголовный процесс. 2009.-№6, С. 37-40.

Դատավարագետ *Անի Դանիելյանը* գտնում է, որ կալանքի կիրառելիության հարցի քննարկման վարույթին տուժողին մասնակից դարձնելու վերաբերյալ պահանջի նախատեսման նպատակահարմարությունը բացակայում է (Տե՛ս *Ս.Ս. Դանիելյան*, Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, թեկն. ատենախոս., Եր., 2019, էջ 67:

Քննարկվող հարցը վիճելի է նաև Ռուսաստանի Դաշնությունում: Մասնավորապես, տեսաբանները, ինչպես նաև ՌԴ սահմանադրական և գերագույն դատարանները գտնում են, որ օրենսգրքով չնայած ուղղակի նախատեսված չէ, բայց նաև բացառված էլ չէ տուժողի մասնակցությունը քննարկվող վարույթին, և այն դեպքերում, երբ տվյալ խափանման միջոցի կիրառման հարցը շոշափում է տուժողի իրավունքները և օրինական շահերը, այդ թվում՝ իր անձնական անվտանգության պաշտպանության կամ պատճառված գույքային վնասի հատուցման ապահովման հետ կապված, նա պետք է ունենա տվյալ հարցի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու և դատական ակտը բողոքարկելու իրավունք: Գերագույն դատարանը պարզաբանել է, որ տուժողը կամ նրա ներկայացուցիչը ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 389.1-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, անկախ նրանց մասնակցությունից դատական նիստին, իրավունք ունեն բողոքարկելու դատական ակտը¹:

13.5. Վերոգրյալի համարեքսպում արձանագրում են հետևյալը.

1) Օրենսգրքի մեջբերված իրավական կարգավորումներից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը խափանման միջոցի վերաբերյալ կայացված որոշումը հանձնում է նաև *տուժողին*, իսկ դատական նիստին չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկվում է նրան,

2) խափանման միջոցի վերաբերյալ կայացված որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ընթացքում բացառություններ տալու համար Վերաքննիչ դատարանի դատական նիստին կարող է կանչվել նաև *տուժողը*:

3) գործող օրենսդրական կարգավորումների համաձայն տուժողը կալանավորման վերաբերյալ որոշման բողոքարկման իրավունք չունի,

4) կալանավորման որոշման բողոքարկման նպատակահարմարության հարցում տուժողի և դատախազի միջև անհամաձայնության դեպքում, տուժողը փաստացի գրկվում է դատական ակտը անձամբ բողոքարկելու և վերանայման վարույթին մասնակցելու իրավունքից,

5) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներում կարգավորվում է որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանաքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելու հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը: Մինչդեռ, «*կալանքը գրավով փոխարինելու մասին որոշումը*» նշված հոդվածներում մեջբերված չէ, ինչը կարելի է դիտարկել որպես օրենսդրական բաց: Սակայն, Վճռարեկ

¹ Определение Конституционного Суда РФ от 17 октября 2006 г. N 422-О “Об отказе в принятии к рассмотрению жалобы граждан Диденко Виктора Владимировича и Осадской Татьяны Михайловны на нарушение их конституционных прав положениями статей 42, 108 и главы 43 Уголовно-процессуального кодекса Российской Федерации”, Постановление Пленума Верховного суда РФ от 29 октября 2009 г. N 22 “О практике применения судами мер пресечения в виде заключения под стражу, залога и домашнего ареста”, п. 17:

դատարանը իր որոշմամբ (կետեր 11-րդ և 18-րդ) բողոքարկման ենթակա դատական ակտերի ցանկում օգտագործում է նաև «կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու» նախադասությունը: Հարկ է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմամբ այդպիսի արտահայտություն օգտագործված չէ:

14. Համակարծիք լինելով տուժողի կարգավիճակի ամրապնդման և ընդլայնման անհրաժեշտության մասին միջազգային հանրության կողմից և հայկական դոկտրինաներում արտահայտված մոտեցմանը, գտնում եմ, որ տուժողը, լինելով ենթադրյալ հանցագործության փաստացի տուժած սուբյեկտ, զոհ, առնվազն մահվան ելքով գործերով պետք է կալանավորման՝ որպես խափանման միջոց կայացված որոշումների բողոքարկման լիարժեք իրավունք ունենա:

Վերոնշյալ մոտեցումը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Սահմանադրության 24-րդ հոդվածում հռչակված է կյանքի իրավունքը:

Քննարկվող իրավական հարցի համատեքստում սկզբունքային նշանակություն ունի նաև Վճռաբեկ դատարանի կողմից առանձին դեպքերում դատավարության մասնակիցներին հնարավորություն տալ Վերաքննիչ դատարան անմիջական ռեժիմով բողոքարկել այնպիսի դատական ակտեր, որոնց բողոքարկման վերաբերյալ օրենքով ուղղակի դրույթ նախատեսված չէ: Այսպես, Վճռաբեկ դատարանը քննարկել է տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավաչափության հարցը: Հաշվի առնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը՝ արձանագրել է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման:

Վճռաբեկ դատարանն այս դիրքորոշումը հիմնավորել է նաև նրանով, որ այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն չընձեռելու միջոցով տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակելը խաթարում է այդ հիմնարար իրավունքի բուն էությունը՝ վերջինիս վերածելով պատրանքային հիմնադրույթի: Այդպիսի սահմանափակումը խախտում է նաև գործադրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև հավասարակշռվածության ողջամիտ հարաբերակցությունը¹:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԷԴ/0110/01/12 որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածում սահմանված է դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման ազատության ընթացակարգը: Մինչ դեռ նույն օրենսգրքի 376.1-րդ հոդվածում նախատեսված չէ տուժողի կողմից կալանավորման վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածում առկա է բաց: Սակայն հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՄԳՌ-1373 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումները, գտնում են, որ այդ բացը (առնվազն մահվան ելքով գործերով) իրավակիրառ պրակտիկայում հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է վերստին դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ տվյալ նորմի և իրավակիրառ պրակտիկայում տրված դրա մեկնաբանությունների սահմանադրականության հարցը բացահայտելու համար:

Տվյալ իրավակարգավորման թերությունը հանգեցրել է հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը դատարանների կողմից լիարժեք հաղթահարված չէ: Բացի այդ, վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը կարող է խախտել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված իրավունքները: Գտնում են, որ տվյալ իրավակարգավորման բացը հակասում է նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի դրույթներին:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ տուժողի իրավահաջորդ Հռիփսիմե Քոչինյանի իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են սպանության գործով քրեական վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց՝ քրեական օրենսգրքով արգելված գործողությունների հետևանքով (տես սույն Հատուկ կարծիքի 3-րդ կետը):

Կալանավորումը գրավով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 22-ի որոշումը բողոքարկվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների կողմից, սակայն քրեական գործի նկատմամբ դատախազական վերահսկողություն իրականացնող դատախազը վերաքննիչ բողոքի առիթով պատասխան չի ներկայացրել և չի օգտվել Վերաքննիչ դատարանի դատական նիստին մասնակցելու իր իրավունքից: Դատական նիստին չի մասնակցել նաև քրեական գործը վարող ավագ քննիչը:

Ավելին՝ Վերաքննիչ դատարանի որոշումը, որով բավարարվել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների բողոքը, դատախազությունը չի բողոքարկել:

Սակայն, ուշագրավ է, որ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի պաշտ-

պանի վճռաբեկ բողոքի քննության ընթացքում, 2019 թվականի ապրիլի 11-ի դատական նիստում ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ վարչության ավագ դատախազ Հ.Պետրոսյանը հայտնեց, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի իմաստով տուժողին կարող է իրավունք վերապահվել կալանավորման վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավունքը, հակառակ պարագայում կարող են սահմանափակվել նրա դատավարական իրավունքները: Ինչ վերաբերվում է գրավ կիրառելու հարցին, ապա դատախազությունը գտել է, որ այն սույն գործի շրջանակներում թույլատրելի է, ուստի այդ մասով վճռաբեկ բողոքը ևս չի բերվել:

16. Վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գտնում են, որ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը քննության առնելը ոչ իրավաչափ համարելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը վիճահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում են, որ բավարար հիմքեր կան սույն գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար, պարզելու, թե արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածը՝ կալանավորման կամ կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին դատական ակտի բողոքարկման վերաբերյալ տուժողին, տուժողի իրավահաջորդին կամ նրա ներկայացուցչին բողոքարկման իրավունք չվերապահելու մասով չի հակասում ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածների պահանջներին:

Շեռնապետ, պաշտպանի վճռաբեկ բողոքին հնարավոր կլինի անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից հետո:

Հաշվի առնելով վերոշարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով,

միջնորդում են

մեղադրյալ Արտակ Հարությունի Հովհաննիսյանի վերաբերյալ վարույթը կասեցնել և վերստին դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի համապատասխանությունը (կալանավորման կամ կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին

դատական ակտը տուժողին, տուժողի իրավահաջորդին կամ նրա ներկայացուցչին բողոքարկման իրավունք չվերապահելու մասով) ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին:

Դատավոր՝

Ս.Ավետիսյան

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0002/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

մասնակցության դատավորներ՝
նախագահության

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարության
մասնակցության դատախազ՝
տուժող՝

Ս.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Լ.ՎԻՐԱԲՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վահիկ Մամվելի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի և տուժող Լուսինե Վիրաբյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի հետաքննության բաժանմունքում 2017 թվականի դեկտեմբերի 4-ին հարուցվել է թիվ 19164017 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, և նախաքննության կատարման համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Լուսինե Վիրաբյանը ճանաչվել է տուժող:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 18-ի որոշ-

մամբ Վահիկ Սամվելի Մխիթարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2017 թվականի դեկտեմբերի 25-ին Վ.Մխիթարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի հունվարի 19-ին Վ.Մխիթարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2018 թվականի փետրվարի 5-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճռով Վ.Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի կանոններով՝ նշանակված պատժին մասնակիորեն զուտարվել է Վ.Մխիթարյանի նկատմամբ նույն դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ի դատավճռով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նշանակված 160.000 ՀՀ դրամ տուգանքի չվճարված՝ 144.000 ՀՀ դրամից 100.000 ՀՀ դրամը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալ Վ.Մխիթարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճիռը բեկանել է և Վ.Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը և տուժող Լ.Վիրաբյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 22-ի և դեկտեմբերի 21-ի որոշումներով ընդունվել են վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Վ.Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա կնոջից՝ Լուսինե Վիրաբյանից

ամուսնալուծվելուց հետո՝ 2017 թվականին, վերջինիս ու մոր՝ Սուսաննա Մարգարյանի բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, ինչպես նաև Լուսինե Վիրաբյանին ձեռի ենթարկելու համար դատապարտվելու պարճառով Լ. Վիրաբյանի հետ ունենալով թշնամական հարաբերություններ, 2017 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:15-ի սահմաններում, գործվելով Լոռու մարզի Արևաշող գյուղում, զանգահարել է Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կանակա 68/1 հասցեում բնակվող Լուսինե Վիրաբյանին և իրենց երեխային մշտապես տեսակցելն արգելելու և այդ հարցը դատական կարգով լուծելու առաջարկից զայրացած՝ սպառնացել է նույն օրը «խփել»՝ սպանել Լուսինե Վիրաբյանին, իսկ հաջորդ օրը՝ Վանաձոր քաղաքի հրապարակում, կտրել մոր՝ Սուսաննա Մարգարյանի կոկորդը՝ սպանել նաև նրան, ապա 2017 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, երբ Վահիկ Մխիթարյանը ժամանել է Լուսինե Վիրաբյանի բնակության վայր և սկսել թակել դուռն ու պահանջել բացել այն՝ արեղծելով սպառնալիքներն իրականացնելու իրական վրանգ, այդ սպառնալիքները՝ կապված վերոգրյալ հանգամանքների հետ, Լուսինե Վիրաբյանի մոր ընկալվել են իրական՝ առաջացրել վախ, տագնապ, իր անվերանգության համար անհանգստության զգացում և նա ահազանգել է ոստիկանություն, որից հետո Վահիկ Մխիթարյանը դատարեցրել է իր գործողությունները (...):»¹:

6. Առաջին ատյանի դատարանը, մեղավոր ճանաչելով Վ.Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, հիմքում դրել է հետևյալ ապացույցները. տուժող Լ.Վիրաբյանի, վկա Ս.Մարգարյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները, Լ.Վիրաբյանի և Վ.Մխիթարյանի առերես հարցաքննության և այլ փաստաթուղթ ճանաչված սկավառակի զննության արձանագրությունները²:

7. Տուժող Լ.Վիրաբյանը դատաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Մխիթարյանն իր նախկին ամուսինն է, ով 2017 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 18-ի սահմաններում զանգել է իրեն: Ինքն ասել է, որ երեխային տեսակցելու հարցը կկարգավորվի միայն դատարանի որոշմամբ և այսուհետ անարգել տեսակցություններ չեն լինի, քանի որ դրանք մշտապես ավարտվում են կոնֆլիկտներով ու վիճաբանություններով: Նույն պահին Վ.Մխիթարյանը սկսել է սպառնալ՝ հայտարարելով. «Դե որ այդպես է քեզ խփելու եմ, իսկ հաջորդ օրը՝ Վանաձոր քաղաքի հրապարակում, կտրելու եմ մորդ կոկորդը՝ սպանելու եմ նաև նրան», ապա հայեցողություններ տվել: Ինքը սպառնալիքները ձայնագրել է իր բջջային հեռախոսով: Նոյեմբերի 22-ին, Վ.Մխիթարյանը զանգահարել է և հայտնել, որ գալիս է երեխային տեսակցելու, ապա

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, էջ 171:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, էջեր 45-51:

պահանջել է բացել բնակարանի դուռը: Ինքը պատասխանել է, որ դուռը չի բացելու, որ իրեն չանհանգստացնի, հակառակ դեպքում կդիմի ոստիկանություն: Որոշ ժամանակ անց Վ.Մխիթարյանը թակել է իրենց բնակարանի դուռն ու պահանջել բացել այն, ասելով, որ եկել է երեխային տեսակցելու: Մերժում ստանալուց հետո Վ.Մխիթարյանը շարունակել է իր սպառնալիքները՝ հայտարարելով. «Բացի դուռը, քեզ խփելու եմ, դուրս արի խփելու եմ»: Այդ ընթացքում տանը եղել է երեխայի հետ, և անհանգստանալով, որ նա կիրականացնի սպառնալիքները, վախից ահազանգել է ոստիկանություն և հայտնել, որ Վահիկ Մխիթարյանը կրկին անհանգստացնում է իրեն: Ոստիկանության աշխատակիցները ժամանել են իրենց բնակարան, որից հետո Վ.Մխիթարյանը դադարեցրել է իր գործողությունները, իսկ նրանց հեռանալուց հետո նորից շարունակել թակել լուսամուտներն ու դուռը և պահանջել բացել: Ինքը ստիպված կրկին ահազանգել է ոստիկանություն, այնուհետև հաղորդում է ներկայացրել կատարվածի մասին¹:

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով որպես այլ փաստաթուղթ սպացույց ճանաչված սկավառակի զննության արձանագրությանը, գրնում է, որ այն պեղք է ճանաչել որպես անթույլատրելի սպացույց հեղինակ պարճատարանությամբ.

(...) Քրեական գործի նյութերում առկա՝ որպես այլ փաստաթուղթ սպացույց ճանաչված սկավառակի զննության արձանագրության համաձայն՝ 2017թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Վահիկ Մխիթարյանը զանգահարել է Լուսինե Վիրաբյանին և երեխային րեսակցելն արգելելու պարճատով մի քանի անգամ սպանության սպառնալիքներ է րվել նրան և մորը:

Ըստ գործի նյութերի, 2017թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում Լուսինե Վիրաբյանը իր և Վահիկ Մխիթարյանի միջև րեղի ունեցած հեռախոսային խոսակցությունը ձայնագրառել է հեռախոսով, որի մասին Վահիկ Մխիթարյանին չի րեղեկացրել: Այնուհետև հեռախոսը, որում առկա է եղել այդ ձայնագրառումը, ներկայացրել է հեղաքննիչին, ով այն րեղափոխել է սկավառակի վրա, փաթեթավորել, կնիքել և կցել է առարկա ներկայացնելու և վերցնելու մասին արձանագրությանը:

Այնուհետև, քրեական գործ հարուցելուց հետո, քննիչը զննել է սկավառակը, կազմել է զննության մասին արձանագրություն, վերջինը որպես այլ փաստաթուղթ ճանաչելով սպացույց՝ դրել է մեղադրական եզրակացության հիմքում:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Վահիկ Մխիթարյանի հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարարվել է օրենքի

¹ Տե՛ս նախ տեղում:

խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից: Այսինքն խախտվել է անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը: Հետևաբար այդ հեռախոսային խոսակցության ձայնագրատման սկզբնական զննելու մասին արձանագրությունը պետք է դիտարկել որպես անթույլատրելի ապացույց՝ «թունավոր ծառի պտուղների» տեսության համաձայն և հանել մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շարքից, քանի որ այն ձեռք է բերվել դատավարական գործողությունների կատարման կարգի էական խախտմամբ, որն էլ հանգեցրել է Վահիկ Մխիթարյանի անձնական կյանքի գաղտնիության հիմնարար իրավունքի խախտման:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ միայն գործի ելքով շահագրգռված անձանց՝ րվյալ դեպքում տուժողի և նրա մոր ցուցմունքները, առանց դրանք հաստատող օբյեկտիվ ապացույցների առկայության, բավարար չեն հանգեցրել այն հետևության, որ հանցագործության դեպք տեղի է ունեցել:

(...) [Վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վահիկ Մխիթարյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը:
(...)

Ըստ գործի նյութերի ամբաստանյալը և տուժողը նախկին ամուսիններ են, նրանց հարաբերությունները լարված են, հետևաբար տուժողի սուբյեկտիվ ընկալմամբ ամբաստանյալի կողմից հեռախոսով հնչեցրած սպառնալիքները՝ խփելու, սպանելու մասին, կարող էին գնահատվել որպես իրական: Սակայն արարքի որակման համար այն անհրաժեշտ նշանակություն ունի, առաջնային օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Սույն գործի փաստական հանգամանքների վերլուծության և գնահատման արդյունքում Վերաքննիչ դատարանը եկավ այն եզրահանգման, որ րվյալ դեպքում օբյեկտիվ հիմքեր չկան ամբաստանյալ Վահիկ Մխիթարյանի կողմից հեռախոսով, Արևաշող գյուղից Վանաձոր քաղաքում գտնվող նախկին կնոջ և զոքանչի հասցեին հնչեցրած սպանության սպառնալիքներն իրական գնահատելու համար, տուժողը ամբաստանյալի հետ ունեցած բացասական հարաբերությունների, այդ հարաբերությունների ֆոնի վրա ձևավորված իր հոգեկան լարված վիճակի պարզապես իրականությունը խեղաթյուրված է ընկալել, կարծիք հայտնելով, թե սպառնալիքն իրական է եղել: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս, հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը՝ «կիսիեմ կապանեմ», շարժառիթը՝ երեխային տեսակցելն արգելելը, սպառնալիք տալու եղանակը՝ հեռախոսով, հանցավորի և տուժողի միջև առկա հարաբերություն-

ների բնույթը:

Այսպիսով՝ Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Վահիկ Մխիթարյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմը, քանի որ հանցակազմի փարբերից թեկուզ մեկի՝ փվյալ դեպքում հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը ինքնին վկայում է հանցակազմի, ուրեմն և հանցագործության բացակայության մասին: (...)»¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոշարադրյալ հիմնավորումներով.

9. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը և տուժող Լ.Վիրաբյանն իրենց բողոքներում նշել են, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական և հիմնավորված չէ:

10. Բողոքների հեղինակները, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ, փաստարկել են, որ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը, մի շարք պայմանների պարագայում, քրեական դատավարությունում թույլատրելի է համարվում որպես ապացույց օգտագործել անձի կողմից կատարված ձայնագրությունը: Ուստի, սույն գործի փաստական հանգամանքները դիտարկելով այդ վճիռներում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո՝ բողոքաբերներն արձանագրել են, որ ստորադաս դատարանի պնդումներն այն մասին, թե ամբաստանյալի հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կատարվել է օրենքի խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից, ինչի արդյունքում խախտվել է անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը, անհիմն են և հակասում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

11. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանի հետևություններին և վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ *Վլադիկ Խաչատրյանի* գործով որոշումը՝ բողոք բերած անձինք գտել են, որ սույն գործով ամբաստանյալի սպառնալիքները եղել են իրական՝ օբյեկտիվ հիմքեր առաջացնելով տուժողի համար վախենալու հնչեցված սպառնալիքների իրականացումից:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճռին:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, էջեր 61-82:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այդ շրջանակներում մասնավոր անձի կողմից կատարված խոսակցությունների (այդ թվում՝ հեռախոսային) գաղտնի ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

I. Մասնավոր անձի կողմից հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք տուժող Լ.Վիրաբյանի կողմից ամբաստանյալ Վ.Մխիթարյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրառման լազերային սկավառակի գնության արձանագրությունը Վերաքննիչ դատարանի կողմից անթույլատրելի ապացույց ճանաչելն այն պատճառաբանությամբ, որ ձայնագրությունը կատարվել է օրենքի խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից:

15. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:*

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:*

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանա-

վորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

15.1 ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), մեկնաբանելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքն ամրագրող նորմը, նշել է, որ այն նախատեսում է այդ իրավունքի սահմանափակման երեք համաժամանակյա նախապայման՝ ա) օրենքով սահմանված դեպքերում, բ) օրենքով սահմանված կարգով, գ) դատարանի որոշմամբ: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ իրավունքի սահմանափակման օրինականության նկատմամբ դատական վերահսկողության պահանջը նպատակ է հետապնդում կանխել հնարավոր չարաշահումները և պաշտպանել անձին պետական իշխանության մարմինների կողմից նրա անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից¹:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից սպօրինի զրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը:

2. Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»:

16.1 Վճռաբեկ դատարանը Վահագն Խաչատրյանի գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ անձնական կյանքի, այդ թվում՝ հաղորդակցությունների անձեռնմխելիության իրավունքն անձի՝ ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությամբ երաշխավորված կարևոր իրավունքներից է, որը պետք է պաշտպանվի կամայական և անօրինական միջամտությունից²:

Անդրադառնալով մասնավոր անձի կողմից կատարված ձայնագրառման արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանը Մելինե Մարգարյանի գործով գտել է, որ քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնին ներկայացված և տուժողի ամուսնու կողմից կատարված՝ տուժողի և ամբաստանյալի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լագերային

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի նոյեմբերի 23-ի թիվ ՍԴԹ-926 որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս Վահագն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0666/10/11 որոշման 13-րդ կետը:

սկավառակը ձեռք է բերվել քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ: Մասնավորապես, տուժողի և ամբաստանյալի խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել: Լազերային սկավառակը վարույթն իրականացնող մարմինն է ներկայացրել տուժողը, ով հայտնել է, որ ձայնագրառումը կատարվել է իր ամուսնու կողմից: Այսինքն՝ նշված փաստական տվյալը ձեռք է բերվել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից՝ անձանց հաղորդակցվելու ձայնագրառման քրեադատավարական կարգի էական խախտմամբ: Արդյունքում, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ նշված ձայնագրառման փորձաքննության եզրակացությունը թույլատրելի ապացույց չէ, քանի որ դրա հիմքում ընկած փաստական տվյալը՝ լազերային սկավառակի բովանդակությունը կազմող տեղեկատվությունը, ձեռք է բերվել օրենքի պահանջների խախտմամբ, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին¹:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումներն արտահայտվել են այդ գործին բնորոշ այնպիսի փաստական հանգամանքների պայմաններում, ինչպիսիք են՝

- հեռախոսային խոսակցության ձայնագրության բովանդակությունը, ըստ ամբաստանյալի, եղել է տուժողի հետ ձեռքբերված նախնական պայմանավորվածության արդյունք,

- ձայնագրառումն իրականացվել է ոչ թե իրավահարաբերության անմիջական մասնակցի, այլ երրորդ անձի՝ տուժողի ամուսնու կողմից²:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց

¹ Տե՛ս 'u Մեյիսե Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0081/01/ 11 որոշման 30-րդ կետը:

² Տե՛ս 'u http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812276664:

իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

17.1 Վերոնշյալ երաշխիքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝

- *Schenk v. Switzerland* գործով գտել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության հիման վրա դիմումատուի դատապարտումը չի հանգեցրել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Այդ ձայնագրությունը, որով հիմնավորվել էր դիմումատուի կողմից կնոջ սպանության դրոշխության փորձի կատարումը, ներկայացվել էր քննիչին և հետագայում օգտագործվել դատարանում՝ մերժելով ձայներիզը գործի նյութերից հեռացնելու մասին դիմումատուի պահանջը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի խախտման բացակայությունն արձանագրելիս, ի թիվս այնի, հաշվի է առել, որ՝ ա) դիմումատուն հնարավորություն է ունեցել, որից և օգտվել է, ձայնագրությունն ունկնդրելուց հետո վիճարկելու դրա իսկությունը և առարկելու այն որպես ապացույց օգտագործելու դեմ, բ) դիմումատուն դատական քննության սկզբից պահանջել և հասել է նրան, որ քննության առնվելն ձայնագրառողի գործողությունները, գ) դիմումատուի պաշտպանը կարողացել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննել գաղտնի ձայնագրությունը կատարած անձին, դ) հեռախոսագրույցի ձայնագրությունը մեղադրական դատավճռի միակ ապացույցը չի եղել:

Ապացույցների թվից ձայնագրության բացառման մերժումը կապված է, մասնավորապես, այն բանի հետ, որ առկա են եղել ձայնագրության կապակցությամբ այն կատարած անձի՝ որպես վկա տրված ցուցմունքները: Դատարանը նաև լսել է պաշտպանության կողմի միջնորդությամբ հրավիրված վկաներին: Դատական ակտում ոչ մեկ անգամ ընգծված է, որ դատարանը, բացի ձայնագրությունից, հիմնվել է նաև այլ ապացույցների վրա, որոնք հիմնավորում էին այդ ձայնագրությունից բխող դիմումատուի մեղավորության մասին եզրահանգումը¹,

- *Turquin c. France* գործով նշել է, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ ձեռքբերված ապացույցների օգտագործումը դեռևս բավարար չէ քրեական վարույթն անարդար համարելու համար, քանի որ մի կողմից՝ պաշտպանության իրավունքն ապահովված է, ինչը ենթադրում է հնարավորություն՝ վիճարկելու ապացույցի իսկությունը և դրա օգտագործումը դատական քննության ընթացքում, մյուս կողմից՝ անձի դատապարտումը հիմնված է եղել նաև այլ ապացույցների վրա: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համոզմամբ, խոսակցության ապօրինի ձայնագրության օգտագործումը չի զրկում մեղադրյալին

¹ Տե՛ս *Schenk v. Switzerland* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1988 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10862/84, կետեր 47-49:

արդար դատաքննության իրավունքից, նույնիսկ եթե այն ձեռք է բերվել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ:

Միաժամանակ, նույն որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ **մասնավոր անձի գործողություններն իրավական կարգավորման ենթակա չեն և a priori չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, այդուհանդերձ դրանք էական դեր ունեն դատավորի համոզմունքի ձևավորման համար:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաժամանակ փաստել է, որ ներկայացվող ապացույցների թույլատրելիությունը կանոնակարգող իրավական կարգավորումների բացակայությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում: Սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ուշադրության է արժանացրել այն, որ դիմումատուն, ում դատապարտման հիմքում դրվել էր իր նախկին կոնց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը, չի ժխտել դրա բովանդակությունը, այլ վիճարկել է դրան տրված մեկնաբանությունը: Բացի այդ, դիմումատուն ոչ մեկ անգամ հարցաքննվել է առանց իր համաձայնության իրականացված ձայնագրության առնչությամբ: Նա հնարավորություն է ունեցել մինչդատական և դատական վարույթների ժամանակ արտահայտելու իր դիրքորոշումը ձայնագրության վերաբերյալ: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ուշադրության է արժանացրել այն փաստը, որ քննարկվող ձայնագրությունը **չի հանդիսացել միակ ապացույցը՝ վերապահված դատարանի սուվերեն գնահատականին:** Նման պայմաններում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է ներկայացված գանգատը վարույթ ընդունելը¹,

- *Van Vondel v. The Netherlands* գործով գտել է, որ գրուցակցի կողմից անձնական (հեռախոսային) խոսակցությունների ձայնագրատումը և նման ձայնագրության գաղտնի օգտագործումը *per se* չի խախտում Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե այն արվել է անձնական միջոցներով, սակայն դա իր բնույթով պետք է տարբերակվի անհատի կողմից պաշտոնական՝ քրեական կամ այլ քննության ենթատեքստում և վերջինիս համար քննությունն իրականացնող պաշտոնատար անձանց լռելյայն համաձայնությամբ և տեխնիկական աջակցությամբ հաղորդագրությունները գաղտնի վերահսկելուց և ձայնագրելուց: Սույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ թեև ձայնագրատողի կողմից դիմողի գրույցների ձայնագրությունը կատարվել է կամավոր հիմունքներով և սեփական նպատակներով (իր ցուցմունքների արժանահավատությունը ցույց տալու և անձնական անվտանգության նկատառումներով), սակայն սարքավորումները տրամադրվել են իշխանությունների

¹ *Sti' u Turquin c. France* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 43467/98:

կողմից, ովքեր հրահանգներ են տվել՝ կապված այն հանգամանքի հետ, թե ինչ տեղեկություն է անհրաժեշտ ստանալ դիմողից¹,

- *Nechiporuk and Yonkalo v. Ukraine* գործով ընդունելի չի համարել ներպետական դատական ատյանների կողմից **խոսակցության ձայնագրությունը գնահատման չենթարկելը**, որին հղում էր կատարելու դիմումատուն: Մասնավորապես, նշված ձայնագրությամբ դիմումատուի դատապարտման համար առանցքային վկան իբրև խոստովանել էր, որ զրպարտել է իրեն ոստիկանության աշխատակիցների ճնշումների ներքո: Նման պայմաններում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլի, նշել է, որ ներպետական դատարանը հիմք է ընդունել վկայի մերկացնող ցուցմունքները՝ անտեսելով կոնկրետ և գործին վերաբերող փաստերը, որոնք կարող էին կասկածի տակ դնել դրանց արժանահավատությունը և ճշգրտությունը, բացի այդ, համոզիչ կերպով չի հաստատվել, որ վկան այդ ցուցմունքները տվել է իր կամքով և այն, որ ինքն այդ մասին պնդել է դատարանում, կարող է վկայել շարունակվող ճնշումների մասին: Նման պայմաններում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում²:

18. Նախորդ կետում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 16.1-րդ կետում մեջբերված՝ *Մելիխե Մարգարյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումներն անհրաժեշտ է վերանայել և զարգացնել՝ ներքոշարադրյալ սահմաններում.

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չպետք է նույնացնել քրեական հետապնդման մարմինների կողմից քրեադատավարական ճանապարհով անձի հաղորդակցության վերահսկման, այդ թվում՝ նրանց իրազեկվածությամբ՝ քրեական կամ այլ պաշտոնական քննության համատեքստում համագործակցող անձանց կողմից իրականացված ձայնագրառման հետ, և դրանց համար սահմանված չափանիշները մեխանիկորեն կիրառել մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցությունների ձայնագրության նկատմամբ: Այսինքն, ի տարբերություն մասնավոր անձանց, որոնց գործողությունները, ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ենթակա չեն իրավական կարգավորման և չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, քրեական վարույթի

¹ Տե՛ս *Van Vondel v. The Netherlands* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2007 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38258/03, կետ 49:

² Տե՛ս *Nechiporuk and Yonkalo v. Ukraine* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 ապրիլի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42310/04, կետեր 276-281:

հանրային մասնակիցները, հանրային շահի պաշտպանությունն ապահովելու իրենց գործառնությունը շրջանակներում, անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը կարող են սահմանափակել բացառապես օրենքով սահմանված դեպքերում, օրենքով սահմանված կարգով և դատարանի որոշմամբ: Նշված չափանիշները ենթակա են վերագրման պետական իշխանության մարմիններին, ուժեր, ի տարբերություն մասնավոր անձանց, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Ուստի, նշված չափանիշները նպատակ են հետապնդում կանխելու պետական իշխանության մարմինների հնարավոր չարաշահումները և պաշտպանելու անձի անձնական ու ընտանեկան կյանքն անհարկի միջամտությունից:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչելու և քրեական դատավարությունում օգտագործելու հնարավորությունը գնահատելիս քրեադատավարական կարգավորումները չպետք է մեկնաբանվեն չափազանց ձևականացված: Այսինքն՝ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարելն ինքնին չպետք է դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ դրա օգտագործումը քրեական դատավարությունում բացառելու համար: Այլ կերպ, ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարած լինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես դատավարական այնպիսի խախտում, որի նկատմամբ կիրառելի կլինեն քրեական հետապնդման մարմիններին վերագրվող պահանջները և որն անվերապահորեն կվկայի այն որպես ապացույց ճանաչելու անթույլատրելիության մասին:

18.1 Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում սահմանել այն հակակշռող գործոնները, որոնք իրավակիրառողները պետք է գնահատեն մասնավոր անձի կողմից օրենքով չկանոնակարգված եղանակով կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունն ըստ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների որոշելիս: Մասնավորապես.

- *հեռախոսային խոսակցության ձայնագրումն անհարկանացման պայմանները.*

Անհրաժեշտ է գնահատման ենթարկել այն հանգամանքները, որոնց պարագայում իրականացվել է հեռախոսային խոսակցության ձայնագրումը: Այս առումով առանցքային նշանակություն ունի այն, թե արդյո՞ք հաղորդակցվող անձը ողջամտորեն ուներ կամ կարող էր ունենալ իր մասնավոր կյանքի գաղտնիության լեզիտիմ ակնկալիք: Այսինքն՝ անձի գտնվելու վայրից (օրինակ՝ հասարակական վայրում կամ մասնավոր տարածքում գտնվելը), այդ վայրում հնարավոր տեխնիկական սպասարկ-

ման միջոցների առկայությունից (օրինակ՝ տեսաձայնագրող սարքերի հսկողության ներքո գրուցելը), հեռախոսագանգի նպատակից (օրինակ՝ անանուն, գործնական կամ անձնական բնույթի գրույց ունենալը), ձայնագրված լինելու կամահայտնությունից (օրինակ՝ ձայնագրված լինելուն համաձայնվելը կամ հրաժարվելը) և մասնավոր կյանքի գաղտնիության երաշխիքից օգտվելու մասին վկայող այլ հանգամանքներից ելնելով պետք է պարզել, թե անձը կարող էր «պահանջել մեկուսացում» և ողջամտորեն ակնկալել, որ գտնվում է անձնական կյանքի տիրույթում: Նշված երաշխիքի լեգիտիմ ակնկալիքի առկայության պայմաններում միայն կարող է քննարկման առարկա դարձվել դրա սահմանափակման իրավաչափության հարցը,

- **հեռախոսային խոսակցության ձայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության բնույթը.**

Հեռախոսային խոսակցության ձայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության իրավաչափությունը գնահատման ենթարկելու համար էական նշանակություն ունի այն իրավունքների շրջանակի պարզումը, որոնք շոշափվել են իրականացված գաղտնի ձայնագրությամբ: Մասնավորապես, պետք է հստակեցնել, թե իրականացված ձայնագրառմամբ անձի որ իրավունքն է միջամտության ենթարկվել, այն է՝ մասնավոր և ընտանեկան կյանքի, հաղորդակցության ազատության և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, թե՛ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված այլ հիմնական իրավունքները:

- **հեռախոսային խոսակցության ձայնագրառման նպատակը.**

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը որոշելիս պետք է գնահատման ենթարկել ձայնագրության իրականացման նպատակը: Այսպես, կատարված ձայնագրառումը պետք է հետապնդած լինի իրավաչափ նպատակ, այն է՝ պաշտպանելու անձի իրավունքներն ու օրինական շահերը, ուղղված լինի հակաիրավական վարքագծի կանխմանը, բացահայտմանը և նշանակալի մասնավոր շահերը (“*significant private interest*”) պաշտպանելուն: Միաժամանակ, հարկ է նշել, որ որպես իրավաչափ նպատակ կարող է դիտարկվել նաև մասնավոր անձի կողմից հեռախոսային խոսակցության ձայնագրառումն անձի անմեղությունը կամ այլուրեքությունն ապացուցելու համար: Այլ կերպ, հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է արդարացված համարվել, եթե հետապնդել է անձի իրավական պաշտպանությունն ապահովելու նպատակ,

- **հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը.**

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը

որոշելիս առանցքային նշանակություն ունի մրցակցող շահերի, այն է՝ մի կողմից՝ հաղորդակցվող անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի և մյուս կողմից՝ հանցագործության կանխման, բացահայտման հանրային շահի հարաբերակցության գնահատումը: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը պետք է լինի առավել ծանրակշիռ և գերակայի այլ անձի իրավունքների նկատմամբ օրենքով կանոնակարգված ընթացակարգերի կիրառմամբ միջամտություն իրականացնելու անհրաժեշտությանը:

Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք ընտրված միջոցը՝ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը, արդարացված էր սպառնացող վտանգի բնույթին և հետևանքներին համապատասխան այն կանխելու, չեզոքացնելու կամ բացահայտելու համար ու ունե՞ր ծանրակշիռ արդարացում (“*weighty justification*”): Այս առումով հատկանշական կարող են լինել անձի կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգի, ահաբեկչության, շորթման, պատանդ վերցնելու, խոշտանգման, թրաֆիքինգի կամ դրանց համարժեք հանրային վտանգավորություն ներկայացնող այլ ռեպրերում հեռախոսային խոսակցության ձայնագրման միջոցով մասնավոր անձի կողմից իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացումը:

Միաժամանակ, մրցակցող շահերի միջև հարաբերակցությունը գնահատելիս, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում նաև այն, թե արդյո՞ք գործի փաստական հանգամանքների համատեքստում ողջամտորեն բացակայել են այլընտրանքային՝ անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտության միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունները:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ լիարժեք մասնավորության լեգիտիմ ակնկալիքի դեպքում, երբ խոսակցությունն առնչվում է խորապես անձնական բնույթ կրող տեղեկություններին (օրինակ՝ ինտիմ բնույթի), պաշտպանվող հանրային շահի կշիռը պետք է լինի առավել բարձր՝ արդարացնելով որպես իրավական պաշտպանության վերջին միջոց (*last resort*) հեռախոսային խոսակցության ձայնագրառումը,

- **հեռախոսային խոսակցության ձայնագրուման շարժառիթները.**

Այս առումով կարևոր նշանակություն ունի հեռախոսային խոսակցության ձայնագրառման դրդապատճառների ուսումնասիրությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է որոշել, թե արդյո՞ք անձը հեռախոսային խոսակցությունը ձայնագրելիս գործել է բարեխղճորեն, թե չարամիտ դիտավորությամբ: Որպես այդպիսին, դրանք ենթակա են գնահատման ըստ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների՝ համակողմանի

և օբյեկտիվ ուսումնասիրման ենթարկելով ձայնագրատողի վարքագիծը: Չարամիտ դիտավորության մասին կարող է վկայել այն, որ անձը հեռախոսային խոսակցության ձայնագրատումը կանխամտածված կատարած լինի խաբեության կամ հաղորդակցվողի վստահությունը չարաշահելու միջոցով՝ ներկայացնելով խոսակցության հիմնական բովանդակությունից կտրված, օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրող տեղեկատվություն: Ձայնագրատողը չպետք է նպաստած լինի հեռախոսային խոսակցության բովանդակության ձևավորմանը՝ սադրելով, դրդելով այլ անձի՝ իր համար «բարենպաստ» տեղեկատվություն հայտնել: Միաժամանակ, ներկայացված ձայնագրատման ամբողջականության այնպիսի խախտումը, մոնտաժումը կամ փոփոխությունը, որը ողջամտորեն կարող է խեղաթյուրել խոսակցության բովանդակությունը, ևս կարող է վկայել ձայնագրատողի չարամիտ դիտավորության մասին,

- **հեռախոսային խոսակցության ձայնագրատման սուբյեկտը.**

Ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը գնահատելիս իրավակիրառողները պետք է ուշադրություն դարձնեն նաև այն հանգամանքին, թե ում կողմից է այն կատարվել՝ հեռախոսային խոսակցության անմիջական մասնակցի, թե երրորդ անձի: Վերջին դեպքում որպես բացառիկ միջոց հեռախոսային խոսակցության ձայնագրատումը կարող է արդարացվել հանրային շահի, իրավական պաշտպանության առարկայի կարևորությամբ,

- **հեռախոսային խոսակցության ձայնագրատումը քրեական վարույթի ընթացքում.**

Մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրատումը որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը որոշելիս էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե ձայնագրությունն իրականացվել է մինչև քրեական վարույթի սկսվելը, թե դրանից հետո: Գործող քրեադատավարական մոդելի պայմաններում քրեական վարույթով ապացույցների հավաքման ծանրակշիռ դերը վերապահված է քրեական հետապնդման մարմիններին, ովքեր, օժտված լինելով համապատասխան քրեադատավարական գործիքակազմով և պետաիշխանական լիազորություններով, իրավասու են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով սահմանավակել անձի հաղորդակցության գաղտնիության իրավունքը: Ուստի, հեռախոսային խոսակցության ձայնագրատումը չպետք է կրի անձի մեղադրանքը հիմնավորելու համար քրեական վարույթին զուգահեռ գործով ապացույց ձեռքբերելու դատավարական նպատակ: Նշվածը գնահատելիս էական նշանակություն կարող է ունենալ նաև ձայնագրատողի հնարավոր նախաձեռնողականության դրսևորումը: Մասնավորապես, պետք է պարզվի, թե արդյո՞ք խոսակցությունը կայացել է ձայնագրատողի ակտիվ, նախապես ծրագրված գործողությունների

արդյունքում, թե նվազագույն ողջամիտ ջանքերի գործադրմամբ:

Միաժամանակ, քրեական վարույթի ընթացքում կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունն օգտագործելու հնարավորությունը որոշելիս, մրցակցող շահերի տեսանկյունից, կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև ձայնագրատողի իրավունքների նկատմամբ իրականացվող ոտնձգության շարունակականության գնահատումը:

18.2 Արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը հեռախոսային խոսակցության ձայնագրատումը որպես ապացույց օգտագործելիս.

Հեռախոսային խոսակցության ձայնագրատումը քրեական դատավարությունում որպես ապացույց օգտագործելիս Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում նաև հաղորդակցության գաղտնիության իրավունքը կրողի արդար դատաքննության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը: Մասնավորապես, հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես անձի մեղադրանքը հիմնավորող ապացույց օգտագործելու դեպքում, վերջինիս համար պետք է երաշխավորված լինի այդ ձայնագրության բովանդակությունը, դրա իսկությունը մրցակցային դատավարության պայմաններում վիճարկելու, ձայնագրատողին հակընդեմ հարցման ենթարկելու հնարավորությունը:

Ավելին, սույն որոշման 17.1-րդ կետում մեջբերված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյո՞ք հեռախոսային խոսակցության ձայնագրությունն անձի մեղադրանքը հիմնավորող միակ կամ վճռորոշ ապացույցն է, թե ոչ¹: Այլ կերպ, քրեական վարույթի ընդհանուր առմամբ արդարացիությունը գնահատելու համար առանցքային նշանակություն ունի այն, թե գործով ձևավորված ապացուցողական գամբյուղում առկա այլ ապացույցներով արդյո՞ք հնարավոր է ստուգել հեռախոսային խոսակցության բովանդակությունը:

19. Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունը գնահատելիս՝ պետք է հաշվի առնվեն ձայնագրության կատարման օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները, մասնավորապես այն, թե՝

¹ Այս առումով կիրառելի է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետով սահմանված՝ միակ կամ վճռորոշ ապացույցի որոշման կանոնը, որի մասին մանրամասն տե՛ս *Արյուշ Դուլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏՂ2/0037/01/15 որոշման 17.1-րդ կետը:

- արդյոք ձայնագրությունը կատարվել է քրեական հետապնդման մարմինների իրազեկվածությամբ, տրամադրված տեխնիկական միջոցներով, պաշտոնական քննության շրջանակներում,

- անձը, ում հետ ունեցած հեռախոսային խոսակցությունը ձայնագրավել է, ողջամտորեն ունենալ կամ կարող էր ունենալ իր մասնավոր կյանքի գաղտնիության լեզիտիմ ակնկալիք,

- արդյոք հեռախոսային խոսակցության ձայնագրումամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացվել է միջամտություն,

- հեռախոսային խոսակցության ձայնագրումամբ անձի որ իրավունքների նկատմամբ է իրականացվել միջամտություն,

- արդյոք ձայնագրուման կատարումը հետապնդել է իրավաչափ նպատակ,

- արդյոք հետապնդվող նպատակը եղել է առավել ծանրակշիռ և գերակայել է արդյոք անձի իրավունքների նկատմամբ օրենքով կանոնակարգված ընթացակարգերի կիրառմամբ միջամտություն իրականացնելու անհրաժեշտությանը,

- արդյոք բացակայել է այլընտրանքային՝ անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտության միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակին հասնելու հնարավորությունը,

- արդյոք անձը գործել է բարեխղճորեն, թե չարամիտ դիտավորությամբ,

- արդյոք ձայնագրումը կատարվել է հեռախոսային խոսակցության անմիջական մասնակցի, թե երրորդ անձի կողմից,

- արդյոք ձայնագրումը կատարվել է մինչև քրեական վարույթ սկսելը, թե դրանից հետո:

Միաժամանակ, քրեական վարույթի ընդհանուր առմամբ արդարացիությունը գնահատելու առումով պետք է հաշվի առնվի այն, թե՛

- արդյոք ամբաստանյալը հնարավորություն է ունեցել մրցակցային դատավարության պայմաններում վիճարկելու հեռախոսային խոսակցության ձայնագրության բովանդակությունը, դրա իսկությունը և հարցման ենթարկելու ձայնագրառողին,

- արդյոք ձայնագրությունն անձի մեղավորությունը ենթադրյալ հանցանքի կատարման մեջ հիմնավորող միակ կամ վճռորոշ ապացույցն է, թե դրա բովանդակությունը կարելի է նաև հաստատել ապացուցողական գամբյուղում ներառված այլ ապացույցներով:

Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մասնավոր անձի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրումը կարող է ճանաչվել որպես ապացույց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթուղթ, և ենթարկվել իրավական գնահատման՝ ըստ անհրաժեշտության նաև

հիմք հանդիսանալով քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման համար:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճռով Վ.Մխիթարյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ, ի թիվս այլնի, հիմքում դրել է նաև տուժողի կողմից ամբաստանյալի հետ ունեցած հաղորդակցության ձայնագրառումը պարունակող և որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված սկավառակի գնության արձանագրությունը¹,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ փաստել է, որ քրեական գործի նյութերում առկա՝ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված սկավառակի գնության արձանագրության համաձայն՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Վ.Մխիթարյանը զանգահարել է Լ.Վիրաբյանին և երեխային տեսակցելն արգելելու պատճառով մի քանի անգամ սպանության սպառնալիքներ տվել նրան և մորը: Լ.Վիրաբյանը ձայնագրառել է խոսակցությունը հեռախոսով, որի մասին Վ.Մխիթարյանին չի տեղեկացրել: Այնուհետև հեռախոսը, որում առկա է եղել այդ ձայնագրառումը, ներկայացրել է հետաքննիչին, ով այն տեղափոխել է սկավառակի վրա, փաթեթավորել, կնիքել և կցել է առարկա ներկայացնելու և վերցնելու մասին արձանագրությանը: Այնուհետև, քրեական գործ հարուցելուց հետո, քննիչը գնել է սկավառակը, կազմել է գնության մասին արձանագրություն, վերջինը որպես այլ փաստաթուղթ ճանաչելով ապացույց՝ դրել է մեղադրական եզրակացության հիմքում: Նշվածի պայմաններում Վերաքննիչ դատարանը Վ.Մխիթարյանին արդարացրել է մեղսագրված արարքում գտնելով, որ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված սկավառակի գնության արձանագրությունն անթույլատրելի ապացույց է, քանի որ հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կատարվել է օրենքի խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից, ինչը խախտել է Վ.Մխիթարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը: Վերաքննիչ դատարանը հեռախոսային խոսակցության ձայնագրառման սկավառակը գնելու մասին արձանագրությունը դիտարկել է որպես անթույլատրելի ապացույց՝ «թունավոր ծառի պտուղների» տեսության համաձայն և հանել մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շարքից: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործով ձեռքբերված ապացույցները բավարար չեն հանգելու այն հետևության, որ հանցագործության դեպք տեղի է ունեցել²:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 18-18.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժող Լ.Վ.Խրաբյանի կողմից ամբաստանյալ Վ.Մխիթարյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրառումը ոչ իրավաչափ չէր կարող ճանաչվել միայն այն պատճառով, որ կատարվել էր մասնավոր անձի կողմից:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով տուժող Լ.Վ.Խրաբյանի կողմից ամբաստանյալ Վ.Մխիթարյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչված չի եղել: Մասնավորապես, քննիչը զննել է հեռախոսային խոսակցության ձայնագրությունը պարունակող սկավառակը, կազմել համապատասխան արձանագրություն, որը որպես այլ փաստաթուղթ ճանաչելով ապացույց՝ դրել է մեղադրական եզրակացության հիմքում: Մինչդեռ, զննության արձանագրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ ինքնուրույն ապացույցի տեսակ է, որը սույն գործով այլ փաստաթուղթ չպետք է ճանաչվեր: Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով *Ալեքսեյ Մկրտչյանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումը, փաստում է, որ այլ փաստաթղթին ապացույցի կարգավիճակ ձեռք բերելու համար որևէ քննչական գործողության կատարում չի պահանջվում. անհրաժեշտ է կոնկրետ փաստաթուղթն ապացույց ճանաչելու և գործի նյութերին կցելու մասին որոշման ընդունում¹:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տուժող Լ.Վ.Խրաբյանի կողմից ամբաստանյալ Վ.Մխիթարյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրությունը, սույն որոշմամբ սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում, կարող էր ճանաչվել որպես այլ փաստաթուղթ և ենթարկվել իրավական գնահատականի՝ գործով ձեռքբերված այլ ապացույցների հետ համակցության մեջ: Ընդ որում, հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի կողմից նշված՝ անձի հեռախոսային խոսակցությունների գաղտնիության սահմանափակման չափանիշները՝ օրենքով սահմանված դեպքերում, օրենքով սահմանված կարգով և դատարանի որոշմամբ իրականացնելու վերաբերյալ, ենթակա են վերագրման միայն պետական իշխանության մարմիններին, ուստի դրանք չէին կարող կիրառվել մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության իրավաչափությունը գնահատելիս:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող Լ.Վ.Խրաբյանի կողմից ամբաստանյալ Վ.Մխիթարյանի հետ ունեցած

¹ Տե՛ս *Ալեքսեյ Մկրտչյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ՎԲ-01/09 որոշումը, կետ 27:

հետախուսային խոսակցության ձայնագրառման լազերային սկավառակի գննության արձանագրությունը Վերաքննիչ դատարանի կողմից անթույլատրելի սպացույց ճանաչելն այն պատճառաբանությամբ, որ ձայնագրությունը կատարվել է օրենքի խախտմամբ, առանց դատարանի թույլտվության, ոչ իրավասու անձի կողմից, հիմնավոր չէ:

II. Սպանության սպառնալիքը.

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. Վ.Մխիթարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը հաստատելիս արդյո՞ք Վերաքննիչ դատարանը լիարժեք իրավական գնահատականի է արժանացրել ենթադրյալ հանցանքի կատարման օբյեկտիվ իրադրությունը:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սպանության (...) սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վրանգ է եղել (...)*»:

24. Մեկնաբանելով վերը վկայակոչված հանցակազմի դիսպոզիցիան՝ Վճռաբեկ դատարանը *Վլադիկ Խաչատրյանի* գործով որոշմամբ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Քննարկվող հանցակազմի պարտադիր հարկանիշներից են սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հարակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պարճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պարճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում, սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի:*

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը քավարար հիմքեր է ունենում վահենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պարճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի

վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հեղափոխությունների իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով (...):»¹:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Վ.Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա կնոջ՝ Լ.Վիրաբյանի հետ ունենալով թշնամական հարաբերություններ, 2017 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:15-ի սահմաններում, զանգահարել է նրան և իրենց երեխային մշտապես տեսակցելն արգելելու և այդ հարցը դատական կարգով լուծելու առաջարկից զայրացած՝ սպառնացել է նույն օրը «խփել»՝ սպանել Լ.Վիրաբյանին, իսկ հաջորդ օրը՝ Վանաձոր քաղաքի հրապարակում, կտրել մոր՝ Ս.Մարգարյանի կոկորդը՝ սպանել նաև նրան: 2017 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, երբ Վ.Մխիթարյանը ժամանել է Լ.Վիրաբյանի բնակության վայր և սկսել թակել դուռն ու պահանջել բացել այն՝ ստեղծելով սպառնալիքներն իրականացնելու իրական վտանգ, այդ սպառնալիքները՝ կապված վերոգրյալ հանգամանքների հետ, Լ.Վիրաբյանի մոտ ընկալվել են իրական՝ առաջացրել վախ, տագնապ, իր անվտանգության համար անհանգստության զգացում և նա ահազանգել է ոստիկանություն, որից հետո Վ.Մխիթարյանը դադարեցրել է իր գործողությունները²,

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի փետրվարի 21-ի դատավճռով Վ.Մխիթարյանին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում³,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մայիսի 23-ի որոշմամբ Վ.Մխիթարյանին առաջադրված մեղադրանքում ճանաչել է անմեղ՝ հանցակազմի բացակայության հիմքով: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ տվյալ դեպքում օբյեկտիվ հիմքեր չկան ամբաստանյալ Վ.Մխիթարյանի կողմից հեռախոսով, Արևաշող գյուղից Վանաձոր քաղաքում գտնվող նախկին կնոջ և զոքանչի հասցեին հնչեցրած սպանության սպառնալիքներն իրական գնահատելու համար, տուժողը ամբաստանյալի հետ ունեցած բացասական հարաբերությունների, այդ հարաբերությունների ֆոնի վրա ձևավորված իր հոգեկան լարված վիճակի պատճառով իրականությունը խեղաթյուրված է ընկալել, կարծիք հայտնելով, թե սպառնալիքն իրական է եղել: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման հանգելիս հաշվի է առել սպառնալիքի բովանդա-

¹ Տե՛ս՝ *Վլադիկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԳ-1/0025/01/11 որոշումը, կետ 18:

² Տե՛ս՝ սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս՝ սույն որոշման 7-րդ կետը:

կույթունը՝ «կխփեմ կսպանեմ», շարժառիթը՝ երեխային տեսակցելն արգելելը, սպառնալիք տալու եղանակը՝ հեռախոսով, հանցավորի և տուժողի միջև առկա հարաբերությունների բնույթը: Արդյունքում, դատարանը գտել է, որ ամբաստանյալ Վ.Մխիթարյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը, ուստի՝ հանցակազմը¹:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 23-րդ կետում վկայակոչված իրավադրույթի և 24-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Վ.Մխիթարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը, լիարժեք իրավական գնահատականի չի ենթարկել մի շարք փաստական հանգամանքներ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը Վ.Մխիթարյանի կողմից հնչեցված սպառնալիքների իրական լինելը գնահատելիս՝ իրավական վերլուծության է ենթարկել միայն հեռախոսային խոսակցության բովանդակությունը: Այսպես, Վերաքննիչ դատարանն ուշադրության է արժանացրել միայն սպառնալիքների բովանդակությունը, դրանց հնչեցման եղանակը, շարժառիթը և տուժողի հետ ամբաստանյալի ունեցած հարաբերությունների բնույթը: Մինչդեռ, դատարանն իրավական գնահատականի չի ենթարկել հեռախոսային խոսակցությանը հաջորդող իրադարձությունները, այն, որ հաջորդ օրը՝ 2017 թվականի նոյեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, Վ.Մխիթարյանը ժամանել է Լ.Վիրաբյանի բնակության վայր և սկսել թակել դուռն ու պահանջել բացել այն: Բացի այդ, ըստ առաջադրված մեղադրանքի՝ Վ.Մխիթարյանը ստեղծել է սպառնալիքներն իրականացնելու իրական վտանգ, այդ սպառնալիքները տուժողի մոտ ընկալվել են իրական՝ առաջացրել վախ, տագնապ, իր անվտանգության համար անհանգստության զգացում: Նշվածը ներառված էր ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալում և կարող էր ունենալ էական նշանակություն սպառնալիքների իրական լինելը գնահատելու հարցում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Մխիթարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը հաստատելիս Վերաքննիչ դատարանը լիարժեք իրավական գնահատականի չի արժանացրել ենթադրյալ հանցանքի կատարման օբյեկտիվ իրադրությունը:

27. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով թույլ են տրվել քրեադատավարական օրենքի

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է սույն որոշմամբ սահմանված չափանիշների լույսի ներքո որոշի հեռախոսային խոսակցության ձայնագրառումը որպես ապացույց օգտագործելու հնարավորության հարցը, ինչպես նաև գործով ձեռքբերված ապացույցների բավարարությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի օբյեկտիվ կողմի առկայությունը ոչ միայն հեռախոսային խոսակցության բովանդակության, այլ նաև դրան հաջորդող իրադարձությունների տեսանկյունից, որոնք իրավական վերլուծության չեն ենթարկվել Վերաքննիչ դատարանի կողմից՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը հաստատված համարելիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Վահիկ Սամվելի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Վահիկ Սամվելի Մխիթարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել ստորագրությունը չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴԻ/0001/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ՍՐՔՈՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ դիմող Հուսիկ Միհրանի Սրբոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի հետաքննիչ Պ.Քոչարյանի՝ 2015 թվականի մարտի 27-ի որոշմամբ մերժվել է Հուսիկ Սրբոյանի դիմումի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը:

Գեղարքունիքի մարզի դատախազի՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ Հ.Սրբոյանի բողոքը մերժվել է:

2. Դիմող Հ.Սրբոյանի բողոքի քննության արդյունքում Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 19-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. Դիմողի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ թողել է առանց քննության՝ վերաքննիչ բողոքի բովանդակու-

թյանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Հ.Սրբոյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ դիմողի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վերաքննիչ դատարանը, 2018 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ առանց քննության թողնելով դիմող Հ.Սրբոյանի վերաքննիչ բողոքը, հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածին՝ նշելով, որ. «(...) [բողոքում] բողոքաբերն ընդամենը նշել է, որ համաձայն չէ դատարանի որոշման հետ, վերաքննիչ բողոքի որևէ հիմք և պահանջ չի ներկայացրել, դիմում-բողոքը կազմված է կցկտուր, հայհոյախառն արտահայտություններով լի անորոշ, բովանդակազուրկ նախադասություններից»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Դիմող Հ.Սրբոյանի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ, 7-րդ, 17-րդ, 27-րդ, 380.1-րդ, 386-րդ և 393-րդ հոդվածների պահանջները՝ կայացնելով անհիմն և չպատճառաբանված դատական ակտ:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ իր կողմից բերված վերաքննիչ բողոքում հիմնավորվել է Առաջին ատյանի դատարանի կողմից գործի ելքի վրա ազդած դատավարական իրավունքի խախտման հանգամանքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստել է, որ իր կողմից բողոքը հիմնավորող փաստական տվյալներ են ներկայացվել, որոնք անտեսվել են թե՛ հետաքննության մարմնի, թե՛ դատարանի կողմից:

7. Ամփոփելով վերոգրյալը՝ դիմող Հ.Սրբոյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավա-

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 78-80

կան հարցը հետևյալն է. վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջները չպահպանելու պատճառաբանությամբ բողոքն առանց քննության թողնելն արդյո՞ք հանցեցրել է դիմող Հ.Սրբոյանի դատական մատչելիության իրավունքի խախտման:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անսաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկախ ու անսաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝ (...)

5) բողոքի հիմքերը և պահանջը (...):»:

10. Արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով¹,

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը²,

- դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն³,

¹ Տե՛ս *Luordo v. Italy* գործով 2003 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս *Khalfaoui v. France* գործով 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ:

- ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա¹: Դատական մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի²:

11. Արդար դատաքննության իրավունքի համատեքստում կարևորելով դատարանի մատչելիության իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ «Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պարզաբանային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատարանի պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկասի և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»³:

12. Սահմանադրական դատարանը, 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշմամբ փաստել է. «(...) [վերաքննիչ բողոքում հայտնաբերված թերությունների կամ սխալների նկատմամբ պետք է դրսևորվի փարբերակված մոտեցում, ինչի հետևանքով անհրաժեշտ կլինի նաև սահմանազարել դրանցից հետևող հնարավոր իրավական հետևանքները: Եթե ձևական պահանջների խախտման դեպքում չափազանց խիստ հետևանքներ նախատեսելը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը, ապա բովանդակային պահանջների խախտման հանդեպ անսահմանափ մեղմ գնահատականը կարող է այդ իրավունքի չարաշահման նախադրյալներ ստեղծել:

¹ Տե՛ս *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

² Տե՛ս *Efstathiou and others v. Greece* գործով 2006 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, 16-րդ կետ, *Լևոն Հարությունյանի* գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը, 13-րդ կետ:

(...)

Այսպիսով, եթե վերաքննիչ բողոք ներկայացրել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է (բացակայում է այն վերականգնելու հիմնավոր որևէ պարճատ), կամ այն բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման և անման այլ այնպիսի հիմքերի առկայությամբ, երբ անձը վերաքննիչ դատարանի գնահատմամբ փաստի ուժով, իրավական տեսանկյունից օբյեկտիվորեն անկարող է իրացնել դատական բողոքարկման իր իրավունքը, ապա վերջինիս իրացման արգելքը, ինչը նախատեսված է [ՀՀ քրեական դատավարության] [օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում, իրավական պարզաճ գործընթացի արդյունքում կարող է գնահատվել իրավաչափ: Մինչդեռ, վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող բնույթով ձևական որևէ նախապայմանի խախտման հիմքով, երբ առկա է այն շրջելու իրավական ողջամիտ հնարավորություն, անձին Սահմանադրությամբ երաշխավորված դատական բողոքարկման իր իրավունքի իրացումից զրկելը, սահմանափակելը, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, չի կարող բխել մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման և իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներից, ինչպես նաև այդ բնագավառում հանրային իշխանությանն առաջադրված սահմանադրաիրավական նպատակներից: Հերևարար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավակարգավորմամբ նախատեսված ձևական պահանջների չպահպանման հիմքով, սահմանափակելով անձի հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, այդ թվում՝ արդարադատության մատչելիության իրավունքը, խախտվել է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքը: Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից այդ իրավակարգավորումը չի համապատասխանում իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացման ընթացակարգի չափանիշներին:

(...)»¹:

12.1. Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, (...), վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության» դրույթն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ բողոքին ներկայաց-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՈ-1420 որոշման 4.3-4.5-րդ կետերը:

վող ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապատասխանության դեպքում բողոքներ կայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 69-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին:

12.2. Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի վիճարկվող դրույթը ճանաչելով ՀՀ Սահմանադրությանը հակասող, դրա ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 1-ը՝ ընդգծելով, որ պետք է հաշվի առնվի իր կողմից կայացված որոշման հրապարակման դրությամբ և մինչև համապատասխան օրենսդրական կարգավորումն ընկած ժամանակահատվածում անձանց՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բողոքարկման իրենց իրավունքի իրացման երաշխավորման անհրաժեշտությունը¹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 19-ի որոշման դեմ դիմող Հ.Սրբոյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ վերաքննիչ բողոքի հիմքերի ու պահանջի բացակայության, ինչպես նաև ոչ պատշաճ արտահայտություններ պարունակելու հիմքով²:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-12.2-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող ձևական պահանջները շտկելու ողջամիտ հնարավորության առկայության պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելը հիմնավոր չէ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջները չպահպանելու պատճառաբանությամբ բողոքն առանց քննության թողնելը հանգեցրել է դիմող Հ.Սրբոյանի դատական մատչելիության իրավունքի խախտման:

15. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի որոշումը պետք է րեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ՍԴՌ-1420 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Հուսիկ Միհրանի Մրքոյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ2/0083/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատրահագ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գրիգոր Հրայրյայի Ծատուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2-րդ սպայական գումարտակի 4-րդ սպայական վաշտի տեսուչի՝ 2017 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ դիմում-բողոքի բացակայության հիմքով:

Տավուշի մարզի դատախազության դատախազ Գ.Աղայանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին վերոնշյալ որոշումը վերացվել է, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 56200117 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Գրիգոր Ծատուրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 5-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Ծատուրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ ավտոտրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նրա նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն դատական ակտով տուժողի օրինական ներկայացուցիչ Իշխան Խաչատրյանի կողմից քաղաքացիական հայցի պահանջ չներկայացնելու պատճառով տվյալ հարցը համարվել է լուծված: Բացի այդ, վճռվել է դատական ծախսերի բռնագանձման վերաբերյալ պատշաճ կարգով քաղաքացիական հայցի պահանջ չներկայացվելու պատճառով տվյալ հարցը թողնել առանց քննության:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրող Գ.Ադայանը՝ միջնորդելով դատական ծախսերի մասով բեկանել, փոփոխել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 05-ի դատավճիռը և ամբաստանյալ Գ.Ծատուրյանից որպես դատական ծախսեր բռնագանձել քննության ընթացքում նշանակված դատաբժշկական և դատաավտոտեխնիկական փորձաքննությունների համար ծախսված փորձագետների վարձատրությունը կազմող ընդհանուր՝ 102.960 ՀՀ դրամ գումարը:

3.1. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մարտի 28-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 5-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի տեղեկանքի համաձայն՝ «(...) [Մույն] քրեական գործով թիվ 72/Հ, թիվ 73/Հ, թիվ 143/ամբ, թիվ 144/ամբ, թիվ 145/ամբ և թիվ 146/ամբ եզրակացությունների դատաբժշկական փորձաքննություններն իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ ԱԵ «դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված պետական պարվերի պայմանագրով իրականացվող աշխատանքների շրջանակներում:

72/Հ եզրակացություն – 8.000 (ութ) հազար դրամ,
73/Հ եզրակացություն – 8.000 (ութ) հազար դրամ,
143/ամբ եզրակացություն - 8.000 (ութ) հազար դրամ,
144/ամբ եզրակացություն - 8.000 (ութ) հազար դրամ,
145/ամբ եզրակացություն - 8.000 (ութ) հազար դրամ,
146/ամբ եզրակացություն - 8.000 (ութ) հազար դրամ»¹:

6. Դատաավտոտեխնիկական փորձաքննության եզրակացության՝ 2017 թվականի դեկտեմբերի 12-ի հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների և տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հետազոտությունների համար վճարման ենթակա գումարը կազմում է 54.960 ՀՀ դրամ²:

6.1 Մեղադրական եզրակացությանը կից տեղեկանքի համաձայն՝ «(...) Դատաբժշկական փորձաքննությունների համար ծախսվել է ընդհանուրը՝ 36.000 ՀՀ դրամ, դատաավտոտեխնիկական փորձաքննության համար՝ 54.960 ՀՀ դրամ (...)»³:

7. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի փետրվարի 5-ի դատավճռում արձանագրել է. «(...) Տուժողի օրինական ներկայացուցչի կողմից քաղաքացիական հայցի պահանջ չներկայացվելու պարճառով րվյալ հարցը պետք է համարել լուծված: Մեղադրողի միջնորդությամբ նշված՝ դատական ծախսերի բռնագանձման վերաբերյալ, պարշաճ կարգով քաղաքացիական հայցի պահանջ չներկայացվելու պարճառով րվյալ հարցը պետք է թողնել առանց քննության (...)»⁴:

8. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մարտի 28-ի որոշմամբ փաստել է. «(...) Մույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ այդ առնչությամբ գործում առկա փաստական րվյալներում (12.12.17թ. թվագրմամբ հանձնման-ընդունման արձանագրություն, 08.12.2017թ. թվագրմամբ տեղեկանք) տեղ գրած տեղեկություններն իրենց

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 138:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 146:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 194:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 40-41:

համադրությամբ ինքնին բավարար դիտարկվել չեն կարող դատական ծախսերի հարցը կոնկրետ դեպքում, փորձագետների վարձատրության գումարների չափը գնահատելու և այդ առնչությամբ հիմնավոր հետևության հանգելու համար:

Վերևաբար, այդ առնչությամբ մեղադրողի վերաքննիչ բողոքում բերված պարճառաբանությունները, քննարկվող դեպքում, բավարար չափով փաստարկված չեն և այն այդ առնչությամբ բավարարելու առումով որևէ իրավական հետևանք առաջացնել չեն կարող (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը գտել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերը օրինական և հիմնավորված չեն, ուստի ենթակա են բեկանման:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է քրեական պատասխանատվության ընթացքում կատարվող ծախսերի՝ նյութական կորուստների շրջանակ, որոնք կարող են գանձվել հանցագործության համար մեղավոր ճանաչված անձից: Այդ ծախսերի շարքին են դասվում փորձագետի վարձատրության ծախսերը: Մինչդեռ դատարանները, չտարբերակելով քաղաքացիական հայցի և դատական ծախսերի բաշխման հարցերի լուծման դատավարական ընթացակարգերը, չհետևելով քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկայի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին՝ հանգել են սխալ հետևության:

11. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն՝ Գ.Ծատուրյանից դատական ծախսերը չբռնագանձելու մասով, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 5-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի գանձման դատավարական կարգի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 30:

ունենալ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք դատական ծախսերի գանձումը մեղադրողի կողմից քաղաքացիական հայցի ներկայացմամբ պայմանավորելու մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Վերաքննիչ դատարանի կողմից օրինական ուժի մեջ թողնելը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն՝ **«Դատախազը հարուցում և պաշտպանում է հարուցված քաղաքացիական հայցը, եթե խախտվել են պետության գույքային շահերը»:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ **«Դատական ծախսերը բաղկացած են՝ (...) փորձագետի (...) վարձարարության գումարներից»:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի համաձայն՝ **«1.Սույն օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում թվարկված դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա:**

2. Դատարանն իրավունք ունի դատապարտյալին լրիվ կամ մասնակի ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց, եթե դատապարտյալն անվճարունակ է, կամ գումարի գանձումը կարող է էապես ազդել դատապարտյալի խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա:

3. Քրեական գործով մի քանի անձ դատապարտվելիս դատական ծախսերը գանձվում է նրանցից յուրաքանչյուրից՝ ըստ դատարանի կողմից որոշված բաժնի՝ հաշվի առնելով այդ անձանց մեղավորության, նրանց նշանակված պարտի խարտության աստիճանը և յուրաքանչյուրի գույքային դրությունը (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«(...) Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաշորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝**

(...)

10) քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պարճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հարուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել.

(...)

14) ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը.

(...):»:

15. Դատական ծախսերն այն նյութական ռեսուրսներն են, որոնք օգտագործվում են գործի պատշաճ քննությունն ապահովելու և/կամ

տուժողի խախտված իրավունքները վերականգնելու համար: Մասնավորապես, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտությամբ գործին ներգրավված մասնագետի, թարգմանչի, փորձագետի մատուցած ծառայությունների և այլ միջոցառումների իրականացման համար ծախսված գումարները քրեական դատավարությունում ներառված են դատական ծախսերի մեջ: Մինևույն ժամանակ, օրենսդիրը դատական ծախսերի շարքին է դասել նաև տուժողին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման գումարները՝ որպես վերջինիս խախտված իրավունքների վերականգնման միջոց:

Սակայն քրեական դատավարությունում վերոնշյալ դատական ծախսերի գանձման կառուցակարգերը չեն նույնանում: Այսպես, եթե տուժողին պատճառված վնասի հատուցման վերականգնումը որպես կանոն պայմանավորվում է նրա կողմից քաղաքացիական հայցի ներկայացման հետ, ապա մյուս դատական ծախսերի դեպքում օրենսդիրն այդպիսի պահանջ չի նախատեսել: Մասնավորապես, եթե հանցագործության հետևանքով տուժողին անմիջականորեն պատճառված վնասը հատուցվում է վերջինիս կողմից ներկայացված քաղաքացիական հայցի քննության արդյունքում, ապա գործի քննության համար ծախսված նյութական միջոցները հատուցվում են ամբաստանյալի կողմից առանց այդպիսի ընթացակարգի, դատարանի կողմից *proprio motu* (սեփական նախաձեռնությամբ): Վերջինս բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասից, որտեղ մի կողմից դատական ծախսերի լուծման հարցը տարանջատված է քաղաքացիական հայցի լուծման հարցից և ձևակերպված է առանձին կետով, մյուս կողմից դատական ծախսերի լուծումը պայմանավորված չէ դատավարության մասնակցի կողմից դրանց գանձման վերաբերյալ ներկայացվող պահանջով: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-169-րդ հոդվածներում օրենսդրի կողմից օգտագործվող «դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա», «դատարանն իրավունք ունի (...) ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց», «դատական ծախսերը գանձվում է (...) ըստ դատարանի կողմից որոշված բաժնի» ձևակերպումները ևս վկայում են այն մասին, որ դատարանի կողմից դատական ծախսերի գանձման վերաբերյալ հարցը լուծվում է *proprio motu*՝ առանց քաղաքացիական հայցի ներկայացման:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ դատական ծախսերի գումարը չի կարող հանդիսանալ քաղաքացիական հայցի առարկա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան է կազմում հանցագործության հետևանքով անմիջա-

կանորեն պատճառված վնասը¹: Մինչդեռ, դատական ծախսերի գումարը չի հանդիսանում հանցագործության հետևանքով անմիջականորեն պատճառված վնաս: Դատական ծախսերն առաջանում են քրեական գործի հարուցման և քննության, այլ ոչ թե հանցագործության կատարման արդյունքում: Ուստի, դատական ծախսերի գումարը չի կարող ներառվել քրեական դատավարությունում քննվող քաղաքացիական հայցի առարկայի մեջ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտ կայացնելիս դատարանը սեփական նախաձեռնությամբ որոշում է, թե ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը՝ առանց այն պայմանավորելու մեղադրողի կողմից քաղաքացիական հայցի ներկայացման հետ:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- դատաբժշկական փորձաքննությունների իրականացման համար ծախսվել է ընդհանուր առմամբ՝ 48.000 ՀՀ դրամ գումար², իսկ դատաավտոտեխնիկական փորձաքննության համար՝ 54.960 ՀՀ դրամ գումար³:

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի փետրվարի 5-ի դատավճռում արձանագրել է, որ մեղադրողի միջնորդությամբ դատական ծախսերի բռնագանձման վերաբերյալ պատշաճ կարգով քաղաքացիական հայցի պահանջ չներկայացնելու պատճառով՝ տվյալ հարցը պետք է թողնել առանց քննության⁴,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մարտի 28-ի որոշմամբ մերժելով մեղադրողի բողոքը և օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ փաստել է, որ գործում առկա փաստական տվյալներում տեղ գտած տեղեկություններն իրենց համադրությամբ ինքնին բավարար դիտարկվել չեն կարող դատական ծախսերի հարցը կոնկրետ դեպքում, փորձագետների վարձատրության գումարների չափը գնահատելու և այդ առնչությամբ հիմնավոր հետևություն հանգելու համար⁵:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը դատավճիռ կայացնելիս պետք է սեփական նախաձեռնությամբ, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արկադի Վարդանյանի* գործով 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ՇԳ-2/0013/01/11 որոշման 14-15-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

հարցերի հաջորդականության, քննարկեր և որոշեր, թե ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը: Ընդ որում, նշված հարցը դատարանը պետք է որոշեր՝ հիմք ընդունելով քրեական գործի նյութերում պարունակվող համապատասխան փաստական տվյալները («Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ 2017 թվականի դեկտեմբերի 8-ի տեղեկանքը, դատաավտոտեխնիկական փորձաքննության եզրակացության 2017 թվականի դեկտեմբերի 12-ի հանձնման-ընդունման արձանագրությունը), որոնք բավարար էին դատական ծախսերի արժեքը հստակ պարզելու համար: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի դատողությունն այն մասին, թե գործում առկա փաստական տվյալներում տեղ գտած տեղեկություններն իրենց համադրությամբ բավարար չեն փորձագետների վարձատրության գումարների չափը գնահատելու և հիմնավոր հետևության հանգելու համար, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի գանձումը մեղադրողի կողմից քաղաքացիական հայցի ներկայացմամբ պայմանավորելու մասով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը Վերաքննիչ դատարանի կողմից օրինական ուժի մեջ թողնելն իրավաչափ չէ:

18. Անփոփոխելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ, 169-րդ հոդվածների և 360-րդ հոդվածի 1-ին մասի խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք է:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է որոշի, թե ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը: Մինչև սույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի նաև դատական ծախսերի ընդհանուր չափի վերաբերյալ մեղադրական եզրակացությանը կից տեղեկանքում նշված (ընդհանուր՝ 36.000 և 54.960 ՀՀ դրամ) գումարի չափի և գործի նյութերում պարունակվող փաստական տվյալներում նշված (ընդհանուր՝ 48.000 և 54.960 ՀՀ դրամ) գումարի չափի վերաբերյալ առկա անհամապատասխանությունը¹:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գրիգոր Հրաչյայի Ծատուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չիեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գրիգոր Հրաչյայի Ծատուրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Գրիգոր Հրաչյայի Ծատուրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴ/0020/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2019 թվականի ապրիլի 11-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Գրիգոր Արկաղայի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ դատապարտյալ Գ.Վարդանյանի պաշտպան Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 45150717 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 6-ի որոշմամբ Գրիգոր Արկաղայի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 11-ի որոշմամբ Գ.Վարդանյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով:

2017 թվականի մարտի 15-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության

ատաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 31-ի դատավճռով Գ.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ս.Համբարձումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի հունիսի 30-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման մասով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի մարտի 31-ի դատավճիռը բեկանել է և ամբաստանյալ Գ.Վարդանյանին թողել է կրելու պատիժ՝ ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելը մերժվել է:

Դատապարտյալ Գ.Վարդանյանի պաշտպան Լ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Գ.Վարդանյանի պաշտպան Լ.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ Լ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Դատապարտյալ Գ.Վարդանյանը 2017 թվականի մարտի 31-ի դատավճռով դատապարտվել է այն բանի համար, որ նա «(...) [Է]լեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ, պարբերաբար անատակաբար գործողություններ է կատարել իր համար ակնհայտ փասանվեց փարին չլրացած Էլեն Արամի Գրիգորյանի նկատմամբ:

Այսպես, Գրիգոր Վարդանյանն իր կողմից օգտագործվող «Ալկարել» մոդելի բջջային հեռախոսի միջոցով «Ֆեյսբուք» սոցիալական կայքում

սրերդեղով «Անի Գասպարյան» անվամբ անհատական էջ ծանոթացել է նույն կայքի օգտատերեր, Մեղրի քաղաքի անշահախառն բնակչուհի Էլեն Գրիգորյանի հետ և իր համար ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի սեռական բնագրը գրգռելու, նրա մոտ անստորջ սեռական հետաքրքրություն առաջացնելու դիրավորությամբ, վերջինիս ֆեյսբուքյան կայքի անհատական էջին 2017 թվականի փետրվարի 10-ին էլեկտրոնային ցանցի կիրառմամբ հաղորդագրություններ ուղարկելու միջոցով նրա հետ տարել է սեռական կյանքին վերաբերող լկտի գրույց, այնուհետև փետրվարի 13-ին նույն եղանակով Էլեն Գրիգորյանի անհատական էջին է ուղարկել պոռնկագրական բնույթի լուսանկար (...)¹:

7. Առաջին առյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշման համաձայն՝ «(...) [Կատարած արարքի նկարագրությունը] վկայում է Գրիգոր Վարդանյանի անձի և կատարած հանցագործության վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին, քանի որ այն կատարվել է անշահախառն անձի նկատմամբ, ուստի Դատարանը հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով օրինականության, հիմնավորվածության և արդարացիության հարկանիշներով, որոնց լույսի ներքո բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման ենթարկելով դատապարտյալի անձի վերաբերյալ տվյալները և նրա նկատմամբ հանրային աշխարանքներ պարժարեսակի կիրառման դեպքում պարժի նպատակների իրականացման հնարավորությունը, գտնում է, որ դատապարտյալի դիմումը ենթակա է մերժման»²:

8. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Գնահատելով դատապարտյալ Գրիգոր Վարդանյանի նկատմամբ ազարագրկման ձևով նշանակված պարիժը հանրային աշխարանքներ պարժարեսակով փոխարինելը մերժելու վերաբերյալ Դատարանի փաստարկներն ու պարժատարանությունները, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Դատարանը, մերժելով դատապարտյալի դիմումը, հանգել է ճիշտ հետևության:

Վերաքննիչ դատարանը նման հետևության է հանգում հաշվի առնելով դատապարտյալ Գ. Վարդանյանի կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանը, բնույթը, դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, պարժատված վնասը հարուցելու մասին պահանջի բացակայությունը կամ հարուցված լինելը, ինչպես նաև այլ հանգամանքներ, մասնավորապես այն, որ դատապարտյալ Գ. Վարդանյանն ոտնձգել է անձի սեռական անձեռնմխելիության իրավունքի դեմ, այն է՝ հանցագործությունը կատարել է իր համար ակնհայտ 16 տարին չլրացած երեխայի նկատմամբ, ինչը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 7:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 47:

կարող է խիստ բացասաբար անդրադառնալ վերջինիս հետագա կյանքի վրա՝ նրան մղելով սեռական այլասերվածության:

(...)

Ինչ վերաբերում է դատապարտյալ Գ.Վարդանյանի անձը բնութագրող տվյալներին և պարասիսանարվությունն ու պարիժը մեղմացող հանգամանքներին այն մասին, որ վերջինս նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, կատարած հանցագործության համար իրեն լիովին մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զղջացել է, բուժող կողմը վերջինիս նկատմամբ որևէ բողոք կամ պահանջ չի ներկայացրել, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոգրյալ հանգամանքերը սույն գործի շրջանակներում չեն նվազեցնում դատապարտյալի կողմից կատարած հանցանքի հանրային վրանգավորության աստիճանը, ուստի չեն կարող բավարար հիմք հանդիսանալ դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պարիժը հանրային աշխարհաբնույթ պարժարեսակով փոխարինելու համար:

(...)

Ինչ վերաբերում է պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկին այն մասին, որ դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ կիրառելի չեն 2017 թվականի մարտի 1-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-59-Ն օրենքի ուժի մեջ մտնելը ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3.1-րդ կետով սահմանված չափանիշները, քանի որ դատապարտյալը հանցանքը կատարել է 24.02.2017 թվականին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածը փոփոխվել է 21.03.2017 թվականին, հետևաբար դատապարտյալի նկատմամբ ենթակա է կիրառման մինչև ՀՕ-59-Ն օրենքի ուժի մեջ մտնելը ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառման կարգը, համաձայն որի՝ դատարանը դիմումը մերժում է, եթե չի պահպանվել այն ներկայացնելու սահմանված կարգը, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բերված փաստարկն անհիմն է (...):

(...)

Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատապարտյալ Գ.Վարդանյանը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.03.2017 թվականի դատավճռով երկու տարի ժամկետով ազատազրկման է դատապարտվել 2017 թվականի մարտի 31-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու համար, իսկ կատարման կարգադրությունը տրվել է 29.12.2017 թվականին:

Այսինքն՝ 2017 թվականի մարտի 1-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-59-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 8-ին),

29.12.2017 թվականին արդեն իսկ փրված է եղել կախարման կարգադրությունը, ինչից հետևում է, որ սույն գործի շրջանակներում դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3.1.-րդ մասի իրավակարգավորումը:

Այսինքն՝ փրվյալ դեպքում իրավահարաբերության ծագման պահը պետք է հաշվել ոչ թե դատապարտյալի կողմից հանցանք կատարելու օրվանից, այն է՝ 13.02.2013 թվականից, այլև կախարման կարգադրությունը փրկող պահից, այն է՝ 29.12.2017 թվականից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ 29.12.2017 թվականին արդեն իսկ ուժի մեջ է մտնում եղել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-59-Ն օրենքը, հետևաբար այն փրկված է ուժի մեջ մտնելու և արդեն իսկ ծագած իրավահարաբերության վրա (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերի կարծիքով ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված քրեաիրավական նորմերը: Բողոք բերած անձը, հղում կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի՝ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս գործով իրավանորմերին, ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածին, փաստարկել է, որ քրեական օրենսգրքում տեղի ունեցած փոփոխություններով Գ.Վարդանյանի վիճակը վատթարացել է:

Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը, մեջբերելով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ անձի կողմից հանցանք կատարելու պահի դրությամբ քրեական օրենքում ամրագրված՝ հանրային աշխատանքները կարգավորող նորմում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում, ի տարբերություն նախկինում գործող դրույթների, ընդլայնվել է դատարանի կողմից քննարկման ենթակա հանգամանքների շրջանակը: Ուստի, գործող օրենսդրական նորմերը Գ.Վարդանյանի նկատմամբ տարածելու դեպքում տեղի կունենա անձի վիճակի վատթարացում, հետևաբար դրանք անձի նկատմամբ կիրառելի անթույլատրելի է:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 61-64:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք ստորադաս դատարանների կողմից դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելը մերժելն այն պատճառաբանությամբ, որ նրա անձը և կատարած արարքն օժտված են հանրային բարձր վտանգավորությամբ:

12. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պարիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պարժեղությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հերադարձ ուժ»:*

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հերադարձ ուժ չունեն:*

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պարիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը և պարժեղությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:*

2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վրանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ *անկախ հերևանքները վրա հասնելու պահից»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հերադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դարվածություն:*

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պարիժը խտրացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարթարացնող օրենքը հերադարձ ուժ չունի:

(...):»:

Անդրադառնալով ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողությանը և դրա հետադարձ ուժի հիմնախնդրին՝ Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullo crimine, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Մինչև ժամանակ քրեական օրենքի ժամանակի ընթացքում գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում՝

ա) նոր օրենքը լրիվ կամ մասնակի վերացնում է արարքի հանցավորությունը (լրիվ կամ մասնակի ապաքրեականացում),

բ) նոր օրենքը մեղմացնում է պատիժը,

գ) նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը¹:

13. Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի կառուցակարգերը ճիշտ կիրառելու հարցում ելակետային նշանակություն ունի **հանցավոր արարքի կարարման պահը**: Քրեական օրենքի իմաստով՝ հանցանքը կատարելու պահ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքների վրա հասնելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության վերը նշված ընդհանուր կանոնի **միակ բացառությունը քրեական օրենքի հետադարձության կանոնն է**, ինչը ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված, հանցանք կատարած անձի

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Գասպար Պողոսյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11, *Վաղարշակ Գալոսյանի* վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13, *Հարություն Շահրազյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԾԴ3/0012/01/15 որոշումները:

համար բարենպաստ հետևանքներ առաջացնող նոր օրենքը պետք է տարածվի այդ անձի վրա¹:

Մինչդեռ, եթե հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված նոր օրենքն անձի համար վատթարացնող հետևանքներ է առաջացնում (հանցավորություն է սահմանում, պատիժն է խստացնում կամ այլ կերպ վատթարացնում է անձի վիճակը), ապա չի կարող տարածվել նախքան այդ օրենքի ընդունումը ծագած հարաբերությունների նկատմամբ:

14. Նախքան «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն ՀՀ օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պարժարեսակ՝ ուժի մեջ մտնելից հարավճիռն ի կարար անձերի կարգադրությունը սրանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դարապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերում:

Դարարանը դիմումը մերժում է, եթե չի պահպանվել այն ներկայացնելու սահմանված կարգը»:

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն ՀՀ օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ և 3.1-րդ մասերի համաձայն՝ «3. Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պարժարեսակ՝ ուժի մեջ մտնելից հարավճիռն ի կարար անձերի կարգադրությունը սրանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դարապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերում:

3.1. Դարարանը դիմումը քննարկելիս հաշվի է առնում դարապարտյալի կողմից կատարված հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանը, բնույթը, դարապարտյալի անձր բնութագրող տվյալները, պարճատված վնասը հարուցելու մասին պահանջի բացակայությունը կամ հարուցված շինելը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կհիմնավորեն անձի նկատմամբ նշանակված ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու հիմնավորվածությունն ու արդարացիությունը պարճի նպարակների իրականացման տեսանկյունից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի նախկին և ներկայիս գործող խմբագրությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Վաղարշակ Գալոյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0008/15/13 որոշումը:

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ հանրային աշխատանքների՝ որպես այլընտրանքային պատժատեսակի նշանակման կարգն ըստ էության խստացվել է, քանի որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվել են ազատազրկում պատժատեսակը հանրային աշխատանքներով փոխարինելիս պարտադիր գնահատման ենթակա որոշակի հանգամանքներ, որպիսիք նախկինում բացակայում էին:

Այսպես՝ նախկին կարգավորումների համաձայն՝ օրենքով սահմանված պայմանների առկայության, այն է՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու և առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում, ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի կողմից գրավոր դիմում ներկայացվելու պարագայում, ազատազրկումը փոխարինվում էր հանրային աշխատանքներով՝ որպես այլընտրանքային պատժատեսակ: Այլ կերպ՝ դատարանը նշանակված ազատազրկում պատժատեսակը փոխարինում էր հանրային աշխատանքներով, եթե դատապարտյալը պահպանել էր դիմում ներկայացնելու օրենքով սահմանված կարգն ու ժամկետները, և բացակայում էին հանրային աշխատանքների նշանակմանը խոչընդոտող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանգամանքները. դատարանը հայեցողություն դրսևորելու հնարավորություն՝ պայմանավորված արարքի հանրային վտանգավորությամբ, հանցավորի անձը բնութագրող տվյալներով և այլ հանգամանքներով, չուներ:

Մինչդեռ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատարանն ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելիս ոչ միայն պետք է ստուգի դատապարտյալի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու՝ օրենքով սահմանված կարգի պահպանումը, այլև պատժի նպատակների իրականացման տեսանկյունից գնահատման ենթարկի գործի այն հանգամանքները, որոնք հիմնավորում են նշանակված ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու հիմնավորվածությունն ու արդարացիությունը: Այսինքն՝ գործող օրենսդրական կարգավորումները դատարանին տրամադրում են որոշակի հայեցողական ազատություն՝ օրենքով սահմանված հանգամանքների գնահատման արդյունքում (հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, պատճառված վնասը հատուցելու մասին պահանջի բացակայությունը կամ հատուցված լինելը, ինչպես նաև այլ հանգամանքներ) ազատազրկումը հանրային աշխատանքներով փոխարինելու կամ չփոխարինելու հարցում հանգելու համապատասխան հետևության:

15. Սույն գործի փաստերի վերլուծությունից երևում է, որ դատապարտյալ Գ.Վարդանյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է 2017 թվականի փետրվարի 13-ին¹:

Առաջին ատյանի դատարանը նշանակված ազատագրկում պատժատեսակը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ դատապարտյալի դիմումը մերժել է՝ նշելով, որ Գ.Վարդանյանի անձը, նրա կատարած արարքը բնութագրվում են վտանգավորության առավել բարձր աստիճանով, քանի որ հանցանքը կատարվել է անչափահասի նկատմամբ²:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելը մերժելու հարցում Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ հետևության: Անդրադառնալով կատարված օրենսդրական փոփոխությունները դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ կիրառելի չլինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ 2017 թվականի մարտի 1-ին ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-59-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 8-ին)՝ 2017 թվականի դեկտեմբերի 29-ին, դատապարտյալի նկատմամբ կայացված դատական ակտն ի կատար ածելու կարգադրությունն արդեն իսկ տրված է եղել, ուստի վերջինիս նկատմամբ կիրառելի է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3.1-րդ մասի իրավակարգավորումը: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանն իրավահարաբերության ծագման պահ է դիտարկել ոչ թե դատապարտյալի կողմից հանցանքը կատարելու, այլ նրա նկատմամբ կայացված դատական ակտն ի կատար ածելու կարգադրություն տալու պահը³:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները դիտարկելով սույն որոշման 13-15-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ հետևության են եկել դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու հարցը քննարկելիս վերջինիս արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, անձը բնութագրող տվյալները գնահատման ենթարկելու և դրա արդյունքում ներկայացված դիմումը մերժելու հարցում:

Այսպես՝ սույն որոշման 15-րդ կետում կատարված վերլուծությունից բխում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կատարելու մասին» 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ նախատեսվել են իրավակարգավորումներ, որոնք ըստ էության խստացրել են հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման կարգը, հետևաբար այդ օրենքի տարածումը նախքան դրա ընդունվելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ անթույլատրելի է, քանի որ խախտում է անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու օրենսդրական պահանջը:

17. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ սույն դեպքում իրավահարաբերության ծագման պահը պետք է հաշվել ոչ թե դատապարտյալի կողմից հանցանքը կատարելու օրվանից, այլ դատական ակտի կատարման կարգադրությունը տալու պահից, որի դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածում կատարված փոփոխություններն արդեն ուժի մեջ էին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն հիմնավոր չէ: Այսպես՝ 2017 թվականի մարտի 1-ի ՀՕ-59-Ն ՀՀ օրենքի ընդունմամբ կատարված փոփոխություններն անմիջականորեն առնչվում են արարքի պատժելիության հարցերին, քանի որ դրանց արդյունքում հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման կարգն ըստ էության խստացվել է, պատիժ նշանակելիս նախատեսվել են այնպիսի կարգավորումներ, որոնք, ի տարբերություն նախկինի, անձի համար առաջացրել են վատթարացնող հետևանքներ: Հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածով ամրագրված՝ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողությունը սահմանող կանոնն առ այն, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, և նկատի ունենալով, որ խնդրո առարկա փոփոխություններն ուղղակիորեն առնչվում են հանրային աշխատանքներ պատժատեսակի նշանակման կարգին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ կիրառելի է եղել իր կողմից հանցավոր արարքը կատարելու պահին գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգավորումը:

18. Ուստի, հիմք ընդունելով սույն որոշման 13-18-րդ կետերում կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների կողմից դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելը մերժելն այն պատճառաբանությամբ, որ Գ.Վարդանյանի անձը և նրա կատարած արարքն օժտված են բարձր հանրային վտանգավորությամբ, հիմնավորված չէ:

19. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, դատապարտյալ Գ.Վարդանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը հանրային աշխա-

տանքներով փոխարինելու մասին դիմումը հանցավոր արարքը կատարելուց հետո փոփոխված և պատիժ նշանակելիս վերջինիս համար վատթարացնող հետևանքներ առաջացնող քրեական օրենքի նորմերին համապատասխան քննության առնելով ու այդ օրենքին փաստացի հետադարձ ուժ տալով, թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ և 54-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է, հետևաբար հիմք է Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Գրիգոր Արկադայի Վարդանյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

**ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԵԴ/0699/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼԻՔՈՆՅԱՆԻ
Տ.ՀԱՆՈՒՅԱՆԻ
Տ.ԱԹԱՆԵՍՅԱՆԻ
Զ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Վ.ՄԱԿՅԱՆԻ
Գ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

պաշտպաններ՝

մեղադրյալ՝

2019 թվականի ապրիլի 12-ին

ք.Երևանում

դռնփակ դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունում 2018 թվականի ապրիլի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 12200518 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Գոռ Միերի Համբարձումյանը նեգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Գ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ պաշտպան Է.Ալեքսանյանի միջնորդությունը՝ կալանքն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին, մերժվել է:

3. Պաշտպաններ Է.Ալեքսանյանի և Զ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշումը՝ մասնակի բեկանել է և մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ կիրառել է գրավ՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Դ]ատարանը գտնում է, որ պաշտպան Էրիկ Ալեքսանյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Գոռ Միերի Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու մասին, պետք է ճանաչել անթույլատրելի և մերժել, քանի որ մեղադրյալ Գոռ Միերի Համբարձումյանը մնալով ազատության մեջ կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով, որպիսի պայմաններում գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրվելու դեպքում այն չի կարող ապահովել մեղադրյալի պարզաճ վարքագիծը (...)»¹:

6. Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Ասլան Ավետիսյանի, Սամվել Մարգարյանի և Դավիթ Վարդանյանի գործերով Վճռաբեկ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 187-197:

դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, իր որոշմամբ փաստել է. «(...) [Մ]եղադրյալ Գոռ Համբարձումյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 2.000.000 ՀՀ դրամ գրավի կիրառմամբ:

Նման եզրահանգման Վերաքննիչ դատարանը հանգում է հաշվի առնելով նաև այն, որ Գոռ Համբարձումյանն ունի մշտական բնակության վայր, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ամուսնացած է, ինսամքի փակ [է] գտնվում մանկահասակ երեխան»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

7. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ թույլ է տվել դատական սխալ, այն է՝ սխալ է մեկնաբանել գրավի կիրառման հիմքը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը, ինչն ազդել է գործի ելքի վրա, ուստի այդ որոշումը ենթակա է բեկանման:

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, համարել է գործուն երաշխիք ազատության մեջ լինելու պայմաններում Գ.Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելը կանխելու համար: Մինչդեռ բողոքաբերն իր անհամաձայնությունն արտահայտելով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հետ՝ հղում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածին և Դ.Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին և նշել, որ գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է մասնակի բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշումը և այդ մասով օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանի համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 24-35:

սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

10. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով սահմանված կարգավորումներն այնքանով, որքանով չեն երաշխավորում, որպեսզի գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, մինչդեռատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք լինի, արդյոք չեն վտանգում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատության իրավունքը:

11. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...) գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կերի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գալարանը, (...) խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ (...) մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանատվությունից և նշանակված պատրիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար (...) բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գրավը (...) մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի ղեկավար մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

(...)

6. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատարանը պարտավորված է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջնորդությամբ:

7. Գրավը վերադարձվում է գրավատուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված խախտումները կամ գրավը՝ որպես խափանման միջոց վերացվում կամ փոխվում է: (...):»

12. Բացահայտելով ազատության իրավունքի և այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման սահմանադրաիրավական հարաբերակցությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) Օրենսգիրքը նախատեսել է իրավականիս մի շարք միջոցներ, որոնք կոչված են անհրաժեշտ

պայմաններ ապահովելու վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնա-
պար անձի) գործունեության՝ օրենքով նախանշված նպատակների
իրագործման համար: Եման իրավականի միջոց է գրավի ինսուր-
սուր, որը, միաժամանակ, քրեադատարական գործընթացներում
անձնական ազատության իրավունքի՝ օրենքով նախատեսված հիմքով,
զրկումը վերացնելու, կալանավորման (ազատությունից զրկելու)
այլընտրանքային իրավական միջոց է, երբ առկա են այդպիսի «զրկումը»
վերացնելու բարենպաստ իրավապայմաններ:

Գրավը քրեական վարույթում, նախ և առաջ, խափանման
(դատավարական հարկադրանքի) միջոց է, որի կիրառմամբ մեղադրյալին
ազատության իրավունքից զրկումը փոխարինվում է այդ իրավունքի
սահմանափակմամբ, որը (...) պայմանավորված է անձի կողմից օրենքով
սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու և
քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների կողմից
Օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրված խնդիրների լուծման անհրա-
ժեշտությամբ: Այսպիսով, «քրեական վարույթն իրականացնող մարմնի
տրամադրության տակ մեղադրյալի գրավելն» ինքնին ենթադրում է, որ
քրեական վարույթի արդյունավետ իրականացման նպատակով անձը
պարտավոր է գրավի, որպես խափանման միջոցի, կիրառման ողջ
ժամանակահատվածում անվերապահ կատարել վարույթն
իրականացնող մարմնի օրինական պահանջները (չթաքնվել վարույթ
իրականացնող մարմնից, առանց թույլտվության չմեկնել այլ տեղանք
(Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն): Եվ եթե մեղադրյալը
խախտել է քրեական վարույթն իրականացնող մարմնի «տրամադրու-
թյան տակ գրավելու»՝ օրենքով նախատեսված իր պարտականությունը,
սպա գրավի առարկա հանդիսացող գույքը կարող է օտարվել հօգուտ
պետության (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մաս), կամ՝ գրավը որպես
խափանման միջոց կարող է փոխարինվել խափանման մեկ այլ միջոցով՝
կալանքով (Օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մաս): Այսինքն՝ անձը, որի
անձնական ազատության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 27-րդ
հոդվածի սահմանադրաիրավական իմաստով) մինչ այդ սահմանա-
փակված էր, կարող է զրկվել անձնական ազատության իրավունքից:

(...) Խափանման միջոցի, այդ թվում և՛ գրավի, կիրառման իրավական
նպատակը հենց օրենքով սահմանված որոշակի պարտականության
կատարումն ապահովելն է: Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում
ուղղակիորեն սահմանված է կալանավորման այլընտրանքային խափան-
ման միջոցի՝ (այսինքն՝ նաև գրավի) կիրառման հիմքը, համաձայն որի՝
մեղադրյալի նկատմամբ այն կարող է կիրառվել միայն այնպիսի
դեպքերում, երբ «...բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը
կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված

գործողությունները», այսինքն՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրել, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալ և այլն: (...)»¹:

12.1 Իսպանիայի սահմանադրական դատարանն անդրադառնալով կալանավորման կիրառմամբ անձի ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական սկզբունքներին՝ նշել է, որ կալանավորման կիրառումը պետք է լինի ծայրահեղ անհրաժեշտություն և համապատասխանի սուբսիդիարության սկզբունքին, ինչը նշանակում է, որ ոչ միայն կիրառվող առավել խիստ միջոցը պետք է արդյունավետ լինի, այլ նաև այն, որ այլ՝ առավել նվազ ներգործության միջոցների կիրառումն անարդյունավետ է²:

13. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից³:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ կալանքի ոչ հիմնավոր կիրառումից խուսափելու նպատակով պետք է նախատեսվի այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ, առավել քիչ սահմանափակումների կիրառմամբ՝ հաշվի առնելով հանցանքի կատարման մեջ կասկածվողի վարքագիծը⁴:

Նույն հանձնարարականի 7-րդ կետի «c» ենթակետի համաձայն՝ անձը կարող է պահվել կալանքի տակ, եթե փախուստի դիմելու, ծանր հանցանք կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու կամ հասարակական կարգի պահպանությանը լուրջ սպառնալիք ներկայացնելու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող փարատվել այլընտրանքային միջոցների կիրառմամբ⁵:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԳՌ-1387 որոշումը, 7-րդ կետ:

² Տե՛ս Իսպանիայի սահմանադրական դատարանի՝ 1995 թվականի հուլիսի 26-ի թիվ 128/1995 որոշումը:

³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թվականի հունիսի 27-ի թիվ R(80)11 հանձնարարականը:

⁴ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ (2006)13 հանձնարարականը:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևի 1-ին կետի համաձայն՝ մինչդատական կալանքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, որպես վերջին միջոց (last resort), երբ այլընտրանքային միջոցները բավարար չեն վարույթի պատշաճ ընթացքը երաշխավորելու համար¹:

«Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Տոկիոյի կանոններ») 6.1-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքը քրեական դատավարությունում պետք է կիրառվի որպես վերջին միջոց (last resort)՝ հաշվի առնելով նախաքննության խնդիրները, հասարակության և տուժողի պաշտպանությունը²:

Նույն կանոնների 6.2-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում³:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը⁴,

- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁵,

- կալանքի՝ որպես խիստ միջոցի, կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի⁶,

¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 2077 (2015) բանաձևը:

² Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» 1990 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Տոկիոյի կանոններ»):

³ Տե՛ս՝ նույն տեղում:

⁴ Տե՛ս *Idalov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

⁵ Տե՛ս *mutatis mutandis, Sahin Alpay v. Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

⁶ Տե՛ս *mutatis mutandis, Djundiks v. Latvia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

- 5-րդ հոդվածի 3-րդ կետը ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»¹,

- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները²:

15. Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառման վերաբերյալ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների մեկնաբանմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ: Ուստի գրավի կիրառման անյոյաատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը³,

- մեղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար⁴,

- գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է

¹ Տե՛ս *Khudoyorov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:

² Տե՛ս *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Musuc v. Moldova* գործով 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 42440/06, կետ 42, *Aleksandr Makarov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, 139-րդ կետ:

³ Տե՛ս *Սայան Ավերիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշումը, 36-րդ կետ:

⁴ Տե՛ս *Դավիթ Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԳ/0056/06/14 որոշումը, 16-րդ կետ:

կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով¹,

- գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ²:

16. Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում կալանավորումն անձի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու ամենախիստ միջոցն է, քանի որ առավելագույն չափով սահմանափակում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Միևնույն ժամանակ, որպես կալանավորմանը միակ այլընտրանքային խափանման միջոց՝ գործող քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է գրավի կիրառումը, որը հնարավորություն է տալիս կալանքի կիրառման հիմքերի և պայմանների առկայության պարագայում չզրկել անձին ազատության իրավունքից: Այսպես, գրավն այն բացառիկ խափանման միջոցն է, որը կիրառվում է որպես կալանավորմանն այլընտրանք՝ առաջարկվող նյութական արժեքով մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը հակակշռելու համար, հնարավորություն տալով ապահովելու նրա ազատության իրավունքի և նրա մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Հենց այդ հավասարակշռության երաշխավորմամբ էլ գրավը մի կողմից հնարավորություն է տալիս մեղադրյալին որոշակիորեն կենսագործելու իր ազատության իրավունքը, մյուս կողմից կաշկանդում է նրան գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով չեզոքացնում նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը³:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցների համակարգում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման ծանրակշիռ երաշխիք է:

17. Սակայն, գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում, երբ օրենսդիրը մի կողմից այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը պայմանավորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ խափանման

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն որոշումը, 19-րդ կետ:

³ Տե՛ս *Արման Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0265/06/17 որոշումը, 17-րդ կետ:

միջոցների կիրառման բոլոր հիմքերով, մյուս կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում որպես գրավի կիրառման նպատակ է սահմանում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելը և նույն հոդվածի 6-րդ մասով գրավի գումարը պետության եկամուտ դարձնելու հնարավորություն է նախատեսում միայն մեղադրյալի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու դեպքերում, գրավը գործուն միջոց չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոցների կիրառման մյուս հիմքերը, այդ թվում՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու համար:

Այսպես, վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու երաշխիքների առկայության պայմաններում եթե դատարանը գտնի, որ կալանավորված մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու վտանգը կարող է չեզոքացվել որպես գրավի առարկա առաջարկվող նյութական արժեքով և կալանավորումը փոխարինի գրավով, ապա մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու դեպքում գրավի առարկան պետության եկամուտ դարձնելու ձևով դատավարական պատասխանատվության ինքնուրույն միջոցը կիրառվել չի կարող և գրավի առարկան անվերապահորեն ենթակա է վերադարձման մեղադրյալին: Այսինքն՝ գրավի կիրառման դեպքում մեղադրյալի մոտ բացակայում է գրավի առարկան կորցնելու սպառնալիքը, որը կկաշկանդեր նրան ազատության մեջ գտնվելու դեպքում ձեռնպահ մնալ գործի քննությանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերը վկայակոչված օրենսդրական կարգավորումների պայմաններում դատարանի կողմից կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելիս, այն չի ծառայում որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պատշաճությունը երաշխավորելով գործի քննությանը խոչընդոտելու հավանակալությունը գապելու համար: Արդյունքում, նշված հիմքով կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս գրավի միջնորդությունն օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ կարող է ինքնաբերաբար մերժվել՝ առանց ըստ էության քննության առարկա դարձվելու, ինչն ընդունելի չի համարվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից¹:

17.1 Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ներկայումս ձևավորվել է գրավի՝ որպես միակ այլընտրանքային խափանման միջոցի, կիրառման ոչ միասնական իրավակիրառ պրակտիկա, երբ մի շարք

¹ Տե՛ս *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, 104-րդ կետ:

գործերով դատարանները հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածին և այդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ *Դավիթ Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին¹, մերժում են անձի նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը՝ նշելով, որ այն չի կարող հանդիսանալ գործի քննությանը խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործունե երաշխիք²: Մինևույն ժամանակ, մի շարք գործերով էլ, ինչպես սույն գործով, դատարանները գործի քննությանը խոչընդոտելու հիմքի առկայության պայմաններում բավարարում են անձի նկատմամբ կիրառված կալանավորումն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը³:

17.2 Կալանավորումը միակ այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու վերաբերյալ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների և այդ պայմաններում ձևավորված ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի արդյունքում ողջամտորեն վտանգվում է անձի ազատության իրավունքը: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված միջնորդությունների ընդհանուր թվաքանակնում գերակշռում են դատարանների կողմից միջնորդությունների բավարարման դեպքերը՝ առանց գրավի կիրառման:

Այսպես, ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2017 թվականի ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացված՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2363 միջնորդություններից բավարարվել է 2220-ը: Նույն ժամանակահատվածում՝ ներկայացված գրավի 786 միջնորդություններից բավարարվել է 125-ը: 2018 թվականի ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացված՝ կալանքը որպես խափան-

¹ Տե՛ս սույն որոշման 15-րդ կետը:

² Տե՛ս ս օրինակ՝ Վերաքննիչ դատարանի՝ թիվ ԵԱԲԳ/0603/06/17 գործով 2017 թվականի դեկտեմբերի 6-ի, թիվ ԵԱԲԳ/0501/06/17 գործով 2017 թվականի դեկտեմբերի 28-ի, թիվ ԵԱԲԳ/0441/06/17 գործով 2018 թվականի մարտի 6-ի, թիվ ԱՐԳ/0011/06/18 գործով 2019 թվականի հունվարի 30-ի որոշումները:

³ Տե՛ս ս օրինակ՝ թիվ ԵԴ/0637/06/18 գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 դեկտեմբերի 20-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշումը, թիվ ԵԴ/0649/06/18 գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 19-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը, թիվ ԵԴ/0621/06/18 գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը:

ման միջոց կիրառելու մասին 2043 միջնորդություններից բավարարվել է 1935-ը: Նույն ժամանակահատվածում՝ ներկայացված գրավի 893 միջնորդություններից բավարարվել է 173-ը¹:

Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2017 թվականի վերաբերյալ ներկայացված տարեկան հաղորդման համաձայն՝ ՀՀ-ում մտահոգիչ են գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ցածր ցուցանիշները: Այսպես, կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների մասնակի կամ ամբողջությամբ բավարարման դեպքերի և անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում: Բացի այդ, որոշակի բացասական միտում է նկատվում գրավ կիրառելու միջնորդությունների և դրանք բավարարելու կամ մասնակի բավարարելու հարաբերակցության հարցում: Այսպես, եթե 2011 թվականին գրավի կիրառումը բավարարվել է (այդ թվում՝ մասնակի) 131 դեպքում՝ կազմելով միջնորդությունների ընդհանուր թվի 29.2%, 2012 թվականին՝ 134 դեպքում՝ միջնորդությունների ընդհանուր թվի 30.3%, 2016 թվականին՝ 161 դեպքով՝ միջնորդությունների ընդհանուր թվի 20.9%, ապա 2017 թվականին և՛ նվազել է բավարարված միջնորդությունների քանակը՝ 125 միջնորդություն, և՛ դրանց տեսակարար կշիռը նվազել է մինչև 15.9%²:

17.3 Պետք է փաստել, որ մի շարք արտասահմանյան երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրավը՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, դիտարկվում է ոչ միայն վարույթի իրականացնող մարմնից թաքնվելը կանխելու, այլ առհասարակ՝ որպես մեղադրյալի վարքագծի պատշաճությունը երաշխավորող միջոց, որի առարկան մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում կարող է դարձվել պետության եկամուտ: Այդպիսի կարգավորումներ են նախատեսված Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 106-րդ³, Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ⁴, Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի

¹ Տե՛ս 2017 թվականի վիճակագրական տվյալները՝ http://court.am/index.php?link=arm/left/statistics/2017/crim/by_court.htm, 2018 թվականի վիճակագրական տվյալները՝ http://court.am/index.php?link=arm/left/statistics/2018/crim/by_court.htm:

² Տե՛ս Աշխատանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ «2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին» տարեկան հաղորդումը, Երևան, 2018թ., էջ 231՝ <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf>:

³ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքը՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/:

⁴ Տե՛ս Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը՝ <https://matsne.gov.ge/ru/document/download/90034/69/ru/pdf>:

182-րդ¹, Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 192-194-րդ², Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 257-րդ³ հոդվածներում:

17.4 Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ միջազգային փորձի հաշվառմամբ համանման լուծում է տրված նաև ներկայումս շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Այսպես, նախագծի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավը կիրառվում է մեղադրյալի՝ օրինական վարքագիծն ապահովելու նպատակով, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրավը պետության եկամուտ է դարձվում, ի թիվս այլոց, մեղադրյալի՝ վարույթին խոչընդոտելու դեպքում:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մերժել է մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը՝ գտնելով, որ այն չի կարող ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քանի որ ազատության մեջ մնալու դեպքում նա կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով⁴:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով *Ասլան Ավերիսյանի, Սամվել Մարգարյանի և Դավիթ Վարդանյանի* գործերով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, իր որոշմամբ գտել է, որ մեղադրյալ Գոռ Համբարձումյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 2.000.000 ՀՀ դրամ գրավի կիրառմամբ⁵:

Վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ նշելով, որ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը գործուն երաշխիք չի կարող լինել ազատության մեջ լինելու պայմաններում մեղադրյալ Գ.Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցության գործադրման վտանգը չեզոքացնելու համար⁶:

¹ Տե՛ս՝ *Ուկրաինայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի*¹
<https://zakon.rada.gov.ua/laws/show/4651-17>:

² Տե՛ս՝ *Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի*²
<http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=326970&lang=2>:

³ Տե՛ս՝ *Լատվիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի*³
<https://likumi.lv/ta/en/id/107820-criminal-procedure-law>:

⁴ Տե՛ս՝ սույն որոշման 5-րդ կետը:

⁵ Տե՛ս՝ սույն որոշման 6-րդ կետը:

⁶ Տե՛ս՝ սույն որոշման 7-րդ կետը:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-17.4-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում թեև գրավի՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը նախատեսված է մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը կանխելու համար, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով սահմանված կարգավորումների պայմաններում այն չի հանդիսանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք, որպիսի պարագայում գրավի միջնորդությունը կարող է ինքնաբերաբար մերժվել՝ վտանգելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատության հիմնարար իրավունքը:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին համապատասխանության առնչությամբ, և գտնում է, որ սույն գործի լուծումը հնարավոր է միայն այդ իրավանորմերի կիրառման միջոցով: Ուստի հաշվի առնելով, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին համապատասխանության հարցն այնքանով, որքանով սահմանված կարգավորումների պայմաններում գրավը՝ որպես կալանավորման միակ

այլընտրանքային խափանման միջոց, չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0216/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ **Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ**
մասնակցությամբ դատավորներ՝ **Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ**
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ **Մ.ԱՎԱԳՅԱՆԻ**
մասնակցությամբ դատախազ՝ **Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ**
տուժողի իրավահաջորդ՝ **Գ.ՍՈՒՐՄԵՆԵԼՅԱՆԻ**
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ **Լ.ԱՍԼԱՆՅԱՆԻ**

2019 թվականի հունիսի 12-ին **ք.Երևանում**

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Հայկ Վաղարշակի Սուքիասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի, ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի և տուժողի իրավահաջորդ Գայանե Սուրմենելյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում 2017 թվականի հունվարի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13101317 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի հունվարի 23-ի որոշմամբ Հայկ Սուքիասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ Հ.Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի օգոստոսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի փետրվարի 13-ի դատավճռով ամբաստանյալ Հ.Սուքիասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի, տուժողի իրավահաջորդի և ամբաստանյալի պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 13-ի դատավճիռն ամբաստանյալ Հ.Սուքիասյանի նկատմամբ նշանակված պատժի մասով փոփոխել է, Հ.Սուքիասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով պատիժ է նշանակել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը և ամբաստանյալ Հ.Սուքիասյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ ներկայացված բողոքներն ընդունվել են Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հ.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Նյա 2017 թվականի հունվարի 20-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 37-րդ շենքի 8-րդ բնակարանում, գրնվելով ալկոհոլի ազդեցության փակ, կենցաղային հարցերի շուրջ վիճարանել է Արմեն Սուրմենելյանի հետ, որի ընթացքում վերջինին սպորինսարար կյանքից զրկելու դիմումներով իր մոտ եղած դանակով

երկու հարված է հասցրել նրա կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսին, ինչի հետևանքով Արմեն Սուրմենեյլյանին պարճառել է սրտապարկի, սրտի ձախ փորոքի առաջային պարի վիրավորումներ և սպորինարար դիտավորությամբ զրկել կյանքից (...)¹:

5.1. Ա.Սուրմենեյլյանի դիակի դատաբժշակական փորձաքննության թիվ 0135 եզրակացության համաձայն՝ «Ա.Սուրմենեյլյանի մահը վրա է հասել արյան սուր կորուստից, որը հետևանք է կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած թափանցող վիրավորմանը: Դիակի զննությամբ հայտնաբերվել են սրտապարկի, սրտի ձախ փորոքի առաջային պարի վիրավորումներ, որոնք պարճառվել են կենդանության օրոք՝ սուր ծակող-կտրող գործիքով, սովորաբար կենդանի անձանց մոտ ունեն առողջությանը ծանր վնասի պարճառման հարկանիշներ, կյանքին վրանգ սպառնացող, իսկ րվյալ դեպքում՝ գրնվում են անմիջական պարճառական կապի մեջ նրա մահվան հետ: Դիակի դատաբժշակական փորձաքննությամբ հայտնաբերվել են նաև կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսի ծակած-կտրած չթափանցող, ձախ այրային շրջանի կտրած վնասվածքներ, քերծվածքներ աջ ստորկզակային շրջանում, սրտին ծնոտի աջ կեսի մարմնի պրոյեկցիայով, որոնք նույնպես պարճառվել են կենդանության օրոք, ծակած-կտրած վնասվածքը սուր ծակող-կտրող գործիքով(ներով), կտրած վերքը սուր ծակող-կտրող, կամ կտրող գործիքով(ներով), իսկ քերծվածքները՝ բույթ առարկաներով, սովորաբար կենդանի անձանց մոտ՝ ծակած-կտրած չթափանցող վնասվածքը ունի առողջության թեթև վնասի պարճառման հարկանիշներ, առողջության կարճատև քայքայումով, իսկ կտրած վերքը և քերծվածքները առողջության թեթև վնասի պարճառման հարկանիշներ չեն պարունակում, իսկ րվյալ դեպքում՝ մահվան հետ պարճառական կապի մեջ չեն գրնվում: Ելնելով ծակած-կտրած վերքերի բնույթից՝ վերջիններս պարճառվել են միակողմանի սայր ունեցող ծակող-կտրող գործիքով, այդ թվում՝ դանակով: Կրծքավանդակի առաջային մակերեսի թիվ 1 թափանցող վնասվածքային խողովակը ունի՝ առաջից-հետ, ձախից քիչ աջ, վերից քիչ վար ուղղություն, որը իր հերթին վնասել է ձախից 4-րդ կողմաճառի ստորին և 5-րդ կողմաճառի վերին եզրերը, սրտապարկի, սրտի ձախ փորոքի առաջային պարի վնասումներով: Կրծքավանդակի առաջային մակերեսի թիվ 2 վնասվածքը ունի առաջից հետ, ձախից քիչ աջ, վերից քիչ վար ուղղություն, որը վնասել է ձախից 8-րդ կողմաճառի արտաքին թերթիկը և չի թափանցել դեպի կրծքավանդակի խոռոչ: Թիվ 3 վնասվածքը վնասել է մաշկը»²:

5.2. Դատաբժշակական փորձաքննության թիվ 0143 եզրակացության համաձայն՝ «(...) քաղ. Հ.Սուքիասյանի մարմնական վնասվածքները՝ ձախ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 293-294:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 189-196:

ակնակապճային, քթի, դեմքի ձախ կեսի, աջ դաստակային շրջանների քերծվածքների, արյունազեղումների, սալջարդ վերքերի, քթի ոսկրերի կորսվածքի ձևով, պայրճառվել են բուժ առարկաներով, աջ դաստակի շրջանի արյունազեղումներից բացի մնացած մարմնական վնասվածքների առաջացումը հնարավոր է նաև՝ ներկայացված բնալիներով, հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքներում, և պայրճառվել է առողջությանը թերևս վնաս՝ առողջության կարճապես քայքայումով (...)¹:

5.3. Գործով վկա Հակոբ Հովհանեսյանը նախաքննության ընթացքում հայտնել է, որ 2017 թվականի հունվարի 20-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, եղբոր՝ Ա.Հովսեփյանի հետ այցելել են Հայկ Սուքիասյանին: Վերջինս իրենց այցելությունից շուրջ 10 րոպե անց իր բնակարանում գտնվող Արմեն Սուրմենեյանին ճանապարհել է տուն: Մի քանի րոպե անց Արմենը զանգահարել է Հայկի բջջային հեռախոսին, սակայն վերջինս հեռախոսազանգերին չի պատասխանել: Դրանից հետո մոտ 15 րոպե անց, Հ.Սուքիասյանի բնակարանի մուտքի դռանը ոտքերով հարվածել են և հայիոյանքներ տվել: Հայկն ասել է, որ դա Արմենն է, ինքը դուրս կգա միջանցք և կճանապարհի նրան: Այնուհետև, միջանցքից աղմուկի ու վիճաբանության ձայներ լսելով՝ միայնակ դուրս է եկել և նկատել, որ Արմենն ու Հայկը *ձեռի են ենթարկել միմյանց*, և մեկ անձ միջամտել ու բաժանել է նրանց: Դրանից 2-3 րոպե անց կրկին բնակարանի շքամուտքից *վիճաբանության ձայներ է լսել*, մոտեցել է մուտքի դռանը և բացելով այն՝ տեսել է, որ Հայկը աջ ձեռքով կտրուկ շարժում է կատարել Արմենի ուղղությամբ և իր մոտ եղած դանակով հարվածել վերջինիս կրծքավանդակի ձախ կեսին²:

Վկա Հ.Հովսեփյանը դատաքննության ընթացքում՝ ըստ էության ցուցմունք է տվել, որ Արմեն Սուրմենեյանը Հայկ Սուքիասյանին բարձրաձայն սպառնացել է՝ ասելով «կսպանեմ», «կմորթեմ» քեզ: Արմենի ձեռքին եղել է *պրուրակահանի նմանվող իր*, որով էլ վերջինս հարվածել է Հ.Սուքիասյանին, ինչից Հայկի դեմքին վնասվածքներ են առաջացել: Հայկն էլ ձեռքին եղած դանակով, իր հիշելով մեկ անգամ, հարվածել է Ա.Սուրմենեյանին³:

5.4. Վկա Սրեփան Կարախանյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ 2017 թվականի հունվարի 20-ին՝ ժամը 20.00-ի սահմաններում, վերադարձել է աշխատանքից և բարձրացել է շքամուտքի աստիճաններով, երբ առաջին հարկից լսել է աղմուկի ձայներ: Բարձրանալով երկրորդ հարկ՝ տեսել է, որ Հայկը և Արմենը գտնվել են խմած վիճակում և վիճաբանել են: Նրանք *փոխադարձ քաշքշել են իրար և հայիոյել*: Միջամտել է և փորձել նրանց բաժանել ու հանգստացնել: Այդ

¹ Տե՛ս՝ ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 139-140:

² Տե՛ս՝ ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 46:

³ Տե՛ս՝ ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 50:

ընթացքում, Հայկի բնակարանի մուտքի դռան մոտ կանգնած երիտասարդը ևս միջամտել է և Հայկի թևից քաշելով՝ նրան տարել է ներս, ապա փակել դուռը: Նշել է, որ վիճաբանության ժամանակ *երկուսն էլ եղել են սկրիպի դերում*, նրանցից որևէ մեկը չի ցանկացել նահանջել և զիջել¹:

Վկա Ս. Կարախանյանը դատաքննության ընթացքում ըստ էության պնդել է իր նախաքննական ցուցմունքները՝ հավելելով, որ վիճաբանության ժամանակ ոչ Հայկի, ոչ էլ Արմենի ձեռքին որևէ առարկա չի նկատել, սակայն տեսել է, որ Արմենը բռունցքը փակ է պահում: *Իր մոտ փայլորություն է սրեղծվել, որ նրա բռունցքում ինչ-որ իր կա*: Հնարավոր է, որ նա ձեռքում բանալի պահած լիներ, և ինքը դա չնկատեր²:

5.5. Վկա Էդուարդ Գամազյանը նախաքննության ընթացքում՝ ցուցմունք է տվել այն մասին, որ 2017 թվականի հունվարի 20-ի երեկոյան իրեն է զանգահարել Արմենի հայրը և ասել, որ Արմենը գնացել է Հայկի տուն և դեռևս չի վերադարձել: Միաժամանակ Արմենի հայրը խնդրել է տուն բերել Արմենին: Իր կողմից կատարված հեռախոսազանգին Հայկը պատասխանել է, որ *Արմենն իր փանն է և իր հարցերը լուծած են*³:

Վկա Է. Գամազյանը դատաքննության ընթացքում հայտնել է, որ 2017 թվականի ձմռան իրեն է զանգահարել Արմենի հայրը և ասել, որ Արմենը, վրդովված վիճակում վերցնելով *սպուրտակահանը*, Հայկի հասցեին *սպանոսալիքներ փաշով*, գնացել է վերջինիս տուն՝ նրան վնասելու նպատակով: Միաժամանակ Արմենի հայրը խնդրել է շուտ տուն բերել Արմենին⁴:

5.6. Ամբաստանյալ Հ.Սուքիասյանն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրը Արմեն Սուրմենելյանը եկել է իր տուն, էժանագին և ցածրորակ մեկ շիշ օղի է բերել և խմել: Այդ ընթացքում, իր տուն են այցելել հարևանի երեխաները՝ եղբայրներ Հ.Հովսեփյանը և Ա.Հովսեփյանը, ովքեր իրենից գումար են խնդրել: Այդ պահին, լոգասենյակից դուրս է եկել Ա.Սուրմենելյանը և ագրեսիվ տոնով բացականչել է, թե ինչու է այդ «բոմբերին» այդտեղ բերել: Ինքը փորձել է հանդարտեցնել Արմենին և պարզաբանել, որ հանգիստ խոսի, նրանք իր հարևաններն են, սակայն Արմենը չի հանդարտվել և «թարս» հայացքներ է գցել երեխաների վրա: Վիճաբանություն չառաջանալու համար Արմենին տանից դուրս է հրավիրել: Վերջինս իրենից վիրավորված հեռացել է: Շուրջ երեսուն րոպե անց Արմենը զանգահարել է և հայհոյանքներ հնչեցրել Հ.Հովսեփյանի և Ա.Հովսեփյանի հասցեին: Ինքը հեռախոսն անջատել է, սակայն դրանից հետո Արմենը նորից է զանգահարել՝ այդ անգամ նաև իր հասցեին հայհոյանքներ հնչեցնելով: Ինքն էլ ի պատասխան՝ նրան է հայհոյել: Մոտ տասը րոպե անց Ա.Սուրմենելյանը կրկին վերադարձել է իր տան մուտքի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 46-47:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 50-51:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 47:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 51-52:

դռան մոտ և սկսել է բարձրաձայն գոռալ ու հայհոյել: Ինքը փորձել է հետ հրել Արմենին, որպեսզի հեռանա: *Արմենը պրուրակահանի նմանվող գործիքով սկսել է հարվածներ հասցնել իրեն, որից վնասվածքներ է սրացել, մեկ անգամ էլ ձեռքով ինքն է հարվածել Արմենին:* Այդ վիճաբանությանը միջամտել է շքամուտքի աստիճաններով անցնող իրենց հարևանը, ով փորձել է հանդարտեցնել Ա.Սուրմենելյանին: Ինքը փակել է տան մուտքի դուռը և մտել տուն: Շուրջ տասնհինգ րոպե անցնելուց հետո Արմեն Սուրմենելյանը *կրկին վերադարձել է և սկսել է ջարդել փան մուտքի դուռը և բարձրաձայն հայհոյել:* Սկզբում ինքը չի ցանկացել բացել դուռը, բայց քանի որ դռան հարվածները չեն դադարել, բացել է: *Արմենը միանգամից հարձակվել է իր վրա, գցել գեյրնին և ուրբերով բազմաթիվ հարվածներ հասցրել, ինչից տեսողությունը վատացել է:* Գետնին ընկած ժամանակ նկատել է, որ գրպանից ընկել է դանակը: Ինքն այն վերցրել է և դանակը ձեռքին փորձել է Արմենին հետ հրել, որպեսզի նա հեռանա: Տուն մտնելուց հետո նկատել է, որ դանակի ծայրն արյունոտված է և մտածելով, որ դա առաջացել է իր վնասվածքներից, դանակը տվել է Հ.Հովսեփյանին¹:

6. Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Հ.Սուքիասյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) *Վերլուծելով հանցավորի և փուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պարճառները՝ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Հայկ Սուքիասյանը հանցագործությանը նախորդող պահերին փուժողի հետ գրկվել է ընկերական, մերերմական հարաբերությունների մեջ, իսկ երբ նա սկսել է հանդիմանել իրեն և վիճարանել իր հետ՝ փորձել է խուսափել լարվածությունից և փուժողին հեռացրել է իր բնակարանից:*

Երբ փուժողը հետ վերադառնալով՝ շարունակել է վիճաբանությունն ու կռիվը, Հայկ Սուքիասյանն արգելել է այլ անձանց միջամտել իրենց վեճին և փորձել է անձամբ հարթել այն: Այդ վիճաբանությունը վերաճել է կռիվի, ամբաստանյալն ու փուժողը միմյանց հարվածներ են հասցրել, սակայն կողմնակի անձանց միջամտության արդյունքում կռիվը դադարել է և ամբաստանյալ Հայկ Սուքիասյանը կրկին վերադարձել է բնակարան: Դրանից հետո, երբ փուժողը կրկին վերադարձել, կռիվ է բռնվել ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի հետ, վիճաբանությունների այս դրվագների ընթացքում մարմնական վնասվածքներ է պարճատել ամբաստանյալին՝ այդ թվում՝ կոտրել է քթոսկրը, Հայկ Սուքիասյանը դանակով երկու հարված է հասցրել փուժողին, որոնցից մեկը՝ թափանցող, կրծքավանդակի շրջանում: Երբ Հայկ Սուքիասյանը զգացել է, որ փուժողը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 49-50:

դադարեցրել է հարվածելը և թուլացել է՝ չի շարունակել նրան դանակով հարվածելը, չնայած դրա հնարավորությունն ունեցել է, փուժողին միջանցքից բերելով իր բնակարան՝ փորձել է օգնություն ցույց տալ, բժիշկներ հրավիրել, այսինքն փուժողի մահը կանխելու նպատակով՝ ակտիվ գործողություններ է ձեռնարկել:

Դատարանը գրնում է, որ վերոգրյալ հանգամանքները վկայում են ամբաստանյալի մոտ փուժողին սպանելու դիտարկության բացակայության մասին, քանի որ Հ.Սուքիասյանը փուժողի թուլանալու և չդիմադրելու պահից սկսած՝ իրարեւասկան հնարավորություն ունենալով շարունակել է հարվածներ հասցնել և կյանքից զրկել փուժողին, տեսնելով և գիտակցելով, որ իր կատարածը դեռևս անհրաժեշտ և բավարար չէ փուժողին կյանքից զրկելու համար՝ քանի որ նա ողջ է, առանց կատարելու անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ սպանությունն ավարտին հասցնելու համար, դադարեցրել է փուժողին դանակով հարվածներ հասցնելը և սկսել է օգնություն ցուցաբերել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմնվելով դատաքննությամբ հետազոտված ապացույցների վրա՝ դատարանը հանգում է հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ, այն դատաքննությամբ չապացուցվեց, այդ մեղադրանքի հիմնավորվածության վերաբերյալ վերաբերելի բավարար ապացույցներ դատարանին չներկայացվեցին:

Դատարանը գրնում է, որ հիմնավորված է ամբաստանյալի կողմից դիտարկությանը փուժողին մարմնական ծանր՝ կյանքի համար վրանգավոր վնասվածք պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է փուժողի մահը, ուստի, ամբաստանյալի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, նա պետք է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվի այդ արարքի համար (...):»¹:

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալին մեղսագրվող արարքի որակման մասով թողնելով անփոփոփ, իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Վերաքննիչ դատարանը, քրեական գործի ուսումնասիրությամբ, եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 68-69:

օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, եկել է ճիշտ հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Հայկ Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ սույն քրեական գործով ձեռք բերված օբյեկտիվ տվյալներով հաստատվում է, որ ամբաստանյալ Հայկ Սուքիասյանը, իրական հնարավորություն ունենալով շարունակել հարվածներ հասցնել և կյանքից զրկել տուժող Արմեն Սուրմենելյանին, տեսնելով և գիտակցելով, որ իր կատարածը դեռևս անհրաժեշտ և բավարար չէ տուժողին կյանքից զրկելու համար, քանի որ նա ողջ է, դադարեցրել է տուժողին դանակով հարվածներ հասցնելը և սկսել է օգնություն ցուցաբերել, ինչը տվյալ դեպքում վկայում է ամբաստանյալի մոտ տուժողին սպանելու դիտավորության բացակայության մասին:

Բացի այդ, վերոգրյալ եզրահանգման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ երբ Հայկ Սուքիասյանը զգացել է, որ տուժողը դադարեցրել է հարվածելը և թուլացել է, չի շարունակել նրան դանակով հարվածելը, չնայած դրա իրական հնարավորությունն ունեցել է, այլ տուժողին միջանցքից բերելով իր բնակարան՝ փորձել է օգնություն ցույց տալ, այսինքն՝ տուժողի մահը կանխելու նպատակով ակտիվ գործողություններ է ձեռնարկել: Ինչ վերաբերում է ներկայացված վերաքննիչ բողոքներում նշված այն հանգամանքին, որ ոչ թե Հայկ Սուքիասյանն է զանգահարել շրայօգնություն կամ նրա հանձնարարությամբ որևէ այլ անձ, այլ վկա Հակոբ Հովսեփյանն է միջոցներ ձեռնարկել շրայօգնություն անհազանգելու ուղղությամբ, ընդ որում՝ սեփական նախաձեռնությամբ, ապա Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նկատել, որ եթե ամբաստանյալը չցանկանար տուժողի համար բժիշկներ հրավիրել և ցանկանար թաքցնել տեղի ունեցած դեպքը, ապա գոնե կփորձեր հանդիմանել Հակոբ Հովսեփյանին՝ բժիշկներ հրավիրելու առումով, որպիսի փաստական տվյալ սույն քրեական գործով ձեռք չի բերվել (...):

(...) [Ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի նկատմամբ պատժի տեսակը և չափը որոշելիս Առաջին աստիճանի դատարանը չի ղեկավարվել պատժի նշանակելու ընդհանուր սկզբունքներով, թեև բազմակողմանի գնահատման է ենթարկել ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, այնուամենայնիվ, պատշաճ գնահատման չի արժանացրել նրա կողմից կատարված հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, որպիսի պայմաններում վերջինի նկատմամբ նշանակել է անարդարացի պատժ (...):

(...) Այսպիսով Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով վերոգրյալ եզրահանգումները, մասնավորապես՝ կատարված հանցագործության հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի անձը բնութագրող և պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող վերը նշված հանգամանքները, գրնում է, որ Առաջին արյանի դատարանի 2018 թվականի փետրվարի 13-ի դատավճիռն ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի նկատմամբ նշանակված պարժի մասով պետք է փոփոխել (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը փաստել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և անօրինական: Մասնավորապես, բողոքաբերը մատնանշելով գործի փաստական հանգամանքները, վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունները, ընդգծել է, որ ակնհայտ անհիմն է ստորադաս դատարանների դիրքորոշումն այն մասին, թե ամբաստանյալը տուժողին սպանելու դիտավորություն չի ունեցել: Ակնհայտ անհիմն է նաև դատարանների դիրքորոշումն այն մասին, թե Հ.Սուքիասյանը տուժողի մահը կանխելու նպատակով ակտիվ գործողություններ է ձեռնարկել, փորձել է փրկել նրա կյանքը: Ըստ բողոքաբերի՝ տուժողին կյանքից զրկելուն ուղղված հետագա գործողություններից ձեռնպահ մնալը չի կարող գնահատվել որպես համապատասխան հետևանքների առաջացման ցանկության բացակայություն: Հ.Սուքիասյանի կողմից հարվածներ հասցնելը դադարեցնելը վկայում է ոչ թե այն մասին, որ ամբաստանյալը դրանք բավարար է համարել տուժողի դիմադրությունը հաղթահարելու կամ թուլացնելու համար, այլ սրտի հատվածում դանակով երկու անգամ հարված հասցնելը բավարար է եղել անձին կյանքից զրկելու համար, ինչով էլ պայմանավորված՝ չի շարունակել հետագա ոտնձգությունը:

8.1. Բացի այդ, ակնհայտ անհիմն է դատարանների դիրքորոշումն այն մասին, թե Հ.Սուքիասյանը տուժողի մահը կանխելու նպատակով ակտիվ գործողություններ է ձեռնարկել, փորձել է փրկել նրա կյանքը: Գործի փաստական հանգամանքներից երևում է, որ տուժողին սուր կտրող-ծակող գործիքով հարվածներ հասցնելուց հետո, Հ.Սուքիասյանը վերջինիս ընդամենը տեղափոխել է հյուրասենյակ, և դրանով տուժողի կյանքը փրկելուն ուղղված նրա գործողություններն ավարտվել են:

Ավելին, տուժողին հյուրասենյակ տեղափոխելուց հետո ամբաստանյալին ավելի շատ մտահոգել է հանցագործության գործիքն ինչ-որ ձևով

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 72-75:

թաքցնելու հանգամանքը, քան նրա կյանքը փրկելը, քանզի միակ գործողությունը, որն ամբաստանյալը կատարել է տուժողին հյուրասենյակ բերելուց հետո, եղել է արյունոտված դանակը որևէ տեղ պահելու՝ Հ.Հովսեփյանին ուղղված խնդրանքը, այլ ոչ թե տուժողին օգնություն ցուցաբերելը: Գործի քննությամբ հիմնավորվել է, որ ոչ թե Հ.Սուքիասյանն է գանգահարել շտապօգնություն, կամ նրա հանձնարարությամբ որևէ այլ անձ, այլ վկա Հ.Հովսեփյանն է միջոցներ ձեռնարկել շտապօգնություն ահազանգելու ուղղությամբ, ընդ որում՝ սեփական նախաձեռնությամբ:

Հետևաբար, անհասկանալի է Առաջին ատյանի դատարանի դիրքորոշումը, թե ինչպես կարող է տուժողին ընդամենը միջանցքից հյուրասենյակ տեղափոխելը դիտարկվել որպես նրա կյանքը փրկելուն ուղղված ակտիվ գործողություն, երբ ամբաստանյալի կողմից որևէ ջանք կամ իրական միջոցներ չեն ձեռնարկվել այդ ուղղությամբ: Ստորադաս դատարաններն այն աստիճան են չափազանցել տուժողին միջանցքից հյուրասենյակ տեղափոխելու հանգամանքը, որ նշել են, թե իբր ամբաստանյալը փորձել է օգնություն ցույց տալ տուժողին, բժիշկներ հրավիրել, այսինքն՝ տուժողի մահը կանխելու նպատակով ակտիվ գործողություններ կատարել:

Բողոքաբերի գնահատմամբ, Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ եթե ամբաստանյալը չցանկանար տուժողի համար բժիշկներ հրավիրել և ցանկանար թաքցնել տեղի ունեցած դեպքը, ապա զոնե կփորձեր հանդիմանել Հ.Հովսեփյանին՝ բժիշկներ հրավիրելու առումով, բացարձակ զուրկ է տրամաբանությունից, վերոնշյալ հանգամանքը չի կարող վկայել ամբաստանյալի մոտ սպանության դիտավորության բացակայության մասին և որևէ նշանակություն չի կարող ունենալ արարքի քրեաիրավական որակման համար:

8.2. Ամփոփելով՝ բողոքի հեղինակը նշել է, որ Հ.Սուքիասյանը, գտնվելով ակոհոլի ազդեցության տակ, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է Ա.Սուրմենեյանի հետ, որի ընթացքում իր մոտ եղած դանակով երկու հարված է հասցրել տուժողի կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսին՝ սրտի հատվածում, հարվածներից մեկը չի թափանցել դեպի կրծքավանդակի խոռոչ՝ վնասելով ձախից 8-րդ կողմառի արտաքին թերթիկը, իսկ մյուս հարվածով տուժողին պատճառել է սրտապարկի, սրտի ձախ փորոքի առաջային պատի վիրավորումներ, ինչի հետևանքով վերջինս մահացել է:

Ըստ բողոք բերած անձի, հասցված հարվածների քանակը, դրանց տեղակայումը կենսական կարևոր օրգանի՝ սրտի շրջանում, օգտագործված գործիքը՝ դանակը, ինչպես նաև հանցանքի կատարման իրադրությունը՝ հանցանքին անմիջապես նախորդած և այդ պահին ամբաստանյալի և տուժողի միջև առաջացած խիստ լարվածությունը, վկայում են ամբաստանյալի մոտ տուժողին կյանքից զրկելու դիտավորության մասին:

Հանցանքի կատարումից հետո ամբաստանյալը միջոցներ չի ձեռնարկել տուժողին օգնություն ցուցաբերելու համար, իսկ նրանց միջև նախկին հարաբերությունները քննարկվող իրավիճակում որևէ կերպ չեն ազդում արարքի քրեաիրավական որակման վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը և այն մասնակիորեն բեկանելու և փոփոխելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

9. Տուժողի իրավահաջորդ Գ.Սուրմենելյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է պատճառաբանել և հիմնավորել իր դատական ակտը: Անդրադառնալով գործի փաստական հանգամանքներին, վկաների ցուցմունքներին, դատաբժշկական փորձաքննության եզրակացություններին՝ բողոքաբերը նշել է, որ Հ.Սուրբիայանի կատարած արարքը սխալ է որակված, այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Ըստ բողոքի հեղինակի՝ դատարանի այն եզրահանգումը, որ Հ.Սուրբիայանը սպանելու մտադրություն չի ունեցել, անհիմն է և չպատճառաբանված: Ամբաստանյալ Հ.Սուրբիայանը տուժողին հարվածել է ոչ թե երկու, այլ երեք անգամ, բացի այդ, տուժողին հարվածել է դանակով և հարվածել է կենսական կարևոր օրգանին՝ սրտին:

Ամփոփելով՝ բողոքաբերը հանգել է հետևության, որ պատշաճ գնահատականի չեն արժանացել վկաների ցուցմունքները, չեն համադրվել դրանք քրեական գործի քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցներին, չեն գնահատվել դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Դատարանն արժանահավատ է համարել վկաների դատաքննական ցուցմունքները, և դա այն դեպքում, երբ նախաքննական ցուցմունքները տրվել են հենց դեպքի և դրան հաջորդող մոտ օրերի ընթացքում, իսկ դատաքննական ցուցմունքները՝ շուրջ ութ ամիս հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 21-ի որոշումը՝ Հ.Սուրբիայանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով առաջադրված մեղադրանքը վերադարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ նշանակելով օրենքով նախատեսված խիստ պատիժ:

10. Ամբաստանյալ Հ.Սուրբիայանի պաշտպան Գ.Հովհաննիսյանը նշել է, որ Հ.Սուրբիայանի կողմից կատարված արարքին չի տրվել ճիշտ իրավական գնահատական, նա ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով

նախատեսված հանցավոր արարք չի կատարել: Բացի այդ, ըստ բողոքի հեղինակի՝ դատական ակտն արդարացի չէ, այն չի համապատասխանում հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, ինչպես նաև Հ.Սուքիասյանի անձին:

Բողոքաբերը, վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, հանգել է հետևության, որ Հ.Սուքիասյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Ա.Սուրմենեյանի կողմից իրականացվել է հանրորեն վտանգավոր ոտնձգություն, որի արդյունքում Հ.Սուքիասյանին պատճառվել են ստորջնության կարճատև քայքայումով թեթև մարմնական վնասվածքներ, Հ.Սուքիասյանի նկատմամբ իրականացված ոտնձգությունը եղել է հանրորեն վտանգավոր, առկա և իրական, իսկ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը:

Ուստի, բողոքի հեղինակը նշել է, որ Հ.Սուքիասյանի գործողությունները պետք է գնահատվեն որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված: Մինևույն ժամանակ, բողոքաբերը փաստել է, որ եթե Դատարանը գտնի, որ Ա.Սուրմենեյանի կողմից պտուտակահանով Հ.Սուքիասյանին հարվածներ հասցնելու պարագայում վերջինիս կողմից դանակով տուժողին կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսին հարվածելը և սպանելը չի համապատասխանում տուժողի ոտնձգության բնույթին և վտանգավորությանը, ապա այդ դեպքում ևս Հ.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները բացակայում են: Նման պարագայում, ամբաստանյալը պետք է մեղավոր ճանաչվի ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ, այն է՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանագանցմամբ սպանություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը, կայացնել արդարացման դատական ակտ՝ ճանաչելով և հռչակելով Հ.Սուքիասյանի անմեղությունը կամ նրան մեղավոր ճանաչել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 108-րդ կամ 109-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ՝ բավարարվելով փաստացի կրածով, կամ Հ.Սուքիասյանի նկատմամբ նշանակել ազատազրկման ձևով ամենամիակ պատիժը կամ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ

Հ.Սուրբհայանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ) նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Սպանությունը՝ սպորտինսարք մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկել/ն է/ (...):»:

Սուբյեկտիվ կողմից սպանության հանցակազմը բնութագրվում է միայն դիտավորյալ մեղքի ձևով, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի: Ուղղակի դիտավորության դեպքում հանցավորը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում տուժողին մահ պատճառել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ ուրիշի կյանքի համար վտանգավոր արարք է կատարում, նախատեսում է մարդուն կյանքից զրկելու հնարավորությունը, չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս տուժողի մահվան առաջացումը կամ անտարբերություն է դրսևորում այդ հետևանքի նկատմամբ¹:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վրանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխարհային կյանքի ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխարհային կյանքի լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

(...)

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

(...)

14) անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ՝

(...):»:

Անդրադատնալով մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել

¹ Տե՛ս u, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Գ.Թոնունյանի և այլոց վերաբերյալ գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՄԴ/0319/01/10, Ա.Բաղդասարյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշումները:

է, որ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված և նրա համար ցանկալի հետևանքի նկատմամբ դրսևորվում է դիտավորություն (ուղղակի կամ անուղղակի), մինչդեռ, դրա արդյունքում առաջացող ոչ անմիջական, առավել ծանր հետևանքի նկատմամբ՝ անզգուշություն՝ հանցավոր ինքնավստահության կամ անփութության տեսքով, որն էլ հիմնական հանցակազմը վեր է ածում ծանրացնող հանգամանքով հանցակազմի: Հետևաբար, հետևանքի նկատմամբ անձի սուբյեկտիվ վերաբերմունքի բացահայտումն էական նշանակություն ունի մեղքի երկու ձևով կատարվող հանցանքները բացառապես դիտավորությամբ կամ բացառապես անզգուշությամբ կատարվող հանցագործություններից սահմանազատելու և արարքը ճիշտ որակելու հարցում¹:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ հանրորեն վտանգավոր հետևանքի (մահվան) նկատմամբ անձի դրսևորած սուբյեկտիվ վերաբերմունքը պարզելու և արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում կարևոր է գործի փաստական հանգամանքների համակողմանի վերլուծությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով արարքի կատարման եղանակին և օգտագործվող գործիքներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին և տեղակայմանը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագծին՝ հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերություններին, հանցավորի կողմից հանրորեն վտանգավոր գործողությունների դադարեցման պատճառներին և այլն²:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարզառարանված: Պարզառարանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն

¹ Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդրի, դիտավորյալ և անզգուշ մեղքի ձևերի տարանջատման չափանիշների վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ «Վճռաբեկ դատարանի՝ Գ.Թոսունյանի և այլոց վերաբերյալ գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴ/0319/01/10 որոշման 14-19-րդ կետերը:

² Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Ս.Հունիկյանի վերաբերյալ գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08, Ա.Բաղդասարյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10, Գ.Մանուկյանի վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշումները:

արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, գտնվելով պլեռնի ազդեցության տակ, կենցաղային հարցերի շուրջ իր բնակարանում վիճաբանել է Ա.Սուրմենեյանի հետ, որի ընթացքում վերջինին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ իր մոտ եղած դանակով երկու հարված է հասցրել կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսին և ապօրինաբար զրկել կյանքից²:

Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Հ.Սուքիասյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասից վերադրակելով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, ընդգծել է, որ ամբաստանյալը տուժողի հետ գտնվել է ընկերական, մտերմական հարաբերությունների մեջ, իսկ երբ նա սկսել է հանդիմանել իրեն և վիճաբանել իր հետ՝ փորձել է խուսափել լարվածությունից և տուժողին հեռացրել է իր բնակարանից: Երբ տուժողը կրկին վերադարձել

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆ. Գալստյանի* վերաբերյալ գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գ. Խոնույանի* վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, *Ա. Մակարյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Ա. Հակոբյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մ. Հակոբյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԲԴ/0005/11/16 որոշումները:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

է և կովի բռնվել Հ.Սուքիասյանի հետ, մարմնական վնասվածքներ է պատճառել վերջինիս, այդ թվում՝ կոտրել է քթոսկրը, ինչից հետո նա դանակով երկու հարված է հասցրել տուժողին:

Զգալով, որ տուժողը դադարեցրել է հարվածելը և թուլացել է՝ Հ.Սուքիասյանը չի շարունակել նրան դանակով հարվածելը՝ չնայած դրա հնարավորությունն ունեցել է, տուժողին միջանցքից բերել է բնակարան, փորձել է օգնություն ցույց տալ, բժիշկներ հրավիրել, այսինքն՝ տուժողի մահը կանխելու նպատակով ակտիվ գործողություններ է ձեռնարկել: Արդյունքում՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վերոնշյալ հանգամանքները վկայում են ամբաստանյալի մոտ տուժողին սպանելու դիտավորության բացակայության մասին¹:

Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ հետևության առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով ամբաստանյալ Հ.Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ: Մասնավորապես, քրեական գործով ձեռք բերված օբյեկտիվ տվյալներով հաստատվում է, որ ամբաստանյալը, իրական հնարավորություն ունենալով շարունակելու հարվածներ հասցնել և կյանքից զրկել տուժողին, տեսնելով ու գիտակցելով, որ իր կատարածը դեռևս բավարար չէ տուժողին մահ պատճառելու համար, դադարեցրել է դանակով հարվածներ հասցնելը և սկսել է օգնություն ցուցաբերել, ինչը վկայում է ամբաստանյալի մոտ տուժողին սպանելու դիտավորության բացակայության մասին: Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքներում նշված այն հանգամանքին, որ ոչ թե Հ.Սուքիասյանն է գանգահարել շտապօգնություն, այլ վկա Հ.Հովսեփյանը, ընդ որում՝ սեփական նախաձեռնությամբ, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ եթե ամբաստանյալը չցանկանար բժիշկներ հրավիրել և ցանկանար թաքցնել տեղի ունեցածը, ապա գոնե կփորձեր հանդիմանել Հ.Հովսեփյանին՝ բժիշկներ կանչելու համար, որպիսի փաստական տվյալ սույն քրեական գործով ձեռք չի բերվել²:

16. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Սուքիասյանի կողմից տուժողին անզգուշությամբ մահ պատճառելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Մասնավորապես, ստորադաս դատարանները հանցավորի դիտավորության ուղղվածությունն ու բովանդակությունը բացահայտելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործի այնպիսի հանգամանքներ,

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ինչպիսիք են հանցագործության գործիքը, հասցված հարվածների քանակը, պատճառված մարմնական վնասվածքների բնույթն ու տեղակայումը, շարժառիթը, ինչպես նաև հանցագործության իրադրությունը, հանցանքից առաջ և դրա ընթացքում ամբաստանյալի ու տուժողի միջև եղած փոխհարաբերությունների բնույթը: Այսպես՝ Հ.Սուքիասյանն ու Ա.Սուրմենելյանը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել են միմյանց հետ, և նրանց միջև առաջացած խիստ լարվածության արդյունքում ամբաստանյալը *դանակով երկու անգամ* հարվածել է տուժողի համար *կենսական կարևոր նշանակություն ունեցող հարվածի՝ կրծքավանդակի առաջային մակերեսի ձախ կեսին՝ սրտի շրջանում* պատճառելով սրտապարկի, սրտի ձախ փորոքի առաջնային պատի վիրավորումներ, *ինչի հետևանքով վերջինս մահացել է*, իսկ հարվածներից մյուսը չի թափանցել կրծքավանդակի խոռոչ, և վնասել է ձախից 8-րդ կողմանի արտաքին թերթիկը¹:

16.1. Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերոնշյալ պայմաններում, այն է՝ դանակով երկու անգամ տուժողի սրտի շրջանում հարված հասցնելու դեպքում, ամբաստանյալը գիտակցել է իր արարքի հանրային վտանգավորությունը, նախատեսել է տուժողին մահ պատճառելու առնվազն իրական հնարավորությունը, ինչն արդեն իսկ բացառում է հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ անզգույշ մեղքի ձևի առկայությունը:

Մինչդեռ, ստորադաս դատարանները, հաստատված համարելով, որ հանրորեն վտանգավոր հետևանքի նկատմամբ ամբաստանյալն անզգուշություն է դրսևորել, որևէ կերպ չեն հիմնավորել իրենց դիրքորոշումը, չեն հստակեցրել՝ անզգուշության որ տեսակն է առկա եղել՝ հանցավոր ինքնավստահություն, թե անփութություն: Անհրաժեշտ է նկատել, որ հանցավոր ինքնավստահության գիտակցական չափանիշը ենթադրում է հետևանքների առաջացման ոչ թե իրական, այլ վերացական հնարավորության նախատեսում, անձն ընդհանուր գծերով պատկերացնում է, որ այդպիսի արարքներն ընդհանրապես կարող են նման հետևանքներ առաջացնել, սակայն համոզված է, որ ոչ տվյալ դեպքում և տվյալ իրադրության մեջ², իսկ հանցավոր անփութության դեպքում հանցավորը չի նախատեսում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել:

17. Ստորադաս դատարանները՝ որպես ամբաստանյալի մոտ սպանության դիտավորության բացակայությունը հիմնավորող փաստարկներ, մատնանշել են ամբաստանյալի և տուժողի՝ միմյանց հետ ընկերական

¹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Թոսունյանի և այլոց* վերաբերյալ գործով 2016 թվականի մարտի 30-ի թիվ ՍԴ/0319/01/10 որոշման 18-րդ կետը:

հարաբերությունների մեջ գտնվելը, Հ.Սուքիասյանի կողմից տուժողին երկու անգամ դանակով հարված հասցնելուց հետո գործողությունները չչարունակելը, նրան օգնություն ցույց տալը, միջանցքից բնակարան բերելն ու բժիշկներ հրավիրելը (թեև գործով հիմնավորվել է, որ շտապօգնություն կանչվել է ոչ թե Հ.Սուքիասյանի, այլ Հ.Հովսեփյանի միջոցով):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամբաստանյալի ենթադրյալ դրական վարքագիծը՝ երկու անգամ սրտի շրջանում հարվածելուց հետո այլևս հարվածները չչարունակելը, միջանցքից բնակարան բերելը, սույն որոշման 16-րդ կետում վերլուծված փաստական տվյալների ամբողջության համատեքստում՝ չեն կարող բավարար լինել սպանության դիտավորությունը բացատրելու համար: Ընդ որում, վերոնշյալ հանգամանքներով դատարաններն ըստ էության փորձել են հիմնավորել Հ.Սուքիասյանի արարքում հետևանքի նկատմամբ անզգույշ մեղքի առկայությունը, սակայն որևէ կերպ չեն անդրադարձել անզգույշության տեսակին, դրա գիտակցական և կամային չափանիշների առկայության հարցին:

Ընդհանրացնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ ամբաստանյալի դիտավորությունն ուղղված է եղել տուժող Ա.Սուրմենեյանի առողջությանը ծանր վնաս պատճառելուն, որն անզգույշությամբ առաջացրել է վերջինիս մահը, բավարար չափով պատճառաբանված չեն: Նման եզրահանգման գալով՝ դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա այն փաստական հանգամանքները, որոնք թույլ են տալիս բացահայտելու ամբաստանյալի սուբյեկտիվ վերաբերմունքն իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ:

18. Մինևս այն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ամբաստանյալ Հ.Սուքիասյանի պաշտպանի՝ սույն որոշման 10-րդ կետում մեջբերված փաստարկներին առ այն, որ Հ.Սուքիասյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, քանի որ Ա.Սուրմենեյանի կողմից իրականացվել է հանրորեն վտանգավոր ոտնձգություն, որի արդյունքում Հ.Սուքիասյանի առողջությանը պատճառվել է թեթև մարմնական վնասվածք, ոտնձգությունը եղել է հանրորեն վտանգավոր, առկա և իրական, իսկ ամբաստանյալի գործողություններն ուղղված են եղել իր շահերի պաշտպանությանը:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ երբ տուժողը կրկին վերադարձել և կովի է բռնվել ամբաստանյալի հետ, վիճաբանությունների այս դրվագների ընթացքում մարմնական վնասվածքներ է պատճառել վերջինիս, այդ թվում՝ կոտրել է քթոսկրը¹:

Բողոքի հեղինակը Ա.Սուրմենեյանի կողմից հանրորեն վտանգավոր ոտնձգություն իրականացնելու վերաբերյալ փաստարկները բարձրացրել

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

էր վերաքննիչ բողոքում, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից դրանց անդրադարձ չի կատարվել, մինչդեռ, ամբաստանյալի նկատմամբ ոտնձգության առկայության կամ բացակայության հարցի պարզաբանումն էական նշանակություն ունի նրա կատարած արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում, որոնց հնարավոր կլինի անդրադառնալ միայն Առաջին ատյանի դատարանում գործի ըստ էության քննության ընթացքում:

19. Ընդհանրացնելով սույն որոշման 16-18-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Սուքիասյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ) նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Հ.Սուքիասյանին մեղաազրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով վերաորակելով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ մասով դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր, ինչը, նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել: Տուժողի իրավահաջորդ Գայանե Սուրմենեյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի և ամբաստանյալ Հայկ Սուքիասյանի պաշտպան Գ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Հայկ Վաղարշակի Սուքիասյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 13-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 21-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Հայկ Վաղարշակի Սուքիասյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0201/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Գ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ
Կ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

պաշտպան՝

2019 թվականի հունիսի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Ռոբերտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 8-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում հարուցվել է թիվ 58156817 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նույն օրը՝ ժամը 19:30-ին, ձերբակալվել է Արթուր Ռոբերտի Կարապետյանը:

2017 թվականի հունիսի 10-ին Ա.Կարապետյանը որպես մեղադրյալ է ներգրավվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով:
Ա.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2. 2017 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է մեղադրյալ Ա.Կարապետյանի պաշտպան Կ.Կիրակոսյանի բողոքը, որով վերջինս խնդրել է վերացնել թիվ 58156817 քրեական գործով թույլ տրված՝ Ա. Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Գ.Հովակիմյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ նշված բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Դատախազի վերոհիշյալ որոշման դեմ պաշտպան Կ.Կիրակոսյանի ներկայացրած բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշման դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել մեղադրյալ Ա.Կարապետյանը և նրա պաշտպան Կ.Կիրակոսյանը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Կարապետյանի և նրա պաշտպան Կ.Կիրակոսյանի վերաքննիչ բողոքները բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշումը բեկանել է և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել՝ վերացնել մեղադրյալ Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ավագ օպերիվազոր Ն.Գրիգորյանի կողմից 2017 թվականի հունիսի 8-ին կազմված՝ «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին» արձանագրության համաձայն՝ «[2017 թվականի հունիսի 8-ին] ժամը 08:10-ին [ՀՀ ոստիկանության] Զվարթնոց

օղանավակայանի գծային բաժնում սահմանափակվել է Արթուր Կարապետյանի ազատությունը մաքսանենգ ճանապարհով ՀՀ ապօրինի թմրամիջոցներ տեղափոխելու կասկածանքով:

Այդ կասկակցությամբ Արթուր Կարապետյանին բանավոր ծանուցվել են ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ սահմանված իրավունքները, և պարզաբանվել է իրավունքների իրականացման կարգը»:

Հիշյալ արձանագրության մեջ առկա է Ա.Կարապետյանի ստորագրությունը¹:

7. Քրեական գործ հարուցելու մասին 2017 թվականի հունիսի 8-ի որոշման համաձայն՝ պարզվել է, որ. «(...) ՀՀ ոստիկանության ԿՀԴԳ գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Արթուր Ռոբերտի Կարապետյանը 2017թ. հունիսի 8-ին «Զվարթնոց» օղանավակայանով ժամանելով ՀՀ՝ պետական սահմանով մաքսանենգ ճանապարհով ներկրել է թմրամիջոց (...)» և որոշվել է. «Հայաստանի Հանրապետություն մաքսանենգ ճանապարհով թմրամիջոց ներկրելու դեպքի առթիվ հարուցել քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 1-ին մասով (...)»²:

8. 2017 թվականի հունիսի 8-ին որոշում է կայացվել թիվ 58156817 քրեական գործով կատարել Ա.Կարապետյանի մարմնի քննում³, և այդ նպատակով նա տեղափոխվել է «Իզմիրլյան» բժշկական կենտրոն:

9. «Հունիսի 8-ին ժամը 11:50-ին «Իզմիրլյան» Բ/Կ-ից [ՀՀ ոստիկանության] Քանաքեռ-Զեյթունի բաժին հաղորդում է ստացվել, որ նույն Բ/Կ-ի 2-րդ հարկից իրեն վայր է գցել Արթուր Ռոբերտի Կարապետյանը (...): Ա.Կարապետյանը ի վիճակի չէ բացատրություններ տալ:

(...)

Նույն օրը ժամը 15:00-ին (...) զեկուցագիր է ներկայացվել այն մասին, որ թիվ 58156817 քրեական գործով բերման ենթարկված Ա.Կարապետյանը ժամը 10:30-ի սահմաններում «Իզմիրլյան» Բ/Կ-ից փախուստի փորձ կատարելու ժամանակ 2-րդ հարկի պարուհանից ցած է նետել իրեն, որի հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ: (...)»⁴:

10. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնի ավագ քննիչ Ա.Պետրոսյանի կողմից 2017 թվականի հունիսի 8-ին կազմված ձերբակալման արձանագրության համաձայն՝ նույն օրը ժամը 19:30-ին ձերբակալվել է Ա.Կարապետյանը: Նրան պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված՝ կասկածյալի պաշտպանու-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 55:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 19:

³ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 57:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 62:

թյան իրավունքը և նույն օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված՝ կասկածյալի իրավունքները և պարտականությունները¹:

11. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. «(...) /Հ/եւրաքննության մարմնի աշխատակիցը, որպիսին հանդիսացել է նաև ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հեւրաքննության գծով տեսուչ Դ.Մանուկյանը, իրավասու է եղել կայացնել որոշում քրեական գործ հարուցելու մասին, իսկ այն, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը հասարակրվել է ոչ թե ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության պետի, այլ՝ վերջինիս 1-ին տեղակալի կողմից՝ պայմանավորված է եղել նրանով, որ վարչության պետը տվյալ ժամանակահատվածում գտնվել է գործուղման մեջ, և վերջինիս գործառույթային պարտականությունները կատարել է առաջին տեղակալ Ա.Մարգարյանը: Ընդ որում, հեւրաքննության մարմինը քրեական գործ հարուցելուց հետո որևէ դատավարական գործողություն չի կատարել: Քրեական գործը հեւրաքննության մարմնից վերցվել և քննչական ենթակայության կանոնների համապատասխան նախաքննությունը շարունակելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն է ուղարկվել դատախազի կողմից: Անհիմն է նաև Կարեն Կիրակոսյանի այն պնդումը որ թիվ 58156817 քրեական գործը հարուցելու պահին բացակայել են դրա առիթը և հիմքը, քանի որ հեւրաքննության մարմինն իր լիազորություններն իրականացնելու ընթացքում հանցագործության՝ մարսանենգությանը թմրամիջոցներ տեղափոխելու մասին տվյալներ է ստացել: Այդ տվյալները ստացվել են տնական ժամանակ իրականացված օպերատիվ հեւրախուզական միջոցառումների արդյունքում, հեւրաքննության մարմնի աշխատակիցը ներկայացրել է համապատասխան զեկուցագիր, որի հիման վրա նախապարտաբարվել են նյութեր և հարուցվել է քրեական գործ: Հեւրաքննության թիվ 58156817 քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ և որևէ կերպ մեղադրյալ Արթուր Կարապետյանի իրավունքները չեն խախտվել: (...)»²:

12. Վերաքննիչ դատարանն իր՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «(...) Թիվ 58156817 քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ ոստիկանություն ԿՀԴՊ ԳՎ ԿՎ բաժնի հեւրաքննության գծով ավագ տեսուչ Դ.Մանուկյանը 2017թ. հունիսի 08-ին որոշում է կայացրել թիվ 58156817 քրեական գործը հարուցելու մասին: Որոշման պարզեց մասում արձանագրել է հետևյալը. «ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ-ում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Արթուր Ռոբերտի Կարապետյանը 2017թ. հունիսի 08-ին «Զվարթնոց» օդանավակայանով ժամանելով ՀՀ՝ պետական սահմանով մարսանենգ ճանապարհով ներկրել է թմրամիջոց»:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 59-61:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 70-93:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Լևիկ Պողոսյանի վերաբերյալ գործով արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով վերը նշված որոշման պարզեց մասում տեղ գրած ձևակերպումներին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թիվ 58156817 գործով քրեական գործը հարուցելու մասին որոշման մեջ ենթադրաբար հանցագործություն կատարած անձի անունը մատնանշված է, որից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պարժելի արարք, ուստի վերը նշված որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը:

Ասվածից հետևում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում նա իրավունք է ձեռք բերում օգրվելու որոշակի դատավարական իրավունքներից, այդ թվում պաշտպանության իրավունքից, որը Արթուր Կարապետյանի պարագայում չի ապահովվել: Արդյունքում՝ թույլ է տրվել Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտում, ինչը հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի համաձայն բողոքները ճանաչել հիմնավորված և բավարարել:

Անդրադառնալով բողոքների փաստարկներին՝ քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի բացակայության պայմաններում թիվ 58156817 քրեական գործը հարուցելու մասին, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ մինչդարևական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում քրեական գործ հարուցելու որոշման օրինականությունը չի կարող քննարկման առարկա դառնալ: Վերաքննիչ դատարանի եզրահանգումը բխում է Վճռաբեկ դատարանի՝ Վ.Մանուկյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Ամփոփելով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը, մերժելով պաշտպան Կ.Կիրակոսյանի բողոքը, կայացրել է չհիմնավորված դատական ակտ՝ թույլ տալով քրեադատավարական օրենքի էական խախտում, ինչը վիճարկվող դատական ակտը բեկանելու հիմք է:

Ուստի մեղադրյալ Ա.Կարապետյանի և նրա պաշտպան Կ.Կիրակոսյանի բողոքները պետք է բավարարել: Առաջին աստիճանի դատարանի 2018թ. ապրիլի 13-ի թիվ ԵԿԴ/0201/11/17 որոշումը պետք է բեկանել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել թիվ 58156817 քրեական գործով մեղադրյալ Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտումները: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 70-82:

13. Վճռաբեկ բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Բողոքաբերը փաստարկել է, որ թիվ 58156817 քրեական գործը հարուցելու մասին որոշումը վերլուծելով Վճռաբեկ դատարանի՝ *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանը կատարել է սխալ եզրահանգում առ այն, որ չի ապահովվել Ա.Կարապետյանի՝ որոշակի դատավարական իրավունքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունը:

13.1 Մինչդեռ, ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է քրեական գործում առկա նյութերը, որոնք վկայում են այն մասին, որ դեռևս մինչև քրեական գործի հարուցումը՝ բերան ենթարկվելուց անմիջապես հետո, Ա.Կարապետյանը ծանուցվել է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին, իսկ քրեական գործի հարուցումից հետո նույն օրը՝ ժամը 19:30-ին, Ա.Կարապետյանը ձերբակալվել է, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վերջինիս բացատրվել են նրա իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ պաշտպան ունենալու իրավունքը, որպիսի հանգամանքների վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Քրեական գործի հարուցումից հետո մինչև ձերբակալվելը Ա.Կարապետյանի մասնակցությամբ որևէ քննչական գործողություն չի կատարվել, իսկ 19:30-ին է ձերբակալվել այն պատճառով, որ մինչև այդ փախուստի դիմելու նպատակով բժշկական կենտրոնի 2-րդ հարկից ցած նետվելու հետևանքով ստացած մարմնական վնասվածքների պատճառով Ա.Կարապետյանը վերակենդանացման բաժանմունքում բժշկական օգնություն է ստացել: Այդ պատճառով վարույթն իրականացնող մարմինը մինչև ժամը 19:30-ը գրկված է եղել Ա.Կարապետյանի մասնակցությամբ դատավարական գործողություններ կատարելու հնարավորությունից:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ վերոնշյալ փաստական տվյալների վերլուծությունը և Վճռաբեկ դատարանի՝ *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով արտահայտած իրավական դիրքորոշումների հետ դրանց համադրումը թույլ են տալիս արձանագրել, որ տվյալ դեպքում Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տրվել:

14. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի դատական ակտին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը թույլ է տվել Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտում:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:*

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հարկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը»:

17. Վճռաբեկ դատարանը *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ. *«ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ, իսկ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու ինստիտուտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Հետևաբար քրեական գործ հարուցելու մասին որոշումը օրենքին համապատասխան կայացնելու դեպքում որևէ անձի իրավունքները և օրինական շահերը չեն խախտվում: Սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործնականում քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ հաճախ որպես հանցագործություն կատարող մատնանշվում է կոնկրետ անձ, ընդ որում, որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կամ նույնիսկ մեղադրական դատավճռին բնորոշ հասարակական ձևակերպումներով, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործ հարուցելու որոշման իրավական հետևանքների և բողոքարկման հարցերի առնչությամբ իր նախկինում արտահայտած դիրքորոշումները որոշակի զարգացման անհրաժեշտություն ունեն:*

(...) [Բ]րեական գործ հարուցելու մասին որոշումը հանդես չի գալիս որպես ենթադրաբար հանցանք կատարած անձին դատավարական կարգավիճակ փախու հիմք:

(...) [Ա]յն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ փորձվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պայթեղի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը:

(...) [Այս] եզրահանգումը հիմնված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող՝ «քրեական

մեղադրանք» հասկացության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) հմեսարով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված փեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հեղափոխության արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն (Դեվելերն ընդդեմ Բելգիայի (*Deweere v. Belgium*) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգապ թիվ 6903/75, կետեր 44, 46): Այսինքն՝ անձի նկարմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Էկլեն ընդդեմ Գերմանիայի (*Eckle v. Germany*) գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգապ թիվ 8130/78, կետ 73, Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (*Subinski v. Slovenia*) գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգապ թիվ 19611/04, կետ 62, Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (*G.K. v. Poland*) գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգապ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում, մինչդարական վարույթի նկարմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է րվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (*Shabelnik v. Ukraine*) գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգապ թիվ 16404/03, կետ 52):

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մարմանը պարագայում, նա իրավունք է ձեռք բերում օգրվելու որոշակի դատավարական երաշխիքներից, այդ թվում պաշտպանության իրավունքից:

(...) [Այն դեպքում, երբ այդ երաշխիքները չեն սպահովվի, անձը պետք է իրավունք ունենա մինչդարական վարույթի նկարմամբ դարական վերահսկողության կարգով բողոքարկել քրեական գործ հարուցելու մասին որոշումը, քանի որ դրանով խախտվում են անձի սահմանադրական իրավունքներն ու օրինական շահերը, իսկ այդ որոշման բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում դատարանում գործն ըստ էության քննելիս, կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման:

Այսպիսով, այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշմամբ հատարված է համարվում կոնկրետ անձի կողմից քրեորեն պարժելի որևէ արարք կատարելու փաստը, այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պարժատարանական կամ

եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հեղուկում է, որ անձը կարարել է քրեորեն պարծելի արարք, ապա Վճռաբեկ դատարանը գործում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դարական կարգով բողոքարկման (...):»¹:

18. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կարարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհասպաղ ու հանգամանորեն րեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապարաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

Հանցագործության մեջ մեղադրվող անձի՝ իրավունքների այս նույն շրջանակն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

(...):»

«Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշման թիվ 1 հավելվածի համաձայն՝ «(…)

2. Մարդու ազատությունները սահմանափակելիս՝ մարդն իրավունք ունի՝

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշման 23-31-րդ կետերը:

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պարձառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող նաբիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) սրանալու իրավաբանական օգնություն.

3) բացարձայություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացարձայություններ տալուց.

4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.

5) պահանջելու, որպեսզի նաբիկանություն բերելու պահից սկսած երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձին.

6) անհրաժեշտության դեպքում սրանալու բժշկական օգնություն.

7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.

8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, նաբիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադատության կարգով կամ դատախազին կամ դատարան.

9) նաբիկանություն բերվելիս՝ իր պահանջով սրանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում.

10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած նաբիկանության ծառայողին»:

19. Վերոշարադրյալի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է. այն նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք է: Մեղադրյալի (կասկածյալի) պաշտպանության իրավունքը նրան վերապահված դատավարական իրավունքների ամբողջությունն է, որը նրան հնարավորություն է տալիս հանդես գալու որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ, լրիվ կամ մասնակիորեն հերքելու իրեն վերագրվող հանցանքը կատարած լինելու պնդումը, ինչպես նաև պաշտպանելու իր իրավունքներն ու օրինական շահերը: Պաշտպանության իրավունքն անձի համար գործուն «զենք» է՝ դիմակայելու իշխանական լիազորություններով օժտված

պետական մարմինների գործողություններին: Այս առումով պաշտպանության իրավունքը քրեական դատավարության խնդիրների, մասնավորապես՝ հանցավոր արարքի հետ կապված պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից անձի պաշտպանության, ինչպես նաև անօրինական կամ առանց անհրաժեշտության դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման չենթարկվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 2-րդ մասի 3-րդ կետ) իրացման միջոցներից է¹:

20. Ընդ որում, վերոշարադրյալ կոնվենցիոնալ և ներպետական իրավական կարգավորումների վերլուծությունից բխում է, որ պաշտպանության իրավունքը ներառում է նաև որոշակի կոնկրետ իրավունքների ոչ սահմանափակ շրջանակ, որոնց զգալի մասից (օրինակ՝ իր իրավունքների, իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին տեղեկացվելու, իրավաբանական օգնություն ստանալու իրավունք) անձին օգտվելու հնարավորություն պետք է տրամադրվի հանցանք կատարած լինելու կասկածի մասին իրեն պաշտոնապես տեղեկացնելու վաղ փուլից սկսած՝ անկախ կասկածյալ (մեղադրյալի) դատավարական կարգավիճակի առկայությունից: Վերահաստատելով և զարգացնելով *Լևիկ Պողոսյանի* վերաբերյալ գործով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարող մատնանշելն ինքնին չի հանգեցնի անձի իրավունքների խախտման, եթե վերջինս պատշաճ կարգով տեղեկացվում է պաշտպանության իրավունքի մասին և նրա համար ապահովվում են դրա բովանդակությունը կազմող նվազագույն իրավունքների իրացման համար անհրաժեշտ դատավարական երաշխիքները: Ըստ այդմ էլ քրեական գործ հարուցելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում պետք է քննարկման առարկա դառնա այն հարցը, թե արդյոք նշված որոշման մեջ կոնկրետ անձին որպես հանցանք կատարող մատնանշած լինելու, այսինքն՝ փաստացի քրեական հետապնդում հարուցելու պարագայում պահպանվել են վերջինիս՝ որպես ենթադրյալ հանցանք կատարած անձի համար երաշխավորված դատավարական իրավունքները: Քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձի անունը մատնանշելը, ինքնին դեռևս չի վկայում վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման մասին և դատարանը կարող է որոշում կայացնել անձի իրավունքների և ազատու-

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Նորիկ Պողոսյանի* գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅԲԲԴ-2/0153/01/08 որոշման 25-րդ կետը, *Հեղինե Գալստյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշման 29-րդ կետը, *Հայկ Սիմոնյանի* գործով 2017 օգոստոսի 30-ի թիվ ԵԱԴԴ/0027/01/15 որոշման 13-րդ կետը, *Արթուր Մամաջանյանի* գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշման 21-րդ կետը:

թյունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին, եթե անձին հնարավորություն չի տրվել օգտվելու համապատասխան դատավարական իրավունքներից:

21. Սույն գործի նյութերի համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելիս Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտում վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ չի տրվել¹: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, մեջբերելով քրեական գործ հարուցելու մասին որոշման ձևակերպումները, արձանագրել է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում նա իրավունք է ձեռք բերում օգտվելու որոշակի դատավարական իրավունքներից, այդ թվում պաշտպանության իրավունքից, որն Ա.Կարապետյանի պարագայում չի ապահովվել²:

21.1 Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դեռևս մինչև քրեական գործի հարուցումը՝ բերման ենթարկվելուց անմիջապես հետո, Ա.Կարապետյանը ծանուցվել է պաշտպանության իրավունքի բովանդակությունը կազմող և դրանից բխող նվազագույն իրավունքների մասին³, իսկ երբ ձերբակալվել է, վերջինիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բացատրվել են նրա իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ պաշտպան ունենալու իրավունքը⁴: Քրեական գործի հարուցումից հետո մինչև ձերբակալվելը Ա.Կարապետյանի մասնակցությամբ որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարվել, և վերջինս միայն 19:30-ին է ձերբակալվել այն պատճառով, որ մինչ այդ բժշկական կենտրոնի 2-րդ հարկից ցած նետվելու հետևանքով ստացած մարմնական վնասվածքների պատճառով գտնվել է վերակենդանացման բաժանմունքում⁵:

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-20-րդ կետերում ներկայացված իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճառաբանական հատվածում առկա է Ա.Կարապետյանի՝ որպես ենթադրյալ հանցանք կատարած անձի մասին նշում, այնուամենայնիվ վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տվել վերջինիս պաշտպանության իրավունքի խախտում

¹ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

այնքանով, որքանով նրան պարզաբանվել են պաշտպանության իրավունքի բովանդակությունը կազմող իրավունքները:

23. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն արձանագրելով Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտման փաստը, և գտնելով, որ չի ապահովվել վերջինիս պաշտպանության իրավունքը, չի մանրամասնել, թե ինչու է այն դրսևորվել:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ իրավաչափ չեն Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը թույլ է տվել Ա.Կարապետյանի իրավունքների և ազատությունների խախտում:

25. Այսպիսով, Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված դատական ակտ, քանի որ դրանում արված հետևությունները չեն բխում սույն գործի նյութերից: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, որն էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը բեկանելու հիմք է:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Արթուր Ռոբերտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 13-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմանը արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0005/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼԲՈՆՅԱՆԻ
Հ.ԵՆՈՔՅԱՆԻ

2019 թվականի հունիսի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ամբաստանյալ Արարատ Արմենի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 11-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Բ Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի հուլիսի 26-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության քննիչ Գ.Միրզոյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 58210114 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ Արարատ Արմենի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և 215-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 2-ի որոշմամբ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով:

2017 թվականի փետրվարի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճռով Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նրա կողմից այդ արարքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով և 34-268-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Սարգսյանը դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ մաքսանենգության առարկա հանդիսացող գույքի բռնագրավմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Ա.Սարգսյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ մաքսանենգության առարկա հանդիսացող գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշանակված պատժին՝ 9 (ինը) տարի ժամկետով ազատազրկմանը, մասնակի գումարվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով նշանակված պատժից՝ 4 (չորս) տարի 14 (տասնչորս) օր ժամկետից 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկումը, և պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ մաքսանենգության առարկա հանդիսացող գույքի բռնագրավմամբ:

Նշանակված պատժին հաշվակցվել է ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 10-ի դատավճռով նշանակված պատժի կրած մասը՝ 4 (չորս) ամիս 10 (տասը) օրը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի 7 (յոթ) ամիս 20 (քսան) օր ժամկետով՝ մաքսանենգության առարկա հանդիսացող գույքի բռնագրավմամբ: Ա.Սարգսյանի պատժի կրման սկիզբը հաշվվել է 2017 թվականի դեկտեմբերի 20-ից:

3. Մեղադրող Հ.Շոքոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունիսի 11-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ «(...) /Ն/ա (...) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի դատավճռով նշանակված 9 տարի ժամկետով ազատազրկման ձևով պարիժը ՀՀ ԱԾ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կրելու ընթացքում կապ է հաստատել Ֆրանսիայի Հանրապետությունում քնակվող իր ծանոթ, քննությամբ ինքնությունը դեռևս չպարզված «Չիկո» մականունով անձի հետ և սպորինի իրացման նպատակով թմրամիջոց ձեռք բերելու համար համաձայնության եկել վերջինի կողմից ընդհանուր՝ 1.008 գրամ քաշով «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող 126 հատ դեղահատ փոսպային առաքման միջոցով, մաքսային հսկողությունից թաքցնելով, իր մոր՝ Անահիտ Գալստյանի անվամբ Հայաստանի Հանրապետություն ուղարկելու շուրջ: Իր հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Անահիտ Գալստյանին կարգադրել է փոսպային առաքման համապատասխան գրասենյակից սրանալ առաքված ծանրոցը, այն պահել իր մոր և սպասել հետագա ցուցումների:

Այնուհետև, «Չիկո» մականունով նշված անձը, մաքսային հսկողության ընթացքում իր կողմից ուղարկվելիք թմրամիջոցների հայրնաբերումը դժվարացնելու նպատակով, 126 հատ դեղահատերում պարունակվող առանձնապես խոշոր չափերով՝ 1.008 գրամ քաշով, «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցը տեղափոխել և քողարկել է նույն ծանրոցով առաքվող հագուստների մեջ և դրանք տեղադրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք առաքելու համար նախատեսված ծանրոցում:

«Չիկո» մականունով նշված անձը 2014 թվականի հունիսի 30-ին, ուղեկցող փաստաթղթերում խաբեությամբ նշելով, որ ծանրոցում իբրև թե առկա է միայն 3.132 կգ քաշով հագուստ ծանրոցը «Համլետ Գալստյան» անձի փվյալներով Անահիտ Գալստյան անվամբ առաքել է Հայաստանի Հանրապետություն, այդպիսով թմրամիջոցը մաքսային հսկողությունից թաքցնելու միջոցով սպորինի անցկացնելով Հայաստանի Հանրապետության պետական սահմանով:

Անահիտ Գալստյանն, առանց նյութական շահագրգռվածության, նահապետ Կրեյտցի չլինելով դրանում թմրամիջոցի առկայության մասին, Արարար Սարգսյանի կարգադրության համաձայն՝ 2014 թվականի հուլիսի 15-ին գնացել է «Հայփոսթ» ՓԲ ընկերության Երևան քաղաքի Տիգրան Պետրոսյան 17 հասցեում գրանվող թիվ 0054 փոստային բաժանմունք, արացել ծանրոցը, որից հետո բերման է ենթարկվել ՀՀ կառավարությանն առնչվող նարիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, որտեղ անձնական խուզարկությամբ նրա մոտ գրանվող ծանրոցի միջից հայտնաբերվել է վերը նշված քանակությամբ թմրամիջոցը (...)¹:

5.1. Ա.Սարգսյանի և այլ անձանց միջև կատարված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ձայնագրառումներով լազերային սկավառակի գնության արձանագրության համաձայն՝ Ա.Սարգսյանը, ի թիվս այլնի, 2014 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 18:54-ին, իր օգտագործած 094-35-53-43 հեռախոսահամարից 093-94-06-07 հեռախոսահամարի բաժանորդի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսազրույց (հատվածներ հեռախոսազրույցից).

«Անահիտ: - (...) [Խոսացի՞ր Ֆրանսիա:

[Արարար]: - Հա:

Անահիտ: - Պաղերժկա կանի, չէ՞ քեզ:

[Արարար]: - Հա դե պիտի անի էլի, ես շար գիրեմ:

Անահիտ: - Հա էլի, գոնե թող անի էլի օֆ:

(...)

Անահիտ: - Դե չգիրի՞ ինքը ինչ վիճակա մտոր, չե՞ս ասել:

[Արարար]: - Գիրի, ոնց չգիրի:

Անահիտ: - Դե ես ոնց հասկանում եմ՝ ընենց չի, ինքը որ պաղերժկա ա անում, ինքն էլ ա ըտեղ օգրվում, չէ՞:

[Արարար]: - Հա:

Անահիտ: - Հա, բա էլ ինչ կա, էդքան առանք եվրոները ուղարկեցիր իրան, ճի՞շտ ա:

[Արարար]: - Հա դե լավ, մի խոսա ըտենց քաներ:

Անահիտ: - Լավ (...)»²:

Ա.Սարգսյանը 2014 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 00:39-ին, իր օգտագործած 098-93-33-84 հեռախոսահամարից 093-22-24-96 հեռախոսահամարի բաժանորդի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսազրույց (հատվածներ հեռախոսազրույցից).

«(...) [Արարար]: - Չէ, հեր ջան, ցավդ տանեմ, ինքը չի իմացել՝ ինչ ա, ոնց ա:

Տ: - Ախպեր, հա ինքը չգիրի, բայց դուք իրան պատրասկա եք անում չէ՞, տղա ջան:

¹ Տե՛ս՝ u քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 89-90:

² Տե՛ս՝ u քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 17:

Արարար: - Հա, ըբենց ա դուրս գալիս:

Տ: - Ըբենցա դուս գալիս, որն ա, փղա ջան, բա որ դու գիտես, դու քո մորդ պաստավկա ես սնու՞մ, արա:

Արարար: - Ես հո էդ մորքով չեմ բան արել, այ ցավդ փանեմ:

Տ: - Ահապեր, հասկացանք, որ դու էդ մորքով չես արել, բայց սրեղ մի հար բայց գոյություն ունի, հիմի քո ընկերն ա, եսիմ ով ա, ասել ես՝ ահապեր ձեռ բռնի, սենց արա, ընենց արա, էն էլ ասել ա ձեռ բռնելու միակ ձեռնը երևի սա ա, ահապեր գիտես քեզ ինչքան փողեր կրոնես, էսի դրկեմ՝ դու ծախի, սենց արա, նենց արա, բա դու չգիտես՝ ոչ բառիկին եմ սիրում, ոչ դեղ սնողին եմ սիրում (...):»¹:

Ա.Սարգսյանը 2014 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 08:53-ին, իր օգտագործած 077-18-13-27 հեռախոսահամարից 098-70-17-44 հեռախոսահամարի բաժանորդի հետ ունեցել է հետևյալ բովանդակությամբ հեռախոսազրույց (հատվածներ հեռախոսազրույցից).

«[Արարար]: - Արա (...) էս ինչ թարսություն եղավ, ահապեր:

Տ: - Արա, սուս արա, (...) ոչ մեկին հաստատել էրի:

[Արարար]:- Չէ, արա հորս արև:

Տ: - Որովհետև 99 փողոս էրի մեջտեղը բ... պիտի լինի, ահապեր: Զոկում ես:

[Արարար]:- Հա:

(...)

[Արարար]: - Ինչ մրածենք: Բան չենք կարա մրածենք չէ՞, արա մի հար էլ 500 մանեթ արև եմ կրված, արա փվող եմ:

Տ: - Դոլար, թե հազար:

[Արարար]: - Հազար, ահապեր:

Տ: - Էն փողը, հա՞:

[Արարար]: - Չէ, էսի թավան փված ա:

Տ: -Թավանի փող ա՞ ընգեր ջան:

[Արարար]: - Հա, արա մորս արև:

Տ: - Արա, (...), դե լավ էլի ահապեր, իի ես խաղում արա էս նեղ մաջալին:

[Արարար]: - Արա, ես շար գիտեմ արա, Եղո ջան, էշի նման, ես էլ ասի յանի էսի սաղ ճիշտ կլնի, կրուրիս կլնեմ էլի մի ձև կասեմ կրան ահապեր փող, ջոկում ես, ընենց էր, որ 16 հարիկն էլ մերն էր ջոկիր:

Տ: Հա:

[Արարար]: - Տալու էին ինձ էրի, 16 հարիկի խաթր ասի բանով դրկեն ահապեր, (...):

Տ: - Հա, ահապեր, (...):»²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 25:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 28, 30:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) [Ս]ույն քրեական գործում առկա են ապացույցներ, որոնք հիմնավորում են ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից իրեն մեղաազարված ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով հանրորեն վրանգավոր արարք կատարած լինելու հանգամանքը:

(...) Ինչ վերաբերում է ամբաստանյալ Արարատ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքին, ապա դատարանը (...) գալիս է հետևություն, որ նախաքննական մարմնի կողմից ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կարող էր հիմնավորել Արարատ Սարգսյանի կողմից ապօրինի իրացնելու նպատակով թմրամիջոցներ ձեռք բերելու հանգամանքը: Ավելին՝ սույն քրեական գործի շրջանակներում հարցաքննված վկաները որևէ տեղեկություն չեն հայտնել Արարատ Սարգսյանի կողմից թմրամիջոցներ ապօրինի իրացնելու դեպքի վերաբերյալ, ավելին՝ ամբաստանյալ Արարատ Սարգսյանը նույնպես հերքել է այդ հանգամանքը: Տվյալ պարագայում հարկանշական է նաև սույն քրեական գործի շրջանակներում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանգամանքը, ինչի արդյունքում գաղտնալսվել է ամբաստանյալ Արարատ Սարգսյանի հեռախոսային խոսակցությունները և կատարվել է այդ գաղտնալսման արդյունքում ձեռք բերված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման զննություն, ինչի արդյունքում նույնպես որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից ապօրինի կերպով թմրամիջոց իրացնելու հանգամանքի վերաբերյալ: Ավելին՝ ամբաստանյալ Արարատ Սարգսյանը 2014 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 08:53-ին, իր օգտագործած 077-18-13-27 հեռախոսահամարից հեռախոսազրույց է ունեցել 098-70-17-44 հեռախոսահամարի բաժանորդի հետ հեռկայա բովանդակությամբ (հարվածներ հեռախոսազրույցից)՝ «Արարատ: - Արա, «հայտյում է», էս ինչ թարսություն եղավ, ախպեր, Տ-ն պարասիանում է՝ «Արա, սուս արա, «հայտյում է», ախպեր, ոչ մեկին հասարար չես խոսարացնել էդի, Արարատ: - «Չէ, արա հորս արև»», սույն հանգամանքն իր հերթին հիմք է տալիս դատարանին, ներքին համոզմամբ գալու հետևության, որ ամբաստանյալ Արարատ Սարգսյանը նշված «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցն ապօրինի ձեռք է բերել, սակայն ոչ իրացման նպատակով, (...) դատարանը գրնում է, որ նախաքննական մարմնի կողմից, հետագայում նաև դատաքննության ընթացքում ձեռք չի բերվել գեթ մեկ ապացույց, որի հիման վրա հնարավոր կլինի գալու հիմնավոր հետևության ամբաստանյալ Արարատ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության հարցում: Բացի այդ,

նախաքննական մարմնի կողմից հնարավոր չի եղել պարզելու ուն «Չիկոյի», ինչպես նաև այդ թմրամիջոցն ամբաստանյալ Արարատ Սարգսյանից հերքալու մեղք բերող անձի ինքնությունները, որով կարող էր նախաքննական մարմինը հիմնավորել ամբաստանյալ Արարատ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը:

(...) [Գ]ատարանը գրնում է, որ ամբաստանյալ Արարատ Սարգսյանի գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հարկանիշներին, սակայն նրա գործողությունները փաստացի իրենց մեջ պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հարկանիշներ, ինչն ըստ էության դրսևորվել է ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից ապօրինի կերպով առանց իրացնելու նպատակի թմրամիջոց՝ այն է «բուպրենորֆին» տեսակի դեղահատեր Ֆրանսիայի Հանրապետությունից ձեռք բերելով (...):¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) [Ա]նդրադատնալով Առաջին արյանի դատարանի կողմից ամբաստանյալ Արարատ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրված արարքը նույն օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերադրակելու իրավաչափությանը, փաստում է, որ (...) որևէ ապացույցով չի հիմնավորվում ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից ապօրինի իրացնելու նպատակով թմրամիջոցներ ձեռք բերելու հանգամանքը: Ուշագրավ է նաև, որ սույն քրեական գործի շրջանակներում հարցաքննված վկաները որևէ տեղեկություն չեն հայտնել Արարատ Սարգսյանի կողմից թմրամիջոցներ ապօրինի իրացնելու դեպքի վերաբերյալ, ավելին՝ ամբաստանյալ Արարատ Սարգսյանը նույնպես հերքել է այդ հանգամանքը: Բացի այդ, սույն քրեական գործի շրջանակներում իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու արդյունքում գաղտնալսվել է ամբաստանյալ Արարատ Սարգսյանի հեռախոսային խոսակցությունները և կատարվել է այդ գաղտնալսման արդյունքում ձեռք բերված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գնություն, ինչի արդյունքում նույնպես որևէ փաստական փյվյալ ձեռք չի բերվել ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից ապօրինի կերպով թմրամիջոց իրացնելու հանգամանքի վերաբերյալ (...):

(...) [Թ]վով 126 հար «բուպրենորֆին» տեսակի դեղահատերը դեռևս չեն կարող անհերքելիորեն վկայել, որ դրանք ամբաստանյալ Արարատ Սարգսյանի կողմից ձեռք են բերվել ապօրինի իրացնելու համար: Բանն

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 179-201:

այն է, որ սպորինի իրացման փաստը կարող է հաստատվել գործով առկա փաստական փոխադրման քաղաքական համակցությամբ, իսկ ինքնին թմրամիջոցի չափը (քանակը) գործով առկա մյուս փաստական հանգամանքներից անջատ չի կարող որևէ դերակատարում ունենալ նշված հանգամանքի սպացուցման հարցում:

(...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղաազրվող արարքը նույն օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերաորակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են և հիմնավոր (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղաազրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերաորակելով, թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

8.1. Ի հիմնավորումն վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ և Առաջին ատյանի դատարանների կողմից պատշաճ վերլուծության չեն ենթարկվել Ա.Սարգսյանի կողմից օգտագործված հետախուսահամարների խոսակցությունների գաղտնալսման արդյունքները, որոնք պարունակում են Ա.Սարգսյանի կողմից թմրամիջոցները հատկապես իրացնելու նպատակով ձեռք բերելու մասին տեղեկություններ:

Ա.Սարգսյանի հետախուսային խոսակցությունների վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները որևէ վերլուծություն չեն կատարել, և դատական ակտերից անհասկանալի է, թե ինչու դրանք հաշվի չեն առնվել թմրամիջոցները ձեռք բերելու նպատակի վերաբերյալ դիրքորոշման ձևավորման համար:

8.2. Բողոք բերած անձը նշել է նաև, որ դատարանների այն պատճառաբանությունները, որ քրեական գործով ձեռք չեն բերվել Ա.Սարգսյանի կողմից թմրամիջոցն իրացնելու նպատակով ձեռք բերելու փորձ կատարելու վերաբերյալ ապացույցներ, անհիմն են, քանի որ հետախուսային խոսակցություններից բխող փաստական տվյալներով և դրանց

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 59-86:

ներկայացված վերլուծությանը հաստատվում է իրացման նպատակը:

Արդյունքում բողոքները փաստական տվյալների, դրանց վերլուծության և դատավճռում բերված դատողությունների ու պատճառաբանությունների համադրմամբ փաստել է, որ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերադրակելու մասով դատական ակտը պատճառաբանված չէ: Վերաքննիչ դատարանը բառացիորեն վերահաստատել է Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները, իսկ կայացված դատական ակտում չի վերլուծել մեղադրանքի կողմի ներկայացված փաստարկները:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակի՝ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերադրակելու առումով Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ա.Սարգսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է. *«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը սպացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված սպացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված սպացույցի վերլուծության, այն այլ սպացույցների հետ համադրելու, նոր սպացույցներ հավաքելու, սպացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով»:*

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր սպացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլարելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:*

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը,

դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով¹:

II. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

¹ Տե՛ս, mutatis mutandis, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Հնայակ Դավթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս, և մինչև նույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին¹:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը Ա.Սարգսյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նա, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրելու ընթացքում, կապ է հաստատել Ֆրանսիայի Հանրապետությունում բնակվող իր ծանոթի հետ և ապօրինի իրացման նպատակով թմրամիջոց ձեռք բերելու համար համաձայնության է եկել վերջինիս հետ ընդհանուր՝ 1.008 գրամ քաշով «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող 126 հատ դեղահաբ փոստային առաքման միջոցով Հայաստանի Հանրապետություն ուղարկելու շուրջ²:

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ՝

1. նախաքննական մարմնի կողմից ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կարող էր հիմնավորել Ա.Սարգսյանի կողմից ապօրինի իրացնելու նպատակով թմրամիջոցներ ձեռք բերելու հանգամանքը,

2. սույն քրեական գործի շրջանակներում ձեռք բերված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գնության արդյունքում նույնպես որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել՝ ամբաստանյալ Ա.Սարգսյանի

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Ֆրունզիկ Գալստյանի* վերաբերյալ գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, *Գևորգ Խնուսյանի* վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12, *Արսեն Մակարյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, *Արամայիս Հակոբյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, *Մարտին Հակոբյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՐԴ/0005/11/16 որոշումները:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

կողմից ապօրինի կերպով թմրամիջոց իրացնելու հանգամանքի վերաբերյալ,

3. ամբաստանյալ Ա.Սարգսյանի գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, սակայն փաստացի իրենց մեջ պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ¹:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը նույն օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով վերաորակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են և հիմնավոր²:

13. Վճռաբեկ դատարանը, նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 10-11-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել սույն գործում առկա ապացույցների համակցությունը: Մասնավորապես, ստորադաս դատարանների կողմից պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացվել ամբաստանյալ Ա.Սարգսյանի հետախուսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները, դրանք վերլուծվել են հատվածաբար, չեն գնահատվել գործում առկա այլ ապացույցների համակցության մեջ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում դիրքորոշում է արտահայտել առ այն, որ թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնին դրանք իրացնելու նպատակի անվիճելի ապացույց չէ, և որ իրացման նպատակը պետք է գնահատվի միայն դրա մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ³: Սույն գործով Ա.Սարգսյանը փորձել է իր մոր՝ Անահիտ Գալստյանի միջոցով ձեռք բերել փոստային առաքմամբ ուղարկված մեծ քանակությամբ՝ 1.008 գրամ քաշով «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող 126 հատ դեղահաբ: Թեև թմրամիջոց պարունակող դեղահաբերի վերոնշյալ մեծ քանակը դեռևս հիմք չէ միանշանակ արձանագրելու, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանն այն ցանկացել է ձեռք բերել իրացնելու նպատակով, այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն փաստական տվյալն անհրաժեշտ էր գնահատել գործում առկա այլ ապացույցների համակցության մեջ:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մադրանիկ Ասլանյանի* վերաբերյալ գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշումը:

Մասնավորապես, գաղտնալսված հեռախոսային խոսակցությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ա.Սարգսյանը քրեակատարողական հիմնարկում նյութական խնդիրներ է ունեցել, ինչը հաստատվում է ոչ միայն վերջինիս մոր՝ Ա.Գալստյանի, այլև 098-70-17-44 հեռախոսահամարի բաժանորդի հետ 2014 թվականի հուլիսի 16-ին՝ ժամը 08:53-ին տեղի ունեցած հեռախոսագրույցով, որտեղ խոսք է գնում Ա.Սարգսյանի՝ 500.000 ՀՀ դրամ պարտք ունենալու, վեջինիս կողմից ինչ-որ ձևով փող ստանալու, ինչպես նաև 16 հատն իրեն պահելու մտադրության մասին¹: Վերոնշյալ փաստական տվյալները ստորադաս դատարանները չեն վերլուծել և որևէ գնահատականի չեն արժանացրել, փոխարենը փաստել են, որ սույն քրեական գործի շրջանակներում իրականացված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գննությամբ որևէ տվյալ ձեռք չի բերվել՝ ամբաստանյալ Ա.Սարգսյանի կողմից **ապօրինի կերպով թմրամիջոց իրացնելու վերաբերյալ**, որպիսի հանգամանքը նույնիսկ չի բխում վերջինիս առաջադրված մեղադրանքի էությունից և բովանդակությունից, քանի որ Ա.Սարգսյանին մեղադրանք էր առաջադրվել **ապօրինի իրացման նպատակով** առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ձեռք բերելու փորձի համար²:

13.1. Ա.Սարգսյանի գաղտնալսված հեռախոսային խոսակցությունների ձայնագրության արդյունքների պատշաճ վերլուծությունը և դրանց գնահատումը գործում առկա այլ ապացույցների, այդ թվում՝ ձեռք բերվելիք թմրամիջոցի չափերի համատեքստում, կարևոր նշանակություն կարող էր ունենալ ամբաստանյալի մոտ իրացման նպատակի առկայությունը պարզելու հարցում: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումը, ընդգծում է, որ ապացույցի առանձին տեսակներ, պայմանավորված ապացուցողական տեղեկատվության ձեռք բերման միջոցներով և դրանց արդյունքների՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ամրագրված լինելու հանգամանքով (օրինակ՝ տեսանկարահանումների, լուսանկարահանումների, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները և այլն), օժտված են բարձր արժանահավատություն ունեցող ապացույց համարվելու համար անհրաժեշտ չափանիշներով և կարող են այս կամ այն փաստական հանգամանքի հաստատման կամ հերքման առումով անփոխարինելի նշանակություն ունենալ, ուստի դրանցով հաստատվող փաստական տվյալները կարող են հերքվել ոչ այլ կերպ, քան այդ ապացույցների արժանահավատությամբ չզիջող ապացույցով կամ ապացույցների համակցությամբ³:

¹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հակոբյանի* վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14 որոշումը:

14. Մինևույն ժամանակ, Առաջին աստիճանի դատարանը վերլուծության է ենթարկել հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքների միայն մեկ հատված և «խոսացել» բառը նշել է որպես «խոստացել»՝ դրանով իսկ գալով կատեգորիկ հետևության առ այն, որ ամբաստանյալ Ա.Սարգսյանը նշված «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոցն ապօրինի ձեռք է բերել, սակայն ոչ իրացման նպատակով¹: Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ստորադաս դատարանը հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքները ոչ միայն հատվածաբար է գնահատման ենթարկել, և դրանք չի դիտարկել ամբողջության մեջ, այլև իր դատական ակտերում նշել է «**խոսացել**» բայը, մինչդեռ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ձայնագրառումներով լազերային սկավառակի գնմության արձանագրության մեջ նշված է «**խոսացել**» բառը², որպիսի պայմաններում խոսակցության բովանդակությունը կարող է էականորեն փոխվել:

Վերաքննիչ դատարանն իր հերթին որևէ անդրադարձ չի կատարել վերոնշյալ անհատակությանը, չի փորձել պարզաբանել այն, փոխարենը նույնությամբ շարադրել է Առաջին աստիճանի դատարանի դատական ակտում ներկայացված փաստարկները:

15. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում վերլուծված փաստական տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ սույն քրեական գործի շրջանակներում ձեռք բերված հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գնմության արդյունքում որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել ամբաստանյալ Ա.Սարգսյանի կողմից ապօրինի իրացնելու նպատակով թմրամիջոցներ ձեռք բերելու հանգամանքի վերաբերյալ, բավարար չափով պատճառաբանված չեն, դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել վերոնշյալ ապացույցը, չեն գնահատել այն գործում առկա այլ ապացույցների համակցության մեջ, ինչի արդյունքում կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր:

Վերոշարադրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Սարգսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ,

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, արարքի քրեաիրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արարատ Արմենի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0078/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2019 թվականի հունիսի 12-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ամբաստանյալ Արամ Զավենի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի փետրվարի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 60104018 քրեական գործը:

Նախաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արամ Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով:

2018 թվականի փետրվարի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նշանակված տուգանքի վճարման համար ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի հիման վրա սահմանվել է ժամկետ՝ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը: Ա.Գրիգորյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ մեղադրողի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2018 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 1:20-ին, Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցում, առանց տրանսպորտային միջոց վարելու իրավունքի և ոչ սթափ՝ 0.26 մգ/լ ալկոհոլ օգտագործած վիճակում վարել է «Տոյոտա» մակնիշի 22 NN 211 պ/հ ավտոմեքենան, որի համար ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության 1-ին սպայական գումարտակի 3-րդ սպայական դասակի տեսուչ Ռոբերտ Համլետի Գրիգորյանի կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ԱԴ 422397 արձանագրությունը, որը ՃՈ համակարգչային բազա մուտքագրելիս պարզվել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ին հրապարակված և 2017 թվականի մարտի 17-ին օրինական ուժի մեջ մտնող դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախարեսված հանցագործություն կատարելու համար Արամ Գրիգորյանը դատապարտվել է ազատազրկման՝ երկու տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելով մեկ տարի ժամկետով և պատիժը պայմանականորեն չի կիրառվել ու նշանակվել է փորձաշրջան՝

մեկ տարի ժամկետով: Այսպիսով, Արամ Զավենի Գրիգորյանը մեկ տարի ժամկետով գրկված լինելով փրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից և գրնվելով փորձաշրջանի մեջ, 2018 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 1:20-ին, Երևան քաղաքի Վազգեն Սարգսյանի փողոցում, առանց փրանսպորտային միջոց վարելու իրավունքի և ոչ աթամի՝ 0.26 մգ/լ ալկոհոլ օգրագործած վիճակում վարել է «Տոյոտա» մակնիշի 22 NN 211 պ/հ ավտոմեքենան»¹:

6. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Արամ Գրիգորյանի նկատմամբ պատրիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես կատարած հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, այնպես էլ ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ այն, որ ամբաստանյալը հարևանների կողմից բնութագրվում է դրականորեն:

Որպես ամբաստանյալ Արամ Գրիգորյանի պատասխանատվությունը և պատրիժը մեղմացնող հանգամանք է դիտում այն, որ վերջինիս ինամքի տակ են գրնվում նրա մայրը, կինը, քույրը և չորս երեխաները, որոնցից երկուսը՝ մինչև տասնչորս տարեկան (...):

Որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատրիժը ծանրացնող հանգամանք դատարանը չի հայտնաբերել: Դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Արամ Գրիգորյանն իր կատարած հանցանքի համար ենթակա է պատրիժի, որը պետք է կրի: Եման պայմաններում և հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Եթե դատարարայալը փորձաշրջանի ընթացքում (...) ինչպես նաև անգորշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատրիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը, ուտրի դատարանը գրնում է, որ թիվ ԵԿԿ/0127/01/15 քրեական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի ապրիլի 1-ի դատավճռով սահմանված պատրիժը պայմանականորեն չկիրառելը նպատակահարմար չէ վերացնել»²:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը հանգում է (...) հետևության, որ Դատարանի կողմից ամբաստանյալ Ա. Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի սահմաններում տուգանքի ձևով պատրիժ նշանակելը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից, կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատրիժի նպատակները (...):

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 45-46:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 33:

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից երևում է, որ դատապարտյալի կողմից փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտարկումներ կատարելու դեպքում պարիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը գտնվում է դատարանի հայեցողության շրջանակներում:

(...)

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով կատարած ոչ մեծ ծանրության հանցանքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, սույն գործով հաստատված վերջինիս անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունն իրենց համակցությամբ, նպատակահարմար չի գտնվում վերացնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի դատավճռով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ հերքությունը, ի թիվս վերոգրյալ հանգամանքների, կայանում է նրանում, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելը վերացնելու և սույն օրենսգրքի 67-րդ հոդվածի կանոններով պարիժ նշանակելու արդյունքում, գործով հաստատված վերջինիս ընդհանրական դրությունը, նրա խնամքին գտնվող անձանց առկայությունը (մայրը, կինը, քույրը և չորս երեխաները, որոնցից երկուսն անչափահաս են) կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա ընդհանրիկ կյանքի պայմանների վրա: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ:

Բողոքաբերը փաստարկել է, որ Ա.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ չնշանակելը և նրա նկատմամբ նախկին դատավճռով նշանակված

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 71-72:

պատիժը պայմանականորեն չկիրառելը չվերացնելը չեն բխում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 48-րդ հոդվածների պահանջներից: Մասնավորապես, ըստ բողոքարեթի՝ դատարանները պետք է համակարգային վերլուծության ենթարկեին դատապարտյալի կողմից ինչպես նախկինում կատարած, այնպես էլ փորձաշրջանի ընթացքում թույլ տված հանրորեն վտանգավոր արարքների բնույթը և վտանգավորությունը, դրանք գնահատեին մեկ ամբողջական իրավական տիրույթում:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ Ա.Գրիգորյանը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար: Չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է անզգուշությամբ, սակայն այն առավել բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող արարք է, քանի որ դրա հետևանքով առաջանում է ծանր հետևանք՝ մարդու մահ: Ուստի, նման հանցագործության համար դատապարտվելուց հետո, գտնվելով փորձաշրջանի մեջ, Ա.Գրիգորյանը չի ուղղվել, կատարել է նոր դիտավորյալ հանցանք, ընդ որում՝ ոչ սթափ վիճակում, ինչն իր հերթին իրական վտանգ է ներկայացրել հասարակության և երթևեկության մասնակիցների համար:

Հետևաբար, ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի համար պատժի տեսակը որոշելիս և վերջինիս նկատմամբ նախորդ դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը քննարկելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքը, հաշվի չեն առել սուբյեկտիվ կողմի դինամիկան, այն է՝ անզգուշությամբ կատարվող հանցագործությունից հետո կրկին համասեռ՝ հասարակական անվտանգության դեմ ուղղված, սակայն արդեն ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելը:

Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ փորձաշրջանի ժամանակ նոր հանցանք կատարելու դեպքում ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պատճառաբանման:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքաբերի կողմից բարձրացված իրավական հարցերն ըստ էության վերաբերում են ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի համաչափությանը և նախկին դատավճռով սահմանված՝ Ա.Գրիգորյանի պայմանական դատապարտումը չվերացնելու իրավաչափությանը:

Մասնավորապես, սույն գործի փաստական տվյալներից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի համար դատապարտել է տուգանքի, իսկ նախորդ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 1-ի դատավճռով սահմանված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի վերացրել¹: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատժի հարցում եկել է ճիշտ հետևության: Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը գտնվում է դատարանի հայեցողության շրջանակներում²:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորմամբ փորձաշրջանի ընթացքում անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը թողնվում է դատարանի հայեցողությանը, այնուամենայնիվ դա չի ենթադրում, որ դատարանի վերոնշյալ լիազորությունը բացարձակ բնույթ է կրում. պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու կամ չվերացնելու վերաբերյալ դատարանի հետևությունը պետք է լինի պատճառաբանված և բխի տվյալ գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծությունից³:

Սույն գործով Ա.Գրիգորյանը, ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտված լինելով երկու տարի ժամկետով ազատազրկման, գտնվելով փորձաշրջանի մեջ և զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, ոչ սթափ վիճակում վարել է տրանսպորտային միջոց: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալի նկատմամբ տուգանքի ձևով պատիժ նշանակելով և պատիժը պայմանականորեն չկիրառելը

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Դատական հայեցողության սահմանների վերաբերյալ տե՛ս *mutatis mutandis* Վճռաբեկ դատարանի՝ Հ.Դավթյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշման 22-րդ կետը:

չվերացնելով, պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված հանցագործությունների բնույթը, այն է՝ ամբաստանյալի կողմից կատարվել են համասեռ հանցավոր արարքներ, որոնք ոտնձգում են միևնույն օրյեկտի՝ հասարակական անվտանգության դեմ: Այսպես՝ նախկինում դատապարտված լինելով տուժողի մահն առաջացրածանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար և գտնվելով փորձաշրջանի մեջ՝ Ա.Գրիգորյանը կատարել է միաբնույթ հանցավոր արարք, ինչն իր հերթին իրական վտանգ է ներկայացրել երթևեկության մասնակիցների համար: Վերոնշյալը վկայում է, որ նշանակված պատիժը բավարար չի եղել պատժի նպատակների իրացման, այն է՝ հանցավորի ուղղման և նոր հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

Հետևաբար, հիմնավոր են բողոքաբերի՝ սույն որոշման 8-րդ կետում բարձրացված փաստարկներն առ այն, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի համար պատժի տեսակը որոշելիս և վերջինիս նկատմամբ նախորդ դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը քննարկելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ ամբաստանյալի հոգեբանական վերաբերմունքը:

Մակայն, հաշվի առնելով սույն գործով վարույթը բացառող՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ կիրառելի լինելու հանգամանքը՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով դատական վերանայման սահմաններով կաշկանդված չլինելու հիմքերի վերաբերյալ Մ.Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի ձևավորված իրավական դիրքորոշումները¹, գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է դուրս գալ վճռաբեկ բողոքարկման սահմաններից:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ այդ անձի կողմից սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը՝

պարծվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյու-

¹ Տե՛ս՝ Մ.Էլոյանի և մյուսների վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշման 13-14-րդ կետերը:

րապարհիկից հինգհարյուրապարհիկի չափով, կամ ազատագրվեամք՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

(...)

5. Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:

6. Սույն հոդվածի առաջին մասի (...) 13-րդ [կետում նշված հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝

(...) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պարիժ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատագրվում»:

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի կատարումը վերապահել՝

(...)

3) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (...)»:

12. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքում, երբ համաներման մասին օրենքն ընդունվում է գործը դատական քննության փուլում գտնվելու ժամանակահատվածում, այդ հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես, այն դեպքում, երբ ամբաստանյալը համաձայն է, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի

համաներման մասին օրենքի ընդունման հիմքով, և առկա են նաև այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու համար անհրաժեշտ օրենքով նախատեսված վավերապայմանները, ապա դատարանը, կաշկանդված չլինելով բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, պարտավոր է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, մեկ տարի ժամկետով գրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից և գտնվելով փորձաշրջանի մեջ, 2018 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 1:20-ին, Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցում, առանց տրանսպորտային միջոց վարելու իրավունքի և ոչ սթափ՝ 0.26 մգ/լ ալկոհոլ օգտագործած վիճակում, վարել է «Տոյոտա» մակնիշի 22 NN 211 պ/հ ավտոմեքենան¹:

Առաջին ատյանի դատարանի դատավճռով ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Նշանակված տուգանքի վճարման համար ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի հիման վրա սահմանվել է ժամկետ՝ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը²:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժել է՝ բողոքարկված ակտը թողնելով անփոփոխ³:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրվում է դիտավորությամբ կատարված հանցագործություն, որի համար որպես պատիժ է նախատեսված **տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկում՝ վեց ամսից մեկ տարի ժամկետով, և որը կատարվել է 2018 թվականի հունվարի 27-ին:**

Այսինքն՝ վերը նշված հանգամանքների համակցությունից հետևում է, որ Ա.Գրիգորյանը մեղադրվում է դիտավորությամբ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործություն համար, որը տեղի է ունեցել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, և որի համար նախատեսված պատիժը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են ամբաս-

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

տանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալ Արամ Զավենի Գրիգորյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշումը բեկանել:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա Արամ Զավենի Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական գործի վարույթը կարճել:

3. Արամ Զավենի Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՔՐԴ/0396/01/08
ԵԿԴ/0052/11/08
ԵԿԴ/0123/06/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Հ.ԱՍԼԱՆՅԱՆԻ
Դ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

2019 թվականի հունիսի 12-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով նոր հանգամանքի հիմքով ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի և Մուշեղ Ազունի Սաղաթելյանի պաշտպաններ Ս.Սաֆարյանի ու Վ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Յ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 62202508 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նույն օրը Մուշեղ Ազունի Սաղաթելյանը ձերբակալվել է:

1.1 Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված

հանցագործությունների հատկանիշներով: Նախաքննության մարմնի նույն օրվա որոշմամբ թիվ 62202508 քրեական գործը միացվել է թիվ 62202608 քրեական գործին:

2008 թվականի մարտի 3-ին Մ.Սաղաթելյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 301-րդ հոդվածով, 316-րդ հոդվածի 2-րդ մասով և 318-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 4-ի որոշմամբ (գործ թիվ ԵԿԴ/0123/06/08) Մ.Սաղաթելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մարտի 21-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 7-ի որոշմամբ վերադարձվել է:

2.1 Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Մ.Սաղաթելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամիս ժամկետով: Նշված որոշման դեմ պաշտպան Ս.Սաֆարյանը բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը 2008 թվականի մայիսի 29-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

2.2 Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ (գործ թիվ ԵԿԴ/0123/06/08) Մ.Սաղաթելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամիս ժամկետով:

Մ.Սաղաթելյանի և պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ վերադարձվել է:

3. 2008 թվականի հունիսի 13-ին դիմող Մ.Սաղաթելյանը և ներկայացուցիչ Ս.Սաֆարյանը բողոք են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով վերացնել Մ.Սաղաթելյանի իրավունքների և ազատությունների խախտումը, ապօրինի և չհիմնավորված ճանաչել ՀՀ ոստիկանության՝ 2008 թվականի մարտի 1-ի հրահանգը, դրա հիման վրա կատարված գործողություններն ու քրեական գործի հարուցման որոշումը, և պարտավորեցնել նախաքննական մարմնին դադարեցնելու Մ.Սաղաթելյանի

նկատմամբ հարուցված քրեական հետապնդումն ու կարճելու գործի վարույթը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2008 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ (գործ թիվ ԵԿԴ/0052/11/08) դիմող Մ.Սաղաթելյանի և ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքը մերժել է՝ գտնելով, որ ՀՀ ռստիկանության պետի հրահանգը չի հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հետաքննության մարմնի աշխատակցի գործողություն կամ որոշում, իսկ քրեական գործ հարուցելու և Մ.Սաղաթելյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների դեմ բողոքը դատարան է ներկայացվել առանց դատախազին բողոքարկելու:

Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Մ.Սաղաթելյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով:

2008 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ թիվ 62202608 քրեական գործից անջատվել են Մ.Սաղաթելյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը:

2008 թվականի օգոստոսի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան:

5. Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռով (գործ թիվ ԵԲԲԴ/0396/01/08) Մ.Սաղաթելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնների կիրառմամբ, պատիժները լրիվ գումարելու միջոցով, Մ.Սաղաթելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով և տուգանք՝ 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Պատժի սկիզբը հաշվվել է 2008 թվականի մարտի 1-ից:

6. Մ.Սաղաթելյանի և պաշտպան Ս.Սաֆարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

7. Վերոնշյալ որոշման դեմ Մ.Սաղաթելյանի և պաշտպան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշմամբ վերադարձվել է:

8. Մ.Սաղաթելյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 23086/08) գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Մ.Սաղաթելյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածով, 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

9. Որպես նոր հանգամանք վկայակոչելով *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Մ.Սաղաթելյանի պաշտպաններ Վ. Գրիգորյանն ու Ս.Սաֆարյանը և ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանը համապատասխանաբար՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ին և դեկտեմբերի 25-ին բողոքներ են ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ հարուցվել է նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի վերանայման վարույթ և բողոքներն ընդունվել են Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

10. Մուշեղ Ագունի Սաղաթելյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով այն բանի համար, որ. «(...) [Ն]ա, պարբերաբար մասնակցելով 2008թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո Երևան քաղաքում օրենքով սահմանված կարգի խախտմամբ իրականացվող զանգվածային հրապարակային միջոցառումներին, 2008թ. մարտի 1-ին ժամը 07-ի սահմաններում, գրնվել է «Ազատության» հրապարակում, որտեղ՝ իրականացվող հրապարակային զանգվածային միջոցառումների մասնակիցների մոտ հրագների, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, մարմնական վնասվածքներ պատճառելու, հրկիզումներ կամ ավերումներ առաջացնելու համար հարմարեցված այլ առարկաների առկայության ու սպորինի շրջանառության մասին օպերատիվ տեղեկություններն իրացնելիս իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ՀՀ ոստիկանության համապարասխան ստորաբաժանումների ծառայողները հանրահավաքի մասնակիցներից պահանջել են

հնարավորություն ընձեռել ստուգելու նրանց մոտ զենքի ու ռազմամթերքի առկայության վերաբերյալ տեղեկատվության իսկությունը, որից հետո մասնակիցների մի մասը, չենթարկվելով ռադիկալության աշխարակիցների օրինական պահանջներին, բռնություն են գործադրել նրանց նկատմամբ՝ ինքնաշեն մահակներով, ձողերով և մարմնական վնասվածքներ պարճատելու համար հարմարեցված այլ առարկաներով հարվածել վերջիններին: Երբ ռադիկալության ծառայողները մտրեցել են «Ազատության» հրապարակին՝ օպերատիվ-քննչական գործողություններին խոչընդոտելու հանգամանքները բացատելու և հասարակական անվտանգությունը ապահովելու նպատակով, Հովհաննես Թումանյանի արձանի դիմացի հարվածում Մուշեղ Սաղաթելյանը, չենթարկվելով ռադիկալության աշխարակիցների օրինական պահանջներին, հարձակվելով ռադիկալության ՊՊԾ գնդի 8-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար Արսեն Արշակյանի վրա, վերջինիս ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ փայրով երկու անգամ հարվածելով Արսեն Արշակյանի գլխին, պարճատելով առողջության թեթև վնաս՝ առողջության կարճաբալայումով, ու թաքնվել ամբոխի մեջ:

Ամբոխի մեջ խառնվելու պարճատով դեպքին ակնաարես, նույն վայրում ծառայություն իրականացնող ռադիկալության ՊՊԾ գնդի 3-րդ վաշտի ռադիկալ Արմեն Առուշանյանին չի հաջողվել բերման ենթարկել Մուշեղ Սաղաթելյանին:

Այնուհետև Արմեն Առուշանյանը, շարունակելով ծառայությունը Արշակունյաց պողոտայում գրնվող «Տիգրան Մեծ» հրապարակչության հարակից տարածքում, կրկին նկատելով Մուշեղ Սաղաթելյանին, փորձել է նրան բերման ենթարկել, սակայն վերջինս, չենթարկվելով Արմեն Առուշանյանի ռադիկալության բաժին ներկայանալու պահանջին, հրելու, քաշքշելու և ուրքով հարվածելու եղանակով առողջության համար ոչ վրանգավոր բռնություն է գործադրել նրա նկատմամբ և փախուսարի փորձ կատարել՝ նսրելով պարահական տաքսի ավտոմեքենան: Եզված տարածքում ծառայություն իրականացնող ռադիկալության Երևան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի գումարտակի ռադիկալներ Ա.Ապերյանը, Է.Ռշտունին և Հ.Սարգսյանը, նկատելով այդ, Մուշեղ Սաղաթելյանին բերման են ենթարկել ռադիկալության Կենտրոնական բաժին:

Պարզվել է նաև, որ Մուշեղ Սաղաթելյանը ապօրինի կրել է քաղաքացիական շեղրավոր սառը զենք հանդիսացող գործարանային արտադրության դանակ, որը հայտնաբերվել է անձնական այլ իրերի հետ՝ բերման ենթարկելիս:

Այսինքն՝ Մուշեղ Սաղաթելյանը կատարել է հանրորեն վրանգավոր

արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 235-րդ հոդվածի 4-րդ մասով (...)»¹:

11. Երևանի քրեական դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռով արձանագրել է. «(...) Վերլուծելով ամբաստանյալ Մուշեղ Ազունի Սաղաթելյանին առաջադրված մեղադրանքը, նրա ցուցմունքը և գործով ձեռք բերված ապացույցները, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մուշեղ Ազունի Սաղաթելյանի կողմից, նրա մեղավորությամբ, իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Մուշեղ Ազունի Սաղաթելյանի կողմից, նրա մեղավորությամբ, իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Մուշեղ Ազունի Սաղաթելյանի կողմից, նրա մեղավորությամբ, սատր զենք կրելը, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին (...)»²:

12. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, Երևանի քրեական դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ փաստել է. «(...) [Վ]երաքննիչ դատարանը վերլուծելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ, գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, գտնում է, որ ինչպես նախաքննության այնպես էլ դատաքննության ընթացքում քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող են ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա թույլ չեն փոխել (...)»³:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 246-254:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 189:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 273-274:

Վճարելի բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, փաստել է, որ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված արդար դատաքննության իրավունքի խախտումն իր բնույթով այնպիսին է, որ այն հնարավոր է վերացնել մրցակցության սկզբունքի հիման վրա պատշաճ իրավական ընթացակարգով, արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան նոր քննության արդյունքում:

13.1. Հետևաբար, բողոք բերած անձը խնդրել է վերանայել թիվ ԵԲԲԴ/0396/01/08 գործով Վճարելի դատարանի՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշումը, բեկանել Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

14. Բողոքաբերներ՝ Մ.Սաղաթելյանի պաշտպաններ Ս.Սաֆարյանը և Վ.Գրիգորյանը փաստել են, որ Եվրոպական դատարանի՝ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռով ճանաչվել են Մ.Սաղաթելյանի իրավունքների խախտումներ, որոնք առնչվում են նրա վերաբերյալ կայացված դատական ակտերով թույլ տրված նյութական և դատավարական իրավունքների կոպիտ և էական սխալներին:

14.1. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած պաշտպանները խնդրել են.

- հարուցել թիվ ԵԲԲԴ/0396/01/08 գործով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ, բեկանել այն և առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահով, ճանաչել և հռչակել Մ.Սաղաթելյանի անմեղությունը՝ հանցադեպի բացակայության հիմքով,

- հարուցել թիվ ԵԿԴ/0123/06/08 գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի և հուլիսի 15-ի որոշումների նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ, բեկանել դրանք և, առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահով, վերացնել դրանցով անփոփոխ թողնված կալանավորման մասին որոշումները,

- հարուցել թիվ ԵԿԴ/0052/11/08 գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշման նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ, բեկանել այն և, առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահով, վերացնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության

դատարանի՝ բողոքը մերժելու մասին 2008 թվականի հուլիսի 8-ի որոշումը՝ քաղաքացիական գործի ներկայացուցչի բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

I. Ներպետական դատական ակտերի վերանայումը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի խախտումների արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 7-ի, 2008 թվականի օգոստոսի 28-ի, 2009 թվականի մարտի 10-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշումները վերանայելու հիմք է:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող Կոնվենցիայի միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

17. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի,

այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

Եվրոպական դատարանի՝ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի ուժի մեջ մտած վճռով արձանագրվել են:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական հայեցակետերի խախտումներ.

18. Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները², փաստել է. «(...) Կառավարությունը չի ներկայացրել ապացույցներ և չի փորձադրել բավարար և համոզիչ բացատրություն Կենտրոն վարչական շրջանի ոստիկանությունից տեղափոխելուց հետո արձանագրված՝ դիմումարտուի վնասվածքների համար: Մյուս կողմից դիմումարտուն հերևողականորեն և բազմիցս բարձրացրել է իր նկատմամբ վարվերաբերմունքի մասին հայտարարությունները փարբեր ներպետական մարմիններում (...): Հաշվի առնելով այն փաստը, որ այդ պարզաբանումը բացակայում է և՛ ներպետական մակարդակում քննության փուլում, և՛ Դատարանում, Դատարանը եզրակացնում է, որ ոստիկանությունը դիմումարտուի նկատմամբ ցուցաբերել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին հակասող վերաբերմունք (...):»³:

18.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը գտել է, որ Մ.Սաղաթելյանի վնասվածքների բնույթը և ծանրությունը, ինչպես նաև դատարանի տրամադրության տակ եղած նյութերի ամբողջությունը, այդ թվում՝ Մ.Սաղաթելյանի՝ իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի մասին նկարագրությունը, թույլ են տալիս եզրակացնել, որ վերջինիս նկատմամբ ցուցաբերվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք⁴:

18.2 Արդյունքում Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետի խախտում⁵:

19. Անդրադառնալով դիմումատուի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի կապակցությամբ իրականացված քննության արդյունավետու-

¹ Տե՛ս mutatis mutandis, ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Վիրաբյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Սեֆիլյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Արայիկ Զայյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Դավիթ Ավետիսյանի գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՄԴ3/0088/01/09, Ալիկ Սաթևոսյանի գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

² Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 140-142-րդ կետերը:

³ Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 146-րդ կետը:

⁴ Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 147-րդ կետը:

⁵ Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 148-րդ կետը:

թյանը՝ Եվրոպական դատարանը, վկայակոչելով իր նախադեպային իրավունքը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պաշտոնական արդյունավետ քննություն իրակացնելու պահանջների վերաբերյալ¹, փաստել է. «(...) [Դ]իմումնապրուն վայր վերաբերմունքի մասին հայտարարությունները պարբերաբար ներկայացրել է տեղական իշխանություններին, առաջին նման հայտարարությունն արվել է իր ձեռքակալման երկրորդ օրը (...): Այնուամենայնիվ, ի հակադրություն Կառավարության պնդմանը, ո՛չ դիմումնապրուն, ո՛չ ոստիկանության որևէ ծառայող կամ այլ վկաներ կամ կասկածյալներ երբևէ չեն հարցաքննվել այս հայտարարությունների առնչությամբ՝ լինի դա թիվ 62202608 քրեական գործի, թե այլ գործի շրջանակներում: Ավելին, այդ քրեական գործի փաստական հիմքերն ուղղված են եղել բացառապես ընդդիմության առաջնորդների և կողմնակիցների, այդ թվում՝ դիմումնապրուի կողմից ենթադրաբար կարարված գործողությունների վրա՝ ի հակադրություն ոստիկանության ծառայողների կողմից դրսևորված որևէ անօրինական վարքի: Ձեռնարկված միակ քննչական միջոցառումը, որը կարելի է համարել վայր վերաբերմունքի մասին դիմումնապրուի հայտարարություններին առնչվող, եղել է 2008 թվականի մարտի 10-ին կարարված դատաբժշկական փորձաքննությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այն կարգադրվել էր կարարել 2008 թվականի մարտի 2-ին, նույնիսկ այդ միջոցառումը չի իրականացվել բավարար հրապարակությամբ և կարող էր հանգեցնել սպացույցի կորստի կամ ոչ ճշգրիտ եզրակացության (...): Բոլոր դեպքերում, ըստ երևույթին, վարույթի ոչ մի փուլում չի իրականացվել այդ զննման եզրակացությունների գնահատում: Բացի այդ, մեղադրական եզրակացության մեջ արված հայտարարությունը, համաձայն որի՝ դիմումնապրուի վնասվածքներն առաջացել են բախումների ժամանակ, ի հակադրություն այլ հանգամանքներում սրացված վնասվածքների, այդ թվում՝ հնարավոր վայր վերաբերմունքը չունեն որևէ փաստական հիմք, և ըստ երևույթին, չեն արվել սպացույցների ուսումնասիրության և գնահատման կամ փաստերի քննության արդյունքում (...):

Հետագայում պարզ է դառնում, որ դատարանները ևս չեն ուսումնասիրել դիմումնապրուի հայտարարությունները վայր վերաբերմունքի մասին և չեն գնահատել դրանք: Երևանի քրեական դատարանն ընդհանրապես չի անդրադարձել այս հարցին, իսկ Վերաքննիչ դատարանը կարծես ընդունել է նույն՝ մեղադրական եզրակացության մեջ առկա դիրքորոշումը՝ անուղղակիորեն համարելով, որ դիմումնապրուի նշված վնասվածքներն առաջացել են բախումների ժամանակ, և ոչ թե որևէ տեսակի վայր վերաբերմունքի արդյունքում, և այդ պարճառով չեն ուսումնասիրվել դիմումնապրուի քրեական գործի շրջանակներում (...):

¹ Տե՛ս Մուշեղ Մաղաթելյանի ընդդեմ Հայաստանի վճռի 151-152-րդ կետերը:

Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ ո՛չ քրեական հետապնդում իրականացնող մարմինները, ո՛չ դատարանները չեն տրամադրել որևիցե պարզաբանում այն մասին, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքներն արժանահավատ, իսկ դիմումատուի ցուցմունքները՝ ոչ վստահելի: Իրադարձությունների՝ ոստիկանության ծառայողների կողմից ներկայացված տարբերակը, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարող անձանց մասին տեղեկությունները պարբերականորեն ընդունվել են, և նրանք երբևէ չըջորեն չեն հարցաքննվել իշխանությունների, այդ թվում՝ դատարանների կողմից, մինչդեռ դիմումատուի պահանջը՝ կանչելու վկաներին, ովքեր ենթադրաբար կարող էին հաստատել իր կողմից տրված ցուցմունքները, մերժվել է (...):»¹:

19.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի՝ վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների վերաբերյալ պաշտոնական քննություն չի իրականացվել²:

19.2 Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական հայեցակետի խախտում³:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի խախտումներ.

20. Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ազատությունից զրկելու օրինականության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները⁴, ընդգծել է. «(...) [Դ]իմումատուն տարվել է ոստիկանություն ուժի գործադրմամբ, և ոչինչ չի վկայում այն մասին, որ նա ցանկացած պահի կարող էր հեռանալ: Ավելին, ըստ երևույթին, այդ ամբողջ կամ հիմնական ժամանակահատվածում նա փակված է եղել խցում: Կառավարությունը նաև չի հերքել այն, որ այդ ժամանակահատվածում դիմումատուն զրկված է եղել ազատությունից: Հետևաբար Դատարանը պարճառներ չունի կասկածելու, որ դիմումատուն 2008 թվականի մարտի 1-ին՝ 6:30-ի և 22:30-ի միջև ընկած ժամանակահատվածում, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ազատությունից զրկված է եղել: Ավելին, հիմնվելով իր տրամադրության փակ եղած նյութերի ամբողջականության վրա, Դատարանն ընդունում է, որ այս դեպքում ազատությունից զրկելն իրականացվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի նպատակով:

(...) Դատարանը նշում է, որ չնայած դիմումատուն, *de facto* (փաստացի), զրկվել է ազատությունից և տարվել է ոստիկանություն 2008

¹ Տե՛ս՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 153-154-րդ կետերը:

² Տե՛ս՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 155-րդ կետը:

³ Տե՛ս՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 156-րդ կետը:

⁴ Տե՛ս՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 164-165-րդ կետերը:

թվականի մարտի 1-ին՝ մոտավորապես 6:30-ին, նրա ձերբակալման արձանագրությունը նույն օրը՝ մինչև 22:30-ը, պաշտոնապես չի կազմվել: Այդ ամբողջ ժամանակահատվածում դիմումատուին պաշտոնապես չեն վերաբերվել որպես ձերբակալված անձի, ինչպես նաև նրա նկարմամբ չեն կիրառվել ձերբակալված անձանց մասով կիրառելի ներպետական դրույթները: Նա հարցաքննվել է որպես վկա, և նրան տվել է կարգավիճակ, և նա համարվել է «ձերբակալված» ու հետևաբար «կասկածյալ»՝ ոստիկանություն հարկադրաբար ներկայանալուց միայն 16 ժամ հետո: Դա ոչ միայն խախտում է ՔԴՕ-ի 131.1 հոդվածով սահմանված այն մասով պահանջները, որ կասկածյալի ձերբակալման արձանագրությունը պետք է կազմվի համապատասխան մարմիններ նրան բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում (...), սակայն այն նաև դիմումատուին թողել է առանց որոշակիության զգացումի, ինչ վերաբերում է նրա անձնական ազատությանը և անվտանգությանը, ինչպես նաև զրկել է նրան ՔԴՕ-ով՝ ձերբակալված կասկածյալի համար սահմանված բոլոր իրավունքներից, այդ թվում՝ փաստաբան ունենալու և իր ընտանիքին անմիջապես տեղեկացնելու իրավունքից (...): Ավելին, դիմումատուի ձերբակալման արձանագրությունը կազմելիս 22:30-ը նշվել է որպես նրան ձերբակալելու պահ՝ ի տարբերություն այն ժամի, երբ դիմումատուն փաստացի զրկվել է ազատությունից՝ այդպիսով, ըստ էության, դիմումատուին ազատությունից զրկելու սկզբնական փասնվեց ժամը թողնելով պաշտոնապես չհաստատված: (...)

Դատարանն այնուհետև նշում է, որ (...) [ս]ույն գործում դիմումատուն ՔԴՕ-ի 129-րդ հոդվածի իմաստով արգելանքի է վերցվել 2008 թվականի մարտի 1-ին՝ մոտավորապես 6:30-ին, մինչդեռ նրա կալանավորման հարցով դատական նիստը տեղի է ունեցել 2008 թվականի մարտի 4-ին՝ 19:00-ին (...): Համապատասխանաբար, նախքան դատավորի մոտ բերվելը դիմումատուն ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում մնացել է նվազագույնը 84 ժամ, դա մոտավորապես փաստերկու ու կես ժամ ավելի է ներպետական օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն ժամանակահատվածից: Առանց դատարանի որոշման այդպիսի երկարաբար ձերբակալությունը, որը գերազանցում էր ՔԴՕ-ի 129-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 72-ժամյա ժամկետը, անհամապետելի էր ներպետական օրենսդրության հետ և հետևաբար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով անօրինական էր (...)»¹:

20.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ Մ.Սադաթեյլանի ձերբակալման օրինականության մասով²:

¹ Տե՛ս Մուշեղ Սադաթեյլանի ընդդեմ Հայաստանի վճռի 168-րդ և 174-րդ կետերը:

² Տե՛ս Մուշեղ Սադաթեյլանի ընդդեմ Հայաստանի վճռի 179-րդ կետը:

21. Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը, հղում կատարելով Հայաստանի դեմ քննված մի շարք գործերին, որոնց դեպքում տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ գտել է, որ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով որևէ պատճառ չունի այլ եզրահանգման գալու և համարում է, որ ներպետական դատարանները դիմումատուին կալանավորելու համար հիմնավոր և բավարար պատճառներ չեն ներկայացրել¹:

21.1 Արդյունքում, Եվրոպական դատարանն արձանագրել է նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում²:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.

22. *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով Եվրոպական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումները³, ընդգծել է. «(...) Չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ռաբիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով փրամադրվում էր դրանց մանրամասները, փվյալ ցուցմունքներն էին (...): Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին:

(...) Դատարանը նշում է, որ այն արդեն քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պարճատով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ հիմնվելով բացառապես այն ռաբիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: (...): Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ռաբիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները (...): Դատարանը նաև գրել է, որ պաշտպանության օգտին բոլոր ապացույցներն առանց հիմնավորման մերժելով՝ ներպետական դատարանները դիմումատուի վրա ծայրահեղ և անհասանելի ապացուցման թեո են դրել, որը հակասում է այն հիմնական

¹ Տե՛ս *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 191-րդ կետը:

² Տե՛ս *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 192-րդ կետը:

³ Տե՛ս *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 202-205-րդ կետերը:

պահանջին, որ մեղադրանքի կողմը պետք է ապացուցի գործով իր կողմից առաջ քաշված վարկածը, ինչպես նաև քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներին, մասնավորապես՝ կասկածանքները հոգուր մեղադրյալի մեկնաբանումը (in dubio pro reo) (...):

Ըստ երևույթին, դիմումարուի դեմ քրեական գործով վարույթն իրականացվել է նույն կերպ: Գիմումարուին առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած հանգամանքները, այդ թվում՝ Ազատության հրապարակում նարիկանության գործողությունների հետ կապված հանգամանքները և նարիկանության երկու ծառայողների վրա ենթադրյալ հարձակումը վիճարկվել են կողմերի կողմից: Այնուամենայնիվ, ներպետական դատարանները, ներկայացնելով իրադարձությունների երկու հակասական տարբերակներ, չեն սպուգել նարիկանության ծառայողների կողմից արված փաստական պնդումները և որոշել են վճիռների հիմքում դնել բացառապես նրանց կողմից ներկայացված տարբերակը՝ պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունելով նրանց ցուցմունքները և դիմումարուին որևէ հնարավորություն չբալով հակառակ ապացույցներ բերելու: Գիմումարուի՝ մի շարք վկաներ դատարան կանչելու և քննելու պահանջները, որոնք բավականաչափ հիմնավորված են եղել և ուղղակիորեն վերաբերել են իրեն առաջադրված մեղադրանքներին, նույնպես մերժվել են՝ առանց որևէ հիմնավորման կամ համառոր և ոչ համոզիչ հիմնավորմամբ: Դատարանը գրնում է, որ սա հարկապես ինդրահարույց է՝ հաշվի առնելով քրեական գործի նյութերում, այդ թվում՝ վկաների ցուցմունքներում մի շարք էական անհարակությունների, անհամապատասխանությունների և հակասությունների առկայությունն այնպիսի կարևոր հարցերի առնչությամբ, ինչպիսիք են նարիկանության գործողությունների ժամը, նպատակը և իրականացումը և դիմումարուին ձերբակալելու ժամն ու հանգամանքները, ինչպես նաև այն փաստը, որ հարձակման մասով մեղադրանքների համար մեծապես հիմք ծառայող ապացույցներն ի հայտ են եկել տվյալ երկու նարիկանության ծառայողների կողմից դիմումարուի ինքնությունը հաստատելու արդյունքում՝ ենթադրյալ պատահարներից ավելի քան հինգ ամիս հետո, ինչը զգալիորեն նվազեցրել է այդ ապացույցների արժանահավարությունը: Դեռ ավելին կարելի է ասել, եթե հաշվի առնենք այն փաստը, որ վիճարկվող պատահարները՝ առնվազն Ազատության հրապարակում տեղի ունեցածը, ըստ երևույթին, տեղի են ունեցել այդ օրը բավականին վաղ, երբ ամբողջովին լույս չէր, և քառասայն հանգամանքներում, որում ներգրավված էին հարյուրավոր ցուցարարներ և նարիկանության ծառայողներ: Եույնիսկ եթե այն մարդիկ, որոնց դիմումարուն ցանկանում էր որպես վկա կանչել, կարող էին առաջին հերթին լույս սփռել Ազատության հրապարակում տեղի ունեցած

իրադարձությունների վրա, Դատարանը համարում է, որ, այնուամենայնիվ, այդպիսի ապացույցները դիմումատուին թույլ են տալիս վիճարկել իրեն առաջադրված բոլոր մեղադրանքները՝ հաշվի առնելով իրեն վերագրվող փաստեր արարքների միջև և ժամանակային, և հետևանքային կապը:

(...) Երպեսզի դատարաններն այդպես էլ գրեթե չեն անդրադարձել դիմումատուի փաստարկներին ու պնդումներին՝ անկախ դրանց ծանրակշռությունից կամ վերաբերելիությունից, ներառյալ՝ քրեական գործի նյութերում առկա՝ վերը նշված անհամապատասխանությունները մարտահանգող և որոշակի ապացույցների մասով կասկած հարուցող փաստարկներն ու պնդումները: Սա ներառում է դիմումատուի կողմից նախկինության ծառայողներ Է.Ռ.-ի, Հ.Ս.-ի և Ա.Ա.-ի մինչդատարանական ցուցմունքների վերաբերյալ ներկայացված բավականին ծանրակշիռ և հիմնավորված փաստարկը, համաձայն որի՝ դրանք բառացիորեն նույնն են եղել, ինչպես նաև հակասել են դատարանում այդ վկաների կողմից արված հայտարարություններին: Երպեսզի դատարանները չեն անդրադարձել այդ փաստարկին և հաշվի չեն առել այն, երբ հիմնվել են վկաների այդ ցուցմունքների վրա՝ որպես դիմումատուին դատապարտելու համար հիմք, թեև այդ վկաների հուսալիությունը, վստահելիությունը և անձնական բարեվարքությունը խիստ կասկածի տեղիք են տալիս: Եթե դիմումատուի փաստարկը համոզիչ լիներ, ապա այն կարող էր ազդել անաչառ փորձումայի այն ամբողջական գնահատականի վրա՝ արդյոք բավականաչափ ծանրակշիռ ապացույցներ եղել են դիմումատուի մեղքը հաստատելու համար (...): Հարկանշական է, որ տվյալ նախկինության ծառայողների ցուցմունքներն այն միակ ապացույցներն են եղել, որոնց հիման վրա դիմումատուն ապօրինի ստոր զենք կրելու համար դատապարտվել է, ինչպես նաև դրանք կազմել են այն ապացույցների որոշիչ մասը, որոնց վրա հիմնված է եղել նախկինության ծառայող Ա.Ա.-ի վրա Արշակունյաց փողոցում հարձակվելու համար դիմումատուի դատապարտումը: Դատարանը նախկինում կայացրել է վճիռ, որ փաստեր ժամանակահատվածներում տրված՝ վկայի սեփական ցուցմունքների միջև անհամապատասխանությունները, ինչպես նաև քրեական հետապնդման ժամանակ ձեռք բերված փաստեր քրեակի ապացույցների միջև խիստ անհամապատասխանությունները լուրջ հիմքեր են ստեղծում վկայի վստահելիությունը և նրա ցուցմունքի ապացուցողական նշանակությունը վիճարկելու համար. որպես այդպիսին, այսպիսի վիճարկումն այնպիսի անստարկելի փաստ է համարվում, որ կարող է ազդել գործի փաստական հանգամանքների՝ այդ ապացույցի վրա հիմնված գնահատականի և վերջապես դատավարության ելքի վրա (...):»¹:

¹ Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդհանուր Հայաստանի վճիռի 206-210-րդ կետերը:

22.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք քրեական հետապնդման համար միակ վկաներն էին և ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում: Բացի այդ, նշված իրադարձությունների վերաբերյալ ոստիկանության կողմից ներկայացված տարբերակն անվերապահորեն հաստատելը, դիմումատուի փաստարկներից որևէ մեկին պատշաճ կերպով չանդրադառնալը և պաշտպանության կողմի վկաներին քննելու հարցում մերժելը՝ առանց պատշաճ կերպով ուսումնասիրելու նրանց ցուցմունքների վերաբերելիությունը, Եվրոպական դատարանի համոզմամբ հանգեցրել են պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակման, ինչը հակասում է արդար դատաքննության երաշխիքներին և բավարար է եզրակացնելու համար, որ դիմումատուի դեմ քրեական վարույթը, ընդհանուր առմամբ, իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ¹:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում.

23. Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումները², փաստել է. «(...) Կառավարությունը սույն գործով պնդել է, որ առաջինը ցուցարարներն են հարձակվել ոստիկանության վրա, ինչը հասարարում է այն փաստը, որ նրանք բռնի մերադրություններ են ունեցել: (...) Դատարանը նշում է, որ Կառավարության պնդումը, ըստ երևույթին, հիմնված է եղել Հայաստանի ոստիկանության պետի տեղակալի՝ (...) գրության մեջ ներկայացված իրադարձությունների պաշտոնական նկարագրության վրա (...): Այնուամենայնիվ, նրանք, ըստ երևույթին, այդ եզրահանգումներին չեն եկել անկողմնակալ և անկախ քննության արդյունքում, և դրանք, կարծես թե, լիովին հիմնված են եղել այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվ դեր են ունեցել 2008 թվականի մարտի 1-2-ի իրադարձություններում, այդ թվում՝ Ազարտության հրապարակում տեղի ունեցած բախումներում, և ավելին, ենթադրաբար չափից ավելի ուժ են օգտագործել ցուցարարների նկարմամբ: Տվյալ եզրահանգումները հիմնավորված չեն որևէ օբյեկտիվ ապացույցով և, ավելին, ինչպես երևում է, դրանք հակասում են քրեական գործի մի շարք այլ նյութերի, այդ թվում՝ թիվ 62202508 քրեական գործը

¹ Տե՛ս Սուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 210-211-րդ կետերը:

² Տե՛ս Սուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 226-228-րդ, 230-232-րդ, 234-րդ կետերը:

հարուցելու մասին որոշմանը և մի քանի այլ փաստաթղթերի, որոնցից երևում է, որ Ազատության հրապարակում ցուցարարների և ոստիկանության միջև տեղի ունեցած բախումը կարող է իսկապես լինել ոստիկանության կողմից ձեռնարկված՝ որոշ չպարզված միջոցառումների հետևանք, որի նպատակը եղել է ցույցը հարկադրաբար դադարեցնելը՝ ի հակադրություն ցուցարարների կողմից նախազգուշական հարձակման, ինչպես այնպես է Կառավարությունը (...): Հարկանշական է, որ դիմումատուի քրեական գործը քննող դատարանները որևէ ձևով չեն անդրադարձել բախման հանգամանքներին, այդ թվում՝ այն հարցին, թե ով է հրահրել այն՝ իրենց վճիռներում չներառելով համապատասխան մանրամասները: Նույնիսկ դիմումատուի կողմից վիճարկվող՝ ոստիկանության ծառայող Ա.Արշ.-ի վրա հարձակումն է ներկայացվել որպես սպորադիկ բնույթ ունեցող գործողություն, առանց գնահատելու, թե արդյոք բռնությունը դիմավորությամբ է տեղի ունեցել, թե չալանավորված զարգացումներ են եղել (...): Ճիշտ է, որ պարզվել է նաև, որ դիմումատուի մուր հայրնաբերվել է ծալովի դանակ, որից կարելի է ենթադրել, որ նա բռնի մրադրություններ է ունեցել: Այսուամենայնիվ, հաշվի առնելով այն եղանակը, որի միջոցով այդ եզրահանգմանն են եկել, և այն ապացույցները, որոնց վրա հիմնվել են (...), ինչպես նաև այն մասին որևէ ապացույցի կամ տեղեկությունների բացակայությունը, որ դիմումատուն երբևէ փորձել է օգրագործել ենթադրյալ դանակը, Դատարանը գործի հարուկ հանգամանքներում այն չի համարում Կոնվենցիայի 11-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից նրան զրկելու բավարար և հուսալի տարր: (...)»¹:

23.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը գտել է, որ առկա չեն բավարար և համոզիչ ապացույցներ, որոնք թույլ կտան եզրակացնելու, որ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի կազմակերպիչները և մասնակիցները՝ այդ թվում՝ նաև դիմումատուն, բռնի մտադրություններ են ունեցել, և որ այդ հավաքը խաղաղ բնույթ չի կրել²:

24. Մինևույն ժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ հետագայում կիրառված պատժամիջոցները ներառել են դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը և կալանավորումը՝ Ազատության հրապարակում տեղի ունեցած հավաքի ժամանակ ենթադրաբար գործած մի շարք արարքների, այդ թվում՝ իշխանությունը բռնությամբ զավթելուն, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելուն ուղղված կոչեր հնչեցնելու, ոստիկանության ծառայողների՝ հավաքը դադարեցնելու վերաբերյալ կարգադրություններին չենթարկվելու և ոստիկանության ծառայողների վրա հարձակվելու համար, ընդ որում վերջինը միակ մեղադրանքն է եղել, որը հանգեցրել է դիմումատուի

¹ Տե՛ս 'u Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 232-րդ կետը:

² Տե՛ս 'u Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 233-րդ կետը:

դատապարտմանը: Եվրոպական դատարանը փաստել է նաև, որ դժվարանում է սույն գործի շրջանակներում ընդհանուր առմամբ տարանջատել իրադարձությունները դիմումատուի գործի հետ կապված մյուս իրադարձություններից՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ՝ ենթադրելով, որ այն փաստերի ամբողջականությունը, որոնց հիման վրա իրականացվել է դիմումատուի քրեական հետապնդումն ու դատապարտումը, վիճելի հիմքով կարող է համարվել խաղաղ հավաքների ազատության իրավունքին «միջամտության» դեպք¹:

24.1 Արդյունքում, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ տեղի է ունեցել դիմումատուի՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքին միջամտություն՝ և՛ ցույցի ցրման, և՛ դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդման, կալանավորման և դատապարտման մասով²:

25. Անդրադառնալով Մ.Սաղաթելյանի՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի միջամտության հիմնավորվածությանը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Դատարանն արդեն վճռել է, որ Ազատության հրապարակում անցկացված հավաքը խաղաղ է եղել, և ոչինչ չի վկայում այն մասին, որ այդպես չէր շարունակվելու (...): Բսկասկես, պարզ է դառնում, որ իշխանությունները թույլ են տվել հավաք կազմակերպել, այդ թվում՝ ցուցարարներին թույլ են տվել ճամբար կառուցել ու շարունակել այդ կերպ և ինն օր շարունակ այն քանդելու փորձեր չեն կատարել, մինչև հավաքը չի դադարեցվել 2008 թվականի [մարտի 1-ի] վաղ առավոտյան ոստիկանական գործողությունների արդյունքում: (...) Դատարանը, այնուամենայնիվ, մերահոգված է իր այն եզրահանգմամբ, որ Կառավարությունը չի ներկայացրել իրադարձությունների վերաբերյալ իրենց այն փաստերակր հիմնավորող ապացույցներ, որ 2008 թվականի մարտի 1-ին ցուցարարներին ուղղակիորեն է մատուցվել: Ավելին, Կառավարությունը տվյալ [ոստիկանական] գործողության պլանավորման, կազմակերպման և հրամանի վերաբերյալ որևէ ապացույց կամ մանրամասներ չի փրամադրել, այդ թվում՝ թե ով է կարգադրել կամ վերահսկել այն, ներգրավված ոստիկանության հարուկ նշանակության ստորաբաժանումները և ձեռնարկված հարուկ միջոցառումները: Միևնույն ժամանակ, պարզ է դառնում, որ սա լայնածավալ գործողություն է եղել, որում ներգրավված են եղել մի քանի հարյուր ոստիկանության ծառայողներ և ոստիկանության փարքեր ու ժեղ, այդ թվում՝ ոստիկանության հարուկ նշանակության ստորաբաժանումներ: Այդպիսի ծավալի գործողություններ պլանավորելու և կազմակերպելու համար անկասկած որոշակի ժամանակ է պահանջվել, և պարզ չէ, թե ինչպես է սա կատարվել 24 ժամից պակաս ժամանակահատվածում, եթե ենթադրվում է, որ հեղափոխական տեղեկությունները ոստիկանության

¹ Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 234-րդ կետը:

² Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռի 235-րդ կետը:

կողմից սրացվել են գործողության նախորդ օրը, մասնավորապես՝ 2008 թվականի փետրվարի 29-ին: Վերջապես, ինչպես արդեն վերևում նշվել է, թիվ 62202508 քրեական գործը հարուցելու մասին որոշումից և մի քանի այլ փաստաթղթերից, այդ թվում՝ նախկինական գործողություններին ենթադրաբար մասնակցած՝ նախկինության ծառայողների ցուցմունքներից պարզ է դառնում, որ գործողությունների միակ նպատակն է եղել ցրել Ազատության հրապարակում անցկացվող հավաքը, և որ այդ առավոտյան նախկինության կողմից ձեռնարկված միջոցառումներն այդ նպատակով են կատարվել (...): Իրադարձությունների վերաբերյալ այս փաստաթղթերը սկզբում մասամբ, իսկ հետագայում ամբողջովին քննությանը հերքվել է, և զենքերի արուգումը ներկայացվել է որպես նախկինական գործողությունների միակ նպատակ (...): Ոչ իշխանությունների և ոչ էլ Կառավարության կողմից այդպիսի ակնհայտ հակասությունների մասով որևէ բացատրություն չի փրամադրվել: Դատարանը, այնուամենայնիվ, դժվարանում է հավատարմ, որ սա կարող է ուղղակի բացթողում լինել, և իրականում փրամադրություն է սրեղծվում, որ նախկինական գործողությունների՝ եթե ոչ միակ, ապա հիմնական նպատակը քողարկելու կամ առնվազն չբացահայտելու միտումնավոր փորձ է կատարվել: Այսպիսով, Դատարանը չի գրնում, որ նախկինության՝ 2008 թվականի մարտի 1-ի գործողությունների նպատակի վերաբերյալ պաշտոնական բացատրությունը բավականաչափ արժանահավատ է, և հաշվի առնելով իր փրամադրության փակ գրնվող բոլոր նյութերը՝ պարճառ չունի կասկածելու, որ 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան նախկինության միջամտության նպատակն Ազատության հրապարակում առկա ճամբարը և ներկա գրնվողներին ցրելն ու հետագայում հավաքների անցկացումը կանխելն է եղել:

(...) [Հավաքը] ոչ թե այլոց կողմից գործունեության օրինական իրականացումը խաթարելու, այլ բանավիճելու և քաղաքական նշանակություն ունեցող հասարակական այնպիսի հարցի մասին արտահայտվելու հարթակ սրեղծելու նպատակ է ունեցել, որն ուղղակիորեն կապված է ժողովրդավարության իրականացման հետ և լուրջ մտահոգության առարկա է եղել Հայաստանի հասարակության լայն հարվածի համար: Հերևաբար առավել քարճր աստիճանի հանդուրժողականություն էր պեղք ցուցաբերել սույն գործով, քան իշխանություններն են ցուցաբերել:

(...) Դատարանը նաև չի կարող չնկատել հավաքը ցրելու եղանակը: Այն մարնանում է մի շարք հավաստի զեկույցների առկայությունը, որոնցից պարզ է դառնում, որ նախկինությունը ցուցաբարների դեմ անհիմն և չափից ավելի ուժ է օգտագործել: (...): Հարկանշական է, որ նախկինության գործողությունները, ըստ երևույթին, երբևէ անկախ և

անաչառ քննության չեն ենթարկվել: Վերջապես, Դատարանը նշում է ուսրիկանական գործողություններին առնչվող բոլոր հակասությունների և թափանցիկության բացակայության մասին, այդ թվում՝ այդ գործողությունների նպատակի հաճախակի փոփոխվող տարբերակը»¹:

25.1 Արդյունքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ առանց բավարար հիմնավորման և ակնհայտորեն առանց ցրելու մասին նախագգուշացման, ինչպես նաև չհիմնավորված և չափից ավելի ուժի օգտագործմամբ Ազատության հրապարակի հավաքը ցրելն անհամաչափ միջոց է եղել, որը իշխանությունների կողմից հավաքների ազատությունը սահմանափակելիս անցել է ողջամտության սահմանները²:

26. Անդրադառնալով Մ.Սաղաթելյանին մեղսագրվող արարքներին՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) [Դ]իմումնարուն մեղադրվել և կալանավորվել է [ՀՀ քրեական օրենսգրքի] (...) 225.1 հոդվածի 2-րդ մասի և 316-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև 301-րդ հոդվածի և 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որոնցով պատժամիջոցներ են սահմանվում իշխանությունը զավթելու և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու կոչեր անելու համար (...): Դատարանը նշում է, այնուամենայնիվ, որ հավաքի կամ այն ցրելու ժամանակ դիմումնարուի կողմից ենթադրաբար կատարված արարքների մասով այս մեղադրանքների կապակցությամբ չի տրամադրվել որևէ կոնկրետ ապացույց կամ փաստական հիմք: (...) Չի նշվել, թե արդյոք դիմումնարուն ինքն արել է կոչեր կամ բռնություն գործադրելուն ուղղված կոչեր, և եթե արել է, ապա այդպիսի կոչերի կամ բռնություն գործադրելուն ուղղված կոչերի բնույթը: Ոչ էլ նշվել է ենթադրյալ հարձակումներ կատարելու բնույթը և ձևը, ինչպես նաև այդպիսի հարձակումների ենթադրյալ զոհերի ինքնությունը: Նույնը վերաբերում է անհնազանդության ենթադրյալ հրահրմանը: (...) Հերևաբար պարզ է դառնում, որ դիմումնարուի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել, և նա կալանավորվել է ուղղակի Ազատության հրապարակի հավաքին ակտիվորեն մասնակցելու և այն կազմակերպելու և ոչ թե դրա ընթացքում կատարած հարուկ դատապարտելի արարքի համար: Ավելին, (...) դիմումնարուի ձերբակալման հանգամանքներից պարզ է դառնում, որ նա հնարավոր է իշխանություններին հայտնի է եղել որպես ակտիվ ցուցարար: Նույնը պարզ է դառնում Կենտրոն վարչական շրջանի ուսրիկանության բաժնի պետի զեկուցագրից, որում նշվել է, որ դիմումնարուն արգելանքի է վերցվել Ազատության հրապարակում տեղի ունեցող հավաքի «ակտիվիստ» լինելու համար (...): Դատարանը համարում է, որ խաղաղ հավաքը ցրելը և այնուհետև դադարեցնելը, ինչպես նաև դրա

¹ Տե՛ս՝ u Մուշեղ Սաղաթելյանին ընդդեմ Հայաստանի վճռի 236-րդ, 244-247-րդ կետերը:

² Տե՛ս՝ u Մուշեղ Սաղաթելյանին ընդդեմ Հայաստանի վճռի 248-րդ կետը:

ակտիվիստներին կամ այլ խաղաղ մասնակիցներին կայանավորելն առանց որևէ ապացույցի առ այն, որ նրանք անձամբ գործել են որևէ դատապարտելի արարք, ինչպես դիմումատուի դեպքում է եղել, չեն կարող համարվել «ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ» միջոց:

(...) Չնայած վերը նշվածը լուրջ մերահոգության առարկա է, Դատարանը, այնուամենայնիվ, այն կարգավիճակում չէ, ոչ էլ իր պարտականությունն է որոշելու, թե արդյոք դիմումատուին առաջադրված մեղադրանքները հիմնավորված են եղել, և ներպետական դատարանների պարտականությունն է ստուգելու դրա հիմքում ընկած փաստերի հավաստիությունը: Դատարանն այս կապակցությամբ կրկին նշում է, որ որոշման համար հիմնավորում ներկայացնելը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված էական դատավարական երաշխիք է, քանի որ դրանով կողմերին ցույց է տրվում, որ իրենց փաստարկները լավել են, նրանց հնարավորություն է ընձեռում որոշման մասով առարկություններ ներկայացնելու կամ այն բողոքարկելու, ինչպես նաև հիմք է ծառայում հանրության շրջանում դատական որոշման պարճատաբանությունները հիմնավորելու համար: Ավելին, այս ընդհանուր կանոնն ապահովվում է Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված հատուկ պարտավորություններով՝ ներպետական դատարաններից պահանջելով միջամտության համար «համապարասիան» և «բավարար» հիմնավորումներ ներկայացնել: Այս պարտավորությամբ անհատներին հնարավորություն է տրվում, ի թիվս այլնի, ծանոթանալ դատարանի՝ իրենց արտահայտվելու ազատությունը կամ հավաքների ազատությունը սահմանափակող որոշման հիմքում ընկած հիմնավորումներին և վիճարկել դրանք, և հետևաբար այն կարևոր դատավարական երաշխիք է՝ ընդդեմ Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով պաշտպանված իրավունքներին կամայական միջամտության (...):

Դատարանը գրնում է, որ ներպետական դատարանները սույն գործով պարզաճ կերպով չեն կատարել նշված պարտավորությունը՝ դիմումատուին որոշ բռնության արարքներ կատարելու և ապօրինի զենք կրելու համար դատապարտելիս: (...): Այն նշում է, որ միայն արդյունքում կայացված վճիռներով է ամփոփվել դիմումատուի դեմ քրեական գործով մեղադրական եզրակացությունը, որն իր հերթին լիովին հիմնված է եղել գործի հետ առնչություն ունեցող ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա: Ավելին, ինչպես և ներպետական դատարաններն են հաստատել, փաստերում բացակայել են մանրամասներ, և դրանք լի են եղել անհատականություններով: Այնպիսի կարևոր փաստեր, ինչպիսիք Ազատության հրապարակում ցուցարարների և ոստիկանության միջև բախումների հանգամանքներն են, լիովին անտեսվել են և նույնիսկ չեն

նշվել՝ չնայած նրան, որ այդ հանգամանքները, այդ թվում՝ ոստիկանության գործողությունների գնահատումն ուղղակիորեն առնչվել են դիմումատուին առաջադրված մեղադրանքներին: Որոշ կարևոր հակասությունների այդպես էլ անդրադարձ չի կատարվել, և դրանք մնացել են չբացատրված, այդ թվում՝ այն փաստը, թե դիմումատուն ինչպես կարող էր կատարել տվյալ մեղսագրվող արարքներն այն ժամանակ, երբ նա, համապատասխան գեկույցի համաձայն, արդեն ոստիկանությունում ձերբակալվածներին պահելու վայրում էր: Ներպետական դատարանները, հետևաբար, չեն իրականացրել դիմումատուին առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստերի մանրամասն և օբյեկտիվ քննություն, ինչպես նաև չեն կատարել մանրակրկիտ ուսումնասիրություն, որը, գործի հատուկ հանգամանքներում և ընդհանուր համարեքարը հաշվի առնելով, պահանջվում էր նրանցից՝ 11-րդ հոդվածով երաշխավորված՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Այսպիսի հանգամանքներում չի կարելի ասել, որ ներպետական դատարանների կողմից ներկայացված՝ միջամտությունը հիմնավորող պարճառներն իսկապես «համապատասխան և բավարար» են եղել, ինչի հետևանքով դիմումատուն զրկվել է պաշտպանության այն դատավարական երաշխիքից, որը նա ունեցել է 11-րդ հոդվածով սահմանված իրավունքի ուժով (...): Ոչ էլ կարելի է ասել, որ դատարաններն իրենց որոշումները հիմնել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատականի վրա»¹:

26.1 Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ եթե ենթադրենք, որ ցույցի ցրումը և դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը, կալանավորումը և դատապարտումը համապատասխանել են ներպետական օրենսդրությանն ու հետապնդել են Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված իրավաչափ նպատակներից որևէ մեկը, ենթադրաբար՝ անկարգությունները և հանցագործությունները կանխելու նպատակը, տվյալ միջոցներն անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում²:

26.2 Արդյունքում, Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դիմումատու Մուշեղ Սաղաթեյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում³:

27. Հաշվի առնելով սույն որոշման 18-26.1-րդ կետերում ներկայացված փաստերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով

¹ Տե՛ս Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի վճռի 250-րդ, 252-253-րդ կետերը:

² Տե՛ս Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի վճռի 254-րդ կետը:

³ Տե՛ս Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի վճռի 255-րդ կետը:

Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի խախտումների արձանագրման փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 7-ի, 2008 թվականի օգոստոսի 28-ի, 2009 թվականի մարտի 10-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշումները վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական ակտերի բեկանումը.

28. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Մաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (ցույցի ցրման և դիմումատուի կալանավորման մասով) խախտումները հիմք են՝

ա) Մ.Մաղաթելյանի կալանավորման և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 4-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի որոշումը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 26-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանելու համար,

բ) Մ.Մաղաթելյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու, ՀՀ ոստիկանության՝ 2008 թվականի մարտի 1-ի հրահանգը, դրա հիման վրա կատարված գործողություններն ու քրեական գործի հարուցման որոշումն ապօրինի և չհիմնավորված ճանաչելու, նախաքննական մարմնին հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելուն ու գործի վարույթը կարճելուն պարտավորեցնելու վերաբերյալ բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 8-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշումը բեկանելու համար:

29. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:*

29.1 *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.*

1. *վճարել նշանակված փոխհատուցումը,*

2. անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումարուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր սրանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար անանապիպ խախտումներն ապագայում»¹:

30. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքննելու մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետությունների ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով «*restitutio in integrum*»՝ հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես՝ վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաքննման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

30.1 Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝

¹ Տե՛ս *Օիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաքաջումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից **(i)**-ը, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: *Այդ չափանիշի բավարարման համար պետք է լինի ուղիղ պարճատահերևանքային կապ՝ հայրնաբերված խախտման և տուժող կողմի համար ստաջացած շարունակական բացասական հերևանքների միջև:*

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, **(ii)** խմբում ներառված չափանիշները նպատակաուղղված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաքաջումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, ապա դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն կազմակերպելու իր պաշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստացված հայտարարությունների կամ այն նյութերի վրա, որոնք տուժող կողմը հնարավորություն չի ունեցել ստուգել: *Նման թերությունները պետք է լինեն այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած ստաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ:*

31. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «[Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված] վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի

¹ Sli 'u Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgments of the European Court of Human Rights.

ելքի վրա: (...)»:

31.1. Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) [Ի]րավասացի նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողությունն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմարիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պարզաձև մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հարակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ արեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»¹:

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Սաղաթելյանին ազատությունից զրկելու վերաբերյալ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են նրա նախնական կալանքին և դրա ժամկետի երկարացմանը: Այդ որոշումների կայացումից հետո՝ 2008 թվականի օգոստոսի 13-ին Մ.Սաղաթելյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի քրեական դատարան, որի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճռով վերջինս մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել 5 (հինգ) տարի ժամկետով ազատազրկման ու 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանքի: Մինևսույն ժամանակ, նույն դատավճռով Մ.Սաղաթելյանի՝ ազատազրկման ձևով պատժի կրման սկիզբը հաշվվել է 2008 թվականի մարտի 1-ից, այսինքն՝ սույն բողոքների քննության պահի դրությամբ Մ.Սաղաթելյանն արդեն իսկ կրել է իր նկատմամբ նշանակված պատիժը:

33. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 29-31.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի խախտումների բացասական հետևանքները սույն բողոքների քննության պահի դրությամբ դիմումատուին չի

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՌ-1099 որոշման 6-րդ կետը:

շարունակում կրել: Նման պայմաններում Մ.Սաղաթեյանի նախնական կալանքի վերաբերյալ դատական ակտերի բեկանումը չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը, քանի որ բացակայում է ուղիղ պատճառահետևանքային կապը՝ հայտնաբերված խախտումների և Մ.Սաղաթեյանի կողմից կրվող շարունակական բացասական հետևանքների միջև: Բացի այդ, այն իրավական առումով նաև անիրագործելի է, քանի որ գործի մինչդատական վարույթում Մ.Սաղաթեյանի նախնական կալանքի և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ դատական ակտերի բեկանումը կհանգեցնի իրավական անորոշության՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանք եղել են ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

34. Վերոգրյալի հետ մեկտեղ անհրաժեշտ է փաստել, որ համանման պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ մերժել է *Մուրադիսանյան ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 5-ի վճռի հիման վրա հարուցված վերանայման վարույթի շրջանակներում նոր հանգամանքի հիմքով Արարատ Մուրադիսանյանի նախնական կալանքի վերաբերյալ որոշումների բեկանման պահանջով ներկայացված վճռաբեկ բողոքը¹: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որը վերահսկողություն է իրականացնում Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ, 2018 թվականի հունիսի 7-ի թիվ CM/ResDH(2018)191 բանաձևով քննարկել է Հայաստանի վերաբերյալ կայացված ընդհանուր թվով յոթ վճիռների, այդ թվում՝ *Մուրադիսանյան ընդդեմ Հայաստանի* վճռի կատարման ընթացքը և արձանագրել, որ նշված գործերով անհատական միջոցառումներն իրականացված են, արդարացի փոխհատուցումները վճարված են և մեղադրյալներից ոչ մեկը չի գտնվում մինչդատական կալանքի տակ, նրանք դատապարտվել կամ ազատ են արձակվել: Արդյունքում հիշյալ գործերի կատարման նկատմամբ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հայտարարվել է փակված²:

35. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Սաղաթեյան ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (դիմումատուի կալանավորման մասով) խախտումները հիմք չեն Մ.Սաղաթեյանի նախնական կալանքի և դրա ժամկետի երկարացման վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008

¹ Տե՛ս *Արարատ Մուրադիսանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ-01/13 որոշումը:

² Տե՛ս բանաձևը հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016808a08a7

թվականի մարտի 4-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի որոշումը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հունիսի 26-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանելու համար:

36. Անդրադառնալով ՀՀ ոստիկանության՝ 2008 թվականի մարտի 1-ի հրահանգը և դրա հիման վրա կատարված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ պաշտպանության կողմի ներկայացրած բողոքի առնչությամբ կայացված դատական ակտերի բեկանման վերաբերյալ բողոքաբերների պահանջին՝ Վճռաբեկ դատարանը, առանց անդրադառնալու մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության դատավարական կարգի առանձնահատկություններին, փաստում է, որ հետագա դատական վերահսկողության շրջանակում նշված հարցին դատարանների կողմից տրված գնահատականների կրկին քննարկումը ներկայումս կորցրել է իր իրավական նշանակությունը, նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արդեն իսկ մանրամասն վերլուծության է ենթարկել 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ ոստիկանության կատարած գործողություններն ու դրանց տվել համապատասխան իրավական գնահատական:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտումը (ցույցի ցրման մասով), հիմք չէ բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 8-ի որոշումն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշումը բեկանելու համար:

37. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Եվրոպական դատարանի՝ *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական հայեցակետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (Մ.Սաղաթելյանի նկատմամբ քրեական հետապնդման և նրան դատապարտելու մասով) խախտումները հիմք են Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

¹ Տե՛ս սույն որոշման 14.1-րդ կետը:

38. Սկոցցարին և Ջունյան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Վ]ճիռը, որով [Եվրոպական դատարանը] խախտում է արձանագրում, պարասիանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհարական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար [Եվրոպական դատարանի] արձանագրած խախտումներին և հնարավորինս շարժելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով արանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարելի են [Եվրոպական դատարանի] վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների տրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող»¹:

38.1. Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է. «Կոնվենցիայի խախտում արձանագրած [Եվրոպական դատարանի] վճռով պարասիանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասիանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...)»²:

39. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռարեկ դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*» ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման

¹ Տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

² Տե՛ս *Selcuk and Asker v. Turkey* գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա¹:

40. Հաշվի առնելով *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 18-19.2-րդ և 22-26.2-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման նախորդ կետի վերլուծության լույսի ներքո գնահատելով *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* վճռով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական հայեցակետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (Մ.Սաղաթելյանի նկատմամբ քրեական հետապնդման և նրան դատապարտելու մասով) խախտումները հիմք են Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Այլ կերպ, նշված խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

41. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի մարտի 10-ի որոշման վերանայման արդյունքում Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պետք է վերացնի *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական և դատավարական հայեցակետերի, 6-րդ հոդվածի 1-ին կետի, Կոնվենցիայի 11-րդ հոդվածի (Մ.Սաղաթելյանի նկատմամբ քրեական հետապնդման և նրան դատապարտելու մասով) խախտումներն ու արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի

¹ Տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը:

տանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2008 թվականի մայիսի 7-ի, 2008 թվականի օգոստոսի 28-ի, 2009 թվականի մարտի 10-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի օգոստոսի 19-ի որոշումները վերանայել:

2. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել, իսկ Մուշեղ Ազունի Սաղաթեյանի պաշտպաններ Ս.Սաֆարյանի և Վ.Գրիգորյանի բողոքը բավարարել մասնակիորեն:

3. Վերանայման արդյունքում Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումը բեկանել ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարեցում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0172/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ դիմողներ Ալբերտ Ասլանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի, և դիմող Գագիկ Դավիթի Կարապետյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի հաղորդումների հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2017 թվականի մայիսի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62209617 քրեական գործը: Նույն օրն Ա.Հակոբջանյանը և Գ.Կարապետյանը ճանաչվել են տուժողներ:

1.1. Գագիկ Կարապետյանի հաղորդման հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2017 թվականի մայիսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի և 309-րդ հոդվածի 2-րդ

մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62210417 քրեական գործը, որը նույն օրվա մեկ այլ որոշմամբ միացվել է թիվ 62209617 քրեական գործին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանը 2017 թվականի սեպտեմբերի 15-ին որոշում է կայացրել *Արամ Ղազարյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով, *Մարգիս Այվազյանի* և *Արամ Չթջյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ և 341-րդ հոդվածներով, *Վալերի Հովհաննիսյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով, *Կարեն Միմոնյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309.1-րդ և 314-րդ հոդվածներով, *Արմեն Իսրայելյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309.1-րդ և 137-րդ հոդվածներով, *Մանվել Ասոյանի* և *Խաչիկ Ակոյլյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ և 309.1-րդ հոդվածներով, *Լևոն Պատավյանի* և *Էդուարդ Վերմիշյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ և 349-րդ հոդվածներով, *Հարություն Վարոսյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով, *Ալբերտ Հակոբջանյանի* և *Գագիկ Կարապետյանի* նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

2. Վերոգրյալ որոշման դեմ դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է:

3. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշմամբ դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքը մերժվել է:

4. Դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանը և դիմող Գ.Կարապետյանը, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Տուժող Ա.Հակոբջանյանը 2017 թվականի մայիսի 3-ին ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ իր հիշելով 2016 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ հերթական անգամ գտնվել է Ստեփանավան քաղաքում, ժամը 09-ից 10-ի սահմաններում, Գ.Կարապետյանը, իրեն Ալավերդի քաղաք ճանապարհելու նպատակով, պատահական տաքսի ավտոմեքենայով ուղեկցել է Ստեփանավան քաղաքի ավտոկայան: Ճանապարհին 3-4 ավտոմեքենաներ, որոնցից հիշում է «Ֆոլկսվագեն գոլֆ», «BMW» և «Նիվա» մակնիշի ավտոմեքենաները, շրջափակել և կանգնեցրել են տաքսին: Ավտոմեքենաներից իջել են մոտ 10 հոգի տղաներ, որոնք թեն չեն ներկայացել, սակայն նրանց մոտեցումից հասկացել են, որ ոստիկանության աշխատակիցներ են: Նրանցից «Ֆոլկսվագեն գոլֆ» մակնիշի ավտոմեքենայի վարորդն ատրճանակն ուղղել է դեպի տաքսի ավտոմեքենան և պահանջել դուրս գալ ավտոմեքենայից: Այդ գործողություններին զուգահեռ նրանք տաքսի ավտոմեքենայի դռները բացել, իրեն և Գ.Կարապետյանին քաշելով իջեցրել, վերջինիս ձեռքերը դեպի ետ ոլորելով՝ տարել են մի կողմ, իսկ իր ձեռքերը դեպի ետ ոլորելով ձեռնաշղթաներ են հագցրել և նստեցրել «Ֆոլկսվագեն գոլֆ» մակնիշի ավտոմեքենայի ետնամասում: Առանց պատճառը հայտնելու, թվով 4 աշխատակիցներ իրեն բերման են ենթարկել ոստիկանության Ստեփանավանի բաժին, տարել 2-րդ հարկում գտնվող աշխատասենյակներից մեկը: Իր ձեռնաշղթաները հանելուց հետո քրեական հետախուզության բաժնի պետը հարցրել է, թե որտեղից է Գ.Կարապետյանի հետ գողություն կատարել: Երբ ինքը պատասխանել է, որ գողություն չի կատարել, Վ.Հովհաննիսյանն աջ ձեռքով ուժգին ապտակել և հայհոյել է՝ պահանջելով խոստովանել Գ.Կարապետյանի հետ գողություն կատարելու հանգամանքը: Ինքը կրկին պատասխանել է, որ որևէ մեկի հետ գողություն չի կատարել, որից հետո մոտ 5 րոպե տևողությամբ, ընդմիջումներով, աշխատասենյակում գտնվող ոստիկանները սկսել են անկանոն ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ուժեղ ցավ¹:

6.1. Տուժող Գ.Կարապետյանը 2017 թվականի մայիսի 4-ին տուժող Ա.Հակոբջանյանի ցուցմունքին մասամբ նույնաբովանդակ ցուցմունք է տվել՝ ըստ էության հավելելով նաև, որ Ա.Հակոբջանյանին բերման ենթարկելուց քիչ հետո գնացել է այնտեղ, ցանկացել ներս մտնել, սակայն հերթապահ մասի աշխատակիցը թույլ չի տվել: Շուրջ 4-5 ժամ սպասել է ընկերոջը, տեսնելով, որ բաց չեն թողնում, կրկին փորձել է մուտք գործել բաժին, և քանի որ կրկին թույլ չեն տվել, վիճաբանության է բռնվել այնտեղ գտնվող աշխատակիցների հետ, որի ընթացքում հայհոյել և քաշքշել են

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 265-271:

միմյանց, քրեական հետախուզության բաժնի պետ Վ.Հովհաննիսյանը ապտակել է, աշխատակիցներից մեկն ատրճանակով սպանության սպառնալիք է տվել: Այնուհետև բարձրացել է բաժին, իրեն ուղեկցել են պետի տեղակալ Ա.Չթյանի աշխատասենյակ, ով մեկ անգամ ապտակել է՝ պատճառելով ֆիզիկական ցավ¹:

7. ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի աշխատակիցներ Կարեն Միմոնյանը և Արմեն Իսրայելյանը ցուցմունք են տվել այն մասին, որ 2016 թվականի հուլիս ամսին Ստեփանավան քաղաքում կատարված գողության դեպքով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տվյալներ էին ձեռք բերվել, որ այդ գողությունը հնարավոր է կատարած լինի նախկինում գողության համար դատապարտված Գագիկ Կարապետյանի ընկեր Ալբերտ Հակոբջանյանը: 2016 թվականի օգոստոսի սկզբներին, օրը հստակ չեն հիշում, տեղեկացել են նաև, որ Ալբերտը գտնվում է Գագիկ Կարապետյանի տանը: Քրեական հետախուզության բաժանմունքի պետ Վալերի Հովհաննիսյանի հանձնարարությամբ նրան գողություն կատարելու կասկածանքով պետք է բերման ենթարկելին ոստիկանության Ստեփանավանի բաժին: Հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու նպատակով, որոշել են Ա.Հակոբջանյանին բերման ենթարկել Գագիկի բնակարանից դուրս գալուց հետո: 2016 թվականի օգոստոս ամսվա սկզբներին, օրը հստակ չեն հիշում, երբ Ա.Իսրայելյանի հետ վերջինիս «Ֆոլկլավագեն վենտո» մակնիշի ավտոմեքենայով գտնվում էին քաղաքում, տեսել են, որ Ալբերտն ու Գագիկը վերջինիս բնակության վայրից դուրս եկան, նստեցին ինչ-որ «Ֆոլկլավագեն գոլֆ» մակնիշի ավտոմեքենա: Որքան հիշում են, իրենք այդ մասին հեռախոսազանգով տեղեկացրել են Վ.Հովհաննիսյանին, ով ասել է, որ կմոտենա: Երբ տաքսին հեռացել է Գագիկենց շենքի մոտից և հասել էին, իրենց հիշելով Ստեփանավան քաղաքի Մեղապարտ և Սուրբ Նշան փողոցների խաչմերուկի մոտ, ազդանշան տալով կանգնեցրել են տաքսի ավտոմեքենան: Իջել են ավտոմեքենայից, մոտեցել տաքսուն, այդ ժամանակ հասել է նաև Վ.Հովհաննիսյանը և նրանց ներկայանալով որպես ոստիկանության Ստեփանավանի բաժնի աշխատակիցներ՝ Ա.Հակոբջանյանին պահանջել են իջնել տաքսի ավտոմեքենայից: Վերջինս, առանց խնդիրներ առաջացնելու իջել է, իսկ առջևում գտնվող ուղևոր Գագիկ Կարապետյանը սկսել է բղավել և դժգոհություններ հայտնել՝ ասելով, թե ինչ են ուզում իր ընկերոջից, ինչու են նրան բաժնի բերման ենթարկում: Վ.Հովհաննիսյանը փորձել է նրան կարգի հրավիրել՝ ասելով, որ իրենց աշխատանքն են իրականացնում և կարիք չկա նման վարքագիծ դրսևորել և ասել է, որ կարող է գնալ: Իրենց ավտոմեքենայով Ա.Հակոբջանյանին բերման են ենթարկել ոստիկանության Ստեփանավանի բաժին: Որքանով տեղյակ են, բաժնի աշխատակիցներից ոչ ոք, իսկ քրեական հետախու-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 277-283:

գույթյան բաժնում առավելապես, «Ֆոլկսվագեն գոլֆ», կամ հին տարեթվի «BMW» մակնիշի ավտոմեքենաներ ունեցողներ չկան: Արմեն Իսրայելյանին պատկանող կանաչ գույնի «Ֆոլկսվագեն վենտո» մակնիշի ավտոմեքենայով Ա.Հակոբջանյանին բերման են ենթարկել ոստիկանություն, «Ֆոլկսվագեն գոլֆ» կամ «BMW» մակնիշի ավտոմեքենաներով չեն եղել, իսկ Վալերի Հովհաննիսյանն ընդամենը այդ գործողություններին ներկա է գտնվել և այնտեղ է եկել իր «Նիվա» ավտոմեքենայով¹:

ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի մյուս աշխատակիցների կողմից «Ֆոլկսվագեն գոլֆ» կամ «BMW» մակնիշի ավտոմեքենաներ չունենալու առնչությամբ նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժնի մյուս աշխատակիցները:

7.1. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալի՝ 2016 թվականի օգոստոսի 5-ի ծառայողական ուսումնասիրության եզրակացության համաձայն՝ նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի քրեական հետախուզության բաժնի ծառայողներ Կ.Սիմոնյանը և Ա.Իսրայելյանը նույնաբովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ 2016 թվականի օգոստոսի 4-ին առավոտյան Ա.Հակոբջանյանին հրավիրել են ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին, սակայն վերջինս առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ներկայանալ նախաքննություն իրականացնող մարմին և նույն օրը ժամը՝ 15:45-ին Ստեփանավան քաղաքի Հ.Մեղապարտի և Սուրբ-Նշան փողոցների խաչմերուկից իրենք Ա.Հակոբջանյանին բերել են ոստիկանության Ստեփանավանի բաժին²:

8. Ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանը Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետին ուղղված 2016 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 63/2-5245 գրությամբ խնդրել է, որպեսզի թույլատրեն իրեն և Լոռու մարզային վարչության պետ Ա.Ղազարյանին 2016 թվականի դեկտեմբերի 1-ին Գ.Կարապետյանի հետ «ՕՀ քնույթի հարցազրույց» ունենալու նպատակով մուտք գործել Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ձերբակալվածների պահման վայր (այսուհետ նաև՝ ՁՊՎ)³: Նշված գրությանն ի պատասխան՝ ավագ քննիչ Լ.Պառավյանի՝ նույն օրվա թիվ 53³-3025-16 գրությամբ թույլատրվել է Գ.Կարապետյանի հետ իրականացնել «ՕՀ միջոցառումներ»⁴: Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Ղազարյանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 57/3-3221 գրության համաձայն՝ 2016 թվականի դեկտեմբերի 1-ին ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանի հետ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 294-307:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 12-14:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 111:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 112:

նստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ՁՊՎ-ում տեսակցել են Գագիկ Կարապետյանին, որտեղ Ս.Այվազյանը Գ.Կարապետյանի նկատմամբ իրականացրել է «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն¹:

8.1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Ղազարյանն ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի կողմից ձերբակալված Գ.Կարապետյանի կողմից հնարավոր այլ գողություններ կատարելու հանգամանքը պարզելու նպատակով, վերջինիս հետ օպերատիվ հարցազրույցներ ունենալու համար՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա սկզբներին, համապատասխան թույլտվությամբ ինքն ու ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանը մուտք են գործել ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ և հարցազրույց ունեցել Գ.Կարապետյանի հետ: Հարցեր են տվել ինչպես տվյալ գողության դեպքի, այնպես էլ հնարավոր այլ գողություններ կատարելու վերաբերյալ: Ո՛չ ինքը, ո՛չ էլ Ս.Այվազյանը նրան չեն առաջարկել որոշակի գումարի դիմաց գողության 3 դեպք ընդունել: Առհասարակ իրենց միջև նման բովանդակությամբ խոսակցություններ չեն եղել²:

Նույնարժեքի ցուցմունք է տվել նաև ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետ Ս.Այվազյանը³:

9. Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի պետի՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ի գրությանը կից «իրազեկման» համաձայն՝ ձերբակալված Գ.Կարապետյանը գանգատվում էր գլխացավերից, ականջների շրջանում այրոցի զգացողությունից, ինչի կապակցությամբ բժշկական կենտրոնից հրավիրվել է բժիշկ, որն էլ իր հերթին բուժօգնության է ենթարկել ձերբակալվածին, ցուցաբերել է առաջին բուժօգնություն և նշում կատարել ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության՝ «Ձև 12» գրանցամատյանում⁴:

9.1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետ Ս.Ավետիսյանի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի գրության համաձայն՝ ձերբակալված Գ.Կարապետյանը ՁՊՎ ընդունվելուց հետո՝ դեկտեմբերի 1-ին ժամը 00:25-ին, բողոք է հայտնել գլխացավից, մարմնի ընդհանուր թուլությունից, ինչի կապակցությամբ հրավիրվել է շտապօգնության բրիգադ, որի կողմից ցուցաբերվել է առաջին բուժօգնություն⁵:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 128:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 146-149:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 26-33:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 108-109:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 113:

9.2. Ըստ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի ձեռքակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության գրանցման մատյանի տվյալների. «Կարասպետյան Գագիկ Դավիթի, 01.12.2016 թվական, ժամը 24:25, գանգարվում է ընդհանուր թուլությունից, գլխացավից, վերին վերջույթում թմրածության զգացողությունից, սրտի շրջանում ծակող բնույթի ցավերից: Օբյեկտիվ մաշկը և տեսանելի լորձաթաղանթները նորմալ գունավորման, սրտի տոները ռիթմիկ, պուլսը ռիթմիկ, լեցուն, թոքերում կոշոր շնչառություն, պուլսը 86գ/ր, զ/ճ-130/80մմ.սս.: Ախտորոշում՝ վեգետատիվ կրիզ, անհրաժեշտ է նյարդաբանի կոնսուլտացիա: Բժիշկ-սրտագրություն: Գրառում առ 02.12.2016 թվական ժամը 10:10 գանգարվում է սրտի շրջանի ծակող սուր ցավերից, որոնք տարածվում են ձախ ուսին, շնչարգելությունից, զ/ճ-130/80մմ.սս., ախտորոշում՝ վեգետատիվ կրիզ, կարարվել է անալգին, դիմեդրոլ: ՇԲՈ-հերթապահ բժիշկ՝ Մ.Սերոբյան»¹:

10. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի՝ թիվ 62209617 քրեական գործով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ 2017 թվականի մայիսի 11-ի հանձնարարության համաձայն՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը հանձնարարվել է ձեռնարկել օպերատիվ միջոցառումներ՝ պարզելու քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ²:

10.1. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Ս.Ասատրյանի՝ 2017 թվականի հունիսի 15-ի գրության համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի՝ թիվ 62209617 քրեական գործով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին տրված հանձնարարությամբ արժարժված հարցերի շուրջ ձեռնարկված միջոցառումների արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է, որ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ 2016 թվականի օգոստոսի 4-ին բռնություն չի գործադրվել, Ա.Հակոբջանյանին և Գ.Կարապետյանին ուղեկցող տաքսու վարորդը հանդիսացել է Ստեփանավան քաղաքի Պրոմեթևս 15Ա/5 հասցեի բնակիչ, 1992 թվականի մարտի 23-ին ծնված Նարեկ Սամվելի Բարխուդարյանը, ով բացակայում է ՀՀ-ից և գտնվում է ՌԴ-ում³:

10.2. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ Վ.Հովսեփյանի՝ 2017 թվականի ապրիլի 28-ի գրության համաձայն՝ Նարեկ Բարխուդարյանը 2016 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 14:28-ին Բագրատաշենի սահմանային անցակետով մեկնել է ՀՀ-ից⁴:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 114-115, 122-123:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 20-25:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 116-118:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 10:

10.3. ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալի՝ 2017 թվականի հուլիսի 17-ի գրության համաձայն՝ 2017 թվականի մայիսի 3-ից մինչև 2017 թվականի հուլիսի 13-ն ընկած ժամանակահատվածում Ալբերտ Հակոբջանյան (ծնված՝ 28.07.1970 թ-ին) տվյալներով անձի կողմից ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ ՍԷԿՏ համակարգում տեղեկություններ չկան¹:

10.4. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ս.Ավետիսյանի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություններ է տրվել ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնին, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությանը, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը՝ պարզելու Ա.Հակոբջանյանի փաստացի բնակության հասցեն և նրան հայտնաբերելու դեպքում պարտավորեցնելու ներկայանալ ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որոնց արդյունքներով Ա.Հակոբջանյանը չի հայտնաբերվել²:

11. Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը պատճառաբանվել է հետևյալ կերպ. «(...) Նախաքննության ընթացքում կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված, հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսավել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուր մեղադրյալի կամ կասկածյալի³:

(...) Ալբերտ Հակոբջանյանի և Գագիկ Կարապետյանի հայրնաձ տեղեկությունները՝ ոստիկանության Սրբեհանսավանի բաժնի աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու, հայհոյելու և սպառնալիքներ փայլու, Ա.Հակոբջանյանին առավել քան ժամի բերման ենթարկելու, սակայն նրան ապօրինի ազատությունից զրկելու և բերման ենթարկելու մասին կազմված արձանագրությունում ժամը 15:45-ն արձանագրելու, Գագիկ Կարապետյանին սպանության սպառնալիք փայլու, Հարություն Վարոսյանին ցուցմունք փայլուն հար-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 190:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 105-106, 117, 119-123, 129-130:

կադրելու, վերջինիցս գումար պահանջելու, Սրեփանսավանի քննչական բաժնի քննիչների կողմից վկային և Կուժոդին ցուցմունք փայուն հարկադրելու, պաշտոնեական կեղծիք կարարելու կամ սպառնալից կեղծելու վերաբերյալ, կարարված նախաքննության ընթացքում բացի շահագրգիռ անձանց ցուցմունքներից, այլ սպառնալիցներով չեն հասարարվել, հետևաբար, չփարարված կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուր պաշտոնարար անձանց: (...)»¹:

12. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ մերժվել է դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքը՝ արձանագրելով, ի թիվս այլնի, հետևյալը. «(...) Քրեական գործի նախաքննության ընթացքում, բացի քրեական գործով շահագրգռված Գագիկ Կարապետյանի և Ալբերտ Հակոբջանյանի ցուցմունքներից, այլ փաստական փյալյներ ձեռք չեն բերվել, միաժամանակ սպառնվել են նոր սպառնալիցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Մնան պայմաններում սուկա է չփարարված կասկած, որպիսի կասկածն անմեղության կանխավարկածի սկզբունքի ուժով ենթակա է մեկնաբանման հոգուր ՀՀ ոսրիկանության Սրեփանսավանի բաժնի (...) պաշտոնարար անձանց (...)»²:

13. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշման համաձայն՝ «(...) թիվ 62209617 քրեական գործի վարույթի շրջանակներում իրականացվել է արդյունավետ քննություն, քննչական և դարավարական գործողությունները քննիչի կողմից կարարվել են օրենքով սահմանված քրեադարավարական ընթացակարգին համապարասիան և կայացվել է օրինական և հիմնավոր որոշում:

Այապիսով, դարարանը գրնում է, որ ՀՀ հարուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ս.Ավետիսյանի՝ «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարձելու» 15.09.2017թ. որոշումն օրինական է և հիմնավորված, իսկ բողոքում բերված փաստարկները հիմնավոր չեն, ոսրի բողոքը ենթակա է մերժման: (...)»³:

14. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի մայիսի 31-ի որոշմամբ փաստել է. «(...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախարենաված լրիվ, օրյեկրիվ և բազմակողմանի քննություն կարարելու պահանջները, մասնավորապես գործով իրականացվել են մի շարք քննչական ու դարավարական գործողություններ՝ արդյունքում կայացնելով օրինական և հիմնավոր որոշում (...)»⁴:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 131-146:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 6-13:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 114-130:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 58-71:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

15. Բողոքների հեղինակների պնդմամբ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն կատարվել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեին հանցագործությունը և մեղավորներին բացահայտելուն, ինչն էլ իր հերթին հանգեցրել է տուժողների իրավունքների և ազատությունների խախտման:

Վարույթն իրականացնող մարմինը ձեռքի տակ ունենալով երկու անձի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման մասին տվյալներ, դրանց համարժեք գնահատական չի տվել, չի կատարել արդյունավետ քննություն:

16. Մասնավորապես, ըստ բողոքաբերների՝ վարույթն իրականացնող մարմինը միջոցներ չի ձեռնարկել Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի հայտնած տեղեկատվության հիման վրա գտնելու և հարցաքննելու տաքսի ավտոմեքենայի վարորդին, ով դեպքի օրն ականատես է եղել ոստիկանության աշխատակիցների կողմից Ա.Հակոբջանյանի ու Գ.Կարապետյանի նկատմամբ բռնություն գործադրելու, այնուհետև բերման ենթարկելու ողջ ընթացքին:

Ըստ բողոքների հեղինակների՝ ստորադաս դատարանների կողմից իրավական գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, թե արդյո՞ք օրինական էր ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի և ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետի մուտքը ոստիկանության Տարոնի բաժին: Չի քննարկվել նաև այն հարցը, թե արդյո՞ք նշված անձինք իրավունք ունեին մուտք գործել ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայր:

17. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշումը՝ վերացնելով դիմողների իրավունքների խախտումները կամ գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումը վերացնելու սահմանադրական գործառույթի իրացումն է: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վստահելի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում կատարվող քննության արդյունավետության

չափանիշի վերաբերյալ արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են նպաստել նաև այդ կապակցությամբ ձևավորված իրավունքի զարգացմանը:

19. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի հաղորդումների հիման վրա իրականացված քննությունը եղել է արդյունավետ:

20. ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պայրժի»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պայրժի»:

20.1. Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի՝ արդյունավետ քննության մասով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից պետության պոզիտիվ պարտականությունն է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության իրականացումը¹: Դատարանը շեշտել է, որ այդ մասին վկայող բողոքների քննությունը պետք է լինի մանրակրկիտ և ամբողջական: Իրավասու մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը՝ կատարվածի հետ կապված ապացույցների ամրագրման համար²:

20.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդդեմ Հայաստանի կայացված մի շարք վճիռներում արձանագրվել է, որ պետությունն իր պոզիտիվ պարտականության շրջանակներում չի կատարել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն, ինչը հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի խախտման³: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ քննությունը

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Jeronovics v. Latvia* գործով 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44898/10, կետ 103:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nalbandyan v. Armenia* գործով 2015 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատներ թիվ 9935/06, 23339/06, *Zalyan and others v. Armenia* գործով 2016 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, *Matvosyan v. Armenia* գործով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 52316/09 և այլն:

չի իրականացվել անհրաժեշտ անհապաղությամբ, ապացույցները ձեռք են բերվել, բժշկական գննություններն իրականացվել են ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո տևական ժամանակ անց, ինչը հանգեցրել է կարևոր ապացուցողական տվյալների կորստի¹:

20.3. «*Խոշորանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապարվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պարժի դեմ*» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «(...) *պետությունն* ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ և անաչառ քննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշորանգում է կիրառվել իր իրավասությանը ենթակա ցանկացած փարածքում»:

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...) *պետությունն* ապահովում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավագործության ներքո գրավող ցանկացած փարածքում ենթարկվել է խոշորանգումների, ունենա րվյալ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաչառ քննության իրավունք (...):»:

20.4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «*Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշորանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի (...):*»:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...):*»:

21. Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում մշտապես ընդգծել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի բացարձակ բնույթը: Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խոշտանգումների արգելքի բացարձակ բնույթը² ենթադրում է ոչ միայն խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառումից ձեռնպահ մնալու, այլ նաև որոշակի պոզիտիվ գործողություններ կատարելու պետության պարտականությունը: Մասնավորապես,

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նույն վճիռները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արայիկ Գզոյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԱԲԴ/0049/01/09 որոշման 22-րդ կետը, *Վարյոգեզ Գասպարիի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16 որոշման 19-րդ կետը:

արձանագրվել է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու «վիճելի բողոքի» կամ «վստահելի հայտարարության» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների¹ առկայության դեպքում ծագում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ կատարելու քննություն, որի արդյունավետությունն ապահովելու համար այն պետք է համապատասխանի որոշակի չափանիշների: Այսպես, Վարդգեզ Գասպարիի վերաբերյալ կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննություն կատարելու չափանիշներն են.

ա) քննություն իրականացնող մարմինների անկախությունը և անաչառությունը²,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ արագությամբ³,

գ) քննություն իրականացնող մարմինները պետք է օժտված լինեն համապատասխան փաստերը հաստատելու, մեղավոր անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու լիարժեք իրավասությամբ⁴,

դ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներն ապահովելու համար⁵,

ե) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը և տուժողի արդյունավետ ներգրավվածությունը քննությանը⁶:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ քննություն կատարելու պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է, որ քննությունը պետք է լինի արագ և մանրամասն: Դա նշանակում է, որ տեղի ունեցածը

¹ Նշված հատկանիշների մասին տե՛ս՝ u Վճռաբեկ դատարանի՝ Վարդգեզ Գասպարիի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵՆԲԴ/0190/11/16 որոշման 19-րդ կետում:

² Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի՝ 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետեր 91-92, *Mehmet Emin Yuksel v. Turkey* գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 40154/98, կետ 37, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, կետեր 83-84:

³ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mikheev v. Russia* գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 109:

⁴ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hugh Jordan v. the UK* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետեր 125-130, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136, *Amine Guzel v. Turkey* գործով 2013 թվականի սեպտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 41844/09, կետ 39:

⁵ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 134:

⁶ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 137, *mutatis mutandis*, *Ogur v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետ 92, *Ognyanova and Choban v. Bulgaria* գործով 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 46317/99, կետ 107, *Khadzhialiyev and Others v. Russia* գործով 2008 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 3013/04, կետ 106:

բացահայտելու նպատակով իրավասու մարմինները պետք է իրականացնեն լուրջ ջանքեր և քննությունն ավարտելիս կամ իրենց որոշումները պատճառաբանելիս չհենվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված եզրահանգումների վրա¹: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները²: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը³:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաշվի առնելով քննության մանրամասն լինելու չափանիշին համապատասխանելու համար անհրաժեշտ դատավարական գործողությունների սպառիչ սահմանման անհնարինությունը, որպես այդպիսի քննության չափանիշներ են հանդիսանում «լուրջ ջանքեր գործադրելը» կամ «բոլոր ողջամիտ քայլերն իրականացնելը»⁴:

22. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ արդյունավետ քննություն կատարելու անհրաժեշտությանն անդրադարձ է կատարել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ ՄԻՊ)⁵ որպես ազգային կանխարգելման մեխանիզմի գործունեության վերաբերյալ վերջին տարիներին հրապարակվող տարեկան զեկույցներում: Մասնավորապես, ՄԻՊ-ը նշել է, որ հաշվի առնելով Հայաստանի դեմ մի շարք գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռները, ինչպես նաև խոշտանգման դեպքերի քննության վիճակագրական տվյալները՝ խոշտանգման դեպքերում պետության պոզիտիվ պարտականության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի խոշտանգման դեպքերի արդյունավետ քննությունը⁵: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ,

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետ 103, *Bati and Others v. Turkey* գործով 2004 թվականի հունիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 33097/96 և 57834/00, կետ 136

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Tanrkulu v. Turkey* գործով Մեծ պալատի 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 104, *Gul v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Boicenco v. Moldova* գործով 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 41088/05, կետ 123:

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարդգեզ Գասպարիի* գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԱԲԴ/0190/11/16 որոշման 23-25-րդ կետերը:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի՝ 2017 թվականի գործունեության վերաբերյալ 2018 թվականի զեկույցը, ինչպես նաև 2018 թվականի գործունեության վերաբերյալ 2019 թվականի զեկույցը:

որ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չապահովման ռիսկն ավելի մեծ է հենց գործի քննության սկզբնական փուլում: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում իրականացված ուսումնասիրության արդյունքում կատարված դիտարկման համաձայն՝ անձի նկատմամբ վատ վերաբերմունքի և վերջինիս խոցելիությունն ու իրավունքների չապահովման ռիսկի գործոնը մեծ է հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին արգելանքի վերցնելու ժամանակահատվածում¹: Նշվածն արձանագրել է նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն՝ Հայաստանի վերաբերյալ 4-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում և իր մտահոգությունը հայտնել անձին արգելանքի վերցնելիս խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու պնդումների առնչությամբ²:

Միևնույն ժամանակ, Խոշտանգումների դեմ կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում հայտնել է, որ Հայաստանում խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկվելու դեպքերի քննության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝

ա) ապահովել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ գոհերի օպերատիվ բժշկական զննումը, որպեսզի ճշգրիտ արձանագրվեն նրանց վնասվածքները և ստացվեն կարևոր ապացույցներ՝ հետագա քննության համար,

բ) ենթադրյալ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի քննության նպատակահարմարությունը որոշելիս ապահովել ապացուցման վերաբերելի և ողջամիտ չափորոշիչներ,

գ) ամրապնդել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարին ուղղված միջոցառումները, որոնք կարող են խոչընդոտել արդյունավետ քննությանը, հետապնդմանը և պատժմանը՝ կապված խոշտանգման և վատ վերաբերմունքի գործողությունների հետ,

դ) ամրապնդել Հատուկ քննչական ծառայության քննչական կարողություններն ու անկախությունը՝ ապահովելու համար, որ անհապաղ իրեն տրամադրվեն խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր բողոքները, ներառյալ ազատությունից զրկված անձանց նման պնդումները, և որ բոլոր պնդումները խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ օպերատիվ, անաչառ, մանրակրկիտ և

¹ Տե՛ս՝ u Preventing police torture and other forms of ill-treatment – reflections on good practices and emerging approaches, 28th General Report of the CPT, CPT/Inf(2019)9-part, April 26, 2019, կետ 64:

² Տե՛ս՝ u Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, CAT/C/ARM/CO/4, Adopted by the Committee at its fifty-ninth session (7 November-7 December 2016), կետ 17:

արդյունավետ քննվեն, իսկ դրանց կատարման մեջ կասկածվողները պատշաճ կերպով ներկայացվեն դատարան, և նրանց մեղավորությունը հաստատվելու դեպքում պատժվեն իրենց գործողությունների ծանրությանը համաչափ ձևով, և որ Հատուկ քննչական ծառայությունը հրապարակավ տեղեկություններ հաղորդի ոչ միայն հարուցված քրեական գործերի, այլև հետապնդման արդյունքի մասին,

ե) առանց վտանգելու անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ ապահովել, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի դրսևորման համար քննության ներքո գտնվող բոլոր անձանց պարտականությունների կատարումը քննության ընթացքում անմիջապես կասեցվի¹:

23. Մույն որոշման 20-22-րդ կետերում վկայակոչված դրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկին ընգծում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի արգելքի բացարձակ բնույթը և վկայակոչված միջազգային չափանիշների հաշվառմամբ կարևորում խոշտանգումների և վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին «վատահեղի հայտարարության» կամ «վիճելի բողոքի» կամ այլ բավարար չափով որոշակի նշանների առկայության դեպքում իրականացվող քննության արդյունավետությունը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ դեպքերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը մեծապես պայմանավորված են վարույթն իրականացնող մարմնի օպերատիվությամբ: Մասնավորապես, «տաք հետքերով» տարվող քննության մեթոդիկայի կիրառմամբ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում «լուրջ միջոցներ» ձեռնարկել կազմակերպելու համար՝

ա) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկված զոհի անկախ բժշկական զննությունը և վերաբերելի ժամանակահատվածի բժշկական անամնեզի² հավաքագրումը, քրեակատարողական հիմնարկում կամ ՁՊՎ-ում և դրանից դուրս նրա վերաբերյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից կազմված զննության արձանագրությունների և բժշկական այլ փաստաթղթերի ձեռքբերումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դատաբժշկական փորձաքննության նշանակումը,

բ) ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքի մասին ուղղակի կամ անուղղակի տեղեկություններ ունեցող՝ դեպքի վայրում գտնված, բժշկական օգնություն կամ իրավաբանական օգնություն ցույց տված անձանց կամ վերաբերելի ժամանակահատվածում ենթադրյալ զոհի հետ շփում ունեցած, արգելանքի տակ պահելու վայր նրան ուղեկցած

¹ St' u Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, կետ 18:

² Տեղեկությունների ամբողջություն է, որոնք ստացվում են բժշկական հետազոտության ընթացքում հենց հետազոտվողի կամ նրա հարազատների հարցման արդյունքում:

անձանց հնարավորինս սեղմ ժամկետում հարցաքննությունը³: Այս համատեքստում, Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում ընդգծել ականատես վկաների հարցաքննության ապահովումը և անհրաժեշտ տվյալների ձեռքբերումը: Այդ վկաների հաղորդած տվյալները գործի ելքի համար կարող են ունենալ վճռորոշ նշանակություն և հնարավորություն տալ ստուգելու ինչպես ենթադրյալ գոհի, այնպես էլ ենթադրյալ ոտնձգություն կատարած անձի հայտնած տվյալները: Վերոգրյալի շրջանակներում Վճռաբեկ դատարանը նաև կարևոր է համարում նշել, որ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերով քննության արդյունավետության ցուցիչ է նաև այն, որ այդ գործերով վերջնական որոշումները չհիմնվեն բացառապես ենթադրյալ ոտնձգություն կատարած անձանց ցուցմունքների վրա և վերջիններս անվերապահ հիմք չընդունվեն ենթադրյալ գոհի հայտնած տվյալները հերքելու համար: Նշված գործերով յուրաքանչյուր ողջամիտ հնարավորության օգտագործմամբ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի իրադարձություններում ներգրավված անձանց ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու համար²,

գ) ըստ ենթադրյալ գոհի՝ խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը՝ նվազագույնի հասցնելով նրանց կողմից իրենց ցուցմունքները միմյանց հետ համաձայնեցնելու հնարավորությունը: Օրինակ՝ *Ramsahai and others v. Netherlands* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ գործով անցնող ոստիկանները չեն պահվել մեկուսի և չեն հարցաքննվել երեք օր, որպիսի պայմաններում թեն չկա որևէ ապացույց այն մասին, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախնական քննության պատշաճության ապահովման էական թերություն³: Նշվածի համատեքստում, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ինչպես ենթադրաբար խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած անձանց մեկուսացումը,

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետեր 176-177:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mushegh Saghatelian v. Armenia* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 206, *Zalyan and others v. Armenia* գործով նշված վճիռը, կետ 269:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramsahai and others v. Netherlands* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 330:

այնպես էլ խոշտանգում կատարելու կամ վատ վերաբերմունք դրսևորելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց նկատմամբ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը՝ բացառելով նրանց կողմից պաշտոնեական դիրքի օգտագործմամբ գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը,

դ) այլ ապացույցների հավաքումը, որոնք հնարավորություն կտան լիարժեք պատկերացում կազմել ենթադրյալ գոհի՝ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ փաստարկված հայտարարությունների կապակցությամբ: Այս առումով հատկանշական կարող է լինել անձին բերման ենթարկելու կամ նրան արգելանքի տակ պահելու վայրերի տեսաձայնագրությունների առգրավումը: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի քննության արդյունավետության տեսանկյունից այդ ապացույցների կարևորությունն ընդգծել է նաև Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն¹:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու գործերով քննություն իրականացնող մարմինները պետք է գործեն արդյունավետ, կատարեն մանրամասն քննություն՝ ձեռնպահ մնալով ենթադրյալ գոհի հայտնած տվյալները հապճեպ կամ չհիմնավորված վերջնական գնահատականի արժանացնելուց: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե արդյունքի պարտականություն է, այլ՝ միջոցների»։ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ ավարտվի այն եզրակացությամբ, որը համապատասխանում է դիմումատուի նշած դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը, և հայտարարությունների արժանահավատությունը հաստատվելու դեպքում, այն նաև պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանն ու հիմնավորելու դեպքում՝ նրանց պատժելուն²: Այսինքն՝ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի գործերով առանցքային նշանակություն ունի ոչ թե ենթադրյալ գոհի կողմից ներկայացված տեղեկատվության հաստատումը, այլ այդ տեղեկատվության մանրամասն պարզման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների համալիրը, որն օբյեկտիվ դիտորդի մոտ համոզիչ կերպով հնարավորություն կընձեռի լիարժեք պատկերացում կազմել դեպքի հանգամանքների վերաբերյալ: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ իրականացված քննության

¹ St' u Committee against Torture, Concluding observations on the fourth periodic report of Armenia, կետ 12:

² St' u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zalyan and others v. Armenia* գործով նշված վճիռը, կետ 268:

նկատմամբ վստահության առկայության հիմնական պայմաններից է նաև քննությունն իրականացնող մարմինների ինստիտուցիոնալ և գործառույթային անկախությունն ու անաչառությունը՝ գործնական իմաստով¹: Օրինակ՝ *Nalbandyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել էր, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների և տեղական ոստիկանության բաժնի նրանց ենթակաների գործողությունները, որպիսի քննությունը դատարանը չէր կարողացել համարել անկախության և անկողմնակալության պահանջներին բավարարող²: Այսինքն՝ անհրաժեշտ է նաև պատշաճ ուշադրության արժանացնել գործի քննության մեջ ներգրավված մարմինների անկախության և անաչառության ապահովումը՝ միջոցներ ձեռնարկելով բացառելու գերատեսչական շահերի հնարավոր բախումները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթադրյալ դեպքերով վերը նշված պահանջներին համապատասխանող քննությունը կարող է համարվել արդյունավետ և համահունչ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչին:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- քրեական գործի վարույթը նախաքննության մարմնի որոշմամբ կարճվել է և քրեական հետապնդում չի իրականացվել այն պատճառաբանությամբ, որ նախաքննության ընթացքում կատարվել են հնարավոր բոլոր քննչական ու դատավարական գործողությունները և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները³,

- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը մերժել է դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքն այն պատճառաբանությամբ, որ քրեական գործի նախաքննության ընթացքում, բացի քրեական գործով շահագրգռված Գ.Կարապետյանի և Ա.Հակոբջանյանի ցուցմունքներից, այլ փաստական տվյալներ ձեռք չեն բերվել, միաժամանակ սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները⁴,

- Առաջին ատյանի դատարանը, քննարկելով Գ.Կարապետյանի և դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի բողոքները, այն մերժել է՝ նշելով, որ քրեական գործի շրջանակներում իրականացվել է արդյունավետ քննություն, քննչական և դատավարական գործողությունները քննիչի կողմից կատարվել են օրենքով սահմանված քրեադատավարական ընթացակարգին համա-

¹ Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zalyan and others v. Armenia* գործով նշված վճիռը, կետ 269:

² Տե՛ս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nalbandyan v. Armenia* գործով նշված վճիռը, կետեր 120 և 123:

³ Տե՛ս՝ սույն որոշման 11-րդ կետը:

⁴ Տե՛ս՝ սույն որոշման 12-րդ կետը:

պատասխան և կայացվել է օրինական և հիմնավոր որոշում¹,

- Վերաքննիչ դատարանը, մերժելով Գ.Կարապետյանի և դիմողներ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի վերաքննիչ բողոքները, արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պահանջները, գործով իրականացվել են մի շարք քննչական ու դատավարական գործողություններ՝ արդյունքում կայացնելով օրինական և հիմնավոր որոշում²:

25. Նախորդ կետում շարադրված փաստերի նկատմամբ կիրառելով սույն որոշման 21-23-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն կիրառելու դեպքերի առթիվ իրականացված քննության արդյունավետությունը գնահատելիս համակողմանի ուշադրության չեն արժանացրել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային բաղադրիչի համատեքստում ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ՝

- նախաքննության մարմինը «լուրջ ջանքեր» չի գործադրել հայտնաբերելու և հարցաքննելու ենթադրյալ բռնության գործադրմանն ակնատես վկա՝ Գ.Կարապետյանին և Ա.Հակոբջանյանին ուղեկցող տաքսի ավտոմեքենայի վարորդին այն դեպքում, երբ վերջինիս հայտնած տվյալները կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ գործի ելքի համար: Հաշվի առնելով ենթադրյալ բռնության գործադրման դեպքերին նշված վկայի ականատես լինելու հանգամանքը՝ վարույթն իրականացնող մարմինը պետք է հատուկ ջանասիրությամբ միջոցներ ձեռնարկեր նրանից գործի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ունենալով տաքսու վարորդ՝ Նարեկ Բարխուդարյանի տվյալները և Ռուսաստանի Դաշնությունում վերջինիս գտնվելու մասին տեղեկություն, վարույթն իրականացնող մարմինը չի ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները, այդ թվում նաև՝ միջազգային իրավական օգնության շրջանակներում³, այդ անձից գործի համար առանցքային նշանակություն ունեցող տվյալներ ձեռքբերելու ուղղությամբ: Նշված տվյալները նաև էական նշանակություն կարող էին ունենալ տուժողների և ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներում առկա հակասությունները հաղթահարելու համար: Հարկ է նկատել, որ նախաքննության մարմինը նույնիսկ միջոցներ չի ձեռնարկել տաքսի ավտոմեքենայի վարորդի՝ Հայաստանի Հանրապետություն վերա-

¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Արդուշ Ղուլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշումը, կետ 21:

դարձի հնարավոր ժամկետները պարզելու ուղղությամբ, այդ կապակցությամբ տեղեկություններ չի ստացել մերձավոր ազգականներից, ձեռք չի բերել նրա սահմանահատումների՝ գործին վերաբերելի ժամանակահատվածի ամբողջական պատմությունը, որը կարող էր օգտակար լինել Ն.Բարխուդարյանի գտնվելու վայրի մասին հնարավոր պատկերացում կազմելու համար,

- նախաքննության մարմինը պատշաճ ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ ծառայողական քննության ընթացքում Կ.Սիմոնյանը և Ա.Իսրայելյանը նույնարովանդակ բացատրություններ են տվել այն մասին, որ 2016 թվականի օգոստոսի 4-ի առավոտյան Ա.Հակոբջանյանին հրավիրել են ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին, սակայն վերջինս առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է ներկայանալ վարույթն իրականացնող մարմին¹: Մինչդեռ, նշված փաստական տվյալի առկայության պայմաններում, այդ կապակցությամբ քննություն չի կատարվել, քննիչը կատարված նախաքննության ընթացքում այդ կապակցությամբ անհրաժեշտ հարցեր չի ուղղել Կ.Սիմոնյանին և Ա.Իսրայելյանին²,

- գողության դեպքով հարուցված քրեական գործով ընթացող նախաքննության պայմաններում, ոստիկանության Ստեփանավանի բաժնի պետը սեփական նախաձեռնությամբ դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ ձերբակալվածներին պահելու վայր մուտք գործելու և Գ.Կարապետյանի հետ, ի թիվս այլնի, տվյալ գործով կատարված գողության դեպքի առնչությամբ «ՕՀ բնույթի հարցազրույց» ունենալու թույլտվություն ստանալու համար, ինչը քննիչի կողմից թույլատրվել է³: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախևառաջ կրկնում է, որ նախաքննության ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումն օժանդակում է քննիչի դատավարական գործունեությանը, երբ քրեադատավարական գործիքակազմը բավարար չէ քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար⁴: Այսինքն՝ ընթացքի մեջ գտնվող նախաքննությանը զուգահեռ ոստիկանությունը սեփական նախաձեռնությամբ ինքնուրույն քննություն իրականացնել չի կարող, քանի դեռ քննիչի գործունեությանն օժանդակելու անհրաժեշտությունը չի հիմնավորվել քրեադատավարական համապատասխան ռեսուրսների սակավությամբ: Նշված անհրաժեշտությունը հիմնավորող տվյալների բացակայության դեպքում Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում սկսված նախաքննության պայմաններում ոստիկանության աշխատակիցների կողմից միաժամանակյա քննության

¹ Տե՛ս սույն որոշման 7.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն *Գող Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԴ/0229/01/16 որոշումը, կետ 17.1:

նախաձեռնումն ու իրականացումը: Ոստիկանությունը օրենսդրությամբ հստակ նախատեսված միջոցառումների շրջանակներում քննիչին կարող է օժանդակություն ցուցաբերել միայն նախաքննության իրականացման գործիքակազմի պակասի դեպքում, և երբ հանրային շահը պահանջում է գործի համար նշանակություն ունեցող առանձին հանգամանքների բացահայտման համար օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների և միջոցների կիրառում¹:

Մինչդեռ տվյալ դեպքում, սկսված նախաքննության պայմաններում, ոստիկանության բաժնի պետը դիմել է քննիչին՝ ձերբակալվածի հետ «ՕՀ քննչի հարցազրույց» անցկացնելու թույլտվություն ստանալու համար և ստացել այն, երբ ոստիկանության կողմից այդպիսի վերտառությամբ «հարցազրույց» վարելու լիազորությունը չի համապատասխանում օրենսդրությամբ նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակներին: Ավելին, հարկ է նկատել, որ ենթադրյալ հանցավոր դեպքի բացահայտված լինելու, ձերբակալված անձի առկայության պայմաններում առնվազն այդ նույն դեպքով քննիչի կողմից քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ անհրաժեշտ գործողությունների, այդ թվում՝ անձի իրավունքների լիարժեք երաշխավորմամբ հարցաքննության անցկացման հնարավորության բացակայությունը տվյալ դեպքում չի հիմնավորվել:

Նման պայմաններում, նկատի ունենալով նաև, որ միջազգային կառույցների կողմից նշվող՝ գործի քննության սկզբնական փուլում անձի խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկի աստիճանը բարձր է, ոստիկանության աշխատակիցների վերը նկարագրված այցելությունը ձերբակալվածի մոտ և նրա նկատմամբ «ՕՀ քննչի հարցազրույց» միջոցառման իրականացումը Վճռաբեկ դատարանի համար մտահոգիչ է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ այցելության ժամանակաշրջանում ձերբակալվածն ունեցել է զանգասներ և բժշկական օգնության կարիք: Ուստի, նշվածը պետք է դառնար մանրամասն քննության առարկա և պարզվեր այդ միջոցառման նպատակը, բովանդակությունը, իրականացման ժամը, տևողությունը և այլ վերաբերելի հանգամանքներ, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռեին լիարժեք պատկերացում կազմել դրա վերաբերյալ:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ քննություն չի իրականացվել նաև այդ հարցազրույցի արդյունքում կազմված արձանագրության առնչությամբ²: Ավելին, պետք է փաստել, որ ոստիկանության աշխատակիցներ Ա.Ղազարյանը և Ս.Այվազյանը որպես վկա հար-

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ցաքննվելիս նշել են, որ ՁՊՎ-ում հարցեր են տվել ձերբակալված Գ.Կարապետյանին, մինչդեռ Ա.Ղազարյանի գրության համաձայն՝ Գ.Կարապետյանի նկատմամբ «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացրել է միայն Ս.Այվազյանը¹, որպիսի հանգամանքը ևս քննության առարկա չի դարձվել,

- նախաքննության մարմնի կողմից մանրամասն քննություն չի տարվել նաև Գ.Կարապետյանի՝ ձերբակալվածների պահման վայրում գտնվելու ընթացքում մի քանի անգամ բժշկական օգնություն ստանալու հանգամանքների շուրջ, այն պարագայում, երբ ինչպես վերը նշվեց, Գ.Կարապետյանի՝ գանգատվելու առնվազն մեկ դեպքը հաջորդել է ոստիկանության աշխատակիցների այցին²: Այս առումով չեն կատարվել անհրաժեշտ գործողություններ, տեղեկություններ ձեռք չեն բերվել Գ.Կարապետյանի՝ ձերբակալվածների պահման վայրում գտնվելու ընթացքում նրան բժշկական օգնություն ցուցաբերած բժիշկներից, իրավաբանական օգնություն ցույց տված անձից, ինչպես նաև վերաբերելի ժամանակահատվածում Գ.Կարապետյանի հետ շփում ունեցած այլ անձանցից, ձերբակալվածների պահման վայրի վարչակազմի աշխատակիցներից, ովքեր կարող էին տեղեկություններ հայտնել Գ.Կարապետյանի առողջական վիճակի մասին,

- նախաքննության մարմնի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել անմիջապես մեկուսացնելու և հարցաքննելու ըստ ենթադրյալ գոհի՝ խոշտանգում կատարած կամ վատ վերաբերմունք դրսևորած ոստիկաններին: Արդյունքում, ոստիկանների կողմից իրենց ցուցմունքները միմյանց հետ համաձայնեցնելու հնարավորությունը նվազագույնի հասցնելու պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել: Ըստ գործի փաստական հանգամանքների՝ միևնույն վարչության ոստիկանության աշխատակիցները հիմնականում հարցաքննվել են տարբեր օրերի, ընդ որում հարկ է նկատել, որ մոտ մեկ տասնյակ ոստիկանության աշխատակիցները 2017 թվականի մայիսի 2-ին քրեական գործ հարուցելուց հետո հարցաքննվել են շուրջ երկու ամսվա ընթացքում, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ խնդրահարույց է ինչպես գործի համար առանցքային նշանակություն ունեցող տվյալները հնարավորինս սեղմ ժամկետում ձեռքբերելու, այնպես էլ հարցաքննվող անձանց միջև հնարավոր համաձայնությունը բացատրելու տեսանկյունից: Այս առումով սույն որոշման 23-րդ կետում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramsahai and others v. Netherlands* գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև առկա չեն ապացույցներ այն մասին, որ ոստիկանության ծառայողները միմյանց հետ համաձայնեցրել են իրենց

¹ Տե՛ս սույն որոշման 8-8.1-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 9-9.2-րդ կետերը:

ցուցմունքները, այնուամենայնիվ, հաշվի առնելով նաև ոստիկանության աշխատակիցների հարցաքննությունների միջև ընկած հարաբերակա-նորեն երկար ժամանակահատվածները, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նրանց միջև նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախնական քննության պատշաճության ապահովման էական թերություն,

- քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում նաև՝ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների կողմից բռնություն գործադրելու հանգամանքը պարզաբանելու, Ա.Հակոբջանյանի փաստացի բնակության հասցեն պարզելու և ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայանալ պարտավորեցնելու վերաբերյալ, նախաքննության մարմնի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ են տրվել ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներին, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությանը¹: Սույն որոշման 23-րդ կետում վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Nalbandyan v. Armenia* գործով արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ենթարկվելու առնչությամբ տարվող քննության անկախության ու անաչառության ապահովման տեսանկյունից անընդունելի էր անձին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ տալը ՀՀ ոստիկանության առնվազն նույն վարչությանը, որի աշխատակիցներին առնչվում էր քննվող գործը, այն է՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից խոշտանգում կատարելու և բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու ենթադրյալ դեպքերին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև առկա չեն փաստական տվյալներ այն մասին, որ հանձնարարված օպերատիվ-հետախուզական միջոցառումները ոստիկանության աշխատակիցների կողմից կատարվել են անբարեխղճորեն և ոչ պատշաճ կարգով, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ քննվող քրեական գործն առնչվել է ոստիկանության աշխատակիցների շահերին, տվյալ պարագայում նրանց կողմից պատշաճ կերպով օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման պահանջն օբյեկտիվ դիտորդի տեսանկյունից ողջամտորեն ապահովված չի եղել: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու հանձնարարություններ տալիս չի ապահովվել դրանք կատարող մարմնի՝ տվյալ գործի նկատմամբ գերատեսչական հետաքրքրության բացակայությունը, կողմերից մեկի և օպերատիվ-հետախուզական միջոցառումները կատարող կառույցի

¹ Տե՛ս սույն որոշման 10-10.1-րդ, 10.4-րդ կետերը:

շահերի համընկման անթույլատրելիությունը¹: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում անհրաժեշտ էր ապահովել նաև գործի քննության շրջանակներում հանձնարարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնող մարմնի ինստիտուցիոնալ և գործառնության անկախությունն ու անաչառությունը:

26. Նախորդ կետում վկայակոչված հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու կապակցությամբ չեն ձեռնարկվել բոլոր ողջամիտ քայլերը, որոնք օբյեկտիվ դիտորդին համոզիչ կերպով հնարավորություն կընձեռեին լիարժեք պատկերացում կազմել դեպքի իրական հանգամանքների վերաբերյալ: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված դատավարական խախտումների պայմաններում արդյունավետ քննություն չի իրականացվել, ինչը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանների կողմից: Ուստի, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի հաղորդումների հիման վրա իրականացված քննությունը եղել է արդյունավետ, հիմնավոր չէ:

27. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտ կայացնելիս, ստորադաս դատարանները թույլ են տվել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական բաղադրիչի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 17-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերոշարադրյալը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի ու դիմող Գ.Կարապետյանի բողոքները բավարարելու և վարույթն իրականացնող մարմնին՝ Ա.Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի իրավունքների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու պարտականություն սահմանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս u, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրաչյա Ներսիսյանի և Էդգար Ամիրջանի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0005/01/16 որոշումը, կետ 20:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմողներ Ալբերտ Ասլանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և փոփոխել: Դիմողների ներկայացուցիչ Ա.Չատինյանի և դիմող Գ.Կարապետյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու Ալբերտ Ասլանի Հակոբջանյանի և Գագիկ Դավիթի Կարապետյանի իրավունքների խախտումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԴ1/0001/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Ա.ԱՊՐԵՍՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարուժան Մավրիկի Բալայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 նոյեմբերի 21-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Գ.Գրիգորյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունիսի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 2-րդ կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 91263516 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Վարուժան Մավրիկի Բալայանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա որոշմամբ, նրա նկատմամբ՝ որպես խափանման միջոց է ընտրվել

կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 6-ի որոշմամբ Վ.Բալայանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ Վ.Բալայանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով:

2016 թվականի դեկտեմբերի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի դատավճռով Վ.Բալայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2016 թվականի հունիսի 19-ից:

3. Տուժողի իրավահաջորդ Գ.Գրիգորյանի ներկայացուցիչ Հ.Ասատրյանի և ամբաստանյալ Վ.Բալայանի ու վերջինիս պաշտպան Ա.Ապրեսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ամբաստանյալ Վ.Բալայանը, վերջինիս պաշտպան Ա.Ապրեսյանը և տուժողի իրավահաջորդ Գ.Գրիգորյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Գ.Գրիգորյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ ամբաստանյալ Վ.Բալայանի և վերջինիս պաշտպան Ա.Ապրեսյանի բողոքները վարույթ ընդունելը մերժվել է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Բալայանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ

մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքների համար. «(...) [Ն]ա, հանդիսանալով ՊԲ 36534 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 6-րդ վաշտի 3-րդ դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, 2016 թվականի մայիս ամսվա ընթացքում, նշված զորամասի երկրորդ գումարտակի զորանոցի դիմաց, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ իր ենթակա դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հրանտ Գրիգորյանի կողմից ուշացած շարք ներկայանալու պատճառով, ենթակաների շրջանում խարապահանջ սպայի համբավ ձեռք բերելու շարժառիթով, կարգապահական իրավունք կիրառելու փոխարեն, խախտելով ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ հոդվածների և կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, բռնություն է գործադրել իր նկատմամբ սրորադաս հանդիսացող շարքային Հ. Գրիգորյանի նկատմամբ՝ ձեռքով հարվածել վերջինիս կրծքավանդակի շրջանին:

Բացի այդ, Վարուժան Բալայանը, 2016 թվականի հունիսի 16-ին ժամը 09:00-ի սահմաններում, ՊԲ 36534 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի մուտքի դիմաց, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ ուսապարկի ուսագոյրին պոկված լինելու համար նախարել է իր նկատմամբ սրորադաս հանդիսացող, նույն զորամասի 6-րդ վաշտի 3-րդ դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հրանտ Գրիգորյանին, որի ժամանակ, ենթակաների մոտ խարապահանջ պետի տպավորությունն ամրապնդելու շարժառիթով, կարգապահական իրավունք կիրառելու փոխարեն, խախտելով ՀՀ ՋՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ հոդվածների և կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, կոպիտ հայհոյանք է տվել և բռնություն գործադրել իր նկատմամբ սրորադաս հանդիսացող շարքային Հ. Գրիգորյանի նկատմամբ՝ ձեռքով և ոտքով հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին:

Այնուհետև, հաջորդ օրը՝ 2016 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, գրնվելով Մեխակավանի զորային հրաձգարանում, լեյտենանտ Վարուժան Բալայանը, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ զորավարժության պարապմունքների ընթացքում իր նկատմամբ սրորադաս հանդիսացող, նույն զորամասի 6-րդ վաշտի 3-րդ դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հրանտ Գարուշի Գրիգորյանի ինքնազգացողությունը վատնալու և պարապմունքը չշարունակելու պարճառով, համաճառայողների ներկայությամբ սեռական բնույթի կոպիտ հայհոյանքներ հնչեցնելով՝

սպառնացել է զորամաս վերադառնալուն պես հաշվեհարդար տեսնել նրա հետ:

Շարքային Հրանտ Գրիգորյանը, չդիմանալով համաժառանգողների ներկայությամբ լեյտենանտ Վ.Բալայանի կողմից իր նկատմամբ պարբերաբար գործադրված բռնություններին և կոպիտ հայհոյանքներին, հայտնվելով հոգեկան դեգադասպացիայի, ֆրուստրացիայի հոգեվիճակում, որը հանդիսացել է հոգեկան դեգադասպացիայի և ֆրուստրացիայի վիճակի ձևավորման առիթ և բերել ինքնասպանություն կատարելուն հակված հոգեվիճակի, նույն օրը, ժամը 10:40-ի սահմաններում ինքնասպան է եղել՝ իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի «1167675» գործարանային համարի ինքնաձիգով կրակոց արձակել քերանի շրջանում և տեղում մահացել: Լեյտենանտ Վ.Բալայանի՝ նկարագրված հանցավոր գործողությունների հետևանքով անգոյությունը առաջացել են ծանր հետևանքներ (...):¹

6. Առաջին առյուծի դատարանն իր դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադառնալով ամբաստանյալ Վարուժան Բալայանի կատարած հանցագործության համար պատասխանատվության և պարծի հարցերին՝ Դատարանը արձանագրում է հետևյալը. ամբաստանյալ Վարուժան Բալայանի անձը բնութագրող տվյալներ են նախկինում արարավորված դատապարտված չլինելը, զորամասի հրամանատարության կողմից դրականորեն բնութագրվելը, թվով 1 պարտվորի և 1 մեղալի արժանանալը, մարտական հերթապահություն իրականացնելը, հայրենիքի պաշտպանությանն ակտիվորեն մասնակցելը, մասնակի ինքնախուսարտվանական ցուցմունքներ տալը, կատարածի համար գղջալը:

Դատարանը միաժամանակ գրնում է, որ Վարուժան Բալայանի պատասխանատվությունն ու պարծի մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ չկան:

Կատարած արարքի համար ամբաստանյալ Վարուժան Բալայանն ենթակա է քրեական պատասխանատվության և պարծի: Դատարանը, հաշվի առնելով Վարուժան Բալայանի կատարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, նրա անձը, նրան դրականորեն բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պարծի մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված է պարծի միայն ազատազրկման ձևով, գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարծի նպարակներն ապահովելու համար նրա նկատմամբ պարծի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 229-230:

պերք է նշանակել ազատագրված անոյ, ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պարծաշափով (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Առաջին արյանի դատարանը, ամբաստանյալ Վ.Բալայանի նկատմամբ պարիժ նշանակելիս արձանագրել է, որ ամբաստանյալի պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ չկան, իսկ որպես նրա անձը բնութագրող հանգամանքներ է գնահատել նախկինում արարավորված դատապարտված չլինելը, զորամասի հրամանատարության կողմից դրականորեն բնութագրվելը, պարվորի և մեղալի արժանացած լինելը, մարտական հերթապահություն իրականացնելը, հայրենիքի պաշտպանությանն ակտիվորեն մասնակցելը, մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, կատարածի համար զղջալը:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ինչպես ամբաստանյալ Վ.Բալայանի պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության, այնպես էլ նրա անձը բնութագրող վերոնշյալ հանգամանքների գնահատման վերաբերյալ Առաջին արյանի դատարանի հետևությունները բխում են գործի նյութերից, իրական են և հիմնավոր:

(...) [Ա]մբաստանյալ Վ.Բալայանի նկատմամբ պարիժ նշանակելիս և նշանակված պարիժն ամբաստանյալի կողմից կրելու նպատակահարմարության հարցը որոշելիս Առաջին արյանի դատարանը հաշվի է առել Վ.Բալայանի կատարած արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ հանցագործության կատարման հանգամանքները, ամբաստանյալի գործողությունների վրանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության փաստը, որի արդյունքում հանգել է այն հետևության, որ ամբաստանյալ Վ.Բալայանի կատարած հանցագործության համար օրենսդրի նախատեսված սանկցիայի շրջանակներում 7 (յոթ) տարի ժամկետով ազատագրվում պարիժ նշանակելու և այն ռեալ (իրական) կիրառելու միջոցով սույն գործով հնարավոր է հասնել պարժի նպատակների իրացվելիությանը (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը, վերլուծելով Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, նշել է, որ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 104-105:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 102-103:

ստորադաս դատարանների դատական ակտերը պատճառաբանված չեն, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

Մասնավորապես, Վ.Բալայանի նկատմամբ պատիժ նշանակելիս խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների պահանջները: Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը, Վ.Բալայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված ազատազրկում պատժատեսակի նվազագույն չափը նշանակելով, հաշվի չի առել հանցագործության հանրային վտանգավորության բարձր աստիճանը, մասնավորապես այն, որ Վ.Բալայանը պարբերաբար բռնություն է գործադրել և անձնական արժանապատվությունը նվաստացնող գործողություններ է կատարել Հ.Գրիգորյանի նկատմամբ, ընդ որում, դա կատարել է բոլորի ներկայությամբ, հայիոյանքների ուղեկցությամբ և ոչ մեկ անգամ: Վ.Բալայանի գործողությունների արդյունքում Հ.Գրիգորյանին պատճառվել է հոդվածով նախատեսված ամենաձանր հետևանքը՝ մահը: Մինչդեռ, ամենաձանր հետևանք առաջացրած արարքի համար պատիժ է նշանակվել հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը, ինչն արդարացի չէ:

Վերաքննիչ դատարանն իր հերթին պատշաճ վերլուծության չի ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցագործության եղանակը, պատճառված վնասի բնույթը: Արդյունքում՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են պատիժ նշանակելու սկզբունքները, չի պահպանվել արարքի և նշանակված պատժի միջև համաչափությունը, հետևաբար, դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում Վ.Բալայանի կողմից կատարված հանցանքի ծանրությանը և նրա անձին, ակնհայտորեն մեղմ է:

9. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և Վ.Բալայանի նկատմամբ նշանակել խիստ պատիժ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Վ.Բալայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեափրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝

համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեախրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար, կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա՝ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից¹:

12. Անդրադառնալով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել,

¹ Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանների վերաբերյալ mutatis mutandis տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Մարգարյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11, Գառնիկ Գալստյանի վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԳ/0027/01/14, Էդվարդ Աղասյանի վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԳ/0048/01/14 որոշումները:

պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատիժ նշանակելիս և դրա կրման նպատակահարմարության հարցը լուծելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում այլ տվյալների հետ մեկտեղ պետք է պատշաճ գնահատման ենթարկվեն նաև հանցանքի կատարմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, տուժողի վարքագիծը և այլն¹:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի համար ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որն անզգուշությամբ ծանր վնաս է պատճառել առողջությանը կամ այլ ծանր հետևանքներ է առաջացրել:

Մեջբերված նորմը պատասխանատվություն է սահմանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող հանցանքներից մեկի՝ պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրա սպառնալիքի համար, որպիսի արարքը ոչ միայն ոտնձգում է անձի կյանքի և առողջության դեմ, այլև խախտում զինվորական կանոնագրքերով սահմանված ենթակայության կարգը, վկայում զինվորական ծառայության նկատմամբ հանցանք կատարած անձի ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, ինչն էլ իր հերթին բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա²:

Ընդ որում, վերոնշյալ արարքի արդյունքում առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս կամ այլ ծանր հետևանքներ պատճառելը նախատեսված է որպես հանցակազմի առավել որակյալ հատկանիշ: «Ծանր հետևանքները» գնահատողական հասկացություն է, ուստի ենթակա է մեկնաբանման կոնկրետ գործի փաստական հանգամանքների համատեքստում: Մասնավորապես, որպես այդպիսին, կարող են դիտարկվել

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հրանդ Պարանյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԷԴ/0132/01/13 որոշման 15-րդ կետը, *Նիկոլայ Չարնազյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը:

² Տե՛ս *u, mutatis mutandis, Մարգիս Խաչատրյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշումը:

կատարված արարքի արդյունքում տուժողին անզգուշությամբ մահ պատճառելը, վերջինիս ինքնասպանությունը, մարտական առաջադրանքի խափանումը և այլն: Մինևույն ժամանակ, քննարկվող ծանրացնող հանգամանքն անձին կարող է մեղսագրվել միայն այն դեպքում, երբ հավաստվում է կատարված արարքի և վրա հասած հետևանքի միջև պատճառական կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հանցանք կատարած անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով պատիժ նշանակելիս արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի համատեքստում անհրաժեշտ է գնահատման ենթարկել նաև վրա հասած հետևանքի բնույթը: Մասնավորապես, եթե առաջացել է տուժողի մահ կամ վերջինս ինքնասպանություն է գործել, սպա անձի նկատմամբ պատժի տեսակ կամ չափ ընտրելիս այդ հանգամանքը պետք է համարժեք գնահատականի արժանացնել:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վ.Բալայանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՊԲ 36534 գործարարի 2-րդ հրաձգային գումարտակի 6-րդ վաշտի 3-րդ դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, 2016 թվականի մայիս ամսվա ընթացքում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ իր ենթակա, դասակի ժամկետային զինծառայող, շարքային Հ.Գրիգորյանի նկատմամբ, վերջինիս կողմից ուշացած շարք ներկայանալու պատճառով, բռնություն է գործադրել՝ ձեռքով հարվածել է նրա կրծքավանդակի շրջանին:

Բացի այդ, Վ.Բալայանը 2016 թվականի հունիսի 16-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ կոպիտ հայիոյանք է տվել և բռնություն գործադրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Հ.Գրիգորյանի նկատմամբ՝ ձեռքով և ոտքով հարվածներ հասցնելով վերջինիս մարմնի տարբեր մասերին:

Բացի այդ, Վ.Բալայանը, 2016 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, գտնվելով Մեխակավանի զորային հրաձգարանում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ զորավարժության պարապմունքների ընթացքում, համաժառանգողների ներկայությամբ սեռական բնույթի կոպիտ հայիոյանքներ է հնչեցրել շարքային Հ.Գրիգորյանի հասցեին՝ վերջինիս ինքնազգացողությունը վատանալու և պարապմունքը չարունակելու պատճառով, սպառնացել է գործարար վերադառնալուն պես հաշվեհարդար տեսնել:

Հ.Գրիգորյանը, չդիմանալով համաժառանգողների ներկայությամբ Վ.Բալայանի կողմից իր նկատմամբ պարբերաբար գործադրված բռնություններին և կոպիտ հայիոյանքներին, ինքնասպան է եղել՝ իրեն

ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգով կրակոց է արձակել բերանի շրջանում և տեղում մահացել¹:

Առաջին ատյանի դատարանը Վ.Բալայանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով և պատիժ նշանակել ազատազրկում՝ յոթ տարի ժամկետով: Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել ամբաստանյալ Վ.Բալայանի անձը բնութագրող տվյալները՝ նախկինում դատապարտված չլինելը, գորամասի հրամանատարության կողմից դրականորեն բնութագրվելը, պատվոգրի և մեդալի արժանանալը, մարտական հերթապահություն իրականացնելը, հայրենիքի պաշտպանությանն ակտիվորեն մասնակցելը, մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, կատարածի համար զոջալը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայությունը²:

Վերաքննիչ դատարանը, ստորադաս դատարանի դատական ակտը անփոփոխ թողնելով, արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները բխում են գործի նյութերից, օրինական են և հիմնավոր³:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Վ.Բալայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով պատիժ նշանակելիս պատշաճ գնահատականի չեն արժանացրել վերջինիս կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝

ա) հանցագործության եղանակը և իրադրությունը, այն է՝ *այլ զինձառայողների ներկայությամբ* տուժող Հ.Գրիգորյանի նկատմամբ *պարբերաբար բռնություն գործադրելը*, որը զուգորդվել է անձի *պարիսնու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելով*, այն է՝ սեռական բնույթի կոպիտ հայհոյանքներ հնչեցնելով, ինչպես նաև *հաշվեհարդար տեսնելու սպառնալիքներ փայով*,

բ) պատճառված վնասի բնույթը, այն է՝ ամբաստանյալի գործողությունների արդյունքում անզգուշությամբ առաջացել են *ծանր հետևանքներ*, մասնավորապես, տուժող Հ.Գրիգորյանն *ինքնասպանությամբ՝ իրեն ամրակցված ինքնաձիգով բերանի շրջանում կրակոց արձակելով, վերջ է փոխել իր կյանքին*: Այլ կերպ՝ առկա է քննարկվող հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ առավել ծանրացնող հանգամանք հանդիսացող «ծանր հետևանքներից» ամենավտանգավորը՝ վրա է հասել մարդու մահ,

գ) անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նկատմամբ, մասնավորապես, թեև հանրորեն վտանգավոր հետևանքի նկատմամբ ամբաստանյալը դրսևորել է անզգուշություն, այնուամենայնիվ, բուն հանցավոր արարքը կատարել է **ուղղակի դիտարկություններ**, այն է՝ տուժողի նկատմամբ գինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պարբերաբար բռնություն է գործադրել,

դ) հանցագործության շարժառիթը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այն է՝ **հանդիսանալով պեղձ գինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ** բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող անձի նկատմամբ, ինչը վկայում է հանցանք կատարած անձի կողմից գինվորական ծառայության նկատմամբ ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, ընդ որում, հանցանքը կատարվել է **իր գերակայությունը հասարակելու և ենթակա-ների շրջանում խարսպահանջ պեղձի տրամադրություն թողնելու շարժառիթով**:

16. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Վ.Բալայանի նկատմամբ հողվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել կատարված արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցագործության եղանակն ու իրադրությունը, շարժառիթը, պատճառված վնասը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը վկայում են կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, ինչը որևէ գնահատականի չի արժանացել ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու գործընթացում:

Այլ կերպ՝ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով երաշխավորված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտումներ, ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով նշանակվել է ոչ համաչափ պատիժ, ինչը չի կարող ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացումը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից Վ.Բալայանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևող-թյունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

17. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով

Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանի դատական ակտը Վ.Բալայանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և գործն այդ մասով նոր քննության ուղարկելու հիմք են:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Վ.Բալայանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վարուժան Մավրիկի Բալայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 13-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը՝ պատժի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Վարուժան Մավրիկի Բալայանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0016/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահությունը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությունը՝
մասնակցությանը դատախազ՝*

Մ.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Լիլիթ Ավետիքի Վարդանյանի և Զարինե Արթուրի Այվազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչներ Ա.Զալյանի և Ա.Չատինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հուլիսի 9-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 14134513 քրեական գործը:

Նույն օրը Գեորգի Միսակյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հունվարի 31-ի որոշումներով Լիլիթ Ավետիքի Վարդանյանը և Զարինե Արթուրի Այվազյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով:

2014 թվականի փետրվարի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը դատարանում ստացվել է 2014 թվականի փետրվարի 19-ին:

2. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճռով Լ.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու: ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ՝ նաև Համաներման մասին որոշում) 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա Լ.Վարդանյանն ազատվել է հիմնական պատժից:

Նույն դատավճռով Զ.Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու: Համաներման մասին որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա Զ.Այվազյանն ազատվել է հիմնական պատժից:

3. Ամբաստանյալներ Զ.Այվազյանի և Լ.Վարդանյանի պաշտպանների ու տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը:

4. Տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում, Վճռաբեկ դատարանը, 2016 թվականի հունիսի 24-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը՝ լրացուցիչ պատժի մասով բեկանել է՝ գործն այդ մասով ուղարկելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճռով Լ.Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակվել է լրացուցիչ պատիժ՝ մանկաբուժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ 2 (երկու) տարի ժամկետով և նա ազատվել է լրացուցիչ պատժից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Նույն դատավճռով Զ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակվել է լրացուցիչ պատիժ՝ մանկաբուժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ 2 (երկու) տարի ժամկետով և նա ազատվել է լրացուցիչ պատժից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

6. Ամբաստանյալ Զ.Այվազյանի պաշտպան Ե.Սարգսյանի և տուժողի իրավահաջորդ Գ.Մխակյանի ներկայացուցիչներ Ա.Զալյանի ու Ա.Չատինյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունվարի 15-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճիռը:

7. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել տուժողի իրավահաջորդ Գ.Մխակյանի ներկայացուցիչներ Ա.Զալյանը և Ա.Չատինյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Նախաքննության մարմնի կողմից Լիլիթ Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ «(...) [Ն]ա հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ՝ «Արարկիր» ԲՀ-ի բոքսային բաժանմունքի մանկաբույժ, ոչ պարզաձև է կատարել մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ անտիրոյթ վերաբերմունքի հետևանքով, ինչն անգործությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ: Այսպես.

2012թ. դեկտեմբերի 31-ին ժամը 20:20-ին «Արարկիր» բժշկական համալիրի բոքսային բաժանմունք է ընդունվել 2010թ. ծնված Լիա Գեորգիի Մխակյանը: Հերթապահ բժիշկ Լիլիթ Վարդանյանի կողմից կատարվել է թերի ախորոշում (սուր շնչառական ինֆեկցիա), քանի որ հիվանդի անամնեսարիկ և օբյեկտիվ տվյալները վկայել են օրգանիզմի արտահայտված ինտոքսիկացիայի մասին, ինչը բնորոշ է եղել ոչ թե սուր

շնչառական ինֆեկցիային, այլ թոքաբորբին: Թերի ախտորոշման հետևանքով Լ.Միսակյանին չի նշանակվել հակաբակտերիալ բուժում, բացի այդ, 31.12.2012թ. չի կատարվել ռենդգեն նկարահանում՝ թոքաբորբի առկայությունը ժխտելու կամ հաստատելու նպատակով, որպիսի գործողությունների ժամանակին կատարումը հնարավորություն կրար հիվանդին վերակենդանացման բաժանմունք տեղափոխելու և կոմքինացված հակաբակտերիալ բուժում և արյան փոխարինիչների ներարկումներ կատարելու համար՝ այսինքն 31.12.2012թ. Լիլիթ Վարդանյանի կողմից Լ.Միսակյանի առողջական վիճակի ճիշտ գնահատման, ճիշտ և ժամանակին ախտորոշման և համապատասխան բուժման նշանակման պայմաններում հնարավոր կլինե՞ր կանխելու հիվանդության արագ և հարածուն բացասական պրոգնոզի վնասը:

Դրանից բացի Լ.Վարդանյանը հիվանդի ընդունման ժամանակ նշանակելով արյան ընդհանուր քննություն, ցուցաբերել է անգործություն, հետևողական չի եղել նույն օրը արյան նմուշ վերցնելու, ընդհանուր քննություն անցկացնելու և արդյունքները սրանաչու ուղղությամբ, այն դեպքում, երբ «Արաբկիր» ԲՀ-ի լաբորատորիան գործել է շուրջօրյա և որևէ խոչընդոտ չի եղել արյան ընդհանուր քննությունն անցկացնելու հարցում, մինչդեռ 02.01.2013թ. հերթապահությունն ընդունած մանկաբույժ Իրինա Մամյանը հենց արյան ընդհանուր քննության արդյունքներից ելնելով է գնահատել Լ.Միսակյանի ծանր վիճակը և նշանակել հիմնական հիվանդության համապատասխան ցուցված բուժում:

Ասինքն՝ Լ.Վարդանյանը ոչ պարզաձև է կատարել իր մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ դրսևորելով անփութ վերաբերմունք, ինչը 02.01.2013թ. անզգուշությամբ առաջացրել է Լիա Միսակյանի մահը (...):»¹:

8.1. Նախաքննության մարմնի կողմից Զարինե Այվազյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ «(...) [Ն]ա հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձ՝ «Արաբկիր» ԲՀ-ի բոքսային բաժանմունքի մանկաբույժ, չի կատարել մասնագիտական պարտականությունները՝ դրանց նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, ինչն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ: (...)

2013թ. հունվարի 1-ին Լ.Վարդանյանից հերթապահությունը ընդունած մանկաբույժ Զարինե Այվազյանը դրսևորել է բացահայտ անգործություն, չի կատարել իր մասնագիտական պարտականությունները՝ անբարեխիղճ վերաբերմունք դրսևորելով դրանց նկատմամբ, այն է հերթապահությունը արանձնելիս Լ.Միսակյանի հիվանդության պարմագրում տեսնելով, որ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 176:

31.12.2012թ. նշանակվել է արյան ընդհանուր քննություն, իր հերթապահության ընթացքում չի անդրադարձել արյան քննության արդյունքներին այն դեպքում, երբ 01.01.2013թ. ժամը 11:00-ին դրանք արդեն պայտասար են եղել և վկայել են լեյկոպենիայի (լեյկոցիտների ցածր քանակի) և ագրանուլոցիտոզի (լեյկոցիտների հակաբակտերիալ իմունիտետի պարասիտանաբու ձևերի սեզոնային փոփոխությունների քանակի խիստ նվազման) մասին, որպիսի գործողության ժամանակին կարարումը Լ.Միսակյանի հիվանդության ճիշտ ախտորոշման, համապարասիտան ցուցված բուժման և սպարինման հնարավորություն կար, սակայն Զ.Այվազյանի կողմից մասնագիտական պարտականությունների չկարարումը անզգուշությամբ առաջացրել է Լ.Միսակյանի մահը (...)¹»:

9. Վճռաբեկ դատարանը 2016 թվականի հունիսի 24-ի որոշմամբ արձանագրել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալներ Լ.Վարդանյանին և Զ.Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով մեղավոր ճանաչելով, նրանց նկատմամբ լրացուցիչ պատիժ, այն է՝ մանկաբույժ աշխատելու իրավունքից զրկումը չկիրառելով և Համաներման ակտի հիման վրա պատժից ազատելով, գործի փաստերը գնահատման չեն ենթարկել՝ կատարած արարքի և վրա հասնող հետևանքների համաչափության պահանջի, համանման բնույթի հանցագործությունների կանխման անհրաժեշտության, նշանակված պատժի նկատմամբ տուժողի և հասարակության սպասվելիք վերաբերմունքի համատեքստում:

10. Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալների նկատմամբ լրացուցիչ պատժի նշանակման ծավալով քրեական գործը ստացել է 2016 թվականի հոկտեմբերի 24-ին, դատական քննությունը սկսել է 2016 թվականի նոյեմբերի 18-ին և ավարտել 2018 թվականի սեպտեմբերի 24-ին՝ դատական ակտի հրապարակմամբ²:

Վերը նշված ժամանակահատվածում քրեական գործով նշանակված դատական նիստերը հետաձգվել են. 2016 թվականի նոյեմբերի 18-ին՝ գործով մեղադրողի փոփոխության, 2016 թվականի դեկտեմբերի 12-ին և 2017 թվականի ապրիլի 3-ին՝ մեղադրողի և պաշտպանի չներկայանալու, 2017 թվականի փետրվարի 21-ին՝ մեղադրողի չներկայանալու, 2018 թվականի հունիսի 20-ին՝ պաշտպանի չներկայանալու, 2017 թվականի հունվարի 27-ին՝ պաշտպանի վատառողջ լինելու, 2017 թվականի մարտի 15-ին՝ պաշտպանի՝ իր պաշտպանյալի հետ խորհրդակցելու և ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար ժամանակ տրամադրելու, 2017 թվականի ապրիլի 27-ին՝ պաշտպանների և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի՝ այլ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 177-178:

² Տե՛ս Դատական տեղեկատվական համակարգ www.datalex.am:

գործով դատական նիստի մասնակցելու, 2017 թվականի սեպտեմբերի 5-ին՝ պաշտպանի՝ նույն ժամին նշանակված այլ դատական նիստ ունենալու, 2017 թվականի հունիսի 2-ին՝ պաշտպանի՝ սեմինարի մասնակցելու, 2017 թվականի հուլիսի 3-ին՝ պաշտպանի՝ հորեղբոր հուղարկավորությանը մասնակցելու, 2017 թվականի հոկտեմբերի 19-ին, 2017 թվականի նոյեմբերի 29-ին և 2018 թվականի օգոստոսի 10-ին՝ դատավորի՝ մեկ այլ գործով խորհրդակցական սենյակում գտնվելու, 2018 թվականի փետրվարի 2-ին՝ դատարանի՝ մեկ այլ նստավայր տեղափոխվելու, 2018 թվականի մարտի 16-ին՝ անձը բնութագրող տվյալ պարունակող տեսանյութի էլեկտրոնային տարբերակը գննելու համար լրացուցիչ տեխնիկա ապահովելու, 2018 թվականի ապրիլի 12-ին՝ մեղադրողի կողմից ճառին պատրաստվելու, 2018 թվականի մայիսի 22-ին՝ պաշտպանի կողմից ճառին պատրաստվելու, 2018 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից հարցում կատարելու պատճառաբանություններով¹:

11. Առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ անդրադառնալով ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված լրացուցիչ պատիժ նշանակելու հարցին, արձանագրել է. «(...) [Ամբաստանյալներ Լիլիթ Ավերիքի Վարդանյանի և Զարինե Արթուրի Այվազյանի նկատմամբ պետք է նշանակվի լրացուցիչ պատիժ՝ մանկարուժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով, քանի որ ամբաստանյալները նշված հանցագործությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, կատարել են մանկարույժ աշխատելու ժամանակ: Իսկ ինչ վերաբերվում է դեպքից հետո նույն կազմակերպությունում, նույն պաշտոնում աշխատանքի կատարումը շարունակելուն, այդ կազմակերպության կողմից դրականորեն բնութագրվելուն, ապա այդպիսիք ողջամորրեն չեն նվազեցնում ամբաստանյալների կատարած արարքի հանրային վրանգավորության աստիճանն այնքանով, որ բավարար հնարավորություն փային եզրահանգելու, որ փվյալ դեպքում պարժի նպատակները կարող են իրացվել առանց լրացուցիչ պատժի կիրառման:

(...) [Դ]ատարանն արձանագրում է, որ քրեական գործի նյութերում առկա է քրեական վարույթը բացառող հանգամանք, այն է անցել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամբաստանյալներին մեղսագրվող անզգույշ հանցավոր արարքը, նախարեկված ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով, համարվում է միջին ծանրության հանցանք, որն ըստ մեղադրական եզրակացության ավարտվել է 2013թ. հունվարի 2-ին, ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից փրկված պահանջագրերի

¹ Տե՛ս՝ քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 14, 278-337:

համաձայն՝ ամբաստանյալների կողմից քրեական օրենսգրքով նախատեսված որևէ այլ արարք չի կատարվել, այսինքն՝ վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհարվել, իսկ հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է 5 (հինգ) տարուց ավելի ժամանակ, և լրացուցիչ պարժի մասով դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, հետևաբար, նկատի ունենալով վերոգրյալ հանգամանքները, դատարանը գտնում է, որ ամբաստանյալներ Լիլիթ Ավետիքի Վարդանյանի և Զարինե Արթուրի Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված լրացուցիչ պարժից պետք է ազատել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով (...)»¹:

12. Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի հունվարի 15-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ, նշել է. «(...) [Գ]նահատելով կատարած արարքի և վրա հասնող հետևանքների համաչափության պահանջը, համանման քնույթի հանցագործությունների կանխման անհրաժեշտությունը, Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի նկատմամբ պետք է նշանակվի լրացուցիչ պարժի մասնկարծական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով, քանի որ ամբաստանյալները նշված հանցագործությունը, որն անգոյությունը առաջացրել է մարդու մահ, կատարել են մանկաբույժ աշխատելու ժամանակ:

(...)

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ քրեական գործի նյութերում առկա է քրեական վարույթը բացառող հանգամանք, այն է՝ անցել են անձին քրեական պատասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետները (...): Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված լրացուցիչ պարժից պետք է ազատել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

13. Բողոքաբերները նշել են, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Բողոքի հեղինակները փաստել են, որ 2014 թվականից ի վեր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 332, 335-337:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 12-րդ, թերթեր 112, 114:

շարունակվող սույն քրեական գործն արդեն հինգ տարի է, ինչ քննվում է ՀՀ բոլոր դատական ատյաններում, սակայն մինչ օրս միջոցներ չեն ձեռնարկվել ամբաստանյալների նկատմամբ համարժեք պատիժ կիրառելու համար: Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում դատական նիստերը արհեստականորեն հետաձգվել են, գործի քննությունն անհարկի ձգձգվել է, որն էլ իր հերթին հանգեցրել է արարքի վաղեմության ժամկետներն անցնելուն:

Բողոքաբերները փաստել են, որ Վճռաբեկ դատարանը սույն քրեական գործով կայացրել է որոշում, որով լրացուցիչ պատժի մասով գործը բեկանել և ուղարկել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Առաջին ատյանի դատարանը, հիմնվելով Վճռաբեկ դատարանի որոշման վրա, պետք է ողջամիտ ժամկետում իրականացնեք արդարադատություն, սակայն դատարանի անփոյթ և ոչ անաչառ վերաբերմունքի հետևանքով վճռվել է ամբաստանյալներին ազատել նշանակված լրացուցիչ պատժից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Պաշտպանական կողմն իր հերթին դատական նիստերի ընթացքը ձգձգել է այնպես, որ դատական ակտի հրապարակման պահին վաղեմության ժամկետը լրացած լինի և ամբաստանյալներն ազատվեն քրեական պատասխանատվությունից:

Ըստ բողոք բերած անձանց, ստորադաս դատարաններն արդարադատություն իրականացնելիս չեն պահպանել գործի քննության ողջամիտ ժամկետները, ինչն էլ վաղեմության ժամկետի լրացման և մեղավորների նկատմամբ պատիժ չնշանակելու պատճառ է հանդիսացել:

13.1. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 15-ի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության ժամկետի ողջամտությունը որոշելու չափանիշների մեկնաբանման և կիրառման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր:

14.1. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատժի նշանակման ծավալով գործն Առաջին ատյանի դատարանում քննվելիս արդյոք պահպանվել է ողջամիտ ժամկետում գործի քննության՝ տուժողի իրավահաջորդի իրավունքը:

15. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անկասի և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

15.1 ՀՀ սահմանադրական դատարանը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կապակցությամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի քննությունը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությունն անհարկի, կամակայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան¹:

16. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին» կարծիքի համաձայն՝ «ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, մասնավորապես, ներմուծվել են դատավարական իրավունքի լայնածավալ կանոններ, որոնք ընդհանուր են փարբեր եվրոպական երկրների համար, և սահմանվել են ընդհանուր սկզբունքներ, որոնք, անկասի ազգային համակարգերի փարբեր փորձական կարողություններից և բազմազանությունից, նպատակաուղղված են ապահովելու դատարանների մարչելիության իրավունքը, արդար և անաչառ դատաքննության արդյունքում ողջամիտ ժամկետում որոշում սրանալու իրավունքը և ընդունված ցանկացած որոշման կատարումն ապահովելու իրավունքը»²:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն ևս իր դիրքորոշումներում կարևորել է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը և նշել, որ դատական վարույթի բոլոր փուլերը պետք է տեղի ունենան առանց անհարկի ձգձգումների³:

Վենետիկի հանձնաժողովն անդրադառնալով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին՝ նշել է, որ դատական վարույթի տևողությունը, անշուշտ, ազդում է այդ վարույթի կողմերից առնվազն մեկի շահերի վրա. իրավամբ, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ ողջամիտ ժամկետի պահանջի գերազանցումը կարող է հանգեցնել Եվրոպական

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 5-ի թիվ ՄԴՌ-1074 որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին» թիվ 6 (2004) կարծիքը, Ստրասբուրգ, 2004 թվականի նոյեմբերի 22-24, կետ 3:

³ Տե՛ս European Commission For Democracy Through Law, Can excessive length of proceedings be remedied?, CDL-STD (2007) 044, Science and technique of democracy, No. 44, կետ 140:

կոնվենցիայի այլ կարևոր դրույթների (ընթացակարգային) խախտումների¹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր հերթին նշել է, որ արդարադատության իրականացման չափազանց երկար ձգձգումները ներկայացնում են լուրջ վտանգ, մասնավորապես՝ իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից²:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) ողջամիտ ժամկետում (...) դատաքննության իրավունք»:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կարարել են ի պաշտոնե գործող անձինք»:

17.1 Մեկնաբանելով անձի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատարանն իրազեկ է այն դժվարություններին, որոնք ձգձգում են գործերի քննությունն ազգային դատարանների կողմից և որոնք պայմանավորված են բազմապիսի հանգամանքներով: Այնուամենայնիվ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որ գործերը քննության առնվեն ողջամիտ ժամկետում. Եվրոպական կոնվենցիան ընդգծում է առանց այնպիսի ձգձգումների արդարադատություն իրականացնելու կարևորությունը, **որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը**³,

- պետությունները պարտավոր են ստեղծել այնպիսի իրավական համակարգ, որ դատարանները համապատասխանեն Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, ներառյալ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը⁴,

¹ St' u European Commission For Democracy Through Law (Venice Commission), report on the effectiveness of national remedies in respect of excessive length of proceedings, Study no. 316/2004, 3 April 2007, CDL-AD (2006) 036rev, կետ 19:

² St' u Council of Europe, Committee of Ministers, Interim Resolution ResDH (97) 336, 11 July 1997:

³ St' u *H. v. France* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10073/82, կետ 58:

⁴ St' u *Zimmermann and Steiner v. Switzerland* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1983 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 8737/79, կետ 29:

- քրեական գործերով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է ապահովել, որ անձինք մեղադրված չլինեն չափազանց երկար, և որոշվի մեղադրանքի հիմնավորվածությունը¹,

- ժամկետը, որը պետք է հաշվի առնվի, սկսվում է այն օրվանից, երբ անձին մեղադրանք է ներկայացվում²: Այն կարող է նաև սկսվել անձի ձերբակալման պահից³, կամ նույնիսկ նախնական քննությունը սկսվելու պահից⁴,

- քրեական գործերում այն ժամկետը, որի նկատմամբ կիրառելի է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ընդգրկում է նշված վարույթն ամբողջությամբ՝ ներառյալ բողոքարկման վարույթը⁵,

- վարույթի տևողության ողջամտությունը որոշվում է գործի այն հանգամանքների լույսի ներքո, որոնք պահանջում են ընդհանուր գնահատում⁶,

- որոշելիս, թե արդյո՞ք քրեական վարույթի տևողությունը ողջամիտ է եղել, թե ոչ, պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը, դիմումատուի համար ողջամիտ ժամկետի չափապանման հետևանքները⁷: Գործի բարդությունը կարող է բխել, օրինակ՝ մեղադրանքների թվից, վարույթում ներգրավված անձանց թվից, ինչպիսիք են մեղադրյալներն ու վկաները, կամ գործի միջազգային մասշտաբից (օրինակ՝ *Neumeister v. Austria* գործով պահանջվել էր Իստերպուլի աջակցությունն ու փոխադարձ իրավական աջակցություն, քսաներկու անձ էր ներգրավված, որոնցից ոմանք արտերկրում էին գտնվում)⁸: Չնայած

¹ Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Wemhoff v. Germany* գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 2122/64, կետ 18, *Kart v. Turkey* գործով 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 8917/05, կետ 68:

² Տե՛ս *Neumeister v. Austria* գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, կետ 18:

³ Տե՛ս *Wemhoff v. Germany* գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 2122/64, կետ 19:

⁴ Տե՛ս *Ringeisen v. Austria* գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1971 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 2614/65, կետ 110:

⁵ Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Konig v. Germany* գործով 1978 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6232/73, կետ 98, *V. v. The United Kingdom* գործով 1999 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 24888/94, կետ 109:

⁶ Տե՛ս *Boddaert v. Belgium* գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1992 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12919/87, կետ 36:

⁷ Տե՛ս Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Konig v. Germany* գործով 1978 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 6232/73, կետ 99, *Neumeister v. Austria* 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, կետ 21, *Frydender v. France [GC]* գործով 2000 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 30979/96, կետ 43, *Pedersen and Baadsgaard v. Denmark* գործով 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 49017/99, կետ 45, *Aganikyan v. Armenia* գործով 2018 թվականի ապրիլի 5-ի վճիռը, գանգատ թիվ 21791/12, կետ 31:

⁸ Տե՛ս *Neumeister v. Austria* գործով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, կետ 20:

նրան, որ գործը կարող է որոշակի բարդության լինել, չեն կարող չպարզաբանված անգործության երկար ժամանակահատվածները համարվել «ողջամիտ» (օրինակ՝ *Adiletta and others v. Italy* գործով քննության ընդհանուր տևողությունը կազմել է տասներեք տարի հինգ ամիս՝ ներառյալ նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորին գործը փոխանցելու և մեղադրյալին ու վկաներին հարցաքննելու միջև հինգ տարվա հետաձգման ժամկետը, և նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորին գործը վերադարձնելու ժամանակի և դատաքննության համար դիմումատուների գործը նորից դատարան ներկայացնելու միջև մեկ տարի ինն ամսվա հետաձգումը)¹: Դիմումատուի վարքագիծն օբյեկտիվ փաստ է համարվում, որը չի կարող վերագրվել Պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելիս, թե արդյոք վարույթի տևողությունը գերազանցում է ողջամիտ ժամկետը, թե ոչ (օրինակ՝ *Eckle v. Germany* գործով դիմումատուներն ավելի ու ավելի էին դիմում այնպիսի գործողությունների, որոնք հավանաբար կձգձգեին վարույթը, ինչպիսին է դատավորներին կանոնավոր բացարկ հայտնելը. այս գործողությունների որոշ մասը կարող էր նույնիսկ ենթադրել կանխատեսված կերպով խոչընդոտների ստեղծում)²: Իրավասու մարմինների վարքագծի առումով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով Պայմանավորվող պետությունների վրա դրվում է իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպելու պարտականություն, որ դատարանները կարողանան բավարարել պահանջներից յուրաքանչյուրը³: Ինչ վերաբերում է դիմումատուի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքներին, ապա դրանք կարող են լինել նյութական և ոչ նյութական վնասի ձևով⁴:

18. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա սրեղծված անկախ և անսաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով»:

¹ Տե՛ս *Adiletta and others v. Italy* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1991 թվականի փետրվարի 19-ի վճիռը, գանգատներ թիվ 13978/88 14236/88 14237/88, կետ 17:

² Տե՛ս *Eckle v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 82:

³ Տե՛ս *Abdoella v. The Netherlands* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 12728/87, կետ 24, *Dobbetin v. France* գործով 1993 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13089/87, կետ 44:

⁴ Տե՛ս *Vallée v. France* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1994 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 22121/93, կետ 49:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում:

2. Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) դատարանի կողմից իր գործի (...) ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նախագահողը նախապարտապարտում և ղեկավարում է դատարանի նիստը, միջոցներ է ձեռնարկում ապահովելու քրեական գործի արդարացի քննությունը և պահպանելու սույն օրենսգրքի այլ պահանջներ, ինչպես նաև դատարանի նիստին ներկա գտնվող անձանց պարզաձև վարքագիծը»:

19. Սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն այն մասին, որ ողջամիտ ժամկետում դատաքննության սկզբունքը մարդու հիմնարար իրավունքներից է¹: Այն անձի արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից է և միտված է հնարավորինս սեղմ ժամկետում գործի քննությունն ապահովելուն ու անձի իրավունքների, շահերի առնչությամբ իրավական վեճը հանգուցալուծելուն և վերջնական դատական ակտ կայացնելուն: Ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի երաշխավորումն ապահովում է նաև սոցիալական արդարության վերականգնումը, նպաստում հանցագործությունների կանխմանը և խափանմանը, հանցավոր ոտնձգություններին արդյունավետորեն հակազդելու պետության կարողությունների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը: Վերջինիս հիմքում ընկած է նաև միջազգային իրավական փաստաթղթերում օգտագործվող՝ «ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է» (*Justice delayed is*

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Դալլաբյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԼԴ/0082/13/09 որոշման 18-րդ կետը, *Արմեն Միմոնյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ/0012/13/09 որոշման 17-րդ կետը:

justice denied”) գաղափարը, որի համաձայն՝ դատավարության չիմնավորված ձգձգումը կարող է հանգեցնել «արդարադատության մերժմանը»՝ դատավարության կողմերի համար¹: Հետևաբար, նախնական քննություն և դատական քննություն իրականացնող իրավասու մարմինները պետք է անհրաժեշտ ջանասիրություն դրսևորեն՝ ողջամիտ ժամկետում անձի դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ:

19.1 Միաժամանակ, հարկ է նկատել, որ ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերի համեմատական ուսումնասիրությունից հետևում է, որ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կրող սուբյեկտների շրջանակը տարբեր է: Մասնավորապես, եթե Եվրոպական կոնվենցիան որպես նշված իրավունքի կրող է համարում այն անձին, ում քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների կապակցությամբ առկա է վեճ, կամ նրան առաջադրված է մեղադրանք, ապա ՀՀ Սահմանադրությունը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նշված իրավունքը կրող հատուկ սուբյեկտների շրջանակ չեն առանձնացնում: Այլ կերպ՝ ներպետական օրենսդրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք օգտվում է արդար դատաքննության, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքից: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ այդ առումով ներպետական օրենսդրությամբ սահմանված երաշխիքի իրավական գործողության շրջանակը, ի համեմատություն միջազգային իրավական փաստաթղթում ամրագրված շրջանակի, առավել լայն է: Ուստի, ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կրող սուբյեկտների շրջանակը որոշելիս պետք է ղեկավարվել ներպետական օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներով՝ միաժամանակ հաշվի առնելով այդ իրավունքի բովանդակության վերաբերյալ միջազգային մարմինների կողմից տրված մեկնաբանությունները:

19.2 Տուժողի արդար դատաքննության իրավունքի², այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի առնչությամբ հարկ է նշել, որ՝

- Միավորված ազգերի կազմակերպության՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրի 4-րդ կետի համաձայն՝ հանցագործությունից տուժողները, ներպետական

¹ Shi 'u European Commission For Democracy Through Law (Venice Commission), report on the effectiveness of national remedies in respect of excessive length of proceedings, Study no. 316/2004, 3 April 2007, CDL-AD(2006)036rev, կետ 20:

² Տուժողի արդար դատաքննության իրավունքի մասին, *mutatis mutandis*, տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՄԴՈ-1426 որոշումը, Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի՝ Տիգրան Քամայանի գործով թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշումը:

օրենսդրությանը համապատասխան, պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք: Նույն հոչակագրի 6-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերն ըստ էության համապատասխանեն հանցագործության գոհերի պահանջներին, այդ թվում՝ գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու և փոխհատուցման մասին որոշումները կատարելու միջոցով¹:

- Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդեցնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառնությունը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելն ու նրա շահերը պաշտպանելը²:

20. Սույն որոշման 17.1-րդ կետում մեջբերված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների և սույն որոշման 18-րդ կետում վկայակոչված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ողջամտությունը որոշելիս յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- գործի բարդությունը.

Այս առումով անհրաժեշտ է գնահատման ենթարկել մի կողմից՝ գործով անցնող մեղադրյալների (ամբաստանյալների), վկաների, տուժողների, դատավարությանը մասնակցող այլ անձանց, մյուս կողմից՝ մեղադրյալներին (ամբաստանյալներին) մեղսագրվող արարքների քանակը, դրանց փաստական և իրավական բովանդակությունը, ապացուցվող հանգամանքների շրջանակը և հետագոտվող ապացույցների ծավալը: Միաժամանակ, գործի բարդությունը որոշելիս պետք է նաև հաշվի առնել վկաների գտնվելու վայրը պարզելու և նրանց հարցաքննելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների շրջանակը (օրինակ՝ միջազ-

¹ Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ թիվ 40/34-ի բանաձևով ընդունված՝ Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հոչակագրի 4-րդ կետը:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85) 11 հանձնարարականը:

գային իրավական օգնությամբ այլ երկրում կամ պաշտպանության ներքո գտնվող վկաներին հարցաքննելու նպատակով կատարվող գործողությունները): Բացի այդ, պետք է գնահատման ենթարկել նաև դատաքննության ընթացքում լուծվող իրավական խնդիրների բնույթը (ինչպիսիք կարող են լինել օրինակ՝ գործի ընդդատությունը¹, կիրառման ենթակա իրավական ակտի սահմանադրականությունը², միջազգային պայմանագրի մեկնաբանությունը³),

- շահագրգիռ անձի վարքագիծը.

Պետք է հաշվի առնել ողջամիտ ժամկետում գործի քննությամբ շահագրգռված անձի՝ մեղադրյալի (ամբաստանյալի) և պաշտպանի, օրինական ներկայացուցչի, տուժողի, նրա ներկայացուցչի, իրավահաջորդի, օրինական ներկայացուցչի վարքագիծը՝ գործի արագ քննությանը չխոչընդոտելու տեսանկյունից: Մասնավորապես, անհրաժեշտ է գնահատման ենթարկել, թե դատավարության տևողությունը ձգձգող պատճառներն ընդհանուր առմամբ արդյո՞ք ձևավորվել են վերը նշված դատավարության մասնակիցների դրսևորած վարքագծի արդյունքում: Այսպես, հարկ է պարզել, թե արդյո՞ք դատական նիստերը հետաձգվել են պատշաճ ծանուցված լինելու պայմաններում նշված դատավարության մասնակիցների՝ դատական նիստերին պարբերաբար չներկայանալու պատճառներով, արդյո՞ք դրանք եղել են հարգելի, թե անհարգելի, ու՞մ կողմից է ներկայացվել դատական նիստը հետաձգելու մասին միջնորդություն, արդյո՞ք նշված դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվել և իրենց դատավարական պարտականությունները կատարել են բարեխղճորեն, թե՛ իրենց վարքագծով կամխամտածված խոչընդոտներ են ստեղծել, որոնք հավանաբար կձգձգեին գործի վարույթը⁴: Վերջինի առումով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք անձը չարաշահել է իր դատավարական իրավունքները (*“abuse of rights”*): Որպես օրինակ կարող են լինել այն դեպքերը, երբ անձի վարքագիծը հանգեցնում է դատական նիստերի պարբերաբար հետաձգման (այդ նպատակով անձը ներկայացնում է միջնորդություն՝ դատական նիստը հետաձգելու և գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ, ընդ որում՝ որոշ դեպքերում՝ ամբողջությամբ գործի նյութերին նախաքննության ավարտին ծանոթացած լինելու պայմաններում, ներկայացնում է բացարկի և ինքնաբա-

¹ Տե՛ս *Lorenzi, Bernardini and Gritti v. Italy* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1992 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 13301/87, կետ 16:

² Տե՛ս *Ruiz-Mateos v. Spain* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1993 թվականի հունիսի 23-ի վճիռը, գանգատ թիվ 12952/87, կետ 41:

³ Տե՛ս *Beaumartin v. France* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1994 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 15287/89, կետ 33:

⁴ Տե՛ս *Eckle v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 82:

ցարկի միջնորդություններ, հանդես գալիս հայտարարություններով, փոխում կամ հրաժարվում պաշտպանից, խախտում դատական նիստի կարգը, անհարգալից վերաբերմունք դրսևորում դատարանի նկատմամբ): Միաժամանակ, հարկ է ընդգծել, որ իրավական պաշտպանության միջոցներից բարեխղճորեն, իր նպատակային նշանակությանը համապատասխան օգտվելը չի կարող գնահատվել որպես շահագրգիռ սուբյեկտների կողմից գործի քննությունը դանդաղեցնող վարքագծի դրսևորում,

- **շահագրգիռ անձի համար գործի տևական քննության հետևանքները.**

Որպես այդպիսին, ի թիվս այնի, կարող է լինել նյութական և ոչ նյութական վնասը: Այդ համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դասակարգում է գործեր, որոնք պահանջում են «հատուկ կամ կոնկրետ ջանասիրություն» և «բացառիկ ջանասիրություն»: «Հատուկ կամ կոնկրետ ջանասիրություն», ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ի թիվս այլ դեպքերի, պահանջվել է այն գործերով, որոնք ըստ էության վերաբերել են ճանապարհատրանսպորտային պատահարների գոհերին վնասների հատուցում տալուն¹, ինչպես նաև ոստիկանության ծառայողների հանցավոր ոտնձգության կապակցությամբ քննություն իրականացնելուն²: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշում է, որ իրավասու մարմինները պետք է «հատուկ ջանասիրություն» դրսևորեն նաև այն գործերով, որոնցով անձը դատական քննության ընթացքում գտնվում է կալանքի տակ³: Միաժամանակ, հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առանձնացնում է նաև «բացառիկ ջանասիրությունը», որը պահանջվում այն գործերով, որոնք օրինակ վերաբերում են անբուժելի հիվանդությամբ տառապող անձանց կողմից ներկայացված փոխհատուցման պահանջի քննությանը: Այդ գործերով, ելնելով կյանքի կանխատեսվող տևողությունից, առկա է ռիսկ առ այն, որ ցանկացած ձգձգում կարող է դատարանի կողմից լուծման ենթակա հարցը դարձնել աննպատակ⁴:

Շահագրգիռ անձի համար գործի տևական քննության հետևանքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտա-

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, *Martins Moreira v. Portugal* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1988 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 11371/85, կետ 59:

² Տե՛ս, *mutatis mutandis*, *Caloc v. France* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33951/96, կետեր 119-120:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Abdoella v. the Netherlands* գործով 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 12728/87, կետ 24, *Kalashnikov v. Russia* գործով 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *X. v. France* գործով 1992 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 18020/91, կետեր 44, 47, *Vallée v. France* գործով 1994 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 22121/93, կետեր 47, 49:

հայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանան այն գործերը, որոնք հնարավորինս սեղմ ժամկետում քննության չառնելն էապես վնաս կհասցնի արդարադատության շահերին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այդ առումով կարող են ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով՝ ա) անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը), բ) դատական կազմի փոփոխության կամ այլ հիմքով վերսկսված դատական քննությամբ գործերը, գ) դատական վերանայման արդյունքում բեկանված և նոր քննության ուղարկված գործերը, դ) օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման արդյունքում վերսկսված գործերը, ե) խոցելի խմբեր համարվող՝ անչափահասների¹, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց վերաբերյալ գործերը, զ) պետության պոզիտիվ պարտականության ներքո գտնվող՝ կյանքի իրավունքի պաշտպանության², խոշտանգումների բացարձակ արգելքի³ ենթադրյալ խախտումներին վերաբերող գործերը: Միաժամանակ, հատուկ ջանասիրության տեսանկյունից ուշադրության են արժանի նաև այն գործերը, որոնց քննության ընթացքում սահմանափակվում են անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այլ հիմնական իրավունքները (օրինակ՝ անձի սեփականության իրավունքը՝ վերջինիս գույքը կալանքի տակ գտնվելու դեպքում կամ աշխատանքային իրավունքները՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման դեպքում),

- գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունավետությունը.

¹ Տե՛ս «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 20.1-րդ կետը, որի համաձայն՝ «Անչափահասի ցանկացած գործ սկզբից ևեթ պետք է վարել արագ, թույլ չտալով անհարկի ձգձգումներ»,

«Անչափահասների շրջանում հանցագործությունների նկատմամբ նոր մոտեցումների և անչափահասների գործերով արդարադատության նշանակության մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 2003 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ R(2003) 20 հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ «Քրեական դատավարության բոլոր փուլերը պետք է անցկացվեն կարճ ժամանակահատվածներում, որպեսզի նվազեցվեն հետքաձգումները և հնարավորության սահմաններում ապահովվեն հանցավորության արագ կանխարգելումը անչափահասների շրջանում: (...)»:

² Տե՛ս *u, mutatis mutandis, Önerildiz v. Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 48939/99, կետեր 94-95:

³ Տե՛ս *u, mutatis mutandis, M. and M. v. Croatia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 10161/13, կետ 148:

Այս առումով առանցքային նշանակություն ունի ինչպես դատարանի, այնպես էլ քրեական վարույթի ընթացքում հանրային շահը պաշտպանող քրեական հետապնդման մարմինների կողմից գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով ձեռնարկած միջոցառումների և դրանց արդյունավետության գնահատումը:

Դատարանի կողմից գործի քննության արագությունն ապահովելու համատեքստում հատկանշական է գործով նշանակված դատական նիստերի հաճախականության, ինչպես նաև գործի քննության անհարկի ձգձգումները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցառումների արդյունավետության գնահատումը (ինչպես օրինակ՝ դատավարության մասնակիցների, դատակոչի ենթակա անձանց ցուցակում ներառված անձանց պատշաճ և ժամանակին ծանուցումը, ապացույցների հետազոտման արդյունավետ կարգի սահմանումը, ապացույցների հետազոտման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, գործի պատշաճ քննության համար անհրաժեշտ փաստական տվյալների ժամանակին ստացումը): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դատական նիստը նախագահողը պետք է ձեռնարկի ողջամտորեն անհրաժեշտ միջոցառումներ՝ գործի քննությունը հնարավորինս սեղմ ժամկետում ավարտելու համար: Այդ առումով ուշադրության է արժանի նաև այն, թե գործի քննության հետաձգումներն ընդհանուր առմամբ արդյո՞ք առավելապես պայմանավորված են եղել դատարանի կողմից անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման պատճառաբանություններով,

- գործի քննության ընդհանուր փնտրությունը.

Գործի քննության ժամկետի ողջամտությունը որոշելիս առանցքային նշանակություն ունի նաև գործի քննության ընդհանուր ժամկետի գնահատումը՝ այնպիսի հանգամանքների հաշվառմամբ, ինչպիսիք են՝ այդ ժամկետում դատական ակտերի բողոքարկման կառուցակարգի գործադրման ընդհանուր ժամանակահատվածը, տևական ժամկետ պահանջող դատավարական գործողությունների կատարմամբ առաջացած ժամկետային խզումները, բեկանված և նոր քննության ուղարկված գործերով՝ քննության ծավալի և ժամանակահատվածի հարաբերակցությունը գործի ընդհանուր քննության ծավալի և ժամկետի հետ:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ողջամտությունը որոշելիս ենթակա են գնահատման.

- գործի բարդությունը,
- շահագրգիռ անձի վարքագիծը,
- գործի տևական քննության հետևանքները շահագրգիռ անձի համար,
- գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով իրավասու մարմինների կողմից ձեռնարկած միջոցառումները և դրանց արդյունավետությունը,

- գործի քննության ընդհանուր տևողությունը:

Անվիտիելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող դրույթները և դրանց գնահատման վերաբերյալ մշակված չափանիշները նպատակ ունեն շահագրգիռ անձին պաշտպանելու երկարատև անորոշ իրավական վիճակից և ապահովելու արդարադատության իրականացումն առանց ձգձգումների՝ երաշխավորելով գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը՝ ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ հասարակության կողմից:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- **2013 թվականի հունիսի 9-ին** ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 14134513 քրեական գործը, և

- **նույն օրը** Գեորգի Միսակյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ¹,

2014 թվականի փետրվարի 18-ին քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան²,

- **2015 թվականի հունիսի 15-ի** դատավճռով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Լ.Վարդանյանին և Զ.Այվազյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և Համաներման մասին որոշման կիրառմամբ նրանց ազատել է նշանակված պատժից՝ առանց լրացուցիչ պատիժ նշանակելու³,

- **2015 թվականի դեկտեմբերի 22-ի** որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ամբաստանյալներ Զ.Այվազյանի և Լ.Վարդանյանի պաշտպանների ու տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքները մերժել է⁴,

- **2016 թվականի հունիսի 24-ի** որոշմամբ Վճռաբեկ դատարանը տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարել է, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ի որոշումը՝ **լրացուցիչ պատժի մասով բեկանել է՝ գործն այդ մասով**

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս սույն տեղում:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

ուղարկելով Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝

- **2016 թվականի հոկտեմբերի 24-ին** ստացված՝ լրացուցիչ պատժի նշանակման ծավալով քրեական գործի քննությունն Առաջին ատյանի դատարանում ավարտվել է **2018 թվականի սեպտեմբերի 24-ին՝** դատական ակտի կայացմամբ: Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակվել է լրացուցիչ պատիժ՝ մանկաբուժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ 2 (երկու) տարի ժամկետով և նրանք ազատվել են լրացուցիչ պատժից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով²,

- **2019 թվականի հունվարի 15-ի** որոշմամբ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Զ.Այվազյանի պաշտպանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի դատավճիռը³:

23. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-21-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը, գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու տուժողի իրավահաջորդի իրավունքի առկայությամբ, անհրաժեշտ է համարում գնահատման ենթարկել հետևյալ հանգամանքները.

- սույն գործով երկու ամբաստանյալներին մեղաազրված է եղել մեկ դրվարգ արարքի կատարում, գործով ներգրավված են եղել տասնվեց վկաներ: Նման պայմաններում, հաշվի առնելով նաև մեղաազրվող արարքի փաստական և իրավական բովանդակությունը, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակն ու հետազոտվող ապացույցների ծավալը, հարկ է նկատել, որ նշվածն իր ամբողջության մեջ, ըստ էության, չի վկայել գործի բարդության մասին: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելուց և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելուց հետո՝ քննության ծավալը ներառել է բացառապես լրացուցիչ պատժի նշանակման հարցի քննարկումը⁴, ինչը չի պահանջել ամբաստանյալների մեղադրանքի հիմքում դրված ապացույցների լրացուցիչ հետազոտություն,

- դատավարության տևողությունը ձգձգող պատճառներն ընդհանուր առմամբ չեն ձևավորվել տուժողի իրավահաջորդի կամ նրա ներկայացուցիչների դրսևորած վարքագծի արդյունքում: Վճռաբեկ դատարանի

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

կողմից ստորադաս դատարանների դատական ակտերի բեկանումից և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելուց հետո՝ դատական նիստերի հետաձգման պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տուժողի իրավահաջորդի կամ նրա ներկայացուցիչների վարքագծով պայմանավորված դատական նիստերը որպես այդպիսին չեն հետաձգվել¹,

- գործի տևական քննության հետևանքներն առնվազն հանգեցրել են պատժի նպատակներից՝ սոցիալական արդարության վերականգնմանը չհասնելուն: Մինչդեռ, ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից, սույն գործը հատուկ ջանասիրության պետք է արժանանար՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում էր պետության պոզիտիվ պարտականության ներքո գտնվող՝ կյանքի իրավունքի պաշտպանության ենթադրյալ խախտմանը,

- անդրադառնալով գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով դատարանի ձեռնարկած միջոցառումներին՝ հարկ է նկատել, որ դրանք ըստ էության այնքան էլ արդյունավետ չեն եղել: Հատկապես, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերի բեկանումից և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելուց հետո, բացառապես լրացուցիչ պատժի նշանակման ծավալով քրեական գործով դատական նիստերն ընդհանուր առմամբ հետաձգվել են ավելի քան երկու տասնյակ անգամ²,

- գործի քննության ընդհանուր տևողության ժամկետում՝ սկսած՝ 2013 թվականի հուլիսի 9-ից, մինչդատական վարույթի ժամկետի հաշվառմամբ, առաջին ատյանի դատարանում, վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում քրեական գործի քննությունն ավարտվել է 2016 թվականի հունիսի 24-ին: Այսինքն՝ քրեական գործի ըստ էության քննության ընդհանուր ժամկետը տևել է **երկու տարի տասնմեկ ամիս տասնհինգ օր**: Այնուհետև, Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի որոշմամբ գործով դատական ակտերը բեկանելուց և լրացուցիչ պատժի մասով գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելուց հետո, լրացուցիչ պատժի նշանակման հարցի քննությունն Առաջին ատյանի դատարանում տևել է **մեկ տարի տասնմեկ ամիս** (գործն Առաջին ատյանի դատարանում ստացվել է 2016 թվականի հոկտեմբերի 24-ին և ավարտվել 2018 թվականի սեպտեմբերի 24-ին՝ դատական ակտի հրապարակմամբ): Նշված ժամկետն ակնհայտ արդարացված չէր՝ հաշվի առնելով ինչպես դատական ակտի հրապարակման օրվա դրությամբ գործի քննության ընդհանուր ժամկետը, այնպես էլ գործի փաստական և իրավական հանգամանքները: Ընդ որում, հարկ է նկատել, որ առաջին

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման նույն կետը:

ատյանի դատարանում լրացուցիչ պատժի նշանակման հարցի քննությունը տևել է ավելի, քան առաջին ատյանի դատարանում քրեական գործի ըստ էության քննությունը (ինչը տևել է **մեկ տարի երեք ամիս քսանվեց օր**)¹:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալներ Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի նկատմամբ լրացուցիչ պատժի նշանակման ծավալով գործն Առաջին ատյանի դատարանում քննության առնելիս չի պահպանվել ողջամիտ ժամկետում գործի քննության՝ տուժողի իրավահաջորդի իրավունքը:

24. Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալը և հաշվի առնելով արձանագրված իրավունքի խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և սույն գործով ճանաչել տուժողի իրավահաջորդ Գ.Միսակյանի իրավունքի խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել տուժողի իրավահաջորդ Գեորգի Օսիկի Միսակյանի իրավունքի խախտման փաստը:
3. Ամբաստանյալներ Լիլիթ Ավետիքի Վարդանյանի և Զարինե Արթուրի Այվազյանի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0217/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահագահությանը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությանը՝
մասնակցությանը
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝
դատախազ՝
պաշտպան՝
ամբաստանյալ՝*

Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Գ.ՄԵԼԻՔՅԱՆԻ
Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հակոբ Մնացականի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հակոբ Մնացականի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի մարտի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի

հատկանիշներով հարուցվել է թիվ 14113816 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Հակոբ Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2016 թվականի նոյեմբերի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Հ.Ավետիսյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 23-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 14-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

2019 թվականի սեպտեմբերի 9-ին ամբաստանյալ Հ.Ավետիսյանի պաշտպան Գ.Մելիքյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Հակոբ Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա 2016 թվականի հունվար ամսվա կես[ից] մինչև 2016 թվականի փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում նպասարել է Գայանե Արթուրի Ասատրյանի և Լիդա Մարտիրոսի Մանուկյանի կողմից պոռնկությամբ զբաղվելուն՝ վերջիններիս պոռնկությամբ զբաղվելու համար պարբերաբար կացարան փրամադրելով:

Այսպես.

2015 [թվականի] օգոստոսի 17-ին վարձակալել է Երևան քաղաքի Կոմիտաս 40 հասցեում գրնվող փարածքը և պոռնկությամբ զբաղվելու համար սրեղծել հասարակություն՝ «Դայնոն» մերաման սրահը, որպես մերսուիհներ աշխատանքի է ընդունել Գայանե Արթուրի Ասատրյանին և

Լիդա Մարտիրոսի Մանուկյանին: Նշված մերանան սրահում հաճախորդներ ապահովելու նպատակով իր կողմից աշխատանքի ընդունած մերսուտիկների հետ ձեռք է բերել համապատասխան պայմանավորվածություն հաճախորդների ցանկության դեպքում մերսուտիկների կողմից սերտուալ բնույթի գործողություններ կատարելու վերաբերյալ և սրացված գումարը բաժանել միմյանց միջև՝ այդ կերպ 2016 թվականի հունվար ամսվա կեսից՝ մինչև 2016 թվականի փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում սրանալով գույքային օգուր՝ նպաստել է վերջիններիս պոռնկությանը զբաղվելուն: (...)»¹:

6. Առաջին առյանի դատարանն արձանագրել է. «(...) Այսպիսով սրուգելով ամբաստանյալ Հակոբ Մասցակյանի Ավերիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով առաջադրված մեղադրանքի վերաբերյալ գործով ձեռք բերված ապացույցները՝ (...) Դատարանը գրնում է, որ Հակոբ Մասցակյանի Ավերիսյանի արարքում բացակայում է նրան մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցակազմը, որի կապակցությամբ առաջադրված մեղադրանքում հարկ է վերջինիս ճանաչել անպարտ և կայացնել արդարացման դատավճիռ հետևյալ պարճատարանությամբ.

(...) Դատարանությամբ ձեռք բերված և հետագուրված ապացույցներով դատարանը հաստատել է համարում հետևյալը.

Հակոբ Մասցակյանի Ավերիսյանը 2015 թվականի օգուրոսի 17-ին վարճակալել է Երևան քաղաքի Կոմիտաս 40 հասցեում գրնվող տարածքը, ապա սրեղծելով հաստատություն՝ «Գայմոն» մերանան սրահը, որպես մերսուտիկներ աշխատանքի է ընդունել Գայանե Արթուրի Ասարյանին և Լիդա Մարտիրոսի Մանուկյանին: Հակոբ Մասցակյանի Ավերիսյանը նշված մերանան սրահում աշխատանքի ընդունված մերսուտիկներին արգելել է սեռական հարաբերության մեջ մրնել հաճախորդների հետ: Հ.Ավերիսյանի գիրությամբ, մերանան որոշակի րեսակի մեջ ընդգրկված է եղել հաճախորդների ցանկության դեպքում մերսուտիկների կողմից մերանան ընթացքում առնանդամի ձեռնաշարժություն, որը սերնամաժայթքում է առաջացրել, որպիսի գործողություններն էլ ըստ [դատարժչական-սերտոլոգիական համալիր հանճնաժողովային փորճաքննության] թիվ 16-1154 եզրակացության դիրարկվել է որպես սերտուալ բնույթի գործողությունների կատարում, բայց ոչ սեռական սկր՝ սեռական հարաբերություն, ապա մարուցված ճառայության դիմաց սրացված գումարը Հ.Ավերիսյանը բաժանել է միմյանց միջև՝ այդ կերպ 2016 թվականի հունվար ամսվա կեսերից մինչև 2016 թվականի փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում սրացել է գույքային

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 183-188:

օգուր: Ինչպես «Դայմոն» մերաման սրահում, այնպես էլ այլ որևէ հասարակությունում հիշյալ մերսուիհների և հաճախորդների միջև սեռական սկր` սեռական հարաբերություն րեղի չի ունեցել:

Այսինքն, դատարանը փաստում է, որ մեղադրանքի կողմը դատարանում հեղազուրված ապացույցներով մերսուիհների արարքում պոնկոյթյամբ զբաղվելու փաստի առկայությունը հիմնավորված է համարել վերջիններիս կողմից սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու փաստի դիտարկմամբ (...):

(...) [Բ]ատարանն արձանագրում է, որ [Վ.Հարությունյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵՇԿ/0041/01/14] որոշմամբ հարակ ամրագրվել է, որ պոնկոյթյամբ զբաղվելու օբյեկտիվ կողմի պարտադիր տարր է հանդիսանում վարձարության դիմաց սեռական հարաբերության առկայությունը և այն կարող է դրսևորվել բացառապես սեռական հարաբերության կայացմամբ: Ընդ որում, սեռական հարաբերության առկայությունը հանդիսանում է պոնկոյթյամբ զբաղվելու պարտադիր հարկանիշ, այլապես [Վճռաբեկ դատարանի] վերը [հիշարակված որոշմամբ] կնախարեսվեր նաև սեռական բնույթի գործողությունների առկայությունը, որը չի կարող նույնական լինել սեռական հարաբերության հետ և պոնկոյթյամբ զբաղվելու օբյեկտիվ կողմի տարր հանդիսանալ:

(...) [Պ]ոնկոյթյան պարտադիր հարկանիշներն են մատուցվող ծառայության վճարովիությունը, սիսրեմատրիկությունը, որպես կանոն, հաճախորդների անորոշ շրջանակը, ինչպես նաև սեռական հարաբերության մեջ մրնելը:

(...) Քննարկվող դեպքում, իրոք առկա է մատուցված վճարովի ծառայություն, որը որպես կանոն կրել է սիսրեմատրիկ բնույթ և իրականացվել է հաճախորդների անորոշ շրջանակում, սակայն որպեսզի այն դիտվի պոնկոյթյամբ զբաղվել, ապա պետք է համապարասիանի մյուս կարևոր նախապայմաններին՝ մատուցված ծառայությունը ենթադրի արրամանուսական, պարասական սեռական հարաբերություն:

Այս առումով անհրաժեշտ է անդրադառնալ սեռական հարաբերություն հասկացությանը, որը իրավաբանական տերմին չէ, (...) մասնագիտական գրականությունում, որպես կանոն, սեռական հարաբերությունները բաժանվում են պայմանական երկու խմբի՝ բնական սեռական հարաբերություն և իսթարված սեռական հարաբերություն (...) որպիսին դատարանությանը հեղազուրված ապացույցներով բացառվել է:

(...) [Բ]ատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածը մեկնարանելով «Իրավական սկրերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի կանոններով գրնում է, որ (...) [ք]ննարկվող հանցագործության առարկաների մեջ սեքսուալ բնույթի գործողությունները չեն մրնում

օրենքի ուղղակի մատնանշման ուժով: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի մնացած հոդվածներում (138, 139, 140, 141, 142-րդ հոդվածներում) նույնպես սեռական հարաբերությունը և սեքսուալ բնույթի գործողությունները փարանշարված են կամ շաղկապով, դրանք բնութագրվում են որպես հնքնություն և փարբեր արարքներ և չեն կարող համարվել նույնական կամ իրար լրացնող, իսկ սեքսուալ բնույթի գործողությունների հետևանքով սեռական մշակույթի ձևավորման վերաբերյալ հասարակության անդամների բարոյական պարկերացումների հնարավոր խաթարումն հնքնին չի կարող «պոռնկության» եզրույթի բովանդակության մեջ դիտարկվելու հիմք հանդիսանալ, (...):

Այնուամենայնիվ, եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ սեռական օրգանների մերսումը կամ ձեռնաշարժությունը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով կարող է դիտվել որպես սեռական հարաբերություն, ապա այդ պարագայում անհրաժեշտ է քննարկել և չանտեսել նաև այնպիսի մի կարևոր հանգամանք, ինչպիսին է մատուցվող ծառայության վճարովիությունը:

[Դատարանը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածը արձանագրում է, որ/ Կրկնալ դեպքում պետք է նկատել, որ հաճախորդը որպես պայմանագրի կողմ վճարել է ոչ թե սեռական օրգանի մերսման կամ ձեռնաշարժության միջոցով արբունքի հասնելու նպատակի համար, այլ մատուցված մերսման դիմաց, ինչը ևս պոռնկությունը բացառող հարկանիշ է, որպիսիք փաստում են հացագործության դեպքի բացակայությունը:

(...) [Դատարանը գրնում է, որ Հակոբ Մնացականի Ավերիսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցակազմի պարտադիր հարկանիշներից երկուսը, մասնավորապես՝ հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմը»¹:

6.1. Դատաբժշկական-սեքսոլոգիական համալիր հանձնաժողովային փորձաքննության թիվ 16-1154 եզրակացության համաձայն՝ I, II մերսուհու կողմից առնանդամի ձեռնաշարժման կամ կրծքերով հաճախորդի մարմնին հպելու եղանակներով անձի մոտ սերմնաժայթքում առաջացնելը սեռական ակտ (սեռական հարաբերություն) չի հանդիսանում, այլ հանդիսանում է սեռական կրքի բավարարմանն ուղղված սեքսուալ բնույթի գործողություն: III. Մերսուհու կողմից մեկ այլ անձի առնանդամը ձեռնաշարժելը և վերջինիս մոտ սերմնաժայթքում առաջացնելը հանդիսանում է սեռական կրքի բավարարմանն ուղղված սեքսուալ բնույթի գործողություն, իսկ թե նման գործողությունների որոշակի վարձավճարի դիմաց կատարելը հանդիսանում է արդյոք սեքսուալ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 145-165:

ընույթի ծառայությունների մատուցում, թե ոչ, ապա դա ենթակա է իրավական գնահատման¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) [Պ]ոռնկությանը զբաղվելու օրյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում վարձարժեքի դիմաց սեռական հարաբերության առկայությունը, ինչը կարող է դրսևորվել բացառապես սեռական հարաբերության կայացմամբ, որպիսի հանգամանքը քրեական գործով ձեռք բերված, [Առաջին արյանի դատարանում] հրապարակված և հետազոտված ապացույցներով չի հաստատվել:

Վերաքննիչ դատարանի համոզմամբ պոռնկությունը կարող է դրսևորվել բացառապես վարձարժեքի դիմաց արտասանմանական սեռական հարաբերության առկայության ձևով, ինչը նույնական չէ սեքսուալ ընույթի այլ գործողություններին:

Ի տարբերություն սեռական հարաբերության, սեքսուալ ընույթի գործողությունները սեռական կրքերը բավարարելու առավել լայն ձևերով են դրսևորվում:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ (...) դատարժեկական-սեքսուոլոգիական համալիր հանձնաժողովային փորձաքննության թիվ 16-1154 եզրակացությանը ևս ապացուցվել է, որ ձեռնաշարժությունը և այդ կերպ անձի մոտ սերմնաժայթքում առաջացնելն ոչ թե սեռական հարաբերություն է, այլ սեռական կրքի բավարարմանն ուղղված սեքսուալ ընույթի գործողություն:

Եման պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված կարգով քրեական պարասխանարվությունն վրա է հասնում միայն պոռնկությանը զբաղվելու հանգամանքն ապացուցված լինելու պարագայում, որի համար անհրաժեշտ է սեռական հարաբերություն:

(...) Անհոփելով վերոշարադրյալ բոլոր հանգամանքներն իրենց համակցությանը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ [Առաջին արյանի դատարանի] դատավճիռը՝ ամբաստանյալ Հակոբ Մնացականի Ավերիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով հանցակազմի բացակայության պարճատարանությանը արդարացնելու վերաբերյալ, օրինական է, հիմնավորված և պարճատարանված (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 137-140:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 72-89:

8. Բողոքի հեղինակի կարծիքով, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, ուստի կայացված դատական ակտն անհիմն է և ենթակա է բեկանման: Ըստ բողոք բերած անձի՝ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածը, ինչպես նաև դրանց վերաբերյալ միջազգային իրավական ակտերի կարգավորումներն ու Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ գործով հաստատված հանգամանքների տալով սխալ գնահատական:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածը չի բացահայտում «պոռնկություն» հասկացությունը, իսկ մի շարք միջազգային փաստաթղթերում տրված բնորոշումը լայն է և չի սահմանափակվում միայն սեռական հարաբերությամբ: Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՇԴ/0041/01/14 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և անհիմն եզրահանգման եկել առ այն, որ մերսման սրահի աշխատակիցների կողմից անձին սեռական բնույթի այլ ծառայություններ մատուցելը սեռական հարաբերություն չէ և չի կարող հանդիսանալ պոռնկության տեսակ: Մինչդեռ ըստ միջազգային կարգավորումների՝ սեռական ծառայությունների մատուցումը նույնպես ներառվում է պոռնկության բնորոշման մեջ:

Արդյունքում բողոքաբերն ընդգծել է, որ թեև գիտական գրականության մեջ «պոռնկության» հասկացության վերաբերյալ միասնական մոտեցում առկա չէ, սակայն միջազգային-իրավական ակտերում այդ հարցին արդեն իսկ տրվել է համապատասխան լուծում: Բացի այդ, նշված հանցագործությունը ներառված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում, որի հիմնական անմիջական օբյեկտը հասարակության անդամների բարոյական զարգացման պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հետևաբար, հանցակազմի օբյեկտի դեմ ոտնձգությունը պարտադիր չէ, որ կատարվի միայն սեռական հարաբերությունների միջոցով, այլ կարող է արտահայտվել նաև սեռական պահանջմունքների բավարարման այլ ձևերով:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պոռնկության քրեաիրավական

հասկացության և հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Հ.Ավետիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար, այն է՝ *«Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները:*

(...)

2. Մույն արարքը, որը կատարվել է՝

(...)

5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով (...):»:

Մեջբերված նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը դասվում է բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, որը խաթարում է սեռերի փոխհարաբերության և սեռական մշակույթի ձևավորման վերաբերյալ հասարակության անդամների բարոյական պատկերացումները: Քննարկվող հանցագործության օբյեկտը հասարակության անդամների բարոյական բնականոն զարգացման պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ սուբյեկտիվ կողմից այն դրսևորվում է միայն մեղքի ուղղակի դիտավորության ձևով՝

Օբյեկտիվ կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հանցակազմը կատարվում է երկրնտրելի գործողություններով, այն է՝

- պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելով, ղեկավարելով կամ պահելով,

- կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Հարությունյանի վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵՇԴ/0041/01/14 որոշումը:

համար օգտագործելով,

- կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելով,

- կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելով¹:

Ընդ որում, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող նշված գործողությունների և այլ անձանց կողմից պոռնկությամբ զբաղվելու միջև պատճառական կապի առկայությունը հանցակազմի պարտադիր հատկանիշ է, հետևաբար «պոռնկություն» եզրույթի բովանդակության բացահայտումն ունի կարևոր իրավական նշանակություն:

12. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պոռնկության շահագործումը՝ պայմանավորված դրա բարձր եկամտաբերությամբ, ներկայումս անդրազգային հիմնախնդիր է, ուստի պատահական չէ, որ միջազգային մի շարք փաստաթղթերով այն բնութագրվում է որպես «չարիք» և մարդու արժանապատվությանն ու հիմնարար իրավունքներին անհամատեղելի երևույթ: Պոռնկության դեմ պայքարը հատուկ կարևորություն է ձեռք բերում ոչ միայն հասարակության անդամների բարոյականության, այլև անչափահասների և ընտանիքի շահերի պաշտպանության տեսանկյունից, քանի որ շատ հաճախ դրանում ներգրավվում են երեխաներ ու դեռահասներ, ինչը լուրջ սպառնալիք է վերջիններիս իրավունքների և օրինական շահերի համար: Բացի այդ, պոռնկության հետ կապված հանցագործությունները հաճախ կարող են ուղեկցվել առավել վտանգավոր հանցավոր արարքների կատարմամբ, ինչպիսիք են, մասնավորապես, թրաֆիքինգը, անչափահասներին հանցավոր գործունեության մեջ ներգրավելը, բռնաբարություններն ու սեքսուալ բնույթի բռնի գործողությունները և այլն:

Մինևույն ժամանակ, սակայն, թեև ՀՀ քրեական օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու և պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու համար, այնուամենայնիվ, պոռնկության հասկացությունը որևէ կերպ չի բացահայտվում, իսկ վերոնշյալ արատավոր երևույթի դեմ արդյունավետ պայքար մղելու համար անհրաժեշտ է պոռնկության քրեաիրավական հասկացության և հատկանիշների հստակեցում:

13. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ *«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով (...):»*

«Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության

¹ Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու տեսակներից՝ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու վերաբերյալ մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարդան Հարությունյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵՇԴ/0041/01/14 որոշումը:

շահագործման դեմ պայքարի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 1-ին հոդվածում ընդգծվում է, որ կոնվենցիայի կողմերը պարտավորվում են պատժել յուրաքանչյուրին, **ով մեկ ուրիշի սեռական ցանկությունները բավարարելու համար շահագործում է այլ անձի պոռնկությունը՝ նույնիսկ նրա համաձայնությամբ¹**:

«Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ «**Երեխաների մարմնավաճառությունը**՝ նշանակում է՝ երեխայի **օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձարրության կամ ցանկացած այլ փեսակի հարուցման դիմաց**»²:

«Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «(...) «[Մ]անկական մարմնավաճառություն» փերմինը նշանակում է **երեխային սեռական բնույթի գործողությունների համար օգտագործելը, երբ վճարում են կամ խոստանում ցանկացած այլ վարձարրություն կամ վճար, անկախ այն բանից, թե այդ վարձարրությունը կամ վճարը կամ էլ նման խոստումը փրվում է հենց երեխային, թե մի երրորդ անձի**»³:

Միջազգային իրավունքում պոռնկության շահագործումը դիտվում է որպես մարդու իրավունքների վերաբերյալ համընդհանուր ճանաչում ստացած միջազգային իրավանորմերի և միջազգային չափորոշիչների խախտում: Մասնավորապես, «Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի նախաբանում պոռնկությունը բնութագրվում է որպես չարիք և անձի արժանապատվությանն ու արժեքին անհամատեղելի երևույթ, ինչը լուրջ սպառնալիք է մարդու, ընտանիքի և ողջ հասարակության բարեկեցության համար: Հետևաբար, **սեռական հարաբերությունը, սեքսուալ բնույթի ծառայությունները կամ արժանապատվությունը նվաստացնող կամ շահագործման հեղ կապված այլ գործողությունները դրամի, աշխատանքի, ապրանքների կամ ծառայության դիմաց անթույլատրելի են**⁴: Միջազգային իրավանորմերը պարտավորեցնում են պետություններին **ձեռնարկելու անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական, պոռնկության շահագործման ցանկացած դրսևորում կանխարգելելու**

¹ Տե՛ս՝ http://www.concourt.am/hr/rus/un/10_6.htm:

² Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24543>:

³ Տե՛ս՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e4>:

⁴ Տե՛ս՝ Սեքսուալ շահագործումից և սեքսուալ չարաշահումից պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումների վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ 2003 թվականի հոկտեմբերի 9-ի տեղեկաթերթը (<https://undocs.org/ru/ST/SGB/2003/13>):

նողությունը, ուստի յուրաքանչյուր անձ, ով եկամուտ կստանա և կնպաստի այլ անձի պոռնկությանը գրադվելուն՝ նույնիսկ նրա համաձայնությանը, պետք է ենթարկվի պատասխանատվության՝

13.1. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պոռնկության շահագործման ցանկացած դրսևորում խիստ դատապարտելի է և հանգեցնում է մարդու հիմնարար իրավունքների խախտման: Ընդ որում, հարկ է նկատել, որ միջազգային փաստաթղթերով պոռնկությունը բավականին լայն է բնորոշվում, ինչի ներքո է դիտարկվում վարձատրության դիմաց մեկ այլ անձի սեռական պահանջմունքների բավարարմանն ուղղված ցանկացած բնույթի սեքսուալ ծառայությունների մատուցումը:

14. Հիմք ընդունելով սույն որոշման 11-13.1-րդ կետերում մեջբերված իրավանորմերը և կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ *պոռնկության բուն էությունը սեքսուալ բնույթի ծառայությունների մատուցումն է*: Այլ կերպ՝ պոռնկությունն ուղղված է վարձատրության դիմաց որևէ անձի մոտ սեռական գրգռում հարուցելուն և վերջինիս սեռական պահանջմունքները բավարարելուն, ուստի այն չի կարող սահմանափակվել միայն սեռական հարաբերությամբ կամ սեռական ակտով: Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ պոռնկությունը պետք է լայն իմաստով մեկնաբանվի՝ ներառելով նաև անորոշ շրջանակի անձանց սեռական կրքերին հագուրդ տալուն ուղղված ցանկացած սեքսուալ բնույթի գործողությունների կատարումը: Վերոնշյալ գործողությունների կատարման արդյունքում ևս առավել քան ոտնահարվում են հասարակության անդամների բարոյական բնականոն զարգացման պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները, խաթարվում սեռերի փոխհարաբերության և սեռական մշակույթի ձևավորման վերաբերյալ հասարակության անդամների բարոյական պատկերացումները: Մինչդեռ, պոռնկության հասկացության չարդարացված նեղ մեկնաբանությունը չի բխում այս երևույթի բուն էությունից և դրա դեմ արդյունավետ պայքար ծավալելու անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով հատկապես օրենքով պահպանվող և տվյալ արարքի կատարման արդյունքում ոտնահարվող հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պոռնկության դեպքում սեքսուալ բնույթի ծառայությունները մատուցվում են վարձատրության դիմաց, ինչի վերաբերյալ, որպես կանոն, ձեռք է բերվում նախնական պայմանավորվածություն: Այլ կերպ՝ *նյութական օգուտ ստանալը պոռնկության էությունն արտացոլող պարտադիր*

¹ Մանրամասն տե՛ս «Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի՝ 1949 թվականի դեկտեմբերի 2-ի կոնվենցիան:

հարկանիշ է, և հենց նյութական հատուցման հանգամանքն է թույլ տալիս պոռնկությունը տարանջատել արտասանուսական այլ հարաբերություններից:

Բացի այդ, պոռնկության մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ անձը վարձատրության դիմաց սեքսուալ բնույթի ծառայությունները մատուցում է **պարբերաբար**:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պոռնկությունը, *որպես կանոն*, բնութագրվում է նաև **հաճախորդների անորոշ շրջանակով** և հարաբերությունների **պարահական** բնույթով, **անձնական համակրանքի և գուգրնկերոջ հանդեպ սեռական հակումների բացակայությամբ**, ինչը ենթադրում է պոռնկությամբ զբաղվող անձի հասանելի լինելը յուրաքանչյուրին, ով ցանկանում է օգտվել նրա ծառայություններից:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Հ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, 2016 թվականի հունվար ամսվա կեսից մինչև 2016 թվականի փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում, նպաստել է Գ.Ասատրյանի և Լ.Մանուկյանի կողմից պոռնկությամբ զբաղվելուն՝ վերջիններիս պոռնկությամբ զբաղվելու համար պարբերաբար կացարան տրամադրելով: Մասնավորապես, «Դայմոնդ» մերսման սրահին հաճախորդներ ապահովելու նպատակով, մերսուիինների հետ ձեռք է բերել համապատասխան պայմանավորվածություն՝ հաճախորդների ցանկության դեպքում վերջիններիս կողմից *սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու* և ստացված գումարը միմյանց միջև բաժանելու վերաբերյալ¹:

Առաջին ատյանի դատարանը, դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում արձանագրել է, որ Հ.Ավետիսյանի գործողությունները չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշներին, մասնավորապես՝ բացակայում են հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը:

Այսպես՝ Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ պոռնկության պարտադիր հատկանիշներն են մատուցվող ծառայության վճարովիությունը, սիստեմատիկությունը, որպես կանոն, հաճախորդների անորոշ շրջանակը, ինչպես նաև սեռական հարաբերության մեջ մտնելը: Անդրադառնալով ամբաստանյալ Հ.Ավետիսյանին մեղսագրվող արարքին՝ Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ վերջինիս գիտությամբ մերսման որոշակի տեսակների դեպքում, հաճախորդների ցանկությամբ, կատարվել են սեքսուալ բնույթի գործողություններ, որոնք կրել են պարբերական բնույթ և իրականացվել են անձանց անորոշ շրջանակի նկատմամբ, սակայն որպեսզի վերոնշյալը դիտվի որպես պոռնկություն,

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

պետք է համապատասխանի մյուս կարևոր նախապայմանին, այն է՝ մատուցված ծառայությունը ենթադրի արտասանումնական, պատահական սեռական հարաբերություն: Մինչդեռ, սեռական հարաբերության պարտադիր և բաղկացուցիչ նախապայման է առնանդամի ներթափանցումը հեշտոցի, հետանցքի կամ բերանի խոռոչ, որպիսի հանգամանքը դատաքննությամբ հետազոտված ապացույցներով բացառվել է:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Առաջին աստանի դատարանը նշել է, որ հաճախորդը՝ որպես պայմանագրի կողմ, վճարել է ոչ թե համապատասխան գործողությունների միջոցով սեռական պահանջմունքը բավարարելու համար, այլ մատուցված մերսման ծառայության դիմաց, հետևաբար բացակայում է պոռնկությամբ զբաղվելու վարձատրության հատկանիշը¹:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստանի դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Առաջին աստանի դատարանի հետևություններն իրավաչափ են²:

16. Վճռաբեկ դատարանը, նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատման ենթարկելով սույն որոշման 11-14-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ եզրահանգման են եկել առ այն, որ սեքսուալ բնույթի գործողությունները պոռնկության բովանդակության բաղկացուցիչ մաս չեն հանդիսանում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով միջազգային-իրավական ակտերում պոռնկությանը տրված բնորոշումը, ինչպես նաև սույն որոշման 14-րդ կետում կատարված վերլուծությունը, արձանագրում է, որ պոռնկությունը պետք է բովանդակային առումով լայն իմաստով մեկնաբանել և որպես այդպիսին դիտարկել *վարձատրության դիմաց ցանկացած սեքսուալ բնույթի ծառայության մատուցումը*, որը ներառում է ոչ միայն հաճախորդի հետ սեռական հարաբերությունը, այլ նաև *սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը*: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ պոռնկության հասկացության չարդարացված նեղ մեկնաբանությունը չի բխում այս երևույթի բուն էությունից և դրա դեմ արդյունավետ պայքար ծավալելու անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով հատկապես օրենքով պահպանվող և տվյալ արարքի կատարման արդյունքում ոտնահարվող հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով իրականացված դատաբժշկական-սեքսուոլոգիական համալիր հանձնաժողովային փոր-

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ձաքննության թիվ 16-1154 եզրակացության համաձայն՝ մերսուիինների կողմից *կատարվել են սեքսուալ բնույթի գործողություններ*, որոնք ուղղված են եղել հաճախորդների սեռական կրքի բավարարմանը¹: Ընդ որում, վերոնշյալ գործողություններն իրականացվել են վարձատրության դիմաց, անձանց անորոշ շրջանակի նկատմամբ՝ կրելով պարբերական բնույթ²:

Ուստի, նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների այն հետևությունը, որ պոռնկությունը կարող է դրսևորվել բացառապես բնական կամ խաթարված եղանակով սեռական հարաբերություններ ունենալով, հիմնավոր չէ:

16.1. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դատողությանը, որ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում հստակ ամրագրել է, որ *պոռնկությամբ զբաղվելու օբյեկտիվ կողմի պարտադիր փարր է հանդիսանում վարձատրության դիմաց սեռական հարաբերության առկայությունը և այն կարող է դրսևորվել բացառապես սեռական հարաբերության կայացմամբ*, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ որոշմամբ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը վերաբերել է ոչ թե պոռնկության հասկացության և հատկանիշների բացահայտմանը, այլ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող կոնկրետ գործողության մեկնաբանմանը: Հետևաբար Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ պատճառաբանությունը հիմնավոր չէ:

16.2. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, որ հաճախորդը վճարել է ոչ թե սեռական կրքի բավարարման, այլ մատուցված մերսման ծառայության դիմաց, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրական հանցավոր գործունեության՝ պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու քողարկված ձև է հանրային որևէ հաստատություն (սրճարան, ակումբ, մերսման սրահ և այլն) պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը, որպիսի հանգամանքը Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ ուշադրության չի արժանացվել, չի վերլուծվել և չի գնահատվել գործի փաստական տվյալների համատեքստում, մինչդեռ քրեական գործում առկա ապացույցների պատշաճ վերլուծությունն ու գնահատումը թույլ կտար վերհանել մերսման սրահում մատուցվող ծառայությունների իրական բնույթը:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի հետևությունն առ այն, որ հաճախորդը որպես պայմանագրի կողմ վճարել է ոչ թե վերը նշված գործողությունների միջոցով սեռական զրգոմ հարուցելու և կրքերը բավարարելու համար, այլ մատուցված մերսման ծառայության դիմաց, բավարար չափով պատճառաբանված չէ, Առաջին ատյանի դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

պատշաճ չի գնահատել քրեական գործում առկա ապացույցների համակցությունը, ինչի արդյունքում կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ:

17. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Ավետիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի սխալ կիրառում, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտերի կայացման: Վերոնշյալ խախտումներն իրենց բնույթով էական են և հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում, Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով պոռնկության հասկացության և հատկանիշների վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, պետք է հանգի համապատասխան հետևության:

18. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության ընթացքում Հ.Ավետիսյանի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը, որի կիրառման հիմքերն ու պայմաններն առկա են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հակոբ Մնացականի Ավետիսյանի վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 15-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Հակոբ Մնացականի Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0426/11/18

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահությունը՝
մասնակցությամբ դատավորները՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Ա.ԲՈՅԱԶՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ դիմող Հրայր Սվյատոսլավի Հովսեփյանի փաստաբան Ռ.Ահարոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի հետաքննիչ Հ.Մկրտչյանի (այսուհետ՝ նաև Հետաքննիչ)՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ դիմող Հրայր Հովսեփյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքը Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար

Մ.Գրիգորյանի (այսուհետ՝ նաև Դատախազ)՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2. Փաստաբան Ռ.Ահարոնյանի՝ բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Ռ.Ահարոնյանի՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ:

3. Վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ բողոքը մերժելու մասին որոշման համաձայն՝ *«(...) Հրայր Հովսեփյանի կողմից Ռոմեն Ահարոնյանին տրված լիազորագիրը՝ վերապահելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով հայցվորին կամ պատասխանողին վերապահված բոլոր լիազորությունները, չի նախադրեում մինչդարական վարույթն իրականացնող մարմնի որոշումներն ու գործողությունները բողոքարկելու լիազորությունը: Բացի այդ, լիազորագիրը տրվել է 2014 թվականի հոկտեմբերի ութին՝ երեք տարի ժամկետով, դրա գործողության ժամկետը լրացել է շուրջ մեկ տարի առաջ, հետևաբար, այդ պահից այն կորցրել է իրավաբանական ուժը: Վերոգրյալից բխում է, որ Ռոմեն Ահարոնյանն իրավասու չէ կատարելու որևէ գործողություն Հրայր Հովսեփյանի անունից, այդ թվում՝ բողոքարկելու Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար Մ.Գրիգորյանի՝ «Բողոքը մերժելու մասին» 30.07.2018թ. որոշումը: (...)»¹:*

6. Վերաքննիչ դատարանը, առանց քննության թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ փաստաբան Ռ.Ահարոնյանի վերաքննիչ բողոքը՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու պահանջով, արձանագրել է. *«(...) Վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել փաստաբան Ռոմեն*

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 31-42:

Ահարոնյանի կողմից Առաջին աստիճանի դատարանի վերոհիշյալ որոշումը Հրայր Հովսեփյանի անունից բողոքարկելու իրավունք ունենալու վերաբերյալ համապատասխան լիազորությունը: Ինչ վերաբերում է գործի նյութերում առկա լիազորագրին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն փաստաթուղթն Ահարոնյանին նման իրավասությամբ չի օժտում: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

7. Բողոքի հեղինակը գտել է, որ Առաջին աստիճանի դատարանն ըստ էության չքննարկելով իր բողոքը, իսկ Վերաքննիչ դատարանն առանց քննության թողնելով Առաջին աստիճանի որոշման դեմ ներկայացված իր վերաքննիչ բողոքը՝ իրեն ոչ իրավաչափորեն դիտարկել են որպես բողոք բերելու իրավունք չունեցող անձ, այնինչ ինքն ունեցել է այդպիսի լիազորություն:

Բողոք բերած անձը նշել է, որ բողոքը չքննարկելու պայմաններում Վերաքննիչ դատարանը կայացրած որոշմամբ գրկել է իրեն դատական բողոքարկման իրավունքից, որը և հանգեցրել է դատական պաշտպանության իրավունքի ակնհայտ խախտման: Ըստ բողոքաբերի՝ եթե նույնիսկ իր հետևություններում Վերաքննիչ դատարանը լիներ իրավացի, միևնույն է պարտավոր էր քննել բողոքը:

8. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը՝ ճանաչելով դիմողի իրավունքների խախտումը և սահմանելով խախտված իրավունքները վերականգնելու պարտականություն կամ գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանի համոզմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի և 415-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ առկա է սահմանադրականության խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան)՝ նշված նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

10. Սույն գործով Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածում և 415-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընթացակարգերը և կառուցակարգերն արդյոք համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 74-75:

մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին այնքանով, որքանով գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, գրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից:

I. Անձի դատական վերանայման իրավունքը գործն ըստ էության չլուծող դատական ակտերով:

11. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչտ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով*

1) *ապահովում է օրենքների և այլ նորմարիվ իրավական ակտերի միարեսակ կիրառությունը.*

2) *վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները»:*

12. Անձի դատական վերանայման իրավունքի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական ակտի բողոքարկման օրենսդրական ընթացակարգով պետք է լիարժեք պաշտպանելի լինեն անձի՝ **առանց բացառության բոլոր իրավունքներն ու ազատությունները:** Սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, որն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաև վճռաբեկ վարույթում գնահատելու առումով¹,

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690 որոշման 8-րդ կետը:

- բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ **մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին**: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը¹,

- տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով: Տվյալ դատական ատյանի իրավասությունների շրջանակով են պայմանավորված այդ դատարանի կողմից ընդունվող դատական ակտերի բնույթն ու բովանդակությունը. յուրաքանչյուր դատական ատյանի կողմից ընդունվող ակտը հանդիսանում է տվյալ դատական ատյանի իրավասությունների և գործառնությունների կրողը: Հետևաբար, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դատական ատյանի գործառնության իրացման արդյունքում անձի իրավունքների դատական պաշտպանությունը նոր որակ է ստանում, յուրաքանչյուր դատական ատյանի կողմից իր գործառնությունների իրականացման արդյունքում ընդունված դատական ակտն իր ինքնուրույն դերակատարությունն ունի դատական պաշտպանության իրավունքի իրացման ողջ գործընթացում²,

- Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունների բնույթից բխում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերանայելիս, հատկապես այն դեպքում, երբ վերադաս դատական ատյանը փոփոխում է ստորադաս դատական ատյանի ակտը, վերադաս դատական ատյանների դատական ակտերը հանդես են գալիս **որպես դատական պաշտպանության իրավունքի իրացման նոր և ինքնուրույն արդյունք**³, ըստ էության ազդելով ստորադաս դատարանի դատական ակտի բովանդակության վրա և դատավարության կողմերի համար առաջացնելով նոր իրավական հետևանքներ³,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, **պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները**՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները⁴:

13. Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի հատուկ իրավական կարգավիճակին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- վճռաբեկության կարգով սահմանադրական իր վերահսկողական գործառնության իրականացմամբ, **ստորադաս դատարանների դատական**

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴՌ-719 որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936 որոշման 6-րդ կետը:

ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս Վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր¹,

- վճռաբեկ ատյանի մատչելիության իրավունքը պետք է ապահովվի՝ հաշվի առնելով վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վճռաբեկ դատարանում վարույթի առանձնահատկությունները²,

- վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկման դեպքում վերանայման իրավունքի իրացման հնարավորությունն իրավաչափորեն սահմանափակվում է վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակով և գործառնական դերով³,

- Վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ, այլ ստուգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը⁴,

- Վճռաբեկ դատարանը չի իրականացնում փաստերի անմիջական հաստատման լիազորություն և գործը վերանայում է նախորդ ատյանների դատարաններում հաստատված փաստերի շրջանակներում⁵:

14. Մինևոյն ժամանակ, դատական վերանայման վերընթաց նվազման սկզբունքի առնչությամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«1) վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն ամսանցվում է Սահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթադրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին արյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան՝ «որքան ավելի բարձր է դատական արյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառնություն է՝ արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմա-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ ՍԴՌ-690 որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-765 որոշման 12-րդ կետը:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի հունվարի 19-ի թիվ ՍԴՌ-852 որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՍԴՌ-849 որոշման 7-րդ կետը:

⁵ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՌ-1452 որոշման 4.1-րդ կետը:

կերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ապահովելու անհրաժեշտությունից,

3) գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը՝ ի տարբերություն գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման, կարող է հրականացվել միմյանցից զգալիորեն տարբերակված կանոնների համաձայն՝ այն հաշվով, որ պարզաճ կերպով ապահովվի գործն ըստ էության լուծող դատական ակտերի արդյունավետ և արդարացի քննությունը բոլոր դատական արյաններում, ուստի և կանխվի այդ հարցերով դատավարական շրջապարտությունը և դրա ազդեցությունը բուն արդարադատության արդյունավետության վրա:

Վերոգրյալի փաստակցությունից անդրադառնալով վերաքննիչ և վճռաբեկ արյաններում միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալների խնդրին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքում որդեգրված լուծումները՝ վերաքննիչ արյանում վիճարկվող միջանկյալ դատական ակտերի շրջանակը սահմանափակելը, իսկ վճռաբեկ արյանում՝ այդ սահմանափակ շրջանակը հավելյալ՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության առավել բարդ ընդհանուր նախադրյալների հաղթահարման պահանջով զուգորդելը, ինքնին համահունչ են Սահմանադրության հիշյալ հոդվածների փաստարարությանը¹:

15. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա արեղծված անկասի ու անսպառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, **եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից**²:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.6-րդ կետը:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Staroszczyk v. Poland* գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, կետ 125:

Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այն հանգամանքը, թե Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը որքանով է կիրառելի վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների առնչությամբ, **կախված է այդ դատարաններում վարույթի առանձնահատկություններից**, դիտարկվելով իր ամբողջության մեջ՝ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ կարգավիճակը¹:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ դերը՝ համապատասխան ընթացակարգն այստեղ կարող է ավելի ֆորմալ լինել հատկապես այն պարագայում, երբ վճռաբեկ վերանայմանը նախորդում է գործի քննությունն առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում, որոնք **իրավասու են անդրադառնալու նաև փաստի հարցերին**²:

16. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն փաստել է, որ սկզբունքորեն ստորադաս դատարանի ցանկացած որոշում պետք է ենթակա լինի վերանայման վերադաս դատարանի կողմից: Դրանից բացառությունները պետք է սահմանվեն օրենքով և համապատասխանեն արդարադատության ընդհանուր սկզբունքներին³: Մինևույն ժամանակ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն գտել է, որ երրորդ ատյանի դատարանների վերաբերյալ կարգավորումներ նախատեսելիս պետությունները պետք է հաշվի առնեն, որ **գործերն արդեն քննության են առնվել երկու դատարանների կողմից**⁴:

17. Հայաստանի Հանրապետությունում գործող եռաստիճան դատական համակարգի պայմաններում՝ մշտապես օրակարգային է եղել դատական ակտերի վերանայման ձևերից՝ վերաքննության և վճռաբեկության գործառությանի դերին համահունչ իրավակարգավորումներ նախատեսելը, քանի որ եռաստիճան դատական համակարգում անիմաստ է դատական ակտերը վերանայող երկու դատական ատյանների միաժամանակյա գոյությունը, եթե գործառությանի առումով դրանք չեն տարբերվում միմյանցից: Այդ պատճառով Հայաստանի Հանրապետու-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sialkowska v. Poland* գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 8932/05, կետ 104:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Levages Prestations Services v. France* գործով 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 23920/93, 44-48-րդ կետեր, *Brualla Gómez de la Torre v. Spain* գործով 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 26737/95, 34-39-րդ կետեր, *Meftah and Others v. France [GC]* գործով 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատներ թիվ 32911/96, 35237/97 և 34595/97, կետ 41:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկյալ համակարգերի և ընթացակարգերի ներդրման և դրանց գործունեության կատարելագործման մասին» 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) հանձնարարականի 1-ին կետը:

⁴ Տե՛ս նույն հանձնարարականի 7-րդ կետը:

թյունում դեռևս 1995 թվականի ՀՀ Սահմանադրության ընդունումից ի վեր, ընդհուպ՝ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի մակարդակով, քննարկման առարկա էր դարձել կամ Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների գործառնությանը դերի հստակեցումը՝ միմյանցից տարանջատելու համար, կամ անցումը երկաստիճան դատական համակարգի՝ երկրորդ ատյանում վերաքննության և վճռաբեկության լիազորությունները ներառելու պայմանով¹:

Հայաստանի Հանրապետությունում կատարված սահմանադրական փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանադիրն ընտրեց առաջին տարբերակը և որոշեց նախատեսել չափանիշներ՝ Վճռաբեկ և Վերաքննիչ դատարանների իրավական կարգավիճակը հստակեցնելու, վճռաբեկությունը վերաքննությունից սահմանազատելու համար:

Մասնավորապես, սահմանադիրն առաջին անգամ 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով Վճռաբեկ դատարանին բնորոշեց որպես օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող դատական ատյան, իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ որպես օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնող դատական ատյան:

Միևնույն ժամանակ, 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով՝ առաջին անգամ հստակեցվեց Վերաքննիչ դատարանի իրավական կարգավիճակը՝ ամրագրելով, որ այն ապահովում է ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ Առաջին ատյանի դատարանների դատական ակտերի վերանայման գործառնությունը:

Այսինքն՝ վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ Սահմանադրության վերջին խմբագրությամբ սահմանադիրը եռաստիճան դատական համակարգի պայմաններում ընդգծեց, որ՝

ա) դատական ակտերի վերանայման գործառնությամբ կենտրոնացված է վերաքննիչ դատական ատյանում,

բ) Վճռաբեկ դատարանն իր գործառնությամբ չի նույնանում Վերաքննիչ դատարանի հետ, այն ունի հատուկ իրավական կարգավիճակ, ապահովում է իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը և վերացնում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակված և Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2015 թվականի մարտի 14-ին հավանության արժանացած՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014:

18. Նախորդ կետում մեջբերված դատական ակտերի վերանայման հայրենական մոդելի զարգացման պայմաններում հստակեցվեց ոչ միայն Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների միջև ձևավորված գործառութային կապը, այլ նաև դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքը: Վերջինս արտացոլում է դատական ատյանների աստիճանակարգությանը համապատասխան դատական վերանայման ծավալի և ստորադաս դատական ատյանի համեմատ վերադաս դատական ատյանի լիազորությունների նվազումը¹: Այսինքն՝ դատական ատյանի բարձրության աստիճանը ուղիղ համեմատական է դատական վերանայման ծավալին. որքան բարձր է դատական ատյանը, այնքան դատական վերանայման առարկան առավել սահմանափակ է, ինչպես փաստել է նաև Սահմանադրական դատարանը²:

Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների գործառութային տարբերությունների հաշվառմամբ Սահմանադրական դատարանը քննարկվող սկզբունքի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Սահմանադրությունն էապես տարբերակում է վճռաբեկ և վերաքննիչ արյանների դատարանների գործառույթները և կարգավիճակը, ինչը չի կարող չանդրադարձնալ նաև դատական ակտերի, հարկապես՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալի վրա, և որ ամեն դեպքում Սահմանադրությամբ ապահովված՝ վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի ուժով դրանք չեն կարող չարտբերվել միմյանցից, հետևապես՝ միջանկյալ դատական ակտերի և հարկապես կալանավորման իրավաչափության վերաբերյալ դատական ակտերի առնչությամբ վերաքննիչ դատարանի իրավասության ծավալն ավելին է, քան Վճռաբեկ դատարանինը: Այս տարբերությունը կանխորոշված է Սահմանադրությամբ ամրագրված՝ Վճռաբեկ դատարանի գործառույթներից և կարգավիճակից ածանցվող իրավական նախադրյալներով, որոնք էապես ավելի բարձր շեմ են սահմանում վճռաբեկ բողոքի ընդունելիության համար, ինչն էլ, իր հերթին, կանխորոշում է Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի վերանայման ծավալը»³:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ պետք է փաստել, որ դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի համատեքստում, վերադաս դատական ատյանը, լինելով սահմանափակված վիճարկվող դատական ակտում քննարկված հարցերի շրջանակով՝ չի կարող իր վերստուգիչ լիազորությունն իրացնելիս անդրադարձնալ

¹ Տե՛ս *mutatis mutandis* Ռ.Արշալույսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի որոշման 21-րդ կետը, որի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը՝ որպես վերանայող ատյան, գործի էության վերաբերյալ չի կարող ավելի լայն լիազորություններ ունենալ, քան առաջին ատյանի դատարանը:

² Տե՛ս սույն որոշման 14-րդ կետը:

³ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշման 4.6-րդ կետը:

ստորադաս դատարանում քննարկման առարկա չդարձված հանգամանքներին: Այլ կերպ, վերադաս դատական ատյաններում դատական վերանայման առարկան սահմանափակված է ստորադաս դատարաններում քննարկված հարցերով: Օրինակ՝ եթե Առաջին ատյանի դատարանը մերժել է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը՝ հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, իսկ Վերաքննիչ դատարանն էլ օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ իր հերթին հաստատելով հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայությունը, ապա Վճռաբեկ դատարանը, ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերի հետ չհամաձայնելու և հանցանքի կատարման հիմնավոր կասկածի առկայությունը հաստատված համարելու դեպքում, չի կարող քննարկման առարկա դարձնել կալանավորման հիմքերի առկայության հարցը և կայացնել վերջնական որոշում: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով դատական վերանայման առարկայի ծավալով չի կարող քննարկել կալանավորման հիմքերի առկայության հարցը, որը չի քննարկվել ստորադաս դատական ատյաններում¹: Հակառակ մոտեցումը կհանգեցնի Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի խախտմանը: Ավելին, կխախտվեն նաև անձի՝ կալանավորման հիմքերի առկայության մասով դատարանի դիրքորոշումների օրինականությունը դատական ստուգման ենթարկելու մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները:

Հետևաբար, եռաստիճան դատական համակարգի պայմաններում, որտեղ նաև իրավունքի զարգացման ներկայիս ժամանակաշրջանում հստակ տարանջատվել են դատական ակտերի վերանայման ձևերը, պետք է արձանագրել, որ դատական ատյաններն իրենց ունեցած գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված չեն կարող «փոխարինել» միմյանց (վերոնշյալ օրինակում Վճռաբեկ դատարանը, կալանավորման հիմքերը քննարկելու դեպքում, հանդես կգար որպես փաստեր հետազոտող առաջին ատյանի դատարան, ինչը համահունչ չէր լինի Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Էդգար Եղիազարյանի* վերաբերյալ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԼԾԴ/0017/06/16 որոշումը: Այդ գործով ստորադաս դատարանները մերժել էին Է.Եղիազարյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նախաքննական մարմնի միջնորդությունը՝ հանցանքի կատարման հիմնավոր կասկածի բացակայության հիմքով, ինչի հետ Վճռաբեկ դատարանը չհամաձայնելով որոշում էր կայացրել ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու մասին, քանի որ կալանավորման այլ պայմանները և հիմքերը քննարկման առարկա չէին դարձվել ստորադաս դատական ատյաններում:

կարգավիճակին, ինչպես նաև վճռաբեկ վարույթին բնորոշ առանձնահատկություններին, որոնց մասին նշել է նաև Սահմանադրական դատարանը¹: Բացի այդ, կայացված որոշումը եռաստիճան դատական համակարգի պայմաններում բողոքարկման ենթակա լինել չէր կարող):

Ուստի, դատական ակտերի վերանայման կառուցակարգը գործադրելիս պետք է պաշտպանել անձի՝ դատական մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները, ինչպես նաև ապահովել Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների միջև ձևավորված գործառույթային կապի և դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումը: Այլ կերպ, անձի հիմնարար իրավունքների պաշտպանության նկատառումներից ելնելով՝ դատական ակտերի վերանայման կառուցակարգում հետևողականորեն պետք է երաշխավորել վերադատության կարգով դատական ակտերի օրինականության վերահսկման սկզբունքի անխախտելիությունը:

II. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը՝ նոր քննության ուղարկելու իրավասությունը՝ որպես դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատական մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների) արդյունավետ իրականացման երաշխիք:

19. ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «*Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր*»:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ «*Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ*»:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ «*Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, (...)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում*»:

¹ Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

21. Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործելով «նոր դատական ակտ» ձևակերպումը՝ չի հստակեցրել դրա դրսևորման ձևերը, ինչն ըստ էության գործնականում հանգեցրել է իրավական անորոշության՝ դրա մեկնաբանման առումով: Այդ համատեքստում հարկ է նկատի ունենալ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ իրավական անորոշությունը դատական պրակտիկայում հաղթահարելու վերաբերյալ: Մասնավորապես այն, որ՝

- շատ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է,**

- նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ **նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով,**

- չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: **Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է:**³

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում, որոշ դեպքերում, գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու ձևավորված իրավա-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՌ-997 որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՌ-1270 որոշման 7-րդ կետը,

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *The Sunday Times v. the United Kingdom* գործով 1979 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49, *Busiuc v. Moldova* գործով 2004 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 61513/00:

կիրառ պրակտիկան, Վճռաբեկ դատարանը, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով, «Արցախբանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ գործով 2011 թվականի մայիսի 11-ի որոշմամբ իրավական դիրքորոշում ձևավորեց այն մասին, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված լիազորություններով¹:

Արդյունքում, անձի դատական մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների միջև ձևավորված գործառնության կապի, դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքի արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով, ինչպես մինչև 2011 թվականը, այնպես էլ դրանից ի վեր Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում ձևավորվել էր կայուն իրավակիրառ պրակտիկա՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս ղեկավարվել գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերանայելիս օրենսդրի կողմից սահմանված լիազորություններով, այդ թվում՝ գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու առումով:

22. Սակայն, Սահմանադրական դատարանը 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշմամբ արտահայտեց հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Տ]արանջատելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում **նոր դատական ակտեր ընդունելու պահանջով**, օրենսդիրը հերասպնդել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ **դատավարական շրջապարույրը կանխելու**, ընդամին՝ այդ հարցերով **վճռաբեկ արյանում վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու** և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս կարգավորումն ունի կանխարգելիչ բնույթ և ուղղված է **վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի** րեասանկյունից գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու հիմնական գործառնության երաշխավորված ապահովմանը, ինչը հնարավոր չի լինի իրականացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման դեպքում:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով 2011 թվականի մայիսի 11-ի որոշումը, կետ 11:

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման իրավական հնարավորությունը, որը կարող էր առկա լինել Վճռաբեկ դատարանի առավել ընդգրկուն լիազորությունների օրենսդրական ամրագրման դեպքում, կարող էր էականորեն ազդել ինչպես ստորադաս դատարաններում, այնպես էլ նույն վճռաբեկ արյանում րվյալ գործի ըստ էության քննության վրա՝ խաթարելով դրա արդյունավետությունը: Ավելին՝ Սահմանադրական դատարանը գրնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերն անսահմանափակ վերանայելու հնարավորությունն օրենսդրորեն չկանխելը կարող էր վրանգել արդարադատության բուն գործառույթը, քանի որ անհնարին կլիներ կանխարեսել միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների իրական կամ հնարավոր ազդեցությունը գործի ըստ էության լուծման վրա, ուստի՝ վերջնարդյունքում կամ դատաքննության րնողությունը պետք է անհարկի երկարաձգվեր, կամ դատարանները միջանկյալ դատական ակտերի քննությանը պետք է հարկադրված լինեին անդրադառնալ գործով ըստ էության որոշում կայացնելուց հետո, ինչն անթույլարելի կլիներ»¹:

Միևնույն ժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ընգծել է. «(...) [Օրենսդիրը րարանջարել է կալանքի ձևով անձնական ազատությունից զրկելու առնչությամբ մինչդատական վարույթի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգերը րարբեր դատական արյաններում: Եթե առաջին արյանի դատարանն ամբողջ ծավալով պետք է նախապես վերահսկի կալանավորման իրավաչափությունը՝ այդ հարցով կայացնելով սկզբնական որոշում, ապա վերաքննիչ և վճռաբեկ արյանների դատարանները պետք է հետազայում որոշեն արդեն դատական ակտի իրավաչափության հարցը՝ համապատասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում»²:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթներին Սահմանադրական դատարանը շեշտել է. «Որևէ դատարանի կողմից իրավունքի խախտումը փաստելը՝ առանց այն վերացնելու, նշանակում է չիրականացնել արդարադատություն, մինչդեռ, եթե դատարանը կոչված է վերանայելու ստորադաս դատարանների դատական ակտերը (իսկ Վճռաբեկ դատարանի համար այդ պահանջն ուղղակիորեն սահմանված է Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում), ապա չի կարող չիրականացնել արդարադատություն, այսինքն, նաև չվերացնել հիմնական կամ այլ իրավունքների և

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՈ-1459 որոշման 4.1-րդ կետը:

² Տե՛ս նույն որոշման 4.2-րդ կետը:

ազատությունների խախտումները, հարկապես եթե արձանագրում է դրանք: Ակնհայտ է, որ որևէ նման օրենսդրական կառուցակարգ կամ դատական պրակտիկա հակասության մեջ կմերձեն Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, ընդ որում, նման դեպքերում երաշխավորված չեն լինի նաև արդար դատաքննության երաշխիքները»¹ (ընդգծումը՝ Վճռաբեկ դատարանի):

23. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում այն պնդումը, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը որպես կանոն պետք է ավարտվի Վճռաբեկ դատարանում՝ խնդրո հարցի կապակցությամբ վերջնական որոշում կայացնելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներով:

Սակայն նշված մոտեցումը բացարձակ բնույթ կրել չի կարող, քանի որ գործնականում որոշ դեպքերում թեև քննարկվող հարցի կապակցությամբ հնարավոր է լինում ձևավորել վերջնական իրավական դիրքորոշում, սակայն օբյեկտիվորեն անհնարին է լինում կայացնել վարույթի հետագա ընթացքը բացառող վերջնական որոշում, և Սահմանադրական դատարանի կողմից մատնանշված՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման միակ ճանապարհը դառնում է գործը նոր քննության ուղարկելը, որի միջոցով միայն կարող են վերականգնվել անձի խախտված իրավունքներն ու ազատությունները:

Այլ կերպ, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը վերանայելիս, Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության ուղարկելու իրավասության բացակայության պարագայում, օբյեկտիվորեն զրկված կլինի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալների ապահովման հնարավորությունից, որի կարևորության մասին նշել է Սահմանադրական դատարանը: Ավելին, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը վերանայելիս, **Վճռաբեկ դատարանը, գործը նոր քննության չուղարկելու պարագայում, որոշ գործերով ստիպված կլինի փաստել իրավունքի խախտումը՝ առանց այն վերացնելու**, ինչն ըստ Սահմանադրական դատարանի՝ կնշանակի չիրականացնել արդարադատություն, ինչն էլ հակասության մեջ կմտնի ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի երաշխիքների հետ:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտի օրինականությունը վերանայելիս վերջնական որոշում կայացնելու և անձի իրավունքի խախտումը վերացնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

¹ Տե՛ս նույն որոշման 4.4-րդ կետը:

որոշ դեպքերում անիրագործելի կլինի՝ այդ կապակցությամբ վճռաբեկ բողոքի առարկայի բացակայության պատճառով: Այսպես.

Սահմանադրական դատարանն իրավացիորեն նշել է, որ վերաքննիչ և վճռաբեկ առյանների դատարանները պետք է որոշեն դատական ակտի իրավաչափության հարցը՝ համապատասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում: Սակայն գործնականում, որոշ դեպքերում վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է լինում բացառապես ընթացակարգային բնույթի խախտումների վերաբերյալ ներկայացվող հիմնավորումներով՝ առանց անդրադառնալու ստորադաս դատարաններում ըստ էության վիճարկվող խնդրի իրավաչափության հարցին: Վերջինը պայմանավորված է այն հանգամանքով, որ բողոքաբերը դիմելով Վճռաբեկ դատարան՝ պահանջում է արձանագրել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված իր իրավունքի ընթացակարգային բնույթի խախտման փաստը և այն վերացնելու նպատակով գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, որտեղ հնարավոր կլինի ըստ էության քննության առնել իր կողմից վիճարկվող խնդրի իրավաչափության հարցը: Արդյունքում, Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններով, օբյեկտիվորեն գրկված է լինում վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից: Հակառակ պարագայում, իրավունքի խախտման փաստն արձանագրելով գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերանայման վարույթն ավարտելու դեպքում, անձը գրկված կլինի ստորադաս դատարաններում վիճարկվող խնդրի իրավաչափությունն այլևս քննարկման առարկա դարձնելու հնարավորությունից, ինչը *prima facie* կվտանգի նրա արդար դատաքննության իրավունքը: Այսինքն՝ տվյալ պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «նոր դատական ակտ» եզրույթը նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով որպես «վերջնական որոշում» մեկնաբանելը համահունչ չի լինի վկայակոչված սահմանադրաիրավական երաշխիքներին:

Վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ **Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերով անձի իրավունքի խախտումը փաստելով կարող է այն արդար դատաքննության երաշխիքներին համահունչ վերականգնվել ոչ այլ կերպ, քան գործը նոր քննության ուղարկելու միջոցով:**

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝
- Հետաքննիչի՝ 2016 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ դիմող Հրայր Հովսեփյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի

բացակայության հիմքով¹,

- որպես դիմողի ներկայացուցիչ հանդես եկող փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքը Դատախազի՝ 2018 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ ևս մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ²,

- վերոնշյալ որոշումների դեմ Ռ.Ահարոնյանի բողոքն Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ մերժել է՝ վերջինիս՝ բողոք բերելու իրավասություն չունենալու պատճառաբանությամբ՝ **առանց ըստ էության քննարկման առարկա դարձնելու Ռ.Ահարոնյանի բողոքը և անդրադառնալու վիճարկվող որոշումների իրավաչափության հարցին**³,

- Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ (առանց Հետաքննիչի և Դատախազի որոշումների իրավաչափության հարցը բարձրացնելու) ներկայացված վերաքննիչ բողոքը՝ **ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու պահանջով**, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ **թողնվել է առանց քննության՝ բողոք բերելու իրավասություն չունենալու այդ նույն պատճառաբանությամբ**⁴,

- փաստաբան Ռ.Ահարոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ ստորադաս դատարանների կողմից անհիմն կերպով Հետաքննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշումների իրավաչափությունն **ըստ էության քննության չառնելու**, Առաջին ատյանի դատարանի եզրահանգման իրավաչափությունը Վերաքննիչ դատարանի կողմից **դատական ստուգման չենթարկելու և նույն պատճառաբանությամբ** վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման դեմ, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ⁵,

- **վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է բացառապես վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից քննության չառնելու իրավաչափության ստուգման հիմնավորումներով**⁶:

25. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-23-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ Վճռաբեկ դատարանը մի կողմից՝ **սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով**, մյուս կողմից՝ **ապահովելով բողոքաբերի դատական մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրա-**

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը:

կանացման երաշխիքները՝ օբյեկտիվորեն զրկված է իրավունքի ենթադրյալ խախտման փաստի արձանագրման պայմաններում գործով վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից:

Կոնկրետ դեպքում, գործը ստորադաս դատարան նոր քննության չուղարկելու պարագայում անձի իրավունքի ենթադրյալ խախտումը փաստելուց զատ անհնարին կլինի այն գործնականորեն վերականգնելը: Մասնավորապես, չի ապահովվի Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն ըստ էության քննարկման առարկա դարձնելով Վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքը: Ավելին, վճռաբեկ բողոքի համապատասխան առարկայի բացակայության պայմաններում, բողոքաբերը կզրկվի նաև Հետաքննիչի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և Դատախազի՝ բողոքը մերժելու մասին որոշումների իրավաչափությունը դատական ստուգման ենթարկելու հնարավորությունից, որպիսի մոտեցումն անհամատեղելի կլինի դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների հետ:

26. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ներկայումս Վճռաբեկ դատարանի վարսություն են գտնվում գործն ըստ էության չուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքներ, որոնցից յուրաքանչյուրով ստեղծված իրավիճակը, ինչպես կոնկրետ գործի դեպքում է, լրացուցիչ հիմնավորում է սույն որոշմամբ բարձրացվող սահմանադրաիրավական խնդիրը: Այսպես՝

- թիվ ԿԴ1/0120/12/17 գործը, որով վճռաբեկ բողոքի հեղինակը խնդրում է գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, քանի որ ստորադաս դատարանները քննարկման առարկա են դարձրել միայն դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը՝ առանց անդրադառնալու միջնորդագրում նշված՝ նրա նկատմամբ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցին: Նշված գործով վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը ստորադաս դատարանների կողմից քննարկման առարկա դարձնելու անհրաժեշտության հիմնավորումներով,

- թիվ ԵԴ/0853/06/18 գործը, որով վճռաբեկ բողոքի հեղինակը ներկայացրել է փաստարկներ այն մասին, որ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն առանց քննության է թողել իր վերաքննիչ բողոքը՝ հանձնման համար կալանավորման մասին որոշման բողոքարկման ժամկետ դիտարկելով հրապարակման պահից հինգ օրը, այնինչ, ըստ բողոքաբերի՝ այդ որոշումը ենթակա էր բողոքարկման տասնօրյա ժամկետում: Բողոքի հեղինակը, ի թիվս այլնի, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության,

- թիվ ԵԴ/0049/11/19 գործը, որով վճռաբեկ բողոքի հեղինակը ներկայացրել է փաստարկներ այն մասին, որ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն առանց քննության է թողել իր վերաքննիչ բողոքը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Մինչդեռ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է հաշվարկել բողոքարկման ժամկետը, քանի որ այն լրանում էր ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը: Նշված գործով վճռաբեկ բողոքի առարկան սահմանափակված է Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոք բերելու ժամկետը սխալ հաշվարկելու վերաբերյալ հիմնավորումներով և բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ստորադաս դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության,

- թիվ ԵԴ/0605/11/18 գործը, որով վճռաբեկ բողոքի հեղինակը ներկայացրել է փաստարկներ այն մասին, որ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն մերժել է իր վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը՝ բողոքին ներկայացվող պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Բողոքի հեղինակը հղում է կատարել Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի թիվ ՍԴՈ-1420 որոշմանը, որով ՀՀ Սահմանադրությանը հակասող էր ճանաչվել վերաքննիչ բողոքին ներկայացվող ձևական և իրավունքի իրացման համար էական խոչընդոտ չհանդիսացող պահանջներին անհամապատասխանության դեպքում բողոք ներկայացրած անձի կողմից այն շտկելու և կրկին վերաքննիչ դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը բացառող քրեադատավարական կարգավորումը: Տվյալ պարագայում բողոքի հեղինակը նշել է, որ ձևական նկատառումներով, այն է՝ բողոքը դատարանի նախագահին հասցեագրված լինելու պատճառով, Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելը մերժելն անհամաչափորեն սահմանափակել է իր դատական մատչելիության իրավունքը և ներկայացնելով համապատասխան փաստարկներ՝ խնդրել է բեկանել ստորադաս դատարանի որոշումն ու գործն ուղարկել նույն դատարան նոր քննության, որի միջոցով միայն կարող է ապահովվել Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման կատարումը,

- թիվ ԵԴ/0281/11/18 գործը, որով վճռաբեկ բողոքի հեղինակը ներկայացրել է փաստարկներ այն մասին, որ Վերաքննիչ դատարանն ըստ էության չքննարկելով ներկայացված վերաքննիչ բողոքի փաստարկները՝ անհիմն կերպով մերժել է այն՝ գտնելով, որ դատախազը բողոք բերելու պատշաճ սուբյեկտ չի հանդիսանում: Բողոքաբերն իր վճռաբեկ բողոքում չանդրադառնալով գործի էությանը՝ փաստարկել է, որ վերաքննիչ բողոք բերած դատախազը հանդիսացել է բողոքարկման իրավունք ունեցող պատշաճ սուբյեկտ և Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննարկման առարկա դարձներ ներկայացված բողոքը,

- թիվ ԵԴ/0063/15/18 և ԵԴ/2640/07/18 գործերը, որոնցով ներկայաց-

ված վճռաբեկ բողոքներով պաշտպանը մի դեպքում վիճարկում է Վերաքննիչ դատարանի կողմից բողոքարկման ժամկետի սխալ հաշվարկման պատճառով Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը, մյուս դեպքում՝ նույն բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդությունն Առաջին ատյանի դատարանի կողմից մերժելու մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը: Նշված գործերով դատական վերանայման ծավալը սահմանափակված է բողոքարկման ժամկետի վերաբերյալ փաստարկներով:

Բացի այդ, հարկ է նշել, որ գործնականում լինում են դեպքեր, երբ օրինակ՝ պաշտպանության կողմը կամ գործով շահագրգիռ անձինք ստորադաս դատարաններում մասնակից չեն դարձվում իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող գործի քննությանը՝ պատշաճ ծանուցված չլինելու պատճառով: Կամ, բողոքի կապակցությամբ կազմված նյութերում առկա չեն լինում գործի էությանը վերաբերող անհրաժեշտ նյութեր, որոնք նաև չեն հետազոտվել Վերաքննիչ դատարանում: Նման պայմաններում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ կենսագործումն անհնարին է դառնում ապահովել առանց գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու¹:

27. Նախորդ կետում մեջբերված իրավիճակներում Վճռաբեկ դատարանը մի կողմից՝ **սահմանափակված լինելով վճռաբեկ բողոքի առարկայով և սահմաններով**, մյուս կողմից՝ **ապահովելով բողոքաբերների դատական մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքները**, օբյեկտիվորեն գրկված է լինելու միայն իրավունքի ենթադրյալ խախտման փաստի արձանագրմամբ գործով վերջնական որոշում կայացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ դեպքերում գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասությունը հանդիսանում է դատական վերանայման իրավունքի իրացման նախապայման և արդար դատաքննության իրավունքի (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիք:

III. Սահմանադրական դատարանի որոշումները՝ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացման համատեքստում.

¹ Տե՛ս 'ս Վճռաբեկ դատարանի՝ *Նոյ Մուսայելյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԿԳԻ/0007/06/12 որոշումը, *Պյեր Տան Մուրադյանի* գործով 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԵԿԳ/0143/11/14 որոշումը:

28. ՀՀ Սահմանադրական դատարանը, հանդիսանալով սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին, կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը: Սահմանադրական դատարանի որոշումները մշտապես կարևոր դերակատարություն են ունեցել Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովման, սահմանադրական արժեքների արմատավորման, միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման գործում՝ պայմանավորելով դրանց ուրույն տեղն իրավահամակարգում:

29. Վենետիկի հանձնաժողովն անդրադառնալով Սահմանադրական դատարանի որոշումներում տրվող մեկնաբանությանը՝ դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հստակ օրենսդրական կամ նույնիսկ սահմանադրական կարգավորումը, որը պարտավորեցնում է բոլոր պետական մարմիններին, այդ թվում՝ դատարաններին, հետևել Սահմանադրության մեկնաբանությանը՝ տրված Սահմանադրական դատարանի կողմից, հստակության առանցքային տարր է Սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների միջև հարաբերություններում և կարող է ծառայել հիմք՝ անհատների կողմից դատարանների առջև իրենց իրավունքները ներկայացնելու համար¹:

Վենետիկի հանձնաժողովն իր մեկ այլ եզրակացությունում նշել է, որ Սահմանադրական դատարանի որոշումները պետք է լինեն հասկանալի և չպետք է լինի լրացուցիչ պարզաբանման կարիք: **Այնուամենայնիվ, կարող է պատահել, որ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ չկարողանա լուծել սահմանադրական խնդիրը կամ ստեղծի նոր խնդիր: Այդ դեպքերում նոր որոշում պետք է կայացվի, բայց ոչ բացատրություն նախորդ որոշման²:**

30. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատական ակտերի կատարման ընթացքում դատավորների դերի մասին» կարծիքի համաձայն՝ պարտադիր ուժ ունեցող դատական որոշումների արդյունավետ կատարումն իրավունքի գերակայության հիմնարար տարրն է: Էական է՝ ապահովել հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Դատարանների անկախությունը և արդար դատաքննության իրավունքը (ՄԻԵԿ-ի 6-րդ հոդված) անօգուտ են, եթե դատական ակտը չի կատարվում³:

¹ Տե՛ս CDL-PI(2017)008, European Commission For Democracy Through Law (Venice Commission), Compilation of Venice Commission opinions, reports and studies on Constitutional justice, 18 December 2017, կետ 8.6:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատական ակտերի կատարման ընթացքում դատավորների դերի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 13 (2010) կարծիքը, կետ 7:

Միննույն ժամանակ, նույն կարծիքում ընդգծվում է, որ **կատարումը պետք է իրականացվի հիմնարար իրավունքներին և ազատություններին համապատասխան** (ՄԻԵԿ-ի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներ, անձնական տվյալների պաշտպանություն և այլն)¹:

31. Սույն որոշման 28-30-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՌ-1459 որոշմամբ ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերով գործը նոր քննության ուղարկելու իրավասության բացակայության պայմաններում վտանգված են անձի արդար դատաքննության (դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման) երաշխիքները, որոնք կարևորվել են նաև Սահմանադրական դատարանի կողմից վերոնշյալ նույն որոշմամբ: Մասնավորապես, հիշյալ որոշմամբ տրված մեկնաբանությամբ՝ գործը նոր քննության ուղարկելու իրավասության բացակայության պայմաններում, խեղաթյուրվում է դատարանի մատչելիության, դատական արդյունավետ պաշտպանության իրավունքի էությունը՝ հանգեցնելով այդ իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ: Տվյալ իրավիճակում չի երաշխավորվում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորությունը՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի և խնդիրների իրացում, չի ապահովվում իրավունքի գերակայությունը, հետևաբար և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: Այսինքն՝ անձը զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից: Արդյունքում, առաջացել է իրավական փակուղի, որը պետք է հաղթահարվի՝ նշված երաշխիքների արդյունավետ կենսագործուն ապահովելու նպատակով:

32. Միննույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանի վերը վկայակոչված որոշման կայացումից հետո գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինականությունը ստուգելիս ոչ միայն իրավունքի խախտման փաստն արձանագրելու, այլ նաև անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումներով Վերաքննիչ դատարանում շարունակվում է գործը նոր քննության ուղարկելու՝ նախկինում ձևավորված կայուն իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես, հարկ է վկայակոչել՝

- Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/0095/06/19 որոշումը, որտեղ դատարանը փաստել է, որ դիմել է

¹ Տե՛ս նույն կարծիքը, կետ 8:

Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի և 394-րդ հոդվածի (որը պարունակում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համանման իրավակարգավորում) Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծելու խնդրանքով, սակայն Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 21-ի թիվ ՄԴԱՈ-54 աշխատակարգային որոշմամբ գործի քննության ընդունումը մերժել է: Այդ պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ. «(...) *կյուրը նույն դատարան այլ կազմով նոր քննություն ուղարկելով մտրեցումը չի հակասում ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՈ-1459 որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումներին, քանի որ սույն գործով ՀՀ վերաքննիչ դատարանը դիմել էր սահմանադրական դատարան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասի և 394-րդ հոդվածի Սահմանադրականությանը համապատասխանության հարցը լուծելու խնդրանքով նկատի ունենալով, որ հիշյալ որոշման մեջ սահմանադրական դատարանի ձևավորած մտրեցումների պայմաններում, ըստ Վերաքննիչ դատարանի, ստաջացրել էր իրավական անորոշություն, իսկ դատարանը հայտնվել էր անելանելի վիճակում, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը վարույթ չէր ընդունել Վերաքննիչ դատարանի դիմումը և, ի թիվս այլնի, նշել էր, որ «Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև ձևավորված դատական պրակտիկային, օրենսդրական կարգավորումներին և դրանց զարգացումներին՝ արտահայտելով կոնկրետ իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումների, ինչպես նաև վերաբերելի կարգավորումների հիման վրա դատարանները պետք է ձևավորեն համապատասխան դատական պրակտիկա»:*

Ման պայմաններում, երբ Սահմանադրական դատարանը, ըստ էության, հարցի լուծումը թողնում է դատական պրակտիկայի վրա՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պետք է ղեկավարվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումներով և լուծել կոնկրետ սույն բողոքի վերջնական ընթացքը, այն է՝ բեկանել դատական ակտը և նյութն ուղարկել նույն դատարան քննիչի միջնորդությունը ՀՀ Սահմանադրությանը, ՄԻԵԿ-ին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԿ-ի կողմից ձևավորած իրավական դիրքորոշումներին և չափանիշներին համապատասխան այլ կազմով քննարկելու և վերջնական եզրահանգման գալու համար»:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

- Վերաքննիչ դատարանը մեկ այլ՝ 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ ԵԴ/0312/06/19 որոշմամբ ևս գործն ըստ էության չլուծող դատական ակտը բեկանել է և գործն ուղարկել նոր քննության: Այսպես, Վերաքննիչ

դատարանի որոշման համաձայն՝ «(...) հանցագործություն առերևույթ կատարած լինելու հիմնավոր կասկածը հաստատված չհամարելով և, միևնույն ժամանակ, կալանավորման հիմքերի առկայության հարցը քննարկման առարկա չհարձնելով՝ Առաջին արյանի դատարանը չէր կարող այդ հարցում հանգել հիմնավորված հետևության:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն էլ իր հերթին իրավասու չէ քննարկման առարկա հարձնել կալանավորման հիմքերի առկայության հարցը, քանի որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէ որոշում կայացնելու գործի լուծման համար առանցքային նշանակություն ունեցող այն հարցերի առնչությամբ, որոնց վերաբերյալ առաջին արյանի դատարանը գրկված է եղել հիմնավորված հետևության գալու հնարավորությունից: Հակառակ դեպքում, Վերաքննիչ դատարանը կարանձնի առաջին արյանի դատարանի դերակատարությունը, ինչն անթույլարբելի է, և կհանգեցնի ինչպես օրինականության սկզբունքի, այնպես էլ անձի՝ իր իրավունքների և ազատության վերաբերյալ կայացված դատական ակտը վերադաս դատական արյանի կողմից վերանայման հիմնարար իրավունքի անհամաչափ սահմանափակման»: Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք, որն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Վերոնշյալ դեպքերում Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս փաստել է, որ ղեկավարվում է անձի՝ դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքների արդյունավետ իրականացման երաշխիքների ապահովման անհրաժեշտությամբ և ներկայումս Վճռաբեկ դատարանը, ինչպես վերոնշյալ գործերով, այնպես էլ սույն գործով պետք է իրավական գնահատման արժանացնի այդպիսի անհրաժեշտությունը՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունը նաև վճռաբեկ վարույթում գնահատելու համատեքստում: Հենց այդպիսի իրավիճակն էլ պայմանավորում է Սահմանադրական դատարանի դիմելու անհրաժեշտությունը՝ առաջացած սահմանադրաիրավական խնդիրը հաղթահարելու ակնկալիքով:

33. Այսպիսով, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՄԴՌ-1459 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է դիմել Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածում, 415-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընթացակարգերի և կառուցակարգերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցն այնքանով, որքանով գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և

սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի թիվ ՍԴՌ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջակատրեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, գրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից:

34. Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր կասկածներ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի, 415-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության առնչությամբ, և գտնում է, որ սույն գործի լուծումը հնարավոր է միայն այդ իրավանորմերի կիրառման միջոցով: Ուստի հաշվի առնելով, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ՀՀ սահմանադրական դատարանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի վարույթը կասեցնել և դիմել Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմող Հրայր Սվյատոսլավի Հովսեփյանի փաստաբան Ռ.Ահարոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնել:

2. Դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածում, 415-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ընթացակարգերի և կառուցակարգերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 79-րդ հոդվածներին, 171-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցն այնքանով, որքանով գործն ըստ էության չլուծող դատական ակտի իրավաչափությունը բացառապես վճռաբեկ բողոքի առարկայի և սահմանների շրջանակում ստուգելիս Վճռաբեկ դատարանը, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 7-ի

թիվ ՍԴՈ-1459 որոշմամբ վերոնշյալ քրեադատավարական նորմերի հետ անմիջականորեն փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասին տրված մեկնաբանության պայմաններում, առանց գործը նոր քննության ուղարկելու իրավասության, գրկված է վերջնական որոշում կայացնելու և իրավունքի խախտումը փաստելով այն վերացնելու հնարավորությունից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0047/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահուությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Գևորգ Գազիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի կայագործի զինվորական դատախազությունում 2017 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90201817 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մայիսի 10-ի որոշմամբ Գևորգ Գազիկի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով:

2017 թվականի հունիսի 14-ին Գ.Սարգսյանի վերաբերյալ թիվ 90201817 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր

իրավասության առաջին ատյանի դատարան, որին շնորհվել է ԵԱԴԴ/0047/01/17 համարը:

2. ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայագորային քննչական բաժնում 2017 թվականի հուլիսի 7-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 92200317 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ Գ.Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի սեպտեմբերի 19-ին Գ.Սարգսյանի վերաբերյալ թիվ 92200317 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան), որին շնորհվել է ԵԱԴԴ/0080/01/17 համարը:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ Գ.Սարգսյանի վերաբերյալ թիվ ԵԱԴԴ/0047/01/17 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, և թիվ ԵԱԴԴ/0080/01/17 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, միացվել են մեկ վարույթում՝ ԵԱԴԴ/0047/01/17 համարով:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, և յուրաքանչյուր դրվագով դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունիսի 18-ի որոշմամբ պաշտպան Ա.Դավթյանի վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճիռը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

5. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Գ.Սարգսյանին թիվ 90201817 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, մեղադրանք է առաջադրվել այն արարքների համար, որ «/Ն/ա, հանդիսանալով ՀՀ ՌԶ 1032 զորամասի հասարակական պահպանության 2-րդ գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի, 2-րդ մարտական խմբի հրաձիգ, պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, 29.03.2017 թվականին՝ ժամը 10:00-ից, առանց հարգելի պարճառների ժամանակին ծառայության չի ներկայացել, իսկ 04.04.2017 թվականին՝ ժամը 17:50-ին, ինքնակամ ներկայացել է ծառայության վայր՝ ծառայությունից բացակայելով երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավել օրոհությամբ:

Բացի այդ, Գևորգ Գագիկի Սարգսյանը 05.04.2017 թվականին՝ ժամը 10:00-ից, առանց հարգելի պարճառների ժամանակին ծառայության չի ներկայացել, 06.04.2017 թվականից մինչև 20.04.2017 թվականը գրնվել է հանգստի մեջ, իսկ 06.05.2017 թվականին՝ ժամը 14:00-ին, ինքնակամ ներկայացել է ծառայության վայր՝ ծառայությունից բացակայելով երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավել օրոհությամբ»¹:

Գ.Սարգսյանին թիվ 92200317 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ «/Ն/ա, հանդիսանալով ՀՀ ՌԶ 1032 զորամասի հասարակական պահպանության 2-րդ գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի 2-րդ մարտական խմբի հրաձիգ, պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային, պարտավոր լինելով աշխատանքային օրերին ժամը 10:00-ին ներկայանալ ծառայության, 29.05.2017 թվականին՝ ժամը 10:00-ից մինչև 31.05.2017 թվականը ժամը 15:10-ը, 01.06.2017 թվականին՝ ժամը 10:00-ից մինչև 18:50-ը և 27.06.2017 թվականը ժամը 10:00-ից մինչև ժամը 18:50-ն ընկած ժամանակահատվածներում՝ երեք ամսվա ընթացքում երեք անգամ մեկ ժամից մինչև երեք օր օրոհությամբ առանց հարգելի պարճառների չի ներկայացել ծառայության»²:

7. Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճռով արձանագրել է. «(...) Մինչ դատաքննությունը սկսելն ամբաստանյալ Գևորգ Սարգսյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայրնեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիրակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 72-73:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 83-84:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-ին և 375.2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, գրնում է, որ ամբաստանյալ Գևորգ Սարգսյանը կարարել է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ (...)¹:

8. Վերաքննիչ դատարանը 2018 թվականի հունիսի 18-ի որոշմամբ փաստել է. «(...) Սույն քրեական գործի նյութերից երևում է, որ ամբաստանյալ Գ.Սարգսյանը Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի հունիսի 16-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պարիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 (երեք) տարի ժամկետով:

(...)

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առաջին աստիճանի դատարանը 2017 թվականի հոկտեմբերի 30-ի սույն գործով դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առներ այն փաստը, որ Գ.Սարգսյանի նկարում գոյություն ունի Արարարի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 2017 թվականի հունիսի 16-ին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, և ամբաստանյալի նկարում վերջնական պարիժ պետք է նշանակեր ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածների կիրառմամբ:

Մինչդեռ, դատարանը, հաշվի չառնելով այդ դատավճռի առկայությունը, ամբաստանյալի նկարում պարիժ է նշանակել միայն սույն գործով իրեն վերագրվող հանցանքների համակցությամբ, որով թույլ է տրվել նյութական և դատավարական խախտումներ:

(...)

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ ամբաստանյալ Գ.Սարգսյանի նկարում նշանակված պարիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի պարճատարանություններին, դրանք քննարկման առարկա կարող են դառնալ վերոնշյալ խախտումները վերացնելուց հետո: (...)»²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 79-87:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 174-187:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, չպահպանելով Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, սեփական նախաձեռնությամբ դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից և բեկանել ստորադաս դատարանի դատական ակտն այն դեպքում, երբ գործի նյութերում չի եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

Բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել նյութական իրավունքի հիմնարար խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածները, որի արդյունքում կայացվել է չհիմնավորված և անօրինական դատական ակտ:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 18-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանը, Առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, պահպանել է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատական ակտը փոփոխելիս վերաքննիչ դատարանը կարող է անձին դատապարտել ավելի ծանր հանցագործության համար կամ ավելի խիստ պարզի, քան սրտորադաս դատարանը, միայն այն դեպքում, երբ բողոքը բերել է դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը»:*

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու մասին օրենսդրական պահանջին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն դատավարության մասնակցին տրված երաշխիք է առ

այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ¹:

Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանը գործը քննում է բացառապես վերաքննիչ բողոքի առկայության պարագայում և բացառապես դրա հիմքերի ու հիմնավորումների սահմաններում, բացառությամբ եթե թույլ է տրվել դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Հետևաբար, վերը նշված բացառիկ հիմքերի բացակայության պարագայում, վերաքննիչ դատարանը զրկվում է վերանայման սահմաններից դուրս գալու իրավական հնարավորությունից, քանի որ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն բացառիկ դեպքերում բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում²:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական նորմին՝ Վճռաբեկ դատարանը *Հասմիկ Սարգսյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում փաստել է, որ այն ըստ էության բովանդակում է դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության հայտնի կանոնը (ne reformatio in pejus կամ ne pejus), ինչն ամբաստանյալի բողոքարկման իրավունքի իրացման, վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք է: Այլ կերպ՝ դեպի վատթարացում շրջադարձի արգելքն ապահովում է անձի պաշպանության և բողոքարկման ազատության իրավունքի անխոչընդոտ իրացումը, հնարավորություն ընձեռում ամբաստանյալին բողոք ներկայացնելու կայացված դատական ակտի դեմ առանց իր վիճակի հետագա վատթարացման մտավախության: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը վերանայվում է պաշտպանության կողմի բողոքի հիման վրա, անձը չի կարող դատապարտվել ավելի ծանր հանցագործության համար կամ ավելի խիստ պատժի, քան դատապարտվել է ստորադաս դատարանի դատական ակտով³:

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Սարունցի* վերաբերյալ գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԳ/0001/11/10, *Գեղամ Ղազարյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԳ/0121/01/11 որոշումները:

² Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Մխիթար Էլոյանի և այլոց* վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10, *Արթուր Խորշոռյանի* վերաբերյալ գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԳ/0065/01/11 որոշումները:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հասմիկ Սարգսյանի* վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՄԳ/0080/01/17 որոշման 14-րդ կետը:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով Գ.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակի գումարելու միջոցով, նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատագրելով¹ (մեկ) տարի ժամկետով:

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքով ամբաստանյալի պաշտպանը խնդրել է Գ.Սարգսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սակայն Վերաքննիչ դատարանն ըստ էության քննության առարկա չի դարձրել պաշտպանի բողոքը և մերժել է այն՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը հնարավորություն չի տալիս ներկայացված բողոքի կապակցությամբ կայացնելու համապատասխան դատական ակտ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը սույն գործով 2017 թվականի հոկտեմբերի 30-ին դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առներ այն, որ Գ.Սարգսյանի նկատմամբ 2017 թվականի հունիսի 16-ին կայացվել և օրինական ուժի մեջ է մտել դատավճիռ, հետևաբար ամբաստանյալի նկատմամբ վերջնական պատիժ պետք է նշանակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածների կանոններով: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով այդ դատավճռի առկայությունը, ամբաստանյալի նկատմամբ պատիժ է նշանակել միայն սույն գործով իրեն վերագրվող հանցանքների համակցությամբ, ուստի թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ²:

13. Սույն որոշման 12-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Այսպես՝ Գ.Սարգսյանի պաշտպանը վերաքննիչ բողոք էր ներկայացրել՝ խնդրելով իր պաշտպանյալի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառել, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, առանց պաշտպանի՝ վերաքննիչ բողոքով բարձրացված փաստարկներին անդրադառնալու, սեփական նախաձեռնությամբ քննարկման առարկա է դարձրել Առաջին ատյանի դատարանի կողմից Գ.Սարգսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածներով սահմանված կանոնները չկիրառելու հարցը: Վերոնշյալի արդյունքում Վերաքննիչ

¹ Տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դատարանն արձանագրել է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել դատական սխալ, այդ հիմքով բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թույլ տրված՝ պատիժ նշանակելու կանոնների ենթադրյալ խախտումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ դատական ակտի անվերապահ բեկանմանը հանգեցնող խախտում չէ, հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավասու չէր դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

Մինչդեռ ժամանակ, Վերաքննիչ դատարանը, պաշտպանության կողմի բողոքով բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործը նոր քննության ուղարկելով այն պատճառաբանությամբ, որ ստորադաս դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս հաշվի չի առել ամբաստանյալ Գ.Սարգսյանի վերաբերյալ այլ գործով դատավճռի առկայությունը, թույլ է տվել դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության սկզբունքի խախտում: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պաշտպանության կողմի բողոքով ի վնաս անձի դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմանից, նոր քննության այնպիսի ծավալ է սահմանել, որի պարագայում, Առաջին ատյանի դատարանի կողմից հանցանքների կամ դատավճիռների համակցության կանոնների հնարավոր կիրառման դեպքում անխուսափելիորեն Գ.Սարգսյանի նկատմամբ կնշանակվեր ավելի խիստ պատիժ՝ խախտելով անձի պաշտպանության իրավունքը:

14. Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճիռը բեկանելով և գործը նոր քննության ուղարկելով, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը:

15. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք և կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլնի, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ամբաս-

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մխիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

տանյալ Գ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, քրեական հետապնդումը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնելու հարցը:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինձառայողի կողմից գործառնալ կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկվողությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...)

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ [կետում նշված հիմքով]

(...) գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Ընդ որում, երբ անձն արդեն հնարավորություն է ունեցել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է²:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Սարգսյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը կատարելու

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ *Անահիր Սաղաթելյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, *Միրաժ Ղամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Անդրանիկ Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Միրաժ Ղամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով վերը հիշատակված որոշման 25-րդ կետը:

մեջ՝ երեք դրվագով, որը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին, հետևաբար վերջինս վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման, եթե իր կատարած հանցավոր արարքներն ավարտված համարելու օրվանից անցել է երկու տարի, և նրա նկատմամբ առկա չի եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

Այսպես՝ ամբաստանյալ Գ.Սարգսյանն իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքները՝ երեք դրվագ, կատարել է 2017 թվականի մարտի 29-ից մինչև ապրիլի 4-ը, ապրիլի 5-ից մինչև մայիսի 6-ը, մայիսի 29-ից մինչև հունիսի 27-ն ընկած ժամանակահատվածում¹:

Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը կայացվել է 2017 թվականի հոկտեմբերի 30-ին, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում որոշում է կայացրել 2018 թվականի հունիսի 18-ին: Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Վերոշարադրյալից բխում է, որ Գ.Սարգսյանին մեղսագրվող՝ երեք դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներն ավարտված համարելու օրվանից ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը դեռևս օրինական ուժի մեջ մտած չի եղել²:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դատական ակտը կայացնելու օրվա դրությամբ Գ.Սարգսյանին մեղսագրվող՝ երեք դրվագով ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ամբաստանյալ Գ.Սարգսյանն իր նկատմամբ կայացված դատավճիռը Վերաքննիչ դատարանում վիճարկել է միայն պատժի մասով, պնդելով, որ այն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով անհրաժեշտ էր պայմանականորեն չկիրառել: Այլ կերպ՝ պաշտպանական կողմը ամբաստանյալի մեղավորության հարցը չի վիճարկել, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

18. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գ.Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 18-ի որոշումը պետք է բեկանել, Գ.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, և քրեական գործի վարույթը կարճել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գևորգ Գազիկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով՝ երեք դրվագով, Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 30-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 18-ի որոշումը բեկանել, Գևորգ Գազիկի Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և գործի վարույթը կարճել:

2. Ամբաստանյալ Գևորգ Գազիկի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0034/06/19

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի օգոստոսի 7-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 62225318 քրեական գործը:

Նախաքննական մարմնի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշմամբ Արթուր Արամի Եգանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2019 թվականի հունվարի 26-ի որոշմամբ Ա.Եգանյանի նկատմամբ որպես խափանման

միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ բավարարվել է Ա.Եզանյանի նկատմամբ կալանքն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին մեղադրյալ Ա.Եզանյանի և նրա պաշտպան Հ.Սարգսյանի միջնորդությունը:

3. Վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Վ.Դովմազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մարտի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 26-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

5. Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Արթուր Եզանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն արարքների կատարման համար, որ «(...) /ՆԵՅ 2014 թվականի մարտի 26-ից ՀՀ ոստիկանության պետի N 940-Ա հրամանով զբաղեցնելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժնի պետի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, 2015 թվականի հունվար ամսից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, մի խումբ անձանց կազմում նախնական համաձայնությամբ, պաշտոնական դիրքն օգտագործելով, յուրացնելու եղանակով հաիշտակել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով ուրիշի գույքը, իսկ վստահման եղանակով՝ իրեն վստահված խոշոր չափերով ուրիշի գույքը:

Այսպես.

Արթուր Եզանյանն ունենալով բաժնի ղեկավարման, բաժնին սպասարկող ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բաժնի անունով բացված բյուջետային և արտաբյուջետային հաշվարկների դրամական միջոցների փոփոխման լիազորություն, օգտագործելով իր այդ լիազորությունն ու պաշտոնական դիրքը, 2015 թվականի սկզբին բաժնի հաշվապահ Անահիտ Գասպարյանի հետ

ձեռք է բերել նախնական համաձայնություն՝ իրեն վարահիված բաժնի ֆինանսական միջոցներից ինչպես իրենց, այնպես էլ բաժնի մի շարք աշխատակիցներին որպես աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ առանց օրինական հիմքերի ավել գումարներ փոխանցելու, կանխիկացնելու և յուրացնելու շուրջ՝ այդ գումարներից Անահիր Գասպարյանին մասնաբաժին հարկացնելու պայմանով: Ի կատարումն ձեռք բերված պայմանավորվածության՝ 2015 թվականի հունվար ամսից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում Անահիր Գասպարյանը բաժնի ֆինանսական միջոցներից իր, Արթուր Եզանյանի և բաժնի մի շարք աշխատակիցների բանկային քարտերի հաշիվներին առանց օրինական հիմքերի որպես աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ ընդհանուր՝ 135.574.388 ՀՀ դրամի չափով ավել գումար է փոխանցել, որից հետո աշխատակիցներին հայրնելով, որ ավել գումարների փոխանցումը թյուրիմացության և տեխնիկական սխալմունքի արդյունք է, խնդրել է կանխիկացնել հիշյալ գումարները և վերադարձնել իրեն:

Հետագայում, ավել գումար ստացած բաժնի աշխատակիցների մի մասը Անահիր Գասպարյանին առձեռն վերադարձրել են յուրաքանչյուր անգամ ավել ստացած ամբողջ գումարը, իսկ աշխատակիցների մի մասն էլ Անահիր Գասպարյանի խնդրանքով նրան են տրամադրել իրենց բանկային քարտերը, որոնց միջոցով վերջինս կանխիկացրել է ստացել է իր կողմից նրանց ավել փոխանցված ամբողջ գումարը: Անահիր Գասպարյանն ընդհանուր 135.574.388 ՀՀ դրամ գումարը չի մուրքագրել բաժնի դրամարկղային հաշվին, այլ մաս-մաս առձեռն հանձնել է Արթուր Եզանյանին, իսկ վերջինս էլ որպես մասնաբաժին նրան հարկացրել է յուրաքանչյուր աշխատակցին ավել փոխանցված գումարից 5.000-15.000 ՀՀ դրամ՝ տիրանալով մնացած գումարին:

Ի կատարումն Արթուր Եզանյանի հետ ունեցած նախնական համաձայնության՝ Անահիր Գասպարյանը 2015 թվականի հունվար ամսից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում բաժնի ֆինանսական միջոցներից բաժնի աշխատակից չհանդիսացող Մարգարիտա Պապինյանի, Մուշեղ Գևորգյանի, Անահիր Հովհաննիսյանի և Մարտ Դուկասյանի բանկային քարտերի հաշիվներին առանց օրինական հիմքերի փոխանցել է ընդհանուր՝ 7.194.705 ՀՀ դրամի չափով գումար՝ վերջիններիս չհայրնելով այդ մասին:

Հետագայում, Անահիր Գասպարյանն իր մոր գրավող նշված անձանց բանկային քարտերի միջոցով կանխիկացրել և ստացել է իր կողմից նրանց փոխանցված 7.194.705 ՀՀ դրամ գումարը, որը չի մուրքագրել բաժնի դրամարկղային հաշվին, այլ մաս-մաս առձեռն հանձնել է Արթուր Եզանյանին, իսկ վերջինս էլ որպես մասնաբաժին նրան

է հարկացրել յուրաքանչյուր անձին անօրինական փոխանցված գումարից 5.000-15.000 ՀՀ դրամ՝ արհեստավոր մնացած գումարին:

Բացի այդ, Արթուր Եգանյանը նախնական համաձայնության գալով Անահիտ Գասպարյանի հետ, օգրագործելով իր պաշտոնական դիրքը, 2015 թվականի հունվար ամսից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում բաժնի աշխարակիցների միջոցով բաժնի կողմից պահպանվող մի շարք տնտեսավարող սուբյեկտներից կանխիկ եղանակով հավաքագրել է պահպանության ծառայության դիմաց վճարված ընդհանուր՝ 28.164.786 ՀՀ դրամ գումարը, որը չի մուտքագրել բաժնի արտաբյուջետային գանձապետական հաշվեհամարին՝ արհեստավոր այդ գումարին:

Արդյունքում՝ նշված ժամանակահատվածում Արթուր Եգանյանը պաշտոնական դիրքն օգրագործելով, նախնական համաձայնությամբ խմբի կազմում յուրացման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերով ընդհանուր՝ 170.933.879 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, Արթուր Եգանյանն օգրագործելով իր պաշտոնական դիրքը, նախնական համաձայնության գալով Անահիտ Գասպարյանի հետ, 2015-2017թթ. ընթացքում բաժնի արտաբյուջետային հասարիքներ զբաղեցնող և սոցիալական փաթեթի շահառու չհանդիսացող 5 աշխարակիցների, մասնավորապես, իր, Անահիտ Գասպարյանի, Արտյոմ Ալեքսանյանի, Վահան Միմոնյանի և Լյուդմիլա Սահակյանի համապարտախան հաշվեհամարներին Անահիտ Գասպարյանի միջոցով անհիմն փոխանցել է պետական բյուջեից որպես սոցիալական փաթեթի գումար պահանջված, բաժնի հաշվին փոխանցված և իրեն վարահված ընդհանուր՝ 740.000 ՀՀ դրամ, այսինքն՝ վարմանն եղանակով հափշտակել է խոշոր չափերով նշված գումարը¹:

6.1 Անահիտ Գասպարյանը, 2018 թվականի օգոստոսի 25-ին որպես վկա հարցաքննվելիս, ցուցմունք է տվել այն մասին, որ. «(...) 2018 թվականի հուլիսին, երբ ՀՀ ոստիկանության ներքին աուդիտի վարչության աշխարակիցները եկան մեր բաժին՝ ֆինանսարևեստական գործունեությունը ստուգելու համար, (...) ինչից էլ մտադրված և վախեցած գնացի բաժնի պետ Արթուր Եգանյանի աշխարասենյակ և այդ հարցով դիմեցի նրան, սակայն նա ինձ հանգստացնելով հավաստիացրեց, որ որևէ խնդիր չկա, ամեն ինչ նորմալ է (...) անհանգստանալու ոչինչ չկա, թող ձևական ստուգեն, բոլոր հարցերը լուծել է, «կջրեն կգնա»: (...) [Տեսնելով, որ գրնվում եմ անելանելի վիճակում, ինձ առաջարկեց մոտ 10-15 օրով բոլորից թաքնվել, մինչև ինքը ստուգման հետ կապված հարցերը կարգավորի: Թաքնվելու հարցում նա ինձ առաջարկում էր իր օգնությունը, ասում էր, որ ճիշտ կլինի Հայաստանից մեկնել ՌԴ Սոչի քաղաք՝ իր

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 70-72:

ընկերների մուր, որպեսզի ինձ այնպեղ պահեն, մինչև ինքը կասի, թե երբ վերադառնամ, ասում, որ գնալ գալու հետ կապված բոլոր ծախսերը ինքը կհոգա: Ես չհամաձայնվեցի Արթուր Եզանյանի առաջարկին և հրաժարվեցի մեկնել Հայաստանից, ինչի համար Արթուր Եզանյանն ինձ առաջարկեց երկրորդ տարբերակը, այն է՝ թաքնվել Սևանա լճի ափին գտնվող իրենց դաշայում, որին նույնպես չհամաձայնվեցի: (...) Դրանից հետո Արթուր Եզանյանը սկսեց արդեն ինձ համոզել, որ թաքնվեմ (...): Բացի այդ, խորհուրդ տվեց, որ եթե հանկարծ խնդիրներ առաջանան, ապա՝ որևէ դեպքում անուններ չտամ»¹:

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Անդրադատնալով կալանավորման հիմքերին՝ դատարանը փաստում է, որ գործի նյութերը բավարար հնարավորություն են տալիս գալու եզրահանգման, որ Արթուր Եզանյանն ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

Ինչ վերաբերում է մինչդատարանական վարույթում քրեական դատարանականը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությանը խոչընդորդելու հիմքին, դատարանը գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից այդ մասով դատարանին բավարար փաստական տվյալներ և հիմնավորումներ չենրկայացվեց:

(...) Դատարանը փաստում է, որ մեղադրյալ Արթուր Եզանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հիմքով, և տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար:

(...)

Այսպիսով, դատարանը, նկատի ունենալով, որ մեղադրյալ Արթուր Եզանյանի անձը հայրնի է, նա Հայաստանի Հանրապետությունում ունի մշտական բնակության վայր, երիտասարդ է, նախկինում արաբավորված չի եղել, հարևանների կողմից բնութագրվում է դրականորեն, ամուսնացած է, ընտանիքի միակ կերակրողն է, ինսամբին են գտնվում վարատող լինը (տատապում է կրծքագեղձի երկու կողմից դիֆուզ ֆիբրոզ-կիստոզ մասթոպալիա հիվանդությամբ) և 2 անչափահաս վարատող երեխաները, որոնք հաշվատված են Ս.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում, ուսրի դատարանի համոզմամբ Արթուր Եզանյանն ազատության մեջ մնալով չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, հետևաբար դատարանը գտնում է, որ Արթուր Եզանյանի միջնորդությունը պետք է բավարարել՝ մեղադրյալ Արթուր Եզանյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի և նրան կալանավորումից ազատելու

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 43-54:

համար սահմանել գրավ՝ 4.000.000 ՀՀ դրամ: Դադարանը գտնուել է, որ 4.000.000 ՀՀ դրամի չափով վճարումն ի գործու է գործուն երաշխիք հանդիսանալ կանխելու վերջինիս ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում վարույթն իրականացնող մարմնի տրամադրության փակ նրա գտնվելն ապահովելու համար»¹:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դադարանի համար ընդունելի է առաջին արյանի դադարանի այն եզրահանգումը, համաձայն որի՝ մնալով ազատության մեջ Արթուր Եզանյանը կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից:

(...)

Վերաքննիչ դադարանի համար ընդունելի է նաև առաջին արյանի դադարանի այն եզրահանգումը, համաձայն որի՝ նախաքննական մարմնի կողմից բավարար փաստական փյվյալներ և հիմնավորումներ չեն ներկայացվել՝ մեղադրյալ Արթուր Եզանյանի կողմից քրեական դադարավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության մասին:

Ինչ վերաբերում է դադարանի կողմից մարնանշված՝ վկա Անահիթ Գասպարյանի ցուցմունքին՝ որպես մեղադրյալ Արթուր Եզանյանի կողմից քրեական դադարավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու մտադրության առկայություն, ապա Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ վկա Անահիթ Գասպարյանը նշված ցուցմունքը փյվել է դեռևս 2018 թվականի օգոստոսի 25-ին, իսկ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը քննիչն առաջին արյանի դադարան ներկայացրել է 2019 թվականի հունվարի 24-ին, այսինքն՝ շուրջ հինգ ամիս անց:

Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ ներկայացված նյութերում առկա չէ որևէ փաստական փյվյալ, որը թույլ կտար փաստել, որ վերը նշված հինգ ամիսների ընթացքում մեղադրյալը որևէ կերպ անօրինական ազդեցություն է գործադրել կամ փորձել է գործադրել դադարավարությանը մասնակցող անձանց վրա:

(...)

Վերաքննիչ դադարանն արձանագրում է, որ գործում չկան այնպիսի տեղեկություններ, փաստական փյվյալներ, որոնք կարող են վկայել այն մասին, որ այլընտրանքային երաշխիքն ի գործու չէ փյվյալ պահին կանխել մեղադրյալի հավանական ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում»²:

9. 2019 թվականի հուլիսի 31-ին Երևան քաղաքի առաջին ատյանի

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 101-109:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 16-28:

ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ա.Եզանյանի վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննության համար¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է, անհիմն, և դրանով թույլ է տրվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ բավարար չափով ներկայացվել ու պատճառաբանվել է նրա կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու ռիսկը: Մինչդեռ ստորադաս դատարանները, ըստ բողոքաբերի, առանց պատճառաբանության մերժելով հիշյալ հիմքի առկայությունը և հաշվի չառնելով քննարկվող հարցի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, Ա.Եզանյանի նկատմամբ գրավի կիրառման հարցի կապակցությամբ եկել են սխալ եզրահանգման:

Ամփոփելով ասվածը՝ բողոքի հեղինակը գտել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների հետևությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներից, և մեղադրյալ Ա.Եզանյանի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոց գրավը, անկախ դրա չափից, չի կարող պատշաճ ու բավարար երաշխիք լինել վերջինիս ոչ իրավաչափ վարքագիծը կանխելու համար:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 27-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. մեղադրյալ Արթուր Եզանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը՝ միաժամանակ առկա գնահատելով մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և նրա կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, իսկ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0558/01/19 քրեական գործը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ա.Եգանյանի՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խախտման միջոց կարող է/ կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար են հիմք տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարզառոտների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանարվությունից և նշանակված պարիօր կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

14. Վերոշարադրյալ դրույթների կապակցությամբ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել Արամ Ճուղորյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի փակ չգրնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...) [Կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխարեսական, մտրավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխարեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ»¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Եզանյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժնի պետի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառնություններով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, 2015 թվականի հունվար ամսից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում, մի խումբ անձանց կազմում նախնական համաձայնությամբ, պաշտոնական դիրքն օգտագործելով, յուրացնելու եղանակով հափշտակել է իրեն վստահված՝ առանձնապես խոշոր չափերով՝ 170.933.879 ՀՀ դրամ գումարը, իսկ վատնման եղանակով՝ իրեն վստահված՝ խոշոր չափերով՝ 740.000 ՀՀ դրամ գումարը²,

- Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նախաքննական մարմնի կողմից մինչդատական վարույթում քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու վերաբերյալ դատարանին բավարար փաստական տվյալներ և հիմնավորումներ չեն ներկայացվել³,

- Վերաքննիչ դատարանն իր հերթին հանգել է այն հետևության, որ նախաքննական մարմնի կողմից բավարար փաստական տվյալներ և հիմնավորումներ չեն ներկայացվել՝ մեղադրյալ Ա.Եզանյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության վերաբերյալ: Անդրադառնալով վկա Ա.Գասպարյանի ցուցմունքին՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վկայակոչված ցուցմունքը տրվել է դեռևս 2018 թվականի օգոստոսի 25-ին, իսկ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը քննիչն առաջին ատյանի դատարան ներկայացրել է 2019 թվականի հունվարի 24-ին, այսինքն՝ շուրջ հինգ ամիս անց: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ներկայացված նյութերում առկա չէ որևէ փաստական տվյալ, որը թույլ

¹ Տե՛ս *Արամ Ճուղոյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը, կետ 4:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

կտար փաստել, որ վերը նշված հինգ ամիսների ընթացքում մեղադրյալը որևէ կերպ անօրինական ազդեցություն է գործադրել կամ փորձել է գործադրել դատավարությանը մասնակցող անձանց վրա¹ :

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Ա.Եզանյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն ունենալու հավանականությունը ստորադաս դատարանների կողմից պատշաճ իրավական գնահատման չի արժանացվել:

Մասնավորապես, ստորադաս դատարանները, գտնելով, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու նշված հիմքը հաստատող բավարար փաստական տվյալներ և հիմնավորումներ չեն ներկայացվել, հաշվի չեն առել որպես վկա հարցաքննված Ա.Գասպարյանի ցուցմունքն այն մասին, որ Ա.Եզանյանն իրեն առաջարկել է թաքնվել, մեկնել ՌԴ Սոչի քաղաք՝ իր ընկերների մոտ, որպեսզի իրեն այնտեղ պահեն, մինչև ինքը կասի, թե երբ վերադառնա, միաժամանակ խոստանալով հոգալ դրա հետ կապված բոլոր ծախսերը: Բացի այդ, Ա.Եզանյանն առաջարկել է նաև թաքնվել Սևանա լճի ափին գտնվող իրենց ամառանոցում, և խորհուրդ տվել, որ խնդիրներ առաջանալու դեպքում ինքն անուններ չտա²: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված ցուցմունքի բովանդակությունը ողջամտորեն հիմք է տալիս ենթադրելու, որ Ա.Եզանյանը փորձել է անօրինական ազդեցություն ունենալ գործով պարզման ենթակա հանգամանքների մասին տեղեկություններ ունեցող Ա.Գասպարյանի նկատմամբ: Գործի նյութերում առկա սույն փաստական տվյալը, Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում, առերևույթ բավարար էր Ա.Եզանյանի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու բարձր հավանականության մասին ողջամիտ հետևություն անելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում վերոնշյալ փաստական տվյալը հիմք չընդունելու առնչությամբ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե վկայակոչված ցուցմունքը տրվել է 2018 թվականի օգոստոսի 25-ին, իսկ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունը քննիչն Առաջին ատյանի դատարան է ներկայացրել շուրջ հինգ ամիս անց՝ 2019 թվականի հունվարի 24-ին, և այդ ընթացքում մեղադրյալը որևէ կերպ անօրինական ազդեցություն չի գործադրել կամ չի

¹ Տե՛ս՝ սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս՝ սույն որոշման 6.1-րդ կետը:

փորձել գործադրել դատավարությանը մասնակցող անձանց վրա: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ա.Գասպարյանի հարցաքննությունից հետո Ա.Եզանյանի դրսևորած վարքագիծն ինքնին չի կարող չեզոքացնել Ա.Գասպարյանի նկատմամբ գործադրված ենթադրաբար ոչ իրավաչափ գործողությունների կատարման փաստը և արդարացված պատճառ հանդիսանալ՝ խափանման միջոցի կիրառման հիմքի առկայությունը քննարկելիս և մեղադրյալի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը գնահատելիս այն անտեսելու համար: Ա.Եզանյանի նկատմամբ խափանման միջոցի կիրառման հիմքերի առկայության հարցը քննարկելիս Ա.Գասպարյանի ցուցմունքն ուներ առանցքային նշանակություն և ստորադաս դատարանների կողմից պետք է պատշաճ իրավական գնահատականի արժանանար՝ կանխատեսելու համար Ա.Եզանյանի հնարավոր ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը:

Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ա.Եզանյանի՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության բացակայության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ա.Եզանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի է առնվում վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Գատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայրնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:*

19. Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ասյան Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով այն մասին, որ *«(...) [Ա/նձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պարճառաբանության հիմքում պայմանով, որ այդ պարճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (...):*

(...) Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլարժեքի։ մասնավորապես, երբ առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վրանգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

(...) [Գ]րավի կիրառման անթույլարժեքության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համարեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը»¹:

Կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու անհրաժեշտության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Սամվել Մարգարյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) [Գ]րավի թույլարժեքության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված փյուլյաների հիման վրա պարզի մեղադրյալին վերագրվող հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության դեպքում հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման հավանականությունը գնահատելիս և, հետևաբար, դրա հիման վրա մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլարժեքի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պարզաճ գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները: (...)»²:

Զարգացնելով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը *Դավիթ Վարդանյանի* գործով որոշմամբ արձանագրել է. «(...) [Մ]եղադրյալին կալանքից գրավով

¹ Տե՛ս *Ասյան Ալեքիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը, կետեր 34-36:

² Տե՛ս *Սամվել Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշումը, կետ 14:

ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք ավելի դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե քառաչիք հանդիսանալ ավելի հիմքի չեզոքացման համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ Եվրոպական դատարանը մշակել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վրանգը (տե՛ս Stogmuller v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, §15), վրանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (տե՛ս Wemhoff v. Germany, 1968 թվականի հունիսի 27, §14) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս Matznetter v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, §9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս Letellier v. France, 1991 թվականի հունիսի 26, §51): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ըստ էության նախատեսված են նշված հիմքերը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը կալանավորման պայմանների հետ միասին ինքնին հիմք է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Միևնույն ժամանակ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի ուսումնասիրությունից հետևում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը քառաչավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա այդպիսի միջոց է գրավը: (...)¹:

Վերահաստատելով և զարգացնելով Ապան Ավերիսյանի և Դավիթ Վարդանյանի վերաբերյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Անդրեաս Դուկասյանի գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանքից գրավով

¹ Տե՛ս Դավիթ Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/0056/06/14 որոշումը, կետ 16:

ազատելն անթույլատրելի ճանաչելիս դատարանը կարող է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք.

ա) վերաբերում են քրեական վարույթն իրականացնող մարմնի փրամադրության փակ մեղադրյալի գրնվելն ապահովելուն և բարձրացնում ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը,

բ) չեն հանգեցնում անձի այլ հիմնական իրավունքների խախտման (վերջինիս հրամայականը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներից, (...))»¹:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին որոշմամբ փաստել է, որ գործի նյութերը բավարար հնարավորություն են տալիս գալու եզրահանգման, որ մեղադրյալ Ա.Եգանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվում է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հիմքով և հաշվի առնելով մեղադրյալի անձը, նրան վերագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, գտել է, որ Ա.Եգանյանի նկատմամբ գրավի կիրառումը պետք է ճանաչել թույլատրելի²,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ արձանագրել է, որ գործում չկան այնպիսի տեղեկություններ, փաստական տվյալներ, որոնք կարող են վկայել այն մասին, որ այլընտրանքային երաշխիքն ի գործու չէ տվյալ պահին կանխել մեղադրյալի հավանական ոչ իրավաչափ վարքագիծը՝ նրան ազատ արձակելու դեպքում³:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 18-19-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Ա.Եգանյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել վերջինիս անձը: Մասնավորապես այն, որ Ա.Եգանյանը հանդիսացել է մշտապես իշխանության ներկայացուցչի գործառնությունով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, ում ենթակայության ներքո են աշխատել գործով պարզման ենթակա հանգամանքների մասին տեղեկություններ ունեցող անձինք: Այսպես, ըստ առաջադրված մեղադրանքի՝ Ա.Եգանյանն ունենալով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Քանաքեռ-Ջեյթունի

¹ Տե՛ս 'ու Անդրեաս Ղուկասյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԳ/0533/06/16 որոշման 15-րդ կետը:

² Տե՛ս 'ու սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս 'ու սույն որոշման 8-րդ կետը:

պահպանության բաժնի ղեկավարման, բաժնին սպասարկող ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բաժնի անտոնով բացված բյուջետային և արտաբյուջետային հաշվարկների դրամական միջոցների տնօրինման լիազորություն, օգտագործելով իր այդ լիազորությունն ու պաշտոնեական դիրքը, բաժնի հաշվապահ Ա.Գասպարյանի հետ ձեռք է բերել նախնական համաձայնություն՝ իրեն վստահված բաժնի ֆինանսական միջոցներից ինչպես իրենց, այնպես էլ բաժնի մի շարք աշխատակիցներին որպես աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ առանց օրինական հիմքերի ավել գումարներ փոխանցելու, կանխիկացնելու և յուրացնելու շուրջ՝ այդ գումարներից Ա.Գասպարյանին մասնաբաժին հատկացնելու պայմանով:

Վերոնշյալի գնահատմամբ, գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս, սույն որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, ստորադաս դատարանների կողմից պետք է հաշվի առնվեր նաև վկա Ա.Գասպարյանի ցուցմունքը, որը վկայում էր Ա.Եգանյանի կողմից ազատության մեջ գտնվելու դեպքում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու բարձր հավանականության մասին:

Նման պայմաններում, *Մամվել Մարգարյանի* որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համատեքստում, հաշվի առնելով նաև Ա.Եգանյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ստորադաս դատարանները 4.000.000 ՀՀ դրամի չափով գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելիս պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ կոնկրետ դեպքում այլընտրանքային խափանման միջոց գրավն ի գործու չէ հակակշռելու Ա.Եգանյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով ապահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այսինքն՝ ստորադաս դատարանները համակողմանի գնահատման չեն ենթարկել այն, որ Ա.Եգանյանին մեղսագրվող արարքի բնույթի ու հանրային վտանգավորության աստիճանի, զբաղեցրած պաշտոնի և դրսևորած վարքագծի համատեքստում գրավը չէր կարող լինել արդյունավետ իրավական ներգործության միջոց, որը կկաշկանդեր Ա.Եգանյանին դրսևորել պատշաճ վարքագիծ և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով կչեզոքացնեն նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից որպես Ա.Եգանյանի անձը բնութագրող տվյալներ նշված հանգամանքներին, սպա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ի գործու չեն

երաշխավորելու նրա պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ա.Եգանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

22. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է և Ա.Եգանյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան¹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Արթուր Արամի Եգանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԴՅ/0026/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝*

Մ.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Ռ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռիտա Սերյոժայի Կարապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայագորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 90974016 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 22-ի որոշումներով Ռիտա Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով: Նույն օրը Ռ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի մարտի 27-ին քրեական գործը մեղադրական

եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, քրեական գործի դատական քննության ընթացքում, 2017 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ, Ռ.Կարապետյանի՝ քննությունից թաքնվելու հիմքով քրեական գործի վարույթը կասեցրել է, և նրա նկատմամբ հայտարարել հետախուզում:

2017 թվականի օգոստոսի 23-ին ամբաստանյալ Ռ.Կարապետյանը հայտնաբերվել է, և Առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա որոշմամբ քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ Ռ.Կարապետյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը փոխարինվել է կալանավորում խափանման միջոցով, հայտարարվել է հետախուզում, և քրեական գործի վարույթը, ամբաստանյալի՝ քննությունից թաքնվելու հիմքով, կասեցվել է:

2018 թվականի հունվարի 23-ին Ռ.Կարապետյանը հայտնաբերվել է և Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 31-ի որոշմամբ քրեական գործի վարույթը վերսկսվել է:

3. 2018 թվականի փետրվարի 16-ին ամբաստանյալ Ռ.Կարապետյանը միջնորդել է իր նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխել և գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի: Ներկայացված միջնորդությունը բավարարվել է, և կալանքից գրավով ազատելը ճանաչվել է թույլատրելի՝ գրավի չափ սահմանելով 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը:

4. Ռ.Կարապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի մարտի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշումը:

5. Վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ռ.Կարապետյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նախաքննական մարմնի կողմից Ռ.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով այն բանի համար, որ նա, 2016 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 12:30-ի սահմաններում, Ն գործարանի շարահրապարակի մոտ, բռնի գործողություն է

կատարել նախկին ամուսնու կնոջ՝ Հրածին Հարությունյանի նկատմամբ, ձեռքի պայուսակով մեկ անգամ հարվածել է նրա դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ քթի մեջքի և գույգ ստորակնակապիճային շրջանների արյունազեղման ձևով¹:

7. 2017 թվականի ապրիլի 19-ին ծանուցագիր է ուղարկվել Ռ.Կարապետյանին՝ 2017 թվականի ապրիլի 25-ին կայանալիք նիստի վերաբերյալ: Ըստ փոստային ծրարի վրա առկա նշման՝ այն ստացվել է 2017 թվականի ապրիլի 28-ին: Նշանակված դատական նիստը չի կայացել՝ դատավորի կողմից վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պատճառով, և հաջորդ դատական նիստը նշանակվել է 2017 թվականի մայիսի 20-ին²:

7.1 2017 թվականի մայիսի 2-ին ծանուցագիր է ուղարկվել Ռ.Կարապետյանին՝ 2017 թվականի մայիսի 20-ին կայանալիք նիստի վերաբերյալ, և ըստ փոստային ծրարի վրա առկա նշման՝ Ռ.Կարապետյանն այն ստացել է նույն թվականի մայիսի 15-ին: Ամբաստանյալի բացակայության պատճառաբանությամբ նիստը հետաձգվել է և նշանակվել 2017 թվականի հունիսի 6-ին³:

7.2 2017 թվականի հունիսի 6-ի դատական նիստի մասին, ըստ գործի նյութերի, Ռ.Կարապետյանը չի ծանուցվել: Դատական նիստը կրկին հետաձգվել է և նշանակվել նույն թվականի հուլիսի 7-ին՝ ամբաստանյալի բացակայության պատճառաբանությամբ: Միաժամանակ, որոշում է կայացվել Ռ.Կարապետյանին բերման ենթարկելու մասին⁴:

7.3 2017 թվականի հուլիսի 7-ի նիստը հետաձգվել է՝ դատավարության մասնակիցների բացակայության պատճառով և նշանակվել նույն թվականի հուլիսի 11-ին, միաժամանակ, գրություն է ուղարկվել ոստիկանություն՝ ամբաստանյալին բերման ենթարկելու մասին որոշման պահանջները կատարելու համար: Բացի այդ, Ռ.Կարապետյանին ծանուցագիր է ուղարկվել՝ նույն թվականի հուլիսի 11-ին կայանալիք նիստի մասին, որը հետ է վերադարձվել⁵:

7.4 2017 թվականի հուլիսի 11-ի դատական նիստը հետաձգվել է և նշանակվել նույն թվականի հուլիսի 25-ին: Միաժամանակ, որոշում է կայացվել Ռ.Կարապետյանին բերման ենթարկելու մասին: Նրան ուղարկված ծանուցագիրը կրկին հետ է վերադարձվել: Բացի այդ, 2017 թվականի հուլիսի 25-ին ոստիկանությունից գրություն է ստացվել այն մասին, որ Ռ.Կարապետյանի բնակության վայրի դուռը գտնվում է փակ վիճակում, և հարևանությամբ բնակվող անձը հայտնել է, որ Ռ.Կարապետյանը 2017 թվականի հուլիսի 24-ից տանից դուրս է եկել և նրա

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 104:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 7-8:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 10-11:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 14-17:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 22-24:

գտնվելու, բնակվելու վայրի մասին որևէ տեղեկություն չունի¹:

7.5 2017 թվականի հուլիսի 25-ի դատական նիստը հետաձգվել է և նշանակվել նույն թվականի օգոստոսի 14-ին, որի վերաբերյալ ծանուցագիր է ուղարկվել Ռ.Կարապետյանին: Այդ օրը նշանակված դատական նիստը, ամբաստանյալի բացակայության պատճառով, չի կայացել²:

7.6 2017 թվականի հոկտեմբերի 2-ին դատական նիստը, ամբաստանյալի բացակայության պատճառաբանությամբ, հետաձգվել է և նշանակվել 2017 թվականի հոկտեմբերի 16-ին, միաժամանակ կայանալիք նիստի մասին ծանուցագիր է ուղարկվել Ռ.Կարապետյանին, որն ըստ փոստային ծրարի վրա առկա նշման, ամբաստանյալը ստացել է նիստի օրը՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ին³:

8. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 9-ի որոշման համաձայն՝ *«(...) Նկարի ունենալով, որ ամբաստանյալ Ռիչարդ Սերյոժայի Կարապետյանը, 25.04.2017թ., 20.05.2017թ., 06.06.2017թ., 03.07.2017թ., 11.07.2017թ., 25.07.2017թ., 14.08.2017թ. դատական նիստերի մասին պարզաճ ծանուցված է եղել, սակայն քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու ճանապարհով խոչընդոտում է դատարանում գործի քննությանը, ինչպես նաև թաքնվում է վարույթն իրականացնող մարմնից, դատարանը գրնում է նրա նկարմամբ ընդրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պերք է փոխարինել ավելի ծանրով և նրա նկարմամբ որպես խափանման միջոց ընդրել կալանավորումը»⁴:*

9. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 14-ի որոշման համաձայն՝ *«(...) Առաջին ատյանի դատարանի որոշման հիմնավորումները դիտարկելով իրավական նորմերի լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այդ հիմնավորումներն ամբողջությամբ բխում են դրանցից, որպիսի պայմաններում այդ հիմնավորումներն ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար: (...)*

*Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն Ռիչարդ Կարապետյանի նկարմամբ ընդրված խափանման միջոցը փոխել է ավելի ծանրով կալանավորմամբ, քանի որ դրանից ավելի մեղմ խափանման միջոցը չի ապահովել ամբաստանյալի պարզաճ վարքագիծը (...)*⁵:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ բավարարվել է ամբաստանյալ Ռ.Կարապետյանի միջնորդու-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 34-36:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 36-40:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 66-67:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 108:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 32-38:

թյունը՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, և գործն ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որի 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ Ռիտա Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է, քրեական գործի վարույթը՝ կարճվել՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ, իսկ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց գրավը վերացվել է¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

11. Բողոքի հեղինակի կարծիքով, ստորադաս դատարանները, իր նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելիս, թույլ են տվել դատական սխալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների խախտումներ, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Բողոքաբերը նշել է, որ իր նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումն անօրինական է և հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին:

11.1 Մինևույն ժամանակ, բողոքաբերը նշել է, որ իր արարքին տրված քրեաիրավական գնահատականը սխալ է, որովհետև իր գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշները:

12. Վերոնշյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել ստորադաս դատարանների դատական ակտերը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք հիմնավոր են Ռ.Կարապետյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*

¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ:

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Մինչև 2018 թվականի հունվարի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր անձ ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք»:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով (...):

Նույն խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանավորումը և դրա այրընդարանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պարժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է կատարել [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ] հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները: (...):»:

Նույն օրենսգրքի 303-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առանց հարգելի պատճառների ամբաստանյալի չներկայանալու դեպքում նա դատարանի որոշմամբ կարող է բերման ենթարկվել և սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ այն փոխարինվել ավելի ծանրով»:

15. Մինչև 2018 թվականի հունվարի 16-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը Վճռաբեկ դատարանն իրավական վերլուծության է ենթարկել Վահագն Պողոսյանի վերաբերյալ որոշմամբ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «Խափանման միջոց կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության հարցը դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համարժեք»:

դրում: Մասնավորապես, որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի, որ եթե մեղադրյալին մեղսագրվել է այնպիսի արարք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պարժի ժամկետը չի գերազանցում մեկ տարին, ապա կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս կամ գրավի կիրառումը մերժելիս դատարանը պետք է ներկայացնի **ծանրակշիռ, գործի նյութերից բխող փաստարկներ** մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները կատարելու բարձր հավանականության վերաբերյալ: Այլ խոսքով՝ դատարանը պետք է կիրառի դատական ակտի պարճատարանվածության ավելի բարձր չափանիշ և հիմնավորի, որ տվյալ դեպքում առկա են այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բացառում են ազատության մեջ մնալու դեպքում մեղադրյալի պարճաձ վարքագծի ապահովման հնարավորությունը:

Վերոշարադրյալը բխում է անձին ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության որոշամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից: Հակառակ պարագայում կիսախրվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, ինչն իր հերթին կարող է հանգեցնել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի անհարկի սահմանափակման»¹:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ռ.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2016 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 12:30-ի սահմաններում, Ն գործարանի շարահրապարակի մոտ, բռնի գործողություն է կատարել նախկին ամուսնու կնոջ՝ Հրաձին Հարությունյանի նկատմամբ, ձեռքի պայտուսակով մեկ անգամ հարվածել է նրա դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք՝ քթի մեջքի և գույգ ստորակնակապիճային շրջանների արյունազեղման ձևով²,

- Առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի հունվարի 9-ի որոշմամբ արձանագրելով, որ ամբաստանյալ Ռ.Կարապետյանը 2017 թվականի ապրիլի 25-ի, մայիսի 20-ի, հունիսի 6-ի, հուլիսի 3-ի, հուլիսի 11-ի, հուլիսի 25-ի, օգոստոսի 14-ի դատական նիստերի մասին պատշաճ ծանուցված է եղել, սակայն քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով խոչընդոտում է դատարանում գործի քննությանը, ինչպես նաև թաքնվում

¹ Տե՛ս Վահագն Պողոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի՝ թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշումը, 14-րդ կետ:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

է վարույթն իրականացնող մարմնից, գտել է, որ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է փոխարինել ավելի խստով և որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը¹,

- Վերաքննիչ դատարանը, 2018 թվականի մարտի 14-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի որոշումը, նշել է, որ ստորադաս դատարանի հիմնավորումները բխում են իրավական նորմերից և ընդունելի են Վերաքննիչ դատարանի համար²:

17. Նախորդ կետում մեջբերված ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները համադրելով սույն որոշման 7-7.6-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքների հետ, դրանք գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ոչ մեծ ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող Ռ.Կարապետյանի նկատմամբ ստորագրությունը չհեռանալու մասին խափանման միջոցն առավել խիստ՝ կալանավորում խափանման միջոցով փոխարինելիս ստորադաս դատարաններն իրենց որոշումները չեն պատճառաբանել ծանրակշիռ փաստական տվյալներով, որոնք կհիմնավորեին նրա՝ ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման բացարձակ անհրաժեշտությունը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշանակված բոլոր դատական նիստերի մասին ամբաստանյալի պատշաճ ծանուցված լինելու վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի պնդումները հիմնավոր չեն: Այսպես, 2017 թվականի ապրիլի 25-ին կայանալիք դատական նիստի մասին ծանուցագիրն ամբաստանյալը ստացել է նիստի օրվանից հետո՝ 2017 թվականի ապրիլի 28-ին: Բացի այդ, 2017 թվականի հունիսի 6-ին նշանակված դատական նիստի մասին, ըստ գործի նյութերի, ամբաստանյալը չի ծանուցվել: Մինչև սույն ժամանակ, հարկ է նկատել, որ ամբաստանյալին բերման ենթարկելու մասին 2017 թվականի հուլիսի 11-ի որոշման կապակցությամբ ոստիկանությունից 2017 թվականի հուլիսի 25-ին ստացված գրությամբ հայտնվել է, որ ըստ հարևանության բնակվող անձի հայտարարության՝ Ռ.Կարապետյանը 2017 թվականի հուլիսի 24-ից բացակայում է բնակության վայրից³:

Բացի այդ, հարկ է փաստել, որ մինչ ամբաստանյալին կալանավորելու մասին որոշում կայացնելը, 2017 թվականի հոկտեմբերի 16-ին նշանակված դատական նիստի մասին ծանուցագիրն ամբաստանյալը ստացել է նույն օրը՝ 2017 թվականի հոկտեմբերի 16-ին: Թեև այս դատական նիստի մասին

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-7.6-րդ կետերը:

Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ չի հիշատակել, սակայն վերոնշյալ հանգամանքների հետ մեկտեղ, այն հիմք է տալիս եզրահանգելու, որ ամբաստանյալը նախապես, պատշաճ ծանուցված չի եղել կայանալիք բոլոր դատական նիստերի մասին¹:

Ավելին, տվյալ պարագայում համակողմանի գնահատման չի ենթարկվել Ռ.Կարապետյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև նրա անձը: Մասնավորապես այն, որ Ռ.Կարապետյանը մեղադրվել է ազատագրվման ձևով պատիժ չնախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված ոչ մեծ ծանրության հանցանքի կատարման մեջ, նախկինում դատապարտված չի եղել, 56 տարեկան կին է, բարձրագույն կրթությամբ, ունի մշտական բնակության վայր²:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նաև փաստել, որ ամբաստանյալ Ռ.Կարապետյանը, մշտապես բնակվելով Շիրակի մարզում, գործի դատական քննության ընթացքում միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ իր բնակավայրը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանից, որտեղ ընթանում է գործի քննությունը, գտնվում է բավականին հեռու և դժվարանում է դատական նիստերին ներկայանալ: Նշված միջնորդությունն Առաջին ատյանի դատարանը բավարարել է և քրեական գործի ընդդատությունը փոխել՝ այն ուղարկելով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան³:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից չեն ներկայացվել ծանրակշիռ փաստական հանգամանքներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված՝ ոչ մեծ ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող ամբաստանյալ Ռ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը կալանավորում խափանման միջոցով փոխարինելու անհրաժեշտության վերաբերյալ: Այլ կերպ, Ռ.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց՝ կալանավորման ընտրությունը, վերը շարադրված հանգամանքների առկայության պայմաններում, չի հանդիսացել որպես բացառիկ, ծայրահեղ և վերջին միջոց (*last resort*) ուղղված նրա պատշաճ վարքագծի ապահովմանը:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ռ.Կարապետյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելու անհրաժեշտության

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

³ Տե՛ս նույն տեղում:

վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Ռ.Կարապետյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կալանավորմամբ փոխարինելիս ստորադաս դատարանները թույլ են տվել քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն, հաշվի առնելով, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 16-ի որոշմամբ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ուժով Ռ.Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը՝ կարճվել, իսկ կիրառված խափանման միջոցը՝ վերացվել¹, ուստի վիճարկվող դատական ակտերը չեն կարող բեկանվել, քանի որ դրանք եղել են ժամանակավոր և ներկայումս կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և սույն գործով ճանաչել Ռ.Կարապետյանի՝ անձնական ազատության իրավունքի խախտման փաստը:

19. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով վճռաբեկ բողոքի առարկան, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում սույն որոշման 11.1-րդ կետում բողոքաբերի կողմից բարձրացված փաստարկին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Ճանաչել Ռիտա Սերյոժայի Կարապետյանի իրավունքի խախտման փաստը:
3. Ռիտա Սերյոժայի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴԻ/0013/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝
տուժողի իրավահաջորդ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Է.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ս.ՀՈՎՆԻԿՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Էլեն Աշոտի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժնում 2017 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 26103517 քրեական գործը:

2017 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ Էլեն Աշոտի Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի սեպտեմբերի 15-ի որոշմամբ Է.Գրիգորյանը ներգրավ-

վել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

2018 թվականի մարտի 29-ին Է.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նոր մեղադրանք է առաջադրվել:

2018 թվականի ապրիլի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի դատավճռով Է.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի զրկումով՝ 3 (երեք) տարի ժամկետով: Ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճիռը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Է.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «2017թ. սեպտեմբերի 9-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, Վեդի-Երևան ավտոճանապարհով իր վարած «Օպել-Ջաֆիրա» մակնիշի 34 SC 386 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով դեպի Երևան ընթանալիս, Վանաշեն գյուղի ճանապարհահատվածում իսպիտել է ճանապարհային երթևեկության կանոնների և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջները, որն անզգուշությամբ առաջացրել է երկու մարդու մահ:

Այսպես.

2017թ. սեպտեմբերի 9-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, Էլեն Գրիգորյանն իր վարած «Օպել-Ջաֆիրա» մակնիշի 34 SC 386 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով մոր ընկերուհու՝ Զենֆերա Ռոբերտի Սարգսյանի հետ Արարատի մարզի Դաշտաքար գյուղից ուղևորվել են դեպի Երևան քաղաք: Վեդի-Երևան ավտոճանապարհի՝ Վանաշեն գյուղի հարվածում Էլեն Գրիգորյանը, թույլ տալով ճանապարհային երթևեկության կանոնների 2-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ շուրջ 60 կմ/ժամ արագությամբ ընթանալիս կարծելով, որ շփոթել է ճանապարհը, վերցրել է բջջային հեռախոսը և շուրջ 10 վայրկյան շեղելով ուշադրությունը երթևեկությունից, ցանկացել է միացնել հեռախոսում ներքեռնված նավիգացիոն համակարգը, չկարողանալով իրականացնել ավտոմեքենայի պարշաճ և անվտանգ կառավարում այն հաշվով, որ ավտոմեքենան վարեր իր ընթացքի ուղղության երթևեկելի մասով ձեռնպահ մնալով ավտոմեքենան հանդիպակաց երթևեկելի ուղեմաս դուրս բերելուց, որի արդյունքում մուրք է գործել հանդիպակաց ուղեմաս և ավտոմեքենայի առջևի մասով 162^ժ անկյան տակ բախվել է այդ ուղեմասով հանդիպակաց ընթացող Վահան Հայրապետի Շահինյանի վարած «Վագ 2106» մակնիշի 65 US 384 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի մասին, որն անգոցողությամբ առաջացրել է Վահան Շահինյանի և Զենֆերա Սարգսյանի մահը»¹:

6. Առաջին ատյանի դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը, որպես ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի անձը բնութագրող հանգամանքներ դիտում է այն, որ վերջինս երիտասարդ աղջիկ է՝ ծնված 13.11.1995թ. (գ.թ. 36), նախկինում դարված չէ (գ.թ. 159), «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության «Արտաշեսյան» պոլիկլինիկայի րնօրենի կողմից 15.09.2017 թվականին փրված բնութագրի համաձայն բնութագրվում է դրական, որում մասնավորապես նշված է, որ Էլեն Գրիգորյանը 17.09.2014թ-ից առ այսօր աշխատում է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության «Արտաշեսյան» պոլիկլինիկայում որպես համակարգչային օպերատոր: Մա պարտաճանաչ աշխատող է, պարասիանարու անձնավորություն, վայելում է կոլեկտիվի սերն ու հարգանքը (գ.թ. 50), դրական հարկանիշներով է բնութագրվել նաև թիվ 15 տեղամասի լիազորի կողմից (գ.թ. 49):

Դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի պարասիանարությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է դիտում մեղքը ընդունելը և կատարվածի համար անկեղծորեն զղջալը, նկատի ունենալով, որ նշված

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 154-155:

հանգամանքը էականորեն նվազեցնում է ինչպես ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի, այնպես էլ նրա կատարած արարքի հանրային վրանգավորության աստիճանը:

Միևնույն ժամանակ, Դատարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ամբաստանյալի պարասխանարվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքները: Դատարանը արձանագրում է, որ դատական նիստի ժամանակ փուժողների իրավահաջորդներ Գագիկ Հակոբյանը և Սարգիս Հովնիկյանը հայտնել են, որ ամբաստանյալի դեմ բողոք և պահանջ չունեն, ինդրել են հնարավորինս մեղմ վերաբերվել, ամբաստանյալ Է. Գրիգորյանին ազատությունից չզրկել՝ մասնավորապես նշելով, որ գիտակցում են, որ կատարվածը դիտարկելով հանցագործություն չէ, այլ անզգույշ հանցանք, երիտասարդ աղջիկ է և դեռ պետք է ընդունիք կազմի, իսկ նրանցից Գագիկ Հակոբյանը նշեց նաև, որ ամբաստանյալի եղբորից վերցրել է 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես հուղարկավորության ծախս:

(...)

Հաշվի առնելով ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի կողմից կատարած հանցանքի հանրային վրանգավորության աստիճանը, պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող վերը նշված հանգամանքների առկայությունը և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, նրա անձը բնութագրող դրական փոփոխությունները, Էլեն Գրիգորյանի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հանրորեն վրանգավոր հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, ելնելով պարասխանարվության անհատականացման և պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, Դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վերը նշված արարքը կատարելու համար որպես պարիժ պետք է նշանակել ազատագրելով 4 (չորս) տարի ժամկետով՝ փրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով 3 (երեք) տարի ժամկետով:

(...)

(...) Դատարանը հանգում է այն համոզվածության, որ սոցիալական արդարության վերականգնումը, Էլեն Գրիգորյանի ուղղվելը և նոր հանցագործությունները կանխելը հնարավոր է նրա նկատմամբ ազատագրելման ձևով նշանակվող պարիժը պայմանականորեն չկիրառելու և միաժամանակ ողջամիտ, փոփոխ դեպքում՝ 4 տարի ժամկետով փորձաշրջան սահմանելու պայմաններում, ինչի արդյունքում հնարավոր է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պարիժի նպատակների իրականացումը՝ վերա-

կանգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (...)¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) /Դ/յարարանը, պահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների պահանջները, Էլեն Գրիգորյանի նկատմամբ նշանակել է պարիժ, որը համապարասխանում է կարարված հանցանքի բնույթին ու ամբաստանյալի անձնավորությանը, ինչպես նաև անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար (...):

(...) Վերաքննիչ դատարանը նույնպես գալիս է այն համոզման, որ Էլեն Գրիգորյանի ուղղվելը հնարավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ առանց նշանակված պարիժը կրելու, և գրնում, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի հունիսի 20-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան, հետևաբար, վիճարկվող դատական ակտը պետք է թողնել անփոփոխ, իսկ դատախազի վերաքննիչ բողոքը՝ մերժել (...)²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքարեքը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել են արդարադատության բուն էությունը:

Բողոքարեքը փաստարկել է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով, պատշաճ գնահատականի չեն արժանացրել կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Մասնավորապես, ստորադաս դատարանները որպես Է.Գրիգորյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող, նրա անձը դրական բնութագրող հանգամանքներ են հաշվի առել այնպիսիք, որոնք կամ չունեն այդպիսի նշանակություն, կամ արդեն իսկ հաշվի առնված հանգամանքի վերաձևակերպված դրսևորում են: Այսպես՝ ստորադաս դատարանները որևէ կերպ չեն պատճառաբանել, թե ամբաստանյալի երիտասարդ լինելը, նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագրվելը կամ տուժողների իրավահաջորդների կողմից բողոք չներկայացնելն ինչպես են ազդել նրա արարքի և անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 62-72:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 132-142:

Բողոքի հեղինակի կարծիքով ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջները, չեն հետևել Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին և արդյունքում կայացրել են ապօրինի և չհիմնավորված դատական ակտեր:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի դատավճիռն անփոփոխ թողելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե դատարանը, կայանքի, ազատագրված կամ կարգապահական գումարակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հեղուկության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:*

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...):»

Վերոնշյալ իրավադրույթը Վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս վերլուծության է ենթարկվել, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի օբյեկտիվ գոյություն ունեցող այնպիսի տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը բազմիցս փաստել է, որ թեև, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ՀՀ քրեական օրենսգրքն ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն նաև հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման

վրա¹ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, նպատակներն ու շարժառիթները և այլն²:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածը սահմանում է. «1. Ավրոմորդի կամ մեխանիկական այլ փրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ փրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս (...):

2. Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է մարդու մահ (...):

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից փասք փարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով: (...):»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս հաշվի առնվող հանգամանքների վերաբերյալ, *Գագիկ Ղուկասյանի* վերաբերյալ որոշման շրջանակներում փաստել է, որ վերոնշյալ հանցագործությունների վերաբերյալ գործերով «դատարանները, ի թիվս այլոց, պետք է հարկապես հաշվի առնեն՝

ա. հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության

¹ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս՝ *ս. Վճռաբեկ դատարանի՝ Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08, *Արմեն Շահրազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13, *Արարայր Ավագյանի և Վահան Մահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԳ/0252/01/13 որոշումները:

² Տե՛ս՝ *ս. Վճռաբեկ դատարանի՝ Մամոն Ամիրխանյանի* գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԱԳԳ/0034/01/12, *Արսեն Մկրտչյանի* գործով 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԼԳ/0093/01/12, *Վանյա Բեգյանի* գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13, *Արամայիս Հովհաննեսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0014/01/14, *Մեդր Հովհաննեսյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0039/01/15 և այլ որոշումները:

աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները,

բ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը բացահայտելու համար դատարանները, յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, պետք է գնահատման ենթարկեն, թե ճանապարհային երթևեկության կանոնների լրվյալ խախտումը ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական դարձնում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պարճատելու հնարավորությունը: (...),

գ. ճանապարհային երթևեկության կանոնների խախտման նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում փաստել է, որ դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե տրանսպորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիտակցաբար է թույլ տվել:

Ձարգացնելով սույն իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կարևոր նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե ճանապարհային երթևեկության կանոնները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-11-րդ հոդվածների իմաստով դիտարկությանը, թե անզուգույթյամբ են խախտվել: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճանապարհային երթևեկության կանոնները դիտարկությանը խախտելը վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության հանրային վրանգավորության առավել բարձր աստիճանի մասին,

դ. հանրորեն վրանգավոր հեղինակների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: (...),

ե. հանցագործությանը պարճատված վնասը,

զ. հանցանքի կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը: (...):

(...) Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարած անձանց նկատմամբ պարտի տեսակի ու չափի, ինչպես նաև նշանակված պարտի կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքների իրենց ամբողջության մեջ վերլուծության հիման վրա կառուցելն ունի առանձնապես կարևոր նշանակություն: Ուստի, այդ հանգամանքները հաշվի չառնելը, դրանք անտեսելը կարող է

հանգեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը»¹:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Է.Գրիգորյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2017 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, Վեդի-Երևան ավտոճանապարհով դեպի Երևան ընթանալիս Վանաշեն գյուղի ճանապարհահատվածում թույլ է տվել ճանապարհային երթևեկության կանոնների 2-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ շուրջ 60 կմ/ժամ արագությամբ ընթանալիս վերցրել է բջջային հեռախոսը և շուրջ 10 վայրկյան շեղելով ուղադրությունը երթևեկությունից՝ ցանկացել է միացնել հեռախոսում ներբեռնված նավիգացիոն համակարգը, արդյունքում չի կարողացել իրականացնել ավտոմեքենայի պատշաճ և անվտանգ կառավարում, մուտք է գործել հանդիպակաց ուղեմաս և բախվել է հանդիպակաց ընթացող «Վագ 2106» մակնիշի ավտոմեքենայի առջևի մասին՝ անզգուշությամբ պատճառելով Վ.Շահինյանի և Զ.Սարգսյանի մահը²:

Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում նշել է, որ հաշվի է առնում Է.Գրիգորյանի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ նրա դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ արդյունքում եզրահանգելով, որ ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան սահմանելով, հնարավոր է հասնել պատժի նպատակներին³:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման⁴:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գագիկ Ղուկասյանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0075/01/16 որոշման 13-14-րդ կետերը, ինչպես նաև, *mutatis mutandis*, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Մահակյանի* գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10, *Էդմոն Սասարյանի* գործով 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11, *Արամայիս Հովհաննեսյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշումները:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

14. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-12-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական վերլուծության չեն ենթարկել ամբաստանյալի կողմից կատարված հանցավոր արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող մի շարք գործոններ:

Մասնավորապես, ստորադաս դատարանները՝

ա) պատշաճ գնահատման չեն ենթարկել ամբաստանյալի կողմից թույլ տված երթևեկության կանոնների խախտման բնույթը: Այսպես՝ շուրջ 60 կմ/ժամ արագությամբ ընթանալու պարագայում ամբաստանյալը վերցրել է բջջային հեռախոսը, շեղել է ուշադրությունը երթևեկությունից, արդյունքում մուտք է գործել հանդիպակաց ուղեմաս, որպիսի խախտումը կոնկրետ իրադրությունում ավելի հավանական է դարձրել ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը,

բ) բավարար ուշադրության չեն արժանացրել նաև ճանապարհային երթևեկության կանոնների խախտման արդյունքում պատճառված վնասի բնույթը: Մասնավորապես, խախտման արդյունքում կյանքից զրկվել է երկու անձ, որպիսի հանգամանքը էականորեն բարձրացնում է կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում նշել է, որ որքան ծանր է վրա հասած հետևանքը, մեծ՝ վնասի չափը, այնքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, որպիսի հանգամանքը հակադարձ համեմատական է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հնարավորությանը: Այլ խոսքով՝ որքան բարձր է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, այնքան ցածր է դրա համար նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հավանականությունը¹:

15. Ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս, պատշաճ գնահատման չեն ենթարկել կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են վերջինիս կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնի խախտման բնույթը և դրա արդյունքում վրա հասած հանրային վտանգավոր հետևանքները, այն է՝ պատճառված վնասի չափն ու բնույթը:

¹ Տե՛ս Արամայիս Հովհաննեսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԲ/0014/01/14 որոշման 15-րդ կետը:

Մինչդեռ, ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակի ու չափի, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ եզրահանգումները պետք է կառուցվեն վերոնշյալ հանգամանքների՝ իրենց ամբողջության մեջ մանրամասն վերլուծության արդյունքում, իսկ դրանք անտեսելը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման:

16. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի խախտում, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր: Այսինքն, թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը պատժի մատուցելու և փոփոխելու, այն է՝ ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառելը վերացնելու համար:

17. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը նախատեսում է պատժից ազատել անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց:

Է.Գրիգորյանը մեղադրվում է անզգուշությամբ կատարված հանցանքի համար, որը տեղի է ունեցել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, և որի համար նա դատապարտվել է չորս տարի ժամկետով ազատազրկման: Նման պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման անհրաժեշտ վավերապայմանները: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքն ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք:

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝
«Մոյն օրենքի կատարումը վերապահել՝

(...)

3) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (...):»:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի հիման վրա ամբաստանյալ Է.Գրիգորյանը ենթակա է պատժից ազատման:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Է.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էլեն Աշոտի Գրիգորյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի որոշումը պատժի մասով բեկանել ու փոփոխել՝ ամբաստանյալ Էլեն Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նշանակված 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառելը վերացնել:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ Էլեն Աշոտի Գրիգորյանին ազատել պատժից:

3. Էլեն Աշոտի Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

4. Ստորագրաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0308/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Մ.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Էդգար Արամի Ծատինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հուլիսի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 15131816 քրեական գործը:

2016 թվականի սեպտեմբերի 7-ին Էդգար Ծատինյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի նոյեմբերի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մայիսի 11-ի դատավճռով Է.Ծատինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 3 (երեք) ամիս ժամկետով: Է.Ծատինյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Է.Ծատինյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 11-ի դատավճիռը բեկանել, Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել է անպարտ և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն/ս 2016 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Մաշտոցի 20 հասցեի դիմաց իրեն պարկանող «Միցուրիչի Պաշերո» մակնիշի 01 DO 099 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով ճանապարհը փակելու միջոցով կանգնեցրել է Հովհաննես Խաչիկի Ավագյանին պարկանող «Հոնդա» մակնիշի 0550 APA հաշվառման համարանիշի մոտոցիկլետը, որից հետո իջել է ավտոմեքենայից և սեռական բնույթի հայիոյանքներ տրայով վերջինիս հարձակվել նրա վրա: Հաշվի չառնելով հավաքված անձանց ներկայությունը, խուլիգանական մղումներով, այն է՝ սեփական անձի առավելությունն ընդգծելու մղուցքից մղված, հասարակության հանդեպ դրսևորելով սկնհայր արհամարհանք, բարձրաձայն հնչեցնելով սեռական բնույթի հայիոյանքներ՝ դիտավորությամբ կոպիտ կերպով 3 րոպե տևողությամբ խախտել է հասարակական կարգը և օգտագործելով իրեն ճանապարհը չգիջելը որպես պարտիվակ, մի քանի անգամ փորձել է հարվածներ

հասցնել Հովհաննես Խաչիկի Ավագյանին, սակայն չի կարողացել, քանի որ վերջինս կիրառել է մարտարվեստի ինքնապաշտպանական հնարքներ: Մոր 3 բույե տնտեսության վիճաբանության ժամանակ չկարողանալով հարվածել վերջինիս՝ Էդգար Արամի Ծարինյանը դիտարկությանը՝ խուլիգանական մղումներից ելնելով, ուրքով հարվածել և վնասել է Հովհաննես Խաչիկի Ավագյանի մտքոցիկլերը՝ պատճառելով 35.000 ՀՀ դրամի գույքային վնաս»¹:

5.1. Առաջին ատյանի դատարանն ըստ էության արժանահավատ է համարել և դատավճռի հիմքում, ի թիվս այլնի, դրել է ամբաստանյալ Է.Ծարինյանի և վկա Դ.Կարախանյանի նախաքննական ցուցմունքները, տուժող Հ.Ավագյանի ցուցմունքները, այլ փաստաթուղթ ճանաչված՝ Երևան քաղաքի Մաշտոցի 20 և 13 հասցեներում տեղակայված տեսանկարահանող սարքերի տեսագրությունները պարունակող լազերային սկավառակը, «Լազերային սկավառակը գննելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 30-ի, 2016 թվականի հոկտեմբերի 6-ի և 2016 թվականի նոյեմբերի 15-ի արձանագրությունները²:

Մասնավորապես, **ամբաստանյալ Է.Ծարինյանի**՝ դատաքննությանը հետազոտված նախաքննական ցուցմունքների համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 16-ի սահմաններում, իր վարած «Միտցուրիշի Պաշերո» մակնիշի 01 DO 099 հաշվառման համարանիշով ավտոմեքենայով ընկերոջ՝ Դավիթ Կարախանյանի հետ միասին երթևեկել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայով: Ամիրյան փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկի մոտակայքում իր ավտոմեքենայի դիմացը մոտոցիկլետով կտրել է մի անձնավորություն, որի պատճառով ինքը դուրս է եկել հանդիպակաց գոտի և ավտոմեքենան փախցրել է ընդհարվելուց: Վախենալով նշված միջադեպից՝ ինքն ավտոմեքենան վարել է մոտոցիկլետի հետևից և անցնելով հաջորդ խաչմերուկը, կանգառի մոտ իր ավտոմեքենայով փակելով մոտոցիկլետի ճանապարհը՝ կանգնեցրել է վարորդին, որից հետո իջել է ավտոմեքենայից և դիտողություն արել նրան՝ ասելով «այ ախմախ, ուշադիր քշի»: Իր դիտողությանը նա պատասխանել է՝ «ախմախ դու ես», որից հետո ինքը տաքացել ու հարձակվել է նրա վրա, և իրենց միջև քաշքշուկ է սկսվել, որի ընթացքում իրենք փոխադարձ հայիոյել են միմյանց: Ինքը փորձել է անընդհատ հարվածել տուժողին, սակայն նա, շատ ուժեղ լինելով և մարտական հնարքներ կիրառելով, տապալել է իրեն գետնին: Դավիթը վիճաբանությանը չի մասնակցել, այլ փորձել է միայն բաժանել իրենց, սակայն տուժողը նրան նույնպես տապալել է գետնին: Տեսնելով դա՝ ինքը ուրքով հարվածել է մոտոցիկլետին, որը վայր է ընկել: Դրանից վարորդն ավելի է բորբոքվել ու մի քանի անգամ նորից հարվածել է իրենց: Հասկանալով, որ նա իրենից ավելի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 148-149:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 116-118:

ուժեղ է, Դավիթի հետ նստել է իր ավտոմեքենան ու հեռացել: Հայտնել է, որ զոջում է կատարածի համար և պատրաստ է վերականգնել պատճառած վնասները:

Ամբաստանյալ Է.Ծատինյանը տուժող Հ.Ավագյանի հետ որպես մեղադրյալ առերեսվելիս նշել է, որ տուժողի հայտնած տվյալները ճիշտ են, և ինքը զոջում է կատարվածի համար¹:

5.2. **Վկա Դ.Կարախանյանի՝** դատաքննությամբ հետազոտված նախաքննական ցուցմունքների համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 16-ի սահմաններում, հարևանի՝ Է.Ծատինյանի հետ նրա կողմից օգտագործվող «Միցուրիշի Պաջերո Իո» մակնիշի ավտոմեքենայով երթևեկել են Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայով: Ամիրյան փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկի մոտակայքում՝ ընթացքի մեջ, իրենց ճանապարհը փակել է մոտոցիկլետով մի անձնավորություն, որի պատճառով իրենք դուրս են եկել ճանապարհի հանդիպակաց հատված և խուսափել մեկ այլ ավտոմեքենայի հետ ընդհարվելուց: Դրանից հետո Էդգարն ավտոմեքենան վարել է նշված մոտոցիկլետի հետևից և ավտոմեքենայով ճանապարհը փակելու միջոցով կանգնեցրել է այն, որից հետո դուրս գալով ավտոմեքենայից՝ մոտեցել է մոտոցիկլետի վարորդին: Նրանց միջև նկատել է քաշքուկ, իջել է ավտոմեքենայից և փորձել բաժանել: Այդ ընթացքում Էդգարը փորձել է հարվածել մոտոցիկլետի վարորդին, սակայն չի կարողացել, քանի որ վերջինս կիրառել է մարտարվեստի ինքնապաշտպանական հնարքներ²:

5.3. **Տուժող Հ.Ավագյանը** դատաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ դեպքի օրը, երբ ինքը Մաշտոցի պողոտայով ընթանալիս է եղել իր մոտոցիկլետով, անցել է Մաշտոցի պողոտայի և Ամիրյան փողոցի խաչմերուկը, ամբաստանյալն ավտոմեքենայով փակել է իր ճանապարհը: Որևէ խախտում թույլ տված չի եղել, սակայն քանի որ եղել է սաղավարտագլխարկով, մտածել է, որ իրեն շփոթել են մեկ այլ անձի հետ, կանգնել է: Այդ պահին ավտոմեքենայից դուրս գալով և սեռական բնույթի հայհոյանքեր տալով՝ ամբաստանյալը մոտեցել է իրեն, քաշքշել և փորձել է ձեռքով խփել գլխին: Պաշտպանվելով՝ կիրառել է ձյուդոյի հնարք և ամբաստանյալին գցել գետնին: Այդ պահին, նկատելով ավտոմեքենայի առջևի աջ նստատեղից իջած վկա Դ.Կարախանյանին, ինքնաբերաբար, պաշտպանվելու նկատառումով, հարվածել է նաև նրան ու գցել գետնին, թեև նա չի փորձել հարվածել իրեն: Դրանից հետո, նկատելով ոտքի կանգնած ամբաստանյալին, նրան գցել է վկայի վրա և սկսել ծեծել: Միջադեպի հետ կապված հավաքվել են մարդիկ, փակվել է ճանապարհը, և հավաքվածներից մեկը նույնպես ձեռքերով հարվածել է ամբաստանյալին, ով նորից ընկել է գետնին, որից

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 117:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 117:

հետո կանգնել է, ոտքով հարվածել է իր մոտոցիկլետին ու հայհոյանքներ տալով՝ նստել է ավտոմեքենան¹:

5.4. «Լազերային սկավառակը գննելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 30-ի, հոկտեմբերի 6-ի և նոյեմբերի 15-ի արձանագրությունների համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 16:52:29-ին, Մաշտոցի 20 հասցեի կանգառի մոտ կայանել է «Հոնդա» մոդելի կարմիր մոտոցիկլետը, որից անմիջապես հետո կանգ է առել «Միցուրիշի Պաշերո» մակնիշի սպիտակ ավտոմեքենան, որի վարորդի դուռը բացելով՝ մեքենայի ձախ կողմից իջել է կարմիր կարճաթև վերնազգեստով մի տղամարդ և, հարձակվելով մոտոցիկլետի վարորդի վրա, փորձել է հարվածել նրան, սակայն վերջինս կիրառելով մարտարվեստի ինքնապաշտպանական հնարքներ, գետնին է տապալել ավտոմեքենայի վարորդին: 16:53:31-ին կարմիր վերնազգեստով տղամարդը, մոտենալով կանգառի մոտ կայանած մոտոցիկլին, ոտքով հարվածել է դրան, որի արդյունքում այն ընկել է գետնին²:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է հետևյալը. «(...) [Վ]երլուծելով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքն ու համակցության մեջ գնահատելով դատարանությանը հեղազուգրված ապացույցները, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա ձևավորված ներքին համոզմամբ հանգում է հետևության, որ ամբաստանյալ Է.Ծարինյանը, վնասելով րուժողի գույքը, կատարել է խուլիգանություն, այսինքն՝ չնչին առիթով դիտավորությանը կուպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ամբաստանյալի կատարած արարքին տրվել է ճիշտ քրեաիրավական գնահատական, քրեական գործի՝ դատարանի կողմից որպես արժանահավասար գնահատվող ապացույցները՝ ամբաստանյալի և վկա Դ.Կարախանյանի նախաքննական ցուցմունքները, րուժողի ցուցմունքը, զննությունների արձանագրություններն ու փորձագետի եզրակացությունը, ձեռք են բերվել քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ, և սույն քրեական գործին վերաբերվող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ հաստատվում է, որ ամբաստանյալ Է.Ծարինյանը կատարել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, որով և պետք է պարասխանաարվության ենթարկվի:

Դատարանը, անդրադառնալով ամբաստանյալի պարճառաբանություններին և նրա ու վկաների դատարանական ցուցմունքներին, գտնում է, որ վերը նշված, դատարանի կողմից որպես արժանահավասար

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 117:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 118:

գնահատված ապացույցների համակցությամբ հերքվում են ամբաստանյալի պատճառարանություններն ու վկաների ցուցմունքները:

Դատարանը նաև գրնում է, որ ամբաստանյալը, դատարանությանը րալով նախաքննական ցուցմունքից էականորեն րարբերվող ցուցմունք, ցանկանում է խուսափել պարասխանավորությունից և պարժից, իսկ վկաները փորձում են իրենց պաշտպանության րակ վերցնել նրան»¹:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. «(...) [Ի]նչպես նախաքննության, այնպես էլ դատարանության ընթացքում ձեռք բերված ապացույցներով հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվել Է.Ծարինյանի արարքում ուրիշի գույքի վնասմամբ խուլիգանության հանցակազմի առկայությունը: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ անձի արարքում խուլիգանության հանցակազմի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է միաժամանակ հասարակական կարգի խախտման կոպիտ լինելու և հասարակության նկատմամբ այդ խախտմամբ արտահայտված անհարգալից վերաբերմունքի բացահայտ լինելու հանգամանքը: Մինչդեռ կոնկրետ դեպքում առկա ապացույցներից և որևէ մեկը չի հաստատվել, որ Է.Ծարինյանի արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պարճառվել և վերջինիս գործողությունների հետևանքով հասարակության անդամների մոտ գայրույթ, վրդովմունք, իրենց կյանքի, առողջության, գույքի պահպանության կապակցությամբ վախի զգացում չի առաջացել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում առկա չէ նաև հանցագործության սուբյեկտիվ կողմը: Մասնավորապես, Է.Ծարինյանի արարքը չի կարող գնահատվել որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, քանի որ ուղղված է եղել կոնկրետ անձի և չի հերապնդել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպարակ:

(...) Սույն գործով առկա ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է րալիս, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում կոնկրետ գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանք, ինչպիսին է Էդգար Ծարինյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախարեսված և նրան մեղսագրված արարքը կարարելու մեջ:

Վերաքննիչ դատարանը, նկարի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն հաստատված համարելու, որ Էդգար Ծարինյանի արարքում առկա է հանցակազմ, գրնում է, որ պերք

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 118-119:

է ճանաչել և հոչակել Էդգար Ծափինյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում հանցակազմի բացակայության հիմքով (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը, վերլուծելով Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները, փաստել է, որ ակնհայտ անհիմն են Վերաքննիչ դատարանի այն դատադրությունները, որ ամբաստանյալի արարքը չի կարող գնահատվել որպես հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, և որ ամբաստանյալի արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն չի պատճառվել:

Այսպես՝ գործի փաստական հանգամանքներից երևում է, որ տուժողի կողմից վթարային իրադրություն ստեղծվելուց հետո ամբաստանյալը ճանապարհի որոշ հատված հետապնդել է նրան, հավասարվել վերջինիս մոտոցիկլետին և փակել ճանապարհը, այնուհետև դուրս է եկել ավտոմեքենայից և «այ ախմախ, էս ինչ ձև ես քշում» վիրավորական արտահայտությամբ ու սեռական բնույթի հայհոյանքներ տալով՝ հարձակվել տուժողի վրա՝ փորձելով հարվածել նրան: Բողոքի հեղինակն ընդգծել է, որ վերոնշյալն առավել քան վկայում է ամբաստանյալի մոտ խուլիգանական դրդումների առկայության, քան զուտ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության մասին՝ հատկապես որ տուժող Հ.Ավագյանը որևէ վիրավորական արտահայտություն չէր արել ամբաստանյալի հասցեին, նրանք նախկինում միմյանց չեն ճանաչել, թշնամանք չեն ունեցել: Այլ կերպ՝ անձը, ում նկատմամբ կատարվել է հանցավոր արարքը, պատահաբար է ընտրվել, իսկ ամբաստանյալի կողմից նման վերաբերմունքի կարող էր արժանանալ հասարակության անդամներից յուրաքանչյուրը, ով, ըստ նրա, իր ավտոմեքենայի համար վթարային իրադրություն կստեղծեր:

8.1. Բողոքաբերի կարծիքով անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ գործով ձեռք բերված ապացույցներով չի հաստատվել Է.Ծափինյանի արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու և հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու հանգամանքը: Մասնավորապես, ըստ տուժողի ցուցմունքների՝ դեպքի վայրում միջադեպի հետ կապված հավաքվել են մարդիկ, փակվել է ճանապարհը, և հավաքվածներից մեկը նույնպես ձեռքով հարվածել է ամբաստանյալին: Բացի այդ, այլ փաստաթուղթ ճանաչված լազերային սկավառակի՝ Երևան քաղաքի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 78-79:

Մաշտոցի 20 և 13 հասցեներում տեղեկայված տեսանկարահանող սարքերի տեսագրություններով ևս հիմնավորվում է ամբաստանյալի գործողությունների հետևանքով հասարակական կարգը խախտելու փաստը:

Այսպես՝ նշված տեսագրությամբ հստակ երևում է, թե ինչպես է ամբաստանյալն իր ավտոմեքենայով հավասարվում տուժողին և մի պահ արգելակում ու կանգնում նրան զուգահեռ, որից հետո տուժողը մոտոցիկլետով փորձում է առաջ շարժվել, սակայն ամբաստանյալը կրկին փակում է նրա ճանապարհը և կայանում մայթեզրին, որից հետո իջնում է ավտոմեքենայից և նախահարձակ լինում տուժողի վրա: Միջադեպը տևում է շուրջ երեք թույն, որի ընթացքում մայթեզրին հավաքվում են բազմաթիվ մարդիկ, իսկ ճանապարհով անցնող որոշ ավտոմեքենաներ մի պահ դանդաղեցնում են ընթացքը կամ ուղղակի արգելակում են և կանգնում: Տեսաձայնագրության 16:54:30-րդ վայրկյանին երևում է, թե ինչպես են երկու անձինք ճանապարհի հակառակ մայթեզրից արագ քայլերով անցնում փողոցը և շտապում դեպի վիճաբանության վայր: Ընդ որում, ամբաստանյալի հեռանալուց հետո մայթեզրում հավաքված անձինք դեռ որոշ ժամանակ (մոտ երկու թույն տևողությամբ) շարունակում են մնալ դեպքի վայրում:

8.2. Արդյունքում բողոքի հեղինակը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանը գործով ձեռք բերված ապացույցները գնահատելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով մեկնաբանված ու հստակեցված ապացույցների գնահատման չափանիշները և դրանց միակողմանի ու կամայական գնահատման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սխալ մեկնաբանման արդյունքում հաստատված չի համարել Է.Ծատինյանին մեղսագրված հանցագործությունը:

9. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 11-ի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք Է.Ծատինյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.

Խուլիզանությունը՝ դիրավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով (...):

2. Նույն արարքը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝ պարծվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապարիկից երեքհարյուրապարիկի չափով, կամ կալանքով մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: (...):»:

Խուլիզանության հանցակազմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ խուլիզանության հիմնական հանցակազմի անմիջական **օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են հասարակական կարգի բովանդակությունը**, մինչդեռ խուլիզանության որակյալ հանցակազմերը երկօբյեկտ են, որոնց դեպքում որպես պարտադիր լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս անձի անձեռնմխելիության, պատվի և արժանապատվության, առողջության, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Օբյեկտիվ կողմից խուլիզանությունը դրսևորվում է **հասարակական նշանակության վայրերում**, ինչպես նաև հասարակական նշանակություն չունեցող վայրերում, որտեղ **առկա է հանրություն**, սահմանված կարգի կոպիտ խախտման մեջ, որն արտահայտվում է հասարակության անդամների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Հասարակական կարգի ոչ կոպիտ խախտումը, որը թեև արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով: Նույն կերպ՝ վկայակոչված հոդվածով ենթակա չէ որակման հասարակական կարգի այն կոպիտ խախտումը, որը չի դրսևորվել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

Կոպիտ խախտումն արտահայտվում է նրանում, որ անձի կատարած գործողությունների հետևանքով **հասարակության անդամների մեջ առաջանում է զայրույթ, վրդովմունք, կամ նրանց անհարմարություն կամ լուրջ անհանգստություն է պարճատվում, կամ առաջանում է վախի զգացում իրենց կյանքի, առողջության, գույքի պահպանության կապակցությամբ**: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումն արտահայտվում է մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելու, հասարակական վայրերում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելու, շրջապատի մարդկանց և կոլեկտիվին հակադրվելու ձևով:

Սուբյեկտիվ կողմից խուլիգանություն կատարող անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հասարակության նկատմամբ, այլև ցանկանում է դա: Խուլիգանությունը կատարվում է **խուլիգանական դրդումներով**, որը դրսևորվում է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու ձգտմամբ¹:

12. Սույն գործի փաստական հանգամանքներից երևում է, որ ամբաստանյալ Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ճանապարհը փակելու միջոցով կանգնեցրել է Հ.Ավագյանի մոտոցիկլետը, իջել է ավտոմեքենայից և սեռական բնույթի հայիոյանքներ տալով՝ հարձակվել է նրա վրա, շուրջ երեք ընդամենը տևողությամբ խախտել է հասարակական կարգը, մի քանի անգամ փորձել հարվածել տուժողին, այնուհետև ոտքով հարվածել և վնասել է Հ.Ավագյանի մոտոցիկլետը՝ պատճառելով 35.000 ՀՀ դրամի գույքային վնաս²:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Է.Ծատինյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք, որի համար պետք է պատասխանատվության ենթարկվի³:

Վերաքննիչ դատարանը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ նշելով, որ առկա ապացույցներից որևէ մեկով չի հաստատվել, որ Է.Ծատինյանի արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պատճառվել: Բացի այդ, հանցագործության սուբյեկտիվ կողմը ևս չի հաստատվել, քանի որ արարքն ուղղված է եղել կոնկրետ անձի դեմ և չի հետապնդել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակ⁴:

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ամբաստանյալը՝

ա) տուժողի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների ենթադրյալ խախտման պատճառաբանությամբ հետապնդել է նրան, ճանապարհը փակելու միջոցով ստիպողաբար կանգնեցրել վերջինիս մոտոցիկլետը,

¹ Խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ *Շահեն Հախվերդյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԳ/0014/01/11 որոշումը:

² Տե՛ս՝ սույն որոշման 5-րդ կետը:

³ Տե՛ս՝ սույն որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս՝ սույն որոշման 7-րդ կետը:

բ) վիրավորական արտահայտությամբ և սեռական բնույթի հայհոյանքներով նախահարձակ է եղել՝ փորձելով հարվածել տուժողին,

գ) շուրջ երեք թույն տևողությամբ հասարակական նշանակության վայրում՝ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայում՝ ժամը 17-ի սահմաններում, բազմաթիվ անձանց ներկայությամբ խախտել է հասարակական կարգը,

դ) ոտքով հարվածել է և գցել տուժողի մոտոցիկլետը՝ պատճառելով 35.000 ՀՀ դրամի վնաս:

14. Սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով արդարացնելով, անտեսել է վերջինիս արարքում խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայության մասին վկայող, գործով հաստատված փաստական տվյալների համակցությունը:

Այսպես՝ Է.Ծատինյանը հասարակական նշանակության վայրում՝ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայում՝ ժամը 17-ի սահմաններում, շուրջ երեք թույն տևողությամբ խախտել է հասարակական կարգը, այն է՝ տվել է սեռական բնույթի հայհոյանքներ, վիրավորական արտահայտություն է կատարել տուժողի հասցեին, նախահարձակ է եղել՝ փորձելով հարվածել նրան, այնուհետև ոտքով հարվածել է տուժողի մոտոցիկլետին, գցել այն ու վնասել: Ամբաստանյալի գործողությունների արդյունքում բազմություն է հավաքվել, ճանապարհով անցնող որոշ ավտոմեքենաներ ընթացքը մի պահ դանդաղեցրել են, որոշները՝ արգելակել և կանգնել, մեկ անձ նույնպես միջամտել է ու ձեռքով հարվածել ամբաստանյալին: Վերոնշյալ հանգամանքները հաստատվել են ամբաստանյալ Է.Ծատինյանի և վկա Դ.Կարախանյանի, տուժող Հ.Ավագյանի ցուցմունքներով, այլ փաստաթուղթ ճանաչված՝ Երևան քաղաքի Մաշտոցի 20 և 13 հասցեներում տեղակայված տեսանկարահանող սարքերի տեսագրությունները պարունակող լազերային սկավառակով և «Լազերային սկավառակը գննելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 30-ի, հոկտեմբերի 6-ի և նոյեմբերի 15-ի արձանագրություններով¹:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մեջբերված փաստական տվյալները վկայում են Է.Ծատինյանի կողմից հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու և հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու մասին, ուստի Վերաքննիչ դատարանի այն պատճառարանությունը, որ առկա ապացույցներից որևէ մեկով չի հաստատվել Է.Ծատինյանի արարքի

¹ Տե՛ս սույն որոշման 5.1-5.4-րդ կետերը:

հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառվելու հանգամանքը, անհիմն է և հերքվում է գործով հաստատված փաստական տվյալներով:

15. Անդրադառնալով ամբաստանյալ Է.Ծատինյանի արարքում խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք նույնպես չեն բխում սույն քրեական գործի նյութերից: Այսպես՝ ամբաստանյալը և տուժողը միմյանց չեն ճանաչել, անբարյացակամ հարաբերությունների մեջ չեն գտնվել, իսկ տուժողի անձի ընտրությունը եղել է պատահական՝ ըստ ամբաստանյալի՝ պայմանավորված նրա կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնները ենթադրյալ խախտելու հանգամանքով: Այլ կերպ՝ ամբաստանյալը, հասարակության նկատմամբ դրսևորելով ակնհայտ արհամարհական վերաբերմունք, բազմաթիվ անձանց ներկայությամբ բարձրաձայն տվել է սեռական բնույթի հայհոյանքներ և շուրջ երեք րոպե տևողությամբ խախտել է հասարակական կարգը: Այս առումով Վճռաբեկ դատարանը համաձայն է բողոքաբերի այն փաստարկին, որ վերոշարադրյալն առավել քան վկայում է ամբաստանյալի մոտ խուլիգանական դրդումների առկայության, քան զուտ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության մասին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ եթե նույնիսկ տուժողի կողմից իրականում թույլ էր տրվել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում, ապա ամբաստանյալը դրան անհամաչափ արձագանք է տվել, այն է՝ տուժողին հետապնդել է, ստիպողաբար կանգնեցրել, հայհոյանքներ տվել, այնուհետև վնասել վերջինիս մտոցիկլետը, որպիսի հանգամանքները ևս վկայում են ամբաստանյալի մոտ խուլիգանական դրդումների առկայության մասին:

16. Այսպիսով, սույն որոշման 13-15-րդ կետերում կատարված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Է.Ծատինյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված չեն:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով Է.Ծատինյանի մեղավորության վերաբերյալ եկել էր ճիշտ եզրահանգման:

17. Մինչև սույն ժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով առերևույթ առկա է քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանք և կրկնելով նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանները չունեն բացարձակ բնույթ և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այնի, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հոդվածի (ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) համատեքստում՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյո՞ք ամբաստանյալ Է.Ծատիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարգավորված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):»*

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.*

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե*

(...)

6) անցել են վաղեմության ժամկետները. (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ [կետում նշված հիմքով] (...) գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:»*

Քրեական հետապնդումը բացառող քննարկվող հիմքի առկայությանը Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները: Մինևս ժամանակ, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատաս-

¹ Տե՛ս u, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Մխիթար Էլոյանի և այլոց վերաբերյալ գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

խանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը¹:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, իսկ դրա համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի գերազանցում երկու տարին², ուստի այն դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Է.Ծատինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքն ավարտվել է *2016 թվականի հուլիսի 2-ին*³: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալի մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է *2018 թվականի մայիսի 11-ին*, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան⁴: Վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում *2018 թվականի օգոստոսի 28-ին* կայացրել է որոշում, որով ճանաչել է հոչակել է ամբաստանյալ Է.Ծատինյանի անմեղությունը վերջինիս մեղսագրվող արարքում⁵: Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ *2019 թվականի փետրվարի 1-ի* որոշմամբ ընդունվել է վարույթ⁶:

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 18-րդ կետում վկայակոչված իրավական նորմերի և կատարված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Է.Ծատինյանին մեղսագրված արարքն ավարտվել է *2016 թվականի հուլիսի 2-ին*, իսկ *2018 թվականի հուլիսի 2-ի* դրությամբ նրա նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռ չի եղել: Հետևաբար, Է.Ծատինյանին քրեական պատաս-

¹ Վաղեմության ժամկետների կիրառման պայմանների վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ Վճռաբեկ դատարանի՝ *Մասիկյու Սաղաթելյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, *Միրաժ Ղամբարյանի և այլոց* վերաբերյալ գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14, *Ֆարիդա Ավագիմյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱՎԴ2/0016/01/14, *Մադրանիկ Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԵԿԴ/0180/01/15 որոշումները:

² Տե՛ս՝ սույն որոշման 11-րդ կետը:

³ Տե՛ս՝ սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս՝ սույն որոշման 2-րդ կետը:

⁵ Տե՛ս՝ սույն որոշման 3-րդ կետը:

⁶ Տե՛ս՝ սույն որոշման 4-րդ կետը:

խանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Է.Ծատինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Հիշյալ հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ անձն արդեն իրացրել է օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իր իրավունքը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս նրա դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է:

21. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, ամբաստանյալ Է.Ծատինյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մայիսի 11-ի մեղադրական դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի արդարացման որոշումը պետք է բեկանել, Է.Ծատինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճել:

Ամբաստանյալ Է.Ծատինյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Էդգար Արամի Ծատինյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի մայիսի 11-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի

օգոստոսի 28-ի որոշումը բեկանել: Ամբաստանյալ Էդգար Արամի Ծատինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և քրեական գործի վարույթը կարճել:

2. Ամբաստանյալ Էդգար Արամի Ծատինյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին՝ վերացնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ/0017/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Ս.ԱՇՐԱՖՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սասուն Դավթի Աշրաֆյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի պաշտոնակատար Տ.Ամբարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հունվարի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90750116 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 24-ի որոշմամբ Սասուն Դավթի Աշրաֆյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրը որոշում է կայացվել մեղադրյալ Ս.Աշրաֆյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ թիվ 90750116 քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ Ս.Աշրաֆյանի՝ քննությունից թաքնվելու հիմքով:

2017 թվականի հոկտեմբերի 1-ին Ս.Աշրաֆյանը Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը և նախաքննության մարմնի՝ նույն օրվա որոշմամբ կասեցված գործի վարույթը վերսկսվել է:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Ս.Աշրաֆյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորումը վերահաստատվել է:

2017 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճռով Ս.Աշրաֆյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2017 թվականի հունիսի 25-ից: Վճռվել է նաև ամբաստանյալ Ս.Աշրաֆյանից՝ որպես դատական ծախս բռնագանձել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

3. Ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի պաշտպան Ա.Ադամյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը բեկանել և փոփոխել է, Ս.Աշրաֆյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով և դատապարտել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Ս.Աշրաֆյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխվել է չհեռանալու մասին ստորագրությամբ, և նա ազատ է արձակվել: Որոշվել է նաև Ս.Աշրաֆյանին ազատել Առաջին ատյանի դատարանի դատավճռով վերջինիս վրա դրված 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դատական ծախսից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի պաշտոնակատար Տ.Ամբարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

4.1. 2019 թվականի հունիսի 6-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի դիմումը, որով հայտնել է իր համաձայնությունը՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) կիրառելու համար:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Աշրաֆյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ. «(...) [Ե]ս, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ 81151 զորամասի 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի հրամանատար, կոչումով կապիտան, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով 28.12.2015թ.-ին, ժամը 09:00-ից [այլևս] չի ներկայացել ծառայության»¹:

6. Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Ս.Աշրաֆյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռուսաստանի Դաշնություն մեկնելուց առաջ զորամասի հրամանատարությանը տեղյակ չի պահել, ոչ որի ոչինչ չի հայտնել²:

6.1 Վկա Արմեն Արամայիսի Զուլայանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ս.Աշրաֆյանն ընդհանուր խոսակցությունների ժամանակ ասել է, որ ցանկանում է այլ աշխատանքի անցնել, քանի որ աշխատավարձը չի բավարարում³:

6.2 Վկա Պետրոս Արամայիսի Տիտյանը ցուցմունք է տվել այն մասին, որ չի կարող ասել, թե կոնկրետ ում է պարտք եղել Ս.Աշրաֆյանը, տեղյակ է միայն, որ վարկերից մեկով երաշխավոր է եղել համաձայնող սպաներից Վլադիկ Համբարձումյանը, ով էլ անձամբ յուրաքանչյուր ամիս վճարում է վարկի գումարը⁴:

6.3 Վկա Վլադիկ Վաչագանի Համբարձումյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ս.Աշրաֆյանի խնդրանքով բանկում հանդես է եկել որպես երաշխավոր, որ վերջինիս վարկ տրամադրեն: Քանի դեռ Ս.Աշրաֆյանը ծառայության մեջ է եղել, վարկի գումարի և տոկոսների մարումը կատարվել է նրա աշխատավարձից, սակայն 2015 թվականի դեկտեմբերին Ս.Աշրաֆյանը գնացել է արձակուրդ և այլևս չի ներկայացել ծառայության: Դրանից հետո նրա վարկի գումարի մարման պարտականությունը մնացել է իր վրա: Վկայի ցուցմունքների համաձայն՝ մինչև Ս.Աշրաֆյանին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 59:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

հայտնաբերելը, նրանից որևէ լուր չի ունեցել, նա երբևէ չի զանգահարել և վարկը մարելու համար գումար չի ուղարկել¹:

6.4 Վկա Ռազմիկ Մամվելի Սարոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ս.Աշրաֆյանի խնդրանքով բանկից իր անունով վարկ է վերցրել և փոխանցել վերջինիս, սակայն այն մարել է անձամբ²:

6.5 2017 թվականի նոյեմբերի 6-ին որպես այլ փաստաթուղթ ապացույց է ճանաչվել Սասուն Դավթի Աշրաֆյանի զեկուցագիրը՝ իրեն զինված ուժերից զորացրելու վերաբերյալ³:

6.6 ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 81151 զորամասի 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի հրամանատար Պ.Տիտյանի կողմից Սասուն Դավթի Աշրաֆյանին տրված ծառայողական բնութագրի համաձայն՝ կապիտան Աշրաֆյանը ՀՀ զինված ուժերի թիվ 81151 զորամասում ծառայել է 2014 թվականի մայիս ամսից որպես 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ հրետանային մարտկոցի հրամանատար: Ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես բացասական սպա, մասնագիտորեն պատրաստված է թույլ, հաճախակի թերացել է իր պարտականություններում: Կոլեկտիվի կողմից վստահություն չի վայելել: Ֆիզիկապես առողջ է, շարային առումով՝ ձգված: Կարողանում է պահպանել պետական և ռազմական գաղտնիքներ⁴:

6.7 Սասուն Դավթի Աշրաֆյանի ծառայողական քարտի քաղվածքի համաձայն՝ նա ծառայության ընթացքում չորս անգամ արժանացել է խրախուսանքի՝ ծառայության մեջ բարձր ցուցանիշներ ցուցաբերելու, ծառայողական պարտականությունները բարելիիղձ կատարելու և զինվորական կարգապահության համար, և երեք անգամ ենթարկվել է տույժի՝ նկատողությունների և խիստ նկատողության՝ ծառայողական պարտականություններում թերանալու համար⁵:

7. Առաջին առյանի դատարանի դատավճռի համաձայն. «(...) Դատարանը դատաքննությանը հեղափոխված ապացույցներով հաստատված համարեց, որ ՀՀ ՊՆ թիվ 81151 զորամասի 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ հրետանային մարտկոցի հրամանատար, կապիտան Սասուն Դավթի Աշրաֆյանը, 2010 թվականին ավարտելով «Վազգեն Մարգարյանի» անվան ռազմական ինստիտուտը և սրանալով առաջին զինվորական կոչումը, ծառայության է անցել ՀՀ զինված ուժերում: Վերջինս հեղափոխ գինվորական ծառայությունը շարունակելու նպատակով 2014 թվականի մայիս ամսին փեղափոխվել և ծառայության է նշանակվել ՀՀ ՊՆ թիվ 81151 զորամասում՝ վերը նշված պաշտոնում:

¹ Տե՛ս 'ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրություն:

² Տե՛ս 'ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 215-218:

³ Տե՛ս 'ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 198:

⁴ Տե՛ս 'ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 5:

⁵ Տե՛ս 'ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 7-8:

Տվյալ գործում մասնաճյուղի ղեկավարը Սասուն Աշրաֆյանը ծառայության հետ կապված ինդիկատորներ չի ունեցել գործում սահմանափակ հրամանատարության և համաժառանգությունների հետ գրվել է նորմալ ծառայողական փոփոխությունների մեջ, նրա նկատմամբ երբևէ բռնություն չի գործադրվել և պարհիվ ու արժանապատվությունը չի պահպանվել: Սակայն վերջինս անձնական շահերը վեր դասելով ծառայության շահերից, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով պարտավոր լինելով 28.12.2015թ.-ին ներկայանալ ծառայության վայր, դեռ արձակուրդի մեջ գրվելու ընթացքում՝ 25.12.2015թ.՝ ժամը 13:49-ին, Գյումրիի օդանավակայանից մեկնել է Հայաստանի Հանրապետությունից: 24.03.2016թ.-ին ՀՀ ՔԿ ԶԶԳՎ վեցերորդ կայսզորային քննչական բաժնում որոշում է կայացվել կապիտան Սասուն Դավթի Աշրաֆյանին ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նույն օրը վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Այնուհետև, 25.06.2017թ. Սասուն Դավթի Աշրաֆյանը Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել է վերցվել է արգելանքի, որից հետո 01.10.2017թ.-ին էքստրադիցիայի ենթարկվելով՝ տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն: (...) Ապացուցված է Սասուն Դավթի Աշրաֆյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու մեջ և նա ենթակա է քրեական պատասխանատվության նշված հոդվածի սանկցիայով:

Դատարանը նման հետևության է հանգել՝ գործով հավաքված ապացույցները բազմակողմանի վերլուծության ենթարկելով, յուրաքանչյուր ապացույց այլ ապացույցների հետ համադրելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով, դրանք հետազոտելով և գնահատելով դրանց վերաբերելիության և թույլատրելիության, ինչպես նաև ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

(...)

Անդրադառնալով սույն քրեական գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա ներկայացված 2.996.829 (երկու միլիոն ինը հարյուր ինսունվեց հազար ութ հարյուր քսանինը) ՀՀ դրամի չափով դատական ծախսերին, որն իրենից ներկայացնում է հետախուզման մեջ գրվող ամբաստանյալին ՀՀ ՊՆ ռազմական ուսիկանության ծառայողների միջոցով Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու հետ կապված ծախսերը, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի դրույթներով՝ Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սասուն Դավթի Աշրաֆյանին պետք է մասնակի ազատել սույն քրեական գործով

ներկայացված դատական ծախսերը վճարելուց՝ նկատի ունենալով, որ գումարի գանձումը կարող է էսպես ազդել նրա խնամքի տակ գրնվող անձանց նյութական վիճակի վրա, ուստի որպես դատական ծախս՝ Մասուն Դավթի Աշրաֆյանից պետք է բռնագանձել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար: (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պարասխանարվություն է սահմանվում դասալքության՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալու համար:

(...)

Նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով քրեական պարասխանարվություն է սահմանվում զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պարճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար, եթե ինքնակամ բացակայությունը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով:

(...)

Ս.Աշրաֆյանը 25.12.2015թ. ՀՀ-ից հեռացել է և 28.12.2015թ. ծառայության վայր չի ներկայացել ոչ թե զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով, այլ պարտքեր, ֆինանսական ինդիքներ ունենալու պարճառով մեկնել է ՌԴ՝ գումար աշխատելու և պարտքերը փակելու համար: Այսինքն, առանց հարգելի պարճառների ժամանակին ծառայության չի ներկայացել, որը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով:

Այսինքն, Ս.Աշրաֆյանի արարքը համապարասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի, այլ նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասի հարկանիշներին:

(...)

Վերաքննիչ դատարանը վերոշարադրյալ քրեափրավական նորմերի լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, հաշվի առնելով ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի անվճարունակ լինելը, ինչի պարճառով ժամանակավորապես խուսափել է զինվորական ծառայությունից, ինչպես նաև առաջին արյանի դատարանի կողմից հաշվի առնված այն հանգամանքը, որ գումարի գանձումը կարող է էսպես ազդել նրա խնամքի տակ գրնվող անձանց՝ կնոջ և երկու երեխաների նյու-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 116-119:

թական վիճակի վրա, գրնում է, որ վերջինիս ընդհանրապես պետք է ազատել հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարները որպես դատական ծախս վճարելուց: (...)>¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է չհիմնավորված և անօրինական դատական ակտ՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ, 124-րդ և 127-րդ հոդվածների պահանջները:

10. Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածը և նույն հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ *Արթուր Մելքոնյանի և Վարդան Վարդանյանի* վերաբերյալ թիվ ԱՎԴ1/0018/01/15 գործով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ փաստել է, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի արարքում քննարկվող հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Մասնավորապես, բողոք բերած անձը գտել է, որ Վերաքննիչ դատարանը չի իրականացրել սույն գործում առկա ապացույցների լրիվ ու բազմակողմանի քննություն և այդ ապացույցներն իրենց համակցության մեջ չի գնահատել: Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանը քննության առարկա չի դարձրել և որևէ գնահատականի չի արժանացրել գործի նյութերում առկա այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք վկայում են ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի արարքը նրա կողմից ուղղակի դիտավորությամբ և զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով կատարելու մասին:

11. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազի պաշտոնակատար Տ.Ամբարյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 2-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ս.Աշրաֆյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մա-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 67-82:

սով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝ «1. Երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինձառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը՝

պարժվում է (...):

2. Նույն արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից՝ պարժվում են (...):

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է պարփոք կարգապահական գումարակում կրող զինձառայողի կողմից՝

պարժվում է (...):

4. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են սպայի կամ ենթասպայի կողմից՝

պարժվում են (...):

5. Սույն հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ կամ չորրորդ մասերով նախատեսված արարքները, եթե ինքնակամ բացակայությունը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով

պարժվում են (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը՝

պարժվում է (...):»:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշների վերաբերյալ Վճռարեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Դ]ատալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ հանդիսացող՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակը՝ հանցավորի՝ օրենքով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի ընթացքում զինվորական պարտականությունները կատարելուց վերջնականապես խուսափելու մտադրությունն է (ընդ որում, այդպիսի մտադրությունը զինձառայողի մոտ կարող է առաջանալ ոչ միայն զորամասը կամ ծառայության վայրը թողնելուց առաջ, այլև զորամասն ինքնակամ լքելուց հետո):

(...) [Ե]նթադրյալ հանցանք կատարած անձի դիրավորության

ուղղվածության, վերջինիս՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակի մասին կարող են վկայել որոշ հանգամանքներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

ա) զինվորական ծառայության պարտականությունների կատարման նկատմամբ հանցավորի վերաբերմունքը բնորոշող փյախներ, այսինքն՝ հանգամանքներ, որոնք բնութագրում են վերջինիս անձն ու նրա վարքագիծը զինվորական ծառայությունից խուսափելուց առաջ (օրինակ՝ համաժառանգակցներին զինվորական ծառայության դժվարությունների և դրանից վերջնականապես խուսափելու մտադրության մասին հայտնելը, զինվորական ծառայության հետ կապված պարտականությունների ոչ բարեխիղճ կատարումը, զինվորական ծառայության նկատմամբ հանցավորի բացասական վերաբերմունքի մասին վկայող այլ հանգամանքներ),

բ) զորամասը կամ ծառայության վայրը թողնելուց հետո հանցավորի վարքագիծը բնութագրող հանգամանքներ, այլ կերպ՝ անձի հետհանցավոր վարքագիծը (օրինակ՝ զինվորական ծառայության վայրից երկարաժամկետ բացակայությունը, անձը հաստատող փաստաթղթերը ոչնչացնելը կամ կեղծ փաստաթղթեր ձեռք բերելը, զորամասը կամ ծառայության վայրը լքելուց կամ ծառայության չներկայանալուց հետո աշխատանքի անցնելը, դասալքության և զինվորական ծառայության մեջ գրգռվելու հանգամանքն այլ անձանցից թաքցնելը, բնակության հիմնական վայրը փոխելը և այլն):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թվարկված հանգամանքները սպառիչ չեն, և այլ փյախներ ևս օբյեկտիվորեն կարող են վկայել անձի մոտ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու մտադրության առկայության մասին:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն հեղափոխվող նպատակի՝ դասալքության կատարման շարժառիթները արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն, սակայն այդպիսիք կարող են էական նշանակություն ունենալ, օրինակ, արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու հանցավորի անձը գնահատման ենթարկելիս: Ընդ որում, դասալքության կատարման շարժառիթները կարող են տարբեր լինել՝ զինվորական ծառայության հետ կապված սահմանափակումները (մասնավորապես՝ զինվորական խիստ կարգապահությունը, զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունների առկայությունը և այլն) հաղթահարելու ցանկության բացակայություն, հանցանք կատարելու համար քրեական պարասխանափոխության ենթարկվելու վախ, ընտանեկան ու կենցաղային բնույթի տարբեր դրդապարճառներ և այլն»¹:

¹ Տե՛ս Արթուր Մելքոնյանի և Վարդան Վարդանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԱՎԴ-1/0018/01/15 որոշման 19.1-19.2-րդ կետերը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Ս.Աշրաֆյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ վերջինս, լինելով ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 81151 զորամասի 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի 2-րդ մարտկոցի հրամանատար, կոչումով կապիտան, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով 2015 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 9-ից այլևս չի ներկայացել ծառայության¹:

Նախաքննական մարմնի՝ 2016 թվականի մարտի 24-ի որոշմամբ Ս.Աշրաֆյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: 2017 թվականի հունիսի 25-ին Ս.Աշրաֆյանը Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել և վերցվել է արգելանքի, իսկ 2017 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հանձնվել Հայաստանի Հանրապետությանը²:

Առաջին ատյանի դատարանը, դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքում, Ս.Աշրաֆյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում³:

Վերաքննիչ դատարանն իր հերթին եկել է այն եզրահանգման, որ Ս.Աշրաֆյանի արարքը համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի, այլ նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասի հատկանիշներին: Որպես հիմնավորում Վերաքննիչ դատարանը նշել է, որ Ս.Աշրաֆյանը 2015 թվականի դեկտեմբերի 25-ից հեռացել է Հայաստանի Հանրապետությունից և 2015 թվականի դեկտեմբերի 28-ից ծառայության վայր չի ներկայացել մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես, այլ ոչ թե վերջնականապես խուսափելու նպատակով, քանի որ պարտքեր, ֆինանսական խնդիրներ ունենալու պատճառով է մեկնել Ռուսաստանի Դաշնություն՝ գումար աշխատելու և պարտքերը փակելու համար⁴:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները դիտարկելով սույն որոշման 13-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

16.1 Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը, արդյունքում սխալ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

եզրահանգման է եկել ամբաստանյալի դիտավորության ուղղվածության, հետևաբար նաև՝ արարքի քրեաիրավական որակման հարցում: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի դիտավորության ուղղվածությունը և բովանդակությունը բացահայտելիս Վերաքննիչ դատարանը մանրամասն վերլուծության չի ենթարկել գործի այն հանգամանքները, որոնք վկայում են ծառայության վայրն ինքնակամ լքելուց առաջ զինվորական ծառայության պարտականությունների կատարման նկատմամբ ամբաստանյալի բացասական վերաբերմունքի մասին, ինչպես նաև բնութագրում են ծառայության վայրն ինքնակամ լքելուց հետո վերջինիս վարքագիծը (ամբաստանյալի հետհանցավոր վարքագիծը):

16.2 Այսպես՝ Վերաքննիչ դատարանի կողմից որևէ գնահատման չեն ենթարկվել՝

- այլ աշխատանքի անցնելու նպատակը և այդ մասին ընդհանուր խոսակցություններում հայտարարելը¹,

- Ս.Աշրաֆյանի ծառայողական բնութագիրը՝ տրված ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 81151 զորամասի 1-ին Դ-20 հրետանային դիվիզիոնի հրամանատար Պ.Տիտոյանի կողմից, համաձայն որի՝ կապիտան Ս.Աշրաֆյանը ծառայության ընթացքում որպես սպա իրեն դրսևորել է բացասական, մասնագիտորեն պատրաստված է թույլ, հաճախակի թերացել է իր պարտականություններում²,

- Ս.Աշրաֆյանի ծառայողական քարտի քաղվածքը, համաձայն որի՝ նա ծառայության ընթացքում երեք անգամ ենթարկվել է տույժի, որոնցից երկուսը՝ նկատողության, իսկ երրորդը՝ խիստ նկատողության՝ ծառայողական պարտականություններում թերանալու համար³,

- բնակության վայրը փոխելու մասին զորամասի հրամանատարությանը չհայտնելու հանգամանքը⁴,

- Ս.Աշրաֆյանի կողմից իրեն զորացրելու վերաբերյալ զեկուցագիրը ներկայացնելու հանգամանքը, ինչը վկայում է այն մասին, որ ամբաստանյալն այլևս մտադրություն չի ունեցել վերադառնալու ծառայության⁵,

- զինվորական ծառայության վայրից երկարաժամկետ բացակայությունը, մասնավորապես՝ Ս.Աշրաֆյանը 2015 թվականի դեկտեմբերի 28-ից չի ներկայացել ծառայության, իսկ 2016 թվականի մարտի 24-ից գտնվել է հետախուզման մեջ և հայտնաբերվել է գրեթե մեկ տարի երեք ամիս անց՝ 2017 թվականի հունիսի 25-ին՝ Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից⁶,

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6.7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 6.5-րդ կետը:

⁶ Տե՛ս սույն որոշման 1-ին և 7-րդ կետերը:

- Ս.Աշրաֆյանի կողմից ՀՀ սահմանը լքելուց հետո համաձայնակիցների հետ կապ չհաստատելու և վերջիններիս երաշխավորությամբ վերցված վարկերը չմարելու հանգամանքը¹:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ հանգամանքները բավարար են փաստելու, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանն իրեն մեղսագրված արարքը կատարել է ուղղակի դիտավորությամբ և զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով, ինչը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին: Հետևաբար, հիմնավոր չի կարող համարվել Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Ս.Աշրաֆյանն առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չի ներկայացել, որը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով:

17.1 Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ Ս.Աշրաֆյանը ծառայության վայր չի ներկայացել ոչ թե զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով, այլ պարտքեր, ֆինանսական խնդիրներ ունենալու պատճառով մեկնել է ՌԴ՝ գումար աշխատելու և պարտքերը փակելու համար, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դա վկայում է ոչ թե ամբաստանյալի արարքում դասալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարրի բացակայության, այլ դասալքության կատարման շարժառիթի մասին, ինչը, կոնկրետ դեպքում, արարքը՝ որպես դասալքություն որակելու տեսանկյունից իրավական որևէ նշանակություն չունի:

18. Հետևաբար, հիմնավոր չեն ամբաստանյալ Ս.Աշրաֆյանին մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասից ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով վերաորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

19. Այսպիսով, վերոշարադրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով որոշում կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, մասնավորապես՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածը, ինչպես նաև խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջները, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

20. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով և գնահատելով գործում առկա ապա-

¹ Տե՛ս սույն որոշման 6.2-6.4-րդ կետերը:

ցույցները, եկել է հիմնավոր եզրահանգման՝ ամբաստանյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայության հարցում, ինչպես նաև, պահպանելով պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակել է համաչափ պատիժ:

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք ամբաստանյալ Ս.Աշրաֆյանից դատական ծախս գանձելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «*Դատական ծախսերը բաղկացած են՝ հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարներից*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Սույն օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի 1-6-րդ կետերում թվարկված դատական ծախսերը կարող են դատարանի կողմից դրվել դատապարտյալի վրա*:

2. Դատարանն իրավունք ունի դատապարտյալին լրիվ կամ մասնակի ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց, եթե դատապարտյալն անվճարունակ է, կամ գումարի գանձումը կարող է էսպես ազդել դատապարտյալի ինսամբի փակ գրնվող անձանց նյութական վիճակի վրա:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*(...) Դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝*

(...)

14) ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը.

(...):»:

23. Դատական ծախսերն այն նյութական ռեսուրսներն են, որոնք օգտագործվում են գործի պատշաճ քննությունն ապահովելու համար: Մասնավորապես, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ապահովելու անհրաժեշտությամբ գործին ներգրավված մասնագետի, թարգմանչի, փորձագետի մատուցած ծառայությունների և այլ միջոցառումների իրականացման համար ծախսված գումարները քրեական դատավարությունում ներառված են դատական ծախսերի մեջ: Մինևսույն ժամանակ, օրենսդիրը դատական ծախսերի շարքին է դասել նաև հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարները¹: Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Գոռ Ծալրությանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՏԴԶ/0083/01/17 որոշումը:

վերլուծությունը ցույց է տալիս, որ ելնելով մարդասիրության սկզբունքից՝ դատարանին օրենքով իրավունք է վերապահված ամբաստանյալին ազատել որոշակի դատական ծախսերից, այդ թվում՝ նաև հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարներից, եթե դատապարտյալն անվճարունակ է, կամ գումարի գանձումը կարող է էապես ազդել դատապարտյալի խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա:

24. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով գործով ներկայացված՝ 2.996.829 (երկու միլիոն ինը հարյուր ինսուսովեց հազար ութ հարյուր քսանինը) ՀՀ դրամի չափով դատական ծախսին, գտել է, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանին պետք է մասնակի ազատել ներկայացված դատական ծախսը վճարելուց՝ նկատի ունենալով, որ գումարի գանձումը կարող է էապես ազդել նրա խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա¹:

Իր հերթին Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի անվճարունակ լինելը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի կողմից հաշվի առնված այն հանգամանքը, որ գումարի գանձումը կարող է էապես ազդել նրա խնամքի տակ գտնվող անձանց՝ կնոջ և երկու երեխաների նյութական վիճակի վրա, գտել է, որ Ս.Աշրաֆյանին ընդհանրապես պետք է ազատել հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարները որպես դատական ծախս վճարելուց²:

Ստորադաս դատարանները, վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, հաստատված են համարել, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի խնամքին են գտնվում մինչև 14 տարեկան երկու երեխաներն ու կինը, բացի այդ ամբաստանյալն ունեցել է պարտքեր, ֆինանսական և անձնական խնդիրներ, որոնց պատճառով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն³:

25. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 22-23-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և վերլուծության լույսի ներքո, հաշվի առնելով, որ հետախուզման համար քրեական հետապնդման մարմնի կողմից ծախսված գումարի բռնագանձումն էապես ազդելու է ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի խնամքի տակ գտնվող անձանց նյութական վիճակի վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալից դատական ծախս գանձելու վերաբերալ Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնավոր չէ:

26. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ, 169-րդ հոդվածների խախտումներ,

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7- 8-րդ կետերը:

որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա Առաջին ատյանի դատարանի դատավճիռը մասնակիորեն՝ դատական ծախսի մասով քեկանելու ու փոփոխելու հիմք է:

27. Հիմք ընդունելով սույն որոշման 19-20-րդ և 26-րդ կետերում արված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 2-ի որոշումը՝ Ս.Աշրաֆյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով պետք է քեկանել, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը մասնակիորեն՝ դատական ծախսի մասով՝ քեկանել ու փոփոխել՝ Ս.Աշրաֆյանին ազատելով դատական ծախսից:

28. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) կիրառելի է Ս.Աշրաֆյանի նկատմամբ: Մասնավորապես, Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Համաներում հայտարարելով՝ պարծից ազարել՝ առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պարծի դատապարտված անձանց (...):»*

Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Սույն օրենքի կարարումը վերապահել (...) Հայասրանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայասրանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (...):»*

29. Վերոնշյալ իրավադրույթների հաշվառմամբ և նկատի ունենալով, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի նկատմամբ նշանակված պատիժը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, ամբաստանյալն իր համաձայնությունն է հայտնել իր նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառմանը¹, ինչպես նաև քրեական գործի նյութերում բացակայում է դրա կիրառմանը խոչընդոտող որևէ հանգամանք՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանին պետք է ազատել նշանակված պատժի կրումից:

30. Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալ Ս.Աշրաֆյանի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով,

¹ Տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սասուն Դավթի Աշրաֆյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 5-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 2-ի որոշումը բեկանել:

2. Սասուն Դավթի Աշրաֆյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 1-ի դատավճիռը մասնակիորեն՝ դատական ծախսի մասով, բեկանել ու փոփոխել. ամբաստանյալ Սասուն Աշրաֆյանին ազատել դատական ծախսից: Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

3. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Սասուն Աշրաֆյանին ազատել նշանակված պատժից:

4. Սասուն Դավթի Աշրաֆյանի նկատմամբ՝ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴԿ/0028/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԶՈՒՌՆԱԶՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Նարեկ Մայիսի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 28-ի որոշման դեմ պաշտպան Վ.Զուռնայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում 2015 թվականի հոկտեմբերի 22-ին հարուցվել է թիվ 37105115 քրեական գործը, իսկ 2015 թվականի հոկտեմբերի 25-ին՝ թիվ 37105215 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2015 թվականի հոկտեմբերի 30-ին Նարեկ Մայիսի Խաչատրյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ անչափահաս Ն.Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ է ներգրավվել վերջինիս մայրը՝ Մանե Խաչատրյանը:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ թիվ 37105215 քրեական գործը միացվել է 37105115 քրեական գործին:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ Ն.Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 21-ի որոշմամբ մեղադրյալ Ն.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ կետերով ու 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի հոկտեմբերի 12-ին Ն.Խաչատրյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Ն.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ կետերով, 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և նույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կիրառմամբ՝ դատապարտվել ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ կետերով, և ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 90-րդ հոդվածների կիրառմամբ՝ Ն.Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2015 թվականի հոկտեմբերի 30-ից:

3. Ամբաստանյալ Ն.Խաչատրյանի պաշտպան Վ.Զուռնայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունիսի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Ն.Խաչատրյանի պաշտպան Վ.Զուռնայանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Ն.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ այն բանի համար, որ նա. «(...) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 10:30-ից 13:00-ի սահմաններում, գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու պարբերակով, սակայն ուրիշի գույքը հափշտակելու նախնական դիրավորությամբ գնացել է Եղեգնաձոր քաղաքի Իսակովի 25 հասցեում միայնակ բնակվող, 91-ամյա Վարդուշ Միմոնյանի տուն և նրանից որոշակի վճարի դիմաց խնդրել է կատարել այգեգործական աշխատանք: Վարդուշ Միմոնյանի առաջարկով մտնել է առանձնաբան խոհանոց, որտեղ նրա կրած ոսկյա ականջօղերը վերջինիս կյանքի համար վրանգավոր բնություն գործադրելով նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիրավորությամբ հափշտակելու նպատակով, բռնել է ուսի հարվածից, ուժգնությամբ քաշել, զցել է գեղնին, գլուխը հարվածել բերոնյա հարակին, ինչի հետևանքով Վարդուշ Միմոնյանը կենսական կարևոր նշանակության օրգան համարվող գլխի երեք տարբեր շրջաններին ներդրված առանձին բուր, կոշտ ներգործության արդյունքում սրանալով կյանքի համար վրանգավոր առողջության ծանր վնաս՝ բաց բուր գանգոլեղային վնասվածք, մահացել է: Այնուհետև, Նարեկ Խաչատրյանը Վարդուշ Միմոնյանի ականջներից հանելով հափշտակել է վերը նշված բաց կարմրավուն գույնի քարերով ոսկյա ականջօղերը և հեռացել հեղազայում դրանք 32.000 ՀՀ դրամով վաճառելով ոսկյա իրերի առուվաճառքով զբաղվող Հրահար Միմոնյանին: Բացի այդ, Նարեկ Խաչատրյանը 2015թ. հոկտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ից 18:30-ի սահմաններում, դարձյալ այգեգործական աշխատանքներ կատարելու պարբերակով, սակայն իրականում ուրիշի գույքն ավազակային հարձակմամբ հափշտակելու նախնական դիրավորությամբ, գնացել է Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղի 6-րդ փողոցի 6-րդ տան հարևանությամբ գտնվող, 76-ամյա Գոհար Բարսեղյանին պարկանոց հողամաս և նրանից որոշակի վճարի դիմաց խնդրել է կատարել այգեգործական աշխատանք, ինչին վերջինս համաձայնել է: Նրա առաջարկով քարձրացել է ծառը՝ խնձոր քաղելու, և վերևից նկատելով Գոհար Բարսեղյանի ականջներին կարմրավուն գույնի քարերով ոսկյա ականջօղեր՝ դրանք վերջինիս կյանքի համար վրանգավոր բնություն գործադրելով նրան ապօրինաբար կյանքից զրկելու դիրավորությամբ

հափշտակելու նպատակով, իջել է ծառից, վերցրել խնձորենուն հենած բախր և որպես զենք օգտագործվող այդ առարկայի մեքսիկոյի հատվածով թիկունքից ուժգին հարվածել է Գոհար Բարսեղյանի գլխի աջ գագաթ-քունքածոծրակային շրջանին, պարճառել կյանքի համար վրանգավոր առողջության ծանր վնաս՝ բաց բույթ գանգուղեղային վնասվածք, որը բերելով գլխուղեղի կենսական կարևորագույն ֆունկցիաների սուր խանգարման՝ հանգեցրել է Գոհար Բարսեղյանի մահվանը: Այնուհետև, Նարեկ Խաչատրյանը բերանքսիվայր ընկած Գոհար Բարսեղյանի ականջներից հանելով հափշտակել է վերը նշված ոսկյա ականջօղեղը և հեռացել, որոնք հետագայում 28.000 ՀՀ դրամով վաճառել է ոսկյա իրերի առուվաճառքով զբաղվող Սպարտակ Վարդանյանին: Բացի այդ, Նարեկ Խաչատրյանը, նախազգուշացված լինելով սուր մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և գիտակցելով, որ իր փրամադրած փեղեկությունը կեղծ է, ավագակային հարձակմամբ զուգորդված Վարդուշ Միմոնյանի և Գոհար Բարսեղյանի սպանության դեպքերի հետ առնչություն չունեցող Սմբար Զաքարյանին անհիմն մեղադրել է այդ՝ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ՝ դրանց վերաբերյալ բազմիցս գրավոր հաղորդելով իր կողմից արված ցուցմունքների արձանագրություններում¹:

6. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի մարտի 11-ի որոշման համաձայն. «(...) 2015 թվականի հոկտեմբերի 31-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին է ներկայացվել Մանե Աղվանի Խաչատրյանի, Նորիկ Մայիսի Խաչատրյանի և Նարեկ Մայիսի Խաչատրյանի նկատմամբ «Ներքին դիրում» օպերատիվ հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն սրանալու (...) միջնորդություն հարուցելու մասին գաղտնագրված որոշումը, որը դատարանի՝ գաղտնագրված որոշմամբ բավարարվել է (...)»²:

7. 2015 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում Մանե, Նորիկ և Նարեկ Խաչատրյանների նկատմամբ իրականացվել է «նեքսին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառում³:

8. Առաջին ատյանի դատարանը, Ն.Խաչատրյանին մեղավոր ճանաչելով նրան մեղսագրված արարքների կատարման մեջ, իր հետևությունները, ի թիվս այլնի, հիմնավորել է. ««Ներքին դիրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման փաստաթղթերում գրանցված մասին կազմված արձանագրությամբ, համաձայն որի՝ սենյակում իրար դեմ դիմաց նստած են եղել Նարեկ Խաչատրյանը, նրա մայր Մանե

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 76-101:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 54:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 53:

Խաչատրյանը, իսկ եղբայր Նորիկ Խաչատրյանը՝ բազմոցին: Նարեկ Խաչատրյանը պատասխանել է մոր հարցերին (...)¹:

8.1 Առաջին առյուծի դատարանն իր դատական ակտում փաստել է. «(...) [Առաջին արյանի դատարանը], անդրադառնալով ամբաստանյալի պաշտպանի այն պնդմանը, որ ներքին դիպրոմ օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված զննության արձանագրությունը հանդիսանում են անթույլատրելի ապացույցներ, քանի որ ձեռք են բերվել օրենքի կոպիտ խախտմամբ, այն է՝ ամբաստանյալ Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցչի առանձին և կոնֆիդենցիալ տեսակցելու իրավունքի խախտմամբ, գրնում է, որ չեն խախտվել ամբաստանյալի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքները՝ հաշվի առնելով նաև ներքին դիպրոմ օպերատիվ-հետախուզական միջոցառման բնույթը, որը նախատեսված է օրենքով, հերևաբար նշված ապացույցը թույլատրելի է (...)²:

9. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով «ներքին դիպրոմ» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված զննության արձանագրությունն անթույլատրելի ապացույցներ ճանաչելու մասին պաշտպանի պնդմանը, փաստել է. «(...) Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով (...) «Ներքին դիպրոմ» օպերատիվ-հետախուզական միջոցառման բնույթը, որը նախատեսված է օրենքով, գրնում է, որ նախաքննության մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով Մանե Աղվանի Խաչատրյանի, Նորիկ Մայիսի Խաչատրյանի և Նարեկ Մայիսի Խաչատրյանի նկատմամբ իրականացված «Ներքին դիպրոմ» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված զննության արձանագրությունը չի կարող համարվել քննչական գործողության կատարման կարգի կոպիտ խախտմամբ ձեռք բերված, քանի որ տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում արացված տվյալները չեն հանդիսացել փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ, որը կարող էր համարվել որպես ապացույց չթույլատրվող նյութ, հերևաբար ամբաստանյալի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքները չեն խախտվել և տվյալ ապացույցն առաջին արյանի դատարանի կողմից նույնպես հիմնավորված կերպով ճանաչվել է թույլատրելի: (...)»³:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 17-րդ, թերթեր 87-129:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 18-րդ, թերթեր 103-153:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի կարծիքով, «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու ընթացքում խախտվել է Ն.Խաչատրյանի իրավունքը՝ առանձին, կոնֆիդենցիալ և անարգել տեսակցելու օրինական ներկայացուցչի՝ Մ.Խաչատրյանի հետ: Հետևապես, «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված գննության արձանագրությունն անթույլատրելի ապացույցներ են, չէին կարող օգտագործվել և դրվել Ն.Խաչատրյանի մեղադրանքի հիմքում, քանի որ ձեռք են բերվել օրենքի կոպիտ խախտմամբ, ինչը սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

10.1 Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէր հաստատված համարելու Ն.Խաչատրյանի կողմից իրեն մեղսագրված հանցագործությունների կատարումը:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, ճանաչել ու հռչակել Ն.Խաչատրյանի անմեղությունը՝ հանցակազմի բացակայության հիմքով, և կայացնել արդարացման դատավճիռ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածյալի (մեղադրյալի) և օրինական ներկայացուցչի տեսակցության ժամանակ «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու իրավաչափության և դրա արդյունքում ստացված փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. «Ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը՝ որպես միջամտություն մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. կասկածյալ Նարեկ Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցչի Մ.Խաչատրյանի նկատմամբ «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս արդյո՞ք տեղի ունեցել է միջամտություն մասնավոր կյանքի անձեռնմխելիության

իրավունքի նկատմամբ:

14. ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի անվտանգության բարենկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

14.1 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի անվտանգության, հանցագործությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

14.2 Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի նախադեպային դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ խոսակցությունների կամ պատկերների տեսաձայնային ամրագրման սարքերի միջոցով գաղտնալսումն ընկնում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի գործողության ներքո նաև այն դեպքում, երբ անձին գաղտնի վերահսկել են ազատությունից զրկելու վայրերում: Այսպես, օրինակ, այս մոտեցումը կիրառվել է այն դեպքերում, երբ ձայնագրող սարքերն օգտագործվել են ոստիկանության բաժանմունքի խցում¹, տեսանկարահանումն իրակա-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *P.G. and J.H v. The United Kingdom* գործով 2001 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 44787/98:

նացվել է ոստիկանական բաժանմունքում¹, տեսաձայնային հսկողության միջոցները տեղադրվել են անձի խցում և այցելությունների համար նախատեսված տարածքում²:

Այցելությունների համար նախատեսված սենյակում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից խոսակցությունների գաղտնալսման առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ անվտանգության ապահովման նկատառումներով դա միանգամայն իրավաչափ է, սակայն *այլ նպատակով* խոսակցությունների պարբերաբար ձայնագրումը հակասում է այցելության համար նախատեսված սենյակների հիմնական նշանակությանը, այն է՝ ապահովել կալանավորված անձի և ազգականի մասնավոր կյանքը, որը ներառում է մերձավորի հետ հարաբերություններում արված հայտարարությունների գաղտնիությունը: Ուստի, քրեակատարողական հիմնարկի՝ այցելությունների համար նախատեսված սենյակում տեղի ունեցած խոսակցությունները կարող են ներառվել «մասնավոր կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատմամբ, մինչդեռ տակ կալանքի տակ գտնվող անձինք, ովքեր առաջին տեսակցության հնարավորություն են ստանում իրենց մերձավորների հետ, կարող են ակնկալել որոշակի գաղտնիություն, որը ներառում է հաղորդակցության ազատության որոշակի աստիճան, և չեն կարող ենթադրել, որ իրենց խոսակցությունները այցելության համար նախատեսված սենյակում կարող են ձայնագրվել՝ ապացույցներ հավաքելու նպատակով: Նշված հանգամանքներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, այցելությունների համար նախատեսված սենյակում խոսակցությունների ձայնագրումը և դրանց հետագա օգտագործումը դիտարկելով որպես անձնական կյանքին միջամտություն, գտել է, որ այս դեպքում պետք է գնահատել, թե արդյոք միջամտությունն արդարացված է եղել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, այն է՝ արդյոք միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, հետապնդել է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում՝ այդ նպատակին հասնելու համար⁴: Ընդ որում, անդրադառնալով օրենքով նախատեսված լինելու պահանջին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ Եվրոպական

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Perry v. The United Kingdom* գործով 2003 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 63737/00:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Allan v. The United Kingdom* գործով 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 48539/99:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Wisse c. France* գործով 2005 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 71611/01, 29-րդ կետը:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Wisse c. France* վճիռը, 30-31-րդ կետերը:

կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, օրենքով նախատեսված լինելու պահանջի որակական պայմանները ներառում են օրենքի կանխատեսելիությունը, այսինքն՝ անձը պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու իր վարքագծի հնարավոր հետևանքները, ինչպես նաև օրենքի համապատասխանությունը իրավունքի գերակայությանը¹: Ինչ վերաբերում է ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ լինելու պահանջին, ապա դա ենթադրում է, որ միջամտությունը պետք է համապատասխանի գերակա սոցիալական անհրաժեշտությանը և համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին²:

15. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Ներքին դիպուկորեն բնակարանում հայտնի և այլ տեղում հայտնի միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիպուկորեն արդյունքների ամրագրումը տեղանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:*

2. *Սույն օրենքում բնակարան հասկացությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով»:*

15.1 Վերոնշյալ նորմի մեկնաբանմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գոռ Սարգսյանի* վերաբերյալ որոշմամբ և նշել, որ «(...) *[Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրավապահ մարմինների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ է, որը նպատակ է հետապնդում բացահայտել, կանխել և խափանել հանցագործությունները, ինչպես նաև հայտնաբերել հանցագործությունը նախապարտավորող, կատարող և կատարած անձանց:*

(...) [Որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքում միջամտություն է տեղի ունենում մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին: Այդ պարագայում, իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում հարկավոր է հաշվի առնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ պետության կողմից ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով (...) սրանձնած պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները՝ մշտապես պահպանելով հանրային շահի և անհատի շահերի միջև անհրաժեշտ

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Matheron v. France* գործով 2005 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ, 29-րդ կետը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Campbell v. The United Kingdom* գործով 1992 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13590/88, 44-րդ կետը:

հավասարակշռությունը»¹:

15.2 Մինևույն ժամանակ, նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը, *Գոռ Մարգարյանի* գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ արձանագրել է, որ «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է ՀՀ ոստիկանության պաշտոնատար անձի աշխատասենյակում, որպիսի պայմաններում Գ.Մարգարյանի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի նկատմամբ միջամտություն տեղի չի ունեցել, ինչը բնորոշ է «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառմանը: Այսպես, Գ.Մարգարյանը գտնվելով ոստիկանության պաշտոնատար անձի աշխատասենյակում՝ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ ողջամիտ ակնկալիք՝ իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նրա նկատմամբ չէր կարող իրականացվել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը սահմանափակող «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառումը²:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2015 թվականի հոկտեմբերի 30-ին Նարեկ Խաչատրյանը ձերբակալվել է: Նույն օրն անչափահաս կասկածյալ Ն.Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ է ներգրավվել վերջինիս մայրը՝ Մանե Խաչատրյանը³,

- 2015 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում անչափահաս Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի տեսակցության ժամանակ նրանց նկատմամբ իրականացվել է «*ներքին դիպրում*» օպերատիվ-հետախուզական միջոցառումը⁴:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի փաստական հանգամանքները տարբերվում են *Գոռ Մարգարյանի* գործի փաստական հանգամանքներից: Այսպես, ի տարբերություն *Գոռ Մարգարյանի* գործի, որտեղ մեղադրյալի և հանրային իշխանություն կրող ոստիկանության պաշտոնատար անձի միջև տեղի ունեցած շփումները հանրային իրավահարաբերությունների տիրույթում էին, ուստի և մասնավոր կյանքի գաղտնիության երաշխիքով պաշտպանված լինել չէին կարող՝ հաշվի առնելով, որ *Գոռ Մարգարյանը* չէր կարող ունենալ ողջամիտ ակնկալիք իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Մարգարյանի* վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԳ/0229/01/16 որոշման 17-17.2-րդ կետերը:

² Տե՛ս նույն որոշման 19-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

սույն գործով «ներքին դիպրում» օպերատիվ հետախուզական միջոցառման իրականացման պայմանները և իրավիճակն այլ է: Այսպես, Նարեկ Խաչատրյանը, «ներքին դիպրում» օպերատիվ հետախուզական միջոցառման ժամանակ, տեսակցություն է ունեցել իր մոր՝ օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի հետ: Այսինքն՝ թեև սույն գործով ևս «ներքին դիպրում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացվել է ոստիկանության բաժնում, սակայն դրա ընթացքում մեղադրյալն իր մոր հետ շփվելիս կարող էր ունենալ ողջամիտ ակնկալիք՝ մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի վերաբերյալ: Այլ կերպ, նշված գործերով հաղորդակցության ազատության աստիճանն էականորեն տարբեր է և, ի տարբերություն իր պաշտոնեական լիազորություններն իրականացնող ոստիկանության աշխատակցի հետ *Գոռ Սարգսյանի* ունեցած շփման, Նարեկ Խաչատրյանը մոր հետ ունեցած տեսակցության ժամանակ կարող էր ենթադրել, որ իրենց զրույցն ունի մասնավոր բնույթ, ուստի և ենթակա է պաշտպանության՝ մասնավոր կյանքի գաղտնիության երաշխիքով: Նշված մոտեցումը համապատասխանում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սույն որոշման 14.2-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներին՝ այն առումով, որ մերձավորների հետ տեսակցությունների ժամանակ անձինք կարող են ակնկալել որոշակի գաղտնիություն, որի սահմանափակման իրավաչափության հարցը ենթակա է գնահատման՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պետության ստանձնած նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների համատեքստում: Այսինքն՝ մեղադրյալ Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի նկատմամբ իրականացված «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավաչափությունը ևս ենթակա է գնահատման՝ Եվրոպական կոնվենցիայի այդ հոդվածի շրջանակներում:

17.1 Մինևույն ժամանակ, վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով, որ կասկածյալ Ն.Խաչատրյանն իր մոր հետ տեսակցության ընթացքում կարող էր ունենալ ողջամիտ ակնկալիք՝ իր մասնավոր կյանքի գաղտնիության երաշխիքի վերաբերյալ, մինչդեռ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմամբ քրեական հետապնդման մարմնի կողմից վերահսկվել է դրա ընթացքում մեղադրյալի և իր մոր միջև տեղի ունեցած զրույցը, ապա Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության առարկան կազմող՝ մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքն առերևույթ միջամտության է ենթարկվել իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացմամբ: Այսինքն՝ իրականացված «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ շոշափվել են մասնավոր կյանքի գաղտնիությամբ պաշտպանվող՝ մեղադրյալի իրավունքներն ու օրինական շահերը:

18. Նման պայմաններում, ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ

դատարանը եզրահանգում է, որ կասկածյալ Նարեկ Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս տեղի ունեցել է միջամտություն մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ:

II. Անչափահաս կասկածյալի (մեղադրյալի) և նրա ներկայացուցչի տեսակցության նկատմամբ իրականացվող «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավաչափությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ կասկածյալ Նարեկ Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի նկատմամբ «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

20. Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (*Պեկինյան կանոններ*) համաձայն՝ «15.1 Դատաքննության ամբողջ ընթացքում անչափահասն իրավունք ունի ներկայացվելու իր դատապաշտպանի կողմից կամ դիմելու իրավական անվճար օգնության, եթե այդպիսի օգնության տրամադրումը նախատեսված է տվյալ երկրի օրենսդրությամբ:

15.2 Ծնողները կամ խնամակալը իրավունք ունեն մասնակցելու դատաքննությանը, և անչափահասների շահերից ելնելով իշխանության իրավասու մարմինը կարող է պահանջել նրանց մասնակցությունը: Սակայն իշխանության իրավասու մարմինը կարող է մերժել նրանց մասնակցությունը, եթե կան հիմքեր ենթադրելու, որ դա անհրաժեշտ է անչափահասի շահերի համար»¹:

Վերոնշյալ կանոնների մեկնաբանության համաձայն՝ «Եթե դատապաշտպանի մասին դրույթը և անվճար իրավական օգնությունն անհրաժեշտ է անչափահասին իրավական օգնությամբ ապահովելու համար, ուրեմն ծնողների կամ խնամակալի մասնակցությունը, ինչպես նշված է 15.2 կանոնում, պետք է դիտել որպես ընդհանուր հոգեբանական, զգացմունքային աջակցություն անչափահասին, ինչպես ֆունկցիա, որը պետք է կատարվի քննության ամբողջ ընթացքում»²:

¹ Տե՛ս Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (*Պեկինյան կանոններ*) հաստատված ՄԱԿ-ի 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով:

² Տե՛ս Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (*Պեկինյան կանոններ*) մեկնաբանություն, www.arlis.am Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացատրող կամ պարիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

(...)

2) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տրոհության սահմանափակման. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «(...) [Կ]ասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, սույն օրենսգրքով, սահմանված կարգով, իրավունք ունի՝

(...)

3) առանձին, կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել դատավարության ներկայացվող մասնակցի հետ՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ «Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է՝

(...)

5) պաշտպանին և օրինական ներկայացուցչին անարգել թույլատրել ներկայանալ կալանավորված անձին, սպահովել նրանց առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը՝ առանց դրանց թվի և տրոհության սահմանափակման. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն՝ «Անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանը մասնակցում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը»:

22. Անչափահասների նկատմամբ արդարադատությունը պարտավորեցնում է տարբերակված մոտեցում դրսևորել անչափահաս կասկածյալների (մեղադրյալների) նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց կողմից իրենց իրավունքներն ինքնուրույն պաշտպանելու դժվարությունները: Մասնավորապես, չափահասների համեմատ անչափահասներն ավելի խոցելի են: Հետևապես, քրեական դատավարությունում առանձնակի զգոնություն է պահանջվում՝ նրանց ֆիզիկական և հոգեկան բարօրու-

թյանը համարժեք պաշտպանություն ապահովելու համար: Այդ պատճառով, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն անչափահասների գործերով սահմանում է լրացուցիչ երաշխիքներ՝ ուղղված նրանց իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանության ապահովմանը: Այսպես, անչափահասների հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությանն օրինական ներկայացուցչի մասնակցությունը նրանց տարիքային, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններով պայմանավորված՝ իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Ավելին, հաշվի առնելով երեխայի առանձնահատուկ խոցելիությունը, նրա հասունության աստիճանը և մտավոր ու հուզական կարողությունները՝ անչափահասների գործերով վարույթին պարտադիր է նաև պաշտպանի մասնակցությունը, ինչը չի բացառում օրինական ներկայացուցչի մասնակցության լրացուցիչ երաշխիքը: Նրանք իրենց մասնակցությամբ փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով խոցելի խմբերի շարքին դասվող՝ անչափահասի իրավական պաշտպանությունն ու հոգեբանական աջակցությունը: Մինևս ժամանակ, նրանց պարտադիր մասնակցության միջոցով նաև ապահովվում է միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված՝ երեխայի լավագույն շահերի առաջնային պաշտպանությունը¹:

22.1 Վերոգրյալի հետ մեկտեղ, քրեադատավարական օրենքը կարևորելով պաշտպանի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքը, այն դիտարկելով անձի արդար դատաքննության և վերջինիս բաղկացուցիչ մասը կազմող՝ պաշտպանության իրավունքի համատեքստում, որոշակի պահանջներ է ներկայացնում այդ տեսակցությանը՝ երաշխավորելով դրա պատշաճ կազմակերպումը: Այդ նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է պաշտպանի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությանը ներկայացվող առանձին նույնական կարգավորումներ: Այսպես, օրենսդիրը նախատեսում է նման տեսակցությունների համար նույնաբնույթ այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝

- առանձին, այսինքն՝ մեկուսացված, առանց որևէ այլ անձի ներկայության: Նշված չափանիշի կարևորությունն արտահայտվում է նրանում, որ կասկածյալին (մեղադրյալին) առանց որևէ անձի ներկայության իր պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի հետ ազատ հաղորդակցվելու, այդ թվում՝ իր պաշտպանության իրականացման հետ կապված առանձին հարցեր քննարկելու իրավունք է վերապահվում,

¹ Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:

- կոնֆիդենցիալ, այսինքն՝ խորհրդապահական, գաղտնիության պայմաններում իրականացվող տեսակցություն: Այս պահանջն անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնարար երաշխիքներից է. բոլոր այն դեպքերում, երբ ապահովված չէ կոնֆիդենցիալ հանդիպման հնարավորությունը, ողջամտորեն վտանգի տակ է դրվում արդար դատաքննության տարրերից՝ անձի պաշտպանության իրավունքը¹,

- անարգել, այսինքն՝ անխոչընդոտ, անխափան, առանց այդ իրավունքի իրացման անհարկի սահմանափակման:

Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կասկածյալի (մեղադրյալի) հետ պաշտպանի և օրինական ներկայացուցչի տեսակցությանը ներկայացվող վերոնշյալ պահանջներից յուրաքանչյուրն ունի առաջըային նշանակություն և միտված է կասկածյալի (մեղադրյալի) իրավունքների լիարժեք պաշտպանությանը: Այդ պայմաններում, նկատի ունենալով նաև ինչպես պաշտպանի, այնպես էլ օրինական ներկայացուցչի հետ կասկածյալի (մեղադրյալի) տեսակցությանը ներկայացվող պահանջների նույնականությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ տեսակցության նկատմամբ միջամտության իրավաչափությունը պետք է որոշվի Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում՝ գնահատելով միջամտության համապատասխանությունն օրենքին, միջամտությամբ հետապնդվող նպատակի իրավաչափությունը և դրա անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում:

23. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*[Ներքին դիպրոմ] (...) օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ փորձերից անհնար է*»:

23.1 Վերոնշյալ իրավադրույթի համատեքստում Վճռաբեկ դատարանը Գոռ Սարգսյանի վերաբերյալ որոշմամբ նշել է. «*(...) [Օ]պերատիվ-հետախուզական գործունեության բնույթից ելնելով՝ իրավասու մարմիններն առաջադրված խնդիրները լուծելու նպատակով, համապատասխան միջոցառման փաստին ընդդեմ և այն իրականացնելիս, անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության դեպքում՝ համաչափության սկզբունքին համահունչ պետք է ապահովեն նաև արդար դատաքննության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու և*

¹ Տե՛ս Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի՝ *S. v. Switzerland* գործով 1991 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատներ թիվ 12629/87, 13965/88, 48-րդ կետը:

այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների համարժեք պաշտպանությունը:

Այդ համարեքստում, հարկ է վկայակոչել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումներն այն մասին, որ «երբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անվտանգությունը պաշտպանելու՝ պարասխանող պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք՝ պարզաձ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անվտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար»:

(...) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոնկրետ տեսակն ընտրելիս, ելնելով անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթից, պետությանը վերապահված սեփական հայեցողության լուսանցքի տիրույթի տարբերակման գաղափարն արտացոլված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասում: Մասնավորապես, օրենսդիրը որոշ խումբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար նախատեսելով լրացուցիչ չափանիշներ՝ սահմանափակել է դրանք ընտրելու իրավակիրառողի հայեցողության լուսանցքը: Այդպիսի միջոցառումների շարքին է դասվում «ներքին դիրտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի նպատակն անձին (անձանց) բնակարանում հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը վերահսկելն է, դրա արդյունքներն ամրագրելը՝ առանց այդ դեպքերի և իրադարձությունների ընթացքն ուղղորդելու կամ դրանք նախապես ծրագրելու:

(...) [Ե]լնելով միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները»¹:

24. Սույն որոշման 20-23.1-ին կետերում ներկայացված իրավանդությունների և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարությունում որոշ մասնակիցների

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Մարգարյանի վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԳ/0229/01/16 որոշման 17-17.2-րդ կետերը:

(կասկածյալ/մեղադրյալ և պաշտպան/օրինական ներկայացուցիչ) տեսակցության համար արդար դատաքննության իրավունքի ապահովման նպատակով երաշխավորված պաշտպանության ուժեղացված ռեժիմը, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում, կարող է հաղթահարվել այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալների առկայության դեպքում, որոնք մի կողմից բացառելով այդ շփումների նկատմամբ անհարկի միջամտությունը, մյուս կողմից պաշտպանելով դրանց հիմնական բովանդակությունը, կհիմնավորեն այդ շփումների նկատմամբ իրականացվող միջամտության իրավաչափությունը: Մասնավորապես, քրեադատավարական միջոցների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառմամբ ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող այդ շփումների նկատմամբ իրականացվող միջամտությունը կարող է արդարացվել ինչպես օրենսդրությամբ նախատեսված հիմքերի, այնպես էլ ծանրակշիռ փաստական տվյալների առկայության դեպքում, որոնք առերևույթ կհիմնավորեն և օբյեկտիվ դիտորդի համար համոզիչ կերպով կփաստարկեն այդ շփումների ընթացքում քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշների ենթադրյալ առկայությունը: Հակառակ մոտեցման պարագայում, եթե ուժեղացված պաշտպանության ներքո գտնվող շփումները ենթարկվեն անհարկի միջամտության, դրանց պաշտպանությանն ուղղված քրեադատավարական երաշխիքները կկորցնեն իրենց իմաստը և կդառնան առարկայազուրկ:

Նշված մոտեցումն ընկած է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիմքում: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատմամբ, փաստաբանները չեն կարող իրենց առջև դրված կարևոր խնդիրը լուծել, եթե չերաշխավորվի վստահորդների հետ նրանց շփումների գաղտնիությունը: Դա հիմնված է իրենց միջև առկա վստահության հարաբերությունների վրա, ինչից անուղղակիորեն կախված է նաև արդար դատաքննության իրավունքը¹: Մինևույն ժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Միացյալ Թագավորության դեմ գործերից մեկով, գնահատելով կալանավորված անձի՝ իր փաստաբանին ուղարկված կամ վերջինիցս ստացված նամակները քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից բացելու իրավաչափությունը՝ ժողովրդավարական հասարակության մեջ նման միջամտության անհրաժեշտ լինելու տեսանկյունից, փաստել է, որ դա թույլատրելի է միայն այն բացառիկ դեպքերում, երբ իշխանությունները ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու, որ քննարկվող արտոնությունը չարաշահվել է, քանի որ նամակի բովանդակությունը վտանգում է կալանավորվածներին պահելու վայրի

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Michaud v. France* գործով 2012 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 12323/11, 118-րդ և 119-րդ կետեր:

կամ այլ անձանց անվտանգությունը, կամ հանցագործության տարրեր է պարունակում: Իսկ ողջամիտ կասկածը կարող է կախված լինել գործի հանգամանքներից և ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ հաղորդակցման արտոնյալ ուղին չարաշահվել է¹:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո պաշտպանության ենթակա կասկածյալ/մեղադրյալ և պաշտպան/օրինական ներկայացուցիչ շփումների կապակցությամբ պետությունը՝ ի դեմս քրեական հետապնդման մարմինների, պետք է մի կողմից իր ունեցած նեգատիվ պարտավորության շրջանակներում ձեռնպահ մնա այդ շփումներին անհարկի միջամտելուց, մյուս կողմից՝ իր պոզիտիվ պարտավորության շրջանակներում երաշխավորի այդ շփումների պատշաճ կազմակերպումը՝ ապահովելով անձի հիմնարար իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Ինչ վերաբերում է հնարավոր հանցավոր գործողություններին հակազդելու քրեադատավարական գործառույթին, ապա այդ դեպքում՝ ա) կասկածյալ/մեղադրյալ և պաշտպան/օրինական ներկայացուցիչ շփումների նկատմամբ իրականացվող միջամտության հիմնավորվածության կշիռը պետք է համարժեք լինի այդ շփումների համար օրենսդրությամբ սահմանված ուժեղացված պաշտպանության կշիռն, բ) միջամտության ծավալը պետք է լինի նվազագույն, սահմանափակված լինի հնարավոր հանցավոր գործողությունների կատարման շրջանակով՝ ձեռնպահ մնալով դրանից դուրս՝ կասկածյալի/մեղադրյալի և պաշտպանի/օրինական ներկայացուցչի գրույցը վերահսկելուց և նրանց շփումների հիմնական բովանդակությունը գաղտնագերծելուց:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում անչափահաս Ն.Խաչատրյանի և վերջինիս մոր՝ օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի տեսակցության ժամանակ նրանց նկատմամբ իրականացվել է «ներքին դիրքում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի տեսաձայնագրությունը զննելու մասին արձանագրությունը դրվել է Առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճռի հիմքում՝ այն հիմնավորմամբ, որ նշված միջոցառումն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան և չի հանգեցրել անչափահաս Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցչի իրավունքների խախտման²,

- Վերաքննիչ դատարանը, 2018 թվականի հունիսի 28-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը,

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Campbell v. The United Kingdom* գործով վճռի 48-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

փաստել է, որ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված գննության արձանագրությունը չեն կարող համարվել քննչական գործողության կատարման կարգի կոպիտ խախտմամբ ձեռք բերված, քանի որ տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացքում ստացված տվյալները չեն հանդիսացել փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնք կարող էին համարվել որպես ապացույց չթույլատրվող նյութ¹:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-24-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը և դրա վերաբերյալ կազմված գննության արձանագրությունը թույլատրելի ապացույց համարելով՝ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ անչափահաս Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի տեսակցության ժամանակ նրանց նկատմամբ իրականացված «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին: Մասնավորապես, նշված օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ իրականացված միջամտությունը՝

- խախտել է նշված անձանց միջև տեսակցության կոնֆիդենցիալության՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախատեղապահին իրավունքով և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարևոր երաշխիքը: Այսինքն՝ ոչ իրավաչափ միջամտություն է տեղի ունեցել կասկածյալի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին, քանի որ վերահսկվել է գաղտնիության պայմաններում իր օրինական ներկայացուցչի հետ ունեցած տեսակցությունը, որի ընթացքում կասկածյալն ունեցել է ողջամիտ ակնկալիք, որ այն իրականացվում է խորհրդապահական կարգով,

- եղել է ոչ իրավաչափ՝ հաշվի առնելով, որ բացակայել են կասկածյալի և օրինական ներկայացուցչի կողմից իրենց շփման ընթացքում քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին վկայող փաստական տվյալներ: Այդ համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով իրականացված «ներքին դիպրում» օպերատիվ հետախուզական միջոցառումը չի իրականացվել իր բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան: Մասնավորապես, տվյալ պարագայում գործով չեն ներկայացվել փաստարկված տվյալներ այն մասին, որ 2015 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ, արդեն իսկ սկսված նախաքննու-

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

թյան պայմաններում, երբ կասկածյալը ձերբակալվածի կարգավիճակում գտնվել է ոստիկանության բաժնում, առկա է եղել հետախուզական-որոնողական բնույթի տվյալ միջոցառման իրականացման անհրաժեշտություն: Ավելին, չի հիմնավորվել, որ «ներքին դիպրում» օպերատիվ հետախուզական միջոցառման իրականացմամբ առկա է եղել քննիչի դատավարական գործունեությանն աջակցելու անհրաժեշտություն, որ քրեադատավարական գործիքակազմը բավարար չի եղել քրեական հետապնդման խնդիրների արդյունավետ իրացման համար¹:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անչափահաս Ն.Խաչատրյանի և վերջինիս մոր՝ օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի տեսակցության ժամանակ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ իրականացված ոչ իրավաչափ միջամտությունն անհարկի սահմանափակել է կասկածյալի հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքը:

27. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացքում ստացված տվյալները չեն կազմել փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև ստացված տեղեկությունները չեն կազմել փաստաբանական գաղտնիք, սակայն պաշտպանված են եղել պաշտպանի հետ մեղադրյալի տեսակցությանը ներկայացվող՝ սույն որոշման 22.1-րդ կետում վկայակոչված նույնական պահանջներով: Հետևաբար, օրինական ներկայացուցչի հետ տեսակցության նկատմամբ *mutatis mutandis* կիրառելով պաշտպանի հետ տեսակցությանը ներկայացվող պահանջները, որպես անչափահաս կասկածյալի (մեղադրյալի) պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք, կասկածյալ Ն.Խաչատրյանի և վերջինիս մոր՝ օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի տեսակցության ժամանակ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռքբերված տվյալները որպես ապացույց օգտագործվել չէին կարող:

28. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ հանգամանքները պատշաճ ուշադրության չարժանացնելը, և իրականացված «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները Ն.Խաչատրյանի նկատմամբ կայացված մեղադրական դատական ակտի հիմքում դնելը, հանգեցրել են վարույթի արդարացիության և ըստ այդմ՝ Ն.Խաչատրյանի արդար դատաքննության իրավունքի, ինչպես նաև հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի խախտման: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Խաչատրյանի և Մ.Խաչատրյանի տեսակցության

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Սարգսյանի* վերաբերյալ 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԵԿԳ/0229/01/16 որոշման 17.1-րդ կետը:

ընթացքում «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման ժամանակ կատարված տեսաձայնագրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով անթույլատրելի է և չէր կարող դրվել մեղսագրվող արարքում Ն.Խաչատրյանի մեղավորությունը հիմնավորող ապացույցների զանգվածում: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «թունավոր ծառի պտուղների» սկզբունքի կիրառմամբ, որպես ածանցյալ ապացույց անթույլատրելի է նաև «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսաձայնագրության գննության արձանագրությունը¹:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ մեղադրյալ Ն.Խաչատրյանի և նրա օրինական ներկայացուցիչ Մ.Խաչատրյանի նկատմամբ «ներքին դիպրում» օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացվել է և դրա արդյունքները որպես ապացույց օգտագործվել են օրենսդրության պահանջներին համապատասխան, հիմնավոր չէ:

29. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ, 17-րդ, 77-րդ, 105-րդ և 106-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում, Վերաքննիչ դատարանը պետք է սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատի քրեական գործում առկա այլ ապացույցները և հանգի համապատասխան հետևության՝ անդրադառնալով նաև բողոքաբերի կողմից սույն որոշման 10.1-րդ կետում բարձրացված՝ մեղադրանքի հիմքում դրված ապացույցների բավարարության հարցին:

30. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Նարեկ Խաչատրյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի

¹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Սարգսյանի* վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԲԴ/0295/01/08 որոշումը:

16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝
Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Նարեկ Մայիսի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Նարեկ Մայիսի Խաչատրյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

SԴ/0195/01/10

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գարիկ Հմայակի Դադայանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման դեմ Գ.Դադայանի պաշտպան Կ.Սարգսյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2011 թվականի մայիսի 25-ի դատավճռով Գարիկ Հմայակի Դադայանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 233-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով Գ.Դադայանը դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնների կիրառմամբ՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Գ.Դադայանի նկատմամբ

վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2010 թվականի ապրիլի 22-ից:

2. Ամբաստանյալ Գ.Դադայանի պաշտպաններ Կ.Սարգսյանի և Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ դատարանը 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Դադայանի պաշտպաններ Կ.Սարգսյանի և Ա.Սարգսյանի վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3.1. ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի 0710 հրահանգի թիվ 3 հավելվածի համաձայն՝ 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ Գ.Դադայանի նկատմամբ կիրառվել է ՀՀ Ազգային ժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետը, նշանակված պատժաչափը կրճատվել է 6 (վեց) ամիս ժամկետով և թողնվել է կրելու ազատազրկում՝ 6 (վեց) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3.2. ՀՀ Նախագահի՝ 2015 թվականի սեպտեմբերի 24-ի՝ ՆՀ-697Ա հրամանագրով Գ.Դադայանին շնորհվել է ներում, նշանակված պատժաչափը կրճատվել է 1 (մեկ) տարի ժամկետով և թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3.3. 2015 թվականի հոկտեմբերի 22-ին Գ.Դադայանն ազատ է արձակվել՝ ամբողջությամբ կրելով նշանակված պատիժը:

4. Գ.Դադայանի գանգատի հիման վրա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 6-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Դադայանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված իրավունքների խախտման փաստը¹:

5. Որպես նոր հանգամանք, վկայակոչելով *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Գ.Դադայանի պաշտպան Կ.Սարգսյանը 2019 թվականի մարտի 6-ին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 5-ի որոշմամբ

¹ Տե՛ս *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14078/12:

հարուցվել է նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման վերանայման վարույթ, և բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Գ.Դադայանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ, «(...) 2010 թվականի մարտ ամսվա սկզբներին գրնվելով ՌԴ Մոսկվա քաղաքում, Երևան քաղաքում գրնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Հրանտ Օհանյանից և Սուլբաթ Տոնոյանից հեռախոսազանգով սրանալով առաջարկ՝ Վրաստանում գերհարստացված «Ուրան» ռադիոակտիվ նյութ իրացնելու նպատակով այն հայթայթելու և իրենց տրամադրելու վերաբերյալ՝ գործարքից ակնկալվող շահույթը նյութի իրացումից հետո բաշխելու պայմանով, հանցավոր համաձայնության է եկել վերջիններիս հետ՝ հանցավոր մրտահրաշխան իրագործմանը մասնակցելու և օժանդակելու հարցում և «Յունիստրիմ» բանկային փոխանցման համակարգով սրանալով իր կողմից որպես ճանապարհաձախս պահանջված և Սուլբաթ Տոնոյանի անունից ուղարկված 1000 (հազար) ԱՄՆ դոլար գումարը, 2010 թվականի մարտի 10-ին Մոսկվա-Երևան չվերթով վերադարձել է Երևան, և նույն օրը, Հրանտ Օհանյանին տրամադրել ապօրինի ձեռք բերված՝ ծխախոտի փուփի մեջ տեղադրված 17 (տասնյոթ) գրամ կշռով գերհարստացված ուրան ռադիոակտիվ նյութ, որից հետո, վերջինս՝ Սուլբաթ Տոնոյանի հետ 2010 թվականի մարտի 11-ին ռադիոակտիվ նյութը ՀՀ մաքսային սահմանով մաքսանենգ ճանապարհով տեղափոխել են Վրաստանի Թբիլիսի քաղաք և նույն օրը փորձել իրացնել այն, սակայն հայտնաբերվել են Վրաստանի Հանրապետության իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից: Այսինքն՝ Գարիկ Հմայակի Դադայանը 2010 թվականի մարտի 11-ին օժանդակել է Սուլբաթ Տոնոյանին և Հրանտ Օհանյանին՝ ՀՀ մաքսային հսկողությունից թաքցնելով 17 (տասնյոթ) գրամ կշռով գերհարստացված ուրան ռադիոակտիվ նյութը տեղափոխել Վրաստանի Հանրապետություն, ինչպես նաև ապօրինի ձեռք է բերել և պահել վերը նշված ռադիոակտիվ նյութը (...):»¹:

8. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2011 թվականի մայիսի 25-ի դատավճռով արձանագրել է. «(...) Հերազուրելով, բազմակողմանի վերլուծության ենթարկելով և

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 224-225:

գնահատելով գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, դրանց վերաբերելիության և թույլարելիության, ինչպես նաև գործի լուծման համար բավարարության րեասնկյունից, եկավ այն համոզման, որ ամբաստանյալ Գարիկ Հմայակի Դադայանը կատարել է հանցագործություններ, որի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմերին:

Ամբաստանյալ Գարիկ Հմայակի Դադայանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիաներում նկարագրված արարքների կատարումը հաստատված է նախաքննության ընթացքում Վրաստանի Հանրապետությունում հարցաքննված վկաներ Սուրբայր Տոնոյանի և Հրանտ Օհանյանի ցուցմունքներով, Քրիստինե Օհանյանի՝ դատաքննության և Ոսկան Գյուլումյանի՝ նախաքննության ընթացքում րված ցուցմունքներով և դատաքննությամբ հետազոտված մյուս ապացույցներով:

Այսպիսով, դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Գարիկ Հմայակի Դադայանը կատարել է հանցագործություններ, որոնց համար քրեական պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիաներով:

(...)»¹:

9. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռը թողնելով անփոփոխ, 2011 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ փաստել է. «(...) Սրուգելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները՝ յուրաքանչյուր ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները սրուգելու միջոցով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաստատված է համարում, որ ամբաստանյալ Գարիկ Դադայանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 233-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ:

Նախաքննության մարմինը և ընդհանուր իրավասության դատարանն ամբաստանյալ Գարիկ Դադայանի արարքը գնահատելիս՝ պահպանել են ապացույցների գնահատման վերաբերյալ ՀՀ քրեադատարական օրենսդրության պահանջները, ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 233-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելը, և նրա մեղքը հիմնավորում են քրեական գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 227-228:

(...)

Քննության առնելով վերը նշված բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը գործում է, որ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռն օրինական, հիմնավորված և պարճատարանված է, կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների պահպանմամբ, հեղուարար, այն պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոքը՝ մերժել (...)¹

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Գ.Դադայանի պաշտպան Կ.Սարգսյանը փաստել է, որ Եվրոպական դատարանի՝ *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռով ճանաչվել է Գ.Դադայանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված իրավունքների խախտման փաստը:

10.1. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է հարուցել նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման վերանայման վարույթ, բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի, Վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի դատական ակտերը, և Գ.Դադայանին արդարացնել ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով խախտումներ արձանագրելու փաստը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ «1.Նոր երևան եկած, կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 271-273:

2. Նոր երևան եկած, կամ նոր հանգամանքներով առաջին արշանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Մույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ(ով) նախատեսված նոր հանգամանք(ը) հաստատված (է) համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող փվյալ միջազգային դատարանի որոշմամբ՝ դր(ա) ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

13. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

14. Այսպես, *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները², դրանք կիրառել է կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նայրանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նայրանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զայանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրայրա Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի, *Դավիթ Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09, *Ալիկ Մաթևոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

² Տե՛ս *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճռի 40-43-րդ կետերը:

14.1 Այսպես, անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք կոնկրետ գործով առկա են եղել վկաների չներկայանալու համար հիմնավոր պատճառներ՝ Եվրոպական դատարանը նշել է, որ. «(...) Ս.Թ.-ի և Հ.Օ.-ի՝ դատարանական քննությանը չներկայանալու պարճառը Վրաստանի արդարադատության նախարարության կողմից նրանց փոխադրումը մերժելն էր այն պարճառով, որ այդ ժամանակ նրանց մեղադրական դատավճիռները դեռևս ենթակա էին վճռաբեկ կարգով բողոքարկման: Այդուհանդերձ, Դատարանն ուշագրավ է համարում այն փաստը, որ այդ փրեդեկարվությունն սրանալուց հետո առաջին արյանի դատարանը չի ձեռնարկել որևէ այլ փորձ, օրինակ, պարզելու համար, թե արդյո՞ք Ս.Թ.-ի և Հ.Օ.-ի մեղադրական դատավճիռները կրատնան վերջնական, և, եթե այո, ապա երբ, և արդյո՞ք նրանք կարող են, համաձայն Ստրասբուրգի՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի կոնվենցիայի, ավելի ուշ փուլում փոխադրվել Հայաստան՝ դատարանական քննության համար: Ըստ երևույթին, նաև չեն դիտարկվել դիմումատուին՝ վկաներին հարցաքննելու հնարավորություն րալու այլ միջոցներ, օրինակ՝ Վրաստանում նրանցից բանավոր ցուցմունք վերցնելը կամ փեսակապը: Վերջին նշվածի առնչությամբ Դատարանը նշում է, որ Կատավարությունը պնդել է, որ սա հնարավոր չի եղել, քանի որ համապատասխան մարմինները պարշաճ սարքավորումներ չեն ունեցել: Սակայն, հաշվի առնելով կողմերի կողմից ներկայացված փաստերը՝ րպավորություն չի սրեղծվում, որ առաջին արյանի դատարանը երբևէ դիտարկել է այդ միջոցի կիրառումը:

Նույնիսկ ենթադրելով, որ նիստին այս անձանց չհարցաքննելու հիմնավոր պարճառ չի եղել՝ հիմնավոր պարճառի բացակայությունը դեռևս ոչինչ չի նշանակում: Չնայած այն հանդիսանում է շատ կարևոր գործոն՝ այլ համապատասխան նկարատումների հետ մեկտեղ բնդհանուր հավասարակշռությունը որոշելու համար, այն, այնուամենայնիվ, մի նկարատում է, որն ինքնին վերջնականորեն չի վկայում քրեական վարույթի արդարացիության բացակայության մասին»¹:

14.2 Անդրադառնալով վկայի ցուցմունքի՝ «միակ կամ վճռորոշը» լինելու խնդրին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ. «(...) Մարգային դատարանի վճիռը, որը Վերաքննիչ քրեական դատարանը հետագայում լիովին անփոփոխ է թողել, բացի Ս.Թ.-ի և Հ.Օ.-ի ցուցմունքներից, նաև հղում է կարարել այլ ապացույցների: Մարգային դատարանը նաև որպես հիմք է ընդունել վկաներ Գ.Դ.-ի և Ք.Օ.-ի համապատասխանաբար դիմումատուի ընկերոջ և Հ.Օ.-ի դարեր ցուցմունքները, Վրաստանում և Հայաստանում կարարված դարարժկական փորճաքննության արդյունքները, որոնք հասարարում են, որ

¹ Տե՛ս՝ u Դադայանն ընդդեմ Հայաստանի վճռի 48-49-րդ կետերը:

հայրնաբերված նյութը պարունակել է հարստացված ուրան, դիմումատիրի և Հ.Օ.-ի միջև կանոնավոր հեռախոսային խոսակցությունները և դիմումատիրուի անձնագրում համապատասխան ելքի և մուտքի որոշման կիսները, որոնք ապացուցում են, որ նա Մոսկվայից ժամանել է Երևան 2010 թվականի մարտի 10-ին:

Սակայն Դատարանը գտնում է, որ Ս.Թ.-ի և Հ.Օ.-ի ցուցմունքները Էականորեն վերաբերելի են գործին: Այս ցուցմունքների հիման վրա ներպետական դատարանները պետք է որոշեին, թե արդյոք դիմումատիրուն է Ս.Թ.-ին և Հ.Օ.-ին հարստացված ուրան վաճառել: Չնայած այս ցուցմունքը գործի միակ ապացույցը չէր, սակայն այն միակն էր կամ առնվազն վճռորոշն այնքանով, որքանով դա վերաբերում էր դիմումատիրուի ներգրավվածությանը: Ավելին, այդ ապացույցների մասով Մարզային դատարանը պարզավոր էր մեղադրյալին իր պաշտպանությունը պատշաճ կերպով կազմակերպելու և իր բոլոր համապատասխան փաստարկները ներկայացնելու հնարավորություն ընձեռել: Փոխարենը դատարանն իր եզրակացություններում հիմնվել է վկաների այն ցուցմունքների վրա, որոնք երբևէ չեն ստուգվել, Քաշլեվն ընդդեմ Էստոնիայի): Եման հանգամանքներում, Մարզային դատարանի կողմից Ս.Թ.-ին և Հ.Օ.-ին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատիրուի դեմ, անձամբ չլսելը կարող էր Էականորեն ազդել դիմումատիրուի պաշտպանության իրավունքների վրա»¹:

14.3 Ինչ վերաբերում է կոնկրետ գործով բավարար հակակշռող գործոնների առկայությանը, Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) [Ա]ռկա էին որոշակի դատավարական երաշխիքներ՝ պաշտպանության կողմի սահմանափակումները փոխհատուցելու համար, ինչպես, օրինակ, Ս.Թ.-ի և Հ.Օ.-ի կողմից տրված ցուցմունքների ընդունելիությունը վիճարկելու հնարավորությունը: Սակայն, Դատարանի կարծիքով, դրանք բավարար չէին փոխհատուցելու այն փաստի համար, որ դիմումատիրուն քննության փուլում նույնիսկ չի ունեցել վկաների ցուցմունքները վիճարկելու հնարավորություն: Այս վկաների նկատմամբ քրեական հետապնդում էր իրականացվել, և նրանց դատապարտել էին Վրաստանում, մինչդեռ դիմումատիրուն, ով մեղադրվում էր նրանց օժանդակելու մեջ, ձերբակալվել էր, և նրա հանդեպ քրեական հետապնդում էր իրականացվել Հայաստանում: Ամեն դեպքում, բոլոր ապացույցները պետք է ստուգվեին դատարաններում: Ավելին, Մարզային դատարանի վճռում ոչինչ չի մատնանշում, որ այն առանձնահատուկ զգուշավորություն է դրսևորել չստուգված ապացույցների նկատմամբ, կամ, որ այն ավելի քիչ նշանակություն է տվել նման ցուցմունքներին»²:

¹ Տե՛ս՝ u Դադայանն ընդդեմ Հայաստանի վճռի 51-52-րդ կետերը:

² Տե՛ս՝ u Դադայանն ընդդեմ Հայաստանի վճռի 54-րդ կետը:

15. Արդյունքում Եվրոպական դատարանը արձանագրել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում»¹:

16. Հաշվի առնելով սույն որոշման 14.1-14.3-րդ կետերում ներկայացված փաստերը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով խախտումներ արձանագրելու փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Դադայանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

18. *Սկոցցարին և Ջունյանն ընդդեմ Իտալիայի* գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Վ]ճիռը, որով [Եվրոպական դատարանը] խախտում է արձանագրում, պարասիսանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով փրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար [Եվրոպական դատարանի] արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով արանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համարելիք են [Եվրոպական դատարանի] վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա, արդարացի փոխհատուցման կարգով գումարների փրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող»²:

19. *Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի* գործով Եվրոպական դատարանը նշել է. «Կոնվենցիայի խախտում արձանագրած [Եվրոպական

¹ Տե՛ս *Դադայանն ընդդեմ Հայաստանի* վճռի 56-րդ կետը:

² Տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

դատարանի վճռով պարասխանող պետության վրա պարավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հարուցում արժանադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (*restitutio in integrum*): Եթե *restitutio in integrum*-ը գործնականում հնարավոր չէ, ապա պարասխանող պետությունն ազատ է վճիռը կարարելու միջոցների ընտրության հարցում (...)¹:

20. Հաշվի առնելով Եվրոպական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Ժ.Սեֆիլյանի գործով որոշմամբ արձանագրել է. «(...) Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարավորությունները.

1) վճարել նշանակված փոխհատուցումը,

2) անհրաժեշտության դեպքում՝ հոգուր դիմումարուի, ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում՝ Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր սրանձնած պարավորությունների կարարումը,

3) ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում»²:

21. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Եվրոպական կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*» ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա³:

22. Վերոշարադրյալ վերլուծության լույսի ներքո՝ գնահատելով Դադայանն ընդդեմ Հայաստանի վճռով Եվրոպական դատարանի կողմից

¹ Տե՛ս *Sevcuk and Asker v. Turkey* գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125:

² Տե՛ս *Տիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

³ Տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը:

արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումները կոնկրետ դեպքերով վերացնելու ամենապատշաճ միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

23. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման վերանայման արդյունքում՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Անդրադառնալով Գ.Դադայանի նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացակայում են վերջինիս նկատմամբ այդպիսի միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության արդյունքում՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պետք է վերացնի *Դադայանի ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումներն ու արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գարիկ Հմայակի Դադայանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում՝ Գարիկ Հմայակի Դադայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով և 233-րդ հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2011 թվականի մայիսի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը բեկանել ու գործն

ուղարկել Տավուշի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Գալստատյան

ստորագրություններ

40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԴ4/0015/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ
Լ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արթուր Ավետիքի Մարտիրոսյանի և Արամ Ավետիքի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման դեմ Արթուր Ավետիքի Մարտիրոսյանի և Արամ Ավետիքի Մարտիրոսյանի պաշտպան Լ.Միմոնյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին աստիճանի դատարան)՝ 2012 թվականի փետրվարի 23-ի դատավճռով Արամ Ավետիքի Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի ժամկետով՝ պատժի

ժամկետի սկիզբը հաշվելով 2011 թվականի մարտի 12-ից:

ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի կիրառմամբ՝ Արամ Ավետիքի Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատվել է և թողնվել է կրելու 10 (տաս) տարի 1 (մեկ) ամիս 14 (տասնչորս) օր:

Արթուր Ավետիքի Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, և ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 13 (տասներեք) տարի ժամկետով՝ պատժի ժամկետի սկիզբը հաշվելով 2011 թվականի մարտի 11-ից:

ՀՀ Ազգային ժողովի՝ 2011 թվականի մայիսի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի կիրառմամբ՝ Արթուր Մարտիրոսյանի նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատվել է և թողնվել է կրելու 10 (տաս) տարի 1 (մեկ) ամիս 14 (տասնչորս) օր:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Հրայա Պետրոսյանը:

1.1 2017 թվականի դեկտեմբերի 5-ին Արթուր և Արամ Մարտիրոսյանները պայմանական վաղաժամկետ ազատվել են պատժի կրումից¹:

2. Ամբաստանյալներ Արթուր և Արամ Մարտիրոսյանների պաշտպան Լիպարիտ Միմոնյանի, ամբաստանյալ Հրայա Պետրոսյանի պաշտպան Արա Մաթևոսյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 23-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի հիշյալ դատավճռի դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Արամ Մարտիրոսյանի և Արթուր Մարտիրոսյանի պաշտպան Լ.Միմոնյանը և ամբաստանյալ Հ.Պետրոսյանի պաշտպան Ա.Մաթևոսյանը: Վճռաբեկ դատարանը 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ ներկայացված բողոքները վերադարձրել է:

4. Արամ Մարտիրոսյանի և Արթուր Մարտիրոսյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 6-ին *Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրել է վճիռ՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական

¹ Տես քրեական գործ, հատոր 15, թերթեր 131-134:

կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումներ¹:

5. Դատապարտյալներ Արամ Մարտիրոսյանի և Արթուր Մարտիրոսյանի պաշտպան Լ.Միմոնյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

6. Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 29-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 23-ի դատավճռով Արամ Մարտիրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասերով և Արթուր Մարտիրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով մեղավոր են ճանաչվել այն բանի համար, որ. «(...) 2009 թվականի նոյեմբերի 5-ին ժամը 13-ի սահմաններում, եղբորորդուն՝ Ալիկ Մարտիրոսյանին դիտորդություն անելու չնչին առիթով, [Մարտիրոսյան եղբայրները] (...) իրենց հետ մերերիմ հարաբերությունների մեջ գրնվող Հրաչյա Պետրոսյանի հետ, Գավառ քաղաքում վիճարանել և ծեծի [են] ենթարկել Գավառ քաղաքի բնակիչ Վարդան Մուխսիսչյանին, ով հաշվեհարդարի սպանույթներ փախչելով դիմել է փախուստի: Դրանից հետո, Արամ Մարտիրոսյանը, Կոնստանտնուպոլիսում, որ Վարդան Մուխսիսչյանի հարազատներն ու ընկերները շրջում են իրենց փախուստի մտադրությամբ, զինվելու նպատակով, օգրվելով իրենց ընտանիքին պարկանոց գազալցակայանի աշխատակից Արտավազ Սաղաթելյանի հետ ունեցած հարաբերությունների բնույթից՝ պահանջելու եղանակով դրդել է վերջինիս Գավառ քաղաքի Զորավար Անդրանիկի 7 հասցեում գրնվող ռեստորանի աշխատասենյակ փոխադրել եղբայրների կողմից ապօրինի կերպով ձեռք բերված և պահվող՝ հրազեն հանդիսացող «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգը, «ՊՄ» տեսակի արձանատու, ռազմաթերթ հանդիսացող փարբեր փրամնաչափի փամփոռները և անհայտ տեսակի պայթուցիկ սարքք: Այնուհետև, Մարտիրոսյան եղբայրներն ու Հրաչյա Պետրոսյանը վերոհիշյալ զենք զինամթերքը փոխադրել են Արթուր Մարտիրոսյանին պարկանոց

¹ Տե՛ս Մարտիրոսյան ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 18550/13:

«Միգրիչի-Պաշերո» մակնիշի, 03 SL 700 պերհամարանիշի ավտոմեքենայի սրահում, և զինված շրջել են Գավառ քաղաքում: Նույն օրը՝ ժամը 18:30-ի սահմաններում, Ազատության փողոցի «Պարտեզ» խանութի մոտ նկատելով Վարդան Մուխախչյանի աներոջ՝ «Կոկո» մականունով Հակոբ Հովհաննիսյանին պարկանոց «ՎԱԶ 2107» մակնիշի, 31 SU 311 պերհամարանիշի ավտոմեքենան՝ սրահում գրնվող Հակոբ Հովհաննիսյանին, նրա որդուն՝ Հովսեփ Հովհաննիսյանին և վերջինս ընկերոջը՝ Սպարտակ Զարգարաղոյանին սպանելու ուղղակի միասնական դիտարկությամբ՝ Արթուր Մարտիրոսյանը «ՊՄ» տեսակի արձանակով, Արամ Մարտիրոսյանն իր մոտ եղած թմրուկավոր արձանակով, իսկ Հրաչյա Պետրոսյանն «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգով բազմաթիվ կրակոցներ են արձակել հիշյալ մեքենայում գրնվող անձանց ուղղությամբ, որոնցից 14-ը դիպել է մեքենային, որից հետո դիմել են փախուստի: Սակայն, Արամ և Արթուր Մարտիրոսյանների և Հրաչյա Պետրոսյանի կամքից անկախ հանգամանքներով ավտոմեքենայում գրնվող անձինք չեն մահացել՝ Հովսեփ Հովհաննիսյանն ու Սպարտակ Զարգարաղոյանը սրացել են կյանքին վրանգ սպառնացող հրազենային ծանր մարմնական վնասվածքներ և տեղափոխվել Գավառի հիվանդանոց, որտեղ անմիջական բժշկական միջամտության շնորհիվ նրանց կյանքը հաջողվել է փրկել, այսինքն մի խումբ անձանց հետ, նախնական համաձայնությամբ, ապօրինի կերպով ձեռք [են] բերել, պահել ու կրել զենք և ռազմամթերք, մեկ ուրիշ անձի դրդել [են] ապօրինի կերպով զենք և ռազմամթերք փոխադրելուն, ինչպես նաև մի խումբ անձանց հետ կատարել [են] երկու և ավելի անձանց սպանության փորձ (...):»¹:

8. Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ արձանագրել է. «(...) [Վ]երլուծելով գործի փաստական փյույաները, գնահատելով ինչպես յուրաքանչյուր ապացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ, [վերաքննիչ դատարանը] հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Արամ Ավետիսի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Արթուր Ավետիսի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 2-րդ մասով (...) որակված են ճիշտ:

Նման պայմաններում, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալներ Արամ և Արթուր Մարտիրոսյանների շահերի պաշտպանի վերաքննիչ բողոքներում բերված պարզառարանությունները՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ տալու, ամբաստանյալներ Արամ և Արթուր Մարտիրոսյաններին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 12, թերթեր 155-177:

արդարացնելու և այլնի վերաբերյալ, անհիմն են, չեն բխում գործի օբյեկտիվ վիճակներից և ներկայացված վերաքննիչ բողոքները բավարարելու հիմք համարվել չեն կարող: (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 382-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. բացառիկ դեպքերում կողմերն իրավունք ունեն իրենց բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ փոխված պարասխանների հիմքերը հասարարելու համար դատարան ներկայացնելու նոր նյութեր կամ միջնորդելու դատարան կանչել իրենց նշած վկային կամ փորձագետին, նշանակելու փորձաքննություն, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին արյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին արյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն:

Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի միջնորդությանը՝ ամբաստանյալներ Արամ և Արթուր Մարտիրոսյաններին ցուցմունք փալու հնարավորություն ընձեռնելու և այլնի վերաբերյալ, ապա վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն քրեական գործի քննության ընթացքում, այդ թվում նաև ընդհանուր իրավասության դատարանում դատաքննությամբ ամբաստանյալներ Արամ և Արթուր Մարտիրոսյաններն ունեցել են ցուցմունքներ փալու լիարժեք հնարավորություն, սակայն օգրվելով օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքից չեն ցանկացել ցուցմունքներ փալ, այսինքն ոչ թե զրկված են եղել ցուցմունքներ փալու հնարավորությունից, այլև իրենց իսկ ցանկությամբ չեն օգրվել նման հնարավորությունից, հետևաբար նշվածի վերաբերյալ պաշտպանության կողմի ներկայացված միջնորդությունը ևս անհիմն է և այն բավարարելու հիմքեր չկան (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 6-ին Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ի հիմնավորումն վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը, մեջբերելով Եվրոպական դատարանի հիշյալ վճռի հիմնավորումները, նշել

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 14, թերթեր 146-168:

է, որ ներպետական դատարանների կողմից կայացված դատական ակտերով խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ սույն գործով ներպետական դատարանները Արամ Մարտիրոսյանի և Արթուր Մարտիրոսյանի մեղավորությունն ապացուցելու համար դատական ակտերի հիմքում դրել են դատարանում չհարցաքննված վկաներ Հովսեփ Հովհաննիսյանի, Մովսես Մովսիսյանի, Ստեփան Կիրակոսյանի, Գյուլնարա Միմոնյանի և Արտավազդ Սաղաթելյանի նախաքննական ցուցմունքներն այն դեպքում, երբ պաշտպանական կողմը հնարավորություն չի ունեցել դատարանում հարցաքննելու այդ վկաներին: Ըստ բողոքաբերի՝ եթե նույնիսկ այդ ապացույցները միակը չլինեին, առնվազն վճռորոշ դեր ունեին Մարտիրոսյանների մեղքը սպանության փորձ կատարելու և ապօրինի զենք կրելու մեջ ապացուցված համարելու հարցում: Հետևաբար, բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները պարտավոր էին Արամ և Արթուր Մարտիրոսյաններին հնարավորություն տալ պատշաճ կերպով իրականացնել իրենց պաշտպանությունը:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը, բեկանել Առաջին աստիճանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 23-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 20-ի որոշումը և գործն ուղարկել առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին աստիճանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող Եվրոպական միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

13. Այսպես՝ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը վերահաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ իր նախադեպային իրավունքի շրջանակում արտահայտված իրավական դիրքորոշումները²:

14. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) Մարզային դատարանը դիմումատերին մեղավոր է ճանաչել մի խումբ անձանց հետ երկու կամ ավելի անձանց սպանության փորձ կատարելու և ապօրինի կերպով զենք կրելու մեջ և դատապարտել է նրանց համապատասխանաբար փաստերեք և փաստերկու փարի ժամկետով ազատազրկման: Մինչդարձական վարույթի ընթացքում իրականացված միակ առերեսումը եղել է Հ.Հ.-ի՝ որպես վկայի, և դիմումատերի միջև: Դիմումատերը խնդրել են, որ Հ.Հ.-ն և վկաներ

¹ Տե՛ս u, mutatis mutandis, Գրիշա Վիրաբյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Մեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, Բագրատ և Նարինե Նալբանդյանների գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, Արայիկ Զայյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Հրայր Մուրադյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի, Դավիթ Ավերիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԳ-3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

² Տե՛ս u Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճիռի 54-57-րդ կետերը:

Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն, Ս.Գ.-ն և Ս.Կ.-ն հարցաքննության համար կանչվեն և բերման ենթարկվեն առաջին արյանի դատարան, սակայն նրանցից ոչ մեկը չի ներկայացել:

Ինչ վերաբերում է չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները որպես ապացույց օգտագործելուն, ապա Դատարանը բազմիցս նշել է, որ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությանը վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորություն, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ և այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար»¹:

14.1 Անդրադառնալով վկաների չներկայանալու հիմնավոր պատճառների առկայության հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Դատարանը վերահաստատում է, որ առաջին արյանի դատարանի տեսանկյունից՝ վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պարճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար: Եթե վկայի չներկայանալու համար այդ հիմնարկով առկա են հիմնավոր պարճառներ, ապա դա նշանակում է, որ կան հիմնավոր պարճառներ կամ հիմնավորումներ՝ չներկայացած վկայի չարտագրված ցուցմունքներն առաջին արյանի դատարանի կողմից որպես ապացույց ընդունվելու համար: (...) Կան մի շարք պարճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, ներառյալ այն իրավիճակները, երբ վկային հնարավոր չէ հայտնաբերել:

(...) Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի և Ս.Կ.-ի՝ դատական քննությանը չներկայանալու պարճառը եղել է այն, որ հնարավոր չի եղել գտնել նրանց: Հավանաբար Հ.Հ.-ն և Ս.Կ.-ն դեռևս գտնվում էին Հայաստանում, սակայն Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն և Ս.Գ.-ն մեկնել էին երկրից: Դատարանը նշում է, որ թեև առաջին արյանի դատարանը մի քանի անգամ փորձել է ապահովել նրանց մասնակցությունը, նրան չի հաջողվել դա անել: Առաջին արյանի դատարանը չի ձեռնարկել լրացուցիչ այլ միջոցներ Հ.Հ.-ին և Ս.Կ.-ին Հայաստանի տարածքում գտնելու համար, ինչպես նաև չի դիմել, օրինակ՝ միջազգային իրավական օգնության՝ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի և Ս.Գ.-ի գտնվելու վայրը պարզելու համար, ուլքեր, ըստ երևույթին, գտնվում էին երկրից դուրս:

(...) Նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ այս

¹ Տե՛ս Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 59-60-րդ կետերը:

անձանց չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, հիմնավոր պատճառի բացակայությունը դեռևս ոչինչ չի նշանակում: Թեև դա շար կարևոր գործոն է մյուս համապատասխան պնդումների հետ ընդհանուր հավասարակշռության մեջ դիրարկելու հարցում, այնուամենայնիվ, այն մի դիրարկում է, որն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի արդարացիության բացակայության մասին (...):»¹

14.2 Անդրադատնալով չներկայացած վկաների ցուցմունքների՝ «միակը և վճռորոշը» լինելու հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է. «(...) Մարզային դատարանի դատավճռով, որը հետագայում Վերաքննիչ քրեական դատարանի կողմից ամբողջությամբ թողնվել է անփոփոխ, Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքներից բացի, հղում է կարարվել նաև այլ ապացույցների: Դատավճռից պարզ է դառնում, որ Մարզային դատարանը նաև հաշվի է առել մինչդատարանական վարույթի և դատական քննության փուլերում ձեռք բերված՝ ավելի քան քսան վկաների ցուցմունքները, որպես նախաքննության մաս իրականացված առերեսումների արձանագրությունները, դատարժկական փորձաքննության եզրակացությունը, դատաձգաբանական և մարնադրոշմային համալիր փորձաքննության եզրակացությունը, դատաձգաբանական և դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացությունը, քննչական փորձարարության արձանագրությունը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արձանագրությունները, Հ.Հ.-ի և երկրորդ դիմումատուի ավրումբենաների զննության արձանագրությունը, դեպքի վայրի զննության արձանագրությունը, երկրորդ դիմումատուի ավրումբենայի պերհամարանիչը ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, մի քանի հետախուսահամարների մուրքային և էլքային զանգերի վերձանումները և մանրաթելերի քրեագիրական համալիր փորձաքննության եզրակացությունը:

(...)

Այնուամենայնիվ, Դատարանը գրնում է, որ Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքները հիմնարար կերպով վերաբերելի էին գործին: Այս ապացույցների հիման վրա՝ ներպերական դատարանները պերք է որոշելին, թե արդյոք դիմումատուները մեղավոր էին սպանության փորձ կարարելու և ապոթինի կերպով զենք կրելու մեջ, թե՛ ոչ: Եթե նույնիսկ այս ապացույցը սույն գործով միակ ապացույցը չլիներ, այն առնվազն վճռորոշ դեր ուներ դիմումատուների ներգրավվածության հարցում: Դա այդպես է, հարկապես, որ դատարաններին հասանելի մյուս ապացույցները համոզիչ չեն եղել: Ավելին, ինչ վերաբերում է այդ ապացույցներին, ապա Մարզային դատարանը պարրավոր էր դիմումա-

¹ Տե՛ս Մարտիրոսյան ընդեմ Հայատարանի գործով Եվրոպական դատարանի վճռի 61-63-րդ կետերը:

տուներին հնարավորություն տալ պատշաճ կերպով իրականացնել իրենց պաշտպանությունը և առաջ քաշել իրենց բոլոր փաստարկները: Դրա փոխարեն դատարանն իր եզրակացություններում հիմնվել է այնպիսի վկաների ցուցմունքների վրա, որոնք երբևէ չեն հարցաքննվել դատական նիստի ժամանակ: (...) Այս հանգամանքներում այն, որ Մարգային դատարանն անձամբ չի լսել վկաներ Հ.Հ.-ին, Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին և Ս.Կ.-ին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուների դեմ, կարողացել է էսպես ազդել դիմումատուների պաշտպանվելու իրավունքի վրա»¹:

15. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) Վերոնշյալ պնդումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ տվյալ գործում խախտվել է դիմումատուների արդար դատաքննության իրավունքը:

(...) Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում»²:

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու փաստը ՀՀ վճռարեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցն արդյո՞ք վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

18. Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում վարույթը վերաբացելու առնչությամբ իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումները, արձանագրել է. «(...) Դատարանը անհրաժեշտ է համարում նաև նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում է արձանագրում, պարասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարելու արդարացի փոխհատուցման կարգով

¹ Տե՛ս 'u Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 65-66-րդ կետերը:

² Տե՛ս 'u Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 69-70-րդ կետերը:

շնորհվող գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում, անհատական քննյթի միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել իր ներպետական իրավական համակարգում Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու և դրա հետևանքների համար այնպիսի իրաբեական հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ գոյություն ունեցած իրավիճակը (...): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (...):

(...) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատարանի օրենսգրքի 426.1 և 426.4 հոդվածներով նախատեսվում է ներպետական դատական վարույթը վերսկսելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում (...): Ինչպես Դատարանն արձանագրել է սույն գործին նման նախորդ գործերում՝ հատուցման ամենապարզաձև ձևը, որպես կանոն, կլինի գործի պարզաձև կարգով վերսկսելն ու վերանայելը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ (...):¹:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարտիրոսյան ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով արձանագրված՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումը վերացնելու ամենապարզաձև միջոցը վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 23-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 20-ի դատական ակտերը պետք է բեկանել և գործն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Անդրադառնալով Արթուր և Արամ Մարտիրոսյանների նկատմամբ խափանման միջոց ընտրելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2017 թվականի դեկտեմբերի 5-ին Արթուր և Արամ Մարտիրոսյանները պայմանական վաղաժամկետ ազատվել են պատժի կրումից և ներկայումս բացակայում են վերջիններիս նկատմամբ խափանման միջոց ընտրելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության արդյունքում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

¹ Տե՛ս Սարտիրոսյան ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 75-76-րդ կետերը:

դատարանը պետք է վերացնի Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումներն ու արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ, 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Արամ Ավետիքի Մարտիրոսյանի և Արթուր Ավետիքի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 7-ի որոշումը վերանայել:

2. Արամ Ավետիքի Մարտիրոսյանի և Արթուր Ավետիքի Մարտիրոսյանի մասով Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 23-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 20-ի որոշումը բեկանել և գործն այդ մասով ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

41. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0157/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահությանը՝
մասնակցությանը դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությանը՝
մասնակցությանը դատախազ՝

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դոնրաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշման դեմ դիմող Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի ներկայացուցիչ Տ.Եգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սադոյանը 2017 թվականի հուլիսի 31-ին որոշում է կայացրել Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի ներկայացուցիչ Տ.Եգորյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Գ.Սաֆարյանի ներկայացուցիչներ Տ.Եգորյանի և Դ.Գյուրջյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ մերժվել է:

2. Նշված որոշման դեմ դիմող Գ.Սաֆարյանի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանի բողոքի քննության արդյունքում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի հունվարի 24-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. Դիմողի ներկայացուցիչներ Տ.Եգորյանի և Դ.Գյուրջյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մարտի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 24-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Գ.Սաֆարյանի ներկայացուցիչ Տ.Եգորյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սաղոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման եզրափակիչ մասի համաձայն՝ «(...) [Ե]սիսապարասարված նյութերով քրեական գործ հարուցելը մերժել [ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակարար-դական հիմնարկի] ծառայողների արարքում հանցակազմի բացակայության հիմքով: (...)»¹:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Ս]ույն բողոքի շրջանակներում սրացված՝ նախապարասարված նյութերի ուսումնասիրությունը [Առաջին ատյանի դատարանի] համոզմամբ վկայում է այն մասին, որ քննարկված հանցակազմների հարկանիշների առկայությունը չի հիմնավորվել հանցագործության հիմքերի «բավարարության» այն նվազագույն «շեմի» հաղթահարմամբ, որն անհրաժեշտ կլիներ քրեական գործ հարուցելու համար: Այսինքն, «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 2017 թվականի հուլիսի 31-ին կայացված որոշումն օրինական է և հիմնավոր: (...)»²:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը մինչդարական վարույթի նկատմամբ վերահսկողության շրջանակներում դարական սրուզման ենթարկելով [ՀՀ հարուկ քննչական ծառայության հարկապես կարևոր գործերի] քննիչ Գ.Սաղոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ իրավացիորեն գրել է, որ փաստա-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 32-35:

² Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 70-74:

քանների պալատի փաստաբան Տիգրան Եգորյանի հանցագործության մասին հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված սրուզման արդյունքում ձեռք բերված փաստական փոխվյուղերը բավարար են հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են, իսկ վիճարկվող որոշումը կայացվել է նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան:

(...)

Վերաքննիչ դատարանը, (...) գրնելով, որ ՀՀ հարուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Սաղոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ անձի իրավունքները խախտված չեն, արձանագրում է, որ Գևորգ Սաֆարյանի ներկայացուցիչ Դավիթ Գյուրջյանի բողոքը մերժելով Առաջին արյանի դատարանը կայացրել է օրինական և հիմնավորված որոշում: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի կարծիքով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչի արդյունքում՝ կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

8.1 Վերլուծելով «Ձեռքակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, և համադրելով դրանք գործի փաստական հանգամանքների հետ՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Գ.Սաֆարյանին պատժախուց տեղափոխելու մասին ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի՝ 2017 թվականի հուլիսի 1-ի և 11-ի որոշումներն իրավաչափ չեն, ինչի արդյունքում խախտվել են Գ.Սաֆարյանի անձնական ազատության, խոշտանգման, անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի չենթարկվելու իրավունքները:

Անդրադառնալով ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի՝ 2017 թվականի հուլիսի 11-ի որոշմանը՝ բողոքաբերը փաստարկել է, որ Գ.Սաֆարյանին տասը օր ժամկետով պատժախուց տեղափոխելու ձևով տույժը կիրառվել է քրեակատարողական հիմնարկի հիմնական մասնաշենք տեղափոխվելու պահանջը կատարելուց հրաժարվելու հիմքով, այնինչ, նշված մասնաշենք տեղափոխվելու պահանջի կապակցությամբ առարկությունը Գ.Սաֆարյանը հիմնավորել է իր կյանքին և առողջությանը սպառնացող վտանգով: Բողոքաբերը հիմնավոր չի համարել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման հիմքում դրված այն հետևությունը, որ Գ.Սաֆարյանին

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 111-116:

որևէ վտանգ չի սպառնացել հիմնական մասնաշենքում՝ փաստելով, որ այն հիմնված է եղել բացառապես քրեակատարողական հիմնարկի աշխատակցի բացատրության վրա, այնինչ, նշված վտանգի առկայությունը ոչ թե Գ.Սաֆարյանի ենթադրության արդյունքն էր, այլ սկսած 2015 թվականից՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում իր նկատմամբ կիսոված բռնության և ճնշումների դեպքերի վրա հիմնված համոզմունք:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը գտել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի արարքում առկա են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշներ:

8.2 Բողոքաբերը նշել է նաև, որ վարույթն իրականացնող մարմինն անդրադարձ չի կատարել հանցագործության մասին հաղորդման մեջ նշված այն հանգամանքին, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի համապատասխան ծառայողը պաշտոնեական կեղծիք է կատարել:

8.3 Վերոգրյալի արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չեն պարզվել քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական որոշում:

9. Արդյունքում, վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնելով ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սադոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման՝ օրինական և հիմնավորված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ *քրեական հետապնդումն այն բոլոր դատավարական գործողություններն են, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում րուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի*

նկատմամբ պարծի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման հարուցումը քրեական հետապնդման մարմնի որոշումն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

2. Որոշման մեջ պետք է նշվեն գործ հարուցելու առիթն ու հիմքը, քրեական օրենքի այն հոդվածը, որի հարկանիշներով հարուցվում է գործը, հարուցելուց հետո գործի հետագա ընթացքը: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

12. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումները, արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարությունում քրեական գործը հարուցվում է փաստի առթիվ, իսկ անձի նկատմամբ քրեական գործ հարուցելու ինստիտուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ: Անձին դատավարական կարգավիճակ տալու կամ մեղադրանք առաջադրելու հիմքերի պարզումը (ամբողջ ծավալով ապացուցում իրականացնելը) արդեն իսկ հարուցված քրեական գործով իրականացվող հետագա վարույթի խնդիր է, որի շրջանակներում թույլատրվում է կատարել տարբեր քննչական և դատավարական գործողություններ, կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ և այլն: Այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը¹: Նշված եզրահանգումը հիմնված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող՝ «քրեական մեղադրանք» հասկացության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ «քրեական մեղադրանք» եզրույթը պետք է հասկացվի ոչ թե

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Հևիկ Պողոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշումը:

ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով: «Մեղադրանք» հասկացությունը կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին պաշտոնապես արված տեղեկացում այն մասին, որ առկա է նրա կողմից քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ ենթադրություն¹: Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա²:

13. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն կերպ՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ արձանագրվում է ոչ թե անձի նկատմամբ, այլ կոնկրետ փաստի առնչությամբ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի բացակայությունը: Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն իրենից ներկայացնում է քրեական գործ հարուցելու փուլը եզրափակող և դատավարության հետագա ընթացքը բացառող որոշում: Այն կայացվում է ենթադրյալ հանցանքի հիմքերի բավարարության ստուգման ուղղությամբ իրականացվող դատավարական և (կամ) այլ գործողությունների արդյունքում, ընդ որում, դրա կայացման համար իրավական նշանակություն չունի ենթադրաբար հանցանք կատարած անձի փաստացի առկայությունը³:

14. Վճռաբեկ դատարանն այս առնչությամբ կրկնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող նույնացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հետ, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են տարբեր իրավական բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ: Քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվում է կոնկրետ անձի նկատմամբ՝ բացառելով տվյալ անձի նկատմամբ կոնկրետ դեպքի առթիվ քրեական հետապնդում իրականացնելը, այլ ոչ թե այդ դեպքի առթիվ իրականացվող վարույթի ընթացքը, որն ուղղված է մեղավոր անձին (անձանց) բացահայտելուն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելուն⁴: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելը

¹ Տե՛ս *Դեվելերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետեր 44, 46:

² Տե՛ս *Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany)* գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, *Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia)* գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, *Գ. Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland)* գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98:

³ Տե՛ս *u, mutatis mutandis, Մամվել Շահնազարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԵՇԴ/0002/11/14 որոշման 19-րդ կետը:*

⁴ Տե՛ս *u*, նույն տեղում:

մերժելու մասին որոշման մեջ որոշակի անձի մատնանշումը նշված որոշումն իրավական հետևանքների մասով հավասարեցնում է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշմանը:

15. Իսկ ինչ վերաբերում է քրեական հետապնդման դատավարական ինստիտուտին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գաղափարախոսության համաձայն՝ քրեական հետապնդումը վերաբերում է և ուղղված է որոշակի անձի, հետևաբար, քրեական հետապնդում հարուցելու հարցի քննարկումը նույնպես հնարավոր է որոշակի անձի առկայության դեպքում, որը կարող է հանգեցնել այդ անձի նկատմամբ՝ քրեական հետապնդում հարուցելուն կամ այդպիսին չիրականացնելուն: Այլ խոսքով՝ քրեական հետապնդումը կարող է հարուցվել, կամ քրեական հետապնդում չիրականացվել միայն որոշակի անձի նկատմամբ: Հակառակ մեկնաբանումը ոչ միայն չի համապատասխանի վկայակոչված նորմերի տրամաբանությանը, այլև կհանգեցնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդում չիրականացնելու արդարացնող և ոչ արդարացնող հիմքերի իրավական հետևանքների բովանդակագրկման, ինչն անթույլատրելի է¹:

16. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը մեջբերված իրավական դիրքորոշումը վերաբերելի է ենթադրյալ հանցանքի հիմքերի բավարարության ստուգման ուղղությամբ իրականացվող դատավարական և (կամ) այլ գործողությունների արդյունքում կայացվող քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմանը, եթե այն կայացվել է ոչ թե փաստի առթիվ, այլ անձի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող՝ արդարացնող կամ ոչ արդարացնող որևէ հիմքով:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սադոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի որոշման եզրափակիչ մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելը մերժվել է ՀՀ ԱՆ «Նորարաշեն» ՔԿ հիմնարկի ծառայողների արարքում հանցակազմի բացակայության հիմքով²:

Առաջին ատյանի դատարանը, դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել է, որ վիճարկվող որոշումը օրինական և հիմնավորված է³:

Վերաքննիչ դատարանը ևս, վերանայելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, գտել

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մշուր Մայիսայանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵԱԲԳ/0051/11/14 որոշման 48-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

է, որ նյութերի նախապատրաստման ընթացքում թույլ չեն տրվել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Արդյունքում եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանը, մերժելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը, կայացրել է օրինական և հիմնավորված որոշում¹:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատելով դիմող Գ.Սաֆարյանի իրավունքների և օրինական շահերի խախտման բացակայության փաստը, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ վիճարկվող որոշմամբ ոչ թե մերժվել է քրեական գործ հարուցելը միայն հանցագործության դեպքի առթիվ, այլ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ծառայողների նկատմամբ, ընդ որում, ոչ թե կոնկրետ ծառայողի կամ ծառայողների, այլ վերջիններիս անորոշ շրջանակի նկատմամբ:

Ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ քննարկվող որոշման եզրափակիչ մասում առկա նման ձևակերպումը բացառում է քրեակատարողական հիմնարկի որևէ ծառայողի կամ պաշտոնատար անձի արարքում պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշները մատնանշող բավարար տվյալների բացակայության մասին վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումների իրավաչափության վերաբերյալ իրավական գնահատականներ տալու հնարավորությունը, ինչը խոչընդոտ է ստեղծում մինչդատական վարույթի նկատմամբ հետագա (*post factum*) դատական վերահսկողության սահմաններում՝ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում:

Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի՝ սույն որոշման 8.1-րդ կետում ներկայացված այն փաստարկներին, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվել հաղորդման մեջ նշված հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

19. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման՝ օրինական և հիմնավոր լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գևորգ Սաֆարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման ընթացքում ստո-

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

րադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն, հիմք է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սաղոյանի՝ 2017 թվականի հուլիսի 31-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

21. Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նախաքննության մարմինը հարուցված քրեական գործով վարույթի շրջանակում պետք է համարժեք անդրադարձ կատարի բողոքաբերի բարձրացրած՝ սույն որոշման 8.1-րդ կետում ներկայացված փաստարկների: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է քննության առարկա դարձվեն բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ պատշաճ քննություն չի կատարվել քրեակատարողական հիմնարկի հիմնական մասնաշենք տեղափոխվելու պահանջից իր կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի հիմքով հրաժարվելու հանգամանքը պարզելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի ներկայացուցիչ Դ.Գյուրջյանի բողոքի վերաբերյալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունվարի 24-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշումը բեկանել ու փոփոխել: Դիմող Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի ներկայացուցիչ բողոքը բավարարել՝ վերացնելով ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Գ.Սաղոյանի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017 թվականի հուլիսի 31-ի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

42. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0134/01/08

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ բողոք բերող անձ՝
դատախազ՝*

Մ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Գ.ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2019 թվականի սեպտեմբերի 18-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գագիկ Վրեժի Զհանգիրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի մայիսի 20-ի որոշման դեմ Գ.Զհանգիրյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ Վարդան Վրեժի Զհանգիրյանի կողմից ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու փաստի առթիվ:

Հետաքննության մարմնի նույն օրվա մեկ այլ որոշմամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Գագիկ Վրեժի Զհանգիրյանի կողմից ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք ձեռք բերելու ու պահելու փաստի առթիվ:

2008 թվականի փետրվարի 24-ին Գ.Ջհանգիրյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ Գ.Ջհանգիրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Գ.Ջհանգիրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է:

1.1. 2008 թվականի մարտի 7-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի հունիսի 13-ի որոշմամբ Գ.Ջհանգիրյանին առաջադրված մեղադրանքի մասը վերացվել է, այն փոփոխվել ու լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի օգոստոսի 13-ին Գ.Ջհանգիրյանին առաջադրված մեղադրանքի մասը ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասով վերացվել է, և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

2008 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ Գ.Ջհանգիրյանի վերաբերյալ գործի նյութերն անջատվել են առանձին վարույթ և նույն թվականի օգոստոսի 22-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 23-ի դատավճռով Գ.Ջհանգիրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով:

3. Գ.Ջհանգիրյանի և նրա պաշտպաններ Լ.Սահակյանի ու Ե.Վարդայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009 թվականի մայիսի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 23-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 23-ի որոշմամբ Գ.Ջհանգիրյանի նկատմամբ կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին

կետի 1-ին ենթակետը, և նա ազատվել է նշանակված պատժի հետագա կրումից:

4. Գ.Ջհանգիրյանի և նրա պաշտպաններ Լ.Սահակյանի ու Ե.Վարոսյանի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2019 թվականի հուլիսի 16-ին Գ.Ջհանգիրյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է բերել Վճռաբեկ դատարան, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար Լական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանը, Գ.Ջհանգիրյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, հաստատված է համարել հետևյալ փաստերը. «2008թ. փետրվարի 23-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն օպերատիվ տեղեկություններ են սրացվել այն մասին, որ Էջմիածին քաղաքից դեպի Երևան քաղաք ընթացող «BMW-X5» մակնիշի 99 SL 555 պերհամարանիշի և նրան ուղեկցող «ՎԱԶ 21010» մակնիշի 80 ՍՍ 555 պերհամարանիշի ավտոմեքենաներում զինված անձինք են գտնվում, որոնց ինքնությունն այդ տեղեկարվությունը սրանալու պահին պարզված չի եղել:

Սրացված օպերատիվ տեղեկությունը սրուգելու, իսկ հաստատման դեպքում այդ ավտոմեքենաներում գտնվող զինված անձանց վնասազերծելու ու բերման ենթարկելու նպատակով, ՀՀ ոստիկանության հիշյալ Գլխավոր վարչության Հարուկ նշանակության և Քրեական հետախուզական վարչության աշխատակիցներից կազմվել է օպերատիվ խումբ, որոնք ղեկավարության կողմից հրահանգավորում սրանալուց հետո, դիրքավորվել են Էջմիածին-Երևան մայրուղու Արգավանդ գյուղի խաչմերուկի մոտակայքում: Նույն օրը, ժամը 23-ի սահմաններում, օպերատիվ միջոցառումն իրացնելիս, «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Վարդան Ջհանգիրյանի մոտ հայտնաբերվել է հրազեն, վերջինիս վնասազերծելիս ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար վրանգավոր բռնություն է գործադրել, որի ընթացքում օպերատիվ խմբի անդամ ոստիկանության աշխատակից Ռաֆիկ Մուրադյանն իր հաշվեցուցակային «Մակարով» տեսակի սորճանակից կրակոց է արձակել, որի հետևանքով հրազենային վնասվածք են սրացել ինչպես Վարդան Ջհանգիրյանը, այնպես էլ

նստիկանության աշխատակիցներ Տիգրան Կարապետյանը և Գևորգ Մալխասյանը:

Հիշյալ «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայի մեջ է գտնվել նաև Վարդան Զհանգիրյանի եղբայր Գագիկ Զհանգիրյանը, որը տեղում իր մոտ եղած հրազենը նստիկանության աշխատակիցների պահանջով կամուփին հանձնել է նրանց:

Ինչպես նախապես ունեցած օպերատիվ տեղեկատվության իրացումը, այնպես էլ հիշյալ միջադեպը հիմք են հանդիսացել, որ ՀՀ նստիկանության ԿՀԴ գլխավոր վարչություն, փարբեր ավտոմեքենաներով, բերման են ենթարկվել «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայում գտնվող Վարդան և Գագիկ Զհանգիրյաններն ու նրանց ուղեկցողներ՝ «ՎԱԶ-21010» մակնիշի ավտոմեքենայում գտնվող՝ վերջինիս վարորդ Լյուվա Պողոսյանը և օգնական Կարեն Հովհաննիսյանը: ՀՀ նստիկանության ԿՀԴ ԳՎ են տեղափոխվել նաև հիշյալ երկու ավտոմեքենաները:

Գագիկ և Վարդան Զհանգիրյանների ու Կարեն Հովհաննիսյանի մոտից, համապատասխանաբար, առգրավվել են՝ «CZ-75B» տեսակի, 36684 գործարանային համարի արձանակ՝ 15 փամփուշտներով, «IZH-75» տեսակի, թԿԿ-1432 համարի արձանակ՝ 8 փամփուշտով, «Մակարով» տեսակի «ԽԽ3006Ժ» համարի արձանակ, 2 պահուսակ՝ 16 փամփուշտներով:

Բացի այդ, Վարդան Զհանգիրյանի վարած «ԲՄՎ X-5» մակնիշի ավտոմեքենայի զննմամբ հայտնաբերվել և առգրավվել է «ԺԽ-118518» համարի 12.0մմ տրամաչափի որսորդական ողորկափող հրացան՝ 5 փամփուշտներով: Իսկ Գագիկ Զհանգիրյանին ուղեկցող «ՎԱԶ-21010» մակնիշի ավտոմեքենայի սրահից զննմամբ հայտնաբերվել և առգրավվել է, վերջինիս անվամբ հաշվառված, 9.0մմ տրամաչափի «Խ-80646 2» գործարանային համարի «Բրաունինգ» մոդելի արձանակ՝ 14 փամփուշտներով, ինչպես նաև ձեռնաշղթա, զրահաբաճկոն և դանակ:

Սրուգմամբ պարզվել է, որ Գագիկ և Վարդան Զհանգիրյաններին ուղեկցող «ՎԱԶ-21010» մակնիշի 80ՍՍ555 պերհամարանիշի ավտոմեքենայի սրահից զննմամբ հայտնաբերված «Բրաունինգ» տեսակի «Լ-80646» գործարանային համարի հրազենն, իրոք, հաշվառված է Գագիկ Զհանգիրյանի անվամբ, սակայն այդ հրազենի իրանի և փողի վրա՝ գործարանային համարի վերջնամասում, առկա է «2» թիվը:

Այդ կապակցությամբ, ինչպես նաև հիշյալ հրազենն իրեն ուղեկցող ավտոմեքենայում գտնվելու հանգամանքների վերաբերյալ, Գագիկ Զհանգիրյանը հրաժարվել է որևէ բացատրություն փախուց:

Նախաքննության մարմինը Արգավանդի խաչմերուկում տեղի ունեցած դեպքի կապակցությամբ քրեական գործ է հարուցել Վարդան Զհանգիրյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ

մասով, իսկ հարուցված քրեական գործի նյութերով նոր քրեական գործ է հարուցել նաև Գագիկ Զհանգիրյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով:

Քննությանը պարզվել է, որ հայրնաբերված և առգրավված զենքերը և ռազմամթերքը Գագիկ Զհանգիրյանը, Վարդան Զհանգիրյանը և Կարեն Հովհաննիսյանը պահել ու կրել են օրենքով սահմանված կարգով համապատասխան թույլտվությունների հիման վրա: Միաժամանակ հիմնավորվել է, որ «ՎԱԶ-21010» մակնիշի ավտոմեքենայի գնմամբ առգրավված «Բրաունինգ» տեսակի ատրճանակը, թեև հաշվառված է եղել Գագիկ Զհանգիրյանի անվամբ, սակայն, ըստ դատաձգաբանական փորձաքննության եզրակացության, գործարանային «L-80646» համարի վերջնամասում, ատրճանակի իրանի և փողի վրա դրոշմված «2» թիվը կարարվել է արհեստագործական եղանակով, չի պարզվել նաև, թե ինչ հանգամանքներում է Գագիկ Զհանգիրյանի անվամբ հաշվառված այդ հրազենը հայրնվել վերջինիս ուղեկցող ավտոմեքենայի սրահում:

Բացի այդ, ՀՀ ոստիկանություն բերման ենթարկելուց հետո, Գագիկ Զհանգիրյանը ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բնություն է գործադրել, որոնց կարարման համար վարույթ իրականացնող մարմինը նրան մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործի հետագա քննության ընթացքում նախաքննության մարմինը հանգել է այն հետևության, որ ձեռք բերված ապացույցները բավարար չեն ապօրինի հրազեն ձեռք բերելու, պահելու և կրելու մեղադրանքով Գագիկ Զհանգիրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235 հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը շարունակել, այդ հոդվածով քննիչի 13.08.2008թ. որոշմամբ քրեական հետապնդումը նրա նկատմամբ վերացվել է՝ ապացույցների անբավարարության հիմքով ու նրան նոր մեղադրանք է առաջադրվել (...):¹:

6.1 Առաջին ատյանի դատարանը դատաքննությամբ հաստատված է համարել այն, որ Գագիկ Զհանգիրյանը 2008 թվականի փետրվարի 23-ին, ժամը 23.30-ի սահմաններում, ապօրինի հրազեն կրելու կասկածանքով ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ վարչության բակ բերման ենթարկվելուց հետո, նույն վարչության շենքի բակում՝ չենթարկվելով իրենց ծառայողական պարտականությունները կատարող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ աշխատակիցներ Արման Հարությունյանի և Տիգրան Աղվանյանի օրինական պահանջներին՝ չի կատարել ավտոմեքենայից իջնելու վերջիններիս պահանջը, ավտոմեքենայից իջնելիս փորձել է ոտքերով հարվածել նրանց: Ուժի գործադրմամբ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 137-164:

ավտոմեքենայից իջեցնելուց հետո, ոստիկանության հիշյալ աշխատակիցների կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝ ձեռքով հարվածել է ոստիկանության աշխատակից Արման Հարությունյանին՝ նրան պատճառելով ֆիզիկական ցավ, այնուհետև քաշել ու պատռել է ոստիկանության մյուս աշխատակից Տիգրան Աղվանյանի անթև համազգեստի գրպանը, իսկ այդ ամենը զուգորդվել է նաև նրանով, որ Գագիկ Ջհանգիրյանը սպառնացել է վերջիններիս ու նրանց ընտանիքի անդամների նկատմամբ հաշվեհարդար տեսնել: Քանի որ Գագիկ Ջհանգիրյանը հրաժարվել է կամովին մտնել վարչական շենք, Արման Հարությունյանն ու Տիգրան Աղվանյանը ուժի գործադրմամբ, ձեռքերն ոլորելով կանխել են դիմադրությունը ու Գագիկ Ջհանգիրյանին մտցրել են վարչական շենքի նախասրահ¹:

7. Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում Գ.Ջհանգիրյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք վկաների: Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը բավարարել է մասնակիորեն՝ որոշելով դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել վկաների մի մասին²:

8. Առաջին ատյանի դատարանը, Գ.Ջհանգիրյանին մեղավոր ճանաչելով մեղսագրվող հանցագործության կատարման մեջ, հիմք է ընդունել տուժողներ՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 5-րդ վարչության կրտսեր տեսուչ Ա.Հարությունյանի, նույն վարչության 1-ին բաժնի օպերիվազոր Տ.Աղվանյանի ցուցմունքները, ինչպես նաև վկաներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակիցներ՝ Կ.Բաբակեղյանի, Ս.Ասատրյանի, Տ.Հովհաննիսյանի, Գ.Վարդանյանի, Ա.Եղյանի, Ա.Եղիազարյանի, Ա.Սուքիասյանի, Վ.Գևորգյանի, Ա.Ապրիյանի, Մ.Բաղդասարյանի, Ռ.Սուրադյանի, Ա.Աղանիկյանի, Ա.Մարգարյանի, Մ.Ղազարյանի, Տ.Կարապետյանի, Գ.Վարդանյանի, Կ.Խաչատրյանի, Գ.Գևորգյանի, Մ.Արզումանյանի, Վ.Քաբարյանի, Ռ.Կայֆաջյանի, Գ.Մադոյանի ըստ էության նույնարժանողակ ցուցմունքները, իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժող Տ.Աղվանյանի ոստիկանության համազգեստն ու դրա 2008 թվականի փետրվարի 26-ի առգրավման արձանագրությունը, դատահետքաբանական և ապրանքագիտական համալիր փորձաքննության 2008 թվականի մարտի 18-ի թիվ 372 եզրակացությունը³:

9. Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ նշել է. «(...) Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությանն այն մասին, որ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 145:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 96, քրեական գործ, հատոր 5-րդ, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 86, քրեական գործ, հատոր 5-րդ, դատական նիստի արձանագրության լազերային կրիչը, թերթ 112:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 137-164:

Գ.Զհանգիրյանին առաջադրված մեղադրանքը հիմնված է միայն ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների հիման վրա՝ առանց որևէ էական լրացուցիչ հիմնավորող ապացույցների, այս (...), Վերաքննիչ դատարանը գտնում է՝ գործով փոստիլների և վկաների՝ ոստիկանության աշխատակիցներ լինելու հանգամանքը չի նվազեցնում վերջիններիս ցուցմունքների ապացուցողական նշանակությունը, և անթույլատրելի է այն դիրքը որպես կանխորոշիչ կամ կանխակալ հանգամանք:

Մրա հետ մեկտեղ քրեական գործում առկա են բացի ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներից նաև ԿՀԴՊ ԳՎ օպերատիվ ղեկավարման բաժնի ՀԿԳ ավագ օպերիվագոր Ա.Եղյանի (...), նույն վարչության օպերատիվ ղեկավարման բաժնի ավագ ենթասպա Գ.Վարդանյանի (...), նույն վարչության 1-ին բաժնի օպերիվագոր Տ.Աղվանյանի (...), նույն վարչության 1-ին բաժնի կրպներ տեսուչ Ա.Հարությունյանի (...) [զեկուցագրերը] (...):

Բացի այդ, քրեական գործում առկա է փոստիլ Տ.Աղվանյանի ոստիկանական համազգեստի վերնազգեստը առգրավելու մասին արձանագրությունը, ինչպես նաև դատարանի քրեական և ապրանքագիտական համալիր փորձաքննության թիվ 372 եզրակացությունը (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբեր Գ.Զհանգիրյանը նշել է, որ 2008 թվականի փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո մասնակցել է Ազատության հրապարակում 2008 թվականի փետրվարի 22-ին կազմակերպված հանրահավաքին և հանդես եկել ելույթով: Դրանից հետո իր և հարազատների նկատմամբ սկսվել են հետապնդումներ: Նույն օրը ՀՀ գլխավոր դատախազն իրեն պաշտոնից ազատելու միջնորդությամբ դիմել է ՀՀ նախագահին, որից հետո ՀՀ նախագահի՝ 2008 թվականի փետրվարի 23-ի հրամանագրերով ազատվել է զբաղեցրած պաշտոնից և զրկվել դասային աստիճանից: Այնուհետև, նույն օրը ժամը 22-ի սահմաններում իր եղբոր հետ ապօրինի բերման և քրեական հետապնդման է ենթարկվել: Ըստ բողոքաբերի՝ իր նկատմամբ դրսևորվել է խտրականություն, որը քողարկվել է կեղծ քրեական հետապնդում իրականացնելով, ինչն արտահայտվել է հետևյալ հակասություններով. իրեն բերման են ենթարկել մի հիմքով, ձերբակալել այլ հիմքով, կալանավորել մեկ ուրիշ հիմքով, իսկ կալանքի տակ պահելու ժամկետները երկարացվել են բոլորովին այլ հիմքերով:

10.1 Բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը, փաստել է, որ ստորադաս

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 108-141-րդ:

դատարանները գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ըստ բողոքի հեղինակի՝ դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջները: Բողոքաբերի պնդմամբ՝ թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարաններն առավել արժանահավատ են համարել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները և արդյունքում ելել են սխալ եզրահանգման առ այն, որ իր նկատմամբ բռնություն չի կիրառվել:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 23-ի դատավճիռն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի մայիսի 20-ի որոշումը և կայացնել արդարացման դատական ակտ, հռչակել իր անմեղությունը հանցադեպի բացակայության հիմքով և կարճել գործի վարույթը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

13. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տրվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տրված վկաները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարզի՞ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

14. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնած դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Մնան իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնած դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր քննիչ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չիմաստավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

«Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՍԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարզառահեղանակաբար կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից բուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հատուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեզրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսեմացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել և դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը սրացել է ակնհայտ սխալ իրավական գնահատականով¹:

15. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռում² արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկելու ապացույցների խսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ**³,

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությանը, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

² Տե՛ս *Mushegh Saghatelian v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

³ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»¹,

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին²,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն³,

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին: Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին⁴,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության**

¹ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

² Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

³ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

⁴ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները¹:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում Գ.Ջհանգիրյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք վկաների: Առաջին ատյանի դատարանը միջնորդությունը բավարարել է մասնակիորեն՝ որոշելով դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել վկաների մի մասին²:

16.1 Առաջին ատյանի դատարանը, 2009 թվականի մարտի 23-ի դատավճռով Գ.Ջհանգիրյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ հիմք է ընդունել տուժողներ՝ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կրտսեր տեսուչ Ա.Հարությունյանի և նույն վարչության օպերիվագոր Ս.Աղվանյանի ցուցմունքները, վկաներ՝ ՀՀ ոստիկանության աշխատակցիներ Կ.Բաբակեխյանի, Ս.Ասատրյանի, Տ.Հովհաննիսյանի, Գ.Վարդանյանի, Ա.Եղյանի, Ա.Եղիազարյանի, Ա.Սուքիասյանի, Վ.Գևորգյանի, Ա.Ապրիյանի, Մ.Բաղդասարյանի, Ռ.Մուրադյանի, Ա.Աղանիկյանի, Ա.Մարգարյանի, Մ.Ղազարյանի, Տ.Կարապետյանի, Գ.Վարդանյանի, Կ.Խաչատրյանի, Գ.Գևորգյանի, Մ.Արզումանյանի, Վ.Քաբաբյանի, Ռ.Կայֆաջյանի, Գ.Մադոյանի ըստ էության նույնաբովանդակ ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույց ճանաչված՝ տուժող Տիգրան Աղվանյանի ոստիկանական համազգեստն ու դրա՝ 2008թ. փետրվարի 26-ի առգրավման արձանագրությունը, դատահետքաբանական և ապրանքագիտական

¹ Տե՛ս *mutatis mutandis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

համալիր փորձաքննության 2008 թվականի մարտի 18-ի թիվ 372 եզրակացությունը¹:

16.2 Վերաքննիչ դատարանը, 2009 թվականի հունիսի 23-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, գտել է, որ գործով տուժողների և վկաների՝ ոստիկանության աշխատակիցներ լինելու հանգամանքը չի նվազեցնում վերջիններիս ցուցմունքների ապացուցողական նշանակությունը, և անթույլատրելի է այն դիտել որպես կանխորոշիչ կամ կանխակալ հանգամանք: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քրեական գործում բացի ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներից առկա են նաև ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության օպերատիվ ղեկավարման բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ օպերլիազոր Ա.Եղյանի, նույն վարչության օպերատիվ ղեկավարման բաժնի ավագ ենթասպա Գ.Վարդանյանի, ինչպես նաև՝ տուժողի ոստիկանական համագգեստն առգրավելու մասին արձանագրությունը, դատահետքաբանական և ապրանքագիտական համալիր փորձաքննության եզրակացությունը²:

17. Սույն որոշման 16-16.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների, *Մուշեղ Սաղաթելյան ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Գ.Ջհանգիրյանի մեղադրանքը հիմնավորելիս առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովվել *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Գ.Ջհանգիրյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Գ.Ջհանգիրյանի մասնակցությունը նրան վերագրված արարքի կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝ տուժողներ՝ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

պայքարի գլխավոր վարչության կրտսեր տեսուչ Ա.Հարությունյանի և սույն վարչության օպերլիազոր Տ.Աղվանյանի ցուցմունքներն են: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, այն է՝ որպես վկա հարցաքննված ոստիկանության մյուս աշխատակիցների ցուցմունքները, իրեղեն ապացույցը, դրա առգրավման արձանագրությունն ու փորձագիտական եզրակացությունը, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Գ.Ջհանգիրյանի առնչությունը մեղսագրվող արարքին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Գ.Ջհանգիրյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Մաղաթեյյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, սույն գործով ևս պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Մասնավորապես, պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք, ըստ պաշտպանների, կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները և հիմնավորում էին դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Մաղաթեյյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

18. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը կատարելու մեջ Գ.Ջհանգիրյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հասարակրվի գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույց-

ների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փաստականից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաճ հրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարատվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին պայիս է հաստատող պարասխաններ»:

18.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ. «(...) «[Ա]պացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարճառաբանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված

համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Մինևույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Եերօրին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխափան կապով. այն, մի կողմից, պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վարահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավատության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության րեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մրսպահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության րեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների սրացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասու-

թյունը, հակասության դեպքում դրա պատճառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական փյուռի վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պատճառաբանման չափանիշի միջոցով (...):

(...) [Ք]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական փյուռի (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (իսկաբ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»¹:

19. Սույն որոշման 18-18.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով որոշման 16-16.2-րդ կետերում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ Գ.Ջհանգիրյանին բերման և քրեական հետապնդման ենթարկելուն նախորդող և հաջորդող իրադարձությունների համատեքստում² արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից: Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է.

Գ.Ջհանգիրյանը, հանդիսանալով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, բերման ենթարկվելուց մեկ օր առաջ՝ 2008 թվականի փետրվարի 22-ին մասնակցել է Ազատության հրապարակում կազմակերպված

¹ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Մահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ և 10-րդ կետերը:

հանրահավաքին և հանդես եկել ելույթով: Դրան անմիջապես հաջորդել է նրան պաշտոնից ազատելու միջնորդությամբ դիմումների ներկայացումը Հայաստանի Հանրապետության նախագահին, և 2008 թվականի փետրվարի 23-ի հրամանագրերով Գ.Ջհանգիրյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից ու զրկվել դասային աստիճանից:

Նույն օրը ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ Էջմիածին քաղաքից դեպի Երևան քաղաք ընթացող «BMW-X5» մակնիշի և նրան ուղեկցող «ՎԱԶ 21010» մակնիշի ավտոմեքենաներում զինված անձինք են գտնվում: Կարճ ժամանակ անց, օպերատիվ միջոցառումն իրացնելիս, «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, Գ.Ջհանգիրյանի եղբայր Վ.Ջհանգիրյանի մոտ հայտնաբերվել է հրազեն: Նրան վնասագերծելիս ոստիկանության աշխատակից Ռ.Մուրադյանն իր հաշվեցուցակային «Մակարով» տեսակի ատրճանակից կրակոց է արձակել, որի հետևանքով հրազենային վնասվածք են ստացել ինչպես Վ.Ջհանգիրյանը, այնպես էլ ոստիկանության աշխատակիցներ Տ.Կարապետյանը և Գ.Սալխապյանը: Հիշյալ «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայի մեջ է գտնվել նաև Գ.Ջհանգիրյանը, որը ոստիկանության աշխատակիցների պահանջով տեղում կամովին հանձնել է իր մոտ եղած հրազենը¹:

Ինչպես նախապես ունեցած օպերատիվ տեղեկատվության իրացումը, այնպես էլ հիշյալ միջադեպը հիմք են հանդիսացել ավտոմեքենաներում գտնվող անձանց, այդ թվում՝ Գ.Ջհանգիրյանին՝ ապօրինի զենք կրելու կասկածանքով բերման ենթարկելու և նրանց մոտ գտնվող զենքերն առգրավելու համար²:

2008 թվականի փետրվարի 24-ին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ Վ.Ջհանգիրյանի կողմից ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու փաստի առթիվ, և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Գ.Ջհանգիրյանի կողմից ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք ձեռք բերելու ու պահելու փաստի առթիվ և նույն օրը վերջինս ձերբակալվել է³:

Հարկ է նաև նշել, որ գործով կատարված քննությամբ պարզվել է, որ հայտնաբերված և առգրավված զենքերը եղել են օրինական և Գ.Ջհանգիրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ապացույցների անբավարարության հիմքով:

Միաժամանակ, Գ.Ջհանգիրյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել ՀՀ ոստիկանություն բերման ենթարկվելուց հետո

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն տեղում:

³ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

նստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու համար, ինչն առավելապես հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից ոստիկանների ցուցմունքներով, ինչպես նաև դեպքի մասին միջնորդավորված ձևով իրազեկված ոստիկանության աշխատակիցների անուղղակի ցուցմունքներով:

Դեպքի վերոնշյալ ժամանակագրությունը՝ հանրահավաքին Գ.Ջհանգիրյանի մասնակցելու պահից մինչև ապօրինի զենք կրելու կասկածանքով ոստիկանության բաժին բերման ենթարկվելը, այնուհետև՝ բերման ենթարկելու նախնական կասկածների փարատումն ու այդ մասով քրեական հետապնդման դադարեցումը և ոստիկանության բաժնում ոստիկանության աշխատակիցների կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրման համար մեղադրանքի առաջադրումը, ողջամտորեն սովորում են այն հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ տուժող ճանաչված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը:

Վերոշարադրյալ անհերքելի գործոնների հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Գ.Ջհանգիրյանը կատարել է սույն քրեական գործով իրեն մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը:

20. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հռչակելու Գ.Ջհանգիրյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառարանությամբ:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Գագիկ Վրեժի Զհանգիրյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2009 թվականի մարտի 23-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի մայիսի 20-ի որոշումը բեկանել:

2. Գագիկ Վրեժի Զհանգիրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

43. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՇԴ/0010/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահույթյամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշման դեմ դիմող Մարետա Վրեժի Անտոնյանի և նրա ներկայացուցիչ Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժնում 2016 թվականի մայիսի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11135716 քրեական գործը:

Գործի հետագա նախաքննությունն իրականացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում:

2016 թվականի մայիսի 16-ին ավագակային հարձակում կատարելու կասկածանքով ձերբակալվել է Էդգար Մանուկյանը, 2016 թվականի մայիսի 18-ի որոշմամբ նա ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 10-ի որոշումներով դեպքի ժամանակ մահացած Հրայր Ֆալանջյանը ճանաչվել է տուժող, վերջինիս մայրը՝ Մարետա Անտոնյանը, տուժողի իրավահաջորդ, Մ.Չատինյանը՝ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունվարի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 11-րդ կետերով առերևույթ հանցանքներ կատարած Հրայր Ֆալանջյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա մահվան հիմքով: Նախաքննության մարմինը նույն օրը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնել նաև Հրայր Ֆալանջյանին վնաս պատճառած՝ Լևոն, Անուշ, Դավիթ և Անահիտ Ավետիսյանների և Մամվել Հարությունյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ և 43-րդ հոդվածների ուժով նրանց գործողությունները համարելով իրավաչափ: Նշված որոշումների օրինակներն ուղարկվել են տուժողի իրավահաջորդ Մ.Անտոնյանին:

2. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունվարի 17-ի որոշմամբ թիվ 11135716 քրեական գործից մեղադրյալ Է.Մանուկյանի վերաբերյալ գործն անջատվել է, և նախաքննությունը շարունակվել է 62200317 համարի տակ:

2017 թվականի հունվարի 25-ին Է.Մանուկյանի վերաբերյալ թիվ 62200317 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որը 2017 թվականի մարտի 10-ին ընդունվել է դատարանի վարույթ, և գործին շնորհվել է ԵՇԴ/0010/01/17 համարը:

3. Նշված գործի դատաքննության ընթացքում՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ի դատական նիստի ժամանակ, Մարետա Անտոնյանը միջնորդել է իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ: Առաջին ատյանի դատարանի արձանագրային որոշմամբ Մ.Անտոնյանի միջնորդությունը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ի որոշման դեմ Մ.Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի կողմից 2018 թվականի հուլիսի 11-ին բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ թողնվել է առանց քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել դիմող Մ.Անտոնյանը և նրա ներկայացուցիչ Ա.Պապիկյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 1-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի՝ թիվ ԵՇԴ/0010/01/17 քրեական գործով 2017 թվականի սեպտեմբերի 23-ի դատական նիստի ընթացքում կայացված «Մարերա Աստղյանի որպես տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին» արձանագրային որոշման դեմ Մարերա Վրեժի Աստղյանի ներկայացուցիչ Արայիկ Պապիկյանի վերաքննիչ բողոքը, գրնում է, որ անհրաժեշտ է անդրադառնալ այն իրավական հարցերին, թե արդյոք թիվ ԵՇԴ/0010/01/17 քրեական գործով կայացված վերը նշված որոշումը ենթակա է վերաքննիչ բողոքարկման և թե արդյոք բողոքարկերի կողմից պահպանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով սահմանված վերաքննիչ բողոքարկման ժամկետները: (...)

Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես հերևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1 հոդվածի՝ վերը վկայակոչված դրույթների ուսումնասիրությունից, դրանցով «տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին» արձանագրային որոշման բողոքարկում նախատեսված չէ: Միևնույն ժամանակ, նշված հոդվածի 8-րդ կետի լույսի ներքո հարկ է նաև արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որևէ այլ դրույթով նույնպես նախատեսված չէ այդ որոշման ՀՀ վերաքննիչ քրեական դատարան բողոքարկելու հնարավորություն:

Կիրառելով մեկնաբանման *expression unius* կանոնը, որի համաձայն՝ սպառիչ ցանկում որևէ րարը չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ առաջին արյանի դատարանի՝ դատական քննության փուլում գրավող քրեական գործով տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին արձանագրային որոշման վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում, այսինքն՝ այդ որոշումը վերաքննիչ բողոքարկման ենթակա չէ: (...)

Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին արյանի դատարանի թիվ ԵՇԴ/0010/01/17 քրեական գործով 2017 թվականի սեպտեմբերի 23-ի դատական նիստի ընթացքում կայացված արձանագրային որոշման վերաբերյալ Մարերա Վրեժի Աստղյանը տեղեկացված է եղել հենց այդ դատական նիստի օրը, քանզի վերջինս փաստացի մասնակցել է այդ դատական նիստին, բացի այդ էլ, դատական նիստի արձանագրումը կատարվել է հարուկ համակարգչային ձայնագրման համակարգով, և այդ որոշումը նրան փաստացի հասու կարող էր դառնալ նրա գրավոր դիմումի հիման վրա դատական նիստից անմիջապես հետո դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը՝ դրա

համառոտագրման հետ, նրան տրամադրվելուց հետո, մինչդեռ վերջինս նման դիմում չի ներկայացրել, իսկ ներկայացնելու պարագայում անգամ, այդ որոշումն ըստ էության կարանար հենց դատական նիստի օրը՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ին, հերևաբար՝ վերջինիս համար վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրացած կհամարվի առավելագույնը 2017 թվականի հոկտեմբերի 3-ին՝ ժամը 24:00-ին:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Արայիկ Պապիկյանը, իրականացնելով Մարեթա Վրեժի Անտոնյանի իրավունքները բողոք է ներկայացրել վերաքննիչ բողոքարկման ենթադրյալ ժամկետի ավարտից ավելի ուշ, մասնավորապես Արայիկ Պապիկյանի վերաքննիչ բողոքը փոստային ծառայության է հանձնվել միայն 2018 թվականի հուլիսի 11-ին, ինչպես նաև չի ներկայացվել միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակները, մեջբերելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 58-րդ, 80-րդ հոդվածները, ինչպես նաև վկայակոչելով տուժողի խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական ակտերը, նշել են, որ դիմող Մ.Անտոնյանը, փաստացի առանց քրեադատավարական օրենքով սահմանված կարգի, գրկվել է իր դատավարական կարգավիճակից, և հնարավորություն չի ունեցել իրացնելու իր իրավունքները, արդյունքում խախտվել է կողմերի մրցակցության սկզբունքը:

7. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք խնդրել են Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշումը բեկանել և Մ.Անտոնյանին թիվ ԵՇԴ/0010/01/17 քրեական գործով ճանաչել որպես տուժողի իրավահաջորդ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այդ առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչելը մերժելու մասին որոշման բողոքարկման հնարավորության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 12-20:

րանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ:

10. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դափնեկալի պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կարարել էն ի պաշտոնե գործող անձինք»:*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոչնաստարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»:*

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.*

ա) *ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կարարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.*

բ) *ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող*

ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատարան, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատարան պաշտպանության հնարավորությունները.

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը դրանք տրամադրելու դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

11. ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների վերաբերյալ հիմնահարցերին, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները՝

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները,

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը¹:

12. Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան): Մասնավորապես՝ Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դատարան դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Եվրոպական կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է Եվրոպական դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու՝ անձի իրավունքն այն աստիճան չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ դրա արդյունքում խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չհետապնդի, և առկա չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև²:

Խնդրո առարկա հիմնարար իրավունքների էությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ ձևավորելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Դատարանի պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է ձևական բնույթ կրեն, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները»³:

13. Սույն որոշման նախորդ կետում վերլուծության առարկա դարձած

¹ Տե՛ս և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴՌ-936, 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՍԴՌ-1257 որոշումների՝ համապատասխանաբար 6-րդ և 7-րդ կետերը:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hirschhorn v. Romania* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 29294/02, կետ 50:

³ Տե՛ս *Արթուր Ալվազյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշման 16-րդ կետը:

հիմնարար իրավունքի ապահովման անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանը հարկ է համարում քննարկել հանցագործությունից ենթադրաբար տուժած անձի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Այդ առումով Վճռաբեկ դատարանը *Մովսես Խաչատրյանի* գործով փաստել է. «[Հանցագործության արդյունքում տուժած անձը ոչ միայն արդար դատաքննության և դատարանի մարչելիության հիմնարար իրավունքները կրող սուբյեկտ է, այլև միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերով որպես պետության պարտավորություն է սահմանվում հենց վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը:

Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի (այսուհետ՝ նաև Կոմիտե)՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11, 2006 թվականի հունիսի 14-ի՝ «Հանցագործության գոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականներում առաջարկվում է ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկել փուժողների իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, Կոմիտեի՝ 1985 թվականի հանձնարարականի նախարարում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների փոփոխում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդացնում է փուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի փուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Ելնելով վերոշարադրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ամրացնել փուժողի վարահությունը քրեական արդարադատության համակարգի նկատմամբ՝ Կոմիտեն անդամ պետություններին հանձնարարել է վերանայել իրենց օրենսդրությունը և դատական պրակտիկան քրեական արդարադատության համակարգում փուժողի դերը բարձրացնելու մի շարք ուղղություններով:

Միևնույն ժամանակ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ «Հանցագործության և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքները» A/RES/40/34 հոշակագրի 4-րդ և 5-րդ կետերը վկայում են, որ հանցագործությունից փուժողները պետք է արդարադատության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն ունենան: Դատական և վարչական կառուցակարգերը պետք է հաստատվեն և ամրապնդվեն այնպես, որ հնարավորություն ընձեռեն փուժողին սրանալու փոխհատուցում արագ, արդար, սակավարժեք և մարչելի ընթացակարգերի միջոցով:

25. Հաշվի առնելով Կրուժոդի (Կրուժոդի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության, պեյուրության պոզիտիվ պարավորության, ինչպես նաև վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության սպասողման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կրուժոդի (Կրուժոդի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ այդպիսի որոշման բողոքարկման հնարավորություն չընձեռելու միջոցով Կրուժոդի (Կրուժոդի իրավահաջորդի)՝ դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակելը խաթարում է այդ հիմնարար իրավունքի բուն էությունը՝ վերջինիս վերածելով պարանոթային հիմնադրույթի: Այդպիսի սահմանափակումը խախտում է նաև գործադրված միջոցի և հեղուկացման նպատակի միջև հավասարակշռության ողջամիտ հարաբերակցությունը (...)¹:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարական կարգավիճակը հնարավորություն է ընձեռում տուժողին (տուժողի իրավահաջորդին) հանդես գալու որպես դատավարության մասնակից և իրականացնելու քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները: Տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչելը մերժելու մասին դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն չընձեռելն անհարկի սահմանափակում է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակը դադարեցնելու մասին դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու առնչությամբ արտահայտված դիրքորոշումը վերաբերելի է նաև տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչելը մերժելու մասին դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկմանը, քանի որ այդ երկու որոշումները հանցագործությունից ենթադրաբար տուժած անձի (նրա իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության տեսանկյունից ըստ էության միտված են նույն նպատակին:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Հ.Ֆալանջյանի և Է.Մանուկյանի կողմից ենթադրյալ ավազակային հարձակում կատարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11135716 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ դեպքի ընթացքում Հրայր Ֆալանջյանին

¹ Տե՛ս *Մովսես Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԷԴ/0110/01/12 որոշման 24-27-րդ կետերը:

պատճառով է մահ, վերջինս ճանաչվել է տուժող, իսկ նրա իրավունքները ներկայացնելու և դատավարական շահերը պաշտպանելու համար վարույթն իրականացնող մարմնին դիմած Մ.Անտոնյանը՝ տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունվարի 13-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 11-րդ կետերով առերևույթ հանցանքներ կատարած Հրայր Ֆալանջյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա մահվան հիմքով: Նախաքննության մարմինը նույն օրը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնել նաև Հրայր Ֆալանջյանին վնաս պատճառած՝ Լևոն, Անուշ, Դավիթ և Անահիտ Ավետիսյանների և Մամվել Հարությունյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ և 43-րդ հոդվածների ուժով նրանց գործողությունները համարելով իրավաչափ: Երկու որոշումների օրինակներն ուղարկվել են տուժողի իրավահաջորդ Մ.Անտոնյանին¹:

Նախաքննության մարմնի վերոնշյալ որոշումները տուժողի իրավահաջորդ Մ.Անտոնյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկված լինելու վերաբերյալ տվյալներ սույն գործի նյութերում առկա չեն:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունվարի 17-ի որոշմամբ թիվ 11135716 քրեական գործից մեղադրյալ Է.Մանուկյանի վերաբերյալ գործն անջատվել է առանձին վարույթ և 2017 թվականի հունվարի 25-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան²:

Նշված գործի դատաքննության փուլում՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ին կայացած դատական նիստի ընթացքում դիմող Մ.Անտոնյանը միջնորդել է իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ: Առաջին ատյանի դատարանը նույն օրվա արձանագրային որոշմամբ դիմող Մ.Անտոնյանի միջնորդությունը մերժել է³:

Վերոգրյալ որոշման դեմ դիմող Մ.Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի կողմից 2018 թվականի հուլիսի 12-ին բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ հետևյալ պատճառաբանություններով.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի համաձայն՝ *«տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին»* արձանագրային որոշման բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ,

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

- դիմող Մ.Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանը բողոք է ներկայացրել վերաքննիչ բողոքարկման ժամկետի ավարտից հետո, մասնավորապես՝ 2017 թվականի սեպտեմբերի 23-ի որոշման դեմ Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքը փոստային ծառայության է հանձնվել 2018 թվականի հուլիսի 11-ին, ինչպես նաև չի ներկայացվել միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ¹:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո և հաշվի առնելով տուժողի (տուժողի իրավահաջորդի) իրավունքների պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտավորության, ինչպես նաև վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացվելիության ապահովման անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժող (տուժողի իրավահաջորդ) ճանաչելը մերժելու մասին դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման:

Հետևաբար, տուժողի իրավահաջորդ ճանաչելը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը իրավաչափ չէ:

16. Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում դիմող Մ.Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքը՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն իրավասու չէ անդրադառնալու դիմող Մարետա Անտոնյանին թիվ ԵՇԳ/0010/01/17 դատական գործով տուժողի իրավահաջորդ չճանաչելու հիմնավորվածությանը:

17. Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և դիմող Մ.Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դիմող Մարետա Վրեժի Անտոնյանի ներկայացուցիչ Ա.Պապիկյանի բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 7-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

44. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0003/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ դիմող Ռուզան Վարազդատի Ադանալյանի ներկայացուցիչ Լ.Ապանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի օգոստոսի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 68109515 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունվարի 21-ի որոշմամբ թիվ 68109515 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր՝ թիվ 68100916 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նույն օրը թիվ 68100916 և 68109515 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 68100916 համարով:

2017 թվականի մարտի 31-ին թիվ 68100916 քրեական գործի վարույթը

կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

2. Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Ռ.Ադանալյանի՝ կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է:

Վերոնշյալ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ռ.Ադանալյանի բողոքը Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Կ.Հովսեփյանի՝ 2018 թվականի հունվարի 19-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմող Ռ.Ադանալյանի բողոքի քննության արդյունքում Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է:

4. Դիմողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 12-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ռ.Ադանալյանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարան ներկայացրած բողոքում դիմող Ռ.Ադանալյանը, ի թիվս այլնի, նշել է հետևյալը. «(...) [Գ/ործով վարույթը կասեցնելու որոշման (...) բողոքարկման] իրավունքներն իրացնելու համար անհրաժեշտ է և իմ իրավունքն է ծանոթանալ գործի նյութերին, որպեսզի հնարավորություն ընձեռնվի համապատասխան փաստարկներով և ապացույցներով հիմնավորելու [քննիչի՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին] որոշման անօրինական լինելը (...)»¹:

7. Առաջին ատյանի դատարանը, մերժելով դիմող Ռ.Ադանալյանի բողոքը, նշել է. «(...) Դատարանն արուգման ենթարկելով [քրեական հետապնդման մարմինների որոշումների] օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ դատարանը գտնում է, որ բողոքարկվող որոշումները կայացվել են օրենքին համապատասխան, անձի իրավունքների կամ ազատությունների խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել, ուստի բողոքն ամբողջությամբ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 2-4:

ենթակա է մերժման»¹:

8. Վերաքննիչ բողոքից երևում է, որ բողոքաբերը վիճարկել է կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու միջնորդությունը մերժելու մասին նախաքննության մարմնի որոշման իրավաչափությունը և այդ առնչությամբ Առաջին ատյանի դատարանի հետևությունների հիմնավորվածությունը²:

9. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է. «(...) [Ք]րեական գործի քննության կասեցման դեպքում օրենսդիրը չի սահմանել դատավարության մասնակիցների՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու որևէ կարգ:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով վերը նշված պատճառարանությունները, գործում է, որ [Առաջին ատյանի դատարանի] հետևություններն, այն մասին, որ քննիչի և դատախազի որոշումները կայացվել են իրավաչափ հիմքով և դրանցով չեն խախտվել դիմողի իրավունքներն ու ազատությունները, բիում են դատավարական նորմերի պահանջներից և նման որոշում կայացնելով վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տվել դիմողի իրավունքների և ազատությունների խախտումներ, ուստի, ներկայացված բողոքը բավարարելու որևէ իրավաչափ հիմք չկա»³:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Դիմողի ներկայացուցիչ Լ.Ասլանյանի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս հաշվի չի առել այն, որ դիմողը գրկվել է իր իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանություն իրականացնելու հնարավորությունից:

Ի հիմնավորումն վերոնշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի սահմանափակումը դիմողին գրկում է մի կողմից պատկերացում կազմելու գործի ընթացքի մասին, մյուս կողմից՝ վերադատության և դատական կարգով վարույթն իրականացնող մարմնի որոշման դեմ փաստական տվյալներով հիմնավորված բողոք ներկայացնելու հնարավորությունից:

Բացի այդ, վերլուծելով մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առանձնահատկությունները, բողոքաբերը փաստել է, որ նախաքննությունն ավարտված չլինելու պատճառարանությամբ գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից գրկելն իրավաչափ չէ:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 34-36:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 58-61:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 103-109:

11. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն անդրադարձ չի կատարել այն հանգամանքին, որ Առաջին աստիճանի դատարանում գործի քննությունն իրականացվել է դիմողի բացակայությամբ: Բողոքաբերը նշել է, որ գործի նյութերում բացակայում է պատշաճ ծանուցված լինելը հավաստող որևէ փաստական տվյալ, հետևաբար Առաջին աստիճանի դատարանի հետևությունները՝ դիմողի բացակայությունը ոչ հարգելի համարելու և բողոքի քննությունը վերջինիս բացակայությամբ անցկացնելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

12. Վերոշարադրյալի հիման վրա դիմող Ռ.Ադանայանի ներկայացուցիչ Լ.Ասլանյանը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, հիմնավորված ճանաչել դիմողի կողմից ներկայացված բողոքը և կայացնել նոր դատական ակտ՝ Ռ.Ադանայանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի)՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու միջնորդությունը մերժելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշմամբ դիմող Ռ.Ադանայանի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

15. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատարանի պաշտպանության իրավունք»:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

15.1 ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, ի թիվս այլնի, ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- դատական բողոքարկումը՝ որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի՝ վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները¹,

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ²,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում³:

16. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները»*:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պերական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»*:

16.1 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի համատեքստում իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

- Եվրոպական կոնվենցիայի հոդված 13-ը երաշխավորում է ներպետական մակարդակում պաշտպանության միջոցի մատչելիությունը՝ Եվրոպական կոնվենցիայի իրավունքների ու ազատությունների էությունը

¹ Տե՛ս՝ *u* ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ ՍԴԻ-936 որոշումը, կետ 6:

² Տե՛ս՝ *u* ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ ՍԴԻ-1190 որոշումը, 9-րդ կետ:

³ Տե՛ս՝ *u* ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի մարտի 3-ի թիվ ՍԴԻ-1192 որոշումը, 7-րդ կետ:

խթանելու նպատակով՝ ինչպիսի ձևով էլ որ դրանք երաշխավորված լինեն ներպետական իրավական կարգում¹,

- Եվրոպական կոնվենցիայի հոդված 13-ը պահանջում է, որ ներպետական պաշտպանության միջոց առկա լինի Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի» բողոքի էությունը քննելու և համապատասխան օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույթով նախատեսված իրենց պարտականությունները²,

- Եվրոպական կոնվենցիայի հոդված 13-ով ամրագրված համապատասխան պարտավորության շրջանակը տարբերվում է՝ կախված Եվրոպական կոնվենցիայով դիմողի ներկայացրած բողոքի բնույթից: Այնուհանդերձ, հոդված 13-ով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ: Մասնավորապես, դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պատասխանող Պետության գործողություններով կամ բացթողումներով³:

17. Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդամ պետություններին հորդորում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերանայել իրենց իրավական համակարգերը և, ըստ անհրաժեշտության, օրենսդրության կամ դատական որոշումների միջոցով ամրագրել անհրաժեշտ և պատշաճ միջոցներ՝ երաշխավորելու համար Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված՝ արդյունավետ պաշտպանության երաշխիքը⁴:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագրի համաձայն՝ դատավարական ընթացակարգերը պետք է համապատասխանեն հանցագործություններից տուժած անձանց պահանջներին, այդ թվում՝ դատավարության արդյունքների մասին տուժողին տեղեկատվություն

¹ Տե՛ս՝ *Petrovavskis v. Latvia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, կետ 91:

² Տե՛ս՝ նույն տեղում:

³ Տե՛ս՝ *Paul and Audrey Edwards v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46477/99, կետեր 96-97:

⁴ Տե՛ս՝ Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածը, կետ 4:

տրամադրելու միջոցով, հատկապես այն դեպքերում, երբ նրանց կողմից պահանջվել են այդպիսիք, գործերի քննության անհարկի ձգձգումները կանխելու միջոցով, ինչպես նաև վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու եղանակով, այն դեպքում, երբ շոշափվում են նրանց անձնական շահերը¹:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ վերջինս ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործադրումը հաճախ բարդեցնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառնությունը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը²:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «Տուժողը, (...) իրավունք ունի՝ (...) բողոքարկել հեղափոխության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը»:

Նույն օրենսգրքի 258-րդ հոդվածի համաձայն՝ «Ըննիչը տուժողին (...) կամ [նրա] ներկայացուցիչներին (...) պարզաձև ծանուցմամբ անհապաղ ուղարկում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ պարզաբանելով որոշման բողոքարկման կարգը և ժամկետները»:

18.1 Իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ ձևավորված նախադեպային իրավունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է դատական պաշտպանության առանձնահատուկ դերը, որի բաղադրիչն է նաև դատավարական գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունքը: Դատական պաշտպանության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպ-

¹ Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/34 բանաձևով ընդունված՝ Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85) 11 հանձնարարականը:

քում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարանն դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա¹:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, դատական պաշտպանության իրավունքի համատեքստում անդրադառնալով քրեական արդարադատության համակարգում դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից գործի նյութերին ծանոթանալու իրավունքին, արձանագրել է, որ «գործի նյութերին ծանոթանալու իրավունքն ունի հիմնարար նշանակություն դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու համար: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս մի կողմից պարկերացում կազմելու գործի ընթացքի մասին, միջնորդելու կարարել լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողություններ, մյուս կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելու փաստական փյույաներով հիմնավորված բողոք վարույթն իրականացնող մարմնի ոչ իրավաչափ որոշումների կամ գործողությունների (անգործության) դեմ»²:

19. Սույն որոշման 15-18-րդ կետերում վկայակոչված՝ սահմանադրական, կոնվենցիոն, միջազգային իրավական փաստաթղթերի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների ու դրանց վերաբերյալ մեջբերված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման իրավաչափության կապակցությամբ տուժողի (տուժողի իրավահաջորդի) կողմից հայցվող իրավական պաշտպանության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գործի նյութերին ծանոթանալու նրա հնարավորությամբ: Այսինքն՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման առնչությամբ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են վերջինիս հասու գործի նյութերում պարունակվող փաստական տվյալները՝ իր իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար: Ուստի, տուժողը (տուժողի իրավահաջորդը) ունենալով ենթադրյալ հանցագործությամբ իր խախտված իրավունքների վերականգնման շահ՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկելու իր իրավունքն արդյունավետ իրականացնելու համար պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու գործի նյութերին,

¹ Տե՛ս, mutatis mutandis, Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշումը և Արթուր Այվազյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԳԻ/0007/15/12 որոշման 16-րդ կետը:

² Տե՛ս «Հեսար» ՄՊԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԱՐԳԻ/0006/11/17 որոշման 15-րդ կետը:

ինչը կլինի նաև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք: Նշվածը բխում է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշումից, որ մեղավորներին պարզելու անհնարինության պատճառաբանությամբ գործի վարույթը կասեցնելիս պետք է ապահովվի գործի նյութերի մատչելիությունը՝ տուժողների համար: Միաժամանակ, պետք է հնարավոր լինի բացառել կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի տրամադրումը¹:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ, բացառությամբ գործի՝ կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տեղեկատվություն պարունակող նյութերի, տուժողին (տուժողի իրավահաջորդին) պետք է տրամադրվեն իրեն վերաբերող գործի ողջ նյութերը՝ հնարավորություն ընձեռելով բավարար պատկերացում կազմել քրեական գործի վարույթը կասեցնելու որոշման հիմքում ընկած փաստական տվյալների մասին և ըստ անհրաժեշտության՝ լիարժեքորեն իրացնելու այդ որոշումը բողոքարկելու իր իրավունքը: Այդ համատեքստում հարկ է նկատել, որ կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությունը չպետք է մեկնաբանվի չափազանց ձևականացված (*excessive formalism*) և դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ գործի նյութերին ծանոթանալուց տուժողին (տուժողի իրավահաջորդին) զրկելու և վերջինիս դատական պաշտպանության երաշխիքն անհարկի սահմանափակելու համար: Ուստի, կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված, ծանոթացման ներկայացվող գործի նյութերի ծավալը որոշելիս, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է գործի բարեխղճորեն՝ *ինքնաբերաբար* թույլ չտալով տուժողի (տուժողի իրավահաջորդի)՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի *անհամաչափ* սահմանափակում:

Այսպիսով, վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթը կասեցնելու որոշումը տուժողին (տուժողի իրավահաջորդին) ուղարկելիս, վերջինիս պետք է պարզաբանվի որոշման բողոքարկման կարգը և ժամկետները, գործի նյութերին ծանոթանալու նրա իրավունքը: Իսկ համապատասխան միջնորդության դեպքում տուժողին (տուժողի իրավահաջորդին) պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու նրան վերաբերող գործի նյութերին, բացառությամբ կոնֆիդենցիալ կամ գաղտնի բնույթի տվյալների՝ նրա դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու համար: Հակառակ պարագայում, նշված որոշումը բողոքարկելու՝ տուժողի

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Aslakhanova and others v. Russia* գործով 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատներ թիվ 2944/06 և 8300/07, 50184/07, 332/08, 42509/10, կետ 236, *Anguelova v. Bulgaria* գործով 2002 թվականի հունիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 38361/97, կետ 140:

(տուժողի իրավահաջորդի) իրավունքը չի լինի կոնկրետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- նախաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ տուժողի իրավահաջորդ Ռ.Ադանալյանի՝ կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Այդ որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ռ.Ադանալյանի բողոքը Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Կ.Հովսեփյանի՝ 2018 թվականի հունվարի 19-ի որոշմամբ ևս մերժվել է¹,

- դիմող Ռ.Ադանալյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերականգնելու իր խախտված իրավունքները, քանի որ նախաքննության մարմինը, իրեն գրկելով գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունից, սահմանափակել է դատական բողոքարկման իրավունքը²,

- Առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքն այն հիմնավորմամբ, որ կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու միջնորդությունը մերժելու մասին որոշմամբ չեն խախտվել դիմողի իրավունքները³,

- Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, փաստել է, որ քրեական գործի վարույթի կասեցման փուլում օրենսդիրը չի նախատեսել դատավարության մասնակիցների կողմից գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն, հետևաբար Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է⁴:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել բողոքաբերի բարձրացրած այն փաստարկը, որ գործի նյութերին չծանոթանալու արդյունքում սահմանափակվել է տուժողի իրավահաջորդ Ռ.Ադանալյանի՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշման կապակցությամբ արդյունավետ դատական պաշտպանություն հայցելու իրավունքը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ քրեական հետապնդման մարմնի՝ կասեցված քրեական գործի նյութերին ծանոթանալու միջնորդությունը մերժելու մասին որոշմամբ դիմող Ռ.Ադանալյանի իրավունքների խախտման բացակայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

22. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ելնելով դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքից գրկված է դիմողի ներկայացուցչի կողմից սույն որոշման 11-րդ կետում բարձրացված փաստարկին անդրադառնալու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով վիճարկվող դատական ակտում քննարկված հարցերի շրջանակով¹, չի կարող իր վերստուգիչ լիազորությունն իրացնելիս անդրադառնալ վերաքննիչ բողոքում չբարձրացված և Վերաքննիչ դատարանում քննարկման առարկա չդարձված այդ փաստարկին²: Ուստի, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա չի դարձնում բողոք բերած անձի՝ սույն որոշման 11-րդ կետում բարձրացված փաստարկը:

23. Անփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից դատական ակտեր կայացնելիս թույլ են տրվել քրեադատավարական օրենքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Մինևույն ժամանակ, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ռ.Ադանալյանի բողոքը պետք է բավարարել և պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ դիմողի իրավունքների և ազատությունների խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Ռուզան Վարազդատի Ադանալյանի բողոքի վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 12-ի

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Ռուբիկ Արշայուսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԱԲԱԴ/0021/01/08 որոշումը և «Արդշինիսվետարանի» փակ բաժնետիրական ընկերության գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԳԴ3/0001/11/14 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Դիմող Ռ.Ադանալյանի բողոքը բավարարել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու սույն որոշմամբ արձանագրված՝ դիմողի իրավունքների և ազատությունների խախտումը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

45. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0699/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Զ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Գոռ Միերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունում 2018 թվականի ապրիլի 22-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 12200518 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն:

2018 թվականի ապրիլի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 44102918 քրեական գործը:

2018 թվականի հունիսի 28-ին թիվ 44102918 և 12200518 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ 12200518 համարի ներքո:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Գոռ Միերի Համբարձումյանը ներգավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Գ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, իսկ պաշտպան Է.Ալեքսանյանի միջնորդությունը՝ կալանքն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին, մերժվել է:

3. Պաշտպաններ Է.Ալեքսանյանի և Զ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշումը՝ մասնակի բեկանել է և մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ կիրառել է գրավ՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

5. Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 12-ին որոշում է կայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան) դիմելու մասին:

6. Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

7. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի բողոքի վերաբերյալ վարույթը վերակավել է:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հուլիսի 5-ի որոշմամբ Գոռ Միերի Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով «այն բանի համար,

որ նա 2018թ. ապրիլի 16-ին՝ ժամը 10:10-ի սահմաններում, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու դիտարկությամբ, Հարություն Հակոբյանի, Էդվարդ Մարգարյանի և քրեական գործով դեռևս ինքնությունը չպարզված այլ անձանց հետ, խմբի կազմում միասնական դիտարկությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով և փոխարացնելով, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, Երևան քաղաքի Հերացի և Կորյուն փողոցների խաչմերուկում խուլիգանական մղումներով, հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհական հողի վրա մարդկային համակեցության կանոնների նկատմամբ ակնհայտ արհամարհանք դրսևորելով, սեփական անձը վեր դասելով հասարակության մեջ սահմանված համընդհանուր ճանաչում ստացած բարոյական և իրավական նորմերից, հասարակական վայրում վարքագծի կանոնները ցուցադրական կերպով անտեսելով, դիտարկությամբ կերպով խախտելով հասարակության նկատմամբ հարգանքի դրսևորման փարերը՝ առանց որևէ պարճառի մոտ 5 րոպե րևողությամբ հայտնաբերվել է հնչեցրել հիշյալ փողոցների խաչմերուկը փակած ցուցարարների հասցեին, որի ընթացքում բռնություն գործադրելով՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել նրանց՝ այդ եղանակով ծեծի ենթարկելով վերջիններիս, իր այդ գործողություններով վախի մթնոլորտ և անհանգստություն առաջացնելով ցուցարարների մոտ՝ դրանով բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ:

(...)

Բացի այդ, Գոռ Համբարձումյանը 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովհաննիսյան գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում, մի խումբ անձանց հետ դիտարկությամբ, կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով:

Այսպես, 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Գոռ Համբարձումյանը, վերջինիս եղբայր՝ Մասիս քաղաքի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, Մասիս քաղաքի բնակիչ Սեյրան Կարապետյանը և քրեական գործով դեռևս ինքնությունը չպարզված այլ անձինք, Արարատի մարզի Հայանիստ-Հովհաննիսյան գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում, բացահայտ անհարգալից

վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հանրահավաքի մասնակիցների երթը դեպի Երևան քաղաքի Հանրապետության հրապարակ արգելելու, խոչընդոտներ սրեղծելու նպատակով րևական ժամանակ առանց հաշվառման համարանիշերի ավտոմեքենաներով փակել են նշված խաչմերուկից դեպի Երևան քաղաք տանող ճանապարհը, որի ընթացքում Գոռ Համբարձումյանը և մյուսները, իմբի կազմում միասնական դիրավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիրակցելով և փոխյրացնելով, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ, հայիոյանքներ են հնչեցրել հանրահավաքի մասնակիցների հասցեին, նրանց րեղաշարժը կանխելու նպատակով բռնություն են գործադրել՝ ուրբերով, ձեռքերով և որպես զենք օգրագործվող՝ սախասկես իրենց հեղ վերցված մահակներով հարվածներ են հասցրել երթի մասնակիցներին, որի ընթացքում իմբի կազմում Գոռ Համբարձումյանը բռունցքներով և ուրբերով հարվածներ է հասցրել ցույցի մասնակիցներ Արա Պողոսյանի և Արրահամ Ինչիղույանի մարմնի րարբեր մասերին՝ վերջինիս ստողջությանը պարճատելով թեթև վնաս՝ ստողջության կարճարև քայքայումով, իսկ իմբի մյուս անդամ՝ Մեյրան Կարապետյանի կողմից հրագենի գործադրման եղանակով Մկրտիչ Միրգայանին պարճատվել է աջ սրունքի միջանցիկ հրագենային վնասվածք՝ նրա ստողջությանը պարճատելով միջին ճանրության վնաս: Նույն միջադեպի ժամանակ Գոռ Համբարձումյանը ձեռքով հարվածել է Հ.Բալարանյանին՝ վերջինիս ստողջությանը պարճատելով թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, որն արրահայրվել է աջ աչքի սրորին կուպի արյունազեղման ձևով, որից հեղո ուրբով հարվածել է վերջինիս կողմից վարվող «Նիսան» մակնիշի 91 FL 100 պեղհամարանիշի ավտոմեքենային՝ Հ.Բալարանյանին պարճատելով 33.000 ՀՀ դրամի նյութական վնաս»¹:

9. Առաջին ստյանի դատարանի որոշման համաճայն՝ «(...) [Դ]ատարանը գտնում է, որ պաշտպան Էրիկ Ալեքսանյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Գոռ Միերի Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու մասին, պետք է ճանաչել անթույլատրելի և մերժել, քանի որ մեղադրյալ Գոռ Միերի Համբարձումյանը մնալով ազատության մեջ կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով, որպիսի պայմաններում գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրվելու դեպքում այն չի կարող ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը (...)»²:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 166-169:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 187-197:

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ առաջին ատյանի դատարանը՝ ներկայացված նյութերով հիմնավոր կասկածի առկայությունը հավաստելուց հետո, մեղադրյալ Գոռ Համբարձումյանին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելով, եկել է եզրահանգման, որ մնալով ազատության մեջ մեղադրյալը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով: Առաջին ատյանի դատարանի նման մոտեցումը Վերաքննիչ դատարանի համար ընդունելի է, քանի որ՝ հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, Վերաքննիչ դատարանը բարձր է գնահատում հավանականությունը, որ մնալով ազատության մեջ Գոռ Համբարձումյանը կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը մասնակցող անձանց վրա, դրանով իսկ խոչընդոտելով մինչդատական վարույթում գործի քննությանը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ առկա է Գոռ Համբարձումյանին կալանավորելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը և դրան անդրադարձել է առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի, կիրառմամբ (...):

Նման եզրահանգման Վերաքննիչ դատարանը հանգում է հաշվի առնելով նաև այն, որ Գոռ Համբարձումյանն ունի մշտական բնակության վայր, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ամուսնացած է, խնամքի տակ [է] գտնվում մանկահասակ երեխան»¹:

11. 2019 թվականի հունիսի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գոռ Համբարձումյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և Գոռ Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը թողնվել է անփոփոխ²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

12. Վճռաբեկ բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, այն է՝ մեղադրյալ Գոռ Համբարձումյանը գրավի կիրառմամբ անհիմն ազատ է արձակվել և

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 24-35:

² Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0394/01/19 քրեական գործը:

ներկայումս առկա է մեղադրյալի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու բարձր հավանականություն:

Բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշումը մասնակի բեկանելու և մեղադրյալ Գոռ Համբարձումյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, 2.000.000 ՀՀ դրամի չափով գրավ կիրառելու մասին որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ, թեև բարձր է ազատության մեջ մնալու պայմաններում մեղադրյալի կողմից մինչդատական վարությամբ գործի քննությանը խոչընդոտելու, այն է՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու վտանգը, այնուամենայնիվ, 2.000.000 ՀՀ դրամի չափով գրավի կիրառմամբ հնարավոր է ապահովել մեղադրյալ Գոռ Համբարձումյանի պատշաճ վարքագիծը: Մինչդեռ, ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասից չի բխում Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե ազդեցություն հանդիսանալ՝ ազատության մեջ լինելու պայմաններում մեղադրյալ Գոռ Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն չգործադրելու համար:

13. Բողոքաբերն ընդգծել է, որ Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը՝ *Դավիթ Վարդանյանի* վերաբերյալ և *Արման Գևորգյանի* վերաբերյալ գործերով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ գրավը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանավորման ցանկացած հիմքի չեզոքացման գործունե ազդեցություն է, այն քրեական վարության իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարության իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Ուստի անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ ազատության մեջ լինելու պայմաններում մեղադրյալ Գոռ Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն չգործադրելու համար: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ հետևությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասից և հակասում է *Դավիթ Վարդանյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/0056/06/14 և *Արման Գևորգյանի* գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0265/06/11 որոշումներով Վճռաբեկ դատարանի արտահայտած

նախադեպային դիրքորոշումներին:

14. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակի բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշումը և բեկանված մասով օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 6-ի որոշմանը:

Սահմանադրական դատարանում Վճռաբեկ դատարանի դիմումի քննությունը.

15. Վկայակոչելով անձի ազատության իրավունքի սահմանափակման այլընտրանքային միջոցների կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի, Միավորված ազգերի կազմակերպության իրավական դիրքորոշումները և մշակված չափանիշները, արտասահմանյան մի շարք երկրների վերաբերելի կարգավորումները, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարեկան զեկույցներում այլընտրանքային միջոցների ցածր կիրառելիության առնչությամբ արտահայտված մտահոգությունները, Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ դիմել էր Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին համապատասխանության հարցն այնքանով, որքանով սահմանված կարգավորումների պայմաններում գրավը՝ որպես կալանավորման միակ այլընտրանքային խափանման միջոց, չի հանդիսանում մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու գործուն երաշխիք՝ վտանգելով անձի ազատության հիմնարար իրավունքը:

16. Սահմանադրական դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով որ գրավի կիրառումը թույլատրելի է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով՝ բացառելով նույն օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված մյուս դեպքերը, ճանաչել է Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը պետության եկամուտ դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ տեղանք մեկնելու համար, ճանաչել է Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենսգրքի

134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը սահմանում են որպես կալանավորման այլընտրանք՝ կալանավորումից կախյալ խափանման միջոց, ճանաչել է Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին հակասող:

Մինևույն ժամանակ, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի, 137-րդ հոդվածի 4-րդ մասի և 139-րդ հոդվածի 2-րդ մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու որոշման պահանջներին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Գրավի կիրառումը՝ մեղադրյալի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորության հաստատման դեպքում.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք կարող էր Վերաքննիչ դատարանի կողմից Գոռ Համբարձումյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը թույլատրելի ճանաչվել այն դեպքում, երբ դատարանի կողմից հաստատվել էր մեղադրյալի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը:

19. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով*

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ

դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...) գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը, (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ (...) մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցա-

գործության համար, որի համար (...) բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները (...):»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գրավը (...) մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության փակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

(...)

6. Եթե մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք, դատախազը դիմում է դատարան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու միջոցառությամբ:

7. Գրավը վերադարձվում է գրավարուին բոլոր դեպքերում, երբ չեն ապացուցվել սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված խախտումները կամ գրավը՝ որպես խափանման միջոց վերացվում կամ փոխվում է: (...):»

20. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից¹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ կալանքի ոչ հիմնավոր կիրառումից խուսափելու նպատակով պետք է նախատեսվի այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ, առավել քիչ սահմանափակումների կիրառմամբ՝ հաշվի առնելով հանցանքի կատարման մեջ կասկածվողի վարքագիծը²:

Նույն հանձնարարականի 7-րդ կետի «c» ենթակետի համաձայն՝ անձը կարող է պահվել կալանքի տակ, եթե փախուստի դիմելու, ծանր հանցանք կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու կամ հասարակական կարգի պահպանությանը լուրջ սպառնալիք ներկայաց-

¹ Տե՛ս՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թվականի հունիսի 27-ի թիվ R(80)11 հանձնարարականը:

² Տե՛ս՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված՝ կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ (2006)13 հանձնարարականը:

ներու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող փարատվել այլընտրանքային միջոցների կիրառմամբ¹:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևի 1-ին կետի համաձայն՝ մինչդատական կալանքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, որպես վերջին միջոց (last resort), երբ այլընտրանքային միջոցները բավարար չեն վարույթի պատշաճ ընթացքը երաշխավորելու համար²:

«Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Տոկիոյի կանոններ») 6.1-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքը քրեական դատավարությունում պետք է կիրառվի որպես վերջին միջոց (last resort)՝ հաշվի առնելով նախաքննության խնդիրները, հասարակության և տուժողի պաշտպանությունը³:

Նույն կանոնների 6.2-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում⁴:

21. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը⁵,

- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁶,

- կալանքի՝ որպես խիստ միջոցի կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 2077 (2015) բանաձևը:

³ Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» 1990 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Տոկիոյի կանոններ»):

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս *Idalov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

⁶ Տե՛ս, *mutatis mutandis, Sahin Alpay v. Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի¹,

- 5-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»²,

- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները³:

22. Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառման վերաբերյալ քրեական դատավարության օրենսգրքով նապատեսված իրավակարգավորումների մեկնաբանմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառիչ: Ուստի գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը⁴,

- մեղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար⁵,

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, *Djundiks v. Latvia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

² Տե՛ս *u Khudoyorov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:

³ Տե՛ս *u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Musuc v. Moldova* գործով 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 42440/06, կետ 42, *Aleksandr Makarov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, 139-րդ կետ:

⁴ Տե՛ս *u Սայան Ավերիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը, 36-րդ կետ:

⁵ Տե՛ս *u Դավիթ Վարդանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ ԵԱԲԴ/0056/06/14 որոշումը, 16-րդ կետ:

- գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով¹,

- գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ²:

23. Վճռաբեկ դատարանի դիմումի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշմամբ, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը ՀՀ Սահմանադրության 27-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչելիս, գրավի՝ որպես այլընտրանքային խափանման միջոցի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Թ]ավարար հիմքերի առկայության դեպքում [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի վերաբերելի կարգավորումները թույլ են տալիս կալանավորումը կիրառել մեղադրյալի ոչ պարզաձև վարքագծի օրենքով նախատեսված ցանկացած դրսևորում կանխելու կամ խափանելու համար: Այդուհանդերձ, կալանավորման այլընտրանք գրավը, [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորման ուժով, ենթակա է կիրառման անձի պարզաձև վարքագծի միայն մեկ դրսևորումը, այն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դրանից հետևում է, որ օրենսդիրը՝ մեղադրյալի հնարավոր ոչ պարզաձև վարքագծի օրենքով նախատեսված այլ դրսևորումները կանխելու կամ խափանելու համար, գրավը պիտանի և անհրաժեշտ միջոց չի համարում և իրավական այդպիսի արգելքն ինքնին հանգեցնում է իրավասու մարմնի կողմից գրավի կիրառման հարցը չքննարկելուն կամ այդպիսի միջնորդությունը մերժելուն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում գրավը դիտարկել է որպես ինքնուրույն խափանման միջոց (Aleksandr Makarov v. Russia, no. 15217/07 Judgment 12.03.2009 §138) նշելով, որ այն կարող է կիրառվել միայն եթե գերակշռում են կալանքի կիրառման համար անհրաժեշտ հիմքերը (Musuc v. Moldova, no 42440/06, Judgment 06.11.2007, § 42), այլ ոչ թե կալանավորման որոշման դեպքում: ՄԻԵԴ-ը

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն որոշումը, 19-րդ կետ:

նաև շեշտել է, որ օրենքի ուժով գրավի ավերումն ավերումն առանց որևէ դատական վերահսկողության, անհամարեղելի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքների հետ (Piruzyan v. Armenia, no. 33376/07, 26 June 2012, §105, S.B.C. v. the United Kingdom, no. 39360/98, 19 June 2001, §§ 23-24):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակին այլ, ավելի մեղմ միջոցներով հասնելու հնարավորությունը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի: Մինչդեռ, վիճարկվող օրենսդրական կարգավորման պայմաններում կալանավորված անձը զրկվում է որոշակի երաշխիքի տրամադրման դիմաց ազատ արձակվելու հիմնական իրավունքի իրականացումից: Ավելին, անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատագրկումից, քանի որ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընդգրկել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համարժեք պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ գրավի՝ որպես խափանման միջոցի կիրառման պայմանները խախտելու դեպքում կարող են վրա հասնել որոշակի անբարենպաստ հետևանքներ: Մասնավորապես, որպես գրավ ընդունված գույքը կարող է դարձվել պետության եկամուտ, և գրավը կարող է փոխարինվել ավելի խիստ խափանման միջոցով՝ կալանքով: (...)

[Հ]արկանշական է, որ որպես գրավ ընդունված գույքը կարող է դարձվել պետության եկամուտ և գրավը կարող է փոխարինվել կալանքով միայն այն դեպքում, երբ մեղադրյալը թաքնվել է քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ առանց թույլտվության մեկնել է այլ տեղանք: Այսինքն՝ եթե նույնիսկ գրավը կիրառվի մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի այլ դրսևորումները կանխելու կամ խափանելու համար, սպա այլ պարտականություններ չկարարելու կամ այլ սահմանափակումներ խախտելու դեպքում [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերով նախատեսված անբարենպաստ հետևանքները վրա հասնել չեն կարող: **Հետևաբար, հիշյալ դեպքերում այդ սանկցիաները չունեն զսպող ազդեցություն և ի գործ չեն մեղադրյալին հետ պահել ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելուց: Մինչդեռ յուրաքանչյուր խափանման միջոցի, այդ թվում՝ գրավի կիրառման նպատակը կասկածյալի կամ մեղադրյալի՝ [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքով նախատեսված ոչ պատշաճ վարքագծի ցանկացած դրսևորում կանխելն է, իսկ այդ արդյունքին չհասնելու դեպքում՝ նրա նկատմամբ դատավարական ավելի խիստ սահմանա-**

փակումների գործադրումը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասը, որով գրավի կիրառումը թույլատրելի է համարվում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի փրամադրության փակ մեղադրյալի գրնվելն ապահովելու նպատակով, ինչպես նաև [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի 143-րդ հոդվածի 6-րդ մասը, որը գրավը պետության եկամուտը դարձնելը հնարավոր է համարում միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու կամ առանց թույլտվության այլ փրեղանք մեկնելու համար, խնդրահարույց են Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածների փեսանկյունից:

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքի վերաբերյալ [ՀՀ քրեական դատավարության] Օրենսգրքի կարգավորումները, մասնավորապես, գրավը միայն որպես կալանավորման միակ այլընտրանք սահմանելը հակասում են Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին: (...)»¹:

24. Նախորդ կետում մեջբերված՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, ինչպես նաև սույն որոշման 20-21-րդ կետերում վկայակոչված միջազգային փաստաթղթերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում զարգացնել գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում ձևավորած իր նախադեպային իրավունքը՝ այլընտրանքային խափանման միջոց՝ գրավի կիրառմամբ չեզոքացվող ռիսկերի շրջանակի վերաբերյալ: Մասնավորապես, ազատության իրավունքի կանխավարկածի սկզբունքի պայմաններում, գրավի կիրառման հնարավորությունները պետք է լինեն առավել ընդարձակ: Իբրև այլընտրանք՝ այն պետք է դիտարկվի որպես արդյունավետ միջոց՝ հակակշռելու համար ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը՝ անձի ազատության մեջ գտնվելու դեպքում: Խափանման միջոց գրավը ենթակա է կիրառման որպես կալանավորմանն այլընտրանք՝ առաջարկվող նյութական արժեքի դիմաց մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ցանկացած ռիսկ հակակշռելու համար՝ հնարավորություն տալով ապահովելու նրա ազատության իրավունքի և նրա մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Հենց այդ հավասարակշռության երաշխավորմամբ էլ գրավը մի կողմից հնարավորություն կտա մեղադրյալին որոշակիորեն կենսագործելու իր ազատության իրավունքը, մյուս կողմից կկաշկանդի նրան դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և գրավի

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշման 7.2-7.3-րդ կետերը:

առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով կչեզոքացնի նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը¹:

Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե մինչև Սահմանադրական դատարանի՝ վերոնշյալ որոշմամբ ձևավորված մոտեցումը, գրավն ըստ էության գործուն միջոց չէր համարվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոցների կիրառման որոշ հիմքերը, այդ թվում՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելը չեզոքացնելու համար, ապա նշված որոշմամբ ձևավորված մոտեցման պայմաններում, գրավը՝ որպես հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման ծանրակշիռ երաշխիք, կարող է լինել գործուն միջոց՝ խափանման միջոցի կիրառման բոլոր հիմքերի առկայության դեպքում:

Ուստի, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՄԴՈ-1480 որոշմամբ ձևավորված մոտեցումների պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանավորումը գրավով փոխարինելիս վերջինը պետք է ծառայի որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պատշաճությունը երաշխավորելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը զսպելու համար: Այլ կերպ, պայմանավորված խափանման միջոցի կիրառման հիմքով, գրավի միջնորդությունն բացառապես օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ ինքնաբերաբար չի կարող մերժվել՝ առանց այն ըստ էության քննության առարկա դարձնելու, ինչն անընդունելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեսանկյունից²: Ընդ որում, հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից նման դիրքորոշում արտահայտելը մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրազավորումներն ՀՀ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնելը, պայմանավորված է անձի ազատության հիմնարար իրավունքի արժեքանական նշանակության և ազատության կանխավարկածի սկզբունքի կարևորմամբ:

25. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը մերժել է մեղադրյալ Գ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը՝ գտնելով, որ այն չի կարող ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քանի որ ազատության մեջ մնալու

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Արման Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0265/06/17 որոշումը, 17-րդ կետ:

² Տե՛ս օրինակ՝ Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգառ թիվ 33376/07, 104-րդ կետ:

դեպքում մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ՝ գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով¹,

- Վերաքննիչ դատարանը, հղում կատարելով *Ասլան Ավետիսյանի, Մամվել Մարգարյանի և Դավիթ Վարդանյանի* գործերով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, իր որոշմամբ գտել է, որ մեղադրյալ Գոռ Համբարձումյանի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ 2.000.000 ՀՀ դրամ գրավի կիրառմամբ²,

- վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը՝ նշելով, որ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը գործուն երաշխիք չի կարող լինել՝ ազատության մեջ լինելու պայմաններում մեղադրյալ Գ.Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցության գործադրման վտանգը չեզոքացնելու համար³:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 19-24-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ ձևավորված մոտեցումների պայմաններում, սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից գրավը կարող էր դիտարկվել որպես գործուն երաշխիք՝ ազատության մեջ լինելու պայմաններում մեղադրյալ Գ.Համբարձումյանի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցության գործադրման վտանգը չեզոքացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Գոռ Համբարձումյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը կարող էր թույլատրելի ճանաչվել այն դեպքում, երբ դատարանի կողմից հաստատվել էր մեղադրյալի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը:

II. Մեղադրյալին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու իրավաչափությունը.

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում, գրավը կարող է լինել արդյունավետ

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Գ.Համբարձումյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Խտիսանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում*

- 1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.
- 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.
- 3) տարիքը և առողջական վիճակը.
- 4) սեռը.
- 5) զբաղմունքի տեսակը.
- 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.
- 7) գույքային դրությունը.
- 8) բնակության մշտական վայրի առկայությունը.
- 9) այլ էական հանգամանքներ»:

29. Խտիսանման միջոց գրավը կիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ՝

- անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա¹,

- կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս, ի թիվս այնի, պետք է պատշաճ գնահատման ենթարկվեն նաև անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը²:

30. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Գոռ Համբարձումյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել է անթույլատրելի՝ գտնելով, որ ազատության մեջ գտնվելու դեպքում վերջինս կդրսևորի ոչ իրավաչափ վարքագիծ³,

- Վերաքննիչ դատարանը բավարարել է գրավի կիրառման միջնորդությունը՝ սահմանելով որպես գրավի գումար՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը՝ հիմք ընդունելով, որ Գոռ Համբարձումյանն ունի մշտական բնակության վայր, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն, ամուսնացած է, խնամքին է գտնվում

¹ Տե՛ս *Ասլան Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը կետեր 34-36:

² Տե՛ս *Սամվել Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշումը, կետ 14:

³ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

մանկահասակ երեխան⁴:

31. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 28-29-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի փաստական տվյալներն իրենց համակցության մեջ, բավարար չեն Գ.Համբարձումյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար: Մասնավորապես, թեև արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով պայմանավորված՝ Գ.Համբարձումյանին մեղսագրվում է միջին և ծանր հանցագործությունների կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 4-րդ մասով, սակայն Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ առանց գործի փաստական հանգամանքներ ներկայացնելու՝ մեղսագրվող արարքի ծանրության աստիճանն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ մեղադրյալին ազատությունից զրկելու համար¹:

Գ.Համբարձումյանին մեղսագրվող արարքի բնույթի, հանրային վտանգավորության աստիճանի և սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Համբարձումյանի անձը բնութագրող տվյալները՝ որպես նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող գործոններ (մշտական բնակության վայր ունենալը, նախկինում դատապարտված չլինելը, դրականորեն բնութագրվելը, ամուսնացած լինելը, խնամքին մանկահասակ երեխայի առկայությունը), մինչդատական վարույթի տվյալ փուլում բավարար են գործի պատշաճ քննության ապահովման հանրային շահի և մեղադրյալի անձնական ազատության միջև արդարացի հավասարակշռությունը հաստատելու համար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չեն ներկայացվել այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին Վերաքննիչ դատարանի կողմից Գ.Համբարձումյանի նկատմամբ գրավ կիրառելու ոչ իրավաչափ լինելը և մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում 2.000.000 ՀՀ դրամի չափով սահմանված գրավը կարող է լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Գ.Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ

¹ Տե՛ս՝ ս, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 46245/08, *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 28739/09:

միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Գ.Համբարձումյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը, հիմնավոր է:

32. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ չի տվել քրեադատավարական օրենքի խախտում: Հետևաբար, ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել և մեղադրյալ Գ.Համբարձումյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Գոռ Մհերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 1-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

46. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0637/06/18

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Զ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Կարեն Կարապետի Օհանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200518 քրեական գործը, որի նախաքննությունը կատարվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Կարեն Կարապետի Օհանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանի՝ 2018 թվականի հունիսի 2-ի որոշմամբ նախաքննության մարմնի միջնորդությունը՝ Կ.Օհանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, մերժվել է: Նույն օրը նախաքննության մարմինը որոշում է կայացրել մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել չհեռանալու մասին ստորագրություն:

1.2. 2018 թվականի հունիսի 5-ին Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Գ.Գևորգյանը որոշում է կայացրել մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնելու մասին, և նույն օրը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

1.3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 6-ի որոշմամբ դատախազ Գ.Գևորգյանի միջնորդությունը՝ մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, մերժվել է:

Դատախազ Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2018 թվականի հունիսի 27-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հունիսի 6-ի որոշումը բեկանել է և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 27-ի որոշման դեմ մեղադրյալ Կ.Օհանյանի պաշտպան Զ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Մինևույն ժամանակ, մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, և գրավի չափ է սահմանվել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

3. Դատախազ Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ բողոքը թողել է առանց բավարարման, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր

դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը Կարեն Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «նա 22.04.2018թ. Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում Դավիթ Միերի Համբարձումյանի, Սարգիս Դուրիկի Սահակյանի, Գևորգ Մասիսի Համբարձումյանի, Գոռ Լևոնի Խաչատրյանի, Էդիկ Լևոնի Չիչոյանի և քննությամբ դեռևս չչարզված մի խումբ անձանց հետ մասնակցել է Դավիթ Համբարձումյանի կազմակերպած զանգվածային անկարգություններին, որոնք գուցորդվել են բռնությամբ և ջարդերով:

Այսպես.

2018 թվականի ապրիլի 22-ին ժամը 13.00-ի սահմաններում, մի խումբ քաղաքացիներ խաղաղ երթ են կազմակերպել Երևան քաղաքի «Էրեբունի թանգարանի» հարակից տարածքից և շարժվել են Էրեբունի փողոցով դեպի Երևան քաղաքի Արցախի պողոտան:

Նույն օրը՝ Կարեն Օհանյանը, Գոռ Խաչատրյանի, Գևորգ Համբարձումյանի, Սարգիս Սահակյանի, Դավիթ Համբարձումյանի, Էդիկ Չիչոյանի և քննությամբ դեռևս չչարզված անձանց հետ նախնական համաձայնություն է ձեռք բերել հասարակության անդամների, այդ թվում՝ խաղաղ ցույցի մասնակիցների անվտանգությունը վտանգի տակ դնելու նպատակով զանգվածային անկարգություններ կազմակերպելու և դրա ընթացքում հասարակության անդամների՝ խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, ջարդեր իրականացնելու մասին: Պլանավորած հանցագործության իրականացման համար հանցավոր խումբը ձեռք է բերել մահակներ, էլեկտրահարող սարքեր, իսկ զանգվածային անկարգությունների մասնակիցների ինքնությունը հետագայում չբացահայտվելու նպատակով վերջիններս ձեռք են բերել և հետագայում օգտագործել բժշկական դիմակներ, որից հետո Գ.Խաչատրյանը, Ս.Սահակյանը, Կ.Օհանյանը, Գ.Համբարձումյանը, Է.Չիչոյանը և ինքնու-

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԳ/0699/06/18 գործով 2019 թվականի ապրիլի 12-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշումը ստանալուց հետո:

թյունը չպարզված անձինք, Դ.Համբարձումյանի ղեկավարությամբ, խմբի կազմում միասնական դիրավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով և փոխյրացնելով, Դ.Համբարձումյանի կողմից Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հարման վայրում կազմակերպված զանգվածային անկարգությունների ընթացքում սեռական բնույթի հայտյանքներ փայլով, վիրավորանքներ և սպառնալիքներ հնչեցնելով, խաղաղ ցույցի մասնակիցների նկատմամբ, բռնություն են գործադրել և ջարդեր իրականացրել, մասնավորապես՝ քարեր են նետել խաղաղ երթի մասնակիցների ուղղությամբ, որից հետո հարձակվելով նրանց վրա՝ փարբեր առարկաներով, մահակներով, քարերով, ուրբերով և ձեռքերով հարվածներ են հասցրել և էլեկտրահարող սարքերով էլեկտրահարել են երթի մասնակիցներին: Հանցավոր խմբի վերոհիշյալ համարել գործողությունների արդյունքում մարմնական վնասվածքներ են սրացել երթի մասնակիցները՝ Հերիքնազ Գրիգորյանը, Ռաֆիկ Գանջալյանը, Մկրտիչ Խանջյանը, պատրաստական անցորդ Արման Ասրյանը և քննությամբ դեռևս չպարզված անձինք, ինչպես նաև ցույցի ընթացքը լուսաբանող լրագրող՝ Արտակ Խուլյանը և օպերատոր Հովհաննես Մարգարյանը, որի հետևանքով վրանգվել է հասարակական անվտանգությունը՝ միաժամանակ հասարակության անդամների մտք սրելով և սարսափի մթնոլորտ (...):»¹:

6. Առաջին առյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման համաձայն՝ «(...) [Ա]ռկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալ Կարեն Կարապետի Օհանյանը կատարել է մեղսագրվող իրավախախտումը, որը, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն, դասակարգվում է որպես ծանր հանցավոր արարք:

(...) [Դ]ատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Կարեն Կարապետի Օհանյանը մնայով ազատության մեջ մինչև օրս չի թաքնվել վարույթն իրականացնող մարմնից և վերջինիս կանչով պարտաճանաչ ներկայացել է, ինչպես նաև չի խոչընդոտել գործի քննությանը: Սակայն հաշվի առնելով այն, որ նախաքննությամբ դեռևս չեն հայտնաբերվել հանցագործության գործիք հանդիսացող մահակները և էլեկտրահարող սարքերը, չեն պարզվել զանգվածային անկարգությունների բոլոր մասնակիցները, ինչպես նաև հաշվի առնելով մեղսագրվող արարքի համար սահմանված պարծի խստությունը, դատարանը գրնում է, որ մեղադրյալ Կարեն Օհանյանը մնայով ազատության մեջ կարող է հետագայում թաքնվել վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը, ուստի կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ առկա են բավարար սպացույցներ և Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Գ. Գևորգյանի միջնորդու-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 37-40:

թյունը ենթակա է բավարարման:

(...) [Թ]են առկա է մեղադրյալ Կարեն Կարապետի Օհանյանի նկարմամբ կալանքը որպես խափանման միջոց ընդրելու հիմքը և պայմաններն, մասնավորապես առկա է մեղադրյալի կողմից իրավախախտման առնչություն ունենալու հիմնավոր կասկածն ու առաջադրված մեղադրանքի պայմաններում վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և խոչընդոտելու վրանգը, այդուհանդերձ դատարանը գտնում է, որ ազատության հետ կապված այլընտրանքային խափանման միջոցը՝ գրավը ի գորու է ապահովել մեղադրյալի պարզաճ վարքագիծը: Դատարանը հաշվի է առնում նաև մեղադրյալի անձը, այն որ նա նախկինում դատապարտված չի եղել, քրեական դատավարության մասնակիցների, մասնավորապես տուժողների և վկաների նկարմամբ մինչ օրս անօրինական ազդեցություն չի գործադրել, վարույթն իրականացնող մարմնից չի թաքնվել և չի խուսափել, ինչպես նաև այն, որ նա ունի աշխատանք և մշակական բնակության վայր և նրա խնամքին են գտնվում անչափահաս երկու երեխաները (...):»¹:

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով, 2019 թվականի հունվարի 21-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադատնալով սույն գործով Բողոքաբերի կողմից բերված փաստարկներին՝ Առաջին ատյանի դատարանի որոշման անհիմն և անօրինական լինելու վերաբերյալ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են և հակառակը՝ հիմնավոր են և գործի նյութերից են բխում Առաջին ատյանի դատարանի հետևությունները՝ մեղադրյալի նկարմամբ ընդրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն պարճատարանությունները, որոնք բերվում են գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար, ըստ էության բավարար չեն գրավի կիրառումը վերացնելու և կալանքի փակ մեղադրյալին պահելու համար:

(...) Վերաքննիչ դատարանը (...) գտնում է, որ գրավի կիրառումը կոնկրետ դեպքում կարող է բավարար երաշխիք լինել նրա պարզաճ վարքագիծն ապահովելու համար, հարկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ բողոքաբերը վերոգրյալին հակադրում է բացառապես նրան մեղաազրվող ենթադրյալ հանցանքի ծանրության աստիճանը, ենթադրություններ հավանական գործողությունների մասին և դրանից զար որևէ այլ իրական և ծանրակշիռ փաստ և հանգամանք չի ներկայացնում, որը բավարար կլիներ նրան մինչև գործի քննության վերջնական ընթացքն անազատության մեջ պահելու համար (...):»²:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 11-28:

² Տե՛ս նյութեր, հատոր 3, թերթեր 20-30:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել գրավի անթույլատրելիության վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները, մասնավորապես՝ դատարանը գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս պետք է պատշաճ գնահատման ենթարկեր մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը: Բողոքաբերը փաստարկել է, որ գրավը կարող է որպես երաշխիք հանդիսանալ միայն մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վարքագիծը կանխելու համար, այնինչ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Կ.Օհանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար առկա են երկու՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանը խոչընդոտելու ինքնուրույն հիմքեր, իսկ վերջինիս առկայությունը բացառում է գրավի կիրառման հնարավորությունը:

Ըստ բողոքաբերի՝ գործով դեռևս անհրաժեշտ է հայտնաբերել հանցագործության գործիքները, պարզել դեպքի բոլոր մասնակիցների ինքնությունները, տուժած անձանց, իսկ գտնվելով ազատության մեջ՝ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ անթույլատրելի ճանաչելով մեղադրյալ Կարեն Օհանյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Կ.Օհանյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը զսպելու համար:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը, (...) խափանման միջոց կարող է/ կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ (...) մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խախտնման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) գրադմունքի տեսակը.

6) ընտանեկան դրությունը և ինսամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, համապարասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայրնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:

12. Խախտնման միջոց գրավը կիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախատեսային իրավունք է ձևավորել այն մասին, որ՝

- անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա¹,

- կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս, ի թիվս այլնի, պետք է պատշաճ գնահատման ենթարկվեն նաև անձին մեղսագրվող արարքի

¹ Տե՛ս *Սպան Ավերիյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը, կետեր 34-36:

հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը¹:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ²:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՄԳՈ-1480 որոշմամբ ձևավորված մոտեցումների պայմաններում, Վճռաբեկ դատարանը *Գոռ Համբարձումյանի* գործով որոշմամբ փաստել է. «(...) /Կալանավորումը գրավով փոխարինելիս, վերջինը պետք է ծառայի որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պարզաճությունը երաշխավորելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը զայելու համար: Այլ կերպ, պայմանավորված խափանման միջոցի կիրառման հիմքով, գրավի միջնորդությունը բացառապես օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ ինքնաբերաբար չի կարող մերժվել՝ առանց այն ըստ էության քննության առարկա դարձնելու, ինչն անընդունելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեսանկյունից»³:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Կարեն Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26-րդ փողոցների հատման վայրում Դավիթ Համբարձումյանի, Սարգիս Սահակյանի, Գևորգ Համբարձումյանի, Գոռ Խաչատրյանի, Էդիկ Չիչոյանի և քննությամբ դեռևս չչարգված մի խումբ անձանց հետ մասնակցել է Դավիթ Համբարձումյանի կազմակերպած զանգվածային անկարգություններին, որոնք զուգորդվել են բռնությամբ և ջարդերով⁴,

- Առաջին ստյանի դատարանը գտել է, որ Կ.Օհանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ առկա են բավարար ապացույցներ: Միաժամանակ, Առաջին ստյանի դատարանը գտել է, որ որպես խափանման միջոց ընտրված կալանքն այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով, փոխարինելը տվյալ դեպքում պետք է ճանաչել թույլատրելի: Այս առումով Առաջին ստյանի դատարանն արձանագրել է, որ թեև առկա է առաջադրված մեղադրանքի պայմաններում վարույթն իրականացնող մարմնից թաքն-

¹ Տե՛ս *Սամվել Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշումը, կետ 14:

² Տե՛ս *Աղրեսա Ղուկասյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը:

³ Տե՛ս *Գոռ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշման 24-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

վելու և գործի քննությանը խոչընդոտելու վտանգը, այդուհանդերձ, ազատության հետ կապված այլընտրանքային խափանման միջոցը՝ գրավը, ի գործու է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը: Նման հետևության հանգելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առնել նաև մեղադրյալի անձը, այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ մինչ օրս անօրինական ազդեցություն չի գործադրել, վարույթն իրականացնող մարմնից չի թաքնվել և չի խուսափել, ունի աշխատանք և մշտական բնակության վայր, նրա խնամքին են գտնվում անչափահաս երկու երեխաները¹,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ գտել է, որ գրավի կիրառումը կոնկրետ դեպքում կարող է բավարար երաշխիք լինել մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու համար, հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ բողոքաբերը վերոգրյալին հակադրում է բացառապես նրան մեղսագրվող ենթադրյալ հանցանքի ծանրության աստիճանը, ենթադրություններ հավանական գործողությունների մասին և դրանից զատ որևէ այլ իրական, ծանրակշիռ փաստ ու հանգամանք չի ներկայացնում, որը բավարար կլիներ նրան մինչև գործի քննության վերջնական ընթացքն անազատության մեջ պահելու համար²:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՄԴՈ-1480 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դրանց հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Համբարձումյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշմամբ ձևավորված մոտեցումները, նախևառաջ անհրաժեշտ է արձանագրել, որ դատարանների կողմից մեղադրյալ Կ.Օհանյանի՝ մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը հաստատելու հանգամանքն ինքնին հիմք չէր մեղադրյալի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառումն ինքնաբերաբար մերժելու համար: Այսինքն, նշված հիմքի առկայության պայմաններում, ստորադաս դատարանների կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկումն իրավաչափ էր: Ուստի, բողոքաբերի փաստարկն այն մասին, որ գործի քննությանը խոչընդոտելու հիմքի առկայությունը բացառում էր գրավի կիրառման հնարավորությունը, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում մեղադրյալ Կ.Օհանյանի նկատմամբ գրավի կիրառման թույլատրելիությանը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի փաստական տվյալներն իրենց համակցության մեջ բավարար չեն Կ.Օհանյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար: Մասնավորապես, թեև արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով պայմանավորված՝ Կ.Օհանյանին մեղսագրվում է ծանր հանցագործության կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ առանց գործի փաստական հանգամանքներ ներկայացնելու՝ մեղսագրվող արարքի ծանրության աստիճանն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ մեղադրյալին ազատությունից զրկելու համար¹:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Կ.Օհանյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում ինքնին չի կարող բավարար լինել նաև մեղադրյալի՝ Մասիս քաղաքի փոխքաղաքապետ լինելու հանգամանքը²: Տվյալ պարագայում, համակողմանի գնահատման ենթարկելով սույն գործով ներգրավված մեղադրյալների և վկաների վրա ներգործելու հավանականությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Կ.Օհանյանի փոխքաղաքապետ լինելու հանգամանքն ինքնին չի կարող դիտարկվել որպես գրավի կիրառման բացարձակ արգելք: Ուստի, այդ հանգամանքը ենթակա է գնահատման սույն գործի մյուս փաստական հանգամանքների, այդ թվում՝ մեղսագրվող արարքի բնույթի, հանրային վտանգավորության աստիճանի, Կ.Օհանյանի անձը բնութագրող տվյալների հետ համակցության մեջ:

Այսպես, Կ.Օհանյանին մեղսագրվող արարքի բնույթի, հանրային վտանգավորության աստիճանի և սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կ.Օհանյանի անձը բնութագրող տվյալները՝ որպես նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող գործոններ (նախկինում դատապարտված չլինելը, մշտական բնակության վայր ունենալը, ամուսնացած լինելը, խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխայի առկայությունը³) մինչդատական վարույթի տվյալ փուլում բավարար են գործի պատշաճ քննության ապահովման հանրային շահի և մեղադրյալի անձնական ազատության միջև արդարացի հավասարակշռությունը հաստատելու համար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չեն ներկայացվել

¹ Տե՛ս, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Այվազյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 46245/08, *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 28739/09:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 37-40:

³ Տե՛ս, ի թիվս այլնի, նյութեր, հատոր 1, թերթեր 37-40:

այնպիսի ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեին ստորադաս դատարանի կողմից Կ.Օհանյանի նկատմամբ գրավ կիրառելու ոչ իրավաչափ լինելը և մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով սահմանված գրավը կարող է լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Կ.Օհանյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Կ.Օհանյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը գապելու համար, հիմնավոր են:

15. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ չի տվել քրեադատավարական օրենքի խախտում: Հետևաբար, ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժել և մեղադրյալ Կ.Օհանյանի բողոքի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարեն Կարապետի Օհանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 21-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

47. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0700/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Զ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Դավիթ Միերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի ապրիլի 22-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ա.Մուրադյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200518 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն:

2018 թվականի ապրիլի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 44102918 քրեական գործը:

2018 թվականի հունիսի 1-ին թիվ 12200518 քրեական գործով Դավիթ Միերի Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:

2018 թվականի հունիսի 22-ին թիվ 44102918 քրեական գործով Դ.Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

2018 թվականի հունիսի 28-ին թիվ 44102918 և 12200518 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում՝ 12200518 համարի ներքո:

2018 թվականի հուլիսի 5-ին Դ.Համբարձումյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և նրա նկատմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2018 թվականի սեպտեմբերի 1-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով մեղադրյալ Դ.Համբարձումյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, բավարարել է այն: Նույն որոշմամբ մերժվել է կալանավորումը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը:

2. 2018 թվականի սեպտեմբերի 7-ին պաշտպան Տ.Աթանեսյանը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու մասին, որն Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ բավարարվել է, այն է՝ մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել գրավը՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ դատախազ Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0699/06/18 գործով 2019 թվականի ապրիլի 12-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշումը ստանալուց հետո:

Դատավարության մասնակիցների կողմից վճռարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը Դավիթ Համբարձումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ «նա 22.04.2018թ. Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում կազմակերպել է զանգվածային անկարգություններ, միաժամանակ Սարգիս Դուրիկի Սահակյանի, Գոռ Լևոնի Խաչատրյանի, Կարեն Կարապետի Օհանյանի, Գևորգ Մասիսի Համբարձումյանի, Էդիկ Մանի Չիչոյանի, Արմենակ Մելիքի Հակոբյանի, Արթուր Հովհաննեսի Խանջյանի և քննությամբ դեռևս չպարզված մի խումբ անձանց հետ մասնակցել է իր իսկ կողմից կազմակերպված զանգվածային անկարգություններին, որոնք զուգորդվել են բռնությամբ և ջարդերով:

(...)

Բացի այդ, հանդիսանալով Մասիս քաղաքի քաղաքապետ, 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարարի մարզի Հայանիսր-Հովրաշար գյուղերի խաչմերուկի բանուկ հատվածում մի խումբ անձանց հետ դիրավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով: (...)»¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման համաձայն՝ «(...) մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի անձը հայրնի է, նա նախկինում դադարված կամ որևէ կերպ արարավորված չի եղել, ինչպես առկա են մինչև տասնչորս տարեկան երեք երեխաներ, ունի մշտական բնակության վայր՝ բնակվել է Երևան քաղաքի Նոր-Արեշ թիվ 26 փողոցի թիվ 33 տանը, բնակության վայրում և աշխարավայրում բնութագրվում է դրական: Բացի այդ, նախաքննության ընթացքում դրսևորել է պարզաձև վարքագիծ՝ չի փորձել թաքնվել վարույթի իրականացնող մարմնից կամ խոչընդոտել գործի քննությանը:

Քրեական գործը հարուցվել է 2018թ. ապրիլի 22-ին և այդ օրվանից նախաքննություն է իրականացվում: Դավիթ Համբարձումյանը ձերբա-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 129-133:

կալվել, երեք օրից ազատ է արձակվել, 2018թ. հուլիսի 06-ին կալանավորվել է և մինչև օրս գրնվում է կալանքի փակ: Տվյալ քրեական գործով նույնարժանողակ մեղադրանքներ են առաջադրվել 14 (փասնչորս) անձանց, որոնցից միայն Դավիթ Համբարձումյանն է գրնվում անազատության մեջ: Դատարանը գրնում է, որ վարույթի փյալ ժամանակահարվածում, վերոհիշյալ հանգամանքներն էականորեն նվազեցնում են Դավիթ Համբարձումյանի՝ ազատության մեջ մնալու դեպքում քրեական դատարարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթի իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու ճանապարհով մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, բավարար հիմնավորումներ առկա չեն ենթադրելու համար, որ Դավիթ Համբարձումյանը կարող է թաքնվել քրեական վարույթի իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պարասխանարվությունից և նշանակված պարիճը կրելուց, խոչընդոտել դատավճռի կատարմանը: Բացի այդ՝ դատարանը չի արձանագրում այնպիսի փյալներ, որոնցով կհասարարվեր կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու անհրաճեչությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները՝ դատարանը գրնում է, որ բացակայում են կալանավորումը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու պայմաններն ու հիմքերը: Եման պայմաններում դատարանը հնարավոր է համարում բավարարել պաշտպանի միջնորդությունը և հաշվի առնելով Դավիթ Համբարձումյանին վերագրվող արարքների ծանրության աստիճանը՝ գրավի գումար սահմանել նվազագույն աշխարավարձի հինգհազարապարիկի՝ 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով»¹:

7. Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակուն օրինական ուժի մեջ թողնելով, 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գործի նյութերում բացակայում են այնպիսի փաստական փյալներ, որոնք հնարավորություն կրան փաստարկված դատողություն անելու առ այն, որ գործի քննության փյալ փուլում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, չի կարող գործուն երաշխիք հանդիսանալ քրեական գործով վարույթի ընթացքում մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի հավանական ոչ իրավաչափ վարքագծի կանխման համար:

Վերաքննիչ դատարանի վերը նշված համոզմունքի ձևավորման համար հիմք է հանդիսանում ոչ միայն այն փաստը, որ գործում չկան

¹ Տե՛ս նյութեր, հատոր 5, թերթեր 34-37:

մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի կողմից նախաքննության անցած ժամանակահատվածում (գրնվել է քրեական հետապնդման փակ և եղել է նաև ազատության մեջ) ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ փաստական փվյալներ, այլ նաև այն, որ քրեական գործով շուրջ հինգ ամիս է իրականացվում է նախաքննություն, ենթադրյալ հանցագործության դեպքերից մեկի վերաբերյալ առկա են տեսա-ձայնագրություններ, իսկ մյուս դեպքով հարցաքննվել են բազմաթիվ անձինք, ովքեր փվել են համապատասխան ցուցմունքներ:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ օբյեկտիվորեն գոյություն ունեցող վերը նշված փվյալների համակցությունն արդեն իսկ վկայում է գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին մեղադրյալի կողմից միջամտելու վրանգի էական նվազման մասին:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի նկատմամբ գրավի կիրառելիության թույլատրելի լինելու մասին են վկայում նաև գործում առկա փաստական փվյալները, համաձայն որոնց, վերջինիս անձը հայրնի է, ունի մշտական բնակության վայր, երեք անչափահաս երեխաներ, վարատող է:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերը նշյալ հանգամանքների ամբողջությունը մեղադրյալ Դավիթ Համբարձումյանին մեղաագրվող հանցագործությունների բնույթի և դրա վրանգավորության աստիճանի համարեքստում՝ գործի քննության փվյալ փուլում, էականորեն նվազեցնում են հավանականությունն առ այն, որ գրավի կիրառման միջոցով հնարավոր չէ զսպել ազատության մեջ լինելու պայմաններում նրա կողմից ոչ պարզաձ վարքագծի դրսևորման վրանգը և դրա ենթադրյալ հնարավոր դրսևորումները:

Միաժամանակ վերաքննիչ դատարանն ընդունելի չի համարում մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի նկատմամբ գրավի կիրառելիության անթույլատրելիության վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկները (մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի պաշտպանները նույն դատարան 4-րդ անգամ հարուցել են ամբողջությամբ նույնաբովանդակ միջնորդություն՝ մեղադրյալի նկատմամբ գրավ կիրառելու վերաբերյալ՝ միաժամանակ որևէ նոր փաստարկ չներկայացնելով, մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառման անթույլատրելիության վերաբերյալ առկա է թվով երեք չքեկանված դատական ակտեր)՝ նկատի ունենալով, որ դրանք նախ չեն վերաբերում վարույթն իրականացնող մարմնի տրամադրության փակ մեղադրյալի գրնվելն ապահովելուն, բացի այդ՝ չեն բարձրացնում մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագծի հավանականությունը (...):¹:

8. 2019 թվականի հունիսի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Դավիթ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 6, թերթեր 104-115:

Համբարձումյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը՝ ըստ էության քննելու համար, և Դավիթ Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը թողնվել է անփոփոխ¹ :

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ:

Բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ, 135-րդ և 145-րդ հոդվածներից, ինչպես նաև հակասում է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

10. Բողոքի հեղինակը նշել է, որ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանին մեղսագրված արարքներից մեկը՝ բռնությամբ և գույքը վնասելով զուգորդված խուլիգանությունը, վերջինիս կողմից կատարվել է հանրության համար վտանգավոր եղանակով՝ զենքի գործադրմամբ՝ ատրճանակով խաղաղ ցույցի մասնակիցների ուղղությամբ կրակոցներ արձակելով, սակայն այս դեպքում դատարանը, մեղադրյալի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավը կիրառելով, անտեսել է Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, մասնավորապես՝ Սամվել Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ արդյունքում պատշաճ գնահատման չենթարկելով մեղսագրվող արարքի կատարման եղանակը:

Բողոք բերած անձն ընդձեռն է, որ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, գրավը չի կարող լինել արդյունավետ՝ զսպելու համար Դ.Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը, քանի որ ազատության մեջ մնալով նա կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ անօրինական ազդեցություն գործադրելով դատավարության մասնակիցների վրա, թաքցնելով գործի համար նշանակություն ունեցող նյութերը:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ անթույլատրելի ճանաչելով մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը:

¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԵԴ/0394/01/19 քրեական գործը:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Դ.Համբարձումյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.Դատարանը, (...) խափանման միջոց կարող է/ կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ (...) մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանատվությունից և նշանակված պարիօր կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) զբաղմունքի տեսակը.

6) ընդհանրական դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, համապարասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե

հայրնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:

14. Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ալյան Ավերիսյանի* գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «(...) [Ա/նձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պարճառաբանության հիմքում պայմանով, որ այդ պարճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա (...):

(...) Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անձին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլատրելի. մասնավորապես, երբ առկա է անձի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վրասնգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

(...) [Գ/րավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համարեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը]¹:

Բացի այդ, կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու անհրաժեշտության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Մամվել Մարգարյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) [Գ/րավի թույլատրելիության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված տվյալների հիման վրա պարզի մեղադրյալին վերագրվող հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մեղադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության դեպքում հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման հավանականությունը գնահատելիս և,

¹ Տե՛ս *Ալյան Ավերիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշումը, կետեր 34-36:

հետևաբար, դրա հիման վրա մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պարզաձև գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները: (...)»¹

Վերահաստատելով և զարգացնելով *Սալան Ավետիսյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը *Անդրեաս Ղուկասյանի* գործով որոշման շրջանակներում արձանագրել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ: (...)»²:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշմամբ ձևավորված մոտեցումների պայմաններում, Վճռաբեկ դատարանը *Գոռ Համբարձումյանի* գործով որոշմամբ փաստել է. «(...) [Գ]ալանավորումը գրավով փոխարինելիս, վերջինը պետք է ծառայի որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գրնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պարզաձևությունը երաշխավորելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը զսպելու համար: Այլ կերպ, պայմանավորված խափանման միջոցի կիրառման հիմքով, գրավի միջնորդությունն բացառապես օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ ինքնաբերաբար չի կարող մերժվել՝ առանց այն ըստ էության քննության առարկա դարձնելու, ինչն անընդունելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախատեսյալին իրավունքի տեսանկյունից»³:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Դավիթ Համբարձումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի ապրիլի 22-ին, Երևան քաղաքի Էրեբունի և Նոր Արեշ 26 փողոցների հատման վայրում **կազմակերպել է** զանգվածային անկարգություններ, միաժամանակ Սարգիս Դուրիկի Սահակյանի, Գոռ Լևոնի Խաչատրյանի, Կարեն Կարապետի Օհանյանի, Գևորգ Մասիսի Համբարձումյանի, Էդիկ Սանի

¹ Տե՛ս *Սամվել Մարգարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշումը, կետ 14:

² Տե՛ս *Անդրեաս Ղուկասյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը:

³ Տե՛ս *Գոռ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշման 24-րդ կետը:

Չիչոյանի, Արմենակ Մելսիկի Հակոբյանի, Արթուր Հովհաննեսի Խանջյանի և քննությանը դեռևս չպարզված մի խումբ անձանց հետ մասնակցել է իր իսկ կողմից կազմակերպված զանգվածային անկարգություններին, որոնք զուգորդվել են բռնությամբ և ջարդերով:

Բացի այդ, **հանդիսանալով Մասիսի քաղաքապետ, 2018 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 16:00-ից 17:00-ն ընկած ժամանակահատվածում, Արարատի մարզի Հայանիստ-Հովտաշատ գյուղերի խաչմերուկի բնակ հատվածում մի խումբ անձանց հետ դիտավորությամբ կռպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և զուգորդվել նույն օրը՝ ժամը 19:00-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կայանալիք հանրահավաքին մասնակցելու նպատակով դեպի նշված հրապարակ երթ կազմակերպած մասնակիցների նկատմամբ նախապես **իրենց հետ վերցված զենքի և որպես զենք հանդիսացող առարկաների գործադրմամբ բռնություն գործադրելով**¹:**

- Առաջին առյանի դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի անձը հայտնի է, նա նախկինում դատված կամ որևէ կերպ արատավորված չի եղել, խնամքին առկա են մինչև տասնչորս տարեկան երեք երեխաներ, ունի մշտական բնակության վայր, բնակության վայրում և աշխատավայրում բնութագրվում է դրական, դրսևորել է պատշաճ վարքագիծ: Դատարանը գտել է, որ վարույթի տվյալ ժամանակահատվածում, վերոհիշյալ հանգամանքներն էականորեն նվազեցնում են Դ.Համբարձումյանի՝ ազատության մեջ մնալու դեպքում՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու ճանապարհով մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը, բավարար հիմնավորումներ առկա չեն ենթադրելու համար, որ Դ.Համբարձումյանը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել դատավճռի կատարմանը: Ուստի դատարանը գտել է, որ Դ.Համբարձումյանի նկատմամբ գրավի կիրառումը պետք է ճանաչել թույլատրելի²,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին առյանի դատարանի որոշումը՝ արձանագրել է, որ վերջինս մեղադրյալ Դ.Համբարձումյանին կալանքից գրավով ազատելու թույլատրելիության վերաբերյալ հանգել է իրավաչափ հետևության³:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դրանց հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Համբարձումյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշմամբ ձևավորված մոտեցումները, նախնառաջ անհրաժեշտ է արձանագրել, որ դատարանների կողմից մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի՝ մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը հաստատելու հանգամանքն ինքնին հիմք չէ մեղադրյալի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառումն ինքնաբերաբար մերժելու համար: Այսինքն, նշված հիմքի առկայության պայմաններում, ստորադաս դատարանների կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկումն իրավաչափ էր:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Դ.Համբարձումյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկման արդյունքում այն թույլատրելի ճանաչելիս չեն պահպանել Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները և անտեսել են սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք իրենց համակցության մեջ, բավարար էին Դ.Համբարձումյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար:

Այսպես, թեև մեղսագրվող արարքների ծանր հանցագործություններ հանդիսանալն ինքնին բավարար չէ վերոնշյալ եզրահանգման գալու համար, որի մասին նշել է Վճռաբեկ դատարանը նաև *Գոռ Համբարձումյանի* գործով որոշմամբ¹, սակայն, սույն գործի փաստական հանգամանքները տարբերվում են նշված գործի փաստական հանգամանքներից, և տվյալ դեպքում Դավիթ Համբարձումյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը ենթակա են գնահատման մեղադրյալի անձը բնութագրող՝ գործում առկա տվյալների համատեքստում, ինչը նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պահանջն է²:

¹ Տե՛ս *Գոռ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշումը, կետ 31:

² Տե՛ս *u* Մարու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Neumeister v. Austria* գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, *Sopin v. Russia* գործով 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 57319/10, կետ 42, *Buzadji v. The Republic of Moldova [UՊ]* գործով 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 23755/07, կետ 90, *Gabor Nagy v. Hungary (No. 2)* գործով 2017 թվականի ապրիլի 11-ի վճիռը, գանգատ թիվ 73999/14, կետ 70:

Տվյալ դեպքում, Դ.Համբարձումյանին մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման եղանակի, դրանց դրսևորման ձևի համատեքստում՝ նախ պետք է պատշաճ ուշադրության արժանացվեր դրանցում մեղադրյալի դերակատարումը: Մասնավորապես, Դ.Համբարձումյանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ մեղադրյալը ենթադրյալ հանցանքը կատարելիս հանդես է եկել որպես **զանգվածային անկարգությունների կազմակերպիչ**, որոնք ըստ մեղադրանքի և գործի նյութերի՝ զուգորդվել են բռնությամբ և ջարդերով: Ավելին, ըստ գործում առկա փաստական տվյալների՝ Դ.Համբարձումյանը նշված ենթադրյալ կազմակերչական գործողությունները կատարելիս եղել է զինված¹:

Բացի այդ, ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն առանցքային փաստական տվյալը, որ մեղադրյալը, քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքները կատարելիս, եղել է պաշտոնատար անձ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ, ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս առանձնահատուկ դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա, նրա հնարավորությունները խոչընդոտելու մինչդատական վարույթի բնականոն ընթացքին²: Այդ պատճառով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելի է համարում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս նրա ունեցած ազդեցության, այն հանգամանքի գնահատումը, որ անձը ղեկավարում է հիմնարկ, որտեղ շարունակում են աշխատել գործով ներգրավման ենթակա հնարավոր վկաները³: Այդ համատեքստում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առել օրինակ՝ անձի ոստիկան հանդիսանալու և դրանով պայմանավորված՝ գործով հարցաքննման ենթակա վկաների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը⁴: Բացի այդ, սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով, հատուկ ուշադրության է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Amirov v. Russia* գործով

¹ Տե՛ս նյութեր, ի թիվս այլնի, հատոր 2, թերթեր 98-105:

² Տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Neumeister v. Austria* գործով վերը նշված վճիռը, *Gabor Nagy v. Hungary (No. 2)* գործով վերը նշված վճիռը:

³ Տե՛ս նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khodorkovskiy v. Russia* գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետեր 188-189:

⁴ Տե՛ս նաև, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Creanga v. Romania* [ՄԴ] գործով 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29226/03, կետեր 112-115:

վճիռը, որտեղ դատարանը դիմումատուի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը ստուգելիս ընդունելի է համարել ներպետական դատարանների կողմից մեղսագրվող արարքների ծանր բնույթի հետ մեկտեղ հաշվի առնված՝ դիմումատուի՝ Մախաչկալայի քաղաքապետ հանդիսանալու հանգամանքը, կապեր ունենալը, իր պաշտոնից բխող իշխանությունը, քաղաքական և սոցիալական կարգավիճակը՝ վկաների վրա ազդեցություն գործադրելով գործի քննությանը խոչընդոտելու տեսանկյունից¹:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալը քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքները կատարելիս զբաղեցրել է Մասիսի քաղաքապետի պաշտոնը: Ընդ որում, այդ պաշտոնը նա շարունակել է զբաղեցնել նաև քրեական վարույթի ընթացքում՝ օգտվելով նաև դրանից բխող իշխանությունից: Նման պայմաններում, էապես բարձր է եղել հավանականությունն առ այն, որ ազատության մեջ գտնվելու դեպքում, մեղադրյալ Դ.Համբարձումյանը կարող է դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ և խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործով որպես մեղադրյալ և վկա ներգրավված անձինք որոշակի փոխհարաբերությունների մեջ են գտնվել Դ.Համբարձումյանի հետ: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քրեական գործով որպես մեղադրյալ է ներգրավված նաև Կարեն Օհանյանը, ով աշխատել է Դ.Համբարձումյանի ենթակայության ներքո և որպես Մասիսի քաղաքապետի տեղակալ՝ ծառայողական կախվածության մեջ գտնվել նրանից: Ավելին, հարկ է նաև նկատել, որ ըստ Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ գտնվող նյութերի՝ քրեական գործում տարբեր դատավարական կարգավիճակներով ներգրավված են եղել նաև Մասիս քաղաքում որոշակի աշխատանքային գործունեությամբ զբաղվող, ինչպես նաև մեղադրյալի հետ մերձավոր և ազգակցական հարաբերությունների մեջ գտնվող անձինք²: Նման պայմաններում, էապես բարձր է եղել հավանականությունն առ այն, որ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալն օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ կարող էր ազդեցություն գործադրել գործին ներգրավված անձանց նկատմամբ՝ այդ կերպ նաև խոչընդոտելով գործի պատշաճ քննությանը:

Սակայն, վերոնշյալ ծանրակշիռ փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար, համակողմանի գնահատման չեն ենթարկվել ստորադաս դատարանների կողմից:

¹ Տե՛ս Սարգոյի իրավունքների եվրոպական դատարանի՝ *Amirov v. Russia* գործով 2014 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 51857/13, կետեր 103-107:

² Տե՛ս նյութեր, ի թիվս այլնի, հատոր 2:

Մինչդեռ, նշվածն ուշադրության չարժանացնելու արդյունքում, ստորադաս դատարանները, 5.000.000 ՀՀ դրամի չափով գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելով, հաշվի չեն առել, որ կոնկրետ դեպքում այլընտրանքային խափանման միջոց գրավն ի գործու չէ հակակշռելու Դ.Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով սպառնալից վերա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այլ կերպ, ստորադաս դատարանները համակողմանի գնահատման չեն ենթարկել այն, որ Դ.Համբարձումյանի զբաղեցրած պաշտոնի, ունեցած իշխանության, գործով անցնող դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր ազդեցություն գործադրելու բարձր հավանականության պայմաններում, գրավը չէր կարող լինել արդյունավետ իրավական ներգործության միջոց, որը կկաշկանդեր նրան դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով կչեզոքացնեի նաև նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը:

Ինչ վերաբերում է Առաջին ստյանի դատարանի կողմից որպես Դ.Համբարձումյանի անձը բնութագրող տվյալներ նշված հանգամանքներին, ապա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Դ.Համբարձումյանի՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոններ չեն: Հետևաբար, դրանք ի գործու չեն երաշխավորելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում:

Ուստի, Վճռաբեկ դատարանը չի կարող չեզոքահանգել, որ սույն գործում առկա են ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բավարար են հիմնավորելու համար դատարանի կողմից Դ.Համբարձումյանի նկատմամբ գրավ կիրառելու ոչ իրավաչափ լինելն ու մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, 5.000.000 ՀՀ դրամի չափով սահմանված գրավը, չէր կարող լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Դ.Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար:

Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Դ.Համբարձումյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը, հիմնավոր չեն:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, և Դ.Համբարձումյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում¹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դավիթ Միերի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

48. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴ2/0024/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ամբաստանյալ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արշակ Վոլոդյայի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի ապրիլի 2-ին ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում՝ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելով ՀՀ մաքսային սահմանով խոշոր չափերով ապրանքների տեղափոխման դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ և ըստ ենթակայության ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարության քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ Արշակ Վոլոդյայի Սարգսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի մարտի 17-ին քրեական գործի հետագա նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությանը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի մայիսի 3-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի դատավճռով Ա.Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Նույն դատական ակտով վճռվել է ներկայացված քաղաքացիական հայցը բավարարել, և Ա.Սարգսյանից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 9.675.183 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի դատավճիռը՝ բեկանել: Ա.Սարգսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչվել է անմեղ և արդարացվել: Ներկայացված քաղաքացիական հայցը մերժվել է:

4. Վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Արշակ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Զորդայն» ՍՊ ընկերության տնօրենը, 2013-2014 թվականների ընթացքում Հնդկաստանից, Բելգիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Իսրայելից և Հունկոնգից «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, ընկերության անվամբ Հայաստանի Հանրապետություն է ներմուծել

19729.29 կարատ չմշակված և 34927.78 կարատ մշակված ադամանդ, որոնք համաձայն ներկայացված փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետությունում ենթարկվել են բավարար վերամշակման ու ադամանդի խմբաքանակները ՀՀ-ից «Արտահանում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ընկերության անվամբ արտահանել է Ռուսաստանի Դաշնություն: Նշված գործունեության ընթացքում Արշակ Սարգսյանը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ է մտցրել և չարամտորեն խուսափել 9.675.183 ՀՀ դրամի չափով շահութահարկի վճարումից¹:

5.1. Նախաքննության մարմնի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 3-ին որոշում է կայացվել «Զորդայն» ՍՊ ընկերությունում նշանակել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, իսկ անհնարինության դեպքում կատարել հարկային պարտավորությունների նախնական հաշվարկ՝ որոշման կատարումը հանձնարարելով ՀՀ Ֆինանսների նախարարության օպերատիվ-հետախուզական և ներքին անվտանգության գլխավոր վարչության աշխատակիցներին²:

«Զորդայն» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում 2016 թվականի փետրվարի 23-ին կազմվել է թիվ 5013322 ակտը³:

5.2. Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն, որով փորձագետներին առաջադրվել են հետևյալ հարցերը՝ «1. ՀՀ ՖՆ ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմված «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների նախնական հաշվարկն ինչ մեթոդով է կատարվել, այն համապատասխանում է փորձաքննությանը տրամադրված նյութերում և «Զորդայն» ՍՊ ընկերության ստուգվող ժամանակաշրջանի հաշվապահական փաստաթղթերում եղած տվյալներին և գործող նորմատիվ ակտերի պահանջներին, թե ոչ:

2. ՀՀ ՖՆ ՕՀՎ մասնագետների կողմից կազմված 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ 5013322 ակտը, արձանագրված հաշվարկները համապատասխանում են արդյոք ՀՀ հարկային օրենսդրությանը, հարկային պարտավորությունների հաշվարկը բխում է դրա պահանջներից, թե ոչ, դրանք ամբողջ ծավալով և ճիշտ մեթոդով են հաշվարկվել, թե ոչ:

3. Քրեական գործի նյութերում առկա փաստական և հետազոտվող ժամանակաշրջանի կազմակերպությունների հաշվապահական և այլ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 260-261:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 34-36:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 106-111:

փաստաթղթերում արտացոլված փյվայներով, ինչպես նաև այդ կազմակերպության հաշվառման վայրի հարկային տեսչություններում կատարված գրանցումներով (ՀՀ ՖՆ ՕՀՎ մասնագետների կողմից կազմված 23.02.2016թ. թիվ 5013322 ակտով) և **փորձաքննությամբ կատարված ճշգրտումներով, որքան է կազմում «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափը ըստ հարկարեւասակների՝ տույժերով և տուգանքներով հանդերձ:**

4. «Զորդայն» ՍՊ ընկերության լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացումը հարկային օրենսդրության ինչպիսի խախտումների հետևանք են»¹:

5.3. Դատահաշվապահական փորձաքննության թիվ 15821609 եզրակացությամբ արձանագրվել է՝ «**Թիվ 1-ին հարցի [վերաբերյալ] ՀՀ ՖՆ ՕՀՎ աշխատակիցների կողմից (...)** «Զորդայն» ՍՊ ընկերության 2013 և 2014 թվականների կրթվածքով շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների անուղղակի եղանակով հաշվարկումը, սույն փորձաքննությամբ, զուտ հաշվապահական ու հարկային հաշվառման տեսանկյունից՝ մեթոդաբանության առումով, դիտվում է ճիշտ (...):

Թիվ 2-րդ հարցի [վերաբերյալ] ՀՀ ՖՆ ՕՀՎ մասնագետների կողմից 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ 5013322 պրոգնման ակտը կազմվել է ստուգվող ժամանակաշրջանում գործող հարկային օրենսդրության, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Հիշյալ հարցի կապակցությամբ միաժամանակ պետք է նշել, որ (...) թիվ 5013322 պրոգնման ակտում արձանագրված շահութահարկի դրվագով (...) լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկումը ՀՀ ՖՆ ՕՀՎ մասնագետների կողմից կատարվել է ստուգվող ժամանակաշրջանում գործող ու շահութահարկի հաշվարկմանը վերաբերող հարկային օրենսդրության, մասնավորապես՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի, 6-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ հաստատված՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգի պահանջներին համապատասխան (...):

Թիվ 3-րդ հարցի [վերաբերյալ] քրեական գործի նյութերում առկա փաստական և հետազոտվող ժամանակաշրջանի կրթվածքով նախաձեռնողի կողմից փորձագետներին փրամադրված «Զորդայն» ՍՊ ընկերության հաշվապահական հաշվառման, ինչպես նաև ընկերության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 135-136:

հարկային գործերում գրնվող հարկերի ու վճարների հաշվարկման համար հինք հանդիսացող փաստաթղթերում արտացոլված տվյալներով և ընկերության հաշվառման վայրի ՀՏ-ի կողմից ըստ հարկարեւասակների ու վճարների վարվող անձնական հաշվի քարտերում կարտաված գրանցումներով և նախաձեռնողի կողմից ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում քննվող թիվ 83154215 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին 2016 թվականի ապրիլի 18-ին կայացրած որոշման «Պարզեցի» մասում նշված ու գնահատված կարգով փորձաքննությանը փրամադրված տվյալներով, սույն փորձաքննությամբ կատարված ճշգրտումներով՝ անուղղակի եղանակով իրականացված հաշվարկներով «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունները՝ տույժ և տուգանքներով հանդերձ, կազմում են ընդամենը՝ 21729426 դրամ, այդ թվում.

Շահութահարկ	Հարկեր	Տույժեր	Տուգանքներ	Ընդամենը
2013թ.	6494340	2376928	7143774	16015042
2014թ.	3180843	625035	1908506	5714384
Ընդամենը	9675183	3001963	9052280	21729426:

Թիվ 4-րդ հարցի [վերաբերյալ] (...) «Զորդայն» ՍՊ ընկերությունում 21729426 դրամ գումարի լրացուցիչ հարկային պարտավորությունն առաջացել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ «Համախառն եկամուտը հաշվելու տարում հարկարուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց սրացման աղբյուրներից: Սույն օրենքի իմաստով ա) եկամուտ է համարվում հաշվելու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկարուի սեփական կապիտալի ավելացմանը: Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝ ա) ապրանքների, արտադրանքի (սյուսիեթ)՝ նաև ապրանքների իրացումից սրացվող հասույթը» պահանջների խախտմամբ՝ շահութահարկի հարկման համար հինք համարվող փաստաթղթերում, կոնկրետ դեպքում ընկերության կողմից 2013 և 2014 թվականների համար կազմած և հաշվառման վայրի ՀՏ ներկայացրած շահութահարկի հաշվարկներում ոչ ճիշտ տվյալներ մտցնելու հետևանքով: (...)¹:

5.4. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ ՎԴ/3778/05/16 որոշմամբ 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ 5013322 ստուգման ակտի 1-ին կետը ճանաչվել է անվավեր այն պատճառաբանությամբ, որ տվյալ ակտով «Զորդայն» ՍՊ ընկերության նկատմամբ շահութահարկի գծով 23.166.124 ՀՀ դրամի պարտավորությունը հաշվարկվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի սխալ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 66-112:

կիրառմամբ, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար¹:

6. Առաջին ատյանի դատարանը դատավճռով արձանագրել է. «(...) [Ս]ույն գործով հարցաքննված վկաների մեծամասնության ցուցմունքներով հաստատվում է, որ «Զորդայն» ՍՊ ընկերությունը 2013-2014 թվականների ընթացքում արտադրական գործունեություն չի իրականացրել, ընկերության սարքավորումները գերմանիայի և սպանիայից փոխառված ալյումինե ալյումինիումից պատրաստված և չեն գործարկվել: Այն, որ ընկերությունում փոխառված ժամանակահատվածում ադամանդի որոշակի մշակում է իրականացվել, իրենց ցուցմունքներում հակասական, որևէ օբյեկտիվ փաստական փաստերով չհաստատվող տեղեկություններ են հայտնել բացառապես Արշակ Սարգսյանի հարազատները և աշխատակիցները, որոնք Դատարանի համոզմամբ նույնպես արժանա-հավասար գնահատվել չեն կարող:

Բացի այդ, այն, որ «Զորդայն» ՍՊ ընկերությունը 2013-2014 թվականների ընթացքում արտադրական գործունեություն չի իրականացրել, անհերքելիորեն հաստատվում է նաև «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից քննությանը փոխառված ստուգման ակտով, որի համաձայն՝ ընկերության էլեկտրաէներգիայի ծախսն այդ ժամանակահատվածում եղել է չնչին, երբեմն նաև՝ զրոյական:

Ավելին, հենց ինքը՝ «Զորդայն» ՍՊ ընկերության փոփոխ Արշակ Սարգսյանը դեռևս 2014 թվականի դեկտեմբերի 23-ին հարկային մարմիններին փոխադրությամբ փաստել է, որ 2014 թվականին ներմուծված չմշակված ադամանդը՝ թվով 5002 կարատ, իրենց կողմից չի մշակվել, 2014 թվականին ներմուծված մշակված ադամանդն ընկերության կողմից տեսակավորվել է, լվացվել է, մաքրվել և փայլեցվել է: Մշակված ադամանդե քարերի վրա ընկերության կողմից չի կատարվել նիստավորում, կտրում, կլորացում: Ընկերության հաստատված 2014 թվականի սպրիլից մանկապարտեզի փարսիքից տեղափոխվել են գյուղատնտեսական պարկանոց այլ փարսիք, որոնք չեն մոնտաժվել և չեն շահագործվել:

Այս առումով հարկանշական է նաև այն փաստը, որ արդեն 2016 թվականի հունվարի 19-ին՝ սույն քրեական գործի հարուցումից շուրջ մեկ փարսիք հետո, Արշակ Սարգսյանը հարկային մարմիններին ներկայացրել է մեկ այլ փարսիք, որ ընկերության գործունեությունը դադարեցրել են 2015 թվականի հունվարին՝ մաքսային մարմինների կողմից ստուգումներ սկսելուց հետո: Դադարեցման օրվա դրությամբ

¹ Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ ՎԴ/3778/05/16 որոշումը:

ունեցել են մնացորդ՝ չմշակված ադամանդ 7552,89 կարատ, որը գտնվում է արտադրամասում: 2013 և 2014 թվականների ընթացքում րարբեր երկրներից ՀՀ ներկրել են ինչպես մշակված, այնպես էլ չվերամշակված ադամանդներ, որոնց հիմնական մասը վերամշակելուց հետո արտահանել են: Քարերի վերամշակման ընթացքում ադամանդներն ենթարկվել են հղկման, կլորացման, փայլեցման, լվացման, րեսակավորման և գնահատման: 2013 թվականի ներմուծված չմշակված 5100 կարատ ադամանդներից վերամշակման ընթացքում կորուստը կազմել է մոտավորապես 80 տոկոս (...):

Հարկ է փաստել նաև, որ թեև Արշակ Սարգսյանն իր ցուցմունքներում նշել է, որ ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու համար հիմք հանդիսացած 5100 կարատ չմշակված և 137 կարատ մշակված ադամանդի պակասորդն առաջացել է դրա վերամշակման արդյունքում և ադամանդի վերամշակման արդյունքում ունեցած կորստի մասին իրենց կողմից օրենքով սահմանված կարգով կազմվել են համապատասխան փաստաթղթեր, այդուհանդերձ, այդպիսի փաստաթուղթ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինն չի ներկայացվել և բացակայել է «Զորդայմ» ՍՊ ընկերության հաշվապահական փաստաթղթերում:

(...)

Ինչ վերաբերում է պաշտպանական կողմի բերած այն պարճառաքանություններին, որ Արշակ Սարգսյանն առաջադրված մեղադրանքում ենթակա է արդարացման, քանի որ «Զորդայմ» ՍՊ ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ են առաջադրվել ՀՀ ֆինանսների նախարարության աշխարակիցների կողմից իրականացված սրուզման արդյունքում 2016 թվականի փետրվարի 23-ին կազմված թիվ 5013322 ակտի հիման վրա, որը հեղազայում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր, ապա Դատարանը գտնում է, որ նշված պնդումն ամբողջությամբ հիմնազուրկ է:

Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր է ճանաչվել ոչ թե 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ 5013322 ակտն ամբողջությամբ, այլ դրա միայն 1-ին կետը:

Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարության աշխարակիցների կողմից 2016 թվականի փետրվարի 23-ին կազմված թիվ 5013322 ակտը սույն քրեական գործով նախաքննության մարմնի կողմից ձեռք բերված այլ բազմաթիվ ապացույցների համակցության լույսի ներքո ընդամենը հաշվի է առնվել Արշակ Սարգսյանին առաջադրված մեղադրանքը գնահատելիս: Ընդ որում, քննարկման առարկա հանդիսացող սրուզման ակտին Արշակ Սարգսյանին առաջադրված մեղադրանքում արձանագր-

ված հարկային պարտավորությունների («Զորդայն» ՍՊ ընկերությանը վերագրվող լրացուցիչ հարկային պարտավորությունների) չափը գնահատելիս որևէ նշանակություն չի փոխվել: Այդ հարկային պարտավորությունները պարզվել և հաստատվել են սույն գործի շրջանակներում իրականացված դատահաշվապահական փորձաքննությամբ:

Հարկ է նաև արձանագրել, որ սույն քրեական գործով դատահաշվապահական փորձաքննությունն իրականացվել է քրեադատարարական օրենքով սահմանված կարգով, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից և այն կասկածի փակ առնելու հիմքեր չկան: Իր հերթին՝ թիվ 5013322 ակտը դատահաշվապահական փորձաքննության եզրակացության արդյունքների վրա որևէ հեղուկ չի ունեցել, ինչը հաստատվում է ինչպես սույն դատաքննության ընթացքում փորձագետի փված ցուցմունքներով, այնպես էլ այն փաստով, որ ստուգման ակտով և փորձագետի եզրակացությամբ հաշվարկված հարկային պարտավորությունները փարքեր են: (...)

Այսպիսով, (...) Դատարանը հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված է համարում, որ Արշակ Վոլոդյայի Սարգսյանը, հանդիսանալով «Զորդայն» ՍՊ ընկերության տնօրենը, 2013-2014 թվականների ընթացքում հարկերը խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված հաշվեփոխությունների, հաշվարկների և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի մեջ ակնհայտ կեղծ փոխյալներ է մտցրել և խուսափել 9.675.183 ՀՀ դրամի չափով շահութահարկի վճարումից: (...):¹:

6.1. Մինևսույն ժամանակ, Առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով «Զորդայն» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմված թիվ 5013322 ակտի 1-ին կետը ճանաչվել է անվավեր, նշված փաստաթուղթը դատավճռի հիմքում չի դրել և Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը գնահատելիս այն հաշվի չի առել²:

6.2. Դատահաշվապահ-փորձագետ Սամվել Հովհաննիսյանը, պատասխանելով դատավարության մասնակիցների և Առաջին ատյանի դատարանի հարցերին, ի թիվս այլնի, ցուցմունք է տվել նաև այն մասին, որ նախաձեռնողի կողմից դատահաշվապահական փորձաքննությանը տրամադրվել են թիվ 5013322 ակտը, «Զորդայն» ՍՊ ընկերության 2013-2014 թվականների հաշվապահական փաստաթղթերը: Փորձաքննությանն առաջադրված հարցերին պատասխանելու համար, փորձագետների կողմից 2016 թվականի ապրիլի 20-ին նախաձեռնողին ներկայացվել է միջնորդություն՝ պահանջելով տրամադրել «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային գործը, հաշվառման վայրը, անձնական հաշիվ քարտերը,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 134-142:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 87-90:

ինչպես նաև՝ փորձաքննությանը մասնակից դարձնել ստուգման ակտը կազմողներին, ընկերության տնօրենին և հաշվապահին: Ի պատասխան փորձագետի միջնորդությանը՝ 2016 թվականի օգոստոսի 18-ին փորձաքննությանը տրամադրվել է ընկերության հարկային գործը, իսկ 2016 թվականի օգոստոսի 19-ին՝ քրեական գործով հարցաքննված անձանց հարցաքննության արձանագրությունների լուսապատճենները, Արշակ Սարգսյանի հարցաքննության արձանագրությունը, վկաներ՝ Ռուբեն Շեխոյանի, Սամվել Եղիկյանի հարցաքննության արձանագրությունները: Տրամադրված փաստաթղթերով և նախաձեռնողի կողմից գնահատված ելակետային տվյալներով տրվել է փորձագիտական եզրակացություն: Արշակ Սարգսյանը նույնպես մասնակցել է փորձաքննությանը: Դատա-հաշվապահ փորձագետին փաստաթղթերը տրամադրել է նախաձեռնողը՝ տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության քննիչը: Տրամադրված փաստաթղթերը բավարար են եղել, որպեսզի տրվի փորձագիտական եզրակացություն: Նախաձեռնողի կողմից առաջադրվել է պարզել, թե որքան են կազմում պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորությունները: Կատարված փորձաքննությամբ պարզվել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի խախտմամբ պետական բյուջե ընկերության կողմից չի վճարվել 9.675.183 ՀՀ դրամ, ինչպես նաև՝ հաշվարկված տույժ և տուգանքները: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ «Զորդայն» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմված թիվ 5013322 ակտը դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր, ապա նշված հանգամանքն իր տված դատահաշվապահական փորձաքննության եզրակացության վրա որևէ կերպ չի կարող անդրադառնալ: Փորձաքննությունն իրականացնելիս որևէ կերպ չեն հիմնվել ստուգման ակտի վրա, այլ ընդամենը, պատասխանելով նախաձեռնողի հարցերին, հայտնել են, թե որքանով է ճշգրիտ իրականացվել ստուգումը: Նույնիսկ եթե փորձաքննության իրականացման ընթացքում իրենց տրամադրված չլինել նշված ակտը, իրենք տալու էին մինևնույն դատահաշվապահական փորձաքննության եզրակացու-թյունը: Ավելին, կատարված դատահաշվապահական փորձաքննությամբ իրենք փաստել են, որ ստուգման ակտում եկամտահարկի մասով արձանագրված ընկերության պարտավորության չափն ավելին է, քան կատարված փորձաքննության արդյունքում արձանագրվածը, և այդ մասով կատարվել է համապատասխան նվազեցում¹:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ նշել է. «(...) [Ս]տուգման ակտի 1-ին կետն անվավեր է ճանաչվել (...) փորձաքննության եզրակացությունը կազմելուց հետո:

Վերը մեջ բերված փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից հետևում է, որ նախաքննական մարմնի կողմից որպես

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 133-134:

ապացույց ճանաչված և մեղադրական եզրակացության մեջ նշված 2016 թվականի փետրվարի 23-ին կազմված թիվ 5013322 սրուզման ակտի ճշգրտությունը պարզելու նպատակով է «Զորդայն» ՍՊ ընկերության վերաբերյալ թիվ 83154215 քրեական գործով նշանակվել դատահաշվապահական փորձաքննություն:

Հերևարար, վերը մեջ բերված դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն ըստ էության առնչվում է հիշյալ սրուզման ակտին, մասնավորապես դրանում ներառված առաջին կետին, որն այնուհետև (վարչական դատավարության կարգով) օրինական ուժի մեջ մտնող մեկ այլ դատական ակտով անվավեր է ճանաչվել: Այլ կերպ ասած, սույն գործով կազմված դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը և դրանում տեղ գրած հետևություններն ըստ էության առնչվում են վերը հիշատակված սրուզման ակտին, որն այնուհետև (վարչական դատավարության կարգով) օրինական ուժի մեջ մտնող դատական ակտով անվավեր է ճանաչվել:

(...)

Վերոգրյալի հաշվառմամբ, վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիշյալ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ սույն գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքները (այդ թվում նաև՝ խոշոր չափերով հատկանիշին առնչվող հանգամանքն) ապացուցված չեն անկասկած և անվերապահորեն:

Այսինքն՝ դրանում տեղ գրած հետևությունների ճշգրտությունը վերը բերված հիմնավորումների համարեքստում կասկածներ է առաջացնում, ինչն ինքնին հիմք է չփարատված կասկածները հոգուր պաշտպանության կողմի մեկնաբանելու համար: Այլ կերպ ասած, սրուզման ակտի 1-ի կետի անվավեր ճանաչելու պարագայում, սույն գործով կազմված դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը, քննարկվող դեպքում, ինքնին չէր կարող դրվել վիճարկվող դատավճռի հիմքում, քանի որ դրա հետևություններն ըստ էության հիմնված են եղել նաև արդեն իսկ անվավեր ճանաչված սրուզման ակտի տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման ասիմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Հերևարար, սույն գործով իրավաչափ չի եղել հիշյալ եզրակացությունը մեղադրական դատական ակտի հիմքում դնելու դատարանի որոշումը:

(...)

Բացի այդ, սույն գործով կազմված դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն, այդ թվում դրանում տեղ գրած հետևությունները, վերը բերված հիմնավորումների համարեքստում, բավարար չափով փաստարկված չեն և ամբաստանյալ Ա.Սարգսյանին ՀՀ

քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը գնահատելու առումով իրավական հետևանք առաջացնել չեն կարող:

Ինչ վերաբերում է վիճարկվող դատական ակտում տեղ գրած դատարանի հետևություններին՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 11-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ոչ թե 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ 5013322 ակտն ամբողջությամբ, այլ դրա միայն 1-ին կետն անվավեր ճանաչվելու վերաբերյալ, ապա հարկ է նշել, որ նշված ստուգման ակտի հենց 1-ին կետն է առնչվում շահութահարկի դրվագով ընկերությանն առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորություններին:

Ընդ որում, նշված հանգամանքը ներառված է նաև ամբաստանյալ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրում:

(...)

Ինչ վերաբերում է նաև փորձագետի կողմից ցուցմունքներին, ինչպես նաև ստուգման ակտով և փորձագետի եզրակացությամբ հաշվարկված հարկային պարտավորությունների տարբերությանը, ապա (կոնկրետ դեպքում) ստուգման ակտն անվավեր ճանաչելու պարագայում, դրանք որպես փաստարկ ինքնին բավարար չեն ամբաստանյալ Ա.Սարգսյանի անմեղության կանխավարկածի շեմը հաղթահարելու և այդ առնչությամբ հիմնավոր հետևության հանգելու համար:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «(...) 3.Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությունը»:

(...)

Անդրադառնալով նաև մեղադրանքի հիմքում դրված մյուս ապացույցների վերլուծությանը, ապա դրանք ըստ էության չեն պարունակում բավարար տեղեկություններ (ամբաստանյալ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքի շրջանակներում) ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ նրան մերկացնելու վերաբերյալ և կրում են միայն անանցյալ բնույթ:

(...)

Հիմք ընդունելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանն ամբաստանյալ Արշակ Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատական ակտ կայացնելու հարցում հանգել է ոչ ճիշտ եզրակացության, ինչը հանգեցրել է նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումների, որոնք հիմք են վիճարկվող դատական ակտը բեկանելու և վերջինիս նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու համար՝ հանցակազմի

բացակայության հիմքով: (...)»¹:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակի կարծիքով, Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, ուստի այն ենթակա է բեկանման:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

Այսպես՝ բողոքի հեղինակն ընդգծել է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի գնահատմամբ՝ ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար հիմք են ծառայել ոչ թե ստուգման ընթացքում կատարված սխալ, թերի կամ չհիմնավորված հաշվարկները, այլ թույլ տրված վարչարարության էական խախտումը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը հիմքեր չի ունեցել ստուգման ակտն անվավեր ճանաչելը կապելու դատահաշվապահական փորձաքննության և դրա եզրակացության հետ, քանի որ փորձաքննության հիմնական նպատակը ոչ թե ստուգողների գործողությունների իրավաչափությունը պարզելն էր, այլ «Զորդայն» ՍՊ ընկերության կողմից չվճարված հարկային պարտավորությունները հաշվարկելը: Ավելին, ստուգողների կողմից կիրառված մեթոդների իրավաչափության հարցը փորձաքննությամբ գնահատվել է ճիշտ:

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման հիմնավորումներին ըստ էության չի անդրադարձել, և դրանք չի վերլուծել, այլ վկայակոչել է նշված ակտից միայն մի հատված, ինչն ամենևին չի արտացոլում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի իրավական վերլուծությունները:

Հիմնավոր չէ նաև Վերաքննիչ դատարանի այն մեկնաբանությունը, թե թիվ 5013322 ստուգման ակտի հիմնավորվածությունը պարզելու նպատակով է «Զորդայն» ՍՊ ընկերության վերաբերյալ քրեական գործով նշանակվել դատահաշվապահական փորձաքննություն, քանի որ նախաքննության մարմնի կողմից դատահաշվապահական փորձաքննության նշանակման հիմնական նպատակը «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափը պարզելն էր, իսկ ստուգման ակտի ճշտությունը մեթոդաբանական առումով պարզելն ուներ անանցյալ բնույթ:

8.1 Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, ըստ որի՝ ստուգման ակտի 1-ին կետն անվավեր ճանաչվելու պարագայում դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն ինքնին չէր կարող դրվել վիճարկվող դատավճռի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 108-144:

հիմքում, քանի որ դրա հետևություններն ըստ էության հիմնված են եղել նաև արդեն իսկ անվավեր ճանաչված ստուգման ակտի տվյալների վրա, անհիմն է և հակասում է գործի նյութերին, քանի որ դատահաշվապահական փորձաքննության թիվ 15821609 եզրակացության համաձայն՝ փորձագետը ուսումնասիրել և հետազոտել է ոչ միայն թիվ 5013322 ստուգման ակտը, այլ «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային գործը, թիվ 83154215 քրեական գործի նյութերը, «Զորդայն» ՍՊ ընկերության 2013 և 2014 թվականների հաշվապահական փաստաթղթերը, անձնական հաշվի քարտերը:

Նույն կերպ առարկայագուրկ է նաև Վերաքննիչ դատարանի գնահատականն այն մասին, որ նշված ստուգման ակտի հենց 1-ին կետն է առնչվում շահութահարկի դրվագով ընկերությանն առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորություններին, որպիսի հանգամանքը ներառված է նաև ամբաստանյալ Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքում: Այսպես՝ ստուգման ակտի և փորձաքննության եզրակացության համադրումից պարզ է դառնում, որ ստուգման ակտի համաձայն՝ «Զորդայն» ՍՊ ընկերությունը 2013-2014 թվականներին շահութահարկի գծով ՀՀ պետական բյուջե պակաս է վճարել 10.317.614 ՀՀ դրամ, իսկ փորձագետի եզրակացության համաձայն՝ նշված գումարը կազմել է 9.675.183 ՀՀ դրամ, ինչը և դրվել է Ա.Սարգսյանի մեղադրանքի հիմքում:

9. Բացի այդ, բողոքաբերն ընդգծել է, որ թիվ 5013322 ստուգման ակտը դատական կարգով անվավեր ճանաչվելուց հետո սույն գործով դատաքննության ընթացքում հարցաքննվել է նաև դատահաշվապահ-փորձագետ Ս.Հովհաննիսյանը՝ պարզելու համար, թե արդյոք փորձագետի եզրահանգումները հիմնված են եղել ստուգման ակտի վրա, արդյոք դրա անվավեր ճանաչելը կարող է անդրադառնալ փորձագետի եզրահանգումների վրա, այդ կապակցությամբ լրացուցիչ հետազոտություններ անցկացնելու կարիք կա, թե ոչ: Վերջինս նշել է, որ «Զորդայն» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմված թիվ 5013322 ակտը դատարանի որոշմամբ անվավեր ճանաչվելու հանգամանքն իր տված դատահաշվապահական փորձաքննության եզրակացության վրա որևէ կերպ չի կարող անդրադառնալ: Փորձագետի հարցաքննությամբ պարզվել է նաև, որ լրացուցիչ հետազոտություններ անցկացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ փորձագետը չի հիմնվել ստուգման ակտի վրա, դրա բացակայության դեպքում ևս փորձագետը կհանգեր նույն եզրահանգումների:

10. Վերը շարադրվածի հիման վրա բողոքի հեղինակն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով ապացույցների զանգվածից հանել է սույն գործով դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը՝ դրանից բխող եզրահանգումներ կատարելով:

Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը բավարար չափով ապացուցված չլինելու վերաբերյալ:

Այլ կերպ՝ ըստ բողոքարեթի, Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել գործով ապացույցները և «հիմնավոր կասկածից վեր» ապացույցների համակցության պայմաններում անհիմն կերպով արդարացրել է Ա.Սարգսյանին: Վերաքննիչ դատարանը վճռորոշ ապացույցը՝ փորձագետի եզրակացությունը, առանց լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելու, անարժանահավատ է դիտել՝ հակասելով *Արքեմ Հարությունյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի որոշմանը:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված և պատճառաբանված են արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում Արշակ Սարգսյանին արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է. *«1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...):»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ *«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով»*:

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փասանկյունից»*:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների

գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Արշակ Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Զորդայմ» ՄԳ ընկերության տնօրենը, 2013-2014 թվականների ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 19729.29 կարատ չմշակված և 34927.78 կարատ մշակված ադամանդ, որոնք, համաձայն ներկայացված փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետությունում ենթարկվել են բավարար վերամշակման, ու ադամանդի խմբաբանակները «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետությունից արտահանվել են Ռուսաստանի Դաշնություն: Նշված գործունեության ընթացքում Ա.Սարգսյանն օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների և հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթուրված տվյալներ է մտցրել և չարամտորեն խուսափել 9.675.183 ՀՀ դրամի չափով շահութահարկի վճարումից²:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ նշանակվել է «Զորդայմ» ՄԳ ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 2016 թվականի փետրվարի 23-ին կազմվել է թիվ 5013322

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ակտը¹:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ քրեական գործով նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն, որի արդյունքում 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կազմվել է դատահաշվապահական փորձաքննության թիվ 15821609 եզրակացություն²:

Առաջին ատյանի դատարանն Ա.Սարգսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքը հաստատված է համարել՝ հիմք ընդունելով վկաներ Սամվել Եղիկյանի, Ադասի Վարդանյանի, Նելլի Մովսիսյանի, Բաղդասար Թովմասյանի, Սվետլանա Գրիգորյանի դատաքննական ցուցմունքները, դատարանում հրապարակված և հետազոտված մյուս ապացույցները, ի թիվս այլնի՝ վկայակոչելով նաև դատահաշվապահական փորձաքննության թիվ 15821609 եզրակացությունը և փորձագետ Սամվել Հովհաննիսյանի ցուցմունքները:

Առաջին ատյանի դատարանը, անդրադառնալով ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների կողմից 2016 թվականի փետրվարի 23-ին կազմված թիվ 5013322 ստուգման ակտին, արձանագրել է, որ այն նախաքննության մարմնի կողմից ձեռք բերված բազմաթիվ այլ ապացույցների համակցության լույսի ներքո ընդամենը հաշվի է առնվել Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը գնահատելիս, իսկ սույն գործով դատահաշվապահական փորձաքննությունն իրականացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից, և այն կասկածի տակ առնելու հիմքեր չկան: Բացի այդ, թիվ 5013322 ստուգման ակտը դատահաշվապահական փորձաքննության եզրակացության արդյունքների վրա որևէ հետևանք չի ունեցել, ինչը հաստատվում է ինչպես դատաքննության ընթացքում փորձագետի տված ցուցմունքներով, այնպես էլ այն փաստով, որ ստուգման ակտով և փորձագետի եզրակացությամբ հաշվարկված հարկային պարտավորությունների չափերը տարբեր են³:

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից հետևում է, որ նախաքննական մարմնի կողմից որպես ապացույց ճանաչված և մեղադրական եզրակացության մեջ նշված թիվ 5013322 ստուգման ակտի ճշտությունը պարզելու նպատակով է «Զորդայն» ՍՊ ընկերության վերաբերյալ թիվ 83154215 քրեական գործով նշանակվել դատահաշվապահական փորձաքննություն: Հետևաբար, սույն գործով իրականացված դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն ըստ էության առնչվում է թիվ 5013322 ստուգման ակտին, մասնավորապես՝ դրա առաջին կետին, որը վարչական դատավարության կարգով, օրինա-

¹ Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.2-5.3-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

կան ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անվավեր: Ուստի, ըստ Վերաքննիչ դատարանի՝ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը չէր կարող դրվել վիճարկվող դատավճռի հիմքում, քանի որ դրա հետևություններն ըստ էության հիմնված են եղել նաև արդեն իսկ անվավեր ճանաչված ստուգման ակտի տվյալների վրա, իսկ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման սահմանադրական արգելքը վերաբերում է նաև դրանցից բխող ապացույցներին:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատական ակտ կայացնելու հարցում եկել է ոչ ճիշտ եզրահանգման, քանի որ մեղադրանքի հիմքում դրված մյուս ապացույցներն ըստ էության չեն պարունակում բավարար տեղեկություններ ամբաստանյալի կողմից իրեն մեղսագրված հանցանքը կատարելու վերաբերյալ և կրում են միայն ածանցյալ բնույթ¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև փորձաքննություն նշանակելու մասին նախաքննության մարմնի որոշմամբ փորձագետներին հարցեր են առաջադրվել ոչ միայն «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափը և հարկային օրենսդրության խախտումները պարզելու, այլև ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան մասնագետների կողմից 2016 թվականի փետրվարի 23-ին կազմված թիվ 5013322 ստուգման ակտով կատարված հարկային պարտավորությունների նախնական հաշվարկի մեթոդի իրավաչափությունը ստուգելու վերաբերյալ², այնուամենայնիվ գործի փաստական տվյալներից հետևում է, որ «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափը հաշվարկելիս թիվ 5013322 ստուգման ակտը որևէ ազդեցություն չի ունեցել փորձաքննության արդյունքների վրա. նախ՝ փորձաքննությունը կատարելիս ուսումնասիրվել և հետազոտվել են ոչ միայն թիվ 5013322 ստուգման ակտը, այլ «Զորդայն» ՍՊ ընկերության հարկային գործը, թիվ 83154215 քրեական գործի նյութերը, «Զորդայն» ՍՊ ընկերության 2013 և 2014 թվականների հաշվապահական փաստաթղթերը, անձնական հաշվի քարտերը³, բացի այդ՝ ստուգման ակտով և փորձագետի եզրակացությամբ հաշվարկված հարկային պարտավորությունների չափերը տարբեր են:

Այսպես՝ ըստ փորձագետ Ս.Հովհաննիսյանի, նախաձեռնողի կողմից դատահաշվապահական փորձաքննությանը տրամադրվել են թիվ 5013322 ստուգման ակտը, «Զորդայն» ՍՊ ընկերության 2013-2014 թվականների հաշվապահական փաստաթղթերը, իսկ փորձագետների կողմից 2016 թվականի ապրիլի 20-ին միջնորդություն է ներկայացվել՝ պահանջելով

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.2-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 5.3-րդ կետը:

տրամադրել «Ձորդայն» ՍՊ ընկերության հարկային գործը, անձնական հաշվի քարտերը, որոնք տրամադրվել են¹, ինչպես նաև՝ փորձաքննությանը մասնակից դարձնել ստուգման ակտը կազմողներին, ընկերության տնօրենին և հաշվապահին: Փորձագետն ընդգծել է, որ տրամադրված փաստաթղթերը բավարար են եղել, որպեսզի տրվի փորձագիտական եզրակացություն²:

Վերոնշյալից ակնհայտ է, որ փորձագիտական եզրակացությունը կազմելիս փորձագետներն իրենց տրամադրության տակ ունեցել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ հիմնավորված եզրակացություն կազմելու համար, ուստի նման պայմաններում Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում Վերաքննիչ դատարանի կողմից դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց դիտարկելը միայն այն պատճառաբանությամբ, որ փորձաքննության եզրակացությունն ըստ էության առնչվում է թիվ 5013322 ստուգման ակտին և, ի թիվս այլնի, հիմնվում է նաև անվավեր ճանաչված ստուգման ակտի տվյալների վրա: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը դրսևորել է մեխանիկական մոտեցում և գնահատման չի ենթարկել՝ արդյո՞ք անվավեր ճանաչված ստուգման ակտը որևէ ազդեցություն ունեցել է փորձաքննության արդյունքների վրա, թե ոչ: Մինչդեռ, ինչպես արդեն իսկ նշվեց, խնդրո առարկա ստուգման ակտը որևէ ազդեցություն չի ունեցել փորձագիտական եզրակացության արդյունքների վրա, մասնավորապես՝ ընկերության հարկային պարտավորությունների չափը որոշելիս: Այս առումով Վերաքննիչ դատարանը բովանդակային գնահատման չի ենթարկել նաև փորձագետ Ս.Հովհաննիսյանի դատաքննական ցուցմունքներն առ այն, որ թիվ 5013322 ստուգման ակտը դատարանի որոշմամբ անվավեր ճանաչվելու հանգամանքը դատահաշվապահական փորձաքննության եզրակացության վրա որևէ կերպ չէր կարող անդրադառնալ. փորձաննությունն իրականացնելիս իրենք չեն հիմնվել ստուգման ակտի վրա, այլ ընդամենը պատասխանելով նախաձեռնողի հարցերին, հայտնել են, թե որքանով է ճշգրիտ իրականացվել ստուգումը: Նույնիսկ եթե փորձաքննության իրականացման ընթացքում իրենց տրամադրված չլինել նշված ակտը, իրենք տալու էին միևնույն դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը: Ավելին, կատարված դատահաշվապահական փորձաքննությամբ իրենք փաստել են, որ ստուգման ակտում եկամտահարկի մասով արձանագրված ընկերության պարտավորության չափն ավելին է, քան կատարված փորձաքննության արդյունքում արձանագրվածը, և այդ մասով կատարվել է համապատասխան նվազեցում³:

16. Բացի այդ, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Ա.Սարգսյանին

¹ Տե՛ս՝ ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 138, 220:

² Տե՛ս՝ ս սույն որոշման 6.2-րդ կետը:

³ Տե՛ս՝ ս սույն որոշման 6.2-րդ կետը:

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ խոշոր չափերով հարկեր չվճարելու համար, իսկ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող խոշոր չափը որոշվել է հենց դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ պարզված և արձանագրված հարկային պարտավորության չափով՝ 9.675.183 ՀՀ դրամ, ինչն էլ ընկած է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմքում: Այսինքն՝ տվյալ դեպքում ապացուցման առարկան ոչ թե հարկային մարմինների գործողությունների իրավաչափության ստուգումն է, այլ «Զորդայմ» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափի պարզումը, որն էլ կատարվել է դատահաշվապահական փորձաքննության արդյունքներով:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով ամբաստանյալ Ա.Սարգսյանին մեղսագրվող հարկային պարտավորությունների չափը սահմանող ապացույցը դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն է, իսկ թիվ 5013322 ստուգման ակտն ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը գնահատելիս կոնկրետ դեպքում որևէ նշանակություն չէր կարող ունենալ, ինչի հաշվառմամբ էլ Առաջին ատյանի դատարանը «Զորդայմ» ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմված թիվ 5013322 ակտը դատավճռի հիմքում չի դրել և Ա.Սարգսյանին առաջադրված մեղադրանքը գնահատելիս հաշվի չի առել¹:

17. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 15-16-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու հարցում Վերաքննիչ դատարանը եկել է սխալ եզրահանգման: Փորձաքննության եզրակացությունը կազմելիս փորձագետներն իրենց տրամադրության ներքո ունեցել են անհրաժեշտ փաստաթղթերը՝ «Զորդայմ» ՍՊ ընկերության հարկային պարտավորությունների չափը որոշելու և հիմնավորված եզրակացություն տալու համար, դատահաշվապահական փորձաքննությունն իրականացվել է քրեադատավարական օրենսգրքով սահմանված կարգով, հետևաբար այն կասկածի տակ դնելու հիմքեր չկան:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունն աննշվում է անվավեր ճանաչված ստուգման ակտին, հետևաբար համարվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց, հիմնավորված և պատճառաբանված չէ: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վարչական դատավարության կարգով մասնակիորեն անվավեր ճանաչված թիվ 5013322 ստուգման ակտը փորձաքննության եզրակացության արդյունքների վրա որևէ ազդեցություն չի ունեցել, իսկ փորձագետները ընկերու-

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

թյան հարկային պարտավորությունների չափը որոշել են՝ հիմք ընդունելով նախաձեռնողի կողմից իրենց տրամադրված համապատասխան նյութերն ու ելակետային տվյալները:

18. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, կատարելով գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ամբաստանյալ Ա.Սարգսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության հարցում հանգել է իրավաչափի հետևության: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանն իրավաչափորեն արձանագրել է, որ սույն գործով առկա է ապացույցների բավարար համակցություն՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ամբաստանյալ Ա.Սարգսյանի մեղքն իրեն վերագրվող արարքում հաստատված համարելու և մեղադրական դատավճիռ կայացնելու համար:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությունը չէր կարող դրվել դատավճռի հիմքում, իսկ մեղադրանքի հիմքում դրված մյուս ապացույցներն ըստ էության չեն պարունակում բավարար տեղեկություններ՝ ամբաստանյալի կողմից իրեն մեղսագրված հանցանքը կատարելու վերաբերյալ և կրում են միայն ածանցյալ բնույթ, հիմնավոր չէ և չի բխում սույն գործի փաստական տվյալների ամբողջությունից: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում Արշակ Մարգարյանին արդարացնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

19. Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով կայացված մեղադրական դատավճիռը բեկանելով, պատշաճ գնահատման չի ենթարկել սույն գործում առկա ապացույցների համակցությունը, թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների խախտում, ինչն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգով հետազոտելով գործում առկա ապացույցները, ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ եկել է հիմնավոր եզրահանգման: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի մեղադրական դատավճռին:

Միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ Ա.Սարգսյանին մեղսագրվող արարքը կատարվել է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված ազատարկման ձևով պատիժը չի գերազանցում չորս տարին և Ա.Սարգսյանի նկատմամբ՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը կիրառելու արգելքները բացակայում են, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Ա.Սարգսյանն Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատժից ենթակա է ազատման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արշակ Վոլոդյայի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 7-ի դատավճռին:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Արշակ Վոլոդյայի Սարգսյանին ազատել նշանակված պատժից:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

49. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴԴ/0032/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Հ.ԷՅՐԱՄՋՅԱՆԻ
Տ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Աշոտ Ծերունու Հակոբյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 1-ին ՀՀ ոստիկանության Մապիսի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 1-ին մասի և 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 44163517 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Աշոտ Ծերունու Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ (2 դրվագ):

Նույն օրն Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի որոշմամբ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննական մարմնի՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2017 թվականի սեպտեմբերի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Դատաքննության ընթացքում մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 3-րդ մասով, որոշում է կայացրել Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նոր մեղադրանք առաջադրելու մասին:

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 10-ի դատավճռով Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրվման:

Ա.Հակոբյանի մոտ առկա՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ կանաքինտիդային նյութերի գործածման հետևանքով, կախվածություն համախտանիշ» հիվանդության կապակցությամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 97-98-րդ հոդվածների հիման վրա, նրա նկատմամբ պատժի հետ մեկտեղ նշանակվել է հարկադիր բուժում:

Նույն դատավճռով դատապարտվել է նաև Սպարտակ Վլադիմիրի Ավանեսյանը:

3. Մեղադրող Տ.Հակոբյանի և պաշտպան Գ.Ասատրյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ դատախազի բողոքը բավարարել է, իսկ պաշտպանի բողոքը՝ բավարարել մասնակի: Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի ապրիլի 10-ի դատավճիռը բեկանել է և փոփոխել՝ նրան մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ Ա.Հակոբյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 31-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ ամբաստանյալ Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխվել է չհեռանալու մասին ստորագրությամբ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Աշոտ Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա 2016 թվականի աշնանը՝ քննությամբ չպարզված օրը, սպորինի իրացնելու նպատակով, չկոնկրետացված դիտավորությամբ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի դաշտերից՝ ինքն իրեն աճած կանեփի թփերից պոկելու, մանրացնելու և չորացնելու միջոցով սպորինի ձեռք է բերել և Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Նոր Խարբերդ ամստանոցների 13-րդ փողոցի 8/1-րդ հասցեում գտնվող իր փան ննջասենյակի մահճակալի ներքնակի փակ պահել է 14 հար լուցկու փուփերի մեջ լցված, ընդհանուրը խոշոր չափերով՝ 39.01 գրամ հասարարուն քաշով մարիխուանա փեսակի թմրամիջոց, համապարասխանաբար 2.69, 2.76, 2.78, 2.46, 2.62, 2.77, 2.83, 2.96, 2.50, 2.95, 2.83, 2.75, 3.53 և 2.58 գրամ քաշերով: Այնուհետև, Աշոտ Հակոբյանը 2017 թվականի մայիսի 26-ին Արարատի մարզի Այնթապ գյուղում «Ինեսա» առևտրի սրահի մոտից բերման է ենթարկվել ոստիկանության Մասիսի բաժնի, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է վերը նշված թմրամիջոցից 2 լուցկու փուփերում առկա՝ 2.76, 2.78 գրամ քաշերով թմրամիջոցը: Դրանից հետո իր կատարած հանցագործության բացահայտման վրանգից դրդված, նույն օրը ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցներին Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Նոր Խարբերդ ամստանոցների 13-րդ փողոցի 8/1-րդ հասցեում գտնվող իր փանը ներկայացրել է իր կողմից սպորինի իրացման նպատակով մահճակալի ներքնակի փակ պահված մնացածը՝ ընդհանուրը 11 նույնանման լուցկու փուփերի մեջ լցված մարիխուանա փեսակի թմրամիջոցը:

Այսպիսով, Աշոտ Ծերունու Հակոբյանը մեղադրվում է մեղավորությամբ հանրության համար վրազավոր արարք կատարելու մեջ, որը նսխարեւել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Բացի այդ, Աշոտ Հակոբյանը 2016 թվականի աշնանը՝ քննությանը չպարզված օրը, Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի դաշտերից՝ ինքն իրեն աճած կանեփի թփերից պոկելու, մանրացնելու և չորացնելու միջոցով իրացնելու նպատակով, չկոնկրետացված դիրավորությանը ապօրինի ձեռք բերված թմրամիջոցից 1 լուցկու փուփի մեջ լցված զգալի չափերով՝ 2.69 գրամ հասարարուն քաշով մարիխուանա փեսակի թմրամիջոցը 2017 թվականի մայիսի 26-ին նախնական պայմանավորվածության համաձայն՝ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղի Քոնսպեկտի փարածքում Սպարտակ Վլադիմիրի Ավանեսյանին ապօրինի իրացնելու նպատակով դրել է գրպանը, հանդիպել վերջինիս և նրա վարած «Գազել» մակնիշի 0678S հաշվառման համարանիշի երթուղային ավտոմեքենայով ապօրինի փոխադրել մինչև Արարատի մարզի Այնթապ գյուղում գրվող «Ինեսա» առևտրի սրահի մուտք, որտեղից նույն օրը բերման է ենթարկվել ոստիկանության Մասիսի բաժին, որտեղ նրա անձնական խուզարկությանը հայտնաբերվել է զգալի չափերով՝ 2.69 գրամ հասարարուն քաշով մարիխուանա փեսակի թմրամիջոցը:

Այսպիսով, Աշոտ Ծերունու Հակոբյանը մեղադրվում է մեղավորությանը հանրության համար վրանգավոր արարք կատարելու մեջ, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով: (...):»¹:

6. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի ապրիլի 10-ի դատավճռով արձանագրել է. «(...) Դատարանը գտնում է, որ ապացուցված է Աշոտ Հակոբյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (...), իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղքը չընդունելու և այդ կապակցությանը ամբաստանյալ Ա.Հակոբյանի բերած պարճատարանություններն էլ հերքվել են դատաքննությանը հետազոտված և նույն դատավճռի «Ապացույցների հետազոտում և գնահատում» բաժնում շարադրված բավարար ապացույցների համակցությանը:

Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Հակոբյանի և պաշտպան Գ.Ասատրյանի միջնորդություններին՝ նշված դրվագով արարքն առանց իրացման նպատակի թմրանյութ ձեռք բերելու և պահելու հոդվածով վերատրակելու, ինչպես նաև պաշտպանի միջնորդությունը՝ Ա.Հակոբյանի վերաբերյալ արդարացման դատավճիռ կայացնելու մասին, դատարանը գտնում է, որ դրանք հիմնազուրկ են:

(...) Գնահատության ենթարկելով դատաքննությանը հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ, դատարանը հանգում է այն համոզման, որ Աշոտ Հակոբյանի կողմից խոշոր չափի հասնող

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 178:

մարիխուանա տեսակի թմրամիջոցների ապօրինի ձեռք բերումը, դրանք համեմատաբար հավասար քաշերով առանձնացնելն ու լուցկու 14 փուլերի մեջ լցնելը ու հարմար փաթեթավորելը, թմրամիջոցը հայտնաբերելու պահին ամբաստանյալ Ա.Հակոբյանի կատարած հայտարարությունները՝ դրանք իրացնելու մասին, Սպարտակ Ավանեսյանին իր մոտ պահվող թմրամիջոցից մեկ փուլի մեջ լցված զգալի չափի հասնող թմրամիջոցի իրացման փորձ կատարելու հանգամանքը վկայում են Ա.Հակոբյանի կողմից ի սկզբանե խոշոր չափի հասնող թմրամիջոցն իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելու և պահելու մտադրության մասին, որպիսի պայմաններում բացակայում են հիմքերը Ա.Հակոբյանի արարքն առանց իրացնելու նպատակով ապօրինի խոշոր չափի հասնող թմրամիջոց ձեռք բերելու և պահելու համար նախատեսված հոդվածով վերաորակելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու համար] (...)»¹:

6.1. Ամբաստանյալ Աշոտ Հակոբյանն ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ երկար տարիներ օգտագործել է թմրամիջոց, սակայն երբեք ոչ ոքի այն չի վաճառել: 2016 թվականի աշնանը դուրս է եկել տնից և Նոր Խարբերդ գյուղի դաշտամիջյան ճանապարհով անցնելիս առվի եզրին նկատելով կանեփի բույս՝ որոշել է պոկել դրանցից և տանել տուն: Այդ նպատակով արմատախիլ է արել կանեփ տեսակի բույսը, տարել տան բակի վերջնամասում՝ արևոտ հատվածում դրել, որպեսզի չորանա և տան անդամները չտեսնեն: Մի քանի օր անց նկատել է, որ կանեփի բույսը չորացել է, խանութից գնել է տուփերով լուցկի, դատարկել լուցկու հատիկները, առանձնացրել կանեփի չորացված բույսի տերևներն ու գլխիկները, մանրացրել, լցրել լուցկու 14 դատարկ տուփերի մեջ ու դրանք տեղավորել է ննջասենյակում՝ ներքնակի տակ: Առանձին տուփերի մեջ է լցրել, քանի որ այդպես տեղաշարժման համար ավելի հարմար է: Ինքը շուրջ մեկ տարի ճանաչել և մտերմություն է արել հարևան փողոցի բնակիչ Սպարտակ Ավանեսյանի հետ: Խոսակցության ընթացքում Ս.Ավանեսյանն իրեն հայտնել է, որ թմրամիջոց է օգտագործում, ինքն էլ ասել է, որ նույնպես թմրանյութ է օգտագործում:

2017 թվականի մայիսի 26-ին՝ կեսօրին մոտ, որոշել է հոսանքի վարձավճարը մուծելու համար գնալ Երևան քաղաք: Քանի որ Ս.Ավանեսյանն աշխատել է թիվ 57-րդ երթուղում որպես վարորդ, իր հեռախոսահամարից զանգահարել է Ս.Ավանեսյանի բջջային հեռախոսին, որպեսզի նրա վարած երթուղայինով գնա Երևան քաղաք, և պայմանավորվել են հանդիպել Նոր Խարբերդ գյուղի Զոնալ կոչվող թաղամասում, որտեղ գտնվում է երթուղայինի կայանատեղին: Մահճակալի ներքնակի տակից վերցրել է երեք լուցկու տուփերի մեջ լցված մարիխուանա տեսակի թմրանյութ, փաթեթավորել թերթով, հետո ամրացրել կաշուն ժապավենով և դրել տաքատի ձախ գրպանում՝ մեկ լուցկու տուփը Ս.Ավանեսյանին

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 176-191:

տալու նպատակով, իսկ երկուսն իր օգտագործման համար: Պայմանավորված վայրում հանդիպել է Ս.Ավանեսյանին, նրանից 5.000 ՀՀ դրամ գումար է վերցրել ու խոստացել Երևան քաղաքից վերադառնալիս մեկ լուցկու տուփ մարիխուանա տեսակի թմրամիջոցը տալ նրան: Ժամը 16.00-ի սահմաններում Ս.Ավանեսյանը զանգահարել է իրեն, հանդիպել են Շենգավիթի կանգառում, և ինքը Ս.Ավանեսյանին խոստացել է Նոր Խարբերդ գյուղի Ջոնալ կոչվող տարածք հասնելուն պես նրան տալ մեկ լուցկու տուփի մեջ լցված թմրանյութը: Հասնելով Արարատի մարզի Այնթապ գյուղում գտնվող «Ինեսա» առևտրի սրահի դիմաց՝ Ս.Ավանեսյանի վարած երթուղային տաքսի մեքենան կանգնեցրել են ոստիկանության աշխատակիցները և թմրանյութ պահելու կասկածանքով իրենց բերման ենթարկել ոստիկանության Մասիսի բաժին, որտեղ իր անձնական խուզարկությամբ հագին եղած սև գույնի տաքստի ձախ գրպանից հայտնաբերվել է իր կողմից Ս.Ավանեսյանին փոխանցելու համար նախատեսված մեկ տուփ և իր օգտագործման նպատակով պահված երկու տուփ՝ ընդհանուր՝ 8.23 գրամ հաստատուն քաշով, մարիխուանա տեսակի թմրամիջոցը: Նույն օրն ինքը Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Նոր Խարբերդ ամառանոցների 13-րդ փողոցի 8/1 հասցեում գտնվող իր տանը ոստիկանության աշխատակիցներին է ներկայացրել 11 նույնանման լուցկու տուփերի մեջ լցված՝ 30.78 գրամ հաստատուն քաշով, մարիխուանա տեսակի թմրամիջոցը, որը պահել էր իրացնելու և իր օգտագործման համար: Լուցկու տուփերի մեջ լցված թմրամիջոցը չի կշռել, ուղղակի լցրել է այնքան, որքան որ տեղավորվել է: Ս.Ավանեսյանից 5000 ՀՀ դրամ գումարը վերցրել է պարտքով, իսկ ինքը նրան թմրամիջոց է խոստացել տալ առանց գումարի: Թմրամիջոց օգտագործել է ցավերը հանգստացնելու համար¹:

6.2. *Ամբաստանյալ Սպարտակ Ավանեսյանն* ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ ընդհանուր խոսակցության ժամանակ տեղեկացել է, որ Ա.Հակոբյանը թմրամիջոց է օգտագործում, նրան հայտնել է, որ ինքը նույնպես թմրամիջոց է օգտագործում: Մի քանի անգամ նրան առաջարկել է թմրամիջոց լինելու դեպքում իրեն տեղեկացնել, սակայն Աշոտը ոչ մի անգամ իրեն թմրամիջոց չի տվել և միշտ վստահեցրել է, որ լինելու դեպքում կտեղեկացնի: 2017 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 14.30-ի սահմաններում, իր բջջային հեռախոսահամարից զանգահարել է Ա.Հակոբյանի բջջային հեռախոսին և խնդրել իրեն թմրանյութ տալ՝ իր օգտագործման համար: Ա.Հակոբյանն ասել է, որ կմոտենա և խնդրել է երթուղայինում տեղ պահել, քանի որ գործով գնում է Երևան քաղաք: Քիչ հետո Ա.Հակոբյանը մոտեցել է իրեն, նստել երթուղայինը, և միասին ուղևորվել են դեպի Երևան քաղաք: Այդ ժամանակ ինքը Ա.Հակոբյանին է տվել 5.000 ՀՀ դրամ գումար՝

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 179-180:

թմրանյութի դիմաց, վերջինս Շենգավիթի կանգառում իջել է երթուղայինից, և պայմանավորվել են, որ վերադառնալիս նույն կանգառում պետք է հանդիպեն, որից հետո Ա.Հակոբյանն իրեն պետք է տա թմրանյութը, քանի որ այն Երևան քաղաքից էր վերցնելու: Պայմանավորվածության համաձայն, նույն կանգառից վերցրել է Ա.Հակոբյանին, և ուղևորվել են դեպի Նոր Խարբերդ գյուղի Ջոնալ կոչվող տարածք: Հասնելով Արարատի մարզի Այաթապ գյուղում գտնվող «Ինեսա» առևտրի սրահի դիմաց՝ իր վարած երթուղային տաքսի մեքենան կանգնեցրել են ոստիկանության աշխատակիցները և թմրանյութ պահելու կասկածանքով իրենց բերման ենթարկել ոստիկանության Մասիսի բաժին, որտեղ Ա.Հակոբյանի անձնական խուզարկությամբ հագին եղած սև գույնի տաքստի ձախ գրպանից հայտնաբերվել է երեք լուցկու տուփ մարիխուանա տեսակի թմրամիջոցը, որից մեկն Ա.Հակոբյանը 5.000 ՀՀ դրամի դիմաց պետք է տար իրեն¹:

6.3. *Վկա Նարեկ Մանուկյանը* ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ ինքն ու մի տղամարդ որպես ընթերակա մասնակցել են ոստիկանության Մասիսի բաժնում Ա.Հակոբյանի անձնական խուզարկությանը, որի ընթացքում ոստիկանների կողմից վերջինիս տաքստի ձախ գրպանից հայտնաբերվել է թերթով փաթաթված ու կաշուն ժապավենով ամրացված փաթեթ, որի մեջ առկա են եղել երեք հատ լուցկու նույնանման տուփեր, իսկ դրանց մեջ եղել է չորացված ու մանրացված դեղնականաչավուն, սուր հոտով զանգված: Ա.Հակոբյանը հայտարարել է, որ հայտնաբերված զանգվածը պատկանում է իրեն, այն հանդիսանում է թմրամիջոց, **դրանցից մեկ փուփը պետք է փար իր հեղ բաժին բերված անձնավորությանը, որը գազելի վարորդ է, իսկ մնացածը՝ պահեր իր օգտագործման համար²:**

6.4. *Վկա Սարգիս Բաղայանն* ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ ոստիկանության Մասիսի բաժնում որպես ընթերակա մասնակցել է Ա.Հակոբյանի անձնական խուզարկությանը, որի ընթացքում ոստիկանների կողմից նրա տաքստի ձախ գրպանից հայտնաբերվել է թերթով փաթաթված ու կաշուն ժապավենով ամրացված փաթեթ, որի մեջ առկա է եղել երեք հատ լուցկու նույնանման տուփ, իսկ դրանց մեջ եղել է չորացված ու մանրացված դեղնականաչավուն, սուր հոտով զանգված: Ա.Հակոբյանը **հայտարարել է, որ հայտնաբերված զանգվածը պատկանում է իրեն, դրանցից մեկը պետք է փար գազելի վարորդին, իսկ մնացածը պահեր իր օգտագործման համար³:**

6.5. *Վկա Մանուկ Պետրոսյանը* ըստ էության ցուցմունքներ է տվել այն մասին, որ ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցները հրավիրել

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 180:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 183:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 183:

են իրեն որպես ընթերակա մասնակցելու Նոր Խարբերդի ամառանոցների 13-րդ փողոցի 8/1 հասցեում գտնվող բնակարանի սեփականատիրոջ կողմից ոստիկանության աշխատակիցներին դեղնականաչավուն, սուր հոտով զանգված ներկայացնելու և վերցնելու գործողությանը: **Ա.Հակոբյանը հայտարարել է, որ հայրնաբերված զանգվածը պատկանում է իրեն, դրանից հյուրասիրել է մնարդկանց¹:**

6.6. Նախաքննության ընթացքում՝ 2017 թվականի հունիսի 8-ին, Ա.Հակոբյանը որպես կասկածյալ հացաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ 2017 թվականի մայիսի 26-ին՝ կեսօրին, մահճակալի ներքնակի տակից վերցրել է երեք լուցկու տուփ թմրանյութ, փաթեթավորել թղթով, դրել տաքատի ձախ գրպանում և գնացել Երևան՝ աշխատանք փնտրելու: Թմրանյութը վերցրել է իր հետ, որպեսզի մեկ տուփը տա Սպարտակին, իսկ մնացածը պահի իր օգտագործման համար: Տվյալ օրն առավոտյան ինքը Սպարտակից 5000 դրամ գումար է ուզել, սակայն թմրանյութը պետք է տար ոչ թե գումարի դիմաց, այլ ընկերական հարաբերություններից ելնելով: **Հինգ անգամ առանց գումարի Սպարտակին տվել է թմրանյութ՝ նրա օգտագործման համար: Բացի այդ, մեկ անգամ թմրանյութ է հյուրասիրել Մայիսին²:**

6.7. 2017 թվականի հունիսի 9-ին կասկածյալ Ս.Ավանեսյանի հետ առերես հարցաքննվելիս Ա.Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Սպարտակին հինգ անգամ առանց գումարի, լուցկու տուփի կեսի չափով թմրանյութ է տվել՝ վերջինիս օգտագործման համար³:

6.8. Անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրության համաձայն՝ 2017 թվականի մայիսի 26-ին Ա.Հակոբյանի անձնական խուզարկության ժամանակ նրա հագին եղած սև գույնի տաքատի ձախ գրպանից հայտնաբերվել է երեք փաթեթ՝ փաթեթավորված թերթով և ամրացված կաշուն ժապավենով, որոնցից առաջինի մեջ առկա է եղել մոտ 5 գրամ, երկրորդի մեջ՝ մոտ 5 գրամ և երրորդի մեջ՝ մոտ 3 գրամ դեղնականաչավուն սուր հոտով, չորացված, մանրացված կանեփ տեսակի բույսի զանգված: Հայտնաբերվածի վերաբերյալ Ա.Հակոբյանը հայտարարել է, որ այն պատկանում է իրեն, հանդիսանում է թմրանյութ, որն ինքն է պատրաստել և **դրանից մեկ տուփը 2017 թվականի մայիսի 26-ին պետք է տար թիվ 57 համարի երթուղայինի վարորդ Ս.Ավանեսյանին, ումից նախապես վերցրել էր 5.000 ՀՀ դրամ գումար, իսկ մյուս երկու փաթեթները պահել էր իր օգտագործման համար⁴:**

6.9. Ա.Հակոբյանի կողմից դեղնականաչավուն զանգվածները ներկայացնելու, զննելու և վերցնելու մասին 2017 թվականի մայիսի 26-ի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 183-184:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 80-83:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 119-120:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 184:

արձանագրության համաձայն՝ 2017 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 22.00-ին, Ա.Հակոբյանը Երևան քաղաքի Նոր Խաբրերոյ ամատանոցների 13-րդ փողոցի 8/1 հասցեում գտնվող իր տանը ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցներին է ներկայացրել ննջասենյակի մահճակալի ներքնակի տակ իր կողմից պահված նույնանման 11 լուցկու տուփերը, որոնք ընդհանուր փաթեթավորված են եղել թերթով և ամրացված կաշուն ժապավենով, որոնցից մեկ լուցկու տուփի մեջ առկա է եղել մոտ 4 գրամ, իսկ մնացածների մեջ՝ մոտ 3-ական գրամ՝ ընդհանուր՝ մոտ 34 գրամ դեղնականաչավուն, չորացված, մանրացված կանեփի բույսի զանգված: Հայրնաբերվածի վերաբերյալ Ա.Հակոբյանը հայտարարել է, որ այն պատկանում է իրեն, հանդիսանում է կանեփի տեսակի բույսից իր կողմից պատրաստված թմրանյութ, որից ինքն օգտագործել է, ինչպես նաև հյուրասիրել է և վաճառել փարբեր մարդկանց¹:

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Ինչ վերաբերում է քրեական գործի քննության սկզբնական փուլում ամբաստանյալ Ա.Հակոբյանի կողմից արված հայտարարությանը՝ թմրանյութն իրացնելու առնչությամբ, ինչպես նաև սույն գործով կազմված մեղադրական եզրակացությունում ներառված՝ վերջինիս կողմից նախաքննության ընթացքում արված ցուցմունքներում տեղ գրած տեղեկություններին, ապա դրանք ինչպես առանձին վերցված, այնպես էլ գործով ձեռք բերված մյուս փաստական փյուջաների համադրությամբ, (կոնկրետ դեպքում) ինքնին բավարար դիտարկվել չեն կարող մեղադրանքի այդ մասն (ամբաստանյալ Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը) գնահատելու համար:

Ընդ որում, կոնկրետ դեպքում, (մեղադրանքի այդ մասով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով) հայրնաբերված խոշոր չափով թմրանյութն ինքնըստիսության դրանք իրացնելու հանգամանքի վերաբերյալ անվիճելի ապացույց չէ և դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ փյուջաների հետ համակցության մեջ:

Հարկանշական է, որ սույն գործով կազմված մեղադրական եզրակացությունում ներառված՝ Ա.Հակոբյանի կողմից նախաքննության ընթացքում արված ցուցմունքներում պարունակվում են նաև տեղեկություններ՝ հայրնաբերված թմրամիջոցն իրեն պատկանելու, այն իր օգտագործման նպատակով պահելու, ըստ էության (մեղադրանքի այդ մասով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով) իրացնելու նպատակը բացատրելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է նաև մեղադրանքի այդ մասով (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով), մեղադրանքի հիմքում դրված մյուս ապացույցների վերլուծությանը, ապա դրանք ըստ էության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 15-18:

չեն պարունակում որևէ տեղեկություն մեղադրանքի այդ մասով նախա-
տեսված հանցանքի կատարման մեջ նրան մերկացնելու վերաբերյալ և
կրում են միայն ածանցյալ բնույթ:

Վերոգրյալի հաշվառմամբ, դրանք (կոնկրետ դեպքում) չեն կարող
դիտարկվել որպես հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափա-
նիշին համապատասխան մեղադրանքի այդ մասն (ապացուցման
առարկան) հաստատող բավարար փաստական փյույաներ:

Հետևաբար՝ այդ առնչությամբ պաշտպանության կողմի բերված
պարձառարանությունները և պնդումներն ըստ էության ոչ միայն չեն
հերքվում, այլև որպես չփարատված կասկած՝ պետք է մեկնաբանվեն
հոգուր ամբաստանյալ Ա.Հակոբյանի:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ օրենսդրի կողմից ՀՀ
քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի հանցակազմում որպես պարտադիր
հարկանիշ, նպատակը նախատեսելն ինքնանպատակ չէ:

Ավելին՝ հենց այդ նպատակն է, որ հանդիսանում է հիշյալ արարքի
հանրային վրանգավորության ցուցիչ:

Հետևաբար՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վարույթն իրակա-
նացնող մարմինը մինչև անձի քրեական պարասխանաբարվության հարցը
լուծելը պարտավոր է, ի թիվս այլ հարկանիշների, ապացուցել նաև
իրացման նպատակի առկայությունը:

Վերոգրյալի համարեքարում անդրադառնալով սույն գործի փաս-
տական հանգամանքներին՝ վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ
ամբաստանյալ Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի
2-րդ մասի 2-րդ կետով մեղաագրվող արարքում իրացման նպատակի
առկայությունն ապացուցված չէ:

(...)

Վերաքննիչ դատարանի վերջին եզրահանգումը մեծապես պայմանա-
վորված է նաև նրանով, որ քրեական գործով ձեռք չի բերվել որևէ
թույլարբելի և արժանահավատ ապացույց, իսկ նման ապացույց չի
ներկայացրել մեղադրանքի կողմը ևս, որը ոչ միայն կհաստատեր, որ
ամբաստանյալ Ա.Հակոբյանը հիշյալ թմրամիջոցը ձեռք է բերել և պահել
իրացման նպատակով, այլև կհերքեր վերջինիս կողմից բերվող այն
փաստարկը, որ դրանք ձեռք է բերել բացառապես անձնական օգտագործ-
ման նպատակով:

Ավելին՝ քրեական գործի նախաքննության ժամանակ ձեռք չի բերվել
նաև փոխկապակցված թույլարբելի, վերաբերելի և հավասարի ապացույց-
ների բավարար համակցություն, որը կվկայեր Աշոտ Հակոբյանի կողմից
(մեղադրանքի այդ մասով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ
մասի 2-րդ կետով) մեկ այլ անձի հետ հիշյալ թմրամիջոցներն իրացնելու
շուրջ ձեռք բերված նախնական պայմանավորվածության մասին:

Դրան հակառակ՝ քրեական գործի նախաքննության ժամանակ ձեռք են բերվել ապացույցներ ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի կողմից հենց կանաքինտիդների խմբի թմրամիջոցներ գործածելու, այդ թմրամիջոցից կախվածություն և հարկադիր բուժման կարիք ունենալու մասին:

(...)

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանն ամբաստանյալ Աշոտ Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրական դատական ակտ կայացնելու հարցում հանգել է ոչ ճիշտ եզրակացության, ինչը հանգեցրել է նյութական իրավունքի այնպիսի խախտման, որը հիմք է վիճարկվող դատական ակտն այդ մասով բեկանելու և փոփոխելու՝ նրա կարարած արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելու համար: (...)»¹:

8. 2019 թվականի հունվարի 1-ին Վճռաբեկ դատարան է ստացվել ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի գրությունը, համաձայն որի՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բուժվող, կալանավորված անձ Աշոտ Ծերունի Հակոբյանի մոտ «Վ.Ֆա-նարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝ 2018 թվականի սեպտեմբերի 25-ին րրամատրած տրեդեկանքի համաձայն՝ հայրնաբերվել է ծանր հիվանդություն՝ «Աջ թոքի միջին բլթի պերիֆերիկ քաղցկեղի ներածումով պլերա, մետաստատիկ էստրոստրիկ պլերիտ աջից, T4 N 1M1a սրադիա: Վիճակ պլերալ խոռոչի դրենավորումից հետո աջից: Ուռուցքային ինֆեկցիա, հյուծում: ՇԱ»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 127-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, ստորադաս դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ Ս.Սաքանյանի, Մ.Բոլյանի և մի շարք այլ գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Բողոք բերած անձի պնդմամբ՝ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի պահպանել ապացույցների հետազոտման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջները, չի ապահովել դրանց

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 75-121:

հետազոտումը արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, ինչի հետևանքով Ա.Հակոբյանին վերագրված արարքը վերաորակվել է, և նա անհիմն ենթարկվել է մեղմ պատասխանատվության:

Մասնավորապես, ստորադաս դատարանն անտեսել է գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգի շրջանակներում դատարանում հետազոտված ապացույցների համակցությունը, որով ուղղակիորեն հաստատվում է Ա.Հակոբյանի բնակարանում հայտնաբերված թմրամիջոցն իրացման նպատակով պահելու հանգամանքը:

Այսպես՝ բողոքի հեղինակն ընդգծել է, որ նախաքննության ընթացքում Ա.Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2017 թվականի փետրվար ամսից մինչև մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում օգտագործման համար **5 անգամ տարբեր չափերի թմրանյութ է տվել Ս.Ավանեսյանին:** Վերոնշյալը Ա.Հակոբյանը պնդել է նաև Ս.Ավանեսյանի հետ առերեսման ժամանակ: Բացի այդ, Ա.Հակոբյանի կողմից դեղնականաչավուն զանգվածները ներկայացնելու, զննելու և վերցնելու մասին 2017 թվականի մայիսի 26-ի արձանագրության համաձայն՝ հայտնաբերվածի վերաբերյալ Ա.Հակոբյանը հայտարարել է, որ այն պատկանում է իրեն, հանդիսանում է կանեփ տեսակի բույսից պատրաստված թմրամիջոց, այդ զանգվածներից օգտվել է ինքն անձամբ, **իսկ մի քանի օր առաջ նույն ձևի տուփերից մի քանիսը վաճառել և հյուրասիրել է տարբեր անձանց:**

9.1. Բողոքաբերն ընդգծել է, որ Ա.Հակոբյանի տանը հայտնաբերված թմրամիջոցի՝ իրացման նպատակով պահելու մասին է վկայում նախևառաջ դրա հավասար չափաբաժինների մասնատված լինելու և լուցկու տուփերի մեջ նախապես լցնելու հանգամանքները: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ Ս.Ավանեսյանին թմրամիջոցն իրացնելու համար հանդիպման գնալիս Ա.Հակոբյանը նախապես իր հետ վերցրել է հենց նույն լուցկու տուփերից, որոնք հայտնաբերվել են նրա տանը, ով այդ լուցկու տուփի պարունակության մեկ չափաբաժնի դիմաց նախապես պահանջել և վերցրել է 5.000 ՀՀ դրամ գումար: Այս հանգամանքն ուղղակիորեն հերքում է Ա.Հակոբյանի կողմից ի պաշտպանություն իրեն բերված ցուցմունքն այն մասին, որ լուցկու տուփերում նման կերպով թմրամիջոց պահելը միայն հարմարավետության համար է եղել, իսկ պարունակությունը նախատեսված է եղել բացառապես իր գործածման համար, և հաստատում է այն, որ 2.5-ից 3 գրամ պարունակությամբ 1 չափաբաժին մարիխուանա տեսակի թմրամիջոցը Ա.Հակոբյանը իրացրել է 5.000 ՀՀ դրամով:

9.2. Բողոքի հեղինակն ընդգծել է նաև, որ այդ տուփերում հավասարապես բաշխված թմրամիջոցն իրացնելու նպատակով պահելու մասին են վկայում նաև Ա.Հակոբյանի կողմից նախկինում դրանցից Ս.Ավանեսյանին և այլ անձանց վաճառելու և հյուրասիրելու վերաբերյալ

տրված ցուցմունքները, որոնք, սակայն, Վերաքննիչ դատարանն անտեսել և որևէ վերլուծության չի ենթարկել: Վերաքննիչ դատարանն Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորող առանցքային ապացույցներն անհասկանալիորեն որակել է որպես «տեղեկություններ»՝ առանց դրանք դատական ակտում վկայակոչելու, դրանց բովանդակությունը բացահայտելու՝ նշելով միայն, որ դրանք ինչպես առանձին վերցված, այնպես էլ գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համադրությամբ, բավարար չեն կարող դիտարկվել մեղադրանքի այդ մասը գնահատելու համար:

Բողոքարեքի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանի նման գործելաձևը հիմք է տալիս գալու հետևության՝ դատարանի կողմից այդ ապացույցների բովանդակությունն ուսումնասիրված չլինելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, այդ ապացույցների նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելով (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքը չբացահայտելով և նվազեցնելով), առանց մյուս ապացույցների հետ համադրելու, դրանց նախապես տվել է ավելի նվազ կարևորություն, քան դատական ակտում վկայակոչած և վերլուծված ապացույցներին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է մասնակի՝ Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասից 268-րդ հոդվածի 2-րդ մասով վերաորակելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք ամբաստանյալ Ա.Հակոբյանի կողմից մարիխուանա տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի ապօրինի պահելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է. «1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օրյեկրիվ սրուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով»:

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր

ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարելիսիճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով¹:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված:

(...)

4. Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հերևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանված լինելու հատկանիշի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատական ակտերի պատճառաբանման պահանջը ոչ միայն

¹ Տե՛ս, mutatis mutandis, Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

արդարացիության կարևոր բաղադրատարր է, այլև անձի արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման կարևոր երաշխիք, ինչը դատավարության մասնակիցներին պաշտպանում է կամայականություններից:

Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս, և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար: Քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: Ընդ որում, դատական ակտի պատճառաբանությունների հիմքում չեն կարող դրվել վերացական, ընդհանուր բնույթի դատողություններ: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, ուստիև դատական ակտի պատճառաբանությունների հիմքում վերացական, ընդհանրական դատողությունների առկայությունն անմիջականորեն վկայում է այդպիսի պատճառաբանության ոչ պատշաճ լինելու մասին¹:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի համաձայն՝ «1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմեկր (հոգեներգործուն) նյութեր սպօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք սպօրինի իրացնելը (...)»:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

(...)

2) խոշոր չափերով (...)»:

Վճռաբեկ դատարանը մեջբերված նորմը վերլուծության է ենթարկել Մարտիկ Բոլյանի վերաբերյալ գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Իրացման նպատակի տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութերի տարածման ցանկացած եղանակ, այդ թվում նաև նախնական պատրվերով: Իրացման նպատակի մասին կարող է վկայել ինչպես ձեռք բերողի (ստացողի, սպառողի) հետ համապատասխան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները.

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Ֆրունզիկ Գալստյանի վերաբերյալ գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, Գևորգ Խնուսյանի վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0030/01/12, Արսեն Մակարյանի վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0016/11/15, Արամայիս Հակոբյանի վերաբերյալ գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0224/01/14, Մարտուն Հակոբյանի վերաբերյալ գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԱԲԴ/0005/11/16 որոշումները:

թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստինքյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց է. դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ փյուջաների հետ համակցության մեջ: Ինչ վերաբերում է ապօրինի իրացմանը, ապա այն թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի ցանկացած եղանակով օտարումն է: Ապօրինի իրացման փակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի՝ հատուցմանը կամ անհատույց այլ անձանց հանձնելու, փոխանցելու ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրատվություն, փոխանակում, փոխադրություն, պարտքի մարում, ուրիշ ներարկում և այլն: Իրացման առանձնահատկությունն այն է, որ նշված գործողությունների հետևանքով թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին փիրանում է մեկ այլ անձ, որն այս դեպքում հանդես է գալիս որպես ձեռք բերող, ստացող կամ գնորդ, սպառող: Ապօրինի իրացումը համարվում է ավարտված, երբ մեկ այլ անձ փիրանում է թմրամիջոցին կամ հոգեմետ նյութին: Մեկ ուրիշ անձին փոխանցելու եղանակը կարող է փարբեր լինել, սակայն դա արարքի որակման համար նշանակություն չունի: Ապօրինի իրացման հանցակազմի համար նշանակություն չունի, թե թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին փիրացած անձն ինչպես է այն փոսօրինելու, դրա հետ վարվելու (...)»¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա, իր տան ննջասենյակի մահճակալի ներքնակի տակ, իրացման նպատակով պահել է 14 լուցկու տուփերի մեջ լցված, ընդհանուր խոշոր չափերով՝ 39.01 գրամ հաստատուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, վերոնշյալ թմրամիջոցից մեկ լուցկու տուփի մեջ լցված զգալի չափերով՝ 2.69 գրամ հաստատուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցը 2017 թվականի մայիսի 26-ին, նախնական պայմանավորվածության համաձայն, Ս.Ավանեսյանին ապօրինի իրացնելու նպատակով դրել է գրպանը, հանդիպել վերջինիս և նրա վարած «Գազել» մակնիշի երթուղային ավտոմեքենայով ապօրինի փոխադրել մինչև Արարատի մարզի Այնթապ գյուղում գտնվող «Ինեսա» առևտրի սրահի մոտ, որտեղից նույն օրը բերման է ենթարկվել ոստիկանության Մասիսի բաժին²:

Առաջին ատյանի դատարանը Ա.Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 1-ին մասով և 266-րդ հոդվածի

¹ Տե՛ս վճռաբեկ դատարանի՝ Մարտիկ Բոլյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ 135/07 որոշումը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

2-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքի կապակցությամբ Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Ա.Հակոբյանի կողմից խոշոր չափերով մարիխուանա տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելը, դրանք համեմատաբար հավասար քաշերով առանձնացնելն ու լուցկու 14 տուփերի մեջ լցնելը, հարմար փաթեթավորելը, ինչպես նաև թմրամիջոցը հայտնաբերելու պահին ամբաստանյալ Ա.Հակոբյանի կատարած՝ դրանք իրացնելու մասին հայտարարությունները, Ս.Ավանեսյանին իր մոտ պահվող թմրամիջոցից զգալի չափի հասնող թմրամիջոց իրացնելու փորձ կատարելու հանգամանքները վկայում են Ա.Հակոբյանի կողմից ի սկզբանե խոշոր չափերով թմրամիջոցն իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերելու և պահելու մտադրության մասին¹:

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանել է և ամբաստանյալ Ա.Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ մասի 2-րդ մասի 2-րդ կետով: Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքի մասով Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը.

- քրեական գործի քննության սկզբնական փուլում ամբաստանյալ Ա.Հակոբյանի կողմից արված հայտարարությունը՝ թմրամիջոցն իրացնելու առնչությամբ, ինչպես նաև սույն գործով կազմված մեղադրական եզրակացությունում ներառված՝ վերջինիս կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում տեղ գտած տեղեկություններն ինչպես առանձին վերցված, այնպես էլ գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համադրությամբ, ինքնին չեն կարող բավարար դիտարկվել՝ մեղադրանքի այդ մասը գնահատելու համար,

- կոնկրետ դեպքում հայտնաբերված խոշոր չափով թմրամիջոցն ինքնին այն իրացնելու նպատակի վերաբերյալ անվիճելի ապացույց չէ,

- մեղադրական եզրակացությունում ներառված՝ Ա.Հակոբյանի կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում պարունակվում են նաև տեղեկություններ՝ հայտնաբերված թմրամիջոցն իրեն պատկանելու, այն իր օգտագործման նպատակով պահելու վերաբերյալ,

- քրեական գործի նախաքննության ժամանակ ձեռք չի բերվել թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցների բավարար համակցություն, որը կվկայեր Ա.Հակոբյանի կողմից մեկ այլ անձի հետ թմրամիջոցն իրացնելու շուրջ ձեռք բերված նախնական պայմանավորվածության մասին,

- դրան հակառակ՝ քրեական գործի նախաքննության ժամանակ ձեռք են բերվել ապացույցներ՝ ամբաստանյալ Ա.Հակոբյանի կողմից հենց կանաքիտիդների խմբի թմրամիջոց գործածելու, դրանից կախվածություն և հարկադիր բուժման կարիք ունենալու մասին:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ պաշտպանության կողմի բերված պատճառաբանությունները և պնդումները ոչ միայն չեն հերքվում, այլև որպես չփարատված կասկած՝ պետք է մեկնաբանվեն հոգուտ ամբաստանյալ Ա.Հակոբյանի¹:

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով վերաորակելով, պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը: Մասնավորապես, Ա.Հակոբյանի կողմից մարիխուանա տեսակի թմրամիջոցն ապօրինի պահելու նպատակը գնահատելիս Վերաքննիչ դատարանը որևէ վերլուծության չի ենթարկել ամբաստանյալի կողմից թմրամիջոցը ներկայացնելիս արված հայտարարությունը, վերջինիս նախաքննական ցուցմունքները, դրանց համատեքստում գնահատման չի ենթարկել հայտնաբերված թմրամիջոցի քանակը, ինչպես նաև վերոնշյալ թմրամիջոցից 2.69 գրամ հաստատուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցը Ս.Ավանեսյանին իրացնելու նպատակով փոխադրելու հանգամանքը:

Այսպես՝ ամբաստանյալ Ա.Հակոբյանն իր տան ննջասենյակի մահճակալի ներքնակի տակ պահել է *խոշոր չափերով՝ ընդհանուր 39.01 գրամ հասարարուն քաշով*, մարիխուանա տեսակի թմրամիջոց, որն առանձնացրել է *համեմատաբար հավասար քաշերով, լցրել լուցկու 14 տուփերի մեջ և հարմար փաթեթավորել*: 2017 թվականի մայիսի 26-ի՝ դեղնականաչավուն զանգվածները ներկայացնելու, զննելու և վերցնելու մասին արձանագրության համաձայն՝ ամբաստանյալ Ա.Հակոբյանը հայտարարել է, որ հայտնաբերվածը պատկանում է իրեն, այդ զանգվածից անձամբ է օգտվել, ինչպես նաև *վաճառել և հյուրասիրել է փարբեր անձանց*: Վերոնշյալ հանգամանքն իր ցուցմունքներով հաստատել է նաև վկա Մ.Պետրոսյանը: Որպես կասկածյալ հարցաքննվելիս՝ Ա.Հակոբյանն ընդգծել է, որ *հինգ անգամ առանց գումարի թմրանյութ է փվել Ս.Ավանեսյանին*¹ նրա օգտագործման համար, ինչը պնդել է նաև վերջինիս հետ առերես հարցաքննվելիս, իսկ *մեկ անգամ էլ թմրանյութ է հյուրասիրել Մայիսին*: Բացի այդ, դեպքի օրը՝ 2017 թվականի մայիսի 26-ին, Ա.Հակոբյանը լուցկու տուփերից մեկը՝ զգալի չափերով՝ 2.69 գրամ հաստատուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցը, Ս.Ավանեսյանին ապօրինի իրացնելու նպատակով փոխադրել է մինչև Արարատի մարզի Այնթապ գյուղում գտնվող «Ինեսա» առևտրի սրահի մոտ, որտեղից էլ

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

նույն օրը բերման է ենթարկվել ոստիկանության Մասիսի բաժին: Հիշյալ թմրամիջոցի համար Ա.Ավանեսյանն Ա.Հակոբյանին վճարել է 5000 ՀՀ դրամ գումար¹:

15.1. Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, Ա.Հակոբյանին մեղսագրվող արարքը վերաորակելիս, արձանագրել է, որ *քրեական գործի քննության սկզբնական փուլում Ա.Հակոբյանի կողմից արված հայտարարությունը՝ թմրանյութն իրացնելու առնչությամբ, ինչպես նաև վերջինիս կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում տեղ գտած տեղեկություններն ինչպես առանձին, այնպես էլ գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների համադրությամբ, ինքնին բավարար չեն մեղադրանքի այդ մասը գնահատելու համար:*

Վերոշարադրյալը հիմք է տալիս Վճռաբեկ դատարանին փաստելու, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալ Ա.Հակոբյանի հայտարարությունը, վերջինիս կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները բովանդակային վերլուծության չի ենթարկել, արժանահավատության տեսանկյունից չի գնահատել ամբաստանյալի նախաքննական ու դատաքննական ցուցմունքները, չի պարզել դրանցում առկա հակասություններն ու դրանց հիմնական պատճառները՝ գործի ողջ փաստական տվյալների համատեքստում գնահատման ենթարկելու արդյունքում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ մեղադրական եզրակացությունում ներառված՝ Ա.Հակոբյանի կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում պարունակվում են նաև տեղեկություններ հայտնաբերված թմրամիջոցն իրեն պատկանելու, այն իր օգտագործման նպատակով պահելու վերաբերյալ, ինչպես նաև այն, որ Ա.Հակոբյանը գործածում է հենց կանաբիսիոնների խմբի թմրամիջոց, ինչից ունի կախվածություն և հարկադիր բուժման կարիք, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքները դեռևս չեն բացառում վերջինիս մոտ թմրամիջոցի՝ նաև իրացման նպատակի առկայությունը: Ավելին՝ սույն գործում առկա փաստական հանգամանքների ամբողջությունը, մասնավորապես՝ Ա.Հակոբյանի հայտարարությունը՝ մարիխուանա տեսակի թմրամիջոցը տարբեր անձանց վաճառելու և հյուրասիրելու վերաբերյալ, նրա նախաքննական ցուցմունքները, հայտնաբերված թմրամիջոցի բավականին մեծ քանակությունը, դրանք լուցկու 14 տուփերի մեջ փաթեթավորելը, ինչպես նաև Ա.Ավանեսյանին 5000 ՀՀ դրամ գումարի դիմաց իրացնելու նպատակով մեկ տուփ թմրամիջոցը փոխադրելը, ողջամտորեն հիմք են տալիս եզրահանգելու, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանը մարիխուանա տեսակի թմրամիջոցը պահել է նաև իրացման նպատակով: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործում առկա՝ իրացման նպատակի մասին վկայող վերոնշյալ փաստական տվյալները, արձանագրել է, որ

¹ Տե՛ս սույն որոշման 5-6.9-րդ կետերը:

Ա.Հակոբյանը թմրամիջոցն ապօրինի ձեռք է բերել և պահել միայն օգտագործման նպատակով:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն դատողությանը, որ հայտնաբերված թմրամիջոցի չափն ինքնին այն իրացնելու նպատակի վերաբերյալ անվիճելի ապացույց չէ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերահաստատում է իր նախադեպային որոշումներում արտահայտված և սույն որոշման 13-րդ կետում մեջբերված վերոնշյալ իրավական դիրքորոշումը, միևնույն ժամանակ ընդգծում, որ թմրամիջոցի մեծ քանակությունը պետք է գնահատվի իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ: Հետևաբար, սույն գործով հայտնաբերված թմրամիջոցի քանակը ենթակա էր գնահատման վերևում շարադրված փաստական տվյալների համակցության լույսի ներքո:

16. Հիմք ընդունելով սույն որոշման 15-15.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալին մեղսագրվող արարքը վերաորակելով, պատշաճ գնահատման և վերլուծության չի ենթարկել սույն գործում առկա փաստական հանգամանքները, ինչի արդյունքում արձանագրել է Ա.Հակոբյանի կողմից մարիխուանա տեսակի թմրամիջոցը միայն իր օգտագործման նպատակով ապօրինի պահելու փաստը՝ անտեսելով վերջինիս մոտ թմրամիջոցի՝ նաև իրացման նպատակի առկայության մասին վկայող, գործով հաստատված փաստական տվյալների ամբողջությունը:

Ուստի, վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Հակոբյանի կողմից մարիխուանա տեսակի թմրամիջոցն առանց իրացնելու նպատակի ապօրինի պահելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված չէ:

17. Անփոփելով վերոգրալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ, 127-րդ հոդվածների պահանջների խախտումներ, կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է և հիմք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի

գրությունը՝ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված ծանր հիվանդության և վերջինիս նկատմամբ հնարավոր նշանակվելիք պատժի կրման համատեղելիության հարցը որոշելիս:

Անդրադառնալով Ա.Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, արարքի քրեաիրավական որակման հարցում պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Աշոտ Ծերունու Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Աշոտ Ծերունու Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

50. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0501/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահույթյամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ՝ Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
ամբաստանյալ՝ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆԻ
պաշտպան՝ Ա.ԱՆԴՐԻԿՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արիգ Սամվելի Տիգրանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի մայիսի 21-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 14183518 քրեական գործը:

2018 թվականի մայիսի 22-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել են թիվ 15166418 և 15165918 քրեական գործերը, որոնք միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 15165918 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մայիսի 30-ի որոշմամբ թիվ 15165918 և 14183518 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, և նախաքննությունը շարունակվել է 14183518 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ Արիգ Տիգրանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2018 թվականի հուլիսի 6-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռով ամբաստանյալ Ա.Տիգրանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Ա.Տիգրանյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

3. Ամբաստանյալ Ա.Տիգրանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի պաշտպանի միջնորդությունը բավարարել է և «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ՝ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճել: Նույն որոշմամբ Ա.Տիգրանյանի նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացվել է:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Տիգրանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «Նա, անընդունելի համարելով Հայաստանի Հանրապետությունում

գործող «Վիվառո-Բեթինգ» [սահմանափակ պայրասխանարվությունը] ընկերության կողմից ՀՀ վարչապետի՝ Ռուսաստանի Դաշնություն մեկնելուց առաջ սահմանափակում կամ չսահմանափակում վերաբերյալ խաղադրույք ընդունելու հանգամանքը, «Վիվառո-Բեթինգ» [սահմանափակ պայրասխանարվությունը] ընկերության գույքը վնասելու մեկ միասնական դիրավորությանը, 2018 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 02:00-ից մինչև 04:00-ն ընկած ժամանակահատվածում գնացել է Երևան քաղաքի Կասյան թիվ 8, Կոմիտաս թիվ 12, Կոմիտաս թիվ 46, Ն.Զարյան թիվ 1/9, Բաղրամյան թիվ 56 հասցեներում գործող՝ «Վիվառո-Բեթինգ» բուքմեյքերական գրասենյակների մոտ, որտեղ գեյմինգ հավաքած քարտերով դիրավորյալ հարվածել և կորել է նշված հասցեներում գրանվող գրասենյակների դռների, կողային պայրուհանների ապակիները:

Այնուհետև նա կորել է Երևան քաղաքի Հ.Քոչար թիվ 7 հասցեում գրանվող «Վիվառո-Բեթինգ» բուքմեյքերական գրասենյակի՝ «VivaroBet.com» գրառմամբ գովազդային վահանակի փառերը, որից հետո գնացել է Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 32/2 և Ամիրյան թիվ 18/2 հասցեներում գրանվող՝ «Վիվառո-Բեթինգ» բուքմեյքերական գրասենյակների մոտ, նույն եղանակով, դիրավորությանը կորել է հիշյալ գրասենյակների դռների, կողային պայրուհանների ապակիները և պայրուհանի հետնամասում տեղադրված, «Hisense» ապրանքանիշի հեռուստացույցը՝ «Վիվառո-Բեթինգ» ՍՊԸ-ին պայրճատելով խոշոր չափերի՝ 1.376.660 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուվեց հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով նյութական վնաս»¹:

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «(...) Ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների, պայրասխանարվությունը և պայրիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ուսումնասիրման արդյունքում (...) [պարզվել է նաև, որ ամբաստանյալ Արիգ Տիգրանյանը դարվածություն ունի նախկինում դիրավորությանը ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու համար, այն է՝ ԱՎԴ2/0025/01/17 քրեական գործով Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դարվճռով, 2 (երկու) դրվագով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ դարասպարվել է տուգանքի՝ նվազագույն աշխարավարձի վաթսունասպարիկի՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Նշված գումարն ամբաստանյալը 2018 թվականի հունիսի 1-ին վճարել է, ինչի արդյունքում 2018 թվականի հունիսի 11-ին հանվել է համասպարասխան հաշվառումից պարիժը կրած լինելու պարճատով: (...)»²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 246:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 99-108:

7. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Համաներման ակտի 2-րդ հոդվածի 10-րդ կետում սահմանված են այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում օրենսդիրը բացառել է համաներման կիրառումը:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նախ՝ ամբաստանյալ Ա.Տիգրանյանին վերագրված արարքը կատարվել է 2018 թվականի մայիսի 13-ին, իսկ թվարկված հոդվածների շարքից բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը, այսինքն՝ այն կատարած անձանց, այդ թվում՝ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ համաներման կիրառումը սահմանափակված չէ: Քրեական գործի նյութերի, մասնավորապես՝ Ա.Տիգրանյանի վերաբերյալ դարվածության վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ (ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն 2018 թվականի նոյեմբերի 29-ին կատարված հարցման արդյունքներով) բացակայում են նաև Համաներման օրենքի մեջ նշված այն սահմանափակումները, որոնք կարող էին արգելք հանդիսանալ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման համար:

Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները, դրանք փարածելով սույն գործով պարզված փաստական հանգամանքների վրա, փաստում է, որ Համաներման ակտի 4-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի ուժով ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ համաներման կիրառումը վերապահված է բացառապես Վերաքննիչ քրեական դատարանին, և վերջինիս նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը կարճման: (...)»¹:

8. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 6/7-3726 գրության համաձայն՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով Ա.Տիգրանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ երկու դրվագով, և հանցանքների համակցությամբ դատապարտվել տուգանքի՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով: Պատժի կրումից ազատվել է 2018 թվականի հունիսի 11-ին²:

9. ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետի՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ի թիվ Ե/Պ-2-770 գրության համաձայն՝ Ա.Տիգրանյանը հաշվառված է եղել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Երևանի տարածքային բաժնում, իսկ կից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 27-31:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 17-18:

իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2017 թվականի օգոստոսի 28-ին, որը պրոբացիայի ծառայությունում ստացվել է 2017 թվականի սեպտեմբերի 7-ին: 2018 թվականի մարտի 15-ին Ա.Տիգրանյանը ներկայացել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Երևանի երրորդ բաժին և վերցվել հաշվառման: 2018 թվականի ապրիլի 13-ին Ա.Տիգրանյանը կատարել է 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով վճարում և վճարման անդորրագրի բնօրինակը ներկայացրել է պրոբացիայի ծառայություն, իսկ 2018 թվականի հունիսի 1-ին՝ 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով վճարում, սակայն վճարման անդորրագրի բնօրինակը ներկայացրել է 2018 թվականի հունիսի 11-ին: Նույն օրը Ա.Տիգրանյանը հանվել է հաշվառումից՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով սահմանված 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ տուգանքը փաստացի վճարելու հիմքով¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի համոզմամբ՝ Վերաքննիչ դատարանը խախտել է Համաներման մասին օրենքի դրույթների պահանջները՝ կայացնելով անհիմն և ապօրինի դատական ակտ:

Բողոքաբերը, գործի փաստական հանգամանքները գնահատելով Համաներման մասին օրենքի դրույթների համատեքստում, փաստել է, որ անհիմն են ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ համաներման կիրառումը բացառող հանգամանքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

Բողոք բերող անձի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով ամբաստանյալին մեղսագրվող հանցանքը վերջինս կատարել է մեկ այլ հանցանքի կատարման համար նախատեսված պատիժը կրելու ընթացքում, ինչը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ անձի նկատմամբ համաներման կիրառումը բացառող հանգամանք է:

11. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված է արդյոք ամբաստանյալ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 74-75:

Ա.Տիգրանյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման արգելքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ուրիշի գույքը դիտարկությանը ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝*

պարժվում է (...):

2. Նույն գործողությունը, որը՝

(...)

2) խոշոր չափերի վնաս է պատճառել,

(...)

պարժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

(...)

5. Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը: (...):»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է րուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝*

(...) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պարիժ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատազրկում»:

Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված դեպքերի)՝ այն անձանց նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կալանավորման տակ գրնվելու կամ պարիժը կրելու ընթացքում կրկին դիտարկության հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կալանավորման տակ գրնվելու*

կամ պատիժը կրելու ընթացքում կրկին դիտարկույալ հանցագործություն կատարելու համար»:

Համաներման ինստիտուտի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ համաներման իրենից ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ է ներկայացնում, որի կիրառելիության հիմքում դրված են մի կողմից՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, իսկ մյուս կողմից՝ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտը, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը:

Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսվում են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմունք կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներմումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության¹:

14. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տուգանքի կատարումն ապահովում է տուգանքի դատապարտված անձի (...) մշտական բնակության վայրի պրոքուրացիայի ծառայության փարածքային մարմինը (...):

2. Տուգանք նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտնող դատական ակտը (...) արանսալուց հետո պրոքուրացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարզում է դատապարտյալի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պարզաձև ծանուցում է փարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: (...)

3. Դատապարտյալը պարտավոր է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատական ակտով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անորոշագիրը

¹ Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշումը:

տրան աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով տարածքային մարմին:

(...)

5. Դատական ակտի հիման վրա և դրա շրջանակներում պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուին տարածքային մարմին ներկայանալուց հետո անհապաղ ստորագրությամբ պարզաբանում է **տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու** կարգն ու պայմանները, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը:

(...)

8. Տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելուց հետո տարածքային մարմինը դատապարտյալին տալիս է տեղեկանք՝ **պատիժը կրած լինելու** մասին, և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, իսկ անձնական գործն արխիվացվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը՝

1) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տրան աշխատանքային օրվա ընթացքում, տուգանքի վճարման անդորրագիրը չի ներկայացրել լիազոր մարմին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի. (...)»:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 395-Ն որոշման հավելվածի համաձայն՝ «(...) Տուգանքի կատարումն ապահովում է տուգանքի դատապարտված անձի (այսուհետ՝ պրոբացիայի շահառու) մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմինը (...):

(...) Դատական ակտն սրանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում դատական ակտի հիման վրա պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, պրոբացիայի շահառուին չհայտնաբերելու դեպքում, (...), նրան պարզաձև կերպով ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ (...), կազմում է անձնական գործ (...), լրացնում հաշվառման քարտ (...):

(...) Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի շահառուի՝ տարածքային մարմին ներկայանալուց հետո անհապաղ ստորագրությամբ պարզաբանում է տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու կարգն ու պայմանները, պրոբացիայի շահառուի իրավունքները և պարտականու-

թյունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը (...)

(...) Տուգանքի գումարի ամբողջությամբ վճարումից հետո փարածքային մարմինը պրոբացիայի շահառուին փախի է տեղեկանք պատիժը կրած լինելու մասին (...), և դրա մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (...)

ինֆորմացիոն կենտրոնին:

(...) Պրոբացիայի շահառուն հաշվառումից հանվում է հետևյալ հիմքերով

1) (...) փուզանքի դեպքում գումարն ամբողջությամբ վճարելիս. (...)»:

Մեջբերված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման հիմքն օրինական ուժի մեջ մտած դատական ակտն է, քանի որ դատապարտյալը, ըստ առկա կարգավորումների, պարտավոր է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատական ակտով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով տուգանք պատժատեսակի կատարումն ապահովող դատապարտյալի մշտական բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային մարմին: Մասնավորապես՝ տուգանք նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո, պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է պարզել դատապարտյալի գտնվելու վայրը, նրան պատշաճ ծանուցել տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ դատապարտյալի՝ տարածքային մարմին ներկայանալուց հետո անհապաղ ստորագրությամբ պարզաբանել **տուգանք պատժատեսակը կրելու** կարգն ու պայմանները, իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև սահմանված պատասխանատվությունը: Տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելուց հետո տարածքային մարմինը դատապարտյալին տալիս է **պատիժը կրած լինելու** վերաբերյալ տեղեկանք՝ այդ մասին հայտնելով դատական ակտը կայացրած դատարանին և ՀՀ ոստիկանությանը:

Վերոգրյալ վերլուծությունից բխում է, որ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ այն դեպքում, երբ դատապարտյալն ամբողջությամբ վճարում է որպես տուգանք նշանակված գումարը և վճարման անդորրագիրը ներկայացնում տարածքային մարմին, հանվում է հաշվառումից: Միաժամանակ, անձին տեղեկանք է տրվում պատիժը կրած լինելու մասին: Այսինքն՝ տուգանք պատժատեսակի կրումից անձն ազատվում է գումարն ամբողջությամբ վճարելուց հետո, իսկ քանի դեռ այն չի վճարվել ամբողջությամբ, դատապարտյալը շարունակում է գտնվել պատժի կրման ընթացքում:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Տիգրանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 02:00-ից մինչև 04:00-ն ընկած ժամանակահատվածում, մեկ միասնական դիտավորությամբ վնասել է «Վիվառո-Բեթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գույքը և ընկերությանը պատճառել խոշոր չափերի՝ 1.376.660 ՀՀ դրամի նյութական վնաս¹:

Առաջին ատյանի դատարանը, վերոնշյալ արարքի համար պատիժ նշանակելիս, արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Տիգրանյանը դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար, այն է՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով՝ երկու դրվագով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ՝ *նշանակվել է տուգանք՝ 60.000 ՀՀ դրամի չափով*²:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է, որ ամբաստանյալ Ա.Տիգրանյանն իրեն վերագրված արարքը կատարել է 2018 թվականի մայիսի 13-ին, իսկ Համաներման մասին օրենքում թվարկված հոդվածների շարքում, որոնց դեպքում համաներման ակտի կիրառումը բացառվում է, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը բացակայում է, այսինքն՝ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ համաներման կիրառումը սահմանափակված չէ: Բացի այդ, քրեական գործի նյութերի, մասնավորապես Ա.Տիգրանյանի վերաբերյալ դատվածության տեղեկանքի համաձայն՝ բացակայում են նաև Համաներման մասին օրենքով նախատեսված այն սահմանափակումները, որոնք կարող էին արգելք լինել ամբաստանյալի նկատմամբ վերոնշյալ օրենքը կիրառելու համար³:

ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի՝ 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 6/7-3726 գրության համաձայն՝ Ա.Տիգրանյանը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով նշանակված պատժի կրումից ազատվել է 2018 թվականի հունիսի 11-ին⁴:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետի՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ի թիվ Ե/Պ-2-770 գրության համաձայն՝ Ա.Տիգրանյանը 2018 թվականի մարտի 15-ին ներկայացել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Երևանի երրորդ բաժին և վերցվել է հաշվառման: Դատապարտյալն իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելու անդորրագրի բնօրինակը պրոբացիոն ծառայություն է ներկայացրել 2018 թվականի հունիսի 11-ին և նույն օրը հանվել է հաշվառումից՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով սահմանված 60.000 ՀՀ դրամ տուգանքը փաստացի վճարելու հիմքով¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման մասին օրենքի կիրառման արգելքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ: Այսպես՝ ըստ գործի փաստական տվյալների՝ Ա.Տիգրանյանը նախկինում՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով դատապարտվել է տուգանքի՝ 60.000 ՀՀ դրամի չափով: Նշված դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 26-ին: Դատապարտյալը դատարանի դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ վճարել է 2018 թվականի հունիսի 1-ին, վճարման անդորրագրի բնօրինակը պրոբացիայի ծառայություն է ներկայացրել 2018 թվականի հունիսի 11-ին և նույն օրը տուգանքը փաստացի վճարելու հիմքով հանվել հաշվառումից: Սույն գործով մեղսագրվող հանցանքն Ա.Տիգրանյանը կատարել է 2018 թվականի մայիսի 13-ին:

Այլ կերպ՝ Ա.Տիգրանյանը, մինչև նշանակված տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելը՝ 2018 թվականի հունիսի 1-ը, հանդիսացել է պատիժը կրող անձ, մինչդեռ իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը վերջինս կատարել էր 2018 թվականի մայիսի 13-ին, այսինքն՝ տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու ընթացքում: Ուստի, վերոշարադրյալից բխում է, որ Ա.Տիգրանյանի նկատմամբ առկա է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ համաներման ակտի կիրառումը բացառող հանգամանք:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ կիրառել է Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի դրույթը, նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցրել է և քրեական գործի վարույթը կարճել՝ պատշաճ իրավական գնահատականի չարժանացնելով գործում առկա և սույն որոշմամբ մեջբերված փաստական տվյալների համակցությունը: Արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցում:

¹ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

17. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 13-16-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի կիրառման արգելքի բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է և հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ Համաներման մասին օրենքը կիրառելու պայմաններում անդրադարձ չի կատարել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Տիգրանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննության առնի ամբաստանյալի ներկայացրած վերաքննիչ բողոքը և դրա արդյունքում հանգի համապատասխան հետևություն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ անհրաժեշտ է որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արիգ Սամվելի Տիգրանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արիգ Սամվելի Տիգրանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ԵԴ/0501/01/18

1. Ծանոթանալով ամբաստանյալ Արիգ Սամվելի Տիգրանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքին, գործի նյութերին և սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշմանը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարանի որոշում)՝ սույն հատուկ կարծիքով հայտնում եմ իմ անհամաձայնությունը Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասում առկա որոշ եզրահանգումների և եզրափակիչ մասի հետ:

2. Վճռաբեկ դատարանի որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնվել առ այն, որ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից և տուգանք պատժատեսակի կրումից անձն ազատվում է գումարն ամբողջությամբ վճարելուց հետո, իսկ քանի դեռ այն չի վճարվել ամբողջությամբ, դատապարտյալը շարունակում է գտնվել պատժի կրման ընթացքում: Եվ, ըստ այդմ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների մեծամասնությունը գտել է, որ սույն գործով Ա.Տիգրանյանը, մինչև նախորդ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով նշանակված տուգանքի գումարն ամբողջությամբ վճարելը՝ 2018 թվականի հունիսի 1-ը, հանդիսացել է պատիժը կրող անձ, մինչդեռ սույն գործով իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքը վերջինս կատարել է 2018 թվականի մայիսի 13-ին, այսինքն՝ տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու ընթացքում: Ուստի, ըստ Վճռաբեկ դատարանի որոշման, Ա.Տիգրանյանի նկատմամբ առկա է «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ համաներման ակտի կիրառումը բացառող հանգամանք:

3. Բարձր գնահատելով Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների մեծամասնության կողմից արտահայտված դիրքորոշումը, այնուամենայնիվ, սույն հատուկ կարծիքով հայտնում եմ դրա հետ իմ

անհամաձայնությունը հետևյալ պատճառաբանությամբ.

4. Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված դեպքերի) այն անձանց նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կալանավորման տակ գտնվելու կամ պարիժը կրելու ընթացքում կրկին դիտարկյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կալանավորման տակ գտնվելու կամ պարիժը կրելու ընթացքում կրկին դիտարկյալ հանցագործություն կատարելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ «Պարիժի տեսակներն են՝

- 1) տուգանքը.
- 2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը.
- 3) հանրային աշխատանքները.
- 4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը.
- 4.1) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը.
- 5) գույքի բռնագրավումը.
- (...)
- 7) կալանքը.
- 8) կարգապահական գումարտակում պահելը.
- 9) ազատագրվումը որոշակի ժամկետով.
- 10) ցմահ ազատագրվումը»:

5. Պատիժը, որպես պետական հարկադրանքի միջոց, արտահայտվում է հանցագործություն կատարած անձին որևէ իրավունքից կամ ազատությունից օրենքով նախատեսված կարգով զրկելով կամ դրանք սահմանափակելով:

6. Նախ և առաջ համաձայն չեմ պատժի կրման սկիզբը դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից հաշվելու մոտեցմանն առհասարակ այն հիմնավորմամբ, որ պատժի կրումը ենթադրում է դատապարտյալին իրավունքներից կամ ազատություններից փաստացի զրկում կամ դրանց սահմանափակում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրինական ուժի մեջ

մերած դատական որոշումը կատարման է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաքննիչ կամ վճռարեկ սպայանից գործը վերադարձվելուց 3 օր հետո»: Նշված դրույթից հետևում է, որ պատիժը կրելու գործընթացը կարող է սկսվել միայն դատական ակտը կատարման հանձնելու, համապատասխան մարմինների կողմից պատժի կատարմանն ուղղված գործողություններ կատարելուց հետո: Ընդ որում, պրակտիկայում նշված ժամանակահատվածը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված դատական ակտը բողոքարկված լինելու հանգամանքով: Օրինակ՝ ազատության մեջ գտնվող և որոշակի ժամկետով ազատագրված դատապարտված անձը դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո սկսում է պատիժ կրել միայն այն ժամանակ, երբ վերը թվարկված գործողություններից հետո փաստացի վերցվում է արգելանքի: Կարծում եմ, անվիճելի է, որ բերված օրինակում դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատական ակտի փաստացի կատարման ժամանակահատվածը չի կարող ներառվել պատիժը կրելու ժամկետի մեջ: Հետևաբար, պատժի կրման գործընթացը սկսված ազդարարելու համար բավարար չէ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը, այլ անհրաժեշտ է դրա փաստացի կատարման, և ըստ այդմ՝ անձի կողմից որոշակի զրկանքներ կրելու, նրան իրավունքներից կամ ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակված լինելու փաստ:

Տուգանք պատժատեսակի դեպքում, կարծում եմ, նույնպես դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքն ինքնին անձի որևէ իրավունք կամ ազատություն չի սահմանափակում, նա դեռևս որևէ զրկանք չի կրում և նրա նկատմամբ որևէ հարկադրանք չի կիրառվում:

7. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներին, կցանկանայի նշել, որ չնայած դրանց կրման ձևերն ու կատարման ընթացակարգերն էապես տարբեր են և նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ, այնուամենայնիվ, թվարկված բոլոր պատժատեսակները, իմ կարծիքով, կարելի է պայմանականորեն դասակարգել երկու խմբի՝ առաջին խմբում ներառելով նրանք, որոնց բնորոշ է «ժամանակային» չափանիշը՝ որոնք որոշվում և նշանակվում են հստակ ժամկետներով, իսկ երկրորդ խմբում ներառելով այն պատժատեսակները, որոնք չեն որոշվում ժամկետներով և որոնց կատարման ընթացքը ժամանակի մեջ «չափվել» չի կարող:

Այսպես՝ «ցմահ ազատազրկումը», «ազատազրկումը որոշակի ժամկետով», «զինվորական ծառայության մեջ սահմանափակումը», «որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը» «կալանքը», «հանրային աշխատանքները» պատժատեսակները որոշվում են համապատասխանաբար

տարիներով, ամիսներով, օրերով կամ ժամերով: Նշված պատիժներին բնորոշ է տևականությունը՝ որոշակի ժամկետների սահմաններում: Նշված պատիժների կատարման ընթացքում դատապարտյալը գրկվում է որոշ իրավունքներից կամ ազատություններից կամ դրանք սահմանափակվում են՝ հստակ որոշված ժամանակահատվածով: Թվարկված բոլոր դեպքերում պատիժը կրելու գործընթացն սկսվում է անձի կողմից գրկանքները կրելու պահից, ընթանում է անընդմեջ կամ տևական ժամանակ և ավարտվում որոշված ժամկետը լրանալուն պես: Այլ կերպ ասած՝ նման պատժատեսակների կրումը ժամանակի ընթացքում ունի հստակ որոշելի սկիզբ և ավարտ:

Մինչդեռ «*տուգանքը*», «*հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը*» և «*գույքի բռնագրավումը*» պատժատեսակների կատարումը, որոնց կիրառման դեպքում իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված գրկումը կամ դրանց սահմանափակումը չունի ժամանակային արտահայտություն՝ չի որոշվում ժամկետներով և չունի անընդմեջ կամ տևող բնույթ, որպես կանոն իրականացվում է մեկանգամյա գործողությամբ:

7.1. Հարկ են համարում նաև նշել, որ առաջին խմբում ներառված պատժատեսակները կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու դեպքում համաներման վերոնշյալ արգելքի կիրառումը վիճահարույց չէ:

Այլ է իրավիճակը պատժատեսակների մյուս խմբի դեպքում: Նման պատժատեսակների, այդ թվում նաև՝ տուգանքի կիրառման դեպքում, հնարավոր չէ փաստել, որ անձը որոշակի ժամանակահատվածի ընթացքում անընդմեջ կամ տևական ժամանակ գտնվում է պետական հարկադրանքի **անմիջական** ներգործության ներքո:

Հակառակ մեկնաբանության դեպքում ստացվում է, որ «*գույքի բռնագրավումը*» կամ «*հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը*» պատիժների նշանակման դեպքում դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անձը սկսում է պատիժ կրել¹: Եվ եթե տուգանքի վճարումը որոշակիորեն կապված է անձի կամքից, ապա թվարկված դեպքերում պատժի կատարումը կախված է այլ մարմինների հայեցողությունից: Ստացվում է, որ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անձն անմիջապես հայտնվում է «պատիժ կրող» անձի կարգավիճակում, անորոշ ժամկետով, պատկերացում չունենալով, թե երբ է ավարտվելու պատժի կրման գործընթացը:

8. «*Տուգանք*» պատժատեսակի կիրառման դեպքում հանցագործություն կատարած անձին իրավունքներից գրկումը կամ դրանց սահմանա-

¹ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետում առկա ձևակերպումը, կարծում են, վերաբերելի է ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժներին, քանի որ նշված օրենքը դրանք չի տարանջատում:

փակումը, որպես կանոն, ենթադրում է մեկանգամյա գործողությամբ արտահայտվող հարկադրանքի միջոց, երբ դատապարտյալը վճարում է որպես տուգանք որոշված գումարը: Այլ կերպ, տվյալ պատժատեսակի դեպքում անձի կողմից պատիժը կրելու գործընթացը սկսվում և ավարտվում է տուգանքի գումարը վճարելու պահին: Իսկ այն դեպքերում, երբ դատապարտյալն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, և դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում, ապա այս դեպքում ևս, կարծում եմ, պատիժը կրելու գործընթացը բովանդակային փոփոխության չի ենթարկվում, այն դարձյալ սահմանափակված է տուգանքի գումարը վճարելու պահով, քանի որ մնացած ժամանակահատվածում դատապարտյալի նկատմամբ որևէ անմիջական տևական հարկադրանքի միջոց չի կիրառվում:

9. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատապարտյալը պարտավոր է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատական ակտով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով տարածքային մարմին: Չնայած նշված կարգավորմանը, նույն հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ մասերը պարտավորեցնում են պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների աշխատակիցներին, որոնց վրա դրված է տուգանքի կատարումն ապահովելու պարտականությունը, ձեռնարկել մի շարք գործողություններ՝ պարզել դատապարտյալի գտնվելու վայրը, նրա հետ կապ հաստատել, պատշաճ ծանուցել տարածքային մարմին ներկայանալու համար, կազմել անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնել հաշվառման քարտ, ինչպես նաև՝ **պարզաբանել տուգանքի ձևով նշանակված պատիժը կրելու կարգն ու պայմանները**: Գրեթե նույնպիսի իրավակարգավորում է պարունակում նաև «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 395-Ն որոշման հավելվածը: Վճռաբեկ դատարանի որոշման մեջ վկայակոչված այս իրավական կարգավորումներով, իմ կարծիքով, նույնպես հիմնավորվում է, որ պրոբացիայի ծառայություն ներկայանալու պահին դատապարտյալը դեռևս պատիժ չի կրում: Հակառակ պարագայում, կարծում եմ, առարկայագուրկ է դառնում պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների վրա՝ **պատիժը կրելու ընթացքում գտնվող անձին պատիժը կրելու կարգն ու պայմանները պարզաբանելու** պարտականություն դնելը:

10. Անդրադառնալով Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված «կարող են մեղադրվել կամ մեղադրվում

են պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար» պայմանին՝ հարկ են համարում նշել հետևյալը.

Իմ կարծիքով, օրենսդիրը, սահմանելով համաներման ակտի կիրառման վերոնշյալ արգելքը, նպատակ է ունեցել բացառել մարդասիրական բնույթ ունեցող Համաներման մասին օրենքի կիրառումն այն անձանց նկատմամբ, ովքեր գտնվելով պետական հարկադրանքի **անմիջական** ներգործության տակ, կրկին դիտավորյալ հանցագործություն են կատարում: Այլ կերպ, օրենսդիրը բացառել է համաներման կիրառումն այն անձի նկատմամբ, ով նախկինում կատարած հանցագործության համար գտնվելով պետական հարկադրանքի միջոցի **անմիջական** ներգործության ներքո՝ պատիժ կրելու ընթացքում, կրկին դիտավորյալ հանցագործություն է կատարում:

Դրա մասին է վկայում, կարծում են, նաև այն, որ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետում «պատիժը կրելու ընթացքում» կատարված հանցագործության դեպքերին իրավական հետևանքների առումով հավասարեցված են նաև «կալանավորման տակ գրնվելու ընթացքում» կատարված հանցագործության դեպքերը: Այսինքն, օրենսդիրը կարևորում է ոչ թե սուկ դատապարտված լինելու և չկրած պատիժ ունենալու, այլ հարկադրանքի միջոցի **անմիջական** ներգործության տակ գտնվելու հանգամանքը:

Ուստի, կարծում են, Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի իմաստով «պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու» ձևակերպումը վերաբերելի է միայն որոշակի ժամկետով հարկադրանքի միջոցի **անմիջական** ներգործություն պահանջող պատիժների պարագայում:

11. Ի վերջո, կարծում են, Համաներման մասին օրենքի մեջ օգտագործված՝ *պատիժը կրելու ընթացքում գրնվելու*, և առհասարակ՝ *չկրած պատիժ ունենալու* հասկացությունները նույն բովանդակությունը չեն կրում, երկրորդն իր ծավալով ավելի լայն է: Պատիժը կրելու ընթացքում գտնվող բոլոր անձինք ունեն չկրած պատիժ, սակայն չկրած պատիժ ունեցող ոչ բոլոր դատապարտյալներն են գտնվում պատիժը կրելու ընթացքում: Իմ կարծիքով, Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշման արդյունքում նշված հասկացությունները նույնացվել են և Համաներման մասին օրենքի դրույթին տրվել է տարածական մեկնաբանություն:

12. Վերոգրյալի հիման վրա, համակարծիք չեն Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված եզրահանգմանն առ այն, որ տուգանքի ձևով նշանակված պատժի կրման ընթացքը սկսվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից և գտնում են, որ տուգանք պատ-

ժատեակի պարագայում Համաներման մասին օրենքի քննարկվող արգելքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ համաներման կիրառման համար:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Ա.Տիգրանյանը նախկինում՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 26-ի դատավճռով դատապարտվել է տուգանքի՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

- ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետի՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ի թիվ Ե/Պ-2-770 գրության համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 13-ին Ա.Տիգրանյանը կատարել է 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի վճարում, իսկ 2018 թվականի հունիսի 1-ին՝ 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամի վճարում: Այսինքն, դատապարտյալը դատարանի դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ վճարել է 2018 թվականի հունիսի 1-ին:

- Սույն գործով Ա.Տիգրանյանին մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքն Ա.Տիգրանյանը կատարել է 2018 թվականի մայիսի 13-ին:

- Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի համար պատիժ նշանակելիս, արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Տիգրանյանը դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար:

- Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ փաստել է, որ ըստ քրեական գործի նյութերի՝ բացակայում են Համաներման մասին օրենքով նախատեսված այն սահմանափակումները, որոնք կարող էին արգելք լինել ամբաստանյալի նկատմամբ վերոնշյալ օրենքը կիրառելու համար:

14. Վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո վճռարեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ գտնում են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործություն կատարելու պահին Ա.Տիգրանյանը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետի իմաստով պատիժը կրելու ընթացքում չի գտնվել:

Հետևապես, Արիգ Տիգրանյանի նկատմամբ առկա չէ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արգելքը, և Վերաքննիչ դատարանը նշված օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ ամբաստանյալ Ա.Տիգրանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելով, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճելով, թույլ չի տվել Համաներման մասին օրենքի պահանջների խախտում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361¹-րդ, 415-րդ և 419-րդ հոդվածներով՝ գտնում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժվեր, ամբաստանյալ Արիգ Սամվելի Տիգրանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը թողնվեր օրինական ուժի մեջ:

Դատավոր՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

51. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ1/0078/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
Է.ՇԱՀՈՒՄՅԱՆԻ
Ա.ՕՀԱՆՅԱՆԻ
Ա.ԱԶԱՐՅԱՆԻ

ամբաստանյալներ՝

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Արմեն Ռուբենի Օհանյանի և Արմեն Յուրիի Ազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 օգոստոսի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ՝ ՀՀ զինվորական դատախազ Վ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի մայիսի 25-ին ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90755417 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի հուլիսի 18-ի որոշումներով Արմեն Օհանյանը և Արմեն Ազարյանը ներգրավվել են որպես մեղադրյալ-

ներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2017 թվականի նոյեմբերի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 17-ի դատավճռով Ա.Օհանյանը և Ա.Ազարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել են անմեղ և արդարացվել:

3. Լոռու կայագործի զինվորական դատախազության դատախազ Է.Շահումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մայիսի 17-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Վ.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Ազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն/ա, հանդիսանալով պեյր՝ ՀՀ ՊՆ 51191 զորամասի 1-ին ՀԳՄ-ի 1-ին վաշտի 2-րդ դասակի հրամանատարի պաշտոնակատար, կոչումով ավագ սերժանտ, 2016 թվականի նոյեմբերին՝ քննությամբ չպարզված օրը, ժամը 06:50-ին, զորամասի շարահրապարակում, ֆիզպարության ժամանակ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ շարքից ուշանալու պատճառով բռնություն է գործադրել իր նկատմամբ սրորադաս (ենթակա) հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Կարոյի Բաղդասարյանի նկատմամբ՝ ձեռքով հարվածել է վերջինիս պարանոցին՝ պատճառելով ֆիզիկական ցավ (...)»¹:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 177:

5.1. Ա.Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա, հանդիսանալով պետք է ՀՀ ՊՆ 51191 զորամասի 1-ին գումարտակի 1-ին վաշտի հրամանատար, կոչումով կապիտան, 2016 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում քննությանը չպարզված օրը, ժամը 08:00-ի սահմաններում, զորամասի շարահրապարակում, շարային սրուգալետի ժամանակ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ համազգեստի կրման կանոնները խախտելու և ոչ պատշաճ արտաքին րեսք ունենալու պարճառով բռնություն է գործադրել իր նկատմամբ սրորադաս (ենթակա) հանդիսացող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Կարոյի Բաղասարյանի նկատմամբ՝ ուրքով հարվածել է վերջինիս ուրքին՝ պարճառելով ֆիզիկական ցավ (...)»²:

6. Առաջին առյանի դատարանն իր դատական ակտում արճանագրել է հետևյալը. «(...) [Ա]յացույցների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքում դատարանը գտնում է, որ բուժողի կարգազանց վարքագծով պայմանավորված ամբաստանյալ Ա.Օհանյանը ուրքով հարվածել է վերջինիս ուրքին՝ ի ցույց դնելով պարտված ու ցեխոտ կոշիկները, իսկ ամբաստանյալ Ա.Ազարյանը ձեռքի ափով հարվածել է ծոճրակին՝ պահանջելով շարք կանգնել: Նշված հարվածներից ցավ զգալու կապակցությամբ բուժողը փարաբնույթ ցուցմունքներ է տվել, իսկ դատարանում պնդել, որ հարվածները թույլ են եղել, ինքը դրանից չի վրդովվել, քանզի իրեն կարգի հրավիրելու նպատակ են հետապնդել ամբաստանյալները, որոնց հետ հաշտ է, բողոք կամ պահանջ չունի ու չի ուզում, որ պարճի ենթարկվեն:

(...)

Այսպիսով, քրեական գորճի փաստական տվյալների համադրված վերլուծության ու գնահատման արդյունքները հիմք են տալիս արճանագրելու, որ Արմեն Աուրենի Օհանյանի, Արմեն Յուրիի Ազարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայության մասին նախաքննական մարմնի հետևությունը հիմնավոր չէ և այդ կապակցությամբ թույլ է տրվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, քանզի ամբաստանյալների փաստական գորճողությունները չեն համարվում հանցագորճություն, քանի որ թեև ձևականորեն պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հարկանիշներ, սակայն նվազ կարևորության պարճառով հասարակական վրանգավորություն չեն ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անճին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի

¹ Տե՛ս քրեական գորճ, հատոր 1-ին, թերթեր 373-374:

պարճատվել և չէր կարող պարճատվել: Այս պայմաններում դատարանը գրնում է, որ ամբաստանյալների արարքում բացակայում է հանցակազմը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 366-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով արդարացման դատավճռի կայացման պայման է: Ընդ որում, այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով պետք է հաստատագրել հանցակազմի բացակայության մասին, թիում է դատական պրակտիկայից (...)»¹:

7. Վերաքննիչ դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գործով ձեռք բերված ապացույցներով, մասնավորապես ամբաստանյալներ Արմեն Օհանյանի, Արմեն Ազարյանի, Կոմոդ Ե.Բաղդասարյանի, վկաներ Ս.Ազատյանի, Ա.Ալեքսանյանի, Ե.Մանգասարյանի ցուցմունքներով, հաստատվում է Արմեն Օհանյանի կողմից Կոմոդ Եվեր Բաղդասարյանի ուրբին և Արմեն Ազարյանի կողմից վերջինի ծոծրակին հարվածելու հանգամանքները:

Միևնույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալների փաստական գործողությունները թեև ձևականորեն պարունակել են վերոնշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հարկանիշներ, սակայն իրենց նվազ կարևորության պարճատով հասարակական վրանգավորություն չեն ներկայացրել, այսինքն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետությանը կամ հասարակությանն էական վնաս չեն պարճատել և չէին էլ կարող պարճատել:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ամբաստանյալների դիմավորությունն ուղղված է եղել ոչ թե Կոմոդ Ե.Բաղդասարյանի նկատմամբ բռնություն գործադրելուն, այլ վերջինին կարգի հրավիրելուն, ինչը հաստատվում է նաև Կոմոդի ցուցմունքներով:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Արմեն Օհանյանի և Արմեն Ազարյանի արարքները չնայած ձևականորեն պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հարկանիշներ, սակայն իրենց նվազ կարևորության պարճատով հասարակական վրանգավորություն չեն ներկայացնում, ուստի վերաքննիչ բողոքը բավարարելու և Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելու հիմքերը բացակայում են (...)»²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 72-73:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթեր 49-50:

8. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Մասնավորապես, ամբաստանյալներ Ա.Օհանյանը և Ա.Ազարյանը, ենթակա անձնակազմին որպես պետ օրինակ ծառայելու, վերջինիս մոտ զինվորական պարտքի գիտակցում սերմանելու փոխարեն, գերադասել են բռնություն կիրառել՝ իրական հնարավորություն ունենալով ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 23-րդ հոդվածով նախատեսված կարգով կարգազանց զինծառայողի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ:

Բողոքի հեղինակը, վերլուծելով Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածները, փաստել է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները:

9. Բողոքաբերը փաստել է նաև, որ ստորադաս դատարանները Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի կատարած արարքները նվազ կարևոր դիտելիս հաշվի չեն առել, որ վերջիններիս արարքներում առկա է հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք: Բացի այդ, դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, այն, որ ամբաստանյալները, լինելով պետ, բռնություն են գործադրել իրենց ենթակայի նկատմամբ: Իրավական գնահատականի չի արժանացվել նաև հանցավորների հոգեբանական վերաբերմունքն իրենց արարքների և դրանց հետևանքների նկատմամբ, մասնավորապես՝ ամբաստանյալները գործել են ուղղակի դիտավորությամբ՝ գիտակցել են իրենց կատարած արարքների հանրային վտանգավորությունը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք

ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ Ա.Ազարյանի և Ա.Օհանյանի գործողությունները հանցագործություն չեն համարվում, քանի որ նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պարասխանաարվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կարարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հարկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վրանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:

2. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հարկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վրանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել»:

Մեջբերված նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Եսրեկ Արմենսկյանի գործով որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «(...) [Հ]անրային վրանգավորությունը հանդիսանում է հանցագործության պարարտիքի հարկանիշներից մեկը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը հանցագործություն է համարում միայն **հանրային (հասարակական) վրանգավորության որոշակի ստրիճան ունեցող արարքը:**

Քրեական իրավունքը պաշտպանում է հասարակական հարաբերությունները վերջիններիս էական վնաս պատճառելուց: Ուստի որևէ արարքի հարկանիշների միայն ձևական համընկնումը քրեական օրենքով արգելված արարքի հարկանիշների հետ չի կարող հանգեցնել այդ արարքը հանցավոր ճանաչելուն, եթե քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին դրանով էական վնաս չի պատճառվել և չէր կարող պատճառվել:

(...)

Այդ համարեքսպում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը յուրաքանչյուր գործով որոշվում է ինքնուրույն, սակայն միևնույն ժամանակ այդ հարցի լուծման հիմքում պետք է դրվեն ենթադրյալ հանցագործության որակական և քանակական կողմերը բնութագրող գործոնները (մեղքի ձև և տեսակ, հանցագործության նպատակ ու շարժառիթ, հանցագործությամբ պատճառված վնասի չափ,

հանցագործության կատարման եղանակ և այլն): Ընդ որում, միայն դրանց համակցությունն է հնարավորություն տալիս որոշելու արարքի նվազ կարևոր լինելը կամ չլինելը:

(...) Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ արարքի նվազ կարևոր լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նվազ կարևոր կարող է լինել, որպես կանոն, դիրավորյալ արարքը, ընդ որում, ուղղակի դիրավորությամբ կատարված: Արարքը կատարողի գիրակցությունը և կամքը պետք է ուղղված լինի հասնելու հենց այն արդյունքին, որը հանդիսանում է կատարողի գործողության կամ անգործության հետևանք: (...)»¹:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար՝ «Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ»:

Մեջբերված նորմը պատասխանատվություն է սահմանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող հանցանքներից մեկի՝ պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրա սպառնալիքի համար, որպիսի արարքը ոչ միայն ոտնձգում է անձի կյանքի և առողջության դեմ, այլև խախտում զինվորական կանոնագրքերով սահմանված ենթակայության կարգը, վկայում զինվորական ծառայության նկատմամբ հանցանք կատարած անձի ունեցած անբարեխիղճ վերաբերմունքի մասին, ինչն էլ իր հերթին բացասական ազդեցություն է գործում զինվորական կարգապահության, ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության վրա²:

Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, *հարկապես պետերի (հրամանատարների)* պարտականությունն է³: Մասնավորապես, «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածների, «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ

¹ Տե՛ս 'u Վճռաբեկ դատարանի՝ Նսրեկ Արմենակյանի վերաբերյալ գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/02311/01/14 որոշման 14-րդ կետը:

² Տե՛ս 'u, mutatis mutandis, Սարգիս Խաչատրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշումը:

³ Տե՛ս 'u Վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Պարսյանի վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԵԴ/0132/01/13 որոշման 15-րդ կետը, Նիկոլայ Չաբմազյանի վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՆԴ/0060/01/13 որոշման 17-րդ կետը:

օրենքի 4-րդ հոդվածի 2-4-րդ մասերի ընդհանուր վերլուծությունից բխում է, որ զինվորական ամուր կարգապահությունը և անձնակազմի բարոյահոգեբանական բարձր մակարդակն ապահովելիս զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները՝ ղեկավարվելով միմիայն օրենքներով և զինվորական կանոնագրքերի պահանջներով: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ անթույլատրելի է վերոնշյալ նպատակներին հասնելը զինվորական կանոնագրքերով չսախատեսված եղանակներով, հատկապես՝ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելու միջոցով, ինչը լուրջ ոտնձգություն է զինվորական կանոնագրքերով սահմանված զինվորական ենթակայության կարգի նկատմամբ:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պետ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ շարքից ուշանալու պատճառով, բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս (ենթակա) հանդիսացող շարքային Ն.Բաղդասարյանի նկատմամբ, այն է՝ ձեռքով հարվածել է վերջինիս պարանոցին՝ պատճառելով ֆիզիկական ցավ¹:

Ա.Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պետ, գորամասի շարահրապարակում՝ շարային ստուգատեսի ժամանակ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ համազգեստի կրման կանոնները խախտելու և ոչ պատշաճ արտաքին տեսք ունենալու պատճառով, բռնություն է գործադրել իր նկատմամբ ստորադաս (ենթակա) հանդիսացող շարքային Ն.Բաղդասարյանի նկատմամբ, այն է՝ ոտքով հարվածել է վերջինիս ոտքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ²:

Առաջին ատյանի դատարանն Ա.Ազարյանին և Ա.Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքներում ճանաչել է անմեղ և արդարացրել՝ արձանագրելով, որ ամբաստանյալների փաստական գործողությունները թեև ձևականորեն պարունակում են հանցակազմի հատկանիշներ, սակայն նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ հարվածներից ցավ զգալու կապակցությամբ տուժողը տարաբնույթ ցուցմունքներ է տվել, իսկ դատարանում պնդել է, որ հարվածները թույլ են եղել, ինքը

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

դրանից չի վրդովվել, քանզի իրեն կարգի հրավիրելու նպատակ են հետապնդել¹:

Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով ստորադաս դատարանի դատական ակտը, արձանագրել է, որ ամբաստանյալների դիտավորությունն ուղղված է եղել ոչ թե տուժող Ն.Բաղդասարյանի նկատմամբ բռնություն գործադրելուն, այլ նրան կարգի հրավիրելուն, ինչը հաստատվում է նաև տուժողի ցուցմունքներով²:

14. Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից բխում է, որ ստորադաս դատարաններն ըստ էության հաստատված են համարել այն փաստը, որ Ա.Ազարյանը և Ա.Օհանյանը զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն են գործադրել տուժող Ն.Բաղդասարյանի նկատմամբ, այսինքն՝ նրանց արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները փաստացի առկա են: Մինևույն ժամանակ, դատարաններն արձանագրել են, որ վերոնշյալ արարքները նվազ կարևորության են, հետևաբար հանցագործություն չեն համարվում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ արտահայտված և սույն որոշման 11-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները, դրանք համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտված՝ սույն որոշման 12-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների հետ, արձանագրում է, որ ամբաստանյալներին մեղսագրվող արարքների նվազ կարևորության վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատողությունները հիմնավորված և պատճառաբանված չեն: Սա նաև վորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի դեպքում կատարված արարքը հանցագործություն չի համարվում, քանի որ հանցագործության պարտադիր հատկանիշներից մեկը՝ հանրային վտանգավորությունը, բացակայում է, թեպետ փաստացի կատարված արարքում հանցակազմի բոլոր հատկանիշները ձևականորեն առկա են: Այլ կերպ՝ կատարված արարքն այնքան նվազ կարևոր է (ոչ վտանգավոր), որ ունակ չէ էական վնաս պատճառելու օրենքով պաշտպանվող բարիքներին, իսկ այդպիսին լինելը որոշվում է արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա ազդող գործոնների համակողմանի վերլուծության արդյունքում (խախտվող հասարակական հարաբերությունների բնույթ, մեղքի ձև, նպատակ և շարժառիթ, պատճառված վնասի չափ, հանցագործության եղանակ և այլն):

Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարանները որևէ կերպ չեն պատճառաբանել, թե ինչ հանգամանքների գնահատման արդյունքում են

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

եկել եզրահանգման, որ կատարված արարքները հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում:

14.1. Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել ամբաստանյալներին մեղսագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը, հանցանքի կատարման հանգամանքները:

Այսպես՝ սույն գործով Ա.Ազարյանին և Ա.Օհանյանին մեղսագրվում է զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող արարքներից մեկը՝ պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնություն գործադրելը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պետը, պատասխանատու լինելով զինվորական կարգապահության, զինվորական քաղաքավարության կանոնները պահպանելու, ինչպես նաև ենթակաների շրջանում պատշաճ բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու համար, պարտավոր է իր այդ պարտականությունները կատարելիս առաջնորդվել միայն օրենքներով և զինվորական կանոնագրքերի պահանջներով: Անթույլատրելի է վերոնշյալ նպատակներին հասնելու համար ստորադասի նկատմամբ բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումը՝ սույնիսկ եթե դա կատարվել է վերջինին կարգի հրավիրելու նպատակով: Զինվորական ծառայության ընթացքում բռնությամբ զուգորդված արարքներն ինքնին հանրային բարձր վտանգավորություն են ներկայացնում, քանի որ խարխալում են զինվորական ենթակայության սահմանված կարգը, ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտը, բացի այդ երբեմն կարող են ավելի ծանր հետևանքների հանգեցնել:

Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ մեղսագրվող արարքները կատարվել են զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ, ինչն օրենսդրորեն գնահատված է որպես առավել բարձր վտանգավորություն ներկայացնող: Այլ կերպ՝ Ա.Ազարյանը և Ա.Օհանյանը, հանդես գալով որպես պետ և պարտավոր լինելով զինծառայող Ն.Բաղդասարյանի պատշաճ վարքագիծն ապահովելու համար ձեռնարկել օրենքով սահմանված համապատասխան միջոցներ, գերադասել են վերջինիս նկատմամբ բռնություն գործադրել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից ամբաստանյալների արարքները նվազ կարևոր գնահատելիս վկայակոչված այն փաստարկները, որ տուժողը կատարվածից չի վրդովվել, քանի որ դրանք իրեն կարգի հրավիրելու նպատակ են հետապնդել, և որ ամբաստանյալների դիտավորությունն ուղղված է եղել ոչ թե տուժող Ն.Բաղդասարյանի նկատմամբ բռնություն գործադրելուն, այլ նրան կարգի հրավիրելուն,

հիմնավոր չեն, ավելին՝ որևէ կերպ չէին կարող հանգեցնել կատարված արարքների հանրային վտանգավորության չեզոքացման:

15. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել հանցագործության հանգամանքներից այն, որ Ա.Օհանյանը հանցավոր արարքը կատարել է այլ զինծառայողների ներկայությամբ՝ գորամասի շարահրապարակում՝ շարային ստուգատեսի ժամանակ, ինչն էականորեն բարձրացնում է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը:

16. Այսպիսով, հիմք ընդունելով սույն որոշման 14-15-րդ կետերում կատարված վերլուծությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ Ա.Ազարյանի և Ա.Օհանյանի գործողությունները հանցագործություն չեն համարվում, քանի որ նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չեն ներկայացնում, հիմնավորված և պատճառաբանված չեն:

17. Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ և 358.1-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու հիմք են: Գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումներն ու արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հանգի համապատասխան հետևության:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ամբաստանյալներ Ա.Օհանյանի և Ա.Ազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Արմեն Ռուբենի Օհանյանի և Արմեն Յուրիի Ազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Արմեն Ռուբենի Օհանյանի և Արմեն Յուրիի Ազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

52. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0161/01/15

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահությանը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությանը՝
մասնակցությանը դատախազներ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Դ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Հ.ԵՆՈՔՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Հովհաննես Էդիկի Գևորգյանի և Հրաչյա Օսիկի Չանախյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83188113 քրեական գործը և նախաքննության կատարման համար ուղարկվել նույն մարմնի քննչական վարչություն:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Հրաչյա Չանախյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով:

2014 թվականի հունիսի 20-ին մեղադրյալ Հ.Չանախյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.1 2014 թվականի հուլիսի 4-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58209014 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2014 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ Հովհաննես Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 7-ի որոշումներով Հ.Չանախյանի և Հ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

1.2 2014 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ թիվ 83188113 քրեական գործը միացվել է 58209014 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 58209014 համարի ներքո:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի մայիսի 25-ի որոշումներով առաջադրված մեղադրանքները փոփոխվել են և նոր մեղադրանք է առաջադրվել Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2015 թվականի հունիսի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճռով Հ.Գևորգյանը ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել: Նույն դատավճռով Հ.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ: Հ.Գևորգյանի նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ 349.062.120 ՀՀ դրամից ոչ ավել գույքի բռնագրավմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Հ.Գևորգյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով:

Նույն դատավճռով Հ.Չանախյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել: Հ.Չանախյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

Մինևույն ժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը բավարարել են, և որոշվել է ամբաստանյալ Հ.Գևորգյանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 349.062.120 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, ամբաստանյալներ Հ.Գևորգյանից և Հ.Չանախյանից, հոգուտ ՀՀ պետական բյուջեի, համապարտության կարգով բռնագանձել 233.000.926 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել անփոփոխ: Ամբաստանյալներ Հ.Գևորգյանի և Հ.Չանախյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է և խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Հովհաննես Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, հանդիսանալով «Մշո-Լայֆ» ՍՊԸ հիմնադիրն ու փնօրենը, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում փաստացի ղեկավարելով այդ ընկերության գործունեությունը, 2012 թվականի փետրվարից մինչև 2014 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից իրականացված առևտրային գործունեության արդյունքում առաջացած պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, օրենսդրությամբ նախատեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում՝ 2012-2014թթ. ավելացված արժեքի հարկի, 2013 թվականի շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկ-

ներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ 349.062.120 ՀՀ դրամ հարկերը վճարելուց:

Բացի դրանից, Հովհաննես Գևորգյանը «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ի ծավալած գործունեության արդյունքում առաջացող պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, կազմակերպել է իր ծանոթ՝ Հրաչյա Օսիկի Չանախչյանի կողմից առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպության սրեղծումը և այդ կազմակերպության անունից առանց ապրանքների մատակարարման «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ին կեղծ փաստաթղթերի տրամադրումը:

Հովհաննես Գևորգյանի հանցակցությամբ 2013 թվականի ապրիլի 16-ին Հրաչյա Չանախչյանը հիմնադրել է «Չանախչյան» ՍՊ ընկերությունը, և էլեկտրոնային հարկային հաշիվներ ձևակերպելու համար անհրաժեշտ, հարկային մարմնի կողմից իրեն հարկացված «Այ-Դի» կարդացող սարքը տրվել է Հովհաննես Գևորգյանին, ով կազմակերպել է չարագլուխ անձի օժանդակությամբ տեխնիկական այդ սարքի գործադրմամբ, 2013-2014 թթ. ընթացքում «Չանախչյան» ՍՊԸ-ի անունից «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ին, ԱԱՀ-ն ներառյալ, 1.220.198.124 ՀՀ դրամ արժողության ապրանքներ իրացնելու վերաբերյալ 129 կեղծ էլեկտրոնային հաշիվներ դուրս գրելը: Նշված կեղծ փաստաթղթերի հիման վրա Հովհաննես Գևորգյանը «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության 2013 թվականի շահութահարկի և 2013-2014թթ. ԱԱՀ-ի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 233.000.926 ՀՀ դրամի հարկեր վճարելուց, իսկ վերջինի հանցակցությամբ իրականացված կեղծ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով պետությանը պարճատվել է նույնքան գումարի չափով գույքային վնաս:

Հանցավոր գործունեության իրականացման ընթացքում սրացված գույքի հանցավոր ծագումը, իրական բնույթը թաքցնելու նպատակով 2013 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի հունիսի 03-ն ընկած ժամանակահատվածում, «Հայրիզնեստանկ» ՓԲԸ Շենգավիթի մասնաճյուղում բացված «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ի բանկային հաշվից, նույն մասնաճյուղում սպասարկվող «Չանախչյան» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին, ապրանքներ ձեռք բերելու պատրվակով, մաս-մաս փոխանցվել է 1.423.011.587 ՀՀ դրամ, այդ թվում առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու և կեղծ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացած առանձնապես խոշոր չափերով հիշյալ գույքը՝ 582.063.046 ՀՀ դրամը: Նշված գումարը, փոխանցումներ կատարելու կամ դրան հաջորդող օրերին «Չանախչյան» ՍՊԸ-ի գործունեության համար անհրաժեշտ ծախսեր կատարելու կեղծ հիմնավորմամբ, Հրաչյա

Չանսահյանի կողմից կանխիկացվել և առձեռն փրվել է Հովհաննես Գևորգյանին»¹:

6. Նախաքննության մարմնի կողմից Հրաչյա Չանսահյանին ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա ծանոթի՝ Հովհաննես Էդիկի Գևորգյանի կազմակերպմամբ, կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու նպատակով իր կողմից սրեղծված առևտրային կազմակերպության անունից առանց սպրանքների մատակարարման փրամադրել է կեղծ փաստաթղթեր, որի հետևանքով պետությանը պարտավորվել է առանձնապես խոշոր վնաս, և օժանդակել է Հ. Գևորգյանին օրինականացնել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Այսպես.

Հովհաննես Գևորգյանը, հանդիսանալով «Մշո-Լայֆ» ՍՊԸ հիմնադիրն ու փոխնախագահը, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում փաստացի ղեկավարելով այդ ընկերության գործունեությունը, 2012 թվականի փետրվարից մինչև 2014 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից իրականացված առևտրային գործունեության արդյունքում առաջացած պարտադիր վճարներից խուսափելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում 2012-2014թթ. ավելացված արժեքի հարկի, 2013 թվականի շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված փյուջաներ և չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով 349.062.120 ՀՀ դրամ, հարկերը վճարելուց:

Բացի այդ, Հովհաննես Գևորգյանը «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ի ծավալած գործունեության արդյունքում առաջացող պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, կազմակերպել է իր ծանոթ՝ Հրաչյա Օսիկի Չանսահյանի կողմից առանց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպության սրեղծումը և այդ կազմակերպության անունից առանց սպրանքների մատակարարման «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ին կեղծ փաստաթղթերի փրամադրումը:

Հովհաննես Գևորգյանի հանցակցությամբ, 2013 թվականի ապրիլի 16-ին, Հրաչյա Չանսահյանը հիմնադրել է «Չանսահյան» ՍՊ ընկերությունը և էլեկտրոնային հարկային հաշիվներ ձևակերպելու համար անհրաժեշտ, հարկային մարմնի կողմից իրեն հատկացված «Այ-Դի» կարդացող սարքը փրվել է Հովհաննես Գևորգյանին, ով կազմակերպել է չարագված անձի օժանդակությամբ փրկանակական այդ սարքի գործադրմամբ, 2013-2014 թթ. ընթացքում «Չանսահյան» ՍՊԸ-ի անունից «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ին, ԱԱՀ-ն

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 79-83:

ներառյալ, 1.220.198.124 ՀՀ դրամ արժողության ապրանքներ իրացնելու վերաբերյալ 129 կեղծ էլեկտրոնային հաշիվներ դուրս գրելը: Նշված կեղծ փաստաթղթերի հիման վրա Հովհաննես Գևորգյանը «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության 2013 թվականի շահութահարկի և 2013-2014թթ. ԱԱՀ-ի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերի՝ 233.000.926 ՀՀ դրամի հարկեր վճարելուց, իսկ վերջինի հանցակցությամբ իրականացված կեղծ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով պետությանը պարտավորվել է նույնքան գումարի չափով գույքային վնաս:

Հանցավոր գործունեության իրականացման ընթացքում սրացված գույքի հանցավոր ծագումը, իրական բնույթը թաքցնելու նպատակով 2013 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի հունիսի 03-ն ընկած ժամանակահատվածում, «Հայրիզնեսթանկ» ՓԲԸ Շենգավիթի մասնաճյուղում բացված «Մշո-Լայֆ» ՍՊԸ-ի բանկային հաշվից, նույն մասնաճյուղում սպասարկվող «Չանսիսյան» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին, ապրանքներ ձեռք բերելու պարտավորվ, մաս-մաս փոխանցվել է 1.423.011.587 ՀՀ դրամ, այդ թվում առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու և կեղծ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացած առանձնապես խոշոր չափերով հիշյալ գույքը՝ 582.063.046 ՀՀ դրամը: Նշված գումարը, փոխանցումներ կատարելու կամ դրան հաջորդող օրերին «Չանսիսյան» ՍՊԸ-ի գործունեության համար անհրաժեշտ ծախսեր կատարելու կեղծ հիմնավորմամբ, Հրաչյա Չանսիսյանի կողմից կանխիկացվել և առձեռն տրվել է Հովհաննես Գևորգյանին¹:

7. Ամբաստանյալ Հրաչյա Չանսիսյանը նախաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ կատարել է անապրանք գործարքներ՝ «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրեն Հ.Գևորգյանի հետ, ում առաջարկով 2013 թվականի ապրիլի 16-ին հիմնադրել է «Չանսիսյան» ՍՊ ընկերությունը: «Չանսիսյան» և «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունների միջև ինքն ու Հովհաննեսը կնքել են պայմանագիր, թե իբր իր ընկերությունը նրա ընկերությանը մատակարարելու է ապրանքներ: Նշված ժամանակվանից մինչև 2014 թվականի մայիսը, բազմաթիվ դեպքերով, Հ.Գևորգյանն իր ընկերության հաշվին է փոխանցել տարբեր չափերի գումարներ, որպես փոխանցման հիմք նշելով, թե իբր «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունն իր ընկերությունից ձեռք է բերել ապրանքներ: Փոխանցված գումարները եղել են տարբեր չափերի՝ 30 միլիոն, 50 միլիոն, 70 միլիոն դրամ կամ ավելի քիչ չափով: Այդ գումարները, իր ընկերության հաշվին նստելու օրերին կամ էլ դրանց հաջորդող օրերին, կանխիկացրել է, ու

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 86-90:

Հովհաննեսի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, առձեռն տվել է վերջինիս: Գործը սկսելուց, Հովհաննեսն ասել է, որ իր գործողությունների համար իրեն գումար է տալու, սակայն ստույգ չափ կամ տոկոսավճար տալու շուրջ պայմանավորվածություն չի եղել, և յուրաքանչյուր դեպքում Հովհաննեսն իրեն տվել է տարբեր գումարներ՝ 100.000-200.000 դրամի չափով: «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունից իր ընկերության հաշվին փոխանցվել է մոտ մեկ միլիարդ դրամ, որն էլ ինքը կանխիկ ստացել է իր ընկերության հաշվեհամարից: Իր ստացած գումարները տվել է Հ.Գևորգյանին¹:

7.1 Վկա Ռազմիկ Գևորգյանը նախաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է հոր՝ Հ.Գևորգյանի կողմից: 2013 թվականի նոյեմբերի 11-ից դադարել է զբաղեցնել «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրենի պաշտոնը, բայց հոր խնդրանքով շարունակել է գնալ բանկ և կատարել ընկերության բանկային հաշվին գումարների համալրումներ, կանխիկացումներ, բազմաթիվ անգամ ընկերության հաշվեհամարներից գումարներ է փոխանցել այլ ընկերության հաշվեհամարներին, այդ թվում՝ նաև «Չանախյան» ՍՊ ընկերության հաշվեհամարին՝ որպես գումարների փոխանցման նպատակ նշելով ապրանքների մատակարարման դիմաց վճարումներ կատարելը: Գումարները, որոնք մուտքագրել է հոր ընկերության հաշվեհամարին, հայրը իրեն տվել է իրենց տանը, որպեսզի տանի Երևանի «Հայրենիք» կինոթատրոնի դիմաց գտնվող «Հայրիզնեբանկ», և դրանք մուտքագրի ընկերության հաշվեհամարին՝ որպես հիմք նշելով «հաշվի համալրում»-ը: Նաև հոր ասելով գնացել է բանկ և թղթերի վրա նշված ընկերությունների տվյալների համաձայն, ընկերությունների հաշվեհամարներին փոխանցել է գումարներ: Կանխիկացված գումարները տվել է հորը²:

7.2 Վկա Գևորգ Միլիտոնյանը նախաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ 2012 թվականի նոյեմբերի վերջին, հորեղբոր որդին՝ Հովհաննես Գևորգյանը, ասելով, որ ունի հիմնադրված «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերություն, խնդրել է ձևակերպվել որպես այդ ընկերության տնօրեն և օգնելով մի շարք հարցերում՝ գնալ բանկ, կատարել գումարային գործարքներ: Հովհաննեսն իրեն սովորեցրել է, թե բանկում «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության հաշվից ինչպես կանխիկացնի գումարներ և այլ ընկերությունների հաշվեհամարներին կատարի բանկային փոխանցումներ: Որպես այդ ընկերության տնօրեն, ինքն այլ գործողություններ չի կատարել³:

7.3 Վկա Աշոտ Բարսեղյանը նախաքննության ընթացքում ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ Հովհաննես Գևորգյանն իր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 126-128:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 163, հատոր 9, թերթեր 237-239:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 112-114:

ծանոթն է, նրան ճանաչում է 2011 թվականից: 2013 թվականի մարտի 1-ից ինքը դարձել է «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրենը: Մեկ ամսվա ընթացքում, ինքը Հովհաննեսի խնդրանքով գնացել է բանկ, ստորագրել է գումարներ կանխիկացնելու չեկեր, ու կանխիկացված գումարներն ամբողջությամբ տվել է նրան: Պայմանագրերի կնքմանը չի մասնակցել, հարկային հաշիվներ չի ձևակերպել ու չի ստորագրել: Բանկային չեկերը Հովհաննեսը բերել է բանկ, լրացված վիճակում, և ինքը ստորագրել է դրանք: Թե ինչ նպատակով են գումարները կանխիկացվել ու հետո ինչպես և ում կողմից են տնօրինվել, չգիտի:

7.4 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկից առգրավվել են «Մշո-Լայֆ» ՍՊ և «Չանախյան» ՍՊ ընկերությունների հաշիվների քաղվածքները, որոնց համաձայն՝ 2013 թվականի ապրիլի 30-ից մինչև 2014 թվականի հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունը «Հայրիզնեսբանկ» ՓԲ ընկերությունում բացված ՀՀ դրամի 12866460100 բանկային հաշվից «Չանախյան» ՍՊ ընկերության՝ նույն բանկում բացված ՀՀ դրամի 11500197985100 բանկային հաշվին փոխանցել է ընդհանուր 1.423.011.587 ՀՀ դրամ, որը Հ.Չանախյանի կողմից տարբեր դեպքերով կանխիկացվել է¹:

7.5 Դատահաշվապահական և տնտեսագիտական փորձաքննության 2015 թվականի փետրվարի 26-ի՝ թիվ 14-3593 և 2015 թվականի մարտի 19-ի՝ թիվ 15-0499 եզրակացությունների համաձայն՝ «Չանախյան» ՍՊ ընկերության կողմից առանց ապրանքների մատակարարման ԱԱՀ-ի հետ հաշվարկված 1.220.198.124 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությանն իբր իրացնելու վերաբերյալ թվով 129 կեղծ հարկային հաշիվներ կազմելու, դրանք հարկային մարմնին ներկայացնելու և «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության կողմից դրանց վերաբերյալ հարկային հաշվետվություններ ներկայացնելու հետևանքով «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությանը վերաբերող մասով պետությանը պատճառած վնասի չափը կազմում է՝ 233.000.926 դրամ:

2012 թվականի փետրվարից մինչև 2014 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության կողմից իրականացված առևտրային գործունեության արդյունքում առաջացած պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, օրենսդրությամբ նախատեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում 2012-2014 թվականների ավելացված արժեքի հարկի, 2013 թվականի շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկներում ներառվել են ակնհայտ խեղաթյուրված տվյալներ, ինչի արդյունքում ընկերությունը չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ 349.062.120 ՀՀ դրամ հարկերը վճարելուց²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 52, հատոր 4, թերթեր 118-192, հատոր 13, թերթեր 70-77:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 45-89, հատոր 9, թերթեր 250-287:

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Մեղադրանքի հիմքում նախաքննական մարմնի կողմից դրված (...) ապացույցները որևէ կերպ չեն հիմնավորում և ապացուցում, որ ամբաստանյալ Հովհաննես Էդիկի Գևորգյանը օրինականացրել է՝ հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերով գույք, այսինքն հանցավոր ճանապարհով սրացված գույքը փոխարկել է կամ փոխանցել է՝ նպարակ ունենալով թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը:

Դատարանի վերոգրյալ եզրահանգումը բխում է հետևյալից.

Ամբաստանյալ Հ.Գևորգյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախարեսված հանցավոր արարքը կատարելու մեջ ինչպես նախաքննության ընթացքում այնպես էլ դատաքննության ընթացքում՝ մեղադրող ցուցմունքներ չեն տրվել, ինչպես նաև քրեական գործով ձեռք բերված որևէ ապացույց չի հիմնավորում Հ.Գևորգյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախարեսված հանցավոր արարքը կատարելու մեջ:

Բացի այդ նախաքննության ընթացքում Հովհաննես Էդիկի Գևորգյանը իրեն առաջադրված մեղադրանքի վեաբերյալ որևէ դիրքորոշում չի հայտնել, իսկ դատաքննության ընթացքում չի ընդունել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իրեն առաջադրված մեղադրանքը:

Դատարանն անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Հովհաննես Էդիկի Գևորգյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված (...) ապացույցներին արձանագրում է, որ (...) նշված ապացույցներով հաստատվում է միայն այն, որ Հովհաննես Էդիկի Գևորգյանը հանդիսանալով Մշո-Լայֆ ՄՊԸ-ի հիմնադիրն ու փնթեղը, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում փաստացի ղեկավարելով այդ ընկերության գործունեությունը, 2012 թվականի փետրվարից մինչև 2014 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից իրականացված առևտրային գործունեության արդյունքում առաջացած պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, օրենսդրությամբ նախարեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում 2012-2014թ.թ. ավելացված արժեքի հարկի, 2013 թվականի շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և չարամորթեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով 349.062.120 ՀՀ դրամ հարկերը վճարելուց: Ինչպես նաև Դատարանը արձանագրում է, որ ամբաստանյալ Հ.Գևորգյանն ընդունել է այն փաստը, որ ինքը չարամորթեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով հարկերը

վճարելուց, այսինքն ընդունել է իրեն վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Հովհաննես Էդիկի Գևորգյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք: Այլ խոսքով մեղադրանքի կողմի ապացույցների համակցությունը բավարար չէ Հովհաննես Էդիկի Գևորգյանին մեղաագրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կրացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած: (...)

Մտուզելով ամբաստանյալ Հրաչյա Օսիկի Չանախյանի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու վերաբերյալ գործով ձեռք բերված ապացույցները դրանց վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու միջոցով, գնահատելով դրանց վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ, ամբաստանյալի մեղավորության մասին չփարսավող բոլոր կասկածները նրա օգտին մեկնարանելով՝ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել և հոշակել ամբաստանյալ Հրաչյա Օսիկի Չանախյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղաագրված հանցանքի կատարման մեջ և այդ մեղադրանքի մասով նա ենթակա է արդարացման՝ հանցագործության դեպքի բացակայության պարճառարանությամբ: (...)

Ամբաստանյալ Հ. Չանախյանը մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ ինչպես նախաքննության ընթացքում այնպես էլ դատաքննության ընթացքում մեղադրող ցուցմունքներ չեն տվել, ինչպես նաև քրեական գործով ձեռք բերված որևէ ապացույց չի հիմնավորում Հ. Չանախյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ:

Բացի այդ նախաքննության ընթացքում Հրաչյա Օսիկի Չանախյանը իրեն առաջադրված մեղադրանքի վերաբերյալ ցուցմունք է տվել և հայտնել է, որ չի ընդունում ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը նույնը հայտնել է դատաքննության ընթացքում:

Դատարանը անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Հրաչյա Օսիկի Չանսիսյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված (...) ապացույցներին արձանագրում է, որ (...) ապացույցներով հաստատվում է միայն այն, որ Հրաչյա Օսիկի Չանսիսյանը ծանոթի Հովհաննես Էդիկի Գևորգյանի կազմակերպմամբ, կեղծ ձեռնարկարիություն իրականացնելու նպատակով իր կողմից սրեղծված առևտրային կազմակերպության անունից առանց ապրանքների մատակարարման փրամադրել է կեղծ փաստաթղթեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր վնաս:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Հրաչյա Օսիկի Չանսիսյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարք: Այլ խոսքով մեղադրանքի կողմի ապացույցների համակցությունը բավարար չէ Հ.Չանսիսյանին մեղաազրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կրացատի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած: (...)»¹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Վ]երաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Առաջին արյանի դատարանի դատավճիռը, Առաջին արյանի դատարանի կողմից հետազոտված, նաև Վերաքննիչ դատարանի կողմից թույլատրելի ճանաչված ապացույցների վերլուծության և գնահատման արդյունքում, մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր չփարստված կասկածները մեկնաբանելով հոգուր ամբաստանյալների՝ Վերաքննիչ դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալներ Հովհաննես Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հրաչյա Չանսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքները հաստատող ապացույցների բավարար ամբողջություն չի սրեղծվում (...):

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Հովհաննես Գևորգյանի գործողությունները չեն կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Հ.Չանսիսյանինը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Վերաքննիչ դատարանը հանգում է նման հետևության հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հ.Գևորգյանը հարակ գիտակցել է վերը նշված 582.063.046 ՀՀ դրամի գոյացման աղբյուրը, այն հանցավոր ճանապարհով ձեռքբերելը,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 23, թերթեր 68-145:

ասկայն որևէ տվյալ Հ.Գևորգյանի՝ այն օրինական շրջանառության մեջ ներգրավվելու նպատակի վերաբերյալ առկա չէ: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ վերոնշյալ փաստական հանգամանքները չեն վկայում «լվանալուն» ուղղված դիտարկության առկայության մասին:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Հովհաննես Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարվել են հենց 582.063.046 ՀՀ դրամի չափով հարկերից խուսափելու նպատակով և հարակ գիտակցելով դրանց ձեռքբերման եղանակը և աղբյուրը՝ ամբաստանյալ Հովհաննես Գևորգյանին չի կարող վերագրվել հանցավոր ճանապարհով արացված գույքի օրինականացման կատարում: Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը հաստատված չի համարում նաև Հրաչյա Չանսիսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքաբերը նշել է, որ Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հ.Չանսիսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով՝ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել են արդարադատության բուն էությունը: Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածների պահանջները, չեն հետևել Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավական դիրքորոշումներին՝ թույլ տալով գործի ելքի վրա ազդած դատական սխալ, ուստի՝ դատական ակտերն այդ մասով ենթակա են քննանման:

Բողոքաբերն ընդգծել է, որ գործով ձեռք բերված ապացույցներից ակնհայտ է, որ Հ.Գևորգյանի ծավալված հանցավոր գործունեության (այն է՝ կեղծ ձեռնարկատիրության և հարկերից խուսափելու) արդյունքում առաջացել են դրամական միջոցներ՝ 582.063.046 ՀՀ դրամի չափով, և նշված ապօրինի դրամական միջոցներն ընկերության ակտիվներում ներառելով, այլ միջոցների հետ միախառնելով և օրինական ձեռնարկատիրական գործունեության պատրանք ստեղծելով, դրանք փոխանցվել են հանցավոր նպատակով ստեղծված այլ առևտրային

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 23, թերթեր 1-66:

կազմակերպություն, որից հետո կանխիկացվել և վերադարձվել են փոխանցողին:

Բողոքաբերը շեշտել է, որ իրավաբանական անձի հաշվեկշռում հանցավոր ճանապարհով գոյացած դրամական միջոցներն արհեստական գործարքների արդյունքում օրինական կարգով կանխիկացվել են, դուրս բերվել կազմակերպությունների հաշվեկշիռներից և հանձնվել մասնավոր անձի: Բողոքաբերն ընդգծել է, որ նշված հանցավոր սխեման այլ կերպ, քան հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի օրինականացում հնարավոր չէ որակել: Բողոքի հեղինակը սույն գործի փաստական տվյալները համադրելով *Արսեն Մարգարյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշմամբ արտահայտած դիրքորոշումների հետ՝ փաստել է, որ Հ.Գևորգյանի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Հ.Չանախյանի գործողությունները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Առաջին ստյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը մասնակի՝ Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում արդարացնելու մասով բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ամբաստանյալ Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով ստորադաս դատարաններն արդյո՞ք պատշաճ իրավական գնահատականի են արժանացրել գործում առկա փաստական հանգամանքներն իրենց

ամբողջության մեջ:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) [Մ]ույն օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված դեպքերում նաև այդ հոդվածների իմաստով գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավասարող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից սրացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցավոր ճանապարհով սրացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայրնի է, որ այդ գույքն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պարկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայրնի է, որ այդ գույքն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի սրացման պահին հայրնի էր, որ այն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում)

(...)

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

(...)

5. Սույն հոդվածի իմաստով հանցավոր ճանապարհով սրացված գույք է համարվում սույն օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված գույքը, որն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ սրացվել է սույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում»:

15. Փողերի լվացման հանցակազմի մեկնաբանությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արսեն Սարգսյանի վերաբերյալ գործով որոշմամբ՝ արձանագրելով՝ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված] հանցագործությունը դասվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, ուստի նշված քրեահրավական արգելքի հիմնական նպատակն է հանցավոր

ճանապարհով սրացված դրամական միջոցների կամ այլ գույքի չվերահսկվող շրջանառությունից պաշտպանել պետության փոխհատուցման համակարգը, ինչպես նաև պայքարել ոչ օրինական եղանակով դրամական միջոցների (գույքի) ձեռքբերմանն ու դրանց օրինական (լեգալ) փոխը հաղորդելուն ուղղված հանցագործությունների դեմ:

Տարեական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման փորձերի օրյեկրն է բնականոն փոխհատուցման գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակցությունը: Քննարկվող հանցագործության անմիջական օրյեկրն է օրինական գույքային և դրամավարկային շրջանառության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Քննարկվող հանցագործության լրացուցիչ օրյեկրները բազմափուլային են: Այդպիսի կարող են լինել հասարակական անվտանգության շահերը (եթե հանցավոր եկամուտների օրինականացումը կապված է կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության հետ), բնակչության առողջությունը (եթե հանցագործության առարկա են զենքը, թմրանյութերը և այլն), պետական ծառայության շահերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները (եթե առկա է պաշտոնետան դիրքի օգտագործում) և այլն:

Հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացում հանցագործության առարկա կարող են լինել դրամական միջոցները, արժեթղթերը, ցանկացած գույք կամ գույքային իրավունք, որը ձեռք է բերվել ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է գույքի սրացման եղանակը՝ հանցավոր ճանապարհով, այսինքն՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման արդյունքում: Ընդ որում, հոդվածի 5-րդ մասը սպառիչ թվարկում է այն հանցագործությունները, որոնց կատարման արդյունքում ձեռք բերված գույքը կամ գույքային իրավունքը կարող է հանդիսանալ փողերի լվացման հանցակազմի առարկա:

Հետևաբար, արարքը կարող է որակվել որպես հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացում միայն ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասում թվարկված հանցագործություններից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, վերջինս պետք է ժամանակային առումով նախորդի հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացմանը, և դրա արդյունքում ձեռք բերված գույքը պետք է հանդիսանա նշված հանցակազմի առարկա: Եախորդող հանցագործության բացակայությունը բացառում է հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման հանցակազմի

գոյությունը, ուստի նմանապիսի գործերով մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նախ պետք է հաստատված համարի նախորդող հանցագործության դեպքը, ինչպես նաև փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի՝ նախորդող հանցագործության արդյունքում ձեռք բերված լինելու հանգամանքը:

Վճռարեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Կրկնապարտության օրինական ուժի մեջ մտնող դատավճռի առկայությունը, ինչպես նաև պարտադիր չէ, որ հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման մեջ մեղադրվող անձը որևէ առնչություն ունենա նախորդող հանցագործության հետ: Հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման համար անձին քրեական պարասիսանարվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է ապացուցվի, որ գույքը սրացվել է հանցավոր ճանապարհով և որ անձը գիտակցել ու նախատեսել է դրա՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը:

(...)

Քննարկվող հանցակազմն ունի բարդ և այլընտրանքային օբյեկտիվ կողմ: Արարքը որպես հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացում որակելու հիմքում ընկած է այն նախապայմանը, որ գույքի և գույքային իրավունքների հետ կապված գործողությունները կատարվում են՝ գիտակցելով դրանց՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելու հանգամանքը և հետապնդելով հարուկ նպատակ՝ թաքցնել կամ քողարկել գույքի (գույքային իրավունքի) հանցավոր ծագումը կամ օժանդակել հանցակցին խուսափելու իրավական հետևանքներից:

ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունից հետևում է, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ գործողություններով.

ա) հանցավոր ճանապարհով սրացված գույքի փոխարկում (կոնվերտացում) կամ փոխանցում (եթե հայրնի է, որ այդ գույքն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պարասիսանարվությունից,

բ) գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնել կամ խեղաթյուրել (եթե հայրնի է, որ այդ գույքն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում),

գ) գույք ձեռք բերել կամ տիրապետել կամ օգտագործել կամ տնօրինել (եթե այդ գույքի սրացման պահին հայրնի էր, որ այն սրացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

Փողերի լվացման հանցակազմը ձևական է, այն ավարտված է համարվում վերը նշված գործողություններից որևէ մեկի կատարման պահից:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապարասիան հողվածում լիարժեք հարակեցված չէ այս հանցագործության սուբյեկտիվ կողմի գլխավոր, էական հարկանիշը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նկարագրված գործողությունների արդյունքում համապարասիան միջոցների ծագման իրական աղբյուրի քողարկման կամ ինդատրությունն նպատակը:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի գործնական կիրառումը պետք է կառուցվի այն եզրահանգման վրա, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշն իրենում պարունակում է հարուկ նպատակ՝ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների իրական աղբյուրները քողարկել, թաքցնել և այդ միջոցներն օրինական շրջանառության մեջ ներգրավել: Այդպիսի նպատակի բացակայությունը բացառում է այս հանցագործության հանցակազմի առկայությունը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիրավորությամբ: Հանցավորը գիտակցում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտն իր կողմից օրինականացնելու փաստը և ցանկանում է դա:

Փողերի լվացման սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների կամ այլ գույքի հետ ֆինանսական կամ այլ գործարքներ է կատարում կամ տվյալ նյութական արժեքները օգտագործում է ձեռնարկարիական կամ այլ տնտեսական գործունեության համար (ընդհանուր սուբյեկտ): Որպես նշված հանցակազմի հարուկ սուբյեկտ կարող է հանդես գալ միայն պաշտոնատար անձը (ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ)՝:

16. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցագործությունը, ունենալով բարձր լատենտայություն, կրում է անդրագային (տրանսնացիոնալ) բնույթ, որի կանխումը և բացահայտումը շարունակում է համարվել պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առաջնահերթություններից մեկը՝ հանցավորության դեմ պայքարում: Այդ մասին նշված է՝ ՀՀ կառավարության՝ 2014 թվականի մարտի 22-ի որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ.:

¹ Տե՛ս Արսեն Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09 որոշումը:

հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում»¹, ինչպես նաև «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գեներալ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2019-2021թթ. ազգային ռազմավարությունում»²:

16.1 ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների մեկնաբանության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված հանցագործության կատարմամբ հանցավորն օրինական գործունեության շղարշի ներքո նպատակ է հետապնդում լեգիտիմացնել ստացված անօրինական գույքն ու եկամուտները, քողարկելու և թաքցնելու դրանց ծագման հանցավոր աղբյուրը, վերացնելու դրանց հանցավոր հետքերը: Այլ կերպ, այս հանցագործությունն արտահայտվում է անօրինական ճանապարհով ստացված «կեղտոտ» փողերի օրինականացմամբ, որով էական վնաս է պատճառվում պետության տնտեսությանը: Այսինքն՝ տվյալ հանցագործության կատարմամբ՝ փողերի լվացմանն ուղղված գործողություններ կատարելու, անօրինական գույքն ու եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու միջոցով հանցավորի դիտավորությունն ուղղված է լինում դրանց օրինական տեսք հաղորդելուն և քրեական պատասխանատվությունից ազատվելուն: Հետևաբար, անձի արարքը որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում որակելիս՝ պետք է համակողմանի ուշադրության արժանացնել այն գործողությունների շղթան, անօրինական գույքի և եկամուտների քաղաքացիական շրջանառությունը՝ իր շրջափոխվելով հանդերձ, որոնք ընդհանուր առմամբ կարող են վկայել հանցավորի՝ փողերի լվացմանն ուղղված դիտավորության առկայության մասին:

Այսպես, Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների առկայությունը և փողերի լվացմանն ուղղված անձի դիտավորությունը որոշելիս՝ անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների պատշաճ իրավական գնահատմամբ պարզել ստացված անօրինական գույքի և եկամուտների ծագման աղբյուրը, նշված գույքն ու եկամուտներն օրինական շրջանառության մեջ ներդնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը, այդ նյութական միջոցների շարժընթացն ու շրջապտույտն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ, ձեռնարկված գործողությունների շղթան, որի

¹ Տե՛ս՝ ՀՀ կառավարության՝ 2014 թվականի մարտի 22-ի թիվ 422-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը», կետ 665, ենթակետ 4:

² Հաստատվել է Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գեներալ տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2018 թվականի նոյեմբերի 30-ի՝ 34-րդ սիստում:

վերջնաարդյունքում այդ գույքն ու եկամուտները ստացել են օրինական տեսք: Ընդ որում, վերջին դեպքում հատկապես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե կոմկրետ ճոր օրինական քաղաքացիաիրավական գործարքի կատարման արդյունքում են օրինական տեսք ստացել ձեռքբերված նյութական միջոցները: Պայմանավորված տվյալ հանցագործության լատենտային բնույթով՝ հանցավոր գույքի ու եկամուտների օրինականացումը կարող է ունենալ բազմապիսի դրսևորում: Սակայն, բոլոր դեպքերում այն պետք է սերտորեն փոխկապակցված լինի ենթադրյալ հանցանքը կատարած անձի՝ «փողերի լվացման» դիտավորության հետ՝ հիմնավորելով վերջինիս առկայությունը:

Այսպիսով, Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքում է հնարավոր հաստատապես որոշել անձի արարքում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների առկայությունը:

16.2 Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է մասնակցել միջազգային այն կազմակերպությունների ու կառույցների աշխատանքներին, որոնք ներգրավված են «փողերի լվացման» ոլորտում միջազգային չափանիշների մշակման, պետությունների կողմից դրանց ներդրման ու իրականացման գործընթացում: Ավելին, նշված միջազգային մարմինների հանձնարարականների կատարման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը, հետամուտ լինելով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարում միջազգային չափանիշներն ազգային օրենսդրության հետ ներդաշնակեցմանը և միատեսակ քաղաքականության ապահովմանը՝ փոփոխություններ է կատարել համապատասխան իրավակարգավորումներում:

Այսպես, 1989 թվականին Փարիզում հիմնադրված՝ «Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի» (այսուհետ՝ ՖԱԹՖ) հանձնարարությունների հիման վրա 2014 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-114 օրենքի ընդունմամբ ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ նախորդող հանցակազմերի շրջանակի համար որդեգրվել է նոր՝ «բոլոր հանցագործություններ» մոտեցումը, որով այսուհետ նախորդող են համարվում բոլոր այն հանցագործությունները, որոնց կատարման արդյունքում առաջացել կամ ստացվել է հանցավոր եկամուտ¹:

Այսինքն, այս առումով անհրաժեշտ է զարգացնել սույն որոշման 15-րդ կետում վկայակոչված՝ Վճռարեկ դատարանի իրավական դիրքորոշում-

¹ Տե՛ս օրենքի հիմնավորումները՝ www.parliament.am կայքում:

ները, փաստելով, որ եթե մինչև 2014 թվականի հունիսի 21-ի թիվ ՀՕ-114 օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասի խմբագրությամբ սահմանվում էր որոշակի հանցագործությունների սպառիչ ցանկ, որոնց արդյունքում պետք է ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված լինել գույքը, որպեսզի համարվել փողերի լվացման առարկա, ապա նշված օրենքի ընդունումից հետո ցանկացած հանցագործության արդյունքում ստացված գույքը կարող է լինել փողերի լվացման առարկա: Մինևս ժամանակ, հարկ է նկատել, որ նույն օրենքի ընդունմամբ նաև հստակեցվել է փողերի լվացման առարկա հանդիսացող գույքի հասկացությունը, որոշակիացվել են այդ հասկացության մեջ նախկինում ներառվող «ցանկացած գույք» և «քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ» ձևակերպումները: Այսպես, այժմ գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանն անմեղ ճանաչելով Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում, իսկ Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում, նշել է, որ քրեական գործով ձեռք բերված և դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցները չեն հիմնավորում նրանց մեղավորությունը, բավարար չեն ամբաստանյալների անմեղության կանխավարկածը հաղթահարելու և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու նրանց արարքները:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Հ.Գևորգյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցներին՝ դատարանն արձանագրել է, որ նշված ապացույցներով հաստատվում է միայն, որ Հ.Գևորգյանը, հանդիսանալով «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության հիմնադիրն ու տնօրենը, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում փաստացի ղեկավարելով այդ ընկերության գործունեությունը, 2012 թվականի փետրվարից մինչև 2014 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից իրականացված առևտրային գործունեության արդյունքում առաջացած պարտադիր վճարներից խուսափելու նպատակով, օրենսդրությամբ նախատեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում՝

2012-2014թ.թ. ավելացված արժեքի հարկի, 2013 թվականի շահութահարկի և եկամտային հարկի հաշվարկներում ներառել է ակնհայտ խեղաթյուրված տվյալներ և չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ 349.062.120 ՀՀ դրամ հարկերը վճարելուց: Ինչպես նաև դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Հովհաննես Գևորգյանն ընդունել է այն փաստը, որ ինքը չարամտորեն խուսափել է առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց, այսինքն ընդունել է իրեն վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Հ.Չանախչյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցներին՝ դատարանն արձանագրել է, որ այդ ապացույցներով հաստատվում է միայն այն, որ Հ.Չանախչյանը ծանոթի՝ Հ.Գևորգյանի կազմակերպմամբ, կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու նպատակով, իր կողմից ստեղծված առևտրային կազմակերպության անունից, առանց ապրանքների մատակարարման, տրամադրել է կեղծ փաստաթղթեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս¹,

- Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի դատավճիռը՝ նշել է, որ ապացույցների վերլուծության և գնահատման արդյունքում, մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր չփարատված կասկածները մեկնաբանելով հօգուտ ամբաստանյալների, հանգում է հետևության, որ առաջադրված մեղադրանքները հաստատող ապացույցների բավարար ամբողջություն չի ստեղծվում: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Հ.Գևորգյանի գործողությունները չեն կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ Հ.Չանախչյանինը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քանի որ Հ.Գևորգյանը հստակ գիտակցել է վերը նշված 582.063.046 ՀՀ դրամի գոյացման աղբյուրը, այն հանցավոր ճանապարհով ձեռքբերելը, սակայն որևէ տվյալ Հ.Գևորգյանի՝ այդ գումարն օրինական շրջանառության մեջ ներգրավելու նպատակի վերաբերյալ առկա չէ: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, նշված փաստական հանգամանքները չեն վկայում «լվանալու» ուղղված դիտավորության առկայության մասին: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Հ.Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները կատարվել են հենց 582.063.046 ՀՀ դրամի չափով հարկերից խուսափելու նպատակով՝ հստակ գիտակցելով դրանց ձեռքբերման եղանակը և աղբյուրը, որպիսի պայմաններում ամբաստանյալ Հ.Գևորգյանին չի կարող վերագրվել հանցավոր ճանա-

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

պարհով ստացված գույքի օրինականացման կատարում: Վերագրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը հաստատված չի համարել նաև Հ.Չանախյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը¹:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-7.6-րդ կետերում վկայակոչված ապացույցների, 14-16.2-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ամբաստանյալ Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքներում արդարացնելով, իրավական վերլուծության չեն ենթարկել գործում առկա մի շարք առանցքային փաստական հանգամանքներ: Մասնավորապես, հաստատված համարելով 582.063.046 ՀՀ դրամ գումարը հանցավոր ճանապարհով ստացված լինելու հանգամանքը՝ ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, թե հանցավոր ճանապարհով ստացված գումարը շրջանառության մեջ դնելը և կատարված շրջապտույտի արդյունքում այն ձեռքբերելն արդյո՞ք ուղղված չի եղել գումարի իրական ծագումը քողարկելուն:

Այսպես, գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ սույն որոշման 7-7.6-րդ կետերում վկայակոչված ապացույցների, այդ թվում՝ Հ.Չանախյանի նախաքննական ցուցմունքների, փորձագիտական եզրակացությունների, ՀՀ կենտրոնական բանկից առգրավված տվյալների համաձայն՝

ա) «Սշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրեն Հ.Գևորգյանի առաջարկով 2013 թվականի ապրիլի 16-ին Հ.Չանախյանը հիմնադրել է «Չանախյան» ՍՊ ընկերությունը: Այդ ընկերության և «Սշո-Լայֆ» ՍՊ ընկերության միջև վերջիններս կնքել են պայմանագիր, թե իբր «Չանախյան» ՍՊ ընկերությունը «Սշո-Լայֆ» ՍՊ ընկերությանը մատակարարելու է ապրանքներ,

բ) կեղծ հարկային հաշիվներ կազմելու և օրենսդրությամբ նախատեսված հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու արդյունքում հանցավոր ճանապարհով ձևավորված գումարի չափը կազմել է 582.063.046 ՀՀ դրամ (233.000.926 և 349.062.120 ՀՀ դրամի չափով գումարների հանրագումարը),

գ) «Սշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրեն և փաստացի ղեկավար Հ.Գևորգյանի կողմից կամ նրա նախաձեռնությամբ ընկերության բանկային հաշվից, ապրանքներ ձեռք բերելու պատրվակով, ընդհանուրը 1.423.011.587 ՀՀ դրամ գումար է փոխանցվել նույն մասնաճյուղում սպասարկվող «Չանախյան» ՍՊ ընկերության բանկային հաշվեհամարին,

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դ) գումարը փոխանցելու, կամ դրան հաջորդող օրերին «Չանախյան» ՍՊ ընկերության գործունեության համար անհրաժեշտ ծախսեր կատարելու հիմնավորմամբ, Հ.Չանախյանն այն մաս-մաս կանխիկացրել և առձեռն հանձնել է Հ.Գևորգյանին՝ այն դեպքում, երբ նշված ընկերությունը, ըստ գործի փաստական տվյալների, ձեռնարկատիրական գործունեություն չի ծավալել:

Մասնավորապես, վերը վկայակոչված փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ հանցավոր ճանապարհով ձեռքբերված 582.063.046 ՀՀ դրամ գումարը, այլ գումարի հետ շրջանառության մեջ դնելու, ապրանքներ ձեռք բերելու պատրվակով իրականացված շրջապտույտի արդյունքում, «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերությունից փոխանցվել է «Չանախյան» ՍՊ ընկերությանը: Այնուհետև, «օրինական» դրամական միջոցները մաս-մաս կանխիկացնելու արդյունքում, Հ.Չանախյանի կողմից դրանք վերադարձվել են նույն «Մշո-Լայֆ» ՍՊ ընկերության տնօրեն և փաստացի ղեկավար Հ.Գևորգյանին:

Նման պայմաններում «փողերի լվացման» ուղղված դիտավորության բացակայության մասին ստորադաս դատարանների դատողությունները փաստարկված չեն՝ հաշվի առնելով, որ վերը նկարագրված գործընթացը պատշաճ վերլուծության չի ենթարկվել կայացված դատական ակտերում: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, այն ուներ առանցքային նշանակություն՝ ամբաստանյալների արարքներում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հատկանիշների առկայությունը որոշելիս:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «փողերի լվացման» ուղղված դիտավորության բացակայության մասին հետևություններ անելիս, ստորադաս դատարանները համակողմանի անդրադարձ չեն կատարել վերոնշյալ փաստական հանգամանքներին՝ իրենց դատական ակտերն առավելապես պատճառաբանելով ամբաստանյալների արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով և 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության մասին դատողություններով: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ձեռնարկատիրական գործունեություն իրականում չծավալող ընկերության հիմնադրմամբ, հանցավոր ճանապարհով 582.063.046 ՀՀ դրամ գումարի ձևավորմանը հաջորդող ամբաստանյալների գործողությունները վերը նշված հոդվածների քրեաիրավական որակումից դուրս են և պետք է արժանանան ինքնուրույն իրավական գնահատականի:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ամբաստանյալ Հ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ամբաստանյալ Հ.Չանախյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված

մեղադրանքներում արդարացնելով, ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել գործում առկա փաստական հանգամանքներն իրենց ամբողջության մեջ:

19. Այսպիսով, անփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, բողոքարկված դատական ակտերը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է, որի պայմաններում միայն կարող է ապահովվել Հ.Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Հ.Չանախյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով գործում առկա սպացույցների գնահատման հարցերի ողջ ծավալով քննությունը:

20. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Հ.Գևորգյանի և Հ.Չանախյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 16-ի որոշումը մասնակիորեն՝ ամբաստանյալ Հովհաննես Էդիկի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ամբաստանյալ Հրաչյա Օսիկի Չանախյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

53. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ/0008/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դիմող՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ն.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հունիսի 30-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 18106717 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Շ.Իկլիլիյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ Ալբերտ Ենոքի Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, և քրեական գործի վարույթը կարճվել է:

Նախաքննության մարմնի նշված որոշման դեմ դիմող Նարինե

Մարտինի Ղազարյանի բողոքը Շիրակի մարզի դատախազ Կ.Գաբրիելյանի՝ 2018 թվականի հունվարի 26-ի որոշմամբ մերժվել է:

2. Ն.Ղազարյանի ներկայացուցիչ Գ.Գևորգյանի բողոքի քննության արդյունքում Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի մարտի 16-ի որոշմամբ բողոքը մերժել է:

3. Գ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 16-ի որոշումը բեկանել՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնել դիմող Ն.Ղազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Ն.Ղազարյանը ներկայացրել է Վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանի վարչական փորձաքննության թիվ 79941708 եզրակացության համաձայն՝ ըստ վարորդ Ա.Վարդանյանի ցուցմունքների՝ քննարկվող պայմաններում «Գազ 2410» մակնիշի 65 OL 574 h/h ավտոմոբիլի վարորդը տվյալ վրատեղի կանխելու տեխնիկական հնավորություն չի ունեցել և նրա կողմից թույլ տրված այնպիսի գործողությունները, որպիսիք տեխնիկական տեսակետից հակասեն ՃԵԿ-ի պահանջներին և պայմանավորված լինեին տվյալ վրատեղի առաջացումը, չեն դիտվում:

(...) Ըստ հետիոտն Ն.Ղազարյանի ցուցմունքների՝ քննարկվող պայմաններում «Գազ 2410» մակնիշի 65 OL 574 h/h ավտոմոբիլի վարորդը տվյալ վրատեղի կանխելու տեխնիկական հնավորություն չի ունեցել և նրա կողմից թույլ տրված այնպիսի գործողություններ, որպիսիք տեխնիկական տեսակետից հակասեն ՃԵԿ-ի պահանջներին և պայմանավորված լինեին տվյալ վրատեղի առաջացումը, չեն դիտվում:

(...) Սույն գործի ուսումնասիրմամբ պարզվում է, որ գործով նախաքննություն իրականացրած մարմինը, գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով, ՀՀ քրեական դատարանի օրենսգրքով նախատեսված ողջամիտ քննչական գործո-

դուրսըները կատարման ճանապարհով սպացույցներ հավաքելով գնահատել է դրանք և պարճառարանված որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին: Վիճարկվող որոշման մեջ նշված, քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքների վերաբերյալ քննիչի գնահատականների հետ բողոքաբերի՝ համամիտ չլինելը բավարար չէ քննիչի և դատախազի վիճարկվող որոշումները վերացնելու համար:

(...) [Բ]ողոքարկվող որոշումները կայացվել են օրենքին համապատասխան, անձի իրավունքների կամ ազատությունների՝ խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել, ուստի բողոքն ամբողջությամբ ենթակա է մերժման»¹:

6. Վերաքննիչ դատարանը, բավարարելով դիմող Ն.Ղազարյանի ներկայացուցչի բողոքը, արձանագրել է. «(...) Գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախաքննության մարմինը չի նշանակել դատաավորությունիկական փորձաքննություն պարզելու՝ մեքենայի րեխնիկական վիճակը, մինչդեռ սույն դեպքում այն պարտադիր էր, քանի որ խոսքը վրաերթի դեպքի մասին է, որի պարագաներում էական նշանակություն ունի մեքենայի արգելակման համակարգի պարզաճ գործելու հանգամանքը պարզելը, որը կարող էր էական նշանակություն ունենալ գործի հետագա ընթացքը ճիշտ լուծելու համար:

(...) Այս րեսանկյունից Վերաքննիչ դատարանը համամիտ է նաև բողոքաբերի այն պնդումներին, որ պեպք է պարզվել նաև մեքենայի անվադողերի մաշվածության աստիճանը, որն արգելակման համակարգի հետ համակցության մեջ էական նշանակություն ունեք վարորդի գործողությունները ճիշտ հասկանալու և գնահատելու համար:

Սույն կերպ նախաքննության մարմինը պեպք է պարզել, թե արդյոք սահմանված ռեժիմով աշխատում են սպակեմաքրիչները (...):

Վերաքննիչ դատարանի համար առավել ինդրահարույց է թվում այն հանգամանքը, որ մեքենան անմիջապես դեպքի վայրից հեռացվել է, իսկ դեպքի սխեման կազմվել է բացառապես ցուցմունքների հիման վրա, որը կարող էր օբյեկտիվ պարկեր չձևավորել, ավելին՝ մեքենան րդվել է սեփականատիրոջը՝ առանց համապատասխան րեխնիկական վիճակի վերաբերյալ րվյալները սրանալու, որը թեև հնարավոր է սրանալ այս փուլում, սակայն դրանք կարող են արժանահավաք չլինել:

(...) [Ս]ույն գործով նշանակված փորձաքննության եզրակացությունից հետևում է, որ դրանում հիմնականում վերլուծություններն արված են մեքենայի արագությունն իջեցնելու հնարավորության րեսանկյունից, իսկ երկրորդի մասով որևէ հետազոտություն և վերլուծություն արված չէ, ուստի Վերաքննիչ դատարանը համամիտ է բողոքաբերի պնդումների

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 40-43:

հետ, որ պետք է պարզվեր, թե ինչու վարորդը չի փորձել մանևրել մեքենան այլ ուղղությամբ, որպեսզի կանխեր վրատերթը (...):

Վերաքննիչ դատարանի համար առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ քրեական գործը հարուցվել և քննությունն իրականացվել է ակնհայտ և կոպիտ խախտումներով, որի արդյունքում, եթե անգամ հաստատվի վարորդի մեղավորությունը՝ հնարավոր չի լինելու քրեական գործով կայացնել մեղադրական դատավճիռ, քանի որ ձեռք բերված բոլոր ապացույցներն անթույլատրելի են, որպիսի հանգամանքը բավարար է փաստելու, որ ակնհայտորեն խախտվել են տուժողի իրավունքները:

Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը հանդիսանում է մասնավոր մեղադրանքի կարգով քննող հանցագործություն, որի դեպքում քրեական գործ կարող է հարուցվել ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա (տես [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի] 33-րդ և 183-րդ հոդվածները), մինչդեռ սույն գործով քրեական գործը հարուցվել է վրատերթ կատարած վարորդի կողմից ինքնակամ ներկայանալու և հաղորդում ներկայացնելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վարույթն իրականացնող մարմինը չի պարզել նաև այն հակասությունները, որոնք վերաբերում են մեքենան վրատերթից հետո հետընթաց կատարելու հետ, քանի որ մի դեպքում նշվում է, որ մի քանի մետր հետընթաց է արվել, իսկ մյուս դեպքում՝ մի քանի սանտիմետր: (...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գործի փաստական հանգամանքների մեջ եղած հակասությունները բավականին շար են, որոնք ամբողջությամբ ներկայացնելու անհրաժեշտություն չկա, քանի որ վերոգրյալը բավարար է փաստելու, որ սույն գործի շրջանակներում նախաքննության մարմինը չի գործել պարզաձև ջանասիրությամբ և չի իրականացրել քրեադատավարական օրենսդրությամբ իր վրա դրված՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության սպասկովման համար անհրաժեշտ և անհասպող գործողությունները դեպքի իրական հանգամանքները պարզաբանելու և ճիշտ իրավական գնահատականի արժանացնելու համար, ինչի մասին նշել է բողոքաբերը, որի արդյունքում ակնհայտ է, որ խախտվել են Ն.Ղազարյանի իրավունքներն ու օրինական շահերը:

Վերաքննիչ դատարանի հետևության համար հիմք է հանդիսանում նաև այն հանգամանքը, որ դատախազը քննիչին հեռացրել է քրեական գործով վարույթից՝ քրեադատավարական օրենքի խախտումներ թույլ տալու պարճառաքանությամբ:

Վերոգրյալ հանգամանքներով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին աստիանի դատարանը կայացրել է անհիմն և անօրինական դատական ակտ, ուստի վերաքննիչ բողոքը պետք է

բավարարել, իսկ բողոքարկված դատական ակտը բեկանել և փոփոխել՝ սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը վերացնելու Ե. Ղազարյանի իրավունքների խախտումները»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է և անհիմն, դրանով թույլ է տվել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների պահանջները:

7.1 Ի հիմնավորումը վերոհիշյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ավտոմեքենայի արգելակման համակարգի, ապակեմաքրիչների տեխնիկական վիճակը և անվադողերի մաշվածությունը պարզելու ուղղությամբ դատավարական գործողություններ իրականացրած չլինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները չեն բխում քրեական գործի նյութերից: Ավելին՝ բողոքի հեղինակը նշել է, որ դատավտոտեխնիկական փորձաքննության եզրակացությունից ակնհայտ է, որ դրանց հնարավոր անսարքությունների պայմաններում տրանսպորտային միջոցը չվարելու պահանջը խախտելը պատճառահետևանքային կապի մեջ չի կարող գտնվել առաջացած հետևանքի՝ դիմողի առողջությանը պատճառված վնասի հետ:

7.2 Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ շրջանցում կատարելու միջոցով վրատերը կանխելու տեխնիկական հնարավորությունը դատավտոտեխնիկական փորձաքննության առարկա չդարձնելը և վրատերից հետո հետընթաց կատարելու տարածության վերաբերյալ առկա հակասությունները որևէ նշանակություն չեն կարող ունենալ Ա.Վարդանյանի արարքում հանցակազմի առկայությունը պարզելու համար: Բողոքաբերի պնդմամբ՝ քննարկվող դեպքում վարորդը շրջանցելու պարտականություն չի ունեցել՝ նկատի ունենալով, որ երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում շրջանցում կատարելու համար ՀՀ կառավարության՝ 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի 67-րդ կանոնում կիրառվում է «թույլատրելի է» եզրույթը: Այսինքն, երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում շրջանցում կատարելը վարորդի իրավունքն է:

7.3 Բողոքաբերը նաև փաստել է, որ անհիմն է մասնավոր մեղադրանքի գործով քրեական գործ հարուցելու դատավարական կարգի խախտում

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 73-82:

թույլ տրված լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը: Բողոք բերած անձի պնդմամբ քրեական գործը հարուցվել է դիմողի բողոքի հիման վրա՝ նկատի ունենալով, որ թեև դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման առիթը եղել է ֆիզիկական անձի՝ Ա.Վարդանյանի հաղորդումը, սակայն նյութերի նախապատրաստման ընթացքում՝ Ն.Ղազարյանը նախ բացատրությամբ, ապա նաև վարույթն իրականացնող մարմնին հասցեագրված դիմումով հայտնել է, որ բողոքում է իրեն վրաերթի ենթարկած վարորդի դեմ և պահանջում է, որ վերջինս ենթարկվի քրեական պատասխանատվության:

8. Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 16-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. դիմող Ն.Ղազարյանի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշումը բեկանելու և վարույթն իրականացնող մարմնի՝ դիմողի իրավունքների խախտումները վերացնելու պարտականություն սահմանելու մասին որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանն արդյո՞ք պահպանել է դատական ակտին ներկայացվող պահանջները:

10. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն. «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում *ցույց է տրվում*

(...)

2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները.

3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավասար համարելու փաստարկները.

4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշումը *ընդունելիս*.

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածը սահմանում է. «Դատավճռի եզրափակիչ մասում *նշվում են՝*

1) դատարանի որոշումները.

(...):»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում է. «Սույն օրենքով սահմանված (...), նորմատիվ իրավական

ակտի կառուցվածքի, (...) վերաբերյալ դրույթների գործողությունը փարսավում է անհատական (...) իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական (...) իրավական ակտի ընդունում»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «անհատական իրավական ակտ՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց»:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները»:

10.1 Դատական ակտին ներկայացվող պահանջների առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային իրավունքում մշտապես ընդգծել է, որ դատարանի պատճառաբանությունները ոչ միայն պետք է կառուցվեն տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքներից բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա, այլև դատական ակտի կառուցվածքային տարբեր մասերում արված դատողությունները պետք է համապատասխանեն միմյանց, ունենան ներքին միասնություն և տրամաբանական կապ: Դատական ակտում պետք է բացառվեն ներքին հակասությունները, իրարամերժ դատողությունները, քանի որ հակառակ դեպքում այդպիսի դատական ակտի տրամաբանությունը կխաբխվի, իսկ քրեական դատավարության խնդիրները չեն իրագործվի¹:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը, գնահատելով քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցները, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին²:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և սահմանելով դիմողի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնելով՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, նշել է, որ ըստ գործի նյութերի՝ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ ու բավարար ջանասիրություն չի ցուցաբերել՝ պարզելու գործի համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, այդ թվում՝ նաև՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը

¹ Տե՛ս, mutatis mutandis, *Գեղամ Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԴ/0121/01/11, *Մննս Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԴ/0110/01/11, *Արթուր Մարդանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0303/01/15 որոշումները:

² Տե՛ս u սույն որոշման 5-րդ կետը:

պարզված չլինելը, շրջանցում կատարելու միջոցով վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորությունը դատաավտոտեխնիկական փորձաքննության առարկա չդարձնելը, վրաերթից հետո հետընթաց կատարելու տարածության վերաբերյալ գործում առկա հակասությունները չպարզելը: Վերաքննիչ դատարանը նաև փաստել է, որ քրեական գործը հարուցվել է քրեադատավարական օրենքի էական խախտմամբ, քանի որ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերը կարող են հարուցվել բացառապես դիմողի բողոքի հիման վրա, մինչդեռ սույն քրեական գործը հարուցվել է վարորդի կողմից ինքնական ներկայանալու և հաղորդում ներկայացնելու հիմքով, հետևաբար գործով ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի են: Վերաքննիչ դատարանն անգամ բացառել է մեղադրական դատավճիռ կայացնելու հնարավորությունը¹:

12. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը մի կողմից նշելով, որ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ ու բավարար ջանասիրություն չի ցուցաբերել՝ պարզելու գործի համար կարևոր նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները, մյուս կողմից արձանագրել է, որ մասնավոր մեղադրանքի կարգով քննվող քրեական գործը հարուցվել է դիմողի բողոքի բացակայության պայմաններում: Արդյունքում որոշում է կայացրել դիմողի իրավունքների խախտումները վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին:

Վերոգրյալ պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հիշյալ դատողություններն իրարամերժ են ու հակասող, զուրկ ներքին միասնությունից, քանի որ Վերաքննիչ դատարանը, արձանագրելով նախաքննության մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու հանգամանքը, միաժամանակ հաստատված է համարել քրեական գործով վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանագամանքի առկայությունը, այն է՝ դիմողի բողոքի բացակայությունը մասնավոր մեղադրանքի գործով: Դեռ ավելին, քրեական գործով վարույթը և դատավարական գործողությունների իրականացումը բացառող հանգամանքը փաստացի հաստատված համարելուն զուգահեռ, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի՝ արձանագրված խախտումները վերացնելու պարտականությունը սահմանելով՝ ստեղծել է իրավական անորոշության վիճակ, քանի որ վարույթն իրականացնող մարմնի նշված պարտականության կատարումն ողջամտորեն անիրագործելի է:

13. Սույն որոշման նախորդ կետում ներկայացված վերլուծությունը գնահատելով սույն որոշման 10-10.1-րդ կետերում շարադրված դատավարական նորմերի և իրավական դիրքորոշման լույսի ներքո՝

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Ն.Ղազարյանի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և դիմողի իրավունքների խախտումները վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանելու մասին որոշում կայացնելիս՝ Վերաքննիչ դատարանը չի պահպանել դատական ակտին ներկայացվող պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի խախտում, ինչն իր քննությունը էական է, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիմք է դատական ակտը բեկանելու և գործը Վերաքննիչ դատարան նոր քննության ուղարկելու համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, վերացնելով արձանագրված խախտումները, պետք է կայացնի դատական ակտին ներկայացվող պահանջներին համապատասխանող որոշում: Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 7-7.3-րդ կետերում բարձրացրած փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանց հնարավոր է անդրադառնալ Վերաքննիչ դատարանի կողմից սույն որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Նարինե Մարտինի Ղազարյանի ներկայացուցչի Գ.Գևորգյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

54. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0160/01/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Թ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ ամբաստանյալ Կարեն Աշոտի Հարությունյանի պաշտպան Թ.Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի մարտի 22-ի դատավճռով՝ Կարեն Աշոտի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ 9 դրվագով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դատավճռով Կ.Հարությունյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով 9 դրվագներից յուրաքանչյուրով, պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց)

ամիս ժամկետով, 333-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Կ.Հարությունյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2013 թվականի սեպտեմբերի 21-ից: Ամբաստանյալ Կ.Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նշված դատավճռով դատապարտվել են նաև Անահիտ Մկրտչյանը, Արմինե Ավագյանը և Նահիրա Կիրակոսյանը:

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ ամբաստանյալ Կ.Հարությունյանի պաշտպան Թ.Բաղդասարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 22-ի դատավճիռը՝ նրա մասով թողնվել է անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Կ.Հարությունյանի պաշտպան Թ.Բաղդասարյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 22-ի դատավճռով հաստատված է համարվել, որ Կ.Հարությունյանը խաբեության և վատահոյությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի համալսություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, 2013 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ մեկ դեպքով ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Վարդան Մաթևոսյանի, մեկ դեպքով՝ վերջինիս և Անահիտ Մկրտչյանի, իսկ ութ դեպքերով՝ նույն հիմնարկի՝ գործով դեռևս չպարզված կալանավորի հետ նախնական համաձայնությամբ, խաբեությամբ՝ իրական տվյալները թաքցնելով, Մխիթար Արսենյանին, «ԱՐՏ ԴԻՄԵԴ», «ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ», «ԲԻԶՈՒԱՐՄ», «ԿՈՒՊՐՄԻՆԹԵԶ», «ԴԵՆ ՕՅԼ», «ՇԱՌՈՅԱՆ ՍԱՐՅԱՆ», «ԶՏ-ԱՐ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, անհատ ձեռնարկատերեր Լևոն Հակոբյանին և Յուրա Աբրահամյանին ներկայացել է որպես «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» կամ «ԴԻԼԶՐՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերության աշխատակից՝ «Արսեն Տիգրանյան», «Արամ Միքայելյան» կամ «Արտյոմ» մտացածին անուններով և, չունենալով վերջին ընկերությունների անունից գործարքներ կնքելու իրավասություն, պայմանավորվածություններ է ձեռք

քերել տարբեր ապրանքների գնման վերաբերյալ՝ գումարը մեկ-երկու օրից փոխանցելու կեղծ խոստումով: Ապա՝ օգտագործելով իր տիրապետման տակ եղած՝ նշված երկու ընկերությունների կնիքն ու վկայականը, կնիքել ու ստորագրել է ապրանքների գնման վերաբերյալ հաշվապահական փաստաթղթեր և, չարաշահելով դրանց սեփականատերերի վստահությունը՝ ապրանքները ստանալուց հետո կատարել է ուրիշի գույքի խոշոր չափերի հափշտակություններ և առանձնապես խոշոր չափերի հափշտակության փորձ:

Արդյունքում Կ.Հարությունյանը՝ խմբի կազմում, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով, հափշտակել է.

- Մխիթար Արսենյանից՝ խոշոր չափերի՝ 1.218.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 300 կգ մեղր,

- «Արտ Դիմեդ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 1.325.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 106 խ/մ փրփրապլաստ,

- «ԷՅՐՖԵԼ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 704.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 1.100 հատ կտրող սկավառակներ,

- «ԲԻԶՈԼԱՐՄ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 930.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 400 լիտր ավտոյուղեր,

- «ԿՈՒՊՐՍԻՆԹԵԶ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 1.288.905 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 624 լիտր ավտոյուղեր և 89.5 լիտր քսուկներ,

- «ԴԵՆ ՕՅԼ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 604.032 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 416 լիտր ավտոյուղեր,

- «ՇԱՌՈՅԱՆ ՍԱՐՅԱՆ» ՍՊ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 1.390.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 600 լիտր ավտոյուղեր,

- «ԶՏ-ԱՐ ԳՐՈՒԴ» ՓԲ ընկերությունից՝ խոշոր չափերի՝ 1.533.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 800 լիտր ավտոյուղեր,

- Լևոն Հակոբյանից՝ խոշոր չափերի՝ 1.648.320 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ տնտեսական ապրանքներ,

- իսկ անհատ ձեռնարկատեր Յուրա Աբրահամյանից փորձել է հափշտակել առանձնապես խոշոր չափերի՝ 3.416.200 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ կաթնամթերք:

Բացի այդ, Կ.Հարությունյանը, նախագրուշացված լինելով սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է՝ կատարել է հանցագործության մասին սուտ մատնություն՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ Արթուր Ադամյանին հանիրավի մեղադրելով քրեական գործով ապացույցներ կեղծելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ: Այսպես.

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, իր և մյուսների վերաբերյալ քննվող քրեական գործով 2017 թվականի նոյեմբերի 1-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում՝ ամբաստանյալ Կարեն Հարությունյանը, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկությունը կեղծ է, հաղորդում է ներկայացրել այն մասին, թե, իբր, Վայք քաղաքի բնակիչ Մխիթար Արսենյանից խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով մեղր հափշտակելու դեպքի մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնի նախկին ավագ քննիչ Արթուր Ադամյանին որևէ հանգամանք չի հայտնել, իր ցուցմունքները գրվել են վերջինիս կողմից, որոնց ուշադրություն չի դարձրել, միայն ստորագրել է, որ շուտ ավարտվի, իսկ նշված դեպքի կապակցությամբ ցուցմունքներն իր ձեռքով չեն արձանագրված՝ այդ կերպ ավագ քննիչ Արթուր Ադամյանին հանիրավի մեղադրել է ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ¹:

5. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Կարեն Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցագործության 10 դրվագները կատարել է 2013թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում (վաղեմության ժամկետը կարող էր անցնել 2018թ. սեպտեմբերի 18-ին), 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքը՝ 2013թ. սեպտեմբերի 19-20-ին (վաղեմության ժամկետը կարող է անցնել 2023թ. սեպտեմբերի 20-ին), իսկ 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը՝ 2017 թվականի նոյեմբերի 01-ին (վաղեմության ժամկետը կարող է անցնել 2019թ. նոյեմբերի 01-ին):

Համաձայն գործի փաստական տվյալների՝ ներկայումս Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվում է թիվ ԵԴ-0584/01/18 (14141316) քրեական գործն ըստ մեղադրանքի Կարեն Աշոտի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Արսեն Նորիկի Թորոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, որով Կարեն Հարությունյանը մեղադրվում է սույն քրեական գործով կալանքի տակ գտնվելու ընթացքում՝ 2016թ. հունիս-օգոստոս ամիսներին, խարդախությամբ խմբի կազմում, ինչպես նաև խոշոր չափի հափշտակություն կատարելու մեջ:

Վերոգրյալի հիման վրա վերաքննիչ դատարանը փաստում է, որ Կարեն Հարությունյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցագործության 10

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 47, էջեր 1-278:

դրվագներով վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատվել է նոր հանցանքի կատարմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով՝ վաղեմության ժամկետը չի անցել, որի պայմաններում վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պաշտպան Թամարա Բաղդասարյանի միջնորդությունը ենթակա է մերժման»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի բխում քրեական գործի նյութերից, այն կայացվել է ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև նյութական և դատավարական իրավունքների խախտմամբ: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա՝ ամբաստանյալ Կ.Հարությունյանին մեղսագրված հանցանքները քննությամբ չեն հաստատվել և գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում հետազոտված ապացույցներին: Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ մի շարք որոշումներով հայտնած դիրքորոշումներին:

7. Բողոքաբերի համոզմամբ, Վերաքննիչ դատարանի այն պնդումը, որ Առաջին ատյանի դատարանի վարույթում Կ.Հարությունյանի վերաբերյալ քննվում է մեկ այլ քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ուստի սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցագործության բոլոր դրվագներով վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատվել է նոր հանցանքի կատարմամբ, խախտում է անմեղության կանխավարկածը, քանի որ Կ.Հարությունյանի նկատմամբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, հետևաբար վերջինս չի կարող համարվել նոր հանցանք կատարած անձ:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշումը՝ ճանաչել և հոչակել Կ.Հարությունյանի անմեղությունը՝ նրան մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բոլոր դրվագներով հանցանքների կատարման մեջ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով վերջինիս նկատմամբ սահմանել համաչափ պատիժ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 52, էջեր 1-109:

Որպես այլընտրանք, բողոքաբերը խնդրել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցագործության բոլոր դրվագներով Կ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *սուաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք հիմնավորված են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքները կատարելու մեջ ամբաստանյալ Կ.Հարությունյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

10. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Կ.Հարությունյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Հարությունյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքներում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքվում են սույն գործով մյուս ամբաստանյալներ՝ Նաիրա Կիրակոսյանի, Արմինե Ավագյանի, տուժողներ՝ Լևոն Հակոբյանի, Մխիթար Արսենյանի, Յուրա Աբրահամյանի, Մարտին Սարգսյանի, վկաներ՝ Նելլի Ասատրյանի, Միքայել Գրիգորյանի, Արմեն Խաչատրյանի, Գրիշա Կոստանյանի, Օվսաննա Ղազարյանի, Արա Նազարեթյանի, Մաքսիմ Ալեքսանյանի, Արմեն Դադամյանի, Նորայր Սարգսյանի, Ռաֆիկ Միրզոյանի, Հովակիմ Սաղաթելյանի, Սատուն Մարտիրոսյանի, Արմեն Մարտիրոսյանի, Դավիթ Աթաբեկյանի, Կարապետ Սարգսյանի և բազմաթիվ այլ անձանց ցուցմունքներով, անձնական խուզարկության, անձին ճանաչման ներկայացնելու, առգրավման, դեպքի վայրի, հեռախոսազանգերի վերծանումների, փաստաթղթերի գնտության արձանագրություններով, ինչպես նաև ստորադաս դատարանների դատական ակտերում շարադրված այլ ապացույցներով¹:

11. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ

¹ Տե՛ս Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը:

քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքները կատարելու մեջ ամբաստանյալ Կ.Հարությունյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

12. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Կ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցագործության բոլոր դրվագներով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե (...)*

6) անցել են վաղեմության ժամկետները, (...)

5. Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը (...):

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կարարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կարարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը (...):

3. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտարկությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը (...):

4. Ծանր հանցագործություններ են համարվում դիտարկությանը կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը»:

14. Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ դրանցում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արամ Սարգսյանի գործով որոշմամբ, արձանագրելով՝ «(...) /Թ/են /ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված/ հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են ինկոնսիստենտություն և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, սպա գործի վարույթը ենթակա է կարճման»:

16. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ

¹ Տե՛ս Արամ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

դատարաններում¹:

17. Վերոգրյալի հիման վրա, անդրադառնալով վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով ամբաստանյալ Կ.Հարությունյանին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Խտրախոսությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
(...)

2) խոշոր չափերով,

պատժվում է րուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգ-հարյուրապարիկից հազարապարիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ օրերի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Հանցագործության մասին սուր մատուցությունը, եթե անձը գործել է՝ գիրակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է՝

պատժվում է րուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապարիկից չորսհարյուրապարիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված արարքը միջին ծանրության դիտավորյալ հանցագործություն է: Հետևաբար այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է հինգ տարի:

ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը ոչ մեծ ծանրության հանցագործություն է, և այն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

18. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Կ.Հարությունյանը՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցագործության 9 դրվագները կատարել է

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի մանրամասն վերլուծությունը տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Անահիտ Մաղաթելյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10, *Միրաժ Ղամբարյանի* և *այլոց* գործով 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11, *Հրանտ Մազմանյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշումներում:

2013 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում, իսկ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը 2018 թվականի սեպտեմբերի 18-ի դրությամբ օրինական ուժի մեջ մտած չի եղել: Հետևաբար Կ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետն անցել է,

- ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կատարել է 2017 թվականի նոյեմբերի 1-ին, և 2019 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել, ուստի այդ հոդվածով նախատեսված հանցագործության վաղեմության ժամկետը ևս անցել է:

19. Մինևույն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված են վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման դեպքերը: Վճռաբեկ դատարանը, իր նախադեպային իրավունքում անդրադառնալով վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատմանը, դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) [Ա/նձին քրեական պարասխանարվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպես՝ նոր կատարված հանցագործությունն ընդհատում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1. *նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,*

2. *նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է»¹:*

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրման արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը չի ընդհատել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված արարքների համար սահմանված վաղեմության ժամկետի ընթացքը՝ նկատի ունենալով, որ այն ոչ մեծ ծանրության հանցագործություն է:

Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, համաձայն որի տվյալ պահին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվում է Կ.Հարությունյանի

¹ Տե՛ս *Միրաժ Դավթարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը:

վերաբերյալ քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, որպիսի պայմաններում սույն քրեական գործով վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատվել է նոր հանցանքի կատարմամբ, ընդունելի չէ Վճռաբեկ դատարանի համար՝ հաշվի առնելով, որ նշված գործը դեռևս գտնվում է քննության ընթացքում և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դեռևս չի հաստատվել Կ.Հարությունյանի կողմից այդ գործով նրան մեղսագրվող արարքների կատարման փաստը: Հետևաբար, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով Կ.Հարությունյանի վերաբերյալ մեկ այլ քրեական գործի քննության փաստը դեռևս չի կարող վկայել սույն քրեական գործով հաշվարկվող վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման մասին:

20. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Կ.Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ 9 (ինը) դրվագով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ 9 (ինը) դրվագով և ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով պետք է բեկանել և փոփոխել, և նշված հոդվածներով Կ.Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ: Մինևս սույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի կրման սկիզբը պետք է հաշվել 2013 թվականի սեպտեմբերի 21-ից և ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցելով նշանակված պատժին՝ Կ.Հարությունյանին պետք է անհապաղ ազատ արձակել՝ սահմանված պատիժը կրած լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Կարեն Աշոտի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ 9 (ինը) դրվագով, 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 333-րդ հոդվածի 1-ին մասով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 22-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով՝ 9 (ինը) դրվագով և ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել և փոփոխել, նշված հոդվածներով Կարեն Աշոտի Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

2. Կարեն Աշոտի Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի կրման սկիզբը հաշվել 2013 թվականի սեպտեմբերի 21-ից և ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը հաշվակցելով նշանակված պատժին՝ նրան անհապաղ ազատ արձակել՝ սահմանված պատիժը կրած լինելու հիմքով:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասերով թողնել անփոփոխ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

<i>Նախագահող՝</i>	<i>ստորագրություն</i>
<i>Դատավորներ՝</i>	<i>ստորագրություններ</i>

55. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԴ/0036/01/16

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ՝ դատավորներ*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ռ.ՂԱԶԱՐՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վիկտոր Սարգսի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման դեմ պաշտպան Ռ.Ղազարյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2015 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 41115415 քրեական գործը:

2015 թվականի դեկտեմբերի 15-ին Վիկտոր Հայրապետյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ Վ.Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ Վ.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 1-ի որոշմամբ Վ.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2016 թվականի մարտի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճռով Վ.Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի որոշմամբ պաշտպաններ Մ.Սարգսյանի և Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Վ.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացվել է, և խափանման միջոց է ընտրվել չեռանալու մասին ստորագրությունը:

4. Նոր քննության արդյունքում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 20-ի դատավճռով Վ.Հայրապետյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

5. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրող Հ.Բաղդասարյանի բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի դատավճիռը բեկանվել է և փոփոխվել: Վիկտոր Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Նշանակված պատժին հաշվակցվել է Վ.Հայրապետյանի նախնական կալանքի տակ գտնվելու՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս 15 (տասնհինգ) օրը, և պատիժը համարվել է կրած:

6. Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի որոշումներով Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման դեմ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ պաշտպան Ռ.Ղազարյանի բողոքը ընդունվել վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Նախաքննության մարմնի կողմից Վիկտոր Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա «2011 թվականի մայիսի 17-ից հունիսի կեսերն ընկած ժամանակահատվածում առանց համապատասխան թույլտվության՝ ապամոնրաժել և գաղտնի հափշտակել է Կապանի Ձորք թաղամասի և Մ.Պապյան փողոցի վերնամասում գրավող սարալանջից մինչև Ռ.Մինասյան փողոցի սկզբնամասը ձգվող, Կապան քաղաքային համայնքին պարկանող ջրարար խողովակաշարի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 15.600.000 ՀՀ դրամ արժողությամբ, ընդհանուր առմամբ 1300մ² 530մ² արտաքին տարածքում մտնող խողովակները»¹:

8. Ամբաստանյալ Վ.Հայրապետյանը, ըստ էության, ցուցմունք է տվել այն մասին, որ 2011 թվականի ապրիլից մայիսն ընկած ժամանակահատվածում, Կապան քաղաքում շրջանառվող խոսակցություններից իմանալով Ձորք թաղամասի վերևի հատվածում գտնվող խողովակաշարի մասին, գնացել է և տեղում պարզել, որ իրականում այնտեղ դրանք առկա են: **Դրանից հետո հանդիպել է Կապանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Սվետլանա Արզումանյանին և խնդրել ճշտել, թե նշված խողովակաշարը Կապան համայնքի հաշվեկշռում է, թե՛ ոչ: Վերջինս ճշտել է և ասել, որ իրենց հաշվեկշռում այդպիսի խողովակաշար առկա չէ:** Այնուհետև բանվորների հետ կատարել է խողովակաշարի քանդման աշխատանքներ, որի ընթացքում քանդել են մոտ 250-ից 300 մետր խողովակ: Որպես ջարդոն վաճառել է 20-ից 22 խողովակ՝ ընդհանուրը՝ 16 տոննա, յուրաքանչյուր տոննան՝ 20.000 ՀՀ դրամով: Նշված աշխատանքները կատարել է շահույթ ստանալու նպատակով, սակայն կրել է 1.700.000 ՀՀ դրամի նյութական վնաս²:

8.1. Տուժողի ներկայացուցիչ Դավիթ Կոստանդյանը, ըստ էության, ցուցմունք է տվել այն մասին, որ քաղաքապետարանի աշխատակիցներով Կապան քաղաքի Ձորք թաղամասի և Մ.Պապյան փողոցի վերնամասում գտնվող սարալանջից մինչև Ռ.Մինասյան փողոցի սկզբնամասը ձգվող խողովակաշարը տեղում ուսումնասիրելիս տեսել են խողովակ՝ հողից

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 230:

² Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

դուրս ցցված ու կտրված վիճակում, ջրամեկուսիչ ժապավենի կտորներ և փորված հատվածներ: **Կապանի քաղաքապետարանի իրավաբանական բաժնի աշխատակիցները որևէ փաստաթուղթ չեն գտել, որոնցով կհաստատվեր, որ խողովակաշարը գտնվում է Կապանի քաղաքապետարանի հաշվեկշռում:** Ինքը տեղյակ չէ, թե այդ խողովակաշարը հանդիսանում է համայնքային սեփականություն, թե՛ ոչ, արդյոք վնաս է պատճառվել համայնքին, թե՛ ոչ, եթե այո, ապա ինչքան, ինչպես նաև տեղյակ չէ, թե այդ խողովակաշարը երբ է կառուցվել, ինչ նպատակով, ում կողմից և երբևէ շահագործվել է, թե՛ ոչ¹:

8.2. Կապանի համայնքապետարանի քարտուղարության բաժնի պետ, վկա Աննա Գաբրիելյանը, ըստ էության, ցուցմունք է տվել այն մասին, որ նշված խողովակաշարն օրենքի ուժով պատկանում է Կապան համայնքին, քանի որ գտնվում է համայնքի տարածքում, սակայն **այն որևէ հանձնման-ընդունման ակտով չի ներառվել Կապան քաղաքի միջոցների հաշվեկշռում:** Նշված խողովակաշարի կառուցման, նպատակային նշանակության և երկարության վերաբերյալ Կապանի համայնքապետարանում որևէ փաստաթուղթ չկա: Նշված խողովակաշարի վերաբերյալ տեղեկացել են իրավապահ մարմիններից: Նշել է, որ Կապան համայնքը քաղաքացիական հայց չի ներկայացրել, քանի որ **չեն կարող ասել, թե որքան վնաս է պատճառվել համայնքին²:**

8.3. Վկաներ Մամվել Ղազարյանը և Լորենց Հարությունյանը, ըստ էության, նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել այն մասին, որ մոտ 5 տարի առաջ Վիկտոր Հայրապետյանի հետ Կապան քաղաքում խողովակներ են քանդել, և հստակ չեն կարող ասել, թե օրական քանի խողովակ են քանդել, և դրանց ընդհանուր երկարությունն ինչքան է եղել³:

8.4. Որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավարի՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 2333 գրության համաձայն՝ ՀՀ կառավարության՝ 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ Կապան քաղաքի ներքին ջրամատակարարման և ներքին ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն: Կապանի Ձորք թաղամասից Մ.Պապյան փողոցի վերնամասով մինչև Ռ.Մինասյան փողոցի եզրամասը ձգվող ջրամատակարարման ջրագիծը նույնպես հանդիսանում է համայնքային սեփականություն: Սակայն, քանի որ նշված խողովակներն առանձին գումարային արտահայտությամբ **արտացոլված (հաշվառված) չեն Կապանի քաղաքապետարանի հաշվեկշռում, ներկա պահին հնարավոր չէ հստակ որոշել քաղաքապետարանի կրած գույքային վնասի չափը⁴:**

¹ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

² Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

³ Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 31:

8.5. Որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի հունվարի 14-ի թիվ 23 գրության համաձայն՝ նշված խողովակների ապամոնտաժման մասին Կապանի քաղաքապետարանը տեղեկացել է քննչական բաժնից: ՀՀ կառավարության՝ 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ սահմանվել է Կապան համայնքի սեփականության գույքի ցանկը, որի մեջ մտել են նաև ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգը և ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգը: **Նույն որոշման 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մարզպետներին հանձնարարվել է համայնքների ղեկավարների, շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների հետ համատեղ մինչև 1997 թվականի հուլիսի 1-ը իրականացնել այդ որոշման 1-ին կետով սահմանված կարգով համայնքներին հանձնման և ընդունման գործընթացը: Կապանի քաղաքապետարանում չեն պահպանվել գույքի հանձնման-ընդունման փաստաթղթերը, ինչը չի նշանակում, որ վերոնշյալ որոշմամբ սահմանված գույքը ներկա պահին չի հանդիսանում համայնքային սեփականություն¹:**

8.6. Որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի փետրվարի 22-ի թիվ 317 գրության համաձայն՝ Կապանի քաղաքապետարանի հաշվեկշռում համայնքի ջրամատակարարման համակարգը ներկայացված է մեկ ընդհանուր տողով և **Կապանի Ձորք թաղամասից Մ.Պապյան փողոցի վերնամասով մինչև Ռ.Մինասյան փողոցի եզրամասը ձգվող ջրամատակարարման ջրագիծը (ինչպես և համակարգի մնացած բաղադրիչները) առանձին գումարային արտահայտությամբ արտացոլված (հաշվառված) չէ նրանում, այդ պատճառով հնարավոր չէ նշել դրա բալանսային արժեքը: Համաձայն համայնքի հիմնական միջոցների գույքագրման ցուցակի՝ ներհամայնքային նշանակության ջրամատակարարման ընդհանուր համակարգի մնացորդային արժեքն այդ պահի դրությամբ կազմել է 10.713.100 ՀՀ դրամ²:**

8.7. Որպես այլ փաստաթուղթ՝ ապացույց ճանաչված Սյունիքի մարզի Կապան քաղաքային համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի ապրիլի 19-ի թիվ 697 գրության համաձայն՝ համայնքապետարանը չունի տեղեկատվություն նշված խողովակաշարի՝ շահագործման հանձնված լինելու մասին: **Կապանի քաղաքապետարանում չեն պահպանվել փաստաթղթեր այն մասին, թե ում կողմից և ինչ նպատակով է այն կառուցված եղել, սակայն տեսականորեն որևէ այլ նպատակի, բացի ջրամատակարարումից, այն չէր կարող ծառայել³:**

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 153:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 147:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 61:

8.8. Դատասարանքագիտական փորձաքննության թիվ 65-ԱՊ-15 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված մետաղական խողովակի նմուշի գննությունից ելնելով՝ նմանատիպ խողովակի 1 գծամետրի հավանական միջին շուկայական արժեքը 2011 թվականի հունիսի 2-ի դրությամբ առկա սպրանքային վիճակի հաշվառմամբ գնահատվում է 12.000 ՀՀ դրամ¹:

9. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի մարտի 20-ի արդարացման դատավճռում արձանագրել է հետևյալը. «Դատարանը հաստատել է համարում, որ 2011 թվականի սկզբին Կապան համայնքի բնակիչ Վիկտոր Հայրապետյանը, տեղեկանալով նշված խողովակաշարի մասին, հանդիպել է Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Արզումանյանին և խնդրել ճշտել, թե արդյոք այդ խողովակաշարը Կապան համայնքի գույքի հաշվեկշռում ներառված է, թե ոչ: Վերջինս ճշտել է և հայտնել, որ այդպիսի գույք համայնքի հաշվեկշռում առկա չէ: (...)

Անդրադառնալով պաշտպան Ռ.Ղազարյանի ներկայացրած միջնորդությանը՝ դատասարանքագետ-փորձագետի թիվ 65-ԱՊ-15 եզրակացությունը որպես սպացույց օգտագործելու անթույլատրելիությունը հաստատելու մասին, դատարանը գրնում է, որ նշված միջնորդությունը ենթակա է քավարարման, քանի որ փորձաքննության կատարման ժամանակ գնվել է խողովակի 25-ից 37 սմ հարվածը՝ միայն հողից դուրս ցցված մասը, որպիսի պայմաններում փորձագետի հետևությունն այն մասին, որ նմանատիպ խողովակի 1 գծամետրի հավանական միջին շուկայական արժեքը 2011 թվականի հունիսի 2-ի դրությամբ առկա սպրանքային վիճակի հաշվառմամբ գնահատվում է 12.000 ՀՀ դրամ, կրում է ընդհանրական բնույթ, նշվածը չի կարող ընդունվել որպես Վիկտոր Հայրապետյանի կողմից հափշտակված խողովակների 1 գծամետրի արժեք: Դատարանն արձանագրում է, որ փորձագետը չի գննել նշված խողովակի 1 գծամետրը որպես փորձաքննության կատարման ելակետ, չի պահանջել նախաձեռնող մարմնից փրամադրել խողովակի մեկ գծամետր հարված (քավարարվել է նախաձեռնող մարմնի բանավոր հայտարարությամբ, որ նշված խողովակն ունի 10-ից 11 մետր երկարություն), որը դատարանը դիտում է որպես փորձաքննության կատարման կարգի էական խախտում, որն ազդել է արացված փաստական տվյալների հավաստիության վրա:

(...) Անդրադառնալով պաշտպան Ռ.Ղազարյանի ներկայացրած միջնորդությանը՝ 25.02.2016 թվականին կազմված դեպքի վայրի գննության մասին արձանագրությունը որպես սպացույց օգտագործելու անթույլատրելիությունը հաստատելու մասին, դատարանը գրնում է, որ միջնորդությունը ենթակա է քավարարման, քանի որ նշված գննության

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 18-19:

ժամանակ շինարարական մեթոդի և մեթոդաչափի փոխարեն օգտագործվել է ավերումը և ավերումը արագաչափը (լեռներում անհարթ ճանապարհով, որը ոչ միշտ է եղել զուգահեռ խողովակաշարին), ինչը դատարանի համոզմամբ քննչական գործողության կատարման կարգի էական խախտում է, որն ազդել է արագված փաստական փոխալների հավաստիության վրա (...):

(...) Կասյան համայնքը քաղաքացիական հայց չի ներկայացրել, քանի որ բազմիցս նշել է, որ համայնքին վնաս չի պատճառվել:

(...) Դատարանը գտնում է, որ ձեռք բերված ապացույցներով հնարավոր չէ ապահովել Վ.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքի ապացուցման առարկայի պարզումը, այն է՝ չի հիմնավորվել, թե Վիկտոր Հայրապետյանը քանի մետր և ինչ վիճակի խողովակ է ապամոնտրվել, և նրա գործողությունների արդյունքում որքան վնաս է պատճառվել Կասյան համայնքին, ինչի հիման վրա դատարանը փաստում է, որ առկա է կասկած առ այն, որ նրա գործողությունների արդյունքում որևէ վնաս չի պատճառվել կամ նշված վնասը եղել է մանր չափերով, և որ դատարարելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը փոխալ դեպքում հանգեցնում է անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չլինելուն, այսինքն՝ բացակայում են Վիկտոր Հայրապետյանի մեղավորության մասին վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցները¹:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն ընդունելի է համարում 25.02.2016 թվականին կազմված դեպքի վայրի զննության մասին արձանագրությունը և դատաստանագրության փորձաքննության թիվ 65-ԱՊ-15 եզրակացությունն որպես անթույլարելի ապացույց ճանաչելու մասին Դատարանի հերևությունները, և փաստում է, որ Առաջին աստիճանի դատարանն այդ մասով թույլ չի տվել որևէ դատավարական իրավունքի նորմի խախտում: 25.02.2016 թվականին կազմված դեպքի վայրի զննության մասին արձանագրությունը և դատաստանագրության փորձաքննության թիվ 65-ԱՊ-15 եզրակացությունը բավարար չեն հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Վիկտոր Հայրապետյանը կատարել է ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի գաղտնի հափշտակություն: Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Վ.Հայրապետյանի կողմից Կասյան քաղաքային համայնքին պարկանող գաղտնի հափշտակված ջրարար խողովակաշարի արժեքը որոշելու ուղղությամբ այլ ապացույց ձեռք բերելու հնարավորությունը սպառված է, որպիսի պայմաններում չփարարված բոլոր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 92-113:

կասկածները հոգուր ամբաստանյալի մեկնաբանելով՝ անհրաժեշտ է որպես համաչափակված գույքի արժեք հիմք ընդունել վերջինիս կողմից հայրնաձ փաստական փոխաները: Մասնավորապես, սույն գործով ամբաստանյալ Վիկտոր Հայրապետյանն իր ցուցմունքներով հայրնաձ է, որ սպամոնրաժված խողովակներից ընդհանուր առմամբ վաճառել է որպես ջարդոն 20-ից 22 խողովակ ընդհանուր 16 փոնսա, յուրաքանչյուր փոնսան՝ 20.000 ՀՀ դրամով: Եման պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Վիկտոր Հայրապետյանի կողմից Կապան քաղաքային համայնքին պարկանող գաղփրնի համաչափակված ջրարար խողովակաշարի ընդհանուր արժեքը կազմել է 320.000 ՀՀ դրամ, որպիսի պայմաններում ամբաստանյալի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 1-ին մասով, այն է՝ ուրիշի գույքի գաղի չափերով գաղփրնի համաչափակություն»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոշարադրյալ հիմնավորումներով.

11. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, Վիկտոր Հայրապետյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հողվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, թույլ է տվել քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի պահանջների խախտումներ:

Մասնավորապես, գործի քննությանը այդպես էլ չի պարզվել, թե վեճի առարկա հանդիսացող ջրատար խողովակաշարը երբ, ում կողմից և ինչ նպատակով է կառուցվել: Չի պարզվել, թե շուրջ 40 տարի առանց շահագործելու՝ հողի տակ գտնվելու պարագայում խողովակներն ինչ վիճակում են եղել, քանի մետր խողովակ է տեղափոխվել և, ի վերջո, ում են դրանք պատկանել, ում է պատճառվել նյութական վնաս: Տուժողի ներկայացուցիչը մշտապես պնդել է, որ Կապանի քաղաքապետարանին որևէ վնաս չի պատճառվել և տուժողի կողմից բողոք չկա:

Ըստ բողոքաբերի՝ փորձագետի եզրակացության բացակայության պայմաններում միայն Վիկտոր Հայրապետյանի ցուցմունքը չէր կարող հիմք հանդիսանալ սպացուցված համարելու այն փաստը, որ տուժողին պատճառվել է 320.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ կատավարության՝ 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշման 4-րդ կետի պահանջը չի կատարվել՝ նշված խողովակաշարը չի ներառվել Կապան համայնքի սեփականության գույքի ցանկում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 2011 թվականի սկզբին Վ.Հայրապետյանը մինչ խողովակաշարն սպամոնստաժելը, Կապանի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8, թերթեր 101-139:

համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Արզումանյանից ճշտել է, որ այն Կապան համայնքի գույքի հաշվեկշռում ներառված չէ: Բացի դրանից, գործի քննությամբ չի հիմնավորվել, որ խողովակաշարի քանդված հատվածն ամբողջությամբ միայն Վ.Հայրապետյանն է ապամոնտաժել և տեղափոխել:

12. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը 2011 թվականին կատարած ոչ մեծ ծանրության հանցանքի համար Վ.Հայրապետյանին դատապարտել է մեկ տարվա ազատազրկման, հաշվի չառնելով գործի վարույթը բացառող մի շարք հանգամանքներ՝ տուժողի բողոքի բացակայությունը, համաներման ակտերը և վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի արդարացման դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված գողության հանցակազմի հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ոստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ համանման փաստական հանգամանքներ ունեցող գործերով միատեսակ իրավակիրառ պրակտիկայի ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք Վիկտոր Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու մեջ մեղավոր ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարվորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համա-

ձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում (...)

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկապես նշանները:

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ. (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

17. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով «ապացույցների բավարարություն» հասկացության վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները¹, Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով արձանագրել է հետևյալը. «(...) «ապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

1) անմեղության կանխավարկածը,

2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,

3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարձառաքանվածությունը:

(...) [Անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

(...) Երբքին համոզմունքի՝ որպես ապացույցների գնահատման արդյունքի օբյեկտիվ հիմքը քրեական գործով ձեռք բերված, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված ապացույցների բավարար

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔԴԴ/0632/01/08, Ֆրունզիկ Գալստյանի գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09, Միրակ Սաքանյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10, Մարգար Հակոբյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշումները:

համակցությունն է: Այս առումով անհրաժեշտ է վերլուծել ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության հարկանիշները, որոնց տեսանկյունից ապացույցները ենթակա են գնահատման:

(...) Ապացույցի արժանահավատության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (...),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (...),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության սրացումն այլ աղբյուրից:

(...) Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում դրա պարճառուները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա (...)¹:

18. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի համաշարժականությունը (...):»:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում հափշտակության՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության հատկանիշների վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է արտահայտել հետևյալի մասին. ««Համաշարժականությունը ենթադրում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնել կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնել, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Իսկ դրանից հետևում է, որ գողության օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշը՝ գործողությունը, դրսևորվում է

¹ Տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31 կետերը:

նրանում, որ ուրիշի գույքը հանցավորի կողմից վերցվում, և հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում»¹:

Վերահաստատելով մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ի թիվս այլնի, քննարկվող արարքի պարտադիր քրեաիրավական հատկանիշ է հանդիսանում հափշտակվող գույքի՝ այլ անձին (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, պետություն, համայնք) պատկանելու հանգամանքը: Հափշտակության դեպքում անձի՝ ուրիշի գույքն ապօրինի կերպով իրենը դարձնելը բացասական ազդեցություն է ունենում դրան օրինական հիմքերով տիրապետողի գույքային ֆոնդի վրա, ինչն էլ իրենից ենթադրում է որոշակի նյութական վնաս: Ուրիշի գույքն իրենը կամ այլ անձինը դարձնելը հնարավոր է կատարել հափշտակվող գույքի՝ ուրիշին պատկանելու պարագայում: Գույքի՝ ուրիշին չպատկանելու դեպքում բացակայում է քննարկվող հանցակազմի օբյեկտը՝ քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող սեփականության այն հարաբերությունները, որոնք հափշտակության արդյունքում խախտվում են: Հանցագործության օբյեկտի բացակայության պայմաններում քրեադատավարական տեսանկյունից բացակայում է նաև տուժողը, քանի որ օրենսդրական կարգավորումների համաձայն՝ տուժող է այն անձը, ում պատճառվել է կամ կարող էր պատճառվել, ի թիվս այլնի, գույքային վնաս, ինչը պետք է նույնական լինի քրեական օրենքով նկարագրված վնասի հետ: Այլ կերպ ասած՝ հանցակազմի հատկանիշ հանդիսացող վնասի կրողը կամ հնարավոր կրողը կարող է քրեական վարույթում հանդես գալ որպես տուժող: Միևնույն ժամանակ, չի բացառվում գույքային վնասի հետ կապված հարցերի քննարկումն այլ իրավահարաբերությունների շրջանակներում (քաղաքացիական, վարչական և այլն):

Գողության՝ որպես նյութական հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հետևանքը՝ վնասը, որը պետք է հաստատվի քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալներով:

Վնասի չափը, որպես կանոն, որոշվում է հափշտակված գույքի՝ դատաապրանքագիտական փորձաքննությամբ որոշված շուկայական միջին արժեքով: Գույքի վաճառքի գինը չի կարող մեխանիկորեն հիմք ընդունվել հափշտակության չափը որոշելու համար, քանի որ գույքի շուկայական արժեքն ու դրա վաճառքի գինը ոչ բոլոր դեպքերում են համընկնում: Վաճառքի գինը կարող է տարբերվել՝ բարձր կամ ցածր լինել շուկայական արժեքից:

Սուբյեկտիվ կողմի՝ մեղքի ձևի տեսանկյունից, հափշտակությունը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, որի դեպքում հանցավորը գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունը, այսինքն՝ դրա

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Դավիթ Ղամբարյանի և մյուսների* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշումը, *Գրիգոր Ղլիշյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ5/0005/01/14 որոշումը:

ունակությունը վնաս պատճառելու գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին:

19. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Իկտր Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2011 թվականի մայիսի 17-ից հունիսի կեսերն ընկած ժամանակահատվածում առանց համապատասխան թույլտվության՝ ապամոնտաժել և գաղտնի հափշտակել է Կապանի Ձորք թաղամասի և Մ.Պապյան փողոցի վերնամասում գտնվող սարալանջից մինչև Ռ.Մինասյան փողոցի սկզբնամասը ձգվող, Կապան քաղաքային համայնքին պատկանող ջրատար խողովակաշարի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 15.600.000 ՀՀ դրամ արժողությամբ, ընդհանուր առմամբ 1300մ 530մմ արտաքին տրամաչափով մետաղյա խողովակները¹:

Առաջին ատյանի դատարանը, 2018 թվականի մարտի 20-ի դատավճռով ճանաչելով և հռչակելով Վ.Հայրապետյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով, արձանագրել է, որ ձեռք բերված ապացույցներով հնարավոր չէ ապահովել Վ.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքի ապացուցման առարկայի պարզումը, այն է՝ չի հիմնավորվել, թե Վ.Հայրապետյանը քանի մետր և ինչ վիճակի խողովակ է ապամոնտաժել, և նրա գործողությունների արդյունքում որքան վնաս է պատճառվել Կապան համայնքին, ինչի հիման վրա Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ առկա է կասկած առ այն, որ Վ.Հայրապետյանի գործողությունների արդյունքում որևէ վնաս չի պատճառվել կամ նշված վնասը եղել է մանր չափերով, և որ դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը տվյալ դեպքում հանգեցնում է անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չլինելուն, այսինքն՝ բացակայում են Վ.Հայրապետյանի մեղավորության մասին վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցները²:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Վ.Հայրապետյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով՝ հաստատված է համարել, որ նա գաղտնի հափշտակել է Կապան քաղաքային համայնքին պատկանող՝ 320.000 ՀՀ դրամ արժողությամբ ջրատար խողովակաշարը³:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-18-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճելի խողովակաշարը ՀՀ կառավարության՝ 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշման 4-րդ կետով

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

սահմանված կարգով Կապան համայնքի ներհամայնքային նշանակության ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ցանկում ներառելու վերաբերյալ փաստաթղթավորված տեղեկություններ առկա չեն: Հիշյալ գործընթացի, ինչպես նաև խողովակաշարի՝ Կապան համայնքի սեփականությունը հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը հաստատվում է Կապան համայնքի ղեկավարի բազմաթիվ գրություններով, տուժողի ներկայացուցիչ Դ.Կոստանդյանի, Կապան համայնքի քարտուղարության բաժնի պետ Ա.Գաբրիելյանի ցուցմունքներով: Ավելին, վերջինիս ցուցմունքով հաստատվում է, որ իրավապահ մարմիններից են տեղեկացել նշված խողովակաշարի գոյության մասին¹: Այս պարագայում Վիկտոր Հայրապետյանի արարքում գողության հանցակազմի պարտադիր հատկանիշը՝ ուրիշի գույքը հափշտակելը, իր հաստատումը գործի նյութերում չի գտնում: Փաստորեն, բավարար փաստական տվյալներով չի հաստատվել Վիկտոր Հայրապետյանին մեղաագրված արարքի հետևանքով Կապան համայնքին գույքային վնաս հասցնելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Հայրապետյանի արարքում գաղտնի հափշտակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի տարրը՝ դիտավորությունը, նույնպես քրեական գործում առկա ապացույցներով չի հաստատվում: Ի թիվս այնի, նշվածի մասին է վկայում Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի դատավճռով հաստատված այն հանգամանքը, որ խողովակաշարի գոյության մասին իմանալուց հետո Վ.Հայրապետյանը հանդիպել է Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Արզումանյանին և խնդրել ճշտել նշված խողովակաշարը Կապան համայնքի հաշվեկշռում գտնվելու հանգամանքը: Վերջինս ճշտել է և ասել, որ իրենց հաշվեկշռում այդպիսի խողովակաշար առկա չէ²: Ի դեպ, նշված հանգամանքը մեղադրանքի կողմը երբևէ չի վիճարկել:

Ինչ վերաբերում է Վ.Հայրապետյանի կողմից զգալի չափերով՝ 320.000 ՀՀ դրամ արժողությամբ մետաղյա խողովակներ հափշտակելու հանգամանքը հաստատված համարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դրա հիմքում ևս ընկած չեն բավարար ապացույցներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դեպքի վայրի զննության արձանագրության և դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացության՝ որպես անթույլատրելի ապացույցներ ճանաչված լինելու պայմաններում, ինչին համաձայնել է նաև Վերաքննիչ դատարանը, բավարար փաստական տվյալներ առկա չեն՝ Վ.Հայրապետյանի կողմից զգալի չափերով գողություն կատարելը հաստատված համարելու համար,

¹ Տե՛ս սույն որոշման 8.1-8.9-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

իսկ ապամոնտաժված խողովակների վաճառքի արժեքի վերաբերյալ Վ.Հայրապետյանի ցուցմունքն ինքնին չի կարող բավարար լինել հափշտակության չափը որոշելու համար, քանի որ խողովակների միջին շուկայական արժեքը կարող էր էապես տարբերվել դրանց վաճառքի գնից:

21. Վերոշարադրյալ վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Վ.Հայրապետյանին մեղավոր ճանաչելով, պատշաճ ստուգման և գնահատման չի ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները: Քրեական գործում առկա չէ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված համարել Վ.Հայրապետյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը Վիկտոր Հայրապետյանի նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացրել ապացույցների բավարար համակցության բացակայության պայմաններում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ: Այսինքն, թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը Վ.Հայրապետյանին արդարացնելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վիկտոր Սարգսի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

22. Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն առարկայագուրկ է համարում բողոքաբերի՝ սույն որոշման 12-րդ կետում նշված փաստարկների անդրադառնալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վիկտոր Սարգսի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 19-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի արդարացման դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

56. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0190/06/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի, 2008 թվականի մայիսի 19-ի, 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշումների դեմ դիմող Գրիգոր Հարությունի Ոսկերյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքի հիման վրա հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ա.Միրզոյանի՝ 2008 թվականի մարտի 2-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62202608 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 225-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

2008 թվականի մարտի 8-ին Գրիգոր Հարությունի Ոսկերյանը ձերբակալվել է:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Հարությունյանի՝ 2008 թվականի մարտի 11-ի որոշմամբ Գ.Ոսկերյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով:

3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մարտի 11-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և Գ.Ոսկերչյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

Գ.Ոսկերչյանի պաշտպան Հ.Գևորգյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի մարտի 21-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ բողոքարկված դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

3.1 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Գ.Ոսկերչյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ Գ.Ոսկերչյանի պաշտպան Հ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մայիսի 19-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3.2 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 2-ի որոշմամբ Գ.Ոսկերչյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ Գ.Ոսկերչյանի պաշտպան Հ.Գևորգյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 18-ի որոշման դեմ հավատարմագրված փաստաբանի միջոցով Գ.Ոսկերչյանի բերած բողոքը վերադարձրել է:

3.3 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Գ.Ոսկերչյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

3.4 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ Գ.Ոսկերչյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 (երկու) ամիս ժամկետով:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ պաշտպան Ս.Ոսկանյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

4.1 Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճռով ամբաստանյալ Գ.Ոսկերչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի կիրառմամբ՝ Գ.Ոսկերչյանն ազատվել է պատիժը կրելուց: Գ.Ոսկերչյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացվել է, և նա ազատ է արձակվել:

5. Ամբաստանյալ Գ.Ոսկերչյանի, վերջինիս պաշտպաններ Մ.Շուշանյանի և Մ.Ոսկանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը:

6. Գ.Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի գանգառի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ին վճիռ է կայացրել, որով ճանաչել է Գ.Ոսկերչյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 3-րդ կետով երաշխավորված իրավունքների խախտում¹:

7. Որպես նոր հանգամանք վկայակոչելով *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը՝ Գ.Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը 2019 թվականի հունվարի 29-ին բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

2019 թվականի ապրիլի 30-ին Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելու և ներկայացված բողոքը Վճռաբեկ դատարանի վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Գրիգոր Ոսկերչյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

¹ Տե՛ս *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգառ թիվ 28739/09:

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ. «(...) [Ն]ա 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններում նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի պարտություն կրելուց հետո ներգրավվելով նրա համահոհների խմբում, մի շարք այլ անձանց մասնակցությամբ հրահրել ու կազմակերպել է անկարգություններ, որոնք տեղի են ունեցել 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և զուգորդվել լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վնասումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայթուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված փարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով (...)»¹:

9. Ի պատասխան Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 7-ի թիվ ԴԴ6-Ե-1885 գրության՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2019 թվականի մարտի 27-ի թիվ ԴԴ-8-Ե-10463/19 գրությամբ հայտնել է, որ Գ.Ոսկերչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման կայացման վերաբերյալ որևէ տեղեկություն, ինչպես նաև որոշման կրկնօրինակ Վերաքննիչ դատարանում առկա չէ²:

9.1 Ի պատասխան Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 28-ի թիվ ԴԴ6-Ե-2530 գրության՝ ՀՀ դատական դեպարտամենտը 2019 թվականի մարտի 29-ի թիվ ԴԴ-1-Ե-2694 գրությամբ հայտնել է, որ Գ.Ոսկերչյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը հայտնաբերելու ուղղությամբ աշխատանքներ են կատարվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմերի, Դատական դեպարտամենտի արխիվային փաստաթղթերի պահպանման բաժնի հետ, սակայն կատարված ուսումնասիրությունների արդյունքում Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը չի հայտնաբերվել³:

9.2 Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 3-ի թիվ ԴԴ6-Ե-2698 գրության համաձայն՝ Մ.Շուշանյանին կարիքն առաջանալու կապակցությամբ խնդրանք է ներկայացվել Վճռաբեկ դատարան ուղարկել իր կողմից վճռաբեկ բողոքում մատնանշված Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման պատճենը⁴:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 14:

² Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթ 30:

³ Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթ 35:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթ 37:

9.3 Վճռաբեկ դատարանի աշխատակազմի կողմից կազմված՝ 2019 թվականի ապրիլի 26-ի և հոկտեմբերի 28-ի հեռախոսագրերի համաձայն՝ Գ.Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը հայտնել է, որ Գ.Ոսկերչյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման պատճենը իրենց մոտ չի պահպանվել, ինչի մասին գրավոր կտեղեկացնի Վճռաբեկ դատարանին¹:

9.4 Վճռաբեկ դատարանում սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Մ.Շուշանյանի կողմից որևէ գրություն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վերը նշված որոշման վերաբերյալ չի ստացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Դիմող Գ.Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2018 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան՝ խնդրելով հարուցել նոր հանգամանքի հիմքով Վերաքննիչ դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի, 2008 թվականի մայիսի 19-ի, 2008 թվականի հուլիսի 18-ի, 2008 թվականի սեպտեմբերի 19-ի, 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշումների վերանայման վարույթ, բեկանել դրանք և վերացնել կալանավորման և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի մարտի 11-ի, 2008 թվականի մայիսի 4-ի, 2008 թվականի հուլիսի 2-ի, 2008 թվականի սեպտեմբերի 3-ի և 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումները:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյոք *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում արձանագրելու փաստը նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի, 2008 թվականի մայիսի 19-ի, 2008 թվականի սեպտեմբերի 19-ի, 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշումները վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

(...)

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 4-րդ, թերթեր 46, 56:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին արյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող Կրիմիայի միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

13. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

14. Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի ենթադրյալ խախտմանը, Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում նշել է, որ. «(...) Դատարանն անդրադառնում է իր՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված՝ դատաքննության ընթացքում ազատ արձակվելու իրավունքին առնչվող ընդհանուր սկզբունքներին և նշում է, որ արդեն իսկ եզրահանգել է, որ կալանք նշանակելիս և դրա ժամկետը երկարաձգելիս կարծրաբանության ձևակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է

¹ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Գրիշա Վիրաբյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, Ժիրայր Սեֆիրյանի գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, Արայիկ Զալյանի գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, Դավիթ Ավետիսյանի գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԳ3/0088/01/09, Ալիկ Մաթևոսյանի գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

Հայաստանում: Սույն գործով ներպետական դատարանները նույն կերպ են հիմնավորել դիմումատուի շարունակական կալանավորումը՝ միայն մեջբերելով ներպետական օրենսդրության համապարաստիան իրավական սկզբունքները և անդրադառնալով հանցագործության ծանրությանը, առանց ներկայացնելու նրա գործի հատուկ փաստերը կամ ներկայացնելու մանրամասներ առ այն, թե ինչպես են հիմնավորվում թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ կրկին հանցագործություն կատարելու ռիսկերը: Ոստի Դատարանը եզրակացնում է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պարճատներ դիմումատուին կալանավորելու համար (...)¹:

Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում²:

15. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում արձանագրելու փաստը նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի, 2008 թվականի մայիսի 19-ի, 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշումները վերանայելու հիմք է:

15.1 Միննույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի նյութերում առկա չէ Եվրոպական դատարանի կողմից վկայակոչված և Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքում հիշատակված ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից և ՀՀ դատական դեպարտամենտից ստացված գրությունները³, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հնարավոր չէ անդրադառնալ նոր հանգամանքի հիմքով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման հարցին:

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյոք Եվրոպական դատարանի՝ *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումը հիմք է՝ Գ.Ոսկերչյանի կալանավորման և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

17. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «*Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի*

¹ Տե՛ս *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 23-րդ կետը:

² Տե՛ս *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 24-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9-9.1-րդ կետերը:

վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

17.1 Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հերկյալ պարտավորությունները.

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումատրուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հերևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր սրանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում»¹:

18. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքացելու մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով «*restitutio in integrum*» հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես՝ վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաքացման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է

¹ Տե՛ս Ժիրայր Սեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

Կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

18.1. Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝ կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաքաջումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից **(i)**-ը, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: *Այդ չափանիշի բավարարման համար պետք է լինի ուղիղ պարճատահերևանքային կասպ՝ հայրնաբերված խախտման և տուժող կողմի համար առաջացած շարունակական բացասական հետևանքների միջև:*

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, **(ii)** խմբում ներառված չափանիշները նպատակաուղղված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաքաջումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, ապա դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն կազմակերպելու իր պաշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստացված հայտարարությունների կամ այն նյութերի վրա, որոնք տուժող կողմը հնարավորություն չի ունեցել ստուգել: *Նման թերությունները պետք է լինեն այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած առաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ:*

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «/Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների

¹ Stü 'u Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgments of the European Court of Human Rights.

հիմքով հարուցված] վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա: (...)»:

19.1 Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) [Ի]րավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պարզաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հարակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ արեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»¹:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են Գ.Ոսկերցյանի նախնական կալանքին: Այդ որոշումների կայացումից հետո՝ Գ.Ոսկերցյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճռով Գ.Ոսկերցյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ Գ.Ոսկերցյանն ազատվել է պատիժը կրելուց: Գ.Ոսկերցյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացվել է, և նա ազատ է արձակվել²:

21. Ամբաստանյալ Գ.Ոսկերցյանի, վերջինիս պաշտպաններ Մ.Շուշանյանի և Ս.Ոսկանյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 22-ի

¹ Տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՈ-1099 որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը:

որոշմամբ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 10-ի դատավճիռը¹:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 17-19.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Եվրոպական դատարանի՝ *Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի* վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման բացասական հետևանքները սույն բողոքի քննության պահի դրությամբ դիմումատուին չի շարունակում կրել: Նման պայմաններում Գ.Ոսկերչյանի նախնական կալանքի վերաբերյալ դատական ակտերի բեկանումը չի վերականգնի մինչ խախտումն առկա իրավիճակը: Բացի այդ, այն իրավական առումով նաև անիրագործելի է, քանի որ գործի մինչդատական վարույթում Գ.Ոսկերչյանի նախնական կալանքի վերաբերյալ դատական ակտերի բեկանումը կհանգեցնի իրավական անորոշության՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանք եղել են ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել են իրենց իրավական նշանակությունը:

23. Վերոգրյալի հետ մեկտեղ անհրաժեշտ է փաստել, որ համանման պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ մերժել է *Մուրադիսանյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հունիսի 5-ի վճռի հիման վրա հարուցված վերանայման վարույթի շրջանակներում նոր հանգամանքի հիմքով Արարատ Մուրադիսանյանի նախնական կալանքի վերաբերյալ որոշումների բեկանման պահանջով ներկայացված վճռաբեկ բողոքը²: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որը վերահսկողություն է իրականացնում Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ, 2018 թվականի հունիսի 7-ի թիվ CM/ResDH(2018)191 բանաձևով քննարկել է Հայաստանի վերաբերյալ կայացված ընդհանուր թվով յոթ վճիռների, այդ թվում՝ *Մուրադիսանյանն ընդդեմ Հայաստանի* վճռի կատարման ընթացքը և արձանագրել, որ նշված գործերով անհատական միջոցառումներն իրականացված են, արդարացի փոխհատուցումները վճարված են և մեղադրյալներից ոչ մեկը չի գտնվում մինչդատական կալանքի տակ, նրանք դատապարտվել կամ ազատ են արձակվել: Արդյունքում հիշյալ գործերի կատարման նկատմամբ վերահսկողությունը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից հայտարարվել է փակված³:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս *Արարատ Մուրադիսանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ-01/13 որոշումը:

³ Տե՛ս բանաձևը հետևյալ հղմամբ՝ <https://search.coe.int/cm/Pages/resultdetails.aspx?Objec-tID=09000016808a08a7>

24. Վերոշարադրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի՝ Ոսկերչյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումը հիմք չէ Գ.Ոսկերչյանի կալանավորման և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

25. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի սեպտեմբերի 5-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի մարտի 21-ի, 2008 թվականի մայիսի 19-ի, 2008 թվականի նոյեմբերի 18-ի որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վերանայման արդյունքում Գրիգոր Հարությունի Ոսկերչյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

57. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0062/11/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերին 7-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման դեմ դիմող Աիդա Հովհաննիսյանի ներկայացուցիչ Կ.Մեծյունյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Աիդա Հովհաննիսյանը 2012 թվականի հունվարի 14-ին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի Մարաշի բաժանմունք այն մասին, որ իր աշխատանքի վայրում՝ Երևան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 46 հասցեում գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության երկրաբանա մարկշեղրական վերահսկողության բաժնի պետ՝ Հրաչյա Այվազյանը և նրա տեղակալ Աշոտ Խաչատրյանն իր նկատմամբ կատարել են դիտավորյալ բռնի գործողություններ, իրեն ծեծի են ենթարկել Հրաչյա Այվազյանի աշխատասենյակում, որի հետևանքով ինքը ստացել է մարմնական վնասվածքներ՝ ձեռքերն ամբողջությամբ կապտուկների մեջ են եղել, և նշված դեպքից հետո գտնվել է բուժման մեջ՝

անաշխատունակ¹:

2. 2012 թվականի մարտի 5-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Ս.Աբովյանը որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ Հրայր Այվազյանի և Աշոտ Խաչատրյանի արարքներում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Քալաշյանը 2012 թվականի մարտի 15-ի որոշմամբ հաստատել է Ա.Հովհաննիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունը՝ փոփոխելով դրա հիմքը, և նյութերով քրեական գործ հարուցելը մերժել՝ Հրայր Այվազյանի և Աշոտ Խաչատրյանի վերաբերյալ դրվագով հանցագործության դեպքի բացակայության, իսկ Աիդա Հովհաննիսյանի վերաբերյալ դրվագով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Դիմող Աիդա Հովհաննիսյանը քննիչի՝ 2012 թվականի մարտի 5-ի որոշման դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնելու իր իրավունքների խախտումը և հարուցել քրեական գործ:

Առաջին ատյանի դատարանը 2012 թվականի մայիսի 18-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է:

5. Վերոհիշյալ դատական ակտի դեմ դիմող Ա.Հովհաննիսյանի և նրա ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2012 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ դիմող Ա.Հովհաննիսյանի և նրա ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ վերադարձվել է:

7. Դիմող Աիդա Հովհաննիսյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), 2018 թվականի հուլիսի 19-ին, *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացրել է վճիռ՝ արձանագրելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի դատավարական դրույթների մատով խախտում²:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 70:

² Տե՛ս *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 18419/13:

8. Դիմող Ա.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Կ.Մեծույանը, որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռը, բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

9. Վճռաբեկ դատարանը 2019 թվականի մարտի 15-ին որոշում է կայացրել նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

10. ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի Մարաշի բաժանմունք ներկայացված հաղորդմամբ Ա.Հովհաննիսյանը հայտնել է, որ «(...) իր աշխատանքի վայրում՝ Երևան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 46 հասցեում գրնվող ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ ԸԵՄՎ բաժնի պետ՝ Հրաչյա Այվազյանը և նրա տեղակալ Աշոտ Խաչատրյանն իր նկատմամբ կատարել են դիտարկողական գործողություններ, իրեն ծեծի են ենթարկել Հրաչյա Այվազյանի աշխատատեղակում, որի հետևանքով ինքը ստացել է մարմնական վնասվածքներ՝ ձեռքերն ամբողջությամբ կապրուկների մեջ են եղել և նշված դեպքից հետո գրնվել է բուժման մեջ՝ անաշխատունակ (...)»¹:

11. Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 77 եզրակացության՝ «(...) Ա.Հովհաննիսյանի ստացված մարմնական վնասվածքները դասվել են առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքների շարքին (...)»²:

12. Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը գրնում է, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, իսկ Աիդա Հովհաննիսյանի և նրա ներկայացուցչի պարճատարանությունները դատարանը գնահատում է որպես իրադարձությունների և դատարարական գործողությունների յուրովի, սուբյեկտիվ մեկնաբանում (...)»³:

13. Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Ըստ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան ներկայացված նյութերի՝ դատարանը հաստատված համարեց, որ Աիդա Հովհաննիսյանի կողմից 14.01.12թ-ին հաղորդում էր ներկայացվել ՀՀ Ոստիկանության Կենտրոնականի բաժնի Մարաշի բաժանմունք այն

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 70-71:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 31-34:

մասին, որ իր աշխատանքի վայրում Երևան ք. Չարենցի փողոցի թիվ 46 հասցեում գրնվող ՀՀ բնապահպանության նախարարության ԲՊՏ ԸԵՄՎ բաժնի պետ՝ Հրաչյա Այվազյանը և նրա տեղակալ Աշոտ Խաչատրյանը իր նկատմամբ կատարել են դիտարկողական «բռնի գործողություններ» իրեն ծեծի են ենթարկել Հրաչյա Այվազյանի աշխատատեղակում, որի հետևանքով ինքը սրացել է մարմնական վնասվածքներ՝ ձեռքերն ամբողջությամբ կապրուկների մեջ են եղել և նշված դեպքից հետո գրնվել է բուժման մեջ՝ անաշխատունակ է եղել: Հաղորդում ներկայացնելուց հետո ուղարկվել է դատարժիշկ փորձագետի մոտ:

Համաձայն դատարժիշկական փորձաքննության թիվ 77 եզրակացության՝ իր կողմից սրացված մարմնական վնասվածքները դասվել են առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքների շարքին:

(...)

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գրնում է, որ տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը իրավացիորեն եզրահանգել է, որ Ա.Հովհաննիսյանի հաղորդումների վերաբերյալ նախապարաստված նյութերով Հ.Այվազյանի և Ա.Խաչատրյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը պետք է մերժել՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

(...)

ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան ներկայացված նյութերով բավարար տվյալներ, որոնք կվկայեին որոշակի հանրորեն վրանգավոր արարքի առկայության (գոնե օբյեկտի և օբյեկտիվ կողմի վերաբերյալ փաստական տվյալներ) վերաբերյալ, առկա չեն:

(...)

Մինչդարևական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կանոնակարգող ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հդ-ի վերը նշված իրավադրույթների պահանջների համարեքստում քննության առնելով վերը նշված բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գրնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.05.2012 թվականի որոշումը պետք է թողնել անփոփոխ, իսկ բողոքաբեր Ա.Հովհաննիսյանի և վերջինիս ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վերաքննիչ բողոքը՝ մերժել (...):¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 70-76:

14. Բողոքաբերի պնդմամբ՝ Եվրոպական դատարանի կողմից 2018 թվականի հուլիսի 19-ին *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճիռը նոր հանգամանք է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը վերանայելու և ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ի հիմնավորումը վերոնշյալ փաստարկի՝ բողոք բերած անձը, մեջբերելով Եվրոպական դատարանի հիշյալ վճիռի հիմնավորումները, նշել է, որ ներպետական դատարանների կողմից կայացված դատական ակտերով խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված՝ Աիդա Հովհաննիսյանի իրավունքը: Մասնավորապես, բողոքաբերը փաստարկել է, որ պետական իրավասու մարմինները չեն իրականացրել գործի պատշաճ և արդյունավետ քննություն՝ Աիդա Հովհաննիսյանի նկատմամբ դրսևորած վատ վերաբերմունքի մասին պնդումների առնչությամբ: Ըստ բողոքաբերի, ակնհայտ է այն փաստը, որ Ա.Հովհաննիսյանը ենթարկվել է խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի աշխատավայրում, իր վերադաս աշխատակիցների կողմից, որի արդյունքում նրա ստացած մարմնական վնասվածքներն արձանագրվել են փորձագետի կողմից:

15. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է վերանայել Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը, Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 12-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Աիդա Հովհաննիսյանի իրավունքի խախտումը վերացնելու մասին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական դրոյթների մասով խախտում արձանագրելու փաստը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը վերանայելու հիմք է:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝*

(...)

2) *նոր երևան եկած կամ նոր հանգամանքները»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին աստիճանի

դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

Նույն օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող Կոնվենցիայի միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

18. Եվրոպական դատարանի՝ *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի*¹ 2018 թվականի հուլիսի 19-ի ուժի մեջ մտած վճռով արձանագրվել է **Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտում**: Այսպես.

Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի վճռով Եվրոպական դատարանը, վերահաստատելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով իր իրավական դիրքորոշումները, ընդգծել է. «(...) Վերաբերմունքը Գալստրանի կողմից ճանաչվել է որպես նվաստացնող և այդպիսով համարվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված արգելք, եթե այն իր զոհի մոտ

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, *Գրիշա Վիրաբյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Բագրատ, Արևիկ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-06/15, *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15, *Արայիկ Զայանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Հրայր Մուրադյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 30-ի, *Դավիթ Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԳ3/0088/01/09, *Ալիկ Մաթևոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

առաջացնում է վախի, տատապանքի և նվաստ լինելու զգացում (...): Դատարանն այնուհետև վերահասարակում է, որ երբ անհատը փաստարկելի պնդում է անում այն մասին, որ նրա նկարմամբ 3-րդ հոդվածի խախտմամբ ցուցաբերվել է խիստ վատ վերաբերմունք ուրիշների նկատմամբ կամ պետության այլ ներկայացուցիչների կողմից, ապա այդ դրույթով անուղղակիորեն պահանջվում է արդյունավետ պաշտոնական քննության իրականացում: 3-րդ հոդվածի խախտմամբ պետության ներկայացուցիչների կողմից ցուցաբերված վերաբերմունքի մասին պնդումների արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը հստակ սահմանված է Դատարանի նախադեպային իրավունքում (...): Որպեսզի լինի արդյունավետ, այդ քննությունը, ինչպես 2-րդ հոդվածով նախատեսված դեպքում, նախ, պետք է լինի պարզաձև (...): Սա նշանակում է, որ այն պետք է հնարավորություն տա պարզելու փաստերը և որոշելու, թե արդյոք գործարկված ուժը արդարացի է եղել այդ փաստական հանգամանքներում, և անհրաժեշտության դեպքում ի հայտ բերելու ու պարզելու մեղավորներին (...): Նախաքննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե արդյունքի, այլ միջոցի պարտականություն է»:

պարտադիր չէ, որ յուրաքանչյուր նախաքննություն լինի հաջողված կամ հանգի դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքին համապատասխանող եզրակացության (...): Վատ վերաբերմունքի վերաբերյալ լուրջ պնդումների շուրջ իրականացվող նախնական քննությունը նույնպես պետք է լինի ամբողջական: Դրանից հետևում է, որ իրավասու մարմինները միշտ պետք է լրջորեն ձգտեն պարզել, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է հիմնվեն հասցեայ արված կամ անհիմն եզրակացությունների վրա՝ նախաքննությունն ավարտելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Երանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները՝ ձեռք բերելու համար դեպքին առնչվող ապացույցներ՝ ներառյալ վկանների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության արդյունքները և այլն: Նախնական քննության ցանկացած թերություն, որը կարող է խաթարել վնասվածքների պարճառի կամ հանցանքի համար պարասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վրանգ առաջացնել (...): 3-րդ հոդվածի [պահանջներին] հակասող վատ վերաբերմունքի մասին պնդումները պետք է հիմնավորվեն պարզաձև ապացույցներով: Այդ ապացույցները գնահատելու համար Դատարանն ընդունում է ապացույցի՝ «հիմնավոր կասկածներից վեր» չափանիշը, սակայն ավելացնում է, որ այդ ապացույցը կարող է հիմնված լինել բավականաչափ ուժեղ, հստակ և համահունչ եզրակացությունների համադրության կամ փաստի համանման անստուրկելի ենթադրությունների վրա»¹:

¹ Տե՛ս «Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճի 49-53-րդ կետերը:

19. Վերոգրյալ սկզբունքները կիրառելով քննարկվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Եվրոպական դատարանը նշել է. «(...) Դատարանը նշում է, որ 2012 թվականի հունվարի 14-ին դիմումատուին դեպքի առնչությամբ ուսուցանողություն հաղորդում է ներկայացրել: Նույն օրը քննիչը նշանակել է դատարժշկական փորձաքննություն, որն իրականացվել է 2012 թվականի հունվարի 18-ին: Դիմումատուի, ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց՝ Հ.Ա.-ի և Ա.Կ.-ի և դիմումատուի՝ Նախարարության որոշ գործընկերների կողմից փրվել են որոշ բացառություններ: Այնուամենայնիվ, սույն գործի առնչությամբ այդպես էլ նախաքննություն չի իրականացվել, ինչպես նաև Նախարարությունում նույնպես ներքին քննություն չի իրականացվել:

Սույն գործով դատարժշկական փորձաքննությունը հաստատել է, որ դիմումատուի բազկի փայրեր հաստատվածներում հասցվել են կապրուկներ: Այնուամենայնիվ, նրա բոլոր այն գործընկերները, ովքեր բացառություններ են փրվել և ովքեր եղել են ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ենթակաները, ժխտել են դիմումատուի կողմից նշված դեպքերի շարադրանքը: Այս բացառությունների հիմա վրա քննիչը հրաժարվել է քրեական վարույթ հարուցելուց: Դիմումատուն վիճարկել է քննիչի որոշումը՝ բողոք ներկայացնելով դատախազին: Նա նաև բողոք է ներկայացրել Վարչական շրջանների դատարան՝ պահանջելով քրեական վարույթ հարուցել: Ընթացակարգերին դիմելու փորձերից ոչ մեկը հաջողություն չի ունեցել: Թեև թշկական փորձաքննությունը ցույց է փրվել, որ դիմումատուին հասցվել են վնասվածքներ, քննիչի կամ ազգային դատարանների կողմից այդ վնասվածքների առնչությամբ որևէ բացառություն չի տրամադրվել:

Քանի որ դիմումատուն իրավասու ազգային մարմինների առջև փաստարկելի պնդում է արել, որ իր նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք, պետք է իրականացվեր գործի անկախ և արդյունավետ քննություն, որը հնարավորություն կտար պարզելու գործի փաստերը, և եթե ի հայտ գար, որ պնդումները ճիշտ են՝ ի հայտ բերելու և հավանական պատիժ սահմանելու մեղավորների նկատմամբ: Այնուամենայնիվ, սույն գործով այդպես էլ քննություն չի սկսվել, ինչպես նաև Նախարարությունում ներքին քննություն նույնպես չի իրականացվել: Հետաքննության ժամանակ ազգային իրավասու մարմինները չեն ձեռնարկել լուրջ փորձեր՝ պարզելու, թե ինչ է փրվելի ունեցել: Չեն ձեռնարկվել քայլեր, օրինակ, դիմումատուի գործընկերներից գրավոր նախազգուշացմամբ ցուցմունք վերցնելու՝ խուսափելու համար այնպիսի հնարավոր խնդիրներից, որոնք կարող էին առաջանալ այն պատճառով, որ նրանք ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ենթականերն են: Չի հաստատվել, թե ինչպես են առաջացել դիմումատուի վնասվածքները, ինչպիսի

հանգամանքներում, և արդյոք դրանք վիճարկվող դեպքի հետ ունեցել են որևէ առնչություն, թե ոչ: Ավելին չեն գործադրվել ջանքեր՝ պարզաբանելու Հ.Ա.-ի ցուցմունքներում առկա որոշ հակասությունները (...) կամ պարզելու, թե արդյոք նրա ցուցմունքները ճշգրիտ են: Ինչպես նաև նախարարության աշխատակազմի ղեկավարի (...) կամ այլ իրավասու վարչական մարմինների կողմից մինչև 2012 թվականի հունվարի 14-ը՝ դիմումարուի՝ հարցի առնչությամբ ուսրիկանություն հաղորդում ներկայացնելը, քայլեր նույնպես չեն ձեռնարկվել»¹:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ «(...) պետական իրավասու մարմինները չեն իրականացրել պարզաձև քննություն դիմումարուի՝ իր նկարմամբ դրսևորած վար վերաբերմունքի մասին պնդումների առնչությամբ: Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտում»²:

21. Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է նաև հետևյալը. «(...) Հաշվի առնելով արդյունավետ քննության բացակայությունը՝ Դատարան ներկայացված ապացույցները հնարավորություն չեն տալիս հիմնավոր կասկածից վեր չափանիշով փաստել, որ դիմումարուն ենթարկվել է 3-րդ հոդվածի պահանջներին հակասող վերաբերմունքի: Հերևարար, Դատարանը համարում է, որ չկան բավարար ապացույցներ՝ եզրակացնելու համար, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական դրույթների մասով խախտում (...)»³:

22. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով խախտման արձանագրման փաստը նոր հանգամանքի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը վերանայելու հիմք է:

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. արդյոք Եվրոպական դատարանի՝ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական դրույթների մասով

¹ Տե՛ս և Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 56-58-րդ կետերը:

² Տե՛ս և Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 59-րդ կետը:

³ Տե՛ս և Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի 60-րդ կետերը:

խախտումը հիմք է Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 12-ի որոշումները բեկանելու համար:

24. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

24.1. Տիրայր Սեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հեղինակավոր պարտավորությունները»:

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուր դիմումարուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (*restitutio in integrum*), իսկ դրա անհնարինության դեպքում Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ համարեղելի այլ միջոցներով ապահովել իր սրանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում¹:

25. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաքննելու մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով «*restitutio in integrum*» (նահանական իրավական վիճակի վերականգնում) հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես՝ վերլուծել իրենց ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

¹ Տե՛ս Տիրայր Սեֆիլյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13 որոշման 24-րդ կետը:

(i) Տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

25.1. Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝ կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաբացումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից (i)-ը, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեկատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: *Այդ չափանիշի բավարարման համար պետք է լինի ուղիղ պարճատահերևանքային կասկ` հայտնաբերված խախտման և րոժող կողմի համար առաջացած շարունակական բացասական հերևանքների միջև:*

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, (ii) խմբում ներառված չափանիշները նպատակաուղղված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաբացումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, ապա դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն կազմակերպելու իր պաշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստացված հայտարարությունների կամ այն նյութերի վրա, որոնք տուժող կողմը հնարավորություն չի

ունեցել ստուգել: **Նման թերությունները պետք է լինեն այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած առաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ¹:**

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «[Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված] վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նահատակված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա: (...)»:

27. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ բողոքարկվող դատական ակտերը վերաբերել են նրա նկատմամբ դրևորված վատ վերաբերմունքին և այդ կապակցությամբ կատարված քննությանը:

28. Դիմող Ա.Հովհաննիսյանի, վերջինիս ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ դիմող Ա.Հովհաննիսյանի, վերջինիս ներկայացուցիչ Ի.Պետրոսյանի բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը²:

29. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 24-26-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Եվրոպական դատարանի՝ Հովհաննիսյանի ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման (դատավարական դրույթների մասով) բացասական հետևանքները սույն բողոքի քննության պահի դրությամբ դիմումատուն շարունակում է կրել: Նման պայմաններում Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ դատական ակտերի բեկանումը կվերականգնի մինչ խախտման առկա իրավիճակը, քանի որ առկա է ուղիղ պատճառահետևանքային կապը՝ հայտնաբերված խախտման և Ա.Հովհաննիսյանի կողմից կրվող շարունակական բացասական հետևանքների միջև: Հետևաբար, նշված խախտումը վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և Ա.Հովհաննիսյանի բողոքը բավարարելով ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Ս.Աբովյանի՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2012 թվականի մարտի 5-ի որոշումը վերացնելն է:

¹ St' u Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgments of the European Court of Human Rights:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

30. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշման վերանայման արդյունքում Առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 12-ի դատական ակտերը պետք է բեկանել ու փոփոխել և վերացնել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Ս.Աբովյանի՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2012 թվականի մարտի 5-ի որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ, 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Դիմող Աիդա Արտավազդի Հովհաննիսյանի բողոքը մերժելու մասին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 12-ի որոշումը բեկանել ու փոփոխել, Աիդա Հովհաննիսյանի բողոքը բավարարել՝ վերացնելով ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Ս.Աբովյանի՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2012 թվականի մարտի 5-ի որոշումը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

58. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՔՐԴ/0341/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով դատապարտյալ Խոսրով Հայրապետի Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճռով ամբաստանյալ Խոսրով Հայրապետի Ավագյանը ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ճանաչվել է անպարտ և արդարացվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ, 15-րդ կետերով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ցմահ ազատազրկման:

2. Խ.Ավագյանի պաշտպան Կ.Մանուչարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը:

3. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ Խ.Ավագյանի վճռաբեկ բողոքը՝ Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վերադարձվել է:

4. Դատապարտյալ Խ.Ավագյանի դիմումի հիման վրա Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի մարտի 23-ի որոշմամբ՝ Երևանի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը վերանայել է: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի համաձայն՝ Խ.Ավագյանին առաջադրված մեղադրանքից հանվել է արարքի կրկնակիությանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով առաջադրված մեղադրանքը, և դատավճիռը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 8-րդ կետերին, իսկ պատժի և մնացած մասով թողնվել է անփոփոխ:

5. Դատապարտյալ Խ.Ավագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի մայիսի 18-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի մարտի 23-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

6. Խ.Ավագյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) 2018 թվականի նոյեմբերի 22-ին *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* (գանգատ թիվ 1837/10) գործով վճիռ է կայացրել, որով ճանաչել է Խ.Ավագյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը:

7. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի՝ *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Խ.Ավագյանը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշման վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

Դատապարտյալ Խ.Ավագյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ նոր հանգամանքի հիմքով հարուցել է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշման վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճռով Խ.Ավագյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետերով այն բանի համար, որ «(...) [նա], նախկինում շահադիտական դրդումներով սպանություն կատարելու համար դարվածություն ունենալով, Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 6 շենքի թիվ 38 բնակարանին տիրապետելու նպատակով, ԲԻ-58 տեսակի թունաքիմիկատով թունաավորելու եղանակով, կյանքից զրկել է Վարսենիկ և Մարգարիտա Գյուրջիսյաններին»:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի մարտի 23-ի որոշմամբ Խ.Ավագյանի մեղադրանքից հանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով որակված՝ սպանությունը կրկին անգամ կատարելու հատկանիշը:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստել է, որ *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշումը վերանայելու համար:

Շարադրելով և վերլուծելով սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը նշել է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է Խ.Ավագյանի արդար դատաքննության իրավունքի խախտում, մասնավորապես՝ չեն ապահովվել մրցակցային դատավարության և կողմերի հավասարության երաշխիքները:

Մեջբերելով նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հունվարի 19-ի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R(2000) 2 հանձնարարականը՝ բողոք բերած անձը եզրահանգել է, որ իր առնչությամբ ՀՀ ներպետական դատարանների դատական ակտերը ենթակա են վերանայման և բեկանման:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի

դատավճիռը և այն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 12-ի որոշումը, և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

1. Ներպետական դատական ակտերի վերանայումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումների արձանագրման փաստը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշումը վերանայելու հիմք է:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-ին հոդվածի համաձայն՝ *«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:*

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.*

(...)

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...):»:

13. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը, որով հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային

պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը¹:

14. Եվրոպական դատարանը, *Ավագյանն ընդդեմ Հայաստանի*² 2018 թվականի նոյեմբերի 22-ի վճռով վերահաստատելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված իրավունքի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումները², փաստել է. «(...) [Եվրոպական] Դատարանն այնուհետև վերահաստատում է, որ որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ մեղադրյալին համարժեք և պարզաձև հնարավորություն տրվի՝ վկայի կողմից իր դեմ տրված ցուցմունքը վիճարկելու կամ նրան հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում: Թեև փորձագետ Ա.Բ.-ի կողմից ներկայացված երկու սկզբնական եզրակացություններում նշվել է, որ երկու քույրերը մահացել են սրտային սուր անբավարարությունից և հիպոթերմիայից, փորձագետներ Գ.Հ.-ի և Ա.Բ.-ի, ինչպես նաև փորձագետներ Ս.Հ.-ի և Ս.Ս.-ի կողմից տրված լրացուցիչ եզրակացություններից պարզ է դառնում, որ փուժողներին թունավորել են: Դիմումատու խնդրել է փորձագետներ Ա.Բ.-ին, Ս.Հ.-ին և Ս.Ս.-ին կանչել առաջին արյանի դատարան՝ նրանց կողմից ներկայացված հակասական եզրակացությունների առնչությամբ նրանց հարցաքննելու հնարավորություն ունենալու համար, սակայն առաջին արյանի դատարանը մերժել է նրա խնդրանքը՝ համարելով, որ այդ փորձագետներին կանչելու անհրաժեշտություն չկա: Ո՛չ առաջին արյանի դատարանը և ո՛չ էլ Վերաքննիչ քրեական դատարանն իրենց դատավճիռներում չեն անդրադարձել այդ հարցին:

(...) Դատարանի ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ պաշտպանության կողմը պետք է ունենա, որպես այդպիսին, ոչ միայն փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելու և վիճարկելու իրավունք, այլ նաև եզրակացությունները նախապարաստողների վարահեղիությունն ուղիղ հարցաքննության միջոցով վիճարկելու իրավունք:

Սույն գործով դիմումատու առաջին արյանի դատարանին հստակորեն հայտնել է, որ ինքը ցանկանում է դատարանում հարցաքննել փորձագետ-վկաներին մի շարք այնպիսի հարցեր պարզաբանելու համար, որոնք պահանջում են մասնագիտական գիտելիքներ: Դատարանի համար այդ պահանջը ձևակերպված է եղել բավականին հստակորեն՝ բացառելու համար, թե ինչու էր դիմումատուի համար կարևոր տվյալ վկաներին լսելը:

¹ Տե՛ս *u mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գրիշա Վիրաբյանի* գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ-05/13, *Ժիրայր Սեֆիլյանի* գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՎԲ-07/13, *Արայիկ Զայանի* գործով 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ՎԲ-02/16, *Դավիթ Ավերիսյանի* գործով 2017 թվականի օգոստոսի 21-ի թիվ ՍԴ3/0088/01/09, *Ալիկ Մաթևոսյանի* գործով 2018 թվականի հունիսի 15-ի թիվ ՎԲ-05/12 որոշումները:

² Տե՛ս *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 39-47-րդ կետերը:

Առաջին արյանի դատարանը մերժել էր դիմումատուի խնդրանքը՝ գրանցելով, որ Ա.Գ.-ի կողմից ներկայացված առաջին եզրակացության բովանդակությունն արդեն իսկ պարզաբանվել էր դրան հաջորդող փորձագիտական եզրակացություններով, և հետևաբար փորձագետ-վկաներին կանչելու անհրաժեշտություն չկար: Արդյունքում փորձագետ-վկաներ Ա.Գ.-ն, Ս.Հ.-ն և Ս.Ս.-ն առաջին արյանի դատարանում չեն լսվել, ոչ էլ մյուս երեք փորձագետ-վկաներն են դատարանում լսվել: Ըստ երևույթին, մինչդարձ վարույթի ընթացքում հարցաքննվել են միայն փորձագետ-վկաներ Ա.Գ.-ն, Գ.Հ.-ն և Մ.Ա.-ն: Այնուամենայնիվ, չկա որևէ արվյալ, որ դիմումատուն երբևէ ունեցել է այդ փորձագետ-վկաներին առերես [հարցաքննելու] և քննության փուլում նրանց եզրակացությունները վիճարկելու հնարավորություն:

(...) Դատարանը համարում է, որ դիմումատուի՝ առաջին արյանի դատարանում Ա.Գ.-ին, Ս.Հ.-ին և Ս.Ս.-ին լսելու խնդրանքն անհիմն չէր: Ընդհակառակը, Դատարանը գրնում է, որ այդ փորձագիտական եզրակացությունները գործի համար հիմնարար նշանակություն ունեին: Հիմնվելով այդ ապացույցների վրա՝ ներպետական դատարանները պետք է որոշում կայացնեին՝ արդյոք քույրերի մահը եղել է դժբախտ պատահար, թե դիտավորյալ կարարված սպանություն: Դիմումատուի խնդրանքն անհիմն չէր նաև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա դատապարտվում էր ցմահ ազատազրկման: Դատական քննության ժամանակ փորձագետ-վկաներին չկանչելով և նրանց չհարցաքննելով առաջին արյանի դատարանն իր եզրակացությունները կատարելիս հիմնվել է փորձագետ-վկաների ցուցմունքների վրա, որոնք երբեք դատական նիստերի ժամանակ չեն ուսումնասիրվել»:

15. Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դիմումատու հոստրով Ավագյանի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

16. Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումների արձանագրման փաստը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական ակտերի բեկանումը.

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյոք Եվրոպական դատարանի՝

¹ Տե՛ս *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* վճռի 47-րդ կետը:

Ավագյանն ընդդեմ Հայաստանի վճռով արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումները հիմք են Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 12-ի որոշումը, ինչպես նաև Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի մարտի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

18. *Սկոցցարին և Ջունյարան ընդդեմ Իտալիայի* գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(…) [Վ/ճիռը, որով [Եվրոպական դատարանը] խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով փրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընդգրկել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում վերջ տալու համար [Եվրոպական դատարանի] արձանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազատ է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում պայմանով, որ դրանք համարվելի են [Եվրոպական դատարանի] վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների փրամադրման նպատակը բացառապես կրած վնասի համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող»¹:

19. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտում արձանագրվելու դեպքում պետությունն արդարացի փոխհատուցում տրամադրելուց զատ պարտավորվում է հնարավորության դեպքում ձեռնարկել որոշակի անհատական միջոցառումներ, որոնք հնարավորինս կվերականգնեն մինչև խախտումը եղած իրավիճակը: Այլ կերպ՝ յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործի հանգամանքները, խախտման բնույթը, դրա՝ գործի ելքի վրա ունեցած ազդեցությունը, ինչպես նաև «*restitutio in integrum*» ապահովելու հնարավորությունը: Եթե վերոնշյալ հանգամանքների գնահատումը վկայում է, որ գործի

¹ Տե՛ս՝ *u Scozzari and Giunta v. Italy* գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250:

վերաբացման արդյունքում հնարավոր է վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը, ապա վարույթի նորոգում պետք է տեղի ունենա:

20. Հաշվի առնելով *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* վճռի շրջանակներում Եվրոպական դատարանի արտահայտած և սույն որոշման 14-16-րդ և 18-19-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման նախորդ կետի վերլուծության լույսի ներքո գնահատելով *Ավագյանն ընդդեմ Հայաստանի* վճռով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումների բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումները հիմք են Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 12-ի որոշումը, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Այլ կերպ, նշված խախտումները վերացնելու ամենապատշաճ միջոցը, ըստ Վճռաբեկ դատարանի, վիճարկվող դատական ակտերը բեկանելը և գործը նոր քննության ուղարկելն է:

21. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշման վերանայման արդյունքում Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 12-ի որոշումը, ինչպես նաև այդ դատական ակտերը վերանայելու մասին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

¹ Տե՛ս *Բագրատ և Նարինե Նալբանդյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ՎԲ-04/15 որոշման 19-րդ կետը, *Մուշեղ Մաղաթելյանի* գործով 2019 թվականի հունիսի 12-ի թիվ ԵԲԲԴ/0396/01/08, ԵԿԴ/0052/11/08, ԵԿԴ/0123/06/08 որոշման 28-39-րդ կետերը:

դատարանը պետք է վերացնի Ավագյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից արձանագրված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտումներն ու յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգի համապատասխան հետևության:

22. Անդրադառնալով Խոսրով Ավագյանի խափանման միջոցի հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պայմաններն ու հիմքերը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Խ.Ավագյանին վերագրված հանցագործության հանրային վտանգավորության բնույթը, ծանրության աստիճանը, կատարման եղանակը, գտնում է, որ Խ.Ավագյանը, մինչև գործի նոր քննության ընթացքում խափանման միջոցի հարցի լուծումը մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել դատարանում գործի քննությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 397-րդ, 398-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2009 թվականի հուլիսի 28-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Խոսրով Հայրապետի Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 8-րդ և 15-րդ կետերով Երևանի քրեական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 12-ի որոշումը, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի՝ 2012 թվականի մարտի 23-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մայիսի 18-ի որոշումը

քեկանել և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

3. Խոսքով Հայրապետի Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

59. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ2/0069/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահությունը՝
մասնակցությունը դատավորները՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությունը՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով դատապարտյալ Նարեկ Սամվելի Օհանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճռով Նարեկ Սամվելի Օհանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) ամիս ժամկետով:

2. Ամբաստանյալ Ն.Օհանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2017 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ բողոքը բավարարել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը պատժի կրման մասով փոփոխել և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Դատապարտյալ Ն.Օհանյանի՝ նոր հանգամանքի հիմքով բերված

վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ հարուցել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթ, և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Դատապարտյալ Ն.Օհանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ «(...) նա (...) 2016 թվականի սեպտեմբերի սկզբներին Վանաձոր քաղաքի Երևանյան ինժուրի 76 հասցեի մոտակայքում վայրի աճած կանեփի տեսակի բույսից քաղելով տերևներ ու այլ հարվածներ, դրանք չորացնելով և մանրացնելով, առանց իրացնելու նպատակի, ծխելու միջոցով գործածելու համար տնայնագործական եղանակով ապօրինի պատրասարել ու նախ ավտոտրանսկում, ապա իր մոտ ապօրինի պահել է զգալի չափերով՝ 0.82 գրամ հաստատություն չոր քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց (...):»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

5. Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին, փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է իր վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման:

6. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է իր վերաբերյալ կայացված դատական ակտերով հաստատված արարքը համապատասխանեցնել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքին, և փոփոխել իր նկատմամբ նշանակված վերջնական պատիժը կամ իրեն ազատել հետագա պատիժը կրելուց՝ արարքի ապաքրեականացման հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՌ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 119-122:

հանգամանք է դատապարտյալ Նարեկ Օհանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 24-ի որոշումը վերանայելու համար:

8. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Արարքի պարժեղիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հերադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

9. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ *«չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով»* (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (սպաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

10. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. *«(...) [Ե]լնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն սպառնալից է համար*

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գասպար Պողոսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՄ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

իրավակիրատ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետարդարձ կիրառումը պատիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)¹»:

Արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրակիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրատ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)²»:

11. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով (...)³»:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման եզրափակիչ մասը:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **զգալի չափ** է սահմանված եղել **0.5 գրամից մինչև 5.0 գրամը ներառյալ**:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **մանր չափ** է սահմանվել **0.5 գրամից մինչև 2.5 գրամը ներառյալ**, իսկ որպես **զգալի չափ՝ 2.5 գրամից մինչև 12.5 գրամը ներառյալ**:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ն.Օհանյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց իրացնելու նպատակի, զգալի չափի՝ 0.82 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և պահելու համար¹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Ն.Օհանյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրանց արդյունքում 0.82 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցն այսուհետ ոչ թե զգալի, այլ մանր չափի է: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում Ն.Օհանյանին պետք է արդարացնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նման պայմաններում թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Ն.Օհանյանի կողմից կատարված արարքի վրա:

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

15. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Նարեկ Օհանյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 24-ի որոշումը վերանայելու համար:

16. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է բեկանել ու փոփոխել դատապարտյալ Ն.Օհանյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 24-ի որոշումը, Ն.Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426¹-426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Նարեկ Սամվելի Օհանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 24-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Նարեկ Սամվելի Օհանյանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 24-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Նարեկ Սամվելի Օհանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

60. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴ1/0027/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով դատապարտյալ Վաղարշակ Սմբատի Ղուկոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2017 թվականի փետրվարի 10-ի դատավճռով Վաղարշակ Սմբատի Ղուկոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Վաղարշակ Ղուկոյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Վ.Ղուկոյանի վարքի նկատմամբ վերահսկողությունը դրվել է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության վրա:

2. Մեղադրող Բ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ

դատարան)՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ Առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 10-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Դատապարտյալ Վ.Ղուկոյանի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի հունիսի 5-ի որոշմամբ հարուցել է դատական ակտի վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Վաղարշակ Ղուկոյանը դատապարտվել է այն բանի համար, որ «(...) նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմեկտրային նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմեկտրային (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու և պահելու թույլտվություն, 2016 թվականի օգոստոսի 25-ին ժամը 11:00-ի սահմաններում «Հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոց սպորինի կերպով պարբերաբար և անձամբ ծխելու եղանակով գործածելու նպատակով, Գյումրի քաղաքի ավերակայանի տարածքում վայրի աճած կանեփ տեսակի խոտաբույսերից պոկել է տերևներ և գլխիկներ, որոնք նույն օրը տանելով Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի իր 228 տուն և իրականացնելով իր հանցավոր մտադրությունը, հիշյալ բույսի տերևները լուծիչի հեղուկում եղանակով պարբերաբար է «Հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոց, որի մի մասը ծխելու եղանակով գործածել է, իսկ մնացած՝ զգալի չափերով ընդհանուր՝ 0.33 գրամ վերջնական քաշով «Հաշիշի յուղ» թմրամիջոցը երկու փաթեթով սպորինի պահել է իր սպորտային վերնաշապիկի ձախ գրպանում և սպորտային տարաբարի աջ գրպանում, որը հայտնաբերվել է և վերցվել է անձնական խուզարկությանը՝ վերը թվարկված հագուստների գրպաններից (...):¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

5. Վաղարշակ Ղուկոյանը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմեկտրային (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելու մասին օրենքի 4-րդ հոդվածին և այդ չափերը սահմանող ՀՀ կառավարության՝ 2018

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 38:

թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածին, խնդրել է իր վերաբերյալ կայացված դատական ակտերով հաստատված արարքները համապատասխանեցնել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքին և իրեն ազատել հետագա պատիժը կրելուց՝ արարքի ապաքրեականացման հիմքով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

6. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Վաղարշակ Ղուկոյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը վերանայելու համար:

7. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «(...) *Արարքի պարժեխությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հերադարձ ուժ*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հերադարձ ուժ ունի, այսինքն՝ փրկածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դարվածություն*»:

8. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար, նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ՝ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից

առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

9. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. «(...) [Ե]լնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինին՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն սպառնալից համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պարիսպ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիտարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)»²:

Արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»³:

10. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գասպար Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՌ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման եզրափակիչ մասը:

դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝ պարժվում է կաշանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:*

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը (2018 թվականի հունիսի 27-ը) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցի համար որպես **զգալի չափ** է սահմանված եղել **0.1 գրամից մինչև 0.5 գրամը ներառյալ**:

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցի համար որպես **մանր չափ** է սահմանվել **0.1 գրամից մինչև 0.5 գրամը ներառյալ**, իսկ որպես **զգալի չափ** է սահմանվել **0.5 գրամից մինչև 2.5 գրամը ներառյալ**:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վաղարշակ Ղուկոյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ զգալի չափերով ընդհանուր՝ 0.33 գրամ վերջնական քաշով «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու և պահելու համար¹:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-11-րդ կետերում վկայակոչված իրավաբանների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Վ.Ղուկոյանի վերաբերյալ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ դրա

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

արդյունքում զգալի չափի՝ 0.33 գրամ չորացված «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցն այսուհետ ոչ թե զգալի, այլ մանր չափի է: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Վ.Ղուկոյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նման պայմաններում, թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Վ.Ղուկոյանի կողմից կատարված արարքի վրա, քանի որ դրանք բարելավում են վերջինիս վիճակը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՄԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Վ.Ղուկոյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը վերանայելու համար:

14. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է դատապարտյալ Վ.Ղուկոյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 10-ի դատավճիռն ու այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը բեկանել և Վ.Ղուկոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426.1-426.2-րդ, 426.4-րդ, 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Վաղարշակ Սմբատի Ղուկոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Վաղարշակ Սմբատի Ղուկոյանի վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի

փետրվարի 10-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 5-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Վաղարշակ Սմբատի Ղուկոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4 Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

61. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0029/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

2019 թվականի նոյեմբերի 7-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով Ռոբերտ Սերգոյի Թումասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան)՝ 2018 թվականի փետրվարի 28-ի դատավճռով Ռոբերտ Սերգոյի Թումասյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել կալանքի՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

2. Պաշտպան Ս.Մխիթարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մայիսի 10-ի որոշմամբ բողոքը բավարարել է. Առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 28-ի դատավճիռը Ռ.Թումասյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու մասով փոփոխվել է և 1 (մեկ) ամիս ժամկետով կալանքը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Ռ.Թումասյանի կողմից նոր հանգամանքի հիմքով բերված բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ հարուցել է դատական ակտի վերանայման վարույթ և վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Ռոբերտ Թումասյանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է այն բանի համար, որ. «Նա (...), առանց իրացնելու նպատակի՝ իր օգտագործման համար, 2017 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասի վերջնամասում գրնվող, «Սև հողեր» կոչվող տեղանքում վայրի աճած կանեփ տեսակի խոտաբույսի թփերից քաղել է տերևներ և փաթեթավորելով սպիրտակ թղթի մեջ՝ պահել իր մոտ:

2017 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Ռոբերտ Թումասյանը կրկին գնացել է վերոհիշյալ տեղանք և այդ տերևներն արևի տակ չորացնելու ու ձեռքերով մանրացնելու՝ փակապարտման եղանակով, ապօրինի պատրասարել է զգալի չափերով 1.07 գրամ հասարարուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց, որը փաթեթավորել է նույն թղթի մեջ և ապօրինի պահել իր մոտ՝ սև կաշվե քաճկոնի գրպանում:

Այնուհետև, 2017 թվականի հոկտեմբերի 13-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, թմրամիջոցը ծխելով օգտագործելու համար, Ռոբերտ Թումասյանն այդ թմրամիջոցն ապօրինի պահելով իր սև կաշվե քաճկոնի գրպանում, ընկերոջը՝ Կոլյա Պողոսյանին պարկանող «Մերսեդես Դայմլեր Բենս Ե-190» մակնիշի 23 SS 356 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, Վանաձոր քաղաքի «Սև հողեր» կոչվող տեղանքից ապօրինի փոխադրել է Բաղրամյան պողոտայի սկզբնամաս, (...)»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոչարադրյալ հիմնավորումներով.

5. Բողոք բերած անձը, հղում կատարելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին, փաստարկել է, որ նշված փոփոխություններով բարելավվել է իր վիճակը, հետևաբար դրանք ենթակա են կիրառման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է իր վերաբերյալ կայացված դատական ակտերով հաստատված արարքները համա-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 93-95:

պատասխանեցնել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքին և փոփոխել իր նկատմամբ նշանակված վերջնական պատիժը կամ ազատել հետագա պատիժը կրելուց՝ արարքի ապաքրեականացման հիմքով:

Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

6. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Ռոբերտ Թումայանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշումը վերանայելու համար:

7. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) Արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ փարսավում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»:*

8. Քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռարեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար, նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Դրա հետ մեկտեղ, ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Մասնավորապես, քրեական օրենքի հետադարձության կանոնը սկսում է գործել այն դեպքերում, երբ նոր օրենքը կա՛մ վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում), կա՛մ մեղմացնում է պատիժը, կա՛մ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Թվարկված պայմաններն ունեն իմպերատիվ բնույթ, և նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դրանցից առնվազն մեկի առկայության պարագայում նոր օրենքի գործողությունը

տարածվում է մինչև այն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն¹:

9. ՀՀ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև Սահմանադրական դատարան), 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման շրջանակներում անդրադառնալով արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու կառուցակարգին, արձանագրել է. «(...) [Ե]լնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից և վերջինիս՝ սույն որոշման մեջ բացահայտված բովանդակությամբ կիրառումն ապահովելու համար իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը պարիժ կրող անձանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելը դիրարկելով որպես դատական ակտը վերանայելու համար նոր հանգամանք (...)»²:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի անմիջական գործողությունից՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքն ուժի մեջ մտնելն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում պետք է ընկալվի որպես նոր հանգամանք, և օրինական ուժի մեջ մտնած դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով (...)»³:

10. Նախորդ կետում մեջբերված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ընդունմամբ նախկինում կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման՝ ՀՀ քրեական

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գասպար Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴՄ/0013/01/11 որոշման 16-17-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման եզրափակիչ մասը:

դատավարության օրենսգրքի 49.1-րդ գլխով սահմանված՝ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կանոններով: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը նոր հանգամանք է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու համար:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ կամ հոգեմեկեր (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկանմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածում «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **զգալի չափ** է սահմանված եղել **0.5 գրամից մինչև 5.0 գրամը ներառյալ:**

Վերոնշյալ օրենքի 4-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքի 1-5-րդ հավելվածներն ուժը կորցրած ճանաչելուց հետո ՀՀ կառավարության՝ 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման 1-ին հավելվածով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի համար որպես **մանր չափ** է սահմանվել **0.5 գրամից մինչև 2.5 գրամը ներառյալ**, իսկ որպես **զգալի չափ՝ 2.5 գրամից մինչև 12.5 գրամը ներառյալ:**

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռոբերտ Թումայանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց իրացնելու նպատակի **զգալի չափի՝ 1.07 գրամ** «մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու, պահելու և փոխադրելու համար¹:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները վերացնում են Ռ.Թումայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցավորությունը:

Մասնավորապես, «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զգալի չափի նվազագույն և առավելագույն սահմանների օրենսդրական փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունից երևում է, որ

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

դրանց արդյունքում 1.07 գրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցն այսուհետ ոչ թե զգալի, այլ մանր չափի է:

Նման պայմաններում թմրամիջոցների չափերի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին պետք է տալ հետադարձ ուժ և գործողությունը տարածել մինչև դրանց ուժի մեջ մտնելը Ռ.Թումայանի կողմից կատարված արարքի վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՌ-1348 որոշման ուժով «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՀՕ-241-Ն ՀՀ օրենքը նոր հանգամանք է դատապարտյալ Ռ.Թումայանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշումը վերանայելու համար:

14. Վերանայման արդյունքում անհրաժեշտ է բեկանել և փոփոխել դատապարտյալ Ռ.Թումայանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 28-ի դատավճիռը ու Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշումը և Ռ.Թումայանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, այն է՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ, 426¹-426²-րդ, 426⁴-րդ, 426⁷-րդ և 426⁹-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ռոբերտ Սերգոյի Թումայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Ռոբերտ Սերգոյի Թումայանի վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 28-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 10-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

3. Ռոբերտ Սերգոյի Թումայանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ

հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

4. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

62. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԴՅ/0013/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ ամբաստանյալ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 11-ի որոշման դեմ ամբաստանյալ Արմեն Անդրյուշայի Վարդանյանի և պաշտպան Գ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում 2017 թվականի նոյեմբերի 8-ին հարուցվել է թիվ 61208017 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, և նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հունվարի 19-ի որոշմամբ Արմեն Անդրյուշայի Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ա.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2018 թվականի հունվարի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 27-ի դատավճռով Ա.Վարդանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

3. Մեղադրող Հ.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունվարի 11-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի դատավճիռը բեկանել է և Ա.Վարդանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ առանց պատիժ նշանակելու՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ամբաստանյալ Ա.Վարդանյանը և պաշտպան Գ.Գրիգորյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Ա.Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել հետևյալ արարքի համար. «(...) [Ն]ա, 2016 թվականի հոկտեմբերի 24-ին գրադեցնելով ՀՀ ռարիկանության Կոտայքի մարզային վարչության Նահրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ծառայության նկարմամբ անբարեխիղճ և անիույթ վերաբերմունքի հետևանքով պարշաճ կարգով չի կատարել ՀՀ կառավարության թիվ 857-ՆՖ որոշմամբ նախատեսված իր պարտականությունները, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին:

Այսպես՝ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նահրիի քննչական բաժնում քննվող թիվ 46107916 քրեական

գործի նախաքննության ընթացքում 2016 թվականի սեպտեմբերի 29-ին, որոշում է կայացվել Գագիկ Հրաչիկի Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որպես խափանման միջոց ընտրվել է չեղանալու մասին արտադրությունը և նույն օրը Գ. Պետրոսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ թիվ 46107916 քրեական գործով վարույթը կասեցվել է:

2016 թվականի հոկտեմբերի 3-ին ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազոր Արմեն Վարդանյանի կողմից որոշում է կայացվել Գ. Պետրոսյանի վերաբերյալ հետախուզական գործ կազմելու մասին:

Հետախուզման մեջ գրնվող մեղադրյալ Գ. Պետրոսյանը 2016 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ մուտք գործելիս հայրնաբերվել է ոստիկանության Բագրատաշենի բաժանմունքի աշխատակիցների կողմից և պարտավորվել է ներկայանալ ոստիկանության Նաիրիի բաժնի: 2016 թվականի հոկտեմբերի 24-ին ժամը 10.00-ին, Գ. Պետրոսյանը ներկայացել է ոստիկանության Նաիրիի բաժնի օպերիվազոր Ա. Վարդանյանի մոտ: Ա. Վարդանյանը, պարզաձև կարգով չկատարելով ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշման 121-րդ կետի պահանջները, Գ. Պետրոսյանին վարույթն իրականացնող մարմին չի հանձնել, այլ կազմել է անձի ինքնակամ ներկայանալու մասին արձանագրություն, Գ. Պետրոսյանից վերցրել է առաջին կանչի դեպքում բաժնի ներկայանալու վերաբերյալ պարտավորագիր և վերջինիս ազատ է արձակել, իսկ ՀՀ ՔԿ Նաիրիի քննչական բաժնում քննվող թիվ 46107916 քրեական գործով վարույթը շարունակել է մնալ կասեցված՝ մեղադրյալի գրնվելու վայրը հայրնի չլինելու հիմքով:

Այնուհետև, Ա. Վարդանյանը, պարզաձև կարգով չկատարելով ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշման 125-րդ կետի պահանջները, հետախուզական գործը կարճելու մասին համապարասխան որոշում չի կայացրել, այլ Գ. Պետրոսյանի րվյալները Հայաստանի Հանրապետության կողմից հետախուզվող անձանց հաշվառումից հանելու նպատակով հետախուզումը դադարեցնելու վերաբերյալ համապարասխան ձևի փաստաթուղթն ուղարկվել է ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն:

2017 թվականի մարտ ամսին ՀՀ դատախազության կողմից իրականացված սրուգումների արդյունքում վերոհիշյալ փաստը հայրնաբերվել է, որից հետո միայն 2017 թվականի մարտի 24-ին Գ. Պետրոսյանը ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին, և արդյունքում դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վրանգավոր արարք կատարելու համար:

Արմեն Վարդանյանի ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով անզուգույթյամբ էական վնաս է

պատճառով էլ պետության օրինական շահերին, այն է՝ խախտվել է արդարադատության շահը, մասնավորապես՝ հայրնաբերված հետախուզվող մեղադրյալն անմիջապես չի ենթարկվել քրեական պատասխանաբերության, քրեական գործի վարույթը փակական ժամանակ՝ շուրջ 5 ամիս, մնացել է կասեցված, բացի այդ, հեղինակագրվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ նախկինությունը, խաթարվել է նախկինության համապատասխան արտաբաժանման հետախուզվող անձանց հայրնաբերման դեպքում իրականացվող քննական գործունեությունը, որպիսի անգործությունն էլ ի վերջո հայրնաբերվել է դատախազական գործունեության միջամտության արդյունքում:

Այսպիսով, Արմեն Վարդանյանին մեղաազրվում է արաբք, որը նախադրեցված է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով:(...)»¹:

6. Առաջին ատյանի դատարանը, Ա.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչելով անպարտ և արդարացնելով, արձանագրել է հետևյալը. «(...) Սույն գործով 2016 թվականի հոկտեմբերի 3-ին նախկինության Նախրիի բաժնի օպերիազոր Ա.Վարդանյանի կողմից որոշում է կայացվել Գ.Պետրոսյանի վերաբերյալ հետախուզական գործ կազմելու մասին: Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի պետի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 23-ին նախկինության Նախրիի բաժնի է ուղարկվել հեռախոսագիր, համաձայն որի՝ 2016 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 15:10-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժանմունքից նախկինության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել նախկինության Նախրիի բաժնի կողմից հետախուզման մեջ գտնվող Գ.Պետրոսյանը: Ա.Վարդանյանը կազմել է անձի ինքնակամ ներկայանալու մասին արձանագրություն, համաձայն որի՝ 2016 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 10:00-ին Գ.Պետրոսյանը ներկայացել է նախկինության Նախրիի բաժնի: Ոստիկանության Նախրիի բաժնի պետի կողմից նախկինության ինֆորմացիոն կենտրոնի պետին հասցեագրված 2016 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 67-2/7-4309 գրության համաձայն ինֆորմացիոն կենտրոն է ուղարկվել թիվ 46410016 հետախուզական գործով Գ.Պետրոսյանի նկատմամբ հայրաբերված հետախուզումը դադարեցնելու վերաբերյալ կազմված քարտը՝ համապատասխան հաշվառման վերցնելու համար: Հիշյալ գրությունը կազմվել է Ա.Վարդանյանի կողմից: Թիվ 46410016 հետախուզական գործի նյութերում առկա չէ 2016 թվականի հոկտեմբերի 24-ի մեղադրյալ Գ.Պետրոսյանին նախաքննության մարմին ներկայացնելու փաստը հաստատող որևէ փաստաթուղթ:

2017 թվականի մարտի 24-ին նախկինության Նախրիի բաժնից Նախրիի քննչական բաժնի ստացված գրության համաձայն՝ ներկայացվել

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 190-194:

է Գ.Պետրոսյանը: Նույն օրը քրեական գործով կասեցված վարույթը վերակալել է: 2017 թվականի ապրիլի 19-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2017 թվականի մայիսի 19-ի դատավճռով Գ.Պետրոսյանը դատապարտվել է վեց ամիս ժամկետով ազատազրկման և ասիմանավել է 2 փարի ժամկետով փորձաշրջան:

Այսինքն, դատարանն արձանագրում է, որ նշված ժամանակահատվածում հետախուզական գծով հետախուզվող անձանց, կոնկրետ Գ.Պետրոսյանի վերաբերյալ գործը հանձնարարված է եղել Ա.Վարդանյանին: Ինչպես վերը նշվեց Վարդանյանը կազմել է հետախուզական գործը և ընթացքով զբաղվել է ինքր:

Դատարանը փաստում է, որ ամբաստանյալ Ա.Վարդանյանի կողմից դրսևորվել է ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք, պարզաձև կարգով չի կատարել ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշմամբ նախատեսված իր պարտականությունները, սակայն դրանց ոչ պարզաձև կատարելու հերևանքով պետությանը կամ այլ կազմակերպությունների, ինչպես նաև ոստիկանության համակարգին էական վնաս չի պատճառվել: Այսինքն, քրեական գործը րևական ժամանակ կասեցված մնալով, որևէ էական վնաս չի պատճառվել, որևէ անձի կամ կազմակերպության, քանի որ դատախազության կողմից ստուգումների արդյունքում, կասեցված գործը վերակալել է, նախաքննությունը ավարտվել է, գործն ուղարկվել է դատարան և կայացվել է մեղադրական դատավճիռ:

Հակառակ վերը նշվածի, եթե դատախազության ստուգումների արդյունքում ի հայտ չգար Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի արդյունքում կասեցված գործի վերականգնում հիմքերը, ապա հնարավոր է, որ սրտեղծվեր վրանգ հերևանքների առումով, մասնավորապես՝ լրանար վաղեմության ժամկետները: Իսկ (...) վրանգ սրտեղծելը և հերևանքն իրար բացառող երևույթներ են: Ուարի դրանցից մեկի առկայությունը վկայում է մյուսի բացակայության մասին: Հերևաքար հանրորեն վրանգավոր հերևանքի առաջացման վրանգ սրտեղծելը չի կարող գնահատվել որպես էական վնաս:

Ինչպես հասարտված է համարում դատարանը, Գ.Պետրոսյանի նկատմամբ առկա է ուժի մեջ մերած մեղադրական դատական ակր:

Ինչ վերաբերվում է պետության օրինական շահերի, արդարադատության շահի խախտմանը, ապա դատարանը դրան անդրադարձել է՝ նշելով, որ պետության և արդարադատության շահ չի խախտվել, քանի որ Գ.Պետրոսյանի նկատմամբ առկա է մեղադրական ուժի մեջ մերած դատական ակր:

Անդրադառնալով ՀՀ ոստիկանության հեղինակազրկմանը և ոստիկանության համապարասխան ստորաբաժանման հետախուզվող

անձանց հայրնաբերման դեպքում իրականացվող քնականոն գործունեության խաթարմանը՝ դադարանը ցանկանում է նշել, որ նախ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում չկա ձևակերպում, թե կոնկրետ ինչ գործողությունների արդյունքում է հեղինակագրկվել ուսրիկանությունը, և ինչ ձևով է խաթարվել քնականոն գործունեությունը:

Բացի այդ, դադարանը ցանկանում է նշել, որ քրեական գործում առկա չէ որևէ փաստական փվյալ այն մասին, որ Ա.Վարդանյանի անփույթ և անբարեխիղճ գործողությունների արդյունքում առաջացած իրավական հարաբերությունները հրապարակվել է լրատվական միջոցներով կամ այլ ճանապարհով, մատչելի են դարձել հանրությանը, ինչի հետևանքով հեղինակագրկվել է ՀՀ ուսրիկանությունը:

Ինչպես նաև, չկա գեթ մեկ փաստական հանգամանք, որ խաթարվել է քնականոն գործունեությունը:

Այդուամենայնիվ պետական իշխանության հեղինակագրկումը՝ որպես պետական մարմինների գործունեության սկզբունքների խախտման արդյունք, ինքնին հանրորեն վրանգավոր այլ հետևանքների բացակայության պարագայում, չի կարող գնահատվել իբրև էական վնաս՝ քննարկվող հանցագործության իմաստով:

Այսինքն, ամբաստանյալ Արմեն Վարդանյանի գործողություններով պետությանը որևէ վնաս չի պարճատվել:

Այսպիսով դադարանը եկավ այն եզրահանգման, որ ամբաստանյալ Արմեն Վարդանյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ՝ նկարի ունենալով, որ նրա ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով էական վնաս չի պարճատվել (...):»¹:

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտով արձանագրել է հետևյալը. «(...) 1) Սույն գործով հաստատվել է, որ ամբաստանյալ Ա.Վարդանյանը դրսևորել է ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք, որը դրսևորվել է ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշմամբ նախարեսված իր պարտականությունների ոչ պատշաճ կատարմամբ, այն է՝ ամբաստանյալը չի կատարել հետախուզվող անձին հայրնաբերելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն րտեղեկացնելու և հետախուզվողին վերջինիս ներկայացնելու իր պարտականությունները, ինչպես նաև հետախուզական գործը կարճելու մասին որոշում չի կայացրել:

2) Քննարկվող պարտավորությունների խախտումները հայրնաբերվել են դարախազության կողմից իրականացված սրուգումների արդյունքում, որից հետո միայն հետախուզվող անձը՝ Գ.Պետրոսյանը, ներկայացել է վարույթն իրականացնող մարմին՝ սրանալով համապարասխան դարավարության մասնակցի կարգավիճակ:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 14-22:

3) Գ.Պետրոսյանը ներկայացել է Ա.Վարդանյանին 2016 թվականի հոկտեմբերի 24-ին, երբ վերջինս պետք է կատարեր Կառավարության նշված որոշմամբ նախատեսված իր պարտականությունները, սակայն դրանց չկատարմամբ Գ.Պետրոսյանը ներկայացել է կամավոր վարույթն իրականացնող մարմին միայն 2017 թվականի մարտի 24-ին, այսինքն՝ նշված ժամանակահատվածում (հինգ ամիս) Գ.Պետրոսյանի գործը գտնվել է կասեցված վիճակում, իսկ վերջինս չի կարողացել իրացնել դատավարական կարգավիճակից բխող իր իրավունքները, իսկ պետությունը, ի դեմս համապատասխան հետաքննության և նախաքննության մարմնի, զրկվել է գործով ողջամիտ ժամկետում քննություն իրականացնելու, իսկ դատական մարմինը՝ արդարադատություն իրականացնելու հնարավորությունից:

Վերոնշյալի ներքո՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Ա.Վարդանյանի կողմից իր պարտականությունների ոչ պարզաձև կատարումը հանգեցրել է ոչ միայն Գ.Պետրոսյանի վերաբերյալ գործով վարույթի չարդարացված կասեցմանը (հինգ ամիս ժամկետով), այլև խախտվել է գործի քննությունը «ողջամիտ» ժամկետում իրականացնելու հրամայականը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդարադատության շահի խախտմանը: Ավելին՝ Ա.Վարդանյանի հանցավոր անգործության հետևանքով Գ.Պետրոսյանը հայրնաբերվելուց անմիջապես հետո չի ենթարկվել քրեական պարասխանաարվության և պարժի: Այլ կերպ, այդ գործողությունների արդյունքում չեն իրականացվել քրեաիրավական և քրեադատավարական համալիր խնդիրները, որոնց մեջ, ի թիվս այլոց, ներառված են քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր անձի բացահայտելն ու քրեական պարասխանաարվության ենթարկելը:

4) Ա.Վարդանյանի անգործության հետևանքով ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզային վարչության Շահրիի բաժնի, չի իրականացրել իր պարտականությունները, որոնց իրավական հիմքերն ամրագրված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետը՝ Օրենք): Մասնավորապես Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է (...) իրականացնել՝ քննությունից, դատից, պարիժը կրելուց խուսափող անձանց ու հաիշտակված գույքի հետախուզում, (...): Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանությունը օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարտավոր է կատարել (...) քննիչի որոշումները (...) հետախուզում հայտարարելու մասին, (...)»:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Ա.Վարդանյանի հանցավոր անգործության հետևանքով չեն կատարվել ոստիկանության նշված պարտականությունները, ինչն էլ հանգեցրել է նշված մարմնի գործունեության խաթարմանը՝ հեղինակագրկելով վերջինին:

Առավել էական նշանակություն ունեցող հանգամանքը, որը հաշվի չի առել Առաջին աստիճանի դատարանը ամբաստանյալի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ համարվող էական վնասը գնահատելուց, այն է, որ սույն գործով ամբաստանյալի հանցավոր գործողությունները վերաբերում են քրեական գործով վարույթի ընթացքում քննիչի կողմից կայացրած որոշման պահանջները չկատարելու և դրանով պայմանավորված՝ հանցագործություն կատարած անձին վարույթն իրականացնող մարմնին չներկայացնելու հետ, որը, ելնելով քրեական դատավարության հանրային բնույթից, դրա կողմից լուծման ենթակա համասոցիալական խնդիրներից, բավական հիմք է հետևություն անելու ամբաստանյալի արարքի հետևանքների էական լինելը հաստատված ճանաչելու համար: Ընթին այն փաստը, որ հանցագործություն կատարած անձը, լինելով հետախուզման մեջ, իսկ քրեական գործով վարույթն այդ հիմքով կատեցված վիճակում, հայրնաբերվելուց հետո չի ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին, այդ գործով վարույթը շարունակել է կատեցված մնալ մինչև դատախազության ստուգումները, բավարար է հետևություն անելու, որ Առաջին աստիճանի դատարանի հետևությունները հիմնադրվել են և քրեաիրավական և քրեադատարական խնդիրների նկատմամբ ձևական վերաբերմունքի արդյունք են: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ քրեական վարույթի ընթացքում կայացված որոշումների պահանջները չկատարելը, ինքնին հեղինակագրվում է ոչ միայն այդ որոշումը չկատարող մարմնին, այլև քրեական վարույթն իրականացնող մարմնին, կասկածի տակ դնում հանցավորության դեմ պայքարի պետության ողջ գործունեությունը, հետևաբար այն արարքները, որոնք կատարվում են քրեաիրավական և քրեադատարական խնդիրների լուծման բնագավառում, միանշանակ հանգեցնում են քրեաիրավական նշանակություն և բնույթ ունեցող հետևանքների, այս դեպքում՝ էական վնասի:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալի արարքի հետևանքով քրեաիրավական պաշտպանության տակ վերցված հասարակական հարաբերություններին պատճառվել է քրեական պարասխանավորության համար բավարար հիմք հանդիսացող այնպիսի վնաս, որն իր բնույթով «էական» է, որպիսի պայմաններում Ա.Վարդանյանի արարքը համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասում նշված հանցագործության հարկանիշներին (...):¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով.

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 74-87:

8. Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, իսկ Առաջին ատյանի դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով սահմանված հանցակազմը, ինչպես նաև վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, կայացրել է հիմնավորված և օրինական դատական ակտ:

Բողոքաբերները, վերլուծելով գործի փաստական հանգամանքները, եզրահանգել են, որ տվյալ դեպքում Ա.Վարդանյանի գործողություններով պետության օրինական շահերին էական վնաս չի պատճառվել, քանի որ հետախուզվողի վերաբերյալ քրեական գործն ի վերջո վերսկսվել է, ընթացել է դատավարություն, և նա արդյունքում դատապարտվել է:

8.1. Բողոք բերած անձանց կարծիքով Ա.Վարդանյանը կատարել է հետախուզվողին ներկայացնելու և համապատասխան տեղեկությունները դեկավարին և ինֆորմացիոն կենտրոն ներկայացնելու պարտականությունները, թեև հետախուզության գծով օպերլիազորի պարտականությունները նրա վրա դրվել են ավելի ուշ: Նման պայմաններում հերքված է պետությանը կամ հանրությանը էական վնաս պատճառված լինելու և ՀՀ ոստիկանության համակարգն Ա.Վարդանյանի կողմից հեղինակագրվելու հանգամանքը:

8.2. Բացի այդ, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի՝ 2017 թվականի մայիսի 22-ի հրամանով՝ ծառայողական պարտականությունների կատարման մեջ թերանալու, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժին ներկայացած հետախուզվողին վարույթն իրականացնող մարմին չներկայացնելու, այդ մասին գրավոր կամ բանավոր կարգով քննիչին չտեղեկացնելու, դրանով իսկ համապատասխան ենթաօրենսդրական ակտի պահանջները խախտելու համար Ա.Վարդանյանին հայտարարվել է նկատողություն: Նման պայմաններում Ա.Վարդանյանի նկատմամբ մեղադրական դատական ակտ կայացնելու դեպքում, ըստ բողոքաբերների, խախտվել է նաև նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը, որն ամրագրված է ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձինք խնդրել են քեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 11-ի որոշումը և Ա.Վարդանյանին արդարացնել կամ օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի արդարացման դատավճիռն կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական անփութության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող էական վնասի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք անբաստանյալ Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփութ վերաբերմունքի հետևանքով իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարաններն Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփութ վերաբերմունքի հետևանքով ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշմամբ նախատեսված՝ իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության¹:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփութ վերաբերմունքի հետևանքով ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշմամբ նախատեսված իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելը հաստատված, իսկ բողոքաբերների պատճառաբանությունները հերքված են անբաստանյալ Ա.Վարդանյանի, վկաներ Ն.Հախնազարյանի, Ռ.Հակոբյանի, Կ.Մանուկյանի, Ք.Պետրոսյանի ցուցմունքներով, ՀՀ ոստիկանության պետի՝ 2014 թվականի օգոստոսի 25-ի թիվ 2803-Ա և 2016 թվականի մարտի 1-ի թիվ 444-Ա հրամանների քաղվածքների պատճեններով, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետի՝ 2016 թվականի ապրիլի 8-ի թիվ 25-Ա հրամանի քաղվածքով, փաստաթղթերի զննության մասին 2018 թվականի հունվարի 20-ի արձանագրությամբ:

12. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը:

անփույթ վերաբերմունքի հետևանքով իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, այն է՝ հետախուզվող անձին հայտնաբերելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնին տեղեկացնելու և հետախուզվողին վերջինիս ներկայացնելու իր պարտականությունները չկատարելու, հետախուզական գործը կարճելու մասին որոշում չկայացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված են:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ամբաստանյալ Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում պետության օրինական շահերին անզգուշությամբ էական վնաս պատճառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պարտաճանկարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխարավարձի հազարապարիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը) (...):»*

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքներին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) [է]ական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնեական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ: Այնուամենայնիվ, միայն վնասի առկայությունը դեռևս բավարար չէ խոսել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցակազմի առկայության մասին: Այս առումով պարտադիր է, որպեսզի վնասը լինի էական:*

Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը գրնում է, որ վնասի էական լինելու հարկանիշը նույն կերպ չի դրսևորվում րարբեր իրավիճակներում: Այն ենթակա է գնահատման, որը պետք է իրականացնի իրավակիրառողը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից: Ընդ որում, գույքային վնասի դեպքում օրենսդիրն արդեն իսկ ուրվագծել է էական գույքային վնասի սահմանները: Մասնավորապես, համաձայն ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի՝ գույքային վնասի դեպքում

էական վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապարիկի չափը գերազանցող գումարի կամ դրա արժեքի չափով հասցված գույքային վնասը, այսինքն՝ գույքային վնասի դեպքում օրենսդիրը հարակ սահմանել է նվազագույն այն գումարը կամ արժեքը, որն ընկած է վնասը որպես էական գնահատելու հիմքում:

Այլ է ինդիքը ոչ գույքային վնասի դեպքում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնետական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, և որ օրենսդրի գնահատմամբ՝ պաշտոնետական անփութության դեպքում ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնաս կարող է պարձառվել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության՝ վերջինիս կողմից պաշտպանության ենթակա շահերին, կարևորվում է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Այս կապակցությամբ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, անհրաժեշտ համարելով վկայակոչել իր՝ 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները, գրնում է, որ դրանք կիրառելի են նաև սույն գործով ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականության հարցի առնչությամբ: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահասարակելով իր՝ ՄԴՈ-747 և ՄԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգրագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնցով գնահատվում է վնասի էական կամ ոչ էական լինելը (...):¹:

¹ Տե՛ս՝ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՄԴՈ-1174 որոշման 5-րդ կետը:

14. Քննարկվող նորմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Պաշտոնեական անփութության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ են հանրորեն վրանգավոր հետևանքները: Օրենքը նման հետևանք է դիտում անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պարճատված էական վնասը: Ընդ որում, եթե գույքային վնասի դեպքում նախարեսված է որոշակի շեմ (հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխարավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը), ապա ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահարվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով րվյալ գործի հանգամանքները (այդ թվում՝ անձանց, կազմակերպություններին, հասարակությանը կամ պետությանը պարճատված բարոյական վնասի չափը, րուժողների քանակը, իսխարված իրավունքների և ազարությունների բնույթն ու իսխարման սարհճանը, հիմնարկության կամ ճեռնարկության բնականոն գործունեության իսթարման սարհճանը և այլն):

ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախարեսված հանցակազմը նյութական է, ուստի դրա օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ է հանդիսանում պարճատական կապը արարքի և հետևանքների միջև: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հանցավոր անգործության և հանրորեն վրանգավոր հետևանքների միջև պարճատական կապն առկա է այն դեպքում, երբ հանրորեն վրանգավոր հետևանքն առաջացել է պաշտոնարար անձի կողմից իր պարտականությունները չկարարելու կամ ոչ պարշաճ կարարելու արդյունքում: Այլ կերպ՝ հանրորեն վրանգավոր հետևանքները չէին առաջանա, եթե պաշտոնարար անձը պարշաճ կերպով կարարեր իր վրա դրված պարտականությունները (...)»¹:

15. Հիմք ընդունելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ անձի ոչ իրավաչափ արարքի արդյունքում անճանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճատված վնասի առկայությունը դեռևս բավարար չէ պաշտոնեական անփութության հանցակազմի առկայությունը հավաստելու համար. անհրաժեշտ է, որպեսզի պատճատված վնասը լինի էական:

Ի տարբերություն գույքային վնասի, որի դեպքում նախատեսված է էական վնասի նվազագույն շեմը (հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Համլեր Սախակյանի վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԼԳ/0207/01/12 որոշման 15-րդ կետը:

գումարը կամ դրա արժեքը), ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները: Այլ կերպ՝ ոչ գույքային վնասի դեպքում իրավակիրառ պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնց դեպքում պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում առաջացած հետևանքները կարող են գնահատվել որպես էական կամ ոչ էական:

16. Միևնույն ժամանակ, զարգացնելով պաշտոնական անփութության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքների՝ անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասի առնչությամբ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

- քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանրորեն վտանգավոր հետևանքը՝ էական վնասը, այլ ոչ թե դրա առաջացման վտանգ ստեղծելը: Հետևաբար, հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման վտանգ ստեղծելը չի կարող գնահատվել որպես էական վնաս (թե՛ գույքային և թե՛ ոչ գույքային): Անհրաժեշտ է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման վտանգ ստեղծելը տարբերակել հանրորեն վտանգավոր հետևանքի փաստացի առաջացումից: Վտանգ ստեղծելը հանդիսանում է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացմանը նախորդող փուլ, այնուամենայնիվ, որոշակի հանգամանքներով պայմանավորված, վտանգի ստեղծմանը կարող է չհաջորդել հետևանքի փաստացի առաջացումը, որպիսի իրավիճակում բացառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը: Հարկ է փաստել, որ քննարկվող հանցակազմի առումով նշանակություն չունի, թե հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացումն ում կողմից է կանխվել՝ ոչ իրավաչափ արարք կատարած անձի, թե մեկ այլ անձի կողմից,

- պաշտոնատար անձի ցանկացած ոչ իրավաչափ արարքի արդյունքում հանրային իշխանության մարմինների, դրանց կազմակերպությունների հեղինակությանը պատճառվում է որոշակի վնաս: Ընդ որում, քննարկվող հետևանքի առկայությունը հավաստելու համար նշանակություն չունի, թե պաշտոնատար անձի ոչ իրավաչափ արարքի մասին լրատվական միջոցներով հրապարակվելու կամ այլ ճանապարհով հանրությանը հայտնի դարձել է, թե ոչ:

Հարկ է նշել, որ վերոնշյալն ինքնին, այլ փաստացի հետևանքների բացակայության պայմաններում, չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 315-

րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դիտարկվել որպես էական վնաս: Հակառակ պարագայում կիմաստագրկվի քննարկվող հանցակազմի բուն էությունը, քանզի պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտակա- նությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ցանկացած դեպք կդիտարկվի որպես պաշտոնետական անփութություն, քանի որ պաշտոնատար անձի ոչ իրավաչափ արարքը չի կարող չվնասել համա- պատասխան կառույցի հեղինակությունը,

- ոչ գույքային վնասի գնահատողական բնույթը հաշվի առնելով՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է համապատասխան դատավարական փաստաթղթերում պատճառաբանել և հիմնավորել վնասը որպես էական գնահատելու հանգամանքը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, ծառայության նկատմամբ անբարե- խիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով պատշաճ կարգով չի կատարել ՀՀ կառավարության թիվ 857-ՆԳ որոշմամբ նախատեսված իր պարտականությունները, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին, այն է՝ խախտվել է արդարադատության շահը, մասնավորապես՝ հայտնաբերված հետախուզվող մեղադրյալն անմիջապես չի ենթարկվել քրեական պատասխանատվության, քրեական գործի վարույթը տևական ժամանակ՝ շուրջ 5 ամիս, մնացել է կասեցված, բացի այդ, հեղինակագրկվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը, խաթարվել է ոստիկանության համապատասխան ստորաբաժանման՝ հետախուզվող անձանց հայտնաբերման դեպքում իրականացվող բնականոն գործունեությունը, որպիսի անգործությունն էլ ի վերջո հայտնաբերվել է դատախազական գործունեության միջամտու- թյան արդյունքում¹:

Առաջին առյանի դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ա.Վարդանյանը ծառայության նկատմամբ դրսևորել է անբարեխիղճ և անփույթ վերաբերմունք, պատշաճ կարգով չի կատարել ՀՀ կառավարու- թյան թիվ 857-ՆԳ որոշմամբ նախատեսված իր պարտականությունները, սակայն դրանց ոչ պատշաճ կատարելու հետևանքով պետությանը կամ այլ կազմակերպություններին, ինչպես նաև ոստիկանության համակարգին էական վնաս չի պատճառվել: Այսինքն՝ տևական ժամանակով քրեական գործի կասեցված լինելու պայմաններում որևէ էական վնաս չի

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

պատճառով, քանի որ դատախազության կողմից ստուգումների արդյունքում կասեցված գործը վերսկսվել է, նախաքննությունն ավարտվել, իսկ գործն ուղարկվել է դատարան և կայացվել է մեղադրական դատավճիռ, որը մտել է օրինական ուժի մեջ: Ինչ վերաբերվում է պետության օրինական շահերի և արդարադատության շահի խախտմանը, ապա Առաջին ատյանի դատարանը նշել է, որ այն չի խախտվել, քանի որ Գ.Պետրոսյանի նկատմամբ առկա է ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ:

Անդրադառնալով ՀՀ ոստիկանության հեղինակագրկմանը և ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետախուզվող անձանց հայտնաբերման դեպքում իրականացվող բնականոն գործունեության խաթարմանը՝ Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ նախ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքում չկա ձևակերպում, թե կոնկրետ ինչ գործողությունների արդյունքում է հեղինակագրկվել ոստիկանությունը, և ինչ ձևով է խաթարվել դրա բնականոն գործունեությունը: Բացի այդ, քրեական գործում առկա չէ որևէ փաստական տվյալ այն մասին, որ Ա.Վարդանյանի անփույթ և անբարեխիղճ գործողությունների արդյունքում առաջացած իրավական հարաբերությունները հրապարակվել են լրատվական միջոցներով կամ այլ ճանապարհով մատչելի են դարձել հանրությանը, ինչի հետևանքով հեղինակագրկվել է ՀՀ ոստիկանությունը¹:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և Ա.Վարդանյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում, արձանագրել է, որ շուրջ հինգ ամիս քրեական գործը գտնվել է կասեցված վիճակում, իսկ Գ.Պետրոսյանը չի կարողացել իրացնել դատավարական կարգավիճակից բխող իր իրավունքները, իսկ պետությունը, ի դեմս համապատասխան հետաքննության և նախաքննության մարմնի, գրկվել է գործով ողջամիտ ժամկետում քննություն իրականացնելու, իսկ դատական մարմինը՝ արդարադատություն իրականացնելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ խախտվել է գործի քննությունը «ողջամիտ» ժամկետում իրականացնելու հրամայականը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է արդարադատության շահի խախտմանը: Ավելին՝ Ա.Վարդանյանի հանցավոր անգործության հետևանքով Գ.Պետրոսյանը հայտնաբերվելուց անմիջապես հետո չի ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ Ա.Վարդանյանի անգործության հետևանքով ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի, չի իրականացրել իր պարտականությունները, ինչն էլ հանգեցրել է նշված մարմնի գործունեության

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

խաթարմանը՝ հեղինակագրկելով վերջինիս:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ ինքնին այն փաստը, որ հանցագործություն կատարած անձը, լինելով հետախուզման մեջ, իսկ քրեական գործով վարույթն այդ հիմքով կասեցված վիճակում, հայտնաբերվելուց հետո չի ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին, այդ գործով վարույթը շարունակել է կասեցված մնալ մինչև դատախազության ստուգումները, բավարար է հետևություն անելու, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները հիմնագործ են և արդյունք են քրեախրավական ու քրեադատավարական խնդիրների նկատմամբ ձևական վերաբերմունքի: Քրեական վարույթի ընթացքում կայացված որոշումների պահանջները չկատարելն ինքնին հեղինակագրկում է ոչ միայն այդ որոշումը չկատարող մարմնին, այլև քրեական վարույթն իրականացնող մարմնին, կասկածի տակ դնում հանցավորության դեմ պայքարի պետության ողջ գործունեությունը, հետևաբար այն արարքները, որոնք կատարվում են քրեախրավական և քրեադատավարական խնդիրների լուծման բնագավառում, միանշանակ հանգեցնում են քրեախրավական նշանակություն և բնույթ ունեցող հետևանքների, այս դեպքում՝ էական վնասի¹:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն Ա.Վարդանյանի արարքի արդյունքում պետության օրինական շահերին էական վնաս պատճառելու առնչությամբ հանգել է սխալ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև Ա.Վարդանյանի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում հետախուզման մեջ գտնվող անձը հայտնաբերվելուց հետո չի ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին, և քրեական գործի վարույթը շուրջ հինգ ամիս շարունակել է մնալ կասեցված, այնուամենայնիվ այդ ընթացքում Գ.Պետրոսյանը վարույթն իրականացնող մարմնից չի թաքնվել, դատախազության ստուգումների արդյունքում կասեցված գործի վարույթը վերսկսվել է, կատարվել է նախաքննություն, ապա գործն ուղարկվել է դատարան և կայացվել է մեղադրական դատավճիռ, որը մտել է օրինական ուժի մեջ: Նման պայմաններում արդարադատության շահին չի պատճառվել այնպիսի վնաս, որը կարող էր գնահատվել որպես էական, և կվկայեր Ա.Վարդանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության մասին:

18.1. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի այն կատեգորիկ

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատողությանը, որ քրեական վարույթի ընթացքում կայացված որոշումների պահանջները չկատարելն ինքնին հեղինակագրկում է ոչ միայն այդ որոշումը չկատարող մարմնին, այլև քրեական վարույթն իրականացնող մարմնին, հեղևարար այն արարքները, որոնք կատարվում են քրեաիրավական և քրեադարավարական խնդիրների լուծման բնագավառում, միանշանակ հանգեցնում են քրեաիրավական նշանակություն և բնույթ ունեցող հեղևանքների, այս դեպքում՝ էական վնասի:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, այդ թվում՝ քրեաիրավական և քրեադատավարական խնդիրների լուծման բնագավառում, չի հավաստում անձի արարքում պաշտոնեական անփութության հանցակազմի առկայությունն այնքան ժամանակ, քանի դեռ անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին չի պատճառվել **էական վնաս**:

Հակառակ մեկնաբանության պարագայում ստացվում է, որ քրեաիրավական և քրեադատավարական խնդիրների լուծման բնագավառում անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ցանկացած դեպքում օրենքով պաշտպանվող շահերին ինքնաբերաբար էական վնաս է պատճառվում, ինչն անընդունելի է: Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ոչ գույքային վնասի էական կամ ոչ էական լինելու հանգամանքը պետք է յուրաքանչյուր գործով գնահատվի իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքների ամբողջությունը:

Բացի այդ, հարկ է նկատել, որ պաշտոնատար անձի ցանկացած ոչ իրավաչափ արարքի արդյունքում հանրային իշխանության մարմինների, դրանց կազմակերպությունների հեղինակությանը պատճառվում է որոշակի վնաս, ինչն ինքնին, այլ փաստացի հետևանքների բացակայության պայմաններում, չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դիտարկվել որպես էական:

Ինչ վերաբերում է Ա.Վարդանյանի արարքի արդյունքում ոստիկանության համապատասխան ստորաբաժանման՝ հետախուզվող անձանց հայտնաբերման դեպքում իրականացվող բնականոն գործունեության խաթարմանը, ապա վերոնշյալի մասին վկայող փաստական տվյալներ սույն քրեական գործում առկա չեն:

19. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ Ա.Վարդանյանի արարքի արդյունքում Գ.Պետրոսյանի գործը տևական ժամանակ գտնվել է կասեցված վիճակում, և վերջինս չի կարողացել իրացնել դատավարական կարգավիճակից բխող իր իրավունքները,

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում, քանի որ վերոնշյալ հետևանքի առաջացումն Ա.Վարդանյանին չի մեղսագրվել¹:

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, չհերքելով Ա.Վարդանյանի ոչ իրավաչափ արարքի արդյունքում պետական իշխանության մարմնի՝ ՀՀ ոստիկանության հետիևակությանը որոշակի վնաս պատճառելու փաստը, մինևույն ժամանակ, արձանագրում է, որ Ա.Վարդանյանի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում չեն առաջացել այնպիսի հետևանքներ, որոնք կարող էին բավարար լինել պետության օրինական շահերին պատճառված վնասը ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով էական դիտելու համար²:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Վարդանյանի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ և անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում պետության օրինական շահերին անզգուշությամբ էական վնաս պատճառելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերների փաստարկներին առ այն, որ ծառայողական պարտականությունների կատարման մեջ թերանալու, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության Նաիրիի բաժնի ներկայացած հետախուզվողին վարույթն իրականացնող մարմին չներկայացնելու, այդ մասին գրավոր կամ բանավոր կարգով քննիչին չտեղեկացնելու, դրանով իսկ համապատասխան ենթաօրենսդրական ակտի պահանջները խախտելու համար Ա.Վարդանյանին նկատողություն հայտարարված լինելու պայմաններում, վերջինիս նկատմամբ մեղադրական դատական ակտ կայացնելու դեպքում խախտվել է նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ անձի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառած լինելու հանգամանքը խոչընդոտ չի հանդիսանում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար³:

¹ Դատական քննության սահմանների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս, ի թիվս այլնի, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Կունզուրցևի* վերաբերյալ գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԼԳ/0141/01/14, *Սմբար Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԿԳ-2/0054/01/15 որոշումները:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ռազմիկ Չանախչյանի* վերաբերյալ գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՄԳ1/0033/01/16 որոշումը:

³ Կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարդեն Մանասյանի* վերաբերյալ գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԳ-3/0080/01/12, *Դավիթ Բաբայանի* վերաբերյալ գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԳ1/0043/01/11 որոշումները:

22. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, Ա.Վարդանյանի նկատմամբ կայացված արդարացման դատավճիռը բեկանելով և վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր ճանաչելով, թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Այսինքն՝ թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի խախտում:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալի անմեղության հարցում եկել է ճիշտ եզրահանգման: Այլ կերպ՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 11-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի արդարացման դատավճիռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Անդրյուշայի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 11-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 27-ի արդարացման դատավճիռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Գնալիքներ՝

ստորագրություններ

63. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0912/06/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սահակ Դավթի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով քննիչ Գ.Սադոյանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Արա Մուրադյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանշներով հարուցվել է թիվ 62233018 քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 19-ին Սահակ Դավթի Դավթյանը ձերբակալվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ Սահակ Դավթյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ Ս.Դավթյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով: Միաժամանակ բավարարվել է այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու վերաբերյալ մեղադրյալի և վերջինիս պաշտպան Ա.Կարապետյանի միջնորդությունը՝ գրավի չափ սահմանելով 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

3. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Վ.Դովնագյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2018 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ բողոքը թողել է առանց բավարարման, իսկ մեղադրյալ Ս.Դավթյանի նկատմամբ կիրառված կալանավորում խափանման միջոցը գրավով փոխարինելու մասով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը՝ անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Նախաքննության մարմնի կողմից Սահակ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, «(...) 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՀ ոստիկանության պետի թիվ 2322-Ա հրամանի հիման վրա գրադեցնելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, 2018 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի վարչական շենքում, ոստիկանության երկու այլ աշխատար-

¹ **Ծանոթություն.** Վերոնշյալ վճռաբեկ բողոքը քննության է նշանակվել սույն գործով կիրառման ենթակա քրեադատավարական նորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/0699/06/18 գործով 2019 թվականի ապրիլի 12-ին ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշումը ստանալուց հետո:

կիցների հետ խմբով խոչարանգել է ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի բերման ենթարկված Արա Մուրադյանին:

Այսպես, 2018 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 20:30-ին, ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազոր Սահակ Դավթյանը, նույն բաժանմունքի պետ Թաթուլ Գևորգյանը և ավագ օպերիվազոր Վահագն Միքայելյանը ծեծկոտրուքի մասնակցելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի բերման են ենթարկել Սևան քաղաքի բնակիչ Արա Մուրադյանին: Այնուհետև Սահակ Դավթյանը, իր հանդեպ վախի զգացում ձևավորելու նպատակով նախ ոստիկանության Սևանի բաժնի վարչական շենքի առաջին հարկի միջանցքում Վահագն Միքայելյանի հետ ձեռքերով ու ոտքերով հարվածներ է հասցրել ձեռնաշղթայված Արա Մուրադյանի մարմնի փորձեր մասերին, ապա նրան րեղափոխել են քրեական հետախուզության բաժանմունքին հարկացված, երկրորդ հարկում գրնվող աշխատասենյակներից մեկը, որտեղ նույն նպատակով Վահագն Միքայելյանի և հիշյալ աշխատասենյակ եկած Թաթուլ Գևորգյանի հետ շարունակել է ձեռքերով, ոտքերով և մահակով հարվածներ հասցնել Արա Մուրադյանի մարմնի փորձեր մասերին, նրան դիտավորությամբ պարճատելով ֆիզիկական ուժեղ ցավ:

Սահակ Դավթյանի, Թաթուլ Գևորգյանի և Վահագն Միքայելյանի կողմից Արա Մուրադյանին խոչարանգելու հետևանքով վերջինիս պարճատվել է առողջության թեթև վնասի հարկանիշներ պարունակող գլխի ձախ գագաթ-ծոծրակային շրջանի սալջարդ վերքի, առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող ձախ հարականջային, ականջահետու, ուսահողերի, բազուկների, կրծքավանդակի, որովայնի, ձախ գոտկային, արմնկահողերի, ճաճանջ-դասարակային հողերի, դասարակների, ձախ հետուքային, ազդրի, աջ ծնկահողի, սրունքի, ձախ ծնկահողի, սրունքի, աջ սրունք-թաթային հողի, ոտնաթաթի, ձախ սրունք-թաթային հողի շրջանների բազմաթիվ քերծվածքների և արյունազեղումների ձևով մարմնական վնասվածքներ (...):¹:

5.1. Գործով տուժող Արա Մուրադյանը ըստ էության ցուցմունք է տվել, այնուհետև՝ նաև Ս.Դավթյանի հետ առերեսման ընթացքում պնդել իր ցուցմունքն այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 20-ի սահմաններում գտնվել է «Տոտո» բուքմեյքերական գրասենյակում, երբ այնտեղ են եկել ոստիկանության Սևանի բաժնի աշխատակիցներ Թ.Գևորգյանը, Վ.Միքայելյանն ու Ս.Դավթյանը, իրեն քաշքշելով նստեցրել են ավտոմեքենա ու բերման ենթարկել ոստիկանության Սևանի բաժնի: Ոստիկանության Սևանի բաժնի շենքի առաջին հարկի միջանցքում Վ.Միքայելյանն ու Ս.Դավթյանը հարվածել են իր ոտքերին, վայր գցել

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 57-58:

հատակին և ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցրել իր մարմնի տարբեր մասերին: Այնուհետև իրեն բարձրացրել են երկրորդ հարկում գտնվող աշխատասենյակներից մեկը, որտեղ Թ.Գևորգյանի հետ շարունակել են ոտքերով ու ձեռքերով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին, իսկ Վ.Միքայելյանն ու Ս.Դավթյանը հարվածել են նաև մահակով: Քաշքշուկի ընթացքում իր վերնաշապիկն ու սպորտային բաճկոնը հանել են հագից, գցել հատակին, ոտքերով տրորել, թքել վրան¹:

5.2. Տուժող Ա.Մուրադյանը լրացուցիչ ցուցմունքով հայտնել է, որ ոստիկանների անունից հանդես եկող ինչ-որ մարդիկ, դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող անձանց վախեցրել են՝ պահանջելով չներկայանալ Հատուկ քննչական ծառայություն և ցուցմունք չտալ ոստիկանների դեմ²:

5.3. Գործով վկա Վիզեն Հունանյանը ըստ էության ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 20-ի սահմաններում, ոստիկանության Սևանի բաժնի աշխատակիցներ Ս.Դավթյանը, Վ.Միքայելյանն ու Թ.Գևորգյանը Սևան քաղաքում գործող «Տոտո» բուքմեյքերական գրասենյակից ոստիկանության Սևանի բաժին են տեղափոխել իր ընկերոջը՝ Ա.Մուրադյանին: Երկրորդ հարկում գտնվող աշխատասենյակներից մեկում հանդիպել է Ա.Մուրադյանին՝ հատակին նստած, հագուստը հանած, մարմնի վրա կարմրած հետքով: Վերջինս պատմել է, որ Վ.Միքայելյանը, Ս.Դավթյանն ու Թ.Գևորգյանը ծեծի են ենթարկել իրեն³:

5.4. Ա.Մուրադյանը 2018 թվականի հոկտեմբերի 7-ին, ժամը 23:59-ին դիմել է բուժօգնության, և նրա մարմնի տարբեր հատվածներում հայտնաբերվել են վնասվածքներ, առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով⁴:

6. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Դատարանը գրնում է, որ գործի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալ Սահակ Դավթյանին վերագրվող ենթադրյալ հանցագործությունների բնույթն ու վրանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ նա ազարության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդրամական վարությամբ գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով:

Ինչ վերաբերում է քննությունից թաքնվելու վրանգին, ապա դատարանը գրնում է, որ նախաքննության մարմնի կողմից Սահակ Դավթյանի թաքնվելու վերաբերյալ, բացի ենթադրական բնույթի դատողություն-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 20-27:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 36-37:

³ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 51-56:

⁴ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 17-19:

ներից, որևէ հիմնավոր փաստարկ կամ պատճառաբանություն չի ներկայացվել:

(...) Քննության առնելով մեղադրյալ Սահակ Դավթյանի նկարմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին միջնորդությունը, դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման:

(...) Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Սահակ Դավթյանի անձը հայրնի է, ունի մշտական բնակության վայր, մշտական աշխատանք, նախկինում դատված չէ, ինքնաբերական է գտնվում հաշմանդամ մայրը:

(...) Դատարանը գտնում է, որ Սահակ Դավթյանին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթը և վրանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև նրա անձը բնութագրող արվյալներն էականորեն նվազեցնում են ազատության մեջ մնալու դեպքում քննությանը խոչընդոտելու հավանականությունը:

Դատարանը գտնում է, որ թեև առկա է մեղադրյալ Սահակ Դավթյանի կողմից գործի քննությանը խոչընդոտելու վրանգ, սակայն մինչդեռ վարույթի ներկա փուլում այդ վրանգի հավանականությունը բարձր չէ, և գրավը կարող է չեզոքացնել այն:

(...) Այսպիսով, դատարանը գտնում է, որ մեղադրյալ Սահակ Դավթյանին կալանքից գրավով ազատելը պետք է ճանաչել թույլատրելի, քանի որ գրավի կիրառումը կարող է երաշխավորել մեղադրյալի ազատության մեջ գտնվելու դեպքում նրա իրավաչափ վարքագիծը:

Դատարանը գտնում է, որ գրավի գումար պետք է սահմանել 2.000.000 ՀՀ դրամը (...):¹:

7. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումը, արձանագրել է. «(...) Առաջին արյանի դատարանը ճիշտ եզրահանգման է հանգել կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու մասին հետևության հանգելիս, քանի որ առկա են եղել դրա կիրառման հիմքերը և պայմանները:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ թեև մեղադրյալին մեղագրվում է առաձևապես ծանր հանցագործության ենթադրյալ կատարման փաստը, որը կարող է և, որպես կանոն, հանդիսանում է էական գործոն կալանավորման կիրառման անհրաժեշտության հարցը լուծելիս, սակայն միայն դրանով չի կարող որոշվել կալանավորման կիրառման և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ անձին վերագրվող արարքի հանրային վրանգավորության բնույթն ու աստիճանը գնահատելիս

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 93-95:

կարևոր են նաև գործի մյուս հանգամանքները, մասնավորապես ենթադրյալ հանցագործության կարարման իրադրությունը, շարժառիթը (որքանով բացահայտված է), արժողի վարքագիծը և այլն:

(...) Վերաքննիչ դատարանի համար առավել ուշագրավ են այն հանգամանքները, որ մեղադրյալը հանդիսանում է ոստիկանության աշխատակից և իրականացրել է իրավապահ գործառույթ և գործով առկա չէ որևէ փաստական փվյալ այն մասին, որ նա երբևէ դրսևորել է հակաիրավական վարքագիծ:

(...) Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մեղադրյալի ինսամբին է գրնվում վարատողջ մայրը, հայրը մահացած է, քնությանգրվում է դրական, ունի մշտական քնակության վայր և այլն՝ գրնում է, որ գրավի կիրատումը կոնկրետ դեպքում կարող է քավարար երաշխիք լինել նրա պարշաճ վարքագիծն ապահովելու համար (...):»¹:

8. 2019 թվականի ապրիլի 26-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավատության դատարանում ստացվել է թիվ ԳԴ3/0007/01/19 քրեական գործն ըստ մեղադրանքի Սահակ Դավթյանի և մյունների՝ ըստ էության քննության առնելու համար, և Ս.Դավթյանի նկատմամբ կայացվել է խափանման միջոցի վերաբերյալ նոր որոշում²:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քնվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի կարծիքով, Վերաքննիչ դատարանի դատողությունները չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթներից, Վերաքննիչ դատարանը կայացրել է այնպիսի դատական ակտ, որով թույլ է տվել դատական սխալ: Ըստ բողոքաբերի՝ մինչդատական վարույթի ընթացքում գործի քննությանը խոչընդոտելու հիմքի դեպքում, առկա է վտանգ, ռիսկ, որ կարող են առաջանալ անդառնալի հետևանքներ: Վերաքննիչ դատարանը, վիճարկվող դատական ակտում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսված նորմին տվել է այնպիսի մեկնաբանություն, որը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշումներում նշված նորմին տրված մեկնաբանությանը:

Բողոք բերած անձը փաստել է, որ դատարանն իր դատողություններում վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ, անտեսել է նույն կոնվենցիայի 3-րդ հոդվածը, դրա հետ կապված արդյունավետ

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 39-41, 43-45:

² Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ԳԴ3/0007/01/19 քրեական գործը:

քննություն իրականացնելու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով սահմանված պահանջները, որոնք դժվար է լիարժեք իրականացնել, երբ խմբի կազմում խոշտանգում կատարելու համար մեղադրվող ոստիկանության ծառայողը գտնվում է ազատության մեջ, այն էլ նախաքննության սկզբնական փուլում, երբ դեռ հավաքվում ու ստուգվում են ապացույցներ:

Բացի այդ, բողոքարեբի պնդմամբ, մեղադրյալ Սահակ Դավթյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորման այլընտրանքային միջոց գրավը կիրառելիս, դատարանն անտեսել է նրան մեղսագրվող հանցագործության հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը: Բողոք բերած անձը նշել է նաև, որ վիճարկվող դատական ակտում, Վերաքննիչ դատարանը, մեղադրյալ Սահակ Դավթյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելով և միաժամանակ անհիմն գնահատելով գործի քննությանը խոչընդոտելու ռիսկը, պատշաճ գնահատման չի արժանացրել նրան վերագրվող հանցագործության համար սպասվող պատժի խստության վտանգի հետ զուգակցված այնպիսի վերաբերելի գործոն, ինչպիսին վերջինիս զբաղեցրած պաշտոնն է և դրանով պայմանավորված, իր կայուն սոցիալական կապերն օգտագործելով քննության ընթացքին մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու բարձր ռիսկը:

10. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը և մեղադրյալ Սահակ Դավթյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել անթույլատրելի:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորն են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Ս.Դավթյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ (...) մեղադրյալը կարող է՝

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.
- 2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի

քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով:

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

4) խուսափել քրեական պարասխանարկությունից և նշանակված պարիօր կրելուց:

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Խախտման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի [է] առնվում վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայրնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:

13. Խախտման միջոց գրավը կիրառելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ՝

- անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական տվյալների վրա¹,

- կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս, ի թիվս այնի, պետք է պատշաճ գնահատման ենթարկվեն նաև անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը²,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ³:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ

¹ Տե՛ս Ասլան Ալևրիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը, կետեր 34-36:

² Տե՛ս Սամվել Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշումը, կետ 14:

³ Տե՛ս Անդրեաս Ղուկասյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0533/06/16 որոշման 15-րդ կետը:

ՄԴՈ-1480 որոշմամբ ձևավորված մոտեցումների պայմաններում, Վճռաբեկ դատարանը *Գոռ Համբարձումյանի* գործով որոշմամբ փաստել է. «(...) [Կ]ալանավորումը գրավով փոխարինելիս, վերջինը պետք է ծառայի որպես գործուն միջոց՝ ազատության մեջ գրնվելու դեպքում մեղադրյալի վարքագծի պարզաճանաչությունը երաշխավորելով ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման հավանականությունը զսպելու համար: Այլ կերպ, պայմանավորված խափանման միջոցի կիրառման հիմքով, գրավի միջնորդությունը բացառապես օրենսդրական կարգավորումների վկայակոչմամբ հնքնաբերաբար չի կարող մերժվել՝ առանց այն ըստ էության քննության առարկա դարձնելու, ինչն անընդունելի է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի րեսանկյունից»¹:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Սահակ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագործի պաշտոնը և հանդիսանալով մշտապես իշխանության ներկայացուցչի գործառնություններով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, 2018 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի վարչական շենքում, ոստիկանության երկու այլ աշխատակիցների հետ խմբով խոշտանգել է ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի բերման ենթարկված Արա Մուրադյանին²,

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ գտել է, որ մեղադրյալ Սահակ Դավթյանի նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավ կիրառելու մասին միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հաշվի առնելով, որ մեղադրյալի անձը հայտնի է, նա ունի մշտական բնակության վայր, մշտական աշխատանք, նախկինում դատապարտված չէ, խնամքին է գտնվում հաշմանդամ մայրը: Դատարանը գտել է, որ Սահակ Դավթյանին վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթը և վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, ինչպես նաև նրա անձը բնութագրող տվյալներն էականորեն նվազեցնում են ազատության մեջ մնալու դեպքում քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Դատարանն արձանագրել է, որ թեև առկա է մեղադրյալ Սահակ Դավթյանի կողմից գործի քննությանը խոչընդոտելու վտանգ, սակայն մինչդատական վարույթի ներկա փուլում այդ վտանգի հավանականությունը բարձր չէ, և 2.000.000 ՀՀ դրամի չափով գրավը կարող է

¹ Տե՛ս *Գոռ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0699/06/18 որոշման 24-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

չեզոքացնել այն¹,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ գտել է, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ եզրահանգման է եկել՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին հետևություն հանգելիս, քանի որ առկա են եղել դրա կիրառման հիմքերն ու պայմանները: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ թեև մեղադրյալին մեղաագրվում է առանձնապես ծանր հանցագործության ենթադրյալ կատարման փաստը, որը կարող է և, որպես կանոն, հանդիսանում է էական գործոն՝ կալանավորման կիրառման անհրաժեշտության հարցը լուծելիս, սակայն միայն դրանով չի կարող որոշվել կալանավորման կիրառման և գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ անձին վերագրվող արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը գնահատելիս կարևոր են նաև գործի մյուս հանգամանքները, մասնավորապես ենթադրյալ հանցագործության կատարման իրադրությունը, շարժառիթը (որքանով բացահայտված է), տուժողի վարքագիծը և այլն: Վերաքննիչ դատարանը կարևորել է նաև այն հանգամանքները, որ մեղադրյալը հանդիսանում է ոստիկանության աշխատակից ու իրականացրել է իրավապահ գործառույթ, և գործով առկա չէ որևէ փաստական տվյալ այն մասին, որ նա երբևէ դրսևորել է հակահրավակյան վարքագիծ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մեղադրյալի խնամքին է գտնվում վատառողջ մայրը, հայրը մահացած է, բնութագրվում է դրական, ունի մշտական բնակության վայր և այլն՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ գրավի կիրառումը կոնկրետ դեպքում կարող է բավարար երաշխիք լինել՝ նրա պատշաճ վարքագիծն ապահովելու համար²:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատման ենթարկելով սույն որոշման 12-13-րդ կետերում մեջբերված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՌ-1480 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դրանց հաշվառմամբ Վճռաբեկ դատարանի՝ *Գոռ Համբարձումյանի* գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ-0699/06/18 որոշմամբ ձևավորված մոտեցումները, նախևառաջ անհրաժեշտ է արձանագրել, որ դատարանների կողմից մեղադրյալ Ս.Դավթյանի՝ մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը հաստատելու հանգամանքն ինքնին հիմք չէր մեղադրյալի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառումն ինքնաբերաբար մերժելու համար: Այսինքն, նշված հիմքի առկայության պայմաններում, ստորադաս

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանների կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկումն իրավաչափ էր:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Ս.Դավթյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկման արդյունքում այն թույլատրելի ճանաչելիս չեն պահպանել Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները և անտեսել են սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին Ս.Դավթյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար:

Այսպես, թեև մեղսագրվող արարքի առանձնապես ծանր հանցագործություն լինելն ինքնին բավարար չէ վերոնշյալ եզրահանգման գալու համար, ինչպես իրավացիորեն նշել է նաև Վերաքննիչ դատարանը, սակայն սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Ս.Դավթյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը ենթակա էին պատշաճ գնահատման՝ մեղադրյալի անձը բնութագրող տվյալների համատեքստում, ինչը նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պահանջն է¹:

Տվյալ դեպքում, Ս.Դավթյանին մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման եղանակի, դրա դրսևորման ձևի համատեքստում՝ նախ պետք է պատշաճ ուշադրության արժանացվեր դրանում մեղադրյալի դերակատարումը: Մասնավորապես, Ս.Դավթյանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ մեղադրյալին մեղսագրվել է խմբի կազմում խոշտանգման ենթադրյալ կատարումը, որը դրսևորվել է վախի զգացում ձևավորելու նպատակով բերման ենթարկված անձին ձեռքերով, ոտքերով և մահակով հարվածներ հասցնելու ձևով²:

Բացի այդ, ստորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն առանցքային փաստական տվյալը, որ մեղադրյալը, իրեն մեղսագրվող քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքը կատարելիս, գործել է ի պաշտոնե՝ որպես ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագորի պաշտոնը զբաղեցնող պաշտոնատար անձ: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես *Դավիթ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ

¹ Տե՛ս՝ ս Մարու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Neumeister v. Austria* գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 1936/63, *Sopin v. Russia* գործով 2012 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 57319/10, կետ 42, *Buzadji v. The Republic of Moldova [U՞՞]* գործով 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 23755/07, կետ 90, *Gabor Nagy v. Hungary (No. 2)* գործով 2017 թվականի ապրիլի 11-ի վճիռը, գանգատ թիվ 73999/14, կետ 70:

² Տե՛ս՝ ս սույն որոշման 5-5.4-րդ կետերը:

դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները¹, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքն այն մասին, որ ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, առանձնահատուկ դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա, նրա հնարավորությունները խոչընդոտելու մինչդատական վարույթի բնականոն ընթացքին²: Այդ համատեքստում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առել օրինակ՝ անձի ոստիկան հանդիսանալու և դրանով պայմանավորված՝ գործով հարցաքննման ենթակա վկաների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը³: Այդ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալ Ս.Դավթյանը քրեական վարույթի ընթացքում շարունակել է զբաղեցնել ՀՀ ոստիկանության Սևանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորի պաշտոնը նաև քրեական վարույթի ընթացքում՝ օգտվելով նաև դրանից բխող իշխանությունից: Այս առումով գործի նյութերում բացակայում է տվյալ այն մասին, որ մեղադրյալի ունեցած ազդեցությունը նվազեցնելու համար իր նկատմամբ կիրառված է եղել պաշտոնավարման ժամանակավոր դադարեցում դատավարական հարկադրանքի միջոցը, ինչը խոշտանգման գործերով «տաք հետքերով» տարվող քննության կազմակերպման տեսանկյունից կարևորվել է Վճռաբեկ դատարանի կողմից՝ *Ալբերտ Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի* գործով կայացված որոշմամբ⁴: Նման պայմաններում, էապես բարձր է եղել հավանականությունն առ այն, որ ազատության մեջ գտնվելու դեպքում, մեղադրյալ Ս.Դավթյանը կարող է դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ և խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ հատկապես հաշվի առնելով տուժողի կողմից հայտնած այն տվյալը, որ ոստիկանների անունից հանդես եկող ինչ-որ մարդիկ դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող անձանց վախեցրել են՝ պահանջելով չներկայանալ Հատուկ քննչական ծառայություն և ցուցմունք չտալ ոստիկանների դեմ⁵:

¹ Տե՛ս *Դավիթ Համբարձումյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԵԴ/0700/06/18 որոշումը, կետ 16:

² Տե՛ս *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Neumeister v. Austria* գործով վերը նշված վճիռը, *Gabor Nagy v. Hungary (No. 2)* գործով վերը նշված վճիռը:

³ Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Creanga v. Romania* [ՄՊ] գործով 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29226/03, կետեր 112-115:

⁴ Տե՛ս *Ալբերտ Հակոբջանյանի և Գ.Կարապետյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0172/11/17 որոշումը, կետ 23:

⁵ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 85:

Վերոնշյալի հաշվառմամբ կարևոր է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ սույն գործով ենթադրյալ խոշտանգում կատարած Ս.Դավթյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկվում էր առաջին անգամ՝ ենթադրյալ դեպքից՝ 2018 թվականի հոկտեմբերի 7-ից, անմիջապես հետո ընթացքի մեջ գտնվող նախաքննության պայմաններում, երբ «տաք հետքերով» տարվող քննության մեթոդիկայի կիրառմամբ անհրաժեշտ էր հնարավորինս սեղմ ժամկետներում «լուրջ միջոցներ» ձեռնարկել կազմակերպելու համար նաև ըստ ենթադրյալ գոհի՝ խոշտանգում կատարած անձանց մեկուսացումը՝ նվազագույնի հասցնելով նրանց կողմից իրենց ցուցմունքները միմյանց հետ համաձայնեցնելու հնարավորությունը, ինչպես նշել է Վճռաբեկ դատարանը՝ Ալբերտ Լակոբջանյանի և Գ.Կարապետյանի գործով՝ հիմք ընդունելով նաև այդ մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները¹:

Սակայն, վերոնշյալ ծանրակշիռ փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար, համակողմանի գնահատման չեն ենթարկվել ստորադաս դատարանների կողմից: Նշվածն ուշադրության չարժանացնելու արդյունքում, ստորադաս դատարանները, 2.000.000 ՀՀ դրամի չափով գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելով, հաշվի չեն առել, որ կոնկրետ դեպքում այլընտրանքային խափանման միջոց գրավն ի գործու չէ հակակշռելու Ս.Դավթյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով ապահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այլ կերպ, ստորադաս դատարանները համակողմանի գնահատման չեն ենթարկել այն, որ Ս.Դավթյանի զբաղեցրած պաշտոնի, ունեցած կարգավիճակի, գործով անցնող դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր ազդեցություն գործադրելու բարձր հավանականության պայմաններում, գրավը չէր կարող լինել արդյունավետ իրավական ներգործության միջոց, որը գերծ կպահեր նրան ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելուց և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով կչեզոքացներ նաև նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը:

Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների կողմից որպես Ս.Դավթյանի անձը բնութագրող տվյալներ նշված հանգամանքներին՝ անձը հայտնի լինելը, մշտական բնակության վայր և մշտական աշխատանք ունենալը, նախկինում դատապարտված չլինելը, դրական բնութագրվելը, խնամքին վատառողջ մոր առկայությունը, հոր մահացած

¹ Տե՛ս Ա.Լակոբջանյանի և Գ.Կարապետյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0172/11/17 որոշումը, կետ 23:

լինելը, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ մեղսագրվող արարքի պայմաններում մեղադրյալի անձը հայտնի լինելու և մշտական աշխատանք ունենալու հանգամանքներն էական նշանակություն չեն կարող ունենալ քննարկվող խափանման միջոցի կիրառման հարցը լուծելիս: Ինչ վերաբերում է մնացած հանգամանքներին, ապա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ս.Դավթյանի՝ ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոններ չեն կարող համարվել: Հետևաբար, դրանք ի գորու չեն երաշխավորելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում:

Ուստի, Վճռաբեկ դատարանը չի կարող չեզրահանգել, որ սույն գործում առկա են ծանրակշիռ փաստական տվյալներ, որոնք բավարար են հիմնավորելու համար դատարանի կողմից Ս.Դավթյանի նկատմամբ գրավ կիրառելու ոչ իրավաչափ լինելն ու մինչդատական վարույթի տվյալ փուլում նրան անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, 2.000.000 ՀՀ դրամի չափով սահմանված գրավը չէր կարող լինել գործուն երաշխիք՝ ազատության մեջ գտնվելու դեպքում Ս.Դավթյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը չեզոքացնելու համար:

Վերոնշյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ տվյալ գործի փաստական հանգամանքների պայմաններում գրավը կարող է լինել արդյունավետ միջոց՝ զսպելու համար ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Ս.Դավթյանի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորման հնարավորությունը, հիմնավոր չեն:

16. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Սակայն հաշվի առնելով, որ սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է, և Ս.Դավթյանի վերաբերյալ քրեական գործն ըստ էության քննության առնելու համար ուղարկվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերաբերյալ կայացվել է նոր որոշում¹, ուստի բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը:

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Սահակ Դավթի Դավթյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

64. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՎԴ/0056/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատահազ՝
պաշտպան՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արայիկ Արթուրի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2016 թվականի հուլիսի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 27112816 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հուլիսի 25-ի որոշումներով Արայիկ Հայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Նույն օրը Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2016 թվականի դեկտեմբերի 17-ին Ա.Հայրապետյանը ձերբակալվել է: Նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ի որոշմամբ Ա.Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորումը վերահաստատվել է:

2017 թվականի մայիսի 31-ին թիվ 27112816 քրեական գործից Ա.Հայրապետյանի վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթում, որին շնորհվել է 27112816/2 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ Ա.Հայրապետյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2017 թվականի օգոստոսի 2-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ պաշտպանի միջնորդությունը բավարարվել է, և Ա.Հայրապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Կ.Պողոսյանի և Ա.Սարգսյանի անձնական երաշխավորությամբ:

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճռով Ա.Հայրապետյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ, հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Հայրապետյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ Ա.Հայրապետյանին վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 11 (տեսնմեկ) ամիս 18 (տասնութ) օր ժամկետով: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրա-

պետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համասերում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա Ա.Հայրապետյանն ազատվել է ազատագրված անոթ նշանակված պատժից:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մայիսի 3-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Ամբաստանյալ Ա.Հայրապետյանի պաշտպան Վ.Դանիելյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ներկայացված բողոքը մերժել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը Արայիկ Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր է ճանաչել հետևյալ արարքի համար. «(...) 2016 թվականի հուլիսի 14-ին Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցում ժամը 23:00-ի սահմաններում, իր ընկեր Վահե Բագրատյանի վարած ավտոմեքենայով ընթանալիս տեսել է փողոցով քայլող նույն քաղաքի բնակիչ Քլայդ Հովհաննիսյանին, որի՝ իրեն ուղղված խոժոռ նայվածքը նրան դուր չի եկել և նշված հանգամանքը պարզելու համար մեքենան կանգնեցրել, իջել է ու, մտրենալով Քլայդ Հովհաննիսյանին, նրա հետ խոսակցություն է ունեցել, որի ընթացքում էլ պայմանավորվել են այդ հարցի շուրջ պարզաբանում կատարելու համար երեկոյան հանդիպել Արտաշատ քաղաքի Մյաննիկյան փողոցի 154 հասցեում գրնվող սեփականության իրավունքով իրենց պարկանոց շինության բակում: Մի քանի ժամ անց՝ հուլիսի 15-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, Արայիկ Հայրապետյանն իր ընկերների հետ գնացել է իրենց պարկանոց շինության բակ, որի ընթացքում իր ընկեր Լևոն Թովմասյանին հանձնարարել է Վիրայր Գրիգորյանին փանել նրանց շենքի բակում գրնվող ավտոբնակի մոտ: Վերջինս նրան փարել է նշված վայրը, իջեցրել Վիրայր Գրիգորյանին, որից հետո, շուրջ 15 րոպե անց վերադարձել է նույն վայրը, որտեղից Վիրայր Գրիգորյանն ինչ-որ շորով փաթեթավորված իր է դրել իր ավտոմեքենայի հետևի նստարեղին, և նրանք միասին գնացել են Արայիկ

Հայրապետյանի մոր, որտեղ եղել են նաև Արայիկ Հայրապետյանի այլ ընկերներ: Քիչ անց՝ ժամը 24:00-ի սահմաններում, նշված վայր է եկել Քլայդ Հովհաննիսյանն իր եղբոր՝ Նազարեթ Հովհաննիսյանի և մի քանի իր ընկերների հետ: Երբ նրանք մոտեցել են Արայիկ Հայրապետյանին և մյուսներին, Արայիկ Հայրապետյանն անհայտ րեսակի ինքնաձիգը ձեռքին ընդատաջ է եկել Քլայդ Հովհաննիսյանին ու նրա ընկերներին և չնչին առիթով սկսել է վիճարանել Քլայդ Հովհաննիսյանի և նրա հետ եկած ընկերների հետ, որի ընթացքում դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և ապօրինի կերպով հրազեն հանդիսացող անհայտ րեսակի ինքնաձիգի գործադրմամբ՝ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, ինչպես նաև ուրիշի գույքը վնասելով, այն է՝ վերջիններիս հրապարակայնորեն պարծելու մոլուցքով դրդված, շուրջ 10 րոպե փրկությանը բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, որի ընթացքում Քլայդ Հովհաննիսյանի ընկեր Վաղարշակ Մկրտչյանն Արայիկ Հայրապետյանին ասել է. «Զենքով ինչ կապիկություն ես անում», ի պատասխան՝ Արայիկ Հայրապետյանը, իր անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով, եսամոլության ու սանձարձակ վարքագծի դրսևորմամբ, բռունցքով հարվածել է Վաղարշակ Մկրտչյանի դեմքին, որից հետո Քլայդն ու նրա ընկերները սկսել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնել Արայիկ Հայրապետյանին, ինչից նա վայր է ընկել, և սկսվել են հայհոյանքներ ու խառը ծեծկտրուք երկու կողմերի անձանց միջև: Այդ ընթացքում անհայտ անձը ծանր մարմնական վնասվածք պարձառելու դիտավորությամբ դանակով հարվածել է Վաղարշակ Մկրտչյանին և վերջինիս առողջությանը պարձառել ծանր մարմնական վնասվածք՝ կյանքին վրանգ սպառնացող: Հավաքված անձանցից մի քանիսը փորձել են բաժանել կովողներին ու կարգի հրավիրել նրանց, սակայն շարունակվող ծեծկտրուքի ժամանակ Արայիկ Հայրապետյանն իր կողմից ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող անհայտ րեսակի 5.45 մմ փրամաշափի ինքնաձիգից արձակել է անկանոն կրակոցներ, որի արդյունքում գնդակներից մեկը դիպել է Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցով դեպի Երևան-Երասխա ավտոճանապարհի ուղղությամբ ընթացող Սուրեն Խաչատրյուրի Մկրտչյանի վարած «LEXUS RX 300» մակնիշի 20 US 455h/h ավտոմեքենային, որում նստած են եղել Խաչատրյուր, Հասմիկ, Սենիկ ու Խաչիկ Մկրտչյանները, իսկ արձակված գնդակներից մյուսը դիպել է դեպքի պահին շինության դիմաց կայանված Արթուր Էդիկի Հարությունյանի վարած «Մերսեդես Ե 200» մակնիշի 34 LP 529 h/h ավտոմեքենային, ինչպես նաև ավտոմեքենայի դեկին գրնվող Արթուր Հարությունյանի ձախ բազկի շրջանին՝ պարձառելով առողջությանը

թեթև վնաս՝ առողջության կարճապես քայքայումով: Արձակված կրակոցներից վախեցած բոլոր հավաքվածները դիմել են փախուստի: Աղմուկի և կրակոցի ձայների հետևանքով խախտվել է հասարակական կարգը, այն է՝ հարակից բնակավայրերի բնակիչները փոստից դուրս են եկել, և խախտվել է նրանց հանգիստն ու գիշերային անդորրը:

(...)

Արայիկ Արթուրի Հայրապետյանի նկատմամբ պարիժ նշանակելիս, դատարանը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն, որպես ամբաստանյալ Արայիկ Արթուրի Հայրապետյանի պարիժն ու պարասխանաարվությունը մեղմացնող հանգամանք, հաշվի է առնում այն, որ մասնակի խուսրովանեց կատարած արարքների համար, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրականորեն:

Ամբաստանյալի պարասխանաարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

(...)

Քնահարելով ամբաստանյալ Արայիկ Արթուրի Հայրապետյանի կատարած հանցագործության եղանակը, բնույթը, հանրության համար վրանգավորության աստիճանը, խախտված հասարակական հարսբերության սոցիալական նշանակությունը և այդ ոլորտում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, դրանք համադրելով սույն դատավճռում արձանագրված ամբաստանյալի պարասխանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքների և պարասխանաարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության հետ՝ դատարանը հանգում է այն հետևության, որ Արայիկ Հայրապետյանի նկատմամբ պարիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պարժարեսակը՝ ազատազրկման ձևով, և որ նշանակված պարժի ռես (իրական) կիրառման միջոցով միայն հնարավոր կլինի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պարժի նպատակների՝ ամբաստանյալին ուղղելու իրացվելիությունը»¹:

6. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Ամբաստանյալ Հայրապետյանի նկատմամբ պարիժ նշանակելու հարցը քննարկելիս ու լուծելիս [Առաջին արյանի դատարանի] կողմից պահպանվել են ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեադատաբանական օրենսդրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների պահանջները:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, արարքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձը բնութագրող

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթեր 98-117:

տվյալները՝ վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ [Առաջին արյանի դատարանը] Արայիկ Հայրապետյանի նկատմամբ նշանակել է համաչափ պարիժ, ուստի առաջին արյանի դատավճիռը պետք է թողնել անփոփոխ, իսկ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի խախտումներ, որոնք հանգեցրել են ամբաստանյալ Ա.Հայրապետյանի նկատմամբ ակնհայտ մեղմ պատիժ նշանակելուն: Մասնավորապես, ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել կատարված արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները:

7.1. Բողոքաբերի կարծիքով ամբաստանյալի կողմից կատարված արարքները մասնակի խոստովանելը, նախկինում դատապարտված չլինելը և դրականորեն բնութագրվելը որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք հաշվի առնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն: Այսպես՝ մասնակի խոստովանությունը սույն գործով չի կարող գնահատվել որպես իրական, իսկ նախկինում դատապարտված չլինելը որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դիտարկելը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հովհաննեսյանի* վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը: Ինչ վերաբերում է ամբաստանյալի դրական բնութագրվելուն, ապա այն կարող է դիտարկվել միայն որպես անձը բնութագրող հանգամանք:

7.2. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ վերոշարադրյալները որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ գնահատվելու դեպքում անգամ այն աստիճան առանցքային և էական չեն, որպեսզի նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով սահմանված նվազագույն, իսկ հանցանքների համակցությամբ՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժ:

Ի հիմնավորումը վերոգրյալի՝ բողոքաբերը նշել է, որ գործի փաստական հանգամանքները վկայում են ամբաստանյալի անձի և կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, ուստի բացառում են նշանակված պատժի, հետևաբար նաև «Էրեբունի-Երևանի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 11-րդ, թերթեր 53-60:

հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ուժով Ա.Հայրապետյանին պատժից ազատելու պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացվելիության հնարավորությունը:

8. Վերոշարադրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի որոշումը պատժի մասով բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ա.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարույկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պարժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը

քանը մշտապես ընդգծել է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեախրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար, կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի¹, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա՝ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից²:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հանցանքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը ճիշտ գնահատելու և հանցավորի նկատմամբ համաչափ պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլնի, հատուկ ուշադրություն դարձնել հանցավոր վարքագծի դրսևորման եղանակին, հանցանքի կատարման գործիքին և հանցագործության իրադրությանը, պատճառված վնասի բնույթին, արարքի նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքին, հանցագործության նպատակին և շարժառիթին: Այս առումով Վճռաբեկ դատարանը փաստել է, որ անձի արարքում հանցակազմը որակյալ դարձնող մեկից ավելի հանգամանքների առկայությունը կարող է վկայել ինչպես հանցագործության, այնպես էլ հանցավորի անձի հանրային բարձր վտանգավորության մասին, հետևաբար այն պետք է համաչափ գնահատականի արժանանա դատարանի կողմից և հաշվի առնվի պատիժ նշանակելիս³:

11. Սույն գործի փաստական տվյալների վերլուծությունից բխում է հետևյալը.

- վիճաբանության սկզբնապատճառը եղել է այն, որ ամբաստանյալ Ա.Հայրապետյանին դուր չի եկել Ք.Հովհաննիսյանի՝ իրեն ուղղված խոժոռ նայվածքը, որպիսի հանգամանքը պարզելու համար կանգնեցրել է

¹ Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ, ի թիվս այլ որոշումների, մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* վերաբերյալ գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Արմեն Շահբազյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարար Ավագյանի* և *Վահան Սահակյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումները:

² Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանների վերաբերյալ, *mutatis mutandis*, տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Նարեկ Սարգսյանի* վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, *Գառնիկ Գալստյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, *Էդվարդ Աղամյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշումները:

³ Տե՛ս *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գարսևան Ոսկանյանի* վերաբերյալ գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0119/01/13, *Սարգիս Խաչատրյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ՏԴ/0031/01/14 որոշումները:

մեքենան, իջել ու մոտենալով Ք.Հովհաննիսյանին, նրա հետ խոսակցություն է ունեցել, պայմանավորվել են պարզաբանում կատարելու համար երեկոյան հանդիպել Ա.Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցի 154 հասցեում գտնվող շինության բակում,

- վերոնշյալ շինությունում՝ երեկոյան ժամը 24:00-ի սահմաններում, ամբաստանյալ Ա.Հայրապետյանը չնչին առիթով վիճաբանություն է սկսել Ք.Հովհաննիսյանի և նրա ընկերների հետ,

- վիճաբանության ընթացքում Ա.Հայրապետյանը խախտել է հասարակական կարգը, շուրջ 10 րոպե տևողությամբ բարձրաձայն սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, ապօրինի կերպով ձեռք բերված հրազեն հանդիսացող անհայտ տեսակի ինքնաձիգի գործադրմամբ բռնություն է գործադրել անձանց նկատմամբ, ինչպես նաև վնասել ուրիշի գույքը,

- վիճաբանության ընթացքում ամբաստանյալը բռունցքով հարվածել է Ք.Հովհաննիսյանի ընկերոջ՝ Վ.Մկրտչյանի դեմքին,

- ծեծկոտուքի ընթացքում Ա.Հայրապետյանն անկանոն կրակոցներ է արձակել՝ իրական վտանգի տակ դնելով այնտեղ գտնվող անձանց կյանքն ու առողջությունը,

- արձակված գնդակներից մեկը դիպել է Արտաշատ քաղաքի Մյասնիկյան փողոցով դեպի Երևան-Երասխ ավտոճանապարհի ուղղությամբ ընթացող Ս.Մկրտչյանի վարած ավտոմեքենային, որում նստած են եղել Խաչատուր, Հասմիկ, Սենիկ ու Խաչիկ Մկրտչյանները,

- արձակված գնդակներից մյուսն էլ դիպել է դեպքի պահին շինության դիմաց կայանված Ա.Հարությունյանի ավտոմեքենային, ինչպես նաև ավտոմեքենայի դեկին գտնվող Ա.Հարությունյանի ձախ բազկի շրջանին՝ վերջինիս պատճառելով առողջությանը թեթև վնաս,

- արձակված կրակոցներից վախեցած՝ բոլոր հավաքվածները դիմել են փախուստի¹:

11.1. Առաջին ստյանի դատարանն ամբաստանյալ Ա.Հայրապետյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ընդգծել է, որ հաշվի է առնում կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ մասնավորապես այն, որ վերջինս նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, տվել է մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներ, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը: Արդյունքում, Առաջին ստյանի դատարանն Ա.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նշանակել է հոդվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատժաչափը՝ չորս տարի

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

ժամկետով ազատագրվում:

Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի դատական ակտը թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունները բխում են գործի նյութերից, իսկ կայացված դատական ակտն օրինական է և հիմնավոր²:

12. Նախորդ կետերում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ա.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելով, պատշաճ գնահատականի չեն արժանացրել վերջինիս կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթը և աստիճանը, ինչի հետևանքով ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Մասնավորապես, ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս պատշաճ վերլուծության չեն ենթարկվել կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող հետևյալ հանգամանքները.

ա) *հանցագործության շարժառիթը*. վիճաբանությունը սկսվել է չնչին առիթով՝ Ք.Հովհաննիսյանի՝ Ա.Հայրապետյանին ուղղված խոժոռ նայվածքի պատճառով, այլ կերպ, հանցանքը կատարվել է ամբաստանյալի կողմից իր անձի առավելությունն ընդգծելու, Ք.Հովհաննիսյանին և նրա ընկերներին հրապարակայնորեն պատժելու մոլուցքով դրդված՝ ինչն ակնհայտորեն վկայում է հանցավորի անձի հանրային բարձր վտանգավորության մասին,

բ) *հանցագործության գործիքը*. ամբաստանյալը խուլիգանություն է կատարել նախօրոք իր հետ վերցրած, ապօրինի ձեռք բերված, հրագեն հանդիսացող անհայտ տեսակի ինքնաձիգի գործադրմամբ: Այսպես՝ Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ օգտագործված զենքի տեսակը և այն Ա.Հայրապետյանի կողմից նախապես իր հետ վերցնելու հանգամանքը վկայում են ինչպես հանցավորի անձի, այնպես էլ կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, քանի որ նման պայմաններում էականորեն մեծանում է առավել վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը,

գ) *հանցագործության եղանակը և իրադրությունը*. Ա.Հայրապետյանը շուրջ տասը րոպե տևողությամբ սեռական բնույթի հայտոյանքներ է հնչեցրել, նախահարձակ է եղել՝ բռունցքով հարվածելով «զենք բերելու համար» իրեն դիտողություն արած Ք.Հովհաննիսյանի ընկերոջ՝ Վ.Մկրտչյանի դեմքին, այնուհետև անտեսելով վիճաբանությունը դադարեցնելու պահանջները, իր մոտ գտնվող ինքնաձիգից կրակոցներ է

¹ Տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

արձակել՝ վնաս պատճառելով ինչպես շրջապատում գտնվող անձանց առողջությանը, այնպես էլ գույքին: Այլ կերպ՝ ամբաստանյալը զենքը գործադրել է հանրավտանգ եղանակով, արձակել է անկանոն կրակոցներ՝ իրական սպառնալիք ներկայացնելով շրջապատում գտնվող անձանց կյանքի և առողջության համար,

դ) *պատճառված վնասի բնույթ*. Ա.Հայրապետյանի արձակած կրակոցների արդյունքում վնասվել է Ս.Մկրտչյանի ավտոմեքենան, որում գտնվել են չորս անձ, ինչպես նաև վնասվել է դեպքի պահին շինության դիմաց կայանված Ա.Հարությունյանի ավտոմեքենան, իսկ ավտոմեքենայի դեկին գտնվող Ա.Հարությունյանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս,

ե) *հանցագործության արդյունքում խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը*. մասնավորապես այն, որ ամբաստանյալ Ա.Հայրապետյանի արարքում առկա են հանցանքն որակյալ դարձնող երկու հանգամանք, այն է՝ արարքը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով, ինչպես նաև զենքի գործադրմամբ:

13. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ստյանի դատարանը, ամբաստանյալ Ա.Հայրապետյանի նկատմամբ հողվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելով, իսկ Վերաքննիչ դատարանն այն անփոփոխ թողնելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել կատարված արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Այսպես՝ հանցագործության եղանակը և իրադրությունը, հանցանքի կատարման գործիքը, պատճառված վնասի բնույթը, հանցագործության շարժառիթը, ինչպես նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը վկայում են հանցավորի անձի և կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին, ինչը որևէ գնահատականի չի արժանացել ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու գործընթացում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում. ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նշանակվել է ոչ համաչափ՝ ակնհայտ մեղմ պատիժ, ինչը չի կարող ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված՝ պատժի նպատակների իրացումը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից Ա.Հայրապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների

հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

14. Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից որպես Ա.Հայրապետյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող գնահատված հանգամանքներին՝ նախկինում դատապարտված չլինելուն, դրական բնութագրվելուն և մասնակի ինքնախոստովանական ցուցմունքներ տալուն, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները, սույն որոշմամբ արձանագրված՝ կատարված արարքի հանրային բարձր վտանգավորության մասին վկայող փաստական տվյալների առկայության պայմաններում, չեն կարող ողջամտորեն նվազեցնել Ա.Հայրապետյանի կատարած արարքի հանրության համար վտանգավորության բնույթն ու աստիճանը և նրա նկատմամբ սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու հիմք հանդիսանալ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը ողջամտորեն նվազեցնող չի կարող գնահատվել այնպիսի հանգամանք, որը բնութագրական է անձանց լայն շրջանակին և բխում է անձի կողմից քաղաքացիական հասարակությունում հաստատված կարգը պահպանելու պարտականությունից¹, հետևաբար, հիմնավոր է բողոքաբերի՝ սույն որոշման 7.1-րդ կետում բարձրացված փաստարկն առ այն, որ նախկինում դատապարտված չլինելը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք գնահատվել չի կարող:

15. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների ոչ ճիշտ կիրառում, ինչը հանգեցրել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-399-րդ հոդվածներով նախատեսված՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք Վերաքննիչ դատարանի դատական ակտը Ա.Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատժի մասով բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու հիմք են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով համաչափ պատիժ նշանակելու հարցը քննարկելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հանգի համապատասխան հետևության:

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արամայիս Հովհաննեսյանի* վերաբերյալ գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ/0014/01/14 որոշումը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Հայրապետյանի նկատմամբ ընտրված անձնական երաշխավորություն խափանման միջոցը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արայիկ Արթուրի Հայրապետյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 3-ի որոշումը՝ պատժի մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Արայիկ Արթուրի Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված անձնական երաշխավորությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

65. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԴՅ/0056/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախազահությունը՝
մասնակցությունը դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությունը՝
մասնակցությունը դատախազներ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

պաշտպան՝

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Պետրոս Գագիկի Նազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 22-ի որոշման դեմ պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Փիլոյանի 2016 թվականի հունիսի 1-ի որոշմամբ հարուցվել է թիվ 68105116 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2016 թվականի հունիսի 16-ին նախաքննության մարմնի կողմից թիվ 68105116 քրեական գործով Պետրոս Գագիկի Նազարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, և

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունիսի 17-ի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2016 թվականի սեպտեմբերի 30-ին, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Պ.Նազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերահաստատվել է:

2016 թվականի նոյեմբերի 15-ին նախաքննության մարմնի որոշմամբ Պ.Նազարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով:

2016 թվականի նոյեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Դատական քննության արագացված կարգի կիրառմամբ՝ Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի հունվարի 30-ի որոշմամբ, Պ.Նազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի վարույթը՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ կարճել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի մայիսի 22-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 30-ի որոշումը բեկանել է, և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պաշտպան Գ.Հարությունյանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Պետրոս Նազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է

առաջադրվել այն բանի համար, որ. «(...) [Ն]ա օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ, բռնություն գործադրելու սպառնալիքով, ինքնակամ իրականացրել է իր ենթադրյալ իրավունքները, որն էական վնաս է պատճառել անձի իրավունքներին և օրինական շահերին: Այսպես. Պետրոս Նազարյանը 2016 թվականի մայիսի 31-ին ժամը 20:00-ի սահմաններում, «ՄԻՓԻԷՍ ՕԲԼ Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը պարկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 55/1 հասցեում գրնվող բենզալցակայանում վիճարանել է աշխատակիցներ Արա Գալստյանի և Թուրիկ Կարապետյանի հետ, փոխադարձ հարվածներ հասցրել միմյանց, որից հետո Արա Գալստյանն ու Թուրիկ Կարապետյանը դիմել են փախուստի: Պետրոս Նազարյանը բենզալցակայանի աշխատակիցների վարքագծի հետ կապված հարցերը տնօրենի հետ քննարկելու նպատակով մտել է բենզալցակայանի սրահ, տեսնելով, որ սրահում ոչ ոք չկա, ուրքով հարվածել է այնտեղ գրնվող սեղանին, ինչի արդյունքում կոպրվել է սեղանի դարակը և դրանում գրնվող գումարի կապոցն ընկել է գետնին: Հետագայում բենզալցակայանի աշխատակիցների հետ հարցեր պարզելու, նրանց կողմից ներողություն խնդրելու ակնկալիքով վերջիններին կրկին հանդիպելու նպատակով Պետրոս Նազարյանն ինքնագրուի վերցրել է առևտրային գործունեությամբ զբաղվող ընկերության դրամարկղում տվյալ պահին առկա 472.000 ՀՀ դրամը: Այնուհետև՝ դուրս գալով սրահից, դանակով բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել Արա Գալստյանին և օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգի խախտմամբ իր ենթադրյալ իրավունքներն ինքնակամ իրականացնելով իր հետ տարել է դրամարկղի գումարը, խաթարել է առևտրային գործունեությամբ զբաղվող ընկերության բնականոն աշխատանքը՝ արդյունքում բռնություն գործադրելու սպառնալիքով էական վնաս պատճառելով իրավաբանական անձի իրավունքներին ու օրինական շահերին»¹:

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատական քննության արագացված կարգի անցնելուց հետո (...) դատական նիստի ընթացքում պաշտպան Գ.Հարությունյանը միջնորդեց ամբաստանյալ Պետրոս Գագիկի Նազարյանի նկատմամբ կիրառել «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքը և կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, քանի որ արագացված դատական քննության արդյունքում վերջինիս նկատմամբ նշանակվելիք պարիժը չի գերազանցելու 3 տարի 4 ամիսը:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 281:

Ամբաստանյալը հայրենեց, որ չի առարկում՝ համաներման ակտի կիրառմամբ իր նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվի և դադարեցվի քրեական հետապնդումը:

Սեղադրողը միջնորդության դեմ չառարկեց:

(...)

[Ամբաստանյալ Պ.Նազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով վերագրվող հանցագործության համար օրենքով նախատեսված պարծի վերին սահմանը երկու երրորդով կրճատվելու արդյունքում իջեցվել է՝ բավարարելով չորս տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցելու չափանիշը, որպիսի հանգամանքը թույլ է տալիս Համաներման ակտի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավադրույթները սույն քրեական գործով ամբաստանյալի նկատմամբ կիրառելու համար:

ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտարարանի «Ձև 8» տեղեկանքի, ինչպես նաև գործի նյութերի ուսումնասիրությամբ՝ դատարանը արձանագրում է, որ Պեդրոս Գազիկի Նազարյանի նկատմամբ բացակայում է Համաներման ակտով նախատեսված համաներման կիրառման սահմանափակումները (...):»¹:

7.Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Թ]իվ ԵԴՅ/0056/01/16 քրեական գործով ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրվող ամբաստանյալ Պեդրոս Գազիկի Նազարյանի վերաբերյալ սույն դատարանում քննվում է թիվ ԵԴ/0033/01/17 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատարանը, 2019 թվականի հունվարի 30-ի որոշմամբ՝ Պեդրոս Գազիկի Նազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի վարույթը կարճել է և քրեական հետապնդումը դադարեցրել է՝ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 01-ի ՀՀ օրենքի (...) 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով:

(...) Դատարանն ամբաստանյալ Պ.Նազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ թիվ ԵԴՅ/0056/01/16 քրեական գործի վարույթը կարճելով և քրեական հետապնդումը դադարեցնելով թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ:

(...) Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասը հստակ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 44-49:

սահմանում է, որ հանցագործությունների համակցության դեպքում համաներումը կիրառվում է վերջնական պարթի նկարմամբ՝ հանցագործությունների համակցության կանոններով այն սահմանելուց հետո:

Մինչդեռ՝ ամբաստանյալ Պետրոս Նազարյանը ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ/0033/01/17 քրեական գործով մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, ուստի Գատարանը Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցը պետք է լուծեր թիվ ՇԴ3/0056/01/16 և ՇԴ/0033/01/17 քրեական գործերը մեկ վարույթում միացնելով հանցագործությունների համակցության կանոններով այն սահմանելուց հետո:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի փաստական հանգամանքերով պայմանավորված թիվ ՇԴ3/0056/01/16 և ՇԴ/0033/01/17 քրեական գործերի միացման նպատակը քրեական գործերի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության մասին օրենսդրության պահանջի ճշգրիտ իրականացման ապահովումն է, ինչը սույն գործի շրջանակներում կրիի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և չի հակասի Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին:

(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ Գատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Նոր քննության ընթացքում Գատարանը, սույն որոշմամբ արձանագրված խախտումը վերացնելու համար, պետք է ձեռնարկի օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ՝ թիվ ՇԴ3/0056/01/16 և ՇԴ/0033/01/17 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու, ըստ այդմ էլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով և 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող ամբաստանյալ Պետրոս Գագիկի Նազարյանի վերաբերյալ գործի քննության արդյունքներով հանգի համապատասխան հետևության (...):»¹:

8. Թիվ ՇԴ/0033/01/17 քրեական գործով, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2019 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռով Պետրոս Նազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար առաջադրված մեղադրանքում արդարացրել է՝ ճանաչելով և հոչակելով վերջինիս անմեղությունը²:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթեր 65-67:

² Տե՛ս www.datalex.am Գատական տեղեկատվական համակարգ, թիվ ՇԴ/0033/01/17 քրեական գործը:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Պ.Նազարյանի գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածին և Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասին տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 13-ի՝ թիվ ԵԱԲԳ/0185/01/17, ինչպես նաև 2019 թվականի հունիսի 26-ի՝ թիվ ՇԳ/0053/01/18 որոշումներում միևնույն նորմերին տրված մեկնաբանությանը:

9.1. Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի մեկնաբանությունը հակասում է Վարուժան Սվետիչյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմերին տրված մեկնաբանությանը: Մասնավորապես, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել Համաներման մասին օրենքում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են այն անձանց շրջանակը, ում նկատմամբ համաներումը կիրառելի է, և շեղվելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից՝ գտել է, որ դատարաններն իրենց հայեցողությամբ կարող են այդ շրջանակն ընդլայնել:

10. Արդյունքում բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածը, ինչպես նաև թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 18-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 394-րդ, 395-րդ, 398-րդ հոդվածներով նախատեսված քրեադատավարական նորմերի էական խախտումներ: Բողոքաբերի պնդմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական գործերը միացնելու լիազորությունը հայեցողական է, քանի որ նշված նորմը քրեական գործերը միացնելու համար նախատեսում է հատուկ պայման՝ դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննություն ապահովելու անհրաժեշտության առկայությունը: Բողոքաբերը նաև գտել է, որ Վճռաբեկ դատարանի կողմից հիշյալ նորմի մեկնաբանությունը կարող է էական նշանակություն ունենալ հետագայում միասնական պրակտիկա ձևավորելու և տարատեսակ մեկնաբանություններից խուսափելու համար:

11. Անդրադառնալով գործի ելքի վրա ազդած՝ ստորադաս դատարանի

կողմից թույլ տրված դատական սխալներին՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն ուժի մեջ մտնելու դեպքում Համաներման մասին օրենքի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ համաներումը չկիրառելու պայմանների բացակայության դեպքում Պ.Նազարյանը ոչ իրավաչափորեն գրկվում է համաներման իրավունքից:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ստյանի դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2019 թվականի հունվարի 30-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործերը միացնելու դատավարական ինստիտուտի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Առաջին ստյանի դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բեկանելու և գործը Պ.Նազարյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելու համար նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործեր, եթե, դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված, առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն»:*

16. Քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործերի միացման ինստիտուտի դատավարական նշանակության ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն ամրագրում է կազմակերպական-տեխնիկական բնույթի դատավարական լիազորություն, որի միջոցով ապահովվում է քրեական գործերի քննության արդյունավետությունը: Մասնավորապես, նշված դատա-

վարական լիազորությամբ քրեական գործի քննության սահմանների ընդարձակումը նպատակ է հետապնդում ապահովել դատավարական ռեսուրսների խնայողությունը, երաշխավորել ողջամիտ ժամկետում գործի քննությունը, ինչպես նաև նպատակ է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը: Այսինքն՝ քրեական գործերի միացման դատավարական լիազորության կենսագործումը պայմանավորվում է քրեական գործերի քննության արդյունավետության ապահովման օբյեկտիվ չափանիշով:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված չափանիշի առկայության գնահատմամբ քրեական գործերի միացման՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը կրում է դիսպոզիտիվ բնույթ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող՝ «*մեկ վարույթում կարող են միացվել*» օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական գործերը միացնելու լիազորությունը հայեցողական է: Այսինքն՝ քրեական գործերի միացման հայեցողական լիազորությունն իրականացնելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել միացվող քրեական գործերի միջև գոյություն ունեցող կապը, և թե այդ միացումը որքանով կնպաստի քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացմանը:

17. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական գործերի միացմամբ քննության արդյունավետության բարձրացումը պետք է պայմանավորված լինի քրեադատավարական օրենքում մատնանշված՝ քրեական գործերի միացման հիմքերի շրջանակով: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել՝

ա) մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը: Այսինքն՝ տվյալ դեպքում քրեական գործերի միացումը և նույն վարույթի շրջանակներում միաժամանակյա քննությունը պայմանավորվում է ինչպես *in rem* (արարքների), այնպես էլ *in personae* (անձանց) շրջանակով: Մասնավորապես, նշված հիմքով քրեական գործերի միացումը հնարավոր է՝

- *in personae*-ի բազմակիության դեպքում՝ միևնույն *in rem*-ի նկատմամբ, երբ մեկ հանցագործության կատարման մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը միացվում են՝ քննության արդյունավետությունը բարձրացնելու համար,

- *in personae*-ի և *in rem*-ի բազմակիության դեպքում, երբ մի քանի հանցագործության կատարման մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը միացվում են քննության արդյունավետությունը բարձրացնելու համար,

բ) մի անձի կողմից մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեղադրանքով գործերը: Այսինքն՝ տվյալ դեպքում քրեական գործերի միացումը քննության արդյունավետության բարձրացման համար հնարավոր է միևնույն *in personae*-ի կողմից կատարված *in rem*-ի բազմակիության դեպքում,

գ) ցանկացած այլ քրեական գործեր, եթե դրանց փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն: Այսինքն՝ տվյալ դեպքում քրեական գործերի միացման հիմքն օրենսդիրը պայմանավորում է ոչ թե *in personae*-ի կամ *in rem*-ի քանակական, այլ որակական բաղադրիչով, այն է՝ բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության նկատառումներով գործի հանգամանքների պարզման արդյունավետության ապահովմամբ:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ՝ Պ.Նազարյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճել է, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ հաշվի առնելով, որ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Պ.Նազարյանի նկատմամբ նշանակվելիք առավելագույն պատիժը չի կարող գերազանցել չորս տարի ժամկետով ազատազրկումը¹,

- Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ փաստելով, որ Պ.Նազարյանը, ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում գտնվող թիվ ՇԴ/0033/01/17 քրեական գործով մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, ուստի Առաջին ատյանի դատարանը համաներման կիրառելիության հարցը պետք է լուծեր այդ քրեական գործը սույն քրեական գործի հետ մեկ վարույթում միացնելուց և հանցագործությունների համակցության կանոններով պատիժ սահմանելուց հետո, ինչը կրիսեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և չէր հակասի Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին²:

19. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-17-րդ կետերում մեջբերված իրավադրույթի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի այն պնդումը, թե Առաջին ատյանի դատարանը համաներման կիրառելիության հարցը պետք է լուծեր սույն քրեական գործը Պ.Նազարյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելուց և հանցագործությունների համակ-

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

ցության կանոններով պատիժ սահմանելուց հետո, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական գործերը միացնելու օրենսդրական նպատակից: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ քրեական գործերը միացնելը վարույթն իրականացնող մարմնի հայեցողական լիազորությունն է՝ հիմնված բացառապես քրեական գործի քննության արդյունավետության ապահովման պահանջի վրա, իսկ համաներման կիրառելիության հարցը նշված պահանջից չի բխում:

Ինչ վերաբերում է Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանն առ այն, որ հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներմամբ կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո, եթե մեղսագրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն չի կարող մեկնաբանվել որպես նույն անձին մեղսագրվող մի քանի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու ինքնուրույն հիմք: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քրեական գործերի միացման ինստիտուտի դատավարական նշանակությանը և տվյալ դեպքում ուղղված չէ քրեական գործերի քննության արդյունավետության ապահովմանը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, երբ Համաներման մասին օրենքի կիրառելիության հարցը դատաքննության փուլում պայմանավորվում է անձի վերաբերյալ քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և հանցագործությունների համակցության կանոններով պատիժ սահմանելու հետ, ողջամտորեն վտանգվում է անձի անմեղության կանխավարկածը: Տարբեր վարույթներով քննվելու դեպքում հանցագործությունների համակցության կանոնների կիրառման անխուսափելիությունը չի կարող ի սկզբանե կանխորոշվել, քանի որ անձը կարող է ճանաչվել անմեղ և արդարացվել, ինչպես տեղի է ունեցել սույն գործով. Պ.Նազարյանն իր վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար առաջադրված մեղադրանքում արդարացվել է¹:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը, Պ.Նազարյանի վերաբերյալ քրեական գործերը մեկ վարույթում չմիացնելով, ինչպես նաև, Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ, սույն քրեական գործի վարույթը կարճելով և Պ.Նազարյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելով, թույլ չի տվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

20. Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնություն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ ըստ էության նախատեսել է Համաներման մասին օրենքի կիրառման նոր սահմանափակում՝ հակասելով *Վարուժան Ավետիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն, այդ թվում՝ համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ²: Ուստի, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն պնդումը, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտով Համաներման մասին օրենքի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված՝ համաներումը չկիրառելու պայմանների բացակայության դեպքում Պ.Նազարյանը ոչ իրավաչափորեն կգրկվի համաներման իրավունքից³:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն եզրահանգում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը բեկանելու և գործը Պ.Նազարյանի վերաբերյալ քննվող մեկ այլ քրեական գործին միացնելու համար նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

22. Անփոփոխելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի, 358-րդ հոդվածի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, 2019 թվականի հունվարի 30-ի որոշմամբ Պ.Նազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական գործի վարույթը Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ կարճելով և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելով, կայացրել է օրինական և հիմնավոր դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի հունվարի 30-ի որոշմանը՝

¹ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վարուժան Ավետիսյանի* գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՄԳ3/0013/01/11 որոշման 16-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

հիմք ընդունելով սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ հոդվածի 6-րդ մասով, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Պետրոս Գագիկի Նազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մայիսի 22-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հունվարի 30-ի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

66. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0051/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
ներկայացուցիչ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Հ.ԱՆԱՆՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի և դիմող Կարեն Ասատրյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության 1-ին վարչության 4-րդ բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ օպերլիազոր Ռ.Դավթյանը (այսուհետ՝ նաև Հետաքննության մարմին)՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ին որոշում է կայացրել Մարիամ Ավետիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի և «Գրավ» ՍՊ ընկերության տնօրեն Համլետ Հարությունյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 214-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

Հետաքննության մարմնի նշված որոշման դեմ Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Հ.Անանյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2018 թվականի հունվարի 24-ի որոշմամբ մերժվել է:

2. 2018 թվականի փետրվարի 21-ին դիմող Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Հ.Անանյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և Մ.Ավետիսյանի իրավունքների խախտումը:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ նշված բողոքը բավարարել է, Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացրել է և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնելու Մ.Ավետիսյանի իրավունքների խախտումները:

3. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերի քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Ա.Հակոբյանի և դիմող Կ.Ասատրյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի հունվարի 18-ի որոշմամբ բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը և դիմող Կ.Ասատրյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանը վճռաբեկ բողոքներ են բերել, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մայիսի 10-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող վաստերը.

5. Հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն՝ «(...) 2017թ. դեկտեմբերի 11-ին (...) սրացվել է քաղաքացի Մարիամ Ավետիսյանի «հաղորդում հանցագործության մասին» վերնագրով գրությունն այն մասին, որ (...) [իր և «Գրավ» ՍՊԸ-ի միջև առկա ԵԿԴ/0262/04/14 սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանը] չի կատարել կամ ոչ պարզաձև է կատարել սնանկության կառավարչի իր լիազորությունները: Մասնավորապես՝ սնանկության կառավարիչը չի վերլուծել պարտապանի ֆինանսական վիճակը, (...) չի իրականացրել իր

հիմնական գործառույթը՝ (...) պարտապանի գույքի հայրնաբերումը և գույքի վաճառքից առաջացող միջոցներով պարտավերերի պահանջների բավարարումը:

(...) Մ.Ավետիսյանը փաստել է, որ (...) սնանկության կառավարիչը իր գործողություններով (անգործությամբ) խախտել է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 23.1, 29-րդ, 54-րդ, 58-րդ և 81-րդ հոդվածների պահանջները և կարծիք հայտնել, որ անհրաժեշտ է դիտարկել կառավարչի գործողություններում (անգործությունում) ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 214-րդ հոդվածներով սահմանված հանցակազմի հարկանիշների առկայության հանգամանքը: (...)

2017թ. դեկտեմբերի 13-ին (...) Մ.Ավետիսյանը բացատրություն է տվել (...), որ (...) «Գրավ» ՄՊԸ-ի (...) ղեկավար Համլետ Հարությունյանի առաջարկով (...) 2012թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին (...) «Գրավ» ՄՊԸ-ին մաս-մաս ըստ փարերթվերի փոխառության պայմանագրերով տվել է շուրջ 147.999 ԱՄԵ դոլար (...): Վերջինս նշել է, որ իր նախորդ ներկայացուցիչ փաստաբանի միջոցով սնանկության դիմում է ներկայացրել դատարան, որի հիման վրա նշանակվել է կառավարիչ, ով չի կարարել իր գործառույթները, ավելին (...) համագործակցել է «Գրավ» ՄՊԸ-ի ղեկավարների հետ, որպեսզի սրտեղծի անհնարինություն որևէ գումար բռնագանձելու, այսինքն՝ նպաստել է, որ ընկերությունը սնանկի դատարարական կարգավիճակ ձեռք բերի:

Ելութերի նախապարտաբանն ընթացքում նշված սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանը բացատրություն է տվել, որ (...) չնայած իր կողմից 02.03.2015թ. կատարված հարցմանը, պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պարկանող գույքի ցանկի, (...) այլ գույքային իրավունքների վերաբերյալ վերջինս տեղեկություններ չի ներկայացրել: Բացի այդ, Կ.Ասատրյանը հայտնել է նաև, որ իր կողմից կազմակերպվել է գույքագրում, որի ժամանակ հայրնաբերվել են ընդամենը սեղաններ, աթոռներ և երկաթյա պահարաններ: Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն չի կատարվել, քանի որ իր կողմից կատարված գրավոր հարցումներին պարտապանի կողմից որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ չի ներկայացվել, որից հետո ինքը 12.07.2017թ. հարցում է կատարել ՀՀ կենտրոնական բանկին (...), սակայն մինչև օրս չի սրացվել կենտրոնական բանկի պարտախանր: Վերոգրայից բացի, Կ.Ասատրյանը նշել է, որ (...) «Գրավ» ՄՊԸ-ի նկատմամբ (...) [հարուցված] քրեական գործի շրջանակներում ՄՊԸ-ի գործունեության վերաբերյալ ամբողջ փաստաթղթերն առգարվվել են և նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն՝ նշված փաստաթղթերի հիմքով, որն էլ իր հերթին անհնարին է դարձրել պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը: (...) Բնչ վերաբերում է,

թե ինչու գործողություններ չի ձեռնարկել պարտապանի գույքի կազմը բացահայտելու համար, Կ.Ասատրյանը պարտասխանել է, որ դատարանի կողմից սնանկության գործի շրջանակներում համապարտասխան գերարեսուցություններին արդեն իսկ կատարվել են հարցումներ, ուարի նպարտակհարմար չի գրել կատարել նույն հարցումները: Իսկ թե ինչու չի ՊԵԿ քննչական մարմնից համապարտասխան հարցմամբ պահանջել պարտապանի ֆինանսական և այլ փաստաթղթերը, վերջինս նշել է, որ դա իրեն ոչինչ չէր րա, մինչև նշված գործի շրջանակներում չլինել համապարտասխան քննչական որոշում կամ դատական ակտ, որոնցում արտացոլված կլինեին պարտապանի գործունեությանը վերաբերվող բոլոր գործառնությունները: Վերագրյալից բացի, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված մնացած բոլոր գործողությունները չկատարելը Կ.Ասատրյանը կրկին մեկնաբանել է պարտապանի ֆինանսական և այլ փաստաթղթերի (...) և կենտրոնական բանկից հարցման պարտասխանի բացակայությամբ]: Գույքագրումն ուշ կատարելու վերաբերյալ Կ.Ասատրյանը հայտնել է, որ մի քանի անգամ պարշաճ ծանուցել է և պարտապարտը և պարտապանին գույքագրում կատարելու մասին, սակայն նրանցից ոչ ոք չի ներկայացել, իսկ «Գրավ» ՄՊԸ-ի րարածքն էլ պարկանել է այլ անձի, որը փակ է եղել, այդ իսկ պարճառով գույքագրումը կատարվել է միայն 17.03.2017թ.:

«Գրավ» ՄՊԸ-ի ղեկավար Համլետ Հարությունյանը բացատրություն է րվել այն մասին, որ (...) Մ.Ավերիսյանի [հետ] (...) գումարային խնդիրը լուծելու և պարտավորությունները մարելու նպարակով կնոջ՝ Ս.Հարությունյանին սեփականության իրավունքով պարկանող, Մաշտոցի 43/33 հասցեում գործող «Գրավ» ՄՊԸ փաստացի գործունեության րարածքը նվիրաբերել է Մ.Ավերիսյանի որդուն՝ Սերգեյ Վարդանյանին, որից հետո նշված րարածքի բանալիները հանձնել է վերջիններին: Հ.Հարությունյանը հայտնել է նաև, որ նշված րարածքը նվիրաբերելու ժամանակ «Գրավ» ՄՊԸ-ի անունով որևէ գույք, կամ հիմնական միջոց և որևէ թանկարժեք իր չի եղել, վերջինիս գործունեությունն արդեն փաստացի դադարեցված է եղել և այդտեղից բացակայել են շրջանառու միջոցները: Դրանից հետո րեղեկացել է, որ Մ.Ավերիսյանը դիմում է ներկայացրել դատարան «Գրավ» ՄՊԸ-ին սնանկ ճանաչելու համար (...):

(...) [Ն]ախապարտաարվող նյութերի շրջանակներում զննության են ենթարկվել (...) ԵԿԴ/0262/04/14 քաղաքացիական գործի նյութերը (...) որոնցով պարզվել է, որ 03.12.2014թ. Մ.Ավերիսյանը դիմում է ներկայացրել նշված դատարան «Գրավ» ՄՊԸ-ին հարկադրված սնանկ ճանաչելու համար (...): Միաժամանակ 23.09.2014թ. վճռով «Գրավ» ՄՊԸ-ի և Մ.Ավերիսյանի միջև կնքվել է հաշտության համաձայնություն, սակայն նշված համաձայնությունով սահմանված պարտականու-

թյունները չկատարելուց հետո 13.01.2015թ. վճռով «Գրավ» ՍՊԸ ճանաչվել է սնանկ, որից հետո 09.02.2015թ. դատարանը [համապատասխան պետական մարմիններին] (...) րեղեկացրել է, որ 13.01.2015թ. վճռով «Գրավ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ, միաժամանակ խնդրելով հայրնել «Գրավ» ՍՊԸ-ի անվամբ որևէ իրավունք արժեթղթերի, անշարժ գույքի, րրանապորտային միջոցների, մաքսային հսկողության րակ գրնվող որևէ սեփականության կամ այլ գույքի նկատմամբ գրանցված լինելու վերաբերյալ րեղեկություններ: Նշված գերարեսչություններից սրացված րեղեկությունների համաձայն՝ «Գրավ» ՍՊԸ անվամբ որևէ իրավունք արժեթղթերի, անշարժ գույքի, րրանապորտային միջոցների, մաքսային հսկողության րակ գրնվող որևէ սեփականության կամ այլ գույքի նկատմամբ գրանցված չեն եղել:

Միաժամանակ նյութերի նախապարասրման ընթացքում կատարված հարցումներով պարզվել է նաև, որ ՀՀ ՖՆ աշխատակիցների կողմից 28.11.2014թ. մինչև 15.01.2015թ. ընկած ժամանակահատվածում «Գրավ» ՍՊԸ-ում իրականացվել է (...) սրուգում, որի արդյունքում «Գրավ» ՍՊԸ-ի վրա կազմվել է 143.800.436 ՀՀ դրամի ակր և ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քր. օր-ի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62204814 քրեական գործը, որի նախաքնության ընթացքում աղբրավել են «Գրավ» ՍՊԸ-ին պարկանող հաշվապահական և այլ գործունեության փաստաթղթերը (...):

Բացի այդ, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադասրրի պետական կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական րեխնդղգհանների կենտրոն» սրորաբաժանմանը կատարված հարցմանն ի պատասխան սրացվել է Մաշրոցի պողոտայի 43/33 հասցեում գրնվող անշարժ գույքի նկատմամբ 2013թ. մինչև օրս կատարված գործարքների հիմք հանդիսացող փաստաթղթերի պարճենները, ըստ որի 12.06.2013թ. անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով նույն հասցեում գրնվող 41.2 քմ մակերեսով անշարժ գույքը սեփականատեր Սուսաննա Հարությունյանի կողմից նվիրատրվել է քաղաքացի Սերգեյ Վարդանյանին, ում անունից լիազորված անձ Մ.Ավերիայանը 07.12.2017թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով անմիջատես վաճառել է այն քաղաքացի Արս Հովսեփյանին: (...):

«Գրավ» ՍՊԸ-ի և վերջինիս ղեկավար Հ.Հարությունյանի կողմից կանխամրածված սնանկության արհեստական հատկանիշներ սրեղծելու վերաբերյալ փաստական րվյալներ ձեռք րերելու համար հարցումներ [են] կատարվել նաև ՀՀ ոսրիկանության «Ճանապարհային ոսրիկանություն» ծառայությանն ու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադասրրի պետական կոմիտեին, որի արդյունքում պարզվել է, որ 2010թ. մինչև օրս վերջիններիս անվամբ անշարժ և շարժական գույք չի օրատրվել սեփական

կամքով, Հ.Հարությունյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված՝ Երևան քաղաքի Նուբարաշեն, Մասիսի Բ թաղամաս, 6/17 հասցեի բնակարանը Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2011թ. վճռով 05.03.2012թ. օտարվել է Գրիշա Պողոսյանին:

(...) Մ.Ավետիսյանն ու իր ներկայացուցիչները խնդրել են կառավարչին ենթարկել քրեական պատասխանատվության կամ ՀՀ քր. օր-ի 192-րդ, կամ 193-րդ, կամ էլ 214-րդ հոդվածների հանցակազմերով, չնայած այն հանգամանքին, որ հենց իրենք են դատարանին 2 անգամ դիմում ներկայացրել «Գրավ» ՍՊԸ-ի հարկադրված սնանկ ճանաչելու համար:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Մ.Ավետիսյանը սնանկության գործը վարող դատավորին [«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն] չի բողոքարկել կառավարչի գործողությունները կամ անգործությունը (...):

Վերոգրյալի հիման վրա փաստվում է, որ (...) նախապարաստված նյութերում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ, 214-րդ հոդվածների դիսպոզիցիաներով նախատեսված հանցակազմերի հարկանիշները, բացի այդ, կանխամերածված սնանկության կազմակերպման, սնանկության ընթացքում անօրինական գործողությունների կատարման կամ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունների չարաշահման պարտադիր հարկանիշ է համարվում գործողության (անգործության) և հետևանքի պարձառահետևանքային կապը, ինչը րվյալ պարագայում բացակայում է:

Այսպիսով, (...) առկա չեն քրեական գործ հարուցելու հիմքեր, ավելին՝ Մարիամ Ավետիսյանի հաղորդմամբ նշված հանգամանքները հերքում են հանցագործության հարկանիշների առկայությունը, ինչը կարևոր նախապայման է քրեական գործ հարուցելու համար: Եթե նյութերի նախապարաստման ընթացքում այնպիսի փաստական րվյալներ են ձեռք բերվել, որոնք հերքում են հանցագործության հարկանիշների առկայությունը, վկայում են քաղաքացիական, վարչական կամ այլ իրավահարաբերություններից բխող գործողությունների առկայության մասին, ինչպես նաև առկա են գործի վարույթը բացառող դատավարական արգելքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին:(...)»¹:

5.1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Հ.Անանյանի բողոքը քննության առնելու մասին 2018 թվականի հունվարի 24-ի որոշման համաձայն՝ «(...) Համվետը Հարությունյանի կինը՝ Սուսաննա Հարությունյանը, «Գրավ» ՍՊԸ-ի գործունեության՝ սեփականության իրավունքով իրեն պարկանող՝

¹ Տե՛ս մերժված նյութեր, թերթեր 280-291:

Մաշտոցի պողոտայի 43/33 տարածքը նվիրաբերել է իր որդուն՝ Սերգեյ Վարդանյանին, սակայն տեղյակ չէ դրա պատճառների մասին: Չի հիշում՝ կառավարիչն իրեն հայտնել է գույքագրում կատարելու համար ներկայանալու մասին, թե՛ ոչ, հիշում է, որ կառավարչից ինչ-որ նամակ է ստացել, սակայն այն ուշ է ստացել՝ հանրապետությունից բացակայելու պատճառով: (...)

Հարկ է նշել, որ «Գրավ» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել դատարանի 13.01.2015թ. վճռով, իսկ 03.02.2015թ. որոշմամբ Կ.Ասատրյանը նշանակվել է սնանկության կառավարիչ, որպիսի պայմաններում վերջինս չէր կարող օժանդակել «Գրավ» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Հարությունյանին՝ արեղծելու կանխամրածված սնանկության հարկանիշներ, քանի որ այդ հարկանիշները կարող էին արեղծվել մինչև դատարանի կողմից ՍՊԸ-ին սնանկ ճանաչելը, ուստի անհրաժեշտ է փաստել, որ Կ.Ասատրյանի արարքում բացակայում է կանխամրածված սնանկության հարկանիշներ արեղծելուն օժանդակելու հանցակազմը:

(...)

Բողոքում նշված այն փաստարկի վերաբերյալ, թե սնանկության կառավարիչը չի ուսումնասիրել պարտապանի քանկային հաշիվների շարժը, հարկ է նշել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի և 4-րդ մասի համաձայն՝ նշված հարցով ՀՀ կենտրոնական քանկ կարող է դիմել սնանկության գործով դատարանը:

(...)

Անհիմն է բողոքում նշված այն հանգամանքը, թե սնանկության կառավարիչը, մասնավորապես, չի կատարել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ» կետերով սահմանված պարտականությունները, քանի որ այդ գործողությունների կատարումը ոչ թե սնանկության կառավարչի պարտականությունն է, այլ հայեցողական լիազորությունը: (...)

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Մ.Ավետիսյանը, գրնելով, որ Կ.Ասատրյանի գործողություններով իրեն վնաս է պատճառվել, կարող էր վերջինիցս վնասի փոխհատուցում պահանջել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի կարգով (...)¹:

6. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «(...) [Հ]երաքննության մարմինը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման և լուծման կարգը, այն է՝ դրա համար օրենքով սահմանված փաստորյա ժամկետը, քանի որ հանցագործության մասին հաղորդումը ստացվել է 11.12.2017 թվականին, իսկ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 28-32:

կայացվել է 25.12.2017 թվականին, որպիսի հանգամանքը չի արձանագրվել վերադաս դատախազի կողմից:

(...) Հետաքննության մարմինը չի սպառել բոլոր հնարավոր դատավարական գործողությունները, որոնց արդյունքում հնարավոր կլիներ ստուգել հաղորդման մեջ նշված, հանցագործության վերաբերյալ տվյալները, հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն եղել հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, հետաքննության մարմնի կողմից չի դրսևորվել անհրաժեշտ ջանասիրություն, ինչն էլ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով բողոքաբերի իրավունքների խախտմանը: (...)¹:

6.1. Արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշել է. «Վերացնել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 1-ին վարչության 4-րդ բաժնի ՀԿԳ ավագ օպերիվազոր Ռ. Դավթյանի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին 25.12.2017 թվականի որոշումը և պարտավորեցնել վերացնել Մարիամ Ավետրիայանի իրավունքների խախտումները»²:

7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշման համաձայն՝ «(...) [Պ]արզան քննություն և դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու դատավարական պարտականություն կրող վարույթն իրականացնող պաշտոնատար անձինք ամենևին էլ կաշկանդված չեն հանցագործության մասին հաղորդմամբ դիմած անձանց (...) տրված որակումներով, (...) այսինքն՝ տվյալ դեպքում վարույթն իրականացրած մարմինը նյութերի նախապարաստման ընթացակարգի շրջանակներում պետք է ստուգեր, հերքեր կամ հաստատեր ոչ թե դիմողի մատնանշած կոնկրետ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը, այլ հաղորդման և բացատրությունների մեջ ներկայացված փաստական հանգամանքների, հետո միայն դրանց համարեքստում որևէ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը: (...)

Հաշվի առնելով սկզբնական հաղորդման հիմքերն ու հիմնավորումները, անանկության գործընթացի բարդությունն ու առանձնահատկությունները՝ (...) դիմող Մ.Ավետրիայանի փաստարկները հնարավոր չէր լրիվությամբ և բազմակողմանիորեն ստուգել նյութ նախապարաստելու դատավարական ընթացակարգով, որի մասին են վկայում Հետաքննության մարմնի կողմից նյութ նախապարաստելու դատավարական ժամկետի խախտումը, այնպիսի ստուգողական գործողության իրա-

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 144-160:

² Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 144-160:

կանացումը, որի իրավասությունը մինչ քրեական գործ հարուցելը որևէ սուբյեկտ, այդ թվում՝ հեղափոխության մարմինը չուներ (նյութերի նախապարաստման ընթացքում իրականացրել է քաղաքացիական գործում առկա փաստաթղթերի զննում), բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու անհնարինությունը, այսինքն՝ նյութերի ընթացքը լուծելը սահմանափակ ծավալով սրացված փաստական փյուջաների հիման վրա, նույնիսկ վերջնական որոշումը կայացնելու պահին անձանց բացատրություններում էական հակասությունների առկայությունը: (...)

Այսպես, (...) անհասկանալի է (այլ կերպ՝ չի պարզվել), թե ինչու ընկերության գործունեության վայրում գրավարանը, ժամանակին գույքագրում կատարելու փորձ չի կատարվել, (...) դա պայմանավորված էր օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պարճառներով, սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանի անգործությամբ, թե դիտարկյալ գործողությունների հետևանքով: Անհասկանալի է նաև այն, որ (...) Կ.Ասատրյանը (...) գրավների և հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար ՀՀ կենտրոնական բանկ հարցում կատարում միայն երկու փարի անց: «Մասնկության մասին» ՀՀ օրենքը նման պարտականություն սահմանել է ոչ միայն դատարանի համար, նման լիազորություն է սահմանված նաև սնանկության գործով կառավարչի համար: Նյութերում բացակայում է սնանկության գործը քննող դատարանի կողմից ՀՀ կենտրոնական բանկ կատարված և պարզաճ կարգով ուղարկված հարցման պարաստիանը, որպիսի բացը կարող էր լրացվել Կ.Ասատրյանի կողմից իր գործառնությունների պարզաճ կատարմամբ (...): Այդ և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստր կատարված հարցմամբ էր հնարավոր նաև դեռևս այդ ժամանակ պարզել և հավաստիանալ, թե «Գրավ» ՍՊ ընկերությունը որպես գրավարուն մինչև երբ է գործունեություն իրականացրել և որքանով է Մաշտոցի 43/33 հասցեում մինչև 2013 թվականը գործունեություն ծավալելու, դրանից հետո այդ տարածքն օբյարելու և մուտքի բանալին դիմողի որդի Սերգեյ Վարդանյանին հանձնելու (այլ կերպ՝ այդ տարածքում գույքագրման ենթակա գույքի բացակայության) մասին «Գրավ» ՍՊ ընկերության ղեկավար Համլետ Հարությունյանի պնդումը համապարաստանում իրականությանը:

(...) [Չի պարզվել] թե ինչու ՊԵԿ քննչական մարմնից [Կ.Ասատրյանը] համապարաստան հարցմամբ չի պահանջել պարտապանի ֆինանսական և այլ փաստաթղթերը (...): Տվյալ պայմաններում անհասկանալի է (այլ կերպ՝ չի պարզվել), թե հատկապես որ նորմատիվ իրավական ակտով ղեկավարվելով է Կ.Ասատրյանը նման «անգործություն» ցուցաբերել, արդյոք հարուցված քրեական գործի առկայությունը

կասեցնում է սնանկության գործով կառավարչի կողմից իր պարտականությունների և «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացումը, եթե վերոնշյալ օրենքով նման նորմ նախատեսված չէ, ուստի և նա կարող էր առգրավված համապարասիան փաստաթղթերին ծանոթանալու կամ դրանցից պարճեններ սրանալու խնդրանքով դիմել նախաքննական մարմնին կամ սրանսար նախաքննական այդ մարմնի գրավոր մերժումը: Հետաքննության մարմինը չի պարզել նաև նախաքննական մարմնի կողմից վերոնշյալ փաստաթղթերի առգրավման ժամանակահատվածը, որով հնարավոր կլինե՞ր ստուգել, թե Կ.Ասատրյանը օբյեկտիվորեն հայտնվել է այդ խնդրի առաջ, թե՛ ոչ (...):

[Գլուխագրումը ժամանակին չկատարելու (...)] [Կ.Ասատրյանի/ պարճատարանությունը որևէ քննադատության չի դիմանում, քանի որ «Մսանկության մասին» օրենքը նախատեսում է այդ հարցում դատարանի աջակցությունը սրանալու հնարավորություն: Որպես ժամանակին գույքագրում չիրականացնելու մեկ այլ պարճատարանություն Կ.Ասատրյանը հայտնել է, որ «Գրավ» ՍՊԸ-ի տարածքը պարկանել է այլ անձի, որը փակ է եղել, այդ իսկ պարճատով գույքագրումը կատարվել է միայն 17.03.2017թ.: (...) [Այնպիսի տարածքի պարկանելիությունից՝ փվյալ տարածքի նկարմամբ «Գրավ» ՍՊ ընկերությունն ունեցել է օգտագործման, իսկ այդ ընկերության աշխատակիցները՝ մուտք գործելու և նաև ընկերության գույքը կամ գույքային իրավունքների առկայությունը փաստող փաստաթղթեր պահելու իրավունքներ, իսկ նախատեսվող գույքագրմանը տարածքի սեփականատիրոջ հնարավոր խոչընդոտները կարող էին հաղթահարվել սնանկության գործը վարող դատարանի միջամտությամբ:

Պարզաճ կարգով չեն ստուգվել և գնահատվել նաև «Գրավ» ՍՊ ընկերության ղեկավար Համլետ Հարությունյանի հայտնած փաստական փվյալները [սվիրատվության վերաբերյալ]: (...)

«Գրավ» ՍՊ ընկերության տարածքը այդ ընկերության ղեկավարի կողմից մինչև 2017 թվականն օգտագործելու վերաբերյալ (...) իրարամերժ բացատրությունների պայմաններում Հետաքննության մարմինը չի պահանջել և նյութերին չի կցել դատարանում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որի բովանդակության ուսումնասիրությանը հնարավոր կլինե՞ր պարզել, թե արդյոք տարածքի սվիրատվության պայմանագիրը պայմանավորված էր Հ.Հարությունյանի 135.000 ԱՄՆ դոլար պարտքը Մ.Ավետիսյանի կողմից ներելու (զիջելու) հետ: (...)

[Կ]առավարիչ Կ.Ասատրյանը բավարարվել է միայն Հ.Հարությունյանի վարահեցմամբ, որ գրավարան տարածքում որևէ գույք կամ հիմնական միջոց չկա (...):

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերոնշյալ վերլուծությունը հեղափոխում է բացառապես թերի և միակողմանի քննություն կատարելու վերաբերյալ հեղափոխությունը հիմնավորելու և ոչ թե վարույթն իրականացնող մարմիններին ստուգողական կամ քննչական գործողություններ կատարելու ցուցում տրամադրելու նպատակ: (...)»¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբեր՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը նշել է, որ ստորադաս դատարանների որոշումներով խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 185-րդ և 358-րդ հոդվածների պահանջները, ինչը հիմք է դրանք բեկանելու համար:

8.1. Բողոք բերած անձը նշել է, որ Հետաքննության մարմնի կողմից նյութերը նախապատրաստվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, ուստի անհիմն են հետաքննության մարմնի կողմից պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու, Մ.Ավետիսյանի փաստարկները նյութեր նախապատրաստելու դատավարական ընթացակարգով լրիվությամբ ու բազմակողմանիորեն ստուգելու հնարավորության բացակայության մասին դատարանների փաստարկները:

8.2. Բողոքաբերը հիմնավոր չի համարել Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ Հետաքննության մարմինը չի պահանջել և նյութերին չի կցել դատարանում կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, նկատի ունենալով, որ նյութերում առկա է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, որով հաստատվել է հաշտության համաձայնությունը:

8.3. Անդրադառնալով Կ.Ասատրյանի կողմից անգործություն դրսևորած լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի փաստարկներին՝ բողոքաբերը նշել է, որ նշված հանգամանքն ինքնին չի վկայում որևէ հանցանք կատարած լինելու մասին, առավել ևս, որ սնանկության կառավարչի կողմից խախտումներ թույլ տված լինելու դեպքում նրան պատասխանատվության ենթարկելու հարցով Մ.Ավետիսյանը կարող էր դիմել սնանկության գործը քննող դատարանին կամ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությանը, քանի որ կառավարչի գործողությունները (անգործությունը) վիճարկելու կարգը և պատասխանատվությունը որոշվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոններով, իսկ այդ հանգամանքն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 84-121:

8.4. Բողոքաբերը ընդգծել է նաև այն հանգամանքը, որ ստորադաս դատարանների դատական ակտերում չի հստակեցվել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելուց հետո ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով կարող է քրեական գործ հարուցվել քրեական հետապնդման մարմնի կողմից:

8.5. Բողոք բերած անձը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը, նյութերի նախապատրաստության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բավարարության, քրեական գործի հարուցումը մերժելու մասին վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելու փոխարեն, իր դատական ակտով անդրադարձել է հարցերի այնպիսի շրջանակի, որոնք գտնվում են բացառապես նախնական քննության մարմնի իրավասության ներքո՝ դրանով իսկ հակասելով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին: Բացի այդ, բողոքաբերն ընդգծել է, որ Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից չպարզված փաստական տվյալներ է մատնանշել այնպիսի հանգամանքներ, որոնք որևէ նշանակություն չեն կարող ունենալ հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության փաստը պարզելու համար և առավելապես վերաբերում են Մարիամ Ավետիսյանի և նյութների միջև առկա ոչ թե քրեական, այլ այլ փոխհարաբերություններին:

8.6. Անդրադառնալով նյութերի նախապատրաստման փուլի՝ 10-օրյա ժամկետը խախտած լինելու և այս փուլում փաստաթղթերի զննություն իրականացնելու ոչ իրավաչափության մասին ստորադաս դատարանների փաստարկներին՝ բողոքաբերը կարևորել է այն հանգամանքը, որ դրանց արդյունքում որևէ անձի հիմնական իրավունք, ազատություն կամ քրեական դատավարության սկզբունք չի խախտվել, այսինքն՝ էական խախտում թույլ չի տրվել:

9. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշումները:

10. Դիմող Կարեն Ասատրյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 35-րդ, 175-176-րդ, 180-181-րդ հոդվածների պահանջները, ինչը հանգեցրել է Կ.Ասատրյանի և Հ.Հարությունյանի իրավունքների և ազատությունների խախտումներին: Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը հակասում է *Ֆրունզիկ Գալստյանի*, *Լիա Ավետիսյանի* գործերով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Բողոքաբերը փաստել է, որ կայացված դատական ակտերն անհիմն են և չպատճառաբանված, դրանք կայացվել են բողոքի քննության

ընթացքում կողմերի ներկայացված փաստերի, ինչպես նաև նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված տվյալների անտեսմամբ:

Բողոք բերած անձը փաստել է նաև, որ ստորադաս դատարանները չեն նշել, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով կամ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ են առերևույթ առկա, որոնցով էլ քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործ հարուցի և նախաքննություն իրականացնի, և անտեսել են այն, որ հաղորդման մեջ նշված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 214-րդ հոդվածների հանցակազմերի հատկանիշները բացակայում են, և առհասարակ առկա չեն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցագործության հատկանիշներ: Մասնավորապես, բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ սնանկության գործով կառավարչի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը կարող է հաստատվել բացառապես «Մանկության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե անգամ հաստատվեր սնանկության գործով կառավարչի կողմից իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը, ապա բողոքաբերի պնդմամբ, հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, որը կհաստատեր Կ.Ասատրյանի մոտ դիտավորության առկայությունը: Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ, նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռնարկված գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Գրավ» ՍՊ ընկերությունը որևէ գույք չի ունեցել, ուստի եթե նույնիսկ Կ.Ասատրյանը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պարտականությունները, ապա դրա արդյունքում որևէ գույք չի թաքցվել կամ դրա նկատմամբ որևէ անօրինական գործողություն չի կատարվել, ուստի առկա չեն ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ և 193-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները:

10.1. Անդրադառնալով քրեական գործի հարուցման փուլի դատավարական կարգի խախտումներին՝ բողոքաբերը նշել է, որ դրանք հիմք չեն քրեական գործի հարուցումը մերժելու մասին օրինական և հիմնավորված որոշումը վերացնելու համար:

11. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ և Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Հ.Անանյանի բողոքը մերժել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք վարույթն

իրականացնող մարմնի կողմից Մ.Ավետիսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և վերջինիս իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, Կրոժոդի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) /Դ/ատարանը մինչդատարան վարույթի նկատմամբ դատարան վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատարան ակտիվ պետք է հստակ պատճառաբանի՝

ա) վարույթի իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչու է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել»¹:

14. Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ իրավական պաշտպանություն հայցելու հնարավորության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ: Վերջինս պայմանավորված է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Այսպես, եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ

¹ Տե՛ս ' Վճռաբեկ դատարանի՝ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԴ/0001/11/14 որոշման 13-րդ կետը:

են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես՝ քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Ուստի, ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Հակառակ պարագայում, կարող է առաջանալ իրավիճակ, երբ նույն փաստի վերաբերյալ առկա լինեն քաղաքացիական դատավարության կարգով և քրեական դատավարության կարգով կայացված օրինական ուժի մեջ մտած իրար հակասող դատական ակտեր, ինչն անթույլատրելի է, քանի որ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի¹:

14.1. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ *Տափրյանս Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմների գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը, այդ թվում՝ վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ²:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Ավետիսյանը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իր և «Գրավ» ՍՊ ընկերության միջև առկա թիվ ԵԿԴ/0262/04/14 սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սնանկության կառավարչի իր լիազորությունները, մասնավորապես՝ չի վերլուծել պարտապանի ֆինանսական վիճակը, չի իրականացրել իր հիմնական գործառնությունը՝ պարտապանի գույքի հայտնաբերումը և գույքի վաճառքից առաջացող միջոցներով պարտատերերի պահանջների բավարարումը: Մ.Ավետիսյանն իր հաղորդման մեջ նշել է, որ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 214-րդ հոդվածներով սահմանված հանցակազմների հատկանիշների առկայության

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիա Ավետիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 29-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 30-րդ կետը, *Վարդան Մաթևոսյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, *Ռոտիկ Բալասանյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշման 17-րդ կետը:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Տափրյանս Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի* գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱՆԴ/0025/11/16 որոշման 12.1-րդ կետը:

հանգամանքը:

Հետաքննության մարմինը, դիմող Մ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել է՝ այն պատճառաբանությամբ, որ քրեական գործով ինչպես Կ.Ասատրյանի, այնպես էլ՝ «Գրավ» ՍՊ ընկերության տնօրեն Հ.Հարությունյանի արարքներում բացակայել են ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 214-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը¹: Հետաքննության մարմնի նշված որոշման դեմ Մ.Ավետիսյանի ներկայացուցիչ Հ.Անանյանի բողոքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի՝ 2018 թվականի հունվարի 24-ի որոշմամբ մերժվել է՝ փաստելով, որ Մ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա նյութերը նախապատրաստվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, քրեական գործ հարուցելը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումն օրինական է և հիմնավոր²:

Վերոնշյալ որոշման դեմ ներկայացված բողոքն Առաջին ատյանի դատարանը ճանաչել է հիմնավորված՝ փաստելով, որ հետաքննության մարմինը չի սպառել բոլոր հնարավոր դատավարական գործողությունները, որոնց արդյունքում հնարավոր կլիներ ստուգել հաղորդման մեջ նշված հանցագործության վերաբերյալ տվյալները, և որ հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար չեն եղել հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են³:

Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ սնանկության գործընթացի բարդությամբ ու առանձնահատկություններով պայմանավորված՝ դիմող Մ.Ավետիսյանի փաստարկները հնարավոր չէր լրիվությամբ և բազմակողմանիորեն ստուգել նյութ նախապատրաստելու դատավարական ընթացակարգով՝ իբրև հիմնավորում վկայակոչելով նաև Հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելու փուլում ոչ թույլատրելի դատավարական գործողությունների իրականացումը և նյութեր նախապատրաստելու տասնօրյա ժամկետի խախտումը: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Մարիամ Ավետիսյանի հաղորդման մեջ նշված փաստարկների ստուգման, դրանցում ՀՀ քրեական օրենսգրքի առնվազն 192-րդ, 193-րդ, ինչպես նաև 214-րդ հոդվածներով նախատեսված արարքների հատկանիշների առկայության կամ բացակայության պարզման ուղղությամբ լրիվ, օբյեկտիվ և

¹ Տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 5.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 2-րդ, 6-րդ և 6.1-րդ կետերը:

բազմակողմանի քննություն չի կատարվել, մասնավորապես չեն պարզվել Կ.Ասատրյանի կողմից ժամանակին գույքագրում չկատարելու, պարտադիր ֆինանսական վիճակի վերլուծություն չիրականացնելու պատճառները: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ տվյալ դեպքում վարույթն իրականացրած մարմինը նյութերի նախապատրաստման ընթացակարգի շրջանակներում պետք է ստուգեր, հերքեր կամ հաստատեր ոչ թե դիմողի մատնանշած կոնկրետ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը, այլ հաղորդման և բացատրությունների մեջ ներկայացված փաստական հանգամանքների, հետո միայն դրանց համատեքստում որևէ հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 14-14.1-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները բավարարել են դիմողի ներկայացուցչի բողոքն առանց պատշաճ իրավական գնահատականի արժանացնելու այն, որ վիճարկվող որոշման դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան քաղաքացիական իրավանորմների գործադրմամբ լուծման ենթակա հարցեր են:

16.1. Այսպես՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ Մ.Ավետիսյանի և Հ.Հարությունյանի միջև կնքված փոխառության պայմանագրերն ու դրանցից բխող իրավահարաբերություններն իրենց բնույթով քաղաքացիաիրավական են, ձևավորվել են կողմերի փոխադարձ կամահայտնության հիման վրա, և այդ իրավահարաբերությունների կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերը ենթակա են լուծման քաղաքացիաիրավական հարթությունում:

16.2. Անդրադառնալով Կ.Ասատրյանի և Հ.Հարությունյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ և 193-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշների հնարավոր առկայության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության կառավարիչը քննարկվող հանցակազմերի սուբյեկտ չէ, քանի որ կանխամտածված սնանկության և սնանկության ընթացքում ապօրինի գործողություններ կատարելու համար քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել պարտապան իրավաբանական անձի ղեկավարը, նրա հիմնադիրները (մասնակիցները), նրան՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող այլ անձինք կամ պարտապան անհատ ձեռնարկատերը:

Ինչ վերաբերում է Հ.Հարությունյանի արարքում կանխամտածված սնանկության, իսկ Կ.Ասատրյանի արարքում դրա օժանդակության

¹ Տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը:

հնարավոր առկայության հարցին, ապա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում համապատասխան հանցագործության հատկանիշների բացայակության մասին Հետաքննության մարմնի և հսկող դատախազի վկայակոչած և նյութերի նախապատրաստման արդյունքում հաստատված փաստերն առ այն, որ «Գրավ» ՄՊ ընկերությունը սնանկ է ճանաչվել ոչ թե Հ.Հարությունյանի նախաձեռնությամբ, այլ հենց Մ.Ավետիսյանի ներկայացրած հայցի հիման վրա, իսկ Կ.Ասատրյանն էլ սնանկության կառավարիչ է նշանակվել ընկերությունը սնանկ ճանաչելուց հետո, հետևաբար չէր կարող օժանդակել ընկերությունը սնանկ ճանաչելուն¹:

Միաժամանակ անդրադառնալով սնանկության ընթացքում անօրինական գործողություններ կատարելու հանցակազմին՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Հետաքննության մարմնի և հսկող դատախազի այն եզրահանգումը, որ նյութերի նախապատրաստման փուլում ձեռք չեն բերվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ Հ.Հարությունյանն ուղղակի դիտավորությամբ կատարել է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքներից որևէ մեկը, մասնավորապես՝ որ գույք կամ գույքային իրավունքներ, գույքի, նրա չափի, գտնվելու վայրի կամ գույքի մասին այլ տեղեկություններ է թաքցրել, իսկ Կ.Ասատրյանն էլ ուղղակի դիտավորությամբ օժանդակել է դրա կատարմանը: Ինչ վերաբերում է սնանկության գործընթացում Կ.Ասատրյանի կողմից ոչ իրավաչափ անգործություն դրսևորած լինելու, մասնավորապես՝ պարտապանի ֆինանսական դրության վերլուծություն չիրականացնելու, գույքագրումը ոչ ժամանակին կատարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի փաստարկներին, ապա այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը, մասնավորապես Կ.Ասատրյանի բացատրությունը, քաղաքացիական գործում առկա փաստաթղթերի զննության արձանագրությունը, պետական մարմիններ կատարված հարցումների արդյունքները հիմք են տալիս փաստելու, որ Կ.Ասատրյանի կողմից դիտավորությամբ սնանկության գործընթացին օժանդակելու հանցագործության առերևույթ հատկանիշներ, այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր առկա չեն: Մասնկության կառավարչի կողմից ենթադրաբար որոշակի գործողություններ կատարած չլինելու կամ այդպիսիք ոչ պատշաճ կատարած լինելու, այդ առնչությամբ վերջինիս ներկայացրած պատճառաբանությունների իրավաչափության հանգամանքները, ինչպես իրավացիորեն նշել է Հետաքննության մարմինը, կարող էին վիճարկվել սնանկության գործը քննող դատարան, ինչն ուղղակիորեն նախատեսված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ պարտապանը և պարտատերը (պարտատերերը) կարող են սնանկության գործը վարող

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ և 5.1-րդ կետերը:

դատավորին բողոքարկել կառավարչի գործողությունները կամ անգործությունը: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբեր՝ դիմող Կ.Ասատրյանի ներկայացուցիչ Ա.Թամրազյանի փաստարկներն առ այն, որ նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռնարկված գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Գրավ» ՍՊ ընկերությունը որևէ գույք չի ունեցել, ուստի եթե նույնիսկ Կ.Ասատրյանը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր պարտականությունները, ապա դրա արդյունքում որևէ գույք չի թաքցվել կամ դրա նկատմամբ որևէ անօրինական գործողություն չի կատարվել¹:

16.3. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հնարավոր առկայության հարցին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման փուլում ձեռք չեն բերվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ Հ.Հարությունյանը կամ Կ.Ասատրյանն ուղղակի դիտավորությամբ իրենց կամ ուրիշ անձանց օգտին իրենց լիազորություններն օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով կատարել են քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող որևէ արարք, ինչի հետևանքով էական վնաս պատճառված լինի որևէ անձի, կազմակերպության կամ պետության իրավունքներին և օրինական շահերին:

16.4. Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև Հետաքննության մարմնի այն եզրահանգումը, որ կանխամտածված սնանկության կազմակերպման, սնանկության ընթացքում անօրինական գործողությունների կատարման կամ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունների չարաշահման պարտադիր հատկանիշ է համարվում գործողության (անգործության) և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը, ինչը տվյալ պարագայում բացակայում է:

16.5. Վերոշարադրյալը հիմք է տալիս պնդելու, որ Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված՝ պարզման ենթակա հանգամանքները, քրեական գործ հարուցելու տեսանկյունից որևէ նշանակություն չունեն, և կարող են հաստատվել կամ հերքվել քաղաքացիաիրավական գործիքակազմի, այդ թվում՝ սնանկության վարույթը կարգավորող նորմերի կիրառմամբ, սակայն ոչ քրեաիրավական տիրույթում: Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 43/33 հասցեում գտնվող անշարժ գույքի նվիրատվության իրական հանգամանքները պարզելու անհրաժեշտության մասին Վերաքննիչ դատարանի փաստարկներին և այն դիտարկմանը, որ Հետաքննության մարմինն այդ նպատակով չի պահանջել և նյութերին չի կցել դատարանում կողմերի միջև կնքված

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

հաշտության համաձայնությունը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մ.Ավետիսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերում առկա է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, որով հաստատվել է հաշտության համաձայնությունը¹:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն փաստարկին, որ Հետաքննության մարմինը չպետք է սահմանափակվեր միայն հաղորդման մեջ նշված հանցագործության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը պարզելով, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքարեւների փաստարկներն առ այն, որ Հետաքննության մարմնի կողմից իրականացվել է հաղորդման ստուգման ուղղությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որի ընթացքում առերևույթ հանցագործության հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ ստորադաս դատարաններն էլ իրենց հերթին չեն պատճառաբանել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հնարավոր որ նորմով պետք է քրեական գործ հարուցվի²:

17. Այսինքն՝ վերոնշյալ հանգամանքների համակցությունը վկայում է, որ Մ.Ավետիսյանի և Հ.Հարությունյանի, ինչպես նաև՝ սնանկության գործով կառավարիչ Կ.Ասատրյանի միջև ձևավորված իրավահարաբերությունները կրում են քաղաքացիական բնույթ, սակայն ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել վերոնշյալ փաստական տվյալները, ավելին՝ մատնանշել են վարույթն իրականացնող մարմնի կողմից պարզման ենթակա հանգամանքներ, որոնք իրավահարաբերության քաղաքացիաիրավական բնույթի պայմաններում գործի համար էական նշանակություն ունենալ չեն կարող:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից Մ.Ավետիսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և վերջինիս իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Անդրադառնալով նյութերի նախապատրաստման փուլի՝ 10-օրյա ժամկետը խախտած լինելու և այս փուլում փաստաթղթերի զննություն իրականացնելու ոչ իրավաչափության մասին ստորադաս դատարանների հետևություններին, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքարեւների այն փաստարկները, որ դրանց արդյունքում որևէ անձի հիմնական իրավունք, ազատություն կամ քրեական դատավարության սկզբունք չի խախտվել, այսինքն՝ էական խախտում թույլ չի տրվել, որը հիմք կծառայեր քրեական գործի հարուցումը մերժելու մասին օրինական

¹ Տե՛ս մերժված նյութեր, էջեր 186-188:

² Տե՛ս սույն որոշման 8.4-րդ և 10-րդ կետերը:

և հիմնավոր որոշումը վերացնելու համար¹:

19. Անփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումն և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշումը բեկանելու համար: Մինևույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Մ.Ավետիսյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմող Մարիամ Սարգսի Ավետիսյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 18-ի որոշումը բեկանելու փոփոխել: Դիմող Մարիամ Ավետիսյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

¹ Տե՛ս սույն որոշման 8.6-րդ և 10.1-րդ կետերը:

67. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԴ2/0043/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

մասնակցության դատավորներ՝
նախագահության՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարության՝
մասնակցության դատախազ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ՊՈՂՈՍՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով ամբաստանյալ Ռազմիկ Ռոմեոի Հախվերդյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հուլիսի 24-ին քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Ռազմիկ Ռոմեոի Հախվերդյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 3-ի դատավճռով Ռ.Հախվերդյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով: Նա մեղավոր է

ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք՝ 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ռ.Հախվերդյանի՝ 2017 թվականի մայիսի 11-ից մինչև 2018 թվականի մարտի 15-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նա ազատվել է պատիժը կրելուց: Ամբաստանյալի նկատմամբ ընտրված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մարտի 15-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դատավճիռը՝ թողել անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի որոշմամբ Ռազմիկ Հախվերդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով այն բանի համար, որ. «(...) [Մ]ա 2016 թվականի նոյեմբերի 11-ի երեկոյան Դիլիջան քաղաքի «Միմինո» սրճարանում, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու դիրավորությամբ, ինքնահասարայման և շրջապարհին հակադրվելու հանդուգն ձգտումով, հնչեցրել է «Այսրեղ Կրա կա» հարցադրումը, ապա անհիմն վիճարանել սրճագանքած անձանոթ այցելուների հետ, առանց հրավերի սեղանակցել, իր սանձարձակ վարքագծով խաթարել սրճարանի բնականոն աշխարանքը՝ շուրջ 15 րոպե բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով շրջապարհի նկարմամբ՝ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը:

(...)

Բացի այդ, Ռ.Հախվերդյանի կողմից «Միմինո» սրճարանում խուլիգանություն կատարելու ժամանակ սրճարանի սեփականատիրոջ՝ Արմեն Մարտիրոսյանի հանդարման կոչերին չենթարկվելու պարճառով առաջացած Գարաճայնությունը հարթելու նպարակով, վերջիններս, նույն օրը՝ ժամը 18-19-ի սահմաններում մեկնել են Տավուշի մարզի Թեղուր գյուղի 1-ին փողոցի սկզբնամաս, որտեղ Ռ.Հախվերդյանը

բարձրաձայն հայտոյանքներ տալով, խուլիզանական դրդումներով, ապօրինաբար Ա.Մարտիրոսյանին դիտարկությանը կյանքից զրկելու նպատակով, իր մոտ եղած դանակով մի քանի անգամ հարվածել է Ա.Մարտիրոսյանի մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ նաև կրծքավանդակին՝ նրա առողջությանը պայծառելով ծանր վնաս կյանքին վրանգ ապահանջող և հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներում չհասցնելով ավարտին՝ դիմել է փախուստի»¹:

6. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի մարտի 16-ին ծանուցագիր է ուղարկել գործով դատակոչված վկա Էդգար Ղամբարյանի հասցեով՝ 2018 թվականի ապրիլի 4-ին կայանալիք դատական նիստին ներկայանալու համար, որը հետ է վերադարձվել՝ «տեղափոխված» նշումով²:

6.1. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի ապրիլի 4-ին և ապրիլի 26-ին վկա Է.Ղամբարյանին բերման ենթարկելու մասին որոշումներ է կայացրել³:

6.2. ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի պետ Վ.Ղազարյանը գրությամբ Առաջին ատյանի դատարանին տեղեկացրել է, որ Է.Ղամբարյանին հնարավոր չի եղել բերման ենթարկել դատարան՝ բնակության վայրից նրա բացակայության պատճառով⁴: Հիշյալ գրությանը կցված՝ «Բնակարան այցելելու մասին» արձանագրության համաձայն՝ վկայի մայրը՝ Սեդա Թամամյանը հայտնել է, որ որդին՝ Է.Ղամբարյանը, 2018 թվականի մարտի 20-ից գտնվում է Ռուսաստանում՝ բուժման նպատակով⁵:

6.3. 2018 թվականի մայիսի 18-ին Առաջին ատյանի դատարանը հարցում է ուղարկել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն՝ խնդրելով տրամադրել Է.Ղամբարյանի սահմանա-հատումների վերաբերյալ տվյալները: Ստացված տեղեկություններով պարզվել է, որ 2018 թվականի մարտի 21-ին Է.Ղամբարյանը Բագրատաշեն սահմանային անցակետով լքել է Հայաստանի Հանրապետության տարածքը⁶:

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռում արձանագրված է հետևյալը. (...) *[Վարույթ իրականացնող մարմինը չի ներկայացրել բավարար ապացույցներ այն մասին, որ ամբաստանյալը կարարել է իրեն վերագրվող խուլիզանական դրդումներով կարարված ապանության փորձը: Սա չի նշանակում, որ տվյալ հանցանքը կարարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կասկած չի կարող առաջացնել,*

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 188-189:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 96, 99:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 104, 117:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 8:

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 9:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 4, 12-13:

սակայն այդպիսի կասկածի աստիճանն աննշան է՝ ընդամենը ենթադրություն, և հիմնավորված չէ բավարար ապացույցներով: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18 և 365 հոդվածներն արձանագրում են, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը, հետևաբար նաև մեղադրական դատավճիռը, չեն կարող հիմնվել ենթադրությունների վրա, անձի մեղավորությունը պետք է հաստատվի դատական քննության ընթացքում գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ: Սույն գործով դատաքննության ընթացքում ամբաստանյալի կողմից սպանության փորձ կատարելու վերաբերյալ հավասարի ապացույցներ ձեռք չեն բերվել: Իսկ եղած ենթադրությունները բավարար չեն մեղադրական դատավճիռ կայացնելու համար:

Ինչ մնում է գործով պաշտպանության միջոց կիրառված վկայի ցուցմունքներին, ապա դատարանը գտավ, որ պետք է բավարարել ամբաստանյալի շահերի պաշտպանի միջնորդությունը՝ դրանք անթույլատրելի ճանաչելու և ապացույցների շարքից հանելու վերաբերյալ հետևյալ պարճառաբանությամբ.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դ ենթակետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:

(...)

Ամբաստանյալը դատաքննությամբ պահանջեց ապահովել պաշտպանության միջոց կիրառված վկայի ներկայությունը՝ նրան առերես հարցաքննելու համար, սակայն նրան դատական նիստին ապահովել չհաջողվեց: Պաշտպանության կողմը, նկարի ունենալով, որ իրենք զրկված են եղել գործով վկային հարցաքննելու հնարավորությունից, միջնորդեց հակընդդեմ հարցման իրավունքով /կոնֆրոնտացիայով/ չապահովված փաստական տվյալը չհամարել ապացույց, վկայի նախաքննական ցուցմունքները ճանաչել անթույլատրելի և հանել ապացույցների շարքից:

Դատարանը գտավ, որ ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը պաշտպանության միջոց կիրառված վկայի նախաքննական ցուցմունքների սրուզման մասով չի ապահովվել: Վկայի բացակայությունն արդարացված չէ, նրան առերես հարցաքննելու ամբաստանյալի իրավունքն ապահովված չէ, վկայի նախաքննական ցուցմունքները սույն

գործով անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում վճռական կշիռ ունեցող միակ փաստարկն են, հետևաբար դրանք անթույլատրելի են և չեն կարող դրվել ապացույցների շարքում: (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) ամբաստանյալ Ռազմիկ Հախվերդյանը հնարավորություն չի ունեցել իրացնելու իր դեմ ցուցմունք տրված անձին հարցեր ուղղելու իր իրավունքը:

Այլ կերպ ասած՝ պաշտպանության կողմի հակընդդեմ հարցում իրականացնելու (կոնֆրոնտացիայի) իրավունքը չի ապահովվել: Ընդ որում, գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ դատարանն այս առնչությամբ ձեռնարկել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն, սակայն նշված անձի ներկայությունը դատական նիստին ապահովել չի հաջողվել:

Մինչդեռ, պաշտպանության միջոց կիրառված վկայի ցուցմունքն ու դրանում տեղ գրած տեղեկությունները միակ փաստարկն է և ունի վճռական կշիռ ամբաստանյալ Ռ. Հախվերդյանի մեղքը (մեղադրանքի այդ մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով) հաստատող ապացույցների զանգվածում: Ինչն ինքնին բացառում է առկա պայմաններում, այն ապացույցների շարքում ներառելու իրավական հնարավորությունը: Որպեսի պայմաններում, դատարանն իրավացիորեն գրել է, որ ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը պաշտպանության միջոց կիրառված վկայի նախաքննական ցուցմունքների ստուգման մասով չի ապահովվել:

(...) [Վ]երաքննիչ դատարանը գրնում է, որ Ռազմիկ Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքի առնչությամբ, սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ վերջինս կատարել է մեղադրանքի այդ մասով իրեն վերագրվող արարքը:

(...)

Մեղադրանքի հիմքում դրված ապացույցների համակցությունը բավարար չէ Ռազմիկ Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով մեղադրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կրացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:

Հիմք ընդունելով վերոգրյալը, վերաքննիչ դատարանը գրնում է, որ ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարանը Ռազմիկ Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթեր 43-50

10-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար՝ վիճարկվող դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան: (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և խաթարել են արդարադատության բուն էությունը:

9.1. Բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանները, ամբաստանյալ Ռ.Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելով, նրան անհիմն կերպով ազատել են քրեական պատասխանատվությունից՝ խախտելով հանցագործության հետևանքով տուժած անձի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

9.2. Բողոքաբերը փաստարկել է, որ ստորադաս դատարանները հանգել են ոչ իրավաչափ հետևության այն մասին, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Ռ.Հախվերդյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նրան մեղսագրված արարքը: Ըստ բողոքի հեղինակի՝ թե՛ Առաջին ատյանի դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցությունից:

9.3. Մեջբերելով պաշտպանության միջոց կիրառված՝ «Գոհարիկ Անդրեասյան» կեղծանունով վկայի նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները, բողոքաբերը նշել է, որ այդ վկան Է.Ղամբարյանն է, ով գործի դատաքննության ժամանակ իրեն բացահայտել է: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը բոլոր հնարավորություններն ունեցել է օրենքով սահմանված կարգով վկային դատարան բերելու և հարցաքննելու համար, ինչով էլ կապահովվեր ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, ըստ բողոքաբերի, բավարար միջոցներ չի ձեռնարկել վկային դատական քննության ներկայացնելու ուղղությամբ, ընդամենն արձանագրել է, որ վկային չի հաջողվել ներկայացնել դատարան, որով էլ չի ապահովվել ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքը՝ անհիմն վերջինիս ցուցմունքները հանելով ապացույցների շարքից:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 74-95:

Բողոքի հեղինակն ընդգծել է, որ սույն գործով ստորադաս դատարանները, բավարար միջոցներ չձեռնարկելու պատճառով «Գոհարիկ Անդրեասյան» կեղծանունով վկային դատաքննության ընթացքում չհարցաքննելով, նշված ապացույցը չգնահատելով արժանահավատության տեսանկյունից՝ գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համակցության մեջ և չհամադրելով մյուս ապացույցների հետ, գործով ձեռք բերված ապացույցները միակողմանի գնահատելով, եկել են սխալ եզրահանգման՝ Ռ.Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ՝ արդյունքում թույլ տալով դատական սխալ:

9.4. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն, որ Թեղուտ գյուղում գտնվող դեպքի վայրում ասֆալտապատ գետնից վերցված կասկածելի հետքերում հաստատվել է արյան առկայություն, որն ըստ արյան ABO իզոշնաբանական համակարգի՝ առաջացել է AB խումբ ունեցող անձից, իսկ տուժող Ա.Մարտիրոսյանի արյունը պատկանում է նույն խմբին: Բողոքաբերի պնդմամբ, ստորադաս դատարանները, ամբողջությամբ չհետազոտելով գործում եղած ապացույցները, առանց որևէ փաստարկի, անհիմն կերպով կասկածի տակ են դրել դեպքի ժամին դեպքի վայրում՝ Թեղուտ գյուղում, տուժողի գտնվելու հանգամանքը:

10. Վերոշարադրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 3-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2019 թվականի մարտի 15-ի որոշումը՝ ամբաստանյալ Ռ.Հախվերդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնելու մասով բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք Ռ.Հախվերդյանի կողմից վկա Է.Ղամբարյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի իրացման անհնարինության և վկայի ցուցմունքներն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝

(...)

4) իր դեմ ցուցմունք փվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք փվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով,

ինչ իր դեմ ցուցմունք տրված անձինք (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

(...)

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տրվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տրված վկաները, (...)»:

13. Վճռաբեկ դատարանը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքին անդրադարձել է Արդուշ Դուլյանի գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ, արձանագրելով հետևյալը. «(...) հակընդդեմ հարցման իրավունքը քրեական վարույթի արդարացիության ապահովման հիմնարար երաշխիքներից է, որի կենսագործման միջոցով հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը գործի դատական քննության ընթացքում կարողանում է վիճարկել իր դեմ տրված ցուցմունքը: Այդ գործընթացն առանցքային նշանակություն ունի նաև գործն ըստ էության քննության առնող դատարանի համար, որը ենթադրյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը որոշելիս համակողմանի գնահատման է ենթարկում ինչպես վկայի տրված ցուցմունքը, այնպես էլ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից վկային ուղղված հարցերի առնչությամբ վերջինիս տրված պատասխանները:

(...) Հակընդդեմ հարցման իրավունքը կարևորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, որը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ բոլոր ապացույցները սովորաբար պետք է ներկայացվեն դոկրատիկ դատական քննության ժամանակ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցային դատավարության սկզբունքի պահպանմամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորությունն ապահովելու համար: Այս սկզբունքն ունի նաև բացառություններ, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները. որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին համարժեք և պարզաձև հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տրված ցուցմունքը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տրված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տրալու ժամանակ կամ հետագա փուլերում¹:

¹ Տե՛ս *Al-Khawaja and Tahery v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատներ թիվ 26766/05 և 22228/06, 118-րդ կետ:

Այսինքն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված ընդհանուր կանոնը վկաներին գործի դատական քննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելն է: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր դեպքերում են վկաները ներկայանում դոնբաս դատական քննությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշակել է հետևյալ սկզբունքներն այդ վկաների նախաքննական ցուցմունքների օգտագործման հնարավորությունը գնահատելու համար.

- վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պարճատ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական և իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել չկարողանալու համար: Կան մի շարք պարճատներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը, օրինակ՝ վկայի մահվան, վրեժխնդրության վախի¹, վկային հայրնաբերելու անհնարինություն² կամ այլ պարճատներով: Ընդ որում, այս սկզբունքի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծում է, որ նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ վկաներին չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պարճատներ, ապա դրանց բացակայությունն ինքնին չի կարող վկայել քրեական վարույթի անարդարացիության մասին³,

- եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատաքննության ընթացքում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամարելելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոնը»): Այդ համարեքստում որպես «միակ» պետք է հասկանալ մեղադրյալի դատապարտման հիմքում դրված միակ ցուցմունքը, իսկ «վճռորոշ»-ը պետք է հասկանալ այնպիսի նշանակության կամ կարևորության ցուցմունքը, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար⁴,

¹ Տե՛ս նույն գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը:

² Տե՛ս *u Paic v. Croatia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 47082/12, 34-րդ կետ:

³ Տե՛ս *u Seton v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի մարտի 31-ի վճիռը, գանգատ թիվ 55287/10, 62-րդ կետ:

⁴ Տե՛ս *u Schatschaschwili v. Germany* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 9154/10, 123-124-րդ կետեր: Նշվածի կապակցությամբ տե՛ս նաև *Համայնակ Սահակյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԳ/0212/01/10 որոշման 23-րդ կետը, որտեղ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների գանգվածում:

- պետք է ուսումնասիրվի հակակշռող բավարար գործոնների առկայությունը, ինչպես օրինակ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դատարանության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հակակշռելու համար ձեռնարկված դատավարական միջոցները: Ընդ որում, այդ գործոնների առկայությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն այն գործերում, որոնցում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է հանդիսացել անձին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնցում դատարանը չի կարողացել հարակ պարզել՝ արդյոք ինչորո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարևոր նշանակություն է ունեցել, և այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է սահմանափակել է պաշտպանության կողմի միջոցները¹:

Հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ վերոնշյալ երեք փարբերից բաղկացած Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մշակված թեստն ունի առանցքային նշանակություն: Այդ երեք փարբերը փոխկապակցված են միմյանց հետ և հիմք են ծառայում որոշելու համար, թե ընդհանուր առմամբ ապահովվել է քրեական վարույթի արդարացիությունը, թե ոչ²: (...)³:

14. Մինևույն ժամանակ, հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցն անթույլատրելի ճանաչելու հնարավորության առկայությամբ Վճռաբեկ դատարանը կարևոր է համարում վկայակոչել Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածում թվարկված՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմքերի առկայությամբ: Մասնավորապես, այդ գործով Վճռաբեկ դատարանը նշել է հետևյալը. «Ապացույցների թույլարբելիության հարկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),

- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,

¹ Տե՛ս նույն վճռի 116-րդ, 145-րդ կետերը:

² Տե՛ս նույն վճռի 117-118-րդ կետերը:

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արդուշ Դուլյանի գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշման 17-19.1-րդ կետերը:

- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,

- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է սրացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հարակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի մարտի 16-ին ծանուցագիր է ուղարկել գործով դատակոչված վկա Է.Ղամբարյանի հասցեով՝ 2018 թվականի ապրիլի 4-ին կայանալիք դատական նիստին ներկայանալու համար, որը հետ է վերադարձվել՝ «տեղափոխված» նշումով,

- 2018 թվականի ապրիլի 4-ին և ապրիլի 26-ին Առաջին ատյանի դատարանը վկա Է.Ղամբարյանին բերման ենթարկելու մասին որոշումներ է կայացրել:

- ՀՀ ոստիկանության Դիլիջանի բաժնի պետը գրությամբ Առաջին ատյանի դատարանին տեղեկացրել է, որ Է.Ղամբարյանին հնարավոր չի եղել բերման ենթարկել դատարան՝ բնակության վայրից նրա բացակայության պատճառով: Հիշյալ գրությանը կցված՝ «Բնակարան այցելելու մասին» արձանագրության համաձայն՝ Է.Ղամբարյանը, 2018 թվականի մարտի 20-ից գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում՝ բուժման նպատակով: 2018 թվականի մայիսի 18-ին Առաջին ատյանի դատարանը հարցում է կատարել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն՝ խնդրելով տրամադրել Էդգար Ղամբարյանի սահմանահատումների վերաբերյալ տվյալները: Ստացված տեղեկություններով պարզվել է, որ 2018 թվականի մարտի 21-ին Էդգար Ղամբարյանը Բագրատաշենի սահմանային անցակետով լքել է ՀՀ տարածքը²,

- Առաջին ատյանի դատարանը, քննության առնելով վկա Է.Ղամբարյանի նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու և ապացույցների շարքից հանելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը, գտել է, որ ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը պաշտպանության միջոց կիրառված վկայի նախաքննական ցուցմունքների ստուգման մասով չի ապահովվել, վկայի բացակայությունն արդարացված չէ, նրան առերես հարցաքննելու ամբաստանյալի իրավունքն ապահովված չէ, վկայի նախաքննական ցուցմունքները ամբաստանյալի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում վճռական կշիռ ունեցող միակ փաստարկն են, հետևաբար դրանք անթույլատրելի են և չեն կարող դրվել ապացույցների շարքում³,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարայր Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ՏԳԻ2/0037/01/15 որոշման 31.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-6.3-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ամբաստանյալ Ռ.Հախվերդյանը հնարավորություն չի ունեցել իրացնելու իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու իր իրավունքը, որպիսի պարագայում պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքը չի ապահովվել: Վերաքննիչ դատարանն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանն այս առնչությամբ ձեռնարկել է անհրաժեշտ և բավարար ջանասիրություն, սակայն նշված անձի ներկայությունը դատական նիստին ապահովել չի հաջողվել: Վերաքննիչ դատարանը գտել է, որ պաշտպանության միջոց կիրառված վկայի ցուցմունքը միակ փաստարկն է և ունի վճռական կշիռ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով ամբաստանյալ Ռ.Հախվերդյանի մեղքը հաստատող ապացույցների գանգվածում, ինչն ինքնին բացառում է այն ապացույցների շարքում ներառելու իրավական հնարավորությունը¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ հակընդդեմ հարցման իրավունքի չապահովումը կարող է անհնարին դարձնել վկայի ցուցմունքը դատական ակտի հիմքում դնելը, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի իմաստով այն չի կարող դիտարկվել որպես դատավարական խախտում, որը կարող է հանգեցնել ապացույցի անթույլատրելիության: Մասնավորապես, հաշվի առնելով, որ հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը դատավարական երաշխիք է, այլ ոչ թե ապացույցի ձեռքբերման օրենքով նախատեսված դատավարական պահանջ, որի խախտումը կարող է հանգեցնել ապացույցի անթույլատրելիության, սույն գործով վկա Է.Ղամբարյանի նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչվել չէին կարող: Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը սխալ եզրահանգման է եկել՝ վկա Է.Ղամբարյանի նախաքննական ցուցմունքներն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչ Է.Ղամբարյանի նախաքննական ցուցմունքների օգտագործման հնարավորությանն անդրադառնալն անհրաժեշտ էր ձեռնարկել վկայի հայտնաբերմանն ուղղված համակողմանի բավարար միջոցներ, որոնք ըստ Վճռաբեկ դատարանի՝ ողջամտորեն լիարժեք չեն եղել: Այլ կերպ, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, դատարանը չի սպառել ողջամտորեն անհրաժեշտ միջոցները՝ վկայի գտնվելու կոնկրետ վայրը պարզելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ այն

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

փաստը, որ ներպետական դատարանները չեն կարողացել պարզել տվյալ վկայի գտնվելու վայրը կամ այն փաստը, որ վկան բացակայել է այն երկրից, որտեղ իրականացվել է գործով վարույթը, ինքնին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջների տեսանկյունից բավարար չէ: Այդ պահանջների համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության¹: Այդ քայլերը Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա այն պարտավորությունների մաս են կազմում, որոնք ուղղված են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունն ապահովելուն²:

16.1. Առաջին ատյանի դատարանը թեև որոշակի քայլեր ձեռնարկել է վկա Է.Ղամբարյանին գտնելու և նրան հակընդդեմ հարցման ենթարկելու համար, սակայն Վճռաբեկ դատարանի համոզմամբ՝ հնարավոր բոլոր միջոցները չեն ձեռնարկվել: Մասնավորապես, հաշվի առնելով, որ վկայի մայրը նշել է որդու՝ Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու հանգամանքը³, դատարանը միջոցներ չի ձեռնարկել նրան հարցաքննելու միջոցով որդու գտնվելու վայրը հստակեցնելու ուղղությամբ: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի գործով արտահայտված իրավական դիրքորոշումների⁴ լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնության՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի հիման վրա, որի մասնակից են և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ռուսաստանի Դաշնությունը: Ավելին, անհրաժեշտության դեպքում, Առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնության նաև 1959 թվականի ապրիլի 20-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Բրեական գործերով փոխադարձ օգնության մասին» Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև վերաբերելի այլ միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակներում:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gabrielyan v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, 81-րդ կետ, *Lučić v. Croatia* գործով 2014 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 5699/11, 79-րդ կետ:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gabrielyan v. Armenia* գործով 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, 81-րդ կետ:

³ Տե՛ս սույն որոշման 6.2-րդ կետը:

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ter-Sargsyan v. Armenia* գործով 2016 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 27866/10, 51-րդ կետ:

16.2. Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով ստորադաս դատարանի դատական ակտը, նույնպես ոչ իրավաչափ հետևություններ է արել տվյալ գործով հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման առնչությամբ Առաջին ատյանի դատարանի կողմից անհրաժեշտ և բավարար ջանասիրություն դրսևորած լինելու վերաբերյալ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ռ.Հախվերդյանի կողմից վկա Է.Ղամբարյանին գործի դատաքննության ընթացքում հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքի իրացման անհնարինության և վկայի ցուցմունքներն անթույլատրելի ապացույց ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

17. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանները ճիշտ չեն կիրառել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու (կոնֆրոնտացիայի) իրավունքի պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի հիման վրա, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և գործն Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում միայն կարող է ապահովվել գործում առկա ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության, դրանց գնահատման հարցերի ողջ ծավալով քննությունը, այդ թվում՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ վկա Է.Ղամբարյանի նախաքննական ցուցմունքների օգտագործման իրավաչափության գնահատումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Ռազմիկ Ռոմեոի Հախվերդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 3-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշումը բեկանել և գործն

ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Ռազմիկ Ռոմեոի Հախվերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

68. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0215/01/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպան՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
Լ.ՄԻՄՈՆՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սամվել Վաչագանի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի հուլիսի 27-ին ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12195417 քրեական գործը:

2017 թվականի օգոստոսի 8-ին Սամվել Վաչագանի Հովհաննիսյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ Ս.Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի մարտի 28-ի որոշմամբ Ս.Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2018 թվականի ապրիլի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը վերադրակվել է, նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 3 (երեք) տարի ժամկետով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ մեղադրող Հ.Մովսեսյանի և տուժող Ա.Հակոբյանի ներկայացուցիչ Հ.Մնացականյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը՝ պատժի մասով, փոփոխվել է, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառմամբ Ս.Հովհաննիսյանին ազատվել է նշանակված պատժից: Ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը, վերացվել է և վերջինս ազատվել է կալանքից՝ դատական նիստերի դահլիճում:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Սամվել Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-

րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ «2017 թվականի հուլիսի 25-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Սամվել Հովհաննիսյանը, քննությանը դեռևս չչարզված անձի հետ, Երևան քաղաքի Տիգրան Մեծ փողոցի 37-րդ հասցեում գործող «Կրպակ» սուպերմարկետի դիմաց, քույրեր Քսարիկ և Մուսաննա Միմոնյանների ուղեկցությամբ դեպի իրենց քայլող Անահիտ Հակոբյանի պարանոցին նկատելով աղամանդե քարերով խաչով ոսկյա շղթա, ձեռք են բերել նահանական համաձայնություն այն համաձայնակելու վերաբերյալ, որն իրագործելու համար կարարել են դերաբաշխում, ըստ որի՝ Սամվել Հովհաննիսյանը, մոտենալով Անահիտ Հակոբյանին, վերջինի կյանքի համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելով, այն է՝ հրել-զցելու և պարանոցից քաշել-սոկելու եղանակով բացահայտ համաձայնակել է ոսկյա շղթան և աղամանդե քարերով խաչը, ներել քննությանը դեռևս չչարզված անձին և դիմել փախուստի: Վերջինս, իր մոտ պահելով խաչով ոսկյա շղթան, աննկատ հետացել է դեպի վայրից՝ այդ կերպ Անահիտ Հակոբյանին պարճատելով առանձնապես խոշոր չափերի՝ 5.767.700 ՀՀ դրամի գույքային վնաս»:

6. Տուժող Անահիտ Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ խաչը 18 տարի առաջ գնել է ամուսինը՝ Իսպանիայի խանութներից մեկից, վճարել է 10000 եվրո, սակայն հավաստագիրն իր անունով է գրվել: Խաչը որևէ բրենդի չէր պատկանում, այլ քարերով էր պայմանավորված գինը: Համաձայնությունից հետո իրեն առաջարկվել է գումար, բայց ինքը չի համաձայնվել և ասել է, որ չի բողոքի, եթե խաչը վերադարձնեն: Երկրորդ անգամ այլ խաչ են առաջարկել, որից նույնպես հրաժարվել է, բայց եթե ամբողջ գումարը վերադարձնեին, ապա կվերցնե: Առաջարկել են մոտ 4000 ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ անգամ՝ խաչ: Հետագայում տուժողը հայտնել է, որ խաչի վճարումը կատարվել է կանխիկ եղանակով և վճարվել է պեսետով²:

6.1. Տուժողի մոտերայր, վկա Տիգրան Միմոնյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ս.Հովհաննիսյանին ձերբակալելուց հետո վերջինիս հայրը զանգահարել և ցանկացել է հանդիպել: Հայրը և եղբայրը եկել են իր աշխատանքի վայր և խնդրել են, որ Անահիտը չբողոքի՝ ասելով, որ ավտոմեքենան կվաճառեն և 2-ից 3 հազար ԱՄՆ դոլարի չափով գումար կվերադարձնեն: Ինքն ասել է, որ բացի Ս.Հովհաննիսյանից երկու հոգի նույնպես եղել են, կարող են միանան և ամբողջ պատճառված վնասը հատուցեն, ինչի արդյունքում Անահիտին կհամոզի, որպեսզի բողոքը ետ վերցնի: Անահիտի՝ Իսպանիա մեկնելուց մեկ օր առաջ կրկին զանգահարել են իրեն և ցանկացել հանդիպել: Հանդիպմանը մասնակցել է 6-ից 7 հոգի: Ասել են, որ շղթան առկա է, սակայն խաչը, այսպես ասած, «ոռախող» են արել: Խաչի համար գումար են առաջարկել, սակայն ինքը

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 186-188:

² Տե՛ս դատական նիստերի արձանագրությունները:

պահանջել է նույն խաչը, որին ի պատասխան նշել են, որ կարող են նման խաչ սարքել: Երրորդ անգամ հանդիպման ժամանակ իրենից ուզել են խաչի հավաստագիրը՝ նույնպիսի խաչ պատվիրելու համար: Ամբաստանյալի հայրն ասել է, եթե հավաստագրում գումարի չափ նշված լինի, ապա տունը կվաճառի և վնասը կվերականգնի¹:

6.2. Վկա Կարապետ Թումանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է ոսկու աշխարհում՝ որպես քարերի տեղադրման մասնագետ: 2017 թվականի հունիս կամ հուլիս ամսին ինքն առանձնացրել է անձանոթ անձի կողմից բերված խաչի քարերը: Խաչը մոտ 4 գրամ էր, քարերը՝ 19 կամ 20 հատ, մեկը մեծ էր՝ արժեքը մոտ 180 ԱՄՆ դոլար, իսկ փոքրերից յուրաքանչյուրի արժեքը՝ 20 ԱՄՆ դոլար, առանց քարերի խաչի արժեքը՝ մոտ 120 ԱՄՆ դոլար: Իրեն ներկայացված լուսանկարում պատկերված խաչը նման է այն խաչին, որից առանձնացրել էր քարերը: Քանի որ լուսանկարը խամրած է, ոչ հստակ, սակայն մոտ 90 տոկոսով կարող է ասել, որ նույն խաչն է²:

6.3. Առգրավում կատարելու մասին 2017 թվականի նոյեմբերի 18-ի արձանագրության համաձայն՝ Ա.Հակոբյանի կողմից ներկայացված խաչի սերտիֆիկատի (հայերեն թարգմանված) պատճենի վերևի հատվածում գրված է «ROGER M», դրա ներքևի հատվածում՝ «CERTIFIED APPRAISAL»: Նշված է «3.00 carats», որը ընդհանուր քարերի չափսն է և ոսկու քաշը՝ 5.80 գրամ: Առկա է «Անահիտ Հակոբյան» անգլերեն գրառումը և «10.000 եվրո» գրառումը: Նշված է նաև այդ ժամանակվա երկրի գումարով՝ «pesetas», որը կազմել է 1.663.860³:

6.4. Ոսկյա խաչի հավաստագրի վերաբերյալ կատարված էլեկտրոնային հարցման պատասխանի համաձայն՝ «ROGER M» խանութն էլեկտրոնային նամակով հաստատել է, որ Ա.Հակոբյանն իրենց հաճախորդն է և նա գնել է նշված զարդը հավաստագրում նշված գնով և ամսաթվին⁴:

6.5. «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված 2018 թվականի օգոստոսի 7-ի գրության համաձայն՝ թիվ ԵԴ/0215/01/18 քրեական գործով գնահատման ենթակա խաչի շուկայական արժեքը հնարավոր է որոշել միայն դրա հետազոտության արդյունքում՝ իրեղեն ապացույցի առկայության դեպքում, ինչը հնարավորություն կտա հստակ պատկերացում կազմել խաչի մետաղի տեսակի, մետաղի հարգի, տեղադրված ադամանդների որակական հատկանիշների, ինչպես նաև խաչի ապրանքային տեսքի և ապրանքային վիճակի վերաբերյալ: Իսկ խաչի վերաբերյալ տրամադրված լուսանկարները և հավաստագիրն

¹ Տե՛ս նաև դատական նիստերի արձանագրությունները:

² Տե՛ս նաև դատական նիստերի արձանագրությունները:

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 107-108:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթեր 126-127:

ապրանքագիտական փորձաքննության համար օբյեկտ չեն հանդիսանում¹:

6.6. «ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ստացված 2018 թվականի օգոստոսի 17-ի գրության համաձայն՝ սովորաբար թանկարժեք քարերով զարդի շուկայական արժեքը պարզվում է ապրանքագիտական, նյութագիտական և գեմոլոգիական համալիր փորձաքննության իրականացման միջոցով, որի շրջանակներում պարզվում է զարդի գնագոյացման համար էական նշանակություն ունեցող թանկարժեք մետաղի տեսակը, տոկոսային պարունակությունը, պատրաստվածքի տեսակը և առանձնահատկությունները, կատարման բարդությունը, քարերի չափային տվյալները, մաքրությունն ու ապրանքային այլ բնութագրերը (տաշվածքի տեսակ, նիստերի քանակ և այլն), իսկ բրենդային արտադրանքի արժեքի պարզման համար հաշվի են առնվում նաև զարդի վրայի մակնշումները և ուղեկցող փաստաթղթերում առկա տվյալները:

Հարկ է նշել, որ առանձին դեպքերում՝ զարդի բացակայության պայմաններում, ապրանքագիտական փորձաքննության միջոցով զարդի շուկայական արժեքի պարզումը հնարավոր է իրականացնել զարդի մետաղական բաղադրակազմի և քաշի, կրող քարերի տեսակի, չափերի, քանակի, մաքրության աստիճանի և վերը նկարագրված մյուս անհրաժեշտ տվյալների պարունակությամբ համապատասխան փաստաթղթերի (եղակետային տվյալների) փորձաքննությանը տրամադրելու պարագայում՝ փաստաթղթերի տվյալների շուկայական արժեքի պարզման միջոցով²:

7. Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով արձանագրել է հետևյալը. «(...) Թեև Դատարանը հաստատել է համարեց, որ Սամվել Հովհաննիսյանի կողմից հափշտակվել է ոսկյա շղթա և խաչ, սակայն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե խաչի գնահատման տեսանկյունից Սամվել Հովհաննիսյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, թե ոչ:

(...) Տվյալ դեպքում Դատարանի համար ընդունելի է պաշտպանական կողմի այն դատողությունը, որ Անահիտ Հակոբյանից հափշտակված գույքի չափը չի հաստատվում, քանի որ նախաքննության ընթացքում խաչը չի հայտնաբերվել և դրա չափը որոշվել է գույք ներկայացված հավաստագրով և փուժողի հայրնաձեռն փոխարինման վրա:

Քրեական գործի նյութերի, այդ թվում՝ մեղադրական եզրակացության հիմքում դրված ապացույցների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հափշտակված խաչի արժեքը որոշելու համար ծանրակշիռ դերակատարություն է ունեցել փուժողի ներկայացրած՝ Իսպանիայում գրնվող խանութի կողմից տրված հավաստագիրը (սերտիֆիկատը), որում նշված

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 181:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 184:

է վաճառված խաչի վերաբերյալ որոշակի նկարագրություն: Իսկ խաչի գնորդը 2000 թվականին հանդիսացել է Անահիբ Հակոբյանը և խաչը գնվել է 10.000 եվրո կամ 1.663.860 պետեր արժեքով:

Նշված փաստաթղթի շուրջ նախաքննական մարմնի հարցմանն ի պատասխան՝ «ROGER M» խանութն էլեկտրոնային նամակով պատասխանել է, որ Անահիբ Հակոբյանն իրենց հաճախորդն է և նա գնել է նշված խաչը հավասարազրուց նշված գնով և ամսաթվին:

Նախ պետք է նկատել, որ ներկայացված հավասարագիրն ունի 18 փարվա վաղեմություն և Դատարանի համար պարզ չէ, թե «ROGER M» ինչպիսի գնային քաղաքականություն ունեցող խանութ է և արդյոք այդպեղ գրնվող ապրանքների արժեքները համապատասխանում են միջազգային շուկայի արժեքներին, թե ոչ, քանի որ հնարավոր է այդ խանութում գրնվող ապրանքները, որոշակի առանձնահատկություններով պայմանավորված, անսահման քարձր գներ ունեն (ունեցել) ընդհանուր շուկայական արժեքների համեմատ: Ընդ որում, Գործող Դատարանում հայտնեց, որ իր խաչը որևէ բրենդային, հեղինակային արտադրանք չի եղել:

Դատարանը հարկ է համարում նշել, որ հափշտակված խաչն առկա չէ և հերևաբար առարկայով փորձաքննություն իրականացնելը անհնարին է: Իսկ րվյալ դեպքում խաչը գնվել է 18 փարի առաջ և ամբողջ փարիների ընթացքում Գործողի կողմից մշտապես օգտագործվել է: Այսինքն՝ այս պայմաններում հնարավոր չէ նաև որոշել խաչի օգտագործումից մաշվածության, հնարավոր վնասվածության հանգամանքը:

Այնուամենայնիվ, Դատարանը հարցումներ է կարարել համապատասխան փորձագիտական կենտրոններ՝ պարզելու, թե արդյոք հնարավոր է առկա հավասարազրուց փորձաքննություն իրականացնել, սակայն պատասխանվել է, որ առանց հափշտակված առարկայի հնարավոր չէ փորձաքննություն կարարել, միայն առանձին դեպքերում՝ զարդի մետաղական բաղադրակազմի, քաշի, կրող քարերի տեսակի, չափերի, քանակի, մաքրության աստիճանի և այլ անհրաժեշտ րվյալների պարունակությամբ փաստաթղթերի առկայության դեպքում հնարավոր կլինի իրականացնել փորձաքննություն: Այս դեպքում հափշտակված խաչի մասով նման տեղեկություններ հավասարազրուց առկա չեն:

Բացի այդ, խաչի արժեքի գնահատման անհնար լինելու մասով Դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ հավասարազրուց որպես խաչի որամական արժեք նշված է նաև եվրո արտադրամի առկայությունը, սակայն, ըստ ինտերնետային տեղեկատվության (Վիքիպեդիա, <https://www.ecb.europa.eu/euro/intro/html/index.en.html>), եվրոն համաշխարհային ֆինանսական շուկային որպես դրամական արժեք, անկանխիկ գումար ներկայացվել է 1999 թվականին, սակայն թղթադրամներն ու

մեղադատարանները շրջանառության մեջ են դրվել միայն 2002 թվականի հունվարի 1-ից: Այսինքն՝ մինչ 2002 թվականը եվրոյով կանխիկ վճարում ողջամորթեն չէր կարող իրականացվել:

Հերևաբար, Դատարանի համար անհասկանալի է, թե ինչու է հավասարագրում նշվել եվրոյի մասին, եթե եվրոյով կանխիկ վճարում չէր կարող արվել: Իսկ պետություն վճարելու դեպքում, ինչու է նաև եվրո գրված, այն դեպքում, թե ինչպես է որոշվել պետություն-եվրո փոխարժեքը:

(...)

Այսպիսով Դատարանը, սրուգելով, վերլուծելով և գնահատելով ինչպես վերը նշված, այնպես էլ քրեական գործում առկա մյուս ապացույցներն իրենց համակցությամբ, գրնում է, որ չի հաստատվում Սամվել Հովհաննիսյանի կողմից Անահիտ Հակոբյանից հափշտակված խաչի արժեքը, իսկ նշված պայմաններում Դատարանը չի կարող որոշել այն համապատասխանում է հափշտակության առանձնապես խոշոր չափին կամ ընդհանրապես որևէ այլ չափի, թե ոչ, քանի որ մտրավոր չափի որոշումը րվյալ իրավիճակում կդիտվի ոչ այլ ինչ, քան ենթադրություն:

(...) Այսպիսով Դատարանը գրնում է, որ Սամվել Հովհաննիսյանի կարարած արարքում կողոպուտը որակյալ դարձնող՝ առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու հարկանիշը բացակայում է (...)»¹:

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ևս, քանի որ հափշտակված ոսկյա խաչը հայրնարերված չէ, իսկ բացակայության պայմաններում փորձարնություն կարարումը անհնարին է եղել, այսինքն, հափշտակված ոսկյա խաչի պայմաններում հասցված վնասի չափը պարզ չէ, ուարի, այս պայմաններում հնարավոր չէ հանգել հերության, որ ամբաստանյալի կողմից կարարված հափշտակությունը առանձնապես խոշոր չափերի է:

(...) Ինչ վերաբերում է բողոքներում բարձրացված այն հանգամանքին, որ գողացված խաչի արժեքի վերաբերյալ գործում, բացի րուժողի հայրարարությունից, առկա են եղել մի շարք այլ ապացույցներ, մասնավորապես՝ «ROGER M» խանութից սրացված հավասարագիրը, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ, չնայած այն հանգամանքին, որ իսկապես վերոնշյալ խանութից սրացվել է հավասարագիր, որով հավասարվել է, որ Անահիտ Հակոբյանը եղել է իրենց գնորդը և նշված է եղել վաճառված խաչի վերաբերյալ որոշակի նկարագրություն և այն, որ խաչը գնվել է 10.000 եվրո կամ 1.663.860 պետություն արժեքով, սակայն ներկայացված հավասարագիրն ունի 18 րարվա վաղեմություն, պարզ չէ «ROGER M» խանութն ինչպիսի գնային քաղաքականություն ունեցող խանութ է: Բացի այդ, պարզ չէ նաև խաչի գնման ժամանակ ինչպիսին է

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 191-211:

եղել էվրոյի հարաբերակցությունը դրամի հետ, քանի որ հավասարազրույթում որպես խաչի դրամական արժեք նշված է եվրոն:

Եվ միաժամանակ պետք է նշել, որ խաչը գնվել է 18 փարի առաջ և փուժողի կողմից մշտապես օգտագործվել, ուստի, պարզ չէ նաև խաչի մնացածության և հնարավոր վնասվածության աստիճանը և, թե այդ պայմաններում ինչպիսին կլինի խաչի արժեքը:

Իսկ ինչ վերաբերում է մեղադրողի այն պնդմանը, որ Առաջին արյանի դատարանը եվրոյի մասին րեղեկարվություն սրացել է Վիքիպեդիա կայքից, մինչդեռ պետք է հարցումներ կատարել ՀՀ Կենտրոնական բանկ, ապա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այն համարվում է հանրահայտ փաստ, իսկ հանրահայտ փաստերը ապացուցման կարիք չունեն, ուստի, րվյալ պարագայում հարցում կատարելու անհրաժեշտություն չկար:

Այսպիսով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սամվել Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղաազրվող արարքը նույն օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերատրակելու վերաբերյալ Առաջին արյանի դատարանի հետևություններն իրավաչափ են և հիմնավոր¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների իրավական վերլուծությունները հիմնավոր և օրինաչափ չեն, դրանք չեն բխում Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներից, հակասության մեջ են մտնում ապացույցների գնահատման, դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հետ:

9.1. Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանների այն իրավական եզրահանգումները, որ հավաստագրում որպես խաչի դրամական արժեք նշված է նաև «եվրո» տարադրամի առկայությունը, մինչդեռ, ըստ համացանցային տեղեկության («Վիքիպեդիա», <https://www.ecb.europa.eu/euro/intro/html/index.en.html>), «եվրո»-ն համաշխարհային ֆինանսական շուկային որպես դրամական արժեք, անկանխիկ գումար ներկայացվել է 1999 թվականին, սակայն թղթադրամներն ու մետաղադրամները շրջանառության մեջ են դրվել միայն 2002 թվականի հունվարի 1-ից, այսինքն՝ մինչ 2002 թվականը եվրոյով կանխիկ վճարում ողջամտորեն չէր կարող իրականացվել, առաջադրված մեղադրանքը կասկածի տակ դնող հանգամանք չի կարող դիտվել այն պատճառաբանությամբ, որ նշված դրամական միջոցի կանխիկ շրջանառության վերաբերյալ «Վիքիպեդիա»

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 82-117:

ինտերնետային կայքում առկա տեղեկությունը չի կարող որևէ նշանակություն ունենալ հափշտակված ոսկյա զարդի արժեքը որոշելու համար այն պարագայում, երբ տուժող Ա.Հակոբյանը դատարանում ցուցմունք է տվել, որ վճարումը իրականում կատարվել է իսպանական պետետով:

Բողոքաբերը եզրահանգել է, որ Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներն իրենց համակցության մեջ առավել քան բավարար չափով հիմնավորում են, որ Ս.Հովհաննիսյանը կողոպուտի եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գույք:

10. Բացի այդ, բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի՝ որպես բողոքարկված դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգող ատյանի դատական ակտի պատճառաբանվածությունը ենթադրում է, որ դրանում պետք է հստակ նշվեն, թե դատարանը կոնկրետ ինչպիսի փաստական տվյալների ուժով է հիմնավորված համարում Առաջին ատյանի դատարանի դատավճիռը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն, ըստ էության, վերարտադրելով Առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցները, առանց որևէ իրավական վերլուծություն և հիմնավոր եզրահանգում կատարելու, չպատճառաբանված որոշմամբ քրեաիրավական որակման մասով անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել դատական սխալ, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարած անձը քրեական պատասխանատվության և պատժի է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, ինչի արդյունքում անհիմն ազատվել է նաև իր նկատմամբ նշանակված պատժից:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյո՞ք Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերաորակելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորը, ինչպես նաև հերաքննության մարմինը, քննիչը, դատարանագր ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում (...)

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հարկանիշները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ սրուզման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն սրուզելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հերաքմանության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

13.1. Մեջբերված նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդա բության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս (հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարելիզող գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով¹:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կողմ-պոլոր՝ ուրիշի գույքի բացահայտ համալրականությունը (...):»:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08, Հմայակ Դավթյանի գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

2. Կողոպույրը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

(...)

4) զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով (...):

3. Կողոպույրը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով (...):»

15. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ «հափշտակություն» հասկացությունը ենթադրում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Հափշտակության դեպքում անձի՝ ուրիշի գույքն ապօրինի կերպով իրենը դարձնելը բացասական ազդեցություն է ունենում դրան օրինական հիմքերով տիրապետողի գույքային ֆոնդի վրա, ինչն էլ իրենից ենթադրում է որոշակի նյութական վնաս: Հափշտակության առարկան գույքն է՝ այն իրը (առարկան), որում արտացոլվում է մարդկային աշխատանք և որն իրենից նյութական արժեք է ներկայացնում, ինչպես նաև դրամական միջոցները, արժեթղթերն ու գույքային իրավունքները: Վնասի չափն էլ, որպես կանոն, որոշվում է հափշտակված գույքի՝ դատասարանքագիտական փորձաքննությամբ որոշված շուկայական միջին արժեքով: Գույքի վաճառքի գինը չի կարող մեխանիկորեն հիմք ընդունվել հափշտակության չափը որոշելու համար, քանի որ գույքի շուկայական արժեքն ու դրա վաճառքի գինը ոչ բոլոր դեպքերում են համընկնում: Վաճառքի գինը կարող է տարբերվել՝ բարձր կամ ցածր լինել շուկայական արժեքից²:

16. Վերահաստատելով մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողոպուտի՝ որպես նյութական հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հետևանքը՝ նյութական վնասը, որը պատճառվում է այլ անձին պատկանող և որոշակի արժեք ներկայացնող գույքը վերցնելու, այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելու արդյունքում:

16.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողոպուտի հանցակազմի դեպքում հափշտակության առարկայի նյութական արժեք ներկայացնելը, ընդհանրապես, և դրա կոնկրետ արժեքը, մասնավորապես,

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գավիթ Ղամբարյանի և մյուսների գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշումը, Գրիգոր Ղլիջյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԴ5/0005/01/14 որոշումը:

² Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Գևորգ Մանգասարյանի գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ1/0070/01/17 որոշման 13-րդ կետը և Վիկտոր Հայրապետյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ՍԴ/0036/01/16 որոշման 18-րդ կետը:

քրեական գործով ապացուցման ենթակա կարևոր հանգամանքներ են, որոնք պետք է հաստատվեն քրեական գործում առկա վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույցներով: Վերոնշյալ հանգամանքների պարզումը էական նշանակություն ունի անձի արարքում կողոպուտի՝ որպես նյութական հանցակազմի առկայությունը, դրա ծանրացնող հանգամանքների (խոշոր չափերով կամ առանձնապես խոշոր չափերով կատարելը) առկայությունը հավաստելու, ըստ այդմ՝ անձի արարքին ճիշտ իրավական որակում տալու, ինչպես նաև տուժողի իրավունքների համաչափ պաշտպանություն ապահովելու տեսանկյունից:

16.2. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վնասի չափը, որպես կանոն, որոշվում է հափշտակված գույքի՝ դատաապրանքագիտական փորձաքննությամբ որոշված շուկայական միջին արժեքով: Այնուամենայնիվ, փորձաքննության միջոցով գույքի արժեքը որոշելու անհնարինությունը վարույթն իրականացնող մարմնին չի ազատում դրա արժեքը պարզելու պարտականությունից: Նման դեպքերում, հափշտակության առարկայի արժեքը պետք է որոշել քրեական գործում առկա վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ այլ ապացույցների միջոցով:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա, քննությամբ չպարզված անձի հետ նախնական համաձայնությամբ, Ա.Հակոբյանի կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով, բացահայտ հափշտակել է ոսկյա շղթան և ադամանդե քարերով խաչը, այդ կերպ Ա.Հակոբյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 5.767.700 (հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի գույքային վնաս¹:

Առաջին ատյանի դատարանը, Ս.Հովհաննիսյանին մեղսագրված արարքը վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, հաստատված է համարել, որ Ս.Հովհաննիսյանի կողմից հափշտակվել է ոսկյա շղթա և խաչ, սակայն միաժամանակ գտել է, որ չի հաստատվում Ս.Հովհաննիսյանի կողմից Ա.Հակոբյանից հափշտակված խաչի արժեքը²:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքները, գտել է, որ Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերաորակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են և հիմնավոր³:

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-16.2-րդ կետերում շարադրված իրավական դրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրվող արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերաորակելիս, պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա փաստական տվյալները:

Նախ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները հաստատված են համարել ամբաստանյալի կողմից կողոպուտի միջոցով շղթայի հետ միասին նաև խաչը հափշտակելու փաստը: Ընդ որում, ըստ մեղադրանքի, խաչը պատված է եղել ադամանդներով և այդ հանգամանքը ստորադաս դատարանների կողմից կասկածի տակ չի դրվել:

Մտացվում է, որ մի կողմից Ս.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել, բացի ոսկյա շղթայից, նաև ադամանդե քարերով խաչի հափշտակության համար, սակայն մյուս կողմից՝ ստորադաս դատարանները գտել են, որ ադամանդե քարերով խաչը իրենից նյութական արժեք չի ներկայացնում: Այլ կերպ, ըստ ստորադաս դատարանների՝ տուժողից բացահայտ եղանակով կատարվել է որևէ արժեք չունեցող, այլ կերպ՝ «0.00» ՀՀ դրամ արժեքով ադամանդե քարերով խաչի հափշտակություն, որպիսի մոտեցումը Վճռաբեկ դատարանի համար անընդունելի է:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ անձի արարքում հափշտակության առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլնի, ապացուցել հափշտակության առարկայի՝ նյութական արժեք ներկայացնելու հանգամանքը:

18.1. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները խաչի արժեքի գնահատման անհնարինությունը հինավորել են նրանով, որ խաչի հավաստագրում որպես վճարամիջոց նշված է «եվրո» դրամային արժույթը, մինչդեռ «եվրո»-ն՝ որպես անկանխիկ արժույթի տեսակ, ներդրվել է 1999 թվականին, իսկ թղթադրամներն ու մետաղադրամները շրջանառության մեջ են դրվել միայն 2002 թվականի հունվարի 1-ից: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ «եվրո»-ն, այնուամենայնիվ, որպես անկանխիկ արժույթի տեսակ, ներդրվել է 1999 թվականին, հետևաբար 2000 թվականին հավաստագրում զարդի արժեքը նաև եվրոյով նշված լինելը չի կարող խնդրահարույց համարվել¹: Հարկ է նշել, որ նույնիսկ զարդի արժեքը եվրոյով նշված լինելը խնդրահարույց դիտելու պարագայում, ստորադաս դատարաններն ունենին հնարավորություն՝ ադամանդե քարերով խաչի արժեքը որոշել հավաստագրում² նշված մյուս

¹ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը:

դրամային արժույթի՝ պետետի միջոցով, հատկապես որ տուժողի ցուցմունքի համաձայն՝ վճարումը կատարվել է կանխիկ եղանակով՝ պետետով¹: Բացի այդ, Վճարելի դատարանն իրավաչափ չի համարում Վերաքննիչ դատարանի այն դատողությունը, որ պարզ չէ, թե խաչի գնման ժամանակ ինչպիսին է եղել «եվրո»-ի փոխարժեքը ՀՀ դրամով, քանի որ դատարանները զրկված չէին սեփական նախաձեռնությամբ քննարկվող հանգամանքի կապակցությամբ փաստական տվյալներ ձեռք բերելու և գնահատելու հնարավորությունից:

18.2. Վերոգրյալի հաշվառմամբ Վճարելի դատարանը գտնում է, որ համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի հետևություններին՝ ադամանդե քարերով խաչի արժեքը որոշելու անհնարինության վերաբերյալ, Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա ապացույցները և հանգել է չհիմնավորված հետևության այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցների առկայության պարագայում ստորադաս դատարաններն օբյեկտիվորեն հնարավորություն են ունեցել փաստելու ադամանդե քարերով խաչի՝ նյութական արժեք ներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև պարզելու դրա կոնկրետ արժեքը²:

19. Անփոփելով վերոշարադրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն ամբաստանյալ Ս.Հովհաննիսյանին մեղավոր ճանաչելով նաև ադամանդե քարերով խաչի հափշտակության մեջ՝ առանց որոշելու դրա արժեքը, նրան մեղսագրված արարքի որակման հարցում հանգել են չհիմնավորված հետևության:

Այսպիսով, Վճարելի դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել ադամանդե քարերով խաչի արժեքի վերաբերյալ գործում առկա ապացույցները՝ վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյունից: Բացի այդ, ստորադաս դատարանները, փաստելով, որ խաչի հավաստագրում առկա չեն փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ, հնարավոր չեն համարել ադամանդե քարերով խաչի արժեքը որոշելու նպատակով փորձաքննություն նշանակելը՝ անտեսելով «ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գրությունն ու հավաստագրում ադամանդների չափի և ոսկու քաշի վերաբերյալ որոշակի ելակետային տվյալների առկայությունը³:

20. Հետևաբար, Ս.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով վերադրակելու մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-6.4-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 6.3-րդ և 6.6-րդ կետերը:

21. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածների խախտումներ, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի ոչ ճիշտ կիրառման: Այսինքն՝ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում և քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հիմք են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկել համար:

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, պետք է հանգի համապատասխան հետևության՝ աղանանդե քարերով խաչի արժեքի, իսկ որպես արդյունք՝ Ս.Հովհաննիսյանի արարքի իրավական որակման կապակցությամբ:

23. Անդրադառնալով ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց պետք է ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սամվել Վաչագանի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալ Սամվել Վաչագանի Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

69. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0259/01/16

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝
պաշտպաններ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Տ.ԵՆՈՔՅԱՆԻ
Հ.ԲԱԲԱՅԱՆԻ
Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալներ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի և Արման Լևոնի Մարջանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի և ամբաստանյալ Հ.Բարսեղյանի պաշտպան Հ.Բաբայանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քննչական կոմիտեի՝ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա.Պետրոսյանի՝ 2015 թվականի օգոստոսի 18-ի որոշմամբ հարուցվել է թիվ 15145315 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

ՀՀ քննչական կոմիտեի՝ Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ

քննիչ Ս.Զաղոյանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցվել է թիվ 12803315 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2015 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ Հենրիկ Արթուրի Բարսեղյանը թիվ 12803315 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով ու նույն օրվա մեկ այլ որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ Հ.Բարսեղյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2016 թվականի հունվարի 25-ին Արման Լևոնի Մարջանյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին և նույն օրը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի հունվարի 27-ի որոշմամբ Ա.Մարջանյանը թիվ 12803315 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ կետերով, և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի հունվարի 27-ի որոշմամբ Ա.Մարջանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի մարտի 9-ի որոշմամբ Հ.Բարսեղյանը թիվ 15145315 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննությունը շարունակելով 12803315 համարով:

2016 թվականի սեպտեմբերի 27-ին Ա.Մարջանյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ 2016 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ Ա.Մարջանյանի վերաբերյալ մասն անջատվել է թիվ 12803315 քրեական գործից, որին շնորհվել է 69108616 համարը:

2016 թվականի հոկտեմբերի 6-ին թիվ 12803315 քրեական գործով

հետախուզման մեջ գտնվող Հ.Բարսեղյանը հայտնաբերվել է:

2016 թվականի հոկտեմբերի 7-ին թիվ 69108616 քրեական գործն ըստ մեղադրանքի Արման Լևոնի Մարջանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), որին շնորհվել է ԵԿԴ/0259/01/16 համարը:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 1-ի որոշմամբ Հ.Բարսեղյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 9-ի որոշմամբ Հ.Բարսեղյանի վերաբերյալ մասն անջատվել է թիվ 12803315 քրեական գործից, որին շնորհվել է 69100517 համարը:

2017 թվականի մարտի 20-ին թիվ 69100517 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որին շնորհվել է ԵԿԴ/0063/01/17 համարը:

2. Թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի դատավճռով Ա.Մարջանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Վերը նշված դատական ակտի դեմ Ա.Մարջանյանի պաշտպանի ներկայացրած վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 27-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2.1. Թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 1-ի դատավճռով Հ.Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 117-րդ հոդվածով:

Վերը նշված դատավճռի դեմ մեղադրողի ներկայացրած վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2.2. 2018 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Ա.Ազարյանի, մասնակցու-

թյամբ՝ դատավորներ Ն.Հովակիմյանի, Մ.Պետրոսյանի) որոշում է կայացրել Հ.Բարսեղյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործը հանձնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (նախագահությամբ՝ դատավոր Ս.Մարաբյանի, մասնակցությամբ՝ դատավորներ Տ.Սահակյանի, Ս.Համբարձումյանի) վարույթում գտնվող՝ Ա.Մարջանյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին միացնելու և համատեղ ընթացք տալու հարցը քննության առնելու համար:

2.3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ թիվ ԵԿԴ/0063/01/17 և ԵԿԴ/0259/01/16 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

3. Վերաքննիչ դատարանը 2019 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 7-ի և թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 1-ի դատավճիռները բեկանել է, և քրեական գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը և ամբաստանյալ Հ.Բարսեղյանի պաշտպան Հ.Բաբայանը: Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից Արման Մարջանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիրավորությամբ խմբի կազմում իր մոտ ապօրինի պահվող հրազենի գործադրմամբ կատարել է սպանության փորձ (...)»¹:

5.1. Նախաքննության մարմնի կողմից Հենրիկ Բարսեղյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ կետերով, 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա խմբի կազմում կատարել է խուլիգանություն և բացի այդ երկու և ավելի անձանց ապօրինաբար կյանքից զրկելու դիրավորությամբ խմբի կազմում իր մոտ ապօրինի պահվող հրազենի գործադրմամբ կատարել է սպանության փորձ (...)»²:

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործ, հատոր 3, թերթեր 363:

² Տե՛ս թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործ, հատոր 8, թերթեր 399-400:

6. Թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի փետրվարի 7-ի դատավճռի համաձայն՝ «(...) Գնահատելով դատաքննությանը հետազոտված (...) ապացույցները՝ Դատարանը հաստատել է համարեց այն, որ ամբաստանյալ Արման Մարջանյանը մեղավորությամբ կատարել է հանցավոր արարքներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հարկանիշներին: (...)»¹:

7. Թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 1-ի դատավճռի համաձայն՝ «(...) /Դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի կողմից, նրա մեղավորությամբ, խմբի կազմում ապօրինաբար երկու և ավելի անձանց դիտարկությամբ կյանքից զրկելու փորձ կատարելն ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և չի համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետով նախատեսված հանցագործության հարկանիշներին: Ապացուցված է ամբաստանյալ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի կողմից, նրա մեղավորությամբ, խմբի կազմում, դիտարկությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելը, նրա այդ արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցագործության հարկանիշներին: Բացի այդ՝ ապացուցված է Հենրիկ Բարսեղյանի կողմից, խմբի կազմում, դիտարկությամբ, երկու անձանց մարմնական վնասվածքներ պատճառելը, որոնք վրանգավոր չեն կյանքի համար և յուրաքանչյուրի պարագայում չեն առաջացրել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, բայց առաջացրել են տուժողներից յուրաքանչյուրի առողջության րևական քայքայում, այն է՝ երկու անձանցից յուրաքանչյուրին պատճառվել է միջին ծանրության վնաս: Հենրիկ Բարսեղյանի այդ արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

(...)

Ապացուցված է նաև Հենրիկ Բարսեղյանի կողմից մեկ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը, նրա այդ արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Հենրիկ Բարսեղյանի կողմից ապօրինի կերպով հրազեն պահելը, նրա այդ արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս Թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործ, հատոր 6, թերթեր 88-111:

մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Հենրիկ Բարսեղյանի կողմից, խմբի կազմում խուլիգանություն կատարելը, որը զուգորդվել է ուրիշի գույքը վնասելով, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապարասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հարկանիշներին (...):»¹:

8. Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 7-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում ամբաստանյալ Ա.Մարջանյանի պաշտպանը փաստել է. «(...) Դատարանը դատավճիռ կայացնելիս [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի] 127-րդ հոդվածի դրույթներին համապարասխան չի հետազոտել և գնահատել դատարանում հետազոտված ապացույցները (...), ինչպես նաև չփարատված կասկածները չի մեկնարանել հոգուր Ա.Մարջանյանի, որի արդյունքում էլ տեղի է ունեցել դատական սխալ, որն էլ ազդել է գործի ելքի վրա: (...) [ՀՀ քրեական օրենսգրքի] 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերը սխալ [են] վերլուծվել և գնահատվել, այդ հոդվածը Արման Մարջանյանի նկատմամբ չպետք է կիրառվեր (...): Արդյունքում, բողոքաբերը խնդրել է. «Ամբաստանյալ Արման Լևոնի Մարջանյանի վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.02.2018թ. ԵԿԴ/0259/01/16 դատավճիռն ամբողջությամբ բեկանել, ընդհանուր իրավասության դատարանում հետազոտված և ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա կայացնել նոր դատական ակտ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ եթե վերաքննիչ դատարանը գտնի, որ նոր դատական ակտ կայացնելու համար փաստական հանգամանքները բավարար չեն, բեկանել դատավճիռը և ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ մեկ այլ կազմով քննության»²:

9. Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 1-ի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքում մեղադրողը փաստել է. «(...) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 2018 թվականի հունիսի 1-ին կայացված դատավճռով թույլ է տվել դատական սխալ՝ ակնհայտ կերպով խախտվել են ինչպես նյութական, այնպես դատավարական իրավունքի նորմերը, ինչն անմիջականորեն ազդել է գործի ելքի վրա: (...) [Մ]ույն դատավճռով ապացույցները պարզաճ չեն գնահատվել (...):» Արդյունքում, բողոքաբերը խնդրել է. «Ամբաստանյալ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի նկատմամբ ԵԿԴ/0063/01/17 գործով 2018 թվականի հունիսի 1-ին կայացված

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործ, հատոր 15, թերթեր 97-124:

² Տե՛ս թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործ, հատոր 6, թերթեր 123-138:

դատավճիռը բեկանել մասնակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 117-րդ հոդվածով նրան մեղավոր ճանաչելու մասով և վերջինիս մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նշանակել համաչափ պարիժ, իսկ դատավճիռը, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, թողնել անփոփոխ»¹:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի՝ «Քրեական գործը վարույթ ընդունելու, թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին միացնելու և Վերաքննիչ քրեական դատարանի դատական նիստում քննության նշանակելու մասին» որոշման համաձայն՝ «(...) /Դ/եռևս նախաքննության փուլում քրեական գործից առանձնացվել է մաս և առանձին ուղարկվել դատարան, որի արդյունքում նույն փաստական հանգամանքների և ապացուցողական զանգվածի պայմաններում փարբեր դատավորների կողմից կայացվել են դատավճիռներ և ամբաստանյալների արարքներին տրվել են փարբեր քրեաիրավական գնահատականներ:

Շավալին և Օֆիցերովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2016 թվականի փետրվարի 23-ի վճռում Եվրոդատարանը ՄԻԵԿ 6-րդ հոդվածի խախտում է արձանագրել իրավունքի տեսանկյունից նույնական փաստական հանգամանքներով գործով՝ նշելով հետևյալը.

«(...) Դատարանը հնարավոր է համարում իրավիճակ, երբ խմբի մասնակցությամբ հանցագործությունների դեպքում, որոնց [խմբի անդամներին] հնարավոր չէ միաժամանակ դատի տալ նույն վարույթի շրջանակներում, ամբաստանյալի մեղավորության հարցը որոշելու համար անհրաժեշտություն առաջանա հանցագործության կատարմանն առնչություն ունենալու հիմքով հիշարակել նաև երրորդ անձանց, որոնց պետք է հետազայում դատի տալ առանձին: Քրեական գործեր քննող դատարանները պարտավոր են մեղադրյալի իրավական պարասիս-նարվության հարցը որոշելու համար անհրաժեշտ գործի հանգամանքները հաստատել առավել լրիվ և ճշգրիտ, և իրավունք չունեն իրենց կողմից հաստատված հանգամանքների մասին խոսել, որպես պարզ ենթադրությունների կամ կասկածների: Դա վերաբերում է նաև այն հանգամանքներին, որոնք կապված են երրորդ անձանց հետ հանցակցությանը, սակայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է հիշարակել այդպիսի հանգամանքներ, ապա դատարանը պետք է ձեռնպահ մնա այնպիսի տեղեկություններ ներկայացնելուց, որոնք անհրաժեշտ չեն ամբաստանյալի մեղավորությունը որոշելու համար: Նույնիսկ, եթե օրենսդրու-

¹ Տե՛ս թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործ, հատոր 16, թերթեր 1-16:

թյունը հստակ նշում է, որ անթույլատրելի է քրեական դատավարության արդյունքներով, որում անձը չի մասնակցել, նրա մեղավորության մասին հեղուկություններ անելը, միևնույն է դատական որոշումների տեսակները ձևակերպելիս պետք է խուսափել երրորդ անձանց մեղավորության մասին հեղուկություններ անելուց, որպեսզի կասկածի տակ չդրվի այլ գործով դատավարության արդարությունը (տե՛ս Կարամանն (Karaman) ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, կետեր 64-65):

(...) Դատարանն իր պրակտիկայում արդեն իսկ ընդգծել է անձին փոփոխ դատավարական երաշխիքների առավել ակնհայտ և առաջնային կարևորությունն այն դեպքերում, երբ նույն գործով մեղադրյալները կանգնում են դատարանի առաջ փարբեր վարույթներով, մասնավորապես դատարանների կողմից ձեռնպահ մնալ յուրաքանչյուր այնպիսի դատողությունից, որը կունենա նախադարձիություն հետագա վարույթի համար, եթե անգամ դրանք չունեն պարպադիր ուժ այլ դատարանների համար (Karaman, 42-43 և 64-56): Եթե առաջադրվող մեղադրանքի բնույթը չի թույլատրում դատարանին, որպեսզի անջարված գործի շրջանակներում կարողանա հեղուկություններ անել առանց երրորդ անձանց մասնակցության և այդ հեղուկությունները կարող են ազդել երրորդ անձանց իրավական պարասիանավորության հարցի որոշման վրա, որոնք առանձին են կանգնելու դատարանի առաջ, ապա այդ իրավիճակը պետք է դիտարկել որպես լուրջ խոչընդոտ գործից մաս անջատելու համար: Ընդհանուր հանգամանքների տեսանկյունից միմյանց հետ սերտ փոխկապված գործերն առանձին վարույթներով քննելու վերաբերյալ յուրաքանչյուր որոշում պետք է հիմնվի մրցակցող բոլոր շահերի մանրամասն վերլուծության վրա և մյուս մեղադրյալներին պետք է հնարավորություն տրվի առարկելու գործն առանձին վարույթ առանձնացնելու հարցի վերաբերյալ (...):»

(...)

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ թիվ ԵԿԴ/0063/01/17 և թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործերով առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն՝ պայմանավորված դրանց փաստական հանգամանքներով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ միայն միացյալ քննության արդյունքում հնարավոր կլինի վերջնական միասնական եզրահանգում անել սույն գործերով ամբաստանյալների արարքների վերաբերյալ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործը պետք է ընդունել վարույթ, միացնել թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին՝ գործերի քննությունը շարունակելով թիվ ԵԿԴ/0259/01/16 համարով:

(...) Քրեական գործի քննությունը կարարել վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով սույն որոշման

պատճենը պատշաճ կարգով ուղարկելով դատավարության մասնակիցներին: (...)»¹:

10.1. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշման համաձայն՝ «(...) [Ե]թե նույն փաստական հանգամանքներով և նույն սպառնացողական զանգվածի պայմաններում երկու կամ ավելի անձի առաջադրված նույնական մեղադրանքների կապակցությամբ առանձին քննության առարկա դարձնելով նույն գործը (անջատված մասը) դատարանները հանգում են փարբեր հետևությունների, սպա այդ դատավճիռները հակասում են իրավական որոշակիության սկզբունքին, կասկածի փակ է դրվում այդ գործերով ամբաստանյալների օրենքի և դատարանի առջև իրավահավասարության սկզբունքը, որի արդյունքում կայացված դատավճիռները չեն կարող համարվել արդարացի, օրինական և հիմնավորված:

(...) [Ե]ախաքննության մարմինը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի կարգով քրեական գործից մաս անջատելուց, այնուհետև մեղադրական եզրակացություն կազմելուց, իսկ հսկողություն իրականացնող դատախազը մաս անջատելու որոշման օրինականությունը ստուգելուց, այնուհետև մեղադրական եզրակացությունը հաստատելուց՝ պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, թե արդյոք դատարանները հնարավորություն կունենան իրականացնելու օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, արդյոք առանձին ամբաստանյալների առաջադրված մեղադրանքի կապակցությամբ կայացնելու օրինական, հիմնավորված և պարճառարանված դատավճիռ, ինչպես նաև պետք է հաշվի առնեն այն, թե արդյոք դատարանի գործունեության արդյունքում չի վրանգվի առանձին քննվող գործով դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը՝ արդեն իսկ կայացված դատավճիռի նախադրելիության (փաստացի) պարճատով, չեն խախտվի դատի չտրված այլ անձանց անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը և այլն: Կարևոր է, որպեսզի հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք չեն կայացվի հակասող դատավճիռներ և դրանով իսկ վրանգում օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքը և իրավական որոշակիությունը՝ հակասող դատավճիռներ կայացնելու տեսանկյունից:

Բողոքարկված դատական ակտերի և բերված վերաքննիչ բողոքների վերլուծությունից հետևում է, որ նույն փաստական հանգամանքների և սպառնացողական զանգվածի պայմաններում գործերն առանձին քննելու արդյունքում փարբեր դատավճիռներ հանգել են փարբեր հետևությունների՝ ինչպես հաստատված ճանաչված փաստական հանգամանքների, այնպես էլ ամբաստանյալների արարքներին տրված քրեաիրավական

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թվեր 70-75:

որակման առումով: Դատարանների կողմից տարբեր հետևությունների հանգեղն իրավաչափ է, եթե հարցը դիտարկվում է դատարանների և յուրաքանչյուր դատավորի անկախության տեսանկյունից, քանի որ նրանցից յուրաքանչյուրը գործի փաստերը և ապացույցները գնահատում է ինքնուրույն, իր ներքին համոզմամբ, օրենքի սեփական ընկալմամբ, սակայն մյուս կողմից միևնույն փաստական հանգամանքների և ապացուցողական զանգվածի պայմաններում նույն ենթադրյալ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ իրար հակասող երկու դատավճիռների կայացումն իրավաչափ չէ և հանգեցնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված և վերևում նշված մի շարք հիմնարար սկզբունքների խախտումների, ուստի միակ հնարավոր ճանապարհը նման խախտումները վերացնելու՝ երկու քրեական գործերը մեկ վարույթում միացնելու և մեկ դատավորի կողմից քննելու և համապատասխան հետևության հանգեղնու մեջ է, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին արշանի դատարան նոր քննության: Դրանով պայմանավորված Վերաքննիչ դատարանը չի անդադարեցնում բողոքներում բարձրացված առանձին հարցերի, քանի որ դրանք պետք է քննարկման առարկա դառնան և գնահատվեն միևնույն վարույթի շրջանակներում և նույն դատավորի կողմից, որպեսզի հնարավոր լինի բացառել հակասական հետևությունները (...):»¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը փաստել է, որ Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 7-ի և թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 1-ի դատավճիռները բեկանելով և քրեական գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, մասնավորապես՝ խախտել է գործի արդարացի քննության, մրցակցության և ապացույցների ազատ գնահատման սկզբունքները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

11.1. Բողոքարեքը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է դատական ակտը վերանայեր մեղադրողի և պաշտպանի բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում, որոնք վերաբերում էին ապացույցների գնահատմանը և դատական ակտերի պատճառաբանվա-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7, թերթեր 122-134:

ծուխանը, այլ ոչ թե Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված՝ դատական ակտի նախադատելության խնդրին, ինչը հիմք է տալիս եզրահանգելու, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել ներկայացված բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

11.2. Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 391-րդ, 393-394-րդ և 396-րդ հոդվածները՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը չի բխում արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ Վերաքննիչ դատարանը կարող էր ըստ էության քննել պաշտպանի և մեղադրողի ներկայացրած վերաքննիչ բողոքները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործը Վերաքննիչ դատարանում միացվել է թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին, և այն բեկանելն ու նոր քննության ուղարկելը չէր բխելու քրեական գործի քննության ողջամիտ ժամկետներից:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումն ու գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

13. Ամբաստանյալ Հ.Բարսեղյանի պաշտպան Հ.Բաբայանը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի նորմերի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են և ազդել են գործի ելքի վրա: Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններից, խախտել է գործի արդարացի, ողջամիտ ժամկետում քննության և դատական վերանայման՝ ամբաստանյալի իրավունքը:

13.1. Բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ դատարանը պետք է քննարկվող դեպքում դատական ակտը վերանայեր պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններում, սակայն, ըստ էության, կողմերին զրկել է լավամ լինելու իրավունքից և կայացրել է վերաքննիչ բողոքները չլուծող դատական ակտ: Բողոքաբերի գնահատմամբ, նման որոշում կայացնելը չի բխել նաև նույն վարույթում Վերաքննիչ դատարանի նախորդ վարքագծից, քանի որ մինչ այդ վերջինս որոշում է կայացրել երկու գործերը մեկ վարույթում միացնելու մասին այն հիմնավորմամբ, որ միևնույն փաստական հանգամանքների պայմաններում նույն հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ գործերն առանձին վարույթներում քննելը իրավաչափ չէ:

13.2. Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պետք է հաշվի առներ նաև գործի քննության ողջամիտ ժամկետները և ամբաստանյալների՝ տևական ժամանակ կալանքի տակ գտնվելու հանգամանքը:

14. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը, օրինական ուժ տալ թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հունիսի 1-ի դատավճիռն կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու իրավաչափությունը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք իրավաչափ էր Վերաքննիչ դատարանի կողմից պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալը:

16. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ *«Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (...):»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում (...):»*:

16.1. Անդրադառնալով վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու օրենսդրական պահանջի բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ՝

- վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում: Դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը պարունակում է դատավարության մասնակցին տրված երաշխիք առ այն, որ իր գործով դատական քննության ընթացքում վերաքննիչ դատարանը չի կատարի տվյալ անձի դատավարական հակառակորդի գործառույթ¹,

- վերաքննության առարկան ոչ թե գործի ըստ էության քննությունն է, այլ առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգումը: Դրանով պայմանավորված՝ վերաքննիչ դատարանում դատաքննությունը սկսվում է ոչ թե մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ, այլ նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև

¹ Տե՛ս *Արթուր Սաքունցի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0001/11/10 որոշման 11-րդ կետը:

վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ¹,

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում ամրագրված սահմանափակումները բացարձակ բնույթ չեն կրում, և դրանք պետք է դիտարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ իրավանորմերի համատեքստում: Վերաքննիչ դատարանն իրավասու է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից միայն այն դեպքում, երբ առկա է դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն անվերապահորեն պետք է հանգեցնի դատական ակտի բեկանման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մաս) կամ առկա է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր) կամ անձի նկատմամբ խոշտանգում և վատ վերաբերմունքի այլ ձևեր կիրառելիս: Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով, հետևաբար իրավասու չէ սեփական նախաձեռնությամբ, վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից դուրս արձանագրել դատական սխալ²:

16.2 Վերահաստատելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ վերանայման սահմաններից դուրս գալու հիմքերի սահմանափակ և խիստ որոշակի շրջանակը կոչված է բացառելու վերադաս դատական ատյանի կողմից բողոքում չնշված, անկանխատեսելի հանգամանքներով սահմաններից դուրս գալը: Հակառակ պարագայում, վերադաս դատարանը կիրականացնի գործի լրիվ ծավալով ըստ էության քննություն, ինչն անհամատեղելի կլինի մրցակցության սկզբունքից բխող՝ սահմանափակ վերանայման՝ օրենսդրորեն ամրագրված գաղափարի հետ:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 7-ի և թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 1-ի դատավճիռների դեմ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վերաքննիչ բողոքներ են ներկայացրել համապատասխանաբար ամբաստանյալ Ա.Մարջանյանի պաշտպանը և մեղադրողը՝ փաստարկելով, որ Առաջին ատյանի դատարանի կողմից պատշաճ չեն գնահատվել քրեական

¹ Տե՛ս *Գեղամ Ղազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշման 27-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Սվեդլյանա Գրիգորյանի* գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵԿԴ/0281/01/10 որոշումը, *Արթուր Խորշոռյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԱԲԴ/0065/01/11 որոշումը, *Բլլարիոն Նունուշյանի* գործով 2015 թվականի հունիսի 5-ի որոշումը, *Լուկաշ Վերանյանի* գործով 2018 թվականի հունիսի 15-ի որոշումը:

գործերում առկա ապացույցները, ինչի արդյունքում Ա.Մարջանյանի և Հ.Բարսեղյանի արարքներին տրվել են սխալ քրեաիրավական գնահատականներ¹,

- Վերաքննիչ դատարանը 2018 թվականի դեկտեմբերի 5-ին որոշում է կայացրել թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործը վարույթ ընդունելու և թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին միացնելու մասին²,

- Վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2019 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել դրանք մասնակիորեն բավարարելու և թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործը նոր քննության ուղարկելու մասին՝ փաստելով, որ քրեական գործից մաս անջատելուց և այդ մասով մեղադրական եզրակացությունը հաստատելուց՝ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյո՞ք դատարանները հնարավորություն կունենան իրականացնելու օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննություն, առանձին ամբաստանյալների առաջադրված մեղադրանքի կապակցությամբ կայացնելու օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատավճիռ, ինչպես նաև պետք է հաշվի առնել այն, թե արդյո՞ք դատարանի գործունեության արդյունքում չի վտանգվի առանձին քննվող գործով դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը՝ արդեն իսկ կայացված դատավճռի նախադատելիության պատճառով, չեն խախտվի դատի չտրված այլ անձանց անմեղության կանխավարկածը, պաշտպանության իրավունքը և այլն: Ինչպես նաև պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյո՞ք չեն կայացվի հակասող դատավճիռներ՝ դրանով իսկ վտանգելով օրենքի և դատարանի առջև հավասարության սկզբունքն ու իրավական որոշակիությունը՝ հակասող դատավճիռներ կայացնելու տեսանկյունից: Արդյունքում Վերաքննիչ դատարանը, առանց անդրադառնալու վերաքննիչ բողոքներում բարձրացված հարցերին, գտել է, որ միևնույն փաստական հանգամանքների և ապացուցողական զանգվածի պայմաններում, նույն ենթադրյալ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ իրար հակասող երկու դատավճիռների կայացումն իրավաչափ չէ, ուստի դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության³:

17.1. Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից բխում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն որոշման 16.1-րդ կետում մեջբերված հիմքերի բացակայության պայմաններում, դուրս է եկել վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Այսինքն՝ անդրադառնալով միևնույն փաստական հանգամանքներով քրեական գործերը միմյանցից առանձնացնելու և դրանք անջատ քննելու

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

հարցին՝ Վերաքննիչ դատարանն իր կողմից կայացված դատական ակտը ոչ իրավաչափորեն հիմնավորել է այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն եղել վերաքննիչ բողոքներում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքներն ըստ էության քննարկման առարկա չի դարձրել ու չի անդրադարձել ապացույցների ոչ պատշաճ գնահատման, նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառության հարցերին:

18. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պաշտպանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալն իրավաչափ չէր:

II. Վերաքննիչ դատարանի կողմից քրեական գործը նոր քննության ուղարկելու իրավաչափությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք իրավաչափ էր բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նկատառումներով Վերաքննիչ դատարանի կողմից մեկ վարույթում միացված թիվ ԵԿԴ/0259/01/16 և ԵԿԴ/0063/01/17 քրեական գործերով Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բեկանելն ու գործը նույն դատարան նոր քննության ուղարկելը:

20. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) *Յուրաքանչյուր ոք ունի անկասի և անսաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: (...)*»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Եվրոպական կոնվենցիայի) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. *Յուրաքանչյուր ոք, (...), ունի օրենքի հիման վրա սրտեղծված անկասի ու անսաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկասի և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝*

(...)

2) *ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապարասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն*

բեկանելով դատարանի ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատարանի ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատարանի ակտը մնում է օրինական ուժի մեջ:

(...)

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Գործի քննության արդյունքում գտնելով, որ արարքն իրավաբանորեն ճիշտ որակված չէ, վերաքննիչ դատարանն իրավունք ունի փոխել հանցագործության որակումը քրեական օրենքի այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում ավելի թեթև հանցագործության համար:

3. Վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործի քննության արդյունքներով առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել ավելի խիստ պարիտ միայն այն դեպքում, երբ այդ հիմքերով բողոք է բերել մեղադրողը, ինչպես նաև փուժողը կամ նրա ներկայացուցիչը:

(...):»:

21. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունից բխում է, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը կարող է ոչ միայն բեկանել դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության, այլև կայացնել նոր դատական ակտ: Նշված լիազորության օրենսդրական ամրագրումը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ դատարանում ապացույցներ, այդ թվում՝ լրացուցիչ ներկայացված, հետազոտելու և ըստ այդմ գործի փաստական կողմը վերանայելու իրավասությունը, թույլ տրված դատական սխալը ուղղելու և նոր դատական ակտ կայացնելու հնարավորություն է տալիս: Դեռ ավելին, ինչպես բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի կարգավորումներից՝ վերաքննիչ վերանայման նշված առանձնահատկություններով պայմանավորված՝ օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է նաև վերաքննիչ դատարանի կողմից անձին առաջադրված մեղադրանքի շրջանակում արարքի իրավական գնահատականը՝ թե՛ մեղմացնելու և թե՛ խստացնելու առումով փոխելու իրավական հնարավորություն՝ դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությունն ապահովելու պայմանով:

Բացի այդ, հարկ է նկատել, որ վերաքննիչ դատարանի կողմից նոր դատական ակտ կայացնելու լիազորության նախատեսումը կոչված է նաև բացատրելու դատական շրջապատույտը, այն բխում է դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից այնքանով, որքանով երաշխավորում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից մեկը՝ ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջի իրացումը¹:

21.1 Անդրադառնալով բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու վերաքննիչ դատարանի լիազորությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով.

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավազորության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական ատյանների միջև գործառության կապերի տրամաբանական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից²:

21.2 Վերահաստատելով վկայակոչված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերաքննիչ դատարանի կողմից տվյալ լիազորությունը ենթակա է իրացման այն դեպքերում, երբ վերաքննության գործառությանին առանձնահատկություններով պայմանավորված՝ վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար չէ արձանագրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները վերացնելու համար, և առաջին ատյանի դատարանում գործի նոր քննությունն անհրաժեշտ է կայացվելիք դատական ակտի արդարացիությունը և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքն ապահովելու առումով:

21.3 Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, ելնելով կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, բողոքարկված դատական ակտը բեկանելուց հետո նոր դատական ակտ կայացնելու կամ գործը նոր

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՍԴՌ-720, 2009 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴՌ-832 որոշումները, Վճռաբեկ դատարանի՝ *Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի* գործով 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0016/01/14 որոշումը:

² Տե՛ս *Հրաչ Մակարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/0019/01/11 որոշման 19-րդ կետը:

քննության ուղարկելու մասին որոշում կայացնելիս, վերաքննիչ դատարանը պետք է գնահատի, թե որքանով է վերաքննիչ վերանայման գործիքակազմը բավարար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննությունն ապահովելու և արձանագրված դատական սխալները վերացնելու համար: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ վերաքննության գործառնության առանձնահատկությունները թույլ են տալիս լուծել նշված խնդիրները, վերաքննիչ դատարանի որոշումը, որպես կանոն, պետք է լինի նոր դատական ակտի կայացումը՝ ելնելով դատավարական խնայողության և արդարադատության արդյունավետության շահից:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Վերաքննիչ դատարանը՝ 2018 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ՝ գտնելով, որ թիվ ԵԿԴ/0063/01/17 և ԵԿԴ/0259/01/16 քրեական գործերով առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն, և որ միայն միացյալ քննության արդյունքում է հնարավոր վերջնական միասնական եզրահանգում կատարել նշված գործերով ամբաստանյալների արարքների վերաբերյալ, թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործը միացրել է թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործին¹:

Վերաքննիչ դատարանը, 2019 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ, նկատի ունենալով, որ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով արձանագրված ենթադրյալ խախտումները վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ երկու քրեական գործերը պետք է միացվեն մեկ վարույթում և քննվեն մեկ դատավորի կողմից, եկել է այն եզրահանգման, որ դատավճիռները պետք է բեկանել և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության՝ չանդրադառնալով բողոքներում բարձրացված առանձին հարցերին ու փաստելով, որ դրանք պետք է քննարկման առարկա դառնան և գնահատվեն միևնույն վարույթի շրջանակներում ու նույն դատավորի կողմից, որպեսզի հնարավոր լինի բացառել հակասական հետևությունները²:

23. Սույն որոշման 20-21.3-րդ կետերում ներկայացված նորմերի և իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԿԴ/0063/01/17 և ԵԿԴ/0259/01/16 քրեական գործերը միացնելուց հետո Վերաքննիչ դատարանն ունեցել է լիարժեք իրավական հնարավորություն՝ դատական ստուգման ենթարկելու նշված գործերով կայացված դատավճիռների օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ վերաքննիչ բողոքներում բարձրացված՝ ապացույցների գնահատման դատավարական պահանջների պահպանման և նյութական իրավունքի նորմերի կիրառման ճշտության տեսանկյունից: Մինչդեռ կիրառելով վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը՝ Վերաքննիչ դատարանը, չի իրացրել քրեական գործում առկա ապացույցների հիման

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

վրա գործի փաստական կողմը վերանայելու և միևնույն փաստական հանգամանքներով գործերով միմյանց հակասող դատավճիռների առկայությամբ պայմանավորված խախտումները վերացնելու հնարավորությունը, և ոչ իրավաչափորեն որոշում է կայացրել քրեական գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու մասին:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ գործը վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված կանոններով քննելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը զրկված չէր գործի քննության ժամանակ իր որոշումը վերանայելու և գործը վերաքննիչ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով քննության առնելու հնարավորությունից¹: Վերաքննիչ դատարանը, դատական ակտերի բեկանման և գործն առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու մասին որոշման հիմքում դնելով այն պատճառաբանությունը, որ արձանագրված ենթադրյալ խախտումները վերացնելու միակ ուղին թիվ ԵԿԴ/0063/01/17 և ԵԿԴ/0259/01/6 քրեական գործերը մեկ վարույթում միացնելու, մեկ դատավորի կողմից քննելու ու համապատասխան հետևության հանգեցնելու մեջ է, անտեսել է նույնաբովանդակ պատճառաբանությամբ հիշյալ երկու քրեական գործերը մեկ վարույթում միացնելու՝ իր իսկ կողմից կայացված 2018 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև դրա ծանրակշիռ հիմնավորումներն առ այն, որ նշված գործերով առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու անհրաժեշտություն՝ պայմանավորված դրանց փաստական հանգամանքներով, և միայն միացյալ քննության արդյունքում հնարավոր կլինի վերջնական միասնական եզրահանգում անել ամբաստանյալների արարքների վերաբերյալ²:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը, վերը հիշատակված քրեական գործերը մեկ վարույթում միացված լինելու պայմաններում, իրական հնարավորություն ունենալով իր լիազորությունների շրջանակում վերացնելու իր կողմից արձանագրված դատավարական խախտումներն ու կայացնելու նոր դատական ակտ, գործն ուղարկել է նոր քննության՝ անտեսելով դատավարական խնայողության և ողջամիտ ժամկետում գործի քննության հիմնարար պահանջը:

24. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նկատառումներով Վերաքննիչ դատարանի կողմից մեկ վարույթում միացված թիվ ԵԿԴ/0259/01/16 և ԵԿԴ/0063/01/17 քրեական գործերով Առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բեկանելն ու գործը նույն դատարան նոր քննության ուղարկելն իրավաչափ չէր:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, *Գևորգ Հախնազարյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 26-ի որոշման 19-րդ կետը:

² Տե՛ս՝ սույն որոշման 10-րդ կետը:

25. Այսպիսով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 385-րդ, 394-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, բողոքարկված դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու հիմք է:

Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է ըստ էության քննարկման առարկա դարձնի ներկայացված վերաքննիչ բողոքները, դրանց հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգի Առաջին ատյանի դատարանի՝ թիվ ԵԿԴ/0259/01/16 քրեական գործով 2018 թվականի փետրվարի 7-ի և թիվ ԵԿԴ/0063/01/17 քրեական գործով 2018 թվականի հունիսի 1-ի դատավճիռների օրինականությունն ու հիմնավորվածությունը և հանգի համապատասխան հետևության:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ չեն վերացել Ա.Մարջանյանին և Հ.Բարսեղյանին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալներ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի և Արման Լևոնի Մարջանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Ամբաստանյալներ Հենրիկ Արթուրի Բարսեղյանի և Արման Լևոնի Մարջանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը թողնել անփոփոխ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

70. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԲԴ/0063/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նահապետությանը՝
մասնակցությանը դատավորներ՝

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությանը՝
մասնակցությանը դատախազ՝

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՀԱՆՈՒՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արայիկ Արամայիսի Հակոբյանի և Արտակ Վարդգեսի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի փետրվարի 1-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնում հարուցվել է թիվ 09153017 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

2017 թվականի փետրվարի 15-ին Արայիկ Հակոբյանը և Արտակ Գրիգորյանը ձերբակալվել են:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի փետրվարի 18-ի որոշումներով Ա.Հակոբյանը և Ա.Գրիգորյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 18-ի որոշումներով մերժվել են Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունները:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2017 թվականի մարտի 21-ի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 18-ի որոշումը բեկանվել է, Ա.Գրիգորյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով՝ կալանավորման սկիզբը հաշվելով նրան արգելանքի վերցնելու պահից:

Նույն դատարանի՝ 2017 թվականի մարտի 22-ի որոշմամբ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի փետրվարի 18-ի որոշումը բեկանվել է, Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով՝ կալանավորման սկիզբը հաշվելով նրան արգելանքի վերցնելու պահից:

Նախաքննության մարմնի՝ 2017 թվականի մարտի 22-ի և 29-ի որոշումներով Ա.Գրիգորյանի ու Ա.Հակոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

1.1. 2017 թվականի մարտի 31-ին Ա.Հակոբյանը հայտնաբերվել և ձերբակալվել է: 2017 թվականի ապրիլի 19-ին թիվ 09153017 քրեական գործից անջատվել է Ա.Հակոբյանի վերաբերյալ մասը, որին շնորհվել է 09102717 համարը:

2017 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ թիվ 09153017 քրեական գործով Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2017 թվականի մայիսի 1-ի որոշմամբ թիվ 09153017 քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մեղադրյալ Ա.Գրիգորյանի գտնվելու վայրը հայտնի չլինելու հիմքով:

1.2. 2017 թվականի մայիսի 2-ի որոշմամբ թիվ 09102717 քրեական գործով Ա.Հակոբյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2017 թվականի մայիսի 5-ին թիվ 09102717 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ գործին շնորհվել է թիվ ԵԱԲԳ/0063/01/17 համարը:

1.3. 2017 թվականի հունիսի 8-ին Ա.Գրիգորյանը հայտնաբերվել է և արգելանքի է վերցվել:

2017 թվականի հունիսի 8-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի վերաբերյալ թիվ 09153017 քրեական գործի վարույթը վերսկսվել է:

2017 թվականի հունիսի 9-ի որոշմամբ Ա.Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2017 թվականի հունիսի 15-ին թիվ 09153017 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որտեղ գործին շնորհվել է ԵԱԲԴ/0094/01/17 համարը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ թիվ ԵԱԲԴ/0094/01/17 քրեական գործը միացվել է ԵԱԲԴ/0063/01/17 քրեական գործին, և գործի քննությունը շարունակվել է ԵԱԲԴ/0063/01/17 համարով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի հուլիսի 18-ի դատավճռով Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 (վեց) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Հակոբյանի՝ 2017 թվականի փետրվարի 15-ից մինչև փետրվարի 18-ը արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2017 թվականի մարտի 31-ից:

Նույն դատավճռով Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշանակված պատժին մասնակիորեն գումարվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի դատավճռով նշանակված պատժից՝ 5 (հինգ) տարի ժամկետով ազատազրկումից 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկումը, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Գրիգորյանի՝ 2017 թվականի փետրվարի 15-ից մինչև փետրվարի 18-ն արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 6 (վեց) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2017 թվականի հունիսի 8-ից:

3. Պաշտպանների վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի մարտի 19-ին որոշում է կայացրել պաշտպանների բողոքները բավարարելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին: Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ու դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է Ա.Հակոբյանի՝ 2017 թվականի փետրվարի 15-ից մինչև փետրվարի 18-ը արգելանքի տակ գտնվելու 3 (երեք) օրը և թողնվել է կրելու ազատազրկում՝ 2 (երկու) տարի 11 (տասնմեկ) ամիս 27 (քսանյոթ) օր ժամկետով: «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ Ա.Հակոբյանը ազատվել է նշանակված պատժից:

Ա.Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նշանակված պատժը՝ 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկումը և Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ի դատավճռով նշանակված՝ 5 (հինգ) տարի ժամկետով ազատազրկումը մասնակի գումարվել են, և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2017 թվականի հունիսի 8-ից:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանի դատավճռով արձանագրվել է հետևյալը. «(...) Արայիկ Արամյանի Հակոբյանը, իր վարած «Լադա» մակնիշի 34 FD 396 հաշվառման համարանիշի փաթեթի ավտոմեքենայով, Երևան քաղաքի Պ.Սևակ փողոցի մայթեզրի մոտ կանգնած լինելու

ժամանակ, 2017 թվականի հունվարի 23-ին ծանոթացել է փուժողներ՝ Երևան քաղաքի Դրոյի փողոցի 21 ա շենքի 15 բնակարանի բնակիչներ, փարեց ամուսիններ Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների հետ:

Ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը, փուժող Ելենա Ավանեսյանից րեդեկանսարով նրա ողնաշարի վնասված լինելու մասին, խաբեությամբ նրան ասել է, թե իբր մայրն էլ է նման առողջական խնդիր ունեցել, իր ծանոթ բժիշկը, 50-60 հազար ՀՀ դրամի դիմաց մերսումներ կատարելու միջոցով բուժել է նրան, ուստի մերսումների միջոցով կարող է բուժել նաև իրեն: Այդ պատրվակով փուժող Ելենա Ավանեսյանից իմացել է նրանց րան՝ Երևան քաղաքի Դրոյի փողոցի 21ա շենքի 15-րդ բնակարանի հասցեն:

Այնուհետև, ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը նույն օրը՝ ժամը 16:30-ի սահմաններում, գնացել է փուժողներ Մաքսիմ և Ելենա Ավանեսյաններին պատկանող նշված հասցեում գրնվող բնակարան, խաբեության գործադրմամբ ապօրինի մուտք գործել այնտեղ:

Բնակարանում գրնվելու ընթացքում փուժողներն ամբաստանյալ Արայիկ Հակոբյանի համար հյուրասիրություն են կազմակերպել, իսկ փուժող Մաքսիմ Ավանեսյանը նաև օղի է հյուրասիրել: Այդ ընթացքում Արայիկ Հակոբյանը զանգահարել է իր ընկերոջը՝ ամբաստանյալ Արտակ Վարդգեսի Գրիգորյանին, ում նախապես փուժողներին ներկայացրել էր որպես բժիշկ, և վերջինիս հրավիրել է փուժողների բնակարան՝ բացա-րելով նշված բնակարանի հասցեն:

Որոշ ժամանակ անց ամբաստանյալ Արտակ Գրիգորյանը եկել է փուժողների հիշյալ հասցեն և խաբեությամբ ներկայանալով բժիշկ՝ ապօրինի մուտք է գործել բնակարան: Բնակարանում գրնվելու ընթացքում Արտակ Գրիգորյանը գոյ ջուր է պահանջել, գրպանից սպիրակ գույնի փոշի է հանել և լցնելով ջրի մեջ՝ խմելու նպատակով րվել է փուժող Ելենա Ավանեսյանին, ով այն խմել է: Այնուհետև, ամբաստանյալ Արտակ Գրիգորյանը Ելենա Ավանեսյանի հետ միասին մրել են ննջասենյակ, որպեսզի Արտակ Գրիգորյանը մերսի նրա մեջքի հարվածը, իսկ ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը և փուժող Մաքսիմ Ավանեսյանը շարունակել են հյուրասենյակում հաց ուրել և օղի խմել:

Ամբաստանյալ Արտակ Գրիգորյանը ննջասենյակից դուրս գալով՝ բնակարանից վերցրած պլաստմասե րարայով իջել է նշված շենքի բակ: Որոշ ժամանակ անց Ա.Գրիգորյանը՝ պլաստմասե րարան ձեռքին, վերադառնալով բնակարան ասել է, թե իբրև մերսում կատարելու համար դեղ է րերել:

Այնուհետև, ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանը և Արտակ Գրիգորյանը, որոշ ժամանակ փուժողների բնակարանում մնալով, գաղտնի հաիշրակել են Մաքսիմ Ավանեսյանին և Ելենա Ավանեսյանին

պարկանող ընդհանուր խոշոր չափերի՝ 229.320 ՀՀ դրամին համարժեք 28.000 ՌԴ ռուբլի, 286.979 ՀՀ դրամին համարժեք 550 եվրո, 48.633 ՀՀ դրամին համարժեք 100 ԱՄՆ դոլար, 31.600 ՀՀ դրամ, 50.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա ականջօղեր և սննդամթերք, ալկոհոլային խմիչքներ, օպորիկական ակնոց և «Մամսունգ» մոդելի բջջային հեռախոս:
(...)

Գինահարելով սույն քրեական գործով հաստատված փաստական հանգամանքները՝ Դատարանն արձանագրում է՝

- ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանի և Արրակ Գրիգորյանի դիրավորությունը՝ հափշտակելու փուժողներ Մաքսիմ և Ելենա Ավանեսյանի գույքը, ծագել է նախքան նրանց՝ Երևան քաղաքի Գրոյի փողոցի 21Ա շենքի 15 բնակարան մուտք գործելը,

- ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանը և Արրակ Գրիգորյանը փուժողներ Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների՝ Երևան քաղաքի Գրոյի փողոցի 21Ա շենքի 15րդ բնակարան են մուտք գործել ապօրինի:

Դատարանը նման հետևության է հանգում սույն քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությամբ՝ հաստատված համարելով այն, որ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը ծանոթացել է փուժողներ Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների հետ, այնուհետև, դիմելով խաբեության, հայտնել է, որ ամբաստանյալ Արրակ Գրիգորյանը բժիշկ է, ով բուժել է իր մորը: Ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը գնացել է փուժողների նշված բնակարան, մուտք է գործել, իսկ այնուհետև, բնակարանի հասցեն հայտնել նաև մյուս ամբաստանյալ Արրակ Գրիգորյանին, ով որոշ ժամանակ անց հայտնվել է փուժողների բնակարանում և, խաբեությամբ ներկայանալով բժիշկ, ևս ապօրինի մուտք է գործել բնակարան: Ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանը և Արրակ Գրիգորյանը փուժողների բնակարան մուտք գործելու իրավունք են ձեռք բերել խաբեությամբ՝ հայտնելով, թե իբր ամբաստանյալ Արրակ Գրիգորյանը բժիշկ է և կարող է բուժել փուժող Ելենա Ավանեսյանին, հակառակ պարագայում Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների «համաձայնությունը»՝ մուտք գործելու իրենց բնակարան, ամբաստանյալները ձեռք բերել չէին կարող: Քննարկվող ծանրացնող հանգամանքի մասին խոսք գնալ չէր կարող միայն այն դեպքում, եթե ամբաստանյալ Արրակ Գրիգորյանն իրականում հանդիսանար բժիշկ և մերսում կատարելու նպատակով հայտնվեր փուժողների բնակարանում: Մինչդեռ, սույն քրեական գործի քննությամբ ձեռք չբերվեց որևէ հավասարի փվյալ առ այն, որ Արրակ Գրիգորյանը բժիշկ է, կամ երբևէ մատուցել է մերսման ծառայություններ: Հետևաբար, թեև Մաքսիմ և Ելենա Ավանեսյանները թույլ են փվել, որ ամբաստանյալները մուտք գործեն իրենց բնակարան, սակայն նրանց կամքը ձևավորվել է քսցատապես ամբաստանյալների

խաբեության արդյունքում (...)»¹:

6. Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, փաստել է. «(...) Սույն դեպքում [Առաջին ատյանի] դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ տուժողները որևէ պարտավորություն չունեին ամբաստանյալներին իրենց բնակարան մուտքը թույլատրելու, նրանք կարող էին մերժել, այսինքն՝ մոլորության խնդիր առհասարակ չի կարող լինել: Մոլորության մեջ գցելը, պատրվակը կիրառելի է այն դեպքերում, երբ տուժողը որոշակի հանգամանքների բերումով «պարտավորություն ունի» հանցանք կատարած անձին թույլատրել մտնել բնակարան, օրինակ, գազի տեսուչին, որը ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան կամ հրշեջ ծառայության աշխատակիցը պաշտոնական լիազորությունների բերումով իրականացնում է արուգումներ կամ վերահսկողություն և այլն, որպիսի պայմաններում բնակարան մտնելը նրանց համար առավել մտրտելի է, քան այլ անձանց, ուստի հանցավորը ներկայանալով, որպես գազի տեսուչ կամ հրշեջ ծառայության աշխատակից հեշտացնում է բնակարան մուտք գործելը: Սույն դեպքում նման իրավիճակ չի եղել և տուժողները ունեցել են իրական հնարավորություն կատարելու ընտրություն և որևէ մոլորության և պատրվակի մասին խոսք լինել չի կարող ինչպես հաստատել է Առաջին ատյանի դատարանը:

(...)

(...) [Սույն դեպքում խոսք լինել չի կարող ո՛չ մոլորության մեջ գցելու, ո՛չ պատրվակ օգտագործելու մասին. ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը խոսել է տուժողների հետ փողոցում, ընդ որում՝ Արայիկ Հակոբյանը չի ներկայացել բժիշկ, այլ հայտնել է, որ ճանաչում է բժշկի: Բնակարանի հասցեն տվել է տուժող Ելենա Ավանեսյանը, որից հետո որոշ ժամանակ անց Արայիկ Հակոբյանի կողմից դռան գանգը տալուց տուժողները բացել են դուռը, որևէ խոսակցություն չի եղել բնակարան մուտքը արգելելու կամ թույլատրելու մասին, այլ հակառակը՝ նա նրանց թույլտրությամբ մտել է ներս, նստել բազկաթոռին, այնուհետև տուժող Մաքսիմի հետ միասին օդի են խմել, որից հետո եկել է մյուս ամբաստանյալը և այլն:

(...)

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ անհիմն են Առաջին ատյանի դատարանի այն հետևությունները, որ ամբաստանյալ Արայիկ Հակոբյանը գնացել է տուժողների նշված բնակարան, մուտք է գործել, իսկ այնուհետև, բնակարանի հասցեն հայտնել նաև մյուս ամբաստանյալ Արտակ Գրիգորյանին, ով որոշ ժամանակ անց հայտնվել է տուժողների բնակարանում և, խաբեությամբ ներկայանալով բժիշկ, ևս սպօրինի մուտք է գործել բնակարան:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 138-166:

Ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանը և Արտակ Գրիգորյանը փուժողների բնակարան մուտք գործելու իրավունք են ձեռք բերել խաբեությանը՝ հայրենելով, թե իբր ամբաստանյալ Արտակ Գրիգորյանը բժիշկ է և կարող է բուժել փուժող Ելենա Ավանեսյանին, հակառակ պարագայում Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների «համաձայնությունը»՝ մուտք գործելու իրենց բնակարան, ամբաստանյալները ձեռք բերել չէին կարող: Հեղուարար, թեև Մաքսիմ և Ելենա Ավանեսյանները թույլ են տվել, որ ամբաստանյալները մուտք գործեն իրենց բնակարան, սակայն նրանց կամքը ձևավորվել է բացառապես ամբաստանյալների խաբեության արդյունքում:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն դեպքում բժիշկ ներկայանալը որևէ նշանակություն չի ունեցել բնակարան մուտք գործելու համար, հարկապես, որ Արայիկ Հակոբյանը բժիշկ չի եղել և նրա կողմից բնակարան մտնելը որևէ կապ չի ունեցել այն հանգամանքի հետ, որ նա հայրենել է, որ ունի ծանոթ բժիշկ և այլն: Տուժողները հարակ իմացել են, որ Ա.Հակոբյանը բժիշկ չէ, և նա չի գնացել բնակարան իր կողմից նշած բժիշկ ծանոթի հետ, այլ եղել է միայնակ, իսկ բժիշկ ներկայացած Արտակ Գրիգորյանը եկել է փուժողների բնակարան ավելի ուշ և կրկին առանց որևէ խոչընդոտի մտել է բնակարան: Հեղուարար նման պայմաններում խոսք լինել չի կարող մոլորության մեջ գցելու, խաբեությանը կամ պարփակ օգտագործելով բնակարան ապօրինի մուտք գործելու մասին: Վերաքննիչ դատարանը համաձայն չէ նաև Առաջին աստիճանի դատարանի այն պնդմանը, թե եթե ամբաստանյալը լինել բժիշկ, ապա որևէ ինդիք չէր առաջանա, քանի որ փուժողները բժիշկ ներկայացած անձի առջև կոնկրետ դեպքում որևէ պարտավորություն չեն ունեցել բնակարան մուտք գործելը թույլատրելու համար, անկախ նրանից, որ իրականում ամբաստանյալները բժիշկ չեն եղել:

Գործի վերոգրյալ հանգամանքների պայմաններում խոսք լինել չի կարող ամբաստանյալների կողմից փուժողների բնակարան մուտք գործելու ապօրինության և դրանով պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով նախատեսված հանցակազմի առկայության մասին (...)»¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական նորմերի խախտում, ինչի արդյունքում կայացվել է անհիմն և անօրինական դատական ակտ:

Ի հիմնավորումը վերոնշյալի՝ բողոքաբերը փաստել է, որ Վերաքննիչ

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթեր 140-157:

դատարանը գողության հանցակազմի որակյալ հատկանիշի՝ բնակարան ապօրինի մուտք գործելու դրսևորման եղանակների, մասնավորապես՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու վերաբերյալ, տվել է նեղ մեկնաբանություն: Ըստ բողոքի հեղինակի՝ բնակարան ապօրինի մուտք գործելու նպատակով խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը չի սահմանափակվում միայն այնպիսի վարքագծով, որն առաջ է բերում անձի մոտ բնակարան մուտք գործելը թույլատրելու պարտականության պատրանք, այլ ներառում է անձի գիտակցության և կամքի վրա ցանկացած տեսակի ներգործություն, որով հանցավորը բնակարան մուտք գործելու համաձայնություն է ձեռք բերում՝ նրան մոլորության մեջ զցելով:

Վերոգրյալի լույսի ներքո գնահատելով գործի փաստական հանգամանքները՝ բողոքի հեղինակն արձանագրել է, որ բժիշկ հանդիսանալու պատրվակը նախապես համաձայնեցված է եղել ամբաստանյալների կողմից՝ որպես տուժողների բնակարան մուտք գործելու եղանակ, իսկ տուժողների կողմից ամբաստանյալներին բնակարան մուտք գործել թույլ տալը պայմանավորված է եղել բացառապես նշված հանգամանքով:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ ամբաստանյալների արարքներում գողության հանցակազմի քննարկվող որակյալ հատկանիշի բացակայության վերաբերյալ հետևությունները հիմնավոր չեն, իսկ Առաջին աստիճանի դատարանը, բնակարան ապօրինի մուտք գործելու հանցակազմի վերլուծության համատեքստում գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները, հանգել է ճիշտ հետևության:

8. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշումը, և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

9. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելով գողության հատկանիշների մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի արարքներում բացակայում է գողության՝ բնակարան ապօրինի մուտք գործելու, ծանրացնող հանգամանքի հատկանիշը:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գողությունը, որը կատարվել է՝

(...)

1. 1) *բնակարան ապօրինի մուտք գործելով (...)*»:

Մեջբերված նորմը պատասխանատվություն է նախատեսում առավել ծանրացնող հանգամանքով կատարված՝ բնակարան ապօրինի մուտք գործելով գողության համար: Գողության՝ վերոնշյալ որակյալ հանցակազմը երկօբյեկտ է, որի հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, կոնկրետ սեփականատիրոջ՝ իրեն պատկանող գույքի օրինական տիրապետման, օգտագործման և տնօրինման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այլ կերպ՝ անձի արարքում գողության սույն ծանրացնող հանգամանքը կարող է առկա լինել, եթե կատարվածի արդյունքում, բացի հանցագործության հիմնական անմիջական օբյեկտից, խախտվում են նաև անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հանցակազմն օբյեկտիվ կողմից դրսևորվում է ուրիշի գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով հանցավորի կողմից վերցնելով, այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով, որն ուղեկցվում է մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելով: Հետևաբար, քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայության կամ բացակայության հարցը լուծելիս ուղենիշային են համարվում ոչ միայն համապատասխան կատարման վայրը (բնակարանը), գույքը համապատասխան դիտավորության առաջացման պահը (համապատասխան դիտավորությունը պետք է ծագած լինի նախքան բնակարան մուտք գործելը), այլև հանցագործության եղանակը՝ բնակարան մուտք գործելը, որը պետք է իրականացվի ապօրինի:

11. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բնակարան *մուտք գործելը* կարող է կատարվել հանցավորի կողմից ինչպես ֆիզիկական, այնպես էլ տեխնիկական միջոցներով կամ տարատեսակ սարքերով, գաղտնի կամ բացահայտ եղանակով բնակարան ներթափանցելով: Ինչ վերաբերում է բնակարան մուտք գործելու *ապօրինությանը*, ապա այն ենթադրում է, որ հանցավորը հայտնվում է ուրիշի բնակարանում *առանց համապատասխան իրավական հիմքերի, բնակարանի տիրոջ կամքին հակառակ, մասնավորապես՝ առանց նրա թույլտվությունը կամ համաձայնությունը սրանաչու կամ նրա կամքն ընդհանրապես անտեսելով*: Այսպես՝ ներթափանցումը կարող է իրականացվել ինչպես գաղտնի, այնպես էլ բռնություն գործադրելով, դրա սպառնալիքով կամ խաբեության միջոցով, այն է՝ հանցավորի կողմից բնակարանի սեփականատիրոջ կամ այլ

օրինական տիրապետողի՝ բնակարան մուտք գործելու թույլտվությունը կամ համաձայնությունը ձեռք բերելը՝ վերջինիս մոլորության մեջ գցելու արդյունքում (օրինակ՝ ներկայանում է որպես իշխանության կամ սպասարկման ծառայության ներկայացուցիչ, էլեկտրաէներգիայի կամ գազի մատակարարման կազմակերպության աշխատակից, վերանորոգող-փականագործ և այլն): Ընդ որում, բնակարան սպօրինի մուտք գործելու վերոնշյալ եղանակներն արարքի քրեաիրավական որակման վրա որևէ կերպ չեն ազդում:

Մինևույն ժամանակ, գողության քննարկվող ծանրացնող հանգամանքը բացակայում է, եթե անձն օրինական հիմքերով է գտնվում բնակարանում (պայմանավորված, օրինակ, ազգակցական կամ ընկերական հարաբերություններով կամ այլ հանգամանքների բերումով), ինչպես նաև այն դեպքում, երբ հափշտակության դիտավորությունը ծագում է բնակարան մուտք գործելուց հետո՝ այստեղ գտնվելու ընթացքում: Այնինչ, խնդրո առարկա որակյալ հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է փաստել, որ հանցավորը մուտք է գործել բնակարան հենց ուրիշի գույքը *հափշտակելու նպատակով*, այսինքն՝ հափշտակության դիտավորությունը վերջինիս մոտ *ծագել է նախապես՝ մինչև բնակարան մուտք գործելը*:

12. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված գողությունը բնակարան սպօրինի մուտք գործելու ծանրացնող հանգամանքով որակելու համար անհրաժեշտ է հավաստել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝ բնակարան մուտք գործելը եղել է սպօրինի և հափշտակության դիտավորությունը ծագել է նախքան այստեղ ներթափանցելը:

Անդրադառնալով խաբեությամբ բնակարան սպօրինի մուտք գործելու եղանակին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խաբեությունը դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է, անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելը, որը կարող է իրականացվել կոնկրետ փաստերը խեղաթյուրելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այլ եղանակներով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած բնակարանի սեփականատերը կամ այլ տիրապետողը թույլատրում է կամ չի խոչընդոտում հանցավորի մուտքը բնակարան: Այլ կերպ՝ թեև տվյալ դեպքում հանցավորը ստանում է տուժողի «համաձայնությունը», այնուամենայնիվ դա որևէ նշանակություն չի կարող ունենալ, քանի որ նման «համաձայնությունը» ձեռք է բերվում խաբեությամբ անձի կամքի և գիտակցության վրա ներազդելու, նրան դիտավորությամբ մոլորության մեջ գցելու արդյունքում, հետևաբար ցանկացած պարագայում պետք է դիտարկվի որպես անձի կամքին հակառակ վերջինիս բնակարան

ապօրինի մուտք գործել:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալներ Ա.Հակոբյանին և Ա.Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով առաջադրված մեղադրանքում այն բանի համար, որ վերջիններս նախնական համաձայնությամբ 2017 թվականի հունվարի 23-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, խաբեությամբ՝ մերսում կատարելու պատրվակով, ապօրինի մուտք են գործել Մ.Ավանեսյանի և Ե.Ավանեսյանի բնակարան, կատարել են գույքի խոշոր չափերով գաղտնի հափշտակություն: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ նախքան տուժողների բնակարան մուտք գործելն ամբաստանյալներն ունեցել են նրանց գույքը հափշտակելու դիտավորություն, իսկ այնտեղ մուտք գործելու իրավունքը ձեռք են բերել խաբեությամբ, այն է՝ հայտնելով, թե իբր ամբաստանյալ Ա.Գրիգորյանը բժիշկ է և կարող է բուժել տուժող Ե.Ավանեսյանին, հակառակ պարագայում Մաքսիմ և Ելենա Ավանեսյանների «համաձայնությունը»՝ իրենց բնակարան մուտք գործելու վերաբերյալ, ամբաստանյալները ձեռք բերել չէին կարող: Ուստի, թեև տուժողները թույլ են տվել, որ ամբաստանյալները մուտք գործեն իրենց բնակարան, սակայն նրանց կամքը ձևավորվել է բացառապես ամբաստանյալների խաբեության արդյունքում¹:

Բեկանելով և փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ Վերաքննիչ դատարանը նշել է, որ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի արարքներում բացակայում են տուժողների բնակարան մուտք գործելու ապօրինության և դրանով պայմանավորված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Իր վերոնշյալ դիրքորոշումը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է նրանով, որ տուժողները որևէ պարտավորություն չունեին թույլատրելու ամբաստանյալների մուտքը իրենց բնակարան, նրանք կարող էին մերժել, այսինքն՝ մոլորության խնդիր առհասարակ չի կարող լինել: Մոլորության մեջ զցելը կիրառելի է այն դեպքում, երբ տուժողը որոշակի հանգամանքների բերումով «պարտավորություն ունի» հանցավորին թույլատրել մտնելու բնակարան: Սույն դեպքում նման իրավիճակ չի եղել, և տուժողները ունեցել են ընտրություն կատարելու իրական հնարավորություն, ուստի որևէ մոլորության կամ պատրվակի մասին խոսք լինել չի կարող:

Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ սույն դեպքում բժիշկ ներկայանալը որևէ նշանակություն չի ունեցել բնակարան մուտք գործելու համար, հատկապես, որ Ա.Հակոբյանը բժիշկ չի եղել և նրա կողմից բնակարան մտնելը որևէ կապ չի ունեցել այն հանգամանքի հետ, որ նա ծանոթ բժիշկ է ունեցել: Տուժողները հստակ իմացել են, որ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Ա.Հակոբյանը բժիշկ չէ, նա չի գնացել բնակարան իր կողմից նշված բժիշկ ծանոթի հետ, այլ եղել է միայնակ, իսկ բժիշկ ներկայացած Ա.Գրիգորյանը եկել է տուժողների բնակարան ավելի ուշ ու կրկին առանց որևէ խոջընդոստի մտել է բնակարան: Տուժողները բժիշկ ներկայացած անձի առջև կոնկրետ դեպքում որևէ պարտավորություն չեն ունեցել բնակարան մուտք գործելը թույլատրելու համար, անկախ նրանից, որ իրականում ամբաստանյալները բժիշկ չեն եղել¹:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթի և կատարված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված (բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության) հանցակազմի հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավոր չէ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն ամբաստանյալների կատարած արարքների քրեաիրավական որակումը որոշելիս պատշաճ գնահատման չի ենթարկել գործում առկա փաստական տվյալների համակցությունը, ինչպես նաև նյութաիրավական նորմի մեկնաբանման հարցում եկել է սխալ եզրահանգման:

Մինչդեռ, Առաջին աստիճանի դատարանը, պատշաճ կերպով վերլուծելով և գնահատման ենթարկելով գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը, ամբաստանյալների արարքների քրեաիրավական որակման հարցում հանգել է ճիշտ հետևության՝ իրավացիորեն փաստելով, որ ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի մոտ տուժողների բնակարանից գաղտնի համիշտակություն կատարելու դիտավորությունը ծագել է նախապես՝ մինչև վերջիններիս բնակարան մուտք գործելը, և, միաժամանակ, ամբաստանյալները բնակարան են մուտք գործել ապօրինի՝ խաբեության միջոցով նրանց կամքի և գիտակցության վրա ներագդելու ճանապարհով:

14.1. Այսպես՝ գործի փաստական տվյալներից հետևում է, որ Ա.Հակոբյանը, հայտնելով, թե իբրև իր ծանոթ բժիշկը, ով բուժել է նաև իր մորը, մերսումների միջոցով կարող է բուժել տուժող Ե.Ավանեսյանին, դիտավորությամբ խեղաթյուրել է իրականությունը, ներագդել է տուժողների կամքի վրա, ինչի արդյունքում վերջիններս, ընկնելով մուրդության մեջ, Ա.Հակոբյանին են փոխանցել իրենց բնակության վայրի հասցեն, այնուհետև՝ ներս թողել նրան իրենց բնակարան՝ կարծելով, որ վերջինս պետք է կազմակերպի բժշկի հետ հանդիպումը: Ա.Հակոբյանը տուժողների բնակարանում գտնվելու ընթացքում զանգահարել է ամբաստանյալ Ա.Գրիգորյանին և հայտնել բնակարանի հասցեն: Որոշ ժամանակ անց

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ամբաստանյալ Ա.Գրիգորյանը ժամանել է և ներկայանալով բժիշկ՝ նույնպես խաբեությանը ապօրինի մուտք է գործել բնակարան:

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից ակնհայտորեն բխում է, որ ամբաստանյալները տուժողների բնակարան են մուտք գործել խաբեության արդյունքում՝ իրականությունը դիտավորությամբ խեղաթյուրելով և կեղծ տվյալներ ներկայացնելով առ այն, որ Ա.Գրիգորյանը բժիշկ է և կարող է բուժել տուժող Ե.Ավանեսյանի ողնաշարի հետ կապված խնդիրը: Ընդ որում, թեև որպես բժիշկ ներկայացել է միայն Ա.Գրիգորյանը, այնուամենայնիվ Ա.Հակոբյանը ևս վերոնշյալ պատրվակով է մուտք գործել բնակարան՝ իբրև կազմակերպելու բժշկի այցելությունը, ավելին՝ ի սկզբանե խաբեության է դիմել հենց ամբաստանյալ Ա.Հակոբյանը՝ ծանոթանալով տուժողների հետ և նրանց հայտնելով, թե իր ծանոթ բժիշկը մերսումների միջոցով կարող է բուժել Ե.Ավանեսյանին, ինչպես նաև վստահեցնելով թե իբրև նա այդ կերպ բուժել է նաև իր մորը, ճշտել է վերջիններիս բնակարանի հասցեն, այցելել նրանց, այնուհետև՝ Ա.Գրիգորյանին կանչել այնտեղ: Նման պայմաններում, անհիմն է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե սույն դեպքում բժիշկ ներկայանալը որևէ նշանակություն չի ունեցել բնակարան մուտք գործելու համար, հատկապես, որ Ա.Հակոբյանը բժիշկ չի եղել և նրա կողմից բնակարան մտնելը որևէ կապ չի ունեցել այն հանգամանքի հետ, որ նա ծանոթ բժիշկ է ունեցել: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատողությունները չեն բխում սույն գործով հաստատված փաստական տվյալների համակցությունից:

15. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև տվյալ դեպքում ամբաստանյալները ստացել են տուժողների «համաձայնությունը»՝ մուտք գործելու իրենց բնակարան, այնուամենայնիվ դա որևէ նշանակություն չի կարող ունենալ, քանի որ նման «համաձայնությունը» ձեռք է բերվել խաբեությամբ՝ տուժողների կամքի և գիտակցության վրա ներագդելու, նրանց դիտավորությամբ մոլորության մեջ գցելու արդյունքում, հետևաբար պետք է դիտարկվի որպես անձանց կամքին հակառակ վերջիններիս բնակարան ապօրինի մուտք գործել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված այն հանգամանքին, որ ամբաստանյալների մուտքը թույլատրելու հարցում տուժողները ընտրություն կատարելու հնարավորություն են ունեցել, ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընտրություն կատարելու հնարավորության մասին խոսք կարող է լինել միայն այն դեպքում, երբ առկա է տուժողի՝ հստակ, ճշմարիտ տվյալների հիման վրա ձևավորված կամքի ազատ արտահայտման հնարավորություն, որպիսի հանգամանքը սույն դեպքում հերքվում է գործի փաստական տվյալների համակցու-

թյամբ: Այս առումով, Վճռաբեկ դատարանը լիովին ընդունելի է համարում Առաջին աստիճանի դատարանի այն դատողությունը, որ թեև տուժողները թույլ են տվել, որ ամբաստանյալները մուտք գործեն իրենց բնակարան, սակայն նրանց կամքը ձևավորվել է բացառապես ամբաստանյալների խաբեության արդյունքում:

16. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի¹ խաբեության եղանակով բնակարան ապօրինի մուտք գործելուն տրված այն մեկնաբանությանը, որ մոլորության մեջ գցելով, պատրվակն օգտագործելով բնակարան մուտք գործելը կիրառելի է այն դեպքում, երբ տուժողը որոշակի հանգամանքների բերումով «պարտավորություն ունի» հանցավորին թույլատրելու մտնել բնակարան, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերոնշյալ եղանակը չի սահմանափակվում միայն այնպիսի վարքագծով, որն առաջ է բերում անձի մոտ բնակարան մուտք գործելը թույլատրելու պարտականության պատրանք, այլ ներառում է անձի գիտակցության և կամքի վրա ցանկացած ներգործություն, որի արդյունքում տուժողը, ընկնելով մոլորության մեջ, թույլ է տալիս հանցավորին մուտք գործել իր բնակարան:

Ուստի, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքի հեղինակի այն փաստարկին, որ սույն գործով բժիշկ հանդիսանալու պատրվակը նախապես համաձայնեցված է եղել ամբաստանյալների կողմից՝ որպես տուժողների բնակարան մուտք գործելու եղանակ, իսկ տուժողների կողմից ամբաստանյալներին բնակարան մուտք գործել թույլ տալը պայմանավորված է եղել բացառապես նշված հանգամանքով¹:

17. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշմամբ կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ամբաստանյալներ Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի արարքներում բացակայում է գողության՝ բնակարան ապօրինի մուտք գործելու ծանրացնող հանգամանքի հատկանիշը, հիմնավորված և պատճառաբանված չէ:

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալներ Ա.Հակոբյանի և Ա.Գրիգորյանի կատարած արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետից վերաորակելով նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել և չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետը, որը սույն գործով ենթակա էր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի, հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի դատական ակտը բեկանելու համար:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ: Ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալներ Արայիկ Արամայիսի Հակոբյանի և Արտակ Վարդգեսի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի մարտի 19-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հուլիսի 18-ի դատավճռին՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

71. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0393/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
մասնակցությամբ դիմողի ներկայացուցիչ՝ Ռ.ԲԵՋԱՆՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հունիսի 2-ին Մարիամ Հարությունի Մարկոսյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Մ.Ներսիսյանի (այսուհետ՝ նաև Հետաքննության մարմին) որոշմամբ հարուցվել է թիվ 15171318 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ժ.Զիչոյանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի որոշմամբ վերը նշված որոշումը վերացվել է, և քրեական գործի հարուցումը մերժվել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Վերոհիշյալ որոշման դեմ Մ.Մարկոսյանի բողոքը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ

Ա.Աֆանդյանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ մերժվել է:

2. 2018 թվականի օգոստոսի 24-ին դիմող Քնարիկ Ջանիբեկի Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ժ.Չիչոյանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշումները և ճանաչել Քնարիկ Դանիելյանի իրավունքների և ազատությունների խախտման փաստը:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ դիմող Ք.Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքը բավարարել է և դատախազին պարտավորեցրել վերացնելու Ք.Դանիելյանի իրավունքների խախտումը:

3. Դատախազ Ժ.Չիչոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի մարտի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

5. Դիմող Ք.Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան, որով խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. 2018 թվականի մայիսի 23-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ստացվել է Մարիամ Մարկոսյանի հաղորդումն այն մասին, որ Արսյոյն Հովհաննիսյանը, Արթուր, Մարո և Նաթելա Հարությունյաններն իր ծանոթ Ք.Դանիելյանից, ով բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում, 2017 թվականի փետրվարի 26-ից մինչև 2018 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել են 13.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՌԴ ռուբլի գումար¹:

6.1. Նյութերի նախապատրաստման ընթացքում Մ.Մարկոսյանը բացատրություն է տվել այն մասին, որ շուրջ յոթ տարի ճանաչում է

¹ Տե՛ս մերժված նյութեր, թերթ 5:

Ք.Դանիելյանին, ով իր մտերիմն է և մշտապես բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում: Մ.Մարկոսյանի բացատրության համաձայն՝ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Ռուսաստանի Դաշնությունից իրեն է գանգահարել Ք.Դանիելյանի հայրը՝ Ջանիբեկ Դանիելյանը և հայտնել, որ դուստրը որոշ ժամանակ առաջ ծանոթացել է ոմն Մարոյի հետ և վերջինիս հետ պարբերաբար շփվել է համացանցի միջոցով: Հերթական գրույցի ընթացքում Մ.Հարությունյանը Ք.Դանիելյանին հայտնել է, որ իր ամուսնու և երեխայի հետ դեպք է պատահել, շտապ գումար է անհրաժեշտ, պետք է բնակարանը վաճառի, որպեսզի հոգա ընտանիքի կարիքները, սակայն դրա համար երկար ժամանակ կպահանջվի, և խնդրել է իրեն ֆինանսական օգնություն ցուցաբերել: Սկզբնական շրջանում Ք.Դանիելյանն իր հորից 100.000 ՌԴ ռուբլի գումար է խնդրել և փոխանցել Մ.Հարությունյանին: Մ.Մարկոսյանը հայտնել է, որ ըստ իր ունեցած տեղեկությունների, 2017 թվականի փետրվարի 26-ից մինչ 2018 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, Ք.Դանիելյանի կողմից Արթուր, Մարո և Նաթելլա Հարությունյաններին, Արտյոմ Հովհաննիսյանին պարբերաբար փոխանցված գումարների ընդհանուր չափը կազմել է 780.000 ՌԴ ռուբլի: Մ.Մարկոսյանի բացատրության համաձայն՝ Մ.Հարությունյանը մշտապես խոստացել է վերադարձնել գումարները, սակայն խաբելով Ք.Դանիելյանին՝ այդպես էլ որևէ գումար չի ուղարկել և դրա հետ մեկտեղ սպառնացել է, որ եթե գումարները հետ պահանջի, ապա իր ամուսինը կմեկնի Ռուսաստանի Դաշնություն և նրան ու երեխային կվնասի:

Մ.Մարկոսյանը նշել է, որ Ք.Դանիելյանի հայրն է իրեն խնդրել, որպեսզի համապատասխան հաղորդում ներկայացնի իրավապահ մարմիններին մինչև իրենք կկարողանան վերադառնալ Հայաստանի Հանրապետություն, սակայն չի կարող նշել, թե Քնարիկ և Ջանիբեկ Դանիելյանները երբ են վերադառնալու Հայաստան¹:

7. Դատախազ Ժ.Չիչոյանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի որոշման համաձայն՝ «(...) [Ն]յութերի նախապարասրման ընթացքում վարույթն իրականացնող հետաքննիչի կողմից բազմիցս միջոցներ են ձեռնարկվել Մարո Հարությունյանին, Արթուր Հարությունյանին, Արտյոմ Հովհաննիսյանին և Նաթելլա Հարությունյանին հայրնաբերելու ուղղությամբ, սակայն վերջիններիս հայրնաբերել չի հաջողվել:

(...) Քնարիկ Դանիելյանի կողմից իր ծանոթ Մարո Հարությունյանի երեխայի և ամուսնու խնդիրների լուծման համար պարտքով գումար րրամադրելը, ինչպես նաև Նաթելլա Հարությունյանին, Արթուր Հարությունյանին և Արտյոմ Հովհաննիսյանին գումարներ փոխանցելը Մ.Հարությունյանի ընտանիքում ծագած խնդիրների լուծման համար վեր է քրեաիրավական դաշտում լուծման հարթությունից, որպեսի

¹ Տե՛ս մերժված նյութեր, թերթեր 19-20:

պայմաններում վերջիններիս միջև ծագած իրավահարաբերությունը ենթակա է լուծման քաղաքացիաիրավական դաշտում, քանի որ հիշյալ հանգամանքներով որևէ կերպ չի հաստատվում Մ.Հարությունյանի նախնական դիրավորությունն առ այն, որ նա մինչև գումարը վերցնելը նպատակ է ունեցել այն չվերադարձնելու, բացի այդ Մ.Հարությունյանը Ք.Գանիելյանից նշված գումարը խնդրել է, որպես պարտք իր ընդամենը ծագած խնդիրների լուծման համար:

Ուստի նման պայմաններում ունի Մարտ Հարությունյանի, Արթուր Հարությունյանի, Եսթելլա Հարությունյանի, Արտյոմ Հովհաննիսյանի գործողությունները չեն կարող դիրավել խարդախության հանցակազմի շրջանակներում, որպես պայմաններում էլ վերջինիս գործողություններում բացակայում են ՀՀ քրեական (դատավարության) օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմի հարկանիշները»¹:

8. Դատախազ Ա.Աֆանդյանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշման համաձայն. «(...) Ք.Գանիելյանի կողմից պարբերաբար Մարտ Հարությունյանին և վերջինիս ընդամենի անդամներին պարտքով գումարների փոխանցումը կատարվել է հենց Ք.Գանիելյանի դիմումով, ավելին՝ Ք.Գանիելյանի կողմից վերջիններիս պարբերաբար պարտքով գումարներ փոխանցելը եղել է այն պայմանով, որ Մ.Հարությունյանը պարտք է վաճառել իր բնակարանը և վերադարձներ վերջինիս կողմից պարտք փոխած գումարները, ուստի նման պայմաններում խոսք չի կարող լինել Մ.Հարությունյանի և մյուսների կողմից Ք.Գանիելյանի վարախոսությունը չարաշահելու և վերջինիս գույքը դիրավորությամբ հափշտակելու մասին, քանի որ վերջիններիս միջև ծագած իրավահարաբերությունները արդեն իսկ կրել են քաղաքացիաիրավական բնույթ: Թեև նյութերի նախապարապարման ընթացքում հնարավոր չի եղել հայտնաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձանց, սակայն Մ.Մարկոսյանի կողմից ներկայացված հաղորդման, ինչպես նաև հեղափոխում վերջինիս կողմից փոխած բացառության բովանդակությունից պարզ է դառնում, որ Ք.Գանիելյանի կողմից Մարտ Հարությունյանին և մյուսներին գումարներ փոխել է պարտքով և ինչպես հենց բողոքարկել է իր բացառությամբ նշել Մ.Հարությունյանը Ք.Գանիելյանից անհրաժեշտ գումարը խնդրել է հեղափոխում բնակարանը վաճառելու և այն վերադարձնելու նպատակով, ուստի նման պայմաններում Մ.Հարությունյանից և մյուսներից բացառություն չվերցնելը չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի հարուցման համար (...)»²:

9. Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշման համաձայն՝ «(...) [Դատարանը գրնում է, որ քրեական գործով

¹ Տե՛ս մերժված նյութեր, թերթեր 30-33:

² Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 14:

դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով հնարավորություն չի ընձեռնել վարույթն իրականացնող մարմնին ապահովելու լրիվ և բազմակողմանի քննություն:

Դատարանն արդարացի է համարում դիմող կողմի պարճառաքանություններն այն մասին, որ Մարիամ Մարկոսյանի հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում չի հարցաքննվել Քնարիկ Ջանիբեկի Դանիելյանը և չի պարզվել, թե արդյոք նրա լիազորած անձը՝ Մարիամ Հարությունի Մարկոսյանը ամբողջական է ներկայացրել Քնարիկ Ջանիբեկի Դանիելյանի, կամ վերջինիս հոր կողմից հեռախոսով հայտնած փաստական փյվյալները, բացի այդ, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք այդ ժամանակահատվածում Քնարիկ Դանիելյանի հետ կապ են հաստատել 093300085, 044364656, 041535666 և 077120582 հեռախոսահամարներով, սակայն չի հաստատվել կամ հերքվել նշված հեռախոսային խոսակցությունների առկայությունը, չեն սրացվել դրանց վերձանումները:

Դատարանը փաստում է, որ ենթադրյալ հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ դատախազի եզրահանգումները չեն բխում ղեկավար առթիվ իրականացված նախնական սրուզման արդյունքում ձեռք բերված փաստական փյվյալների բովանդակությունից և դրանք դեռևս բավարար չեն հաստատելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են:

Այսպիսով դատարանը գտնում է, որ չեն պարզվել դիմողի կողմից նշված և գործի համար նշանակություն ունեցող էական հանգամանքներ, ինչը կարող է պարզվել միայն հարուցված քրեական գործի և արդյունավետ քննության իրականացման պայմաններում

(...)»¹:

9.1 Արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշել է. «Դիմող Քնարիկ Դանիելյանի ներկայացուցիչ Ռոբերտ Բեջանյանի բողոքը՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնական բաժնի հետաքննիչ Մ.Ներսիսյանի՝ «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» 02.06.2018թ., Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի դատախազության դատախազ Ժ.Չիչոյանի՝ «Քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու» 08.06.2018թ. և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանի՝ «Բողոքը քննության առնելու մասին» 04.07.2018թ. որոշումները և Քնարիկ Դանիելյանի իրավունքների խախտումը վերացնելու մասին, բավարարել:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին , թերթեր 51-52:

Պարտավորեցնել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Ա.Ֆանդյանին՝ վերացնելու Քնարիկ Դանիելյանի իրավունքների խախտումը (...)¹:

10. Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման համաձայն՝ «(...) [Զ]երծ մնալով վարույթի իրականացնող մարմնի կողմից, կողմերի միջև ձևավորված իրավահարաբերությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում դիրքերը հանգամանքին վերջնական գնահատական տալուց, այնուամենայնիվ անհրաժեշտ է (...) փաստել, որ ինքնին խարդախության հանցակազմի առկայության հարցը քննարկվել է նախաքննության մարմնի կողմից՝ ելնելով վերջինիս դիպրոզիցիայի հարկանիշներից, որը բացառվել է հաշվի առնելով, որ խարդախության հանցակազմի հարկանիշների առկայության հարցը կարող է քննարկվել, եթե հաստատվել է հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սակայն պետք է արձանագրել, որ այդ հանգամանքին լիարժեք գնահատական վարույթի իրականացնող մարմնի կողմից կարող է տրվել քրեական գործի հարուցման հիմքի և առիթի օրինականությունը ստուգելու համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները պարզելուն ուղղված անհրաժեշտ և բավարար գործողությունների կատարումից հետո, մինչդեռ վարույթի իրականացնող մարմնի կողմից ձեռք չեն բերվել ողջամրորեն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, ինչը հանգեցրել է անձի իրավունքների, մասնավորապես՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց հայցելու իրավունքի խախտման: Բացի այդ էլ, հարկ է արձանագրել, որ հանցագործության հարկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (Քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում), քանի որ նման կասկածները կարող են վերացվել միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության միջոցով, ինչն էլ հնարավոր է հարուցված քրեական գործի պայմաններում, իսկ իրավահարաբերության քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական տիրույթում գրավելու վերաբերյալ վաղաժամկետ, շտապողական դատողություններ անելը ևս կարող է խաթարել քրեաիրավական ընթացակարգի էությունը: Վերոգրայի հիման վրա էլ, Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքարկված դատական ակտը կայացնելիս Առաջին աստիճանի դատարանը թույլ չի տրվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական ակտ, որը բեկանելու իրավաչափ հիմքեր չկան (...)²:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 53:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 42:

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

11.1. Ի հիմնավորումն իր վերոհիշյալ փաստարկի՝ բողոքաբերը, մեջբերելով Վճարելի դատարանի մի շարք որոշումներ, նշել է, որ նախապատրաստված նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ք.Դանիելյանի կողմից իր ծանոթ Մ.Հարությունյանին վերջինիս երեխայի և ամուսնու խնդիրների լուծման նպատակով պարտքով գումար տրամադրելու, ինչպես նաև Մ.Հարությունյանի ընտանիքում ծագած ֆինանսական խնդիրների լուծման համար Ն.Հարությունյանին, Ա.Հարությունյանին և Ա.Հովհաննիսյանին պարբերաբար գումարներ փոխանցելու հարցի շուրջ վերջիններիս միջև ծագած գումարային պարտք ու պահանջի վերաբերյալ իրավահարաբերությունը ենթակա է լուծման բացառապես քաղաքացիաիրավական դաշտում, քանի որ որևէ կերպ չի հաստատվել Մ.Հարությունյանի նախնական դիտավորությունն առ այն, որ նա մինչև գումարը վերցնելը նպատակ է ունեցել այն չվերադարձնելու:

Բողոքաբերը նշել է նաև, որ թեև նյութերի նախապատրաստման ընթացքում հնարավոր չի եղել հայտնաբերել ենթադրյալ հանցանք կատարած անձանց, սակայն Մ.Մարկոսյանի կողմից ներկայացված հաղորդման, ինչպես նաև հետագայում վերջինիս կողմից տրված բացատրության բովանդակությունից պարզ է դառնում, որ Ք.Դանիելյանի կողմից Մ.Հարությունյանին և մյուսներին գումարները փոխանցվել են պարտքով, և ինչպես հենց Մ.Մարկոսյանն է իր բացատրությամբ նշել, Մ.Հարությունյանը Ք.Դանիելյանից անհրաժեշտ գումարը խնդրել է՝ հետագայում բնակարանը վաճառելու և այն վերադարձնելու պայմանով: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները կրել են քաղաքացիաիրավական բնույթ, ուստի Մ.Հարությունյանից և մյուսներից բացատրություն չվերցնելը չի կարող վկայել քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը պարզելու համար բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու մասին:

Ուստի, բողոք բերած անձը պնդել է, որ առկա վեճը ենթակա է լուծման բացառապես մասնավոր՝ քաղաքացիաիրավական տիրույթում և դրանք քրեաիրավական ոլորտում քննության առարկա դարձնելու դեպքում կխաթարվի քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, և որ Ք.Դանիելյանի կողմից պարտքով փոխանցված գումարները չվերադարձնելը այդ վեճը հանրային տիրույթում քննելու և լուծելու բավարար ու հիմնավոր փաստարկ չէ:

11.2. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն փաստաբեկին, որ Մ.Մարկոսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով հնարավոր գործուն միջոց կարող էր ծառայել Ք.Դանիելյանին հարցաքննելը, հեռախոսահամարների վերծանումները ստանալը՝ բողոքաբերը փաստել է, որ հիշյալ եզրահանգումը հակասում է Վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշումներին, որ դատարանը մինչդեռ ատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս իրավասու չէ ուղղակի կամ քողարկված ցուցումներ տալ վարույթն իրականացնող մարմիններին, հակառակ դեպքում դուրս կգա իր վերահսկողական լիազորությունների շրջանակից:

11.3. Վերոշարադրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը, այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով Ք.Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք վարույթն իրականացնող մարմնի կողմից Մ.Մարկոսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և դիմող Ք.Դանիելյանի իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հեղափոխության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:*

Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ *«(...)* /Դ/ատարանը մինչդեռ ատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հարակ պատճառաբանի՝

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչու՞մ է այն դրսևորվել, բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել»¹:

14. Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ իրավական պաշտպանություն հայցելու հնարավորության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ: Վերջինս պայմանավորված է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Այսպես, եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես՝ քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Ուստի, ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Հակառակ պարագայում կարող է առաջանալ իրավիճակ, երբ նույն փաստի վերաբերյալ առկա լինեն քաղաքացիական դատավարության կարգով և քրեական դատավարության կարգով կայացված օրինական ուժի մեջ մտած իրար հակասող դատական ակտեր, ինչն անթույլատրելի է, քանի որ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի²:

14.1. Վերահաստատելով նախորդ կետում վկայակոչված իրավական դիրքորոշումները՝ *Տարյանա Բեյլավցևայի* և *Շահեն Գևորգյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանու-

¹ Տե՛ս *Մանվել և Լիդա Հովհաննիսյանների* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՐԱԳ/0001/11/14 որոշման 13-րդ կետը:

² Տե՛ս *Վճռաբեկ դատարանի՝ Լիա Ավերիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 29-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 30-րդ կետը, *Վարդան Մաթևոսյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԳ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, *Ռուդիկ Բալասանյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ որոշման ԵԿԳ/0199/01/13 17-րդ կետը:

թյուն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմների գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը, այդ թվում՝ վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Մ.Մարկոսյանի հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու մասին Հետաքննության մարմնի՝ 2018 թվականի հունիսի 2-ի որոշումը դատախազ Ժ.Զիչոյանի՝ 2018 թվականի հունիսի 8-ի որոշմամբ վերացվել է, և քրեական գործի հարուցումը մերժվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմի բացակայության հիմքով այն պատճառաբանությամբ, որ Ք.Դանիելյանի և Ա.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Մ.Հարությունյանի ու Ն.Հարությունյանի միջև առկա վեճը ենթակա է լուծման քաղաքացիաիրավական կարգով²: Այս որոշման դեմ Մ.Մարկոսյանի բողոքը դատախազ Ա.Աֆանդյանի՝ 2018 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ նույն պատճառաբանությամբ մերժվել է³:

Վերոնշյալ որոշումների դեմ Ք.Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքն Առաջին ատյանի դատարանը բավարարել է՝ պարտավորեցնելով վերացնել դիմող Ք.Դանիելյանի իրավունքների և ազատությունների խախտումը՝ փաստարկելով, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը Հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով հնարավորություն չի ընձեռնել վարույթն իրականացնող մարմնին ապահովելու լրիվ և բազմակողմանի քննություն: Առաջին ատյանի դատարանը հիմնավոր է համարել բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ նյութերի նախապատրաստման ընթացքում չի հարցաքննվել Ք.Դանիելյանը, չեն պարզվել 093300085, 044364656, 041535666 և 077120582 հեռախոսահամարներով հեռախոսային խոսակցությունների առկայությունը, որոնցով ենթադրյալ հանցանք կատարած անձինք այդ ժամանակահատվածում Ք.Դանիելյանի հետ կապ են հաստատել, չեն ստացվել դրանց վերծանումները⁴:

¹ Տե՛ս *Տարյանա Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱՆԴ/0025/11/16 որոշման 12.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

Վերաքննիչ դատարանն Առաջին աստիճանի դատարանի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ խարդախության հանցակազմի առկայության հանգամանքին լիարժեք գնահատական վարույթն իրականացնող մարմնի կողմից կարող է տրվել քրեական գործի հարուցման հիմքի և առիթի օրինականությունը ստուգելու համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները պարզելու ուղղված անհրաժեշտ և բավարար գործողությունների կատարումից հետո, մինչդեռ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք չեն բերվել ողջամտորեն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ, քանի որ նման կասկածները կարող են վերացվել միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության միջոցով¹:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները բավարարել են դիմողի ներկայացուցչի բողոքը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել վերացնել Ք.Դանիելյանի իրավունքների ենթադրյալ խախտումները՝ առանց պատշաճ իրավական գնահատականի արժանացնելու այն, որ վիճարկվող որոշումների դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան կազմում են բացառապես քաղաքացիաիրավական գործիքակազմի գործադրմամբ լուծման ենթակա հարցեր:

16.1. Այսպես՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ Ք.Դանիելյանի և Ա.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Մ.Հարությունյանի, Ն.Հարությունյանի միջև ծագած իրավահարաբերություններն իրենց բնույթով քաղաքացիական են, ձևավորվել են կողմերի փոխադարձ կամահայտնության հիման վրա: Ընդ որում, այդ մասին հայտնել է հենց Մ.Մարկոսյանն իր բացատրությունում՝ նշելով, որ Ք.Դանիելյանի կողմից համապատասխան գումարները փոխանցվել են պարտքով և հետագայում Մ.Հարությունյանի կողմից բնակարանը վաճառելու ու վերադարձնելու պայմանով²: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկին, որ գումարը չվերադարձնելու հանգամանքն ինքնին չի վկայում Մ.Հարությունյանի մոտ այն ի սկզբանե հափշտակելու դիտավորության առկայության մասին³:

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 11.1-րդ կետը:

16.2. Ստորադաս դատարանները ոչ միայն պատշաճ գնահատման չեն ենթարկել վերոնշյալ փաստական տվյալները, այլև մատնանշել են վարույթն իրականացնող մարմնի կողմից պարզման ենթակա հանգամանքներ, որոնք իրավահարաբերության քաղաքացիաիրավական բնույթի պայմաններում գործի համար էական նշանակություն ունենալ չեն կարող:

17. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, վարույթն իրականացնող մարմնի կողմից Մ.Սարկոսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և դիմող Ք.Դանիելյանի իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևալն է. իրավաչափ են արդյոք քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքում Ք.Դանիելյանի իրավունքների խախտումը վերացնելու՝ դատախազ Ա.Աֆանդյանի պարտականությունը սահմանելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի դատական ակտը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (...):»*:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:*

(...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

19.1. Մեջբերված քրեադատավարական նորմերի հարաբերակցության առումով Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանդություն, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ

հողվածն ամրագրում է առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով: Նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը¹:

Այսպիսով, քրեական գործի հարուցման և նախաքննության փուլերում իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմանները, դրանց արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները տարբեր են: Մասնավորապես, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում դատարանը պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով քննության առնի բողոքը և կայացնի համապատասխան դատական ակտ՝ վիճարկվող որոշումը վերացնելու մասին, որը պարտադիր է դարձնում քրեական գործի հարուցումը, կամ այն հաստատելու մասին²:

20. Սույն գործի նյութերի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում որոշում է կայացրել Հետաքննության մարմնի՝ «Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին» 2018 թվականի հունիսի 2-ի, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի դատախազության դատախազ Ժ.Չիչոյանի՝ «Քրեական գործ հարուցելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործի հարուցումը մերժելու» 2018 թվականի հունիսի 8-ի և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանի՝ «Բողոքը քննության առնելու մասին» 2018 թվականի հուլիսի 4-ի որոշումները և Ք.Դանիելյանի իրավունքների խախտումը վերացնելու մասին Ք.Դանիելյանի ներկայացուցիչ Ռոբերտ Բեջանյանի բողոքը բավարարել և պարտավորեցնել դատախազ Ա.Աֆանդյանին՝ վերացնելու Ք.Դանիելյանի իրավունքների խախտումը³: Վերաքննիչ դատարանի կողմից նշված դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ⁴:

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 19-19.1-րդ կետերում ներկայացված իրավանորմերի և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշման 20-21-րդ կետերը:

² Տե՛ս *Անժելա Հարությունյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԿԴ/0104/11/16 որոշման 17.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Առաջին աստիճանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքում չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հատուկ կառուցակարգը, այլ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր կառուցակարգը: Ուստի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության քրեադատավարական ընթացակարգը չի պահպանվել:

22. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքում Ք.Դանիելյանի իրավունքների խախտումը վերացնելու՝ դատախազ Ա.Աֆանդյանի պարտականությունը սահմանելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի դատական ակտն իրավաչափ չեն:

23. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, 290-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Քնարիկ Ջանիբեկի Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Քնարիկ Ջանիբեկի Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018

թվականի նոյեմբերի 13-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը բեկանել ու փոփոխել: Դիմող Քնարիկ Դանիելյանի ներկայացուցիչ Ռ.Բեջանյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

72. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԴ/0039/11/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախազահությանը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությանը՝
մասնակցությանը դիմող՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Ա.ՈՍԿԱՆՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի և շահագրգիռ անձ Գայանե Բաղդասարի Արրահամյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2017 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ Յու.Թամազյանը (այսուհետ՝ նաև Հետաքննության մարմին) որոշում է կայացրել Գայանե Արրահամյանի դիմումի վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝

1) Արտակ Ոսկանյանի կողմից Մխիթար Մաթևոսյանի կատարած ինքնիրավչությանն օժանդակելու կապակցությամբ՝ Արտակ Ոսկանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով,

2) Գայանե Աբրահամյանի կողմից Արտակ Ոսկանյանի նկատմամբ սուտ մատնություն կատարելու կապակցությամբ՝ Գայանե Աբրահամյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

2. Նշված որոշման դեմ Ա.Ոսկանյանի բողոքը Լոռու մարզի դատախազի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ մերժվել է:

3. Ա.Ոսկանյանի բողոքի քննության արդյունքում Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան) 2018 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ բավարարվել է բողոքը, և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել Ա.Ոսկանյանի իրավունքների խախտումը, այն է՝ վերացնել Հետաքննության մարմնի՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 2017 թվականի նոյեմբերի 11-ի որոշման 2-րդ կետը և այդ որոշումը հաստատելու մասին Լոռու մարզի դատախազի՝ 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը:

4. Լոռու մարզի դատախազության դատախազ Ա.Ավագյանի և շահագրգիռ անձ Գ.Աբրահամյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2019 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն: Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է, Ա.Ոսկանյանի բողոքը բավարարվել է, վերացվել է Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 11-ի որոշման 2-րդ կետը:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը և շահագրգիռ անձ Գ.Աբրահամյանը վճռաբեկ բողոքներ են բերել, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել են վարույթ:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Գ.Աբրահամյանը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետին 2017 թվականի հոկտեմբերի 19-ին դիմում է ներկայացրել այն մասին, որ. «(...) Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող քրեական գործով հանդես գալով որպես փոխառու, 2017թ. հոկտեմբերի դարական նիստի ժամանակ ամբաստանյալ Մխիթար Մաթևոսյանի պաշտպան Արտակ Ոսկանյանը զրպարտելով իրեն և Քրիստիան Մխիթարյանին՝ անվանել է գողեր, սակայն իրենց վերաբերյալ քննվող՝ գողություն

կատարելու մասին քրեական գործով դատարանը դեռևս որոշում չի կայացրել, մինչդեռ Արտակ Ոսկանյանը ներկա է եղել, թե ինչպես է Մխիթար Մաթևոսյանը իրենից խլում իր ոսկյա զարդերը, դրամապանակը, իր և ամուսնու անձնագրերը, տան վկայականը, միաժամանակ Արտակ Ոսկանյանը սրիպելով՝ իրեն գրել է փվել 2.5 մլն. դրամի պարտավորագիր, Մխիթար Մաթևոսյանի հետ կատարելով հանցագործություն (...):»¹:

6.1. Գ.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Ոսկանյանը 2017 թվականի հոկտեմբերի 20-ին բացատրություն է տվել այն մասին, որ դիմումում շարադրված տեղեկություններն ակնհայտ սուտ են, և խնդրել է ակնհայտ սուտ մատնություն կատարելու համար դիմողին ենթարկել քրեական պատասխանատվության²:

6.2. Նյութերի նախապատրաստման ընթացքում Գ.Աբրահամյանը 2017 թվականի հոկտեմբերի 25-ի լրացուցիչ բացատրությամբ հայտնել է, որ. «Նա (Արտակ Ոսկանյանը) ոչ թե սրիպել է, այլ Մխիթարի պահանջով թելադրել է ինձ գրել պարտավորագիր»³:

7. Հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2017 թվականի նոյեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) Գայանե Աբրահամյանի դիմումի շուրջ նախապարտադրված (...) նյութերով հիմնավորվել է, որ Արտակ Ոսկանյանը, որպես ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, 2017թ. ապրիլի 25-ին Մխիթար Մաթևոսյանի աշխատասենյակ է այցելել նրա կողմից Գայանե Աբրահամյանի նկատմամբ բռնություն գործադրելով ինքնիրավչություն կատարելուց հետո միայն՝ Մխիթար Մաթևոսյանին իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար: Ըստ էության, Արտակ Ոսկանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 38 հոդվածի 5-րդ մասում թվարկված եղանակներից և որևէ մեկով չի օժանդակել Մխիթար Մաթևոսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 322 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարմանը, հետևապես՝ նրա արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-322 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմը:

Սույն նյութերով չի հիմնավորվել Արտակ Ոսկանյանի կողմից Գայանե Աբրահամյանին վիրավորելու հանգամանքը: Բացի այդ, վիրավորանքը կրում է քաղաքացիական բնույթ և այդ կապակցությամբ իրավահարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական դատավարության կարգով:

Ինչ վերաբերում է Արտակ Ոսկանյանի կողմից նյութերի նախապարտադրման ընթացքում նշված՝ Գայանե Աբրահամյանի կողմից սույր

¹ Տե՛ս նյութեր, թերթ 4:

² Տե՛ս նյութեր, թերթ 7:

³ Տե՛ս նյութեր, թերթեր 15-16:

մատչելիություն կատարելուն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հանցագործության մասին սույր մատչելիություն կատարելու համար, եթե անձը գործել է՝ գիտակցելով, որ իր փրամատչելիությունը կեղծ է: Նշված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտարկողությամբ, այսինքն՝ հանցակազմի առկայությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ անձը գործել է գիտակցաբար և հանցագործության մասին ակնհայտ սույր հաղորդում է ներկայացրել՝ նպատակ ունենալով հասնել անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Սույն նյութերով պարզվել է, որ Գայանե Աբրահամյանին իր դիմումում և բացատրություններում նշելով Արտակ Ոսկանյանի կողմից ինքնիրավչությանն օժանդակելու մասին, հայտնել է իր սուբյեկտիվ կարծիքը: Նյութերի նախապատրաստման ընթացքում չի հիմնավորվել, որ Գայանե Աբրահամյանը գործել է գիտակցաբար և հանցագործության մասին ակնհայտ սույր հաղորդում ներկայացրել, չի հիմնավորվել նաև, որ նա հերքալու է անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակ, ուստի Գայանե Աբրահամյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը (...)¹:

7.1. Հետաքննության մարմնի կողմից Գ.Աբրահամյանի հաղորդման վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել Գ.Աբրահամյանից և նրա ամուսնուց, փաստաբան Ա.Ոսկանյանից, պահանջվել և ստացվել են թիվ 71155017 քրեական գործով տուժող Գ.Աբրահամյանի հաղորդման, նախաքննության ընթացքում Գ.Աբրահամյանի, Մ.Մաթևոսյանի և Լ.Ղազարյանի ցուցմունքների, առերես հարցաքննությունների, կնքված պարտավորագրի, ինչպես նաև դատական նիստի արձանագրության պատճենները²:

8. Առաջին ատյանի դատարանը, մեջբերելով *Արթուր Մամաջանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼՂ2/0055/01/15 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ սուտ մատնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ստուգելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման կապակցությամբ օրենքով սահմանված կարգով վերջնական որոշման առկայությունը, գտել է որ. «(...) Գայանե Աբրահամյանի դիմումի և բացատրությունների բովանդակությունից պարզվել է ՀՀ քրեական օրենսգրքի 333 հոդվածի հարկանիշներով քրեական գործ հարուցելու բավարար հիմք, քանի որ նյութերով հավաստվել է՝ սույր մատնության,

¹ Տե՛ս նյութեր, թերթեր 153-158:

² Տե՛ս, ի թիվս այլնի, նյութեր 153-158:

որպես քրեական օրենքով արգելված արարքի օբյեկտը և օբյեկտիվ կողմը, որը բավարար է քրեական գործ հարուցելու համար, այն ժամանակ, երբ հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ կկայացվի վերջնական որոշում: Իսկ մեղքի առկայությունը կամ բացակայությունը կարող է որոշվել արդեն քրեական գործ հարուցելուց հետո քրեական գործի քննության հետագա փուլերում:

Դատարանը հիմնավոր չի համարում (...) հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման մեջ կատարած հետևությունն այն մասին, որ նյութերի նախապարաստման ընթացքում չի հիմնավորվել, որ Գայանե Աբրահամյանը գործել է գիտակցաբար և ներկայացրել հանցագործության մասին ակնհայտ սույր հաղորդում: Դատարանը գտնում է, որ դիմումում կոնկրետացված որևէ անձի կողմից ենթադրաբար հանցավոր գործողություններ կատարելու մասին տեղեկությունները ոչ գիտակցված չեն կարող շարադրվել:

(...)

Դատարանը գտնում է, որ սույր մատնության վերաբերյալ քրեական գործ հարուցելու բավարար հիմքերը պարզելու համար հետաքննության մարմինը կատարված քննության արդյունքում մինչև սույր մատնության դեպքով քրեական գործ հարուցելը կամ քրեական գործ հարուցելը մերժելը, պետք է հանգամանորեն քննարկի, վերլուծի և գնահատի սկզբնական հաղորդման մեջ նշված փաստերը, դրանց հիման վրա կայացնի համապատասխան որոշում, որը օրենքով սահմանված կարգով կարող է նաև բողոքարկվել, որից հետո միայն այդ որոշման ուժի մեջ մտնելու դեպքում, համապատասխան առիթի և հիմքերի առկայության դեպքում անդրադառնա սույր մատնության դեպքին: Հակառակ դեպքում՝ երկու որոշումների առկայության պայմաններում սույր մատնության հետևանքով տուժած անձը զրկված է սույր մատնություն կատարելու դեպքի կապակցությամբ հաղորդում ներկայացնելու միջոցով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը բացառում է քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդման իրականացումը, եթե՝ անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում:

Քննարկվող դեպքով հետաքննության մարմնի 11.11.2017թ. որոշումից երևում է, որ հետաքննության մարմինը միաժամանակ քննարկել է, ինչպես Գայանե Աբրահամյանի կողմից արված հանցագործության մասին հաղորդման բովանդակությունը՝ դրա ճիշտ կամ սույր լինելը, այնպես էլ Գայանե Աբրահամյանի կողմից ենթադրաբար սույր մատնություն կատարելու հանգամանքը և արդյունքում մեկ փաստաթղթով կայացրել է

երկու որոշում (...):

Տվյալ դեպքում հետաքննության մարմնի 11.11.2017թ. որոշմամբ առկա է սույր մատչելիության դեպքով Գայանե Աբրահամյանի նկատմամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին չվերացված որոշում, որը Արտակ Ոսկանյանի կողմից համապատասխան հաղորդում ներկայացվելու դեպքում միայն այդ հանգամանքի առկայությունը խոչընդոտ է քրեական գործ հարուցելու համար (...)»¹:

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը քննության առնելով դիմող Արտակ Ոսկանյանի բողոքը, իրավաչափ եզրահանգման է եկել այն մասին, որ ՀՀ նախկինության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի համայնքային նախկինության բաժանմունքի տեսուչ Յու.Թամազյանի կողմից 11.11.2017թ. կայացված որոշման 2-րդ կետով խախտվել են Ա.Ոսկանյանի իրավունքները, քանի որ նա այդ որոշման առկայության պայմաններում գրկվել է Գայանե Աբրահամյանի կողմից սույր մատչելիություն կատարելու դեպքի կապակցությամբ որպես բուժող հաղորդում ներկայացնելու հնարավորությունից: Այսինքն սահմանափակվել է Արտակ Ոսկանյանի արդար քննության իրավունքը, քանի որ ՀՀ նախկինության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի համայնքային նախկինության բաժանմունքի տեսուչ Յու.Թամազյանի կողմից 11.11.2017թ. կայացված և չվերացված որոշման առկայությունը, որով մերժվել է Գայանե Աբրահամյանի կողմից Արտակ Ոսկանյանի նկատմամբ սույր մատչելիություն կատարելու դեպքի կապակցությամբ քրեական գործ հարուցելը, բացառում է սույր մատչելիության դեպքով Գայանե Աբրահամյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը:

(...)

[Հ]իմնավոր են դատարանից Ա.Ավագյանի կողմից բերված փաստաթղթերն այն մասին, թե Դատարանը խախտել է ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները՝ որոշումը կայացնելով անձի իրավունքների խախտումը վերացնելու հետաքննության մարմնի պարտականության մասին»²:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Ըստ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի բողոքի՝ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավորված չեն, չեն բխում նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներից: Բողոքարկվող դատական

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 90-104:

² Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 80-93:

ակտերով, բողոքաբերի կարծիքով, թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 358-րդ հոդվածների էական խախտումներ, ինչպես նաև դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մասնավորապես, բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները, ստանձնելով նյութերի նախապատրաստություն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունը, իրավաբանական գնահատական են տվել Գ.Աբրահամյանի արարքին, կարծիք են հայտնել վերջինիս մեղավորության վերաբերյալ՝ այդ կերպ ուղղորդելով նախնական քննության մարմնին և քրեական գործ հարուցվելու դեպքում կանխորոշելով դրա հետագա ընթացքը, ինչը դուրս է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

10.1. Բացի այդ, անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից արձանագրված՝ Ա.Ոսկանյանի արդար քննության իրավունքի խախտման փաստին այն հիմնավորմամբ, որ հետաքննության մարմնին իր որոշմամբ Ա.Ոսկանյանին զրկել է Գ.Աբրահամյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի կապակցությամբ որպես տուժող հաղորդում ներկայացնելու հնարավորությունից, քանի որ չվերացված որոշման առկայությունը բացառում է սուտ մատնության դեպքով Գ.Աբրահամյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը, բողոքաբերը փաստել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Գ.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Ոսկանյանը բացատրություն է տվել, որ Գ.Աբրահամյանի հայտնած տեղեկություններն ակնհայտ սուտ են, և խնդրել է իր նկատմամբ սուտ մատնություն կատարելու համար նրան ենթարկել քրեական պատասխանատվության: Ա.Ոսկանյանի հայտնած՝ իր նկատմամբ կատարված առերևույթ հանցագործության մասին տեղեկությունն առաջացրել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը: Բողոքաբերի պնդմամբ՝ Ա.Ոսկանյանի իրավունքները կխախտվեին, եթե նշված փաստին վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրվեր համապատասխան իրավական գնահատական:

10.2. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն՝ Հետաքննության մարմնի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ 2017 թվականի նոյեմբերի 11-ի որոշման 2-րդ կետը վերացնելու մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշումը և Ա.Ոսկանյանի բողոքը մերժել:

11. Ըստ շահագրգիռ անձ Գ.Աբրահամյանի վճռաբեկ բողոքի՝

ստորադաս դատարանների կողմից կայացվել են չհիմնավորված դատական ակտեր, խախտվել են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոքաբերի համոզմամբ՝ Հետաքննության մարմնի կողմից օրենսդրության պահանջների պահպանմամբ ճիշտ եզրահանգում է արվել իր արարքում սուտ մատնության հանցակազմի բացակայության մասին, որպիսի պայմաններում խոսք չի կարող լինել վարույթի իրականացնող մարմնի որոշման ոչ հիմնավոր լինելու վերաբերյալ: Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է ընդհանուր բնույթի վերացական դատողություններ:

11.1. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների որոշումները և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով Ա.Ոսկանյանի կողմից ներկայացված բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ա.Ոսկանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս նույն որոշմամբ նաև Գ.Աբրահամյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության արձանագրումը հանգեցրել է Ա.Ոսկանյանի իրավունքների խախտման:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական գործ հարուցելու առիթներն են՝*

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցագործության մասին տեղեկություն սրանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝*

1) քրեական գործ հարուցելու մասին.

2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ «1.Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)»:

14. Հանցագործության մասին հաղորդման և դրա բովանդակությունը հերքող՝ իրարամերժ վարույթներով քրեական հետապնդում իրականացնելու առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արթուր Մամաջանյանի գործով, որի փաստական հանգամանքներն ունեին հետևյալ բովանդակությունն ու ժամանակագրական հաջորդականությունը.

- Ա.Մամաջանյանի հաղորդման հիման վրա **2015 թվականի սեպտեմբերի 11-ին** խոշոր չափով կաշառք տալու և ստանալու հանցագործությունների հատկանիշներով հարուցվել էր **թիվ 55104815** քրեական գործը, որի նախաքննության ընթացքում՝ **2015 թվականի նոյեմբերի 17-ին**, Ա.Մամաջանյանին մեղադրանք էր առաջադրվել խոշոր չափով **կաշառք տալու համար**,

- **2015 թվականի դեկտեմբերի 21-ին** վերոնշյալ քրեական գործի նյութերով հարուցվել էր **թիվ 55106115** քրեական գործը՝ մեղադրյալ Ա.Մամաջանյանի կողմից սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ,

- **2015 թվականի դեկտեմբերի 22-ին** Ա.Մամաջանյանը **թիվ 55106115** քրեական գործով հարցաքննվել էր որպես կասկածյալ, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը,

- **2015 թվականի դեկտեմբերի 28-ին** որոշում էր կայացվել **կաշառք տալու վերաբերյալ թիվ 55104815** քրեական գործով վարույթը կարճելու, հանցագործության դեպքի բացակայության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել և սպառվել են նոր ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունները,

Ինչպես հետևում է նշված փաստական հանգամանքներից՝ առանց վերջնական իրավական գնահատականի արժանացնելու և հերքելու Ա.Մամաջանյանի կողմից կաշառք տալու փաստը, նախաքննության մարմինն այդ փաստով քրեական հետապնդում իրականացնելուն զուգահեռ որոշում էր կայացրել սուտ մատնության հանցակազմի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին: Արդյունքում, Ա.Մամաջանյանի նկատմամբ իրարամերժ վարույթներով զուգահեռաբար իրականացվել էր քրեական հետապնդում, Ա.Մամաջանյանն իր կողմից կաշառք տալու

վերաբերյալ սուտ մատնություն կատարելու շուրջ հարցաքննվել էր որպես կասկածյալ այն դեպքում, երբ ընթացքի մեջ էր գտնվում կաշառք տալու փաստով իրականացվող նախաքննությունը, որի շրջանակներում նա ունեցել էր մեղադրյալի դատավարական կարգավիճակ:

Ընդ որում կաշառք տալու փաստի առթիվ իրականացվող վարույթն ավարտվել էր 2015 թվականի դեկտեմբերի 28-ին, որից ընդամենը երկու օր անց՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ին սուտ մատնության մեղադրանքով քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել էր դատարան: Ավելին, սուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունն ըստ էության ավելի խիստ էր, քան կաշառք տալու համար նախատեսված պատասխանատվությունը: Նման պայմաններում, ողջամտորեն կարող էր առաջանալ մտավախություն առ այն, որ իրարամերժ, միմյանց բացառող վարույթներով քրեական հետապնդման իրականացումը կարող էր օգտագործվել որպես վարույթն իրականացնող մարմնի համար ցանկալի տեղեկություններ ստանալու միջոց¹:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտել էր, որ նախաքննական մարմինն իրավասու չէր Ա.Մամաջանյանի կողմից ենթադրյալ սուտ մատնություն կատարելու փաստի առթիվ հարուցել քրեական գործ այն պայմաններում, երբ Ա.Մամաջանյանի կողմից կաշառք տալու փաստով հարուցված քրեական գործով առկա չէր համապատասխան վերջնական որոշում²:

14.1. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն *Արթուր Մամաջանյանի* գործով իրավական դիրքորոշում ձևավորեց այն մասին, որ թեև սուտ մատնությունն ավարտված է համարվում իրավասու մարմնի կողմից հանցագործության կամ հանցավորի մասին կեղծ տեղեկությունները ստանալու պահից, սակայն այդ կապակցությամբ քրեական գործ հարուցելու հիմքերը ձևավորվում են այն ժամանակ, երբ օրենքով սահմանված կարգով հաստատվում է հանցագործության մասին հաղորդման բովանդակության սուտ լինելը: Հակառակ պարագայում կստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման առիթով իրականացվող քննությանը զուգահեռ քրեական հետապնդում կիրականացվի դրան ուղղակիորեն հակադրվող, այն բացառող քրեական վարույթի շրջանակներում: Վերջինս ոչ միայն կիմաստագրկի անձի իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիքները, այլ նաև լուրջ սպառնալիք կստեղծի քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից իրենց լիազորությունները կամայական գործադրելու տեսանկյունից:

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, *Կարեն Մարուխանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԼԴ/0301/01/09 որոշումը, 23-րդ կետ:

² Տե՛ս *Արթուր Մամաջանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշումը, 17-րդ կետ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ սուտ մատնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ստուգելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի ենթադրյալ սուտ մատնություն պարունակող հաղորդման կապակցությամբ օրենքով սահմանված կարգով վերջնական որոշման առկայությունը¹:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Գ.Աբրահամյանը **2017 թվականի հոկտեմբերի 19-ին** դիմում է ներկայացրել Ա.Ոսկանյանի կողմից ինքնիրավչությանն օժանդակելու վերաբերյալ²,

- Գ.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Ոսկանյանը **2017 թվականի հոկտեմբերի 20-ին** բացատրություն է տվել այն մասին, որ դիմումում շարադրված տեղեկություններն ակնհայտ սուտ են, և խնդրել է ակնհայտ սուտ մատնություն կատարելու համար դիմողին ենթարկել քրեական պատասխանատվության³,

- Հետաքննության մարմնի՝ **2017 թվականի նոյեմբերի 11-ի** որոշմամբ Գ.Աբրահամյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝

1) Ա.Ոսկանյանի կողմից Մ.Մաթևոսյանի կատարած ինքնիրավչությանն օժանդակելու կապակցությամբ՝ Ա.Ոսկանյանի արարքում ինքնիրավչությանն օժանդակելու հանցակազմի բացակայության հիմքով,

2) Գ.Աբրահամյանի կողմից Ա.Ոսկանյանի նկատմամբ սուտ մատնություն կատարելու կապակցությամբ՝ Գ.Աբրահամյանի արարքում սուտ մատնության հանցակազմի բացակայության հիմքով³,

- Նշված որոշման դեմ Ա.Ոսկանյանի բողոքը Լոռու մարզի դատախազի՝ **2017 թվականի դեկտեմբերի 4-ի** որոշմամբ մերժվել է⁴,

- Առաջին ատյանի դատարանը, հղում կատարելով *Արթուր Մամաջանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԼԴ2/0055/01/15 որոշմանը, գտել է, որ մինչև սուտ մատնության դեպքով քրեական գործ հարուցելը կամ քրեական գործ հարուցելը մերժելը, հետաքննության մարմինը պետք է հանգամանորեն քննարկի, վերլուծի և գնահատի սկզբնական հաղորդման մեջ նշված փաստերը, դրանց հիման վրա վերջնական որոշում կայացնելուց և այն օրինական ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան առիթի և հիմքերի առկայության դեպքում անդրադառնա սուտ մատնության դեպքին: Առաջին ատյանի դատարանը փաստել է, որ սուտ մատնության դեպքով Գ.Աբրահամյանի նկատմամբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին

¹ Տե՛ս *Արթուր Մամաջանյանի* գործով վերը հիշատակված որոշումը, 14-15-րդ կետեր:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

³ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

չվերացված որոշման առկայության պայմաններում Ա.Ոսկանյանը զրկվում է սուտ մատնության մասին հաղորդում ներկայացնելու իրավունքից, քանի որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առկայությունը խոչընդոտ է քրեական գործ հարուցելու համար¹,

- Վերաքննիչ դատարանը, դատախազի և Գ.Աբրահամյանի բողոքների քննության արդյունքում, իր որոշմամբ ըստ էության վերահաստատել է Առաջին աստիճանի դատարանի դիրքորոշումները՝ փաստելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում խախտվել են Ա.Ոսկանյանի իրավունքները, քանի որ նա զրկվել է Գ.Աբրահամյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի կապակցությամբ որպես տուժող հաղորդում ներկայացնելու հնարավորությունից²:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.1-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները տարբերվում են *Արթուր Մամաջանյանի* գործի փաստական հանգամանքներից: Մասնավորապես, ի տարբերություն *Արթուր Մամաջանյանի* գործի, սույն գործով զուգահեռաբար միմյանց բացառող վարույթներ չեն իրականացվել: Այսպես, եթե *Ա.Մամաջանյանի* գործով նրա կողմից կաշառք տալը բացառում էր նրա կողմից կաշառք տալու վերաբերյալ սուտ մատնություն կատարելու վարույթը, ապա սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում Ա.Ոսկանյանի կողմից ինքնիրավությանն օժանդակելու հաղորդման շրջանակներում իրականացվող վարույթը չէր բացառում Գ.Աբրահամյանի կողմից սուտ մատնություն կատարելու հաղորդման կապակցությամբ վարույթի իրականացումը: Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը հատկապես կարևոր է համարում ընգծել այն հանգամանքը, որ ի տարբերություն սույն գործի, *Ա.Մամաջանյանի* գործով կաշառք տալու և սուտ մատնություն կատարելու ենթադրյալ արարքները վերաբերել են նույն անձի, որի դեպքում առաջանում էր իրարամերժ վարույթներով նրա իրավունքների խախտման վտանգ: Այսպես, այդ գործերով Ա.Մամաջանյանը միաժամանակ ուներ համապատասխանաբար մեղադրյալի և կասկածյալի կարգավիճակ, որպիսի պայմաններում ողջամտորեն կարող էր առաջանալ մտավախություն առ այն, որ իրարամերժ վարույթներով քրեական հետապնդման իրականացումը կարող էր օգտագործվել որպես վարույթի իրականացնող մարմնի համար ցանկալի տեղեկություններ ստանալու միջոց: Մինչդեռ սույն գործի փաստական հանգամանքների պայման-

¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

ներում, այդպիսի մտահոգություն առաջանալ չէր կարող, քանի որ ինքնիրավչությանն օժանդակելու և սուտ մատնություն կատարելու վերաբերյալ տվյալներն առնչվել են տարբեր անձանց, որոնցից ոչ մեկը գործով իրարամերժ դատավարական կարգավիճակ չի ունեցել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն ընդունելի չի համարում ստորադաս դատարանների այն պնդումը, որ սույն գործով սուտ մատնության փաստի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բացակայությունն արձանագրելիս վարույթն իրականացնող մարմնի կողմից չի պահպանվել սկզբնական հաղորդման կապակցությամբ վերջնական որոշման առկայությունը պարզելու պահանջը: Ուստի, վարույթն իրականացնող մարմինը մեկ դատավարական փաստաթղթով, այն է՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ կարող էր իրավական գնահատականի արժանացնել ինչպես Ա.Ոսկանյանի արարքում ինքնիրավչության օժանդակման, այնպես էլ Գ.Աբրահամյանի արարքում սուտ մատնության հանցակազմերի հատկանիշների առկայության հարցը:

17. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանների նաև այն պնդման հետ, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում Ա.Ոսկանյանը զրկվել է Գ.Աբրահամյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի կապակցությամբ որպես տուժող հաղորդում ներկայացնելու հնարավորությունից: Ըստ գործի փաստական տվյալների՝ Գ.Աբրահամյանի դիմումի վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Ոսկանյանը բացատրություն է տվել այն մասին, որ Գ.Աբրահամյանի հայտնած տեղեկություններն ակնհայտ սուտ են, և խնդրել է իր նկատմամբ սուտ մատնություն կատարելու համար նրան ենթարկել քրեական պատասխանատվության¹: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի փաստարկներն առ այն, որ Ա.Ոսկանյանի հայտնած՝ առերևույթ իր նկատմամբ կատարված հանցագործության մասին տեղեկությունն առաջացրել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը, որպիսի պայմաններում Հետաքննության մարմնի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում այդ հանգամանքը ևս դարձվել է քննարկման առարկա, ինչի արդյունքում էլ իրավական գնահատականներ են տրվել ինչպես Ա.Ոսկանյանի, այնպես էլ Գ.Աբրահամյանի արարքներին: Ընդհակառակը, ինչպես նշել է բողոք բերած անձը՝ Ա.Ոսկանյանի իրավունքները կխախտվեին, եթե նշված փաստին վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրվեր համապատասխան իրավական գնահատական²: Բացի

¹ Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 10.1-րդ կետը:

այդ, հարկ է նկատել, որ Ա.Ոսկանյանն իրացրել է Հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելու իր իրավունքը:

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ա.Ոսկանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 38-322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս նույն որոշմամբ նաև Գ.Աբրահամյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության արձանագրումը հանգեցրել է Ա.Ոսկանյանի իրավունքների խախտմանը, հիմնավոր չեն:

19. Վերոգրյալի հետ մեկտեղ, անդրադառնալով Գ.Աբրահամյանի արարքում սուտ մատնության հանցակազմի առկայության մասին ստորադաս դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումների¹՝ ոչ իրավաչափ լինելու մասին բողոքաբերների փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանը դրանք ընդունելի է համարում, քանի որ գործի նյութերի համակողմանի ուսումնասիրման արդյունքում Հետաքննության մարմինը հանգել է հիմնավոր եզրահագման Գ.Աբրահամյանի արարքում սուտ մատնության հանցակազմի հատկանիշների բացակայության մասին²: Հետևաբար, քրեական գործ հարուցելը մերժելու մասին Հետաքննության մարմնի՝ 2017 թվականի նոյեմբերի 11-ի և դրա դեմ ներկայացված բողոքը մերժելու մասին Լոռու մարզի դատախազի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումներով Ա.Ոսկանյանի իրավունքներն ու օրինական շահերը չեն խախտվել:

20. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները դատական ակտ կայացնելիս թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 358-րդ հոդվածների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն՝ հիմք են Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար: Մինևույն ժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Ա.Ոսկանյանի բողոքը անհրաժեշտ է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաս-

¹ Տե՛ս սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 7-7.1.-րդ կետերը:

տանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Դիմող Արտակ Նորիկի Ոսկանյանի բողոքի վերաբերյալ Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 3-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 24-ի որոշումները բեկանել ու փոփոխել: Դիմող Արտակ Ոսկանյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

73. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԴ/0587/11/18

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Վ.ԴՈԼՄԱԶՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Սամվել Ալբերտի Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2018 թվականի հոկտեմբերի 1-ին հարուցվել է թիվ 62232018 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով, որը նույն օրը միացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 62202608 քրեական գործին՝ նախաքննությունը շարունակելով 62202608 համարով:

Նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ Սամվել Ալբերտի Մայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության մարմինը 2018 թվականի հոկտեմբերի 15-ին որոշում է կայացրել մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ:

Վերոգրյալ որոշման դեմ մեղադրյալ Ս.Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքը նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ 2018 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ մերժվել է:

2. Պաշտպան Կ.Բատիկյանի ներկայացրած բողոքը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Պաշտպան Կ.Բատիկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2019 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ բողոքը բավարարել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բեկանել և փոփոխել է՝ սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունիսի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Մայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ. « (...) [Ն/ա Միլվա Համբարձումյանի օգրին գործողություններ կատարելու համար օժանդակել է մշրտապես իշխանության ներկայացուցչի կառավարչական-փոստինչական, վարչարարչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին և ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանին, խմբով, նախնական համաձայնությամբ սրանալ առանձնապես խոշոր չափերով՝ 2.160.950.000 ՀՀ դրամին համարժեք 6.985.000 ԱՄՆ դոլար կաշառք (...)»¹:

6. Մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշման համաձայն՝ նախաքննության

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 50-53:

մարմինը, մեջբերելով քրեական գործի դատավարական նախապատմությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-233-րդ հոդվածներով, որոշել է կալանք դնել մեղադրյալ Ս.Մայրապետյանի շարժական և անշարժ գույքի, ֆինանսական (դրամական) միջոցների (բացառությամբ այն գումարների, որոնք վճարվում են առողջության, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասների հատուցման համար, ալիմենտային պարտավորությունների համար, որպես պետական նպաստ, ծառայողական պարտականությունները կատարելիս ստացած հաշմության (վիրավորվել, կոնտուզիա, վնասվածք) համար այդ անձանց կամ նրանց մահվան դեպքում՝ ընտանիքներին, վնասակար կամ ծայրահեղ դժվարին պայմաններում աշխատող անձանց՝ որպես փոխհատուցում, հաշմանդամներին, տուժողին՝ լրացուցիչ սննդի, առողջարանային բուժման, պրոթեզավորման և նրա խնամքի համար, աշխատանքից ազատվելու դեպքում՝ որպես արձակման նպաստ), բաժնետոմսերի, արժեթղթերի և ակտիվների վրա¹:

7. Առաջին առյանի դատարանը, մերժելով մեղադրյալ Ս.Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքը, արձանագրել է. «(...) [Մ]եղադրյալ Սամվել Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը քննիչի կողմից կայացվել է թիվ 62202608 քրեական գործով Սամվել Մայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայության պարագայում՝ 2018թ. հոկտեմբերի 15-ին: Բացի այդ, մեղադրյալ Սամվել Մայրապետյանին մեղսագրվող ենթադրյալ հանցագործության կատարման համար որպես լրացուցիչ պարժարեասկ նախաարեստված է գույքի բռնագրավում, ուսրի նկարի ունենալով, որ Սամվել Մայրապետյանին մեղսագրվում է պաշտոնատար անձանց կողմից կաշառք սրանալուն ենթադրյալ օժանդակություն՝ դատարանը գտնում է, որ նախաքննության մարմինը պահպանել է ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելու իր պարտականությունը:

Նախաքննության մարմնի կողմից նշանակվել են մասնագիտական երեք սպորտումներ, փորձաքննություն, ինչպես նաև քրեական գործով ներգրավվել է թարգմանիչ, ուսրի մեղադրյալ Սամվել Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելը՝ նաև քրեական գործով հնարավոր դատական ծախսերն ապահովելու համար, հիմնավոր է:

(...)

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 54-55:

Վերոհիշյալ հանգամանքները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Սամվել Մայրապետյանին պատկանող գույքի վրա կալանք դրված չլինելու պայմաններում, նրա կողմից գույքը թաքցնելու և այն սպառելու հավանականությունը բարձր է, ուստի վիճելի որոշումը կայացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անհրաժեշտ հիմքերի առկայության պայմաններում:

Հետևաբար բողոքարկվող որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, դրանով մեղադրյալ Սամվել Մայրապետյանի իրավունքների կամ ազատությունների խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել, ուստի բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման (...)¹:

8. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը, արձանագրել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը օրինական և հիմնավորված չէ, այն կայացվել է քրեադատավարական օրենքի խախտումներով, ինչի արդյունքում խախտվել են մեղադրյալ Ս.Մայրապետյանի իրավունքներն ու օրինական շահերը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Քննիչի որոշման վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանում ընդամենը վկայակոչված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածները և որոշում այն մասին, որ մեղադրյալ Սամվել Մայրապետյանի համապատասխան գույքի վրա պեղք է դնել կալանք, այլ որևէ հիմնավորում և պարճառաբանություն առկա չէ, որը հնարավորություն կտար հետևություն անելու այն մասին, թե մեղադրյալի գույքի վրա կալանքն ինչ նպատակով է դրվել, մասնավորապես՝ (1) քաղաքացիական հայցի, (2) գույքի հնարավոր բռնագրավման, (3) գույքի բռնագանձման, թե (4) դատական ծախսերի բռնագանձումն ապահովելու:

Որոշման մեջ որևէ նշում առկա չէ այն մասին, թե ինչն է այդպիսի որոշման կայացման հիմք հանդիսացել:

Քննիչի որոշումից կարելի է հետևություն անել այն մասին, որ գույքի վրա կալանքը դրվել է զուր կանխավարկածի ուժով, այսինքն՝ քանի որ Ս.Մայրապետյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման մեջ, ուրեմն պեղք է կալանք դրվի նրա գույքի վրա:

Մինչդեռ, ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գույքի վրա կալանք դնելու դատավարական կարգը կանոնակարգող նորմերի վերլուծությունից և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումներում ձևավորած իրավական դիրքորոշումներից՝

¹ Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 77-85:

գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է լինի պարճառաբանված և հիմնավորված, քանի որ այն առնչվում է Սահմանադրությամբ երաշխավորված անձի՝ սեփականության իրավունքին: Քննիչը պետք է մասնավորապես նշեր ու հիմնավորեր, որ գույքի վրա կալանք չդնելու դեպքում մեղադրյալը կարող էր այդ գույքը թաքցնել, փչացնել կամ սպառել (Օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մաս):

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ քննիչը որոշման մեջ հստակ նշում չի արել այն մասին, թե ինչ արժեքի գույքի վրա պետք է կալանք դնել, ավելին՝ անգամ չի պարզել այն գույքի արժեքը, որի վրա դրել է կալանքը, մինչդեռ օրենքը հստակ սահմանում է, որ պետք է կալանք դրվի որոշակի արժեքով գույքի վրա, այլ ոչ թե ամբողջ, ընդ որում այն որոշվում է շուկայական արժեքով, ըստ անհրաժեշտության կարող է ներգրավվել սպրանքագետ-մասնագետ այդ արժեքը որոշելու համար կամ նշանակվել փորձաքննություն:

Այս առումով Վերաքննիչ դատարանը համամիտ է բողոքարեւրի այն փաստարկներին, որ տվյալ դեպքում, հաշվի առնելով մեղադրանքի որոշումը, վարույթն իրականացնող մարմինը ծայրահեղ դեպքում պետք է քննարկեր ընդամենը շուրջ 7 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գույքի վրա կալանք դնելու հարցը, այնինչ, որոշմամբ կալանադրված գույքի ծավալը վկայում է այն մասին, որ նախաքննական մարմինը, դարձյալ խախտելով օրենքը, չի հաշվարկել կալանադրված գույքի շուկայական արժեքը, ինչի արդյունքում կալանք է դրվել մեղադրանքի որոշման մեջ նշված գումարը մի քանի անգամ գերազանցող արժեքով գույքի վրա:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ քննիչը գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վկայակոչել է հիմնվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի վրա, որը մեղադրյալին վերագրվող արարքը կատարելու պահին (2008 թվականին) գոյություն չի ունեցել, այն քրեական օրենսգրքում լրացվել է 21.06.14 ՀՕ-114-Ն օրենքով և փոփոխվել 16.05.16 ՀՕ-83-Ն օրենքով, այսինքն՝ հետադարձ ուժ է տվել անձի վիճակը վարթարացնող քրեական օրենքին, որը ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ և ՀՀ Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածների համաձայն արգելվում է:

Ինչ վերաբերում է քննիչի առարկություններում կատարված վերլուծությանը, որ այդ նորմը համահունչ է դեռևս 2008 թվականին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասին, սպա Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանք փարբեր բովանդակություն ունեցող նորմեր են, ուստի դրանք չեն կարող նույնացվել, հստակապես, որ դրանցից յուրաքանչյուրը կիրառվում է այլ դատավարական ռեժիմով: Եթե քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը սահմանում է գույքի բռնագրավում պարճի կիրառման հետ կապված հարաբերությունները, որը պարտադիր

պեղք է նախատեսված լինի համապատասխան հանցակազմի սանկցիայում, որպեսզի հնարավոր լինի կիրառել, ապա քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածը սահմանում է քրեաիրավական ներգործության այլ միջոց հանդիսացող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները, որը կիրառվում է դատարանի կողմից *ex officio*, եթե գործով հաստատված է համարվում, որ առկա է այդ հոդվածում սահմանված չափանիշներին համապատասխանող գույք: Հետևաբար, այս երկու ինստիտուտները նույնացնելն ակնհայտ ոչ իրավաչափ է:

Այսպիսով, քննիչը կայացնելով չհիմնավորված և չպարզառարանված որոշում թույլ է տվել մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի խախտում, իսկ Առաջին արյանի դատարանն առանց բավարար հիմնավորումների և պարզառարանությունների մերժել է պաշտպանի բողոքը, ուստի Դատարանի որոշումը պեղք է բեկանել և փոփոխել՝ բավարարել պաշտպանի բողոքը և սահմանել վարույթն իրականացնող մարմնի պարզականությունը վերացնելու մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի խախտումները (...)¹:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը, վկայակոչելով և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի դրույթները, իր անհամաձայնությունն է հայտնել Վերաքննիչ դատարանի դատողությունների հետ: Մասնավորապես, բողոքաբերը նշել է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշում կայացնելիս քննիչի տրամադրության տակ Ս.Մայրապետյանին պատկանող գույքի, դրանց արժեքի, դրամական միջոցների վերաբերյալ տեղեկություններ չեն եղել, հետևաբար գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ քննիչը չէր կարող նշել կալանքի ենթակա գույքը, չէր կարող որոշել այն գույքի հստակ չափը: Բողոքաբերը փաստել է, որ դատական ծախսերի ապահովման նպատակով ևս կալանք է դրվում կասկածյալի կամ մեղադրյալի գույքի վրա, իսկ նման անհրաժեշտությունն առաջ է գալիս ոչ թե դրանց իրական, այլ հնարավոր առկայությամբ պայմանավորված: Բողոքաբերի պնդմամբ՝ հակառակ մեկնաբանության դեպքում դատական ծախսերի ապահովման համար գույքի վրա կալանք դնելու իրավակարգավորումն այնքանով, որքանով դատական ծախսերի հարց նախաքննության փուլում չի քննարկվում, և քննության այդ փուլում հնարավոր չէ որոշել գույքի այն հստակ չափը, որն անհրաժեշտ կլինի դատական ծախսերն ապահովելու համար, կդառնա ինքնանպատակ և անիրագործելի:

¹ Տե՛ս նյութեր, հատոր 2, թերթեր 24-33:

10. Բացի այդ, բողոքաբերն իր անհամաձայնությունն է արտահայտել Վերաքննիչ դատարանի այն դատողության հետ, որ քննիչը գույքի վրա կալանք դնելիս հիմնվել է արարքը կատարելու պահին գոյություն չունեցող դրույթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի վրա, ինչով հետադարձ ուժ է տրվել անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքին:

Ըստ բողոքաբերի՝ արարքի կատարման պահի դրությամբ՝ 2008 թվականին, անձի սեփականության իրավունքի սահմանափակման հետ կապված քրեաիրավական և քրեադատավարական հարաբերությունները կարգավորվել են այն ժամանակ գործող, միևնանց հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով: 2014 թվականից հետո նշված հարաբերությունները կարգավորվել են ՀՀ քրեական օրենսգրքում ավելացված 103.1-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով: Հետևաբար, ըստ բողոքաբերի՝ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածին, որպես անձի վիճակը վատթարացնող նոր նորմ, տրվել է հետադարձ ուժ:

11. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով մեղադրյալ Ս.Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1. Գույքի վրա կալանք դնելու մասին քննիչի որոշման հիմնավորվածությունը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ վարույթն իրականացնող մարմնի՝ մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումն օրինական և հիմնավորված չէ, ինչի արդյունքում խախտվել են մեղադրյալ Ս.Մայրապետյանի իրավունքներն ու օրինական շահերը:

13. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:*

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրհապելու, օգտագործելու և փոխանցելու իրավունք: (...)*

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ սակայն՝ Եվրոպական կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ փուլանքների վճարումն ապահովելու համար»:

13.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Borzhonov v. Russia* գործով կայացված վճռում մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ¹:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար: (...)

4. Կալանք չի կարող դրվել այն գույքի վրա, որի վրա օրենքի համաձայն չի կարող տարածվել բռնագանձում»:

¹ Տե՛ս *Borzhonov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գույքի վրա կալանք դնելը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, որի մոտ գտնվում է գույքը, կարող է թաքցնել, փչացնել կամ ապստել բռնագրավման ենթակա գույքը:

1.1. Քրեական վարույթն իրականացնող մարմինն անհասպող կալանք է դնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա: (...)

3. Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ պետք է նշվի կալանքի ենթակա գույքը, ինչպես նաև գույքի այն արժեքը, որի վրա բավական է կալանք դնել՝ քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար: (...)¹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանքի ենթակա գույքի արժեքը որոշվում է դրա շուկայական գնով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ «(...)3. Գույքի վրա կալանք դնելիս հնարավորության դեպքում ներգրավվում է մասնագետ-ապրանքագետ, որը որոշում է դրա մտրավոր արժեքը:

4. Գույքի վրա կալանք դնելուն ներկա գտնվող սեփականատերը կամ գույքի տիրապետողն իրավունք ունի որոշել, թե առաջին հերթին որ արժեքների կամ այլ առարկաների վրա է անհրաժեշտ կալանք դնել՝ ապահովելու համար որոշման մեջ նշված գումարները:

5. Հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը գույքի վրա կալանք դնելու մասին կազմում է արձանագրություն, իսկ հարկադիր կատարողը՝ օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ: Արձանագրության մեջ (փաստաթղթում) մասնավորապես թվարկվում է ամբողջ գույքը, որի վրա կալանք է դրված՝ ճշգրիտ նշելով անվանումը, քանակը, քաշը, մնացորդային աստիճանը, այլ անհարական հարկանիշները, հնարավորության դեպքում արժեքը, նշվում է, թե ինչպիսի գույք է վերցված և ինչպիսին թողնված պահպանության, շարադրվում է կալանադրված գույքը՝ այլ անձանց պատկանելու մասին ներկաների հայտարարությունները (...):»:

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածը լրացվել է 1.1-րդ մասով 2006 թվականի նոյեմբերի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-207-Ն օրենքով, խմբագրվել է 2014 թվականի հունիսի 21-ի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-115-Ն օրենքով:

14.1. Վճռաբեկ դատարանը, Արթուր Հայրապետյանի գործով անդրադառնալով սեփականության իրավունքի էությանը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Գ]ույքի տիրապետման, տնտեսական և օգտագործման սեփականատիրոջ իրավագործությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն (...)»¹:

Վճռաբեկ դատարանը, Ալլա Մեկոյանի գործով քննարկելով գույքի վրա կալանք դնելու ինստիտուտը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Կ]անխարզելիչ բնույթ կրող քրեադատարարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայրը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատարանի ծախսերը:

[Ի]ր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնտեսական, տնտեսական և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատարարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն:

(...)

15. ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 232-րդ և 233-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը սահմանել է գույքի վրա կալանք դնելու՝ որպես քրեադատարարական հարկադրանքի միջոցի իրականացման նպատակները, իրավական հիմքերը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ում սեփականությունը հանդիսացող կամ ում տնտեսականության տնտեսական գույքի վրա կարող է կալանք դրվել:

(...) [Գ]ույքի վրա կալանք դնելու հիմքերի առկայության պարզաձև հիմնավորումն առանցքային նշանակություն ունի ինչպես գույքի վրա կալանք դնելու մասին օրինական որոշման կայացման, այնպես էլ հանրային շահի ու անհատի սեփականության իրավունքի պաշտպանության արդարացի հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի, գույքի վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը, ելնելով գույքի վրա կալանք դնելու նպատակից, պետք է պարզապես անվաճ կերպով հիմնավորի, որ.

1) տվյալ գործով անձը ներգրավված է որպես կասկածյալ կամ

¹ Տե՛ս Արթուր Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշման 19-րդ կետը:

մեղադրյալ,

2) ենթադրաբար կատարված հանցագործությամբ պարճանովել է հարուցման ենթակա վնաս,

3) ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված հանցակազմերով առկա է հիմնավորված ենթադրություն առ այն, որ գույքը, որի վրա կալանք է դրվում, ստացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

4) գործով ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, ում մոտ գտնվում է կամ ում սեփականությունն է հանդիսանում գույքը, կարող են թաքցնել, փչացնել կամ սպառել այն:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կասեմանսափակվի իր գույքն անարգել անօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը (...)»¹:

Վճռաբեկ դատարանն Արթուր Անդրեասյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [Օ]րենսդիրը սահմանել է գույքի վրա կալանք դնելու՝ որպես քրեադատարարական հարկադրանքի միջոցի կիրառման իրավական հիմքերը և նպատակները: Մասնավորապես, մարտնչված քրեադատարարական դրույթների բովանդակությունից հետևում է, որ գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել առկա գույքը: Ընդ որում, կանխարգելիչ բնույթ կրող քրեադատարարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու՝

1) քաղաքացիական հայցը,

2) գույքի հնարավոր բռնագրավումը,

3) բռնագանձումը,

4) դատարանի ծախսերը (...)»²:

15. Սույն որոշման 13-14.1-րդ կետերում մեջբերված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը բացառող կարևոր դատավարական երաշխիք է

¹ Տե՛ս Ալլա Սելոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշումը:

² Տե՛ս Արթուր Անդրեասյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0200/01/13 որոշումը:

օրենսդրական այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Իսկ դա ենթադրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է կայացվի քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ դրա կիրառման հիմքերի և նպատակների առկայությունը հիմնավորող՝ քրեական գործի նյութերից բխող փաստական տվյալների հիման վրա: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով գործում առկա նյութերի վրա, պարտավոր է հիմնավորել դրա իրավական հիմքերի և նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ չսահմանափակվելով միայն գույքի վրա կալանք դնելը կարգավորող օրենսդրական ձևակերպումների շարադրանքով: Միայն վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը:

Հարկ է նշել, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման համար անհրաժեշտ է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը կամ դատական ծախսերն ապահովելու նպատակներից առնվազն մեկի առկայությունը:

Միևնույն ժամանակ, գույքի վրա կալանք դնելու համար (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված դեպքի) անհրաժեշտ է նաև, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվի, որ գործով հավաքված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել առկա գույքը: Գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կսահմանափակվի իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը:

15.1. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անգամ գույքի վրա կալանք դնելու իրավական հիմքերի և նպատակների առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինն օժտված է կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կիրառելու հայեցողական լիազորությամբ: Նման հետևությունը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող՝ «կարող է կիրառվել» ձևակերպումից: Այնուամենայնիվ, վերոնշյալ

կանոնից օրենսդիրը սահմանել է բացառություն՝ նախատեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա կալանք դնելը վարույթն իրականացնող մարմնի անհապաղ կատարման ենթակա պարտականությունն է, որը նպատակ է հետապնդում ապահովել գույքի հնարավոր բռնագանձումը:

15.2. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչն իր հերթին պետք է հիմնավորված լինի այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակներով, լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը:

Հարկ է նշել, որ գույքի վրա կալանք դնելիս, վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ներգրավվի մասնագետ-ապրանքագետ կամ նշանակվի փորձաքննություն՝ գույքի արժեքը որոշելու համար, եթե առանց դրա հնարավոր չէ որոշել այն:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Մայրապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա, Ս.Համբարձումյանի օգտին գործողություններ կատարելու համար օժանդակել է մշտապես իշխանության ներկայացուցչի կառավարչական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց խմբով, նախնական համաձայնությամբ ստանալ առանձնապես խոշոր չափերով՝ 2.160.950.000 ՀՀ դրամին համարժեք 6.985.000 ԱՄՆ դոլար կաշառք¹:

Մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշման համաձայն՝ նախաքննության մարմինը, մեջբերելով քրեական գործի դատավարական նախապատմությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-233-րդ հոդվածներով, որոշել է կալանք դնել մեղադրյալ Ս.Մայրապետյանի շարժական և անշարժ գույքի, ֆինանսական (դրամական) միջոցների, բաժնետոմսերի, արժեթղթերի և ակտիվների վրա²:

Առաջին ատյանի դատարանը, մերժելով պաշտպան Կ.Բատիկյանի բողոքը, գտել է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը կայացվել

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

է օրենքին համապատասխան, դրանով մեղադրյալ Ս.Մայրապետյանի իրավունքների կամ ազատությունների խախտված լինելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ դատարանին չեն ներկայացվել, ուստի բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման¹:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը, գտել է, որ նախաքննության մարմնի՝ 2018 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումն օրինական և հիմնավորված չէ, այն կայացվել է քրեադատավարական օրենքի խախտումներով, որի արդյունքում խախտվել են մեղադրյալ Ս.Մայրապետյանի իրավունքներն ու օրինական շահերը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նախաքննության մարմնի որոշման մեջ ընդամենը վկայակոչված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածները և որոշում այն մասին, որ մեղադրյալ Ս.Մայրապետյանի համապատասխան գույքի վրա պետք է դնել կալանք: Որևէ այլ հիմնավորում և պատճառաբանություն առկա չէ, որը հնարավորություն կտար հետևություն անելու այն մասին, թե մեղադրյալի գույքի վրա կալանքն ինչ նպատակով է դրվել՝ քաղաքացիական հայցի, գույքի հնարավոր բռնագրավման, բռնագանձման, թե դատական ծախսերի բռնագանձումն ապահովելու: Որոշման մեջ որևէ նշում առկա չէ այն մասին, թե ինչն է այդպիսի որոշման կայացման հիմքը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված, քանի որ այն առնչվում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին: Մասնավորապես, քննիչը պետք է նշեր ու հիմնավորեր, որ գույքի վրա կալանք չդնելու դեպքում մեղադրյալը կարող էր այդ գույքը թաքցնել, փչացնել կամ սպառել:

Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ խնդրահարույց է այն հանգամանքը, որ քննիչը որոշման մեջ հստակ նշում չի արել այն մասին, թե ինչ արժեքի գույքի վրա պետք է կալանք դնել, անգամ չի պարզել այն գույքի արժեքը, որի վրա դրել է կալանքը²:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15.2-րդ կետերում ներկայացված իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ բավարարվել է գործի դատավարական նախապատմությունը և օրենսդրական կարգավորումները մեջբերելով

¹ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կամ դրանց հղում կատարելով:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի այն հետևություններին, որ քննիչի որոշման մեջ բացակայում են հիմնավորումներն առ այն, թե մեղադրյալի գույքի վրա կալանքն ինչ նպատակով է դրվել (քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը, թե դատական ծախսերն ապահովելու համար), թե գույքի վրա կալանք չդնելու դեպքում մեղադրյալի կողմից գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգներից որն (որոնք) է առկա, ինչպես նաև բացակայում են նման հիմնավորումների համար հիմք ծառայող՝ գործի նյութերից բխող փաստական տվյալներ: Այս առումով հարկ է նշել, որ գուտ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի հոդվածների մեջբերումը կամ դրանց հղում կատարելը չի կարող մեկնաբանվել որպես վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքի վրա կալանք դնելու նպատակներից, գույքի վրա կալանք չդնելու դեպքում գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վտանգներից մեկի կամ մի քանիսի, ինչպես նաև գույքի վրա կալանք դնելու մյուս իրավական հիմքերի առկայության հիմնավորում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի այն հետևությունը, որ քննիչը գույքի վրա կալանք դնելու որոշման մեջ հստակ նշում չի արել, թե ինչ արժեքի գույքի վրա պետք է կալանք դնել:

17.1. Վերոշարադրյալի հաշվառմամբ, անդրադառնալով սույն որոշման 9-րդ կետում նշված՝ հնարավոր դատական ծախսերի ապահովման նպատակով գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված նպատակով արգելադրման ենթակա գույքի արժեքը որոշելիս նույնպես վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնվի գործում առկա նյութերի վրա (օրինակ՝ փորձագիտական համապատասխան հիմնարկի տրամադրված տեղեկատվությունը՝ փորձաքննության մոտավոր արժեքի վերաբերյալ): Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով դատական ծախսերի հստակ որոշման անհնարինությունը, հատկապես քրեական դատավարության սկզբնական փուլերում, հարկ է համարում նշել, որ վարույթն իրականացնող մարմինը վերոնշյալ նպատակով կալանքի ենթակա գույքի արժեքը որոշելիս օժտված է որոշակի հայեցողությամբ, որը, սակայն, պետք է լինի ողջամիտ և չհանգեցնի անձի՝ գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու կամ օգտագործելու իրավունքի անհամաչափ սահմանափակումների: Հակառակ մեկնաբանման պարագայում, կստացվի ոչ իրավաչափ այնպիսի իրավիճակ, երբ միայն դատական ծախսերի ապահովման նպատակով կարող է կալանք դրվել անձի ամբողջ գույքի վրա, որի արժեքը կարող է մի քանի անգամ գերազանցել

հնարավոր դատական ծախսերի գումարը, զուտ այն պատճառով, որ չի հստակեցվել դատական ծախսերի չափը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ վարույթն իրականացնող մարմնի՝ մեղադրյալ Ս.Մայրապետյանի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը հիմնավորված չէ, այն կայացվել է քրեադատավարական օրենքի խախտումներով, որի արդյունքում խախտվել են մեղադրյալ Ս.Մայրապետյանի իրավունքներն ու օրինական շահերը:

II. ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի (2008 թվականին գործող խմբագրության) և 103.1-րդ հոդվածի հարաբերակցությունը.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ 2008 թվականին գործող խմբագրությամբ 55-րդ հոդվածի 4-րդ մասը և 103.1-րդ հոդվածը տարբեր բովանդակություն ունեցող նորմեր են, դրանցից յուրաքանչյուրը կիրառվում է տարբեր դատավարական ռեժիմով:

19. ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի (2008 թվականին գործող խմբագրությամբ) համաձայն՝ «1. Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության:

2. Գույքի բռնագրավման չափը դատարանը որոշում է՝ նկատի ունենալով հանցագործությանը հասցված գույքային վնասի, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի չափը: Գույքի բռնագրավման չափը չի կարող գերազանցել հանցագործությանը հասցված վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը:

3. Գույքի բռնագրավումը կարող է նշանակվել շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար սույն օրենսգրքի Հստակ մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված դեպքերի:

4. Հանցավոր ճանապարհով սրացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով սրացված եկամուտների օրինականացման և սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգրագործումից սրացված եկամուտների կամ այլ փեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգրագործված կամ օգրագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով սրացված գույքի չհայտնաբերման

դեպքում այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից փրկապետելու հանգամանքից:

5. Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, այդ թվում՝ սույն օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից սրացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի չհայտնաբերման դեպքում այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է: Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից փրկապետելու հանգամանքից:

6. Բռնագրավման ենթակա չէ դատապարտյալի կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, ինչպես նաև սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված՝ բարեխիղճ երրորդ անձի գույքը: (...):»:

20. ՀՀ Սահմանադրական դատարանը, թիվ ՍԴՈ-983 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի կարգավորումներին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի «Պատիժ» վերաբերող մասերում Բաժին 3-ի՝ «Պատիժի հասկացությունը, նպատակները և տեսակները» վերաբերող մասերում Գլուխ 9-ի՝ «Պատիժի տեսակները» վերաբերող մասերում 49-րդ հոդվածը սահմանում է պատիժի տեսակները՝ դրանց մեջ նշելով նաև գույքի բռնագրավումը (5-րդ կետ): ՀՀ քրեական օրենսգրքի 51-61-րդ հոդվածները բացահայտում են 49-րդ հոդվածում նշված պատիժատեսակներից յուրաքանչյուրի բովանդակությունը. բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատիժատեսակի բովանդակությունը բացահայտված է օրենսգրքի 55-րդ հոդվածում:

ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ գույքի բռնագրավումը հանդիսանում է լրացուցիչ պատիժատեսակ, որը կարող է նշանակվել միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար՝ օրենսգրքի Հարույկ մասով նախատեսված դեպքերում: Հարույկ մասի հոդվածների սանկցիաներում գույքի բռնագրավումը նախատեսված է կամ որպես պարտադիր լրացուցիչ, կամ որպես ոչ պարտադիր լրացուցիչ պատիժ: Քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասում տրված է գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատիժատեսակի, սահմանումը: Ըստ այդ սահմանման՝ գույքի բռնագրավումը դատապարտյալի

սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության:

ՀՀ քրեական օրենսգրքի 50 և 55-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսգրքի 55-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավումը՝ իր բնույթով, խնդիրներով ու նպատակներով, համարժեք չէ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավմանը: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը փարանջարում է կատարում գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պարժարեսակի, և 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավման օբյեկտների միջև: Եթե 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պարժարեսակի դեպքում բռնագրավման օբյեկտը բացառապես դատապարտյալի օրինական գույքն է, ապա նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված բռնագրավման օբյեկտն այլ է, քան դատապարտյալի օրինական գույքը, այսինքն՝ այն գույքը, որը ձեռք է բերվել հանցագործությունը կատարելու արդյունքում և, որպես կանոն, հանդիսանում է փուժողի սեփականությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսված բռնագրավման երկու ինստիտուտների միջև առկա հաջորդ էական տարբերությունը կայանում է նրանում, որ եթե դատապարտյալի գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պարժարեսակ, կարող է կիրառվել բացառապես ծանր և առանձնապես ծանր հանցանքների դեպքում, դրա կիրառումը կարող է թողնվել դատարանի հայեցողությանը և կրել ոչ պարտադիր բնույթ, ապա հանցավոր ճանապարհով սրացված գույքի պարագայում՝ բռնագրավումը պարտադիր է և կիրառվում է անկախ հանցագործության ծանրությունից: (...)

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պարժարեսակի, և նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավման ինստիտուտները միմյանցից էապես տարբերվում են և դրանց շրջանակներում բռնագրավման ենթակա գույքը հարակ փարանջարված է՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս երկու ինստիտուտների զուգահեռաբար կիրառման դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավման և հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավման պահանջների բավարարման կապակցությամբ օբյեկտիվորեն չի կարող իրավական բախում («կոլիզիա») կամ իրավակիրառման առաջնահերթության խնդիր առաջանալ, քանզի մի դեպքում բռնագրավման օբյեկտը դատապարտյալի գույքն է, մյուս դեպքում՝ հանցավոր

ճանապարհով սրացված գույքը:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ գույքի բռնագրավումը՝ որպես լրացուցիչ պարժարեալ, և հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավումն իրենց սահմանադրարարական բովանդակությամբ տարբեր ինստիտուտներ են՝ տարբեր խնդիրներով և նպատակներով: Բռնագրավման՝ որպես լրացուցիչ պարժարեալի ինստիտուտը, որն անմիջականորեն ուղղված է դատապարտյալի սեփականության իրավունքի դեմ, բխում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասից, քանզի այս դեպքում դատապարտյալի գույքի բռնագրավումը հանդես է գալիս որպես պարասահմանադրությունից բխող հարկադրանքի միջոց՝ իրավաչափորեն սահմանափակելով դատապարտյալի սեփականության իրավունքը: Մինչդեռ, հանցավոր ճանապարհով սրացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով սրացված գույքը դատապարտյալից հեռ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակումը տեղի չի ունենում (...):»¹:

21. 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-114-Ն օրենքով, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից հանվել է «, բացառությամբ սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ, ինչպես նաև 5.1-ին մասերով նախատեսված դեպքերի» բառերը:

2) 4-րդ, 5-րդ, 5.1-ին և 7-րդ մասերն ուժը կորցրած է ճանաչվել:

3) 6-րդ մասից հանվել է «, ինչպես նաև սույն հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված՝ բարեխիղճ երրորդ անձի գույքը» բառերը:

Նույն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 103.1-ին հոդվածով:

«Հոդված 103.1. Բռնագանձումը

1. Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ սրացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից սրացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում սրացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից սրացված

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 12-ի թիվ ՍԴՌ-983 որոշումը:

եկամուրները կամ այլ տեսակի օգուրները, սույն օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուր պետության:

2. Սույն օրենսգրքի իմաստով բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը գույքն այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցավոր նպատակներով, ինչպես նաև այն անձը, որը գույքն այլ անձից ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այդ գույքը սրացվել է հանցավոր ճանապարհով:

3. Այն դեպքում, երբ տուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագանձման ենթակա գույքի վերաբերյալ, այդ գույքի բռնագանձում կարող է կատարվել քաղաքացիական դատավարության կարգով:

4. Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված դեպքերում նաև այդ հոդվածների իմաստով գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից սրացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուրները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները»:

21.1. 2016 թվականի մայիսի 16-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն օրենքով, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի 1-ին մասի «215-րդ հոդվածով» բառերը փոխարինվել են «215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով» բառերով:

22. Սույն որոշման 19-21.1-րդ կետերում մեջբերված իրավանդությունների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունները և լրացումները, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածն իր մեջ պարունակել է քրեաիրավական ներգործության երկու միջոցներ, որոնք միմյանցից տարբերվել են կիրառման հիմքերով, խնդիրներով ու նպատակներով:

Այսպես, քրեաիրավական ներգործության վերոնշյալ միջոցներից

առաջինը՝ գույքի բռնագրավում լրացուցիչ պատժատեսակն է, որը, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, կարող է նշանակվել շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, կարող է կիրառվել դատարանի հայեցողությամբ և միայն դատապարտյալի սեփականությունը կազմող գույքի նկատմամբ (բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի)՝:

Սյուս քրեաիրավական ներգործության միջոցը, որն ամրագրված էր ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում, հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և նույն օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի (այսուհետ նաև՝ հանցավոր ճանապարհով ստացված գույք) բռնագրավումն էր: Ի տարբերություն գույքի բռնագրավում լրացուցիչ պատժատեսակի՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումը կրում էր պարտադիր բնույթ, դրա կիրառումը պայմանավորված չէր հանցագործության տեսակով և ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմի սանկցիայով նախատեսված լինելու հանգամանքով: Հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում, բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը հանցավորից հետ վերցնելն էր, ինչի դեպքում անձի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չէր ունենում: Բացի այդ, այն կարող էր որոշ բացառություններով կիրառվել նաև երրորդ անձանց սեփականությունը կազմող գույքի նկատմամբ:

Վերոշարադրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով նախատեսված քրեաիրավական ներգործության երկրորդ միջոցը, այն է՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումը՝ դրա կիրառման նույն հիմքերով, խնդիրներով և նպատակներով հանդերձ, ներառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածում՝ որպես բռնագանձում:

¹ Գույքի բռնագրավում լրացուցիչ պատժատեսակի վերաբերյալ տե՛ս նաև *Արթուր Անդրեասյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0200/01/13 որոշման 19.1-րդ կետը:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը խնդրահարույց է համարել այն հանգամանքը, որ քննիչը գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վկայակոչել և հիմնվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածի վրա, որը մեղադրյալին վերագրվող արարքը կատարելու պահին (2008 թվականին) գոյություն չի ունեցել, այն քրեական օրենսգրքում լրացվել է 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-114-Ն օրենքով և փոփոխվել 2016 թվականի մայիսի 16-ի ՀՕ-83-Ն օրենքով, այսինքն՝ հետադարձ ուժ է տվել անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքին:

Անդրադատնալով քննիչի առարկություններում կատարված վերլուծությանն առ այն, որ այդ նորմը համահունչ է դեռևս 2008 թվականին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասին՝ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ դրանք տարբեր բովանդակություն ունեցող նորմեր են, ուստի դրանք չեն կարող նույնացվել, հատկապես, որ դրանցից յուրաքանչյուրը կիրառվում է տարբեր դատավարական ռեժիմով:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ եթե ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածը սահմանում է գույքի բռնագրավում պատժի կիրառման հետ կապված հարաբերությունները, որը պարտադիր պետք է նախատեսված լինի համապատասխան հանցակազմի սանկցիայում, որպեսզի հնարավոր լինի կիրառել, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 103.1-րդ հոդվածը սահմանում է քրեափրավական ներգործության այլ միջոց հանդիսացող՝ գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները, որը կիրառվում է դատարանի կողմից *ex officio*, եթե գործով հաստատված է համարվում, որ առկա է այդ հոդվածում սահմանված չափանիշներին համապատասխանող գույք: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ այս երկու ինստիտուտները նույնացնելը ոչ իրավաչափ է:

24. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 19-22-րդ կետերում ներկայացված իրավակարգավորումների և արտահայտված իրավական դիրքորոշումների յույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել 2008 թվականի դրությամբ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ 2008 թվականին գործող խմբագրությամբ 55-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում էր ոչ թե գույքի բռնագրավում լրացուցիչ պատժատեսակին, այլ **հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավում** քրեափրավական ներգործության միջոցին վերաբերող իրավահարաբերությունները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ 2014 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավում քրեաիրավական ներգործության միջոցին վերաբերող նորմերն ուժը կորցրած ճանաչելու հետ միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է գույքի բռնագանձման ինստիտուտը նախատեսող՝ 103.1-րդ հոդվածով, որը բովանդակային առումով իր մեջ ներառում է մինչև 2014 թվականի օրենսդրական փոփոխություններ կատարելը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածում ամրագրված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման քրեաիրավական ներգործության միջոցը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ 2008 թվականին գործող խմբագրությամբ 55-րդ հոդվածի 4-րդ մասը (գույքի բռնագրավում) և 103.1-րդ հոդվածը (բռնագանձում) տարբեր բովանդակություն ունեցող նորմեր են և դրանցից յուրաքանչյուրը կիրառվում է տարբեր դատավարական ռեժիմով, իրավաչափ չեն:

25. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պաշտպան Կ.Բատիկյանի վերաքննիչ բողոքը բավարարելով, Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բեկանելով ու փոփոխելով և սահմանելով վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ վերացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը, Վերաքննիչ դատարանը թեև սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի՝ 2008 թվականին գործող խմբագրությամբ 55-րդ և 103.1-րդ հոդվածների հարաբերակցությունը, սակայն կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել և մեղադրյալ Սամվել Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Մեղադրյալ Սամվել Ալբերտի Մայրապետյանի պաշտպան Կ.Բատիկյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 19-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ *ստորագրություն*

Դատավորներ՝ *ստորագրություններ*

74. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԱԴԴ/0028/01/17

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահապետությանը՝
մասնակցությանը դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությանը՝
մասնակցությանը դատախազ՝
պաշտպաններ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ՄԵԼԻՔՅԱՆԻ
Ա.ՊԱՊԻԿՅԱՆԻ
Տ.ԵԳՈՐՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրայր Իվանի Թովչյանի, Սասունիկ Դավթի Կիրակոսյանի, Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի և Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշման դեմ ամբաստանյալ Հ.Թովչյանի պաշտպան Գ.Մելիքյանի, ամբաստանյալ Ս.Կիրակոսյանի պաշտպան Կ.Հակոբյանի, ամբաստանյալներ Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի պաշտպան Տ.Եգորյանի ու ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի պաշտպան Ա.Պապիկյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2018 թվականի մարտի 20-ի դատավճռով Հրայր Իվանի Թովչյանը մեղավոր է ճանաչվել

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2016 թվականի մայիսի 20-ից:

1.1. Սասունիկ Դավթի Կիրակոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2016 թվականի հունիսի 8-ից:

1.2. Գևորգ Վիտալիկի Սաֆարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ և 69-րդ հոդվածների համաձայն՝ նշանակված պատժին՝ 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկմանը, մասնակիորեն գումարվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի դատավճռով Գ.Սաֆարյանի նկատմամբ նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկում պատժից 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 28 (քսանութ) օրը, ու թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 5 (հինգ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի դատավճռով սահմանված ժամկետից՝ 2016 թվականի հունվարի 1-ից:

1.3. Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով, 35-225-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոններով նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Ժ.Սեֆիլյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու 28 (քսանութ) օրը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 10 (տասը) տարի 5 (հինգ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2016 թվականի հունիսի 20-ից:

1.4. Նույն դատավճռով դատապարտվել են նաև Հովհաննես Պետրոսյանը, Ներսես Պողոսյանը և Գալուստ Գրիգորյանը:

2. Ամբաստանյալ Հ.Թովիչյանի պաշտպան Գ.Մելիքյանի, ամբաստանյալ Ս.Կիրակոսյանի պաշտպան Կ.Հակոբյանի, ամբաստանյալ

Գ.Սաֆարյանի պաշտպան Ա.Ջուվանովայի, ամբաստանյալներ Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի պաշտպան Տ.Եգորյանի, ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի պաշտպան Տ.Հայրապետյանի և ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի պաշտպան Ա.Պապիկյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2018 թվականի հունիսի 13-ին որոշում է կայացրել բողոքները մասնակի բավարարելու և Առաջին ատյանի դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի դատավճիռը մասնակի բեկանելու մասին:

2.1. Հ.Թոփչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նույն որոշմամբ Հ.Թոփչյանն անհապաղ ազատ է արձակվել կալանքից, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2.2. Ս.Կիրակոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով: Նույն որոշմամբ Ս.Կիրակոսյանն անհապաղ ազատ է արձակվել կալանքից, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2.3. Գ.Սաֆարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 16-ի դատավճռով Գ.Սաֆարյանի նկատմամբ նշանակված՝ 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկմանը մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված 2 (երկու) տարի ժամկետով ազատազրկման ձևով պատժից 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը, և Գ.Սաֆարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Նույն որոշմամբ Գ.Սաֆարյանն անհապաղ ազատ է արձակվել կալանքից, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2.4. Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝ նրա կողմից հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց կանովին հրաժարվելու հիմքով: Ժ.Սեֆիլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով, 35-225-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք)

տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կանոններով, նշանակված պատիժները մասնակիորեն զուտարելու միջոցով, Ժ.Սեֆիլյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշված պատժին հաշվակցվել է Ժ.Սեֆիլյանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ից մինչև նույն թվականի մայիսի 4-ը կալանքի տակ գտնվելու 28 (քսանութ) օրը, և թողնվել է կրելու ազատազրկում՝ 5 տարի (հինգ) 5 (հինգ) ամիս 2 (երկու) օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2016 թվականի հունիսի 20-ից: Նույն որոշմամբ բավարարվել է պաշտպան Տ.Եգորյանի միջնորդությունը, և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը, փոխարինվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ալեն Մինոնյանի, Նաիրա Զոհրաբյանի, Միքայել Մելքունյանի, Վահե Էնֆիաջյանի, Վարդան Բոստանջյանի, Վարդևան Գրիգորյանի, Իվետա Տոնոյանի, Շաքե Իսայանի, Արթուր Մանուկյանի, Լուիզա Սարգսյանի, Նոռա Առուստամյանի, Սերգեյ Բագրատյանի ու Գևորգ Պետրոսյանի անձնական երաշխավորությամբ:

3. Վերաքննիչ դատարանի՝ վերոնշյալ որոշման դեմ Հ.Թոփչյանի պաշտպան Գ.Մելիքյանը, Ս.Կիրակոսյանի պաշտպան Կ.Հակոբյանը, Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի պաշտպան Տ.Եգորյանը, Ժ.Սեֆիլյանի պաշտպան Ա.Պապիկյանը բերել են վճռաբեկ բողոքներ, որոնք Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ վարույթ են ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքների պատասխաններ չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Առաջին ատյանի դատարանը, Հ.Թոփչյանին և Ս.Կիրակոսյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով, Գ.Սաֆարյանին՝ 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, Ժ.Սեֆիլյանին՝ 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում, դատավճռի՝ հաստատված փաստական հանգամանքների հատվածում արձանագրել է. «2012 թվականի նոյեմբերի 15-ին Ժիրայր Սեֆիլյանը և մյուսները սրեղծել են «Հիմնադիր խորհրդարան» նախաձեռնությունը, որին անդամակցել է նաև Գևորգ Վիրալիկի Սաֆարյանը:

Նախաձեռնության սրեղծման օրվանից ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը, զանգվածային անկարգություններ կազմակերպելու ուղղակի դիրավորությամբ, նույն հասարակական կազմակերպության որոշ անդամների, այդ թվում՝ Գևորգ Սաֆարյանի և այլոց հետ նախնական

համաձայնություն է ձեռք բերել զանգվածային անկարգություններ կազմակերպելու վերաբերյալ, ապա հեռուստատեսությամբ, էլեկտրոնային կայքերով և հանրահավաքների միջոցով կոչեր հնչեցրել քաղաքացիների կողմից կազմակերպությանն անդամագրվելու համար՝ նպատակ ունենալով սրեղծել զինված խմբեր և հավաքագրել զանգվածային անկարգությունների կատարմանը պատրաստ անձանց:

Իրենց հանցավոր մտադրության իրականացման նպատակով, ինչպես անձամբ, այնպես էլ ներգրավված այլ անձանց միջոցով ամբաստանյալներ Տիրայր Սեֆիլյանը, Գևորգ Սաֆարյանը և մյուսները 2014 թվականի մայիսից հավաքագրել են անկարգությունների կատարմանը պատրաստ անձանց խմբեր, պարբերաբար ՀՀ տարբեր մարզերում կազմակերպել հանրահավաքներ և ավտոերթ, զանգվածային լրարվամիջոցների, ստույիանների և հասարակական վայրերում տարբեր պարբերակներով կազմակերպված հավաքների ու երթերի ընթացքում տարաբնույթ սարքիչ ելույթներով, քաղաքացիներին նախապատրաստել են 2015 թվականի ապրիլի 24-ին հասարակական անվտանգությունը վտանգող՝ գույք ոչնչացնելով և վնասելով, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված զանգվածային անկարգությունների:

2015 թվականի ապրիլի 20-ից մինչև ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Ազատության հրապարակի, Սայաթ-Նովա և Արովյան փողոցների, Հանրապետության հրապարակի, Ամիրյան-Սաշտոց փողոցների տարածքով երթ իրականացնելու վերաբերյալ «այլ անձր»¹ իրազեկել է Երևանի քաղաքապետարանին, սակայն Երևանի քաղաքապետարանը որոշում է կայացրել սահմանափակել երթի անցկացման վայրը, հավաքի կազմակերպչին առաջարկվել է հավաքներն անցկացնել «Էրեբունի» թանգարանին հարող հրապարակում՝ պարձառաքանելով, որ նշված երթուղով բազմամարդ երթի անցկացումը կարող է անհամաչափ կերպով սահմանափակել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ նախապես ծրագրած միջոցառումների մասնակիցների տեղաշարժման ազատությունը և անմիջական վտանգ հանդիսանալ նրանց անվտանգության համար: Միևնույն ժամանակ, հիշյալ որոշմամբ հայտնվել է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում Երևանում նախատեսված բազմաբնույթ ու բազմամարդ միջոցառումների և բազմաթիվ պարավիրակությունների մայրաքաղաք ժամանելու հանգամանքով պայմանավորված՝ մայրաքաղաքի կենտրոնական հատվածը պարավիրակությունների տեղաշարժի և միջոցառումների ընթացքում լինելու է խիստ ծանրաբեռնված:

¹ Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ ԵԱԳԳ/0028/01/17 որոշումը:

Ամբաստանյալներ Ժիրայր Սեֆիլյանը, Գևորգ Սաֆարյանը և այլոք, քաջարեղյակ լինելով, որ Երևանի քաղաքապետարանը թույլատրել է Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ իրականացվելիք համազգային հրապարակային միջոցառումների օրերին հավաքներն անցկացնել այդ միջոցառումների իրականացման վայրերին չհարող՝ Էրեբունի վարչական շրջանի տարածքում, համաձայնում կոչեր և թոռուցիկներ տարածելով, քաղաքացիներին հրավիրել են հարկապես հիշյալ տարելիցի առթիվ իրականացվող միջոցառումների համար նախատեսված «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրին հարող տարածքներում փաստացի սահմանափակված հավաքների՝ հայտնելով, որ տարաբնույթ զանգվածային միջոցառումներ են իրականացնելու: Այս պարագայում քաջ գիտակցելով օրենքի խախտմամբ տեղի ունեցող հավաքներին իրավապահ մարմինների իրավաչափ գործողություններով միջամտելու անհուսափելիությունը՝ ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը, Գևորգ Սաֆարյանն ու մյուսներն ինքնապաշտպանության քողարկված պատրվակով կոչեր են արել զինված դիմադրություն ցույց տալ իրեն թե իրենց հավաքներին խոչընդոտող իշխանության ներկայացուցիչներին:

Մասնավորապես, 2014 թվականի մայիսի 16-ին Երևան քաղաքի Ազատության հրապարակում հավաքի ժամանակ, ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանը կոչ է արել բոլորին դուրս գալ տներից և համախմբվել՝ նշելով. «Դու՛րս եկեք տներից և համախմբվե՛ք, կոչ եմ անում երիտասարդներին, ի դեպ, եթե պետք լինի կկոչվենք բառիս բուն իմաստով, կկոչվենք զենքով»:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ Ժիրայր Սեֆիլյանը հայտարարել է. «(...) ասրիլի 24-ին դուրս ենք գալու փողոց և տուն չենք վերադառնալու այնքան ժամանակ, մինչև չիրականացնենք իշխանափոխություն, զենքը լոկ մարդասպանության գործիք չէ, այն նախատեսված է նաև ինքնապաշտպանության համար, ժողովուրդը չպետք է զինաթափված լինի»:

Նույն ասուլիսի ժամանակ ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանը հանդես է եկել նաև հետևյալ արտահայտություններով. ««Հիմնադիր խորհրդարանն» ընտրել է պայքարի խաղաղ տարբերակը, սակայն պարտապարհ կլինի հնարավոր բռնությանը պարասխանել համարժեք բռնությամբ, եթե կրակելու են, թո՛ղ կրակեն, մենք էլ կկրակենք»:

Այնուհետև, ամբաստանյալ Գևորգ Սաֆարյանը, համեմատություններ կարարելով 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի հետ, նշել է, որ այն ժամանակ ժողովուրդը պարտապարհ չի եղել և քարերով են դուրս եկել փողոց:

Այնուհետև, զանգվածային անկարգությունների կազմակերպման միասնական դիրավորությամբ, ամբաստանյալներ Ժիրայր Սեֆիլյանը,

Գևորգ Սաֆարյանն ու մյուսները ձեռք են բերել և իրենց բնակարաններում, «Հիմնադիր խորհրդարան» նախաձեռնության Երևանի, Գյումրու և Վանաձորի գրասենյակներում, նրանց համար որպես հավաքարեղի ծառայած «Սարդարապատ» նախաձեռնության և «Շուշիի առանձնակի գումարտակի ազատամարտիկների միավորում» հասարակական կազմակերպության գրասենյակներում, ինչպես նաև «Սարդարապատ» նախաձեռնության գրասենյակի կարիքների համար օգտագործվող «ՎԱԶ 2106» մակնիշի, 04LS513 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում պահել են ինչպես գործարանային արտադրության, այնպես էլ ինքնաշեն, մարմնական վնասվածքներ հասցնելու համար հարմարեցված շուրջ չորս տասնյակ մետաղյա ձողեր և փայտյա մահակներ, կոփագներ, երկու էլեկտրապարպիչ:

Ամբաստանյալներ Ժիրայր Սեֆիլյանը, Գևորգ Սաֆարյանը և մյուսները, գիրակցելով, որ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ 2015 թվականի ապրիլի 24-ին Երևան քաղաքում իրականացվելու են համազգային հրապարակային միջոցառումներ, իրենց կողմից հավաքագրված խմբերի միջոցով անկարգություններ հրահրելու եղանակով ծրագրել են Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշարակի օրը զանգվածային անկարգություններն իրագործել հրապարակային միջոցառումների անցկացման վայրերում, սակայն հանցավոր մտադրությունն ու գործողություններն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ հանգամանքներով, քանի որ հանցագործության կատարմանն անմիջականորեն ուղղված գործողությունները բացահայտվել և կանխվել են իրավապահ մարմինների կողմից:

(...)

2015 թվականի մայիսի 4-ից փաստացի գրնվելով ազատության մեջ՝ ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը ոչ միայն չի հրաժարվել հանցավոր գործողություններ իրականացնելու իր մտադրությունից, այլև 2015 թվականի նոյեմբերից շարունակել է իր հանցավոր գործունեությունը: Նա որոշել է արեղծել և դեկավարել կազմակերպված զինված խումբ՝ իր ենթահամբերով, դրանց պատասխանատուներով՝ նպատակ ունենալով խմբի անդամների միջոցով զենքի գործադրմամբ քաղաքացիների և զինծառայողների կյանքի համար վրանգավոր բռնությամբ ՀՀ տարբեր վայրերում գրնվող ռազմավարական նշանակություն ունեցող շենքերը, շինությունները զավթել և դրանք պահելուց հետո պետությանը հարկադրել որոշակի գործողություններ կատարելուն:

Դեռևս 2014 թվականին ամբաստանյալ Հովհաննես Դորիկի Պետրոսյանը, սոցիալական կայքերում լսելով Ժիրայր Սեֆիլյանի կոչերը, «Ֆեյսբուք.քոմ» («facebook.com») սոցիալական կայքի միջոցով հաղորդագրություն է ուղարկել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին և

ցանկություն հայրնել հանդիպել նրան: Պայմանավորվածության համաձայն՝ ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը 2014 թվականին գնացել է Երևան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցում տեղակայված «Հիմնադիր խորհրդարան» հասարակական կազմակերպության վարչական շենք, որտեղ հանդիպել է ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին, ծանոթացել նրա հետ և հայրնել, որ գաղափարակից է և առաջարկել է իր օգնությունը: Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը Կրկին է իր դրական պատասխանը և հայրնել, որ կապ կհաստատեն էլեկտրոնային կայքի միջոցով:

2015 թվականի աշնանը ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը «Ֆեյսբուք.քոմ» («facebook.com») սոցիալական կայքի միջոցով հաղորդագրություն է ուղարկել ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին և հանդիպման հրավիրել «Սարդարապատ» շարժման գրասենյակ: Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը գնացել է «Սարդարապատ» շարժման գրասենյակ, որտեղ հանդիպել է ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին, ով իրեն ուղեկցել է առանձնասենյակ, այնտեղ ծանոթացրել իր մերերիմ՝ ամբաստանյալ Հրայր Իվանի Թոփչյանի հետ և հայրնել, որ նա է լինելու իր համակարգողը՝ միաժամանակ նշելով, որ անհրաժեշտության դեպքում վերջինիս միջոցով իր հետ կապ հաստատի:

Դրանից հետո ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը բազմիցս հանդիպել է ամբաստանյալ Հրայր Թոփչյանի հետ, քննարկել փարսերույթ հարցեր, որոնց ընթացքում վերջինս Հովհաննես Պետրոսյանին փոխանցել է Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարությունը՝ խմբի նոր անդամներ հավաքագրելու վերաբերյալ: Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը Կրկին է իր դրական պատասխանը և այդ մասին հայրնել իր բարեկամ Սմբատ Գալոյանին, ինչպես նաև իր մերերիմներ՝ ամբաստանյալներ Ներսես Պողոսյանին և Գալուստ Գրիգորյանին, որոնց հետ ծանոթացել է 2015 թվականի ամռանը՝ էլեկտրակենտրոնայի սակագնի թանկացման դեմ բողոքի ակցիաների ընթացքում: Ստանալով նրանց համաձայնությունը՝ ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը հավաքագրել է վերջիններին և այդ մասին հայրնել ամբաստանյալ Հրայր Թոփչյանին:

Իր հանցավոր մտադրության իրականացման համար ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը կազմակերպված խմբի կազմում ամբաստանյալ Հրայր Թոփչյանի ղեկավարմամբ սրեղծված ենթախմբին կնքել է «Կարոտ» կեղծանունը, սպա կատարել է հանցավոր խմբի անդամների միջև դերաբաշխում և համարաբաշխում, ինչպես նաև ենթախմբի անդամներին զինելուն, ծածկագրված կապի միջոցներով ապահովելուն և հարձակման ենթակա օբյեկտներն ուսումնասիրելուն անմիջականորեն ուղղված գործողություններ: Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը նշված

ենթախմբի կազմում ընդգրկել է նաև իր մրերին՝ ամբաստանյալ Մասունիկ Կիրակոսյանին, ինչպես նաև այլ անձանց, սակայն կազմակերպված խմբի այլ ենթախմբերի, դրանց անդամների բացահայտմանը խոչընդոտելու և հանցավոր նպատակի իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով ապահովել է ինչպես ենթախմբերի, այնպես էլ դրանցում ներգրավված անդամների՝ միմյանցից անջատ և գաղղնի գործունեությունը: Մասնավորապես, 2015 թվականի մայիսին Կուրայքի մարզի Գառնի գյուղի և Երևան քաղաքի Ավան-Առինջ թաղամասի առանձնատներից մեկում փարբեր օրերի ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը հանդիպել է գործով չպարզված մի քանի այլ ենթախմբերի պատասխանատուների հետ և քննարկել ռազմավարական նշանակություն ունեցող շենքերի և շինությունների զավթմանն ուղղված գործողությունների իրականացման ծրագրերը:

Ռազմավարական նշանակություն ունեցող շենքերի վրա ծրագրված հարձակումները 2015 թվականի դեկտեմբերի 1-ին իրականացնելու ուղղակի դիրավորությամբ, ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը 2015 թվականին՝ չպարզված օրը, հանդիպել է ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի հետ, հայրնել խմբի անդամների միջոցով գնքի գործադրման քաղաքացիների և զինծառայողների կյանքի համար վրանգավոր բռնությամբ ՀՀ փարբեր վայրերում գրնվող ռազմավարական նշանակություն ունեցող շենքերը, շինությունները զավթելու և դրանք պահելուց հետո պետությանը որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու իր հանցավոր մտադրության մասին: Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը, միաժամանակ գիտակցելով պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող Երևանի գլխավոր հեռուստաաշտարակը զավթելու միջոցով ցանկալի արդյունքի հասնելու հնարավորությունը, թիրախավորել է այն և հանձնարարել ուսումնասիրել տեղանքը, մշակել պլան՝ դրա գրավմանն ուղղված բոլոր հնարավոր խոչընդոտները վերացնելու համար:

Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն իր և ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի քննարկման մասին հայրնել է Սմբար Գալոսյանին, Ներսես Պողոսյանին և Գալուստ Գրիգորյանին, սպա Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարությունն անթերի կատարելու համար Գալուստ Գրիգորյանի հետ գնացել է Երևանի գլխավոր հեռուստաաշտարակին հարող փարածք և գննել այն: Իրանից մի քանի օր անց ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն, արդեն մենակ, երկու անգամ կրկին գնացել է հիշյալ վայր, լրացուցիչ ուսումնասիրել փարածքը և կազմել հեռուստաաշտարակի սխեմա: Միտման կազմելուց հետո ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն այդ մասին հայրնել է ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին և հանդիպումներից մեկի ժամանակ վերջինին ներկայացրել այն:

Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը, ուսումնասիրելով Հովհաննես Պետրոսյանի կողմից կազմված՝ Երևանի գլխավոր հեռուստաաշտարակի սիեման, վերադարձրել է նրան և հետագայում չբացահայտվելու նպատակով հանձնարարել է տեսողական հիշողությանը մրայպահել և ոչնչացնել սիեման:

Դրան հաջորդող օրերին իր և ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հանդիպման մասին ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը մանրամասն պարմել է Սմբար Գալոյանին և նրան ցույց տվել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարությանը իր կողմից կազմված սիեման և ինդրել է դրան ծանոթանալուց հետո այրել: Հեռուստաաշտարակի մուրքի և ելքի, այնտեղ գրնվող շենքերի տեղակայման վայրերը վերհիշելու համար Սմբար Գալոյանն այն չի այրել, այլ թաքցրել է իր սպորտային համազգեստի գրպանում:

Դրանից օրեր անց ամբաստանյալներ Հրայր Թոփչյանը և Հովհաննես Պետրոսյանը, պայմանավորվածության համաձայն, հանդիպել են Երևան քաղաքի Խորենացու փողոցում գրնվող վերջինիս աշխատավայրում, որի ընթացքում ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը կրկին կազմել է Երևանի գլխավոր հեռուստաաշտարակի գծագիրը և առաջարկել այն գրավելու իր տարբերակը, որը, սակայն, ամբաստանյալ Հրայր Թոփչյանի կողմից հավանության չի արժանացել:

Քննարկումից հետո ամբաստանյալ Հրայր Թոփչյանը հանդիպել է ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հետ և հայրնել, որ հեռուստաաշտարակի գրավման պլանն իրատեսական չէ, սակայն ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը պնդել է, որ ծրագիրը պետք է կյանքի կոչել: Դրան հաջորդող օրերին ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը հեռախոսակապի միջոցով ամբաստանյալ Հրայր Թոփչյանին հրավիրել է հանդիպման և առանձնագրույցի ժամանակ հանձնարարել երկու միավոր ինքնաձիգ և փամփուշտներ փոխանցել իր ենթախմբի անդամ, ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին՝ միաժամանակ նշելով, որ կապ հաստատի իր վաղեմի ընկեր՝ ամբաստանյալ Սասունիկ Կիրակոսյանի հետ և նրանից արանա հիշյալ գենք-գինամթերքը: Ամբաստանյալ Հրայր Թոփչյանը զանգահարել է ամբաստանյալ Սասունիկ Կիրակոսյանին և, պայմանավորվածության համաձայն, հանդիպել նրան: Հանդիպման ժամանակ ամբաստանյալ Հրայր Թոփչյանը Սասունիկ Կիրակոսյանին փոխանցել է ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարությունը և, պարզելով, որ ինքնաձիգերը և փամփուշտները գրնվում են նրա տիրապետության տակ, զանգահարել է ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին, հայրնել, որ պետք է Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարության համաձայն՝ երկու միավոր ինքնաձիգերը հանձնի նրան: Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝

ամբաստանյալ Հրայր Թոփչյանն ամբաստանյալ Սասունիկ Կիրակոսյանի հետ, վերջինիս «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայով, «AK-74» տեսակի մարտական ակոսափող, «971737» և «ИМ 30 4598» գործարանային համարների երկու ինքնաձիգերը, ինքնաձիգի չորս պահունակները՝ լիցքավորված ռազմամթերք հանդիսացող, 5.45մմ տրամաչափի 120 մարտական փամփուշտներով, տեղափոխել են Երևան քաղաքի Մուրացան փողոցում գրավող զինվորական հոսպիտալի մոտ, որտեղից ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի ցուցումով այն տեղափոխել են հիշյալ տարածքում տեղակայված վերջինիս ընկեր Սահակ Սահակյանի ավտոտնակում:

Հրազեններն ու ռազմամթերքը պահելուց հետո՝ նույն օրը, ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը կազմակերպված խմբի՝ իր ենթակայության տակ գրավող անդամներ՝ ամբաստանյալներ Ներսես Պողոսյանին և Գալուստ Գրիգորյանին հայտնել է, որ ապօրինի ձեռք է բերել և հիշյալ վայրում պահել հրազեն ու ռազմամթերք, որից հետո առաջարկել է ընկերներին դրանք տեղափոխել ու թաքցնել այլ վայրում՝ մինչև ամբաստանյալ Ժիրայր Մեֆիլյանի կողմից տրվելիք՝ կազմակերպված խմբով զենքի գործադրմամբ, շապտերի կյանքի համար վրանգավոր բռնության գործադրմամբ Երևանի գլխավոր հեռուստաաշտարակը զավթելու և պահելու վերաբերյալ հրահանգը: Նույն օրը՝ երեկոյան, կազմակերպված խմբի անդամ ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն ամբաստանյալներ Ներսես Պողոսյանի և Գալուստ Գրիգորյանի հետ հիշյալ հրազեններն ու ռազմամթերքը դուրս են բերել Սահակ Սահակյանի ավտոտնակից և քայլելով ապօրինի փոխադրել ու պահել են ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի փորապետման տակ գրավող, իր աներ Էդիկ Եղիազարյանի՝ Երևան քաղաքի Աթոյան փողոցում գրավող, չբնակեցված բնակարանում և սպասել զինված հարձակում իրականացնելու վերաբերյալ ամբաստանյալ Ժիրայր Մեֆիլյանի հրահանգին:

Դրանից մոտ մեկ շաբաթ անց ամբաստանյալ Հրայր Թոփչյանը հանդիպել է ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի հետ և հայտնել, որ պլանավորել են 2015 թվականի դեկտեմբերի 1-ին Ազատության հրապարակում կայանալիք «Մահ ուեժիմին, ոչ ոք հրապարակից տուն չի գնալու» կարգախոսով ամբաստանյալ Ժիրայր Մեֆիլյանի կազմակերպած հանրահավաքից հետո իրականացնել գրոհ: Նա ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին րվել է 130.000 ՀՀ դրամ և հանձնարարել վարձակալել ամենագնաց ավտոմեքենա՝ գրոհի օրը որպես փոխադրամիջոց օգտագործելու համար: Նույն օրն ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն ամբաստանյալներ Ներսես Պողոսյանի և Գալուստ Գրիգորյանի հետ գնացել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայում

գրնվող՝ «Լյուքս քար սերվիս» ՍՊ ընկերություն, որտեղից վարձակալել են «Վոլկսվագեն Տուարեզ» մակնիշի ամենագնացը և Երևան քաղաքի Աթոյան փողոցում գրնվող բնակարանում սպասել գրոհի վերաբերյալ ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հրահանգին:

Մինչև ուշ գիշեր սպասելուց և հրահանգ չստանալուց հետո ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի կողմից տրված և խմբի նպարակների համար օգտագործվող հեռախոսահամարով զանգահարել է ամբաստանյալ Հրայր Թովչյանին, հայրնել «Կարոյ» նշանաբանը, սակայն պարասիսան նշանաբանը չլսելով՝ գիրակցել է, որ հեռախոսահամարին պարասիսանել է այլ անձ, ինչից հետո անջարել է այն: Նույն պահին այդ մասին նա հայրնել է ամբաստանյալներ Գալուստ Գրիգորյանին և Ներսես Պողոսյանին, մրավախություն հայրնել հանցագործության բացահայտման վերաբերյալ, որից հետո միասին որոշել են փոխել զենքերի տեղը, սպա վարձակալած «Վոլկսվագեն Տուարեզ» մակնիշի ավտոմեքենայով զենքզինամթերքը ապօրինի փոխադրել և պահել են ամբաստանյալ Գալուստ Գրիգորյանի տիրապետման տակ գրնվող՝ Երևան քաղաքի Գյուրջյան փողոցի թիվ 10/5 տան հարևանությամբ գրնվող մեքենայ տաղավարում:

Հաջորդ օրն ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայում հանդիպել է ամբաստանյալ Հրայր Թովչյանին, պարզաբանում պահանջել հրահանգ չտալու և գաղտնի հեռախոսին այլ անձի կողմից պարասիսանելու հանգամանքի շուրջ, որին ի պարասիսան՝ ամբաստանյալ Հրայր Թովչյանը հայրնել է, որ գրոհի հրահանգը պետք է տար միայն Ժիրայր Սեֆիլյանը, իսկ թե որն է եղել հրահանգ չտալու պարճառը, իրեն ոչինչ հայրնի չէ:

Իրանից հետո՝ 2016 թվականի հունվարին, ամբաստանյալներ Գալուստ Գրիգորյանն ու Ներսես Պողոսյանը որոշել են տեղափոխել և այլ վայրում թաքցնել հիշյալ հրազեններն ու ռազմամթերքը, որի համար նախնական համաձայնության են եկել խմբի մյուս անդամի հետ և երկուսով՝ ամբաստանյալներ Ներսես Պողոսյանն ու Գալուստ Գրիգորյանը, վերջինիս ավտոմեքենայով դրանք Երևան քաղաքի Գյուրջյան փողոցում գրնվող տաղավարից հանել, ապօրինի փոխադրել և պահել են Կուրայքի մարզի Չորաղբյուր գյուղում գրնվող ամառանոցի նկուղում, ինչի մասին հետագայում տեղեկացրել են ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին:

2016 թվականի մայիսի 18-ին, կազմակերպված խմբով, զենքի գործադրմամբ, զինճառայողների կյանքի համար վրանգավոր բռնություններ, զավթածն ազատելու պայմանով պետությանը գործողություններ կատարելու հարկադրելու նպարակով, ռազմավարական նշանակություն ունեցող շենքերը, շինությունները զավթելու և պահելու հանցավոր

մրադրությունն իրականացնելու մղումով, Երևանի գլխավոր հեռու-
տասաչարակի վրա զինված հարձակում կատարելու վերաբերյալ
հրահանգը հետաձգելուց որոշ ժամանակ անց, ամբաստանյալ Ժիրայր
Սեֆիլյանը Հրայր Թոփչյանի միջոցով Հովհաննես Պետրոսյանին
հանձնարարել է ուսումնասիրել արդեն Նուբարաշեն վարչական շրջանում
տեղակայված զորամասերը: Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն
այդ մասին հայտնել է Սմբատ Գալոյանին, ով, հանդիսանալով հիշյալ
զորամասերի նախկին զինծառայող, տեղեկություններ է հայտնել այդ
զորամասերի վարչական շենքերի, շինությունների տեղակայման, ինչպես
նաև զորքերի նշանակության և մոտավոր թվաքանակի վերաբերյալ և
քննարկման ընթացքում մրահոգություն հայտնել հիշյալ զորամասերի
վրա զինված հարձակում կատարելու և այդտեղ ծառայող զինվորների
հետ զինված բախում ունենալու անսպասակահարմարության մասին:
Վերջիններս որոշել են այդ մրահոգությունը հայտնել ամբաստանյալ
Ժիրայր Սեֆիլյանին և նրա հետ անհապաղ հանդիպում պահանջել
ամբաստանյալ Հրայր Թոփչյանից: Իրան հաջորդող օրերին ամբաս-
տանյալ Հովհաննես Պետրոսյանն անձամբ հանդիպել է ամբաստանյալ
Ժիրայր Սեֆիլյանին, հայտնել, որ սպրիլյան պատերազմից հետո
զորամասերի վրա հարձակում գործելը կոֆուլի որպես դավաճանություն,
սակայն վերջինս պնդել է իր հանցավոր մրադրությունը և հայտնել, որ
դա իր երկար մրաժած ծրագիրն է՝ միաժամանակ նշելով, որ, եթե վստահ
չեն իրենց ուժերի վրա, կարող են հրաժարվել գրոհին մասնակցելուց:
Խոսակցության ընթացքում ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը
Հովհաննես Պետրոսյանին հայտնել է, որ զորամասերի վրա գրոհ
իրականացնելուց ժամեր առաջ ամբաստանյալ Հրայր Թոփչյանին
կողարկի նրանց հետևից, միասին կհանդիպեն և կհրահանգավորվեն
գրոհն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, նա հորդորել է
հանգիստ լինել՝ վստահեցնելով, որ զորամասում կան բազմաթիվ
զինծառայողներ, որոնց հետ համարել պետք է իրականացվի գրավման
գործընթացը:

2016 թվականի մայիսին, ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանն ու
կազմակերպված խմբի մեկ այլ անդամը նախնական համաձայնության
են եկել հիշյալ հրազեններն ու ռազմամթերքն այլ վայր տեղափոխելու
շուրջ: Իրենց մրադրության իրականացման համար ամբաստանյալ
Հովհաննես Պետրոսյանն ու կազմակերպած խմբի մյուս անդամը տարսի
ավրոմեքենայով մեկնել են Ձորաղբյուր գյուղ, այնտեղից վերցրել և
Երևան քաղաքի Հալաբյան փողոցում գրավող քնակարան են ապօրինի
փոխադրել և պահել վերոհիշյալ հրազեններն ու ռազմամթերքը՝
սպասելով ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի կողմից 2016 թվականի
մայիսի 18-ին ծրագրված՝ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական

շրջանում գրնվող զորամասերի վրա իրականացվելիք հարձակման համար հրահանգ ստանալուն:

Զենքերը տեղափոխելու հաջորդող օրերին Երևան քաղաքի Մ.Խորենացի փողոցում ամբաստանյալ Հրայր Թոփչյանը հանդիպել է Հովհաննես Պետրոսյանին և հայրնել, որ 2016թ. մայիսի 17-ին կամ 18-ին՝ ժամը 21:00-ին, պետք է հանդիպեն Երևան քաղաքի Հալաբյան փողոցում, որից հետո անցնեն ընդհարակ և գնան գրոհի:

Ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը, գիտակցելով գրոհի իրական լինելու հանգամանքը, այդ մասին հայրնել է Սմբար Գալոյանին և խմբի մյուս անդամների հետ քննարկել և որոշել են հրաժարվել գրոհին մասնակցելուց:

Պայմանավորվածության համաձայն՝ 2016 թվականի մայիսի 18-ին Հովհաննես Պետրոսյանը և Սմբար Գալոյանն իրենց մոտ պահվող զենք-զինամթերքով պետք է Երևան քաղաքի Հալաբյան փողոցում գրնվող՝ «Շեվրոլեյ» ավտոնրահի դիմաց հանդիպելին ամբաստանյալ Հրայր Թոփչյանին, ով իրենց պետք է տեղափոխեր այլ վայր, որտեղ իրենց պետք է սպասեին Ժիրայր Մեֆիլյանի կազմակերպմամբ արեղծված մյուս խմբերի և ենթախմբերի 200-300 անդամները, ովքեր ևս պետք է մասնակցություն ունենային զենքի գործադրմամբ, ռազմավարական նշանակություն ունեցող շենքերը, շինությունները զավթելու և պահելու հանցավոր գործունեությանը:

Քանի որ խմբի անդամներն արդեն որոշել էին հրաժարվել խմբին անդամակցելուց, ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը Սմբար Գալոյանին առաջարկել է 2016 թվականի մայիսի 18-ին Հալաբյան փողոցում պայմանավորված ժամին հանդիպել ամբաստանյալ Հրայր Թոփչյանի հետ և սրել՝ իրեն թե ինքը հայրնվել է իրավապահ մարմինների տեսադաշտում և այդ պարճառով հանդիպման չի եկել:

Համաձայնության գալուց հետո Սմբար Գալոյանը գնացել է հանդիպման, ծանոթացել Հրայր Թոփչյանի և նրա հետ եկած երկու անձանց հետ ու, ներկայանալով որպես Հովհաննես Պետրոսյանի ազգական, նշել է, որ վերջինս հայրնվել է իրավապահ մարմինների տեսադաշտում և այդ պարճառով նրա փոխարեն հանդիպման է եկել ինքը: Խոսակցության ընթացքում Սմբար Գալոյանն առաջարկել է վերադարձնել զենքերը, սակայն ամբաստանյալ Հրայր Թոփչյանը հրաժարվել է դրանք ստանալուց և հայրնել է, որ ինքն իր հարցերը կլուծի Հովհաննես Պետրոսյանի հետ: Այնուհետև մի քանի քայլ հեռանալուց հետո ամբաստանյալ Հրայր Թոփչյանը հեռախոսազանգ է կարարել, որից հետո եկած անձանց հետ նույն ավտոմեքենայով հեռացել է:

Հանդիպման մասին Սմբար Գալոյանը պարմել է Հովհաննես Պետրոսյանին, որից հետո, 2016 թվականի սպրիլյան պարերազմի

ժամանակ բազմաթիվ ՀՀ զինծառայողների զոհվելու հանգամանքով պայմանավորված, ենթախմբի անդամները վերջնականապես որոշել են հրաժարվել խմբին անդամակցելուց, հիասթափվել հայրկապես Նուբարաշենի զորամասերի զինվորների կյանքի համար վրանգավոր բռնության գործադրմամբ այդ զորամասերի վրա զինված հարձակում կատարելու Ժիրայր Սեֆիլյանի ծրագրից, դրան վերաբերվել քննադատորեն և համոզմունք ձևավորել վերջինիս կեղծ հայրենասիրության, հանուն շահի՝ հայ զինվորի կյանքը զոհաբերելու և պետության անվտանգությունը վրանգելու վերաբերյալ: Ենթախմբի անդամների դիրքորոշման մասին ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանը հայտնել է Հրայր Թոփչյանին, ով կրկին քննադատորեն է վերաբերվել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի՝ վերը նշված հանցավոր մտադրությանը, կրկին հրաժարվել խմբին անդամակցելուց և այդ մասին հայտնել ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանին: Մասնավորապես, Հրայր Թոփչյանը Ժիրայր Սեֆիլյանին հայտնել է, որ իր ենթախմբի բոլոր անդամները հրաժարվել են զորամասերի վրա զինված հարձակում կատարելուց: Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը, տեղեկանալով ենթախմբի անդամների հիշյալ դիրքորոշման և զինված հարձակմանը մասնակցելուց հրաժարվելու մասին և գիտակցելով Հրայր Թոփչյանի ղեկավարած ենթախմբով հարձակումն իրագործելու անհնարինությունը, կոնկրետ նշված ենթախմբին զորամասերի վրա զինված հարձակում կատարելուն ուղղված գործողությունները դադարեցնելու հրահանգ է տվել և ամբաստանյալ Հրայր Թոփչյանին հանձնարարել վերադարձնել ենթախմբին տրամադրված զենքերը և ռազմամթերքը:

Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի հանձնարարության համաձայն՝ 2016 թվականի մայիսի 20-ին Հրայր Թոփչյանը որոշել է Հովհաննես Պետրոսյանից հեռ պրանայ իր կողմից տրված զենքը և ռազմամթերքը ու այդ նպատակով զանգահարել է իր ընկեր Աշոտ Գուգուշյանին և խնդրել վերջինիս ավրումեքենայով մեկնել Երևան քաղաքի Հալաբյան փողոց՝ իբրև թե ուղեբեռ տեղափոխելու համար: Աշոտ Գուգուշյանը համաձայնվել է և իր անձնական օգտագործման՝ «Մերսեդես» մակնիշի, 34LM658 հաշվառման համարանիշի ավրումեքենայով 2016 թվականի մայիսի 20-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Հրայր Թոփչյանի հետ գնացել է Հալաբյան փողոց, որտեղ Հովհաննես Պետրոսյանը և Սմբար Գալոյանն ավրումեքենային են մոտեցրել սրվարաթղթե արկղի մեջ տեղավորված՝ ԱԿ-74 տեսակի մարտական ակոսափող «971737» և «ՄՄ 30 4598» գործարանային համարների երկու ինքնաձիգերն ու ռազմամթերք հանդիսացող՝ 5.45 մմ տրամաչափի 120 մարտական փամփուշտները՝ լիցքավորված ինքնաձիգի չորս պահունակներով, ինչն էլ Հրայր Թոփչյանի օգնությամբ տեղավորել են բեռնախցիկում: Հիշյալ զենքն ու

նազմամթերքը ժիրայր Սեֆիլյանին հանձնելու նպատակով Հրայր Թոփչյանն Աշոտ Գուգուշյանին խնդրել է ավերումքենաս վարել Ծիծեռնակաբերդի խճուղու ուղղությամբ: Ճանապարհին Աշոտ Գուգուշյանի վարած ավերումքենաս բախվել է «Նիսասն» մակնիշի, 064 OF 61 հաշվառման համարանիշի ավերումքենային: Բախման պարճառով վարորդների միջև տարաձայնություն առաջանալուց հետո մտրեցել են տարածքում ծառայություն իրականացնող՝ ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի 3-րդ հապուկ գումարակի ոստիկանները, ովքեր վթարի մասնակիցներին առաջարկել են ավերումքենաների հետնամասում տեղադրել անվտանգության եռանկյունաձև նշանը: Նույն պահին Աշոտ Գուգուշյանը բացել է իր ավերումքենայի բեռնախցիկը, որի ժամանակ Հրայր Թոփչյանի օգնությամբ այնտեղից հանել է սրվարաթղթե արկղը՝ դրա տակ գրնվող անվտանգության եռանկյունաձև նշանը՝ ավերումքենայի հետնամասում տեղադրելու համար: Սրվարաթղթե արկղը բեռնախցիկից հանելուց հետո, դրանից ընկել է ինքնաձիգի փամփշշակալը, ինչը ոստիկանության աշխատակիցները նկատել են և Հրայր Թոփչյանին և Աշոտ Գուգուշյանին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին:

Կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք բերված հրազենն ու նազմամթերքը պահելու և փոխադրելու բացահայտման պարճառով ամբաստանյալ ժիրայր Սեֆիլյանի կողմից զավթածն ազատելու պայմանով պետությանը որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով կազմակերպված խմբով, զենքի գործադրմամբ, կյանքի համար վտանգավոր բնություն գործադրելով նազմավարական նշանակության շենքերի, շինությունների զավթումը, ինչպես նաև զանգվածային անկարգությունների կազմակերպումը ավարդին չեն հասցվել՝ ժիրայր Սեֆիլյանի կամքից անկախ հանգամանքներով, իսկ մյուսները կամովին հրաժարվել են այդ հանցանքի կատարումից»¹:

4.1. Դատավճռի՝ իրավական վերլուծությունների հատվածում Առաջին առյանի դատարանը նշել է. «Վերլուծելով ամբաստանյալներ Հրայր Բվանի Թոփչյանի, Գալուստ Վարազդարի Գրիգորյանի, Ներսես Միքայելի Պողոսյանի, Մասունիկ Դավթի Կիրակոսյանի, Գևորգ Վիրալիկի Սաֆարյանի ցուցմունքները, համադրելով դրանք քրեական գործի դատական քննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցների հետ, գնահատելով դրանք վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրենց համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթեր 121-172:

ներքին համոզմամբ՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հրայր Բվանի Թովչյանի դատաքննական ցուցմունքը՝ Ժիրայր Սեֆիլյանի կողմից սրեղծված, զինված կազմակերպված խմբի կազմում ընդգրկված չլինելու, հրազենը և ռազմամթերքն իրեն պատկանելու, դրանք ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանին ի պահ հանձնելու, իր նախաքննական ցուցմունքներն իրականությանը չհամապատասխանելու մասին, ամբաստանյալ Գալուստ Գրիգորյանի դատաքննական ցուցմունքը՝ Ժիրայր Սեֆիլյանի կողմից սրեղծված, զինված կազմակերպված խմբի կազմում ընդգրկված չլինելու, իր նախաքննական ցուցմունքներն առանց կարդալու ստորագրած լինելու և դրանք իրականությանը չհամապատասխանելու մասին, ամբաստանյալ Ներսես Միքայելի Պողոսյանի դատաքննական ցուցմունքը՝ Ժիրայր Սեֆիլյանի կողմից սրեղծված, զինված կազմակերպված խմբի կազմում ընդգրկված չլինելու, հրազեն և ռազմամթերք պահելու և փոխադրելու հետ առնչություն չունենալու մասին, ամբաստանյալ Սասունիկ Գավթի Կիրակոսյանի նախաքննական ցուցմունքը՝ 2015թ. նոյեմբեր ամսին Հովհաննես Պետրոսյանին հրազեն և ռազմամթերք փոխանցելը չհիշելու մասին, ամբաստանյալ Գևորգ Վիրալիկի Սաֆարյանի դատաքննական ցուցմունքը՝ զանգվածային անկարգությունների կազմակերպմանն ուղղված նախապարտադրական գործողություններ կատարած չլինելու մասին, իրականությանը չեն համապատասխանում, արժանահավասար չեն, քրեական պարտասխանավորությունից և սպասվող պարտից խուսափելու, այդ հարցում միմյանց օգնելու, քրեական գործով պարզված փաստական հանգամանքները խեղաթյուրելու նպատակ են հետապնդում և հերքվում են վերոհիշյալ ապացույցներով, այդ թվում՝ ամբաստանյալներ Հրայր Թովչյանի, Գալուստ Գրիգորյանի նախաքննական ցուցմունքներով, որոնք համադրվում և փոխկապակցվում են ոչ միայն միմյանց, այլ նաև քրեական գործով ձեռք բերված մյուս ապացույցների, այդ թվում՝ ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի, սույն գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով մեղադրյալ Սմբար Գալոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ ներքին և արտաքին դիտման արդյունքում սրացված փաստական փյույթների և ամբաստանյալների հետախուսահամարների վերծանումների հետ:

(...)

Պաշտպանության կողմը միջնորդություն է ներկայացրել՝ սրվարաթոթե արկղը զննելու մասին 2016թ. մայիսի 20-ի արձանագրության, իրեղեն ապացույց ճանաչված սրվարաթոթե արկղի, դրա մեջ հայտնաբերված ինքնաձիգերի և փամփուշտների, դատաձգաբանական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացության՝ որպես ապացույց

օգրագործման անթույլատրելիությունը հաստատելու մասին (...):

(...) [Հ]երաքննության մարմնի աշխատակցի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ և 180-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, կատարվել են նրա լիազորությունների մեջ մերևող գործողություններ, մասնավորապես՝ Հ.Թոփչյանին զենք և զինամթերք սպորինի պահելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին բերման ենթարկելուց հետո վերջինս գննվել և ենթարկվել է անձնական խուզարկության, որպիսի գործողությունը ներառել է նաև նրա մոտ գրնվող իրերի, այդ թվում՝ սրվարաթղթե արկղի և դրա պարունակության ամրագրումը: Այլ կերպ ասած՝ հերաքննության մարմնի աշխատակցի կողմից կազմված փաստաթղթերում ամրագրվել են Հ.Թոփչյանին անձնական խուզարկության ենթարկելիս նրա մոտ գրնվող բոլոր իրերը, այդ թվում՝ սրվարաթղթե արկղը և դրա պարունակությունը:

(...)

Հերևարար, սրվարաթղթե արկղը գննելու մասին 2016թ. մայիսի 20-ի արձանագրությունը, իրեղեն ապացույց ճանաչված սրվարաթղթե արկղը, դրա մեջ հայրնաբերված ինքնաձիգերը և փամփուշերը, դատաձգաբանական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացությունը դատարանը գնահատում է որպես թույլատրելի և արժանահավասար ապացույցներ և գրնում է, որ պաշտպանության կողմի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման:

(...) Անդրադառնալով պաշտպանության կողմի պարճառաբանություններին, որոնք վերաբերում են ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված ապացույցների, այդ թվում՝ մյուս քննչական և դատավարական գործողությունների՝ որպես ապացույց օգրագործման անթույլատրելիությունը, դատարանն այդ պարճառաբանությունները նույնպես հիմնավոր չի համարում և գրնում է, որ այդ գործողությունների ընթացքի և արդյունքների մասին օրենքով սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ, նշված գործողություններին մասնակցած անձանց, այդ թվում՝ ընթերակների կողմից էական խախտումների վերաբերյալ դիրողություններ չեն ներկայացվել:

(...)

Ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանի նկատմամբ նրա կատարած յուրաքանչյուր հանցագործության համար պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այն, որ նա դատվածություն չունի, ակտիվորեն մասնակցել է Արցախի սահմանների պաշտպանությանը:

Յուրաքանչյուր հանցագործության համար պատիժ նշանակելիս

դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք՝ հաշվի է առնում հանցավորի ինստիտուցիոնալ միջև փաստացի փոփոխության մեկ երեխայի առկայությունը (Վահագն ժիրայրի Սեֆիլյանը՝ ծնված 2006թ. հունիսի 27-ին):

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության համար պարիժ նշանակելիս դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, որպես ամբաստանյալ ժիրայր Սեֆիլյանի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք՝ հաշվի է առնում հիշյալ հանցանքը մեկ այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված առանձնապես ծանր հանցագործության կատարումը հեշտացնելու նպատակով կատարելը:

(...)»¹:

5. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը քրեական գործի ուսումնասիրությամբ գալիս է այն եզրահանգման, որ ամբաստանյալներ ժիրայր Սեֆիլյանը և Գևորգ Սաֆարյանն իրենք են իրենց զրկել Առաջին աստիճանի դատարանի դատական քննությանը մասնակցելու իրենց իրավունքի իրացումից, քանի որ Առաջին աստիճանի դատարանի կողմից դատական սանկցիաներն ամբաստանյալների նկատմամբ կիրառվել են որպես դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված նրանց գործողությունների հակազդման միջոց: (...) Բացի այդ՝ հարկ է նկատել, որ Առաջին աստիճանի դատարանը, դատական նիստերի դահլիճից հեռացնելով ամբաստանյալներ ժիրայր Սեֆիլյանին և Գևորգ Սաֆարյանին, ապահովել է վերջինների պաշտպանության իրավունքը, այն է՝ Առաջին աստիճանի դատարանն ամբաստանյալներ ժիրայր Սեֆիլյանին և Գևորգ Սաֆարյանին իրենց կողմից ընտրված պաշտպանների միջոցով պաշտպանվելու իրավունքից երբևէ չի զրկել և մշտապես թույլատրվել է նրանց կողմից ընտրված պաշտպանների մասնակցությունը դատական նիստերին:

(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ հեղափոխության մարմնի աշխատակցի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ և 180-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, կատարվել են նրա լիազորությունների մեջ մտնող գործողություններ, (...) հերևաբար, սրվարաթղթե արկղը զննելու մասին 2016 թվականի մայիսի 20-ի արձանագրությունը, իրեղեն ապացույց ճանաչված սրվարաթղթե արկղը, դրա մեջ հայտնաբերված ինքնաձիգերը և փամփուշտները, դատաձգարա-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 45-րդ, թերթեր 121-172:

նական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացությունը հանդիսանում են թույլատրելի և արժանահավասար ապացույցներ:

(...)

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ [Սասունիկ Կիրակոսյանին ճանաչման ներկայացնելու] մասին քննչական գործողությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու հիմք [առկա չէ]:

(...) [Ա]նհիմն է նաև պաշտպանական կողմի այն պնդումը, որ հեռախոսահամարների զննության արձանագրությունը նույնպես անթույլատրելի ապացույց է, քանի որ զննության արձանագրության համաձայն՝ քննիչն ընթերականերին հայտնել է, որ զննության առարկա են հանդիսանում 13 հեռախոսահամարներ, սակայն զննվել են 16-ը:

(...) Վերաքննիչ դատարանը ողջամիտ և հիմնավոր է համարում Առաջին արյանի դատարանի այն պատճառաբանությունը, որ գործի փաստական փվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր բավարար հիմք հանդիսանալ ամբաստանյալներ Հրայր Թոփչյանի, Գալուստ Գրիգորյանի նախաքննական, ինչպես նաև ամբաստանյալ Հովհաննես Պետրոսյանի և սույն գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով մեղադրյալ Սմբատ Գալոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներն անարժանահավասար համարելու համար: (...)

Ինչ վերաբերում է դատական քննության ընթացքում Հրայր Թոփչյանի հայտնած հետևյալ հանգամանքին. «(...) Իրեն ՀՀ քննչական կոմիտե են փարել 2016 թվականի հունիսի 1-ին և սաել, որ պերք է փա որոշակի բովանդակությամբ ցուցմունք: Ինքն էլ, երկու օրերի ընթացքում քննարկելով իրավիճակը, հաշվի առնելով, որ իր փղան ծառայության մեջ է եղել, իսկ եղբայրը ՀՀ ՊՆ գնդապետ է, որոշել է նրանց պահանջը կարարել (...):», ապա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Հրայր Թոփչյանը, վերը նշված հանգամանքն օգրագործելով, փորձում է խուսափել քրեական պատասխանատվությունից և պարժից ու օգնել մյուս ամբաստանյալներին:

Սույն կարգով վերլուծելով Պավել Մանուկյանի, Աշոտ Պետրոսյանի և Հովհաննես Մինասյանի դատաքննական ցուցմունքները՝ Վերաքննիչ դատարանը գրնում է, որ նրանց դատաքննական ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում և արժանահավասար չեն, դրանք ամբաստանյալների օգրին փեղեկություններ հայտնելու, քրեական գործով պարզված փաստական հանգամանքները խեղաթյուրելու նպատակ են հետապնդում և հերքվում են վերոհիշյալ ապացույցներով, այդ թվում՝ հենց Աշոտ Պետրոսյանի և Հովհաննես Մինասյանի նախաքննական ցուցմունքներով, որոնց ճշմարտացիությունը կասկած չի հարուցում:

(...) [Գ]ործում առկա ապացույցները բավարար չեն ապացուցված

համարելու, որ տվյալ անձանց միավորումը սրեղծման պահից մինչև հայրնաբերումը հանդիսացել է կազմակերպված խումբ, այլ հարց է, որ հանցագործությունների չբացահայտման դեպքում հնարավոր է, որ խումբը վերածվեր ավելի կայուն և կազմակերպված միավորման, սակայն այդ մասին պնդումները ենթադրություններ են և չեն բխում գործում առկա ապացույցներից:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալների արարքները պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, այլ ոչ թե կազմակերպված խմբի կողմից կատարված հանցագործություն:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Ժիրայր Սեֆիլյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղաազրվող արարքից կամույին հրաժարվելու հարցին, արձանագրում է հետևյալը.

(...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ քրեական գործում առկա չէ ապացույցների բավարար համակցություն՝ հաստատված համարելու, որ Ժիրայր Սեֆիլյանը նշված օբյեկտների վրա ծրագրվող հարձակումներից կամույին չի հրաժարվել:

(...)

Այսպիսով Վերաքննիչ դատարանը, քրեական գործի ուսումնասիրությանը, պարզաձև հրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, եզրահանգում է, որ Հրայր Թովիչյանի, Գալուստ Գրիգորյանի, Ներսես Պողոսյանի, Սասունիկ Կիրակոսյանի արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Գևորգ Սաֆարյանի արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Ժիրայր Սեֆիլյանի արարքները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 35-225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հարկանիշներին և ապացուցված է Հրայր Թովիչյանի, Գալուստ Գրիգորյանի, Ներսես Պողոսյանի, Սասունիկ Կիրակոսյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Գևորգ Սաֆարյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, Ժիրայր Սեֆիլյանի մեղավորությունը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով և 35-225-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարելու մեջ:

Ինչ վերաբերում է ամբաստանյալների անմեղության վերաբերյալ պաշտպանների փաստարկներին, ապա, հաշվի առնելով սույն դատական ակտում արձանագրված վերոգրյալ եզրահանգումները, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դրանք հերքվում են քրեական գործով ձեռք բերված և պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում Առաջին արյանի դատարանում հեղափոխված վերը նշված փոխկապակցված, վերաբերելի և թույլատրելի ապացույցների բավարար ամբողջությամբ:

(...)

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Ժիրայր Սեֆիլյանի պայրասխանաարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք է խնամքին մինչև րասնչորս րարեկան մեկ երեխայի առկայությունը (Վահագն Ժիրայրի Սեֆիլյանը՝ ծնված 2006 թվականի հունիսի 27-ին):

Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Ժիրայր Սեֆիլյանի պայրասխանաարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանք է հանցագործության կատարման մեջ առանձնապես ակտիվ դերը, որն արտահայտվել է նրանում, որ հիշյալ հանցանքի կատարման մեջ նա դրսևորել է առանձնակի ակտիվություն և ունեցել ավելի մեծ դերակատարություն:

Կատարած արարքի համար ամբաստանյալ Ժիրայր Սեֆիլյանը ենթակա է քրեական պայրասխանաարվության և պարժի:

Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով Ժիրայր Սեֆիլյանի կատարած արարքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանը և բնույթը, այդ թվում՝ նրա գործողությունների վրանգավորության աստիճանը, նրա անձը, պայրասխանաարվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված է պարիժ միայն ազատազրկման ձևով, գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին հասնելու համար նրա նկատմամբ պարիժ պերք է նշանակել ազատազրկում 3 (երեք) րարի ժամկետով:

(...)»¹:

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

6. Հ.Թովսյանի պաշտպան Գ.Մելիքյանն իր բողոքում նշել է, որ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի

¹ Տե՛ս նաև քրեական գործ, հատոր 48-րդ, թերթեր 1-157:

հավասարակշռությունը: Նման պայմաններում, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր բեկանել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ինչը չի արել՝ կայացնելով չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտ: Ըստ բողոք բերած անձի՝ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի, քրեադատավարական օրենքի մի շարք պահանջների խախտումներ:

Բողոքաբերը նշել է նաև, որ ստորադաս դատարանների դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև արձանագրել, որ հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապացույցների բավարարության մասով դատական ակտի պատճառաբանվածության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Մասնավորապես, բողոքաբերը գտել է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է դատաքննության ընթացքում հաստատված փաստական տվյալները, ապացույցների միակողմանի հետազոտման արդյունքում Հ.Թոփչյանին արդարացնող ապացույցները չի ենթարկել օբյեկտիվ համադրության, իսկ մեղադրական դատավճիռի հիմքում դրվել են անթույլատրելի ապացույցներ: Բողոքի հեղինակի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը հիմնվել է բացառապես ենթադրությունների վրա, և դրանով խախտվել է անմեղության կանխավարկածի դատավարական սկզբունքը:

6.1. Ըստ պաշտպան Գ.Մելիքյանի՝ իրեղեն ապացույց ճանաչված սովարաթղթե արկղը, դրա մեջ հայտնաբերված ինքնաձիգերը և փամփուշտները, սովարաթղթե արկղը գննելու մասին 2016 թվականի մայիսի 20-ի արձանագրությունն ու դատաձգաբանական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացությունը պետք է ճանաչվեին անթույլատրելի ապացույցներ, ինչը չի արվել: Բացի այդ, բողոքաբերի համոզմամբ, պետք է ոչ արժանահավատ ճանաչվեին Հ.Թոփչյանի՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները և հիմք ընդունվեին բացառապես դատաքննական ցուցմունքները:

6.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և կայացնել նոր դատական ակտ, Հ.Թոփչյանի և մյուսների նկատմամբ կայացնել արդարացման դատավճիռ՝ ճանաչելով և հոչակելով նրանց անմեղությունը, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ այլ կազմով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

7. Ս.Կիրակոսյանի պաշտպան Կ.Հակոբյանն իր բողոքում փաստել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 6-րդ, 61-րդ, 63-րդ, 67-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 2-րդ, 7-րդ, 11-րդ, 17-19-րդ, 23-րդ, 105-րդ, 358-րդ, 360-րդ, 365-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ, 9-րդ և 235-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ստորադաս դատարանների դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

7.1. Բողոքաբերի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ: Մասնավորապես, բողոքի հեղինակը փաստել է, որ Ս.Կիրակոսյանին և մյուսներին առաջադրված մեղադրանքները հիմնվել են բացառապես անթույլատրելի, միևնույն աղբյուրից բխող իրարամերժ ապացույցների ոչ բավարար համակցության վրա, իսկ դատաքննությունն ընթացել է ամբաստանյալների պաշտպանության իրավունքի և մրցակցության պահանջների խախտմամբ, ինչն անտեսվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից:

7.2. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է Ս.Կիրակոսյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը և հռչակել վերջինիս անմեղությունը:

8. Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի պաշտպան Տ.Եգորյանը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-29-րդ, 61-րդ, 63-64-րդ, 66-67-րդ, 71-72-րդ, 75-րդ, 78-81-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ, 18-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ, 225-րդ հոդվածների պահանջները՝ կայացնելով անօրինական, անհիմն և չպատճառաբանված դատական ակտ:

Բողոքի հեղինակի կարծիքով՝ Առաջին ատյանի դատարանի հետևությունները չեն համապատասխանում գործի փաստական հանգամանքներին, չեն բխում քննության ընթացքում ձեռք բերված, դատարանում հետազոտված ապացույցների բավարար համակցությունից, Առաջին ատյանի դատարանը ոչ ճիշտ է գնահատել ապացույցները, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածները:

8.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանն անհիմն մերժել է պաշտպանական կողմի բազմաթիվ միջնորդությունները, իսկ Վերաքննիչ դատարանը դրան որևէ անդրադարձ չի կատարել և որևէ կերպ չի գնահատել ստորադաս դատարանի այն որոշումները, որոնք վերաբերում էին դատական քննության մեծ մասից Ժ.Սեֆիլյանի և Գ.Սաֆարյանի՝ կամայականորեն հեռացված լինելուն, ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցին, պաշտպանության կողմի վկաների հարցաքննությանը:

8.2. Բողոքաբերը գտել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը հաշվի

չի առել Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի անձը բնութագրող ու պատիժը մեղմացնող բոլոր հանգամանքները՝ նշանակելով անհամաչափ խիստ պատիժներ, իսկ Վերաքննիչ դատարանը թեև նվազեցրել է նշված անձանց պատիժները, սակայն ո՛չ Գ.Սաֆարյանի, և ո՛չ էլ Ժ.Սեֆիլյանի մասով չի ներկայացրել պատճառաբանված ու հիմնավորված վերլուծություն առ այն, թե ինչու նրանց նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելով հնարավոր չէ հասնել պատժի նպատակներին:

8.3. Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից իբրև ծանրացնող հանգամանք դիտարկված՝ Ժ.Սեֆիլյանի՝ հանցանքի կատարման մեջ առանձնահատուկ ակտիվ դերին՝ բողոքաբերը փաստել է, որ այն հիմնված չէ քրեական գործում առկա նյութերի և դատարանում հետազոտված ապացույցների վրա, քանի որ քրեական գործում առկա չէ որևէ ապացույց, որ Ժ.Սեֆիլյանն ավելի մեծ եռանդով կամ առանձնահատուկ եղանակով է մասնակցել «Հիմնադիր Խորհրդարանի» կողմից կազմակերպվող գործողություններին կամ որ հանցավոր նպատակների իրականացման հարցում դրսևորել է վճռականություն, ունեցել է նախաձեռնող դերակատարում:

8.4. Վերոգրյալի հիման վրա, Ժ.Սեֆիլյանի ու Գ.Սաֆարյանի պաշտպան Տ.Եգորյանը խնդրել է վերջիններիս մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը և հռչակել Ժ.Սեֆիլյանի ու Գ.Սաֆարյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում կամ նրանց նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառել: Մինևույն ժամանակ, պաշտպան Տ.Եգորյանը միջնորդել է կասեցնել գործի քննությունը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար:

9. Ժ.Սեֆիլյանի պաշտպան Ա.Պապիկյանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է չպատճառաբանված որոշում՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ, 104-107-րդ և 127-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, բողոքաբերի համոզմամբ, Վերաքննիչ դատարանի հետևությունները հակասում են Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկների՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված կարգով չի հետազոտել քրեական գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ պատշաճ իրավական վերլուծության ու գնահատման չեն ենթարկվել դատավարության մասնակիցների նախաքննական ու դատաքննական ցուցմունքները: Ավելին, Վերաքննիչ դատարանը, ըստ

բողոք բերած անձի, թույլատրելի է ճանաչել մի շարք վկաների՝ հակասական և իրարամերձ նախաքննական ցուցմունքները՝ ընդհանրական ձևով փաստելով, որ Առաջին ատյանի դատարանի հետազոտած և մեղադրանքի հիմքում դրված ապացույցները թույլատրելի են:

9.1. Բացի այդ՝ բողոքաբերն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը սխալ քրեաիրավական որակում է տվել Ժ.Սեֆիլյանին մեղսագրվող արարքներին՝ հիմնվելով գործի տվյալներից չբխող ենթադրությունների վրա: Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչ չափորոշիչներով է առաջնորդվել այս կամ այն ապացույցներին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տալիս, կամ դրանց մի մասն արժանահավատ, իսկ մյուսներն անարժանահավատ համարելիս: Բողոքաբերը նաև փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքն անհիմն լինելու հիմքով Ժ.Սեֆիլյանին անմեղ ճանաչելու փոխարեն, Վերաքննիչ դատարանը կայացրել է այլ՝ գործի նյութերից չբխող որոշում:

Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունք չէ, քանի որ գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ ոչ միայն չեն հիմնավորում Ժ.Սեֆիլյանի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ, այլև հաստատապես վկայում են նրա անմեղության մասին:

9.2. Վերոգրյալի հիման վրա, պաշտպան Ա.Պապիկյանը խնդրել է մասնակիորեն՝ Ժ.Սեֆիլյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը, և ճանաչել ու հռչակել վերջինիս անմեղությունն առաջադրված մեղադրանքներում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Հ.Թովչյանի և Ս.Կիրակոսյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Գ.Սաֆարյանի արարքում 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, Ժ.Սեֆիլյանի արարքում 35-225-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմերի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահատման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության և գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ

դատարանը հանգում է այն հետևության, որ Վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրականացնելով գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, Հ.Թոփչյանի, Ս.Կիրակոսյանի, Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի մեղավորության մասին հանգել է ճիշտ հետևության:

11.1. Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Թոփչյանի և Ս.Կիրակոսյանի մեղքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Գ.Սաֆարյանի մեղքը՝ 35-225-րդ հոդվածի 1-ին մասով և Ժ.Սեֆիլյանի մեղքը՝ 35-225-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներում հաստատվում, իսկ բողոքաբերների պատճառաբանությունները հերքվում են ամբաստանյալներ Հ.Թոփչյանի, Գ.Գրիգորյանի նախաքննական ցուցմունքներով, որոնք ոչ միայն համապատասխանում են միմյանց, այլև հաստատվում են քրեական գործով ձեռք բերված մյուս ապացույցներով, այդ թվում՝ Հ.Պետրոսյանի, սույն գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով մեղադրյալ Ս.Գալոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներով, օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ ներքին և արտաքին դիտման արդյունքում ստացված փաստական տվյալներով և ամբաստանյալների հետախուսահամարների վերծանումներով, իրեղեն ապացույց ճանաչված սովարաթղթե արկղի առկայության փաստով, նշված իրեղեն ապացույցը գնելու մասին 2016 թվականի մայիսի 20-ի արձանագրությամբ, սովարաթղթե արկղում հայտնաբերված ինքնաձիգերով ու փամփուշտներով, դատաձգաբանական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացությամբ¹:

Ինչ վերաբերում է պաշտպան Գ.Մելիքյանի այն փաստարկին, որ իրեղեն ապացույց ճանաչված սովարաթղթե արկղը, դրա մեջ հայտնաբերված ինքնաձիգերը և փամփուշտները, սովարաթղթե արկղը գնելու մասին 2016 թվականի մայիսի 20-ի արձանագրությունն ու դատաձգաբանական փորձաքննության թիվ 1390-16 եզրակացությունը պետք է ճանաչվեին անթույլատրելի ապացույցներ², ապա Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում ստորադաս դատարանների այն եզրահանգումը, որ Հ.Թոփչյանը գենք և զինամթերք ապօրինի պահելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել, և վերջինիս անձնական խուզարկությունը (որպիսի գործողությունը ներառել է նաև նրա մոտ գտնվող իրերի, այդ թվում՝ սովարաթղթե արկղի և դրա պարունակության ամրագրումը) կատարվել է քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ, իսկ պաշտպա-

¹ Տե՛ս սույն որոշման 4.1-րդ և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 6.1-րդ կետը:

նության կողմը որևէ հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացրել, որը կվկայեր այն մասին, որ հիշյալ ապացույցների ձեռքբերման ընթացքում թույլ է տրվել դատավարության մասնակիցների իրավունքների կամ արդար դատաքննության իրավունքի խախտում, որն ազդել է կամ կարող էր ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա¹:

11.2. Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի այն փաստարկին, որ սույն գործով դատական քննությունն ընթացել է պաշտպանության և մրցակցության պահանջների խախտմամբ², ապա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այդ առումով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն առ այն, որ Ժ.Սեֆիլյանը և Գ.Սաֆարյանն իրենք են իրենց զրկել Առաջին ատյանի դատարանի դատական քննությանը մասնակցելու իրավունքի իրացումից, քանի որ Առաջին ատյանի դատարանի կողմից դատական սանկցիաներն ամբաստանյալների նկատմամբ կիրառվել են որպես դատական քննության բնականոն ընթացքը խոչընդոտելուն ուղղված նրանց գործողությունների հակազդման միջոց, և որ Առաջին ատյանի դատարանի կողմից, այնուամենայնիվ, ապահովվել է վերջիններիս պաշտպանության իրավունքը, ևս հիմնավոր ու իրավաչափ են³:

11.3 Անդրադառնալով գործով վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու մասին պաշտպան Տ.Եգորյանի միջնորդությանը⁴, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վարույթը կասեցնելու և ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու հիմքերը բացակայում են:

12. Վերոգրյալից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Թովյանի և Ս.Կիրակոսյանի արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, Գ.Սաֆարյանի՝ 35-225-րդ հոդվածի 1-ին մասով, Ժ.Սեֆիլյանի՝ 35-225-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված են:

13. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի պաշտպան՝ Ա.Պապիկյանի կողմից վճռաբեկ բողոքում բարձրացված այն փաստարկին, որ իր պաշտպանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետով քրեական հետապնդումը՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված հիմքով դադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործի փաստական հանգամանքներից չբխող որոշում⁵,

¹ Տե՛ս սույն որոշման 4.1-րդ և 5-րդ կետերը:

² Տե՛ս սույն որոշման 7.1-րդ և 8.1-րդ կետերը:

³ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁴ Տե՛ս սույն որոշման 8.4-րդ կետը:

⁵ Տե՛ս սույն որոշման 9.1-րդ կետը:

գտնում է, որ Վերաքննիչ դատարանն ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-219-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ հանգել է իրավաչափ հետևություն, և այդ առումով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները ևս օրինական են ու հիմնավոր¹:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ամբաստանյալներ Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ համաներման մասին օրենք ընդունված լինելու հիմքով:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «1. *Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

13) *ընդունվել է համաներման մասին օրենք:*

(...)

5. *Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:*

6. *Սույն հոդվածի առաջին մասի (...) 13-րդ [կետում նշված հիմքով] գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:*

15.1. Վերոգրյալ հոդվածի վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

15.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված հիմքերի կիրառմանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Արամ Սարգսյանի* գործով որոշման մեջ և արձանագրել, որ «(...) [Թ]եև [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված] հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով փարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ և դրանցից գեթ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում: Այլ կերպ, եթե վարույթ իրականացնող մարմինը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ

¹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հողվածի 1-ին մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա գործի վարույթը ենթակա է կարճման»¹:

15.3 Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կրկնում է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ վճռաբեկ վերանայման սահմանափակումները չունեն բացարձակ բնույթ, և դրանք պետք է դիտարկվեն, ի թիվս այլոց, քրեական գործով վարույթի կարճման հիմքերը սահմանող հողվածի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հողվածի 1-ին մաս) համատեքստում²:

16. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Համաներման մասին օրենք) 2-րդ հողվածի 11-րդ մասի համաձայն՝ «Համաներում հայտարարելով՝

1) 2016 թվականի հուլիսի 17-31-ը Հայաստանի Հանրապետության ռարիկանության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքում հանցագործություն կատարած, վերջիններիս հետ հանցակցած, այդ նպատակով հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն, հարակից տարածքներում դրանց հետ առնչություն ունեցող հանցագործություն կատարած, ինչպես նաև 2015 թվականի ապրիլի 24-ին զանգվածային անկարգությունների նախապատրաստության համար մեղադրվող կամ դատապարտված անձանց նկատմամբ հարուցված քրեական գործը կարճել, քրեական հետապնդում չիրականացնել կամ քրեական հետապնդումը դադարեցնել կամ նրանց պարժից ազատել, եթե դրա դեմ չեն առարկում պատրանդատված և (կամ) ֆիզիկական վնաս կրած տուժողները.

2) սույն մասի 1-ին կետը չի տարածվում նույն կետում նկարագրված իրադարձությունների ընթացքում կատարված այն արարքների նկատմամբ, որոնք անմիջականորեն հանգեցրել են մարդու մահվան.

(...):

Համաներման մասին օրենքի 4-րդ հողվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենքի կատարումը վերապահել՝

(...)

3) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերով վճռաբեկ բողոքներն ընդունվել են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարույթ (...)»:

¹ Տե՛ս Արամ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 20-րդ կետը:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մխիթար Էլոյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ որոշման 14-րդ կետը:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից ամբաստանյալներ Գ.Սաֆարյանը և Ժ.Սեֆիլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր են ճանաչվել այն բանի համար, որ նրանք մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, 2015 թվականի ապրիլի 24-ին, Երևան քաղաքում բռնություն գործադրելով, գույք ոչնչացնելով և վնասելով, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված՝ հասարակական անվտանգությունը վտանգող զանգվածային անկարգություններ հրահրելու ուղղակի դիտավորությամբ, սկսած 2014 թվականի մայիսից, կատարել են դրա կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ¹:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամբաստանյալներ Գ.Սաֆարյանը և Ժ.Սեֆիլյանը մեղավոր են ճանաչվել 2015 թվականի ապրիլի 24-ին զանգվածային անկարգությունների նախապատրաստության համար, որը տեղի է ունեցել մինչև 2018 թվականի հոկտեմբերի 21-ը: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ տուժողի (տուժողի իրավահաջորդի) դատավարական կարգավիճակ ունեցող անձինք գործով առկա չեն:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 16-րդ կետում վկայակոչված իրավադրույթների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա են Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ Համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ մասի կիրառման անհրաժեշտ վավերապայմանները: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման մասին օրենքը Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք:

18.1 Հետևաբար, հիմք ընդունելով սույն որոշման 15-15.3-րդ կետերում ներկայացված իրավանորմերն ու իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ համաներման մասին օրենք ընդունված լինելու հիմքով:

18.2. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Սաֆարյանը և Ժ.Սեֆիլյանը հնարավորություն են ունեցել Առաջին ատյանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկելու իրենց առաջադրված մեղադրանքը, հետևաբար, համաներման մասին օրենք ընդունված լինելու

¹ Տե՛ս սույն որոշման 4-րդ և 5-րդ կետերը:

հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելիս նրանց դիրքորոշումը լրացուցիչ ճշտելու անհրաժեշտությունը բացակայում է¹:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով Ժ.Սեֆիլյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեա-իրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգա-մանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործություն-ները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագոր-ծության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրու-թյան համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...):»:

20.1. Մեջբերված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Հետևաբար, կոնկրետ գործով պատժի նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստի-ճանի, հանցավորի անձի, պատժը մեղմացնող և ծանրացնող հանգա-մանքների վերլուծության հիման վրա՝ ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից²:

¹ Տե՛ս՝ *«Սիրած Ղամբարյանի և այլոց* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը:

² Տե՛ս՝ *u, mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Գառնիկ Գալստյանի* գործով 2014 թվակա-նի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, *Էդվարդ Ադամյանի* գործով 2014 թվականի

20.2. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր գործով նշանակված պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների (կատարված հանցագործությանը պատճառված վնասի չափ, հանցավոր մտադրության իրականացման աստիճան, հանցագործության կատարման եղանակ և այլն), պետք է բազմակողմանի վերլուծության ու գնահատման ենթարկի հանցավորի անձը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման և հետևաբար նաև նշանակված պատժի կրման հարցի լուծման համար էական նշանակություն ունեն հանցավորի անձի ոչ միայն ֆիզիկական ու հոգեկան, այլև սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ փաստական տվյալները: Հետևաբար, հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս և նշանակված պատիժը փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները²:

20.3. Պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներից՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը կրկնում է իր՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ հանցակիցների նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանի կողմից հաշվի են առնվում հանցագործության կատարման անձի փաստացի մասնակցության բնույթն ու աստիճանը, այդ մասնակցության նշանակությունը հանցագործության նպատակներին հասնելու համար, նրա ազդեցությունը պատճառված կամ հնարավոր վնասի բնույթի և չափի վրա: Հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը բնութագրում է անձի մասնակցության աստիճանը. նրան է պատկանում նախաձեռնությունը, նա հանդես է գալիս որպես հանցագործության ոգեշնչող և առավել հաստատակամորեն է ձգտում հասնել հանցավոր արդյունքի: Ընդ որում, օրենքը ոչ թե խոսում է հանցագործության մեջ անձի պարզապես ակտիվ դերի մասին, այլ

դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14, Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, Նարեկ Սարգսյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, Գարուշ Մաղաթյանի գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշումները:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սեյրան Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 19-րդ կետը, *mutatis mutandis*, Սերոբ Սարգսյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12, Նարեկ Սարգսյանի գործով վերը հիշատակված, Հազարապետ Հարությունյանի գործով 2007 թվականի մարտի 30-ի թիվ ՎԲ-50/07 որոշումները:

մատնանշում է նրա առանձնապես ակտիվ դերը: Այստեղից հետևում է, որ հանցագործության մեջ հանցավորի վարքագիծը պետք է արտահայտվի ոչ թե պարզապես ինչ-որ առաջարկությունների, նախաձեռնությունների ձևով, այլ առանձնապես, աչքի ընկնելու, օրինակ՝ կազմակերպչականության, մյուս մասնակիցների համախմբման, կարգապահության պահպանման, առաջնորդելու բոլոր դրսևորումներով և այլն: Այդպիսի անձը հանցագործության մյուս մասնակիցների մեջ առավել մեծ վտանգ է ներկայացնում¹:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է 3 (երեք) տարի ժամկետով ազատազրկման այն բանի համար, որ նա, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, 2015 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել և փոխադրել հրազեն հանդիսացող՝ «AK-74» տեսակի մարտական ակոսափող «971737» և «304598» գործարանային համարների երկու ինքնաձիգ ու չորս ինքնաձիգի պահունակ՝ լիցքավորված ռազմամթերք հանդիսացող 5.45 մմ տրամաչափի 120 մարտական փամփուշտներով: Վերաքննիչ դատարանը Ժ.Սեֆիլյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտարկել խնամքին մինչև տասնչորս տարեկան մեկ երեխայի առկայությունը (Վահագն Ժիրայրի Սեֆիլյան՝ ծնված 2006 թվականի հունիսի 27-ին): Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ Ժ.Սեֆիլյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է հանցագործության կատարման մեջ առանձնապես ակտիվ դերը, որն արտահայտվել է նրանում, որ հիշյալ հանցանքի կատարման մեջ նա դրսևորել է առանձնակի ակտիվություն և ունեցել ավելի մեծ դերակատարություն²:

22. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները վերլուծելով սույն որոշման 20-20.3-րդ կետերում շարադրված իրավա-նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակելիս պատշաճ վերլուծության ու գնահատման չի ենթարկել վեջինիս անձը բնութագրող, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

22.1. Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը որևէ գնահատականի չի արժանացրել անձը բնութագրող դրական այն հանգամանքը, որ Ժ.Սեֆիլյանն ակտիվ դերակատարություն է ունեցել Արցախի

¹ Տե՛ս *Վաչիկ Մասցակյանյանի* գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-25/08 որոշման 22-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Հանրապետության սահմանների պաշտպանությանը¹:

22.2. Ինչ վերաբերում է որպես ամբաստանյալ ժ.Սեֆիլյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը դիտարկելուն, ապա Վճռաբեկ դատարանը, սույն որոշման 20.3-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, արձանագրում է, որ գործի նյութերում առկա փաստական տվյալներն այն մասին, որ ժ.Սեֆիլյանի հանձնարարությամբ համապատասխան հրազենն ու ռազմամթերքը Հ.Թոփչյանը հանձնել է Հ.Պետրոսյանին, ապա հետ վերցրել², սույն գործով չեն կարող ինքնին բավարար համարվել քննարկվող ծանրացնող հանգամանքի առկայությունը փաստելու համար, քանի որ այդպիսիք չեն վկայում կոնկրետ հանցանքի կատարման մեջ ժ.Սեֆիլյանի առանձնահատուկ ակտիվ դերակատարության մասին:

22.3. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով ժ.Սեֆիլյանի նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակվել է ոչ համաչափ՝ ակնհայտ խիստ պատիժ, ինչը չի բխում հանցագործության բնույթի ու հանրային վտանգավորության աստիճանի, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության և ծանրացնող հանգամանքների բացակայության մասին փաստերի ամբողջական վերլուծությունից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժ.Սեֆիլյանի անձը բնութագրող հանգամանքները, սույն գործում առկա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների համակցությունն ու ծանրացնող հանգամանքների բացակայությունը էականորեն նվազեցնում են հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը ու հիմք են ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է:

¹ Տե՛ս սույն որոշման 4.1-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Նշված հանգամանքը ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է: Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով արդարադատության արդյունավետության շահով, արձանագրում է, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքներն հնարավորություն են տալիս բեկանելու և փոփոխելու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը:

23. Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն որոշման 18.1-րդ և 22.3-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Սաֆարյանի և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը, «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ, պետք է դադարեցնել:

Ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ՝ նշանակված պատժին հաշվակցել Ժ.Սեֆիլյանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ից մինչև 2015 թվականի մայիսի 4-ը և 2016 թվականի հունիսի 20-ից մինչև 2018 թվականի հունիսի 13-ը կալանքի տակ գտնվելու ժամկետը՝ համապատասխանաբար 28 (քսանութ) օրը և 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 24 (քսանչորս) օրը, և նշանակված պատիժը համարել կրած:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ պետք է վերացնել ամբաստանյալ Գ.Սաֆարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը, ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված անձնական երաշխավորությունը և վճարած գումարը վերադարձնել երաշխավորողներ՝ Ալեն Միմոնյանին, Նաիրա Զոհրաբյանին, Միքայել Մելքունյանին, Վահե Էնֆիաջյանին, Վարդան Բոստանջյանին, Վարդևան Գրիգորյանին, Իվետա Տոնոյանին, Շաքե Իսայանին, Արթուր Մանուկյանին, Լուիզա Սարգսյանին, Նոռա Առուստամյանին, Սերգեյ Բագրատյանին ու Գևորգ Պետրոսյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալ Հրայր Իվանի Թովիչյանի պաշտպան Գ.Մելիքյանի, ամբաստանյալ Սասունիկ Դավթի Կիրակոսյանի պաշտպան Կ.Հակոբյանի վճռարեկ բողոքները մերժել: Ամբաստանյալ Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի պաշտպան Տ.Եգորյանի և ամբաստանյալ Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի պաշտպաններ Տ.Եգորյանի ու Ա.Պապիկյանի վճռարեկ բողոքները բավարարել մասնակիորեն: Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի և Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը բեկանել ու փոփոխել:

2. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ Գևորգ Վիտալիկի Սաֆարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել:

Գևորգ Սաֆարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը վերացնել:

3. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետի կիրառմամբ Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնել:

Ժիրայր Սեֆիլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժ նշանակել ազատագրելու՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կանոններով նշանակված պատժին հաշվակցել Ժ.Սեֆիլյանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ից մինչև 2015 թվականի մայիսի 4-ը և 2016 թվականի հունիսի 20-ից մինչև 2018 թվականի հունիսի 13-ը կալանքի տակ գտնվելու ժամկետները՝ համապատասխանաբար 28 (քսանութ) օրը և 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 24 (քսանչորս) օրը, և նշանակված պատիժը համարել կրած:

Ժ.Սեֆիլյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված անձնական երաշխավորությունը վերացնել և վճարած գումարը վերադարձնել երաշխավորողներ՝ Ալեն Սիմոնյանին, Նաիրա Զոհրաբյանին, Միքայել Մելքումյանին, Վահե Էնֆիաջյանին, Վարդան Բոստանջյանին, Վարդևան Գրիգորյանին, Իվետա Տոնյանին, Շաքե Իսայանին, Արթուր

Մանուկյանին, Լուիզա Սարգսյանին, Նոռա Առուստամյանին, Սերգեյ Բազրատյանին ու Գևորգ Պետրոսյանին:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 13-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

75. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԿԴ/0115/01/08

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝*

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ դատախազ՝*

Ն.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2019 թվականի դեկտեմբերի 20-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սմբատ Ժիրայրի Այվազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 27-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2008 թվականի փետրվարի 25-ին Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13106908 քրեական գործը՝ թմրամիջոց գործածելու և ապօրինի զենք պահելու կասկածանքով բերման ենթարկված Ս.Այվազյանի կողմից ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու, նրանց վիրավորելու, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու և բռունցքով ոստիկանին հարվածներ հասցնելու դեպքի առթիվ:

2008 թվականի փետրվարի 25-ին Սմբատ Ժիրայրի Այվազյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Սմբատ Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Ս.Այվազյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով, որը հետագայում երկարացվել է դատարանի՝ 2008 թվականի ապրիլի 21-ի և հունիսի 20-ի որոշումներով:

Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի հունիսի 26-ի որոշմամբ Ս.Այվազյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 4-րդ մասերով:

2008 թվականի հուլիսի 4-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի դատավճռով Ս.Այվազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ դատապարտվելով համապատասխանաբար՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով և տուգանքի՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոնների կիրառմամբ, նշանակված պատիժները լրիվ գումարելու միջոցով, Ս.Այվազյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով և տուգանք՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Ս.Այվազյանի պաշտպաններ Լ.Սահակյանի և Ե.Վարոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2009 թվականի հունվարի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Ս.Այվազյանի և նրա պաշտպանների վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի հունիսի 15-ի որոշմամբ վերադարձվել է:

5. 2019 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը հիմնարար խախտման հիմքով բողոք է քերել Վճռաբեկ դատարան, որը 2019 թվականի հոկտեմբերի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Առաջին ատյանի դատարանը, Ս.Այվազյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ և 316-րդ հոդվածի 1-ին մասերով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, հաստատված է համարել հետևյալ փաստերը. «(...) Ապօրինի զենք, զինամթերք պահելու կասկածանքով 2008 թվականի փետրվարի 24-ին ժամը 11:30-ին Երևան քաղաքի Տերյան-Կորյուն փողոցների խաչմերուկի հարվածում ամբաստանյալ Սմբատ Այվազյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն: Ամբաստանյալ Ս.Այվազյանը ապօրինի կերպով կրել է հարվածող-փշրող սառը զենք հանդիսացող զայանասկավոր մահակ (լախր), որը 2008 թվականի փետրվարի 24-ին անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է նրա մոտ՝ բաճկոնի ծոցագրպանից և առգրավվել:

Նշված փաստի կապակցությամբ նախապարտադրված նյութերը ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունից տարածքային կարգով ընթացք տալու համար ուղարկվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժին: Նշված բաժնի ավագ հետաքննիչի կողմից այդ նյութերով 2008 թվականի փետրվարի 24-ին որոշում է կայացվել Սմբատ Այվազյանին տոքսիկո-քիմիական փորձաքննության ենթարկելու մասին: Որոշման կարարումն ապահովելու՝ Ս.Այվազյանից փորձանմուշներ վերցնելու նպատակով Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազորներ տուժող Կարեն Հովսեփյանը, վկաներ Աշոտ Շամիրյանը և Էրիկ Պողոսյանը 2008 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 23-ի սահմաններում հանձնարարություն են սրացել, վերջինիս վարած «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայով, Սմբատ Այվազյանին ուղեկցել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ:

Հետաքննիչի որոշման հիման վրա Ս.Այվազյանից փորձանմուշներ վերցնելու նպատակով Կ.Հովսեփյանը, Ա.Շամիրյանը և Է.Պողոսյանը, սրացած հանձնարարության համաձայն՝ գործելով իրենց լիազորությունների շրջանակում, կատարելով իրենց ծառայողական պարտականությունները, Ս.Այվազյանին ուղեկցել են վերոհիշյալ ՊՈԱԿ:

Տեղեկանալով իրենից փորձանմուշներ վերցնելու անհրաժեշտության մասին՝ Սմբատ Այվազյանը վրդովվել, դժգոհել, իսկ հետդարձի ճանապարհին հաշվեհարդար տեսնելու սպառնալիքներ է փոխել իրենց ծառայողական պարտականությունները կատարող՝ իրեն ուղեկցող վերոհիշյալ ոստիկանների հասցեին:

Սմբատ Այվազյանից մեզի և մազի փորձանմուշներ վերցնելուց հետո, ոստիկանության նշված աշխատակիցները պարտավոր էին սահմանված

կարգի համաձայն, իրենց ծառայողական լիազորությունների շրջանակում Ս.Այվազյանին ներկայացնել հանձնարարությունը րված, որոշումը կայացրած մարմնին: Երևան Իսրայելյան թիվ 41 հասցեում գրնվող ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի մուտքի մուր իրենց վերոհիշյալ պաշտոնական պարտականությունը կատարելու նպատակով, րուժող Կարեն Հովսեփյանը, վկաներ Աշոտ Շամիրյանը և Էրիկ Պողոսյանը Սմբատ Այվազյանից պահանջել են դուրս գալ ավտոմեքենայից և մրնել բաժնի վարչական շենք: Վերջինս չի ենթարկվել իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանների օրինական պահանջներին և հրաժարվել է մեքենայից դուրս գալ և մրնել բաժնի վարչական շենք: Տուժող Կ.Հովսեփյանի կողմից վարչական շենք մրնելու պահանջը կրկնելուց հետո վերջինս նախ հրել, ապա կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բնության գործադրմամբ քաշքշել և բռունցքներով մի քանի անգամ հարվածներ է հասցրել ծառայողական պարտականությունները կատարող, րուժող Կարեն Հովսեփյանի կրժքավանդակին՝ նրան պարձատելով ֆիզիկական ցավ: Դրանից հետո ուժի գործադրմամբ ամբաստանյալ Սմբատ Այվազյանը ուղեկցվել է ոստիկանության Կենտրոնական բաժնի հերթապահ մաս, որի ընթացքում վերջինս շարունակել է սպառնալիքները ոստիկանների հասցեին (...):»¹:

6.1. Առաջին առյանի դատարանն իր դատավճռում նշել է, «(...) Դատարանը, վերլուծելով և գնահատելով քրեական գործի նյութերը, ապացուցված է համարում, ամբաստանյալ Ս.Այվազյանի՝ իր մուր ապօրինի կերպով հարվածող-իշրող սառը զենք հանդիսացող զսպանակավոր մահակ կրելու և իշխանության ներկայացուցիչներ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին բնություն գործադրելու սպառնալիքներ րալու և րուժող Կ.Հովսեփյանի նկարմամբ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բնություն գործադրելու մեղադրանքները:

Փաստորեն ոստիկանները կատարել են իրենց ծառայողական պարտականությունները, նրանք պարտավոր չէին ճշրել, սրուգել կատարման ենթակա դատավարական որոշման կամ դրա նախորդող պահին Ս.Այվազյանի նկարմամբ կատարված գործողությունների օրինականության հարցը: Երանք գործել են իրենց վերապահված լիազորությունների շրջանակում Ս.Այվազյանին՝ որոշման կատարումն ապահովելու նպատակով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ուղեկցելու և Ոստիկանության բաժնի վերադարձնելու՝ համապատասխան պաշտոնարար անձանց ներկայացնելու սրացած հանձնարարությունը: Ամբաստանյալ Ս.Այվազյանը պարտավոր էր կատարել իրենց ծառայողական պարտականությունները կատարող ոստիկաններ Կարեն Հովսեփյանի, Էրիկ Պողոսյանի և Աշոտ Շամիրյանի այդ լիազորու-

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 93-94:

թյունների շրջանակում Կարգով հրահանգ-պահանջները: Որից հետո սահմանված կարգով ու ժամկետում բողոքարկել համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունները: Սակայն նա հրաժարվել է կարարել ոստիկանների օրինական պահանջները, սպառնալիքներ է արվել նրանց հասցեին և կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրել նրանցից Կարեն Հովսեփյանի նկատմամբ:

Ոստիկանների կողմից ծառայողական պարտականությունների կատարումը արտահայտվել է նրանում, որ նրանք գործել են իրենց լիազորությունների շրջանակում կայացվել է որոշում, պարզաձև կարգով սրացել են հանձնարարություն և այդ որոշման ու հանձնարարության համաձայն նրանք պարտավոր էին և ուղեկցել են Ս.Այվազյանին ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ և վերադարձնել բաժին: Այդ իրավաչափ գործողությունների ընթացքում էլ Ս.Այվազյանը կարարել է հանցավոր գործողություններ: Բսկ սրացած հանձնարարությանից առաջ կարարված գործողությունների օրինականության համար Կարեն Հովսեփյանը, Էրիկ Պողոսյանը և Աշոտ Շամիրյանը պարտավոր և պարտահամարու չէին:

Մեքար Այվազյանը ապօրինի կերպով կրել է հարվածող-փշրող սառը գեներ հանդիսացող զսպանակավոր մահակ, որը 2008 թվականի փետրվարի 24-ին հայտնաբերվել է վերջինիս անձնական խուզարկությանը՝ բաճկոնի ծոցագրպանից (...):¹:

6.2. Առաջին ատյանի դատարանը, Ս.Այվազյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք է ընդունել տուժող՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվազոր Կարեն Հովսեփյանի, վկաներ՝ նույն բաժանմունքի օպերիվազորներ Աշոտ Շամիրյանի, Էրիկ Պողոսյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հերթապահ մասի պետ Սահակ Հակոբյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի օպերատիվ հերթապահի օգնական Արայիկ Հակոբյանի ցուցմունքները, Ս.Այվազյանին բերման ենթարկելու, անձնական խուզարկության ենթարկելու, փորձաքննված մահակը զննելու, իրեղեն սպացույց ճանաչելու, Ս.Այվազյանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունները և քրեագիտական փորձաքննության թիվ 350 եզրակացությունը²:

6.3. Առաջին ատյանի դատարանում, գործի քննության ընթացքում, Ս.Այվազյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք անձանց: Նշված միջնորդությանը կից դատարանին են ներկայացվել նաև այդ անձանց հարցման ենթարկելու մասին արձանագրություններ, որոնք դատարանը կցել է քրեական գործին:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 100-101:

² Տե՛ս նույն տեղում:

Առաջին ատյանի դատարանը հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները մերժել է՝ պատճառաբանելով, որ քրեական գործում այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան:

7. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, նշել է. «(...) /Դ/արավճռում շարադրվել է վերջինիս գործողությունների քրեահրավական գնահատականը, որից ակնհայտ է նրա գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասի և 316-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիաներով նահապետական հանցակազմի առկայության հանգամանքը, հերևաբար գործի վարույթը կարճելու և Ս.Այվազյանին կալանքից ազատ արձակելու հիմքեր չեն եղել:

(...) Վերաքննիչ քրեական դատարանը հիմնավոր է համարում ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումը այն մասին, որ վերոհիշյալ ապացույցներով հերքվում են պաշտպանական կողմի այն պարճառաբանություններն ու փաստարկները, որ Ս.Այվազյանի նկատմամբ գործողություններ կատարելու ընթացքում րուժող Կ.Հովսեփյանի, վկաներ Է.Պողոսյանի և Ա.Շամիրյանի հասցեին սպառնալիքներ, իսկ Կ.Հովսեփյանի նկատմամբ կյանքի և առողջության համար ոչ վրանգավոր բռնություն չի գործադրվել կամ վերջիններս չեն գործել իրենց ծառայողական պարտականությունների կատարման շրջանակում կամ Ս.Այվազյանը ուղեկցվել է ձեռնաշղթայով, ինքնաձիգ հրացաններ կրող ուսրիկանների կողմից և, որ նրանք իրականությունը չեն ներկայացրել, զեկուցագրերը, իսկ հերագայում նաև ցուցմունքները րվել են այլ ղեկավար անձանց պարտադրանքով: (...)

Վերաքննիչ քրեական դատարանը (...) եկավ հերևության, որ ամբաստանյալի հանցանքը ապացուցված է, մեղավորությունը՝ հաստատված, հերևաբար վերաքննիչ բողոքում շարադրված պարճառաբանությունների հիման վրա դատարավճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու հիմքեր չկան, (...):»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, որպես Ս.Այվազյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանքի կատարումը հիմնավորող ապացույցներ վկայակոչել են Ս.Այվազյանին բերման ենթարկելու, անձնական խուզարկության ենթարկելու, փորճաքննված մահակը զննելու, Ս.Այվազյանից

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 40-47:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթեր 83-87:

բացատրություն վերցնելու մասին արձանագրությունները, քրեագիտական փորձաքննության թիվ 350 եզրակացությունը և իրեղեն ապացույց ճանաչելու մասին որոշումը:

Ըստ բողոքաբերի՝ վկայակոչվածներից առանցքային նշանակություն ունի Ս.Այվազյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը, քանի որ մյուս բոլոր ապացույցները բխում են դրանից, իսկ անձից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունը որպես ապացույց դիտվել չի կարող, քանի որ այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով որպես առանձին ապացույցի տեսակ նախատեսված չէ, Ս.Այվազյանից բացատրություն վերցնելիս ապահովված չեն եղել վերջինիս իրավունքների պաշտպանության երաշխիքները:

Անդրադառնալով Ս.Այվազյանի՝ անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը որպես ապացույց ճանաչելու թույլատրելիության հարցին, բողոքաբերը նշել է, որ այդ արձանագրությունը կազմվել է 2008 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 11:45-ին, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ՀԿԳ ավագ օպերիվագոր Մ.Բաղդասարյանի կողմից, որի ընթացքում հրավիրված ընթերականներին և Ս.Այվազյանին չեն բացատրվել իրենց իրավունքներն ու պարտականությունները: Խուզարկության արդյունքում՝ ի թիվս այլևի, հայտնաբերվել է նաև սև կաշվե պատյանով, սև բռնակով զսպանակավոր մահակ, որի ճշգրիտ չափը, անհատական այլ հատկանիշներն ու առանձնահատկությունները չեն նշվել: Մեկ այլ օպերիվագոր նույն օրը և ժամին, նշված ընթերականների ու Ս.Այվազյանի մասնակցությամբ իրականացրել է ավտոմեքենայի զննություն, ինչի գոյության փաստը, ըստ բողոքաբերի՝ արդեն իսկ բավարար է կասկածի տակ դնելու Ս.Այվազյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրության իրավաչափությունը:

Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ, 105-րդ և 115-րդ հոդվածների պահանջները, բողոքաբերը հանգել է հետևության, որ Ս.Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով մեղավոր ճանաչելու վերաբերյալ դատական ակտերի հիմքում դրված ապացույցները՝ Ս.Այվազյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը, քրեագիտական փորձաքննության թիվ 350 եզրակացությունը, իրեղեն ապացույց ճանաչված մահակը և Ս.Այվազյանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունն անթույլատրելի են:

Անդրադառնալով Ս.Այվազյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին, բողոքաբերը փաստել է, որ պաշտպանների կողմից միջնորդություն է ներկայացվել նաև դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել Արտակ Եղիազարյանին,

ով ոստիկանության Կենտրոնականի բաժնի դիմաց տեսել է Ս.Այվազյանին սպասող մի շարք անձանց, այդ թվում՝ Սեյրան Այվազյանին, Հովիկ Արսենյանին և Լյովա Սիսակյանին: Նշված միջնորդություններին կից դատարան են ներկայացվել նաև այդ անձանց հարցման ենթարկելու մասին արձանագրություններ, որոնք դատարանը կցել է քրեական գործին: Սակայն հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները դատարանը մերժել է՝ պատճառաբանելով, որ քրեական գործում այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան, իսկ մեղադրական դատավճռի հիմքում դրել է բացառապես ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները: Վկայակոչելով «Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճիռը՝ բողոքաբերը փաստել է, որ սույն գործով դատարանը բացառապես հիմնվել է վիճարկվող իրադարձությանն ակտիվ ներգրավված ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ պաշտպանության կողմին չտալով հակառակ ապացույցներ ներկայացնելու որևէ հնարավորություն, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի սահմանափակման:

8.1. Բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասը, փաստել է, որ ստորադաս դատարանները, գործի նախորդ դատական քննության ընթացքում, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնցով խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ըստ բողոքի հեղինակի՝ խախտվել է ՀՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածով երաշխավորված գործի արդարացի քննության իրավունքը: Բողոքաբերի պնդմամբ՝ թե՛ Առաջին ատյանի և թե՛ Վերաքննիչ դատարաններն առավել արժանահավատ են համարել ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները և արդյունքում եկել են սխալ եզրահանգման:

9. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է Ս.Այվազյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը բեկանել ու փոփոխել՝ ճանաչելով և հռչակելով Սմբատ Այվազյանի անմեղությունը մեղսագրված արարքներում:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք Սմբատ Այվազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով

սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

11. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա սրբեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

(...)

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները (...):»:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պարիթ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կրերի անձի վիճակի վարթարացում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «[Ն]ույն հոդվածի երկրորդ մասի կանոնները չեն գործում այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը»:

13. Վերը մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Մկրտիչ Սարգսյանի գործով որոշմամբ և իրավական դիրքորոշումներ արտահայտել առ այն, որ «(...) [Օ]րինական ուժի մեջ մտնող դատական ակտերը կարող են վերանայվել բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի հիմնարար խախտման (կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների) հիմքով: Նման իրավակարգավորումը բխում է իրավաչափ այն գաղափարից, որ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտերի վերանայումը ընդհանուր կանոնից բացառություն է և, որպես այդպիսին, ենթադրում է բողոքարկման բացառիկ հիմքերի առկայություն:

Հարկ է ընդգծել, որ «հիմնարար խախտումը» ենթադրում է խախտման առավել ծանր բնույթ, քան քրեական օրենքի սխալ կիրառումը կամ քրեադատավարական օրենքի էական խախտումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածներ): Հիմնարար խախտման էությունը դրսևորվում է նրանում, որ այն ի սկզբանե կանխորոշում է քրեական գործի քննության ոչ ճիշտ ընթացքը, բովանդակագրկում դրա նշանակությունը՝ դրանով իսկ վկայելով անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացված լինելու մասին: (...)»¹:

«Հիմնարար խախտման» էությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ թիվ ՄԴՌ-1431 որոշմամբ ընդգծելով հետևյալը. «(...) [Հիմնարար խախտումը] պետք է պարճատահերևան-քային կապի մեջ գրնվի ընդունված և արդարադատության բուն էությունը խաթարող դատական ակտի հետ: Քրեական արդարադատությունը, վերջին հաշվով, ուղղված է անմեղ անձին արդարացնելուն, հանցանք կատարած անձին դատապարտելուն, նրա նկատմամբ արդարացի պարիժ նշանակելուն, հանցագործությունից րուժած անձի իրավունքներն ու իրավաչափ շահերը պաշտպանելուն, նրան պարճատված վնասը հարուցելուն: Այսինքն՝ առերևույթ հիմնարար խախտումը պետք է արժեգրկի քրեական գործով իրականացված արդարադատությունը, նսենացնի կայացված դատական ակտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես՝ այդպիսի վիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ գործը քննվել է դատական ակտը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, կամ երբ անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որը արացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական»²:

14. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի կապակցությամբ Մարդու իրավունք-ների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաս-րանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճռում³ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշելու համար, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ արդար է եղել, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել, թե արդյոք պահպանվել են պաշտ-պանության կողմի իրավունքները, և **արդյոք դիմումատուին հնարա-վորություն է տրվել վիճարկելու ապացույցների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ**: Ի լրումն, ապացույցների որակը

¹ Տե՛ս Մկրտիչ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԵՄԴ/0020/01/14 որոշման 19-20-րդ կետերը:

² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՄԴՌ-1431 որոշման 4.3-րդ կետը:

³ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08:

պետք է քննարկման առարկա հանդիսանա, ներառյալ՝ **արդյոք այդ ապացույցների ձեռքբերման հանգամանքները կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության վերաբերյալ¹,**

- որպես ընդհանուր կանոն՝ դատարաններն են գնահատում իրենց ներկայացված ապացույցները, ինչպես նաև այն ապացույցների վերաբերելիությունը, որոնք վկայակոչում է պաշտպանության կողմը: Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նրանց թույլատրվում է, կրկին որպես ընդհանուր կանոն, որոշել՝ արդյոք անհրաժեշտ է անձանց որպես վկա կանչելը՝ կոնվենցիոն համակարգում այդ բառին տրված «ավտոնոմ» նշանակությամբ: Ապացույցները վերցնելու համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձրել կողմերի հավասարության սկզբունքին համապատասխանությամբ, որն արդար դատաքննության հիմնարար հայեցակետերից մեկն է, և որով ենթադրվում է, որ **դիմումատուին պետք է «տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որն իր համար ոչ բարենպաստ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ»²,**

- չնայած սովորաբար ազգային դատարաններն են որոշում կայացնում վկային կանչելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բացառիկ հանգամանքներում կարող է հանգել այն եզրակացության, որ այդպես չվարվելը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին³,

- եթե վկաներին հարցաքննելու մասին մեղադրյալի միջնորդությունն ավելորդ բարդություններ չի առաջացնում, բավարար հիմնավորված է, առնչվում է մեղադրանքի էությանը և թերևս կարող է ամրապնդել պաշտպանությունը կամ նույնիսկ հանգեցնել արդարացման դատավճռի, ապա ներպետական իշխանություններն այդ միջնորդությունը մերժելու համար պետք է համապատասխան պատճառաբանություններ ներկայացնեն⁴,

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bykov v. Russia* գործով 2009 թվականի մարտի 10-ի վճիռը, գանգատ թիվ 4378/02, 89-90-րդ կետեր, *Huseyn and Others v. Azerbaijan* գործով 2011 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35485/05, 199-200-րդ կետեր:

² Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 57-58-րդ կետեր:

³ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bricmont v. Belgium* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, 89-րդ կետ, *Popov v. Russia* գործով 2006 թվականի հուլիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 26853/04, 188-րդ կետ, *Dorokhov v. Russia* գործով 2008 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66802/01, 65-րդ կետ:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Topić v. Croatia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 51355/10, 42-րդ կետ, *Polyakov v. Russia* գործով 2009 թվականի հունվարի 29-ի վճիռը, գանգատ թիվ 77018/01, 36-րդ կետ:

- չնայած դիմումատուին դատապարտելիս ներպետական դատարանները, ոստիկանության ծառայողների ցուցմունքներից բացի, հղում են կատարել այլ ապացույցների, **միակ ապացույցը, որով ուղղակիորեն ենթադրվում էր դիմումատուի մասնակցությունն այդ արարքների կատարմանը, և որով տրամադրվում էր դրանց մանրամասները, տվյալ ցուցմունքներն էին:** Բոլոր մյուս ապացույցները, որոնց դատարանները հղում են կատարել, անուղղակի ապացույցներ են, և չի կարելի ասել, որ դրանք ուղղակիորեն ցույց են տալիս դիմումատուի առնչությունը մեղսագրվող արարքներին¹,

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննել է մի շարք գործեր, որոնց դեպքում հրապարակային միջոցառման ժամանակ անհատին իր պահվածքի պատճառով քրեական հետապնդման են ենթարկել և դատապարտել՝ **հիմնվելով բացառապես այն ոստիկանության ծառայողների ցուցմունքների վրա, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում:** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ այդ վարույթներում դատարանները պատրաստակամորեն և անվերապահորեն ընդունել են ոստիկանության ծառայողների ցուցմունքները և դիմումատուին որևէ հնարավորություն չեն տվել հակառակ ապացույցներ ներկայացնելու: Այն վճռել է, որ այս մեղադրանքների հիմքում ընկած **այն հիմնական փաստերի վերաբերյալ վեճի դեպքում, երբ մեղադրանքի կողմի միակ վկաներն այն ոստիկանության ծառայողներն են եղել, որոնք ակտիվ դեր են ունեցել վիճարկվող իրադարձություններում, դատարանները պետք է պարտադիր օգտագործեին յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու նրանց մեղադրական ցուցմունքները²:**

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում Ս.Այվազյանի պաշտպանները միջնորդել են դատարան հրավիրել և որպես վկա հարցաքննել մի շարք վկաների: Առաջին ատյանի դատարանը հիշյալ անձանց դատարան հրավիրելու և որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունները մերժել է՝ պատճառաբանելով, որ քրեական գործում այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան³:

15.1. Առաջին ատյանի դատարանը, 2008 թվականի նոյեմբերի 18-ի դատավճռով Ս.Այվազյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ և 316-րդ հոդվածի 1-ին մասերով

¹ Տե՛ս *Mushegh Saghatelyan v. Armenia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը, 206-րդ կետ:

² Տե՛ս *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Kasparov and Others v. Russia* գործով 2013 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 21613/07, 64-րդ կետ, *Navalnyy and Yashin v. Russia* գործով 2014 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 76201/11, 83-րդ կետ, *Frumkin v. Russia* գործով 2016 թվականի հունվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74568/12, 165-րդ կետ:

³ Տե՛ս սույն որոշման 6.3-րդ կետը:

նախատեսված հանցագործությունների մեջ, որպես արարքի կատարումը հիմնավորող ապացույցներ՝ հիմք է ընդունել տուժող՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերիվագոր Կարեն Հովսեփյանի, վկաներ՝ նույն բաժանմունքի օպերիվագորներ Աշոտ Շամիրյանի, Էրիկ Պողոսյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հերթապահ մասի պետ Սահակ Հակոբյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի օպերատիվ հերթապահի օգնական Արայիկ Հակոբյանի ցուցմունքները, Ս.Այվազյանին բերման ենթարկելու, անձնական խուզարկության ենթարկելու, փորձաքննված մահակը գննելու, իրեղեն ապացույց ճանաչելու, Ս.Այվազյանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունները և քրեագիտական փորձաքննության թիվ 350 եզրակացությունը¹:

15.2. Վերաքննիչ դատարանը, 2009 թվականի հունվարի 27-ի որոշմամբ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ հիմնավոր է համարում ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումն այն մասին, որ նշված ապացույցներով հերքվում են պաշտպանական կողմի պատճառաբանություններն ու փաստարկները²:

16. Սույն որոշման 15-15.2-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-14-րդ կետերում վկայակոչված իրավադրոյթների, *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո, ինչպես նաև հաշվի առնելով այդ դիրքորոշումների համատեքստում արդար դատաքննության իրավունքի ներկայիս զարգացումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, Ս.Այվազյանի մեղադրանքը հիմնավորելիս, առավելապես հիմնվելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների վրա՝ չեն ապահովել *Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մատնանշված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքները: Դատարանները Ս.Այվազյանի մեղքը հիմնավորող ապացուցողական զամբյուղում ծանրակշիռ դեր հատկացնելով ոստիկանության աշխատակիցների ցուցմունքներին՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ վերջիններս ակտիվորեն ներգրավված են եղել վիճարկվող իրադարձություններում, ինչը ողջամտորեն կասկածի տակ է դնում նրանց ցուցմունքների արժանահավատությունը: Մասնավորապես, սույն գործով վճռորոշ ապացույցները, որոնցով ուղղակիորեն հիմնավորվել է Ս.Այվազյանի մասնակցությունը նրան վերագրված արարքների կատարմանը, վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից՝

¹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

² Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

տուժող՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր Կարեն Հովսեփյանի ցուցմունքներն են, ինչպես նաև որպես վկա հարցաքննված նույն բաժանմունքի օպերլիազորներ Աշոտ Շամիրյանի, Էրիկ Պողոսյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի հերթապահ մասի պետ Սահակ Հակոբյանի, ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի օպերատիվ հերթապահի օգնական Արայիկ Հակոբյանի ցուցմունքները: Ինչ վերաբերում է այլ ապացույցներին, որոնց դատարանները հղում են կատարել, ապա դրանք անուղղակի ապացույցներ են և ուղղակիորեն չեն հաստատում Ս.Այվազյանի առնչությունը մեղսագրվող արարքներին:

Նման պայմաններում, ստորադաս դատարանները չեն օգտագործել յուրաքանչյուր ողջամիտ հնարավորություն՝ ստուգելու այն ոստիկանության ծառայողների մեղադրական ցուցմունքները, որոնք ակտիվ դեր են ունեցել Ս.Այվազյանին մեղսագրվող արարքի կատարման ժամանակահատվածում: Ավելին, ինչպես նշվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում, սույն գործով ևս պաշտպանական կողմին հնարավորություն չի ընձեռվել արդյունավետորեն վիճարկելու ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների իսկությունը և առարկելու դրանց օգտագործման դեմ: Մասնավորապես, պաշտպանական կողմին հնարավորություն չի տրվել դատարան հրավիրելու մի շարք վկաների և ապացուցողական զանգվածում ներառելու նրանց ցուցմունքները, որոնք, ըստ պաշտպանների, կասկածի տակ էին դնում ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալները և հիմնավորում էին դեպքի հանգամանքների վերաբերյալ պաշտպանության կողմի առաջ քաշված վարկածը: Այլ կերպ, ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացված տվյալներն անվերապահորեն ընդունելը՝ առանց պաշտպանական կողմին լիարժեք հնարավորություն ընձեռելու մրցակցային դատավարության պայմաններում արդյունավետորեն վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքների արժանահավատությունը, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Մուշեղ Մաղաթեյանն ընդդեմ Հայաստանի* գործով, այնպես էլ սույն գործով, հանգեցրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի խախտման:

17. Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարելու մեջ Ս.Այվազյանի մեղավորության հարցին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին

հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավասարի ապացույցների բավարար ամբողջությամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի համաձայն՝ «Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1.Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հերաքմանության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել ապացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավասարի ապացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չփարսավող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին պալիս է հաստատող պարասխաններ»:

17.1. Վերլուծելով ապացուցման քրեադատավարական կանոնները, մասնավորապես անդրադառնալով «ապացույցների բավարարություն» հասկացությանը՝ Վճռաբեկ դատարանն Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի գործով որոշման մեջ նշել է, որ. «(...) «[Ա]պացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,
- 3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պարճատարանվածությունը:

(...) Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված

համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Մինևույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

(...) Երբքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բիւի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիրքորդի մնոր պետք է առաջացնի այն վարահոությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

(...) Ապացույցի արժանահավարտության հարկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավար է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավարտության րեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հարկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք րվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հարկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հարկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մերապահելու, վերարրադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

(...):

Յուրաքանչյուր ապացույց արժանահավարտության րեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական րվյալների սրացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավարտության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից սրացված րեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից սրացված րեղեկությունների արժանահավարտությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել սրացված րեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապարասխանությունը կամ

հակասությունը, հակասության դեպքում դրա պարճատները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական փյուռի վրա:

(...) Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պարճատարանման չափանիշի միջոցով (...):

(...) [Բ]րեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական փյուռի (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերագրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (հիար ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած»¹:

18. Սույն որոշման 17-17.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով որոշման 15-15.2-րդ կետերում ներկայացված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ վերլուծության չեն ենթարկել այն հարցը, թե ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները՝ սույն գործի փաստական հանգամանքների և գործի նյութերի համատեքստում արդյո՞ք կասկած չեն առաջացնում դրանց վստահելիության և ճշգրտության առումով, ինչն ուներ առանցքային նշանակություն՝ դրանց արժանահավատությունը, ինչպես նաև այլ փաստական տվյալների հետ համակցության մեջ գործի լուծման համար բավարարությունը որոշելու տեսանկյունից: Այսպես, դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների և գործի նյութերի համադրված վերլուծությունից հետևում է.

- Ս.Այվազյանը, բերման ենթարկվելուց առաջ, մասնակցել է Ազատության հրապարակում կազմակերպված հանրահավաքին,

- 2008 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 11.00-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն

¹ Տե՛ս Արարար Ավագյանի և Վահան Մահակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 29-31-րդ և 33-րդ կետերը:

անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ Երևան քաղաքի Տերյան-Կորյուն փողոցների խաչմերուկում կանգնած սև գույնի «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայում գտնվող ուղևորները զինված են: Կարճ ժամանակ անց, նշված վայրից բերման են ենթարկվել Սմբատ Այվազյանը, Արտակ Սիսակյանը և Վարդան Կիրակոսյանը,

- Ս.Այվազյանի մոտից անձնական խուզարկության ժամանակ հայտնաբերվել է մեկ հատ սև գույնի բռնակով և նիկելապատ զսպանակով մահակ, իսկ ավտոմեքենայի սրահի զննությամբ հայտնաբերվել է մեկ հատ «Մակարով» տեսակի 9մմ տրամաչափի ատրճանակ՝ թիվ KM 8852 գործարանային համարով՝ իր պահունակով և յոթ հատ 9մմ տրամաչափի փամփուշտներով¹,

- **2008 թվականի փետրվարի 25-ին** Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13106908 քրեական գործը՝ թմրամիջոց գործածելու և ապօրինի զենք պահելու կասկածանքով բերման ենթարկված Ս.Այվազյանից փորձանմուշներ վերցնելու նպատակով ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ուղեկցելիս նրա կողմից՝ **2008 թվականի փետրվարի 24-ին**, ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու, նրանց վիրավորելու, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու և բռունցքով ոստիկանին հարվածներ հասցնելու առթիվ, և նույն օրը վերջինս ձերբակալվել է,

- Նախաքննության մարմնի՝ 2008 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Ս.Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, որը 2008 թվականի հունիսի 26-ին փոփոխվել, լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 4-րդ մասերով²,

- Հարկ է նաև նշել, որ գործով կատարված քննությամբ պարզվել է, որ հայտնաբերված և առգրավված մեկ հատ «Մակարով» տեսակի 9մմ տրամաչափի ատրճանակը՝ թիվ KM 8852 գործարանային համարով՝ իր պահունակով և յոթ հատ 9մմ տրամաչափի փամփուշտները եղել են օրինական:

Միաժամանակ, Ս.Այվազյանի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել՝ 2008 թվականի փետրվարի 24-ին ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու, նրանց վիրավորելու, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու՝ բռունցքով ոստիկանին հարվածներ հասցնելու առթիվ, ինչն առավելապես հիմնավորվել է վիճարկվող իրադարձությունների անմիջական մասնակից ոստիկանների ցուցմունքներով:

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 18:

² Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

Դեպքի վերոնշյալ ժամանակագրությունը՝ հանրահավաքին Ս.Այվազյանի մասնակցելու պահից մինչև ապօրինի զենք պահելու կասկածանքով ոստիկանության բաժին բերման ենթարկվելը, այնուհետև՝ վերոնշյալ արարքների համար մեղադրանքի առաջադրումը, ողջամտորեն սովորում են այն հիմնավորող, գործով ուղղակի ապացույց հանդիսացող՝ տուժող ճանաչված ոստիկանության աշխատակցի և ոստիկանության այլ աշխատակիցների ցուցմունքների վստահելիությունն ու ճշգրտությունը՝ կասկածի տակ դնելով դրանց արժանահավատությունը:

19. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի իրավական ռեժիմով վճռաբեկ բողոքը քննության առնելու պայմաններում, չանդրադառնալով 2009 թվականի հունիսի 15-ի որոշմամբ՝ ապացուցողական գամբյուղում ներառված փաստական տվյալների վերաբերյալ արդեն իսկ տրված գնահատականներին, հարկ է համարում քննարկել նաև Ս.Այվազյանի՝ անձնական խուզարկության ենթարկելու մասին և նրանից բացատրություն վերցնելու մասին արձանագրությունները որպես ապացույց ճանաչելու թույլատրելիության հարցը:

Այսպես, Ս.Այվազյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը կազմվել է 2008 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 11:45-ին, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ՀԿԳ ավագ օպերիվագոր Մ.Բաղդասարյանի կողմից: Հատկանշական է, որ մեկ այլ օպերիվագոր նույն օրը և ժամին, նույն ընթերակաների ու Ս.Այվազյանի մասնակցությամբ իրականացրել է ավտոմեքենայի զննություն, ինչի գոյության փաստը ողջամտորեն բավարար է Ս.Այվազյանին անձնական խուզարկության ենթարկելու մասին արձանագրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառմամբ անթույլատրելի ճանաչելու համար: Ընդ որում, հարկ է նկատել նաև, որ անձնական խուզարկության ընթացքում հրավիրված ընթերականներին և Ս.Այվազյանին չեն բացատրվել իրենց իրավունքներն ու պարտականությունները: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «թունավոր ծառի պտուղների» սկզբունքի կիրառմամբ¹, որպես աժանցյալ ապացույց անթույլատրելի են նաև մահակը գննելու, այն իրեղեն ապացույց ճանաչելու արձանագրություններն ու քրեագիտական փորձաքննության թիվ 350 եզրակացությունը:

Մինևնույն ժամանակ, անդրադառնալով 2008 թվականի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Ս.Այվազյանի բացատրությունը որպես ապացույց ճանաչելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն ընդունելի է համարում բողոքաբերի փաստարկը և գտնում, որ սույն գործի փաստական հանգամանքների շրջանակներում բա-

¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԲԲԴ/0295/01/08 որոշումը:

ցատրությունը թույլատրելի ապացույց չէ, Ս.Այվազյանից բացատրություն վերցնելիս ապահովված չեն եղել վերջինիս իրավունքների պաշտպանության երաշխիքները, ուստի Վճռաբեկ դատարանն այն անթույլատրելի է ճանաչում և գտնում է, որ նշված բացատրությունը պետք է հանել սույն գործով ապացուցողական գամբյուղից:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերի հիմքում դրված վերոնշյալ ապացույցներն անթույլատրելի են:

20. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները պատշաճ ստուգման և գնահատման չեն ենթարկել սույն գործի փաստական հանգամանքները, իսկ քրեական գործում առկա չէ արժանահավատ ապացույցների բավարար համակցություն, որը թույլ կտար հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան ապացուցված համարել, որ Ս.Այվազյանը կատարել է իրեն մեղադրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով և 316-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Նշվածը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի և 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա բեկանելու ստորադաս դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ճանաչելու և հոչակելու Ս.Այվազյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում և քրեական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

21. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 21-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Սմբատ Ժիրայրի Այվազյանի վերաբերյալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 19-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 27-ի որոշումը բեկանել:

2. Սմբատ Ժիրայրի Այվազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչել անմեղ և արդարացնել, քրեական գործի վարույթը կարճել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում՝ հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Հատոր XI

Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84/16:
Տպագրական 72.5 մամուլ:
Տպաքանակ՝ 500:

ISBN 978-9939-1-1205-3



Կոմպյուտեր Սերվիս



© Կոմպյուտեր Սերվիս ՍՊԸ, 2020